

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄՊՈՅՏՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:


ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀՈՅՏՊԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԾՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru



ԱԿԵՏՈՒՆԻՈՍ

ՏԱՄՆԵՐԿՈՒ
ԿԵՍԱՐՆԵՐԻ
ԿՅԱՆԸ

ԳԱՅՈՍ
ՍԿԵՏՈՆԻՈՍ
ՏՐԱՆՔԿԻԼՈՍ



ՏԱՄՆԵՐԿՈՒ
ԿԵՍԱՐՆԵՐԻ
ԿՅԱՆՔԸ

Սվետոցիոս Գ. Տ.

Ս 855 Տասներկու կեսարների կյանքը (Ռուս. թարգմ. Վ. Ա. Դիլոյանը. — Եր: Հայաստան, 1986. — 520 էջ, 6 թ. նկ.:

Գիրքը նվիրված է հռոմեական կայսրերի կյանքի նկարագրությանը, Հուլիոս Կեսարից մինչև Դոմիցիանոս: Կենսագրություններում հետաքրքրաշարժ ձևով նկարագրվում է նրանցից յուրաքանչյուրի ժառանգ, երիտասարդությունը, գործունեությունն իր բոլոր կողմերով, կենցաղը՝ մահվան հանգամանքները: Սվետոնիոսի իդեալը Օգոստոսն ու Տիտոսն են: Բոլոր կայսրերի կյանքը տրված է անողոք ճշմարտացիությամբ, դրական ու ախտավոր հատկությունների նկարագրությամբ: Սվետոնիոսի գիրքը բոլոր ժամանակներում էլ մեծ ժողովրդային կանություն է վայելել:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

0504010000
Ս 701 (01) 86 68 — 86

ԿՄԴ 63. 3 (Օ)Յ

ՀՈՒԼԻՈՍԸ

1. Տամնձեց տարեկանում՝ նա կորցրեց հորը: Մեկ տարի անց, նշանակված լինելով արդեն Յուսիտերի քուրմ, նա խզեց նշանագրութիւնը Կոսսուցիայի՝ հեծյախների դասի, բայց շատ հարուստ ընտանիքից սերված մի աղջկա հետ, Կսկ նրանց նշանել էին դեռևս մանուկ հասակում, և ամուսնացավ Կոռնելիայի, աջն Կիննայի դստեր հետ, որը շորս անգամ Կոնսուլ էր եղել: Շուտով նա Կոռնելիայից ունեցավ

մի աղջիկ՝ Յուլիային: Ոչ մի կերպ գրկատատոր Սուլլան չկարողացավ հասնել այն բանին, որ նա ամուսնալուծվի: (2) Գրա համար էլ, զրկված և՛ քրմական աստիճանից, և՛ վնոջ օժիտից, և՛ տոհմական ժառանգութիւնից, նա դասվեց դիկտատորի հակառակորդների շարքը և անգամ ստիպված էր թաքնվել²: Չնայած նրան մեկընդմեջ տանջող չեքմախտին, նա հարկադրված էր գրեթե ամեն գիշեր փոխել ասպատարանը, դրամով փրկագնվելով խուզարկումներից, մինչև որ, վերջապես, հասավ ներման կույս վեստալուհիներին՝ և իր ազգականների ու Գնամիլների՝ Մամերկոս էմիլիոսի և Սվրեթիոս Կոտտայի օգնութեամբ: (3) Երկար ժամանակ Սուլլան մերժումով էր պատասխանում իրեն նվիրված և ականավոր կուսակիցների խնդրանքներին, Կսկ սրանք պնդում էին ու համարում. ի վերջո, ինչպես հայտնի է, Սուլլան անձնատուր եղավ, բայց բացառական չեց՝ հպատակվելով թերևս աստվածային մերձըմամբ կամ սեփական բնազդին. «Ձեր հաղթանակն է, ատարցն՝ քայն, բայց Խմացնք. նա, ում

փրկութեան համար դուք այնպես ջանում եք, երբեք կործանումն կրբրի օպտիմատների գործին, որը մենք միասին պաշտպանում էինք. մեկ Կեսարի մեջ բազմաթիվ Մարիուսներ են թաքնված»:

2. Զինվորական ծառայութունը նա սկսեց Ասիայում, պրետոր Մարկոս Թերմոսի շքախմբում: Նրա կողմից ուղարկված լինելով Բուսթանիա, որպեսզի նավատորմիչ բերի, նա երկար մնաց Նիկոմեդեսի մոտ⁴: Այդ ժամանակ էլ լուրեր պատվեցին, որ թագավորը պղծել է նրա մաքրութունը. իսկ նա խորացրեց այդ լուրերը նրանով, որ մի քանի օրից նորից գնաց Բուսթանիա՝ իր կլիենտ-ազատարձակներից մեկին հասանելիք պարտքը գանձելու համար: Հետագա ծառայութունը նրան ավելի շատ փառք բերեց, և Միթիլենքի⁵ գրավման ժամանակ նա Թերմոսից որպես պարգև ստացավ կաղնի պսակ⁶:

3. Նա ծառայել է նաև Կիլիկիայում Սերվիլիոս Իսավրիկոսի օրոք, բայց ոչ երկար, երբ լուր ստացվեց Սուլլայի վախճանի մասին, և նոր խռովութեան հույս հայտնվեց, որը ձեռնարկել էր Մարկոս Լեպիդոսը, նա շուտափույթ վերադարձավ Հոմո: Սակայն Լեպիդոսի հետ համագործակցելուց նա հրաժարվեց, թեև Լեպիդոսը նրան գայթակղում էր մեծ օգուտներով: Նրան հիասթափեցրեց ինչպես առաջնորդը, այնպես էլ բուն ձեռնարկումը, որ ավելի վատ ելք ունեցավ, քան նա կարծում էր:

4. Երբ խռովութունը ճնշվեց, նա դատի տվեց կոնսուլյարիս և տրիումֆատոր Կոռնելիոս Դուլարելլային⁷ դրամաշորթութեան մեղադրանքով, բայց մեղադրյալը արդարացվեց: Այնժամ նա որոշեց հեռանալ Հռոդոս, որպեսզի թաքնվի հակառակորդներից և օգտվի ազատ ժամանակից ու հանգստից՝ պարապելու համար Ապոլլոնիոս Մոլոնի՝ ճարտասանութեան ժամանակի նշանավոր ուսուցչի մոտ⁸: Այդ ճանապարհորդութեան ժամանակ, արդեն ձմռանը, Տարմակուսա⁹ կղզու մոտ նա ընկավ ծովահենների ձեռքը, և, ի մեծ գայրույթս իր, նրանց մոտ գերութեան մեջ մնաց շուրջ քառասուն օր: Նրա հետ էին միայն բժիշկը և երկու ծառայողները (2), մնացած ուղեկիցներին և ստրուկներին նա իսկույնեթ ուղարկել էր փրկագնման համար դրամ բերելու: Բայց երբ, վերջապես, նա վճարեց ծովահեններին 50 տաղանդ¹⁰ և ափ հանվեց, ապա առանց հապաղելու նավատորմ հավաքեց, կրնկակոխ ընկավ նրանց ետևից, բռնեց նրանց և մահապատժի ենթարկեց այն նույն մահավան պատժով, որով մեկ անգամ չէր կատակով սպառնացել նրանք: Շրջակա մարզերը այդ ժամանակ ավերում էր Միհրդատը, որպեսզի անտարբեր չերևա դաշնակիցների կրած աղետների նկատմամբ, Կեսարը թողեց Հռոդոսը՝ իր ուղևորութեան նպատակակետը, անցավ Ասիա, հավաքեց օժանդակ ջոկատ և պրովինցիայից վտարեց արքայական զորա-

պետին, դրանով հնազանդության մեջ պահելով տատանվող և անվճռական համայնքները:

5. Հոռմ վերադառնալուց հետո նրա առաջին պաշտոնը եղավ զորական տրիբունի¹¹ պաշտոնը, որը նրան տրվեց ժողովրդական քվեարկությամբ: Այստեղ նա գործուն կերպով օգնում էր ժողովրդական տրիբունների իշխանության վերականգնմանը, որը խուզված էր Սուլլայի օրոք: Բացի այդ, նա օգտվեց Պլուտիոսի որոշումից, որպեսզի Հոռմ վերադարձնի Լուկիոս Կիննային՝ իր կնոջ եղբորը, և բոլոր նրանց, ովքեր նրա հետ միասին քաղաքացիական պատերազմի ժամանակ հարել էին Լեպիդոսին, իսկ Լեպիդոսի մահից հետո փախել էին Սերտորիոսի մոտ. և նա ինքն այդ մասին ճառ արտասանեց:

6. Քվեստոր եղած ժամանակ նա թաղեց հորաքրոջը՝ Յուլիային, և ննոջը՝ Կոռնելիային, ըստ սովորույթի նրանց դամբանի վրա գովեստական ճառեր արտասանելով¹² ողբերային տրիբունայից: Յուլիայի ողբերանի վրա արտասանած ճառում նա, ի միջի այլոց, այսպես է խոսում նրա և իր հոր նախնիների մասին. «Իմ հորաքույր Յուլիայի տոհմը մոր կողմից հառնում է մինչև արքաները, իսկ հոր կողմից՝ անմահն աստվածները, քանզի Անկոս Մարցիուսից ծագում են Մարցիուս-արքաները, որոնց անունը կրում էր նրա մայրը, իսկ Վեներա դիցուհուց՝ Յուլիոսների տոհմը, որոնց է պատկանում նաև մեր ընտանիքը: Ահա թե ինչու մեր տոհմը օժտված է անձեռնմխելիությամբ, ինչպես արքաները, որոնք հզորությամբ վեր են կանգնած բոլոր մարդկանցից, և պատկառանքով, ինչպես աստվածները, որոնց ենթակա են իրենք արքաները»:

(2) Կոռնելիայից հետո նա կնության վերջրեց Պոմպեային¹³, Քվինտոս Պոմպեոսի դստերը և Լուկիոս Սուլլայի թոռանը: Հետագայում նա Պոմպեային ապահարզան տվեց՝ կասկածելով դավաճանության մեջ Պուբլիոս Կլոդիոսի հետ: Այն մասին, որ Կլոդիոսը¹⁴ թափանցել էր նրա մոտ կանացի զգեստով սրբազան տոնահանդեսի ժամանակ, այնպիսի վստահությամբ էին խոսում, որ սենատը հետաքննություն նշանակեց սրբավայրի պղծման գործով:

7. Քվեստորի պաշտոնում նա նշանակում ստացավ Հեռավոր Իսպանիա: Այնտեղ նա, պրետորի հանձնարարությամբ մեկ անգամ շրջագայելով համայնական ժողովները դատավարության համար, ժամանեց Գադես¹⁵ և Հերկուլեսի տաճարում տեսավ Մեծն Ալեքսանդրի կիսանդրին: Նա հառաչեց, ասես զզվանք տածելով դեպի սեփական անգործությունը, չէ՞ որ նա դեռ ոչ մի հիշարժան գործ չէր կատարել, այն դեպ-

քոճմ, երբ Ալեքսանդրը այդ տարիքում¹⁶ արդեն հնազանդեցրել էր աշխարհը, և իսկույնեւեթ ջանաց արձակում ստանալ, որպէսզի հետո մայրաքաղաքում օգտւի առաջին իսկ առիթից ավելի մեծ գործերի համար: (2) Հաջորդ գիշերը նրան խոտվեց մի երազ՝ նա տեսավ, որ իբր թե ինքը բռնաբարում է սեփական մորը, բայց երազ մեկնողները առավել ևս գրգռեցին նրա հույսերը, հայտարարելով, որ երազը կանխագուշակում է նրա համար իշխանություն ամբողջ աշխարհի վրա, քանզի մայրը, որին նա տեսել է իր տակ, այլ բան չէ, եթե ոչ երկիրը, որը պաշտովում է որպես ամենայն կենդանւոյց ծննդաբերող¹⁷:

8. Թողնելով, այդպիսով, իր պրովիդենցիան ժամկետից շուտ, նա հայտնվեց լատինական գաղութներում¹⁸, որոնք այդ ժամանակ ջանում էին քաղաքացիական իրավունքներ ձեռք բերել: Անշուշտ, նա կհակեր նրանց մի որևէ հանդուգն քայլի, եթե կոնսուլները, վախենալով դրանից, ժամանակավորապես չկասեցնեին Կիլիկիայի համար հավաքագրւած լեգեոնների ուղարկումը:

9. Դա շիանդարեց շուտով նրան Հռոմում ձեռք զարկել մի ավելի համարձակ ձեռնարկության: Այն է, էգիլի պաշտոնը ստանձնելուց մի քանի օր առաջ, նա մեղադրվեց դավադրության մեջ¹⁹ կոնսուլարիս Մարկոս Կրասոսի և Պուբլիոս Սուլլայի ու Լուկիոս Ավտրոնիոսի հետ, որոնք սխտք է կոնսուլներ դառնալին, բայց մերկացվել էին ընտրողներին կաշառելու մեջ: Ծնթադրվում էր, որ նոր տարվա սկզբին նրանք հարձակվելու են սենատի վրա, կոտորելու են նշված անձանց, Կրասոսը դառնալու է դիկտատոր, Կեսարը՝ նշանակվելու հեծելազորի պետ և, կազմակերպելով պետական գործերը ըստ իրենց հայեցողության, նրանք կոնսուլությունը վերագարձնելու են Ավտրոնիոսին և Սուլլային: (2) Այդ դավադրության մասին հիշատակում են Տանուզիոս Գեմինը պատմության մեջ, Մարկոս Բիբուսը էգիկտներում, Գայոս Կուրիոն Ավագը ճառերում. ըստ երևույթին, նույնը նկատի ունի Կիկերոնը, երբ Ակսիոսին²⁰ հղած նամակներից մեկում ասում է, որ Կեսարը, դառնալով կոնսուլ, հաստատվեց այն արքայական իշխանության մեջ, որի մասին խորհում էր, երբ դեռ էգիլ էր: Տանուզիոսը ավելացնում է, որ զղջումից թե երկյուղից Կրասոսը չեմերկայացավ կոտորածի նշանակված օրը, ուստի և Կեսարը շտվեց պայմանավորված նշանը. ըստ Կուրիոնի, պայմանավորված էր, որ Կեսարը իջեցնելու է տոգան մի ուսից: (3) Այդ նույն Կուրիոնը, նրա հետ մեկտեղ նաև Մարկոս Ակտորիոս Ծագոնը հազուդում են, որ Կեսարը դավադրության մեջ էր մտել նաև երիտասարդ Գնեսու Պիզոնի հետ. իսկ երբ կասկած ծագեց, որ Հռոմում դավադրություն է

նախապատրաստվում, և Պիզոնը առանց խնդրանքի ու արտահերթ նշանակում ստացած Իսպանիա, ապա նրանք պայմանավորվեցին, որ միաժամանակ խռովություն բարձրացնեն—Կեսարը՝ Հռոմում, իսկ Պիզոնը՝ պրովինցիայում, ամբրոնների և տրանսպադանցիների²¹ աշակցությանը Պիզոնի մահը²² խորտակեց երկուսի էլ մտադրությունները:

10. Էդիլի պաշտոնում նա զարդարեց ոչ միայն Կոմիցիումն²³ ու Ֆորումը բազիլիկներով²⁴, այլ նույնիսկ Կապիտոլիումի վրա շարեւ սվեց ժամանակավոր օյունասրահներ, որպեսզի ցույց տա հարգարանքի մի մասը սեփական առատաձեռնությունից: Խաղերը և որսահալածումները նա կազմակերպում էր իր պաշտոնակից ընկերների հետ միասին, ինչպես նաև ինքնուրույնաբար, դրա համար էլ անգամ նրանց ընդհանուր ծախսերը միայն նրան էին փառք բերում: Նրա ընկեր Մարկոս Քիրուլոսը բացահայտորեն խոստովանում էր, որ իրեն բաժին է ընկել Պոլլուքսի վիճակը. ինչպես որ աստվածային երկվորյակների տաճարը Ֆորումում պարզապես Կաստորի տաճար էին անվանում, այնպես էլ նրա ու Կեսարի համատեղ առատաձեռնությունը միայն Կեսարին էին վերադրում:
(2) Ի լրումն Կեսարը կազմակերպեց նաև գլադիատորական մարտ, քայց նվազ քանակությամբ մարտնչող զույգեր հանեց, քան մտադիր էր²⁵. ամեն կողմերից նրա հավաքած մարտիկների խառնամբոխը նրա հակառակորդներին այնպիսի երկյուղ առթեց, որ հատուկ հրամանագրով արգելվեց ով էլ որ լինի Հռոմում որոշակի քանակությունից ավելի գլադիատորներ պահել:

11. Շահելով ժողովրդի համակրանքը, նա փորձեց տրիբունների միջոցով հասնել այն բանին, որպեսզի ժողովրդական ժողովը նրան հատկացնի հրամանատարությունը Եգիպտոսում: Արտահերթ նշանակման²⁶ առիթն այն էր, որ ալեքսանդրիացիները վճռեցին էին իրենց թագավորին²⁷, որը սենատում հայտարարված էր հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ. Հռոմում դա ընդհանուր գոգոսություն էր առաջացրել: Նա հաջողության չհասավ օպտիմատների հակադրության պատճառով: Զանազան, ի վրեժխնդրություն, բոլոր միջոցներով խախտել նրանց ազգեցությունը, նա վերականգնեց Գայոս Մարիուսի Յուգուրտայի, կիմբրների և տետոնների նկատմամբ տարած հազթանակների հուշարձանները, որոնք երբեմնի ավերել էր Սուլլան. իսկ նախագահելով սպանությունների վերաբերյալ գործերի գատական ատյանում²⁸, նա մարդասպաններ հռչակեց նաև նրանց, ովքեր պրոսկրիպիանների ժամանակ գանձարանից գրամ էին ստացել Հռոմի քաղաքացիների գլուխների համար, թեև Վոտնելիոսի օրենքները²⁹ բացառություն էին անում նրանց համար:

12. Նա նույնիսկ մի մարդ վաձեց³⁰, որը պետական դավաճանության մեջ մեղադրեց Գայոս Ռաբիրիոսին, որի ջանքերով դրանից փոքր ինչ առաջ³¹ սենատը ճնշել էր տրիբուն Լուկիոս Սատուրնինոսի խռովությունը: Իսկ երբ վիճակահանությունը նրան դատավոր նշանակեց այդ գործով, նա այնպիսի կրքոտություններ դատապարտեց Ռաբիրիոսին, որ ժողովրդին դիմելիս վերջինիս ամենից ավելի օգնեց դատավորի թշնամանքը վկայակոչելը:

13. Թողնելով պրովինցիա ստանալու հույսը, նա սկսեց հետամտել մեծ քրմապետի աստիճանին՝ ամենաշուայլ առատաձեռնություն օգնություններ: Ընդ որում նա այնպիսի պարտքերի տակ ընկավ, որ դրանք մտաբերելիս, ասում են, մորն ասաց, առավոտյան նրան համբուրելիս, մինչ կգնար ընտրություններին՝ «կամ ես կվերադառնամ որպես քրմապետ, կամ բոլորովին չեմ վերադառնա»: Եվ իսկապես, նա այնպես հաղթեց իր ամենավտանգավոր զույգ մրցակիցներին³², որոնք շատ էին գերազանցում նրան և՛ տարիքով, և՛ դիրքով, որ անգամ նրանց սեփական տրիբուններում նա ավելի շատ ձայներ հավաքեց, քան նրանք երկուսը միասին վերցրած:

14. Նա պրետոր ընտրվեց, երբ բացահայտվեց Կատիլինայի դավադրությունը³³, և սենատը միաձայն մահապատժի դատապարտեց դավադիրներին: Միայն նա առաջարկեց հսկողության տակ նրանց աքսորել առանձին-առանձին մունիցիպալումներ, բռնագրավելով ունեցվածքը: Ընդ որում, վառ գույներով նկարագրելով ժողովրդի ատելությունը, որ առհավետ կհարուցեն իրենց դեմ ավելի հատու միջոցների կողմնակիցները, նա այնպիսի սարսափ ներազդեց նրանց, որ Դեցիմոս Սիլանոսը³⁴, նշանակյալ կոնսուլը, անգամ վճռեց մեղմացնել իր նախասկզբնական կարծիքը, բացահայտորեն այն փոխելը խայտառակություն կլիներ, և հայտարարեց, որ իբր այն ավելի խիստ է մեկնաբանվել, քան ինքը նկատի է ունեցել: (2) Կեսարը շատերին իր կողմը գրավեց, այդ թվում կոնսուլ Կիկերոնի հզորը, և հաղթանակի կհասնեի, եթե տատանվող սենատին կայունություն չհաղորդեի Մարկոս Կատոնի ճառը: Բայց դրանից հետո էլ նա չէր դադարում դիմադրել, մինչև որ Հոռմի հեծյալները, որոնք զինված ամբոխով շրջապատել էին սենատը պահպանության պատրվակով, շսկսեցին նրան մահվամբ սպառնալ՝ նրա շափից դուրս համառություն համար: Նրանք արդեն մերձենում էին նրան մերկացված դաշույններով, կողքին նստած սենատորները լքել էին նրան, և շատ քչերը միայն պաշտպանության տակ վերցրին նրան, առնելով իրենց գիրկը և ծածկելով տոգայով³⁵: Միայն այնժամ նա ակնհայտ երկյուղով համակված նահանջեց և հետո մինչև տարեվերջ սենատում չէր երևում:

15. Իր պրետորութեան առաջին իսկ օրը նա պահանջեց, որպեսզի Քվինտոս Կատուլոսը³⁶ ժողովրդի առջև հաշիվ տա Կապիտոլիումի վերականգնման մասին, և անգամ այդ գործը ուրիշին հանձնելու առաջարկ մտցրեց: Բայց նա անգոր էր օպտիմատների միահամուռ դիմադրութեան առջև. տեսնելով, թե ինչպես են նրանք խուռներամ վազում խումբ-չում ի մի, լքելով նորընտիր կոնսուլներին, հակահարված տալու վճռականութեամբ լի, նա հրաժարվեց այդ ձեռնարկումից:

16. Բայց և այնպես, երբ ժողովրդական տրիբուն Ցեցիլիոս Մետելլոսը³⁷, անտեսելով մյուս տրիբունների արգելքը, հանդես եկավ ամենախոռվարար օրենսդրական առաջարկներով, Կեսարը նրան պաշտպան կանգնեց և աջակցում էր նրան անսովոր համառութեամբ, մինչև որ սենատը հրամանագրով շահագրեց այդ երկուսին պետութեան կառավարումից: Չնայած դրան, նա խիզախեց մնալ պաշտոնում և դատ վարել. և միայն երբ նա իմացավ, որ պատրաստ են իրեն խոչընդոտել զենքի ուժով, նա արձակեց լիկտորներին, հանեց պրետորականի տոգան և գաղտնի տուն շտապեց, որոշելով նման պարագաներում աղմուկ չհանել: (2) Մեկ օր անց ինքնաբերաբար, ոչ մեկի կողմից չհրահրված, նրա տան մոտ մի ամբոխ հավաքվեց և մոլեգնորեն իր օգնութեանն առաջարկեց, որպեսզի վերականգնի նրան պաշտոնում, բայց նա կարողացավ հանգըստացնել ամբոխին: Քանի որ այդ բանը ոչ ոք չէր սպասում, ուստի սենատը, որը հապշտապ հավաքվել էր այդ խառնահավաքի կապակցութեամբ, իր լավագույն ներկայացուցիչների միջոցով նրան շնորհակալութեան հայտնեց. նրան հրավիրեցին կուրիա, գովաբանեցին ամենաշողում արտահայտութեաններով և, վերացնելով նախկին հրամանագիրը, լիովին վերականգնեցին իր պաշտոնում:

17. Բայց նրան նոր վտանգ էր սպառնում՝ նա հայտարարվեց Կատիլինայի մեղսակից: Քննիչ Նովիոս Նիգրոսի առջև այդ մասին հայտարարեց ամբաստանիչ Լուկիոս Վետտիոսը, իսկ սենատում՝ Քվինտոս Կուրիոսը, որին պետական պարգև էր նշանակված այն բանի համար, որ նա առաջինն էր բացահայտել դավադիրների մտադրութեանները: Կուրիոսը պնդում էր, որ այդ մասին լսել է Կատիլինայից, իսկ Վետտիոսը նույնիսկ խոստացավ ներկայացնել Կեսարի սեփական ձեռքով Կատիլինային գրած նամակը: (2) Կեսարը, շքանկանալով հանդուրժել այդ, Կիկերոնից վկայութեան ձեռք բերեց, որ նա ինքն է որոշ տեղեկութեաններ հաղորդել դավադրութեան մասին: Դրանով նա Կուրիոսին զրկեց պարգևից, իսկ Վետտիոսը, պատժվելով³⁸ գրավականի բռնագանձմամբ և ունեցվածքի բռնագրավմամբ, հազիվ փրկվելով ժողովրդի ձեռքով հենց ռոստրալային տրիբունայի առջև պատառ-պատառ լինելուց, նրա կողմից

բանտ նեավեց քննիչ՝ Նովիոսի հետ միասին, որը բողոք էր ընդունել պաշտոնով իրենից ավագի դեմ:

18. Պրեստորությունից հետո նա վիճակահանությամբ ստացավ Չեռավոր Իսպանիան, Վարկատունները նրան բաց չէին թողնում. նա ազատվեց նրանցից՝ Երաշխավորների³⁹ օգնությամբ և մեկնեց պրովինցիա, շապասելով, հակառակ օրենքների՝ և սովորույթների, կարգադրությունների և միջոցների: Հայտնի չէ, թե արդյոք նրան սպառնացող մասնավոր հայցից էր նա երկյուղ կրում, թե շտապում էր օգնության համնել ազերսող գաշնակիցներին:

Կարգ ու կանոն հաստատելով պրովինցիայում, նույնպիսի փութկոտությամբ, շապասելով հաջորդին, նա սուրաց Հոռոմ՝ փնտրելու տրիումֆ և կոնսուլություն: (2) Բայց ընտրությունների ժամկետն արդեն նշանակված էր, և նա կարող էր որպես հայցող հանդես գալ՝ քաղաք մտնելով որպես սոսկ մասնավոր անձ⁴⁰: Նա փորձեց ձեռք բերել իր համար բացառություն օրենքից, բայց դիմադրության հանդիպեց և պետք է հրաժարվեր տրիումֆից, որպեսզի չկորցնի կոնսուլությունը:

19. Կոնսուլության հայցողները երկուսն էին՝ Մարկոս Բիրուլոսը և Լուկիոս Լուկցետոսը. Կեսարը միացավ վերջինիս: Քանի որ սա նվազ ազդեցիկ էր, բայց շատ հարուստ, նրանք պայմանավորվեցին, որ Լուկցետոսը ցենսորիաներին⁴¹ սեփական դրամը կխոստանա երկուսի անունից: Իմանալով այդ մասին, օպտիմատները վախեցան, որ Կեսարը ոչ մի բանի առջև կանդ չի անի, եթե բարձրագույն պաշտոնում իրեն ընկերունենա իր գաշնակցին ու համախոհին. նրանք Բիրուլոսին լիազորեցին նույնքան առատ խոստումներ տալու, և շատերը նրան նույնիսկ դրամ մատակարարեցին: Կատոնն ինքը չէր ժխտում, որ կաշառատվություն է կատարվում ի շահ պետության:

(2) Այդպես նա կոնսուլ դարձավ Բիրուլոսի հետ միասին: Այդ նույն պատճառով օպտիմատները հոգ տարան, որպեսզի ապագա կոնսուլներին համար նշանակվեն ամենաաննշան պրովինցիաները՝ սոսկ անտառներ ու արոտավայրեր⁴²: Նման վիրավորանքը դրդեց նրան իր բոլոր գործողություններում հարել Գնեոս Պոմպեոսին, որն այդ ժամանակ հաշտ չէր սենատի հետ, քանի որ վերջինս հապաղում էր հաստատել նրա կարգադրությունները Միհրդատի նկատմամբ տարած հաղթանակից հետո: Նա հաշտեցրեց Պոմպեոսի հետ Մարկոս Կրասոսին, նրանք թշնամանքի մեջ էին դեռևս համատեղ կոնսուլության ժամանակ ունեցած դաժան գժտությունների պահից, և գաշինքի մեջ մտավ երկուսի հետ, պայմանավորվելով չթույլատրել նրանցից որևէ մեկի համար անհաճո և ոչ մի պետական միջոցառում:

20. Պաշտոնը ստանձնելուց հետո առաջինը նա հրամայեց կազմել և հրապարակել ամենօրյա հաշվետվություններ⁴³ սենատի և ժողովրդի ժողովների մասին: Այնուհետև, նա վերականգնեց հնամենի սովորույթը, որպեսզի այն ամիսներին, երբ ֆասկերը⁴⁴ իր մոտ չէին գտնվում, իր առջևից ամենուր քայլի հանձնակատարը, իսկ լիկտորները հետևեն իրեն: Եվ երբ նա օրինագիծ մտցրեց հողի մասին⁴⁵, իսկ նրա գործակիցը կասեցրեց այն, վկայակոչելով վատ նախանշանները, նա զենքի ուժով վտարեց նրան ֆորումից: Հաջորդ օրը վերջինս գանգատ ներկայացրեց սենատին, բայց ոչ մեկի մոտ արիություն չգտավ զեկույցով հանդես գալու նման բռնության մասին, կամ գեթ միջոցներ առաջարկելու, որոնք սովորական են անգամ նվազ անկարգությունների ժամանակ: Այդ Բիբուլոսին այնպիսի հուսահատություն պատճառեց, որ նա այլևս տնից դուրս չէր գալիս մինչև իր կոնսուլության վերջը և միայն էղիկտներում էր արտահայտում իր բողոքը:

(2) Այդ ժամանակից Կեսարը միայնակ էր վարում բոլոր գործերը պետության մեջ, իր կամքով: Որոշ սրամիտ անձինք, թղթերում ստորագրելով որպես վկաներ, անգամ կատակով դրանք թվագրում էին ոչ թե Կեսարի և Բիբուլոսի կոնսուլությամբ, այլ Հուլիոսի և Կեսարի, նշելով, այդպիսով, մեկ մարդու երկու անունով, իսկ շուտով ժողովրդի մեջ տարածվեց նաև այսպիսի ոտանավոր.

Այդ Կեսարի կոնսուլության և ոչ թե Բիբուլոսի կոնսուլության ժամանակ է եղել, Բիբուլոսի կոնսուլության ժամանակ, բարեկամ, ուղղակի ոչինչ չի եղել:

(3) Ստելլատյան հողամասը⁴⁶, որը նախնիները հռչակել էին անձեռնմխելի, և Կամպանյան դաշտը, որը թողնված էր ի վարձակալություն լրացնելու համար գանձարանը, առանց վիճակահանության⁴⁷ նա բաժանեց քսան հազար քաղաքացիների միջև, ովքեր ունեին երեքական և ավելի զավակներ: Նա իջեցրեց կապալառուների կապալագումարի մեկ երրորդը, որոնք խնդրում էին զիջողություն և բոլորի ներկայությամբ խնդրեց նրանց շափավոր լինել, երբ ստիպմունք լինի ավելացնել նոր կապալների գինը: Ընդհանրապես նա առատաձեռնորեն բաշխում էր այն ամենը, ինչ էլ որ նրան խնդրելիս լինեին, շահադիպելով հակագործության կամ ճնշելով այն սպառնալիքներով: Նա հրամայեց լիկտորին դուրս քաշել կուրիայից (4) Մարկոս Կատոնին⁴⁸, որը սենատում հանդես էր եկել հարցապնդամով, և բանտ տանել: Լուկիոս Լուկուլոսին, որը շափից դուրս կտրուկ էր նրան առարկում, նա այնպես վախեցրեց կեզծ մեղադրանքներով, որ Լուկուլոսն ինքը նետվեց նրա

ոտքերը: Մեկ անգամ Կիկերոնը դատարանում ողբում էր պետության դրությունը⁴⁹ — Կեսարը հենց նույն օրը, արդեն իններորդ ժամին⁵⁰, պատրիկներից պլեբեյի փոխադրեց նրա թշնամուն՝ Պուբլիոս Կլոդիոսին⁵¹, որը երկար և զուր ձգտում էր հասնել դրան: (5) Վերջապես, նա վարձեց մատնիչի՝ ընդդեմ ողջ թշնամական կուսակցության ամբողջությամբ վերցրած. նա պետք է հայտարարեր, որ իրեն համոզում էին սպանել Պոմպեոսին, և, ներկայանալով ռոստրումների առջև, տար հրահրիչների պայմանավորված անունները: Բայց որքանով որ այդ անուններից մեկ-երկուսը զուր էին տրված և սոսկ կասկածանք հարուցեցին, որ դա խաբեություն է, նա հիասթափվեց նման թեթևամիտ մտահղացման հաջողութունից և, ինչպես ենթադրում են, թույնով վերացրեց մատնիչին⁵²:

21. Մոտավորապես այդ նույն ժամանակ նա ամուսնացավ Կալպուրնիայի, Լուկիոս Պիզոնի՝ կոնսուլության իր հաջորդի դստեր հետ, իսկ իր դուստր Յուլիային կնության տվեց Գնեոս Պոմպեոսին, մերժելով նրա առաջին փեսացուին՝ Սերվիլիոս Կեպիոնին⁵³, թեև վերջինս նրա գլխավոր օգնականն էր Բիբուլոսի դեմ մղված պայքարում: Ազգական դառնալով Պոմպեոսին, քվեարկության ժամանակ նա սկսեց առաջինը նրա կարծիքը հարցնել, այն դեպքում, երբ նա նախկինում սկսում էր Կրասոսից, իսկ սովորույթը պահանջում էր ամբողջ տարվա ընթացքում հետևել հարցման այն կարգին, որն ընդունել էր կոնսուլը հունվարյան կալենդներին⁵⁴:

22. Փեսայի և աներոջ աջակցությամբ նա իր կառավարման համար ընտրեց բոլոր պրովինցիաներից Գալլիան, որն իր հարուստ հնարավորություններով և բարենպաստ իրադրությամբ նրան տրիումֆներ էր խոստանում: Համաձայն վատինիոսի օրենքի⁵⁵ սկզբնապես նա ստացավ միայն Այսրալայյան Գալլիան հարակից Իլլիրիկումով հանդերձ, բայց շուտով սենատը ավելացրեց նրան նաև Թավամազ Գալլիան⁵⁶. Ժերակուտականները վախենում էին, որ իրենց մերժման դեպքում նա այն կստանա ժողովրդից (2) Յնժությունից թև առած, նա շկարողացավ զսպել իրեն, որպեսզի մի քանի օր անց չպարծենա ողջ սենատի առջև, որ նա հասել է իր ցանկությունների նպատակին, շնայած հակառակորդների դժգոհությանն ու գանգատներին, և որ ինքը հիմա արդեն կսանձի նրանց բոլորին: Ինչ-որ մեկը վիրավորական եղանակով նկատեց, որ կնոջ⁵⁷ համար այդ հեշտ չէ. նա պատասխանեց, ասես կատակելով, որ Ասորիքում էլ թագավորել է Շամիրամը, իսկ Ասիայի ոչ փոքր մասին երբեմնի տիրում էին ամազոնուհիները⁵⁸:

23. Նրա կոնսուլության վերջանալուց հետո պրետորներ Գայոս Մե-

միտսը և Լուկիոս Դոմիցիոսը պահանջեցին հետաքննել անցած տարվա միջոցառումները: Կեսարը հանձնարարեց այդ սենատին, բայց սենատը հրաժարվեց: Երեք օր վատնելով անպատու վիճաբանություններում, նա մեկնեց պրովինցիա: Իսկույնկեթ, ասես ի նշան նրան նախազգուշացման, մի քանի մեղադրանքներով դատի տրվեց նրա քվեստորը, իսկ շուտով ժողովրդական տրիբուն Լուկիոս Անտիստիոսը պահանջեց պատասխանատվության ենթարկել նույնինքն Կեսարին, և միայն դիմելով մյուս տրիբուններին Կեսարը հասավ այն բանին, որ իրեն դատի չենթարկեն, քանի դեռ ինքը բացակայում է պետության գործերով: (2) Իսկ որպեսզի վստահ լինի նաև ապագայում, նա հատկապես ջանում էր ամեն տարի մագիստրատներում իրեն պարտական մարդիկ ունենալ, և միայն այն հայցողներին էր օգնում կամ թույլ տալիս իշխանության, ովքեր համաձայնվում էին պաշտպանել նրան բացակայության ժամանակ. նա մինչև այն տեղն էր հասնում, որ ոմանցից երդում և անգամ ստորագրություն էր պահանջում:

24. Բայց երբ Լուկիոս Դոմիցիոսը, առաջադրված լինելով կոնսուլ, սկսեց բացահայտորեն սպառնալ, որ դառնալով կոնսուլ, նա կհասնի այն բանին, ինչին չհասավ պրետոր եղած ժամանակ, և Կեսարից կխլի նրա զորքը,— այնժամ Կեսարը Կրասոսին և Պոմպեոսին կանչեց Լուկա, իր պրովինցիայի քաղաքներից մեկը, և համոզեց նրանց խնդրել երկրորդ կոնսուլություն, որպեսզի տապալեն Դոմիցիոսին, իսկ իր համար նա նրանց օգնությամբ⁵⁹ հասավ հրամանատարության պահպանման ևս հինգ տարի: (2) Ապավինելով դրան, ի լրումն պետությունից ստացած լեգեոնների⁶⁰, նա նոր լեգեոններ հավաքագրեց իր հաշվին, այդ թվում մեկ լեգեոն անդրալպյան գալլերից (այն կրում էր գալլական «ալաուդա» անվանումը)⁶¹, որոնց նա զինեց ու վարժեցրեց հռոմեական օրինակով և որոնց բոլորին հետագայում հռոմեական քաղաքացիություն էր շնորհում:

(3) Այդ ժամանակից ի վեր նա պատերազմի, նույնիսկ անարդարացի կամ վտանգավոր և ոչ մեկ առիթ բաց չէր թողնում, և առաջինն էր հարձակվում ինչպես դաշնակից, այնպես էլ թշնամական ու վայրի ցեղերի վրա, այնպես որ մի անգամ սենատը նույնիսկ որոշում ընդունեց հանձնաժողով ուղարկել հետաքննելու դրությունը Գալլիայում, իսկ ոմանք⁶² էլ ուղղակի առաջարկում էին հանձնել նրան թշնամուն: Բայց երբ նրա գործերը հաջող ընթացան, նրա պատվին շնորհակալական մաղթանքներ⁶³ էին նշանակվում, ավելի հաճախ և ավելի երկար, քան նախկինում որևէ մեկի համար: 25. Ահա թե ինչ կատարեց նա իր հրամանատարության ինը տարում: Ամբողջ Գալլիան, որն ընկած էր Պիրե-

ճեյան լեռնաշղթայի, Ալպերի, Սելենների ու Հոռամնու գե-
տերի միջև, ավելի քան 3200 մղոն ընդգրկմամբ, նա ամբողջաբխամբ,
բացառությամբ սոսկ դաշնակից կամ Հոռմին ծառայութուն մատուցած
ցեղերի, վերածեց պրովինցիայի և նրա վրա տարեկան 40 միլիոնի հարկ
դրեց: (2) Նա առաջինը հոռմեացիներից հարձակվեց անդհուհուսյան
գերմանացիների վրա և, կամուրջ գցելով, ծանր պարտութունների
մատնեց նրանց: Նա հարձակվեց նաև բրիտանացիների վրա, որոնք
մինչ այդ անհայտ էին, կողոպտեց նրանց և փրկագին ու պատանդներ
պահանջեց նրանցից: Այսքան հաջողութունների մեջ նա միայն երեք
անգամ ձախողում կրեց. նրա նավատորմը Բրիտանիայում համարյա
ոչնչացավ փոթորկից, Գալլիայում նրա լեգեոններից մեկը գլխովին
չսխչախվեց Գերգովիայի մոտ, գերմանական հողում դարանակալվեցին
և կործանվեցին լեգատներ Տիտուրիոսը և Ավրունկուլեսը⁶⁴:

26. Այդ նույն տարիներին նա կորցրեց սկզբում մորը, ապա դստե-
րը և դրանից հետո շուտով թոռանը: Մինչդեռ Պուբլիոս Կլոդիոսի սպա-
նութունը խոռվահուղեց ողջ պետութունը, և սենատը որոշեց ընտրել
միայն մեկ կոնսուլ, տալով Գնեսոս Պոմպեոսի անունը: Ժողովրդական
տրիբունները ցանկանում էին Կեսարին նշանակել Պոմպեոսին օգնա-
կան, բայց Կեսարը խորհուրդ տվեց նրանց, որ ավելի լավ է խնդրել ժո-
ղովրդին, որպեսզի նրան թույլ տրվի ձգտել երկրորդ կոնսուլության
մինչև հրամանաարության ժամկետի սպառումը և դրա համար շտա-
պել Հոռմ, պատերազմը շավարտած:

(2) Հասնելով դրան, նա սկսեց խորհել ավելիի մասին և հույսերով
լեցուն, բաց չլր թողնում և ոչ մի առիթ առատածեռնութուն ցուցարե-
րելու կամ ծառայութուն մատուցելու որևէ մեկին, ինչպես պետական,
այնպես էլ մասնավոր գործերում: Բնազմավարից ձեռք բերած միջոցնե-
րով նա սկսեց կառուցել ֆորումը⁶⁵. միայն հողը, որի վրա կառուցվում
էր այն, արժեք հարյուր միլիոնից ավելի: Ի հիշատակ դստեր նա ժողո-
վրդին խոստացավ Վաղիատորական խաղեր⁶⁶ և խնջույք— նրանից
առաջ ոչ ոք այդ չէր արել: Որպեսզի սպասումը ավելի լարված լինի, նա
հյուրասիրութուն նախապատրաստեց ոչ միայն մսագործների մոտ,
որոնց վարձել էր, այլև իր տանը: (3) Նշանավոր գլադիատորներին, ով-
քեր որևէ մի գոտեմարտում առաջացրել էին ունկնդիրների զայրույթը⁶⁷,
նա կարգադրեց բռնի ուժով խլել և պահպանել իր համար: Երիտասարդ
ռազմիկներին նա վարձեցնելու էր տալիս ոչ գպրոցներում և ոչ էլ լա-
նիստներին⁶⁸ մոտ, այլ հռոմեական հեծյալների և անդամ սենատորների
տներում, ովքեր լավ էին տիրապետում զենքին. նամականերից երևում է,
թե որպիսի համառությամբ էր նա խնդրում հետևել յուրաքանչյուրի

վարժեցմանը և անձամբ ղեկավարել նրանց պարապմունքները: Նա կրկնապատկեց լեգեոնների վարձատրությունը մշտնջենապետ, նրանց հաց էր բաց թողնում առանց շափի ու հաշվի, հրը այն առատ էր լինում, իսկ երբեմն էլ յուրաքանչյուրին մեկակախ ստրուկ էր ընծայում⁶⁹ գերյալներին:

27. Որպեսզի պահպանի ազգակցությունը և բարեկամությունը Պոմպեոսի հետ, նա նրան կնության առաջարկեց Օկտավիային՝ իր քրոջ թոռնուհուն, թեև վերջինս արդեն ամուսնացած էր Գայուս Մարցելլոսի հետ, իսկ ինքը խնդրեց նրա դստեր ձեռքը, որը նշանադրված էր Փավստոս Սուլլայի հետ: Պոմպեոսի բոլոր բարեկամներին և սենատորների մեծ մասին նա կապեց իրեն, նրանց վարկավորելով դրամով՝ առանց տոկոսի կամ շնչին տոկոսով: Մյուս դասերի քաղաքացիներին, ովքեր իրենք էին գալիս նրա մոտ կամ գալիս էին հրավերով, նա ողողում էր առատաձեռն ընծաներով, շնորհակալով նաև նրանց ազատարձակներին ու ստրուկներին, եթե նրանք վայելում էին իրենց տիրոջ կամ պատրոնի ողորմածությունը: (2) Վերջապես, նա միակ և ամենահուսալի հենարանն էր մեղադրյալների համար, պարտքի տակ ընկած և ամբողջ ունեցվածքը վատնած պատանյակների համար, սոսկ նրանցից բացի, ովքեր այնքան էին թաղվել հանցագործությունների, աղքատության կամ անառակության մեջ, որ անգամ նա չէր կարող օգնել նրանց. այդպիսիներին նա ուղղակի և բացահայտորեն ասում էր, որ նրանց միայն քաղաքացիական պատերազմը կարող է փրկել:

28. Նույնպիսի ջանասիրությամբ նա առինքնում էր և՛ թագավորներին, և՛ պրովինցիալները ողջ աշխարհով մեկ՝ ոմանց նա ընծա էր ուղարկում հազարավոր գերյալներ, մյուսներին նա օգնության համար գործեր էր ուղարկում ուր պետք էր և հրը պետք էր, առանց սենատի և ժողովրդի հավանության: Խոշորագույն քաղաքները ոչ միայն Իտալիայում, Գալլիայում և Իսպանիայում, այլև Ասիայում և Հունաստանում նա զարդարում էր փառահեղ կառույցներով:

(2) Վերջապես, երբ արդեն բոլորը զարմանքով միայն գուշակում էին, թե նրա մտադրությունն ինչ է, կոնսուլ Մարկոս Կլավդիոս Մարցելլոսը, էզիկտով հայտարարելով, որ պետական մեծ կարևոր գործ ունի, առաջարկեց սենատին՝ Կեսարի հաջորդին նշանակել ժամկետից վաղ, քանի որ պատերազմը ավարտված է, խաղաղությունը հաստատված և ժամանակն է, որ հաղթողը գորքը ցրի, իսկ ընտրություններում Կեսարի թեկնածությունը նրա բացակայությամբ չընդունել, քանի որ Պոմպեոսն էլ նրա համար վերապահություն չարեց ժողովրդի որոշման մեջ⁷⁰: (3) Բանն ալն է, որ Պոմպեոսը պաշտոնատար անձանց մասին իր օրենքում

արգելել էր հեռակա կարգով պաշտոններ նկրտելը և մոռացկոտության պատճառով բացառութիւն չէր արել անգամ Կեսարի համար, այդ սխալը ուղղելով միայն այն ժամանակ, երբ օրենքն արդեն փորագրված էր պղնձյա տախտակի վրա և հանձնված գանձատուն: Չբավարարվելով Կեսարին նրա սրբազաններից ու արտոնութիւններից զրկումով, Մարցելլոսը առաջարկեց նաև քաղաքացիական իրավունքից զրկել այն վերաբնակիչներին, որոնց ըստ Վատինիոսի օրենքի Կեսարը փոխադրել էր Նոր Կոմ, այն հիման վրա, որ քաղաքացիութիւնը նրանց շնորհված էր խարդախ դիտավորութեամբ⁷¹ և ապօրինի:

29. Կեսարին այդ տագնապ պատճառեց: Նա համոզված էր, և դա նրանից հաճախ էին լսել, որ հիմա, երբ դարձել է առաջին մարդը պետութեան մեջ, նրան այնքան էլ հեշտ չէ առաջին տեղից հրել երկրորդ տեղը, ինչպես և հետո երկրորդից՝ վերջինը: Դրա համար էլ նա սկսեց ողջ զորութեամբ դիմադրել, մասամբ տրիբունների միջամտութեան օգնութեամբ, մասամբ էլ երկրորդ կոնսուլ Սերվիոս Սուլպիցիոսի աջակցութեամբ: Հաջորդ տարին Գայոս Մարցելլոսը կոնսուլի պաշտոնում փոխարինեց իր հորեղբորորդի Մարկոսին և վերսկսեց նրա փորձերը. այնժամ Կեսարը հսկայական դրամով իրեն պաշտպան գտավ ի դեմս նրա գործընկեր էմիլիոս Պավլոսի և տրիբուններից ամենահամարձակի՝ Գայոս Կուրիոնի⁷²: (2) Բայց տեսնելով, որ իր դեմ զնալով ավելի ու ավելի համառորեն են գործում, որ նույնիսկ գալիք տարվա կոնսուլները⁷³ ընտրված են իր նկատմամբ թշնամաբար տրամադրված անձանցից, նա նամակով դիմեց սենատին, խնդրելով շխել իրենից հոռմեական ժողովրդի պարզեր, և կամ թող մյուս զորավարները⁷⁴ նույնպես արձակեն իրենց զորքերը: Ինչպես ենթադրում են, նա հույս ուներ, որ ցանկութեան դեպքում իր համար ավելի հեշտ կլինի գումարել իր վեոտերաններին, քան Պոմպեոսին նոր ռազմիկներ հավաքագրել: Իսկ հակառակորդներին նա առաջարկեց համաձայնել այն բանին, որ ինքը հրաժարվի ութ լեգեոններից ու Անդրալպյան Գալլիայից և մինչև կոնսուլ ընտրվելը պահպանի միայն երկու լեգեոն ու Այսրալպյան պրովինցիան կամ նույնիսկ մեկ լեգեոն և Իլլիրիկումը: 30. Իսկ երբ ո՛չ սենատը կամեցավ միջամտել, ո՛չ էլ հակառակորդները՝ գալ որևէ համաձայնութեան պետական գործերի վերաբերյալ, այնժամ նա անցավ Մերձավոր Գալլիան և, ավարտելով դատաժողովները, կանգ ստավ Հոավեննայում⁷⁵, սպառնալով պատերազմով, եթե սենատը խիստ միջոցներ ձեռնարկի իրեն պաշտպան կանգնած տրիբունների դեմ⁷⁶:

(2) Այդ, իհարկե, սոսկ պատրվակ էր քաղաքացիական պատերազմի համար. իսկ դրա պատճառները, ինչպես ենթադրում են, այլ էին:

Այսպես, Գնեսու Պոմպեոսը քանիցս պնդել է, որ Կեսարը նրա համար դիմեց համընդհանուր խառնակության ու հեղաշրջման, որ իր մասնավոր միջոցներով նա չէր կարող ո՛չ իր սկսած կառույցներն ավարտել, ո՛չ էլ արդարացնել այն սպասելիքները, որ առաջ էր բերել նրա վերադարձը ժողովրդի շրջանում: (3) Ուրիշներն ասում են, թե նա իբր վախենում էր, որ ստիպված կլինի պատասխան տալ այն ամենի համար, ինչ ինքը կատարել էր իր առաջին կոնսուլության ժամանակ՝ հակառակ նախանշանակների, օրենքների և արգելքների. չէ՞ որ Մարկոս Կատոնն էլ մեկ անգամ չէր երդմամբ հայտարարել, որ նրան դատական պատասխանատվության կկանչի իսկույնեթ, հենց որ նա արձակի զորքը, և ժողովուրդըն էլ էր ասում, որ եթե նա վերադառնա սոսկ որպես մասնավոր անձ, նա ևս, Միլոնի⁷⁷ նման, ստիպված կլինի պաշտպանվել դատարանում, շրջապատված զինված պահակախմբով: (4) Այդ այնքանով է ճշմարտանման, որ Ադինիոս Պոլլիոնն էլ է պատմում, թե ինչպես Կեսարը Ֆարսալի մոտ, դիտելով ջախջախված ու փախչող թշնամիներին, տառացիորեն հետևյալն ասաց. «Նրանք իրենք էին այդ ուզում. ինձ՝ Գայոս Կեսարիս, այն ամենից հետո, ինչ որ արել էի, նրանք մեղավոր կհռչակեին, եթե ես չդիմեի զորքերի օգնությանը»: (5) Վերջապես ոմանք էլ ենթադրում են, որ իշխելու սովորությունը ստրկացրել էր Կեսարին, և նա, ծանր ու թեթև անելով իր և թշնամու ուժերը, առիթից օգտվեց զավթելու գերագույն տիրապետությունը, որի մասին երազում էր վաղ տարիքից: Ըստ երևույթին, այդպես էր մտածում նաև Կիկերոնը, երբ «Պարտավորությունների մասին» երրորդ գրքում գրում էր, որ մշտապես Կեսարի շուրթերին էր Եվրիպիդեսի ոտանավորը, որը նա հետևյալ կերպ է թարգմանում՝

Եթե պետք է օրենքը զանց առնես, ապա հանուն թագի.
Իսկ մնացյալում դու այն պետք է հարգես⁷⁸:

31. Եվ ահա, երբ լուր հասավ, որ տրիբունների միջամտությունը հաջողություն չի ունեցել, որ նրանք իրենք են ստիպված թողել Հռոմը, Կեսարն իսկույնեթ առաջ շարժեց կոհորտաները⁷⁹, իսկ որպեսզի կասկածներ չհարուցի, նա առերևույթ և՛ ժողովրդական հանդիսախաղերին էր մասնակցում, և՛ գլադիատորական դպրոցի պլանը քննարկում, որը պատրաստվում էր կառուցել, և՛ սովորականի պես բազմամարդ ընթրիքներ կազմակերպում: (2) Բայց երբ արևը մայր մտավ, փոքրաթիվ ուղեկիցներով, հարևան ջրաղացի ջրիներով լծված սայլակառքով նա գաղտնի ճանապարհ ընկավ: Ջահերը հանգան, նա կորցրեց ճանապարհը, երկար թափառեց և միայն լուսազեմին, մի ուղեցույց անձ

2—990

գտնելով, ոտքով, նեղլիկ արահետներով վերջապես դուրս եկավ ճիշտ ճանապարհ⁸⁰։ Կոհորտաներին նա հասավ իր պրովինցիայի սահման Ռուբիկոն գետի մոտ։ Այստեղ նա դանդաղեց և, մտորելով թե ինչ քայլի է հանդիմանում, ասաց, դիմելով իր ուղեկիցներին՝ «Դեռևս ուշ չէ վերադառնալ. բայց հենց որ անցնենք այդ կամրջակը, արդեն ամեն ինչ կվճուր գենքը»⁸¹։

32. Նա գեռևս տատանվում էր, երբ հանկարծ նրան այսպիսի տեսիլք հայտնվեց։ Մոտակայքում ահապասելիորեն երևաց զարմանալի հասակի և գեղեցկության տեր մի անծանոթ մարդ. նա նստած սրինգ էր նվագում։ Այդ դայլայլները լսելով մոտ վազեցին ոչ միայն հովիվները, այլև իրենց պահակակետերը թողած շատ զինվորներ. նրանց մեջ կային նաև փողհարներ։ Եվ ահա նրանցից մեկից հանկարծ այդ մարդը խլեց փողը, նետվեց գետը և, խլացուցիչ մարտակոչ փոխհարելով, լողաց դեպի հանդիպակաց ափը։ «Հառա՛ջ,— բացականչեց այնժամ Կեսարը,— հառա՛ջ դեպի ուր մեզ կանչում են աստվածների նախանշանակները և հակառակորդների անարդարացիությունը։ Վիճակը նետված է»⁸²։

33. Այդպես նա փոխադրեց զորքերը, և ապա, ընդհանուր հավաքին ներկայացնելով իր մոտ փախած վտարանդի-տրիբուններին, նա արցունքն աչքերին, պատառոտելով կրծքի վրա հագուստները, սկսեց աղերսել զինվորներին հավատարիմ մնալ։ Նույնիսկ ասում են, որ իբր թե նա խոստացավ ամեն մեկին հեծյալի կացություն⁸³, բայց այդ թյուրիմացություն է։ Թանն այն է, որ նա, դիմելով ռազմիկներին, հաճախ ցույց էր տալիս ձախ ձեռքի մատը, հավատացնելով, որ պատրաստ է տալ նույնիսկ մատանին, որպեսզի վարձատրի իր պատվի պաշտպաններին, իսկ հեռավոր շարքերը, որոնց համար ավելի հեշտ էր տեսնել, քան թե լսել խոսողին, կարծեցյալ նշանները բառերի տեղ ընդունեցին, և այստեղից էլ լուր տարածվեց, որ իբր նա խոստացել է նրանց հեծյալների մատանիներ և շորս հարյուր հազար սեստերցիում։

34. Հետագա նրա գործողությունները, համառոտակի և ըստ կարգի, այսպիսին էին⁸⁴։ Նա մուտք գործեց Պիցեն, Ումբրիա, էտրուրիա. Լուկիոս Դոմիցիոսին, որը ապօրինի նրա հաջորդ էր նշանակված և գրավել էր Կորթինիուսը, նա ստիպեց հանձնվել և ազատ արձակեց. ասլա Վերին ծովի ափով նա շարժվեց դեպի Բրունդիզիում⁸⁵, ուր փախել էին կոնսուլները և Պոմպեոսը, փութալով կտրել անցնել ծովից այն կողմ։ (2) Բոլոր հնարավոր միջոցներով նրանց նավարկությունը արգելելու անհաջող փորձերից հետո նա ետ դարձավ դեպի Հռոմ։ Այստեղ դիմելով սենատորներին պետության դրության մասին ճառով, նա ուղղվեց Պոմպեոսի ուժեղագույն զորքերի դեմ, որոնք գտնվում էին Իսպանիայում երևք լեգատների՝

Մարկոս Պետրեոսի, Լուկիոս Ափրանիոսի և Մարկոս Վարրոնի, հրամանատարութեան ներքո. մեկնելուց առաջ նա ասաց բարեկամներին, որ այժմ գնում է գորավաք շունեցոզ գորբի գեմ, իսկ հետո կվերագանա անգորբ գորավարի մոտ: Եվ թեպետ նրան ուշացրին ինչպես Մասսելիայի⁸⁶ պաշարումը, որը փակեց իր դարպասները նրա ճանապարհին, այնպես էլ պարենի ծայր պակասը, շուտով նա ամենը իրեն ենթարկեց:

35. Վերագառնելով Իսպանիայից Հռոմ, նա նավարկեց անցավ Մակեդոնիա և այստեղ, գրեթե շորս ամիս պահելով Պոմպեոսին հզոր ամբուստանների օղակում, ի վերջո ջախջախեց նրան Ցարսալի ճակատամարտում և հետապնդեց փախստականին մինչև Ալեքսանդրիա, ուր նրան արգեն սպանված գտավ: Քանի որ նա տեսնում էր, որ Պտղոմեոս թագավորը իր գեմ էլ չարն է նյութում, ստիպված եղավ այստեղ դժվարին պատերազմ վարել անհարմար տեղանքում և անբարենպաստ ժամանակ՝ ձմռանը, առանց պաշարի, առանց նախապատրաստութեան, հարուստ և խորամանկ թշնամու մայրաքաղաքում: Հաղթելով, նա եզիպտական թագավորութունը տվեց Կլեոպատրային և նրա կրտսեր եղբորը, շահմարձակվելով այն պրովինցիայի վերածել, որպեսզի որևէ գործունյա տեղապահ չկարողանա հենվել նրա վրա նոր խոտլություններ բարձրացնելու համար: (2) Ալեքսանդրիայից նա ուղղվեց Ասորիք և ապա Պոնտոս, անհանգստացած Փանակի՝ Միհրգատ Մեծի որդու մասին ստացած լուրերից, որն պատերազմ սկսելու առիթից օգտվել էր և արդեն արբած էր ունեցած շատ հաջողություններից⁸⁷: Իր ժամանումի հինգերորդ օրը, նրա հայտնվելուց շորս ժամ հետո, Կեսարը ջախջախեց նրան միակ ճակատամարտում: Հետո նա հաճախ էր հիշեցնում, թե ինչպես էր Պոմպեոսին բախտ վիճակվել գորավարի փառք ձեռք բերել շնորհիվ հաղթանակների մի թշնամու նկատմամբ, որը պատերազմել չգիտի: Դրանից հետո նա Աֆրիկայում հաղթեց Սկիպիոնին և Յուրային, որոնց մոտ ապաստան էին փնտրում հակառակորդների մնացուկները, իսկ Իսպանիայում՝ Պոմպեոսի որդիներին:

36. Ողջ երկպառակտշական պատերազմում նա ոչ մի պարտություն չկրեց: Անհաջողություններ հանդիպեցին միայն նրա լեզատներին. այսպես, Գայոս Կուրիոնը սպանվեց Աֆրիկայում, Գայոս Անտոնիոսը թշնամու ձեռքը գերի ընկավ Իլլիրիկումում, Պուբլիոս Դուլաբելլան այդ նույն Իլլիրիկումում կորցրեց իր նավատորմը⁸⁸, իսկ Գնեսոս Դոմիցիոս Կարվինսը՝ Պանտասում իր զորքերը: Իսկ Կեսարը ինքը անփոփոխ ճակատամարտում էր հիանալի հաջողությամբ, չգիտենալով անգամ, թե ինչ է կասկածելի հաջողութունը, բացառութեամբ սոսկ երկու դեպքի՝ մեկ անգամ Գիրրաքիայի մոտ, երբ, Պոմպեոսի կողմից փախուստի մատնը-

ված, բայց չհետապնդված, նա բացակասնչեց, որ Պոմպեոսը հաղթել չգիտի, և մյուս անգամ Իսպանիայում տեղի ունեցած վերջին ճակատամարտում⁸⁹, երբ հաղթանակի հույսը կտրած, նա արդեն խորհում էր կամավոր մահվան մասին:

37. Պատերազմի ավարտից հետո նա տոնեց հինգ տրիումֆներ՝ շորսը մեկ ամսում, բայց ընդմիջումներով, Սկիպիոնի դեմ տարած հաղթանակից հետո, և հինգերորդը՝ Պոմպեոսի որդիներին հաղթելուց հետո: Առաջին և ամենափայլուն տրիումֆը գալլականն էր, դրանից հետո՝ ալեքսանդրականը, ապա՝ պոնտականը, հաջորդը՝ աֆրիկականը, և վերջապես՝ իսպանականը՝ յուրաքանչյուրն իր հատուկ շքեղությամբ և հարդարանքով⁹⁰: (2) Գալլական տրիումֆի ժամանակ վելարումում⁹¹ նրա մարտակառքի առեղը կտտրվեց, և նա քիչ էր մնում ընկներ մարտակառքից. նա Կապիտոլիում մտավ լույսերի տակ՝ քառասուն ջահակիր փղեր ընթանում էին աջից ու ձախից: Պոնտական տրիումֆի ժամանակ այլևայլ առարկաների թվում թափորում տանում էին երեք բառից կազմված մի արձանագրություն՝ «Նկա, տեսա, հաղթեցի», դրանով նա նշում էր ոչ թե պատերազմի իրադարձությունները, ինչպես սովորաբար արվում էր, այլ նրա արագ ավարտը:

38. Ռազմավարից նա իր հին լեգիոններին տվեց քսան և չորս հազարական սեստերցիում, չհաշված երկու հազարը, որը վճարված էր դեռևս մինչև երկպառակտչական պատերազմի սկիզբը: Նա նրանց նաև հող տրամադրեց⁹², բայց ոչ համատարած շերտով, որպեսզի չվտարի նախկին տիրակալներին: Նա ժողովրդին բաժանեց տասական չափ հացահատիկ և նույնքան ֆունտ յուղ, իսկ դրամով երեքհարյուրական սեստերցիում, որ խոստացել էր նախկինում, և հարյուրական էլ այն բանի համար, որ ժողովուրդը ստիպված էր եղել սպասել: (2) Նրանց, ովքեր չացարանի համար Հոմում վճարում էին մինչև երկու հազար սեստերցիում և Իտալիայում մինչև հինգ հարյուր, նա մեկ տարով ազատեց վճարից: Ի լրումն նա խնջույք կազմակերպեց⁹³ և մսի բաժանում, իսկ իսպանական տրիումֆից հետո՝ ևս երկու ճաշկերույթ՝ առաջինը նրան թվաց աղքատիկ և իր առատաձեռնությունը անարժան, ուստի չորս օր անց նա տվեց երկրորդը, որն անասելի ճոխ էր:

39. Նա ամենարազմազան հանդիսախաղեր էր կազմակերպում՝ և՛ գլադիատորների մարտեր, և՛ թատերական ներկայացումներ քաղաքի բոլոր թաղամասերում ու բոլոր լեզոններով⁹⁴, և՛ ձիարշավներ կրկեսում, և՛ ատլետների մրցություններ, և՛ ծովամարտ: Տորումում կայացած գլադիատորական մարտում⁹⁵ մահացու մարտնչեցին պրետորական տոհմից Տուրիոս Լետինոսը և նախկին սենատոր ու դատական հռետոր Քվինտոս

Կալպենոսը: Ռազմական պար պարեցին մեծատոհմիկների որդիները՝ Ասիայից ու Բուֆանայից: (2) Թատրոնում հռոմեացի հեծյալ Դեցիմոս Լաբերիոսը⁹⁶ հանդես եկավ սեփական ստեղծագործության մնջախաղում. ի վարձատրություն ստանալով հինգ հարյուր հազար սեստերցիում և ոսկյա մատանի, նա բեմից օրբեստրի միջով անցավ ուղղակի իր տեղը առաջին տասնչորս շարքերում⁹⁷: Չիարշավների ժամանակ, որոնց համար կրկեսը ընդլայնվեց երկու կողմից և շրջապատվեց ջրով լեցուն խանդակով, ազնվատոհմիկ պատանիները քառյակներով և զույգերով մարտահառքեր էին վարում ու ձիերի վրա ցատքեր կատարում: Տրոյական խաղը⁹⁸ կատարեցին ավագ և կրտսեր տարիքի տղաները երկու ջոկատներով: (3) Գազանների որսահալածումները⁹⁹ շարունակվեցին հինգ օր. ի եզրափակումն ցույց տրվեց յուրաքանչյուր կողմից հինգհարյուրական հետևակներով երկու գնդերի, քսան փղերի և երեք հարյուր հեծյալների ճակատամարտ. որպեսզի մարտ մղելու համար տեղը ընդարձակ լինի, կրկեսում քանդեցին շրջադարձային սյուները¹⁰⁰ և նրանց տեղում միմյանց հանդիման երկու բանակատեղի կառուցեցին: Ատլետները¹⁰¹ երեք օր շարունակ մրցում էին ժամաֆակավոր ստադիոնում, որը հատուկ կառուցվել էր Մարսյան դաշտի մոտակայքում: (4) Մովամարտի համար մի լիճ փորվեց փոքր Կոդեստական դաշտում¹⁰², մարտին մասնակցում էին տյուրոսական և եգիպտական նմուշի բիրեմներ¹⁰³, տրիրեմներ և քվադրիրեմներ՝ բազմաթիվ մարտիկներով: Այդ բոլոր հանդիսախաղերին ամեն կողմից այնքան մարդ հավաքվեց, որ շատ եկվորներ գիշերում էին փողոցներում ու նրբանցքներում խփված վրաններում. իսկ հրմշտուքը այնպիսին էր, որ շատերը մահացու ճգմվեցին, այդ թվում՝ երկու սենատոր:

40. Ապա նա ձեռնամուխ եղավ պետական գործերի կարգավորմանը: Նա ուղղեց օրացույցը. քրմերի անփութության պատճառով, որոնք կամայականորեն էին մուծում ամիսներն ու օրերը, օրացույցն այնպիսի անկարգ վիճակում էր, որ արդեն հնձի տոնը ամռանը, իսկ խաղողի այգեկութի տոնը աշնանը չէին ընկնում: Արևի շարժման համեմատ, նա տարին սահմանեց 365 օրից, իսկ ներդիր ամսվա փոխարեն մուծեց մեկ ներդիր օր յուրաքանչյուր չորս տարին անց¹⁰⁴: (2) Որպեսզի ժամանակի ճիշտ հաշվարկումը առաջիկայում տարվի հերթական հունվարյան կալենդներից, նա նոյեմբերի և դեկտեմբերի միջև մուծեց երկու ավելորդ ամիս, այնպես որ այն տարին, երբ արվում էին այդ վերափոխումները, կազմված ստացվեց տասնհինգ ամսից, հաշվելով և սովորական ներդիր ամիսը, որը նույնպես այդ տարի էր ընկնում:

41. Նա համալրեց սենատը, հին պատրիկներին ավելացրեց նորերը, մեծալքեց պրետորներին, էդիլներին, քվեստորներին և անգամ կրտսեր

պաշտոնատար անձանց թիվը¹⁰⁵: Նրանց, ովքեր զրկվել էին կոշումից ցենզորների կողմից կամ դատապարտված էին դատարանով կաշառքի համար, նա վերականգնեց իրավունքներում: (2) Ընտրութունները նա բաժանեց ժողովրդի հետ՝ բացառությամբ կոնսուլություն հայցողների, թեկնածուների կեսը ընտրվում էր ժողովրդի ցանկությամբ, կեսը՝ Կեսարի նշանակմամբ: Նա նշանակում էր նրանց կարճաոտ երկտողերով, որոնք հղվում էին տրիբունները՝ «Դիկտատոր Կեսարը՝ այսինչ տրիբունսին: Ձեր ուշադրությանն եմ առաջարկում այսինչին, որպեսզի նա ձեր ընտրությամբ ստանա իր հայցած կոշումը»: Նա թուլլատրեց պաշտոնների ստանձնել նաև նրանց որդիներին, ովքեր մահապատժի էին ենթարկվել պրոսկրիպիումների ժամանակ: Դատարանում նա թողեց միայն երկու դատական դեկուրիաներ¹⁰⁶՝ սենատորական և հեծյալական. երրորդ՝ էրարային տրիբունների¹⁰⁷ դեկուրիան նա վերացրեց:

(3) Քաղաքացիների մարդահամարը¹⁰⁸ նա կատարեց ոչ սովորական տեղում և ոչ սովորական կարգով, այլ ըստ թաղամասերի և տնատերերի միջոցով, և գանձարանից հաց ստացողների թիվը երեք հարյուր քսան հազարից կրճատեց մինչև հարյուր հիսուն հազարի: Իսկ որպեսզի ցուցակները նորոգելիս նոր անկարգություններ չկարողանան առաջանալ, նա որոշեց, որպեսզի ամեն տարի պրետորը վիճակահանությամբ փոխարինի մահացած ստացողներին նորերով այն անձանց թվից, ովքեր չէին ընկել ցուցակները: 42. Բացի այդ, ութսուն հազար քաղաքացիների նա տարաբնակեցրեց անդրծովյան գաղութներում¹⁰⁹: Ցանկանալով համալրել քաղաքի նոսրացած բնակչությունը, նա օրենք հրապարակեց այն մասին, որպեսզի քսան տարուց բարձր և քառասուն տարուց երիտասարդ¹¹⁰ ոչ մի քաղաքացի, որը զինվորական ծառայության մեջ չի գտնվում, Իտալիան չթողնի ավելի քան երեք տարի, որպեսզի սենատորների զավակներից ոչ մեկը երկրից շնչն չառնի այլ կերպ, եթե ոչ միայն պաշտոնատար անձին կից զինվորական կամ քաղաքացիական շքախումբի կազմում. և որպեսզի անասնատերերը իրենց հովիվներին երրորդ մասից ոչ պակասը հավաքագրեն ազատածին հասուն մարդկանցից: Բոլորին, ովքեր Հռոմում զբաղվում էին բժշկությամբ, և ազնիվ արվեստների¹¹¹ բոլոր ուսուցիչներին նա շնորհում էր հռոմեական քաղաքացիություն, որպեսզի նրանք ևս հաճույքով բնակություն հաստատեն քաղաքում և ներգրավեն ուրիշներին:

(2) Նա շարդարացրեց պարտային պարտավորությունների¹¹² վերացման քանիցս ծագած հույսերը, բայց որոշեց, ի վերջո, որպեսզի պարտատերերի վճարումները փոխատուներին սահմանվեն այն արժեքով, ինչ ունեին նրանց կալվածները մինչև քաղաքացիական պատերազ-

մը, և որպեսզի պարտքի ընդհանուր գումարից դուրս գրվեն բոլոր վճարումները կամ ըստ տոկոսների փոխանցումները. իսկ այդ կրճատում էր պարտքը համարյա մեկ քառորդով: (3) Նա ցրեց բոլոր կոլեգիումները¹¹³, բացառությամբ սամեարյանների: Նա ուծեղացրեց հանցագործների պատիժները. իսկ քանի որ հարուստ մարդիկ այն պատճառով էին հեշտությամբ ապօրինության գնում, որ նրանց կարողությունը վտարանդիության¹¹⁴ մեջ էլ նրանց էր մնում, նա, կիկերոնի խոսքերով¹¹⁵, սկսեց պատժել քաղաքացու սպանության համար ամբողջ տևեցվածքի, իսկ այլ հանցագործությունների համար՝ ունեցվածքի կեսի գրկումով:

43. Դատը¹¹⁶ նա վարում էր խիստ և արտակարգ մանրագնին: Նրանց, ովքեր դատապարտվում էին շորթումի համար, նա անգամ վտարում էր սենատորական դասից: Մի նախկին պրետորի ամուսնությունը մի կնոջ հետ, որը միայն նախօրյակին էր ապահարզան ստացել նախորդ ամուսնուց, նա հայտարարեց անվավեր, թեև դավաճանության մասին կասկածներ չկային: Օտարերկրյա ապրանքների վրա նա մաքսեր դրեց: Պատգարակները, ֆինչպես նաև ծիրանի հագուստները և մարգարտյա զարդերը օգտագործելը նա վերապահեց միայն որոշակի անձանց¹¹⁷, որոշակի տարիքի և որոշակի օրերի: (2) Նա հատկապես խիստ էր պահպանում պեթանքի դեմ ուղղված օրենքները¹¹⁸. շուկայի շուրջը նա պահակներ կարգեց, որպեսզի նրանք խլեն և իր մոտ բերեն արգելված խորտիկները, իսկ ՎՊԵ որևէ բան վրիպում էր պահակներից, նա երբեմն ուղարկում էր լիկտորների՝ զինվորներով հանդերձ, որպեսզի ուղղակի սեղաններից հավաքեն արգեն մատուցված ճաշատեսակները:

44. Օրը օրին նա մտահղանում էր մայրաքաղաքի կառուցապատման և զարդարման, տերության ամրապնդման և ընդլայնման ավելի ու ավելի մեծ բազմաթիվ պլաններ՝ ամենից առաջ, Կերտել Մարսի տաճարը, որպիսին բնավ չէր եղել, դրա համար լցնելով և հողին հավասարեցնելով այն լիճը, որտեղ նա ծովամարտ էր կազմակերպել, իսկ Տարպեյան ժայռի¹¹⁹ լանջին կառուցել մի մեծագույն թատրոն. (2) քաղաքացիական իրավունքը հարկ եղածին պես կարգավորել, մի քանի գրքերում ժողովելով տարատեսակ օրենքների վիճիսարի թվաքանակից բոլոր ամենալավը և ամենակարևորը. բացել հնարավորին չափ հարուստ գրադարաններ¹²⁰, հունական և լատինական, հանձնարարելով դրանց կազմումն ու կառուցումը Մարկոս Վարրոնին. շորաքնել Պոմպոնյան ճահիճները¹²¹, (3) իջեցնել Զուլցինյան լիճը¹²², ճանապարհ գցել Վերին ծովից Ապենինյան լեռնաշղթայի վրայով մինչև բուն Տիրոս. Իսթմոսի լայնքով ջրանցք փորել¹²³, հնազանդեցնել Թրակիա և Պոնտոս ներխուժած դաքերին, իսկ ապա պատերազմի գնալ պարթևների դեմ Փոքր

Հայքի վրայով, բայց վճռական ճակատամարտի մեջ շմտնել, նախապես շժանոթանալով հակառակորդի հետ:

(4) Այդպիսի մտահղացումների ու գործերի մեջ էլ վրա հասավ նրա մահը: Սակայն մինչև այդ մասին խոսելը ավելորդ չի լինի համառոտակի շարադրել այն ամենը, ինչ վերաբերում է նրա արտաքինին, սովորություններին, հագուստին, բարքերին, ինչպես նաև զբաղմունքներին պատերազմական և խաղաղ ժամանակ:

45. Ասում են, որ նա բարձրահասակ էր, ճերմակամորթ, լավ կառուցվածքի տեր, քիչ լիքը դեմքով, սև ու աշխույժ աչքերով: Նա աչքի էր ընկնում գերազանց առողջությամբ՝ միայն կյանքի վերջում նա սկսեց հանկարծակի ուշաթափություններ և գիշերային վախեր ունենալ, երկու անգամ էլ պարապմունքների ժամանակ ընկնավորության նոպաներ է ունեցել: (2) Մարմնին նա հետևում էր անգամ շափից դուրս խնամքով, և ոչ միայն խուզում ու սափրում էր, այլև պոկոտում էր մազերը և դրա համար նրան շատերն էին հանդիմանում: Նրան այլանդակող ճաղատը նրա համար անտանելի էր, քանի որ հաճախ էր առաջ բերում անբարյացակամների ծաղրը: Դրա համար էլ նա նոսրացած մազերը սովորաբար գազաթից դեպի ճակատն էր սահրում. դրա համար էլ նա մեծագույն հաճույքով ընդունեց ու օգտվեց մշտապես դափնեպսակ կրելու իրավունքից:

(3) Եվ հագնվում էր նա, ասում են, յուրատեսակ՝ կրում էր թևքերին ծոպեր ունեցող սենատորական տունիկա¹²⁴ և անպայման գոտկավորում էր այն, բայց թեթևակի. այստեղից էլ ծայր առավ Սուլլայի խոսքը, որը մեկ անգամ չէ, որ օպտիմատներին խորհուրդ էր տվել զգուշանալու վատ գոտկավորված պատանյակից:

46. Սկզբնապես նա ապրում էր Սուբուրայում¹²⁵, մի համեստ տան մեջ, իսկ երբ դարձավ մեծ քրմապետ, բնակություն հաստատեց Սրբազան ճանապարհի վրա գտնվող պետական շենքում: Նրբաճաշակության և շքեղության նկատմամբ նրա ունեցած մեծ կրքի մասին շատերն են հայտնում: Այսպես, ասում են, որ նա մեծաքանակ դրամ ծախսելով Նեմիլճի¹²⁶ մոտ հիմք գցեց և կառուցեց մի վիլլա, որը նրա դուրն այնքան էլ շեկավ, և նա հիմնովին քանդեց այն, թեև դեռևս աղքատ էր ու պարտքերի մեջ խրված: Արշավանքների ժամանակ նա իր հետ տանում էր մանրակտոր և խճանկարավոր հատակներ:

47. Նա Բրիտանիա ներխուժեց իբրև թե այնտեղ մարգարիտ պանելու հույսով. համեմատելով մարդարիտների մեծությունը, նա հաճախ կշռում էր դրանք սեփական ափում: Փորագրված քարերը, դրվազազարդ անոթները, քանդակները, հին պատկերները նա միշտ հրապուրանքով էր

հավաքում: Գեղեցիկ և գիտնական ստրուկներին նա այնպիսի շլաված գներով էր գնում, որ ինքն էլ էր անհարմար զգում և արգելում էր դրանք գրանցել մատյաններում:

48. Պրովինցիաներում նա մշտապես ճաշ էր տալիս երկու սեղանով. մեկի շուրջը ընկողմանում էին զինվորական թիկնոցներով կամ հունական զգեստներով հյուրերը, մյուսի շուրջը՝ տոգաներ հագած հյուրերը տեղական բնակիչներից ամենանշանավորների հետ²⁷: Տանը նա կարգ ու կանոն պահպանում էր և՛ փոքր, և՛ մեծ գործերում այնքան անշեղորեն ու խիստ, որ մի անգամ կոճղակապ արեց հացթուխին այն բանի համար, որ նա հյուրերին այնպիսի հաց չէր մատուցել, ինչպես տիրոջը, իսկ մի անգամ էլ մահվամբ պատժեց իր սիրեցյալ ազատագրյալին, որովհետև սա գայթակղել էր հոռմեական հեծյալի կնոջը, թեև նրանից ոչ ոք չէր էլ գայնգատվել:

49. Նրա ողջախոհության վրա միակ բիծը կենակցությունն էր Նիկոմեդեսի հետ, բայց դա ծանր ու անջնջելի մի խայտառակություն էր, որ համընդհանուր անարգանք հարուցեց նրա հանդեպ: Ես չեմ խոսում լիցիներոս Կալվոսի նշանավոր տողերի մասին.

... և մնացյալ բոլորը,

որով բութանիացիների մոտ տիրացավ Կեսարի հետևի բարեկամը.

Լռում եմ Դուլարելլայի և Կուրիոն Ավագի ճառերի մասին, որոնցում Դուլարելլան նրան անվանում է «թագավորի ներքնակ» և «թագուհուն բաժանող», իսկ Կուրիոնը՝ «Նիկոմեդեսի խրախճանատեղի» և «բութանիական անառականոց»: (2) Չեմ խոսում անգամ Բիրուլոսի էդիկտների մասին, որոնցում նա իր կոլեգային անվանում է բութանիական թագուհի և հայտարարում, որ առաջ նա թագավոր էր ուզում, իսկ հիմա՝ թագավորություն, միևնույն ժամանակ, ըստ Մարկոս Բրուտոսի, ոմն Օկտավիոս ևս, թուլամիտ և այդ իսկ պատճառով անզուսպ լեզվի տեր մի մարդ, ողջ ժողովրդի ներկայությամբ Պոմպեոսին անվանում էր թագավոր, իսկ Կեսարին մեծարում որպես թագուհի: Բայց Գայոս Մեմմիոսը ուղղակի հանդիմանում է նրան այն բանի համար, որ նա կանգնած էր եղել Նիկոմեդեսի մոտ, մյուս սիրեցյալների թվում, որպես մատուցակ բազմամարդ խնջույքում, որին ներկա էին նաև մի քանի հոռմեացի վաճառական հյուրեր, որոնց անունը նա տալիս է հականե հանվանե: (3) Իսկ Կիկերոնը իր որոշ նամակներում նկարագրում էր, թե ինչպես թագավորական սպասավորները Կեսարին տարել են ննջասենյակ, թե ինչպես նա ծիրանի հագուստով պառկել է ոսկյա առագաստում և թե ինչպես է Բութանիայում պղծվել Վեներայի այդ ժառանգի նրիտասարդու-

Քչաճ ծաղիկը. գեռ ավելին, երբ մի անգամ Կեսարը սննատի առջև խոսում էր ի պաշտպանութուն նիսայի՝ Նիկոմեդեսի դասեր, և թվարկում թագավորի նրան մատուցած բոլոր ծառայութեանները, Կիկերոնը ընդհատեց նրան. «Քողնենք այդ, խնդրում եմ, բողբոխն քաջ հայտնի է, թե ինչ է նա քեզ տվել և քնչ ես նրան տվել դու»: (4) Վերջապես, գալլական տրիումֆի ժամանակ նրա զինվորները, քայլելով մարտակառքի ետևից, մշուս ծաղրական երգերի թվում երգում էին և սա, որը լաֆն տարածում էր գտել ¹²⁸.

Գալլերին Կեսարն է նվաճում, իսկ Կեսարին Նիկոմեդեսը.

Այժմ Կեսարը հաղթանակ է տոնում, Գալլիան նվաճած,—

Նիկոմեդեսը հաղթանակ չի տոնում, Կեսարին նվաճած:

50. Ընդհանուրի կարծիքով, նա սիրային հաճույքների սիրահար էր և շռայլում էր իրեն: Նա սիրեկանն էր ազնվազարմ կանանց, այդ թվում՝ Պոստումիայի՝ Սերվիոս Սուլպիցիոսի կնոջ, Լուլիայի՝ Ավլոս Գաբիոսի կնոջ, Տերտուլլայի՝ Մարկոս Կրասոսի կնոջ, և անդամ Մուցիայի՝ Գնեսոս Պոմպեոսի կնոջ: Իրոք, և՛ հայր ու որդի Կուրիոնները, և՛ շատ ուրիշներ հանդիմանում էին Պոմպեոսին այն բանի համար, որ իշխանության ծարավի պատճառով նա ամուսնացավ այն մարդու դստեր հետ, որի պատճառով վոնդել էր իր համար երեք զավակ ծնած կնոջը և որին մեկ անգամ չէր հառաչանքով անվանել իր էգիստեսը¹²⁹: (2) Բայց մնացյալ բոլորից առավել նա սիրում էր Բրուտոսի մորը՝ Սերվիլիային: Դեռևս իր առաջին կոնսուլության ժամանակ¹³⁰ նա Սերվիլիայի համար գնել էր թի մարգարիտ, որը վեց միլիոն արժեք, իսկ քաղաքացիական պատերազմի ժամանակ, շհաշված ուրիշ ընծաներ, նա աճուրդով Սերվիլիային վաճառեց հարստագույն կալվածներ՝ շնչին գնով: Երբ շատերը զարմանում էին այդ էժանությունից, Կիկերոնը սրամտորեն նկատեց. «Ինչո՞վ է վատ այդ գործարքը, եթե երրորդ մասը մնում է վաճառողին»: Բանն այն է, որ Սերվիլիան, ինչպես կասկածում էին, մերձեցրել էր միմյանց Կեսարին և իր դուստր Յունիա Երրորդին¹³¹:

51. Եվ պրովինցիաներում էլ նա ձեռք չէր քաշում օտարների կանանցից. դա երևում է թեկուզ և այն երկտող ոտանափորից, որը նույնպես երգում էին ռազմիկները գալլական տրիումֆի ժամանակ.

Քաղքերը կանանց. մենք քաղաք ենք բերում ճաշատ անառւ կին:

Հոռմում փոխառած փողերով դու շնացար Գալլիայում:

52. Նրա սիրուհիների թվում կային նաև Քագուհիներ, օրինա մավրիտանուհի էվնոյան, Բոգուդի կինը, և՛ ամուսնուն, և՛ կնոջը, ըստ

Նապաստակ, նա բազմաթիվ և հարուստ ընծաներ տվեց: Բայց ամենից շատ նա սիրում էր Կլեոպատրային. վերջինիս հետ նա մեկ անգամ չէ, որ կարախճանքներ էր արել մինչև լուսաբաց, հարուստ հանգստախցիկով նրա նախնի Կեսարը պատրաստ էր նախարկել ամբողջ Եգիպտոսով ընդհուպ մինչև Ծխովպիա, եթե զորքը չհրաժարվեր նրան հետևել. վերջապես, նա Կլեոպատրային Հուսի հրավիրեց և ճանապարհ դրեց մեծագույն պատվիներով ու հարուստ ընծաներով, անգամ թույլ տալով նրան նորածին որդուն իր անունով կոչելու (2) Որոշ հունական գրողներ հայտնում են, որ այդ որդին նման էր Կեսարին և՛ դեմքով, և՛ կեցվածքով: Մարկոս Անտոնիոսը ¹³² պնդում էր սենատի առջև, որ Կեսարը տղային ճանաչել է իր որդին և որ դա հայտնի է Գայոս Մատիոսին, Գայոս Օպպիոսին և Կեսարի մյուս բարեկամներին, սակայն այդ Գայոս Օպպիոսի ամբողջ գիրք գրեց, ապացուցելով, որ երեխան, որին Կլեոպատրան ներկայացնում էր որպես Կեսարի որդի, իրականում ամենևին էլ Կեսարի որդին չէ (կարծես թե այդ կարիք ուներ արդարացման կամ պաշտպանության): (3) Ժողովրդական տիրուն Հելվիոս Կիննան շատերին էր փոստովանել, որ ինքը գրել և նախապատրաստել էր մի օրինագիծ, որը Կեսարը հրամայել էր անցկացնել իր բացակայությանը. ըստ այդ օրենքի Կեսարին թույլատրվում էր որքան ցանկալի է և որպիսին ցանկալի է կին վերցնել՝ ժառանգներ ծնելու համար¹³³: Վերջապես, որպեսզի կասկած չմնա նրա անբարոյականության և անառակության խայտառակ փառքի մասին, հիշեցնեմ, որ Կուրիոն Ավագը ինչ-որ մի ճառում նրան անվանել էր բոլոր կանանց ամուսին և բոլոր ամուսինների կին:

53. Գինի շատ քիչ էր խմում՝ այդ շին ժխտում անգամ նրա թշնամիները: Մարկոս Կատոնին են պատկանում այս խոսքերը. «Կեսարը բոլորի մեջ միակն էր պետական հեղաշրջման ձեռնամուխ լինում սթափ վիճակում»: Իսկ ուտելիքի նկատմամբ նա, ինչպես ցույց է տալիս Գայոս Օպպիոսը, այնքան անքմահաճ էր, որ երբ որևէ մեկի մոտ ճաշելիս թարմ յուղի փոխարեն հինն էր մատուցվում և մնացյալ հյուրերը նրանից հրաժարվում էին, նա միակն էր, որ վերցնում էր այն, անգամ, սովորականից ավելի, որպեսզի ցույց շտա, թե իբր ինքը կշտամբում է տանաիրողը անփութության կամ անբաղաբավարության համար:

54. Անշահախնդրություն նա շղթակորեց ո՛չ զինվորական, ո՛չ էլ քաղաքացիական պաշտոններում¹³⁴: Իսպանիայում պրոկոնսուլ¹³⁵ եղած ժամանակ, համաձայն որոշ ժամանակակիցների հուշերի, նա աղքատի նման դաշնակիցներից դրամ էր խնդրում իր պարտքերը վճարելու համար, իսկ լուգիտանների մոտ նա ավերեց, ինչպես պատերազմում, մի քանի քաղաք, թեև նրանք համաձայնել էին նրա պահանջներին և նրա

առջև բացել դարպասները: (2) Գալիլիայում նա ամայացնում էր նվիրաօբերություններով լի աստվածների մեհյաններն ու տաճարները և ավերում քաղաքները ավելի հաճախ ավարի, քան պատժելու համար: Իրա համար էլ նրա մոտ այնքան ոսկի հայտնվեց, որ նա այն վաճառում էր Իտալիայով և պրովինցիաներով մեկ՝ կշռով, ֆոնտը երեք հազար սեստերցիումով¹³⁶: (3) Իր առաջին կոնսուլության օրոք նա Կապիտոլիումի տաճարից հափշտակեց երեք հազար ֆունտ ոսկի, փոխարենը դնելով նույնքան ոսկեզօծված պղինձ: Նա առևտուր էր անում դաշինքներով ու թագավորություններով. միայն Պտղոմեոսից¹³⁷ նա ստացավ մոտ վեց հազար տաղանդ իր և Պոմպեոսի համար: Իսկ հետագայում միայն անսքող կողոպուտները և սրբապղծությունները¹³⁸ թույլ տվեցին նրան հանելու քաղաքացիական պատերազմների, տրիումֆների և հանդիսախաղերի ծախսերը:

55. Ճարտասանության մեջ և ուղմական արվեստում նա ձեռք բերեց ոչ նվազ, եթե ոչ ավելի մեծ փառք, քան դրանց լավագույն գիտակները: Դուլաբելլային մեղադրելուց հետո բոլորն առանց վեճի ճանաչեցին նրան որպես Հռոմի լավագույն դատական հռետորներից մեկը: Համենայն դեպս, Կիկերոնը, իր «Բրուտոսում»¹³⁹ թվարկելով հռետորներին, հայտարարում է, որ չի տեսել ոչ ոքի, որը գերազանցեր Կեսարին, և նրա խոսքն անվանում է գեղեցիկ, փայլուն և, անգամ, վեհապանծ ու ազնիվ: (2) Իսկ Կոռնելիոս Նեպոտին նա Կեսարի մասին գրում էր հետևյալ կերպ¹⁴⁰. «Ինչպե՞ս: Ո՞ւմ կգերադասես դու նրա համեմատ այն հռետորներից, ովքեր ոչինչ չգիտեն, բացի իրենց արվեստից: Ո՞վ է ավելի սուր կամ հարուստ մտքերով: Ո՞վ ավելի փարթամ կամ նրբազեղ արտահայտություններ ունի»: Ըստ երևույթին, որպես ճարտասանության օրինակ, համենայն դեպս, երիտասարդ ժամանակ, նա ընտրել էր Կեսար Ստրաբոնին¹⁴¹. վերջինիս՝ ի պաշտպանություն սարդինացիների արտասանած ճառից նա նույնիսկ մի քանի բան բառացիորեն փոխադրել էր իր նախնական ճառի մեջ¹⁴²: Ինչպես հաղորդում են, խոսում էր նա զրնգուն ձայնով, կրակոտ, բայց հաճելի շարժումներով ու ձեռածությամբ: (3) Նա թողել է մի քանի ճառեր, սակայն դրանցից մի քանիսը ճիշտ չեն վերագրվում նրան: Այսպես, ոչ առանց հիմքի Օգոստոսը գրտնում էր, որ հանուն Քվինտոս Մետելլոսի արտասանած ճառը չի հրատարակվել իր՝ Կեսարի կողմից, այլ զրառել է սղագրողը, որը լավ չէր հասցրնում զրի առնել հռետորի խոսքերը: Մի քանի ընդօրինակություններում ևս անգամ գտա ոչ թե «Հանուն Մետելլոսի», այլ «Մետելլոսի համար» վերնագիրը, թեև Կեսարն այնտեղ խոսում է իր անունից, պաշտպանելով իրեն և Մետելլոսին այն մեղադրանքներից, որոնք բարդում էին

Նրանց վրա ընդհանուր անբարյացակամները: (4) Ճիշտ այդպես էլ Օգոստոսը չի համարձակվում Կեսարին վերագրել իսպանիայում գինվորների առջև արտասանած ճառը¹⁴³. մինչդեռ հայտնի են ամբողջ երկու նման ճառեր, մեկը արտասանված առաջին մարտից առաջ, մյուսը՝ երկրորդ, թեև Ազինիոս Պուլլիոնը գրում է, որ այդտեղ թշնամու սրընթաց գրոհի հանդեպ ժամանակ չկար որևէ ճառ ասելու:

56. Նա թողել է նաև «Նոթեր» գալլական պատերազմում և Պոմպեոսի դեմ քաղաքացիական պատերազմում իր գործերի մասին: Ո՞ւմ են պատկանում ալեքսանդրիական, աֆրիկական և իսպանական պատերազմների մասին նոթերը, հայտնի չէ. ոմանք տալիս են Օպպիոսի անունը, մյուսները՝ Հիրցիոսի, որը լրացրեց նաև «Գալլական պատերազմի» վերջին գիրքը, որը Կեսարը չէր ավարտել: Կեսարի «Նոթերի» մասին Կիկերոնն այսպիսի կարծիք է հայտնում նույն «Բրուտոսում»¹⁴⁴: (2) «Նրա երկասիրած նոթերը ամենաբարձր գովասանքի են արժանի՝ նրանցում կա մերկ պարզություն և հմայք՝ զերծ հոետորական ճոխ պաճուճանքից: Նա ուզում էր միայն նախապատրաստել այն ամենը, որը պետք է նրանց համար, ովքեր կցանկանան գրել պատմություն, բայց տես որ հաճոյացավ սոսկ հիմարներին, ովքեր կուզեն զարդարել նրա պատմածները իրենց ճոռոմաբանություններով, իսկ խոհեմամիտ մարդիկ նրանից հետո արդեն չեն համարձակվի գրիչ վերցնել»: (3) Իսկ Հիրցիոսը¹⁴⁵ այսպես է հայտարարում այդ նույն «Նոթերի» մասին, «Նրանք այնպիսի միահամուռ հավանություն գտան, որ, թվում է, ոչ այնքան տալիս են, որքան նյութ են խլում պատմաբաններից: Մենք ավելի շատ ենք, քան որևէ մեկ ուրիշը, հիանում նրանցով. բոլորը գիտեն, թե որքան լավ և ճիշտ, իսկ մենք դեռ գիտենք, որքան դյուրին ու արագ գրեց դրանք Կեսարը»: (4) Ազինիոս Պուլլիոնը գտնում է, որ դրանք գրված են առանց հարկ եղած մանրագնություն և ճշմարտության մասին հոգատարության՝ շատ բաների, ինչ արել էին ուրիշները, Կեսարը զուր էր հավատ ընծայում, և շատ բաներ էլ, որ նա ինքն էր արել, նա դիտավորյալ կամ մոռացության պատճառով աղճատված է պատկերում. ի միջի այլոց, Պուլլիոնը ենթադրում է, որ նա կվերաշարադրեր դրանք և կուղղեր:

(5) Նա թողել է ևս երկու գիրք «Զուգագրությունների մասին»¹⁴⁶, նույնքան գրքեր՝ «Ընդդեմ Կատոնի»¹⁴⁷ և, վերջապես, «Ուղի» վերնագրով մի պոեմ: Այդ երկերից առաջինը նա գրեց Ալպերից անցնելու ժամանակ, դատական ժողովներից հետո զորքով Մերձավոր Գալլիայից վերադառնալիս. երկրորդը՝ Մունդայի ճակատամարտի ժամանակաշրջանում. վերջինը՝ երբ նա քսանչորս օրում անցում կատարեց Հռոմից Հեռավոր Իս-

պանիա: (6) Գոյութիւն ունեն նաև նրա զեկուցագրերը սենատին, ինչպէս թվում է, նա առաջինը սկսեց հաղորդել նրանց էջերով հուշագրքի տեսք, այն դեպքում, երբ նախկինում կոնսուլները և զորապետները դրանք ուղղակի գրում էին թերթերի վրա վերևից մինչև ներքև: Գոյութիւն ունեն նաև նրա նամակները¹⁴⁸ կիկերոնին և նամակները մերձավորներին տնային գործերի մասին, դրանցում, եթե պետք էր հաղորդել ինչ-որ մի գաղտնի բան, նա օգտվում էր ծածկագրից, այսինքն տառերը այնպես էր փոխում, որպեսզի նրանցից ոչ մի բառ չկազմվեր: Որպեսզի դրանցից զուխ հաւեն և կարդան, ամեն անգամ պետք է շորրորդ տառը կարդաս առաջինի փոխարեն, օրինակ, D փոխանակ A-ի և այլն: 7) Հայտնի է նաև որոշ երկերի մասին¹⁴⁹, որոնք նա գրել է մանուկ և պատանի ժամանակ՝ «Գովք Հերկուլեսին», «էդիպ» ողբերգութիւնը, «Ասուլթների ծողովածու». բայց Օգոստոսը արգելեց այդ բոլոր գրքույկները հրատարակել իր կարճ ու պարզ նամակում Պոմպեոս Մակրոսին, որին հանձնարարւած էր գրադարանների կազմակերպումը:

57. Զենքի և ձիու նա հիանալի էր տիրապետում, նրա տոկունութիւնը գերազանցում էր ամեն մի հավանականութիւն: Արշավների ժամանակ նա ընթանում էր զորքի առջևից, սովորաբար հետիոտն, Լրբեմն ձիու վրա, զլիսաբաց, շնայած տոթին կամ անձրևին: Ամենաերկար անցումները նա կատարում էր անասելի արագութեամբ, թեթև հագնված, վարձու սայլակառքով, օրական անցնելով հարյուր մղոն, գետերը հաղթահարում լողալով կամ փչած տիկերի օգնութեամբ, այնպես որ հաճախ առաջ էր ընկնում իր մասին լուր տանող սուրհանդակներից:

58. Դժվար է ասել, զգուշութիւնը թե համարձակութիւնն էր ավելի շատ նրա ռազմական ձեռնարկումներում: Նա բնավ զորքը չէր տանում այնպիսի ճանապարհներով, որոնք հարմար էին դարանի համար, նախապես շետագոտելով տեղանքը. Բրիտանիա նա անցում կատարեց միայն այն ժամանակ, երբ Դնքը անձամբ¹⁵⁰ հետաքննեց նավահանգիստները, ծովափն ուղիները և կղզու մատուլները: Եվ նա ինքը, իմանալով Գերմանիայում իր ճամբարների պաշարման մասին¹⁵¹, թշնամու պահակակետերի միջով, գալլական զգեստ հագած, սպրդեց յուրայինների մոտ: (2) Բթունգիլիումից Դիորաքիա նա նավարկեց ձմռանը, թշնամական նավերի պրանքով, զորքերին հրաման թողնելով հետևելու իրեն. իսկ երբ նրանք հապաղեցին, և նա գուր էր շտապեցնում նրանց, սուրհանդակներ ուղարկելով, ապա, ի վերջո, ինքք գիշերը, գաղտնի, միայնակ, փաթաթվելով թիկնոցի մեջ, մեկնեց նրանց մոտ մի փոքրիկ նավով և ավելի վաղ չբացա՝ այտեց իր անձը, ավելի վաղ թույլ շտվեց նավավարին նահանջելու փոթորկի առջև, քան ալիքները գրեթե կխորտակեին նավակը¹⁵²:

59. Բնավ երբեք ոչ մի սնապաշտություն չի ստիպել նրան թողնելու կամ հետաձգելու ձեռնարկումը: Նա շհետաձգեց ելույթը ընդդեմ Ակիպիոնի և Յուրայի այն պատճառով, որ զոհաբերության ժամանակ կենդանին դուրս էր պրծել նրա ձեռքերից: Անգամ երբ նա գայթեց նավից 'իջնելիս, ապա վերածեց այն լավ նախանշանի, բացականչելով՝ «Դու իմ ձեռքերում ես, Աֆրիկա»: Ի ծաղր մարգարեությունների, որոնք խոստանում էին այդ երկրում Ակիպիոնների անվան հավիտենական երջանկություն և անպարտելիություն, նա իր մոտ բանակում Կոռնելիոսների տոհմից պահում էր մի ողորմելի երիտասարդի, որն իր անառակ կյանքի համար մականվանվել էր Սալյուտին¹⁵³:

60. Ճակատամարտ նա մտնում էր ոչ միայն հաշվենկատություններ, այլև դիպվածով, հաճախ անցումից անմիջապես հետո, երբեմն ամենադաժան եղանակին, երբ ամենից քիչ այդ էին նրանից սպասում: Միայն կյանքի վերջում նա սկսեց ավելի զգույշ ճակատամարտ ընդունել, որքան շատ հաղթանակներ ունի ինքը, դատում էր նա, այնքան ավելի քիչ է հարկ հույս դնել դիպվածի վրա, քանի որ ոչ մի հաղթանակ իրեն այնքան բան չի բերի, որքան կարող է խլել մեկ պարտությունը: Թշնամուն փախուստի մատնելով, նա ամեն անգամ նրանից խլում էր բանակատեղին¹⁵⁴, թույլ շտալով նրան ուշքի գալ վախից: Աթե հաջողությունը տատանվում էր, նա ձիերին հեռացնում էր¹⁵⁵, ամենից առաջ իր ձին, որպեսզի ռազմիկները ակամա դիմանային, զրկված լինելով փախուստի հնարավորությունից: 61. (Իսկ նրա ձին¹⁵⁶ հիանալի էր, ոտքերն ինչպես մարդու ոտքեր, և ինչպես մատներ անդամահատված սմբակներով, երբ նա ծնվեց, գուշակները նրա տիրոջը կանխագուշակեցին իշխանություն ամբողջ աշխարհի վրա, և այնժամ Կեսարը նրան խնամքով սնուցեց և առաջինը ինքը հեծնեց— ուրիշ հեծյալների նա մոտ չէր թողնում, իսկ հետագայում նույնիսկ արձան կանգնեցրեց Նախամայր-Վեներայի¹⁵⁷ տաճարի առջև) 62. Իսկ եթե նրա զորքը սկսում էր նահանջել, հաճախ նա միայնակ էր վերականգնում կարգը՝ նետվելով փախուստ տվողներին հանդիման, նա մեկ առ մեկ պահում էր զինվորներին և, բռնելով նրանց կակորդից, շուտ էր տալիս դեմքով դեպի հակառակորդը: Իսկ խուճապը այնպիսին էր լինում, որ մեկ անգամ նրա բռնած դրոշակակիրը բարձրացրեց նշանի սուր ծայրը¹⁵⁸ նրան խփելու համար, իսկ մյուս դրոշակակիրը ձողը թողեց նրա ճեղքում:

63. Նվազ չէր նաև նրա հոգու արիությունը, իսկ այն դրսևորվում էր ավելի ցայտուն: Փարսայի ճակատամարտից հետո, արդեն զորքերն Ասիա ուղարկելով, նա մակույկավարի նավակով անցում էր կատարում Հելլեսպոնտոսով, երբ հանկարծ հանդիպեց իր նկատմամբ թշնամաբար

տրամադրված Լուկիոս Կասսիոսին տասը ռազմանավերով, բայց փոխանակ փախուստի դիմելու, Կեսարը ընդհուպ մոտեցավ նրան, անձամբ պահանջեց նրա անձնատվությունը, և նա, հլու-հնազանդ, անցավ նրա կողմը: 64. Իսկ Ալեքսանդրիայում, կամուրջի համար մղվող մարտի ժամանակ¹⁵⁹, հանկարծակի ճեղքում կատարած թշնամին նրան ետ մղեց դեպի փոքրիկ նավակը, բայց քանի որ բազմաթիվ ռազմիկներ նրա ետևից նետվեցին նույն տեղը, նա ցատկեց ջրի մեջ և լողալով փրկություն գտավ ամենամոտիկ նավի վրա, երկու հարյուր քայլ լողալով ձեռքը ջրից վեր բարձրացրած, որպեսզի չթրջի իր տախտակները, և ատամներով բռնած քարը եկող թիկնոցը, որպեսզի այն ավար շթողնի թշնամուն:

65. Չինվորներին նա գնահատում էր ոչ բարքի համար և ոչ էլ տոհմի ու հարստության, այլ միայն արիության համար, իսկ վարվեցողությունը նրանց հետ լինում էր միատեսակ և՛ պահանջկոտ, և՛ ներողամիտ: Ոչ միշտ և ոչ ամենուր էր նա խստապահանջ նրանց նկատմամբ, այլ միայն թշնամու մերձավորության դեպքում. բայց այնժամ արդեն նա պահանջում էր նրանցից անվերապահ հնադանդություն ու կարգ, չէր նախազգուշացնում ո՛չ արշավանքի, ո՛չ ճակատամարտի մասին, և պահում էր մշտական լարված պատրաստականության մեջ հանկարծակի ճանապարհ ընկնելու ցանկացած տեղը: Հաճախ նա նրանց ոտքի էր հանում անգամ առանց անհրաժեշտության, հատկապես անձրևների և տոնահանդեսների ժամանակ: Ոչ հազվադեպ էլ, հրաման տալով իրեն տեսողաշտից չկորցնել, նա ցերեկը կամ գիշերը անհետանում էր բանակատեղիից և հեռավոր զբոսանքներ ձեռնարկում, որպեսզի հոգնեցնի իրենից էտ մնացած զինվորներին:

66. Երբ հակառակորդի մասին սարսափ ներազդող լուրեր էին տարածվում, զինվորներին քաջալերելու համար նա չէր ժխտում և չէր նվազեցնում թշնամու ուժերը, այլ, ընդհակառակն, շափազանցում¹⁶⁰ էր դրանք սեփական հնարանքներով: Այսպես, երբ բոլորը սարսափի մեջ էին Ցուբայի մոտենալուց, նա զինվորներին ժողովեց հավաքի և ասաց. «Իմացեք, մի քանի օրից թագավորն այստեղ կլինի, իսկ նրա հետ տասը լիգեոն, և երեսուն հազար հեծելազոր, և 100 հազար թեթևազեն զորք, և երեք հարյուր փղեր կան: Ես այդ հաստատապես գիտեմ, այնպես որ այստեղ ոմանք թող գուշակություններ շանեն և գլուխ չջարդեն, այլ ուղղակի հավատան իմ խոսքերին. այլապես ես նմաններին կնստեցնեմ ծակ նավ և բաց կթողնեմ ուր աչքը կտրում է»:

67. Չինվորների զանցանքները նա միշտ չէ, որ նկատում էր և միշտ չէ, որ պետք եղածին պես պատժում էր: Փախստականներին ու խողվա-

բարներին նա հետապնդում ու պատժում էր դաժանորեն, իսկ մնացյալ բաներին մատների արանքով էր նայում: Իսկ երբեմն էլ մեծ ու հաջող ճակատամարտից հետո նա ազատում էր նրանց բոլոր պարտականություններից և լիակատար ազատություն էր տալիս հանգստանալու և զվարճանալու, սովորաբար պարծենալով, որ իր զինվորներն անուշահոտությունների մեջ էլ ունակ են գերազանց մարտնչելու: (2): Հավաքներում նա դիմում էր նրանց ոչ թե «զինվորներ» բառով, այլ ավելի փառաբանելով՝ «զինակիցներ»: Հոգ տանելով նրանց արտաքին տեսքին, նա պարզևատրում էր նրանց արծաթով ու ոսկով ընդելուզված զենքով, ինչպես գեղեցկության համար, այնպես էլ այն պատճառով, որ ճակատամարտի ժամանակ նրանք այն ավելի ամուր բռնեն՝ թանկագին իրը կորցնելու երկյուղից: Իսկ նրանց նա այնպես էր սիրում, որ Տիտուրիոսի պարտության լուրն ստանալով մազ ու մորուք թողեց և շափրեց այնքան ժամանակ, քանի դեռ վրեժխնդիր շեղավ թշնամիներից:

68. Այդ ամենի շնորհիվ նա ձեռք բերեց զինվորների հազվագյուտ նվիրվածությունն ու խիղախությունը: Երբ սկսվեց քաղաքացիական պատերազմը, բոլոր լեգեոնների բոլոր ցենտուրիոնները նրան առաջարկեցին իրենց խնայողություններից հանդերձավորել մեկական հեծյալ, իսկ զինվորները նրան խոստացան ծառայել կամավոր, առանց վարձատրության ու օրապահիկի. նրանք, ովքեր ավելի հարուստ էին, հանձն առան հոգ տանել նրանց մասին, ովքեր ավելի աղքատ էին: Եվ երկարատև պատերազմի ողջ ընթացքում ոչ մի զինվոր չլքեց նրան. իսկ շատ գերյալներ, որոնց թշնամիները առաջարկում էին բաշխել կյանքը, եթե նրանք գնան կռվելու Կեսարի դեմ, դրան մերժումով էին պատասխանում: (2) Քաղցն ու մյուս զրկանքները նրանք, լինելով պաշարվածներ կամ պաշարողներ, մեծ հաստատակամությամբ էին կրում. երբ Պոմպեոսը տեսավ Դիրրաքիայի ամրություններում խոտից պատրաստված հաց¹⁶¹, որով նրանք սնվում էին, նա բացականչեց, որ իր դեմ կռվում են գազաններ, այլ ոչ թե մարդիկ, և հրամայեց այդ հացը տանել և ոչ ոքի ցույց չտալ, որպեսզի, տեսնելով հակառակորդի համբերատարությունն ու կայունությունը, սեփական զինվորները չոգեզրկվեն: (3) Իսկ թե ինչպիսի արիությամբ էին նրանք մարտնչում, երևում է նրանից, որ Դիրրաքիայի միակ անհաջող կռվից հետո նրանք ինքները իրենց պատիժ պահանջեցին¹⁶², այնպես որ զորավարն ստիպված եղավ ավելի շատ մխիթարել նրանց, քան պատժել: Մյուս ճակատամարտերում նրանք քանիցս հեշտությամբ հաղթեցին թշնամու անթիվ-անհամար հրոսակները շատ ավելի փոքրաթիվ ուժերով: Այսպես, վեցերորդ լեգեոնի մեկ կոհորտա, պաշտպանելով ամրու-

Թշուհը, մի քանի ժամ անընդհատ դիմանում էր Պոմպեոսի շարժվեցեոն- ների գրոհին և համարչա ամբողջութեամբ ընկավ թշնամու նէտերի կար- կուտից, որոնցից հողապատնեշի ներսում գտնվեց հարչուր երեսուն հա- զար հատ¹⁰³, (4) Եվ դրանից շպեոք է զարմանալ, եթե հիշենք առանձին ռազմիկների քաջագործութեանները, օրինակ, ցենտուրիոն Կասսիոս Սցե- վայի կամ շարքային Գայոս Ացիլիոսի, շասած մշուաներին: Սցեվան դուրս ընկած աշքով, կոնքից և թիկունքից միշաթափանց վիրավորված, հարչուր քսան հարվածներից ծակծկված վահանով, բայց և այնպես թշնա- մուն մոտ շթողեց իրեն վստահված ամբուլեյան դարպասներին. Մասսի- լիայի ծովամարտում կտրեցին Ացիլիոսի աշ ձեոքը, երբ նա դրանով բռնել էր թշնամու նավախելը, բայց նա, հուշների փառաբանված Քինե- գիրեսի¹⁶⁴ օրինակով, ցատկեց թշնամու նավը և միայն վահանով վա- նեց իր առջևից թշնամիներին:

69. Գալլական պատերազմների տասը տարիներին նրա զորքերում ոչ մի անգամ խոռվութեաններ չեղան, քաղաքացիական պատերազմում՝ սոսկ մի քանի անգամ, բայց զինվորները իսկուշնեթ կարգի էին գա- լիս, և ոչ այնքան զորավարի բարեկրտութեան պատճառով, որքան նրա նկատմամբ տածած հարգանքի՝ Կեսարը երբեք չէր զիջում խոռվարար- ներին, այլ միշտ վճռականորին հանդես էր գալիս նրանց դեմ: Պլացեն- ցիայից¹⁶⁵ առաջ իններորդ լեգեոնը նա տեղնուտեղը ցրեց խայտառակու- թեամբ, թեև Պոմպեոսը դեռևս զենքը վայր չէր դրե, և միայն երկարա- տև, ոչ ստորացուցիչ ազերսանքից հետո վերականգնեց այն, նախապես պալաժեկով հրահրողներին: 70. Իսկ երբ տասներորդ լեգեոնի զինվորնե- րը¹⁶⁶ շոտմում կաթաղի սպառնալիքներով պահանջեցին արձակել իրենց ու պարգևներ տալ, շնայած դեռևս Աֆրիկայում բոցավառվող պատե- րազմին, և մայրաքաղաքն արդեն վտանգի մեջ էր, այնժամ Կեսարը, շսելով բարեկամների հորդորանքները, առանց տատանվելու դուրս եկավ զինվորների առաջ և նրանց ազատ արձակեց. իսկ հետո, դիմելով նրանց «քաղաքացիներ», սովորական «զինվորներ» բառի փոխարեն, նա այդ միակ բառով փոխեց նրանց տրամադրութեանը և նրանց հակեց իր կողմը՝ նրանք միմյանց ընդհատելով բացականչեցին, որ իրենք նրա զինվորներն են, և կամովին հետևեցին նրան Աֆրիկա, թեև նա հրա- ժարվում էր նրանց վեցցնելու. Բայց այստեղ էլ նա պալաժեց բոլոր գլխա- վոր խոռվարարներին, մեկ երրորդով կրճատելով նրանց խոստացված ավարի և հողի բաժինը:

71. Կրիենտների նկատմամբ ոմեիցած հավատարմութեամբ և հոգա- տարութեամբ նա աշքի ընկավ եքիտապարգ ժամանակներից: Ազնվա- տոհմ պատանի Մասինտալին¹⁶⁷ Հիեմպսալ թագավորից նա այնպիսի

կրքոտությամբ էր պաշտպանում, որ վիճարանության ժամանակ բռնեց արքայորդի Ցուբայի մորուքը: Իսկ երբ Մասինտան այնուհանդերձ հայտարարվեց թագավորական հարկատու, նա պոկեց նրան քարշ տվողների ձեռքից, երկար ժամանակ թաքցնում էր իր մոտ, իսկ ապա, պրեսուրայից հետո Իսպանիա մեկնելիս նրան իր հետ տարավ պատգարակով, շրջապատված ուղեկցողների բազմությամբ և լիկտորների ֆասկերով:

72. Բարեկամների նկատմամբ նա միշտ ուշադիր և բարի էր, երբ մի անգամ նա Գայոս Օպպիոսի հետ գնում էր խուլ անտառով և վերջինիս անակնկալ հիվանդությունն անկողին գցեց, նա բարեկամին գիշեց միակ օթևանը, իսկ ինքը գիշերեց մերկ գետնի վրա բաց երկնքի տակ¹⁶⁸: Իսկ երբ նա արդեն կանգնած էր իշխանության գլուխ, ապա որոշ ամենաստորին կոշման տեր մարդկանց նա բարձրացրեց մինչև պատվավոր պաշտոնների, և, ի պատասխան կշտամբանքների, ուղղակի ասաց, որ եթե նա իր տիտղոսով պարտական լիներ աճազակների ու մարդասպանների, նրանց էլ կհատուցեր նույնպիսի երախտագիտությամբ:

73. Ընդհակառակն, նա ոչ մեկի հանդեպ այնպիսի կայուն թշնամություն չունեց, որպեսզի ուրախությամբ շհրաժարվեր դրանից առաջին իսկ հարմար առիթով: Գայոս Մեմմիոսի կատաղի ճառերին նա պատասխանում էր նույնպիսի թունհատությամբ, բայց երբ շուտով Մեմմիոսը հանդես եկավ որպես կոնսուլության հայցող, նա հաճույքով աջակցեց նրան: Գայոս Կալվոսին, որը, վարկաբեկելով նրան էպիգրամներով, սկսեց բարեկամների միջոցով հաշտեցում փնտրել, նա կամովին առաջինը գրեց: Վալերիոս Կատուլլոսը, Կեսարի սեփական խոստովանությամբ, խարանել էր նրան մշտնջենական դրոշմով Մամոերիայի¹⁶⁹ մասին իր բանաստեղծություններով, բայց երբ բանաստեղծը ներողություն հայցեց, Կեսարը նույն օրը նրան ճաշի հրավիրեց, իսկ նրա հոր հետ շարունակում էր սովորական բարեկամական հարաբերություններ պահպանել:

74. Անգամ զրեժիսնդություն մեջ Քա դրսևորում էր իր բնական մեղմությունը: Մովահեններին¹⁷⁰, որոնց ձեռքը նա գերի էր ընկել, երդվել էր, որ նրանք կմեռնեն խաշի վրա, բայց երբ նա բռնեց նրանց, ապա հրամայեց նախապես սպանել նրանց և միայն հետո խաշել: Կոռնելիոս Տագիտտայի¹⁷¹ նկատմամբ, որի մոտ նա՝ հիվանդ փախստականը, երբեմնի գիշերը դարան էր ընկել և միայն դժվարությամբ, մեծ դրամ վճարելով, աղերսել էր շհանձնել Սուլլային, հետո նա ոչ մի շարիք չգործեց: Ստրուկ Փիլեմոնին, իր քարտուղարին, որը խոստացել էր թշնամիներին թունավորել նրան, նա մահապանժի ենթարկեց, բայց առանց խոշտանգումների: (2) Երբ Պուբլիոս Կլոդիոսը¹⁷², նրա՝ կեղծ՝ Պոմպեային, գայ-

Թակղողը, այդ առիթով դատի տրվեց սրբությունները պղծելու համար, ապա Կեսարը, կանչված լինելով որպես վկա, հայտարարեց, որ իրեն ոչինչ հայտնի չէ, թեև նրա մայրը՝ Ավրելիան, և քույրը՝ Յուլիան, արդեն պատմել էին ամբողջ ճշմարտությունը նույն դատավորների առջև: Իսկ այն հարցին, թե այդ դեպքում նա ինչու է ամուսնալուծվել կնոջից, նա պատասխանեց. «Որովհետև իմ մերձավորները, ինչպես ես կարծում եմ, պետք է մաքուր լինեն ոչ միայն մեղքից, այլև կասկածանքներից»:

75. Նրա շափավորությունը և գթասրտությունը, ինչպես քաղաքացիական պատերազմի ընթացքում, այնպես էլ հաղթանակից հետո, զարմանալի էին: Մինչ Պոմպեոսը իրեն թշնամի էր հայտարարել բոլորին, ով ոտքի չի ելնի ի պաշտպանություն հանրապետության, Կեսարը հրաշակել էր, որ նրանց, ովքեր ձեռնպահ կմնան և ոչ ոքի չեն հարի, ինքը կհամարի բարեկամներ: Բոլորին, ում նա աստիճաններ էր շնորհել Պոմպեոսի խորհրդով, նա հնարավորություն ընձեռեց անցնելու Պոմպեոսի կողմը: (2) Երբ Իլերդայի մոտ բանակցություններ էին վարում հանձնվելու մասին և երկու զորքերն էլ արդեն գտնվում էին անընդմեջ շփման ու հարաբերությունների մեջ, Ափրանիոսը և Պետրեոսը, անսպասելիորեն փոխելով մտքները, հանկարծակիի բերեցին և մահապատժի ենթարկեցին իրենց բանակատեղիում գտնվող Կեսարի բոլոր զինվորներին. բայց Կեսարը չընդօրինակեց իր ճաշակած ուխտագրծությանը: Ֆարսալի մոտ նա կոչ արեց իր ռազմիկներին խնայել հոռմեական քաղաքացիների կյանքը, իսկ հետո յուրաջիններից ամեն մեկին թույլատրեց պահպանելու հակառակորդներից մեկի կյանքը: (3) Ոչ ոք չի կործանվել նրա ձեռքով այլ կերպ, եթե ոչ պատերազմում, եթե չհաշվենք Ափրանիոսին Փավստոսի հետ և երիտասարդ Լուկիոս Կեսարին¹⁷³, բայց նրանք էլ, ինչպես ենթադրում են, սպանվել են ոչ Կեսարի կամքով, թեև առաջին երկուսը, մեկ անգամ արդեն ներված լինելով նրա կողմից, կրկին նրա դեմ զենք էին բարձրացրել, իսկ մյուսը հրով ու սրով դաժանորեն հաշվեհարդար էր տեսել նրա ազատարձակների ու ստրուկների հետ, կոտորելով անգամ գազաններին, որոնք պատրաստված էին ժողովրդին զվարճացնելու համար: (4) Վերջապես, վերջին տարիներին նա նույնիսկ թույլատրեց Իտալիա վերադառնալ բոլոր նրանց, ովքեր դեռևս թողություն չէին ստացել և բացեց նրանց մուտքը դեպի պետական և զինվորական պաշտոնները: Անգամ Լուկիոս Սուլլայի և Պոմպեոսի արձանները¹⁷⁴, որոնք ժողովուրդը ջարդել էր, նա հրամայեց վերականգնել: Եվ երբ հետագայում նրա դեմ ասում կամ խորհում էին մի որևէ վտանգավոր բան, նա ջանում էր այն խափանել, բայց չպատժել: (5) Այսպես, երևան հանելով դավազրություններ և գիշերային հավաքույթներ, նա սահմանա-

փակվում էր նրանով, որ էդիկտով հայտարարում էր, որ այդ նրան անհայտ չէ. նրանց, ովքեր նրա մասին շարամտությամբ էին խոսում, նա միայն ժողովում խորհուրդ էր տալիս այլևս այդպես չվարվել: Այն դաժան վնասը, որ հասցրին նրա բարի անվանը Ավլոս Յեցինայի զրպարտչական գրքույկով և Պիթոլաեսի հայհոյական բանաստեղծություններով, նա հանգիստ տարավ, ինչպես հասարակ քաղաքացի:

76. Սակայն այդ ամենին գերազանցում էին նրա այլ կարգի խոսքերն ու գործերը՝ դրա համար էլ անգամ գտնում են, որ նա մեղավոր էր իշխանությունը շարաշահելու մեջ և սպանվեց արժանի կերպով:

Բավական չէ, որ նա շափից ավելի մեծարանքներ էր ընդունու՞մ անընդմեջ կոնսուլություն, ցմահ դիկտատուրա, բարքերի հոգաբարձություն, ապա իմպերատորի անուն, հայրենիքի հոր մականուն, արձան՝ թագավորական արձանների շարքում, բարձրաբերձ տեղ թատրոնում, — նա նույնիսկ թույլատրից իր պատվին որոշումներ ընդունել, որոնք գերազանցում են մարդկային սահմանը՝ ոսկյա թիկնաթու սենատում և դատարանում, սրբազան մարտակառք և պատգարակ¹⁷⁶ կրկեսային թափորների ժամանակ, տաճարներ, զոհասեղաններ, քանդակներ աստվածների կողքին, աստվածների համար հյուրասիրության սեղանի մոտ տեղ¹⁷⁷, քուրմ, նոր լուպերկոսներ¹⁷⁸, իր անունով ամսվա անվանում¹⁷⁹, և այդ բոլոր պատիվները նա ստանում և բաշխում էր յուրանձնյա կամայականությամբ: (2) Իր երրորդ և չորրորդ կոնսուլության ժամանակ¹⁸⁰ նա կոնսուլ էր սոսկ անվամբ, բավարարվելով միաժամանակ նրան առաջարկված դիկտատորական իշխանությամբ. ի փոխարինումն իրեն նա ամեն անգամ նշանակում էր երկու կոնսուլներ, բայց միայն վերջին երեք ամիսների համար, այնպես որ այդ միջոցին անգամ ժողովրդական ժողովներ չէին գումարվում, բացի ժողովներից՝ ժողովրդական տրիբուններ և էդիլներ ընտրելու համար, քանի որ պրետորներին էլ նա փոխարինեց պրեֆեկտներով, որոնք վարում էին քաղաքային գործերը նրա բացակայության ժամանակ: Երբ մեկ կոնսուլ հանկարծակի մահացավ նոր տարվա նախօրյակին, ազատված տեղը նա տվեց մեկ հայցող մնացյալ մի քանի ժամվա համար¹⁸¹: (3) Նույնիսկ ինքնիշխանությամբ նա, հակառակ հայրենական սովորույթների, նշանակեց շատ պաշտոնատար անձանց շատ տարիներ առաջ¹⁸², տասը նախկին պրետորների շնորհեց կոնսուլական տարբերանշաններ, սենատ մուծեց քաղաքացիների, ովքեր հենց նոր էին քաղաքացիական իրավունքներ ստացել, և նրանց թվում մի քանի կիսավայրենի գալլերի¹⁸³: Բացի այդ, դրամահատության¹⁸⁴ և պետական տուրքերի վարչության գլուխ նա կարգեց սեփական ստրուկներին, իսկ Ալեքսանդրիայում թողնված երեք լեգեոն-

ների կառավարումը և հրամանատարութիւնը նա հանձնեց իր սիրեցյալ Ռուփինոսին՝ իր աղատարձակի որդուն:

77. Պակաս ամբարտաւան շէին և նրա բացահայտ արտահայտութիւնները, որոնց մասին հաղորդում է Տիտոս Ամպիոսը՝ «հանրապետութիւնը ոչինչ է, դատարկ անուն ատանց մարմնի ու կերպարի»։ «Սուլլան այբն էլ շփտեր, եթէ հրաժարվեց դիկտատորական իշխանութիւնից»։ «նրա՝ Կեսարի հետ մարդիկ պետք է ավելի զգուշ խոսեն և նրա խոսքերը օրենք համարեն»։ Նա հասավ այնպիսի հանձնապաստանութեան, որ երբ գուշակը մեկ անգամ ազդարարեց դժբախտ ապագայի մասին և պարզվեց, որ մորթված կենդանին սիրտ չունի, ապա նա հայտարարեց՝ «Ամեն ինչ լավ կլինի, եթէ ես այդ ցանկանամ. իսկ այն, որ անասունը սիրտ չունի, ոչ մի զարմանալի բան չկա»¹⁸⁵:

78. Բայց մեծագույն, մահացու ատելութիւն նա հարուցեց իր նկատմամբ ահա թե ինչպիսի արարքով: Սենատորներին, որոնք լրիվ կազմով եկել էին մատուցելու բաղմամբիվ բարձրագույն որոշումներ, նա ընդունեց Նախամայր-Վեներայի տաճարի առջև նստած: Ոմանք գրում են, որ իբր թե նա փորձեց ոտքի կանգնել, բայց նրան պահեց Կոննելիոս Բալբոսը. մյուսները, ընդհակառակն, որ իբրև թե նա ոչ միայն շփոթեց ոտքի կանգնել, այլ նույնիսկ խստորեն նայեց Գայոս Տրեբացիոսին, երբ սա առաջարկեց նրան ոտքի կանգնել: (2) Այդ հատկապես վրդովեցուցիչ թվաց այն պատճառով, որ նա ինքը, անցնելով տրիումֆով տրիբունական տեղերի կողքով և տեսնելով, որ իր առջև ոտքի շկանգնեց տրիբուններից մեկը՝ Պոնտիոս Աքվիլա անունով, այնժամ այն աստիճան զայրացավ, որ բացականչեց՝ «Զվերադարձնե՞ն արդյոք քեզ նաև հանրապետութիւնը, Աքվիլա, ժողովրդական տրիբուն»։ Եվ դեռևս շատ օրեր, որևէ մեկին որևէ մի խոստում տալիս, նա անպայման վերապահում էր՝ «եթէ Պոնտիոս Աքվիլային դա բարեհաճ կլինի»:

79. Անսահմանորեն վիրավորելով սենատը իր բացահայտ արհամարհանքով, նա դրան ավելացրեց և ուրիշ, էլ ավելի հանդուգն արարք¹⁸⁶: Մեկ անգամ, երբ նա վերադառնում էր Լատինական խաղերում¹⁸⁷ կատարած զոհաբերութիւնից հետո, ժողովրդի փոթորկալից ճախահարութիւնների միջոցին ամբոխից ինչ-որ մի մարդ նրա արձանին գրեց սպիտակ լանջագոտիով պատատված¹⁸⁸ դափնեպսակ, բայց ժողովրդական տրիբուններ էպիդիոս Մարուլլոսը և Յեզետիոս Փլաբիոսը հրամայեցին պոկել լանջագոտին պսակից, իսկ այդ մարդուն բանտ նետել: Կեսարը, մշտացած այն բանից, որ թագավորական իշխանութեան մասին ակնարկը հաջողութիւն չունեցավ, թե այն բանից, ըստ նրա, որ իրեն զրկեցին անձամբ դրանից հրաժարվելու պատվից, տրիբուններին խիստ նկատու-

դուժյունն արեց և զրհեց նրանց պաշտոնից¹⁸⁹, (2) Բայց այդ պահից նա արդեն չէր կարող իրենից դեն նետել թագավորական կոչման ձգտելու խայտառակությունը, շնայած այն բանին, որ մեկ անգամ նրան որպես թագավոր մեծարող մի պլեբեյի պատասխանել էր. «Սա Կեսար ևմ և ոչ թե թագավոր»¹⁹⁰, իսկ մի ուրիշ անգամ, երբ Լուպերկալիաներում¹⁹¹ ուստրալային տրիբունայի առջև կոնսուլ Անտոնիոսը մի քանի անգամ փարձեց նրա գլխին խույր դնել, նա մերժեց այն և ուղարկեց Կապիտոլիում՝ Բարի և Մեծագույն Յուպիտերի տաճարը: (3) Դեռ ավելին, ավելի ու ավելի հաճախ էին լուրեր պատվում, թե նա իբր մտադիր է վերաբնակվել Ալեքսանդրիայում կամ Իլիոնում¹⁹² և այնտեղ փոխադրել պետական բոլոր միջոցները, արյունաքամ անելով Իտալիան զորակոչերով, իսկ Հռոմի կառավարումը հանձնելով բարեկամներին, թե իբր սենատի մերձավորագույն նիստում քվինդեցիմվիր¹⁹³ Լուկիոս Կոստան առաջարկ է մտցնելու Կեսարին հռչակելու թագավոր, քանի որ մարգարեական մատյաններում գրված է, թե պարթևներին միայն թագավորը կարող է հաղթել: ՏՕ. Այդ էլ ստիպեց գավազիրեներին փութացնելու մտահղացված գործողությունները, որպեսզի հարկագրված շինեն քվեարկելու հոգուս նման առաջաքվություններ:

Արդեն այստեղ ու այնտեղ տեղի էին ունենում գաղտնի հավաքներ, որտեղ հանգիպում էին երկու-երեք մարդ՝ այժմ բոլորը միաձուլվեց: Արդեն ժողովուրդն էլ ուրախ չէր պետության մեջ ստեղծված վիճակից. գաղտնի ու բացահայտ վրդովվելով ինքնիշխանությունից՝ նա ազատարարներ էր փնտրում: (Շ) Երբ սենատ ընդունվեցին օտարերկրացիներ, հայտնվեցին գաղտնի թերթեր հետևյալ մակագրությամբ. «Բարի հաջողում. ցույց շտալ նոր սենատորներին սենատի ճանապարհը»: Իսկ ժողովրդի մեջ այսպես էին երգում.

Գալլերին Կեսարը տանում էր տրիումֆում, գալլերին Կեսարը մուծեց սենատ նրանք հանել են վարտիքներն ու փրաներիզ տագա են հագել¹⁹⁵:

(3) Երբ Քվինտոս Մաքսիմոսը, որը կոնսուլ էր նշանակված երեք ամսով¹⁹⁶, մտնում էր թատրոն, և լիկտորը, սովորաբանի պես, բողոքին առաջարկեց ողջունել նրան, ամեն կողմից լսվեցին գոչումներ. «Պա կոնսուլ չէ»: Տրիբուններ Ցեզելտիոսի և Մարուլլոսի՝ պաշտոնից հեռացվելուց հետո մերձավորագույն ընտրություններում շատ ձայներ տրվեցին, որոնք նրանց կոնսուլ էին հայտարարում: Լուկիոս Բրուտոսի արձանի տակ ոմն մեկը գրել էր. «Օ՛, եթե դու կենդանի լինեիր», իսկ Կեսարի արձանի տակ.

Բրուտոսը, վտարելով Թագավորներին Հռոմից, այնտեղ դարձավ առաջին կոնսուլը, Սա, կոնսուլներին վտարելով, վերջիվերջո դարձավ Թագավոր:

(4) Նրա դեմ ուղղված դավադրութեանը մասնակցում էր ավելի քան վաթսուներեք մարդ. դրա գլուխ կանգնած էին Գայոս Կասիոսը, Մարկոս Բրուտոսը, Դեցիմոս Բրուտոսը: Սկզբում նրանք տատանվում էին, նրան արդյոք Մարսյան դաշտում սպանե՞լ, երբ ընտրութունների ժամանակ նա տրիբունները կկանչի քվեարկութեան¹⁹⁷, — բաժանվելով երկու մասի, նրանք ուղում էին ցած նետել նրան տախտակամածից, իսկ ներքևում բռնել ու սպանել, — թե՞ հարձակվել նրա վրա Սրբազան ճանապարհին կամ Թատրոն մտնելիս: Բայց երբ հայտարարվեց, որ մարտյան իդերի ժամանակ սենատը նիստ է գումարելու Պոմպեոսի կուրիայում¹⁹⁸, ապա բոլորը հաճույքով գերադասեցին հենց այդ ժամանակն ու տեղը:

81. Մինչդեռ բռնի մահվան մերձեցումը Կեսարին ազդարարվեց կասկած չհարուցող նախանշաններով: Դրանից մի քանի ամիս առաջ նոր վերաբնակիչները, որոնք ըստ Հուլիոսի օրենքի տարված էին Կապույա, այնտեղ փոքում, քանդում էին հին գերեզմանները իրենց դաստակերտները հիմնելու համար, և շատ ջանասիրաբար էին աշխատում, քանի որ դիպվածաբար հողի մեջ մի քանի հին ամաններ էին գտել. և ահա դամբարանում, որտեղ ըստ ավանդութեան թաղված էր Կապույայի հիմնադիրը՝ Կասիոսը¹⁹⁹, նրանք գտան մի պղնձե տախտակ, հետևյալ բովանդակութեան հունարեն արձանագրութեամբ՝ երբ անհանգստութուն կպատճառվի Կասիոսի աճյունին, այնժամ նրա հետնորդը կկործանվի սուզակիցների ձեռքով, և վրեժը կլուծվի ամբողջ Իտալիայում մեծագույն արյունահեղութեամբ: (2) Հարկ չէ դա առակ կամ մտացածին բան համարել, այսպես է հաղորդում Կոռնելիոս Բալբոսը, Կեսարի մոտ բարեկամը: Իսկ մահից մի քանի օր առաջ Կեսարը իմացավ, որ ձիերի երամակները, որոնց նա մուբիկոնն անցնելիս ընծայել էր աստվածներին և բաց թողել արածելու ազատութեան մեջ, առանց պահպանութեան, համառորեն հրաժարվում են ուտելիքից և արցունք են թափում: Այնուհետև, երբ նա զոհեր էր մատուցում, գուշակ Սպուրիննան նրան խորհուրդ տվեց զգուշանալ վտանգից, որը սպասում է նրան մարտյան իդերից ոչ ուշ: Այնուհետև, արդեն այդ օրվա նախօրյակին, Պոմպեոսի կուրիա ներս թռավ մի թագավորածիտ՝ կտուցին դափնե ճյուղ, հետապնդված մոտակա անտառակի զանազան թռչունների երամից, և նրանք քրքրեցին նրան: Իսկ սպանութեանը նախորդած վերջին գիշերը նա երազում տեսավ, թե ինչպես է ինքը թռչում ամպերի ներքո և հետո թե ինչպես է Յուպիտերը սեղմում նրա աջը. նրա կնոջը՝ Կալպուրնիային, երազում երևացել էր,

որ իրենց տան տանիքը խորտակվում է²⁰⁰ և որ ամուսնուն դաշունահասարում են իր գրկում. և նրանց ննչասենյակի դռներն հանկարծ իրենք իրենց բացվեցին կրնկի վրա:

(4) Այդ ամենի, ինչպես նաև վատառողջության պատճառով նա երկար ժամանակ տատանվում էր՝ շմնա՞լ արդյոք տանը, հետաձգելով իր գործերը սենատում: Ի վերջո Դեցիմոս Բրուտոսը համոզեց նրան իր ներկայությունից շարկել բազմամարդ և նրան վաղուց սպասող ժողովը, և նա տանից դուրս եկավ արդեն օրվա հինգերորդ ժամին²⁰¹: Հանդիպածներից ինչ-որ մեկը²⁰² նրան մի երկտող տվեց, որը հաղորդում էր դավադրության մասին. նա այն միացրեց մյուս երկտողներին, որոնք պահում էր ձախ ձեռքում, պատրաստվելով կարդալ: Հետո նա մեկը մյուսի ետևից գոհ մատուցեց մի քանի կենդանիներ, բայց բարենպաստ նախանշանակներ չստացավ. այնժամ նա մտավ կուրիա, ուշադրություն չդարձնելով վատ նախանշանի վրա և ծիծաղելով Սպուրիննայի վրա այն քանի համար, որ, հակառակ նրա կանխագուշակության, մարտյան իդերը եկան և ոչ մի աղետ չբերեցին: «Այո՛, եկան, բայց չեն անցել», — պատասխանեց Սպուրիննան:

82. Նա նստեց, և դավադիրները շրջապատեցին նրան, ասես ողջունների համար: Իսկույնեթ Տիլլիոս Յիմբրոսը²⁰³, որն ստանձնել էր առաջին դերը, ընդհուպ մոտեցավ նրան, կարծես ինչ-որ բան խնդրելու, և երբ Կեսարը, հրաժարվելով, նրան նշան արեց սպասել, սա արագորեն բռնեց նրա տոգան արմունկից վերև: Կեսարը գոչում է. «Այդ արդեն բռնություն է». և այստեղ միայն Կասկան, ետևից ձեռքը թափով վրա բերելով, նրան վիրավորում է կոկորդից ցած: (2) Կեսարը բռնում է Կասկայի ձեռքը, խոցում այն քարեգրիչով²⁰⁴, փորձում ոտքի ցատկել, բայց երկրորդ հարվածը կանգնեցնում է նրան: Իսկ երբ նա տեսավ, որ բոլոր կողմերից իրեն են ուղղված մերկացված դաշույններ, գլխին գցեց սոգան և ձախ ձեռքով խցեցրեց նրա ծալքերը ծնկներից ներքև, որպեսզի պատշաճորեն ընկնի մինչև կրունկները ծածկված. և այդպես նա խոցվեց քսաներեք հարվածով, միայն առաջինի ժամանակ արձակելով անգամ ոչ բղավոց, այլ հառաչանք, թեև ոմանք հաղորդում են, որ իր վրա նետված Մարկոս Բրուտոսին նա ասաց. «Դո՞ւ էլ, զավակս»²⁰⁵:

(3) Բոլորը փախան այս ու այն կողմ. անշունչ, նա ընկած մնաց, մինչև որ երեք ստրուկ, դնելով նրան պատդարակի վրա, տուն տարան: Եվ այդքան վերքերի մեջ միայն մեկը, բժիշկ Անտիստիոսի կարծիքով, մահացու դուրս եկավ՝ երկրորդը, կրծքին հասցվածը:

(4) Սպանվածի դիակը դավադիրները պատրաստվում էին նետել

Տիրրոս, ունեցվածքը բռնագրավել, բայց չհանդգնեցին կոնսուլ Մարկոս Անտոնիոսի և հեծելազորի պետ Լեպիդոսի հանդեպ ունեցած երկյուղից:

83. Լուկիոս Պիզոնի՝ սպանվածի աներոջ պահանջով Անտոնիոսի տանը բացվեց ու կարդացվեց նրա կտակը՝ կազմված նրա իսկ ձեռքով Լավիկանյան կալվածքում²⁰⁶ անցյալ տարվա սեպտեմբերյան իդերին և ի պահ տրված ավագ վեստալուհուն: Քվինտոս Տուբերոնը հաղորդում է, որ իր կոնսուլուժյան ժամանակից և մինչև քաղաքացիական պատերազմի բուն սկիզբը նա սովորաբար իր ժառանգորդ էր հայտարարում Գնեոս Պոմպեոսին և նույնիսկ կարդացել էր կտակը զոքթի առջև, հավաքի ժամանակ: (2) Բայց այդ վերջին կտակում նա ժառանգորդ էր նշանակում իր քույրերի երեք թոռներին. Գայոս Օկտավիանոսին նա թողնում էր իր ունեցվածքի երեք քառորդը, Լուկիոս Պինարիոսին և Քվինտոս Պեդիոսին՝ վերջին քառորդը: Դրանից զատ, նա կտակի վերջում որդեգրում էր Գայոս Օկտավիանոսին և նրան փոխանցում իր անունը: Մարդասպաններից շատերը թվարկված էին իր որդու խնամակալների շարքում, եթե այդպիսին ձևվեր, իսկ Դեցիմոս Բրուտոսը՝ անգամ երկրորդ աստիճանի ժառանգների²⁰⁷ թվում: Ժողովրդին նա կտակում էր Տիրրոսի վրայի այգիները ի հասարակական օգտագործումն և երեքհարյուրական սեստերցիում յուրաքանչյուր քաղաքացու:

84. Թաղման օրը հայտարարվեց, Մարսյան դաշտում Ցուլիայի դամբարանի մոտ պատրաստվեց թաղման խարույկ, իսկ ռոստրալային տրիբունայի առջև՝ ոսկեզօծ կառույց նախամայր-Վեներայի տաճարի նմանությամբ. ներսում դրված էր փղոսկրյա մահիճ՝ ծածկված ծիրանիով ու ոսկով, գլխավերևին՝ սյուն այն հագուստով, որի մեջ սպանվել էր Կեսարը: Պարզ էր, որ բոլորին, ովքեր գալիս էին նվիրաբերություններով²⁰⁸, մեկ օրը շէր բաւլարարի թափորի համար. այնժամ նրանց կարգադրեցին Մարսյան դաշտում հավաքվել առանց կարգի, ցանկացած ճամփաներով: (2) Թաղման խաղերում, վրդովմունք ու վիշտ գրգռելով նրա մահվան առիթով, երգում էին Պակուվիոսի²⁰⁹ «Դատ զենքի մասին»-ից տողերը.

Արդյո՞ք ես չէի ինձ սպանողների փրկիչը,

և Ակիլիոսի²¹⁰ «Էլեկտրայից» համանման բովանդակությամբ: Գովաբանական ճառի փոխարեն կոնսուլ Անտոնիոսը մունետիկի միջոցով հայտարարեց սենատի որոշումը, որով Կեսարին մատուցվում էին բոլոր մարդկային ու աստվածային պատիվները, ապա երդումը, որով սենատորները երդվում էին բոլորը պահպանել մեկի կյանքը, և դրան մի քանի խոսք ավելացրեց իրենից²¹¹: (3) Թաղման մահիճը ֆորում բերեցին

այդ տարվա և անցյալ տարիների պաշտոնատար անձինք: Ոմանք առաջարկում էին նրան այրել Կապիտոլիումական Յուպիտերի տաճարում, մյուսները՝ Պոմպեոսի կուրիայում, երբ հանկարծ հայտնվեցին երկու անհայտ անձնավորություն, գոտևորված թրերով, տեղերը թափահարելով, և մեղրամոմե ջահերով հրկիզեցին կառույցը: Իսկույնևեթ շրջապատող ամբոխն սկսեց կրակը նետել շոր ցախ, նստարաններ, դատավորական թիկնաթոռներ և այն ամենը, ինչ ընծա էր բերված: (4) Ապա սրնգահարները և դերասանները սկսեցին իրենց վրայից պոչոտել տրիումֆային հագուստները, որ հագել էին այդ օրվա համար, և, պատառոտելով, շարտել բոցերի մեջ. ծեր լեգեոներները այրում էին գենքերը, որոնցով զարդարվել էին թաղման համար, իսկ շատ կանայք՝ իրենց զարդարանքը, որ կրում էին, բուլլաները²¹² և երեխաների հագուստները: (5) Այդ անսահման, համընդհանուր վշտի մեջ շատ օտարերկրացիներ այստեղ ու այնտեղ ողբում էին սպանվածին յուրաքանչյուրն իր ձևով, հատկապես եբրայեցիները²¹³, որոնք դեռ հետո էլ շատ գիշերներ հավաքվում էին մոխրակուլտի մոտ:

85. Թաղումից անմիջապես հետո ժողովուրդը ջահերով նետվեց դեպի Բրուտոսի և Կասիոսի տները: Ժողովրդին դժվարությամբ զսպեցին, բայց ճանապարհին հանդիպելով Հելվիոս Կիննային, ժողովուրդը սպանեց նրան, անունով շփոթելով Կոռնելիոս Կիննայի հետ, որին փնտրում էին նախօրյակին ժողովում Կեսարի դեմ արտասանած ճառի համար. Կիննայի գլուխը հագցրել էին նիզակի ծայրին և տանում էին փողոցներով: Հետագայում ժողովուրդը նումիդիական ամբողջական մարմարից շուրջ քսան ոտնաչափ բարձրությամբ կոթող կանգնեցրեց Ֆորումում՝ «Հորն հայրենյաց» մակագրությամբ: Նրա ստորոտին դեռևս երկար ժամանակ զոհեր էին մատուցում, ուխտում և վեճեր լուծում, երդում տալով Կեսարի անունով:

86. Որոշ բարեկամների մեջ կասկած մնաց, թե Կեսարն ինքն այլևս չէր ուզում ապրել և դրա համար էլ հոգ չէր տանում թուլացող առողջությանը և անտեսում էր նախանշանների նախազգուշացումներն ու բարեկամների խորհուրդները: Ոմանք կարծում են, որ նա վստահում էր սենատի վերջին որոշմանն ու երդմանը և դրանից հետո նույնիսկ հրաժարվեց թրակիր իսպանացիներից կազմված թիկնախմբից. (2) մյուսները, ընդհակառակն, ենթադրում են. որ նա գերադասում էր մեկ անգամ հանդիպել ամեն կողմից սպառնացող խարդավանքին, քան թե մշտնջենական տազնապի մեջ խուսափել դրանից: Մի քանիսն էլ նույնիսկ հաղորդում են, որ նա հաճախ էր ասում²¹⁴. իր կյանքը թանկ է ոչ այնքան իր համար, որքան պետության՝ նա ինքը վաղուց է արդեն հասել իշխանու-

թյան ու փառքի լրումին, իսկ պետութիւնը, եթե իր հետ որևէ բան պատահի, չի իմանա, ինչ է անդորրը, այլ կներքաշվի շատ ավելի աղետաբեր քաղաքացիական պատերազմների մեջ:

87. Ինչևէ, մեկ բանում գրեթե բոլորն էլ համամիտ են՝ հենց այդ տեսակի մահը նրան համարյա ցանկալի էր: Այսպես, երբ նա կարգում էր Քսենոփոնին²¹⁵, թե ինչպես Կյուրոսը մահվան մահճում կարգադրութիւններ էր անում իր թաղման համար, նա զզվանքով էր խոսում այդքան դանդաղ վախճանի մասին և իրեն ցանկանում հանկարծակի ու արագ մահ: Իսկ սպանության նախօրեին, Մարկոս Լեպիդոսի մոտ ճաշելիս տեղի ունեցած զրույցի ժամանակ, այն մասին, թե որ տեսակի մահն է ամենալավը, նա գերադասեց անսպասելի և հանկարծակի վախճանը:

88. Նա սպանվեց կյանքի հիսուն և վեցերորդ տարում և դասվեց աստվածների շարքը, ոչ միայն հրամանագրերի բառերով, այլև ամբոխի համոզմամբ: Համենայն դեպս, երբ այն խաղերի ժամանակ, որոնք առաջին անգամ ի պատիվ նրա աստվածացման տվեց նրա ժառանգ Օգոստոսը, գիսավոր աստղը յոթ գիշեր շարունակ շողշողում էր երկնքում, հայտնվելով շուրջ ժամը տասնմեկին²¹⁶, ապա բոլորը հավատացին, որ դա Կեսարի հոգին է, որը երկինք է համբարձել: Ահա թե ինչու է նա պատկերվում գլխավերևում աստղ: Կուրիայում, որտեղ նա սպանվեց, որոշում ընդունվեց կառուցել մուտք, իսկ մարտյան իդերն անվանել հայրասպանության օր և երբեք այդ օրը սենատ չգումարել:

89. Նրան սպանողներից համարյա ոչ մեկը դրանից հետո երեք տարուց ավելի չապրեց և ոչ մեկը չմահացավ իր մահով: Նրանք բոլորը դատապարտվեցին և բոլորը կործանվեցին տարբեր ձևով, որը՝ նավաբեկության ժամանակ, որը՝ ճակատամարտում: Իսկ ոմանք էլ իրենք իրենց խոցեցին այն նույն դաշույնով, որով նրանք սպանել էին Կեսարին²¹⁷:





ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

ՕԳՈՍՏՈՍԸ



1. Օկտավիոսների տոհմը երբեմնի ամենաականավորներից մեկն էր Վելիտրքում, այդ մասին շատ բան է վկայում: Քաղաքի ամենաբնակեցված մասում կա մի նըրբանցք, որը վաղուց ի վեր Օկտավիոս է անվանվում. և այնտեղ ցույց են տալիս Օկտավիոսներից սեկին նվիրարեցված զոհասեղան: Սահմանային պատերազմներից մեկի ժամանակ լինելով զորս-

պետ, նա մի անգամ զոհ էր մատուցում Մարսին, երբ հանկարծ լուր հասավ թշնամիների ասպատակության մասին. կրակի միջից դուրս քաշելով զոհի փորոտիքը¹, նա կիսահում կտրատեց դրանք, գնաց մարտի և վերադարձավ հաղթանակով: Գոյություն ուներ, անգամ, հասարակական որոշում, ըստ որի այդուհետև զոհարելով ոչ փորոտիքը Մարսին մատուցվեր նույն ձևով, իսկ զոհի մնացորդները տրվեին Օկտավիոսներին:

2. Այդ տոհմին սենատ էր մտցրել Տարբվինիոս Հինը կրտսեր տոհմերի² թվում, ապա Սերվիոս Տուլիոսը նրանց դասել էր պատրիկների շարքը, ժամանակի ընթացքում այն կրկին անցել էր պլեբսի կարգը, և միայն շատ հետո աստվածային Հուլիոսը վերադարձրել էր նրան պատրիկական աստիճանը: Այդ տոհմից առաջինը ժողովուրդը պետական պաշտոնի ընտրեց Գայոս Ռուփոսին: (2) Նա քվեստոր էր և թողեց Գնեոս և Գայոս որդիներին, սրանցից սերվեցին Օկտավիոսների տոհմի երկու

Ճյուղերը, որոնք տարբեր ճակատագրեր ունեցան: Դնեսուր, ապա և նրա բոլոր հետնորդները հասան ամենապատվավոր պաշտոնների, մինչդեռ Գայոսը իր ժառանգներով հանդերձ ճակատագրի կամքով կամ սեփական ցանկությամբ գտնվում էր հեծյալների դասում ընդհուպ մինչև Օգոստոսի հայրը: Օգոստոսի նախապապը Երկրորդ պոնտիկյան պատերազմի ժամանակ Սիցիլիայում ծառայում էր որպես զորային տրիբուն՝ էմիլիոս Պապոսի հրամանատարության ներքո: Նրա պապը բավարարվում էր մունիցիպալային պաշտոններով և ապրեց մինչև ծերություն՝ անխռով և ունեւժոր:

(3) Բայց այդպես հաղորդում են ուրիշները, իսկ Օգոստոսն ինքը դրում է միայն այն մասին, որ ծագում է հեծյալական հին ու հարուստ տոհմից, որից առաջինը սենատոր է դարձել նրա հայրը: Իսկ Մարկոս Անտոնիոսը նրան հանդիմանում է այն բանի համար, որ նրա նախապապը եղել է ազատարձակ, ֆուրիական օկրուզից մի ճոպանագործ, իսկ պապը՝ վաշխառու: Ահա այն ամենը, ինչ էս կարողացա իմանալ Օգոստոսի նախնիների մասին հոր կողմից:

3. Նրա հայր Գայոս Օկտավիոսը երիտասարդ տարիքից հարուստ էր և հարգանք էր վայելում. կարելի է միայն զարմանալ, որ նրան էլ ոմանք վաշխառու են հայտարարում և, անգամ, կաշառք բաժանող՝ ընտրությունների ժամանակ կատարված գործարքներում: Մեծանալով ունևորության մեջ, նա նաև հասնում էր պատվավոր պաշտոնների առանց դժվարության, և որանք գերազանց էր կատարում: Պրետուրայից հետո նա վիճակահանությամբ ստացավ Մակեդոնիան. այնտեղ գնալու ճանապարհին, կատարելով սենատի հատուկ հանձնարարությունը³, ոչնչացրեց ֆուրիական օկրուզը զավթած Սպարտակի և Կատիլինայի ջոկատների փախստական ստրուկներին: (2) Կառավարելով պրովինցիան, նա նույնքան արդարացիություն դրսևորեց, որքան և քաջություն՝ մի մեծ ճակատամարտում շախչախեց բեսսերին⁴ և թրակիացիներին, իսկ դաշնակից ցեղերին այնպես արժանապատվորեն էր վերաբերվում, որ Մարկոս Կիկերոնը⁵ այդ ժամանակ Ասիա պրովինցիան անփառունակ կառավարող իր եղբայր Քվինտոսին գրած նամակներում, որոնք պահպանվել են, դրդում և հորդորում էր իր դաշնակիցների մասին հոգալիս օրինակ վերցնել իր հարևան Օկտավիոսից:

4. Վերադառնալով Մակեդոնիայից, նա հանկարծամահ եղավ, շհասցնելով առաջ քաշել իր թեկնածությունը կոնսուլության համար: Նրանից հետո մնացին երեք երևխա Օկտավիա Ավագը՝ Անքարիայից, Օկտավիա Կրտսերն ու Օգոստոսը՝ Ատիայից:

Ատիան Մարկոս Ատիոս Բալբոսի և Յուլիայի՝ Հուլիոս Կեսարի քրոջ,

դուստրն էր: Հոր կողմից Բալբոսը սեղծում էր Արիցիոսից, և նրա նախնիների մեջ քիչ սենատորներ չեն եղել, իսկ մոր կողմից մոտիկ ազգակցութուն ուներ Մեծն Պոմպեոսի հետ: Նա պրետոր էր եղել, իսկ հետո քսան լիազորների թվում զբաղվել էր Կամպանիայի հողերի⁶ բաշխումով քաղաքացիների միջև՝ ըստ Հուլիոսի օրենքի: (2) Մակայն նույն Անտոնիոսը, նշավակելով Օգոստոսի ճախնիներին նաև մայրական կողմից, կշտամբում էր նրան այն քանի համար, թե իբր նրա նախապապը աֆրիկացի է եղել և Արիցիայում ունեցել է ոչ այն է քսուքների խանութ, ոչ ան է հացի փուռ: Իսկ Կասսիոս Պարմացին մի նամակում Օգոստոսին անվանում է ոչ միայն հացթուխի, այլև վաշխառուի թոռ. «Քո մայրը թխված է արիցիոսական ամենակոպիտ աղացվածքի ալյուրից, իսկ այն հունցել է վաշխառութունից աղտոտված ձեռքերով ներուլումյան⁷ լումայափայլը»:

5. Օգոստոսը ծնվել է Մարկոս Տուլլիոս Կիկերոնի և Գայոս Անտոնիոսի կոնսուլության ժամանակ, իններորդ օրը մինչև հոկտեմբերյան կալենդները⁸, արշալույսից քիչ առաջ, Եզան գլուխների⁹ մոտ, Պալատիումի թաղամասում¹⁰, ուր այժմ կա մի սրբավայր՝ հիմնադրված նրա մահից անմիջապես հետո: Իրոք, սենատի հաշվետվություններում գրանցված է, որ ոմն Գայոս Լետորիոս, պատրիկական տոհմի պատկանող մի պատանի, որը մեղադրվում էր ամուսնական անհավատարմության մեջ, աղերսելով մեղմել իրեն հասնող դաժան պատիժը՝ ուշադրության առնելով իր երիտասարդութունն ու ազնվատոհմիկութունը, սենատորների առջև վկայակոչում էր նաև այն, որ ինքը տերն է և մի տեսակ պահապանը այն հողի, որին, ծնվելիս, հպվել է¹¹ աստվածային Օգոստոսը, և ներում էր խնդրում հանուն իր այդ սեփական և ժառանգական աստվածության: Այդ ժամանակ էլ որոշում է ընդունվել տան այդ մասը վերածել սրբավայրի:

6. Նրա մանկական, փոքրիկ սենյակը, որ մտունի է նման, առ այսօր ցույց են տալիս նրա պապի քաղաքամերձ դաստակերտում, Վելլուրդեո մոտ, և շրջակա բնակիչները համոզված են, որ նա այնտեղ էլ ծնվել է: Այնտեղ ընդունված է մուտք գործել միայն ըստ անհրաժեշտության և մաքրված արարողութունից հետո, քանի որ վաղեմի մի հավատալիք էր, թե իբր յուրաքանչյուրին, ով սենյակ է մտնում առանց ակնածանքի, մախ ու սարսափ է համակում: Դա հաստատվեց վերջերս, երբ դաստակերտի նոր տերը, պատահաբար, թե հետաքրքրասիրութունից դրդված, որոշեց այնտեղ գիշերել, բայց մի քանի ժամ անց, գիշերվա կեսին, հանկարծակի անհայտ մի ուժով դուրս շարտվեց այնտեղից. նրան անկողնի հետ միասին կիսակենդան գտան արդեն շեմից դուրս:

7. Մանուկ ժամանակ նրան տվեցին Ֆուրիացի մականունը՝ ի հիշատակ նրա նախնիների ծագման, գուցե և այն հաղթանակի, որ տարավ նրա հայրը՝ Օկտավիոսը, Ֆուրիական օկրուզում փախստական ստրուկների նկատմամբ: Այն, որ նրան Ֆուրիացի մականունն են տվել, ես հաղորդում եմ լիակատար համոզմամբ. ինձ հաջողվեց գտնել բրոնզե մի հին կերտվածքի քանդակ, որը պատկերում էր նրան երեսա ժամանակ, և նրա վրա այդ անունը գրված էր երկաթյա, գրեթե ջնջված տառերով: Այդ քանդակը ես մատուցեցի կայսրին¹², որը երկյուղածությամբ այն տեղավորեց Լարերի միջև, իր ննջարանում: Ի դեպ, Մարկոս Անտոնիոսն էլ է հաճախ նրան իր նամակներում Ֆուրիացի անվանում, ջանալով վիրավորել դրանով. բայց ի պատասխան Օգոստոսը միայն զարմանում է, որ իրեն կշտամբում են իր իսկ մանկական անվան համար: (2) Իսկ հետագայում նա ընդունեց Գայոս Հուլիոս անունը և Օգոստոս մականունը՝ առաջինը ըստ տատի եղբոր կտակի, երկրորդը՝ Մունացիոս Պլանիոսի առաջարկությամբ: Ուրիշներն այդ ժամանակ նրան առաջարկեցին Հոմուլոսի¹³ անունը, որպես Հոմի երկրորդ հիմնադրի, բայց վճովեց, որ ավելի լավ է նա կոչվի Օգոստոս. դա ոչ միայն նոր անուն էր, այլև ավելի վեհապանծ, քանզի երկրպագանելի վայրերը, ուր ավգուրները կատարել էին օժման ծեսը, անվանում են «օգոստափառ» (augusta)՝ կամ այն է «մեծացում» (auctus) բառից կամ էլ թոշունների թռիչքից կամ կերակրումից (avium gestus gustusve). այդ է ցույց տալիս նաև էննիոսի ոտանավորը.

Օգոստափառ գուշակմամբ հիմնադրվեց Հոմը նշանավոր¹⁴.

8. Չորս տարեկանում նա կորցրեց հորը: Ժողովում տասներկու տարեկանում գովարանական ճառ արտասանեց իր տատ Յուլիայի թաղմանը: Նվա շորս տարի անց, արդեն հագնելով շափահասի տոգա, զինվորական պարզեներ ստացավ Կեսարի Կոնսուլական տրիումֆում, թեև ինքը չահել տարիքի պատճառով պատերազմին չէր մասնակցել: Իսկ երբ դրանից հետո իր տատի եղբայրը մեկնեց Իսպանիա, Պոմպեոսի որդիների դեմ, նա, դեռևս չկազդուրված ծանր հիվանդությունից հետո, փոքրութիվ ուղեկիցներով, թշնամու սպառնալիքի տակ գտնվող ճանապարհներով, շնահանջելով անգամ նավախորտակումից հետո, դնաց նրա ետևից. իսկ վաստակելով Կեսարի համակրանքը անցման ժամանակ ցուցաբերած այդ վճռականության համար, նա շուտով գովասանքի արժանացավ նաև իր բնածին շնորհների համար:

(2) Իսպանիայի հնազանդեցումից հետո, մտադրվելով արշավել դա-

քերի և ապա պարթևների դեմ, Կեսարը վաղօրոք նրան ուղարկեց Ասյուլունիա¹⁵, և այստեղ նա ազատ ժամանակը նվիրեց պարապմունքների: Առաջին իսկ լուրն առնելով, թե Կեսարն սպանված է և թե ինքը նրա ժառանգորդն է, երկար տատանվում էր օգնության շնորհիվ արդյոք մոտերքում կանգնած լեգեոնները, բայց հրաժարվեց այդ մտքից որպես թեթևամիտ և վաղաժամ: Սակայն նա մեկնեց Հռոմ և վերցրեց ժառանգությունը, շնայելով ո՛չ մոր կասկածներին, ո՛չ էլ խորթ հոր՝ կոնսուլյարիս Մարցիոս Փիլիպպոսի, վճռական առարկումներին¹⁶: (3) Եվ այդ պահից, զորքեր հավաքելով, սկսեց կառավարել պետությունը՝ սկզբում, տասներկու տարի, Մարկոս Անտոնիոսի և Մարկոս Լեպիդոսի, ապա միայն Մարկոս Անտոնիոսի հետ և, վերջապես, քառասունչորս տարի միանձնաբար:

9. Ուրվագծելով նրա կյանքը ընդհանուր գծերով, այժմ ես կանգ կառնեմ մանրամասների վրա, բայց ոչ թե ժամանակի, այլ իրերի հետևողականությամբ, որպեսզի կարելի լինի դրանք պատկերացնել առավել ակնառու և ըմբռնելի:

Նա մղել է հինգ քաղաքացիական պատերազմ՝ մուտինյան, փիլիպպիական, պերուզիական, սիցիլիական, ակտիական. դրանցից առաջինը և վերջինը՝ Մարկոս Անտոնիոսի, երկրորդը՝ Բրուտոսի և Կասսիոսի, երրորդը՝ Լուկիոս Անտոնիոսի՝ եռապետի եղբոր, և չորրորդը՝ Սեքստոս Պոմպեոսի՝ Գնեոսի եղբոր դեմ:

10. Բոլոր այդ պատերազմների սկիզբը և պատճառը այսպիսին էին: Իր առաջին պարտքը համարելով վրեժը տատի եղբոր սպանության համար և պաշտպանությունը այն ամենի, ինչ նա արել էր, Ասյուլունիայից ժամանելուց անմիջապես հետո նա ուզում էր զենքը ձեռքին հանկարծակի հարձակվել Բրուտոսի և Կասսիոսի վրա. իսկ այն բանից հետո, երբ սրանք, կանխատեսելով վտանգը, թաքնվեցին, նա վճռեց դիմել օրենքի զորությանը և հեռակա կարգով մեղադրել նրանց սպանության մեջ: Նա ինքը կազմակերպեց խաղերը¹⁷ ի պատիվ Կեսարի հաղթանակի, այն դեպքում, երբ նրանք, ում հանձնարարված էր, շհամարձակվեցին այդ անել: (2) Իսկ որպեսզի վստահորեն իրագործի նաև իր հետագա մտահոսքումները, նա հանդես եկավ որպես թեկնածու հանկարծամահ եղած մի ժողովրդական տրիբունի տեղի, համար, թեև պատրիկ էր և սենատում դեռևս նիստ չէր արել¹⁸: Բայց կոնսուլ Մարկոս Անտոնիոսը, որի օգնությանը նա գրեթե ամենից շատ էր ապավինում, հանդես եկավ նրա ձեռնարկումների դեմ և ոչ մի բանում նրան նույնիսկ ամենաստվորական, գործող օրենքներով նախատեսված աջակցություն ցույց չէր տալիս այլ կերպ, քան վիթխարի փոխհատուցում վերապահելով իրեն:

Այնժամ նա անցավ օպտիմատների կողմը, քանզի տեսնում էր, որ Անտոնիոսը ատելի է սրանց, գլխավորապես այն պատճառով, որ պաշարել էր Դեցիմոս Բրուտոսին Մուտինայում և փորձում էր զրկել նրան պրովինցիայից, ուր նրան նշանակել էր Կեսարը և հաստատել սենատը: (3) Որոշ անձանց խորհրդով նա Անտոնիոսի մոտ վարձու մարդասպաններ ուղարկեց¹⁹. Իսկ երբ այդ դիտավորությունը բացահայտվեց, նա, երկյուղ կրելով պատասխան սպանալիքից, սկսեց ամենաշքեղ ընծաներով վեատերաններ հավաքագրել, որպեսզի պաշտպանի և՛ իրեն, և՛ հանրապետությունը: Հավաքագրված զորքը նա պետք է գլխավորեր պրոպրետորի աստիճանով և նոր կոնսուլներ Հիրցիոսի ու Պանսայի հետ միասին օգնության տաներ Դեցիմոս Բրուտոսին:

Իրեն հանձնարարված այդ պատերազմը նա ավարտեց երկու ամսում՝ երկու ճակատամարտով: (4) Առաջին ճակատամարտում նա, ըստ Անտոնիոսի, փախավ և հայտնվեց միայն մեկ զր անց, առանց թիկնոցի²⁰ ու ձիու. երկրորդում, ինչպես հայտնի է, նա ստիպված եղավ ոչ միայն զորավար լինել, այլև զինվորի նման մարտնչել, իսկ երբ մարտի թունդ պահին նրա լեգեոնի զրոշակակիրը ձանր վիրավորվեց, նա երկար ժամանակ սեփական ուսերին էր կրում նրա արծիվը:

11. Այդ պատերազմում Հիրցիոսն ընկավ մարտում, Պանսան շուտով մահացավ վերքից. լուր տարածվեց, թե այդ նա էր հոգ տարել նրանց մահվան մասին²¹, որպեսզի այժմ, երբ Անտոնիոսը փախուստ էր տվել, իսկ հանրապետությունը մնացել էր առանց կոնսուլների, միայն ինքը կարողանա իր ձեռքը գցել հաղթանակած զորքի հրամանատարությունը: Հատկապես Պանսայի մահը այնքան կասկածներ էր հարուցում, որ նրա բժիշկ Գլիկոնը կալանքի ենթարկվեց այն մեղադրանքով, թե թույն է դրել նրա վերքին: Իսկ Նիգերոս Աքվիլիոսը պնդում է, որ երրորդ կոնսուլին ևս՝ Հիրցիոսին, Օկտավիանոսը սպանել է իր ձեռքով, գոտեմարտի խառնակության մեջ:

12. Սակայն, իմանալով, որ փախուստ տված Անտոնիոսը աջակցություն է գտել Լեպիդոսից, և որ մնացած զորավարներն ու զորքերը հանգես են եկել նրանց կողմում, նա առանց տատանվելու լքեց օպտիմատների կուսակցությունը: Նման փոփոխության երևութական արդարացման համար նա վկայակոչում էր նրանցից ոմանց խոսքերն ու արարքները. ոմանք իբրև թե ապում էին, որ նա մանչուկ է, մյուսները՝ որ նրան հարկ է երկինք հանել²², որպեսզի հետո ստիպված չլինեն հատուցել նրան և վեատերաններին: Իսկ լավագույնս ցույց տալու համար, թե ինքը ինչպես է զղջում նրանց հետ ունեցած նախկին դաշինքի համար, նա հանկարծակի հարձակվեց Նուրսիայի²³ բնակիչների վրա, որոնք Մուտինայի մոտ

ընկածների համար հուշարձան էին կառուցել հասարակության հաշվին՝ «Հնկան հանուն ազատության» մակագրությամբ. նրանցից վիթխարի դրամ պահանջեց, իսկ երբ բնակիչները չկարողացան վճարել, նրանց, տնազուրկներին, վտարեց քաղաքից:

13. Դաշինքի մեջ մտնելով Անտոնիոսի և Լեպիդոսի հետ²⁴, նա, չնայած իր տկարությանն ու հիվանդությանը, երկու ճակատամարտով ավարտեց նաև փիլիպպիական պատերազմը. ընդ որում առաջին ճակատամարտում նա դուրս մղվեց ճամբարից և հազիվ փրկվեց՝ փախուստ տալով դեպի մյուս թևը՝ Անտոնիոսի մոտ: Բայց և այնպես, հաղթանակից հետո նա ոչ մի գթասրտություն չցուցաբերեց՝ Բրուտոսի գլուխը²⁵ նա ուղարկեց Հռոմ՝ այն Կեսարի արձանի ոտքերի տակ նետել տալու համար, իսկ իր կատաղությունը թափելով ամենատոհմիկ գերիների վրա, դեռ հայհույանքների տարափ էլ տեղաց նրանց գլխին: (2) Այսպես, երբ ինչ-որ մեկը նվաստացած աղերսում էր իր մարմինը չզրկել թաղումից, նա, ասում են, պատասխանեց. «Դրա մասին թույլունները կհոգան»: Երկու ուրիշ մարդու՝ հոր և որդու, որ խնդրում էին խնայել, նա հրամայեց միճակահանությամբ կամ մատնախաղով²⁶ որոշել, թե նրանցից ով է Եենդանի մնալու, և հետո նայում էր, թե ինչպես նրանք երկուսն էլ կործանվեցին՝ հայրը զիջեց որդուն և մահապատժի ենթարկվեց, իսկ որդին դրանից հետո ինքնասպան եղավ: Դրա համար էլ ոմանք և դրանց թվում Մարկոս Փաբոնիոսը, Կատոնի հայտնի նմանակողը, շղթայակապ անցնելով զորավարների կողքով, Անտոնիոսին ողջունում էին իմպերատոր²⁷ սպառվանունով, իսկ Օկտավիանոսի դեմքին ամենազաժան վիրավորանքներն շարտում:

(3) Հաղթանակից հետո, ըստ զիազորությունների բաժանման, Անտոնիոսը պետք է վերականգներ կարգը Արևելքում, Օկտավիանոսը՝ վերտերաններին Իտալիա տաներ և բնակեցներ մունիցիպալային հողերում: Բայց այստեղ էլ նրանից գոհ չէին ո՛չ հողատերերը, ո՛չ վերտերանները. առաջինները գանգատվում էին, որ իրենց քշում են սեփական հողերից, մերջիները՝ որ ավելի պակաս են ստանում, քան հույս ունեին ստանալու ըստ իրենց ծառայության:

14. Հենց այդ նույն ժամանակ խռովություն բարձրացրեց Լուկիոս Անտոնիոսը՝ հույս դրած իր կոնսուլական աստիճանի և եղբոր հզորության վրա: Օկտավիանոսը ստիպեց Լուկիոսին նահանջել Պերուզիա և այնտեղ, ուժասպառ անելով, հարկադրեց անձնատվության, բայց ինքն էլ չիտուսափեց շատ վտանգներից ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ դրա ընթացքում: Այսպես, մի անգամ թատրոնում, տեսնելով հեծյալակուն շարքերում նստած մի շաբքային զինվորի, ծառային կարգադրեց

դուրս հանել նրան. տեղնուտեղը անբարյացակամները լուր տարածեցին, թե իբր նա հենց այդտեղ էլ խոշտանգել և մահապատժի է ենթարկել այդ զինվորին, այնպես որ նա քիչ էր մնում սպանվեր վազքով հավաքված կատաղի զինվորների ամբոխի մեջ. նրան փրկեց այն, որ փնտրվող զինվորը հանկարծ ինքը հայտնվեց ողջ ու առողջ: Իսկ Պերուզիայի պարիսպների տակ զոհ մատուցելիս նա քիչ էր մնում ընկներ հանկարծակի արտագրոհի ելած գլադիատորների ջոկատի ձեռքը²⁸:

15. Պերուզիայի գրավումից հետո նա շատ գերյալների մահապատժի ենթարկեց: Բոլորին, ով փորձում էր գթություն աղերսել կամ արդարանալ, ընդհատում էր երեք բառով. «Իու պետք է մեռնես»: Ոմանք գրում են, թե նա իբր անձնատուր եղածներից երեք հարյուր հոգու ընտրեց բոլոր դասերից և մարտյան իդերին զոհասեղանի մոտ կոտորեց նրանց իբրև զոհակենդանիների²⁹ ի սլատիվ աստվածային Հուլիոսի: Կային և այնպիսիները, ովքեր պնդում էին, թե նա դիտավորյալ գործը հասցրեց պատերազմի, որպեսզի նրա գաղտնի թշնամիները և բոլոր նրանք, ովքեր հեսուում էին նրան երկյուղից դրդված կամ կամքին հակառակ, օգտվեին Անտոնիոսին հարելու հնարավորությունից և մատնեին իրենց, իսկ ինքը կարողանար, ջախջախելով նրանց, բռնագրավված ունեցվածքից վետերաններին վճարել խոստացված պարգևները:

16. Սիցիլիական պատերազմը նրա առաջին ձեռնարկումներից մեկն էր, բայց այն ևրկարաձգվեց, հաճախակի ընդհատումներ ունեցավ՝ մերթ հարկ եղավ նավատորմը վերակառուցել, որը խորտակվել էր երկու փոթորիկների ժամանակ³⁰ շնայած ամառային եղանակին, մերթ զինադադար³¹ կնքել ժողովրդի պահանջով, որը տուժում էր մատակարարման դադարեցումից և սաստկացող սովից: Վերջապես, նա վերստին կառուցեց նավերը, թիերի վրա դրեց քսան հազար ազատ արձակված ստրուկների, Բայբի մոտ կառուցեց Հուլիոսի նավահանգիստը, ծովի հետ միադնելով Լուկրինյան և Ավերնյան լճերը³², այն բանից հետո երբ նրա զորքերը զինավարժեցվեցին այնտեղ ամբողջ ձմեռ, նա ջախջախեց Պոմպեոսին Միլբի և Նավլոքայի միջև: Բուն ճակատամարտից առաջ հանկարծ նրա վրա այնպիսի խոր քուն իջավ, որ բարեկամներն ստիպված եղան արթնացնել նրան, որպեսզի մարտի ազդանշան տա: (2) Հենց դա էլ, ինչպես կարծում եմ, առիթ տվեց Անտոնիոսին վիրավորական հայտարարություն անելու, թե իբր նա շհամարձակվեց, անգամ, աչք աժել մարտին սլատրաստ նավերը, ոչ, նա դերանի պես թավալված էր գետնին, փորը վեր ցցած, երկնքին նայելով, և միայն այն ժամանակ ոտքի կանգնեց ու զորքի մոտ ելավ, ևրբ Մարկոս Ագրիպպան արդեն փախուստի էր մատնել թշնամու նավերը: Իսկ ուրիշները նրան մե-

զադրում են ահա թե ինչ խոսքի ու գործի համար, երբ փոթորիկը կործանեց նրա նավատորմը, նա իբրև թե բացականչեց, որ Նեպտունին³³ հակառակ էլ նա կհասնի հաղթանակի, և կրկեսային մերձավոր տոնահանդեսների ժամանակ հանդիսավոր թափորից հանեց այդ աստծո արձանը: (3) Իրականում ոչ մի ուրիշ պատերազմում նա չէր ենթարկվել այդպիսի և այդքան վտանգների, ինչպես այդ մեկում: Երբ, զորքերի մի մասն անցկացնելով Սիցիլիա, նա վերադառնում էր մայրցամաք, մնացյալ զորքերի մոտ, անսպասելի նրա վրա հարձակվեցին Պոմպեոսի զորապետներ Դեմոքարոսը և Ապոլլոփանեսը, և նա դժվարությամբ խույս տվեց նրանցից միակ նավով: Մեկ ուրիշ անգամ նա չորս քի մոտից ոտքով գնում էր Ռեգիում և տեսավ Պոմպեոսի բիրեմաները, որոնք շարժվում էին ափի երկայնքով. կարծելով, թե դրանք իր բիրեմաներն են, նա իջավ դեպի ծով և քիչ մնաց գերի ընկներ: Իսկ դրանից հետո նեղ արահետներով փախուստ տալով ուզում էր փրկվել, նրա ուղեկից էմիլիոս Պավլոսի ստրուկը փորձեց սպանել նրան, օգտվելով հարմար առիթից վրեժխնդիր լինելու Պավլոս-հոր համար, որը մահապատժի էր ենթարկվել պրոսկրիպցիանների ժամանակ:

(4) Պոմպեոսի փախուստից հետո նա խլեց զորքը տրիումվիրատի իր ընկեր Մարկոս Լեպիդոսից, որը նրա կանչով օգնության էր եկել Աֆրիկայից և, հանձնապաստան, հույսը դրած իր քսան լիգեոնների վրա, սպանալով ու վախեցնելով, պահանջում էր իր համար առաջին տեղը պետության մեջ: Սոսկ նվաստացուցիչ աղերսանքներից հետո նա պահպանեց Լեպիդոսի կյանքը, բայց նրան ցմահ աքսորեց Ցիրցեյք:

17. Մարկոս Անտոնիոսի հետ նրա դաշինքը բնավ հուսալի և կայուն չի եղել և սոսկ մի կիրպ պահպանվում էր զանազան համաձայնություններով³⁴: Վերջապես, նա խզեց նրա հետ և, լավագույնս ցույց տալու համար, թե որքան է Անտոնիոսը մոռացել իր քաղաքացիական պարտքը, կարգադրեց բացել և ժողովրդի առջև կարգալ նրա՝ Հռոմում թողած կտակը, ուր Անտոնիոսը իր ժառանգներ էր հայտարարում նույնիսկ Կլեոպատրայից ունեցած երեխաներին: (2) Սակայն նա հիշյալ թշնամու մոտ գնալ թուլյատրեց նրա բոլոր ազգականներին ու բարեկամներին, այդ թվում Գայոս Սոսիոսին և Տիտոս Դեմիցիոսին, որոնք դեռևս կոնսուլներ էին: Բոնոնիայի³⁵ բնակիչներին՝ Անտոնիոսների տոհմի վաղեմի կլիենտներին, նա նույնիսկ ողորմաժաբար ազատեց իրեն երզում տալուց³⁶, ինչ արել էր ողջ Իտալիան: Քիչ անց նա ջախջախեց Անտոնիոսին Ակտիումի³⁷ մոտ տեղի ունեցած ծովամարտում. մարտն այնքան երկար տևեց, որ ուշ ժամանակի պատճառով հաղթողն ստիպված եղավ քնել նավի վրա: Ակտիումից նա մեկնեց Սամոս՝ ձմեռելու, բայց տագնա-

պալից լուր ստանալով, որ հաղթանակից հետո իր՝ Բրունդիզիում ուղարկված ընտիր ջոկատները խռովություն են բարձրացրել և պարգևներ ու պաշտոնաթողություն են պահանջում, տեղնուտեղը ճանապարհվեց Իտալիա: Ճանապարհին երկիցս փոթորկի հանդիպեց՝ մեկը Պելոպոնեսի և էտոլիայի վերջամասերի միջև, մյուսը՝ Կերամնիական լեռների³⁸ հանդիման. երկու փոթորիկներն էլ ժամանակ նրա լիրուրնիական³⁹ թիանավերի մի մասը խորտակվեց, իսկ այն նավի վրա, որով նավարկում էր ինքը, պոկվեց պարանասարքը և կոտորվեց դեկը: Բրունդիզիումում նա մնաց միայն քսան և յոթ օր, մինչև որ ամեն ինչ կազմակերպեց ըստ զինվորների կամքի, իսկ հետո շրջանցիկ ճանապարհով Ասիայի և Ասորիքի վրայով մեկնեց Եգիպտոս, պաշարեց Ալեքսանդրիան, որ ապաստանել էին Անտոնիոսն ու Կլեոպատրան, և արագ տիրացավ քաղաքին:

(4) Անտոնիոսը հաշտության ուշացած պայմաններ էր առաջարկում. բայց նա ստիպեց նրան մեռնել, և ինքը նայում էր նրա դիակին⁴⁰, Կլեոպատրային ուզում էր ողջ թողնել հատկապես տրիումֆի համար, և երբ սա մահացավ, ընդհանուրի կարծիքով, օձի խալթոցից, նա նույնիսկ պսիլլներ⁴¹ ուղարկեց նրա մոտ, որպեսզի ծծելով դուրս քաշեն թույնն ու վարակը: Նա թույլ տվեց երկուսին թաղել միասին և պատվով, իսկ նրանց դեռևս անավարտ գամբարանը հրամայեց ավարտել: (5) Երիտասարդ Անտոնիոսին, Ֆուլվիայի ծնած երկու որդիներից ավագին, որը երկարատև ու զուր աղերսանքներից հետո փրկություն էր որոնել աստվածային Հուլիոսի արձանի մոտ, նա կարգադրեց քարշ տալով հեռացնել այդտեղից և սպանել: Կեսարիոսին, որին Կլեոպատրան հայտարարել էր Կեսարից հղացված որդի, բռնեց փախուստի պահին, վերադարձրեց և մահապատժի ենթարկեց: Անտոնիոսի և թագուհու մյուս երեխաներին նա ողջ թողեց և հետագայում օժանդակում ու հոգում էր նրանց մասին, որպես մոտ ազգականների, յուրաքանչյուրի դիրքին համեմատ: 18. Այդ նույն ժամանակ նա տեսավ Մեծն Ալեքսանդրի մարմինը⁴², որի դագաղը հրամայեց դուրս տանել տաճարից, ի նշան խոնարհման նրա վրա ոսկե պսակ դրեց և մարմինը ծածկեց ծաղիկներով: Իսկ այն հարցին, թե չի՞ կամենա արդյոք դիտել Պտղոմեոսների հանգստարանը, պատասխանեց, թե կուզենար տեսնել թագավորի և ոչ թե մեռյալների: (2) Եգիպտոսը նա դարձրեց պրովինցիա. որպեսզի այն ավելի բերրի լինի և ավելի շատ հաց տա մայրաքաղաքին, զինվորներին ստիպեց մաքրել վաղեմիությունից տիղմով լցված ջրանցքները, որոնցով տարածվում էր Նեղոսը: Ակտիումի հաղթանակի փառքը սերունդների հիշողության մեջ պահպանելու համար նրա մոտ հիմնադրեց Նիկոպոլիս⁴³

քաղաքը, սահմանեց այնտեղ հինգ տարին մեկ կրկնվող տոնակառն խաղեր, ընդլայնեց Ապոլլոնի հին տաճարը, իսկ այն վայրը, ուր խախված էր եղել նրա ճամբարը, զարդարեց նավերից վերցված ավարով և նվիրարբերեց նեպտունին ու Մարսին:

19. Խոտվությունները, դավադրությունները և հեղաշրջումների փորձերը դրանից հետո էլ չէին դադարում, բայց ամեն անգամ նա ժամանակին բացահայտում էր դրանք մատնությունների միջոցով և ճնշում ավելի վաղ, քան վտանգավոր կդառնային: Այդ դավադրությունները գլխավորում էին երիտասարդ կեպիդոսը, այնուհետև՝ Վարրոն Մուրենան և Փաննիոս Ցեպիոնը, ապա՝ Մարկոս Էգնացիոսը, հետո՝ Պլավտիոս Լեուսիոսը և Լուկիոս Պուլեյը, նրա թոռնուհու ամուսինը. բացի այդ՝ նաև Լուկիոս Ավրասիոսը, որը մերկացված էր ստորագրություններ կեղծելու մեջ, զառամյալ տարիքի և թույլ առողջության տեր մի մարդ, Ազինիոս Էպիկադեսը՝ պարթինների⁴⁴ ցեղից մի կիսաբարբարոս, և վերջապես, Տելեփոսը՝ մի կնոջ անվանատու ստրուկը⁴⁵: Իսկապես, նա շնուտափեց նույնիսկ ամենատորին կացության անձանց դավադրություններից և մահափորձերից: (Ձ) Ավդատիոսը և Էպիկադեսը ենթադրում էին առևանգել և զորքերի մոտ տանել նրա դուստր Յուլիային և զարմիկ Ազրիպայային այն կղզիներից, ուր սրանք պահվում էին, իսկ Տելեփոսը, գայթակղված այն մարգարեությունից, որը նրան խոստանում էր բարձրագույն իշխանությունը, մտադրվել էր հարձակվել և՛ նրա, և՛ սենատի վրա: Վերջապես, մի գիշեր նրա ննջասենյակի մոտ բռնվեց նույնիսկ իլլիրիական զորքից ոմն պանդոկապան՝ գոտկին որսորդական դանակ, որը կարողացել էր խաբել պահակախմբին. արդյոք նա խելագար էր, թե միայն ձևացնում էր, դժվար է ասել. խոշտանգումով նրանից ոչ մի բառ չկարողացան կորզել:

20. Արտաքին պատերազմներից միայն երկուսն է նա անձամբ վարել՝ դալմաթիականը դեռևս պատանի ժամանակ և կանտարրիականը Անտոնիոսի պարտությունից հետո: Դալմաթիական պատերազմում նա նույնիսկ վիրավորվեց՝ մի մարտի ժամանակ քարը դիպավ նրա աջ ծնկանը, մյուսում, կամրջի փլվելու ժամանակ, վնասեց սրունքը և երկու ձեռքերը: Մնացյալ պատերազմները նա հանձնարարում էր իր լեզատներին, թեև մի քանի արշավանքների Գերմանիայում և Պաննոնիայում ինքը ներկա էր, մեկնելով դրա համար մայրաքաղաքից մինչև Հռավեննա, Մեդիոլանում կամ Աքվիլեա: 21. Այդպես, մասամբ նրա հրամանատարությամբ, մասամբ հսկողությամբ հնազանդվեցին Կանտարրիան, Աքվիտանիան, Պաննոնիան, Դալմաթիան ողջ Իլլիրիկումի հետ միասին և հետո Լեցիան և վինդելիկների ու սալասսների արպիական ցեղերը:

Նա վերջ դրեց դաքերի ասպատակություններին, կոտորելով նրանց երեք առաջնորդներին հսկայաթիվ զորքի հետ միասին, ետ քշեց զերմանացիներին Ալբիսից⁴⁶ այն կողմ, իսկ նրան ենթարկված սվևներին և սիգամբլրներին⁴⁷ փոխադրեց Գալլիա և բնակեցրեց Հռենոսի մոտ ընկած դաշտերում: Ուրիշ անհանգիստ ցեղերի ևս նա հնազանդության բերեց:

(2) Ոչ մի ժողովրդի նա պատերազմ չէր հայտարարում առանց օրինական և կարևոր պատճառների: Նա այնքան հեռու էր իր իշխանությունը տարածելու կամ ուզմական փառքը բազմապատկելու ձգտումից, որ որոշ բարբարոսական առաջնորդների ստիպում էր Վլեծխնդիր Մարսի տաճարում երդում տալ հավատարիմ մնալու խաղաղությանը, ինչ նրանք իրենք էին խնդրում. իսկ ոմանցից էլ առաջին անգամ փորձեց պատանդ վերցնել կանանց, քանի որ տեսնում էր, որ տղամարդ պատանդներին նրանք շեն ափսոսում⁴⁸. Ի գեպ, առաջին իսկ պահանջով նա միշտ վերագարձնում էր բոլոր պատանդներին: Բոլոր նրանց, ովքեր շափից ավելի հաճախ կամ ուխտադրժորեն էին խոսվություն բարձրացնում, նա պատժում էր միայն այն բանով, որ նրանց որպես գերյալների վաճառում էր ստրկության հայրենիքից հեռու, և նրանք ազատություն ավելի վաղ չէին ստանում, քան երեսուն տարի անց: (3) Նրա այդ արժանավայել շափավորության փառքը դրդեց նույնիսկ հնդիկներին ու սկյութներին, որոնց միայն լսելով գիտեինք, դեսպանների միջոցով խընդրելու Օգոստոսի և հռոմեական ժողովրդի բարեկամությունը: Իսկ պարթևները նրա պահանջով և՛ Հայաստանն անխոս զիջեցին նրան, և՛ վերագարձրին Մարկոս Կասսիոսից ու Մարկոս Անտոնիոսից խլած դրոշները⁴⁹, և՛ կամովին պատանդներ առաջարկեցին⁵⁰, և՛, նույնիսկ, մի քանի հավակնորդներից իրենց թագավոր ընտրեցին նրան, ում հավանություն տվեց Օգոստոսը:

22. Յանուս Քվիրինուսի⁵¹ տաճարը, որ քաղաքի հիմնադրումից մինչև նրա ժամանակները փակվել էր միայն մեկ կամ երկու անգամ, նա շատ խիստ կարճ ժամանակահատվածում երիցս փակեց՝ ի նշան խաղաղության ցամաքում և ծովում: Երկու անգամ՝ փիլիպպիական և սիցիլիական պատերազմներից հետո, նա քաղաք էր մտել օվացիաներով⁵²: Նա տոնեց երեք իսկական տրիումֆներ՝ դալմաթիական, ալտիական և ալեքսանդրիական, երեք օր անընդմեջ⁵³:

23. Մանր և խայտառակ պարտություններ նա ապրեց միայն երկիցս, և երկու անգամ էլ Գերմանիայում. դրանք Լուլլիոսի և Վարոսի պարտություններն էին: Առաջինը ավելի շատ խայտառակություն բերեց⁵⁴, քան վնաս, բայց երկրորդը գրեթե կործանարար էր՝ ոչնչացվեցին երեք լեգեոններ զորավարի, լեգատների և բոլոր օժանդակ զորքերի հետ միասին:

Այդ լուրն ստանալուց հետո Օգոստոսը հրամայեց քաղաքում պահակա-
խմբեր տեղաբաշխել ի խուսափումն հուզումներից. պրովինցիալների տե-
ղապահների իշխանությունը նա երկարաձգեց, որպեսզի փորձված և սո-
վոր մարդիկ դաշնակիցներին պահեն հնազանդության մեջ. (2)
Բարեշնորհ և Մեծագույնն Յուպիտերին նա ուխտեց փառահեղ խաղեր
կազմակերպել, եթե պետության դրությունը բարելավվի, ինչպես երբեմ-
նի արվում էր կիմբրների և մարսերի⁵⁵ դեմ պատերազմների ժամանակ:
Եվ ասում են, նա այն աստիճանի վշտացած էր, որ մի քանի ամիս ան-
ընդմեջ մազերն ու մորուքը շէր խուզում, և մեկ անգամ չէ, որ գլուխը
դուան կողափայտին էր խփել, բացական չելով. «Քվինտիլիոս Վարոս.
Վերադարձր՝ լեգեոնները», իսկ ամեն սարի պարտության օրը⁵⁶ նշում
էր սգով և վշտով:

24. Ռազմական գործում նա շատ փոփոխություններ և նորույթ-
ներ մտածեց, իսկ որոշ բաներում էլ վերականգնեց հին կարգերը: Կար-
գապահությունը նա մեծագույն խստությամբ էր պահպանում: Նույնիսկ
իր լեգատներին էանանց հետ տեսակցել թույլ էր տալիս միայն ձմեռ
ժամանակ, այն էլ մեծ տհաճությամբ: Մի հոռմեացի հեծյալի, որը կըս-
րել էր իր երկու պատանի որդիների ձեռքերի բթամատերը, որպեսզի
ձերբազատի նրանց զինվորական ծառայությունից, նա հրամայեց աճուր-
դով վաճառել բոլոր ունեցվածքով հանդերձ. բայց տեսնելով, որ սրան
սաստիկ ձգտում են գնել կապալառուները⁵⁷, նրան շնորհեց իր ազատար-
ձակին պայմանով, որ սա նրան ազատություն տա, բայց ուղարկի հե-
ռավոր կալվածները: (2) Անհնազանդության համար նա տասներորդ լե-
գեոնը անպատվությամբ ցրեց: Մյուս լեգեոնները, որոնք անվայելուչ
կերպով պաշտոնաթողություն էին պահանջում, նա արձակեց առանց
վաստակած պարգևների: Թշնամու առջև նահանջած փաղանգներում նա
մահապատժի էր ենթարկում յուրաքանչյուր տասներորդին, իսկ մնաց-
յալներին փոխադրում էր գարեհացի⁵⁸: Ռազմակարգը լքող ցենտուրիոն-
ներին, ինչպես նաև շարքայիններին պատժում էր մահվամբ, մնացյալ
զանցանքների համար տարատեսակ խայտառակիչ տույժեր էր տալիս՝
հրամայում էր, օրինակ, մի ամբողջ օր կանգնել պրետորական վրանի
առջև, երբեմն՝ միայն շապկով և գոտիով, ուրիշ անգամ՝ ձեռքին կան-
գունաչափ կամ ճիմ⁵⁹:

25. Քաղաքացիական պատերազմներից հետո նա արդեն ոչ մի ան-
գամ ո՛չ հավաքի ժամանակ, ո՛չ հրամաններում ռազմիկներին «զինակից-
ներ» չէր անվանում, այլ միայն «զինվորներ» և այլ դիմում չէր թույլա-
տրում ո՛չ որդիներին, ո՛չ խորթ որդիներին, եթե նրանք զորապետներ
էին լինում. նա դա չափից դուրս շողոքորթիչ էր գտնում և՛ զինվորական

կարգերի, և՛ խաղաղ ժամանակների համար, և՛ իր մեքսիկացիների արժանապատվության համար (2) Ազատարձակներին նա զորքի մեջ ընդունում էր միայն Հռոմը հրդեհներից կամ հացի պակասության ժամանակ հուզումներից պահպանելու համար, իսկ մնացած դեպքերում միայն երկու անգամ. առաջինը՝ ամրապնդելու համար զաղութները իլլիրիական սահմանում, երկրորդը՝ պաշտպանելու Հոնոսի ափը⁶⁰: Բայց դրանց էլ նա վարձում էր դեռևս ստրուկ եղած ժամանակ, ամենահարուստ տերերից ու տիրուհիներից, և տեղնուտեղը ազատ էր արձակում, սակայն պահում էր առանձին դրոշի ներքո, չէր խառնում ազատածիններին և հատուկ ձևով էր զինում: (3) Զինվորական պարգևներից նա ավելի հաճույքով բաժանում էր վահանակներ, շղթաներ և ամեն տեսակի ոսկե ու արծաթե առարկաներ, քան պատվոպսակներ՝ պարիսպներ ու հողապատեճներ վերցնելու համար⁶¹. դրանցում նա ծայրաստիճան ժլատ էր, և մեկ անգամ չէ, որ անկողմնապահորեն շնորհել էր անգամ հասարակ զինվորներին: Սիցիլիայում տարած ծովային հաղթանակից հետո Մարկոս Ագրիպային շնորհեց լազուր դրոշակ⁶²: Նա հնարավոր չէր համարում պարգևներ տալ տրիումֆատորներին միայն, նույնիսկ նրանց, ովքեր ուղեկցել էին նրան արշավանքներում և մասնակցել հաղթանակներին, քանի որ նրանք իրենք էլ իրավունք ունեին պարգևներ բաշխել ըստ իրենց հայեցողության:

(4) Օրինակելի զորավարին, նրա կարծիքով, ամենից քիչ էր վայել լինել փութկոտ ու աճապապող: Դրա համար էլ նա հաճախ էր կրկնում հետևյալ ասացվածքները. «Շտապիտ առանց փութալու», «Զգույշ գործավարը անխոհեմից լավն է»⁶³ և «Ավելի լավ է անել ավելի հաջող, քան ձեռնարկել ավելի արագ»:

Դրա համար էլ նա երբեք ճակատամարտ կամ պատերազմ չէր սկսում, եթե վստահ չէր լինում, որ հաղթանակի դեպքում ավելի շատ կշահի, քան թե կկորցնի պարտության ժամանակ: Նրանց, ովքեր նկրտում էին փոքր օգուտների մեծ վտանգների գնով, համեմատում էր այն ձկնորսի հետ, ով ձուկ է որսում ոսկե կարթով՝ կկտրվի կարթը, ոչ մի որս չի հատուցի կորուստը:

26. Բարձրագույն և պատվավորագույն պետական պաշտոնները նա ստանում էր ժամկետից շուտ, այդ թվում նաև որոշ նոր և մշտական պաշտոններ: Կոնսուլությունը նա ձեռք էր քսան տարեկանում, լ՛գեոններով թշնամու պես ընդհուպ մոտենալով Հռոմին, և դեսպանների միջոցով պահանջելով այդ աստիճանը զորքի անունից. իսկ երբ սենատը տառաձայնեց, ցենսուրիոն Կոռնելիոսը, դեսպանության գլխավորը, ետ նետելով թիկնոցը և ցույց տալով թրի կոթը, ուղղակի ասաց սենատոր-

ներին, «Ահա, թե ով նրան կոնսուլ կգարձնի, եթե դուք չգարձնեք»: (2) Երկրորդ կոնսուլությունը նա ստացավ ինը տարի անց. երրորդը՝ ևս մեկ տարի անց. հաջորդները, ընդհուպ մինչև տասնմեկերորդը, ամեն տարի. դրանից հետո նրան դեռ էլի շատ անգամ են առաջարկել կոնսուլի աստիճան, բայց նա հրաժարվում էր, և տասներկուերորդ անգամ նա այն ընդունեց միայն տասնյոթամյա մեծ ընգամիջումից հետո. վերջապես, տասներեքերորդ կոնսուլությունը նա ինքը խնդրեց իր համար երկու տարի անց, որպեսզի այդ բարձրագույն պաշտոնում ժողովրդի առջև հանի իր որդիներ Գայոսին և Լուկիոսին, յուրաքանչյուրի շափահասության օրը⁶⁴: (3) Հինգ միջին կոնսուլությունները, վեցերորդից մինչև տասներորդը, նա զրավել էր մեկ տարով, մյուսները՝ իննական, վեցական, չորսական կամ երեքական ամսով, իսկ երկրորդը՝ միայն մի քանի ժամով՝ նոր տարվա օրը նա առավտից նստեց կոնսուլական բազիլիոսին Յուլիտերի տաճարի առջև և, փոքր-ինչ նստելուց հետո, վար դրեց պաշտոնը և իրեն հաջորդ նշանակեց: Միշտ չէ, որ Հռոմում էր նա պաշտոն ընդունել՝ չորրորդ կոնսուլությունը Ասիայում, հինգերորդը՝ Սամոս կղզում, ութերորդը և իններորդը՝ Տարրակոնում:

27. Պետության կարգավարման համար նա եռապետ եղավ տասը տարի շարունակ: Այդ պաշտոնում նա սկզբնապես հակառակում էր պաշտոնակիցներին և փորձում կանխել պրոսկրիպցիաները, բայց երբ գրանք այնուամենայնիվ հայտարարվեցին, նա դաժանությամբ գերազանցեց մյուս երկուսին: Դեռևս շատերին հաջողվում էր սրանց գուժր շարժել աղերսանքով ու խնդրանքով, միայն նա էր հաստատապես պընդում, որ ոչ ոքի չխնայեն: Նա զոհերի ցուցակի մեջ մտցրեց նույնիսկ իր խնամակալ Գայոս Տորանիոսին⁶⁵, որն ըստ էգիլության նրա հայր Օնտավիոսի ընկերակիցն էր: (2) Դեռ ավելին, Հուլիոս Սատուրնինոսը հաղորդում է, որ պրոսկրիպցիաների իրագործումից հետո Մարկոս Լեպիդոսը սենատից ներումն էր հայցում պատահածի համար և հույս հայտնում, որ պատիժներին վերջ է տրված և այսուհետև գալու է գթածության ժամանակաշրջանը. իսկ Օկտավիանոսը, ընդհակառակն, հայտարարեց, որ թեև դադարեցնում է պրոսկրիպցիաները, բայց իրեն գործողությունների լիակատար ազատություն է վերապահում: Ճշմարիտ է, հետագայում, ասես զղջալով իր համառության համար, նա հեծյալական աստիճանի բարձրացրեց Տիտոս Վինիոս Փիլոպեմենեսին, քանի որ նրա մասին ասում էին, թե նա պրոսկրիպցիաների ժամանակ իր պատրոնին թաքցրել էր մարդասպաններից:

(3) Եռապետ եղած ժամանակ շատ արարքներով նա իր նկատմամբ համընդհանուր ատելություն հարուցեց: Այսպես, հռոմեացի հեծյալ Պի-

նարիոսը քաղաքացիների բազմության ներկայութեամբ զինվորների առջև նրա արտասանած ճառի ժամանակ ինչ-որ բան էր գրառում. նկատելով այդ, նա հրամայեց իր աչքի առջև սրախողխող անել նրան որպես լրտեսի և հետախույզի: Նշանակյալ կոնսուլ Թեդիոս Ափրային, որը թունոտ էր արտահայտվել նրա ինչ-որ արարքի մասին, նա սպառնալիքներով հասցրեց այն բանին, որ կոնսուլն ինքնասպան եղավ⁶⁶: (4) Պրետոր Քվինտոս Գալլիոսը նրա մոտ ողջունի եկավ՝ զգեստի տակ ունենալով կրկնակի գրատախտակներ. Օկտավիանոսը կասկածեց, թե նա սուր է թաքցրել, սակայն, վախենալով սխալվել, չհամարձակվեց տեղում խուզարկել նրան, բայց քիչ անց ցենսորիոններին և զինվորներին հրամայեց իջեցնել նրան դատավորական բազկաթուղից, խոշտանգեց ինչպես մի ստրուկի և, ոչնչի չհասնելով, մահապատժի ենթարկեց, նախապես իր մատներով հանելով նրա աչքերը: Անձամբ ինքը, սակայն, գրում է, որ զրույցի պատրվակով Գալլիոսը մահափորձ էր կատարել իր դեմ և դրա համար բանտ էր նետվել, հետո արտաքսվել Հռոմից և զոհվել նավախորտակման կամ ավազակների հարձակման ժամանակ:

(5) Տրիբունական իշխանությունը⁶⁷ նա ցմահ էր ընդունել և մեկ կամ երկու անգամ իրեն ընկերակից էր նշանակել հինգ տարով: Նա ընդունել էր նաև բարքերի և օրենքների⁶⁸ վերահսկողությունը, նույնպես ցմահ. այդ լիազորության ուժով նա երևե անգամ ժողովրդական մարդահամար⁶⁹ էր անցկացրել, թեև ցենզոր չէր՝ առաջին և երրորդ անգամ ընկերակցի հետ, արանքում՝ մենակ:

28. Հանրապետության վերականգնման մասին⁷⁰ նա խորհել էր երկու անգամ՝ առաջինը Անտոնիոսի նկատմամբ տարած հաղթանակից անմիջապես հետո, երբ դեռևս հիշողության մեջ թարմ էին նրա հաճախակի մեղադրանքները, թե իբր միմիայն Օկտավիանոսի պատճառով էր որ հանրապետությունը դեռևս չի վերականգնվել. և երկրորդ անգամ՝ երկարատև ու տառապալից հիվանդությունից հետո, երբ նա նույնիսկ իր տուն կանչեց սենատորներին ու պաշտոնատար անձանց և նրանց հանձնեց պետական գործերի մատչանները: Սակայն, դատելով, որ իր համար էլ վտանգավոր կլինի որպես մասնավոր անձ ապրելը և անխոհեմություն՝ հանրապետությունը վստահել բազում կառավարիչների ինքնակամությունը, նա առանց տատանման իշխանությունը պահեց ձեռքին. և դժվար է ասել, թե ինչն ավելի լավ եղավ՝ վճիռը թե նրա հետևանքները: (2) Այդ վճռի մասին նա մեկ անգամ չէ, որ հայտարարել էր ի լուր ամենքի, իսկ էդիկտներից մեկում վկայում է այդ մասին հետևյալ բաներով. «Եվ այդպես, և թող ինձ ընձեռվի արարել պետությունը իր հիմանց վրա ամբողջական և աներեր, որպեսզի ես, քաղելով այդ արար-

շության ըդձալի պտուղները, համարվեմ արարիչը լավագույն պետական կարգի և վախճանվելիս ինձ հետ տանեմ այն հույսը, որ իմ գցած հիմքերը անհողդողդ կմնան»։ Եվ նա կատարեց իր ուխտը, ջանալով իր ողջ զորությամբ, որպեսզի ոչ ոք չկարողանար զանգատվել իրերի նոր կարգից։

(3) Մայրաքաղաքի տեսքը տակավին չէր համապատասխանում տեղության վեհությանը, Հոռմը դեռևս տուժում էր հեղեղումներից ու հրդեհներից։ Նա այնպես վերակառուցեց քաղաքը, որ իրավամբ հպարտանում էր այն բանով, թե ընդունեց Հոռմը աղյուսակառույց, բայց թողնում է մարմարապատ, և նա գալիք ժամանակներում քաղաքի անվտանգության համար արեց այն ամենը, ինչ կարող է կանխատեսել մարդկային բանականությունը։

29. Հասարակական շենքեր նա շատ կառուցեց. դրանցից կարևորագույններն են՝ ֆորումը Վրեժինդի Մարսի տաճարով, Ապոլլոնի մեհյանը Պալատինում, Ամպրոպածին Յուպիտերի տաճարը Կապիտոլիումի վրա։ Ֆորումը նա սկսեց կառուցել, տեսնելով, որ բազմաթիվ ժողովրդի և դատական գործերի համար երկու հրապարակները⁷¹ արդեն բավարար չեն և հարկավոր է երրորդը. դրա համար էլ նա շտապեց բացել այդ ֆորումը, շապասելով Մարսի տաճարի ավարտին, և հատկացրեց այն քրեական դատարանների և դատավորների վիճակահանության համար։ (2) Մարսի տաճարի մասին նա ուխտել էր Փիլիպպիկական պատերազմի ժամանակ, որտեղ նա վրեժինդի էր լինում հոր համար, և նա որոշում ընդունեց, որ սենատն այստեղ ընդունի պատերազմների և տրիումֆների⁷² մասին վճիռները, այստեղից էին զորապետները մեկնում պրովինցիաները, այստեղ էին զորավարները բերում տրիումֆների զարդարանքները՝ հաղթանակով վերադառնալիս։ (3) Ապոլլոնի մեհյանը նա կառուցեց պալատի ու մի ապարանքի այն մասում, որը, ըստ գուշակների, աստվածն ընտրել էր իր համար կայծակի հարվածով, և մեհյանին միացրեց սյունասրահներ լատինական և հունական գրադարանով, կյանքի մայրամուտին նա այստեղ հաճախ էր սենատ գումարում և ծանոթանում դատավորների ցուցակներին։ Ամպրոպածին Յուպիտերին նա տաճարը նվիրաբերեց ի հիշատակ փրկության այն վտանգից, կրե կանտաբրիական պատերազմի ժամանակ գիշերային անցման պահին կայծակը խփեց ուզիդ նրա պատգարակի առջև և սպանեց ջահով ընթացող ստրուկին։ (4) Որոշ շինություններ նա կառուցեց ուրիշների անունից, իր թոռների, կնոջ և քույրերի. օրինակ, Գայոսի և Լուկիոսի սյունասրահը և բազիլիկը, Լիվիայի և Օկտավիայի սյունասրահները, Մարցելլոսի թատրոնը։ Ասենք, մյուս ականավոր քաղաքացիներին ևս նա համառո-

քան խորհուրդ էր տալիս քաղաքը զարդարել սեփական հնարավորությունների համեմատ, կառուցելով նոր հուշարձաններ կամ վերականգնելով և բարելավելով հները: (5) Եվ այդ ժամանակ բազում կառույցներ շինվեցին շատ քաղաքացիների կողմից. Հերկուլես Մուսագետի տաճարը՝ Մարցիոս Փիլիպպոսի, Դիանայի տաճարը՝ Լուկիոս Կոռնիփիցիոսի, Ազատության ատրիումը՝ Ագինիոս Պուլիոնի, Սատուրնի տաճարը՝ Մունացիոս Պյանկոսի, Քատրոնը՝ Կոռնելիոս Բալբոսի, ամֆիթատրոնը՝ Ստատիլիոս Տավրոսի կողմից, իսկ Մարկոս Ագրիպպան շատ ուրիշ հիասքանչ շինություններ կառուցեց:

30. Ամբողջ քաղաքը նա բաժանեց օկրուգների և թաղամասերի⁷³, սահմանելով, որպեսզի օկրուգները վիճակահանությամբ վարեն յուրաքանչյուր տարվա պաշտոնատար անձինք, իսկ թաղամասերը՝ շրջակա բնակչութունից ընտրված ավագները: Հրդեհներից պաշտպանվելու համար նա պահակակետեր նշանակեց և մտցրեց գիշերային պահակություն, հեղեղումները կանխելու համար ընդլայնեց և մաքրեց Տիբրոսի հունը, որը բազում տարիների ընթացքում ծածկվել էր աղբով և նեղացել կառույցների փլուզումների հետևանքով: Որպեսզի քաղաքի մատույցներն ամեն կողմից դյուրամատչելի դառնան, նա ձևանարկեց ամրացնելու Փյամինիոսի ճանապարհը⁷⁴ ընդհուպ մինչև Արիմինում, իսկ մնացյալ ճանապարհները բաշխեց տրիումֆատորների միջև, որպեսզի նրանք ռազմավարից ձեռք բերած դրամով սալահատակեն դրանք:

(2) Սրբազան կառույցները, որոնք փլվել էին հնությունից կամ ոչնչացել հրդեհներից, նա վերականգնեց և մյուսներին հավասար զարդարեց հարուստ նվերներով: Այսպես մի նվագից նա Կապիտոլիումի Յուպիտերի տաճարին ընծայաբերեց տասնվեց հազար ֆունտ ոսկի⁷⁵ և հիսուն միլիոն սեստերցիումի մարգարիտ ու թանկարժեք քարեր: 31. Մեծ քրմապետի պաշտոնում (այդ աստիճանը նա ընդունեց միայն էպիդոսի մահից հետո, շցանկանալով խլել այն նրա կենդանության օրոք), նա կարգադրեց ամենուր հավաքել և այրել բոլոր հունական և լատինական, թվով ավելի քան երկու հազար մարգարեական գրքերը⁷⁶, որոնք տրածված էին ժողովրդի մեջ անանուն կամ կասկածելի անուններով: Նա պահպանեց միայն սիբիլական գրքերը, բայց դրանք էլ ընտրությամբ, որոնք երկու ոսկեզօծ սնդուկներով դրեց Պալատինումի Ապուլլոնի տաճարի հիմքում: (2) Աստվածային Հուլիոսի մտցրած օրացույցը, որը հետո անփութության պատճառով խախտվել և անկանոն վիճակի էր հասել, նա վերականգնեց նախկին տեսքով. այդ վերափոխման ժամանակ նա գերադասեց իր անունով կոչել ոչ թե սեպտեմբերը, իր ծննդյան ամիսը, այլ սեքստիլիումը՝ իր առաջին Լոնստուության և փառավորագույն

հաղթանակներ⁷⁷ ամիսը: (3) Նա ավելացրեց նաև քրմերի քանակը և մեծացրեց հարգանքը նրանց նկատմամբ ու նրանց արտոնությունները, հատկապես վեստալուհիների համար⁷⁸: Երբ հարկ եղավ նոր վեստալուհի ընտրել մահացածի փոխարեն, և շատերը միջնորդում էին իրենց դուստրերին վիճակահանությունից ազատելու համար, նա հանդիսավորությամբ երդվեց, որ եթե իր թոռնուհիներից որևէ մեկը տարիքով համապատասխաներ այդ պաշտոնին, նա ինքը կառաջարկեր նրան վեստալուհի դարձնել: (4) Նա վերականգնեց նաև մոռացության մատնված որոշ հին ծիսակատարություններ, օրինակ, գուշակությունը պետության բարօրության մասին⁷⁹, Յուպիտերի քրմությունը, խաղերը լուպերկալիաների ժամանակ, հարյուրամյա հանդիսությունները⁸¹, խաշուղիների տոներ⁸²: Լուպերկալիաների ժամանակ անբեղ-անմորուս - պատանիներին նա արգելեց մասնակցել վազքին, հարյուրամյա խաղերի ժամանակ նա երկու սեռի պատանիներին թուլատրեց մասնակցել գիշերային հանդիսախաղերին ոչ այլ կերպ, եթե ոչ ավագ ազգականների ուղեկցությամբ: Խաշուղիների լարերին՝ հովանավոր ոգիներին, նա կարգադրեց տալին երկու անգամ զսրդարել գարնանային և ամառային ծաղիկներով:

(5) Անմահն աստվածներից հետո նա ամենից ավելի հարգում էր այն առաջնորդների հիշատակը, ովքեր հռոմեական ժողովրդի տերությունը ոչնչությունից բարձրացրել և հասցրել էին վեհության: Դրա համար էլ նրանց թողած հուշարձանները նա վերականգնեց նախասկզբնական արձանագրություններով⁸³, իսկ իր ֆորումին առընթեր երկու սյունասրահներում նրանցից յուրաքանչյուրին արձան կանգնեցրեց տրիումֆային հանդերձավորմամբ, էդիկտով հայտարարելով, որ ինքն այդ անում է, որպեսզի իրեն ևս, քանի դեռ կենդանի է, և իրենից հետո գալիք բոլոր կառավարիչներին քաղաքացիները դրդեն օրինակ վերցնելու այդ այրերից: Իսկ արքայական սյունասրահին հանդիման, որը կից է Պոմպեոսի թատրոնին, նա մարմարիոնե կամարի վերևում դրեց Պոմպեոսի արձանը, բերելով այն կուրիայից, որտեղ սպանվել էր Հուլիոս Կեսարը:

32. Համընդհանուր աղետ էին բազմաթիվ շար սովորույթներ, որոնք արմատացել էին քաղաքացիական պատերազմների ընթացքում ծնունդ առած անօրինականության սովորությամբ կամ նույնիսկ առաջացած խաղաղ ժամանակ: Քիչ ավագակներ չէին թափառում օրը ցերեկով, զինված, իբրև թե ինքնապաշտպանության համար. դաշտերում բռնում էին անցքորդներին, խտրության շանելով ազատներին ու ստրուկներին, և բանտարկում էին կալվածատերերի էրգաստույումներում⁸⁴. նոր կուրեգիումների⁸⁵ անվան տակ հավաքվում էին բազմաթիվ հրոսակախմբեր՝

պատրաստ կատարելու ուզածդ հանցագործությունը: Ավազակություն, ներքի դեմն առնելու համար նա հարմար տեղերում պահակախմբեր կարգեց, էրգաստույումները խուզարկեց, բոլոր կուլեգիումները, բացառությամբ հենրի և թույլատրվածների, ցրեց: (2) Գանձարանի վաղեմի պարտապանների ցուցակները, որոնք ամենից ավելի էին կշտամբանքների տեղիք տալիս, այրեց. Հռոմում վիճելի պետական հողամասերը նա զիջեց դրանց տիրակալներին, երկարաձգված դատավարությունները, որոնց ժամանակ մեղադրյալների նվաստացումը միայն զվարճացնում էր մեղադրողներին, դադարեցրեց, հայցը վերսկսելու համար սպառնալով հավասար տույժով⁸⁶:

Որպեսզի ոչ մի հանցագործություն կամ դատական գործ անպատիժ չմնար և չձգձգվեր, նա դատաքննությունը հատկացրեց այն ավելի քան երեսուն օրերը, որոնք մագիստրատները նվիրում էին խաղերին⁸⁷: (3) Երեք դատական դեկուրիաներին նա ավելացրեց նաև շորրորդը՝ ստորին կացությունը, այդ դատավորներին անվանելով «երկհարյուրականներ»⁸⁸ և նրանց հանձնարարելով ոչ մեծ գումարների հայցերը: Դատավորներ նա նշանակում էր միայն երեսուն տարեկանից⁸⁹, այսինքն՝ սովորականից հինգ տարով վաղ: Եվ միայն այն բանից հետո, երբ շատերն սկսեցին խուսափել դատավորական պաշտոնից, նա դժկամությամբ համաձայնեց, որ հերթով յուրաքանչյուր դեկուրիա մեկ տարի ազատ մնա գործերից, և որ նույնմբեր ու դեկտեմբեր ամիսներին⁹⁰ սովորական դատավարություններ ամենևին չլինեն:

33. Ինքն անձամբ մեծ ջանասիրությամբ էր վարում դատերը, երբեմն անգամ գիշերը, իսկ եթե հիվանդ էր լինում, ասյա՝ պատգարակից, որը դնում էին դատավորական տեղերի կողքին, և նույնիսկ տանը՝ անկողնում պառկած: Դատավարության ժամանակ նա ոչ միայն մեծ մանրախուզություն, այլև մեղմություն էր դրսևորում. օրինակ, ցանկանալով մի հայրասպանի փրկել պարկից և ջրահեղձումից⁹¹, իսկ նման մահապատիժ նշանակվում էր միայն խոստովանողներին, նա, ասում են, մեղադրյալին դիմեց հետևյալ կերպ. «Նշանակում է, դու շե՞ս սպանել հորդ»: Իսկ երբ դատաքննվում էր կտակի կեղծման մի գործ, և բոլորը, ովքեր ստորագրել էին այն, ենթակա էին պատժի համաձայն Կոռնելիոսի օրենքի⁹², նա կարգադրեց քվեարկության երկու սովորական տախտակներից զատ՝ արդարացնող և մեղադրող, դատավորներին բաժանել նաև երրորդը, որը ներումն էր հուշակում նրանց, ովքեր ստորագրել էին դրդամաք կամ շհասկանալով: (3) Քաղաքացիների բողոքարկումները նա ամեն տարի հանձնում էր քաղաքային պրետորին, պրովինցիաների բնակիչներից ստացված բողոքարկումները՝ կոնսուլական կոչում ունեցող ան-

ձանց, որոնց նա մեկական նշանակում էր քննության համար յուրաքանչյուր պրովինցիայում:

34. Նա վերանայեց հին օրենքները և մտցրեց մի քանի նոր օրենքներ. օրինակ, ճոխության, ամուսնական անհավատարմության և անառակության մասին, կաշառքի, բոլոր դասերի համար ամուսնության կարգի մասին: Այդ վերջին օրենքը նա ուզում էր ավելի խստացնել մյուսների համեմատությամբ, բայց բուն դիմադրությունը հարկադրեց նրան վերացնել կամ մեղմել պատիժները, թուլատրել եռամյա այրիությունը և մեծացնել պարգևները⁹³: (2) Բայց դրանից հետո էլ մի անգամ համաժողովրդական խաղերի ժամանակ հեծյալներն սկսեցին նրանից համառորեն պահանջել այդ օրենքի վերացումը. այնժամ նա, իր մեռած կանչելով Գերմանիկոսի որդիներին, բոլորի աչքի առջև նստեցրեց իր և հոր ծնկներին, նշաններով ու հայացքով համոզելով ժողովրդին շարժվելու և օրինակ վերցնել երիտասարդ հորից: Իսկ երբ իմացավ, որ ոմանք շրջանցում են օրենքը, նշանադրվելով անշափահամների հետ կամ հաճախ փոփոխելով կանանց, կրճատեց նշանադրության ժամկետը և սահմանափակեց ամուսնալուծությունները:

35. Սենատը վաղուց արդեն ռոճացել ու վերածվել էր անկերպարանք և անկարգ մի ամբոխի⁹⁴ — այնտեղ ավելի քան հազար անդամ կար, և նրանց թվում՝ ամենաանարժան մարդիկ, որոնք ընդունվել էին Կեսարի մահից հետո, ծանոթությամբ կամ կաշառքով, և որոնց ժողովուրդն անվանում էր «անդրշիրիմյան» սենատորներ: Նա սենատը վերադարձրեց նախկին թվաքանակին ու փայլին, երկիցս անցկացնելով ցուցակների⁹⁵ վերանայում. առաջին անգամ ընտրությունները կատարում էին սենատորներն իրենք, անվանելով միմյանց, երկրորդ անգամ կատարեց անձամբ ինքը Ագրիպպայի հետ միասին: Ասում են, որ այդ անելիս նա բազմել էր նախագահական թիկնաթոռին՝ հագուստի տակից զրահ կապած ու զինված, իսկ բոլորեքյան կանգնել էին սենատի նրա բարեկամներից տասը ուժեղագույն մարդ: (2) Կրեմուցիոս Կորդոսը գրում է, որ սենատորներին ևս նրա մոտ թողնում էին մտնել մեկական և խուզարկելով: Ոմանց նա ամաչեցրեց, այնպես որ նրանք կամովին հրաժարվեցին կոշումից, և նույնիսկ հրաժարումից հետո էլ պահպանեց նրանց սենատորական հագուստներ կրելու իրավունքը, հանդիսախաղերի ժամանակ տեղը օրքեստրայում և մասնակցությունը ընդհանուր ճաշկերույթին⁹⁶: (3) Որպեսզի ընտրված ու հաստատված սենատորներն իրենց պարտականությունները կատարեին ավելի մեծ երկյուղածությամբ, նա հանձնարարեց յուրաքանչյուրին նիստից առաջ գինով ու խնկով զոհաբերություն կատարել այն աստծո զոհասեղանին, որի տաճարում տե-

զի էր ունենում ժողովը, իսկ որպեսզի այդ պարտավորությունները ժանդալիններին, նա սահմանեց սենատի հերթական նիստերը գումարել սոսկ ամիսը երկու անգամ՝ կալենդների և իդեքի ժամանակ, ընդ որում սեպտեմբերին և հոկտեմբերին⁹⁷ բավական էր ցրոշումներ ընդունելու համար վիճակահանութեամբ ընտրված սենատորների մի մասի ներկայութիւնը միայն: Իրեն կից նա հիմնեց փորհուրդ⁹⁸, որն ընտրվում էր վիճակահանութեամբ, կես տարով. այնտեղ նա քննարկում էր գործերը, նախքան դրանք լիակազմ սենատին ներկայացնելը: (4) Հատուկ կարեւորութեան գործերի մասին նա հարցում էր կատարում սենատորներին ոչ թե հերթականութեամբ ու ըստ սովորույթի, այլ իր հայեցողութեամբ, ասես այն բանի համար, որ յուրաքանչյուրը պատրաստ լիներ և վճար ինքը, այլ ոչ թե միանար մյուսների կարծիքին:

36. Նա սահմանեց նաև շատ ուրիշ նորամտութիւններ. որպեսզի սենատի հաշվետվութեանները չհրապարակվեն. որպեսզի պաշտոնատար անձինք պաշտոնաթողութեանից հետո անմիջապես պրովինցիալ մեկնեն. որպեսզի տեղապահներին գրամ բաց թողնվի ջորիների և վրանների համար, այն դեպքում, երբ նախկինում դրանք բոլորը մատակարարում էին կապալառուները. որպեսզի գանձարանը տնօրինեն ոչ թե քաղաքային քվեստորները, այլ պրետորները և նախկին պրետորները. որպեսզի ցենսումվիրների դատարանը գումարեն դեցեմվիրները⁹⁹ և ոչ թե նախկին քվեստորները, ինչպես առաջ:

37. Պետութեան կառավարմանն ավելի շատ ժողովրդին մասնակից դարձնելու համար նա հիմնեց նոր պաշտոններ՝ հասարակական կառույցների, ճանապարհների, ջրատարների, Տիրբոսի հունի, ժողովրդի հաց բաշխելու հոգաբարձութիւններ, քաղաքային պրեֆեկտուրա¹⁰⁰, եռապետների հանձնաժողով սենատորների ընտրութեան համար և մեկ ուրիշ նույնանման հանձնաժողով՝ անհրաժեշտութեան դեպքում հեծյալների տուրմաների¹⁰¹ ստուգման համար: Երկարատե ընդմիջումից հետո առաջինը նա նշանակեց ցենզորների. ավելացրեց պրետորների թիվը¹⁰². նույնիսկ պահանջեց, որ իրեն թույլատրվի իր յուրաքանչյուր կոնսուլութեան ժամանակ մեկի փոխարեն ունենալ երկու ընկեր, բայց անհաջող բոլորն սկսեցին գոռալ, որ առանց այդ էլ նա նվաստացնում է իր հեղինակութիւնը այն բանով, որ բարձրագույն պաշտոնն զբաղեցնում է ոչ թե մեկ, այլ ընկերոջ հետ¹⁰³:

38. Նա առատաձեռն եղավ նաև ռազմի սխրանքների համար պատիվներ շնորհելու մեջ՝ ավելի քան երեսուն զորավարներ նրա օրոք ստացան լրիվ տրիումֆներ և, ավելին, տրիումֆային զարդարանքներ¹⁰⁴: (2) Որպեսզի սենատորների որդիներն ավելի վաղ ժանտօանան պատա-

կան գործերին, նա թույլատրեց նրանց չափահաս դառնալուց անմիջապես հետո հազնել սենատորական տոգա և մասնակցել նիստերին: Երբ նրանք զինվորական ժառանգության էին մտնում, նրանց նշանակում էր ոչ միայն լեգեոնների տրիբուններ, այլև հեծելազորի պրեֆեկտներ¹⁰⁵, իսկ որպեսզի նրանցից և ոչ ոք չխուսափի ճամբարային կյանքից, նրանց սովորաբար երկուական հոգով դնում էր յուրաքանչյուր հեծյալ ջոկատի գլուխ:

(3) Նա կազմակերպում էր հեծյալական տուրմաների հաճախակի ստուգումներ, երկարատև ընդմիջումից հետո վերականգնելով հանդիսավոր անցումի¹⁰⁶ սովորույթը: Ընդ որում, սակայն, նա ոչ ոքի չէր թույլատրում ձիուց իջնել մեղադրողի պահանջով, ինչպես որ այդ արվում էր նախկինում. ժերերին և խեղանդամներին նա իրավունք տվեց կանչին դուրս գալ հետիոտն, իսկ ձիուն անցկացնել հեծելակարգով, վերջապես, նրանց, ովքեր հասել էին երեսունհինգ տարուն և այլևս չէին ցանկանում ծառայել, թույլատրեց պետությանը վերադարձնել ձին: 39. Սենատից խնդրելով տասը օգնական, նա ամեն մի հեծյալի ստիպեց հաշվետվություն տալ իր կյանքի մասին. և նրանց, ովքեր արժանի էին դրան, նա պատժում էր կամ տույժով, կամ անպատվությամբ, իսկ մեծ մասամբ՝ տարատեսակ պարսավանքներով: Որպես ամենամեղմ պատիժ նա շարքի առջև նրանց էր հանձնում տախտակներ, որոնք նրանք տեղնուտեղը պետք է կարդային մտքում: Ոմանց դատապարտում էր այն բանի համար, որ փոքր տոկոսով դրամ փոխառնելով վարկավորում էին ավելի բարձր տոկոսով:

40. Եթե տրիբունների ընտրությունների ժամանակ սենատորական կոշման տեր թեկնածուները չէին բավարարում, նշանակում էր հեծյալներից, պայմանով, որ պաշտոնաժամկետի լրանալուց հետո նրանք իրենք ընտրեն, թե որ դասում մնան: Քանզի շատ հեծյալներ քաղաքացիական պատերազմների ժամանակ աղքատացել էին և չէին համարձակվում թատրոնում նստել հեծյալական տեղերում, երկյուղ կրելով հանդիսախաղերի մասին օրենքից, նա հալտարարեց, որ պատժի ենթակա չեն նրանք, ովքեր իրենք կամ իրենց ծնողները տեր են եղել հեծյալական կարողության:

(2) Ժողովրդի մարդահամարը նա կատարում էր ըստ փողոցների: Որպեսզի հացի բաշխման պատճառով ժողովուրդը շատ չկտրվեր գործերից, նա պատրաստվում էր տեսներն¹⁰⁷ բաժանել տարին երեք անգամ, միանգամից չորս ամսվա համար, բայց ընդհանուրի ցանկությամբ նա ստիպված եղավ վերականգնել ամենամսյա բաժանման նախկին սովորույթը: Ժողովրդական ժողովում նա վերականգնեց ընտրությունների

հին կարգը¹⁰⁸, խստորեն պատժելով կաշառքի համար. իր երկու տրիբուններում՝ Ֆաբիանական և Սկապտիյական¹⁰⁹, ընտրությունների օրերին սեփական միջոցներից յուրաքանչյուր ընտրողի բաշխում էր հազարական սեստերցիում, որպեսզի նրանք այլևս ոչինչ չպահանջեին թեկնածուներից:

(3) Հատկապես կարևոր էր համարում, որ հռոմեական ժողովուրդը անխաթար և մաքուր մնա օտարերկրյա կամ ստրուկի արյան խառնուրդից: Դրա համար էլ նա խիստ ժլատորեն էր շնորհում հռոմեական քաղաքացիություն, իսկ ստրուկներին ազատ արձակելը սահմանափակեց: Տիբերիոսը նրան խնդրեց հռոմեական քաղաքացիություն շնորհել իր հույն կլիենտին. ի պատասխան նա գրեց, որ միայն այն դեպքում կհամաձայնի դրան, եթե հույնն ինքը ապացուցի սեփական հավակնությունների օրինականությունը: Լիվիան նրան խնդրել էր հարկատու ցեղից մի գալլի համար. նա վերջինիս ազատեց հարկից, բայց մերժեց քաղաքացիություն տալ, հայտարարելով, որ իր համար ավելի դյուրին է դիմանալ գանձարանին հասցված վնասին, քան հռոմեական քաղաքացիների պատվի ստորացմանը: (4) Իսկ ստրուկների առջև նա բազմաթիվ խոշընդոտներ հարուցեց ազատության ճանապարհին և ավելի շատ՝ լիիրավ ազատության¹¹⁰ ճանապարհին. նա մանրակրկիտ նախատեսել էր արձակվողների կ' քանակությունը, կ' դիրքը, կ' ունեցվածքը, և հատուկ որոշում էր ընդունել, որ այն ստրուկը, որը գեթ մի անգամ շղթայակապ է եղել կամ խոշտանգման ենթարկվել, արդեն չի կարող քաղաքացիություն ստանալ և ոչ մի արձակման դեպքում:

(5) Նա ջանում էր վերածնել անգամ հին զգեստներն ու տարազը: Մեկ անգամ ժողովի ժամանակ տեսնելով մուգ գույնի թիկնոցներ¹¹¹ հագած մի խումբ մարդկանց, նա զայրույթով բացականչեց. «Ահա նրանք—

Զավակունք Հռոմա, տիրակալները երկրի, հանդերձավորված տոգայով¹¹²»,

և էղիլներին հանձնարարեց այսուհետև հոգալ, որպեսզի բոլորը, ովքեր հայտնվում են ֆորումում կամ մոտակայքում, հանեն թիկնոցները և մնան տոգաներով:

31. Բոլոր դասերի նկատմամբ նա մեկ անգամ չէ, որ առատաձեռնություն էր դրսևորել: Այսպես, երբ արեքսանդրիական տրիումֆի ժամանակ նա Հռոմ բերեց թագավորական գանձերը, ապա այնքան մետադադրամ նետեց շրջանառության մեջ, որ վարկային տոկոսներն իսկույն նվազեցին¹¹³, իսկ հողի գները բարձրացան, իսկ հետագայում, երբ դրամի առատություն էր ունենում բռնագրավումներից, ժամանակավորապես

անհատույց վարկավորում էր նրանց, ովքեր կարող էին կրկնակի գումարի շափով գրավ առաջարկել: Նա սենատորների ցենզը բարձրացրեց ութից մինչև տասներկու հազար սեստերցիումի, իսկ ովքեր որ նման կարողութուն չունեին, նա ինքը լրացրեց այն: (2) Երբեմն առ երբեմն նա ժողովրդին դրամական պարգևներ էր բաժանում, բայց ոչ միշտ միատեսակ՝ մերթ շորս հարյուրական, մերթ երեք հարյուրական, իսկ մերթ էլ երկու հարյուր հիսունական սեստերցիում՝ մարդուն. ընդ որում նա չէր շրջանցում նաև փոքրահասակներին, թեև սովորաբար տղաներին թույլատրում էին բաշխումներին մասնակցել միայն տասնմեկ տարեկանից: Մատակարարման դժվարությունների դեպքում նա հաճախ քաղաքացիներին հաց էլ էր բաժանում ամենանվազ գնով կամ անգամ ձրի, իսկ դրամական վճարումները կրկնապատկում էր:

42. Ընդ որում, սակայն, նա հոգ էր տանում ոչ թե սեփական փառքի, այլ ընդհանուրի բարօրության մասին. դա երևում է նրանից, որ երբ քաղաքացիներն սկսեցին գանգատվել գինու պակասից և թանկութունից, նրանց հանդարտեցրեց հետևյալ խիստ խոսքերով. «Իմ փեսա Ագրիպպան բավականաչափ ջրատարներ է կառուցել, որպեսզի ոչ ոք չտառապի ծարավից»: (2) Մեկ ուրիշ անգամ, երբ ժողովուրդն սկսեց պահանջել խոստացված նվերները, նա պատասխանեց, որ գիտի պահել իր խոսքը, իսկ երբ ամբոխն սկսեց նկրտել շոստացված նվերների, էդիկտով պարսավանք արտահայտեց նրա անպատկառությանն ու անամոթությանը և հայտարարեց, որ նվերներ չի տա, թեև պատրաստվում էր տալ: Նման հաստատակամութուն և արժանապատվութուն նա դրսևորեց, երբ իմացավ, որ նվերներ բաշխելու իր խոստումից հետո շատ ստրուկներ ազատութուն էին ստացել և մտցվել քաղաքացիների ցուցակի¹⁴ մեջ՝ նա հայտարարեց, որ ում խոստացված չի եղել, ոչինչ չեն ստանա, իսկ մնացյալներին ավելի քիչ տվեց, քան խոստացել էր, որպեսզի ընդհանուր գումարը նույնը մնար: (3) Մեկ անգամ խիստ անբերրիության ժամանակ, որից դժվար էր մի միջոց գտնել, նա Հռոմից արտաքսեց բոլոր ստրկավաճառներին իրենց ստրուկների հետ միասին և լանխատաներին¹⁵ իրենց գլադիատորներով, բոլոր օտարերկրացիներին, բացի բժիշկներից ու ուսուցիչներից, և անգամ ստրուկների մի մասին: Իսկ երբ մատակարարումը կարգավորվեց, նա, ըստ իր իսկ սեփական արտահայտության, պատրաստվում էր մեկընդմիջտ վերացնել հացի հատկացումները¹⁶, քանի որ դրանց պատճառով երկրագործությունը անկում էր ապրում. բայց նա հրաժարվեց այդ մտքից, հասկանալով, որ վաղ թե ուշ որևէ փառասեր մարդ կարող էր նորից վերականգնել դրանք: Սակայն դրանից հետո նա վճարումներն այնպես կարգավորեց, որ պահ-

պանի ոչ միայն քաղաքացիներէ, այլև երկրագործներէ և հասցահատիկարկաններէ շահերը:

43. Հանդիսախաղերի առումով եւս գերազանցեց բոլոր նախորդներին՝ նրա հանդիսախաղերն ավելի հաճախակի էին, ավելի բազմատեսակ, ավելի փայլուն: Ըստ նրա, եւս խաղեր տվել է շորս անգամ իր և քսաներեք անգամ՝ մյուս մադիստրատների անունից, երբ նրանք բացակայելիս են եղել կամ թե միջոցներ չեն ունեցել: Թատերական ներկայացումները նա երբեմն կազմակերպում էր քաղաքի բոլոր թաղերում, բազմաթիվ բեմահարթակների վրա, բոլոր լեզուներով. գլադիատորական մարտերը¹¹⁷ — ոչ միայն ֆորումում կամ ամֆիթատրոնում, այլև և՛ կրկեսում, և՛ սեպտաներում¹¹⁸ (ի դեպ, երբեմն նա սահմանափակվում էր միայն որսահալածանքներով). ասլետների մրցությունները՝ նաև Մարսյան դաշտում, որտեղ փայտե տրիբունաներ էին կառուցված. վերջապես, ծովամարտ՝ Տիբրոսից այն կողմ փորված արհեստական լճում, որտեղ այժմ Կեսարի պուրակն է: Այդ հանդիսախաղերի օրերին նա Հռոմում պահակախմբեր էր կարգում, որպեսզի ամայացած քաղաքը պահպանեն կողոպտիչներից:

(2) Նրա օրոք կրկեսում հանդես էին գալիս կառավարներ, վազողներ և գազանորսներ. երբեմն դրանք ամենահայտնի ընտանիքներից սերված պատանիներ էին: Նա քանիցս կազմակերպեց նաև Տրոյական խաղ ավագ և կրթսեր հասակի տղաների մասնակցութեամբ, որպեսզի նրանք հին ու փառավոր սովորույթի համաձայն իրենց դրսևորեն արժանի ազնիվ նախնիներին: Երբ այդ զվարճութեան ժամանակ ընկավ և ջարդվածք ստացավ Նոնիոս Ասպրենատոսը, Օգոստոսը նրան ոսկե մանյակ նվիրեց և նրան ու նրա հետնորդներին թույլ տվեց կոչվելու Տորքվատոսներ¹¹⁹: Սակայն նա ստիպված եղավ դադարեցնել այդ զվարճությունները, երբ հռետոր Ագինիոս Պոլիոնը սենատում տկսեց զայրույթով ու խստորեն գանգատվել, որ իր թոռ էզերնինոսը նույնպես ընկնելիս կտորել է ոտքը: (3) Թատերական և գլադիատորական ներկայացումներին նա երբեմն ներգրավում էր նաև հռոմեական հեծյալներին, մինչև որ սենատը դա արգելեց դեկրետով. դրանից հետո նա միայն մի անգամ բեմահարթակի վրա ցուցադրեց ազնվատոհմիկ պատանի Լուկիոսին¹²⁰ և այն էլ որպես արտաոռց մի բան, որովհետև նա ուներ երկու ոտնաչափ հասակ, տասնյոթ ֆունտ քաշ, բայց շտենված բարձր ձայն:

(4) Պարթևական պատանդներին, որոնք առաջին անգամ էին Հռոմ եկել տոնական մի օր, նա նույնպես ներգրավեց հանդիսախաղերի մեջ և, անցկացնելով նրանց բեմի վրայով, նստեցրեց իրենից վերև երկրորդ կարգում: Բայց նույնիսկ հանդիսախաղերից ազատ օրերին նա տարբեր

տեղերում ի տես ամենքի ցուցադրում էր այն ամենը, ինչ շտեմնված ու հետաքրքիր բան էր բերված լինում Հոռմ. օթինակ, սեպտաչում՝ ոնգեղ-ջյուրի, թատրոնում՝ վագրի, կոմիցիումում՝ հիսուն քաղկազափ երկարությամբ օձի:

(4) Մի անգամ կրկեսում ուխտախաղերի ժամանակ նա իրեն վատ զգաց և թափօրը գլխավորեց պատգարակին պառկած: Մի ուրիշ անգամ, երբ նա բացում էր Մարցելլոսի թատրոնի օժման տոնահանդեսը, նրա կոնսուլական թիկնաթոռի ամրակները քանդվեցին, և նա երեսնիվեք գետին փովեց: Իր թոռների անունից տրված խաղերի ժամանակ հանդիսատեսների մեջ շփոթմունք առաջացավ՝ թվաց, թե ամփիթատրոնը քանդվում է. այնժամ նա, ի զորու շիջելով հանդարտեցնել և խելքի բերել նրանց, իջավ տեղից և նստեց ամփիթատրոնի այն մասում, որը հատկապես էր վտանգավոր թվում:

44. Նա կարգ ու կանոն հաստատեց այն հանդիսատեսների մեջ, ովքեր առաջ նստում էին անկարգ և իրենց սանձարձակ էին պահում: Դրան առիթ ծառայեց մի սենատորի կրած վիրավորանքը, որին Պուտեոլքում բազմամարդ հանդիսախաղերի ժամանակ նստած ամբոխից ոչ ոք չէր ուզեցել աեղը զիջել. այդ ժամանակ էլ սենատը որոշում ընդունեց, որ ամեն տեսակի հասարակական հանգիսախաղերի ժամանակ նստարանների առաջին շարքը միշտ ազատ մնա սենատորների համար: Ազատ և դաշնակից ժողովուրդների դեսպաններին նա արգելեց օբքեստրայում¹²¹ նստել, քանի որ նկատել էր, որ նրանց մեջ կային նաև ազաթարձակներ: Զինվորներին նա առանձնացրեց քաղաքացիներից: (2) Հասարակ ժողովրդի մեջ նա հատուկ տեղեր հատկացրեց ամուսնացածների համար, առանձին տեղ՝ անչափահասներին, դրա կողքին՝ նրանց դաստիարակների համար, իսկ միջին տեղերում արգելեց նստել սև թիկնոց հագածներին: Կանանց նա նույնիսկ գլադիատորական մարտերը չէր թույլատրում դիտել այլ կերպ, եթե ոչ միայն ամենաբարձր տեղերից, թեև քսո հին սովորույթի այդ հանգիսախաղերին նրանք նստում էին աղամարդկանց հետ միասին: (3) Միայն կուլյս վեստալուհիներին թատրոնում նա առանձին տեղ տրամադրեց պրեստրական թիկնաթոռի դիմաց: Խսկ ատլետիկական մրցություններից¹²² նա բոլորովին հեռացրեց կանանց և, երբ պոնտիֆիկական խաղերի¹²³ ժամանակ ժողովուրդը պահանջեց հանդես բերել մի զույգ բոնցքամարտիկների, նա այդ հետաձգեց հաջորդ օրվա առավոտյան, հայտարարություն անելով, որ կանայք թատրոնում չհարձակվեն հինգերորդ ժամից¹²⁴ ավելի վաղ:

45. Նա ինքք կրկեսային հանգիսախաղերը դիտում էր իր բարեկամների կամ ազատարձակների տների վերին սենյակներից, իսկ եր-

բեմն էլ՝ սրբազան օթյակից¹²⁵, կնոջ և երեխաների հետ: Հաճախ նա մի քանի ժամով, երբեմն էլ նույնիսկ ամբողջ օրը հեռանում էր ներկայացումներից, ներողութուն խնդրելով և իր փոխարեն կարգադրիչ նշանակելով: Բայց երբ մասնակցում էր, ապա այլևս ռշնշով չէր զբաղվում. կամ ուզում էր խուսափել հիշողության մեջ տպավորված այն հանդիմանանքներից, որոնց ենթարկվել էր նրա հայր Կեսարը խաղերի ժամանակ նամակներ ու թղթեր ընթերցելու կամ դրանց պատասխանները գրելու համար, կամ էլ, երևի, պարզապես սիրում էր հանդիսախաղերը և հաճույք ստանում դրանցից, ինչը որ նա երբեք չէր թաքցնում և բացահայտորեն խոստովանում էր: (2) Դրա համար էլ նույնիսկ ուրիշի հանդիսախաղերում և խաղերում նա իր կողմից և՛ ծաղկեպսակներ էր բաժանում, և՛ շատ ուրիշ թանկագին նվերներ, դրա համար էլ ամեն մի հունական մրցության ժամանակ անպայման ըստ արժանյաց պարգևատրում էր յուրաքանչյուր ատլետի: Բայց ամենից շատ նա սիրում էր դիտել բոնցքամարտիկներին, հատկապես լատինական, և ոչ միայն վարժեցված ու ճանաչվածներին, որոնց նա նույնիսկ հրահրում էր հույների դեմ, այլև հասարակ քաղաքացիներին, ովքեր նրբանցքներում կովում էին կիպ կպած, առանց կարգ ու կանոնի: (3) Մի խոսքով, նա անուշադիր շեղավ ժողովրդական հանդիսախաղերի մասնակիցներից և ոչ ոքի նկատմամբ՝ պահպանեց և բազմապատկեց ատլետների արտոնությունները¹²⁶, գլադիատորներին արգելեց անխնա կովելը, դերասաններին պատժել¹²⁷ թույլատրեց միայն թատրոնում և խաղերի ժամանակ, այլ ոչ թե միշտ և ամենուր, ինչպես այդ թույլատրվում էր պաշտոնատար անձանց ըստ հին օրենքի: (4) Այդուհանդերձ, և՛ ըմբիշների մրցումների ժամանակ, և՛ գլադիատորների գոտեմարտերում նա միշտ խստագույն կարգ ու կանոն էր պահպանում, իսկ դերասանների անպարկեշտությունները խստաբար խափանում էր. իմանալով, որ հռոմեական կոմեդիայի¹²⁸ դերասան Ստեփանիոնեսը որպես սպասավոր է պահում տղայի պես մազերը խուզած մի մատրոնայի, նրան գանահարել տվեց երեք թատրոններում¹²⁹ և աքսորեց. մնջկատակ¹³⁰ Գիլասեսին նա պրետորի գանգատով բոլորի ներկայությամբ մտրակահարությամբ պատժեց իր տան ատրիումում, իսկ Պիլադեսին արտաքսեց Հռոմից և Իտալիայից այն բանի համար, որ նա բեմից վիրավորական ձևով մատնացույց էր արել իրեն սուլած հանդիսատեսին:

47. Ահա թե ինչ կերպ նա կարգավորեց քաղաքը և քաղաքային գործերը:

Իտալիայում նա բազմապատկեց բնակչությունը, հիմնելով քսան և ութ գաղութ: Դրանք զարդարեց կառույցներով, հարստացրեց տուրքերով

և իրավունքներով ու նշանակութեամբ մասամբ նույնիսկ հավասարեցրեց մայրաքաղաքին՝ նա սահմանեց, որ յուրաքանչյուր գաղութի դեկորիոնները¹³¹ մասնակցեն մայրաքաղաքի պաշտոնատար անձանց ընտրություններին, իրենց ձայները կնքած ձևով Հոռոմ ուղարկելով առ ընդհանուր ընտրությունների օրը: Եվ որպեսզի անվանի մարդկանց ազդեցությունը, իսկ հասարակ մարդկանց սերունդը չնվազի, նա բոլորին, ում որ քաղաքը ներկայացնում էր հեծյալական ծառայության, պատրաստակամությամբ էր դրան թույլատրում, իսկ բոլոր նրանց, ովքեր կարող էին պարծենալ ուստրերով կամ դուստրերով, մարզերում¹³² իր շրջագայության ժամանակ պարգևատրում էր յուրաքանչյուրի համար հազար սեստերցիումով:

47. Նա ստանձնեց այն պրովինցիաների կառավարումը, որոնք ավելի մեծ էին և դրանք կառավարելը մեկ տարվա տեղապահների համար դժվար էր և ոչ անվտանգ, մնացյալները նա տվեց պրովինսուլներին ըստ վիճակահանության: Ի դեպ, որոշ պրովինցիաներ հարկ եղած դեպքում նա փոխանակում էր, իսկ շրջագայության ժամանակ հաճախ այցելում էր թե դրանք, թե մյուսները: Որոշ դաշնակցային քաղաքներ¹³³, որոնք կամայականությունների պատճառով դեպի կործանում էին գնում, նա զրկեց ազատությունից. ուրիշ քաղաքների կամ սատարում էր նրանց պարտքերի ժամանակ, կամ վերակառուցում երկրաշարժից հետո, կամ պարգևատրում լատինական¹³⁴ կամ հռոմեական քաղաքացիությամբ՝ հռոմեական ժողովրդի հանդեպ նրանց ծառայությունների համար: Ինչպես թվում է, չկար այնպիսի պրովինցիա, ուր նա չայցելեր, եթե չհաշվենք Աֆրիկան և Սարդինիան. նա այնտեղ էլ էր ուզում ուղևորվել Սիցիլիայից, Սեքստոս Պոմպեոսի նկատմամբ տարած հաղթանակից հետո, բայց նրան խանգարեցին ուժեղ և անընդմեջ փոթորիկները, իսկ հետո արդեն դրա համար ո՛չ ժամանակ, ո՛չ էլ առիթ ներկայացավ:

48. Այն թագավորությունները¹³⁵, որոնց նա տիրացել էր պատերազմի իրավունքով, գրեթե բոլորը կամ վերադարձրեց իրենց նախկին տիրակալներին, կամ հանձնեց ուրիշ օտարերկրացիների: Դաշնակից թագավորներին նա միմյանց էր կապում փոխադարձ ազգակցությամբ, ուրախությամբ գլուխ բերելով կամ քաջալերելով նրանց ամուսնական կամ դաշնակցային միությունները: Նա հոգ էր տանում նրանց, որպես մեկ միասնական տերության մասերի և անդամների, խնամակալներ էր կարգում դեռահասների կամ թուլամիտների վրա, մինչև որ նրանք տարիք կառնեին կամ կառողջանային, իսկ շատ թագավորական զավակների էլ դաստիարակում կամ ուսուցանում էր իր որդիների հետ միասին:

40. Ինքզմական ռժերից լեգեոնները կամ օժանդակ զորքերը նա առողաբաշխեց պրովինցիաներում, մի նախատորժը կանգնեցրեց Միգենայի մոտ, իսկ մյուսը՝ Հուսիսային Կարթագենում, պաշտպանելու համար Վերին և Ներքին ժողովրդի Մյուս ջոկատները նա վերցրեց մասամբ մայրաքաղաքի, մասամբ էլ իր անձնակազմի պաշտպանության համար, քանզի իրեն ուղեկցող Կարթագենյան անձնակազմը¹³⁶ նա ցրել էր Անտոնիոսի դեմ տարած հաղթանակից, իսկ գերմանականը՝ Վարոսի կրած պարտությունից հետո: Մակայն Հուսիսում նա երբեք երբեք կոհորտայից առկա չէր պահում, այն էլ առանց ամրացված ճամբարի, մնացածներին առարկում էր մերձակա քաղաքները՝ ճանաչելի և ամառային զորանոցներ: (2) Բոլոր վիճակներին, որտեղ էլ որ նրանք ծառայելիս լինեին, նշանակեց միատեսակ վարձատրություն և պարգևներ, յուրաքանչյուրի համար սահմանելով աստիճաններ և ծառայության ժամկետ ու նպաստ պաշտոնաթողության դեպքում, որպեսզի դրանից հետո ո՛չ տարիքը, ո՛չ առաջատրությունը չդրոշմին նրանց խոսովություն բարձրացնելու: Վարձատրության և պարգևների միջոցները միշտ պատրաստ ունենալու համար նա վիճակական գանձարան ստեղծեց և ապահովեց այն նոր հարկերի հաշվին¹³⁷:

(3) Ցանկանալով ավելի արագ և հեշտությամբ լուրեր ու տեղեկություններ ստանալ այն մասին, թե ինչ է կատարվում ամեն մի պրովինցիայում, նա սկզբում ուղեգրական ճանապարհներին միմյանցից փոքր-ինչ հեռավորությամբ տեղադրեց երիտասարդների, ապա նաև սալակառքեր, որպեսզի կարելի լիներ անհրաժեշտության դեպքում հարցուփորձել այն սուրհանդակներին, որոնք զեկուցագրեր էին բերում ուղղակի տեղերից: 50. Ուղեգրերը, թղթերն ու նամակները նա սկզբնական շրջանում կնքում էր սֆինքսի պատկերով, հետո՝ Ալեքսանդր Մեծի և վերջապես՝ իր սեփական, որը փորագրել էր Դիոսկուրիդեսը. վերջինից հետագայում շարունակում էին օգտվել նաև նրա հաշորդները: Նամակներում նա միշտ ճշտորեն նշում էր գրելու ժամանակը, ցույց տալով ցերեկվա և նույնիսկ գիշերվա ժամը:

51. Նրա զինասրտությունն ու քաղաքացիական շափավորությունը վկայում են բազմաթիվ հիշարժան դեպքեր: Չեմ թվարկելու, թե իր քանի և ինչպիսի հակառակորդների նա ոչ միայն ներում և անվտանգություն էր շնորհել, այլև թույլ էր տվել գրավելու պետության մեջ առաջին պաշտոնները: Պլեբնյ Յունիոս Նովատորներն ու պատժեց միայն դրամական տուգանքով, իսկ մյուսին՝ Կասսիոս Պատավիճոսին, միայն թեթև արտաքսումով, թեև առաջինը երիտասարդ Ագրիպայայի¹³⁸ անունից նրա մասին չարամիտ նամակ էր տարածել, իսկ երկրորդը խնջույքի ժամա-

նակ բոլորի ներկայութեամբ հայտարարել էր, թե լի է նրան սրախողխող անելու ցանկութեամբ ու վճռականութեամբ: (2) Իսկ մի անգամ դատաքննութեան ժամանակ, երբ կորդուրացի էմիլիոս էլիանեսին, այլևայլ զանցանքների թվում, գրեթե ամենից շատ վերագրվում էր Կեսարի մասին վատ կարծիքներ արտահայտելը, նա շրջվեց դեպի մեղադրողը և շինծու զայրույթով ասաց. «Ապացուցիր դա ինձ, իսկ ես արդեն ցույց կտամ էլիանեսին, որ ես էլ լեզու ունեմ՝ չէ՞ որ ես նրա մասին ավելի շատ բան կարող եմ ասել», — և նա այլևս ոչ այդ ժամանակ, ոչ հետո ընթացք չտվեց այդ գործին: (3) Իսկ երբ Տիրերիոսը նամակով դանգատվեց նրան նույն բանից, բայց ավելի մեծ խստութեամբ, հետևյալ պատասխանն ստացավ. «Անձնատուր մի լինի երիտասարդության պոթկումներին, սիրելիդ իմ Տիրերիոս, և մի վրդովվիր շափից ավելի, եթե որևէ մեկն իմ մասին վատն է ասում. այն էլ բավական է, որ ոչ ոք մեզ վատութուն անել չի կարող»:

52. Նա թույլ չէր տալիս իր պատվին տաճարներ կառուցել որևէ պրովինցիայում այլ կերպ, եթե ոչ կրկնակի նվիրաբերումով իրեն և Ղոռմին¹³⁹: Իսկ մայրաքաղաքում նա այդ պատվից կտրականապես հրաժարվում էր: Նույնիսկ նրա պատվին արդեն կանգնեցված արծաթե բոլոր քանդակներից նա դրամ ձուլել տվեց և այդ դրամով երկու ոսկե եռոտանի նվիրաբերեց Պալատինոսի Ապոլլոնին:

Ժողովուրդն աննահանջ նրան դիկտատորական իշխանություն էր առաջարկում, բայց նա ծնրադիր, ուսերից իջեցնելով տոգան և մերկայնելով կուրծքը, աղերսում էր իրեն ազատել դրանից: 53. «Տիրակալ»¹⁴⁰ բառից նա միշտ էլ սարսափում էր իբրև վիրավորանքից ու խայտառակությունից: Երբ նրա ներկայութեամբ հանդիսախաղերի ժամանակ մընչկատակը բեմից արտասանեց.

— Օ՞ բարի, արդար տի՛րակալ—

և բոլորը, վեր ցատկելով տեղերից, սկսեցին փոթորկալից ծափահարել, ասես խոսքը հենց նրա մասին էր, նա շարժումներով ու հույացքով տեղնուտեղը հանդարտեցրեց անվայելուչ շողոքորթությունը, իսկ հաջորդ օրը մի խիստ էդիկտով հանդիսատեսներին պարսավանք հայտնեց: Դրանից հետո նա նույնիսկ սեփական զավակներին ու թոռներին չէր թույլատրում ոչ կատակով, ոչ էլ լրջորեն իրեն տեր անվանել, և անգամ արգելեց նրանց միմյանց հետ խոսելիս օգտվել այդ շողոքորթիչ դիմումից: (2) Պատահական չէր, որ նա ջանում էր ամեն մի մեծ ու փոքր քաղաք մտնել ու ելնել միայն երեկոյան կամ գիշերը, որպեսզի ոչ ոքի

չանհանգստացնի ողջույններով ու ողջերթի մաղթանքներով: Երբ նա կոնսուլ էր լինում, ապա սովորաբար հետիոտն էր շքչում, երբ կոնսուլ չէր լինում՝ փակ պատգարակով: Ընդհանուր առավոտյան ողջույններին նա թույլատրում էր նաև հասարակ ժողովրդին, որից խնդրագրերն ընդունում էր արտասովոր փառաքչանքով. մի երկնշող խնդրարկուի նա նույնիսկ կատակով ասաց, թե նա իրեն այնպես է խնդրագիր մատուցում, ասես փղին՝ պղնձադրամ: (3) Նիստերի օրերին նա սենատորներին ողջունում էր միայն կուրիայում նրանց տեղերում, ամեն մեկին գիմելով անոմով, առանց հիշեցման¹⁴¹. Նույնիսկ հեռանալիս և հրաժեշտ տալիս նրանց չէր ստիպում տեղերից վեր ելնել: Շատերին նա ծանոթ էր ընտանիքներով և չէր դադարում ընտանեկան տոնահանդեսներին ներկա լինելուց, մինչև որ մի անգամ ծերության օրերին սաստիկ հոգնեց ինչ-որ մեկի նշանադրությանը: Սենատոր Ցերրինիոս Գալլոսի հետ նա մոտ չէր, բայց երբ վերջինս հանկարծ կուրացավ և վճռեց սովամահ լինել, այցելեց նրան և սփոփելով համոզեց չզրկել իրեն կյանքից:

54. Մի անգամ սենատում նրա ճառի ժամանակ ինչ-որ մեկն ասաց. «Ձեմ հասկանում», իսկ մեկ ուրիշը՝ «Ես քեզ կառարկեի, եթե հնարավոր լիներ»: Մեկ անգամ չէր, որ նա սենատորների կուպիտ վիճաբանություններից վրդովված լքել էր կուրիան, նրա ետեից բղավում էին. «Ձի կարելի սենատորներին արգելել դատողություններ անելու պետական գործերի մասին»: Ցուցակները վերանայելիս, երբ սենատորներն ընտրում էին միմյանց, Անտիստիոս Լաբենոսը ձայն տվեց հօգուտ արտոնում գտնվող Մարկոս Լեպիդոսի, Օգոստոսի վաղեմի թշնամու, և Օգոստոսի հարցին, թե մի՞թե ավելի արժանավորը չկա, պատասխանեց. «Յուրաքանչյուրն իր կարծիքն ունի»¹⁴²: Բայց և այնպես, անդուսպ և ըմբոստ ճառերի համար ոչ ոք նրանից չտուժեց: 55. Նույնիսկ կուրիայում թաքուն պղծած նամակները նրան խոռվք շպատճառեցին. նա հանգամանորեն հերքեց դրանք և, անգամ հորինողներին չփնտրելով, միայն որոշում ընդունեց այսուհետև պատասխանատվության կանչել նրանց, ովքեր բարիչի անվան տակ տարածում են որևէ մեկին վարկաբեկող բանաստեղծություններ կամ նամակներ: 56. Ի պատասխան իրեն վերաբերող հանդուգն կամ շարամիտ կատակների նա նույնպես էդիկտ հրապարակեց. սակայն արգելեց միջոցներ ձեռք առնել կտակներում¹⁴³ եղած անպարկեշտ արտահայտությունների դեմ:

Մասնակցելով պաշտոնատար անձանց ընտրություններին, նա ամեն անգամ իր թեկնածուների հետ շքչում էր տրիբունները և ըստ հիամենի սովորույթի խնդրում նրանց համար: Նա ինքը ևս քվեարկում էր իր

տրիրուսում որպես հասարակ քաղաքացի: Դատարանում հանդես գալով որպես վկա, հազվագյուտ հանգստությամբ էր տանում հարցաքննություններն ու առարկությունները: (2) Նա նեղացրեց ֆորումի լայնությունը, չհամարձակվելով արտաբնակեցնել հարևան տների տերերին: Ժողովրդի ուշադրությանը ներկայացնելով իր որդիներին, նա ամեն անգամ ավելացնում էր. «Ծթե նրանք արժանի են դրան»: Երբ նրանց առջև, քանի դեռահաս էին, ռոքի կանգնեց և ծափահարություններից թնդաց ամբողջ թատրոնը, նա դրանից խիստ դժգոհ մնաց: Նա ուզում էր իր բարեկամներին տեսնել որպես պետական գործերում ուժեղ և ազդեցիկ մարդկանց, բայց այն նույն իրավունքներով և պատասխանատվությամբ նույն դատական օրենքների հանդեպ, ինչ և մյուս քաղաքացիները: (3) Երբ նրա մերձավորագույն բարեկամ Նոնիոս Ասպրենատոսը¹⁴⁴ Կասսիոս Սևերոսի կողմից մեղադրվեց թունավորման մեջ, նա սենատում հարցրեց, թե ինչպես վարվի՝ վախենում է, որ, ընդհանուրի կարծիքով, եթե միջամտի, ապա օրենքների իշխանության ձեռքից կխլի մեղադրյալին, իսկ եթե չմիջամտի, ապա կլքի և պատժի կդատապարտի իր բարեկամին: Եվ բոլորի հավանությամբ նա մի քանի ժամ նստեց վկաների նստարանին, բայց ամբողջ ժամանակ լուռ էր և նույնիսկ շարտասանեց դատարանում սովորական գովաբանական խոսք մեղադրյալի հասցեին: (4) Նա մասնակցում էր նաև կլիենտների դատավարություններին, օրինակ, գերժամկետ ծառայության մեջ գտնվող ոմն զինվոր Սկուտարիոսի, որը մեղադրվում էր բռնաբարության մեջ: Միայն մեղադրյալներից մեկին և միայն անկեղծ խնդրանքով նա փրկեց դատապարտումից, դատավորների առջև ադերսելով մեղադրողին հրաժարվել մեղադրանքից. դա Կաստրիցիոսն էր, որից նա իմացել էր Մուրենայի դավադրության մասին:

57. Դժվար չէ պատկերացնել, թե որպիսի սեր էր վայելում նա այդ արժանիքների համար: Ես չեմ խոսում սենատի որոշումների մասին, քանի որ դրանք կարող են համարվել հարկադրական կամ շողոքորթող: Հոռմի հեծյալները կամովին և ընդհանուրի համաձայնությամբ ամեն տարի երկու օր անընդմեջ տոնում էին նրա ծննդյան օրը: Բոլոր դասերի մարդիկ ըստ ուխտի ամեն տարի հանուն նրա առողջության մետաղադրամ էին նետում Կուրցիոսի լիճը¹⁴⁵, իսկ նոր տարուն¹⁴⁶ ընծաներ էին բերում նրան Կապիտոլիում, եթե նույնիսկ նա Հոռմում չէր էլ լինում. այդ միջոցներով նա հետո գնեց և բոլոր թաղամասերում դրեց Ապոլլոն-Սանդալիարոսի, Յուպիտեր-Տրագեդոսի և այլ աստվածների թանկարժեք քանդակները: (2) Հրդեհից այրված նրա Պալատինումի տան վերականգնման համար դրամ տվեցին թե՛ վետերանները, թե՛ դեկուրիաները, թե՛ տրիրուսները և թե՛ ամեն կարգի առանձին քաղաքացիներ, կամովին

և ով որքան կարող էր. բայց նա հազիվ դիպավ այդ դրամակույտերին և վերցրեց ոչ ավելին, քան մեկական դինար յուրաքանչյուրից: Պրովինցիաներից վերադառնալիս նրան դիմավորում էին ոչ միայն բարեմաղթովթյուններով, այլև երգերով: Հետևում էին նույնիսկ այն բանին, որպեսզի նրա քաղաք մուտք դործելու օրը երբեք մահապատիժներ տեղի չունենային:

58. Հայրենյաց հայր¹⁴⁷ անունը նրան մատուցեց ամբողջ ժողովուրդը, հանկարծակի և միահամուռ: Առաջինը այդ արեցին պլեբեյները, նրամոտ Անցիում դեսպանություն ուղարկելով, իսկ նրա հրաժարումից հետո՝ ողջունելով նրան Հռոմում թատրոն մտնելիս՝ դափնեպսակներ կրող հսկա բազմությամբ. նրանցից հետո սենատն էլ արտահայտեց իր կամքը, բայց ոչ դեկրետով, ոչ էլ ընդհանուր գոչյունով, այլ Վալերիոս Մեսսալայի ելույթով: Ընդհանուրի հանձնարարությամբ նա այսպես ասաց. «Թող քեզ և քո տանը երջանկությունն ու հաջողությունն¹⁴⁸ ուղեկցի, Կեսար Օգոստոս՝ ս: Այդպիսի բառերով ենք մենք աղոթում ողջ պետության հավիտենական բարեկեցության և ցնծության համար, այժմ սենատը հռոմեական ժողովրդի համաձայնությամբ ողջունում է քեզ որպես հայր հայրենյաց»: Արցունքն աչքերին, Օգոստոսը պատասխանել էր նրան այսպիսի խոսքերով, — դրանք բերում եմ ճշտությամբ, ինչպես և Մեսսալայի խոսքերը, — «Հասնելով ցանկություններիս իրագործմանը, այլևս ինչի մասին կարող եմ ես աղոթել անմահն աստվածներին, հայր սենատորներ, եթե ոչ այն մասին, որպեսզի ձեր այդ միահամուռությունը ուղեկցի ինձ մինչև կյանքիս վախճանը»:

59. Բժիշկ Անտոնիոս Մուլային, որը նրան բուժել էր մահացու հիվանդությունից, սենատորներն իրենց դրամով անդրի կանգնեցրին էսկուլպոսի արձանի մոտ: Իսկ որոշ ընտանիքների հայրեր կտակներում հրամայում էին, որ իրենց ժառանգները Կապիտոլիումում ուխտազոհեր բերեն այն բանի համար, որ Օգոստոսն իրենցից երկար ապրի, և որ զոհաբերվող կենդանիների առջևից տանեն համապատասխան մակազրություն:

Իտալիայում որոշ քաղաքներ նոր տարվա սկիզբ դարձրին այն օրը, երբ նա առաջին անգամ այցելել էր իրենց: Շատ պրովինցիաներ ոչ միայն տաճարներ և զոհասեղաններ էին կանգնեցնում նրա պատվին, այլև հիմնում էին հնգամյա խաղեր¹⁴⁹ գրեթե ամեն մի փոքրիկ քաղաքում:

60. Նրա բարեկամ և դաշնակից թագավորներից յուրաքանչյուրը իր թագավորությունում հիմնում էր Կեսարիա անվամբ քաղաք, իսկ բոլորը միասին, դրամ հավաքելով, մտադիր էին կառուցել, ավարտել և Օգոստոսի ոգուն ընծայաբերել Օլիմպիական Յուպիտերի¹⁵⁰ տաճարը Աթեն-

քում, որի հիմքերը դեռևս հնումն էին գցված. և մեկ անգամ շէին նրանք լքում իրենց թագավորությունները, որպեսզի ամեն օր ուղեկցեն նրան ոչ միայն Հոռնում, այլև պրովինցիաներում, տոգա հագած, սպասավորելով նրան ինչպես կլիենտներ:

61. Շարադրելով, այսպիսով, թե ինչպիսին էր Օգոստոսը զինվորական ու քաղաքացիական պաշտոններում և թե աշխարհի բոլոր ծայրերում ինչպես էր վարում նա պետական գործերը խաղաղ ու պատերազմական ժամանակներում, այժմ ես կանցնեմ նրա անձնական ու ընտանեկան կյանքին և կնկարագրեմ, թե ինչպիսին էր նա և ինչ է եղել նրա հետ տանը, մերձավորների շրջանում, պատանեկան տարիներից և մինչև վերջին օրը:

(2) Մորը նա կորցրեց իր առաջին կոնսուլության ժամանակ, քրոջը՝ Օկտավիային, հիսունչորս տարեկանում¹⁵¹: Կենդանության օրոք էլ նա երկուսի նկատմամբ մեծ հարգանք էր ցուցաբերում, իսկ մահից հետո մեծագույն պատիվներ մատուցեց:

62. Նա դեռևս պատանեկան հասակում նշանադրված էր Պուբլիոս Սերվիլիոս Իսավրիկոսի դստեր հետ: Սակայն Անտոնիոսի հետ առաջին անգամ հաշտվելուց հետո, երբ նրանց ռազմիկները պահանջեցին, որպեսզի զույգ զորավարները ազգակցական կապեր հաստատեն, նա կնության վերջրեց Կլավդիային, Անտոնիոսի խորթ աղջկան, Ֆուլվիայի՝ Պուբլիոս Կլոդիոսից ունեցած դստերը, թեև նա հազիվ էր հասել ամուսնական տարիքի, բայց գծավելով իր զոքանչի՝ Ֆուլվիայի հետ, նա ձեռք շտալով կնոջը, արձակեց նրան կույս վիճակում: (2) Շուտով նա ամուսնացավ Սկրիբոնիայի¹⁵² հետ, որն արդեն ամուսնացած էր եղել երկու կոնսուլարիսների հետ և մեկից երեխաներ ուներ. բայց սրանից էլ բաժանվեց «հոգնելով նրա վատ բարքից», ինչպես ինքն էր գրում: Դրանից անմիջապես հետո նա ամուսնացավ Լիվիա Դրուզիլայի հետ, որին հղի վիճակում խլեց նրա ամուսնուց՝ Տիբերիոս Ներոնից. և նրան, ինչպես ոչ ոքի, սիրում և մեծարում էր մինչև մահ:

63. Սկրիբոնիայից նա ունեցավ Յուլիա դստերը, Լիվիայից երեխաներ չունեք, թեև ամենից շատ այդ մասին էր երազում: Լիվիայի հղացած մանկիկը ժամանակից շուտ ծնվեց: Սկզբում նա Յուլիային կնության տվեց Մարցելլոսին, իր քրոջ որդուն, երբ վերջինս հազիվ էր ելել մանկական հասակից¹⁵³, սրա մահից հետո՝ Մարկոս Ագրիպպային, համոզելով քրոջը իրեն զիջել փեսային, որովհետև Ագրիպպան արդեն ամուսնացած էր Մարցելլոսի քույրերից մեկի հետ և նրանից երեխաներ ուներ, (2) իսկ երբ Ագրիպպան էլ մահացավ, նա երկար ժամանակ դրստեր համար ամուսին էր փնտրում նույնիսկ հեծյալների դասի շրջանում

և ի վերջո նրան ամուսին ընտրեց իր խորթ որդի Տիրբերիոսին, ստիպե-
լով նրան ամուսնալուծվել կնոջից, որը արդեն հղի էր երկրորդ երեխա-
յով: Մարկոս Անտոնիոսը գրում է, որ սկզբում Յուլիան նշանված էր իր
որդի Անտոնիոսի հետ, իսկ հետո՝ գետական թագավոր Կոստիզոնի¹⁵⁴, և
այդ նույն ժամանակ Օկտավիանոսը դրա փոխարեն իր համար կնության
խնդրեց արքայադստերը:

64. Ազրիպայայից նա ուներ երեք թոռ՝ Գայոսին, Լուկիոսին և Ազ-
րիպայային, երկու թոռնուհի՝ Յուլիային և Ազրիպայինային: Յուլիային նա
կնության տվեց Լուկիոս Պավլոսին, որը ցենզորի որդի էր, Ազրիպայինա-
յին՝ Գերմանիկոսին, իր քրոջ թոռանը: Գայոսին և Լուկիոսին նա որդեգրեց,
ըստ հնամենի սովորույթի գնելով նրանց Ազրիպայայից¹⁵⁵. մանուկ հա-
թակից նա նրանց հաղորդակից դարձրեց պետական գործերին և ուղար-
կում էր պրովինցիալներն ու զորքերի մոտ՝ իբրև նշանակյալ կոնսուլ-
ներ¹⁵⁶: (2) Դստերը և թոռնուհիներին նա այնպես էր դաստիարակել, որ
նրանք կարողանում էին նույնիսկ բուրդ մանել¹⁵⁷. արգելում էր նրանց
այն ամենը, ինչ չէր կարելի ասել կամ անել բացահայտ, գրառելով տնա-
յին օրագրում. և նրանց այնպես էր պահպանում կողմնակի անձանց հետ
հանդիպումներից, որ Լուկիոս Վինիցիոսին՝ ազնվատոհմիկ և արժանա-
վոր մի պատանու, գրավոր հանդիմանեց անհամեստության համար, քա-
նի որ վերջինս Բայքում մոտեցել էր ողջունելու նրա դստերը: (3) Սովո-
րարար նա էր թոռներին սովորեցնում և՛ կարդալ, և՛ լողալ¹⁵⁸, և մյուս
տարրական գիտելիքները, հատկապես ջանալով, որպեսզի նրանք յու-
րացեն նրա ձեռագիրը: Երբ նա ճաշում էր, նրանք միշտ նստում էին նրա
մոտ ստորին գահավորակին¹⁵⁹, իսկ երբ ճանապարհորդում էր, նրանք
սայլակառքով գնում էին առջևից կամ վարգում կողքերից:

65. Բայց ժառանգների ծաղկումի և բարի վարքի այդ խնդություն-
ների ու հույսերի շրջանում երջանկությունը հանկարծ լքեց նրան: Նա
ստիպված եղավ աքսորել երկու Յուլիաններին էլ՝ դստերն ու թոռնուհուն,
որոնք արատավորված էին բոլոր արատներով¹⁶⁰: Գայոսին և Լուկիոսին
նա կորցրեց մեկը մյուսի ետևից տասնութ ամիս անց՝ Գայոսը վախճան-
վեց Լիկիայում, Լուկիոսը՝ Մասսիլիայում: Ֆորումում կուրիանների ժողո-
վի առջև նա որդեգրեց երրորդ թոռանը՝ Ազրիպայային, և խորթ որդուն՝
Տիրբերիոսին, բայց շուտով հրաժարվեց Ազրիպայայից նրա ստոր ու դա-
ժան բարքի համար և աքսորեց Սորբենտ: (2) Մերձավորների մահը նրա
համար այնքան ծանր չէր, որքան նրանց խայտառակությունը: Գայոսի
և Լուկիոսի ճակատագիրը չընկճեց նրան, բայց դստեր մասին նա սենա-
տին զեկուցեց սոսկ հեռակա կարգով՝ ուղերձով, որն ընթերցեց քվեստո-
րը, և դրանից հետո երկար ժամանակ, տառապելով ամոթից, խուսա-

փում էր մարդկանցից և մտածում նույնիսկ, թե գուցե մահապատժի ենթարկի նրան¹⁶²։ Համենայն դեպս, երբ մոտովորապես այդ նույն ժամանակ կախվեց դստեր գործակցուհիներից մեկը՝ ազատարձակուհի Ֆերան, նա ասաց, որ ավելի լավ կլիներ, ինքը Ֆերայի հայրը լիներ։ (3) Նա արգելեց աքսորված Յուլիային գինի տալ և ամենափոքր իսկ հարմարություններ տրամադրել. առանց իր գիտության չէր թույլատրում նրա մոտ գնալու ոչ ստրուկի, ոչ էլ ազատի, և միշտ ստույգ իմանում էր, թե գնացողն ինչ տարիք, հասակ, տեսք և, նույնիսկ, մարմնական ինչ նշաններ կամ սպիներ ունի։ Միայն հինգ տարի անց նա դստերը կղզուց փոխադրեց մայրցամաք և փոքր-ինչ մեղմացրեց աքսորի պայմանները, բայց անօգուտ էր նրան աղերսել, որ լիովին ների դստերը։ Ի պատասխան հոռմեացի ժողովրդի հաճախակի և համառ խնդրանքին, նա ողջ ժողովրդին ցանկացավ միայն նմանատեսակ կանայք և նմանատեսակ դուստրեր։ (4) Կրտսեր Յուլիայի դատապարտումից հետո ծնված երեխային նա չկամեցավ ո՛չ ճանաչել, ո՛չ էլ դաստիարակել։ Ագրիպպային, որը չէր հանդարտվում և օրըստօրե ավելի էր կորցնում բանականությունը, փոխադրեց կղզի և, ավելին՝ կալանքի տակ դրեց. սենատի հատուկ որոշմամբ հրամայեց նրան ցմահ թողնել այնտեղ։ Իսկ նրա կամ զույգ Յուլիաների մասին ամեն մի հիշատակության միայն հառաչանքով բացականչում էր.

Ավելի լավ կլիներ ես և՛ ամուրի ապրեի, և՛ անզավակ շքվեի¹⁶³,

և նրանց այլ կերպ չէր անվանում, եթե ոչ իր երեք պալարներն ու խոցերը։

66. Նա հեշտությամբ բարեկամություն չէր հաստատում, բայց հավատարմություն անշեղորեն էր պահպանում և ոչ միայն հարկ եղածին պես էր վարձատրում բարեկամների ծառայություններն ու արժանիքները, այլև պատրաստ էր տանել նրանց արատներն ու զանցանքները, իհարկե, զրոշակի շափով։ Ուշադրավ է, որ նրա բոլոր բարեկամների մեջ չի կարելի գտնել և ոչ մի շնորհագրկվածի, եթե չհաշվենք Սալվիդիենոս Ռուփոսին և Կոռնելիոս Գալլոսին։ Երկուսին էլ նա բարձրացրեց աննշան կացությունից, մեկին՝ մինչև կոնսուլության աստիճանի, մյուսին՝ մինչև փոխարքայության Եգիպտոսում։ (2) Առաջինին, որ խորհում էր հեղաշրջում կատարել, պատժելու համար հանձնեց սենատին. երկրորդին, նրա հրախտամոռության ու շարանենգության համար, արգելեց երևալ իր տանը և իր պրովինցիաներում։ Բայց երբ Գալլոսն էլ կործանվեց, որին ինքնասպանության հասցրին մեղագրողների հարձակումներն ու սենատ

տի հրամանագրերը, Օգոստոսը, շնորհակալության հայտնելով իր բու-
լոր այդքան կրակոտ սլաշտալաններին, շկարողացավ զսպել արցունք-
ներն ու տրտունջները այն բանից, որ միայն իրեն իր վիճակում չի
կարելի նույնիսկ սիրտն ուղածի շափ բարկանալ բարեկամների վրա: (3)
Իսկ նրա մնացյալ բարեկամները վայելում էին հարստություն և ազդե-
ցություն մինչև կյանքի վերջը, համարվելով առաջիններն իրենց դա-
սերում, թեև նա երբեմն նրանցից ևս դժգոհ էր: Այսպես, շխոսելով
արգեն մնացյալների մասին, նա քանիցս գանգատվել էր, որ անգամ
Ագրիպպան համբերություն չունի, իսկ Մեկենասը՝ լուելու ունակություն,
երբ Ագրիպպան¹⁶⁴ դատարկ կասկածից, թե իբր իր նկատմամբ սառել են
և Մարցելլոսին են գերադասում, ամեն ինչ թողեց ու մեկնեց Միտիլենե,
իսկ Մեկենասը, իմանալով Մուրենայի դավադրության բացահայտման
մասին, այդ գաղտնիքը հայտնեց կնոջը՝ Տերենցիային¹⁶⁵:

(4) Նա էլ, իր հեթիքն, բարեկամներից պահանջում էր նման պա-
տասխան նվիրվածություն, ինչպես կյանքում, այնպես էլ մահից հետո:
Եվ իսկապես, թեև նա ամենևին չէր նկրտում ժառանգությունների և
բնավ երբեք ոչինչ չէր ընդունում անձանոթ մարդկանց կտակներով, բայց
բարեկամների վերջին ավանդների նկատմամբ զգայուն էր, և եթև կտակում
իր մասին հիշատակված էր լինում անփութորեն ու ժլատ կերպով, ապա
անկեղծորեն վշտանում էր, իսկ եթև հարգալից ու գովասանքով, ապա
բացեիբաց ուրախանում: Երբ կտակողները երեխաներ էին թողնում, նա
կամ իսկույն ժառանգության իր բաժինը կամ իրեն թողնված նվերները
հանձնում էր նրանց, կամ էլ դրանք պահում երեխաների մանկահասա-
կության տարիներին և շափահասության կամ հարսանիքի օրը վերա-
դարձնում տղոսներով հանդերձ:

67. Նա նույնքան խիստ, որքան և գթասիրտ տեր ու պատրոն էր:
Շատ ազատարձակների նա պահում էր պատվով ու մերձ իրեն, օրինակ,
Լիկինոսին, Կելադոսին և ուրիշների: Կասմոսը՝ նրա ստրուկը, վիրավո-
րական էր արտահայտվել նրա մասին. Օգոստոսը բավարարվեց այն
բանով, որ ստրուկին շղթայակապ արեց: Դիոմեդեսը՝ նրա կառավարիչը,
ուզեկցում էր նրան զբոսանքի ժամանակ, բայց երբ հանկարծ նրանց դեմ
դուրս ցատկեց վայրի վարազը, վախեցավ և տիրոջը մենակ թողեց. նա
կշտամբեց կառավարչին ոչ թե գանցանքի համար, այլ միայն վախկո-
տության և վտանգավոր դիպվածը կատակի տվեց, քանի որ այդտեղ շա-
րամտություն չկար: Եվ միևնույն ժամանակ նա ոտիպեց մեռնել Պոլո-
սին, իր սիրելի ազատարձակներից մեկին, իմանալով, որ նա գայթակ-
ղեցնում է ամուսնացած կանանց. իր գրագիր Տալլոսի ոտքերը նա ջար-
դեց այն բանի համար, որ հինգ հարյուր դինարով մատնել էր իր

նամակի քովանդակութիւնը, իսկ երբ Քայոսի դաստիարակը և ծառայողները, օգտվելով վերջինիս հիվանդութիւնից և մահից, սկսեցին անամոթաբար ու ապահորեն կողոպտել պրովինցիան, հրամայեց նրանց գետը նետել՝ վզներից ծանրութիւն կախած:

68. Վազ պատանեկության հասակում նա վատ համբավ էր ձեռք բերել բազմաթիվ ամոթալի արարքների համար: Սեքստոս Պոմպեոսը նրան կնանման էր անվանում. Մարկոս Անտոնիոսը հավատացնում էր, թե իբր իր որդեգրութիւնը նա ամոթալի գնով է դնել, իսկ Լուկիոսը՝ Մարկոսի Լոբայրը, թե իբր իր անմեղութիւնը արատավորել էր Կեսարը, հետո նա Իսպանիայում այն առաջարկել էր նաև Ավլոս Հիրցիոսին երեք հարյուր հազար սեստերցիումով և թե իբր նա իր սրունքները թեթևակի այրում էր ընկույզի կեղևով, որպեսզի մազերն ավելի փափուկ լինեն: Ավելին, մի անգամ հանդիսախաղերի ժամանակ ողջ ժողովուրդը աղմուկալից ծափահարութիւններով դիմավորեց բեմից նետված ոտանավորը, նրանում վիրավորական ակնարկ կռահելով նրա հասցեին, — խոսքը աստվածների Մոր քրմի մասին էր, որը դափ էր խփում.

— Տե՛ս, թե ինչպես են բոլորը հեղանդվում անառակին¹⁶⁶:

69. Որ նա կենակցում էր ուրիշների կանանց հետ, չեն ժխտում նույնիսկ նրա բարեկամները. բայց նրանք նրան արդարացնում են նրանով, որ դա անում էր ոչ թե հեշտասիրութիւնից, այլ հաշվենկատութիւնից, որպեսզի կանանց միջոցով ավելի հեշտութեամբ կորզի հակառակորդների մտադրութիւնները: Իսկ Մարկոս Անտոնիոսը, հանդիմանելով նրան, հիշատակում է նաև այն մասին, թե ինչպիսի անհամբերութեամբ էր նա ուզում ամուսնանալ Լիվիայի հետ և այն մասին, թե ինչպես ամուսնու ներկայութեամբ նա կոնսուլարիսներից մեկի կնոջը խնջույքից տարավ իր ննջարանը, իսկ հետո ետ բերեց զզգոված ու մինչև ականջների ծայրը կարմրած, և այն մասին, թե նա ինչպես ամուսնալուծվեց Սկրիբոնիայից այն բանի համար, որ նա իրեն թույլ է տվել խանդել մրցակցուհուն, և այն մասին, թե ինչպես բարեկամները նրա համար սիրուհիներ էին փնտրում, մերկացնելով ու զննելով հասուն աղջիկների ու ընտանիքների մայրերի, ասես ստրկուհիների ստրկավաճառ Տորանիոսի մոտ: (2) Անտոնիոսը նույնիսկ բարեկամաբար գրում էր նրան, երբ նրանց միջև գեռևս չկար ո՛չ գաղտնի, ո՛չ էլ բացահայտ թշնամութիւն. «Ինչի՞ց ես դու շարաճում: Նրանի՞ց, որ ես ապրում եմ թագուհու հետ: Բայց նա իմ կինն է, այն էլ ոչ նրեկվանից, այլ արդեն ինը տարի: Իսկ դու իբրև թե միայն Դրուզիլայի հե՞տ ես ապրում: Ծրդվում եմ, որ մինչ դու կար-

դում ես այս նամակը, արդեն հասցրել ես քնել քո Տերտուլլայի, կամ Տերենտիլլայի, կամ Ռուֆիլլայի, կամ Սալվիա Տիտիզենիայի, կամ մի-անգամից բոլորի հետ,— ասենք, միևնույնը չէ՞, ի վերջո, որտեղ և ում հետ ես դու խառնակվում»:

70. Նրա գաղտնի խնջույքը, որը ժողովուրդն անվանում էր «տաս-ներկու աստվածների խնջույք», նույնպես բոլորի շուրթերին էր. նրա մասնակիցները պառկում էին սեղանի շուրջը, հազնված ինչպես աստ-վածներ ու աստվածուհիներ, իսկ ինքը պատկերում էր Ապոլլոնին և Չխոսելով արդեն այն հայհոյանքի մասին, որ նրա գլխին թափում էր Անտոնիոսը, թունոտ կերպով թվարկելով հականե հավանե բոլոր հյու-րերին, այդ մասին է վկայում նաև բոլորին հայտնի այս անստորագիր բանաստեղծությունը.

Հինց որ պարոնայքն այս խնճույքի համար քորագ¹⁶⁷ գտան,
Վեց աստված, վեց աստվածուհի հանկարծ տեսավ Մալլիան¹⁶⁸:
Եվ մինչդեռ խաբեբա-Տեբոսի կերպարով անաստված
Կեսարը ցուցադրում էր խնջույքում շնանալը դիոցերի,
Նյկրից դեմքին իրենց շրջեցին բոլոր ուժերը երկնի
Եվ Ցուպիտերը փախավ, ոսկեզօծ դահլւ ւքած:

(2) Այդ խնջույքի լուրերը սաստկանում էին այն բանից, որ այդ ժամա-նակ Հռոմում կարիք ու սով էր տիրում. արդեն հաջորդ օրը բացական-չություններ էին լսվում, թե աստվածները խժռել են ամբողջ հացը և թե Կեսարն իսկապես Ապոլլոնն է, բայց Ապոլլոն-տանջողը¹⁶⁹ (այդ անու-նով էին պաշտում այդ աստծուն քաղաքի թաղամասերից մեկում): Նը-րան մեղադրում էին նաև կորնթոսյան սկահակների¹⁷⁰ և հարուստ սպասքի նկատմամբ ունեցած թուլության և զառ խաղալու մոլության համար: Այսպես, պրոսկրիպցիաների ժամանակ նրա արձանի ներքո հայտնվեց այս մակագրությունը.

Հայրս վաշխառու է, իսկ ես՝ սկահակագործ¹⁷¹,—

քանզի հավատացնում էին, որ նա որոշ մարդկանց մտքեց զոհերի ցու-ցակի մեջ, որպեսզի տիրանա նրանց կորնթոսյան սկահակներին, իսկ սիցիլիական պատերազմի ժամանակ այսպիսի էպիգրամ էր տարածում գտել.

Օրկիցս ծովում ջախջախված, նավիրը կորցրած.
Նա զառ է նետում, որ գեթ այստեղ լինի շահած:

71. Բոլոր այդ մեղադրանքներից ու պարսավանքներից նա ամենից ավելի հեշտությամբ հերքեց կշտամբանքը ամոթալի արատի, որից նրա կյանքը մաքուր էր և՛ այն ժամանակ, և՛ հետո. իսկ ապա՝ հանդիմանանքը ճոխասիրության համար, քանզի Ալեքսանդրիայի գրավումից հետո անգամ, նա իր համար ոչինչ չվերցրեց թագավորական հարստությունից, բացի ագաթե մի թասից¹⁷², իսկ առօրեական ոսկե ամանները շուտով բոլորը ձուլել տվեց: Հեշտասիրական հաճույքներին նա հետագայում էլ էր անձնատուր լինում և, ասում են, շատ էր սիրում ջահել աղջիկների, որոնց ամեն տեղից նրա համար ճարում էր կինն ինքը: Նա չէր վախենում խաղամուլի համբավից և շարունակում էր իր հաճույքի համար իրադալ նույնիսկ ծերության օրերին, սլարդ ու բացահայտ, ոչ միայն դեկտեմբեր ամսին¹⁷³, այլև մյուս տոնական և լի օրերին: (2) Դա կասկածի ենթակա չէ. սեփական ձեռքով գրած նամակում նա ասում է. «Ճաշին, սիրելիդ իմ Տիբերիոս, մեր բոլոր հյուրերն էլ նույնն էին, եկել էին նաև Վինիցիոսը և Սիլիոս Սվազը: Ճաշից հետո և՛ երեկ, և՛ այսօր մենք խաղում էինք ծերունավարի. գլորում էինք զառերը, և ում «շուն» էր ընկնում կամ վեց, մեկ դինարի խաղազումար էր դնում զառի համար, իսկ ում «Վեներա» էր ընկնում, նա հավաքում էր դրամը»¹⁷⁴: (3) Մեկ ուրիշ նամակում դարձյալ. «Սիրելիդ իմ Տիբերիոս, մենք քվինքվատրիումները¹⁷⁵ լիակատար բավականությամբ անցկացրինք՝ անեն օր խաղում էինք, այնպես, որ խաղատախտակը պարապ չէր մնում: Խաղի ժամանակ ևղբայրդ շատ էր տաքանում, բայց վերջին հաշվով շատ շտարվեց՝ նա շատ էր տանուլ տվել, բայց, հակառակ սպասածին, փոքր առ փոքր դուրս եկավ այդ վիճակից: Ինչ ինձ է վերաբերում, ապա ես մի քսան հազար տանուլ տվեցի, բայց միայն այն պատճառով, որ խաղում էի ժլատություն չանելով, սովորականի պես առատաձեռնորեն: Եթե պահանջեի բոլորը, որ ես զիջեցի յուրաքանչյուրին, և ինձ պահեի այն բոլորը, որ պարտք տվեցի, ապա շահած կլինեի ամբողջ հիսուն հազար: Բայց դա ինձ պետք չէ, ավելի լավ է թող իմ առատաձեռնությունը փառաբանի ինձ մինչև երկինք»: (4) Իսկ դստերը նա այսպես է գրում. «Քեզ ուղարկում եմ երկու հարյուր հիսուն դինար, ինչպես և մնացյալ բոլոր հյուրերին, այն դեպքի համար, եթե որևէ մեկը ճաշից հետո կուզենա զառ կամ գույգ ու կենտ խաղալ»: 72. Մնացյալ ամեն բանում, ինչպես հայտնի է, նա մեծագույն զսպվածություն էր դրսևորում և ոչ մի կասկածի առիթ չէր տալիս:

Սկզբնապես նա ապրում էր Հռոմի ֆորումի մոտ, օղակաձև սանդուղքների վերին մասում, հռետոր Կալվոսին երբեմնի պատկանած տանը, իսկ հետո՝ Պալատինումում, Հորտենզիոսի տանը, բայց այդ տունն էլ

համեստ էր, աչքի չէր ընկնում ոչ շափերով, ոչ հարդարանքով, — նույնիսկ սյունասրահները կարճ էին, ալբանական քարից¹⁷⁶ կառուցված սյուներով, իսկ սենյակներում ոչ մարմարիոն կար, ոչ էլ մանրակտոր հատակ։ Ավելի քան քառասուն տարի, ձմռանն ու ամռանը, նա քնում էր միևնույն ննջասենյակում¹⁷⁷ և ձմեռը միշտ անց էր կացնում Հոռմում, թեև կարող էր համոզվել, որ ձմռանը քաղաքը վտանգավոր է իր առողջության համար: (2) Եթե նա ուզում էր պարապել գաղտնի կամ անարգել, դրա համար ուներ հատուկ վերին մի փոքրիկ սենյակ, որը նա անվանում էր իր Սիրակուզան¹⁷⁸ և «արհեստանոցիկը»։ այդ ժամանակ նա առանձնանում էր կամ այստեղ, կամ ազատարձակներից որևէ մեկի գյուղական վիլլայում, իսկ երբ հիվանդ էր լինում, պառկում էր Մեկենասի տանը¹⁷⁹: Հանգստանալու համար նա ամենից հաճախ կամ Կամպանիա էր մեկնում, ծովափն ու կղզիները, կամ Հոռմից ոչ հեռու ընկած փոքրիկ քաղաքները՝ Լանուվիում, Պրենեստե կամ Տիրուր, ուր հաճախ նաև դատեր էր վարում, նստելով Հերկուլեսի տաճարի սյունապրահում: (3) Մեծ և շքեղ տները նա տանել չէր կարողանում, և նույնիսկ կրտսեր Յուլիայի քիչ դրամ շարժեցած պալատը հրամայեց հիմնովին քանդել: Սեփական վիլլաները, որոնք շատ համեստ էին, նա դարդարում էր ոչ թե արձաններով և կամ նկարներով, այլ սանդղավանդներով ու պուրակներով և այնտեղ հավաքում էր հին ու հազվագյուտ իրեր, օրինակ, Կապրիում՝ հերոսների զեն ու զրահ և վիթխարի գազանների ու հրեշների հսկա ոսկորներ, որ համարում են աժդահաների աճյուններ¹⁸⁰:

73. Նրա կահույքի ու սպասքի պարզություն մեջ կարելի է այժմ էլ համոզվել ըստ պահպանված սեղանների ու գահավորակների, որոնք հազիվ թե բավարարեին անգամ հասարակ քաղքենուն: Ասում են, որ նա նույնիսկ քնում էր ցածր ու կոշտ մահճում: Նա հաղնում էր միայն տանը պատրաստված զգեստներ՝ կարված քրոջ, կնոջ, դստեր կամ թոռնուհիների ձեռքով. կրում էր ոչ նեղ և ոչ էլ լայն տոգա՝ ոչ լայն և ոչ էլ նեղ շերտով¹⁸¹, իսկ ոտնամանների տակ հաստ ներբաններ էր խփում, որպեսզի ավելի բարձրահասակ երևա: Ի դեպ, շքեղ հագուստներն ու կոշիկները ննջասենյակում միշտ ձեռքի տակ էր ունենում՝ հանկարծակի և անսպասելի անհրաժեշտության համար:

74. Ճաշկերույթներ նա մշտապես էր տալիս և անպայման բոլոր կերակրատեսակներով, իսկ հրավեր ուղարկում էր և՛ կոշումների, և՛ անձանց մեծ ընտրություններ: Վալերիոս Մեսսալան հաղորդում է, որ ոչ մի ազատարձակ մոտ չէր թողնվում նրա սեղանին. բացառություն արվում էր միայն Մենայի համար, այն էլ միայն նրանից հեռո, երբ Սեքստոս Պոմպեոսի նավատորմը հանձնելու համար նա քաղաքացիություն

ստացաւ, իսկ Օգոստոսն ինքը գրում է, որ մի անգամ ճաշի էր հրավիրել իր նախկին թիֆնապահին, որի վիլլայում իջևանել էր: Նա երբեմն ամենից ուշ էր մոտենում սեղանին և բւլորից շտառ էր հեռանում, այնպես որ հյուրերն սկսում էին ճաշակել մինչև նրա հայտնվելը և մնում էին սեղանի շուրջ նրա գնալուց հետո: Ճաշի ժամանակ երեք ընդմիջում էր լինում, առ առավելն՝ վեց¹⁸². ամեն ինչ մատուցվում էր առանց հատուկ նրբագեղության, բայց մեծագույն սրտաբացությամբ: Նրանց, ովքեր լուռ էին կամ ցածրաձայն զրուցում, նա հրավիրում էր ընդհանուր խոսակցության, իսկ զվարճության համար հրավիրում էր երաժիշտների, դերասանների և, նույնիսկ կրկեսի թափառաշրջիկ պարողների, իսկ ամենից հաճախ՝ հեթաթասացների¹⁸³:

75. Տոնակատարություններն ու հանդիսությունները նա սովորաբար կատարում էր մեծ ճոխությամբ, իսկ երբեմն էլ՝ սոսկ կատակի համար: Այսպես, և՛ Սատուրնալիանների, և՛ ուրիշ ժամանակ, եթե նրան հաճելի էր, երբեմն որպես նվեր բաժանում էր և՛ հագուստներ, և՛ ոսկի, և՛ արծաթ, երբեմն էլ՝ տարբեր հատվածքի դրամներ, նույնիսկ թագաձորական և օտարերկրյա, իսկ երբեմն էլ՝ միայն թաղիք, սպունգ, խառնիչներ, աքցաններ և նման առարկաներ՝ երկիմաստ և հանելուկային մակագրություններով¹⁸⁴: Նա սիրում էր նաև խնջույքի ժամանակ հյուրերին ամենաանհավասար արժեքի առարկաների վիճակներ վաճառել կամ երեսը դեպի պատը պատկերների աճուրդ կազմակերպել, որպեսզի գնումները մերթ խաբեին, մերթ գերազանցեին գնորդների սպասումները: Ամեն մի֊օթյակի հյուրերը պետք է առաջարկեին իրենց գինը և հետո կիսեին վնասը կամ շահը:

76. Ինչ վերաբերում է կերակուրին, — ես այդ էլ չեմ ուզում բաց թողնել, — ապա նա ուտում էր շատ քիչ և ոչ քմահաճ: Սիրում էր կոշտ հաց, մանր ձկներ, ձեռքով քամված խոնավ պանիր, երկրորդ բերքի կանաչ թուզ: Մի փոքր ուտում էր նաև ճաշից առաջ, երբ և որտեղ էլ լիներ, եթե միայն քաղց էր զգում: Ահա մի նամակից վերցված նրա սեփական խոսքերը. «Երկանիվ նաուքում մենք ամրապնդվեցինք հաց ու արմավով»: (2) Եվ էլի. «Թագավորական կուրիայից վերադառնալիս ես պատգաբակում մի կտոր հաց կերա և հաստակեղև խաղողի մի քանի հատիկ»: Եվ կրկին. «Ոչ մի հուդայացի շաբաթօրյա պասը¹⁸⁵ այնպիսի ջանասիրությամբ չի պահել, սիրելիդ իմ Տիրերիոս, ինչպես ես այժմ. միայն բաղնիքում, արևամուտից մեկ ժամ անց, նախքան շփվելս, ժամեցի մի երկու կտոր»: Նման անհոգության պատճառով նա մեկ անգամ չէր ճաշել միայնակ, նախքան հյուրերի գալը կամ նրանց գնալուց հետո, իսկ ընդհանուր սեղանի շուրջը ոչնչի ձեռք չէր տալիս:

77. Բնականից նա շատ քիչ էր գինի խմում: Մուտինայի մոտ բանակատեղիում ճաշի ժամանակ նա երեք գավաթից ավելի չէր խմում, ինչպես հաղորդում է Կոռնելիոս Նեպոտը¹⁸⁶, իսկ հետագայում, երբ նույնիսկ լիակատար ազատութուն էր տալիս իրեն, սեքստարիուսից¹⁸⁷ ոչ ավելի, եթե ավելին էր խմում, ապա փսիսադեղ էր ընդունում: Ամենից շատ ուտիլյան գինի¹⁸⁸ էր սիրում: Ասենք, անոթի նա հազվադեպ էր խմում, փոխարենը կամ սառը ջրով թրջած հաց էր ծամում, կամ մի կտոր վարունդ, կամ կաթնուկի ցողուն, կամ գինեհամ թարմ կամ շոքացրած խնձոր:

78. Ցերեկվա նախաճաշից հետո նա ինչպես որ կար, հագուստով ու կոշիկներով, սլաոկում էր մի փոքր հանգստանալու, փաթաթելով ոտքերը կամ ձեռքով ծածկելով աչքերը: Իսկ ճաշից հետո նա գնում էր գիշերային աշխատանքի օթյակը և այնտեղ մնում մինչև ուշ գիշեր, քանի դեռ չէր ավարտում բոլոր կամ գրեթե բոլոր ցերեկային գործերը¹⁸⁹: Հետո նա անկողին էր մտնում, բայց քնում էր առ առավելն յոթ ժամ, այն էլ ոչ լրիվ, որովհետև այդ ընթացքում երեք կամ չորս անգամ արթնանում էր: (2) Եթե, ինչպես պատահում է, նրան չէր հաջողվում իսկույն նորից քնել, կանչել էր տալիս ընթերցողի կամ հեքիաթասացի և այնժամ կրկին քնում, երբեմն արդեն շարթնանալով մինչև լույս: Մթության մեջ անքուն չէր մնում, եթե կողքին ոչ ոք չէր լինում: Նա չէր սիրում վաղ արթնանալ, և եթե անհրաժեշտ էր լինում որևէ մի գործի կամ ծիսակատարության առիթով¹⁹⁰ սովորականից վաղ արթնասալ, հարմարության համար գիշերում էր հարևանությամբ՝ մերձավորներից մեկի տանը: Բայց առանց այդ էլ նա հաճախ քնատ էր լինում, և այնժամ քանիցս ննջում էր պատգարակում, մինչ ստրուկները նրան տանում էին փողոցներով և ժամանակ առ ժամանակ կանգ առնում հանգստանալու:

79. Արտաքինից նա գեղեցիկ էր և բոլոր տարիքներում էլ պահպանել էր գրավչությունը, թեև չէր էլ ջանում իրեն գեղեցկացնել: Իր մազերի մասին նա այնքան քիչ էր հոգում, որ արագության համար միանգամից մի քանի վարսավիրների էր սանրել տալիս դրանք, իսկ երբ խուզում կամ սափրում էր մորուքը, ապա միաժամանակ որևէ բան էր կարդում կամ նույնիսկ գրում: Նրա դեմքը հանդարտ էր ու պարզ՝ խոսեր նա, թե լռեր. գալլական առաջնորդներից մեկը նույնիսկ խոստովանել էր յուրայիններին, որ հենց դա էլ տատանեց և կասեցրեց իրեն, երբ նա Ալպերով անցման ժամանակ կամենում էր Օգոստոսին անդունդը հրել, զրուցելու պատրվակով մոտենալով նրան: (2) Նրա աչքերը ջինջ էին և փայլուն. սիրում էր, որ դրանցում ինչ-որ աստվածային զորություն երևար, և գոհ էր լինում, երբ իր սևեռուն հայացքի ներքո զրուցակիցը

խոնարհում էր աչքերը, ասես արևի շողարձակումից: Ի դեպ, ծերության օրերին նա սկսեց վատ տեսնել ձախ աչքով: Նրա ատամները ցանցառ էին, մանր, անհավասար, մազերը՝ շիկակարմիր և քիչ գանգրավուն, հոնքերը՝ սերտաճած, ականջները՝ փոքր, քիթը՝ արծվենի և փոքր-ինչ սուր, մաշկի գույնը՝ ոչ թուխ, ոչ ճերմակ: Նա բարձրահասակ չէր, ի միջի այլոց, ազատարձակ Հուլիոս Մարաթոսը, որը վարում էր նրա գրությունները, հաղորդում է, որ նա ուներ հինգ ոտնաչափ և երեք քառորդ¹⁹¹ հասակ,— բայց այն սքողվում էր համաչափ և բարեկազմ մարմնակառուցվածքով և նկատելի էր միայն ավելի բարձրահասակ մարդկանց կողքին:

80. Նրա մարմինը, ասում են, կրծքի ու փորի վրա ծածկված էր խալերով, որոնք իրենց տեսքով, թվով ու տեղադրությամբ հիշեցնում էին Մեծ Արջի աստղերին. մաշկը շատ տեղերում կոշտացել էր և մշտական սանդերքումից ու քերակի ուժեղ օգտագործումից կեղանքի նման կոշտուկներ էր կազմել¹⁹²: Նրա ձախ ոտքի ազդրն ու սրունքը բավական թույլ էին, հաճախ նա նույնիսկ կաղին էր տալիս. դրա համար նա օգտագործում էր տաք ապազը և եղեգնի կեղևակտորները: Իսկ երբեմն էլ աջ ձեռքի ցուցամատը նրան չէր ենթարկվում. ցուրտ ժամանակ մատն այնպես էր ջղաձգվում, որ միայն Լոջրյա մատնոցի միջոցով էր նա մի կերպ գրում: Նա գանգատվում էր նաև միզապարկի ցավերից, որոնք թուլանում էին միայն այն ժամանակ, երբ քարերը մեզի հետ դուրս էին գալիս:

81. Ամբողջ կյանքի ընթացքում մի քանի անգամ նա ծանր ու վտանգավոր հիվանդացավ, ամենաուժեղը՝ Կանտաբրիայի հնազանդեցումից հետո. այդ ժամանակ նրա լյարդն այնպես էր տառապում լեղու արտաթորումից, որ նա հուսահատված ստիպված էր դիմել բուժման անսովոր և կասկածելի եղանակի՝ տաք թրջոցների փոխարեն, որոնք նրան չէին օգնում, նա Անտոնիոս Մուզայի խորհրդով սկսեց սառը թրջոցներ օգտագործել: (2) Նա հիվանդություններ ուներ, որոնք կրկնվում էին ամեն տարի որոշակի ժամանակ՝ իր ծննդյան օրերի նախաշեմին սովորաբար թուլություն էր զգում, վաղ գարնանը տառապում էր սրտի նախախորշի լայնացումից, իսկ հարավային քամու ժամանակ՝ հարբուխից:

Նման քայքայված առողջության պատճառով դժվարությամբ էր տանում և՛ ցուրտը, և՛ տաքը: 82. Չմոռանր նա ոչ միայն շորս տունիկա և հաստ տոգա էր հագնում, այլև վերնաշապիկ ու բրդյա կրծկալ և ազդրի ու սրունքի փաթթոցներ: Ամռանը նա քնում էր դռները բաց թողած, իսկ երբեմն էլ նույնիսկ պերիստիլիումում¹⁹², շատրվանի առջև, իսկ ստրուկը հովհարում էր: Նա արևը ձմեռ ժամանակ էլ չէր տանում և նույնիսկ տանը գլխաբաց օդ դուրս չէր գալիս: Ճանապարհորդում էր պատգարակով,

գիշերները, քիչ-քիչ ու դանդաղ, այնպես որ Պրենեստե կամ Տիրուր¹⁹⁴ հասնում էր միայն երկու օրում. իսկ եթե մինչև ալյուս վաչրը կարելի էր նաև նավով հասնել, գերադասում էր նավարկել:

(2) Իր թույլ առողջությունը նա պահպանում էր հոգատափ խնամքով: Ամենից առաջ, նա հազվադեպ էր լողանում՝ փոխարենը մարմինը շփում էր յուղով կամ քրտնում բաց կրակի առջև¹⁹⁵, իսկ հետո ցողվում սենյակի ջերմաստիճան ունեցող կամ արևի տակ տաքացված ջրով: Իսկ երբ ստիպված էր լինում մկանների կոտորտանքի դեպքում ծովային տաք կամ ծծմբային լողանքներ¹⁹⁶ ընդունել, նա ջրի մեջ սուզում էր մերթ միայն ձեռքերը, մերթ ոտքերը, նստելով փայտե բազկաթոռին, որը իսպաներին «դուրետա» էր անվանում: 83. Զիաժարժությունները կամ վարժանքները զենքով Մարսյան դաշտում նա դադարեցրեց քաղաքացիական կոնֆլիկտից անմիջապես հետո: Ապա մի որոշ ժամանակ նա դեռևս լըցված կամ փշած գնդակով էր վարժվում, իսկ այնուհետև սահմանափակվեց ձիով կամ հետիոտն գրոսանքներով. ամեն մի պտույտից հետո նա քայլերից անցնում էր ցատկավազքի, փաթաթվելով վերմակով¹⁹⁷ կամ սավանով: Մտավոր հանգստի համար նա երբեմն կարթով ձուկ էր որսում, իսկ երբեմն էլ զառ, քարկտիկ կամ ընկույզ խաղում տղա ստրուկների հետ: Նրան դուր էին գալիս նրանց գեղեցիկ գեմքերն ու ճամարտակությունները, և նա ամենուր գնում էր նրանց, հատկապես Ասորիքից և Մավրիտանիայից. իսկ թզուկների, այլանդակների և նրանց նմանների նկատմամբ զզվանք էր տածում, նրանց մեջ տեսնելով բնության ծաղր ու շարագուշակ նախանշանակ:

84. Ծարտասանությամբ և ազնիվ գիտություններով նա պատանի հասակից զբաղվում էր հաճույքով և մեծ ջանասիրությամբ: Մուտինայի պատերազմի ժամանակ իր բոլոր հոգսերի մեջ նա, ասում են, ամեն օր ժամանակ էր գտնում և՛ կարգալու, և՛ գրելու, և՛ արտասանելու¹⁹⁸: Իսկապես, նա հետագայում էլ երբեք հանդես չէր գալիս ո՛չ սենատի, ո՛չ ժողովրդի, ո՛չ զորքի առջև, առանց նախօրոք խորհելու և շարադրելու իր ճառը, թեև գտրկ չէր հանպատրաստից խոսելու ընդունակությունից: (2) Իսկ որպեսզի հույսը չդնի հիշողության վրա և ժամանակ չվատնի անգիր անելու համար, նա առաջինն սկսեց ամեն ինչ արտասանել ըստ գրածի: Անգամ մասնավոր զրույցները, անգամ զրույցներն իր կիվիայի հետ կարևոր դեպքերում նա նախօրոք գրառում էր և հետևում իր գրառմանը, որպեսզի սխալմամբ չափից ավելի քիչ կամ շատ շատի: Նրա արտասանությունը մեղմիկ և յուրահատուկ էր, նա մշտապես պարապում էր ատողանության ուսուցչի հետ. բայց երբեմն նրա կոկորդը ցավում էր, և նա ժողովրդին դիմում էր մունեստիկի միջոցով:

85. Նա տարբեր տեսակի շատ արձակ գործեր է գրել. դրանցից մի քանիսը նա կարդում էր. բարեկամների կամ հասարակայնության առջև¹⁸⁹: Դրանք են «Առարկություններ Բրուտոսին Կատոնի վերաբերյալ»²⁰⁰, որը նա մի անգամ կարդում էր ծերության օրերին, բայց, վերջին շնամեկուսի, հոգնեց և կարդալու տվեց Տիբերիոսին. այդպիսին են «Խրախուսանք առ փիլիսոփայությունը» և «Իմ կյանքի մասին»²⁰¹ կրկասիրությունը երեսուն գրքով, հասցված մինչև կանտաբրիական պատերազմը: (2) Պոնդիային նա միայն հպանցիկ էր անդրադառնում: Պահպանվել է մեկ գիրք, գրված հեքսամետրով և խորագրված «Սիցիլիա», բովանդակությունը համապատասխան. պահպանվել է մեկ ուրիշ, փոքր գիրք ևս՝ «էպիգրամները»²⁰², որոնք նա մեծ մասամբ հորինել էր բաղնիքում լողանալիս: Ողբերգությունը նա ձեռք զարկեց մեծ եռանդով, բայց չկարողացավ հաղթահարել ողբերգական ոճը և ոչնչացրեց գրածը, իսկ բարեկամների այն հարցին, թե ի՞նչ է անում նրա Այաքսը²⁰³, պատասխանեց, թե Այաքսը նետվել է իր սպունգի վրա:

86. Խոսքի մեջ նա ձգտում էր նրբագեղության ու շափավորության, խուսափելով ինչպես դատարկ ու հնչեղ արտահայտություններից, այնպես էլ, իր արտահայտությամբ, «հնություն բուրոզ բառերից». ամենից շատ նա ջանում էր որքան կարելի է պարզ արտահայտել իր միտքը: Դրան ավելի լավ հասնելու համար, ոչնչով չշփոթեցնելով և չշեղելով ընթերցողին կամ ունկնդրին, նա առանց տատանվելու քաղաքների անունները տալիս նախդիրներ էր դնում և կրկնում շաղկապները²⁰⁴, առանց որոնց խոսքը ավելի հեշտ կհնչեր, բայց ավելի դժվար կհասկացվեր: (2) շնության և սեթեթության²⁰⁵ սիրահարներին նա հավասարապես դատապարտում էր հակադիր ծայրահեղությունների համար և մեկ անգամ չէր նրանց հեգնել: Նա հատկապես կատակով ծաղրում էր իր բարեկամ Մեկենասին նրա, ինչպես ինքն էր արտահայտվում, «շպարված խոպոպիկների» համար և անգամ պարոդիաներ էր գրում նրա վրա. բայց չէր խնայում նաև Տիբերիոսին, որը երբեմնակի ընկնում էր հին և դարձնանցրած բառերի ետևից: Մարկոս Անտոնիոսին ուղղակի խելագար է անվանում, պնդելով, որ կարելի է զարմանալ նրա գրվածքներից, բայց չի կարելի դրանք հասկանալ. և ապա, ծաղրելով նրա անճաշակությունն ու անհետևողականությունը բառերն ընտրելիս, շարունակում է. (3) «Դու չգիտես էլ, թե ումից օրինակ վերցնես՝ Ամբրոնիոս Յիմբրոսից և Վերանիոս Փլավկոսից, որ գրես այնպիսի բառերով, որպիսիք Սալյուստիոս Կրիսպոսը քաղում էր Կատոնի «Սկիզբներից», թե՞ ասիական ճարտասաններից»²⁰⁶. ոչ մեր լեզվի մեջ փոխանցես նրանց բառերի հորձանքը, առանց որևէ մի մտքի»: Իսկ իր թոռնուհի Ագրիպպինային գրած նա-

մակում գովաբանում է նրա լավ տվյալները, բայց ավելացնում է՝ «Սակայն ջանա խուսափել շինծուությունից, երբ խոսում ու գրում ես»:

87. Ամենօրյա խոսքերում նա հատկապես հաճախ և յուրատեսակ էր օգտագործում որոշ արտահայտություններ. այդ են վկայում նրա անձամբ գրած նամակները: Նրանցում, որպեսզի ասի, թե ոմն մեկը երբեք չի վճարի պարտքը ամեն անգամ գրում է. «Կվճարի հունական կալենդներին»²⁰⁷. որպեսզի ներշնչի, թե ցանկացած հանգամանքի պետք է հնազանդորեն դիմանալ, գրում է. «մեզ մի Կատոնն էլ հերիք է». իսկ որպեսզի արտահայտի արագությունն ու փութկոտություն՝ «ավելի շուտ, քան ծնեբեկը կեփվի»: (2) «Հիմարի» փոխարեն նա միշտ գրում է «հաստագլուխ», «սևի» փոխարեն՝ «մուգ», «խելագարի» փոխարեն՝ «ցրն՝ դած», «վատ եմ զգում»՝ «սիրտս խառնում է», «թուլությունն զգալու» փոխարեն՝ «ճակնդեղի տեսք ունեմ» և ոչ թե «կաղամբ եմ դարձել», ինչպես ասում են ուսուցիչները²⁰⁸: Այնուհետև, նա գրում է «ներանք կան», փոխանակ՝ «ներանք են» և «տան մեջ», փոխանակ «տանը»²⁰⁹. Երկու վերջին արտահայտությունները նա միայն այդպես է գործածում, դրա համար էլ հարկ է դա սովորություն համարել և ոչ թե սխալ: (3) Նրա ձեռագրում ևս ես նկատել եմ երկու առանձնահատկություն՝ նա չի դատում բառերը և տողադարձ չի անում²¹⁰, այլ տողում շտեղավորված տառերը գրում է ներքևից և գծիկով միացնում:

88. Ուղղագրությունը, այսինքն՝ քերականների սահմանած կանոններն ու հանձնարարությունները նա չէր ջանում պահպանել և, ըստ երեւոյթին, համամիտ էր նրանց, ովքեր կարծում էին, թե հարկ է գրել այնպես, ինչպես խոսում ես: Հաճախ նա ետ ու առաջ է դնում կամ բաց թողնում ոչ միայն բառեր, այլև նույնիսկ վանկեր, բայց նման սխալներ բոլորն են անում՝ ես այդ մասին չէի նշի, եթե ինձ զարմանալի չթվար որոշ պատմագիրների հաղորդումն այն մասին, թե իբր տգիտության և անգրագիտության համար Օգոստոսը պաշտոնից հանել է մի լեզատի՝ նախկին կոնսուլի, երբ նկատել է, որ նա իքի է գրել ipsi փոխարեն: Երբ նա օգտվում է գաղտնագրից, ապա գրում է B A-ի փոխարեն, C B-ի փոխարեն և այդպես շարունակ, իսկ X-ի փոխարեն դնում է կրկնակի A:

89. Հունական գրականությամբ նա ոչ նվազ ջանասիրությամբ էր զբաղվում և մեծ հաջողությունների հասավ: Ճարտասանության նրա ուսուցիչն էր Ապոլոդոր Պերգամացին, որին նա իր երիտասարդ ժամանակ հետը Հռոմից Ապոլլոնիա տարավ, ընայած նրա զառամյալ տարիքին: Հետագայում նրան բազմազան գիտելիքներ տվեց մոտիկությունը փիլիսոփա Արեոսի²¹¹ և նրա որդիների՝ Դիոնիսիոսի և Նիկանորոսի հետ: Բայց և այնպես նա հունարեն սահուն չէր խոսում և չէր համար-

ձակվում որևէ բան հորինել, իսկ անհրաժեշտության դեպքում ինչ-որ պետք է գրում էր լատիներեն և տալիս որևէ մեկին թարգմանելու Սակայն պոեզիա նա շատ լավ գիտեր, իսկ հին կատակերգությամբ²¹² նույնիսկ սքանչանում էր և մեկ անգամ շէր ներկայացումներ կազմակերպել հանդիսախաղերին:

(2) Կարդալով և՛ հունական, և՛ լատինական գրողներին, նա ամենից ավելի նրանցում խորհուրդներ և օրինակներ էր փնտրում, որոնք օգտակար կլինեին հասարակական և մասնավոր կյանքում. հաճախ նա դրանք արտագրում էր բառացի և ուղարկում իր մերձավորներին կամ տեղապահներին ու զորապետներին կամ Հռոմի պաշտոնատար անձանց, եթե նրանք նման խրատների կարիք ունեին: Պատահում էր, որ նա ամբողջ գիշեր գրքեր էր կարդում սենատի առջև և հրապարակում ժողովրդին էզիկտներում. օրինակ, Քվինտոս Մետելլոսի «Սերունդը բազմացնելու մասին» և Ռութիլիոսի «Տնաշինության կարգի մասին» ճառերը²¹³. դրանով նա ուզում էր ցույց տալ, որ ինքը առաջինը չէ, որ դիմում է նման հոգսերի, որ արդեն նախնիների սրտին մոտ էին դրանք: (3) Իր ժամանակի բոլոր տաղանդներին նա հովանավորություն էր ցույց տալիս: Բաց ընթերցումների ժամանակ նա ուշադիր և բարյացակամ լսում էր ոչ միայն բանաստեղծություններ և պատմական շարադրություններ, այլև ճառեր ու երկխոսություններ: Սակայն իր մասին գրել նա թույլատրում էր միայն լավագույն հորինողներին և միայն հանդիսավոր բառերով, և հրամայել էր պրետորներին հետևել, որպեսզի գրական մրցույթները²¹⁴ վնաս չբերեն իր անվանը:

90. Հավատի և սնահավատության հարցերում ահա թե ինչ է նրա 'մասին հայտնի: Ամպրոպի ու կայծակի²¹⁵ հանդեպ նա շափից դուրս փոքրոգի երկյուղ էր տածում՝ ամենուր հետը դրանցից պաշտպանվելու համար փոկի մորթի էր տանում, իսկ ուժեղ ամպրոպի առաջին նախանշանի դեպքում թաքնվում էր գետնափոր ապաստարանում՝ այնպիսի սարսափ էր ներազդել նրան գիշերը ճանապարհին շատ մոտ հարվածած կայծակը, որի մասին մենք արդեն ասել ենք²¹⁶:

91. Իրեն վերաբերող երազներին, ինչպես իր, այնպես էլ ուրիշների տեսած, նա մեծ նշանակություն էր տալիս: Տիլիպպի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, անառողջ լինելու պատճառով, նա մտադիր չէր վրանից դուրս գալ, բայց դուրս եկավ, հավատալով բարեկամի²¹⁷ մարգարեական երազին. և դա նրան փրկեց, որովհետև թշնամիները գրավեցին նրա ճամբարը և, կարծելով, թե նա դեռևս պառկած է պատգարակին, խոցոտեցին այն և կտոր-կտոր արեցին: Նա ինքը ամեն գարնան հաճախակի և սարսափելի, բայց սին ու չկատարվող երազներ էր

տեճեմ, իսկ տարվա մնացած ժամանակը երազները աճելի հազվադեպ էին լինում, բայց ավելի հաճախ էին կատարվում: (2) Այն բանից հետո, երբ նա Կապիտոլիումում տաճար նվիրաբերեց Ամպրոպածին Յուպիտերին և հաճախ էր այնտեղ լինում, մի երազ տեսավ, թե իբր մյուս Յուպիտերը, Կապիտոլիումինը, գանգատվում է, որ իրենից խլում են երկրպագուներին, իսկ ինքը նրան պատասխանում է, որ Ամպրոպածինը, կանգնելով իր կողքին, իր դռնապանը կլինի. և շուտով դրանից հետո նա Ամպրոպածինի տանիքը զարդարեց զանգակներով, որ սովորաբար կախվում էին դռների կողքին: Մեկ ուրիշ գիշերային տեսիլի ազդեցության տակ նա յուրաքանչյուր տարի միևնույն օրը ժողովրդից ողորմություն էր մուտում²¹⁸, մեկնելով գատարկ ավեր պղնձագրամի համար:

92. Որոշ նշաններ և նախանշաններ նա անսխալ էր համարում: Եթե տոսվրտյան նա կոշիկը հազնում էր ոչ այն ոտքին, ձախին՝ աջի փոխարեն, դա նրա համար վատ նշան էր. եթե ցամաքային կամ ծովային հեռավոր ճանապարհ ընկնելու օրը ցող էր նստում, ապա դա արագ և բարեհաջող վերադարձի նշան էր: Բայց ամենից շատ նրան հուզում էին հրաշքները: Երբ նրա տան առջևի սալաքարերի արանքից արձավենի աճեց, նա այն փոխադրեց Պենատներ աստվածների ջրամբարի²¹⁹ մոտ և շատ էր հոգ տանում, որ այն արմատներ ձգեր: (2) Երբ Կապրի կղզուց նրա ժամանումից հետո հին կաղնու վազուց ի վեր թոշնած և գետին հակված ճյուղերը կրկին բարձրացան, նա այնպես խանդավառվեց, որ նեպոլցիների հետ այդ կղզին փոխեց էնարիա կղզու հետ: Նա նախազգուշություններ էր պահանջում նաև որոշակի օրերի՝ նունդիներից հետո ուղևորություն չէր ձեռնարկում, իսկ նոներին ոչ մի կարևոր գործ չէր սկսում. ճիշտ է, Տիբերիոսին նա գրում էր, որ այստեղ նրան կաշկանդում է «նոներ»²²⁰ բառի ոչ բարի հնչումը:

93. Օտարերկրյա ծեսերից նա մեծագույն հարգանքով վերաբերում էր հներին և վաղուց ի վեր սահմանվածներին, բայց մնացածներն արհամարհում էր: Այսպես, Աթենքում նա օծում ընգունեց²²¹, իսկ հետո, երբ մի անգամ Հռոմում նրա ներկայությամբ քննարկվում էր ատտիկական Ցերերայի քրժերի առանձնաշնորհումների վերաբերյալ գործը և խոսք գնաց որոշ խորհուրդների մասին, նա դատավորներին և ունկրնդիրների բազմությանը հրամայեց ցրվել և միայնակ լսեց և՛ հայցվորներին, և՛ պատասխանողներին: Եվ միևնույն ժամանակ, Եգիպտոսում ճանապարհորդելիս, նա հրաժարվեց շեղվել ճանապարհից, որպեսզի գիտի Ապիսին²²², իսկ իր թոռ Գայոսին շատ էր գովում այն բանի համար, որ, ճուղայով անցնելիս, նա չէր ցանկացել ազոթք մատուցել Երուսաղեմում:

94. Խոսք բացելով այդ մասին, ավելորդ չի լինի հաղորդել նաև այն դեպքերի մասին, որոնք պատահել էին մինչև նրա ծնունդը, ծնընդյան բուն օրը և հետագայում, որոնցից կարելի էր սպասել նրա ապագա վեհաօթյունը և գուշակել նրա անփոփոխ երջանկության մասին:

(2) Վելիտրքում ինչ-որ մի ժամանակ կայծակը հարվածել էր քաղաքային պարսպին, և կանխագուշակություն էր արվել, որ այդ քաղաքի քաղաքացին երբևէ կդառնա աշխարհի տիրակալը: Այդ հույսով Վելիտրքի բնակիչները և այդ ժամանակ, և հետո մեկ անգամ չէ, որ պատերազմել էին հռոմեական ժողովրդի դեմ, քիչ մնալով, որ կործանեն իրենք իրենց. բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ նախանշանակը գուշակում էր Օգոստոսի հզորությունը: (3) Հուլիոս Մարաթոսը հաղորդում է, որ նրա ծնվելուց մի քանի օր առաջ Հռոմում բոլորի աչքի առջև հրաշք կատարվեց, որը հուշակում էր, թե բնությունը հռոմեական ժողովրդի համար թագավոր է ծնում: Մարսափահար եղած սենատը արգելեց կերակրել այն երեխաներին, որոնք կծնվեն այդ տարի. բայց նրանք, ում կանայք հղի էին, հոգ տարան, որպեսզի սենատի որոշումը գանձարան չընկնի²²³. ամեն մեկը հույս ուներ, որ նախանշանն իրեն է վերաբերում: (4) Ասկլեպիադես Մենդետացու «Դատողություններ աստվածների մասինում» կարդացել եմ, որ Ատիան մի անգամ կեսգիշերին հանդիսավոր ժամերգության համար եկավ Ապոլլոնի տաճարը և մնաց այնտեղ քնելու իր պատգարակում, մինչդեռ մյուս մատրոնաները ցրվեցին տները²²⁴. և այստեղ հանկարծ սողալով նրան մոտեցավ մի օձ, եղավ նրա հետ և շուտով սողաց հեռացավ, իսկ նա, արթնանալով, մաքրում կատարեց, ինչպես ամուսնու հետ կենակցելուց հետո: Այդ պահից նրա մարմնի վրա հայտնվեց օձաձև բիծ, որից նա ոչ մի կերպ ազատվել չկարողացավ և դրա համար էլ այլևս երբեք ընդհանուր բաղնիք չէր գնում. իսկ ինը ամիս անց ծնվեց Օգոստոսը և այդ պատճառով էլ ճանաչվեց որպես Ապոլլոնի որդի: Այդ նույն Ատիան նրա ծնվելուց քիչ առաջ երազ տեսավ, թե իբր իր ընդերքը վեր է հառնում, ծածկելով երկիրն ու երկինքը, իսկ նրա ամուսին Օկտավիոսը երազում տեսել էր, որ Ատիայի արգանդը արեգակի շողեր է արձակում:

(5) Նրա ծննդյան օրը, երբ սենատում ճառում էին Կատալինայի դավադրության մասին, Օկտավիոսը կնոջ ծննդաբերության պատճառով ուշ ներկայացավ. և այնժամ, ինչպես բոլորին քաջ հայտնի է, Պուբլիոս Նեգիդիոսը, իմանալով հապաղման պատճառի մասին և հարցնելով ծննդաբերության ժամը, հայտարարեց, որ ծնվել է ողջ հողագնդի հրամայողը: Իսկ հետո Օկտավիոսը, առաջնորդելով իր զորքը Թրակիայի թավոտ անտառներով, Բաքոսի սրբազան պուրակում բարբարոսական

գուշակություններ կատարել տվեց որդու ճակատագրի մասին, և քրմերը նրան նույնպիսի պատասխան տվեցին՝ (6) *Իսկապես, երբ նա զոհասեղանին գինի ցողեց, բոցն այնպես բռնկեց, որ տանիքից էլ վեր խոյացավ, մինչև բուն երկինք, իսկ այդ զոհասեղանի մոտ նման նախանշան տրվել էր միմիայն Ալեքսանդր Մեծին, երբ նա այստեղ զոհեր էր մատուցում: Եվ այդ նույն գիշերը Օկտավիոսը երազում տեսավ որդուն դերմարդկային վեհությամբ, կայծակով, գայիստնով և Բարին ու Մեծն Յուպիտերի զգեստներով, շողշողուն պսակով, դափնիներով պսակված մարտակառքի վրա, որը քաշում էին տասներկու ձյունաթույր ձիեր:*

Դեռևս մանուկ հասակում, ինչպես այդ մասին պատմում է Գայոս Դրուզոսը, մեկ անգամ դայակը թողել էր նրան հատակին դրված օրորոցում, իսկ մյուս օրն առավոտյան նա օրորոցում չէր: Միայն երկար փնտրտուքից հետո, ի վերջո, գտան նրան՝ պառկած էր տան ամենաբարձր աշտարակում, դեմքը դեպի արևը: (7) Դեռ նոր էր խոսել սովորել, երբ մի անգամ պապի կալվածքում հրամայեց լռել գլուխ տանող գորտերին, և, ասում են, այդ պահից ի վեր գորտերն այնտեղ այլևս չեն կռկռում: Իսկ երբ նա նախաճաշում էր Կամպանիայի ճանապարհի շորորդ մղոնի վրա եղած պուրակում, հանկարծ արծիվը խլեց նրա ձեռքից հացը, թռավ բարձր և, սահուն ցած իջնելով, կրկին հացը տվեց նրան²²⁵: (8) Քվինտոս Կատուլոսը, օծելով Կապիտոլիումը, երկու գիշեր շարունակ երազ էր տեսնում. առաջին գիշերը՝ իբրև թե Բարին ու Մեծն Յուպիտերը ընտրեց պատանիներից մեկին, որ խաղում էին նրա զոհասեղանի շուրջը, և նրա կրծքին դրեց Հոռոմա²²⁶ աստվածուհու պատկերը, որը պահած ուներ ձեռքին. երկրորդ գիշերն իբրև թե նա տեսել էր նույն տղային Յուպիտերի ծնկներին և հրամայել քաշել իջեցնել նրան այնտեղից, բայց աստվածը պահել էր նրան, ավելացնելով, որ ի դեմս այդ տղայի ահում է հոռոմեական պետության պահապանը: Իսկ հաջորդ օրը Կատուլոսը հանդիպում է Օգոստոսին, որին բնավ չէր տեսել և, ուշադիր նայելով նրան, խանդավառությամբ ասում է, թե նա որքան նման է այն տղային, որին տեսել էր երազում: Ի միջի այլոց, ոմանք Կատուլոսի երազն այլ կերպ են պատմում՝ թե իբր Յուպիտերը, ի պատասխան իրենց պաշտպան պահանջող տղաների կանչերին, մատնացույց է արել նրանցից մեկին, ի դեմս որի կիրականանան նրանց բոլոր ցանկությունները, և մատներով դիպչելով նրա շուրթերին, համբուրել է մատները: (9) Իսկ Մարկոս Կիկերոնը, ուղեկցելով Գայոս Կեսարին Կապիտոլիում, նույնպես բարեկամներին պատմել էր անցյալ գիշերվա իր երազը՝ իբրև թե ազնվազարմ դեմքով մի դեռահաս պատանի երկնքից վար իջավ ոսկյա շղթայով, կանգնեց Կապիտոլիումի տաճարի սեմին և Յուպիտերի

ձեռքից ընդունեց խարազան. իսկ երբ նա հանկարծ տեսավ Օգոստոսին, որին դեռ ոչ ոք չգիտեր, որն ուղեկցում էր իր քեռի Կեսարին զոհամատուցման, նա բացականչեց, որ դա հենց նա է, որի կերպարը հայտնվել էր նրան երազում:

(10) Երբ նա առաջին անգամ հագնում էր շափահասի տոգա, նրա սենատորական տունիկան զույգ ուսերից պատռվեց և ընկավ ոտքերը. ոմանք դրանում տեսան նախանշանն այն բանի, որ այդ զգեստը կրող ամբողջ դասը ժամանակին կենթարկվի նրան: (11) Մունդայի մոտ, երբ աստվածային Հուլիոսը անտառը հատում էր ապագա բանակատեղիի համար, ծառերի մեջ տեսավ արմավենի և կարգադրեց պահպանել այն որպես հաղթանակի կանխագուշակ, իսկ արմավենին հանկարծ շիվ տվեց, որը մի քանի օրվա ընթացքում այնպես փարթամ աճեց, որ ոչ միայն հավասարվեց մայրական բնին, այլև ծածկեց այն իր ստվերով. և նրա ճյուղերում հայտնվեցին աղավնու բներ²²⁷, թեև այդ թռչուններն ամենից շատ չեն սիրում կոշտ ու կոպիտ տերևներ: Հենց այդ նախանշանն էլ, ասում են, դրդեց Կեսարին բոլոր մնացյալներից առաջ իրեն հաջորդ նշանակել քրոջ թոռանը: (12) Իր Ապոլլոնիայում եղած ժամանակ նա Ագրիպպայի հետ բարձրացավ աշտարակը՝ աստղագուշակ Քեոզենեսի մոտ: Ագրիպպան առաջինը դիմեց նրան և ստացավ մեծ ու գրեթե անհավատալի ապագայի կանխագուշակում. այնժամ Օգոստոսը ամոթից ու վախից, որ իր վիճակն ավելի ցած կլինի, որոշեց թաքցնել իր ծննդյան ժամը և համառորեն չէր ուզում ասել այն: Իսկ երբ, երկար հորդորանքներից հետո, նա շուգենալով ու անվճռականորեն ասաց, Քեոզենեսը ցատկեց տեղից և երկյուղածությամբ ընկավ նրա ոտքերը: Այդ պահից Օգոստոսն այնքան վստահ էր իր ճակատագրի նկատմամբ, որ նույնիսկ հրապարակեց իր բախտացույցը (հորոսկոպը) և հատել տվեց սրծաթյա դրամ Այծեղջյուրի համաստեղության²²⁸ նշանով, որի ներքո ինքը ծնվել էր:

95. Երբ Կեսարի սպանությունից հետո նա վերադարձավ Ապոլլոնիայից և Հռոմ էր մտնում, արեգակի շուրջը հանկարծ ծիածանի օղակ երևաց, թեև օրը պարզ էր ու անամպ, և նույն պահին Կեսարի դստեր՝ Յուլիայի, դամբարանին հարվածեց կայծակը: Իսկ իր առաջին կոնսուլության ժամանակ, երբ նա գուշակություն էր կատարում ըստ թռչունների, նրան, ինչպես երբեմնի Հռոմուլոսին, երևացին տասներկու անգրդներ. և երբ նա զոհ էր մատուցում, պարզվեց, որ բոլոր կենդանիների լյարդը ներքևից երկատված է, ինչը, ըստ բոլոր գիտականների պնդման, նախագուշակում էր երջանիկ և մեծ ապագա:

96. Նույնիսկ բոլոր պատերազմների ելքը նա նախօրոք գուշակում

էր: Երբ եռապետների զորքերը հավաքվեցին Բոնոնիայի առջև, նրա վրանին արծիվ նստեց. երկու ազուավ երկու կողմից հարձակվեցին նրա վրա, բայց արծիվը ետ մղեց նրանց և գետին տապալեց: Դրանից ամբողջ զորքը եզրակացրեց, որ դաշնակիցների միջև շուտով գժտու-թյուններ կսկսվեն (ինչպես և պատահեց), և կռահեց, թե ինչով կավարտվեն դրանք: Ֆիլիպպի մոտ²²⁹ մի թեսալացի նրան ավետեց գալիք հաղթանակը, լսելով այդ մասին Հուլիոս Կեսարից, որի ուրվականին նա հանդիպել էր անանցանելի ճանապարհին: (2) Պերուզիայից առաջ նա զոհն էր մատուցում, բայց չէր կարողանում բարի նախանշանների հասնել և արդեն կարգադրել էր նոր զոհակենդանիներ բերել, երբ հանկարծ հակառակորդներն անսպասելի արտագրոհեցին և զավթեցին զոհամատուցման բոլոր պատկանելիքները: Այնժամ գուշակները միահամուռ վճռեցին, որ բոլոր աղետներն ու վտանգները, որոնք ազդարարվել էին զոհ մատուցողին, պետք է բաժին ընկնեն նրանց ովքեր տիրացել են զոհերի փորոտիքին. և այդպես էլ եղավ: Սիցիլիայի համար մղված ծովամարտի նախօրյակին, երբ նա զբոսնում էր ծովափին, ծովից մի ձուկ դուրս նետվեց և ընկավ նրա ոտքերի մոտ, իսկ Ակտիումի մոտ, կրք նա արդեն գնում էր մարտն սկսելու, նրան հանդիպեց մի գրաստապան իշուկի հետ, և գրաստապանին կոչում էին Հաջողակ, իսկ իշուկին՝ Հաղթող²³⁰. նրանց երկուսին էլ հաղթանակից հետո նա պղնձե արձան կանգնեցրեց այն սրբավայրում, որ կառուցվել էր նրա ճամբարատեղիում:

Ձ7. նրա մահը, որի պատմությանն եմ ես անցնում, և նրա ետմահու աստվածացումը նույնպես կանխագուշակվել էին ամենաանկասկածելի նախանշաններով: Երբ նա ժողովրդյան բազմության առջև հնգամյա զոհամատուցում էր կատարում Մարսյան դաշտում, նրա վերևում հայտնրվեց մի արծիվ, կատարեց մի քանի շրջան, իջավ հարևան տաճարի վրա և նստեց Ազրիպայայի անվան²³¹ առաջին տառին. նկատելով այդ, նա իր պաշտոնակից Տիբերիոսին կարգադրեց արտասանել սովորական ուխտը նոր հնգամյակի համար²³², որ ինքն արդեն նախապատրաստել և գրել էր տախտակներին, իսկ իր մասին հայտարարեց, թե չի ստանձնի այն, ինչ արդեն չի կատարելու: (2) Մոտավորապես այդ նույն ժամանակ կայծակի հարվածից հալվեց արձանի տակ գրված անվան առաջին տառը. և նրան հայտարարեցին, թե դրանից հետո նա կապրի միայն հարյուր օր, որովհետև Ը տառը հենց այդ թիվն է նշանակում և թե հետո նա կգաստի աստվածների շաբբը, քանի որ AESAR, Կեսար անվան մյուս մասը, էտրուսկերեն նշանակում է «աստված»:

(3) նա պատրաստվում էր Տիբերիոսին ուղարկել Իլլիրիկում²³³ և ուղեկցել նրան մինչև Բժնևենտում, բայց գանգատավորները ետ էին պահում

նրան նորանոր դատական գործերով: Այնժամ նա բացականչեց, որ եթե անգամ բոլորը իր դեմ լինեն, ինքն այլևս Հոռոմում չի մնա: Հետո այդ խոսքերը ևս համարեցին նախանշան: Ճանապարհ ընկնելով, նա հասավ մինչև Աստուրա²³⁴, իսկ այնտեղից, հակառակ իր սովորության, նավարկեց գիշերը, որպեսզի օգտվի համընթաց քամուց: Դրանից նրա փորը լույծ ընկավ՝ այդպես սկսվեց նրա վերջին հիվանդությունը:

98. Անցնելով Կամպանիայի ափերը և մերձակա կղզիները, նա շորս օր անցկացրեց Կապրիի իր վիլլայում: Հոգեկան խոր անդորրը նրան հանգստի և խաղաղ զվարճությունների էր հակում: (2) Անցնելով Պուտեոլք²³⁵ նավահանգիստը, նա հանդիպեց հենց նոր ժամանած ալեքսանդրիական մի նավի. նավաստիներն ու ուղևորները, ճերմակ զգեստներով, դափնեպսակներով, խնկարկելով ողջունեցին նրան բարեմաղթանքներով և բարձրագույն գովեստներ տեղացին՝ նրա մեջ է իրենց ողջ կյանքը, նրա մեջ է իրենց ողջ ուղին, նրա մեջ է իրենց ազատությունն ու հարստությունը: Դրանից անշափ շոյված, նա իր ուզեկիցներին նվիրեց քառասնական ոսկի, յուրաքանչյուրից երդմնախոսք վերցնելով ծախսելու այդ դրամը միայն ալեքսանդրիական ապրանքներ գնելու վրա: (3) Ասենք մնացած բոլոր օրերին էլ նա անվերջ զանազան ընծաներ էր բաշխում, օրինակ, տոգաներ ու հունական թիկնոցներ, պայմանով, որ հոռոմեացիները հաղնվեին ու խոսեին հունարեն, իսկ հույները՝ հոռոմերեն: Նա երկար-երկար դիտում էր էֆեբոսների²³⁶ վարժությունները, որոնցից ըստ հին սովորույթի Կապրիում շատ կային. նրանց համար հյուրասիրություն կազմակերպեց իր ներկայությամբ, և ոչ միայն թույլ էր տալիս, այլև դրդում էր նրանց ազատ կատակել ու խլխլել պտուղները, ուտելիքներն ու այն ամենը, ինչ ինքը նետում էր նրանց բազմության մեջ: Մի խոսքով, ոչ մի զվարճություն նրան խորթ չէր²³⁷: (4) Կապրիում հարևան տունը նա անվանեց Ապրազոպոլիս²³⁸, որովհետև այնտեղ տեղավորված նրա ուղեկիցները պարապ ժամանակ էին անցկացնում: Իր սիրեցյալներից մեկին՝ Մասդաբային, նա մեծարում էր որպես Հիմնադիր, իբրև թե նա էր հիմնել Ապրազոպոլիսը: Այդ Մասդաբան նրանից մի տարի շուտ մահացավ: Մի օր ճաշասենյակից տեսնելով, որ նրա գերեզմանի շուրջը ժողովուրդ է խոնվել ջահերով²³⁹, նա բարձրաձայն արտասանեց տեղնուտեղը հորինած մի ոտանավոր.

Վառվում են կրակները Հիմնադրի աճյունի վրա:

Դիմելով Թրասիլլեսին²⁴⁰, Տիբերիոսի ուղեկցին, որը սեղանի շուրջ պառկած էր նրա դիմաց և շփտեր, թե բանն ինչ է, հարցրեց, թե նրա կար-

ծիրով ո՞ր բանաստեղծինն է այդ ոտանավորը: Սա տատամսեց. այն-
ժամ Օգոստոսն ավելացրեց.

Տեսնում ես, Մասգաբայի պատվին են շահերը հուրհրատում,

և կրկնեց հարցը: Իսկ երբ Թրասիլլեսը միայն կարողացավ ասել, թե գե-
ղեցիկ ոտանավոր է, ումն էլ որ լինի, նա քրքջաց և սկսեց նրա գլխին
կատակներ տեղալ:

(5) Շուտով նա փոխադրվեց Նեապոլ, թեև նրա ստամոքսը դեռևս
չէր կարգավորվել հիվանդության միմյանց հաջորդող նոպաներից: Բայց
և այնպես նա այցելեց մարմնամարզական մրցումներին, որոնք սահ-
մանվել էին նրա պատվին, և ճանապարհեց Տիբերիոսին մինչև պայմա-
նավորված տեղը. բայց վերադարձի ճանապարհին հիվանդությունը
սաստկացավ, նույնպես նա անկողին ընկավ, իսկ Տիբերիոսին վերա-
դարձրեց ճանապարհից²⁴¹: Նրա հետ առանձնացած երկար խոսում էր և
դրանից հետո այլևս ոչ մի կարևոր գործով չէր զբաղվում:

ԾԾ. Իր վերջին օրը նա անընդհատ հարցնում էր, թե արդյոք քաղա-
քում իր պատճառով անկարգություններ տեղի չե՞ն ունենում: Խնդրելով
հայելին, նա կարգադրեց սանրել մազերը և ուղղել կախված ծնոտը: Ներս
եկած բարեկամներին հարցրեց, ի՞նչ են կարծում, ինքը լա՞վ խաղաց
կյանքի կատակերգությունը: Եվ արտասանեց եզրափակիչ տողերը.

*Եթե մենք լավ խաղացինք, ժափահարեք
Եվ ուղեկցեք մեզ մաղթանքներով բարի:*

Ապա նա բուլորին արձակեց: Այդ ժամանակ ինչ-որ մեկը հենց նոր էր
ժամանել Հոմմից. նա սկսեց հարցուփորձել Դրուզոսի դստեր մասին,
որը հիվանդ էր, և այստեղ հանկարծ ավանդեց հոգին Լիվիայի ձեռքերի
վրա, ասելով. «Լիվիա, հիշիր, թե ինչպես ենք մենք ապրել միասին:
Ապրի՛ր և մնաս բարյավ»²⁴²:

Նրան թեթև մահ բաժին ընկավ, ինչպիսին նա միշտ ցանկանում էր:
(2) Իսկապես, ամեն անգամ, երբ նա լսում էր, որ ոմն մեկը մահացել
է արագ և առանց տառապանքների, նա աղոթում էր նման բարի մահ իր
և յուրայինների համար՝ այդպես էր նա արտահայտվում: Մինչև վերջին
հոգոցը մեկ անգամ միայն նա մթազնման նշաններ դրսևորեց, ևրբ
հանկարծ վախեցավ և սկսեց գանգատվել, թե քառասուն կտրիճներ իրեն
ինչ-որ տեղ են քարշ տալիս: Դա էլ ոչ այնքան մթազնում էր, որքան
կանխազգացում, որովհետև հենց քառասուն պրետորական զինվորներ
հետո դուրս բերեցին նրա դիակը ժողովրդի առաջ:

100. Վախճանվեց նա այն նույն ննջասենյակում, որտեղ և նրա հայր Օկտավիոսը, երկու Սեքստոսների՝ Պոմպեոսի և Ապուլեոսի, կոնսուլության ժամանակ, տասնչորսերորդ օրը մինչև սեպտեմբերյան կալենդները, օրվա իններորդ ժամին, շապրելով երեսունհինգ օր մինչև լրիվ յոթանասունվեց տարեկանը:

(2) Նրա դիակը Նոլայից մինչև Բովիլլե տարան մունիցիպալումների և գաղութների դեկուրիոնները: Նրանք գնում էին գիշերները՝ շոգի պատճառով, իսկ ցերեկը դիակը դնում էին յուրաքանչյուր քաղաքավայրի բազիլիկում կամ գլխավոր տաճարում²⁴³: Բովիլլեում նրան ընդունեց հեծյալների ողջ դասը, մուծեց մայրաքաղաք և դրեց նրա տան սրահում: Սենատորները մրցակցում էին միմյանց հետ, նախանձախնդրորեն միջոցներ փնտրելով, թե ինչպես ավելի ճոխ կազմակերպեն նրա թաղումն ու փառաբանեն նրա հիշատակը: Ուրիշ պատիվների թվում ոմանք առաջարկում էին, որ թափորն անցնի Հաղթանակի դարսյասով²⁴⁴, առջևից տարվի Հաղթանակի²⁴⁵ արձանը՝ սենատի շենքից, իսկ ողբասացներ լինեն լավագույն ընտանիքների տղաներն ու աղջիկները. մյուսները՝ որ թաղման օրը ոսկե մատանիների փոխարեն բոլորը երկաթե մատանիներ հագնեն, երրորդները՝ որ նրա անունը հավաքեն բարձրագույն կուլեգիումների քրմերը: (3) Ոմն մեկը համոզում էր օգոստոս ամսվա անունը տալ սեպտեմբերին, որովհետև օգոստոսին նա մահացել էր, իսկ սեպտեմբերին ծնվել. մի ուրիշն առաջարկում էր նրա ծննդից մինչև վախճանն ընկած ողջ ժամանակամիջոցն անվանել Օգոստոսի դար և այդ անվամբ գրանցել տարեգրություններում: Սակայն ընդունված պատիվներում չափն, այնուհանդերձ, պահպանվեց: Նրա հասցեին գովաբանական ճառեր արտասանվեցին երկիցս՝ Տիրերիոսի կողմից՝ աստվածային Հուլիոսի տաճարի առջև, և Տիրերիոսի որդի Դրուզոսի կողմից՝ հին ռոստրալային տրիբունայի²⁴⁶ առջև: Սենատորներն իրենց ուսերի վրա նրան տարան Մարսյան դաշտ և այնտեղ կիզեցին դիակը: (4) Գտնվեց նաև պրետորական կոշման տեր մի մարդ²⁴⁷, որ երդմամբ հայտարարեց, թե տեսել է, ինչպես հրկրզվածի պատկերը հառնեց երկինք: Ամենաականավոր հեծյալները, միայն տունիկաներով, առանց գոտու, բոկոտն, հավաքեցին նրա անունը և դրեցին դամբարանում²⁴⁸: Այդ շինությունը Փլամինիոսի ճանապարհի և Տիրրոսի ափի միջև կառուցել է Օգոստոսն ինքը իր վեցերորդ կոնսուլության ժամանակ և այդ ժամանակ էլ ժողովրդի օգտագործմանն էր հանձնել շրջակա պուրակներն ու զբոսավայրերը:

101. Նրա կտակը, կազմված Լուկիոս Պլանկոսի և Գայոս Սիլիոսի կոնսուլության ժամանակ, երրորդ օրը մինչև ապրիլյան նոնները²⁴⁹, վախ-

Ճանից մեկ տարի և շորս ամիս առաջ, գրված երկու տետրերում մասամբ նրա սեփական ձեռքով, մասամբ էլ նրա ազատարձակների Պոլիբոսի և Հիլարիոնեսի, պահվում էր վեոտալուհիների մոտ և ներկայացվեց նրանց կողմից երեք փաթեթների հետ միասին, կնքված նույն ձևով: Այդ ամենը բացվեց և հրապարակվեց սենատում: (2) Առաջին աստիճանի ժառանգներ նա նշանակում էր Տիբերիոսին՝ երկու երրորդի և Հիլիային²⁵⁰ մեկ երրորդի շահով. նա կտակում էր նրանց նաև ընդունել իր անունը: Գրկրորդ աստիճանում նա ժառանգներ էր նշանակել Գրուզոսին՝ Տիբերիոսի որդուն, մեկ երրորդի շահով, և Գերմանիկոսին նրա երեք արու զավակներով՝ մնացյալ մասում. երրորդ աստիճանում հիշատակվում էին նրա շատ աղգականներ ու բարեկամներ: Հոռմեակա՛ն ժողովրդին նա հատկացրեց քառասուն միլիոն սևստերցիում, տրիբուններին²⁵¹՝ երեքուկես միլիոն, պրետորյաններին՝ յուրաքանչյուրին հազար, քաղաքացիին կոհորտաներին՝ հինգհարյուրական, էգեթներին՝ երեքհարյուրական. այդ դրամը նա կարգադրել էր վճարել միաժամանակ, քանի որ այն նախօրոք հավաքել ու առանձնացրել էր: (3) Մյուս նվերները, մինչև քսան հազար սեստերցիումի շահով, նշանակված էին տարբեր անձանց և պետք է վճարվեին մեկ տարի անց. ներողութուն հայցելով, նա վկայակոչում էր, որ իր կարողութունը մեծ չէ և որ նույնիսկ իր ժառանգներին հարյուր հիսուն միլիոնից ավելի չի մնա. ճիշտ է, վերջին քսան տարիների ընթացքում նա բարեկամներից կտակներով ստացել էր շուրջ հազար շորս հարյուր միլիոն, քայց համարյա այդ ամբողջ քումարը մյուս ժառանգութունների և հայրական երկու կալվածների²⁵² հետ միասին ծախել էր ի բարօրութուն պետութան: Զույգ Յուլիաներին՝ դստերը և թոռնուհուն, եթե նրանց որևէ քան պատահեր, արգելում էր թաղել իր հանգստարանում: (4) Երեք փաթեթներից առաջինը կարգադրութուններ էր պարունակում թաղման մասին. երկրորդը՝ նրա գործոց ցուցակը²⁵³, որը նա կտակում էր փոքագրել պղնձյա տախտակների վրա՝ դամբարանի մուտքի մոտ. երրորդը՝ պետական գործերի մատչանը՝ որտեղ որքան գործեր կան դրոշների ներքո, որքան դրամ կա պետական գանձարկատարանում, կայսերական գանձարանում և հարկային ապառքներում: Անտաններով ցույց էին տրված բոլոր ստրուկները և արձակվածները, որոնցից կարելի էր հաշվետվութուն պահանջել:





ՏԻՐԵՐԻՈՍ



1. Կլավդիոսների պատրիկական տոհմը, չէ որ կար նաև այդ նույն անունը կրող պլեբեյական տոհմ, ոչ պակաս ազդեցիկ և կարևոր, իր սկիզբն առնում է Ռեգիլուս սաբինական փոքրիկ քաղաքից: Այստեղից կլիենտների մեծ բաղմությամբ այն վերաբնակվել է դրանից քիչ առաջ հիմնված Հոոմ քաղաքում Հոոմուսի կառավարչակից Տիտոս Տացիոսի և կամ, ինչպես ավելի ճիշտ ասում են, տոհմի նահապետ Ատտա Կլավդիոսի՝ նախաձեռնու-

թյամբ, թագավորների վտարումից հետո արդեն հինգ տարի անց: Այստեղ այդ տոհմն ընդունվեց պատրիկների² շարքը և կլիենտների համար պետությունից ստացավ Անիենից³ այն կողմ գտնվող դաշտը, իսկ իր համար՝ Կապիտոլիումի բլուրի ստորոտին գտնվող հանգստարանը⁴: (2) Եվ հետո ժամանակի ընթացքում այն կոնսուլության արժանացավ քսանութ անգամ, դիկտատուրայի՝ հինգ անգամ, ցենզորության՝ յոթ անգամ, վեց տրիումֆների և երկու օվացիանների: Այդ տոհմի անդամները կրում էին տարբեր անուններ և մականուններ՝ միայն Լուկիոս անունը ընդհանուր համաձայնությամբ մերժվեց այն բանից հետո, երբ այդ անունը կրող երկու ազգականներից մեկը մերկացվեց ավազակության, իսկ մյուսը՝ սպանության մեջ: Այլ մականունների թվում նրանք ընդունեցին նաև «Ներոն» մականունը, որը սաբինական լեզվով նշանակում է «քաջարի» և «ուժեղ»⁵:

2. Շատ Կլավդիոսներ են հայտնի պետության հանդեպ բազում աշ-

Քառու ծառայութիւններով, բայց նաև այլատեսակ շատ զանցանքներով: Կհիշատակեմ միայն կարևորագույնները: Ապալիոս Կույրը հռոմեացիներն համոզեց կործանարար համաձայնութեան մեջ շմտնել Պյուլոս⁶ թաշավորի հետ: Կլավդիոս Կավդիկոսն առաջինը նավատորմն անցկացրեց Ֆեղուցով և կարթագենացիներին վտարեց Սիցիլիայից⁷: Տիրերիոս Նեոնը ջախջախեց հսկայական ուժերով Իսպանիայից եկող Հաստրուբային, թույլ շտալով նրան միանալու իր եղբայր Հաննիբալի հետ: (2) Մյուս կողմից, Կլավդիոս Ռեգիլլիանոսը՝ օրենքների շարադրման համար դեցեմվիրը, կրթից մղված, փորձեց ստրկութեան դատապարտել ազատ մի աղջկա, և դա պատճառ դարձավ ալեքեյների՝ պատրիկներից ել գրորդ բաժանման⁸: Կլավդիոս Ռուսոսոսը⁹, որն իրեն պսակազարդ արձան դրեց Ապալիոսի ֆորումում, փորձեց կլիենտների միջոցով իրեն ենթարկել Իտալիան: Կլավդիոս Պուլքը, որից Սիցիլիայում գուշակութեան ժամանակ հավի ճտերը կեր վերցնել չէին ուզում, նրանց ծովը նետեց, կարծես որպես ծաղր նախանշանակի նկատմամբ ասելով. «Թող նրանք խմեն, եթե ուտել չեն ուզում», իսկ ինքը ծովային մարտի բռնովեց և ջախջախվեց. իսկ երբ դրանից հետո սենսուր նրան կարգադրեց դիկտատոր նշանակել, նա, ասես կրկին ծանակելով պետութեան աղետը, նշանակեց իր համհարզ Գլիկիոսին¹⁰: Այդ տոհմից սերած կանայք հիշողութեան մեջ թողել են նույնքան տարբեր օրինակներ: Իսկապես, այդ տոհմին էին պատկանում զույգ Կլավդիաները՝ և նա, որը Տիրրոսի ժանձաղուտում խութերի վրայից հանեց Իդեական աստվածների Մոր սրբութիւններով բեռնված նավը, բոլորի ներկայութեամբ աղոթելով, որ նավը միայն այն բանից հետո գնա իր ետևից, եթե ինքն իրոք մաքուր է¹¹. և նա, որը կանանցից առաջինը մեղադրվեց ժողովրդի առջև մեծութեանը վիրավորելու մեջ այն բանի համար, որ սայլակառքով դժվարութեամբ անցնելով հոծ բազմութեան միջով, բարձրաձայն ցանկութիւն հայտնեց, որպեսզի իր եղբայր Պուլքը հարութիւն առնի և նորից կործանի նավատորմը և դրանով նվազեցնի Հռոմի ժողովուրդը:

(4) Բացի այդ, հայտնի է, որ բոլոր Կլավդիոսները միշտ եղել են համոզված օպտիմատներ, պատրիկների արժանապատվութեան և հզորութեան ջատագովներ, բացառութեամբ սոսկ Պուբլիոս Կլոդիոսի¹², որը հանուն այն բանի, որպեսզի Կիկերոնին վտարի Հռոմից, թույլ տվեց, որ իրենից նույնիսկ տարիքով փոքր մի պլեբեյ որդեգրի իրեն: Ժողովրդի հանդեպ նրանք բոլորն էլ այնքան անհաշտ էին ու գոռոզամիտ, որ նույնիսկ քրեական մեղադրանքի դեպքում էլ նրանցից ոչ ոք չէր նվաստանում այնքան, որ սգազգեստ հագնի և քաղաքացիներից ներում հայցի: Ոմանք վիճաբանութիւնների և գժտութիւնների ժամանակ ծեծի ու ջար-

դի էին ենթարկում անգամ ժողովրդական տրիբուններին: Իսկ մի վեստալուհի, երբ նրա եղբայրը¹³ տրիումֆ էր կատարում հակառակ ժողովրդի կամքի, բարձրացավ նրա մարտակառքը և ուղեկցեց նրան մինչև բուն Կապիտոլիում, որպեսզի տրիբուններից ոչ ոք չկարողանար միջամտել կամ արգելք դնել:

3. Այդ արմատից էլ ընձյուղում էր Տիբերիոս Կեսարը և, ընդ որում, միանգամից թե հայրական, թե մայրական գծով. ըստ հոր՝ Տիբերիոս Ներոնից, ըստ մոր՝ Ապպիոս Պուլքրից, իսկ նրանք երկուսն էլ Ապպիոս Կուլյրի որդիներն էին: Նա պատկանում էր նաև Լիբիոսների ընտանիքին, որը որդեգրել էր նրա մոր կողմից պապին: Դա պլեբեյական գերդաստան էր, բայց քիչ պատիվ չէր վայելում և արժանացել էր ութ կոնսուլության, երկու ցենզորության, երեք տրիումֆի և նույնիսկ դիկտատորի ու հեծելազորի պետի պաշտոնների: Այն փառաբանված էր նաև նշանավոր այրերով, ամենից ավելի՝ Սալինատորով և Դրուզոսներով: (2) Ցենզոր եղած ժամանակ Սալինատորը թեթևամտության համար պախարակել էր հռոմեական բոլոր տրիբունները, որովհետև նրանք, մեղադրելով և դատապարտելով նրան նրա առաջին կոնսուլությունից հետո, այնուհանդերձ կրկին նրան ընտրել էին և կոնսուլ և ցենզոր¹⁴: Մենամարտի ժամանակ Դրուզոսն սպանել էր թշնամու առաջնորդ Դրավզոսին և պահպանել նրա մականունն իր և իր հետնորդների համար: Նա ինքը, ասում են, պրոպրետորի պաշտոնում Գալլիա պրովինցիայից վերադարձրել էր այն ոսկին, որը վճարվել էր սենոններին¹⁵ Կապիտոլիումի պաշարման ժամանակ և որը, հակառակ ավանդության, Կամիլլոսը նրանցից ետ չէր խլել: Նրա ծոռնորդին¹⁶ ստացավ «սենատի պաշտպան» մականունը Գրակքոսների դեմ պայքարում ցուցաբերած նշանավոր ծառայությունների համար. նա թողեց մի որդի¹⁷, որը գժտությունների ժամանակ զանազանաբնույթ քիչ ձեռնարկումներ չէր մտահղացել, բայց ուխտադրուժ սպանվել էր իր հակառակորդների ձեռքով:

4. Տիբերիոսի հայրը՝ Ներոնը, ալեքսանդրիական պատերազմի ժամանակ Գայոս Կեսարի քվեստորն էր եղել և, որպես նավատորմի պետ, շատ էր նպաստել նրա հաղթանակին: Դրա համար Պուբլիոս Սկիպիոնի փոխարեն նա նշանակվեց քրմապետ և ուղարկվեց Գալլիա գաղութներ կազմակերպելու համար, որոնց թվում էին Նարբոնը և Արելատը: Սակայն Կեսարի սպանությունից հետո, երբ նոր խառնակությունների երկյուղից բոլորը մեկ մարդու նման որոշում էին ընդունում այդ գործը՝ մոռացության մատնել, նա նույնիսկ առաջարկեց պարգև տալ տիրանսսպաններին: (2) Ապա նա պրետոր եղավ. տարվա վերջին, երբ եռապետների միջև գժտություն ծագեց, նա այդ պաշտոնում մնաց օրինա-

կամ ժամկետաց ափելի և կոնսուլ կուկիտու Անտոնիոսի՝ եռապետի եղբոր ետևից Պերուզիա գնաց, իսկ երբ մնացյալներն անձնատուր եղան, նա մեծակ շարունակեց պայքարը։ Նա փախավ Պրենեստե, ապա Նեապոլ և սարուկներին ազատության կոչելու¹⁸ զուր փորձերից հետո թաքնվեց Սիցիլիայում։ (3) բայց վիրավորված այն բանից, որ իրեն իսկույն չթողեցին Սեքստոս Պոմպեոսի մոտ և շճանաչեցին ֆասկիների¹⁹ նկատմամբ իր իրավունքները, նա անցավ Աքայա՝ Մարկոս Անտոնիոսի մոտ։ Նրա հետ միասին նա շուտով վերադարձավ Հռոմ ընդհանուր հաշտության կնքումից հետո, և այստեղ, Օգոստոսի պահանջով, նրան զիջեց իր կնոջը՝ Լիվիա Դրուզիլլային²⁰, որը նրա համար արդեն որդի էր ծնել և հղի էր երկրորդով։ Դրանից հետո շուտով նա վախճանվեց, թողնելով երկու որդիներ՝ Տիրեբիոս և Դրուզոս Ներոններին։

5. Ոմանք ենթադրում էին, որ Տիրեբիոսը ծնվել է Ֆունդրում, բայց դա սուկ անհուսալի կուսհում է, հիմնված այն բանի վրա, որ Ֆունդրում է ծնվել նրա տատը մոր կողմից և որ հետո սենատի որոշմամբ այնտեղ դրվել է Բարեկեցության արձանը։ Սակայն առավել մեծաթիվ և հուսալի աղբյուրներ ցույց են տալիս, որ նա ծնվել է Հռոմում, Պալատինումում, տասնվեցերորդ օրը մինչև դեկտեմբերյան կալենդները²¹, Մարկոս էմիլիոս Լեպիդոսի (երկրորդ) և Կուկիտոս Մունացիոս Պլանկոսի կոնսուլության և Փիլիպիկական պատերազմի ժամանակ։ Այդպես է գրանցված տաբեզրություններում և պետական տեղեկագրերում։ Ի միջի այլոց, ոմանք նրա ծնունդը վերաբերում են նախորդ տարվան, Հիրցիոս և Պանսա կոնսուլների ժամանակին, ոմանք էլ՝ հետագա տարուն, Սերվիլիոս Իսավրիկա և Կուկիտոս Անտոնիոս կոնսուլների ժամանակին։

6. Նրա վաղ մանկությունն ու մանկությունը ծանր էին ու անհանգիստ, քանի որ նա ամենուր ուղեկցում էր ծնողներին նրանց փախուստի ժամանակ։ Նեապոլում, երբ նրանք հետապնդող թշնամուց փրկվելու համար թաքնվել էին նավի վրա, նա երկու անգամ քիչ էր մնում մատներ իր լացով, որովհետև նրանց ուղեկցող մարդիկ ուզում էին պոկել նրան սկզբում ստնտուի կրծքից, ապա մոր գրկից, երբ պետք էր թեթևաքնել թույլ կանանց բեռը։ (2) Նրանց հետ միասին նա դեգերեց թե Միցիլիայում, թե Աքայայում, ուր գտնվում էր լակեդեմոնացիների²² Կլավդիոսների տոհմի կլիենտների, քաղաքի խնամակալության ներքո։ Այնտեղից մեկնելիս գիշերը նա ճանապարհին մահացու վտանգի ենթարկվեց, երբ անտառը բոլոր կողմերից հանկարծ հրդեհով բռնկվեց, և բոցն ուղեւորներին այնքան մերձեցավ, որ խանձեց Լիվիայի մազերն ու զգեստի փեշը։ (3) Այն նվերները, որ նա ստացել էր Սիցիլիայում Պոմպեայից՝ Սեքստոս Պոմպեոսի քրոջից, թիկնոցը, ճարմանդները և ոսկե բուլ։

լաները²³ — պահպանվել են, և մինչև այժմ էլ դրանք ցույց են տալիս Բայբում:

Հոռմ վերադառնալուց հետո նա որդեգրվեց ըստ սենատոր Մարկոս Գալլիոսի կտակի. ժառանգությունը նա ընդունեց, բայց անունից շուտով հրաժարվեց, որովհետև Գալլիոսը պատկանում էր Օգոստոսի հակառակորդների թվին: (4) Ինը տարեկանում նա ռուսալային տրիբունայից ճանարտասանեց վախճանված հոր դիակի վրա: Հետո, պատանի ժամանակ, Ակտիումի տրիումֆում նա ուղեկցում էր Օգոստոսի մարտակառքը, հեծած ձախ կողաձին, մինչ աջ կողաձիու վրա գնում էր Մարցելլոսը՝ Օկտավիայի որդին: Աստիկական խաղերի²⁴ ժամանակ նա կարգադրիչ էր, իսկ Տրոյական խաղերում²⁵ կրկեսում գլխավորում էր ավագ տղաների ջոկատը:

7. Դառնալով շափահաս, իր երիտասարդությունն ու հետագա տարիները, մինչև իշխանության գլուխ անցնելը, ահա թե ինչ կերպ անցկացրեց նա:

Գլադիատորական մարտեր նա կազմակերպել էր հոր և ապա պապի՝ Դրուզոսի, հիշատակին տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում՝ առաջին անգամ ֆորումում, երկրորդ անգամ ամֆիթատրոնում. դրանց համար նա հրավիրել էր անգամ պաշտոնաթող վաստակաշատ գլադիատորների²⁶ հարյուր հազար սեստերցիումի վարձատրության գիմաց: Նա խաղեր էլ էր կազմակերպում, բայց դրանց ներկա չէր լինում: Այդ ամենը կազմակերպվում էր մեծ ճոխությամբ, մոր և խորթ հոր միջոցներով:

(2) Նա ամուսնացել էր Ագրիպպինայի՝ Մարկոս Ագրիպպայի դստեր և Ցեցիլիոս Ատտիկոսի՝ հռոմեական հեծյալի, որին գրված նամականեր է թողել Կիկերոնը²⁷, թոռնուհու հետ: Բայց թեև նրանք ապրում էին համերաշխ, թեև կինն արդեն տղա էր ծնել նրա համար՝ Դրուզոսին, և հղի էր երկրորդ անգամ, նրան կարգադրվեց ամուսնալուծվել կնոջից²⁸ և անմիջապես ամուսնություն կնքել Յուլիայի՝ Օգոստոսի դստեր հետ: Նրա համար դա հոգեկան անհուն տառապանք էր՝ Ագրիպպինային նա կապված էր մինչև հոգու խորքը: Իսկ Յուլիան նրան զզվելի էր իր բարքով — նա հիշում էր, որ դեռևս առաջին ամուսնու օրոք Յուլիան մոտիկություն էր փնտրում իր հետ, և այդ մասին նույնիսկ ամեն տեղ խոսում էին: (3) Ագրիպպինայի համար նա թախծում էր ամուսնալուծությունից հետո էլ. և երբ միայն մեկ անգամ պատահեց հանդիպել նրան, նա այնպիսի երկար ու արցունքով լի հայացքով ուղեկցեց կնոջը, որ միջոցներ ձեռք առնվեցին, որպեսզի Ագրիպպինան այլևս նրա աչքին չընկնի: Սկզբում նա Յուլիայի հետ հաշտ ու համերաշխ էր ապրում և սիրով էր

պատասխանում նրան, բայց հետո սկսեց ավելի ու ավելի մեկուսանալ նրանից, իսկ այն բանից հետո, երբ մահացավ որդին, որը նրանց միության երաշխիքն էր, նա նույնիսկ առանձին էր քնում: Այդ որդին ծնվել էր Աբվիլեայում և մահացել դեռևս ծծկեր հասակում: Իր եղբայր Դրուզոսին նա կորցրեց Գերմանիայում՝ նրա դիակը բերեց Հռոմ և ամբողջ ճանապարհին ոտքով քայլում էր առջևից:

8. Քաղաքացիական գործունեությունը նա սկսեց այն բանից, որ մի քանի դատավարություններում Օգոստոսի ներկայությամբ պաշտպանեց Արքեիայոս թագավորին, Տրալլքի և Թեսալիայի բնակիչներին. սենատի առջև պաշտպանեց Լաոդիկես, Ֆիատիրա և Քիոս քաղաքների խնդրանքը, որոնք տուժել էին երկրաշարժից և օգնություն էին աղերսում. դատի տվեց Փաննիոս Ցեպիոնին, որը Վարրոն Մուրենայի հետ միասին դավադրություն էր կազմակերպել Օգոստոսի դեմ, և հասավ նրա դատապարտմանը՝ մեծությամբ վիրավորելու համար: Միևնույն ժամանակ նա կատարում էր ևս երկու ուրիշ հանձնարարություններ՝ հացի հայթայթում, որն սկսել էր շրավարարել, և ամբողջ Իտալիայով մեկ էրգաստուլումների հետաքննում²⁹, որոնց տերերը համընդհանուր ատելություն էին վաստակել նրանով, որ բռնում և կալանատներում թաքցնում էին ոչ միայն ազատ ճամփորդների, այլև նրանց, ովքեր նման ապաստարաններ էին փնտրում զինվորական ծառայության նկատմամբ տաժաժ վախից:

9. Զինվորական ծառայությունը նա սկսեց կանտաբրիական պատերազմում որպես զինվորական տրիբուն: Հետո նա գլխավորեց հռոմեական զորքերի արշավանքը Արևելք, վերադարձրեց հայկական թագավորությունը Տիգրանին և իր ճամբարում զորապետի տրիբունայի առջև նրա գլխին ադամանդակուռ խույր դրեց: Նա ինքն ընդունեց նաև այն դրոշները, որ պարթևները խլել էին Մարկոս Կրասսոսից: Ապա շուրջ մեկ տարի նա կառավարում էր Թավամազ Գալլիան, որը խռովված էր առաջնորդների գժությունների և բարբարոսների ասպատակությունների պատճառով: Դրանից հետո նա պատերազմ մղեց ուտների և վինդելիկների, ապա պաննոնացիների, ապա գերմանացիների դեմ. (2) ուտիկական պատերազմում նա հնազանդեցրեց ալպիական ցեղերին, պաննոնականում՝ բրևկներին ու դալմաթներին, գերմանականում վերցրեց 40 հազար գերիներ, վերաբնակեցրեց նրանց Գալլիայում և հողեր տրամադրեց Հռենոսի ափին: Այդ հաղթանակների համար նա մայրաքաղաք էր մուտք գործել և՛ օվացիայով, և՛ մարտակառքով, իսկ դեռևս մինչ այդ, ըստ ոմանց հաղորդած տեղեկությունների, պարգևատրվել էր տրիումֆային զարդարանքներով՝ մի նաք պարգևով, որը մինչ այդ ոչ ոքի չէր տրվել:

(3) Քվեստորի, պրեստորի և կոնսուլի պաշտոններ նա գրավել էր ժամկետից շուտ և գրեթե անընդմեջ³⁰, իսկ ապա, որոշ ժամանակ անց, ստացավ երկրորդ կոնսուլությունը և տրիբունական իշխանություն հինգ տարով:

10. Բայց հաջողությունների այդ հեղեղի մեջ, տարիքի և ուժերի ծաղկման շրջանում նա անսպասելիորեն որոշեց հեռանալ գործերից և առանձնանալ հնարավորին չափ հեռվում: Միգուցե, նրան այդ բանին մղեց զրգվածներ կնոջից, որին ոչ կարող էր մեղադրել, ոչ էլ մերժել, բայց և չէր կարող այլևս տանել. միգուցե, ցանկությունը՝ թշնամանք շհրահրելու Հոսմում իր անբաժանությամբ և հեռանալով ամրապնդելու, գուցե և ուժեղացնելու իր ազդեցությունը մինչև այն ժամանակ, երբ պետությանը կարող կլինեին պետք գալ իր ծառայությունները: Իսկ ոմանց կարծիքով, նա, տեսնելով Օգոստոսի հասակ առած թոռներին, կամովին նրանց զիջեց պետության մեջ երկրորդ մարդու տեղը և դիրքը, որ այնքան երկար ժամանակ գրավել էր ինքը. դրանում նա հետևում էր Մարկոս Ագրիպպայի օրինակին, որը Մարկոս Մարցելլոսի՝ պետական գործերին մոտ կանգնելուց հետո հեռացավ Միտիլենե, որպեսզի իր ներկայությամբ շխանգարի նրա գործերին և շնվազեցնի նրա նշանակությունը:

(2) Հետագայում Տիրերիոսն ինքն էլ այդ պատճառն էր մատնացույց անում³¹: Բայց այն ժամանակ նա խնդրեց արձակել իրեն, վկայակոչելով սոսկ պետական գործերից հոգնած լինելը և աշխատանքներից հանգրստանալու անհրաժեշտությունը: Ոչ մոր խնդրանքները, որն աղերսում էր նրան մնալ, ոչ խորթ հոր գանգատները սենատում այն բանից, որ նա իրեն լքում է, շտատանեցին նրան. իսկ հանդիպելով առավել ևս վճռական դիմադրության, նա շորս օր հրաժարվեց կերակուր ընդունելուց:

Ի վերջո մեկնելու թույլտվություն ձեռք բերելով, նա իսկույնեթ ճանապարհ ընկավ Օստիա, թողնելով Հոսմում կնոջը և որդուն, ճանապարհողներից ոչ ոքի և ոչ մի խոսք չասելով և միայն քչերի հետ համբուրվելով հրաժեշտ տալիս: 11. Օստիայից նա նավարկեց Կամպանիայի ափի երկայնքով: Այստեղ նա ուզում էր հապաղել, իմանալով Օգոստոսի հիվանդության լուրը. բայց քանի որ լուրեր տարածվեցին, թե իբր նա դանդաղում է, հուսալով, որ կիրականանան իր ամենահամարձակ հույսերը, ծովը դուրս ելավ գրեթե փոթորկի ետուն պահին և, ի վերջո, հասավ Հոտոս: Այդ կղզու գեղեցկությունն ու առողջարար օդը նրան գրավել էին դեռևս այն ժամանակ, երբ նա այստեղ խարիսխ էր նետել Հայաստանից վերադառնալիս:

Այստեղ նա սկսեց ապրել իբրև հասարակ քաղաքացի, բավարարվելով համեստ տնով և մի փոքրիկ ավելի ընդարձակ վիլլայով: Առանց լիկ-

տօրի և առանց սուրհանդակի նա հաճախ զրոսնում էր գիմնասիոնում և հաղորդակցվում տեղացի հուլյների հետ գրեթե ինչպես հավասարը հավասարի:

(2) Մի օր, առավոտյան, խորհելով վերահաս օրվա: տնելիքները, նա ասաց, որ կուզենար այցելել քաղաքի բոլոր հիվանդներին³². ներկա կողմերը նրան սխալ հասկացան, և հրամայվեց բոլոր հիվանդներին բերել քաղաքային օյունասրահ և պառկեցնել, նայած ով ինչ հիվանդություն ուներ: Այդ անսպասելի դեպքից ասլած, Տիրերիսսը երկար շփտեր ինչ անել, և վերջապես մեկ առ մեկ մոտեցավ բոլորին, յուրաքանչյուրից ներողություն հայցելով անհանգստության համար, որքան էլ շքավոր ու անհայտ մեկը լիներ նա: (3) Միայն մեկ անգամ և, ոչ ավելի, տեսան, թե ինչպես նա դրսևորեց իր տրիբունական իշխանությունը: Նա փիլիսոփայական դպրոցների և ընթերցումների մշտական այցելու էր. և երբ մեկ անգամ անդիջում իմաստունների միջև դաժան վեճ ծագեց, նա միջամտեց, բայց վիճաբանողներից մեկը իսկույն նրա գլխին հայհոյանք տեղաց հակառակ կողմին պաշտպանելու համար: Այնժամ նա աննկատ տուն գնաց և ասյա, հանկարծակի հայտնվելով լիկատորների³³ ուղեկցությամբ, մունետիկի միջոցով վիճաբանողին դատի կանչեց և հրամայեց բանտ նետել:

(4) Քիչ ժամանակ անց նա իմացավ, որ Յուլիան՝ իր կիներ, անառակության և ամուսնական անհավատարմության համար դատապարտվել է, և որ Օգոստոսը իր անունից լուծել է նրա ամուսնությունը: Այդ տեղեկությունը նրան ուրախություն պատճառեց, բայց և այնպես հարկ համարեց որքան կարող էր հորից պաշտպանել աղջկան իր բազմիցս դրած նամակներում, իսկ Յուլիային թողեց բոլոր նվերները³⁴, ինչ որ ընծայել էր, թեև կիներ դրան արժանի էլ չէր:

(5) Մինչ այդ լրացավ նրա տրիբունական իշխանության ժամկետը: Այնժամ նա վերջապես խոստովանեց, որ իր մեկնումով ուզում էր սոսկ խուսափել Գայոսի և Լուկիոսի հետ մրցակցության մեջ մտնելու համար արվող կշտամբանքներից, որ այժմ այդ կասկածն անցել է, Գայոսն ու Լուկիոսն առնականացել են, ոչինչ չի սպառնում պետության մեջ նրանց երկրորդ տեղին, և խնդրում է, վերջապես, թույլ տալ տեսակցելու իր ազգականների հետ, որոնց կարոտել է: Բայց նա մերժում ստացավ. դեռ ավելին, նրան հայտարարեցին, որ մի կողմ դնի բոլոր հոգսերն ազգականների մասին, որոնց ինքն էր նման հաճույքով լքել: 12. Եվ այդպես նա մնաց Հռոդոսում իր կամքին հակառակ, մոր օգնությամբ դժվարությամբ հասնելով նրան, որ խայտառակությունը պարտակելու համար գոնե ինքն անվանվի Օգոստոսի դեսպանորդ:

(2) Այժմ նա ապրում էր ոչ միայն որպես մասնավոր անձ, այլև որպես հալածվող ու երկնչող մի մարդ: Նա հեռացավ կղզու խորքերը, որպեսզի խուսափի այստեղով անցնողների պատվո դրսևորումներից. իսկ դրանք միշտ էլ շատ էին լինում, որովհետև ոչ մի քաղաքացիական կամ զինվորական տեղապահ, ուր էլ որ նա գնալիս լիներ, դիպվածը բաց չէր թողնում Հոռոսս այցելելու: Բայց նա անհանգստանալու համար ավելի կարևոր պատճառներ ուներ: Երբ նա ուղևորութուն կատարեց Սամոս, որպեսզի տեսնվի իր խորթ որդի Գայոսի հետ, որը Արևելքի փոխարքա էր նշանակվել, նրա մեջ օտարացածություն նկատեց, որն առաջ էր եկել Մարկոս Լուլիոսի՝ նրա ուղեկցի և ղեկավարի, շարախոսություններից: (3) Նրան կասկածեցին նաև այն բանում, որ իրեն պարտական ցենտուրիոններին, որոնք արձակուրդից ճամբարներն էին վերադառնում, տարբեր անձանց անուններով երկիմաստ նամակներ էր տալիս, որոնք, ըստ երևույթին, նրանց խոսվության էին դրդում: Օգոստոսից իմանալով այդ կասկածի մասին, նա սկսեց անդադրում պահանջել, որպեսզի իր մոտ ցանկացած դասից մի մարդ դնեն՝ հսկելու իր խոսքերն ու գործերը: 13. Նա թողեց սովորական ձիավարություններն ու զինավարժությունները, հրաժարվեց հայրենական զգեստներից, հագավ հունական թիկնոց ու սանդալներ³⁵ և այդ տեսքով ապրեց համարյա երկու տարի, օրըստօրե ավելի շատ արհամարհված ու ատված: Նեմավսուսի³⁶ բնակիչները նույնիսկ ոչնչացրին նրա դիմանկարներն ու արձանները, իսկ Հոռոմում, երբ բարեկամական ճաշկերույթի ժամանակ խոսք գնաց նրա մասին, հյուրերից մեկը վեր թռավ և երդվեց Գայոսին, որ եթե նա հրամայի, ինքն իսկույննեթ Հոռոսս կմեկնի և այնտեղից կրերի աքսորյալի գլուխը՝ ահա, թե ինչպես էին նրան անվանում: (2) Դրանից հետո արդեն ոչ թե սարսափը, այլ ուղղակի վտանգը հարկադրեց Տիրերիոսին մոր օգնությամբ անվերջ խնդրանքներով իրեն վերադարձ աղերսել:

Երջանիկ պատահարը օգնեց նրան հաջողության հասնելու: Օգոստոսը հաստատապես վճռել էր ոչինչ չձեռնարկել այդ գործով հակառակ ավագ որդու ցանկության. իսկ սա այդ ժամանակ գժտված էր Մարկոս Լուլիոսի հետ և հեշտությամբ զիջեց խորթ հոր խնդրանքին: Եվ ահա, Գայոսի համաձայնությամբ, Տիրերիոսին թույլատրվեց վերադառնալ, բայց պայմանով, որ ոչ մի մասնակցություն չունենա պետական գործերին: 14. Վերադարձավ նա հեռանալու ութերորդ տարում, վստահաբար մեծ հույսեր սնուցանելով ապագայի հանդեպ:

Կանխազուշակություններն ու նախանշանները փոքր հասակից նրա մեջ պահպանում էին այդ հույսերը: (2) Երբ դեռևս Լիվիան հղի էր և

տարբեր գուշակություններով փորձում էր իմանալ, թե՞ արդյո՞ք տղա կծնի, նա թխսի տակից մի ձու հանեց և նաժիշտների հետ հերթով տաքացնում էր այն ափի մեջ. և դուրս եկավ աքաղաղ՝ շտեմնված մեծության կատարով³⁷, իսկ երբ նա նոր էր ծնվել, աստղագուշակ Սկրիբոնիոսը նրան մեծ ապագա ավետեց և նույնիսկ թագավորական իշխանություն, բայց առանց արքայական պատվանշանների. չէ որ այն ժամանակ դեռևս կեսարների իշխանությունը հայտնի չէր: (3) Երբ նա ելավ առաջին արշավանքին և Մակեդոնիայով իր զորքը տանում էր Ասորիք, Փիլիպպի առջև հանկարծ կրակ բռնկեց այն բոլոր զոհասեղաններին, որ երբեմնի գրել էին հաղթական լեզեոնները: Հետո, Իլլիրիկումի ճանապարհին Պատավիումի մոտ նա այցելեց Հերիոնի գուշակին, և նրան մատնացույց արվեց իր հարցերի պատասխանն ստանալու համար ոսկե զառեր նետել Ապոնուսի գետակը³⁸, իսկ երբ նա այդ արեց, զառերն ընկան ամենաերջանիկ կերպով. դրանք այժմ էլ կարելի է տեսնել այնտեղ, ջրի տակ: (4) Հոռոսից Հոռոմ վերադառնալուց սոսկ մի քանի օր առաջ նրա տան տանիքին արծիվ էր նստել, որին նախկինում կղզում բնավ երբեք չէին տեսել³⁹, իսկ այն օրվա նախօրյակին, երբ իմացավ իր վերադառնալու մասին, հագնվելիս նրան թվաց, թե տունիկան բոցավառվում է իր հագին: Աստղագուշակ Թրասիլլեսը, որին նա իր մոտ էր սլահում այդ արվեստում փորձված լինելու համար, դեռ նոր նավը տեսած իսկույն հայտարարեց, որ այն լավ լուրեր է բերում. դա գուշակի համար ամենամեծ փորձությունն էր, որովհետև Տիբերիոսը, տեսնելով, որ հակառակ նրա կանխագուշակությունների գործերը զնալով վատանում են, և վճռելով, որ խաբեբայի հետ գործ ունի, որին թեթևամտորեն վստահված են իր գաղտնիքները, հենց այդ նույն վայրկյանին, երբ միասին զբոսնում էին, ուզում էր նրան ծովը նետել⁴⁰:

15. Հոռոմ վերադառնալուն պես նա ժողովրդին ներկայացրեց իր որդի Դրուզոսին, իսկ ինքը իսկույն Պոմպեոսի տնից, որը կարիներում⁴¹ էր, վերաբնակվեց էսքվիլինում, Մեկենասի այգիներում: Այստեղ նա անձնատուր եղավ լիակատար հանգստի և միայն մասնավոր գործերով էր զբաղվում, ազատ լինելով հասարակական պաշտոններից: (2) Բայց երեք տարի էլ չանցավ, երբ Գայոսն ու Լուկիոսը վախճանվեցին: Այնժամ Տիբերիոսը որդեգրվեց Օգոստոսի կողմից մեռածների եղբայր Մարկոս Ագրիպայի հետ միասին, բայց նախապես նա պետք է որդեգրեր իր զարմիկ Գերմանիկոսին: Դրանից հետո նա այլևս ոչնչով հանդես չէր գալիս որպես ընտանիքի հայր և չէր հավակնում կորցրած իրավունքներից⁴² և ոչ մեկը՝ նվերներ չէր տալիս, ստրուկներին չէր ազատում, չէր

ընդունում ոչ ժառանգութիւններ, ոչ նվիրատւութիւններ այլ կերպ, եթե ոչ հոր իշխանութեան ներքո օգտագործելու համար⁴³։

Այդ պահից ոչինչ այլևս բաց չէր թողնվում Տիբերիոսի բարձրացման համար, հատկապես, երբ Ագրիպայի բանադրումից և աքսորից հետո նա հայտնապես մնաց միակ ժառանգը։ 16. Նա կրկին ստացավ տրիբունի իշխանութիւն հինգ տարով, նրան հանձնարարվեց Գերմանիայի խաղաղեցումը⁴⁴, Հռոմում Օգոստոսի հետ վարած բանակցութիւններից հետո պարթևական դեսպաններին կարգադրվեց նրան ներկայանալ պրովինցիալում։ Իսկ երբ լուր ստացվեց Իլլիրիկումի անջատման մասին, նրան վստահվեց նաև այդ պատերազմը՝ Պունիկահան պատերազմներից հետո հռոմեացիների արտաքին թշնամիների դեմ մղած բոլոր պատերազմներից ամենածանրը. տասնհինգ լեգեոններով և նույնքան օժանդակ զորքերով նա ստիպված եղավ երեք տարի կովել ամեն տեսակ մեծագույն դժվարութիւնների և պարենամթերքների ծայր պակասութեան պայմաններում։ (2) Նրան մեկ անգամ չէ, որ ետ էին կանչել, բայց նա համառորեն շարունակում էր պատերազմը, երկյուղելով, որ ուժեղ և մոտ գտնվող թշնամին, հանդիպելով կամավոր զիջողութեան, հարձակման կանցնի։ Եվ այդ համառութեան համար նա շուրջընկալեց՝ ամբողջ Իլլիրիկումը, որը սփռվում էր Իտալիայից և Նորիկից մինչև Թրակիա ու Մակեդոնիա և Դանուբիոս⁴⁵ գետից մինչև Ադրիատիկ ծովը, նա ենթարկեց ու հնազանդութեան բերեց։

17. Նրա փառքին էլ ավելի մեծ վեհութիւն էին հաղորդում հանգամանքները։ Մոտավորապես հենց այդ ժամանակ Գերմանիայում ընկավ Քվինտիլիանոս Վարոսը երեք լեգեոններով, և ոչ ոք չէր կասկածում, որ հաղթանակած գերմանացիները կմիանային պաննոնցիներին, եթե դրանից առաջ հնազանդեցված շիններ Իլլիրիկումը։ Դրա համար էլ նրան նշանակվեց և՛ տրիումֆ, և՛ շատ ուրիշ մեծ պատիվներ։ (2) Ոմանք նույնիսկ առաջարկում էին, որ նա ընդունի «Պաննոնյան» մականունը, մյուսները՝ «Անհաղթ», երրորդները՝ «Բարեշնորհ»։ Բայց մականվան վրա արգելք դրեց Օգոստոսը, ևս մեկ անգամ խոստանալով, որ Տիբերիոսը գոհ կմնա և այն անունից, որը կժառանգի հոր մահից հետո, իսկ տրիումֆը նա ինքը հետաձգեց, որովհետև քաղաքը դեռևս ողբում էր Վարոսի պարտութիւնը։ Բայց և այնպես նա մայրաքաղաք մտավ կոնսուլական տոգայով և դափնեպսակով. սեպտայում⁴⁶ սենատի հանդիման նա բազմեց բարձրադիր տեղում, տեղ գրավելով երկու կոնսուլների միջև Օգոստոսի կողքին, իսկ հետո, աչստեղից ողջունելով ժողովրդին, նա, բոլորի ուղեկցութեամբ, գնաց տաճարաններ⁴⁷։

18. Հաջորդ տարի նա նորից ուղևորվեց Գերմանիա։ Նա գիտեր, որ

Վարսուի պարտութեան պատճառք զորավարի թեթևամտութիւնն ու անհոգութիւնն են եղել: Դրա համար էլ այդ պահից սկսած նա ոչինչ չէր ձեռնարկում առանց խորհրդի հավանութեան՝ լինելով ինքնուրույն դատողութիւններէ տեր մարդ, միշտ հույսն իր վրա դրած, այժմ նա հակառակ սովորութեան իր ռազմական մտահոգացումները կիսում էր շատ մերձավորներէ հետ: Դրա համար էլ նա դրսևորում էր նաև արտակարգ դժգոնութիւն՝ պատրաստվելով անցման Հոենոսի վրայով, նա ճշտութեամբ սահմանեց, թե մթերքից ինչ պետք է վերցնել հետները, և ինքը, կանգնած գետափին, անցումից առաջ ստուգում էր յուրաքանչյուր սայլը, թե արդյո՞ք այնտեղ նախատեսվածից ու անհրաժեշտից զատ ուրիշ բան չկա: (2) Իսկ Հոենոսից այն կողմ նա այնպիսի կլանք էր վարում, որ ստում էր մերկ խոտին նստած, հաճախ քնում առանց վրանի, հաջորդ օրվա բոլոր կարգադրութիւններն աւ բոլոր արտակարգ հանձնարարութիւնները գրավոր էր տալիս հիշեցնելով, որ պարզ շինելու դեպքում դիմեն միայն անձամբ իրեն և ցանկացած ժամանակ, թեկուզ և գիշերը:

19. Զորքերի մեջ նա մեծագույն խստութեամբ էր սլահպանում կարգ ու կանոնը, վերականգնելով հանդիմանանքի և պատժի հին եղանակները՝ նա նույնիսկ անպատվութեամբ պատժեց մի լեգեոնի պետի այն բանի համար, որ մի քանի զինվորների ուղարկել էր ուղեկցելու իր ազատարձակին գետից այն կողմ որս անելիս: Ըսկաստամարտերում նա երբեք հույսը չէր դնում հաջողութեան ու դիպվածի վրա. բայց և այնպես նա սովելի հաճույքով էր ընդունում մաքտը, եթէ նախօրյակին գիշերային աշխատանքի ժամանակ հանկաբժ ճրագը ինքն իրեն շուռ էր գալիս և հանգչում. նա աւում էր, որ այդ նախանշանը փորձված է նրա նախնիներից բոլոր ճակատամարտերում, և ինքը վստահում է դրան: Ի միջի ալլոց, նույնիսկ իր հաջողութիւնների շրջանում քիչ էր մնում կործանվեր ոմն բրուկտերի⁴⁸ ձեռքից՝ սա արդեն սողոսկել էր Տիբերիոսին շրջապատող շքախումբը, բայց հուզմունքը նրան մատնեց, և նա, խոշտանգման ենթարկվելով, խոստովանեց իր հանցավոր մտադրութիւնը:

20. Երկու տարի անց, Գերմանիայից Հոմ վերադառնալով, Տիբերիոսը տանեց հետաձգված տրիումֆը լեգատների ուղեկցութեամբ, որոնք նրա պնդմամբ պարգևատրվել էին տրիումֆային զարդարանքներով: Բայց նախքան դեպի Կապիտոլիում թեքվելը, նա իջավ մարտակառքից և ծունկի իջավ հոր առջև, որը գլխավորում էր հանդիսակատարութիւնը: Պաննոնցիների առաջնորդ Բատոնին⁴⁹ նա պարգևատրեց ճոխ ընծաներով և ուղարկեց Հոավեննա⁵⁰ ի նշան երախտագիտութեան այն բանի, որ մեկ անգամ թույլ էր տվել նրան դուրս սլրծնելու կիրճից, ուր նա շրջապատված էր եղել զորքերի հետ միասին: Ապա նա ժողովրդի համար հազար

տեղանից ճաշկերուէթ կազմակերպեց և յարաքանջութիւն երեք հարյուր սեստերցիում բաժանեց: Ռազմական ավարի միջոցներից եւս առտվածներին նվիրաբերեց Համաձայնութեան տաճարը և հետո իր և եղբոր անունից՝ Կաստորի և Պոլլուքսի տաճարը⁵¹:

21. Կարճ ժամանակ անց կոնսուլներն օրենք մուծեցին, որ նա Օգոստոսի հետ համատեղ կառավարի պրովինցիաները և մարդահամար անցկացնի: Նա հնգամյա զոհամատուցում կատարեց և ուղևորվեց Իլլիրիկում, բայց ճանապարհից իսկույն ետ կանչվեց: Օգոստոսին նա արդեն ուժասպառ գտավ, բայց դեռևս կենդանի, և ամբողջ օրը մնաց նրա հետ առանձին:

(2) Ծս գիտեմ, որ ասեկոսներ կան այն մասին, թե իրր Տիբերիոսի հետ ունեցած զաղտնի զրույցից հետո, երբ նա հեռացել է, ննջարանապետները լսել են Օգոստոսի ձայնը՝ «Խեղճ հռոմեացի ժողովուրդ, ինչպիսի դանդաղ ծամող ծնոտի տակ է ընկնում»: Ինձ անհայտ չէ նաև այն, որ, որոշ տեղեկութիւնների համաձայն, Օգոստոսը բացահայտ և առանց թարցնելու դատապարտում էր Տիբերիոսի դաժան բարբը, որ մեկ անգամ չէր նա Տիբերիոսի մոտենալու ժամանակ ընդհատել շափից դուրս ուրախ կամ թեթևամիտ խոսակցութիւնը, որ նույնիսկ նրան համաձայնեց որդեգրել միայն ի հաճույս կնոջ համառ խնդրանքների և, միգուցե, միայն դրդված սնապարծ այն հույսից, որ նման հաջորդի դեսպում ժողովուրդն ալիլի շուտ կափսոսա իր համար: (3) Բայց և այնպես, ես չեմ կարող հաճատալ, որ նման ամենազգույշ և ամենահեռատես մի կառավարիչ այդպիսի պատասխանատու գործում այդքան անխոհեմ գործեր: Ոչ, ես ենթադրում եմ, որ նա ծանր ու թեթև էր արել Տիբերիոսի բոլոր արժանիքները ու թիրութիւնները և գտել, որ նրա արժանիքները գերակշռում են, — առավել ևս, որ ժողովրդի առջև էլ նա երդում էր տվել որդեգրել Տիբերիոսին պետութեան բարիքի համար և նամակներում մի քանի անգամ կարծիք է հայտնել նրա մասին, որպես ամենափորձված զորավարի և հռոմեական ժողովրդի միակ պատվարի: Ծ՛վ դրա, և՛ մյուսի մասին ես մի քանի օրինակներ կբերեմ այդ նամակներից:

(4) «Ողջ եղիր, ամենասիրելիդ իմ Տիբերիոս, ցանկանում եմ քեզ բարև հաջող մարտնչել հանուն ինձ և հանուն Մուսաների⁵². ողջ եղիր, ամենասիրելիդ իմ բարեկամ, և, երդվում եմ իմ երջանկութեամբ, ամենաքաջդ այր և ամենաբարեխիղճ զորավար»: (5) «Ծս կարող եմ միայն գովաբանել⁵³ քո գործողութիւնները ամառային արշավանքի ժամանակ, թանկագին Տիբերիոս՝ ես քաջ հասկանում եմ, որ այդքան դժվարութիւնների մեջ և զինվորների այդպիսի անհոգութեան պայմաններում անհնարին է ավելի խնամիտ գործել, քան դու ևս գործել: Բոլորը, ովքեր

քեզ հետ են եղել, հաստատում են, որ քո մասին կարելի է խոսել ոտա-
նավորի բառերով՝

Նա, ով միակը արթմնամտությամբ շտկեց գործը»⁵⁴։

(6) «Երբ հարկ է լինում ինձ խորհել որևէ կարևոր բանի մասին, երբ հարկ է լինում որևէ բանի վրա զայրանալ, երդվում եմ, ես կարոտում եմ իմ սիրելի Տիրերիոսին, հիշելով Հոմերոսի փառահեղ տողերը⁵⁵։

Եթե իմ ուղեկիցը չա է, բոցավառ կրակից մեկտեղ
Կվերադառնանք մենք՝ այնքան լի է նրա բանականությունը երևակայությամբ»։

(7) «Երբ ես կարդում կամ լսում եմ այն մասին, թե որքան ես դու Իհհարել անդադրում տքնությունից, թող շանթահարի ինձ աստված, եթե ես ամբողջ մարմնով չեմ դողում քեզ համար։ Աղաչում եմ, պահպանիր քեզ՝ եթե ես ու մայրդ լսենք, որ դու հիվանդ ես, դա կսպանի մեզ, և հոռմեացի ժողովրդի ողջ հզորությունը սպառնալիքի տակ կընկնի։ Առո՞ղջ եմ ես թե ոչ, ինչ կարևոր է, եթե դու առողջ չլինես։ Աղոթում եմ աստվածներին, որ նրանք պահպանեն քեզ մեզ համար և քեզ հղեն ողջություն և՛ այժմ, և՛ հավիտյան, եթե նրանց հոռմեացի ժողովուրդը իսպառ ատելի չէ...»։

22. Օգոստոսի մահը նա գաղտնի պահեց մինչև այն պահը, երբ սպանեցին երիտասարդ Ագրիպպային, որին սպանեց պահպանության համար նրան կցված զինվորական տրիբունը, ստանալով այդ մասին գրավոր հրաման։ Հայտնի չէր, արդյոք այդ հրամանը մեռնող Օգոստոսն էր թողել, որպեսզի իր մահից հետո խոռովության առիթ չլինի, թե՞ Օգոստոսի անունից կիվիան էր այն թելադրել Տիրերիոսի գիտությամբ կամ ոչ։ Տիրերիոսն ինքը, երբ տրիբունը զեկուցեց նրան, որ հրամանը կատարված է, հայտարարեց, որ նման հրաման ինքը չի տվել և որ տրիբունը պետք է պատասխան տա սենատի առջև։ Իհհարկե, սկզբնական շրջանում նա ուզում էր խուսափել ընդհանուր ատելությունից, իսկ գործը շուտով կոծկվեց ու մոռացվեց։

23. Իր տրիբունական իշխանության զորությամբ նա սենատ գումարեց և ուզում էր ճառով դիմել նրան, բայց, ասես ուժ չգտնելով հաղթահարելու վիշտը, հեկեկալով բացականչեց, որ ավելի լավ կլիներ ինքը ոչ միայն ձայնից, այլև կյանքից զրկվեր, և ճառը կարդալու հանձնեց իր որդի Դրուզոսին։ Ապա ներս բերեցին Օգոստոսի կտակը. այն կնքած վկաներից նա կուրիա ներս թողեց միայն սենատորական դասին պատ-

կանող անձանց, մյուսներն իրենց կնիքները պետք է վկայելին մուտքի մոտ: Ազատարձակի կողմից հրապարակված կտակն սկսվում էր այսպիսի բառերով. «Քանզի ճակատագիրը դաժան ինձ զրկեց իմ զավակներ Գայոսից և Լուկիոսից, թող իմ ժառանգը երկու երրորդի շափով լինի Տիբերիոս Կեսարը»: Դրանով առավել ամրապնդվեց կասկածը նրանց մեջ, ովքեր կարծում էին, որ Տիբերիոսին նա իր ժառանգ էր ճանաչել ավելի շուտ անհրաժեշտությունից դրդված, քան թե բարի կամքով, քանի որ նա չէր զսպել իրեն նման ներածական գրելուց:

24. Թեև նա վճռականություն հանդես բերեց գերագույն իշխանությունը⁵⁶ իսկույնեթ ընդունելու և կիրառելու, թեև նա արդեն շրջապատել էր իրեն զինված պահակախմբով՝ տիրակալության երաշխիքով ու նշանով, սակայն խոսքով նա երկար ժամանակ հրաժարվում էր իշխանությունից, խաղալով ամենաանպատկառ մի կատակերգություն՝ մերթ կշտամբանքով ասում էր աղերսող բարեկամներին, թե նրանք չգիտեն էլ, ինչպիսի հրեշ է իշխանությունը, մերթ հրկիմաստ պատասխաններով ու խորամանկ անվճռահանությամբ լարված անգիտության մեջ էր պահում սենատը, որը մերձենում էր նրան ծնկաչոք խնդրանքներով: Ոմանք նույնիսկ կորցրեցին համբերությունը՝ ընդհանուր աղմուկի մեջ ինչ-որ մեկը բացականչեց. «Թող նա կամ կառավարի, կամ հեռանա». ինչ-որ մեկը նրա երեսին հայտարարեց, որ ոմանք հապաղում են անել այն, ինչ խոստացել են, իսկ նա դանդաղում է խոստանալ այն, ինչ արդեն անում է: (2) Վերջապես, ասես կամքին հակառակ, դառն տրտնջանքով նրանց կողմից իր վրա դրվող դժնդակ ստրկությունից, նա ընդունեց իշխանությունը: Բայց այստեղ էլ ջանաց հույս ներշնչել, որ երբևէ վայր կդնի այն. ահա նրա խոսքերը. «... մինչև այն պահը, քանի դեռ ձեզ չի թվա, որ եկել է ժամանակը հանգստություն տալու և իմ ծերությանը»:

25. Նրա տատանումների պատճառը այն վտանգների հանդեպ տաժած երկյուղն էր, որոնք ամեն կողմից սպառնում էին նրան՝ նա մեկ անգամ չէ, որ ասել էր, թե «ես գայլին ականջներից բռնած եմ պահում»⁵⁷: Իսկապես, և՛ Կլեմենտոսը՝ Ագրիպպայի ստրուկը, արդեն ոչ փոքր ջոկատ էր հավաքել, որպեսզի վրեժխնդիր լինի տիրոջ համար, և՛ Լուկիոս Սկրիբոնիոս Լիբոնը⁵⁸, նշանավոր տոհմի պատկանող մի մարդ, գաղտնի հեղաշրջում էր նախապատրաստում, և՛ զորքերի մեջ իսկույն երկու խոռվություն բռնկեց՝ Իլլիրիկումում և Գերմանիայում: (2) Զույգ զորքերն էլ բազմաթիվ արտակարգ պահանջներ ներկայացրին, ամենից առաջ վարձատրության հավասարեցում պրետորականների վարձատրության հետ, իսկ գերմանական զորքերը նույնիսկ չէին ուզում ճանաչել կառավարչին, որին իրենք չէին դրել, և ամբողջ զորությամբ դրդում էին իրենց

պետ Գերմանիկոսին զավթել իշխանութիւնը, շնայած նրա վճռական մերժումին: Հենց այդ վտանգից էլ Տիբերիոսն ամենից շատ էր վախենում, երբ խնդրում էր սենատին իրեն կառավարման⁵⁹ համար մի որևէ քնազավառ նշանակել, որովհետև ամբողջ պետութիւնը մի մարդ ի գորու չէ կառավարել, եթե ոչ օգնականի կամ նույնիսկ օգնականների հետ միասին: (3) Նա նույնիսկ հիվանդ ձեացավ, որպեսզի Գերմանիկոսն ավելի հանգիստ սպասի իր ժառանգութեանը կամ, համենայն դեպս, մասնակցութեանը կառավարմանը: Ճնշելով խռովութիւնները, նա գերի վերցրեց նաև Կլեմենտոսին⁶⁰, խաբէլով նրան խորամանկութեամբ: Իսկ Լիբոնին նա սենատի առջև պատասխանատուութեան կանչեց միայն մեկ տարի անց, շուքենալով շափից դուրս խիստ սկսել իր կառավարումը: Մինչ այդ նա բավարարվում էր միայն նախազգուշական միջոցներով. այսպես, երբ Լիբոնը մյուս քրմերի հետ զոհ էր մատուցում, նա կարգադրեց քրմական դանակի⁶¹ փոխարեն նրան կապարե դանակ տալ, իսկ երբ Լիբոնը նրանից գաղտնի տեսակցութիւն խնդրեց, համաձայնեց խոսել նրա հետ զբոսանքի ժամանակ միայն իր որդի Դրուզոսի ներկայութեամբ, և քայլելիս շարունակ սեղմում էր նրա աջ ձեռքը, ասես հենվելով նրան:

26. Չերբազատվելով, ի վերջո, երկյուղից, սկզբնապես նա իրեն պահում էր որպես լավ քաղաքացի և համարյա թե այնպես հասարակ, ինչպես մի մասնավոր անձ: Բազմաթիվ քարծրագույն պատիվներից նա միայն քչերն ու համեստներն ընդունեց: Երբ նրա ժննդյան օրը համրնկավ Պլեբեյական խաղերին⁶², նա դժվարութեամբ համաձայնեց նշել այն մեկ ավելի մարտակառքով կրկեսային արշավների ժամանակ: Նա արգելել էր իրեն տաճարներ, քրմեր, հոգևոր սպասավորներ նվիրաբերել. նա սոսկ հատուկ թույլտվութեամբ էր թույլատրում զնել պրճաններն ու պատկերները, այն էլ պայմանով, որ զրանք տեղադրվեն ոչ թե աստվածների քանդակների հետ, այլ տաճարի զարդարանքների միջև: (2) Նա արգելեց հավատարմութիւնն ուխտել իր գործերին⁶³, արգելեց սեպտեմբեր ամիսն անվանել «Տիբերիոս», իսկ հոկտեմբերը՝ «Լիվիոս»⁶⁴: Նա մեթեց իմպերատորի կոչումը, հայրենյաց հայր մականունը, կաղնի պսակը դրան վերևում⁶⁵. նույնիսկ Օգոստոսի անունը, թեև նա ստացել էր այն ժառանգաբար, օգտագործում էր միայն թագալիրներին ու կառավարիչներին գրած նամակներում: Այդ ժամանակից նա երեք անգամ էր կոնսուլութիւնն ընդունել՝ մեկ անգամ մի քանի օրով, մյուս անգամ երկը ամսով, երրորդ անգամ, հեռակա կարգով, մինչև մայիսյան իդերը⁶⁶:

27. Հաճոյակատարութիւնից նա այնպես էր գարշում, որ սենատ-

տորններից ոչ ոքի մտա չէր թողնում իր պատգարակի՝ ոչ ողջունելու համար, ոչ էլ գործով: Երբ մի կոնսուլյարիտ⁶⁷, նրանից ներողութուն հայցելով, ուզում էր նետվել նրա ոտքերը, նա այնպիսի թափով նրանից ետ քաշվեց, որ փռվեց մեջքի վրա: Նույնիսկ երբ խոսակցության կամ երկարաշունչ ճառի ժամանակ քծնանք էր լսում, անհապաղ ընդհատում էր խոսողին, նախատում և տեղնուտեղն ուղղում: Երբ ինչ-որ մեկը դիմել էր նրան «տիրակալ»⁸⁶ բառով, նա տեղնուտեղը հայտարարել էր, որ իրեն թող այլևս այդպես չվիրավորեն: Ոմն ուրիշը նրա գործերն անվանել էր «սրբազան» և ասել, որ դիմում է սենատին համաձայն նրա կամքի. նա ուղղել էր նրան և ստիպել «համաձայն նրա կամքի» փոխարեն ասել՝ «ըստ նրա խորհրդի», իսկ «սրբազանի» փոխարեն՝ «կարևոր»:

28. Բայց և՛ անհարգալից վերաբերմունքը, և՛ շարախոսությունը, և՛ իր մասին գրված վիրավորական ոտանավորները նա համբերությունը և աննկուն էր տանում, հպարտությամբ հայտարարելով, որ ազատ տերության մեջ պետք է ազատ լինի և՛ միտքը, և՛ լեզուն: Մեկ անգամ սենատը նրանից պահանջել էր քննություն կատարել նման հանցագործությունների և հանցագործների վերաբերյալ. նա պատասխանել էր. «Մենք չափից դուրս քիչ ժամանակ ունենք, որպեսզի խճճվենք այդ անհամար գործերի մեջ: Եթե դուք բացեք այդ օղելույզը, արդեն չեք կարողանա որևէ այլ բանով զբաղվել՝ այդ առնչությամբ բոլորը ձեզ մոտ քարշ կտան իրենց ճղճիմ վեճերը»: Պահպանվել է նաև նրա՝ սենատում արտասանած այս ճառը, որը լիովին արժանի է քաղաքացուն. «Եթե որևէ մեկը իմ մասին վատ արտահայտվի, ես կաշխատեմ նրան բացատրել իմ բոլոր խոսքերն ու գործերը. իսկ եթե նա համառի, ես նրան կսլատասխանեմ փոխադարձ անբարյացակամությամբ»:

29. Դա առավել ևս հատկանշական էր, որ նա ինքը, դիմելով սենատորներին և՛ միասին, և՛ առանձին-առանձին, իր հարգալիությամբ ու քաղաքավարությամբ անցնում էր համարյա բոլոր ընդունված սահմանները: Մեկ անգամ սենատում, վիճելով Քվինտոս Գատերիոսի հետ, դիմեց նրան. «Ներիր, խնդրում եմ, եթե ես իբրև սենատոր չափից դուրս խիստ արտահայտվեմ քո դեմ...», — և ապա, դիմելով ամբողջ ժողովարանին, ավելացրեց. «Մեկ անգամ չէ, որ ասել եմ և կրկնում եմ, հայր սենատորներ, որ բարի և բարեգործ կառավարիչը, որը ձեզ է պարտական այսքան ընդարձակ և լիակատար իշխանությամբ, պետք է միշտ սենատի, ժամանակ առ ժամանակ՝ ամբողջ ժողովրդի, իսկ երբեմն էլ՝ առանձին քաղաքացիների ծառան լինի, ես չեմ ամաշում այսպես խոսել, որովհետև ի դեմս ձեզ ունեցել եմ և ունեմ թե՛ բարի, թե՛ աղաքամիտ, թե՛ գթասիրտ տերերի»:

80. Նա նույնիսկ հաստատեց որոշ ազատութեան նման մի բան, պահպանելով սենատի և պաշտոնատար անձանց նախկին վեհութիւնն ու իշխանութիւնը: Չկար այնպիսի մի գործ՝ փոքր կամ մեծ, պետական կամ մասնավոր, որի մասին նա չզեկուցեր սենատին՝ հարկերի ու մենաշնորհների, շենքերի կառուցման ու վերանորոգման, նույնիսկ ռազմիկների հավաքագրման ու արձակման կամ լեգեոնների ու օժանդակ զորքերի տեղակայման մասին, նույնիսկ այն մասին, թե ո՞ւմ զորապետութեան ժամկետը երկարացնել կամ շտապ արշավանք հանձնարարել, նույնիսկ այն մասին, թե ինչ և ինչպես պատասխանել թագավորների ուղերձներին: Հեծելազորի մեկ զորապետի, որը մեղադրվում էր կողոպուտի ու բռնութեան մեջ, նա ստիպեց պատասխան տալ սենատի առջև⁶⁹: Նա միշտ մենակ էր մտնում կուրիա, իսկ երբ մեկ անգամ նրան հիվանդ վիճակում բերեցին պատգարակով, նա իսկույն արձակեց սպասավորներին:

31. Երբ որոշ որոշումներ ընդունվում էին հակառակ նրա կամքի, նա դրանից նույնիսկ չէր գանգատվում: Նա գտնում էր, որ նշանակված մագիստրատները չպետք է հեռանան Հռոմից, որպեսզի միշտ պատրաստ լինեն պաշտոն գրավելու, — շնայած դրան, մի նշանակյալ պրետորի սենատը թույլատրեց դեսպանորդի իրավունքներով⁷⁰ մասնավոր ճանապարհորդութիւն կատարել: Մեկ ուրիշ անգամ նա առաջարկեց նոր թատրոն կառուցելու համար Տրեբիա⁷¹ քաղաքին կտակված դրամն օգտագործել ճանապարհի վերանորոգման համար, — բայց և այնպես, նրան չհաջողվեց վերացնել տալ կտակողի կամքը: Մի անգամ սենատը որոշում էր ընդունում երկու կողմերի բաժանված⁷², և նա միացավ փոքրամասնութեանը, լայց նրան ոչ ոք չհետևեց:

(2) Մնացյալ գործերն էլ նա միշտ վարում էր սովորական կարգով, պաշտոնատար անձանց միջոցով: Կոնսուլներն այնպիսի հարգանք էին վայելում, որ մեկ անգամ Աֆրիկայից ուղարկված դեսպանորդները նրանց գանդատվեցին հենց Տիբերիոսից այն բանի համար, որ վերջինս դանդաղում էր լուծելու գործը, որի համար նրանք ուղարկված էին: Եվ դա զարմանալի չէր՝ չէ՞ որ բոլորը տեսնում էին, թե ինչպես է նա կոնսուլների առջև ոտքի կանգնում և նրանց ճանապարհ տալիս: 32. Կոնսուլյարիս-զորապետներին նա նկատողութիւն արեց այն բանի համար, որ իրենց գործերի համար սենատին հաշվետվութիւն չէին տվել, և այն բանի համար, որ նրանք խնդրել էին նրան՝ բաժանելու իրենց զինվորների պարզները, ասես իրենք դրա իրավունքը չունեին: Մեկ պրետորի նա գովաբանեց այն բանի համար, որ պաշտոնն ստանձնելիս սա, ըստ հին սովորութեան, ժողովրդի առջև արտասանած ճառում հարգանք էր

մատուցել իր նախորդներին⁷³: Որոշ նշանավոր մարդկանց թաղման թափորները նա ուղեկցում էր մինչև բուն խարույկը:

(2) Նման չափավորութուն դրսևորեց նա նաև փոքր անձանց ու գործերի նկատմամբ: Հոռոս քաղաքի կառավարիչները մեկ անգամ նրան պաշտոնական նամակ էին ուղարկել առանց սովորական հղրափակիչ հավելման⁷⁴— նրանց կանչեց իր մոտ, բայց ոչ մի բառով չկըշտամբեց, այլ միայն նամակը վերադարձրեց հավելագրելու համար և նրանց ետ դարձրեց: Դիոգենես Քերականը Հոռոսում գիտական վեճեր էր կազմակերպում ամեն շաբաթ օր⁷⁵, մեկ անգամ Տիբերիոսը եկավ նրան լսելու անպատեհ ժամի, սակայն Դիոգենեսը շքնդունեց նրան և ստրուկի միջոցով առաջարկեց յոթ օր հետո գալ: Հետագայում, արդեն Հռոմում, Դիոգենեսն ինքը եկավ նրա դուռը՝ ողջունելու համար. բայց Տիբերիոսը բավարարվեց նրանով, որ կարգադրեց Դիոգենեսին ներկայանալ յոթ տարի հետո: Իսկ այն փոխարքաներին, որոնք նրան խորհուրդ էին տալիս պրովինցիալները ծանրաբեռնել հարկերով, նամակով պատասխանեց, որ լավ հովիվը ոչխարներին խուզում է, բայց նրանց կաշին չի քերթում⁷⁶:

33. Աստիճանաբար նա սկսեց իր մեջ զգացնել տալ կառավարիչը: Երկար ժամանակ նրա վարքագիծը, թեև փոփոխական էր, բայց ավելի հաճախ բարյացակամութուն և պետության օարօրության նկատմամբ հոգատարութուն էր արտահայտում: Սկզբնապես նա միջամտում էր միայն, որպեսզի կանխի շարաշահումները: Այսպես, նա վերացրեց սենատի որոշ որոշումներ. դատարանում դատաքննության ժամանակ նա մագիստրատներին հաճախ խորհուրդներ էր տալիս, դրա համար նստելով տախտակամածին նրանց դիմաց կամ կողքին. և եթե լուրեր էին պատվում, թե պատասխանողներից որևէ մեկը կարող է մեքենայութունների միջոցով խուսափել պատժից, նա անսպասելիորեն հանդես էր գալիս և կամ իր տեղից, կամ նախագահական բարձրությունից դատավորներին հիշեցնում օրենքների մասին, երդման մասին և դատաքննվող հանցագործության ծանրության մասին:

Հասարակական բարքերը, որոնք խախտվել էին անփութությունից կամ վատ սովորություններից, նա փորձեց ուղղել: 34. Նա կրճատեց թատերական ներկայացումների և գլադիատորական մարտերի համար կատարվող ծախսերը, պակասեցնելով դերասանների ոտճիկը և գլադիատորների թիվը: Դառնությամբ գանգատվելով այն բանից, որ կորնթոսյան սկահակները վաճառվում են շլված գներով, իսկ երեք կարմրաբեղիկներ⁷⁷ համար մեկ անգամ երեսուն հազար է վճարվել, նա առաջարկեց սահմանափակել կարասիքի վրա կատարվող ծախսերը, իսկ սենատին հանձ-

նարարեց ամեն տարի կարգավորել շուքայական- գնեիրը, գինետներին ու պանդոկներին պետք է խստորեն հետևեին էդիկները, թույլ շտալով այնտեղ նույնիսկ թխվածքներ վաճառքի հանել⁷⁸: Իսկ որպեսզի սեփական օրինակով էլ ժողովրդին խնայողության դրդի, նա ինքը հրավիրովի ճաշկերույթներին մատուցում էր երեկվա և արդեն կիսատած կերակուրներ, օրինակ, կես վարազ, հավատացնելով, որ կես վարազի համը ոչնչով չի տարբերվում ամբողջականի համից: (2) Նա արգելեց ողջունի համբույրները⁷⁹, իսկ ընծաների փոխանակութուն թույլատրեց միայն նոր տարուն⁸⁰: Նա ինքը բոլոր նվերների համար պարգևահատույց էր լինում քառակի շափով, բայց երբ նրան մի ամբողջ ամիս շարունակում էին անհանգստացնել նրանք, ովքեր չէին հասցրել նվերները տունին մատուցել, նա այդ արդեն տանել չէր կարողանում:

35. Այն անառակ մատրոնաներին, որոնց համար հասարակական մեղադրողներ չէին գտնվում, նա կարգադրել էր, ըստ նախնիների սովորույթի, որ դատեն մերձավոր ազգականները: Մի հոռմեացի հեծյալի, որը ժամանակին երդվել էր բնավ երբեք չամուսնալուծվել կնոջից, իսկ հետո նրան բռնել էր փեսայի հետ շնանալիս, նա ազատեց երդումից: (2) Կային ամոթը կորցրած կանայք, որոնք հրաժարվում էին մատրոնաների իրավունքներից ու արժանապատվությունից, իրենք իրենց հայտարարելով պոռնիկներ, որպեսզի խուսափեին օրենքների պատժից⁸¹. Կային բարձր խավերի պատկանող ցոփ պատանիներ, ովքեր կամովին ենթարկվում էին խայտառակ դատավճռի, որպեսզի ելույթ ունենային բեմում ու կրկեսի հրապարակում, հակառակ սենատի որոշման. և՛ նրանց, և՛ մյուսներին բոլորին նա դատապարտեց արտաքսումի, որպեսզի ոչ ոք փրկութուն չորոնի նման խորամանկություններով: Մի սենատորի նա զրկեց տոգայի վրայի ժապավենից, երբ իմացավ, որ հուլիսյան կալենդներից⁸² առաջ նա մեկնել էր իր այգիները կալենդներից հետո Հռոմում ավելի էժան տուն վարձելու նպատակով: Մեկ ուրիշ սենատորի նա զրկեց քվեստուրայից այն բանի համար, որ նա կին էր առել գերատեսչութունների վիճակահանությունից առաջ և նրանից ամուսնալուծվել էր հաջորդ օրը⁸³:

36. Օտարերկրյա կրոնական արարողությունները և հատկապես եգիպտական ու հրեական ծեսերը նա արգելեց⁸⁴. նրանց, ովքեր նվիրված էին այդ սնապաշտություններին, ստիպեց այրել իրենց սրբազան զգեստները ամբողջ սպասքի հետ միասին. երիտասարդ հրեաներին զինվորական ծառայության պատրվակով ուղարկեց ծանր կլիմա ունեցող պրովինցիաները⁸⁵. նրանց մնացյալ ցեղակիցներին կամ հավատակիցներին անհնազանդության համար արտաքսեց Հռոմից՝ մշտնջենական

ստրկութեան մատնելու սպառնալիքի տակ: Նա վտարեց նաև աստղա-
գուշակներին, բայց նրանց, ովքեր ներում էին խնորրում և խոստանում
թողնել իրենց արհեստը, ներում էր շնորհում:

37. Ամենից ալելի նա հոգ էր տանում ելուզակութիւնից, կողո-
պուտներից և ապօրինի հուզումներից անվտանգութիւնն ապահովելու մա-
սին: Նա ողջ Խոտալիայով մեկ նախնիների համեմատութեամբ ալելի խիտ
զորակետեր տեղադրեց: Հոռմում նա ճամբար կազմակերպեց պրետորա-
կան կոհորտաների⁸⁶ համար, որոնք մինչ այդ մշտական կացարաններ
չունեին և գրանցվում էին ըստ օթևանատեղերի: (2) ժողովրդական հու-
շումները նա ջանում էր կանխել մինչև ընդհարումը, փակ ծագածները
խատորեն հնազանդեցնում էր: Մեկ անգամ թատրոնում գծութիւնը հա-
սով արյունահեղութեան. այնժամ նա արսոր ուղարկեց թե՛ հրահրողնե-
րին և թե՛ դերասաններին, որոնց պատճառով սկսվել էր վեճը, և ոչ մի
աղերսանքով ժողովուրդը չկարողացավ հասնել նրանց վերադարձին:
(3) Պղլենցիայում⁸⁷ խաժամուժը հրապարակից բաց չէր թողնում ավագ
ցենտորիոնի⁸⁸ աճյունը հուղարկավորող թափորը այնքան ժամանակ,
մինչև որ ուժով ժառանգներից մեծաքանակ դրամ չպսկեց գլադիատորական
հանրիտախաղերի համար— այնժամ, նա, լմատնելով իր մտադրութիւն-
ները, մի կոհորտա բերել տվեց Հոռմից, մյուսը՝ Կոտտիյան թագավորու-
թեցունից, և նրանք հանկարծակի, քենքերը մերկացրած, հնչեցնելով փո-
ղբը, երկու կողմից մտան քաղաք և խաժամուժի ու դեկորիոնների մեծ
մասին մատնեցին վշտնջենական քանտարկութեան: Ապաստանի իրա-
վունքը և սովորույթը նա ոչնչացրեց ամենուր, որտեղ այն դեռևս գոյու-
թիւն ունեւր⁸⁹: Այն բանի համար, որ Կիզիկի թնակիչները բռնութիւն
գործ գնելով վիրավորել էին Հոռմի քաղաքացիներին, նա զրկեց նրանց
քաղաքը այն ազատութիւնից, որին այն արժանացել էր դեռևս Միհրդ-
րատյան սրտերազմին:

(4) Թշնամիների գործողութիւնների դեմ նա այլևս ոչ մի անգամ
աղշավանքի չէլավ և նրանց հնազանդութեան էր բերում լեգատների օգ-
նութեամբ, այն էլ միայն ծայրահեղ դեպքում և զգուշութեամբ: Թշնամա-
բար տրամադրված և կասկածվող թագավորներին նա հնազանդ էր պա-
հում ավելի շատ սպառնալիքներով ու կշտամբանքներով, քան ուժով.
ոմանց նա փաղաքշաքով ու խոստումներով գայթակղում բերում էր իր
մոտ և բաց չէր թողնում. օրինակ, գերմանացի Մարտրոպոլոսին «Թրակիա-
յի Ռասկոպորիդեսին վրամ Կասպոգովկիայի Արքեղայոսին⁹⁰, որի թագա-
վորութիւնը նա նույնիսկ պրովինցիայի վերածեց:

38. Իշխանութիւնն ընդունելուց հետո առաջին երկու տարին նա
Հոռմից ոչ մի քայլ չհետացավ. ասենք հետո էլ նա միայն հազվադեպ մի

քանի օրով էր մեկնում, այն էլ միայն շրջակա փոքր քաղաքները, Ան-
ցիումից ոչ հեռու Չնայած դրան, նա հաճախ էր հայտարարում պրովին-
ցիաները և զորքերը շրջագայելու իր մտադրության մասին. գրեթե ամեն
տարի նա պատրաստվում էր արշավանքի, հավաքում էր սայլակառքեր,
մունիցիպալներում և գաղութներում պարենամթերքի պաշարներ էր կու-
տակում և նույնիսկ թույլատրում էր ուխտ կատարել նրա բախտավոր
մեկնումի և վերադարձի համար: Դրա համար նրան սկսեցին կատակով
«Կալլիպիդես»⁹¹ անվանել, որը, ըստ հունական առածի, վազում է ու
վազում, բայց մի բազկաչափ էլ տեղից չի շարժվում:

39. Բայց երբ նա կորցրեց զույգ որդիներին, — նրանցից Դերմանի-
կոսը վախճանվեց Ասորիքում, իսկ Դրուզոսը՝ Հռոմում, — նա մեկնեց
առանձնացում փնտրելու Կամպանիայում: Համարյա բոլորն այն ժամա-
նակ մտածում էին և լիակատար համոզվածությամբ ասում⁹², որ նա ար-
դեն Հռոմ չի վերադառնա և շուտով կմահանա: Ե՛վ մեկը, և՛ մյուսը գրե-
թե կատարվեց: Նա այլևս Հռոմ չվերադարձավ, իսկ մի քանի օր անց,
երբ ճաշում էր Տարրացիների մոտ գտնվող «Քարանձավ» անունով վիլ-
յայում, առաստաղից հանկարծ վիթխարի քարեր թափվեցին կարկուտի
պես՝ շատ սեղանակիցներ և ծառաներ ճզմվեցին, բայց նա, հակառակ
բոլոր սպասելիքների, փրկվեց⁹³:

40. Շրջագայելով Կամպանիայում, որտեղ նա Կապույայում օժեց
Կապիտոլիումը⁹⁴, իսկ Նոլայում՝ Օգոստոսի տաճարը, որը նրա ճանա-
պարհորդության պատրվակն էր, նա ուղևորվեց Կապրի կղզին, որը նրա
համար ամենից շատ հրապուրիչ էր այն բանով, որ այնտեղ կարելի էր
ափ իջնել միայն մի փոքր տեղում, իսկ մյուս կողմերից կղզին շրջա-
փակված էր բարձր զառիթափ ժայռերով և ծովի խորությամբ: Ճիշտ է,
աննահանջ խնդրանքներով ժողովուրդը իսկույն հասավ նրա վերադար-
ձին, որովհետև Ֆիդենքում դժբախտություն էր տեղի ունեցել՝ զլադիա-
տորական խաղերի ժամանակ փլվել էր ամֆիթատրոնը և ավելի քան
քսան հազար մարդ էր զոհվել: Նա փոխադրվեց մայրցամաք և բոլորին
թույլ էր տալիս գալ իր մոտ, առավել ևս, որ դեռ Հռոմից մեկնելիս նա
էդիկտով արգելել էր անհանգստացնել իրեն և ամբողջ ճանապարհին ոչ
ոքի մոտ չէր թողնում:

41. Բայց վերադառնալով կղզի, նա վերջնականապես թողեց բոլոր
պետական գործերը: Այլևս չէր համարում հեծյալների դեկուրիաները⁹⁵,
չէր նշանակում ոչ պրեֆեկտներ⁹⁶, ոչ էլ զորական տրիբուններ, չէր փո-
խում պրովինցիաների տեղապահներին. Իսպանիան և Ասորիքը մի քա-
նի տարի մնացին առանց կոնսուլական լեգատների⁹⁷, Հայաստանը գրու-
վեցին պարթևները, Մյոզիան՝ դաքերն ու սարմաթները, Գալիան ամա-

յացնում էին գերմանացիները. նա դրան ուշադրութիւն չէր դարձնում՝
ի մեծ համոթ և ոչ նվազ վնաս պետութեանը:

42. Ավելին, այստեղ, օգտվելով մենութեան ազատութիւնից, ասես
անհասանելի հասարակութեան հայացքին, նա միանգամից ազատութիւն
տվեց իր մի կերպ թաքցրած արատներին: Սակայն դրանց մասին ես պետք
է պատմեմ մանրամասն և ամենասկզբից:

Դեռևս սկսնակ ժամանակ գինու նկատմամբ տաժած անսահման
կրքի համար ճամբարներում նրան անվանում էին ոչ թե Տիբերիոս, այլ
«Բիբերիոս», ոչ թե Կլավդիոս, այլ «Կալդիոս», ոչ թե Ներոն, այլ «Մե-
րոն»⁹⁸: Հետո, արդեն իշխանութեան գլուխ անցած ժամանակ, արդեն
զբաղված լինելով հասարակական բարքերն ուղղելով, մի անգամ երկու
օր ու գիշեր անընդմեջ իրեն շատակերութեան ու հարբեցողութեան տվեց
Պոմպոնիա Փլակքոսի և Լուկիոս Պիզոնի⁹⁹ հետ. նրանցից մեկին նա
տեղնուտեղը նշանակեց Հոմի պրեֆեկտ, մյուսին՝ Ասորիքի տեղապահ,
և նշանակման մասին տված հրամաններում նրանց մեծարում էր որպես
իր սիրելիագույն ու անբաժան բարեկամների: (2) Մերոնի անառակ ու
շռայլ վատնիչ Ցեստիոս Գալլոսին, որին դեռևս Օգոստոսն էր նշավալել
անպատվութեամբ, նա բոլորի ներկայութեամբ սենատում փնովեց, իսկ
մի քանի օր անց ինքը դնաց նրա մոտ ճաշկերույթի, հրամայելով, որ սա
ոչինչ չփոխի ու չվերացնի սովորական ճոխութիւնից, և որ սեղանը մերկ
աղջիկներ սպասարկեն: Պրետորներ նշանակելիս նա մի շնչին հայցողի
գերադասութիւն տվեց ազնվատոհմիկների նկատմամբ այն քանի հա-
մար, որ սա խնջույքի ժամանակ իր հրավերով խմել էր մի ամբողջ ամ-
ֆորա¹⁰⁰ գինի: Ագելլիոս Սաբինային որպէս պարգև նա երկու հարյուր
հազար սեստերցիում տվեց մի երկխոսութեան համար, որում վիճարա-
նում էին սպիտակ սունկը, ճանճորսը, ոստրեն ու կեռնեխը: Վերջապէս,
նա սահմանեց վայելքների կարգադրիչի նոր պաշտոն և այդ պաշտոնին
նշանակեց հոմեացի հեծյալ Տիտոս Ցեզոնիոս Պրիսկոսին:

43. Բայց Կապրիում, իրեն գտնելով մենութեան մեջ, նա հասավ այն
բանին, որ հատուկ ննջասենյակներ էր պահում՝ գաղտնի անառակութեան
բներ: Ամեն կողմից հավաքված բազում աղջիկներ ու տղաներ— նրանց
մեջ էին նաև հրեշավոր հեշտանքների այն հնարողները, որոնց նա
«սպինտրիաներ» էր անվանում,— փոխնիփոխ երեքական հոգով զուգա-
վորվում էին միմյանց հետ, այդ տեսարաններով գրգռելով նրա մարող
տոփանքը: (2) Այս ու այնտեղ տեղադրված ննջարանները նա զարդարել
էր ամենաանվայելուչ նկարներով ու քանդակներով և այնտեղ դրել էլե-
փանդիտայի գրքերը, որպէսզի ամեն մեկը իր աշխատանքում ունենար
հանձնարարված նմուշը: Նույնիսկ անտառներում ու պուրակներում

ամենուր նա սարքել էր տվել Վենեթացի տեղեր, որտեղ քարանձավներում ու ժայռերի մեջ զույգ սեռի երիտասարդները բոլորի առջև պատկերում էին այժամարդերի¹⁰¹ ու հավերժահարսերի: Դրա համար արդեն նրան ամենուր ու բացահայտ սկսեցին «այծ» անվանել, այլափոխելով կղզու անվանումը¹⁰²:

44. Բայց նա տոշորվում էր է՛լ ավելի նողկալի ու ամոթալի արատով՝ այդ մասին լսելն ու ասելն իսկ մեղք է, բայց առավել ևս դժվար է դրան հավատալը: Նա պահում էր ամենանուրբ տարիքի տղաների, որոնց իր ձկնիկներն էր անվանում և որոնց հետ զվարճանում էր անկողնում¹⁰³: Նմանատեսակ տուփանքի նա հակված էր և՛ ի բնե, և՛ ծերությունից: (2) Դրա համար էլ կտակով նրան ավանդված Պատրիասիոսի նկարը, որը պատկերում էր Մելեագրոսի և Ատալանտայի զուգավորումը, նա ոչ միայն ընդունեց, այլև դրեց իր ննջարանում¹⁰⁴, թեև նրան առաջարկվում էր գրա փոխարեն ստանալ գրամով մեկ միլիոն, եթե նկարի նյութը կշփոթեցնի նրան: Ասում են, որ նույնիսկ մեկ անգամ զոհ մատուցելիս այնպես գրգռվեց բուրվառակիր տղայի թովչանքից, որ շկարողացավ դիմանալ և ծեսից հետո գրեթե անմիջապես նրան մի կողմ տարավ և պրղծեց, հավասարապես և նրա եղբորը՝ սրնզահարին. բայց երբ դրանից հետո սրանք սկսեցին միմյանց սլախարակել անպատվության համար, նա կարգադրեց ջարդոտել նրանց սրունքները:

45. Ծանակում էր նա նաև կանանց, նույնիսկ ամենաազնվատոհմիկներին. ամենից լավ դա ցույց է տալիս ոմն Մալլոնիայի կործանումը: Նա ստիպեց սրան անձնատուր լինել, բայց շկարողացավ կնոջից ստանալ մնացյալ բոլորը. այնժամ նրան հանձնեց մատնիչներին, բայց դատարանում էլ չէր դադարում հարցնել, թե նա չի՞ զղջում արդյոք: Վերջապես, Մալլոնիան նրան բարձրաձայն անվանեց մազոտ ու գարշահոտ, ցոփ երախով ծերուկ, դուրս վազեց դատարանից, նետվեց տուն ու դաշունահարեց իրեն: Դրանից հետո էլ բերնեբերան անցավ ատելլանայի այն տողը, որն աղմկալից ծափահարություններով ընդունվեց առաջին իսկ ներկայացման ժամանակ, «Ծերուկ այծը լպստում է էգ այծիկներին»:

46. Դրամի հարցում նա խնայող ու ժլատ էր: Արշավանքների և ուղևորությունների ժամանակ իր ուղեկիցներին կերակրում էր, բայց աշխատավարձ չէր վճարում: Միայն մեկ անգամ առատաձեռն գտնվեց նրանց նկատմամբ, այն էլ խորթ հոր հաշվին. առանձնացնելով նրանց ըստ արժանիքի երեք կարգի, առաջին կարգին բաժանեց վեց հաշյուր հազար, երկրորդին՝ չորս հարյուր հազար, երրորդին՝ երկու հարյուր հա-

զար. բայց վերջիններին անվանում էր նույնիսկ ոչ թե «իմ բարեկամները», այլ «իմ հույները»¹⁰⁶,

47. Իր կառավարման ժամանակ նա ոչ մի հոյակերտ շինություն չկառուցեց՝ նույնիսկ սկսելով Օգոստոսի տաճարի կառուցումը և Պոպեոսի թատրոնի վերականգնումը, նա այնքան տարիների ընթացքում գրանթ ավարտին չհասցրեց¹⁰⁷. ոչ մի անգամ խաղեր չկազմակերպեց, իսկ ուրիշների կազմակերպածներին համարյա երբեք չէր լինում, որպեսզի իրենից որևէ բան չպահանջեն, ինչպես որ մեկ անգամ նրան ստիպել էին ազատ արձակել կատակերգակ դերասան Ակցիոսին:

Մի քանի սենատորների, որոնք կարիքի մեջ էին, նա օգնեց, բայց մնացյալներին չօգնելու համար հայտարարեց, որ օգնություն ցույց կտա միայն նրանց, ովքեր սենատին հարգելի պատճառներ կնհրկայացնեն իրենց չթավորության մասին: Դրանից հետո շատերն ամոթից ու համեստությունից ընկրկեցին. նրանց մեջ էր նաև հռետոր Քվինտոս Հորտենզիոսի թոռը՝ Հորտալը, որը ի հաճույս Օգոստոսի¹⁰⁸ շորս երեխա էր ծնել, լինելով խիստ համեստ ունեցվածքի տեր:

48. Ժողովրդին նա բարեգործություն արեց սոսկ երկիցս՝ մեկ անգամ այն ժամանակ, երբ փոխարինարար երեք տարով առանց տոկոսի բաժանեց հարյուր միլիոն սեստերցիում, մյուս անգամ, երբ փոխհատուցեց հրդեհի ժամանակ Յելիումի բլրի վրա այրված եկամտարեր տների մի քանի տերերի կրած վնասները: Այդ միջոցառումներից առաջինը նա ստիպված եղավ ձեռնարկել, երբ ծայրահեղ դրամազրկության ժամանակ ժողովուրդը օգնություն էր պահանջում և երբ սենատի հրամանագրերն այն մասին, որ պարտք տվողները ունեցվածքի երկու երրորդը ներդնեն հողի մեջ, իսկ պարտապանները վճարեն պարտքի երկու երրորդը, արդեն օդնել չէին կարող¹⁰⁹: Երկրորդը նա ձեռնարկեց, որպեսզի մեղմացնի ծանր աղետը. բայց այդ բարեգործությունն այնպիսի ծառայություն համարեց, որ հրամայեց Յելիումի բլուրը վերանվանել Օգոստոսի բլուր:

(2) Նա կրկնապատկեց Օգոստոսի դորքին կտակած նվերները¹¹⁰, բայց այլևս ոչ մի բաշխում չկատարեց՝ միայն պրևտորականներին նա հազարական դինար տվեց այն բանի համար, որ Սեյանոսին չէին աջակցել, և Ասորիքի լեզեոններին որոշ պարգևներ տվեց այն բանի համար, որ միայն նրանք իրենց նշանների վրա չէին դրել Սեյանոսի պատկերը: Անգամ վետերաններին նա հազվադեպ էր թոշակի ուղարկում, քանզի նրանց ծերությունը թույլ էր տալիս սպասել նրանց մահվանը, իսկ նրանց մահը՝ խնայել դրամը¹¹¹: Պրովինցիաներին նույնպես նա երբեք

• գնություն ցույց չէր տալիս, բացի Ասիայից, ուր մի քանի քաղաք քարուքանդ էին եղել երկրաշարժից¹¹²։

49. Ժամանակի ընթացքում նա բացահայտ դրամաշորթության անցավ։ Բոլորին հայտնի է, որ Գնեսու Լենտուլոս Ավգուրոսին, մի խիստ հարուստ մարդու, նա սպառնալիքներով ու վախեցնելով ինքնասպանության հասցրեց, հուսալով նրա միակ ժառանգը դառնալ։ Լեպիդային, ամենաազնվատոհմիկ մի կնոջ, նա մահվան դատապարտեց ի հաճույս Քվիրինիոսի՝ հարուստ ու ազնվատոհմիկ մի կոնսուլյարիսի, որն ամուսնալուծվել էր Լեպիդայից քսան տարվա ամուսնությունից հետո և մեղադրում էր կնոջը նրանում, թե ժամանակին նա ուզեցել է թունավորել իրեն։ Գալլիայում, Իսպանիայում, Ասորիքում և Հունաստանում նա տեղական կառավարիչներից խլում էր ունեցվածքը ամենադատարկ ու ամենաանպատկառ զրպարտանքներով՝ ոմանք միայն այն բանում էին մեղադրվում, որ իրենց ունեցվածքի մի մասը պահում էին կանխիկ դրամով¹¹³։ Շատ քաղաքներ և մասնավոր անձինք զրկվեցին հինավուրց առավելություններից, հանքերից ստացվող եկամուտներից¹¹⁴, հարկային իրավունքներից։ Նույնիսկ պարթևական թագավոր Ոնոնին, որը արտաքսվել էր ցեղակիցներից և վիթխարի գանձարանով ապաստան էր փնտրում Անտիոքում՝ հոռմեացի ժողովրդի պաշտպանության ներքո, նա ուխտադրուծ կողոպտեց ու սպանեց։

50. Իր ատելությունն ազգականների նկատմամբ նա ամենից առաջ ուղղեց եղբոր՝ Դրուզոսի դեմ, մատնելով նրա նամակը, որտեղ սա առաջարկում էր Օգոստոսին հարկադրել վերականգնելու հանրապետությունը¹¹⁵։ Ապա այն զգացին նաև մնացյալները։ Յուլիային՝ իր աքսորված կնոջը, ո՛չ աջակցություն էր ցույց տալիս, ո՛չ էլ ցավակցություն արտաքսման՝ նրա աղետներից ամենափոքրի համար. ավելին, եթե հայրը նրան բանտարկել էր միայն քաղաքում, ապա նա, դրան ավելացրած, արգելեց կնոջը տանից դուրս գալ և մարդկանց հանդիպել. նույնիսկ հոր՝ նրան բաժին հանած ունեցվածքից, նույնիսկ ամենամյա ապրուստի միջոցներից զրկեց, վկայակոչելով ընդհանուր օրենքը՝ չէ՞ որ այդ մասին Օգոստոսն իր կտակում չէր հիշատակել¹¹⁶։

(2) Լիվիան՝ մայրը, նրա համար բեռ դարձավ՝ թվում էր, թե նա հավակնում է որդու հետ հավասար իշխանության։ Նա սկսեց խուսափել մոր հետ հաճախակի հանդիպումներից և առանձնության մեջ երկար զրույցներից, որպեսզի շմտածեին, թե ինքը նրա խորհուրդներով է դեկավարում։ Իսկ նա դրանց կարիքն ուներ և հաճախ էր օգտվում։ Երբ սենատը նրան առաջարկեց անվանել ոչ միայն «Օգոստոսի որդի», այլև «Լիվիայի որդի», նա դրանից խորապես վիրավորվեց։ (3) Դրա համար

էլ թույլ չտվեց, որ մորը մեծարեն որպես «հայրենյաց մայր» և պետութ-
յան կողմից մեծ պարգևներ մատուցեն. ընդհակառակն, նա մեկ ան-
գամ չէր հորդորել մորը շփոթամտելու կարևոր գործերին, ինչը կանանց
վայել չէ, հատկապես երբ իմացավ, որ Վեստայի տաճարի մոտ տեղի
ունեցած հրդեհի ժամանակ մայրը, ինչպես լինում էր ամուսնու օրոք,
անձամբ հայտնվել էր դիպվածի վայրում և ժողովրդին ու զինվորներին
կոչ արել ավելի փութկոտ գործել: 51. Շուտով նրանց թշնամությունը
բացահայտ դարձավ՝ դրա պատճառը, ասում են, այս էր: Լիվիան շարու-
նակ համոզում էր նրան դատական դեկուրիայում գրանցել մի մարդու,
որը նոր էր միայն քաղաքացիութուն ստացել, իսկ որդին համաձայն էր
միայն այն պայմանով, որ ցուցակում նշվի՝ «մոր պնդմամբ»: Այնժամ
Լիվիան, զայրացած, նվիրական տեղից¹¹⁷ հանեց և հրապարակեց Օգոս-
տոսի որոշ հին նամակներ, ուր նա գանգատվում էր որդու դաժանու-
թյունից ու կամակորությունից: Տիրերիոսն անշափ վիրավորված էր, որ
այդ նամակներն այդքան երկար պահպանվել են և այդպիսի շարության
են ուղղվել իր դեմ. ոմանք նույնիսկ ենթադրում են, որ թերևս դա էր նրա
հեռանալու գլխավոր պատճառը: (2) Համենայն դեպս, նրա մեկնումից
մինչև մոր մահն ընկած երեք տարիների ընթացքում նա մոր հետ մի-
այն մեկ անգամ էր հանդիպել, միայն մեկ օր և սոսկ մի քանի ժամ: Նա
հետո էլ շայցելեց մորը, երբ վերջինս հիվանդացել էր, և ստիպեց զուր
սպասել իրեն, երբ մայրը մահացավ, այնպես որ նրա՝ դիակը թաղվեց
միայն շատ օրեր անց, արդեն քայքայվող ու նեխվող վիճակում: Նա ար-
գելեց աստվածացնել մորը, հավատացնելով, որ այդ է եղել նրա կամ-
քը: Մոր կտակը նա անվավեր հայտարարեց: Մոր բոլոր բարեկամների
ու մերձավորների հետ, ներառյալ նրանց, որոնց մայրը մահվան մահ-
ճում կտակել էր թաղել իրեն, նա շատ շուտով հաշվեհարդար տեսավ,
իսկ նրանցից մեկին, մի հոռմեացի հեծյալի, նույնիսկ աքսորեց ջուր
հանելու¹¹⁸:

52. Իր զույգ որդիների՝ ո՛չ հարազատի՝ Դրուզոսի, ո՛չ էլ որդեգրա-
ծի՝ Գերմանիկոսի նկատմամբ նա երբեք հայրական սեր չէր տածել:
Դրուզոսից գարշում էր նրա արատների համար, որովհետև թեթևամիտ
ու անառակ կյանք էր վարում¹¹⁹: Անգամ նրա մահը հորը հարկ եղած
վիշտը չպատճառեց՝ թաղումից գրեթե անմիջապես հետո նա վերադար-
ձավ սովորական գործերին, արգելելով երկարատև սուգը: (2) Իլիոնից¹²⁰
եկած դեսպանորդները նրան ցավակցութուն հայտնեցին մյուսներից մի
փոքր հետո, իսկ նա, ասես վիշտն արդեն մոռացել էր, հեգնանքով պա-
տասխանեց, որ ինքն էլ իր հերթին է նրանց ցավակցում՝ չէ որ նրանք
զրկվել են իրենց լավագույն համաքաղաքացի Հեկտորից: Գերմանիկոսին

նա մինչև այն աստիճան էր ուզում նվաստացնել, որ նրա փառավորագ գույն գործերը հայտարարում էր անօգուտ, իսկ ամենափայլուն հաղթանակները դատապարտում որպես կործանարար պետության համար: Իսկ երբ Գերմանիկոսն անսպասելիորեն և սոսկալի անբերրիության առիթով հայտնվեց Ալեքսանդրիայում¹²¹, դրա համար թույլտվություն չխընդրելով, նա սենատին գանգատ բերեց Գերմանիկոսի վրա: (3) Նույնիսկ ենթադրում են, որ Գնեսու Պիզոնի՝ Ասորիքի տեղապահի¹²², ձեռքով Գերմանիկոսի մահվան մեղավորը նա էր. ոմանք կարծում են, որ շուտով դատի տրված Պիզոնը կարող էր վկայակոչել իր ստացած կարգադրությունները, եթե դրանք տրված չլինեին առանց վկաների¹²³: Դրա համար էլ շատ տեղերում մակագրություններ հայտնվեցին, իսկ գիշերները անդադրում բղավոցներ էին լսվում՝ «Վերադարձու մեզ Գերմանիկոսին»: Եվ այդ կասկածը Տիրերիոսը միայն ամրապնդեց, դրանից հետո դաժան հաշվեհարդար տեսնելով Գերմանիկոսի կնոջ ու զավակների հետ:

ԾՅ. Ամուսնու մահից հետո նրա հարսը՝ Ագրիպպինան, սկսեց ինչ-որ բանից շափից դուրս համարձակ գանգատվել¹²⁴, — նա ընդհատեց նրան բռնելով ձեռքը և արտասանելով հունական մի ոտանավոր¹²⁵. «Դու, դուստրս, վիրավորա՞նք ես համարում, որ չես թագավորում»: Այդ պահից ի վեր նա Ագրիպպինային զրույցի չէր արժանացնում: Մեկ անգամ ճաշի ժամանակ նա խնձոր մեկնեց հարսին, իսկ սա չհամարձակվեց ճաշակել այն, — դրանից հետո Տիրերիոսը նրան ճաշկերույթի չէր հրավիրում, ձեռքներով, թե իբր իրեն մեղադրում են թունավորելու փորձի մեջ: Մինչդեռ և՛ մեկը, և՛ մյուսը սարքված էր նախօրոք՝ նա պետք է Ագրիպպինային փորձելու համար խնձոր առաջարկեր, սա էլ հրաժարվեր նրանից, որպես ականերև կործանումից: (2) Ի վերջո, զրպարտանք բռնալով Ագրիպպինայի վրա, թե իբր նա ուզեցել է փրկություն որոնել կամ այն է Օգոստոսի արձանի, կամ այն է գորքի մոտ, Տիրերիոսը նրան աքսորեց Պանդատերեա կղզին, իսկ երբ նա սկսեց տրտնջալ, ապա ցենսուրիոնի միջոցով ծեծելով նրան աչքը դուրս թոցրեց: Ագրիպպինան որոշեց սովամահ լինել, բայց Տիրերիոսը հրամայեց բռնի բացել նրա բերանը և կերակրել: Եվ, նույնիսկ, երբ Ագրիպպինան, համառելով, զոհվեց, Տիրերիոսը շարունակում էր կատաղի հալածել նրան՝ նրա ծննդյան բուն օրը կարգադրեց այսուհետև համարել շարաքաստիկ օր: Նա նույնիսկ իր ծառայությունը համարեց, որ չէր խեղդել նրան ու նետել Գեմոնիաներ¹²⁶. այդպիսի գթասրտության համար նա սենատից նույնիսկ դեկրետ ընդունեց, որով շնորհակալություն էր հայտնվում

նրան և ոսկյա ընծա մատուցվում, որը դրվեց Կապիտուլիումի Ցուպիտերի տաճարում:

54. Գերմանիկոսից նա երեք թոռ ուներ՝ Ներոնը, Դրուզոսը և Գայոսը, Դրուզոսից մեկը՝ Տիբերիոսը: Երբ մահը տարավ նրա որդիներին, նա սենատին ներկայացրեց Ներոնին և Դրուզոսին, Գերմանիկոսի ավագ որդիներին, և յուրաքանչյուրի շափահասության օրը տոնեց նվերների համաժողովրդակա՛ն բաշխմամբ: Բայց երբ նա իմացավ, որ նոր տարուն բացահայտորեն ուխտում էին նաև նրանց ողջության համար¹²⁷, ապա սենատին դիտողութուն արեց, որ նման պատիվը կարող է պարզև լինել միայն փորձված և հասուն արանց: (2) Եվ բացահայտելով դրանով իր գաղտնի զգացմունքը, նա զոհաբերեց նրանց ամեն կողմից թափվող զրպարտանքներին՝ ամեն տեսակ խաբուսթյուններով հրահրում էին նրանց դժգոհությունը և հետո նրանց էլ մատնում: Վերջապես, Տիբերիոսն ինքը մեղադրանք գրեց նրանց վրա, լի ամենաթունոտ պարսավանքներով¹²⁸, և երբ նրանք հռչակվեցին հայրենիքի թշնամիներ, սովամահ անել տվեց նրանց, Ներոնին՝ Պոնտիա կղզում¹²⁹ Դրուզոսին՝ Պալատինյան ապարանքի նկուղում: Ենթադրում են, որ Ներոնը ստիպված էր ինքը վերջ տալ իր կյանքին, երբ իբրև թե սենատի կամքով նրա մոտ հայտվեց դահիճը օղակով ու կախելու կեռերով. իսկ Դրուզոսին քաղցն այնքան էր տանջել, որ նա փորձել էր ներքնակի միջի ծղոտը կրծել: Նրանց աճյուններն այնպես էին ցաքուցրիվ արվել, որ հետագայում միայն մեծ դժվարությամբ հաջողվեց ի մի ժողովել:

55. Ի լրումն հին բարեկամների ու մերձավորների, նա պետական գործերում իրեն խորհրդականներ վերցրեց Հոտմի առաջնակարգ քաղաքացիներից քսան հոգի: Նրանց բոլորից ողջ մնացին, թերևս, երկուսը կամ երեքը, մնացյալին նա կործանեց տարբեր պատրվակներով: Ամենից շատ մահեր բերեց էլիոս Սեյանոսի կործանումը, որին ինքն էր բարձրացրել մինչև բարձրագույն իշխանութուն, ոչ այնքան բարյացակամութունից, որքան այն բանի համար, որ նրա ջանքերով նենգորեն հաշվեհարդար տեսնի Գերմանիկոսի ժառանգների հետ և իշխանության ժառանգորդ դարձնի հարազատ որդուց՝ Դրուզոսից իր թոռանը:

56. Նա ամենևին էլ մեղմ չէր իրեն շրջապատող հույների նկատմամբ, որոնց ընկերակցությունը հատկապես էր սիրում: Նրանցից մեկին՝ Քսենոնին, որ բարբառում էր շափից դուրս ճոռոմաբար, հարցրել էր, թե դա ինչ տարօրինակ բարբառ է, և սա պատասխանել էր՝ «Դորիական»։ Տիբերիոսը դա կշտամբանք էր համարել իր երբեմնի տարազրման համար՝ չէ՞ որ դորիերեն խոսում են Հոտոս կղզում, և աքսորել էր նրան Կինարա¹³⁰ կղզի: Ճաշկերույթի ժամանակ նա սիրում էր հարցնել,

Թե ինչ է կարդացել ինքն այդ օրը. բայց իմանալով, որ քերական Սելևկոսը տեղեկանում է իր սպասավորներից, թե ինչ գրողներով է ինքն զբաղվում, և ճաշի է գալիս նախապատրաստված, նա իսկույնեթ նրան վտարեց իր ընկերությունից, իսկ հետո հասցրեց ինքնասպանության:

57. Նրա ի բնե ունեցած դաժանությունն ու սառնարյունությունը նկատելի էին դեռևս երեխա ժամանակ: Թեոդորոս Գադարացին, որը նրան ճարտասանություն էր սովորեցնում, ամենից վաղ ու սրատեսորեն էր նկատել այդ և, թերևս, ամենից լավ էր բնորոշել, երբ, նախատելով, նրան միշտ անվանում էր՝ «արյունով շաղախված կեղտ»: Բայց ավելի ակնհայտ դա տեսանելի դարձավ կառավարչի մեջ՝ նույնիսկ սկզբնական շրջանում, երբ նա փորձում էր մարդկանց գրավել շինծու շահավորությամբ: (2) Մեկ խեղկատակ¹³¹ թաղման թափորի առջև բարձրածալն խնդրեց հանգուցյալին հայտնել Օգոստոսին, որ նրա կտակած նվերները ժողովուրդն այդպես էլ չի ստացել. Տիրերիոսը կարգադրեց նրան քարշ տալ իր մոտ, հանձնել ինչ որ պետք է և մահապատժի ենթարկել, որպեսզի նա կարողանա Օգոստոսին զեկուցել, որ իրենը լիովին ստացել է: Քիչ ժամանակ անց, երբ ոմն Պոմպեոս՝ հռոմեացի հեծյալ, սենատում ինչ-որ բանի համառորեն հակառակում էր, նա վերջինիս սպառնաց բանտ նետել և հայտարարեց, որ Պոմպեոսն իր ձեռքի տակ արագ պոմպեոսական¹³² կդառնա՝ այդպես դաժանորեն նա ծիծաղեց և՛ մարդու անվան, և՛ մի ամբողջ կուսակցության երբեմնի բախտի վրա:

58. Այդ նույն ժամանակ պրետորի այն հարցին, թե դատի տալ արդյո՞ք մեծությանը վիրավորելու համար, նա պատասխանեց՝ «օրենքները պետք է կատարվեն». և կատարում էր դրանք ծայրաստիճան դաժանաբար: Ոմն մեկը հանել էր Օգոստոսի արձանի գլուխը¹³³, որպեսզի ուրիշը դնի նրա տեղը. գործը գնաց սենատ, և քանի որ կասկածներ առաջացան, գործը հարցաքննվեց խոշտանգումներով: Իսկ երբ պատասխանողը դատապարտվեց, ապա նմանատեսակ մեղադրանքները փոքր առ փոքր հասցրին այն բանին, որ սկսեց մահացու հանցագործություն համարվել, եթե որևէ մեկը Օգոստոսի արձանի առջև ծեծում էր ստրուկին կամ զգեստափոխվում էր, եթե նրա պատկերը կրող դրամ կամ մատանի էր բերում զուգարան կամ հասարակաց տուն, եթե առանց գովասանքի էր արտահայտվում նրա որևէ գործի կամ խոսքի մասին: Վերջապես, զոհ գնաց նաև այն մարդը, որը թույլ էր տվել իր քաղաքում իրեն պատիվներ տալ այն օրը, երբ ինչ-որ մի ժամանակ դրանք տրվել էին Օգոստոսին:

59. Բարձրի խստացման և ուղղման պատրվակով, բայց իրականում միայն ի հաճույս իր բնական հակումների, նա ուրիշ շատ դաժան

ու գազանային արարքներ կատարեց: Ոմանք նույնիսկ ոտանավորներով էին խարանում նրա այդ ժամանակների շարագործությունները և կանխազուշակում ապագայինը:

Դու անգութ ես, դաժան—թվարկե՞նք նաև բոլոր մնացյալը:

Թող ես մեռնեմ, եթե մայրը սիրում է նման զավակին:

Հեծյա՞լ ես դու Ո՛չ: Ինչո՞ւ: Հարյուր հազար, և այդ էլ չես ճարի

Ապա էլ ինչո՞ւ: Դու եղել ես Հոողոսում¹³⁴:

Կեսարը վերջ դրեց աստուրնական ոսկե դարին—

Այժմ, քանի դեռ նա կենդանի է, դարը երկաթե կլինի:

Նա մոռացել է գինին, տարված արյան ծարավով,

Որը նա այնպես է ըմպում, ինչպես առաջ գինին:

(2) Հոոմուլոս, Սուլլային նայիր՝ քո դժբախտություններ չէ՞ նա երջանիւ՞մ¹³⁵:

Մարիուսի հիշիր վերադարձը, որ արյամբ հեղեղեց Հոոմը,

Հիշիր, թե ինչպես Անտոնիոսը սպանություն սովոր ձեռքով

Հայրենիքը նետեց եղբայրասպան կովի բովը:

Դու կասես, վերջ Հոոմին, ոչ ոք, ով վտարանդի է եղել,

Արքա չի դարձել, առանց մարդկանց արյուն հեղելու:

Սկզբում նա փորձում էր դրանցում ոչ թե իրական զգացմունքներ տեսնել, այլ զայրույթն ու ատելությունը այն մարդկանց, որոնց տհաճ են նրա խիստ միջոցառումները. նա նույնիսկ շարունակ ասում էր. «Թող ատեն, միայն թե համաձայնեն»¹³⁶, Բայց հետո նա ինքը ցույց տվեց, որ այդ ամբողջ պարսավանքը արդարացի ու հիմնավոր էր:

60. Կապրիում, նրա ժամանումից մի քանի օր անց, մի ձկնորս նրան միայնակ գտավ և անսպասելիորեն մի հսկա ոսկեբեղիկ մատուցեց: Վախից, որ ամբողջ կղզու միջով անանցանելի ժայռերով իրեն են հասել, Տիբերիոսը հրամայեց այդ ձկնով ձաղկել ձկնորսի դեմքը: Իսկ երբ վերջինս հարվածների տակ սկսեց օրհնել ճակատագիրը, որ միաժամանակ շմատուցեց նաև իր բռնած ավելի մեծ օմարը, նա կարգադրեց այդ օմարով էլ դաղել նրա դեմքը: Պրետորական զինվորին, որը սիրամարգ էր գողացել նրա այգուց, մահապատժի ենթարկեց: Մի անգամ ճանապարհին նրա պատգարակը խճճվեց մացառուտում. այնժամ նա բըռնեց առաջավոր կոհորտաների ցենտուրիոնին, որը ճանապարհն էր հետազոտել, և, տարածելով գետնին, մահու աստիճան ծեծեց:

61. Ի վերջո, նա լիակատար ազատություն տվեց բոլոր հնարավոր դաժանություններին: Առիթների պակասություն չկար՝ նա հետապնդում էր սկզբում մոր, ապա թոռների ու հարսի, հետո Սեյանոսի բարեկամներին և նույնիսկ ծանոթներին,— Սեյանոսի կործանումից հետո նա թերևս ավելի կատաղի դարձավ: Դրանից առավել պարզ է երևում, որ սովորաբար Սեյանոսը չէր հրահրում նրան, այլ միայն ընդառաջում էր

նրա ցանկություններին: Բայց և այնպես, Տիրերիտը շտատանվեց գրելու իր կյանքի մասին իր կազմած համառոտ և թուլցիկ նոթերում, որ Սեյանոսին նա մահապատժի ենթարկեց, երբ իմացավ, թե նա ինչպես կատաղի է գործել իր որդի Գերմանիկոսի զավակների դեմ. մինչդեռ նա ինքը կործանել էր նրանցից մեկին, երբ Սեյանոսն արդեն կասկածի տակ էր, մյուսին՝ երբ Սեյանոսն արդեն մահապատժի էր ենթարկված:

(2) Չափազանց երկար կլինի նրա շարագործությունները մեկ առ մեկ թվարկելը, բավական է նրա կատաղության օրինակները ցույց տալ ամենաընդհանուր դեպքերում: Օր չէր անցնում առանց մահապատժի, տոնական օր լիներ դա, թե նվիրական¹³⁷. նույնիսկ նոր տարուն մի մարդ մահապատժի ենթարկվեց: Շատերի հետ միասին մեղադրվում ու դատապարտվում էին նրանց երեխաներն ու նրանց երեխաների երեխաները: Մահապատժի ենթարկվածների ազգականներին արգելված էր նրանց ողբալը: Մեղադրողներին, հաճախ նաև վկաներին ցանկացած պարզ-ներ էին նշանակվում: (3) Ոչ մի մատնություն անվստահության չէր արժանանում: Ամեն մի հանցագործություն համարվում էր քրեական, նույնիսկ մի քանի անմեղ արտասանված բառերը: Մի բանաստեղծի դատապարտեցին այն բանի համար, որ ողբերգության մեջ համարձակվել էր նախատել Ագամեմնոնին, մի պատմագրի այն բանի համար, որ Բրուտոսին ու Կասսիոսին անվանել էր վերջին հոռմեացիներ. երկուսն էլ իսկույնեթ մահապատժի ենթարկվեցին, իսկ նրանց երկասիրությունները ոչնչացվեցին, թեև դրանից սոսկ մի քանի տարի առաջ դրանք բացահայտ և հաջողությամբ ընթերցվում էին իր՝ Օգոստոսի առջև: (4) Որոշ բանտարկյալների արգելված էր ոչ միայն մխիթարվել պարամոնքներով, այլև խոսել ու զրուցել: Շատերը նրանցից, ովքեր դատի էին կանչվում, տանն ինքնասպանություն էին գործում, համոզված լինելով, որ դատապարտվելու են. խուսափելով հալածանքներից ու խայտառակությունից, շատերը թույն էին ընդունում հենց կուրիայում. բայց նրանց էլ, վիրակապված վերքերով, կիսակենդան, դեռևս թփրաալիս, քարշ էին աալիս բանտ: Մահապատժի դատապարտվածներից ոչ ոք չէր խուսափում կենթց ու Գեմոնիաներից՝ մեկ օրում քսան մարդ այդ եղանակով նետվեցին Տիրբոս, դրանց թվում՝ նաև կանայք ու երեխաներ: (5) Վաղեմի սովորույթը արգելում էր կույսերին սպանել խեղդողակով, դրա համար անչափահաս աղջիկներին¹³⁹ մահից առաջ դահիճը պղծում էր: Ովքեր ուզում էին մեռնել, նրանց բռնի ստիպում էին ապրել: Մահը Տիրերիտոսին չափից դուրս թեթև պատիժ էր թվում՝ իմանալով, որ մեղադրյալներից Կառնուլոս անունով մեկը շի ապրել մինչև մահապատիժը, նա բաշականչել էր. «Կառնուլոսը դուրս պրծավ ձեռքիցս»: Երբ նա շրջագա-

յում էր զնդանները, ոմն մեկը սկսեց աղերսել փութացնելու մահապատիժը. նա պատասխանեց. «Ես քեզ գեռ չեմ ներել»: Կոնսուլական կոշմաճ տեր մի այր իր տարեգրության մեջ հիշատակում է, թե ինչպես մի բազմամարդ խնջույքի ժամանակ նրա ներկայությամբ ինչ-որ մի թղուկ, որը կանգնած էր սեղանի մոտ ծաղրածունների խմբում, հանկարծ բարձրաձայն հարցրեց Տիրբրիոսին, թե ինչո՞ւ է դեռևս կենդանի մնում Պակոնիոսը, որը մեղադրվում էր մեծությանը վիրավորելու մեջ: Տիրբրիոսը տեղնուտեղը նախատեց թզուկին հանդուգն հարցի համար, բայց մի քանի օր անց գրեց սենատին, որ Պակոնիոսի գատավճիտը հնարավորին չափ շուտ արձակվի:

62. Առավել ևս ուժեղ և անզուսպ նա սկսեց մոլեգնել՝ կատաղած իր որդի Գրուզոսի մահվան լուրից: Սկզբում նա կարծում էր, թե Գրուզոսը մահացել է հիվանդությունից ու անժուժկալությունից. բայց երբ իմացավ, որ նրան թունավորմամբ կործանել է նրա կին Լիվիլլայի և Սեյանոսի¹⁴⁰ նենգությունը, ապա այլևս ոչ ոք փրկություն չունեիր խոշտանգումներից ու մահապատժից: Օրեր շարունակ նա անցկացնում էր ամբողջովին խորասուզված այդ հետաքննության մեջ: Երբ նրան զեկուցեցին, որ ժամանել է նրա հոտոսցի ժանոթներից մեկը, որին հենց ինքն էր Հոտմ կանչել սիրալիր նամակով, հրամայեց տեղնուտեղը նրան տանջաքննության ենթարկել, վճռելով, որ դա հետաքննության հետ առնու-թյուն ունեցող մարդկանցից է. ի հայտ բերելով սխալը, կարգադրեց մեռցնել նրան, որպեսզի ապօրինությունը հրապարակ դուրս չգա: (2) Կապրիում մինչև հիմա ցույց են տալիս նրա սպանդանոցի տեղը. այստեղից դատապարտվածներին երկարատև ու հնարամիտ կտտանքներից հետո նրա աչքի առջև ծովն էին նետում, ներքևում նավաստիները կարթածողերով բռնում և թիակներով ջարդոտում էին դիակները, որպեսզի ոչ մեկի մեջ կյանքի նշույլ չմնար: Այլոց թվում նա հնարեց նաև խոշտանգման նոր ձև՝ մարդկանց դիտավորյալ մինչև հարբելու աստիճան խմեցնելով անարատ գինի, անսպասելիորեն կապում էին նրանց առնանդամները, և նրանք ուժասպառ էին լինում կտրող կապից ու միզապահությունից: (3) Եթե նրան մահը չկանգնեցներ և եթե, ինչպես ասում են, Քրասիլլեսը նրան խորհուրդ չտար որոշ միջոցառումներ հետաձգել երկար ապրելու հույսով¹⁴¹, նա, հավանաբար, ավելի շատ մարդիկ կկործաներ, չխնայելով նաև վերջին թռոններին՝ Գայոսին նա արգեն կառածում էր, իսկ Տիրբրիոսին արհամարհում որպես ապօրինածնի¹⁴²: Եվ դա նման է ճշմարտության՝ զուր չէր նա քանիցս կրկնում, թե երջանիկ էր Պրիամոսը, որը տեսել էր իր բոլոր մերձավորների մահը:

63. Բայց բոլոր այդ շարագործությունների մեջ, շրջապատված ատե-

լությամբ ու արգահատանքով, նա ոչ միայն մշտապես դողում էր իր կյանքի համար, այլև տառապում էր վիրավորանքներից: Շատ քան է այդ ցույց տալիս: Նա արգելել էր գուշակներին դիմել գաղտնի և առանց վկաների¹⁴³: Հռոմի ծայրամասերում եղած գուշակարանները նա նույնիսկ փորձում էր քանդել, բայց իրեն զսպեց Պրենեստինյան վիճակների¹⁴⁴ հրաշագործ վեհությունից տաժած սարսափից՝ դրանք կնքեցին և տարան Հռոմ, բայց արկղիկը դատարկ դուրս եկավ, և դրանք հայտնվեցին միայն այն ժամանակ, երբ արկղիկը կրկին դրեցին տաճարում: (2) Մեկ կամ երկու պրոկոնսուլների, որոնք արդեն պրովինցիաներ էին ստացել¹⁴⁵, նա ոչ մի կերպ չէր վճռում բաց թողնել, և նրանց իր մոտ պահեց մինչև այն պահը, երբ մի քանի տարի անց հենց նրանց ներկայությամբ նշանակեց նրանց հաջորդներ՝ ամբողջ այդ ժամանակ նրանք պահում էին իրենց կոշումը և նույնիսկ նրանից շատ կարգադրություններ էին ստանում, որոնք ջանասիրաբար կատարում էին բանազնացների և օգնականների միջոցով: 64. Հարսին և թոռներին, նրանց դատապարտումից հետո, նա ուղարկեց ուր հարկն էր, միայն շղթայված, փակ պատգարակներով, և որպեսզի պահակախումբը թույլ չտար հանդիպողներին կանգ առնել և նայել:

65. Երբ Սեյանոսը մտադրվել էր հեղաշրջում կատարել, և նրա ծննդյան օրը տոնում էր ողջ ժողովուրդը, և ամենուր երկրպագվում էին նրա ոսկե պատկերները, նա համբերությամբ էր այդ ամենը դիտում, և ամենևին էլ ոչ միանգամից, ավելի շուտ խորամանկությամբ ու խաբեությամբ, քան թե գերագույն իշխանության զորությամբ էր, որ ի վերջո տապալեց նրան: Նախապես, որպեսզի նրան հեռացնի իրենից մեծարանքի պատրվակով, նրան իրեն ընկերակից ընտրեց իր հինգերորդ կոնսուլությանը¹⁴⁶, որը հանուն դրա ընդունեց հեռակա կարգով, երկարատև ընդմիջումից հետո: Իսկ հետո, գայթակղելով նրան ազգական դարձնելու¹⁴⁷ և տրիբունական իշխանության հույսով, նա հանկարծ Սեյանոսի դեմ հանդես եկավ ամոթալի ու խղճուկ մեղադրական ճառով՝ նրանում, չասած այլ բաների մասին, նա աղերսում էր հայր սենատորներին ուղարկել իր՝ միայնակ ծերունու, հուսից կոնսուլներից որևէ մեկին¹⁴⁸, որպեսզի նա իրեն սենատ բերի պատահած զինված պահակախմբով: (2) Բայց դա էլ նրան չհանգստացրեց՝ երկյուղ կրելով խռովությունից, նա հրամայեց անհրաժեշտության դեպքում ազատել և զորապետ հռչակել իր թոռ Դրուզոսին, որը դեռևս բանտարկված էր Հռոմում. նավերն արդեն կազմ ու պատրաստ էին, որպեսզի փախչեն ուզած զորքի մոտ, և նա անդադրում ժայռի կատարից հետևում էր հեռավոր ազդանշանների¹⁴⁹,

որոնցով կարգադրել էր հայտնել իրեն բոլոր պատահածի մասին, որպեսզի ժամանակ չկորցնի սուրհանդակների վրա: Նույնիսկ այն բանից հետո, երբ Սեյանոսի դավադրությունը ճնշված էր, նա դեռ էլի ինն ամիս դուրս չէր գալիս «Իո»¹⁵⁰ անունը կրող վիլլայից, նախկինի պես մնալով կասկածամիտ ու անհանգիստ:

66. Նրա խռովյալ հոգին առավել ևս հիվանդագին տոչորում էին ամեն կողմից թափվող անհամար անարգանքները: Չկար այնպիսի վիրավորանք, որը դատապարտյալները չնետեին նրա երեսին կամ չսփռեին թատրոնում թաքուն գցած նամակներով¹⁵¹: Դրանք նա տարբեր կերպ էր ընդունում՝ մերթ, տանջվելով ամոթից, աշխատում էր գաղտնի պահել և թաքցնել, մերթ արհամարհանքից ինքն էր հրապարակում ի լուր ամենքի: Նույնիսկ պարթևական թագավոր Արտավանը խայտառակեց նրան մի ուղերձով, որտեղ նա նախատում էր նրան մերձավորների ու հեռավորների սպանության համար, պարապ կյանքի ու անառակության համար, և առաջարկում էր կամովին մահով հնարավորին շափ շուտ հագեցնել համաքաղաքացիների մեծագույն և արդարացի ատելությունը: 67. Վերջապես նա ինքն էլ իրեն ատելի դարձավ՝ իր տառապանքների ողջ ծանրությունը նա արտահայտեց մի նամակի¹⁵² սկզբում այսպիսի խոսքերով. «Ինչպե՞ս գրեմ ձեզ, հայր սենատորներ, ի՞նչ գրեմ և ի՞նչ դեռ չգրեմ: Եթե ես դա գիտեմ, ապա թող աստվածների ու աստվածուհիների կամքով կործանվեմ ավելի վատթար մահով, քան կործանվում եմ ահա արդեն շատ օրեր»:

(2) Ոմանք ենթադրում են, որ նա վաղօրոք գիտեր իր նման ապագայի մասին և վաղուց էր նախատեսել, թե առջևում իրեն ինչպիսի ատելություն և անփառունակություն է սպասում: Դրա համար էլ, ընդունելով իշխանությունը, նա այդպես վճռականորեն հրաժարվեց հայրենյաց հոր անունից և նրա գործերին հավատարմության երդումից՝ նա վախենում էր առավել մեծ խայտառակություն մեծ կել իրեն, անարժան դուրս գալով նման պատիվների: (3) Այդ կարելի է եզրակացնել նաև զույգ առաջարկությունների առթիվ նրա արտասանած ճառից: Այսպես, նա ասում է, որ քանի դեռ ինքը կլինի առողջ մտք, կմնա այնպիսին, ինչպիսին կա, և իր բարքը չի փոխի. բայց և այնպես, որպեսզի վատ օրինակ չտա, ավելի լավ է, որ սենատը չկաշկանդի ինքն իրեն հավատարմությամբ այն մարդու արարքների նկատմամբ, որը կարող է դիպվածի ազդեցությամբ փոխվել: (4) Եվ հետո. «Իսկ եթե դուք երբևէ կերկմտեք իմ վարքի և իմ նվիրվածության վերաբերմամբ, — իսկ ևս աղոթում եմ, որ մահն ինձ ավելի շուտ տանի, քան նման փոփոխություն տեղի կունենա ձեր մտքում, — ապա ինձ շատ պատիվ չի բերի նաև

հայրենյաց հայր կոչումը, իսկ ձեզ համար այն կշտամբանք կլինի կամ այն հապճեպության համար, որով դուք դա ինձ տվեցիք, կամ այն փոփոխամտության համար, որով դուք փոխեցիք ձեր կարծիքը իմ մասին»¹⁵¹

68. Մարմնակառուցվածքով նա հաղթանդամ էր և ամրապինդ, միջահասակից բարձր, լայնաթիկունք և լայնակուրծք, մնացյալում վայելչակազմ ոտքից մինչև գլուխ: Ձախ ձեռքը աջից ճարպիկ և ուժեղ էր, իսկ հոդերն այնքան ամուր էին, որ նա մատով կարող էր ծակել թարմ ու ամբողջական խնձորը, իսկ մատնահարվածով կարող էր վիրավորել տղայի և նույնիսկ պատանու գլուխը: (2) Մաշկը ճերմակ էր, ծոծրակի կողմից մազերը երկար էին, նույնիսկ ծածկում էին վիզը,— ըստ երեւվույթին, ընտանեկան գիծ էր: Դեմքը գեղեցիկ էր, թեև երբեմն հանկարծ ծածկվում էր շիտերով¹⁵³. աչքերը խոշոր էին և օժտված թե գիշերը, թե մթության մեջ տեսնելու զարմանալի կարողությամբ, բայց ոչ երկար ժամանակ և քնից անմիջապես հետո, իսկ հետո նրանց տեսողությունը կրկին բթանում էր: (3) Քայլում էր նա գլուխը խոնարհած¹⁵⁴, վիզը ամուր պահած, դեմքի խիստ արտահայտությամբ, սովորաբար լուռ՝ նույնիսկ շրջապատողների հետ հազվադեպ էր միայն խոսում, դանդաղ թեթևակի խաղացնելով մատները¹⁵⁵: Բոլոր այդ տհաճ ու գոռոզ գծերը դեռևս Օգոստոսն էր նկատել նրա մեջ և մեկ անգամ չէ, որ փոքձել էր արդարացնել դրանք սենատի և ժողովրդի առջև, հավատացնելով, որ դրանցում բնությունն է մեղավոր և ոչ թե բարբը: (4) Նա աչքի էր ընկնում գերազանց առողջությամբ և իր կառավարման ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ չէր հիվանդացել, թեև երեսուն տարեկանից ինքն էր հոգ տարել իր մասին, առանց բժիշկների օգնության ու խորհուրդների:

69. Աստվածների և նրանց պաշտամունքի մասին նա քիչ էր հոգ տանում, քանի որ աստղագուշակության հետևորդ էր և հաստատապես հավատացած էր, որ ամեն ինչ վճռում է ճակատագիրը: Սակայն նա անշափ վախենում էր ամպրոպից, և երբ ամպեր էին կուտակվում, ամեն անգամ գլխին դափնյա¹⁵⁶ պսակ էր դնում, քանի որ համարվում է, որ այդ տերևներին կայծակը չի խփում:

70. Ազնիվ արվեստներով մեծագույն ջանասիրությամբ նա զբաղվում էր երկու լեզուներով: Լատինական ճարտասանության մեջ նա ընդօրինակում էր Մեսսալա Կորվինոսին¹⁵⁷, որին շատ էր պատվում պատանի ժամանակ, երբ նա արդեն ժերունի էր: Սակայն իր խոսքը նա շատ էր մթազնում շինծուությամբ¹⁵⁸ և ճոռոմաբանությամբ: (2) Նա շարդրել է նաև քնարական բանաստեղծություն «Գանգատ առ մահ Լուկիոս Կեսարի» խորագրով, գրում էր և հունական բանաստեղծություն-

ներ էվփորիոնեսի, Ռիանեսի և Պարթենիոսի նմանողությամբ՝ այդ բանաստեղծներին նա շատ էր սիրում, նրանց երկերը և պատկերները գնում էր հասարակական գրադարաններում լավագույն հին գրողների շարքում, և դրա համար էլ շատ գիտնականներ միմյանց հերթ շտալով բազում երկեր էին նվիրաբերում նրան այդ հեղինակների մասին: (3) Բայց ամենից ավելի նրան գրավում էր հեթաթալին հնության ուսումնասիրությունը: Այստեղ նա հասնում էր մինչև ծիծաղելիության աստիճանի դատարկ բաների, դիմելով քերականներին, որոնց հասարակությունը, ինչպես ասվել է, նա շատ էր սիրում, այսպիսի, օրինակ, հարցերով¹⁵⁹. «Ո՞վ էր Հեկուբայի մայրը, ինչպե՞ս էին Աքիլլեսին կոչում աղջիկների շրջանում, ինչպիսի՞ երգեր էին երգում սիրենաները»: Իսկ երբ նա Օգոստոսի մահից հետո առաջին անգամ սենատ մտավ, ապա ի նշան բարեպաշտության և որդիական սիրո զոհ մատուցեց խնկով ու գինով, բայց առանց սրնգահարի մասնակցության, ինչպես երբեմնի Մինոս անբան որդու մահից հետո¹⁶⁰:

71. Հունարեն նա միշտ խոսում էր հեշտությամբ ու հաճույքով, սակայն ոչ ամեն տեղ՝ դրանից նա հատկապես խուսափում էր սենատում: Նույնիսկ երբ նրան պետք եղավ արտասանել «մոնոպոլիա»¹⁶¹ բառը, սկզբում ներողություն խնդրեց, որ ստիպված է օտար բառ օգտագործել: Իսկ երբ սենատի մեկ որոշման մեջ օգտագործվել էր «էմբլեմ»¹⁶² բառը, նա առաջարկել էր փոխել այն, օտարի փոխարեն գտնելով մեր բառը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հասկացությունը արտահայտել նկարագրական ձևով, մի քանի բառով: Իսկ մեկ զինվորի, որին դատարանում¹⁶³ հունարեն խնդրել էին ցուցմունք տալ, նա հրամայեց պատասխանել միայն լատիներեն:

72. Միայն երկու անգամ¹⁶⁴ իր հեռացած լինելու ողջ ժամանակ նա փորձեց վերադառնալ Հոմ: Առաջին անգամ նա տրիրեմայով Տիրբոսով բարձրացավ մինչև բուն այգիները, որոնք գտնվում էին արհեստական լճի¹⁶⁵ մոտ, ափերին պահակախմբեր կարգելով, որպեսզի քշեն նրանց, ովքեր կհանդիպեն. երկրորդ անգամ նա Ապպիոսի ճանապարհով հասավ մինչև յոթերորդ մղոնը: Բայց սոսկ հեռվից տեսնելով քաղաքային պարիսպները, նա, մոտենալով դրանց, ետ դարձավ՝ առաջին անգամ անհայտ պատճառով, երկրորդ անգամ՝ շար կանխագուշակումի հանդեպ տաժած երկյուղից: (2) Այլևայլ զվարճալիքների թվում նա մի մեծ օձ ուներ. մեկ անգամ սովորականի պես գալով իր ձեռքով նրան կերակրելու, տեսավ, որ մրջյունները կերել են օձին, և դրանում ռամիկների բռնությունից զգուշանալու նախանշան տեսավ:

Եվ ահա, շուտափույթ վերադառնալով Կամպանիա, Աստուրայում

նա հիվանդացավ: Մի փոքր ապաքինվելով, նա հասավ մինչև Յիրցեա, այստեղ, իր անառողջ վիճակը թաքցնելու համար, նա ոչ միայն ճերկա գտնվեց ճամբարային խաղերին¹⁶⁶, այլև ասպարեզ բաց թողնված վարագրի վրա տեղեր էր նետում: Նույն պահին նրա մոտ կողացավ սկսվեց, հետո նրան, որ տաքացել էր, պաղ քամի դիպավ, և հիվանդութունն ուժեղացավ: (3) Բայց մի որոշ ժամանակ նա դեռևս դիմանում էր, թեև, շարունակելով ճանապարհը մինչև բուն Միզենա, նա ոչնչով չփոխեց սովորական ապրելակերպը և չէր հրաժարվում ոչ խնջույքներից, ոչ էլ ուրիշ հաճույքներից՝ մասամբ անժուժկալութունից, մասամբ էլ ձևացնելուց: Իսկ երբ բժիշկ Քարիկլեսը, պատրաստվելով մի օր հեռանալ խնջույքից, վերցրեց նրա ձեռքը համբուրելու համար, Տիրերիոսը կասկածեց, որ նա ուզում է շոշափել զարկերակը, կանգնեցրեց նրան, վերադարձրեց սեղանի մոտ և շարունակեց խնջույքը մինչև ուշ ժամ, իսկ հետո, ինչպես և միշտ, կանգնելով սեղանատան մեջտեղում, թիկունքում՝ լիկտորը, անուն առ անուն հրաժեշտ տվեց հեռացողներից յուրաքանչյուրին:

73. Ի միջի այլոց, այնպես սլառահեղ, որ նա սինատի հաշվետվութուններում կարդաց, որ մի քանի մեղադրյալների, որոնց մասին ժամանակին ինքր սոսկ համառոտակի հիշատակել էր, թե նրանց անունները կան մատնագրում, այժմ բաց են թողնված և նույնիսկ առանց հարցաքննության: Համարելով դա անհարգալից վերաբերմունք, նա վճռեց ինչ էլ որ լինի վերադառնալ Կապրի՝ միայն այդ ապաստարանից էր նա համարձակվում որևէ բան ձեռնարկել: Բայց վատ եղանակը և սաստկացող հիվանդութունը ետ պահեցին նրան, և շուտով նա վախճանվեց Լուկուլլոսի վիլլայում¹⁶⁷, կյանքի յոթանասունութերորդ տարում և իշխանության քսաներեքերորդ տարում, տասնյոթերորդ օրը մինչև ապրիլյան կալենդները, Գնեոս Ացերրոնիոս Պրոկուլոսի և Գայոս Պոնտիոս Նիգրինոսի կոնսուլության ժամանակ:

(2) Ոմանք ենթադրում են, որ Գայոսը նրան դանդաղ գործող թուլն էր տվել. մյուսները՝ որ հասարակ ջերմատենդի նոպայից հետո նա ուտել է խնդրել, բայց չեն տվել. ոմանք էլ՝ որ նրան խեղդել են բարձով, երբ նա հանկարծ ուշքի էր եկել և, տեսնելով, որ ուշաթափության ժամանակ հանել են մատանին, այն ետ պահանջեց¹⁶⁸: Սենեկան գրում է, որ նա, զգալով մոտալուտ վախճանը, ինքն է հանել իր մատանին, ասես ուզել է այն ինչ-որ մեկին հանձնել, մի փոքր պահել է, ապա կրկին հագցրել մատին և, սեղմելով ձեռքը, երկար պառկել է անշարժ: Հետո հանկարծ նա ձայն է տվել ծառաներին, բայց պատասխան չի ստացել. այնժամ նա վեր է կացել, բայց հենց անկողնու մոտ ուժերը լքել են նրան, և նա վայր է ընկել:

74. Իր վերջին ծննդյան օրը նա երազում տեսել էր Տեմենուսյան Ապոլլոնի¹⁶⁹ արձանը՝ հսկա և սքանչելի մի գործ, որը նա բերել էր Սիրակուզայից, որպեսզի դնի նոր տաճարին¹⁷⁰ կից գրադարանում. և արձանն ասել է, որ արդեն նրան չէ վիճակված սրբագործելու իրեն: Նրա վախճանից մի քանի օր առաջ Կապրի կղզու փարոսի աշտարակը փլվեց երկրաշարժից: Իսկ Միզենայում, երբ ճաշասենյակ բերեցին մոխիր ու ածուխ՝ տաքացնելու համար, որոնք վաղուց արդեն հանգել ու սառել էին, դրանք հանկարծ բռնկեցին, շահագլխով վաղ երեկոյից մինչև ուշ գիշեր:

75. Նրա մահը ժողովրդի մեջ ցնծություն սուաջացրեց: Առաջին իսկ տեղեկության ժամանակ ոմանք սկսեցին վազել, բղավելով՝ «Տիրերիոսին՝ Տիրրոս», մյուսներն աղոթում էին Մայր-երկրին և Մաներ աստվածներին¹⁷¹ հանգուցյալին այլ տեղ շտալ, եթե ոչ միայն մեղսագործների մեջ, ուրիշներն էլ մեռյալին սպառնում էին կեռով ու Գեմոնիաներով: Նախկին մոլեզնությունների հիշատակին ավելացավ վերջին դաժանությունը: (2) Բանն այն է, որ սենատի վճռով դատապարտյալների մահապատիժը կատարվում էր միայն տասներորդ օրը¹⁷². և ահա ոմանց համար պատժի օրը համընկավ Տիրերիոսի մահվան լուրին: Նրանք բուլորին աղերսում էին օգնություն ցույց տալ, բայց Գայոսը դեռևս չէր հայտնվել, միջամտող ու սատարող ոչ ոք չկար, և պահակախումբը, ի խուսափումն ապօրինությունից, խեղդեց նրանց և նետեց Գեմոնիաներ: (3) Դրանից էլ ավելի ուժգին ատելություն բռնկեց՝ թվում էր, թե տիրանի մահով էլ նրա գազանությունները շեն դադարում: Երբ մարմինը հանեցին Միզենայից, շատերը գոչում էին, որ նրան պետք է տանել Ատելլա և տապակել ամֆիթատրոնում¹⁷³, բայց զինվորները նրան Հռոմ տեղափոխեցին, ուր այն հրկիզվեց և թաղվեց ամբողջ ժողովրդի ներկայությամբ:

76. Կտակը նա կազմել էր մահվանից երկու տարի առաջ երկու օրինակով՝ մեկն արված էր սեփական ձեռքով, մյուսը՝ թելադրված ազատարձակի, բայց բովանդակությամբ չէին տարբերվում: Այն կնքված էր ամենաստոր դրության տեր անձանց կողմից: Այդ կտակով նա ժառանգությունը հավասար շափով թողնում էր թոռներին՝ Գերմանիկոսի որդի Գայոսին և Դրուզոսի որդի Տիրերիոսին, նրանց նշանակելով միմյանց ժառանգներ: Նա թողեց նաև բազմաթիվ նվերներ, ի միջի այլոց՝ կույս վեստալուհիներին, ինչպես նաև բոլոր զինվորներին, բոլոր պլեբեյներին և առանձին՝ թաղամասերի ավագներին:

ԳԱՅՈՍ

ԿԱԼԻԳՈՒԼԱ

1. Գերմանիկոսը՝ Գայոս Կեսարի հայրը, Դրուզոսի և Անտոնիա Կրրոսների որդին էր: Որգեգրված լինելով Տիբերիոսի՝ իր հորեղբոր կողմից, նա քվեստուրան ստացավ օրինական հասակից հինգ տարի առաջ, իսկ ուղղակի դրանից հետո՝ կոնսուլուսյուն¹: Երբ նա Գերմանիա ուղարկվեց զորքերի մոտ, և լուր ստացվեց Օգոստոսի վախճանի մասին, բոլոր լեզեոնները վճռաբար հրաժարվեցին Տիբերիոսին ճանա-

չել և նրան ստաջարկեցին գերադույն իշխանությունը². բայց նա հանդարտեցրեց նրանց, ցուցաբերելով նույնքան հաստատակամություն, որքան և հավատարմություն սլարտքին, իսկ հետո նրանց հետ միասին հաղթեց թշնամուն և տոնեյ տրիումֆ: (2) Գրանից հետո նա երկրորդ անգամ կոնսուլ ընտրվեց, բայց մինչև պաշտոնն ստանձնելն ուղարկվեց Արևելք կարգ ու կանոն հաստատելու: Այստեղ, հաղթելով Հայաստանի թագավորին³, Կապադովկիան դարձնելով հոռմեական պրովինցիա, նա երեսունչորս տարեկանում վախճանվեց Անտիոքում, ինչպես կասկածում են թույնից: Իսկապես, բացի ողջ մարմնի վրա եղած կապույտ քծերից և բերանից գուրս տված փրփուրից, դիակիզման ժամանակ նրա սիրտը ոսկորների մեջ գտնվեց անվնաս. իսկ գտնում են, որ այն սիրտը, որին թույն է գիպել, իր բնությամբ այրվել չի կարող⁴:

2. Նրա մահը վերագրում էին Տիբերիոսի նենգությունը և Գնեոս Պիզոնի ջանքերին, որն ա՛դ ժամանակ փոխարքա էր Ասորիքում: Սա չէր

Քաբցնում, որ ինքը ստիպված լինի թշնամի ունենալ կամ հորը, կամ որդուն, ասես այլ ելք չկար. և նա դաժանորեն ու անզուսպ, խոսքով ու գործով հետապնդում էր Գերմանիկոսին, նույնիսկ նրա հիվանդ ժամանակ: Դրա համար Հռոմ վերադառնալուց հետո ժողովուրդը քիչ էր մնում պատառ-պատառ աներ նրան, իսկ սենատը դատապարտեց մահվան⁵:

3. Ինչպես հայտնի է, Գերմանիկոսն օժտված էր մարմնական ու հոգեկան բոլոր արժանիքներով, ինչպես ոչ մեկ ուրիշը՝ հազվագյուտ գեղեցկությամբ ու քաջությամբ, գիտությունների և երկու լեզուների ճարտասանության նկատմամբ ունեցած հիանալի ընդունակություններով, անօրինակ բարություններով, ժողովրդի համակրանքը շահելու և նրա սիրուն արժանանալու⁶ ջերմ ցանկությամբ ու դարմանալի ունակությամբ: Նրա գեղեցկությունը մի փոքր փշացնում էին բարալիկ ոտքերը, բայց նա աստիճանաբար ստիպեց նրանց լցվել, ճաշից հետո մշտապես զբաղվելով ձիավարությամբ: (2) Նա մեկ անգամ չէ, որ թշնամուն հաղթել էր ձեռնամարտում: Նույնիսկ տրիումֆից հետո նա շղադարեց ճառերով հանդես գալ դատարանում: Նրա գիտնականության հուշարձանների թվում մնացել են նույնիսկ հունական կատակերգություններ⁷: Անգամ ուղևորությունների ժամանակ նա իրեն պահում էր որպես հասարակ քաղաքացի, ազատ և դաշնակցային քաղաքները մուտք էր գործում առանց լիկտորների: Հանդիպելով նշանավոր մարդկանց դամբարանների, ամենուր զոհեր էր մատուցում Մաներին: Վարոսի պարտության ժամանակ ընկածների աճյունները, որոնք փակել ու ցրիվ էին եկել, նա վճռեց թաղել ընդհանուր գերեզմանում և առաջինն սկսեց ձեռքերով հավաքել դրանք և լցնել մի տեղ⁸: (3) Նույնիսկ իրեն վատաբանողների նկատմամբ, ով էլ որ լիներ և ինչու էլ նրա հետ թշնամություն ունենար, մեղմ ու հեզ վերաբերմունք էր ցուցաբերում. անգամ Պիզոնի վրա, որը վերացնում էր նրա հրամանագրերն ու նեղում նրա կլիենտներին, սկսեց զայրանալ միայն այն ժամանակ, երբ իմացավ, որ նա մահափորձ է կատարում իր դեմ կախարդությամբ ու թուլնով. բայց այդ ժամանակ էլ նա բավարարվեց սոսկ այն բանով, որ, ըստ նախնյաց սովորույթի, նրան մերժեց իր բարեկամությունը⁹, իսկ տնեցիներին կտակել էր, որ եթե իր հետ որևէ բան պատահի, վրեժխնդիր լինեն իր համար¹⁰:

4. Նա քաղեց իր առաքինությունների առատ պտուղները: Հարադատներն այնպես էին հարգում նրան ու գնահատում, որ Օգոստոսն ինքը — մնացյալ ազգականների մասին ես արդեն չեմ խոսում — երկար ժամանակ տատանվում էր, շնշանակե՞լ արդյոք նրան իր ժառանգորդը և, վերջապես, Տիբերիոսին կարգադրեց որդեգրել նրան: Իսկ ժողովուրդն

այնպես էր սիրում նրան, որ երբ նա մի տեղ էր ժամանում կամ որևէ տեղ մեկնում,— այդ մասին շատերն են գրում,— դիմավորողների կամ ճանապարհողների շատութունից նրա կյանքը երբեմն վտանգի տակ էր դրվում: Իսկ երբ նա խոռվութունը հանդարտեցնելուց հետո վերադարձավ Գերմանիայից, նրան դիմավորելու ելան պրետորական բոլոր կահորտաները, թեև հրամայված էր, որ միայն երկուսն ընդառաջ ելնեն, իսկ հոռմեացի ժողովուրդը, առանց դասերի, տարիքի ու սեռի խտրության, քսան մղոնի վրա դուրս էր թափվել դիմավորելու նրան:

5. Բայց վերաբերմունքը ճրա հանդեպ էլ ավելի ուժեղ և էլ ավելի համոզիչ արտահայտվեց նրա մահվան ժամանակ և նրա մահից հետո: Այն օրը, երբ նա մեռավ¹¹, մարդիկ քարկոծեցին տաճարները¹², շրջում էին աստվածների բազիլիսները, ոմանք փողոց էին նետում տնային սրնդուկները, ոմանք ծածուկ նետում-լքում էին նորածին մանուկներին¹³: Նույնիսկ բարբարոսները, ասում են, որոնք պատերազմում էին միմյանց կամ մեր դեմ, դադարեցրին պատերազմը, ասես միավորված ընդհանուր և բոլորի սրտին մոտ վշտով. որոշ իշխաններ մորուք էին թողել և սափրել իրենց կանանց զլուխները որպես մեծագույն վշտի նշան. և այդքայից արքան ինքը հրաժարվեց իր մեծամեծների հետ որսորդութունից ու խնջույքներից, ինչը պարթևների մոտ սգո նշան է: 6. Իսկ Հռոմում ժողովուրդը, ընկճված ու վշտաբեկ նրա հիվանդության մասին առաջին լուրից, սպասում ու սպասում էր նոր սուրհանդակների. և երբ արդեն երեկոյան, հայտնի չէ որտեղից հանկարծ լուր տարածվեց, որ նա նորից առողջ է, բոլորը բազմությամբ, ջահերով ու զոհակենդանիներով նետվեցին Կապիտոլիում և քիչ էր մնում խորտակեին տաճարի դռները՝ ծարավի շուտափուլթ կատարելու իրենց ուխտը. Տիբերիոսն ինքը կեսգիշերին արթնացավ ցնծագին երգերից, որ լսվում էին ամեն կողմից.

Ողջ է, առողջ է, փրկված է Գերմանիկոսը. փրկված է Հռոմը և աշխարհն է փրկված:

(2) Իսկ երբ, վերջապես, ակներև հայտնի դարձավ, որ նա այլևս չկա, ոչ մի հորդորանք, ոչ մի հրամանագիր չէր կարող մեղմել ժողովրդի վիշտը, և նրա համար շարունակում էին ողբալ նույնիսկ դեկտեմբերյան տոներին¹⁵: Մեռյալի փառքը և նրա համար ցավելը խորացրին հետագա տարիների սարսափները, և բոլորին ոչ անհիմն թվում էր, որ շուտով Տիբերիոսի դուրս պոռթկած մոլեգնութունը մինչ այդ զսպվում էր սոսկ Գերմանիկոսի հանդեպ տածած հարգանքից և նրանից Ենեցած վախից:

7. Ամուսնացած էր նա Ագրիպպինայի՝ Մարկոս Ագրիպպայի և Յու-

լիայի դատեր հետ, և նրանից ինը երեխա ուներ: Նրանցից երկուսը մահացան ծծկեր հասակում, մեկը՝ մանուկ ժամանակ. սա այնքան սիրունատես էր, որ Լիվիան Կապիտոլիումի Վեներայի տաճարին էր ընծայել նրա պատկերը Կուպիդոնի տեսքով, իսկ մյուսն իր ննջարանում էր դրել Օգոստոսը և, ներս մտնելիս, ամեն անգամ համբուրում էր այն: Մյուս երեխաները հորից երկար ապրեցին՝ երեք աղջիկներ՝ Ագրիպպինան, Դրուզիլլան և Լիվիլլան, որոնք միմյանցից փոքր էին մեկական տարով, և երեք տղաներ՝ Ներոնը, Փրուզոսը և Գայոս Կեսարը: Նրանցից Ներոնին և Դրուզոսին Տիբերիոսի մեղադրանքով սենատը հուշակեց պետութայն թշնամիներ:

8. Գայոս Կեսարը ծնվել էր սեպտեմբերյան կալենդների նախօրյակին, իր հոր և Գայոս Փոնտեոս Կապիտոնի կոնսուլութայն ժամանակ¹⁶: Պարզ չէ, թե նա որտեղ է ծնվել, որովհետև այդ մասին եղած վկայությունները տարատեսակ են: Գնեսու Լենտուլոս Գետուլիկոսը գրում է, թե իրր նա ծնվել է Տիբուրում: Պլինիոս Սեկունդոսը պնդում է, որ ծնվել է տրևերների երկրում, Ամբիտարվիում գյուղակում, որը Կոնֆլուենտեսից վերև է գտնվում. ընդ որում նա վկայակոչում է այն, որ այնտեղ ցույց են տալիս մի գոհասեղան, որն ունի «Ագրիպպինայի ծննդաբերութայն համար» արձանագրությունը: Նրա՝ իշխանութայն գլուխ անցնելուց հետո շուտով տարածված ոտանավորները մատնանշում են, որ նա աշխարհ է եկել ձմեռային բանակատեղիում.

Ճամբարում է նա ծնվել, հոր զենքի տակ մեծացել,

Մի՞թե դա նշան չէ, որ նրան գերագույն իշխանություն է վիճակված:

Իսկ ես տեղեկագրում¹⁹ գտա, որ նա ծնվել է Անցիումում:

(2) Պլինիոսը հերքում է Գետուլիկոսին, պնդելով, որ նա ստում է հաճոյանալու համար, որպեսզի բարձրացնի երիտասարդ ու փառահեղ կառավարչի պատիվը Հերկուլեսին նվիրաբերված²⁰ քաղաքի պատվով ևս. և նա առավել ևս վստահաբար է ստում, որ Տիբուրում դրանից մի տարի առաջ իսկապես Գերմանիկոսին որդի էր ծնվել և նույնպես Գայոս անվանվել՝ հենց այն գեղանի երեխան, որի մահվան մասին մենք խոսեցինք վերևում: (3) Պլինիոսին, իր հերթին, հերքում է իրադարձությունների հաջորդականությունն ինքը՝ չէ՞ որ Օգոստոսի մասին գրող բոլոր պատմագիրները միահամուռ ասում են, որ երբ իր կոնսուլությունից հետո Գերմանիկոսն ուղարկվեց Գալլիա, Գայոսն արդեն ծնվել էր: Պլինիոսի կարծիքը չի հաստատում նաև բագինի վրայի արձանագրությունը, քանի որ այդ վայրերում Ագրիպպինան ծննդաբերել էր երկու աղջիկ, իսկ «ծննդաբերել» (puerperium) առանց տարբերութայն անվաճ

նում են և տղայի, և աղջկա ծնունդը, որովհետև հնում թե աղջիկներին (puellae) էին անվանում puerae, թե տղաներին (pueri) էին անվանում puelli: (4) Գոյություն ունի նաև Օգոստոսի նամակը իր թոռնուհի Ագրիպպինային, գրված մահից մի քանի ամիս առաջ, որտեղ հետևյալ կերպ է խոսվում մեր Գայոսի մասին, քանզի այն ժամանակ այդ անունով ոչ մեկ ուրիշ երեխա չի եղել. «Ծրեկ ես պայմանավորվեցի Տալարիոսի և Ագրիլիոսի հետ, որպեսզի նրանք իրենց հետ վերցնեն փոքրիկ Գայոսին տասնհինգերորդ օրը մինչև հունիսյան կալենդները²¹, եթե հաճո կլինի աստվածներին: Նրա հետ միասին ուղարկում եմ նաև լմ ստրուկներից մի բժշկի. Գերմանիկոսին գրել եմ, որ պահի նրան, եթե կուզենա: Մնաս բարյավ, սիրելի Ագրիպպինա, և ջանա քո Գերմանիկոսի մոտ հասնել քաջառողջ»: (5) Ըստ իս, միանգամայն պարզ է, որ Գայոսը չէր կարող ծնվել այնտեղ, ուր նրան բերեցին Հռոմից արդեն համարյա երկու տարեկան: Հետևապես, չի կարելի վստահել նաև ոտանավորներին, առավել ևս, որ նրանք անանուն են: Այդպիսով, հարկ է գերապատվություն տալ պետական հաստատությունների ցուցմունքներին որպես միակ պահպանվածների. ընդ որում Գայոսն ինքը բոլոր զվարճատեղիներից ավելի Անցիումն էր սիրում, անկասկած, որպես իր ծննդավայր: Ասում են, որ ձանձրանալով Հռոմից, նա նույնիսկ կամենում էր այնտեղ փոխադրել մայրաքաղաքն ու արքունիքը:

9. Կալիգուլա («երկարաճիտ կոշիկ») ²² մականվան համար նա պարտական էր ճամբարային կատակի, որովհետև նա մեծացել էր զինվորների շրջապատում, շարքային զորականի զգեստներով: Իսկ թե նման դաստիարակությունը զորքի մեջ ինչպիսի նվիրվածություն և սեր էր հարուցել նրա նկատմամբ, լավագույնս երևաց այն ժամանակ, երբ նա միայն իր տեսքով անկասկած հանդարտեցրեց զորականներին, որոնք խռովված էին Օգոստոսի մահից հետո և արդեն պատրաստ էին ցանկացած անմիտ քայլի: Իսկապես, նրանք միայն այն ժամանակ ընկրկեցին, երբ նկատեցին, որ խռովության վտանգից զերծ պահելու համար նրան հեռացնում են մերձավոր քաղաքի²³ պաշտպանությանը հանձնելու. միայն այստեղ նրանք, ցնցված զղջումից, բռնելով ու պահելով սայլակառքը, սկսեցին աղերսել, որ չպատժի իրենց նման անբարյացակամություններ:

10. Հոր հետ միասին նա ուղևորություն կատարեց նաև Ասորիք: Վերադառնալով այնտեղից, նա սկզբում ապրում էր մոր մոտ, նրա աքսորումից հետո՝ իր նախատատի՝ Լիվիա Օգոստոսուհու մոտ. երբ սա մահացավ, նա, դեռևս մի պատանյակ, գովաբանական ճառ արտասանեց նրա դիակի վրա ռոստրալային տրիբունայից: Այնուհետև նա գնաց ապ-

րելու իր տատի՝ Անտոնիայի մոտ: Առ տասնինը տարեկանը²⁴ Տիրբերիոսը նրան կանչեց Կապրի՝ այդ ժամանակ նա միևնույն օրը հագավ շափահասի տոգա և առաջին անգամ սափրվեց, բայց առանց այնպիսի հանդիսությունների, որոնցով ուլեկցվել էր նրա եղբայրների շափահասությունը: (2) Կապրիում շատերը խորամանկորեն կամ բռնի փորձում էին նրանից դժգոհության արտահայտություններ կորզել, բայց նա, ոչ մի անգամ գայթակղության չենթարկվեց. թվում էր, թե նա բոլորովին մոռացության է մատնել իր մերձավորների ճակատագիրը, ասես նրանց հետ ոչինչ էլ չէր պատահել: Իսկ այն ամենը, ինչ ստիպված էր կրելու նա ինքը, այնպիսի անասելի ձևացումով էր տանում, որ արդարացիորեն նրա մասին ասում էին՝ «աշխարհում ավելի լավ ստրուկ և ավելի վատ տիրակալ չի եղել»²⁵:

11. Մակայն արդեն այն ժամանակ նա չէր կարողանում սանձահարել իր բնածին մոլեգնությունը և արատավորությունը: Նա ազահ հետաքրքրասիրությամբ էր ներկա լինում խոշտանգվողների տանջաքննություններին ու մահապատիժներին, գիշերները կեղծամով ու երկարափեշ զգեստներ հագած թափառում էր պանդոկներում ու ետնախորշերում, մեծ հաճույքով պարում ու երգում էր բեմի վրա: Տիրբերիոսը հաճությամբ էր այդ թույլատրում, հուսալով դրանով մեղմել նրա վայրագ բարքը: Խորաթափանց ծերունին տեսնում էր նրա ողջ էությունը և մեկ անգամ չէր կանխագուշակել, որ Քայոսն ապրում է ի կործանումն իրեն և բոլորի, որ ի դեմս նրա ինքը իժ է սնուցանում²⁶ հոռմեական ժողովրդի համար և Ֆահտոն²⁷ ողջ երկրագնդի համար²⁸:

12. Փոքր-ինչ ուշ նա ամուսնացավ Յունիա Կլավդիլլայի՝ Մարկոս Սիլանոսի, ամենաազնվատոհմիկ հոռմեացիներից մեկի, դստեր հետ: Այնուհետև նա նշանակվեց ավգուր իր եղբայր Դրուզոսի տեղը, բայց մինչև օծվելը բարձրացվեց քրմապետի աստիճանի: Դա նրա ազգակցական զգացմունքների և հոգեկան ձիրքերի ճանաչման կարևոր նշան էր՝ Տիրբերիոսի տունը արդեն զրկված էր ամեն մի այլ հենարանից: Սեյանոսը շուտով կասկածի ենթարկվեց և ոչնչացվեց որպես հայրենիքի թշնամի, և Քայոսը գնալով ավելի ու ավելի մեծ հույսեր էր ստանում ժառանգության համար: (2) Որպեսզի էլ ավելի ամուր հաստատվի դրանում, նա, այն բանից հետո, երբ Յունիան մահացավ ծննդաբերության ժամանակ, գայթակղեց էնիա Նևիային՝ պրևտորական կոհորտաների գլուխ կանգնած Մակրոնի²⁹ կնոջը. նրան խոստացավ ամուսնանալ հետը, երբ հասնի իշխանության, և դրա համար երգում ու ստորագրություն տվեց: Կնոջ միջոցով նա շահեց Մակրոնի վստահությունը և այդ ժամանակ, ինչպես ենթադրում են ոմանք, թունավորեց Տիրբերիոսին:

Մեռնողը դեռ շնչում էր, երբ Գայոսը կարգադրեց հանել նրա մատանին, թվում էր, թե Տիբերիոսը դիմադրում է: Այնժամ Գայոսը հրամայեց բարձով խեղդամահ անել նրան և իր ձեռքերով սեղմեց նրա կոկորդը, իսկ ազատաւձակին, որը ճշացել էր, տեսնելով նրա շարագործութիւնը, տեղնուտեղը խաշել տվեց: (3) Եվ դա հեռու չէ ճշմարտութիւնից՝ ոմանք հաղորդում են, որ նա ինքն էր պարծենում եթե ոչ կատարած, ապա գեթ մտահղացած հանցագործութեամբ. հանապազ հպարտանալով իր ազգակցական զգացմունքներով, նա ասում էր, որ մի անգամ դաշույնը ձեռքին մտել է քնած Տիբերիոսի ննջարանը, որպեսզի վրեժխնդիր լինի մոր և եղբայրների կործանման համար, բայց խղճահարութիւն է զգացել, նետել է դաշույնն ու հեռացել. Տիբերիոսն այդ մասին իմացել էր, բայց չէր համարձակվել ոչ հետապնդել, ոչ էլ պատժել նրան:

13. Այդպես նա հասավ իշխանութեան ի կատարումն հռոմեական ժողովրդի կամ, ավելի լավ է ասել, ողջ մարդկային ազգի լավագույն հույսերի: Նա ամենացանկալի կառավարիչն էր և՛ պրովինցիաների մեծամասնութեան ու զորքերի համար, որտեղ շատերը հիշում էին նրան դեռևս մանուկ, և՛ ամբողջ հռոմեական բազմութեան համար, որը սիրում էր Գերմանիկոսին և ցավակցում նրա համարյա կործանված տոհմին: Դրա համար էլ երբ նա ելավ Միզենայից, ապա, շնայած սգո մեջ էր և ուղեկցում էր Տիբերիոսի դիակը, ճանապարհին ժողովուրդը դիմավորում էր նրան ցնծացող հոծ բազմութեամբ բազիններով, զոհերով, բոցավառ ջահերով, ճանապարհելով նրան բարի ցանկութիւններով, անվանելով և՛ «աչքի լույս», և՛ «աղավնյակ», և՛ «պատկեր», և՛ «զավակ»: 14. Իսկ երբ նա մուտք գործեց Հռոմ, սենատի և կուրիա ներխուժած ամբոխի միահամուռ վճռով իսկույնեթ նրան հանձնարարվեց բարձրագույն ու լիակատար իշխանութիւնը, հակառակ Տիբերիոսի կտակի³⁰, որը նրան նըշանակել էր իր անշափահաս թոռան համաժառանգ:

Ժողովրդի ցնծութիւնն այնպիսին էր, որ մոտակա երեք ամսից էլ պակաս ժամանակում, ասում են, մորթվեցին ավելի քան հարյուր վաթսուն հազար զոհակենդանիներ: (2) Երբ մի քանի օր անց նա մեկնեց կամպանյան կղզիները³¹, բոլորը մաղթում էին հանուն նրա շուտափույթ վերադարձի, բաց շթողնելով ամենափոքր իսկ առիթը՝ արտահայտելու տագնապ ու հոգատարութիւն նրա բարեկեցութեան մասին: Երբ նա փոքր-ինչ տկարացել էր, մարդիկ ամբողջ գիշերներ խմբվում էին Պալատինումի շուրջը. կային և այնպիսիները, ովքեր գրավոր երդումներ էին տալիս մահու շափ մարտնչել հիվանդի առողջանալու համար կամ հանուն նրա տալ իրենց կյանքը³²: (3) Քաղաքացիների անսահման սերը լրացնում էր օտարերկրացիների հիանալի բարեհաճութիւնը: Արտա-

վանը³³, պարթևական արքան, որը մշտապես բացահայտ ատելութուն ու արհամարհանք էր տածում Տիբերիոսի նկատմամբ, այժմ ինքն էր ինդրում Գայոսի բարեկամությունը, բանակցությունների գնաց կոնսուլական լեգատի հետ և, անցնելով Եփրատը, պատիվներ մատուցեց հոռմեական արծիվներին, լեգեոնների նշաններին և Կեսարների պատկերներին:

15. Նա ինքն էլ անում էր հնարավոր ամեն բան, որպեսզի մարդկանց մեջ սեր հարուցի իր նկատմամբ: Դառն արցունքներ թափելով, նա ժողովրդի առջև արտասանած գովաբանական ճառով հարգանքի տուրք մատուցեց Տիբերիոսին և հանդիսավորությամբ թաղեց: Ապա իսկույնեթ մեկնեց Պանդատերիա և Պոնտիական կղզիները, շտապելով հավաքել մոր և եղբայրների աճյունները. նա ծով ելավ փոթորկալից եղանակին, որպեսզի ավելի տեսանելի լիներ նրա որդիական սերը, երկյուղածությամբ մոտեցավ նրանց աճյուններին, իր իսկ ձեռքերով դրանք ամփոփեց սափորների մեջ³⁴. ոչ պակաս ճոխությամբ, նավախելին դրոշ պարզած բիրեմայով, նա դրանք բերեց Օստիա և Տիբրոսի հոսանքն ի վեր՝ Հոռմ, որտեղ ամենաերևելի հեծյալները ժողովրդի բազմության միջով երկու պատգարակով դամբարան մտցրեցին դրանք: Ի հիշատակ նրանց սահմանեց ամենամյա ժողովրդական հիշատակաց ծեսեր, իսկ ի պատիվ մոր՝ նաև կրկեսախաղեր, որտեղ վերջինիս պատկերը հատուկ մարտակառքով տանում էին թափորի առջևից: (2) Իսկ հորը նա հարգանք մատուցեց, ի հիշատակ նրա սեպտեմբեր ամիսը անվանելով Գերմանիկոս: Դրանից հետո, ըստ սենատի որոշման, նա իսկույն իր տատ Անտոնիայի համար նշանակել տվեց այն բոլոր պատիվները, որոնք ժամանակին մատուցվում էին Լիվիա Օգոստոսուհուն: Իր մորեղբայր Կլավդիոսին, որը դեռևս հոռմեական հեծյալ էր, վերցրեց իր կոնսուլության ընկերակից. եղբորը՝ Տիբերիոսին, նրա շափահասության օրը որդեգրեց և դրեց պատանիների պարագլուխ³⁵: (3) Ի պատիվ իր քույրերի նա հրամայեց ամեն մի երգման ավելացնել. «Եվ թող շսիրեմ ես ինձ և իմ դավակներին ավելի, քան Գայոսին և նրա քույրերին», իսկ կոնսուլության առաջարկներին՝ «Եվ թող երջանկությունն ու հաջողությունը ուղեկից լինեն Գայոս Կեսարին և նրա քույրերին»³⁶:

(4) Ժողովրդական սիրո այդ նույն հետապնդումի մեջ նա ներում շնորհեց դատապարտյալներին ու աքսորյալներին. անցյալ ժամանակներից մնացած բոլոր մեղադրանքների համար նա թողություն հայտարարեց. մոր ու եղբայրների գործերին վերաբերող թղթերը բերեց Ֆորում և այրեց³⁷, աստվածներին վկա կանչելով, որ դրանցից ոչինչ չի կարդացել ու ձեռք չի տվել— դրանով նա մեկընդմիջտ ուզում էր հան-

գըստացնել մատնիչների ու վկաների վախը, իսկ իր կյանքի դեմ մահափորձի մասին մատնության գիրը նա նույնիսկ չընդունեց, հայտարարելով, որ ինքը ոչնչով և ոչ ոքի մեջ ատելություն առաջացնել չէր կարող և որ մատնիչների համար իր ականջները խուլ են: 16. Սպինտրիաներին³⁸, հրեշավոր հաճույքների հնարողներին, նա վտարեց Հոռոմից— նրան աղերսանքով դժվարությամբ համոզեցին ծովամույն շանել նրանց՝ Տիտոս Լաբիենոսի, Կրեմուցիոս Կորգոսի, Կասսիոս Սևերոսի աշխատությունները, որոնք ոչնչացված էին սենատի որոշումներով, նա թույլատրեց որոնել-գտնել, պահպանել և ընթերցել, հայտարարելով, որ իր համար ամենից ավելի կարևոր է այն, որ ոչ մի իրադարձություն չվրիպի հետնորդներից:

Տերության դրության մասին հաշվետվությունները³⁹, որը հրատարակում էր Օգոստոսը, իսկ Տիբերիոսը դադարել էր հրապարակելուց, նա կրկին հրամայեց հրապարակել: (2) Պաշտոնատար անձանց թույլատրեց ազատ վարել դատերը, ոչինչ չհարցնելով իրեն: Հեծյալների ցուցակները նա ստուգում էր խստորեն և մանրակրկիտ, բայց ոչ անխնա՝ ովքեր իրենց արատավորել էին խայտառակությամբ կամ անպատվությամբ, նա բոլորի ներկայությամբ խլում էր ձին, ովքեր պակաս մեղք ունեին, նրանց պարզապես բաց էր թողնում անունները հրապարակելիս: Որպեսզի դատավորների համար աշխատելը ավելի հեշտ լինի, նրանց շորս գեկուրիաներին միացրեց նաև նորը՝ հինգերորդը⁴⁰: Նա փորձում էր նաև ժողովրդին վերադարձնել պաշտոնատար անձանց ընտրությունը, վերականգնելով ժողովրդական ժողովները⁴¹: (3) Տիբերիոսի կտակով ստացած նվերները, թեև այն անվավեր էր հայտարարվել, ինչպես նաև Յուլիա Օգոստոսուհու կտակով⁴² ստացածները, որ Տիբերիոսը թաքցրել էր, նա հաշվեց ու վճարեց ազնվորեն և առանց վերապահության: Նա ազատեց Իտալիան առուվաճառքից գանձվող կես տոկոսանոց հարկից⁴³. հրդեհներից տուժած շատերի վնասները նա փոխհատուցեց: Եթե նա թագավորներին էր վերադարձնում նրանց թագավորությունները, ապա վճարում էր անցյալ ժամանակների բոլոր հարկերն ու եկամուտները. այսպես, Անտիոքոս Կոմմագենացին⁴⁴ ստացավ հարյուր միլիոն սեստերցիում, որը ժամանակին խլվել էր նրանից: (4) Որպեսզի ցույց տա, որ ինքը ոչ մի բարի գործ առանց խրախուսանքի չի թողնի, նա ութ հարյուր հազար սեստերցիում տվեց մի ազատարձակ կնոջ, որը ամենադաժան խոշտանգումների ենթարկվելով հանդերձ չէր մատնել իր պատրոնի հանցագործությունները: Նրա այդ բոլոր գործերի համար սենատը, այլ պատիվների թվում, նրան ոսկյա վահան⁴⁵ նվիրաբերեց. ամեն տարի սահմանված օրը քրմական կուլեգիումները պետք է այդ վահանը Կա-

պիտուլիում մտցնելն սենատի ուղեկցությամբ և երգասացությամբ, որտեղ ազնվատոհմիկ տղաներն ու աղջիկները գովաբանում էին կառավարողի առաքինությունները: Որոշվել էր նաև, որ նրա՝ իշխանության գլուխ անցնելու օրը անվանվեր Պարիլիաներ⁴⁶, իբրև թե Հոռմի երկրորդ հիմնադրման նշան:

17. Նա շորս անգամ կոնսուլ եղավ. առաջին անգամ հուլիսյան կալենդներից երկու ամսվա ընթացքում, երկրորդ անգամ հունվարյան կալենդներից երեսուն օրվա ընթացքում, երրորդ անգամ՝ մինչև հունվարյան իդերը, չորրորդ անգամ՝ մինչև յոթերորդ օրը հունվարյան իդերից առաջ: Այդ կոնսուլություններից վերջին երկուսը հաջորդել են իրար: Երրորդ կոնսուլությունը նա ստանձնեց Լուգուրնումում մենակ, բայց ոչ թե գոռոզամտությունից կամ սովորույթների նկատմամբ տաժած արհամարհանքից, ինչպես կարծում են ոմանք, այլ միայն այն պատճառով, որ թացակա լինելով չէր կարող իմանալ, որ ըստ պաշտոնի իր ընկերակիցը հենց նոր տարուց առաջ մահացել էր: (2) Համաժողովրդական բախումներ նա կազմակերպեց երկիցս՝ երեք հարյուրական սեստերցիում յուրաքանչյուրին: Նույնքան էլ հյուրասիրություն սենատորների ու հեծյալների և նույնիսկ նրանց կանանց ու երեխաների համար: Երկրորդ հյուրասիրության ժամանակ դրան ավելացրած տղամարդկանց բաժանեց ճոխ տոգաներ, իսկ կանանց ու երեխաներին՝ կարմիր ծիրանի պարեգոտներ: Իսկ որպեսզի առաջիկայում էլ բազմապատկի ժողովրդի ուրախությունը, նա Սատուրնալիաների տոնին մի ավելորդ օր էլ ավելացրեց⁴⁸, անվանելով այն Յուվենալիաներ:

18. Նա մեկ անգամ չէ, որ գլադիատորական մարտեր է կազմակերպել, երբեմն Տավրոսի ամֆիթատրոնում, երբեմն սեպտայում. մենամարտերի ընդմիջումներին նա ելույթի էր հանել տալիս բոնցքամարտիկների ջոկատներ Աֆրիկայից ու Կամպանիայից՝ երկու մարզերի ծաղիկը: Միշտ չէ, որ նա էր կարգադրում հանդիսախաղերը, այլ երբեմն այդ պատիվը զիջում էր իր բարեկամներին կամ պաշտոնատար անձանց: (2) Թատերական ներկայացումներ նա միշտ էր տալիս, տարատեսակ և տարբեր տեղերում, երբեմն նույնիսկ գիշերները, ջահեր վառելով ամբողջ քաղաքով մեկ: Նետում էր նա նաև ամեն տեսակ նվերներ, բաժանում նաև ուտելիքով զամբյուղներ յուրաքանչյուրի համար: Մի հոռմեացի հեծյալի, որը նման հյուրասիրության ժամանակ նստած էր նրա դիմաց և առանձնահատուկ հաճույքով ու ճաշակով էր ուտում, նա ուղարկեց նաև իր սեփական բաժինը, իսկ մի սենատորի նմանատեսակ դեպքում հրամանագիր ուղարկեց արտահերթ պրետոր նշանակելու մասին: (3) Շատ անգամներ նա կազմակերպել է նաև կրկեսային մրցումներ

առավոտից մինչև երեկո, ընդմիջելով աֆրիկական որսահալածանքներով⁴⁹ և տրոյական խաղերով. ամենաճոխ խաղերի ժամանակ բեմին սփռում էին կարմրադեղ ու լեռնային կանաչ⁵⁰, իսկ ձիերը վարում էին միայն սենատորները: Մեկ անգամ նա խաղեր կազմակերպեց նույնիսկ հան-կարծակի և առանց նախապատրաստության, երբ դիտում էր կրկեսի կահավորումը Գեյոտի տնից⁵¹, և հարևան պատշգամբներից մի քանի մարդ խնդրեցին նրան այդ մասին:

19. Բացի այդ, նա հնարեց նոր և մինչ այդ չսլած հանդիսախաղ՝ նա կամուրջ գցել տվեց Բայքի և Պուտեոլքի ծովապատնեշի միջև գտնվող ծովախորշի վրայով համարյա երեք հազար վեց հարյուր քայլ երկարությամբ⁵²: Դրա համար նա ամեն կողմից հավաքեց բեռնանավեր, երկու շարքով խարիսխ գցել տվեց, նրանց վրա հողաթումբ բարձրացրեց և հավասարեցրեց Ապպիոսի ճանապարհի օրինակով: (2) Այդ կամրջով նա երկու օր ետ ու առաջ էր ընթանում՝ առաջին օրը պճնաղարդված ձի հեծած, կաղնե պսակով⁵³, փոքրիկ վահանով, սրով և ոսկեկար թիկնոցով. հաջորդ օրը՝ կառավարի հագուստներով, մարտականքով, որին մի զույգ լավագույն երիվաներ էին լծված, իսկ նրա առջև-վից՝ պարթևական պատանդներից մանուկ Դարևհը, ետևից՝ պրետորականների ջոկատը և շքախումբը սայլակառքերով: (3) Ես գիտեմ, որ, շատերի կարծիքով, Գայոսն այդ կամուրջը հնարել էր ի նմանություն Քսերքսեսի, որն այնպիսի խանդավառություն առաջացրեց, անջրպետելով շատ ավելի նեղ Հելեսպոնտոսը⁵⁴, իսկ այլոց կարծիքով՝ որպեսզի վիթխարի կառույցով սարսափեցնի Գերմանիան ու Բրիտանիան, որոնց նա սպառնում էր պատերազմով: Սակայն երիսա ժամանակ ես լսել եմ այդ ձեռնարկման իսկական պատճառի մասին իմ պապից, որը դրա մասին իմացել էր վստահելի պալատականներից. բանն այն է, որ երբ Տիբերիոսը անհանգստանում էր իր հաջորդի հարցում և արդեն հակված էր հօգուտ հարազատ թոռան⁵⁵, աստղագուշակ Թրասիլլեսը հայտարարել էր նրան, որ Գայոսը ավելի շուտ ձիերով կսուրա Բայքի ծովածոցով, քան թե կայսր կդառնա:

20. Նա հանդիսախաղեր էր կազմակերպում նաև պրովինցիաներում՝ աստիական խաղեր Սիրակուզայում՝ Սիցիլիայում, խառն խաղեր Լուզդունումում՝ Գալլիայում⁵⁶: Այստեղ տեղի էին ունենում նաև լատինական և հունական ճարտասանության մրցույթներ, որոնցում հաղթվածները, ասում են, հաղթողներին պետք է պարգևներ վճարեին և նրանց պատվին գովերգություններ հորինեին. իսկ նրանց, ովքեր ամենից քիչ էին գոհացրել, կարգադրված էր ջնջել իրենց գրածները շուրթերով կամ լեզվով, եթե չէին ուզում ճիպոտահար լինել կամ լողացվել մոտակա գետում:

21. Տիրերիոսի անավարտ թողած կառույցները⁵⁷՝ Օգոստոսի տաճարը և Պոմպեոսի թատրոնը նա ավարտեց: Նա ինքն սկսեց շրմուղ կառուցել Տիրուրի մարզից⁵⁸ և ամֆիթատրոն սեպտայի մոտ. այդ կառույցներից մեկը նրա հաջորդ Կլավդիոսը հասցրեց ավարտին, մյուսը թողեց: Միրակուզայում նա վերականգնեց հնությունից փլված պարիսպները և աստվածների տաճարը: Նա պատրաստվում էր նաև Սամոսում կառուցել-ավարտել Պոլիկրատեսի պալատը, Միլեթում ավարտել Դիդիմեական տաճարը⁵⁹ և Ալպիական լեռներում քաղաք հիմնադրել, բայց ամենից շուտ՝ փորել Դսթմոսի⁶⁰ պարանոցը Աքայայում. նա նույնիսկ այնտեղ ուղարկեց մի ավագ ցենտուրիոնի, որպեսզի նախնական չափումներ կատարի:

22. Մինչև հիմա խոսվում էր տիրակալի մասին, այսուհետև ստիպված ենք խոսել հրեշի մասին:

Նա բազմաթիվ մականուններ է յուրացրել՝ նրան անվանում էին և՛ «բարեպաշտ», և՛ «ճամբարի որդի», և՛ «զորաց հայր» և՛ «բարի ու մեծագույն Կեսար»: Մեկ անգամ լսելով, թե ինչպես իր մոտ ճաշի ժամանակ թագավորները⁶¹, որոնք Հռոմ էին ներկայացել ողջունելու նրան, վիճաբանում են ազնվազարմության մասին, նա բացականչեց.

... եվ թող միակ մեկը լինի տիրակալ,
Թագավոր թող միակ մեկը լինի⁶².

Քիչ էր մնում, որ նա տեղնուտեղը ադամանդախույր ընդունի և պրինցիպատի երևութականությունը վերածի թագավորական իշխանության: (2) Սակայն նրան համողեցին, որ նա տիրակալներից ու թագավորներից ավելի վեր է բարձրացել: Այնժամ նա սկսեց հավակնել արդեն աստվածային մեծության: Նա կարգադրեց Հունաստանից բերել այն աստվածների արձանները, որոնք փառաբանված են և՛ սլաշտամունքով, և՛ արվեստով, այդ թվում նույնիսկ Օլիմպիական Զևսինը⁶³, որպեսզի հանել տա նրանց գլուխները և փոխարինի իր գլխով: Պալատինումի պալատը նա շարունակեց մինչև բուն Ֆորում, իսկ Կաստորի և Պոլլուքսի տաճարը վերածեց նրա նախասրահի⁶⁴, և հաճախ էր կանգնում այնտեղ երկվորյակների արձանների միջև, հաճախորդներից ընդունելով աստվածային պատիվներ. և ոմանք մեծարում էին նրան որպես լատինական Յուպիտերի⁶⁵: (3) Ավելին, նա իր աստվածությանը հատուկ տաճար նվիրաբերեց, քուրմեր նշանակեց, սահմանեց ամենանրբաճաշակ զոհեր: Տաճարում նա դրեց իր արձանը ամբողջ Գասակով մեկ և հանդերձավորեց այն սևփական զգեստներով: Քրմապետի պաշտոնը հերթով վարում էին

ամենահարուստ քաղաքացիները⁶⁶, մրցակցելով և սակարկելով դրա համար: Զոհակենդանիներն էին սիրամարգերը, կարմրաթևիկները, ցախաբլտրները, խսլոտահավերը, փասիանները՝ ամեն օրվա համար յուր տեսակը: (4) Գիշերները, երբ փայլում էր լիալուսինը, նա անդուլ լուսնին իր գիրկն ու անկողինն էր կանչում, իսկ ցերեկը առանձնացած խոսում էր Կապիտոլիումական Յուպիտերի հետ՝ երբեմն շնջալով, մերթ թեքվելով նրա ականջին, մերթ իր ականջը դնելով նրա շուրթերին, իսկ երբեմն էլ բարձրաձայն և նույնիսկ բարկացկոտ: Այսպես, մի անգամ լսել էին նրա սպառնալից խոսքերը.

— Դու ինձ բարձրացրու, ապա թե ոչ ես քեզ...⁶⁷—

Իսկ հետո նա պատմում էր, որ աստվածը, վերջապես, իրեն գթացել է և նույնիսկ հրավիրել ապրելու իր հետ միասին: Դրանից հետո նա կամուրջ գցել տվեց Կապիտոլիումից Պալատինում՝ աստվածային Օգոստոսի տաճարի միջով, իսկ հետո էլ, որպեսզի ավելի մոտ բնակություն հաստատի, իր համար նոր տան հիմք գցեց Կապիտոլիումի բլուրի վրա:

23. Ազրիպայային նա շէր ուզում ընդունել կամ անվանել իր պապը նրա անտոհմիկ լինելու պատճառով և զայրանում էր, երբ ճանաչում կամ բանաստեղծություններում որևէ մեկը նրան դասում էր Կեսարների կարգը: Նա անգամ պարծենում էր, թե իբր իր մայրը ծնվել է արյունապղծությունից, որ կատարել է Յուլիայի հետ Օգոստոսը. և, չբավարարվելով նման զրպարտությունից Օգոստոսի հասցեին, նա արգելեց հանդիսավորապես տոնելու Ակտիումի և սիցիլիական հաղթանակները⁶⁸, որպես աղետաբեր ու կործանարար հռոմեական ժողովրդի համար: (2) Լիվիա Օգոստոսուհուն՝ իր նախատատին, նա մեկ անգամ չէ, որ անվանել էր «կանացի զգեստներով Ողիսես», և սենատին գրած նամակներից մեկում նույնիսկ անպատկառություն էր ունեցել մեղադրելու նրան անտոհմիկության մեջ, հավատացնելով, որ նրա պապը մոր կողմից դեկուրիոն է եղել Յունդից, մինչդեռ պետական հուշարձանները պարզորոշ ցույց են տալիս, որ Ավփիդիոս Լուրկոնը բարձր պաշտոններ է գրավել Հռոմում: Իր տատ Անտոնիային, որը նրանից առանձին տեսակցություն էր խնդրում, ընդունեց միայն պրեֆեկտ Մակրոնի ներկայությամբ: Դրանով և նման նվաստացումներով ու վիրավորանքներով, իսկ ոմանց կարծիքով էլ՝ թույնով, նա գերեզման իջեցրեց տատին. բայց մահից հետո էլ ոչ մի հարգանք չմատուցեց Անտոնիային և ճաշասենյակից զմայլվում էր նրա թաղման խարույկով: (3) Իր եղբայր Տիբերիոսին նա անօպասելիորեն մահապատժի ենթարկեց, հանկարծակի նրա

մոտ ուղարկելով գինվորական տրիբունի, իսկ աներոջը՝ Միլանոսին, ստիպեց ինքնասպան լինել, ածելիով կտրելով կոկորդը: Նրանց մեղադրում էր այն բանում, որ մեկը վատ եղանակին իր հետ չի նավարկել փոթորկոտ ծովում⁶⁹, ասես հուսալով, որ փեսային դժբախտություն պատահելու դեպքում ինքը կտիրանա Հոռոմին, իսկ մյուսից դեղահոտ էր գալիս, ասես վախենում էր, որ եղբայրն իրեն կթունավորի: Մինչդեռ, Միլանոսը պարզապես ծովախտը տանել չէր կարողանում և վախենում էր նավարկության դժվարություններից, իսկ Տիրերիոսը դեղ է ընդունում մշտական հազի դեմ, որը գնալով ավելի էր տանջում նրան: Իսկ ինչ վերաբերում է Կլավգիոսին՝ իր մորեղբորը, ապա Գայոսը նրան կենդանի թողեց սոսկ իր զվարճության համար:

24. Իր բոլոր քույրերի հետ նա կենակցեց հանցագործ կապով⁷⁰, և բոլոր հրավիրովի ճաշերի ժամանակ նրանք հերթով ընկողմանում էին մահճում նրա ներքևում, իսկ օրինական կինը՝ նրա վերևում: Ասում են, որ նրանցից մեկին՝ Դրուզիլլային, նա զրկել էր կուսությունից դեռևս պատանի ժամանակ, և Անտոնիա տատը, որի մոտ նրանք մեծանում էին, մեկ անգամ նրանց բռնել էր միասին: Հետո նրան կնության տվեցին կոնսուլական կոշման տեր սենատոր Լուկիոս Կասսիոս Լոնգինոսին, բայց նա խլեց քրոջն ամուսնուց, բացահայտ պահում էր որպես օրինական կին և նույնիսկ հիվանդության ժամանակ նրան նշանակել էր իր ունեցվածքի և իշխանության ժառանգորդուհի: (2) Երբ վերջինս մահացավ, նա այնպիսի սուգ սահմանեց, որ մահացու հանցանք էր համարվում ծիծաղելը, լողանալը, ծնողների, կնոջ կամ երեխաների հետ ճաշելը: Իսկ ինքը, ուժ չունենալով տանելու վիշտը, գիշերն հանկարծակի անհետացավ Հոռոմից, կտրեց անցավ Կամպանիան, հասավ Սիրակուզա և նույնպիսի սրընթացությամբ ետ դարձավ, մազակալած երեսով ու երկարած մազերով: Այդ պահից ամենակարևոր բաների մասին իր բոլոր երդումները, նույնիսկ ժողովում ժողովրդի և զորքերի առջև, նա արտասանում էր միայն Դրուզիլլա աստվածուհության⁷¹ անունից: (3) Մյուս քույրերին նա այդպես կրքոտ չէր սիրում և այդպես ուժեղ չէր պաշտում՝ հաճախ նրանց նույնիսկ հանձնում էր իր սիրեցյալներին զվարճանալու համար: Առավել ևս շուտափույթ նա դատապարտեց նրանց էմիլիոս Լեպիդոսի գործով⁷² անառակության և իր դեմ եղած դավադրությանը մասնակցելու համար: Նա ոչ միայն հրապարակեց նրանց ձեռքով գրված նամակները, որ կորզել էր նրանցից խարդախությամբ ու գայթակղությամբ, այլև նույնիսկ Վրիժառու Մարսի տաճարին նվիրաբերեց համապատասխան մակագրությամբ երեք թուր, որ պատրաստել էին նրան սպանելու համար:

25. Նրա ամուսնությունների մասին դժվար է ասել, թե որն էր այդտեղ անպարկեշտը՝ ամուսնություն կնքելը, ամուսնալուծվելը, թե ամուսնության մեջ լինելը: Լիվիա Օրեստիլլային, որը կնության էր գնում Գայոս Պիզոնին, նա ինքը ներկայացավ շնորհավորելու, տեղնուտեղը հրամայեց խլել նրան ամուսնուց և մի քանի օր անց բաց թողեց, իսկ երկու տարի հետո աքսոր ուղարկեց, կասկածելով, որ այդ ժամանակի ընթացքում նա նորից է միացել ամուսնուն: Մյուսներն ասում են, որ բուն հարսանեկան խնջույքի ժամանակ, ընկողմանած Պիզոնի դիմաց, նրան երկտող ուղարկեց. «Մի խցկվիր կնոջս մոտ»⁷³, իսկ խնջույքից հետո իսկույն իր մոտ տարավ Լիվիային և հաջորդ օրը էդիկտով հայտարարեց, որ իր համար կին է գտել Հոմոլուսի և Օգոստոսի օրինակով⁷⁴: (2) Կոնսուլյարիս և զորապետ Գայոս Մեմմիոսի կնոջը՝ Լուլիա Պավլինային, նա կանչել տվեց պրովինցիայից⁷⁵, լսելով, որ նրա տատը երբեմնի գեղեցկուհի է եղել, իսկույնեթ ամուսնալուծեց և կնության վերցրեց, բայց քիչ ժամանակ անց բաց թողեց, արգելելով նրան առաջիկայում մերձենալ որևէ մեկին: (3) Ցեպտիային, որն աչքի չէր ընկնում ո՛չ գեղեցկությամբ և ո՛չ էլ երիտասարդությամբ և որն արդեն մի ուրիշ ամուսնուց երեք աղջիկ էր ծննդաբերել, նա բոլորից ջերմ և բոլորից երկար սիրեց նրա հեջտասիրության և շուշուրից համար. հաճախ նրան զորքի մոտ էր տանում իր կողքին, ձի հեծած, թեթև վահանով, թիկնոցով ու սաղավարտով զրահավորված, իսկ բարեկամներին ցույց էր տալիս նույնիսկ մերկ վիճակում: Ամուսին կոչվելու նրան արժանացրեց ոչ ավելի վաղ⁷⁶, քան նա իրենից կծննդաբերեր, և միևնույն օրը հայտարարեց իրեն նրա ամուսին և նրա երեխայի հայր: (4) Այդ երեխային՝ Յուլիա Դրուզիլլային, նա պտտեցրեց բոլոր աստվածուհիների տաճարներում և, վերջապես, դրեց Միներվայի գիրկը, հանձնարարելով աստվածությանը մեծացնել նրան և սնուցանել: Լավագույն ապացույցը, որ այդ աղջիկը իր արյունից է, նա համարում էր նրա կատաղի բարձր՝ արդեն այդ ժամանակ աղջիկը մոլեգնության այնպիսի ասաիճանի էր հասնում, որ եղունգներով ճանկոտտում էր իր հետ խաղացող երեխաների դեմքերն ու աչքերը:

26. Այս բոլորից հետո դատարկ ու աննշան ևն թվում պատմություններն այն մասին, թե ինչպես էր նա վարվում բարեկամների ու մերձավորների հետ՝ Պտղոմեոսի, Յուլիա թագավոր որդու և իր ազգականի (նա Մարկոս Անտոնիոսի թոռն էր վերջինիս դուստր Սելենայից) և ամենից առաջ հենց Մակրոնի և էննիայի հետ, որոնք իշխանություն էին ընձեռել նրան⁷⁷. նրանք բոլորը ազգակցական զգացմունքի փոխարեն,

ծառայութիւնների համար երախտագիտութեան փոխարեն պարզեացնելու
վեցին դաժան մահով:

(2) Նույնքան քիչ հարգանք ու հեղուցիւն էր ցուցաբերում նա նաև
սենատորների նկատմամբ. ոմանց, ովքեր գրավում էին ամենաբարձր
պաշտոնները, զգեստավորված էին տոգաներով, ստիպում էր վազել իր
մարտակառքի ետևից մի քանի մղոն, իսկ ճաշելիս կանգնել իր օթոցի
գլխավերևում կամ ոտքերի մոտ, գոտևորվելով քաթանով⁷⁸: Մյուսներին
նա գաղտնի մահապատժի էր ենթարկում, բայց շարունակում էր հրավի-
րել նրանց, ասես նրանք ողջ լինեին, և սոսկ մի քանի օր անց կեղծավո-
րաբար հայտարարում էր, որ նրանք ինքնասպանութիւն են գործել: (3)
Կոնսուլներին, որոնք մոռացել էին էդիկտ հրապարակել նրա ծննդյան
օրվա մասին, նա պաշտոնազուրկ արեց⁷⁹, և երեք օր պետութիւնը մնում
էր առանց գերագույն իշխանութեան: Իր քվեստորին, որը մեղադրվում էր
դավադրութեան մեջ⁸⁰, նա կարգադրեց մտրակահար անել, քաշել հանե-
լով նրա զգեստները և նետելով զինվորների ոտքերի տակ, որպեսզի
սրանք հենվելու բան ունենան հարվածներ տեղալիս:

(4) Նույնպիսի գոռոզամտութեամբ ու դաժանութեամբ էր վերաբեր-
վում նա նաև մյուս դասերին: Մեկ անգամ կեսգիշերին, անհանգստա-
ցած լինելով ամբոխի աղմուկից, որը նախօրոք շտապում էր տեղեր գրա-
վել կրկեսում, նրանց բոլորին ցրեց ճիպոտներով՝ խառնակութեան ժա-
մանակ ոտնակոխ եղան ավելի քան քսան հոռմեացի հեծյալներ, նույն-
քան էլ ամուսնացած կանայք և անհամար թվով այլ մարդիկ: Թատերա-
կան ներկայացումների ժամանակ, ցանկանալով միմյանց հետ կովեցնել
պլեբեյներին ու հեծյալներին, նա ժամանակից շուտ էր բաժանում ձրի
անցաթղթերը⁸¹, որպեսզի խաժամուժը զավթի նաև հեծյալական տեղե-
րը: (5) Գլադիատորական խաղերին երբեմն վերցնել էր տալիս ծած-
կույթը կիզող տապի ժամանակ և հանդիսատեսներին չէր թույլատրում
տեղից շարժվել. կամ հանկարծ, սովորական ճոխութեան փոխարեն, բեմ
էր հանում հյուծված գազանների և խեղճ ու զառամյալ գլադիատորների,
իսկ զավեշտամարտիկների⁸² փոխարեն՝ ընտանիքի ամենապատվավոր
հայրերի, բայց որոնք այլանդակված էին որևէ մի խեղութեամբ: Եվ եր-
բեմն էլ փակում էր շտեմարաններն ու ժողովրդին դատապարտում քաղ-
ցի:

27. Ահա թե ինչպիսի արարքներով նա ամենից պարզ դրսևորեց իր
մոլեգին բարքը. երբ թանկացան այն անասունները, որոնցով կերակրում
էին հանդիսախաղերի համար նախատեսված վայրի գազաններին, նա
կարգադրեց նրանց երախը նետել հանցագործներին. և, շրջագայելով
դրա համար բանտերը, նա չէր նայում, թե ով ինչում է մեղավոր, ս.յլ դուռն

մեջ կանգնած ուղղակի հրամայում էր վերցնել բոլորին՝ «Ճաղատից մինչև ճաղատ»⁸³, (2) Մեկից, որը խոստացել էր որպես գլադիատոր մարտընչել նրա առողջանալու համար⁸⁴, նա պահանջեց կատարել ուխտը ու անձամբ դիտում էր, թե նա ինչպես է կռվում և բաց թողեց միայն հաղթանակից հետո, այն էլ երբ երկար ու բարակ աղերսեցին նրան: Այն մարդուն, որը խոստացել էր կյանքը տալ նրա համար, բայց հապաղում էր, հանձնեց իր ստրուկներին՝ քշելու համար նրան փողոցներով՝ պսակներով ու զոհաժապավեններով, իսկ հետո վար նետել հարթալանջից⁸⁵, (3) Առաջին դասերի շատ քաղաքացիների, խարանելով շիկացած երկաթով, աքսորում էր հանքավայրերում կամ ճանապարհների վրա աշխատելու կամ նետում էր վայրի գազանների երայսը, կամ հենց նրանց որպես գազանների շորեթաթ դետեղում էր վանդակներում, կամ սղոցով երկու կես էր անում, այն էլ ոչ թե ծանր հանցանքների համար, այլ հաճախ միայն այն բանի համար, որ նրանք վաս էին արտահայտվել նրա հանդիսախաղերի մասին կամ բնավ երբեք չէին երդվել նրա հանձարով: (4) Հայրերին նա ստիպում էր ներկա գտնվել որդիների մահապատժին⁸⁶. նրանցից մեկի էտեից նա պատգարակ ուղարկեց, երբ սա փորձել էր խույս տալ, պատճառաբանելով, որ հիվանդ է. մյուսին - մահապատժի տեսարանից անմիջապես հետո հրավիրեց ճաշկերույթի և, ամեն տեսակի սիրալիրություն ցուցաբերելով, հարկադրում էր կատակել և զվարճանալ⁸⁷. Գլադիատորական մարտերի և որսահալածումների վերակակացուին նա կարգադրեց մի քանի օր անընդհատ շղթաներով ծեծել իր աչքի առջև և սպանեց ոչ ավելի վաղ, քան կզգար նեխող ուղեղի զարշահատությունը: Ատելաններ հորինողին երկիմաստ կատակով մի ոտանավորի համար ողջակիզել տվեց խարույկի վրա՝ ամֆիթատրոնի կենտրոնում: Մեկ հոռմեացի հեծյալ, որը նետված էր վայրի գազանների առաջ, չէր դադարում բզավելուց, որ ինքն անմեղ է. նա հտ բերել տվեց հեծյալին, կտրեց լեզուն և կրկին ասպարեզ քշել տվեց: 28. Մի վտարանդու, որը վերադարձվել էր վաղեմի աքսորից, նա հարցրել էր, թե ինչով էր նա այնտեղ զբաղված. սա շողոքորթարար պատասխանել էր. «Անդադրում աղոթում էի աստվածներին, որսլեսզի Տիբերիոսը մահանա, և գու դառնաս կայսր, ինչ և կատարվեց»: Այնժամ նա մտածեց, որ իր համար էլ նրա աքսորյալները մահ են աղերսում, և կղզիները զինվորներ ուղարկեց, որպեսզի նրանց բոլորին կոտորեն⁸⁸: Մտադրվելով կտորկտոր անել մի սենատորի, նա կաշառեց մի քանի հոգու՝ կուրիա մտնելիս հարձակվելու նրա վրա, և գոչելով «հայրենիքի թշնամի», խոցելու նրան քարե գրիչներով և նետելու մյուս սենատորներին ի հոշոտում⁸⁹. և նա հագեցավ միայն այն ժամանակ, երբ տեսավ, թե ինչպես սպան-

վածի անդամները և փորձարկող փողոցներով քարշ տալով բերեցին ու կուտակեցին իր առջև:

29. Արարքների հրեշավորութունը նա խորացնում էր խոսքերի դաժանությամբ: Իր բարձր լավագույն և գովելի գիծը նա համարում էր անվրդովութունը⁹⁰, այսինքն՝ անամոթութունը: Նա իր տատ Անտոնիայի հորդորանքները ոչ միայն չէր լսում, այլև նույնիսկ նրան ասել էր. «Մի մոռանար, որ ես կարող եմ անել, ինչ ուզում եմ և ում հետ որ ուզում եմ»: Պատրաստվելով մահապատժի ենթարկելու եղբորը, որն իբրև թե դեղ էր ընդունել թունավորված լինելու երկյուղից, նա բացականչել էր. «Ինչպե՞ս, հակաթո՞ւյն, Կեսարի՞ դեմ»: Աքսորված քույրերին նա սպառնում էր, որ ինքը ոչ միայն կղզիներ, այլև թրեր ունի: (2) Պրետորական կոշման տեր մի սենատոր, որն Անտիկիրա⁹¹ էր մեկնել բուժվելու, մի քանի անգամ խնդրել էր հետաձգել իր վերադարձը. Գայոսը հրամայեց սպանել նրան, հայտարարելով, որ եթե ղանձլամերը չի օգնում, հարկավոր է արյուն առնել: Յուրաքանչյուր տասներորդ օրը, ստորագրելով մահապատժի ուղարկվող բանտարկյալների ցուցակները, նա ասում էր, որ իր հաշիվներն է մաքրում: Միաժամանակ մահապատժի ենթարկելով մի քանի գալլերի և հույների, նա պարծենում էր, որ հնազանդեցրել է նաև Գալլահունաստանը⁹²: 30. Նա միշտ պահանջում էր մարդկանց մահապատժի ենթարկել մանր, հաճախակի հարվածներով, կրկնելով իր նշանավոր հրամանը. «Խփիր, որպեսզի նա զգա, որ մեռնում է»: Երբ սխալմամբ պետք եղած մարդու փոխարեն մահապատժի ենթարկվեց նույն անունով մեկ ուրիշը, նա բացականչեց. «Սա էլ դրան արժեր»: Նա մշտապես կրկնում էր ողբերգության հայտնի խոսքերը.

Թող ատեն, միայն թե վախենան⁹³,

(2) Նա քանիցս կատաղաբար հարձակվել էր միասին վերցրած բոլոր սենատորների վրա, նրանց անվանել Սեյանոսի քսու արքանյակներ, մոր և եղբայրների դավաճաններ, ցույց տվել մատնության գրերը, որոնք իբրև թե այրել էր⁹⁴, արդարացրել Տիրերիոսին, որը, ըստ նրա, ակամայից էր մոլեգնում, քանի որ չէր կարող չհավատալ այդքան զրպարտիչների: Հեծյալների դասին նա միշտ փնտվում էր դեպի թատրոնն ու կրկեսը տաժած կրթի համար: Երբ խաժամուժը ի վիրավորանս նրա ծափահարում էր մյուս կառավարներին, նա բացականչեց. «Օ՛, եթե հոռմեացի ժողովուրդը միայն մեկ պարանոց ունենար»⁹⁵. Իսկ երբ նրան խնդրում էին գթալ ավազակ Տետրիսիոսին, պահանջողների մասին նա ասաց. «Նը-

րանք իրենք Տեսրիսիոսներ են»: Հինգ գլադիատոր-ուետիարիուսներ տունիկա հագած կուվում էին հինգ սեկուտորների⁹⁶ դեմ, առանց պայքարի անձնատուր եղան և արդեն մահվան էին սպասում, երբ հանկարծ հաղթվածներից մեկն արագորեն ճանկեց իր եռաժանին և կոտորեց բոլոր հաղթողներին. Գայոսը էզիկտում հայտարարեց, որ վշտացած է այդ արյունոտ ջարդի համար և անիծում է բոլորին, ով ընդունակ էր այն դիտել: 31. Նա նույնիսկ չէր թաքցնում, թե որքան է ցավում այն բանի համար, որ իր ժամանակը նշանավորված չէ ոչ մի համաժողովրդական աղետով՝ Օգոստոսի տիրակալությունը հիշվում է Վարոսի պարտությամբ, Տիբերիոսինը՝ ամֆիթատրոնի փլուզումով Ֆիդենքում, իսկ իր կառավարումը կմոռացվի ընդհանուր բարեկեցության պատճառով. և նորից ու նորից նա երազում էր զորքերի ջախջախման մասին, սովի, ժանտախտի, հրդեհների կամ գոնե երկրաշարժի մասին:

32. Նույնիսկ հանգստի պահերին, խնջույքների ու զվարճությունների ժամանակ, նրա մոլեգնությունը չէր լքում նրան ո՛չ խոսքերում, ո՛չ էլ արարքներում: Նախաճաշերի և գինարբուքների ժամանակ հաճախ նրա աչքի առաջ կարևոր գործերով հարցաքննություններ էին տարվում և խոշտանգումներ կատարվում, և կանգնած էր լինում գլխատելու վարպետ մի զինվոր, որպեսզի ցանկացած բանտարկյալի գլուխը կտրի: Պուտեոլքում կամրջի օժման ժամանակ — նրա այդ մտահղացման մասին մենք արդեն ասել ենք — նա ափից բազմաթիվ մարդկանց կանչեց իր մոտ և անսպասելիորեն ծովը նետեց, իսկ նրանց, ովքեր փորձում էին կառչել նավացուկներից, կեռածողերով ու թիերով հրում էր խորքը: (2) Հոռմում համաժողովրդական հյուրասիրության ժամանակ, երբ ինչ-որ մի ստրուկ թուցրել էր օթյակի արծաթյա զարդակտորը, նրան տեղնուտեղը հանձնեց դահճին, հրամայելով կտրել նրա ձեռքերը, կախել կրծքին և, մակագրելով, թե որն է նրա հանցանքը, անցկացնել խնջույքի մասնակիցների մոտով: Գլադիատորական դպրոցից Միրմիլոնը փայտե սրերով կուվում էր նրա հետ և դիտավորյալ ընկավ նրա առջև, իսկ նա երկաթե դաշույնով սպանեց հակառակորդին և ձեռքին արմավենի՝ վազեց հաղթաշրջանը: (3) Զոհ մատուցելիս նա հագնվեց իրրև մորթողի օգնական, իսկ երբ կենդանին մոտեցրին զոհասեղանին, թափ առավ և մուրճի հարվածով սպանեց հենց մորթողին: Ծոխ խնջույքի պահին նա հանկարծ սկսեց քրքջալ. կողքին ընկողմանած կոնսուլները քծնաբար սկսեցին հարցնել, թե ինչի վրա է ծիծաղում, և նա պատասխանեց. «Նրա վրա, որ բավական է ես գլխով նշան անեմ, և երկուսիդ կոկորդն էլ կկտրեն»:

33. Զվարճանալով նման կատակներով, նա մեկ անգամ կանգնեց

Յուպիտերի արձանի կողքին և հարցրեց ողբերգակ դերասան Ապելլե- սին, թե ո՞ւմ մեջ ավելի վեհություն կա: Իսկ երբ սրա պատասխանը հապաղեց, Գայոսը կարգադրեց մտրակով խարազանել նրան և, ի պատասխան լավող գանգատների, ասում էր, որ հառաջանքների մեջ էլ նրա ձայնը գերազանց է: Կնոջ կամ սիրուհու պարանոցը համբուրելիս նա ամեն անգամ ասում էր. «Ինչպիսի լավ պարանոց է, բայց բավական է հրամայեմ, և այն կթռչի ուտերից»: Եվ մեկ անգամ չէր սպառնացել, որ վերջը իր սիրելի ծեղոնիայից կիմանա, թեկուզ և խոշտանգումով, թե ինչու է ինքն այդքան սիրում նրան:

34. Նախանձն ու շարությունը նրա մեջ ավելի պակաս չէին, քան ամբարտավանությունն ու մոլեգնությունը: Նա թշնամանում էր մարդկային ազգի գրեթե բոլոր սերունդների հետ: Փառաքանված արանց արձանները, որոնք նեղ Կապիտոլիումից Օգոստոսը փոխադրել էր տվել Մարսյան դաշտ, նա տապալեց և այնպես ջարդուփշուր արեց, որ դրանք այլևս անհնար էր վերականգնել նախկին մակագրություններով. իսկ ապա նա արգելեց առաջիկայում ևս դնել ողջերի արձաններ կամ քանդակներ այլ կերպ, եթե ոչ միայն իր համաձայնությամբ ու առաջարկությամբ⁹⁸: (2) Նա մտորում էր նույնիսկ ոչնչացնել Հոմերոսի պոեմները— ինչո՞ւ, ասում էր նա, Պլատոնը կարող էր վտարել Հոմերոսին իր կառուցած պետութայնից⁹⁹, իսկ ինքը չի կարող: Քիչ էր մնում, որ Վերգիլիոսին ու Տիտոս Լիվիոսին ևս իրենց երկերով ու քանդակներով հանել տար բոլոր գրադարաններից. առաջինին նա միշտ փնտվում էր տաղանդի բացակայության և գիտության պակասի համար, իսկ երկրորդին՝ որպես շատախոս ու անհավաստի պատմագրի: Իրավաբանների գիտությունը նույնպես նա կարծես ուզում էր վերացնել, շարունակ կրկնելով, որ արդեն ինքը, վկա է աստված, հոգ կտանի, որ օրենքների ոչ մի մեկնաբանություն ընդդեմ չգնա իր կամքին:

35. Բոլոր ազնվատոհմիկ արանցից նա խլեց տոհմական արժանյաց հնավանդ նշանները՝ Տորքվատոսից մանյակը, Ճինցիննատոսից ոսկյա մազափունջը¹⁰⁰, հնամենի տոհմի պատկանող Գնեոս Պոմպեոսից՝ Մեծն մականունը: Պտղոմեոսին, որի մասին ես արդեն ասել եմ, նա հուկանչեց նրա թագավորութայնից, և Հոռոմում ընդունեց մեծ պատվով, իսկ սպանել տվեց միայն այն բանի համար, որ սա, մեկ անգամ ներկայանալով նրան գլադիատորների մարտը դիտելու, բոլորի հայացքը իր կողմը զրավեց իր ծիրանի թիկնոցի փայլով: (2) Հանդիպելով գեղեցիկ ու գանգրահեր մարդկանց, նա սափրել էր տալիս նրանց ծոծրակը, որպեսզի այլանդակի նրանց: Կար ոմն էզիոս Պրոկոլոս, ավագ ցենսուրիոնի որդի, որին հսկա հասակի և գեղեցիկ տեսքի համար անվանել էին

Կորուստ-տարփալի¹⁰¹. Հանդիսախաղերի ժամանակ հանկարծ սա կարգա-
գրեց սրան Քչել տեղից, ասպարեզ հանել, կռվեցնել թեթևազեն, ապա
ծանրազեն գլադիատորի հետ, իսկ երբ սա երկու անգամն էլ հաղթող
գուրս եկավ, հրամայեց կապոտել, քրչեր հագցնել, պտտեցնել փողոց-
ներով ի զվարճություն կնանոց և, վերջապես, փողատել: (3) Իսկապես
չկար այնպիսի անտոհմիկ և այնպիսի ողորմելի մի մաթգ, որին շջանար
թշվառացնել: Նեմի լճի թագավորի¹⁰² մոտ, որն արգեն շատ տարիներ
քուրմ էր, նա ավելի ուժեղ հակառակորդ ուղարկեց: Իսկ երբ Պորիոսը,
մարտակառքային գլադիատորը, ազատ էր արձակում իր հաղթանակած
ստրուկին, և ժողովուրդը կատաղորեն ծափահարում էր, Գայոսն այնպես
սրընթաց ամֆիթատրոնից դուրս նետվեց, որ տրորեց իր տոգայի փեշը
և աստիճաններով վայր գլորվեց, զայրացած ու բացականչելով, որ աշ-
խարհի տիրակալ ժողովուրդը ինչ-որ մի գատարկ բանից գլադիատորին
ավելի շատ պատիվ է ցույց տալիս, քան աստվածացված տիրակալնե-
րին և նույնիսկ հենց իրեն:

36. Նա շէր խնայում ոչ իր, ոչ էլ ուրիշների ամոթխածությունը:
Ասում են, որ նա ամոթալի կապերի մեջ էր Մարկոս Լեպիդոսի, մնջկա-
տակ Մնեոտերոսի, ինչ-որ պատանդների հետ: Կոնսուլական տոհմից մի
պատանի՝ Վալերիոս Կատուլլոսը, հայտարարել էր ի լուր ամենքի, որ
կայսեր հետ անցկացրած զվարճություններից մեջքը ցավում է: Չխոսե-
լով արգեն քույրերի հետ նրա արյունապղծության և պոռնկուհի Պիրալ-
լիդայի հանգեալ տաժած նրա կրքի մասին, նա ոչ մի անվանի կնոջ հան-
գիստ չէր թողնում: (2) Սովորաբար նա ամուսինների հետ նրանց կան-
չում էր ճաշկերույթի, և երբ կանայք անցնում էին իր օթյակի մոտով,
սևեռուն և անշտապ զննում էր նրանց, ինչպես ստրկավաճառ, իսկ երբ
մեկնումեկը ամոթից կախում էր գլուխը, նա ձեռքով բարձրացնում էր
նրա դեմքը: Հետո առաջին իսկ ցանկության գեպքում գուրս էր գալիս ճա-
շասենյակից և մոտը կանչում նրան, ով ամենից շատ էր գուր եկել. իսկ
վերադառնալուց հետո, գեմքին գեռևս վայելքի հեռքերը, բարձրաձայն
գովարանում կամ փնտվում էր նրան, մանրամասն թվարկելով, թե ինչ
լավ ու վատ բան է գտել նրա մարմնի մեջ և ինչպիսին է նա անկողնում:
Ոմանց ամուսինների բացակայությամբ նրանց անունից ապահարզան էր
ուղարկում և կարգադրում դրանք գրանցել տեղեկագրում:

37. Շքեղասիրության իր ծախսումներով նա գերազանցեց ամենա-
անզուսպ վատնիչներին: Նա հնարել էր անլուր լվացումներ, տարաշխար-
հիկ խորտիկներ ու խնջույքներ— լողանում էր բուրավետ, տաք ու զով
յուղերում, խմում քացախի մեջ լուծված թանկարժեք մարգարիտներ,
սեղանակիցներին հաց ու ակրատներ էր բաժանում զուտ ոսկու վրա:

Հարկ է ապրել կամ համեստաբար, կամ կեսարաբար», — ասում էր նա¹⁰³, նույնիսկ մի քանի օր անընդմեջ Հուլիոսի բաղիլիկի¹⁰⁴ ասնիքից նա բավական քանակությամբ գրամ էր նետում ժողովրդի մեջ: (2) Նա կառուցեց լիբուրնիական թիանավեր¹⁰⁵ տասը շարք թիերով, մարգարտյա նավախելով, զանազանագույն առագաստներով, սյունասրահներով, խնջույքի սենյակներով, նույնիսկ և ամեն տեսակի մրգի այգիներով՝ օրը ցերեկով խնջույք անելով, նա երաժշտությամբ ու երգեցողությամբ նավարկում էր Կամպանիայի ափերի երկայնքով: Կառուցելով վիլլաներ և գյուղական տներ, նա մոռանում էր ամեն մի ողջախոհություն, ջանալով սոսկ, որ կառուցի այնպիսի մի բան, որն անհնարին էր թվում: (3) Եվ այդ պատճառով պատենշներ էին բարձրանում խոր ու փոթորկոտ ծովում, կայծքարե ժայռերում անցումներ փորվում, հարթավայրերը հողակիտումներով բարձրանում էին մինչև լեռները, իսկ լեռները քանդվելով հավասարեցվում էին հողին¹⁰⁶, — և այդ բոլորը անհավատալի արագությամբ, որովհետև դանդաղելու համար կյանքով էին վճարում: Մանրամասնությունների մեջ չընկնելու համար բավական է ասել, որ հսկայական կարողություններ և այդ թվում Տիրերիոս Կեսարի ամբողջ ժառանգությունը՝ երկու միլիարդ յոթ հարյուր միլիոն սեստերցիում, նա վատնեց մեկ տարուց պակաս ժամանակամիջոցում¹⁰⁷:

38. Այնժամ, քայքայվելով ու ազքատանալով, նա զբաղվեց կողոպուտով, դիմելով ամենախորամանկ զրպարտությունների, աճուրդների ու հարկերի: Նա մերժում էր հոռմեական քաղաքացիություն բոլոր նրանց, ում նախնիները այն ձեռք էին բերել իրենց և սերունդների համար, բացառելով միայն նրանց որդիներին՝ «հետնորդ» անվանումը նա վերագրում էր միայն առաջին սերնդին. իսկ երբ նրա մոտ էին բերում աստվածային Հուլիոսի և Օգոստոսի հրովարտակները, նա դեռ էր նետում¹⁰⁸ դրանք որպես հնացած ու անվավեր: Նա ունեցվածքի կեղծ գնահատման մեջ էր մեղադրում բոլոր նրանց, ում կարողությունը մարդահամարի ժամանակից չգիտես ինչու աճել էր: Ավագ ցենսուրիոնների կտակները¹⁰⁹, որտեղ որպես ժառանգներ անվանված չէին ոչ Տիրերիոսը իշխանության գլուխ անցնելուց հետո, ոչ էլ ինքը, նա ոչնչացնել տվեց երախտամոռության համար. իսկ մնացյալ քաղաքացիների կտակները, որոնց մասին լսել էր, թե իբր նրանք մտադրվել էին ժառանգությունը Կեսարին թողնել, համարեց դատարկ ու անվավեր: Դրանով նա այնպիսի սարսափ ներազդեց, որ նույնիսկ անծանոթ մարդիկ սկսեցին ի լուր ամենքի նրան հայտարարել համաժառանգ իրենց ազգականներին, ծնողները՝ համաժառանգ իրենց որդիներին. իսկ նա, ծաղր համարելով, որ նման հայտարարությունից հետո նրանք դեռ շարունակում են ապրել,

նրանցից շատերին հետո թունավորված խորտիկներ էր ուղարկում: (3) Այդպիսի գործերով նա ինքն էր հետաքննություն վարում, նախօրոք նշանակելով այն գումարը¹¹⁰, որը մտադիր էր հավաքել, և տեղից վեր շէր կենում, մինչև որ դրան շէր հասնում: Ամենափոքր իսկ հապաղում շէր թույլատրվում. մի անգամ նա մեկ դատավճռով դատապարտեց ավելի քան քառասուն մարդու ամենատարբեր մեղադրանքներով, իսկ հետո պարծենում էր Ցեզոնիայի մոտ, որն արթնացել էր ցերեկվա քնից, թե ինքը որքան գործ է կատարել, քանի դեռ նա հանգստանում էր:

(4) Նա աճուրդներ կազմակերպում էր վաճառքի համար առաջարկելով այն ամենը, ինչ մնացած էր լինում մեծ հանդիսախաղերից հետո, ինքն էր նշանակում գները և այն աստիճան բարձրացնում, որ ոմանք, ստիպված որևէ գնում կատարել, դրա վրա կորցնում էին իրենց ամբողջ կարողությունը և կտրում էին իրենց երակները: Հայտնի է, որ մեկ անգամ Ապոնիոս Սատուրնինոսը ննջել էր գնորդների նստարանի վրա, և Գայոսը խորհուրդ տվեց մոնետիկին ուշադրություն դարձնել այդ նախկին պրետորի վրա, որը ամեն ինչի գլխով է անում. և աճուրդն ավարտվեց միայն այն ժամանակ, երբ սենատորին անակնկալ կերպով վաճառվեցին տասներեք գլադիատորներ ինը միլիոն սեստերցիումով: 39. Նույնիսկ իր քույրերի դատապարտումից հետո Գալլիայում նա կազմակերպեց նրանց հանդերձների, կահկարասու, ստրուկների և անգամ ազատարձակների վաճառք՝ շսված գներով. այդ շահույթը նրան այնպես գայթակղեց, որ Հոմից բերել տվեց հին արքունիքի¹¹¹ ողջ կահավորանքը, իսկ դրանք տեղ հասցնելու համար հավաքեց բոլոր վարձու սայլերը և ջրաղացներից բոլոր բեռնակիր անասունները, այնպես որ երբեմն Հոմում հացը շէր բավականացնում, իսկ դատարանում շատերը տանուլ էին տալիս գործերը, ի զորու շինելով տեղ հասնել խոստացած ժամանակին: (2) Այդ կահկարասին վաճառելու համար նա շխորշեց ոչ խաբեությունից, ոչ էլ քծնանքից՝ մերթ հանդիմանում էր գնորդներին կծծիության համար, որ շեն ամաշում կայսրից հարուստ լինել, մերթ կեղծավորարար ափսոսում էր, որ պետք է տիրակալների ունեցվածքը զիջի մասնավոր անձանց: Մի անգամ նա իմացավ, որ պրովինցիայից մի հարուստ մարդ երկու հարյուր հազար է վճարել նրա ստրուկներին, որոնք հրավերներ էին ցրում, որպեսզի խորամանկաբար նրա մոտ ճաշի ընկնի. նա գոհ մնաց, որ այդ պատիվն այդպիսի գին ունի, և հաջորդօրը վաճառքի ժամանակ մի աննշան իր ուղարկեց հանձնելու նրան երկու հարյուր հազարով և ճաշի կանչելու իր՝ Կեսարի անունից:

40. Նա հավաքում էր նոր և աննախընթաց հարկեր՝ սկզբում կապալառուների, իսկ ապա, քանի որ դա ավելի շահավետ էր, պրետորական

ցենսուրիոնների և տրիբունների միջոցով: Ոչ մի իր, ոչ մի մարդ առանց հարկի չէր մնում: Քաղաքում վաճառվող ամեն տեսակ ուտեստեղենի համար մաքս էր գանձվում. ամեն մի դատական գործից նախօրոք գանձվում էր վիճելի գումարի քառասներորդ մասը, իսկ նրան, ով հրաժարվում էր կամ համաձայնության էր գալիս առանց դատարանի, պատժում էին. բեռնակիրները վճարում էին օրական վաստակի ութերորդ մասը, պոռնիկ կանայք՝ մեկ հարաբերության գինը. և օրենքի այդ հողվածին ավելացվեց, որ նման հարկի ենթակա են նաև բոլոր նրանք, ովքեր նախկինում անառակությամբ կամ կավատությամբ են զբաղվել, եթե նույնիսկ հետո նրանք օրինական ամուսնություն են կնքել:

41. Նմանաբնույթ հարկերը բանավոր էին հայտարարվել, բայց գրավոր չէին կախվել, և օրենքների ճիշտ բառերը չիմանալու հետևանքով հաճախ խախտումներ էին թույլատրվում. ի վերջո, ժողովրդի պահանջով, Գայոսը կախել տվեց օրենքը, բայց այնքան մանր գրել տվեց և այնպիսի անձուկ տեղում կախել տվեց, որ ոչ ոք չկարողանա այն արտագրել¹¹²: Իսկ որպեսզի ոչ մի օգուտ բաց չթողնի, նա Պալատինում լուպանար կազմակերպեց՝ առանձին և շուքով կահավորված անհամար սենյակներում, որ պալատի էին վայել, իրենց էին առաջարկում ամուսնացած կանայք և ազատածին պատանիներ, իսկ շուկաներն ու բազիլիկները մունետիկներ էին ուղարկվել, որպեսզի ահել ու ջահել գնային վայելքներ որոնելու. հաճախորդներին տոկոսով դրամ էր տրամադրվում, և հատուկ ծառաներ ընդհանուր տեղեկության համար գրանցում էին նրանց անունները, ովքեր բաղմապատկում էին Կեսարի եկամուտները:

(2) Նույնիսկ զառ խաղալուց նա չէր խորշում շահույթ կորզել, դիմելով և՛ խարդախության, և՛ կեղծ երդումների: Իսկ մի անգամ նա զիջեց իր հերթը¹¹³ հաջորդ խաղացողին, դուրս եկավ պալատի ատրիում և, տեսնելով երկու հարուստ հոմեոսի հեծյալների, որոնք անցնում էին կողքից, հրամայեց իսկույն բռնել նրանց և զրկել ունեցվածքից, իսկ հետո վերադարձավ խաղալու, պարծենալով, որ երբեք այդպես չի շահել:

42. Իսկ երբ նրան աղջիկ ծնվեց, նա, վկայակոչելով ոչ միայն կայսերական, այլև հայրական հոգսերը, սկսեց ընծաներ պահանջել աղջկա դաստիարակության և օժիտի համար: Էդիկտով հայտարարելով, որ Նոր տարվա համար ինքը նվերներ է սպասում, հունվարյան կալենդներին կանգնեց պալատի շեմին և որսում էր մետաղադրամները, որ բազմությամբ անցնող ցանկացած կոշման տեղ մարդիկ նետում էին նրան բոբրով ու փեշով: Վերջապես, տարված այդ դրամը շոշափելով զգալու կրթով, նա ոսկեդրամների հսկա կույտերը շաղ տվեց հատակին և հա-

ճախ ոտաբորիկ քայլում կամ երկար ժամանակ ամբողջ մարմնով գլորվում էր դրանց վրայով:

43. Պատերազմով կամ պատերազմական գործերով նա միայն մեկ անգամ զբաղվեց, այն էլ անսպասելիորեն: Մի անգամ, երբ նա գնում էր Մևանիա¹¹⁴ դիտելու Կլիտումնոս աղբյուրը և պուրակը, նրան հիշեցրին, որ ժամանակն է համալրելու բատավական թիկնապահների¹¹⁵ նրա ջուկատը: Այստեղ էլ նրա խելքին փշեց արշավանք ձեռնարկել Գերմանիա. և առանց հապաղելու, ամեն կողմից կանչելով լեզեոններն ու օժանդակ զորքերը¹¹⁶, մեծագույն խստությամբ անցկացնելով նոր համատարած գորահավաք, նախապատրաստելով այնքան պաշար, որքան բնավ երբեք չէին տեսել, նա ճանապարհ ընկավ: Շարժվում էր նա մերթ սրընթաց և արագ, այնպես որ պրետորական փաղանգները նրան հասնելու համար ստիպված էին երբեմն հակառակ սովորույթի դրոշները բարձել ջորիների վրա, մերթ հանկարծ դանդաղ ու ծուլ, երբ նրա պատգարակը ութ մարդ էր տանում¹¹⁷, իսկ շրջակա քաղաքների բնակիչները պետք է սրբեին նրա առջև ճանապարհը և ջուր շաղ տային, որ փոշի չբարձրանար:

44. Ժամանելով ճամբարատեղին, ուզեց ցույց տալ, որ ինքը գործունյա և խիստ զորավար է՝ անպատվությամբ հեռացրեց լեզատներին, որոնք ուշացումով էին տարբեր տեղերից բերել օժանդակ զորքերը. ավագ ցենտուրիոններին, որոնցից շատերին ալևոր տարիքի բերումով հաշված օրեր էին մնում պաշտոնաթող լինելու, նա զրկեց կոշումից, պատրվակ բռնելով նրանց զառամյալ լինելն ու անզորությունը, իսկ մնացածներին հայհոյեց ազահության համար և նրանց՝ ծառայությամբ վաստակած աշխատավարձը կրճատեց մինչև վեց հազարի¹¹⁸:

(2) Սակայն ամբողջ այդ արշավանքի ժամանակ նա ոչինչ չարեց. միայն, երբ փոքրիկ մի ջոկատով նրա պաշտպանությանը ապավինելով փախավ բրիտանական թագավոր Կինոբելլինոսի որդի Ադմոնիոսը, որին վտարել էր հայրը, նա մի ճոխ զեկուցագիր ուղարկեց Հռոմ, թե իբր ամբողջ կղզին իրեն է ենթարկվել, և կարգադրեց սուրհանդակներին շիջնել Լարտակաուբից¹²⁰ մինչև Ֆորում, կուրիայի դռներին հասնելը, որպեսզի միայն Մարսի տաճարում ամբողջ սենատի ներկայությամբ այն հանձնեն կոնսուլներին: 45. Իսկ հետո, քանի որ ոչ ոք չկար կռվելու համար, նա փր պահակախմբից մի քանի գերմանացիների հրամայեց անցնել Հռենոսից այն կողմ, թաքնվել այնտեղ և ցերեկային նախաճաշից հետո¹²¹ հուսահատ աղաղակով գուժել թշնամու մոտենալը: Բոլորը կատարվեց. և այնժամ նա մերձավորագույն ուղեկիցների ու պրետորական հեծյալների ջոկատի հետ միասին նետվում է հարևան անտառը, ծառերից ճյուղերը կտրում և,

ծառաբաները զարդարելով հաղթանշանների նման¹²², վերադառնում ջահերի լույսի տակ: Նրանց, ովքեր չգնացին նրա ետևից, հանդիմանեց վախկոտության ու փոքրոգության համար, իսկ ուղեկիցներին ու հաղթանակի մասնակիցներին պարգևատրեց նոր անվան ու տեսքի պսակներով՝ նրանց վրա գեղեցկորեն փայլում էին արևը, աստղերն ու լուսինը, և նրանք կոչվում էին «հետախուզական»: (2) Մի ուրիշ անգամ նա հրամայեց դպրոցից¹²³ վերցնել մի քանի պատանի պատանդների և գաղտնի առաջ ուղարկել, իսկ ինքը, հանկարծակի լքելով հյուրաճաշը, հեծելազորով նետվեց նրանց ետևից, բռնեց իբրև փախստականների և շղթայակապ ետ բերեց— այդ կատակերգության մեջ էլ, ինչպես միշտ, նա չափ չգիտեր: Երբ վերադարձավ խնջույքին, զինվորները նրան գեղուցեցին, որ ջոկատը հետապնդումից վերադարձել է. այդժամ նա առաջարկեց նրանց ինչպես որ կան, առանց զեն ու զրահ հանելու, տեղ գրավել սեղանի մոտ, և նույնիսկ, քաջալերելով նրանց, արտասանեց Վերգիլիոսի հայտնի ոտանավորը¹²⁴:

Հաստատուն եղեք և պահպանեք ձեզ ապագա հաջողությանց համար:

(3) Եվ միևնույն ժամանակ նա ցասումնալից էղիկտով հեռակա կարգով պարսավում էր սենատին և ժողովրդին այն բանի համար, որ նրանք, մինչ Կեսարը մարտնչում է այդքան վտանգների մեջ, հաճույքներ են վայելում անժամանակյա խնջույքներով, կրկեսով, թատրոնով և գեղեցիկ վիլլաներում հանգստանալով:

46. Վերջապես, ասես պատրաստվելով ավարտել պատերազմը, նա շարել տվեց զորքը ծովի ափին, դասավորեց բաքաններն ու մյուս մեքենաները, և մինչ ոչ ոք չգիտեր և չէր կռահում, թե ինչ է նա մտածում անել, հանկարծ հրամայեց բոլորին խեցիներ հավաքել սաղավարտների մեջ ու հագուստի ծալքերում— դա, ասաց նա, Օվկիանոսի ավարն է, որ նա ուղարկում է Կապիտոլիումին ու Պալատինումին¹²⁵: Ի հիշատակ հաղթանակի նա կռուցեց մի բարձր աշտարակ, որպեսզի այն, ինչպես Փարոսի փարոսը¹²⁶, գիշերները կրակով ուղի ցույց տար նավերին: Որպես պարգև զինվորներին նա խոստացավ յուրաքանչյուրին 100 դինար, ասես դա անսահման մի առատաձեռնություն լիներ, բացականչեց. «դե՛հ, գնացե՛ք հիմա, բախտավորներ, դե՛հ, գնացե՛ք, հարուստներ»:

47. Դրանից հետո նա դարձավ տրիումֆի գործերին: Չբավարարվելով բարբարոս գերիներով և փախստականներով, նա Գալլիայի բնակիչներից ընտրեց ամենաբարձրահասակներին և, ինչպես ինքն էր ասում, տրիումֆի համար պիտանեիններին, ինչպես նաև մի քանի իշխաններ՝

սրանց պահել էր հանդեսի համար, ստիպելով ոչ միայն երկարացնել մազերը և շիկակարմիր ներկել¹²⁷, այլև սովորել գերմաներեն և ընդունել բարբարոսական անուններ: Տրիրեմաները, որոնցով նա Օվկիանոս էր ելնում, հրամայվեց համարյա բոլորը ցամաքով Հոռմ տանել: Իսկ իր գանձապահներին նա գրեց, որ այնպիսի տրիումֆ նախապատրաստեն, որպիսին ոչ ոք չի տեսել, բայց դրա վրա հնարավորին շափ քիչ ծախսել՝ չէ որ նրանց տրամադրության տակ ամբողջ բնակչության ունեցվածքն է:

48. Նախքան պրովինցիան թողնելը նա մտադրվեց ևս մեկ հրեշավոր դաժանություն գործել՝ կոտորել բոլոր այն լեգեոնները, որոնք խոսկություն էին բարձրացրել Օգոստոսի մահից հետո, այն բանի համար, որ նրանք ժամանակին պաշարման մեջ էին պահել իրեն մանուկ հասակում և իր հորը՝ Կերմանիկոսին, իրենց զորավարին: Նրան դժվարությամբ ետ համոզեցին այդ խելահեղ մտադրությունից, բայց ոչնչով չկարողացան ետ պահել գեթ յուրաքանչյուր տասներորդին մահապատժի ենթարկելու ցանկությունից: Եվ ահա, լեգեոններին հավաքի գումարելով անգնն, նույնիսկ առանց թրերի, շրջապատեց նրանց զինված հեծելազորով. (2) բայց նկատելով, որ շատերը կռահում են, թե բանն ինչ է, և սողոսկում են դեպի զենքերը՝ հակահարված տալու համար, նա հավաքից փախավ և ուղղակի Հոռմ մեկնեց: Այժմ իր ողջ ատելությունը նա շրջեց դեպի սենատը. որպեսզի վերջ տա իր համար այդքան ամոթալի այդ լուրերին, նա սենատը հեղեղեց սպառնալիքներով, գանգատվելով նույնիսկ այն բանից, թե իբր իրեն մերժել են օրինական տրիումֆը, մինչդեռ դրանից քիչ առաջ նա ինքն էր մահվան սպառնալիքով արգելել իրեն պատիվներ մատուցելը¹²⁸: 49. Դրա համար էլ, երբ ճանապարհին նրան ներկայացան բարձրագույն դասի ներկայացուցիչները, աղերսելով շտապել, նա ամպագոռ ձայնով պատասխանեց. «Սա կգամ, այո՛, կգամ, և ինձ հետ՝ ահա թե ով»,— և թփթփացրեց գոտկից կախված թրի կոթը: Իսկ էդիկտում նա հայտարարում էր, որ վերադառնում է միայն նրանց համար, ովքեր ուզում են նրան՝ հեծյալների և ժողովրդի համար. իսկ սենատի համար նա այլևս ոչ քաղաքացի կլինի և ոչ էլ պրինցեպս: (2) Նա նույնիսկ արգելեց, որ սենատորներից որևէ մեկն ընդառաջ ելնի իրեն: Այդպիսի եղանակով, վերացնելով կամ հետաձգելով տրիումֆը, նա միայն օվացիայով հենց իր ծննդյան օրը մտավ Հոռմ:

Չորս ամիս անց նա կործանվեց, գործելով մեծ շարագործություններ և մտորելով ավելի ևս մեծերը: Այսպես, նա պատրաստվում էր վերաբնակվել Անցիումում¹²⁹, իսկ հետո Ալեքսանդրիայում, նախապես կոտորելով երկու դասերի լավագույն արանց: (3) Դա կասկածի ենթակա չէ՝ նրա գաղտնի թղթերում գտնվել էին երկու փոքր տետր, յուրաքանչ-

յուրը իր խորագրով՝ մեկը կոչվում էր «Սուր», մյուսը՝ «Դաշույն»։ այդ երկուսի մեջ կային անուններ և նշումներ նրանց մասին, ովքեր պետք է մեռնեին։ Հայտնաբերվել էր նաև մի մեծ սնդուկ՝ լեցուն տարատեսակ թույներով։ Կլավդիոսը հետո կարգադրեց այն ծովը նետել, և դրանից հետո, ասում են, այնպիսի վարակ տարածվեց, որ ալիքները շրջակա ափերը թունավորված ձուկ էին դուրս նետում։

50. Նա բարձր հասակ ուներ, դեմքը շատ գունատ էր, ծանրամարմին էր, վիզը և ոտքերը՝ շատ նիհար, աչքերն ու քունքերը փոս էին ընկած, ճակատը լայն էր ու մռայլ, գլխի մազերը՝ ցանցառ, գագաթինը՝ կունդ, իսկ մարմնի վրա՝ խիտ¹³⁰։ Դրա համար էլ մահացու մեղք էր համարվում նրան վերևից նայելը, կրթ նա անցնում էր, կամ սլառահարար «այծ» բառն արտասանելը։ Իր դեմքը, արդեն ի բնե այլանդակ ու վանող, նա ջանում էր ավելի կատաղի դարձնել, հայելու առջև վախեցնող ու սարսափեցնող արտահայտություն տալով նրան։

(2) Նա աչքի չէր ընկնում ոչ մարմնական, ոչ էլ հոգեկան առողջությամբ։ Մանուկ ժամանակ նա տառապել էր ընկնավորությամբ. պատանի ժամանակ, թեև տոկուն էր, բայց ժամանակ առ ժամանակ հանկարծակի թուլությունից գրեթե չէր կարողանում ո՛չ քայլել, ո՛չ կանգնել, ո՛չ տոկալ, ո՛չ էլ ուշքի գալ։ Իսկ իր մտքի մթագնումը նա ինքն էր զգում, և մեկ անգամ չէր մտադրվել հեռանալ գործերից, որպեսզի մաքրի ուլեղը։ Կարծում են, որ Յևզոնիան նրան մի դեղ էր տվել խմելու¹³¹, որը նրա մեջ սեր պետք է հրահրեր, բայց խելահեղություն էր առաջ բերել։ Հատկապես նա տառապում էր անքնությունից։ Գիշերները անընդմեջ երեք ժամից ավելի չէր քնում, այն էլ անհանգիստ՝ տարօրինակ տեսիլները տառնապեցնում էին նրան. մի անգամ երազում տեսավ, թե իբր իր հետ ինչ-որ ծովային ուրվական է խոսում։ Դրա համար էլ ուժ չունենալով անքուն պառկելու, նա գիշերվա մեծ մասն անց էր կացնում մերթ անկողնում նստած, մերթ էլ թափառելով անվերջ անցումներով և կրկին ու կրկին կանչելով ցանկալի արշալույսը։

51. Հիմք կա կարծելու, որ ուղեղի մթագնման պատճառով նրա մեջ զուգակցվում էին ամենահակադիր արատները՝ անշափ ինքնավստահությունը և միաժամանակ հուսահատ սարսափը։ Իսկապես, նա, որ այնքան արհամարհում էր աստվածներին իրենց, ամենափոքր իսկ ամպրոպի ու կայծակի դեպքում փակում էր աչքերն ու փաթաթում գլուխը, իսկ եթե ամպրոպն ավելի ուժեղ էր լինում, անկողնուց դուրս էր թռչում և պահվում մահճակալի տակ։ Սիցիլիայում իր ուղևորության ժամանակ նա դաժանաբար ծանակում էր տեղական բոլոր սրբությունները, բայց Մեսսանայից հանկարծ կեսգիշերին փախավ, սարսափահար եղած էտ-

Աստվծոյ խառնարանի ծխից ու գզրդչունից: (2) Բարբարոսների առջև նա սպառնալիքներ էր շոռայլում. բայց երբ մի անգամ Հռենոսից այն կողմ նեզ կիրճով անցնում էր սայլակառքով, շրջապատված գինվորների խիտ շարքերով, և ինչ-որ մեկն ասաց, թե հերիք է մի տեղից հայտնվի թըշնամին, և մեծ կոտորած կլինի, նա տեղնուտեղը թռավ ձիուն և սրընթաց վերադարձավ կամուրջների մոտ, և քանի որ սքանք ծանրաբեռնված էին գումակով ու սպասավորներով, իսկ նա շէր ուզում սպասել, ուստի նրան մյուս ասին անցկացրին մարդկանց գլուխների վրայով, ձեռքից ձեռք փոխանցելով: (3) Իսկ հետո, երբ լուր տարածվեց գերմանացիների ապստամբության մասին, նա նետվեց նախապատրաստելու փախուստը և նավատորմ փախուստի համար, հուսալով միակ ապաստարանը գտնել անդրծովյան պրովինցիաներում, եթե հաղթողները գրավեն Ալպերը, ինչպես կիմբրները, կամ նույնիսկ Հռոմը, ինչպես սենոնները¹³²: Ահա թե ինչու, հավանաբար, նրան սպանողները որոշել էին հանդարտեցնել վրդովված գինվորներին այն հերյուրանքով, թե իբր պարտության լուրն առած ժամանակ նա սարսափահար ինքնասպան է եղել:

52. Նրա հագուստները, ոտանամանները և մնացյալ սովորական հարգարանքը վայել չէին ո՛չ միայն հռոմեացուն, ո՛չ միայն քաղաքացուն, այլև պարզապես տղամարդուն և նույնիսկ մարդուն: Հաճախ նա ժողովրդի մեջ էր ելնում գունավոր, մարգարտակար թիկնոցներով, թեզղանիքներով ու ապարանջաններով, երբեմն էլ մետաքս հագած¹³³ և կանացի քողերով, ոտքերին մերթ սանդալներ կամ կոթուրնոսներ¹³⁴, մերթ գինվորական երկարաճիտ կոշիկներ, իսկ մերթ էլ կանացի կոշիկներ. շատ անգամ նա հայտնվում էր ոսկեզօծված մորուքով, ձեռքին՝ կայծակ կամ եռաժանի կամ մական՝ աստվածների նշանները¹³⁵, կամ նույնիսկ Վեներայի հանդերձանքով: Տրիումֆային հագուստներ նա միշտ էր կրում, անգամ մինչև իր արշավանքը, իսկ երբեմն էլ հագնում էր Ալեքսանդր Մեծի զրահը, որը ձեռք էր բերվել նրա գեմբարանից:

53. Ազնիվ արվեստներից նա ամենից քիչ գիտությունը էր զբաղվում և ամենից շատ՝ ճարտասանությունը, միշտ ունակ ու պատրաստ ճառով հանդես գալու, հատկապես երբ պետք էր լինում որևէ մեկին մեղադրել¹³⁶: Զայրույթի պահին նա հեշտությունը էր գտնում և՛ բառեր, և՛ մտքեր, և՛ պետք եղած արտահայտչականությունը, և՛ ձայն՝ գրգռվածությունից նա շէր կարողանում մի տեղում կանգնած մնալ, և բառերը հասնում էին մինչև ամենահեռավոր շարքերը: (2) Զեռնարկելով ճառախոսության, նա սպառնում էր, որ մերկացնում է մի սուք, որը սրբված է գիշերային հսկումներով¹³⁷: Նրբագեղ ու մեղմ խոսքը նա այնքան

էր արհամարհում, որ Սենեկայի երկերը, որն այն ժամանակ փառքի ժողովման շրջանն էր ապրում, «զուտ աշակերտական» էր համարում և «անկիր ավագ»¹³⁸: Մյուս հռետորների հաջորդ ճառերին նա նույնիսկ պատասխաններ էր գրում, իսկ երբ նշանավոր սենատորները դատի տակ էին ընկնում, նրանց մասին է՛ մեղադրական, և՛ պաշտպանական ճառեր էր հորինում, կործանում կամ փրկում էր նրանց իր ելույթով¹³⁹: Այդ ճառերին նա էղիկտներով հրավիրում էր նույնիսկ հեծյալներին:

54. Հատուկ կրթությունը, սակայն, նա զբաղվում էր այլ, ամենատարատեսակ արվեստներով: Գլադիատոր էր և կառավար, երգիչ և պարող, մարտնչում էր մարտական զենքով, հանդես էր գալիս որպես կառավար ամենուրեք կառուցված կրկեսներում, իսկ երգից ու պարից այնպիսի հաճույք էր զգում, որ նույնիսկ ժողովրդական հանդիսախաղերի ժամանակ շէր կարողանում իրեն զսպել, որ չերգակցեր ողբերգակ դերասանին և բոլորի աչքի առջև չկրկներ պարողի շարժումները, հավանություն տալով կամ ուղղելով: (2) Ինչպես թվում է, իր սպանությունը բուն օրը նա գիշերային տոնահանդես էր նշանակել, որպեսզի օգտվի դրա ընձեռած սովորական ազատությունից բեմում առաջին ելույթ ունենալու համար: Պարում էր նա երբևէն նույնիսկ գիշերվա կեսին. մի անգամ կեսգիշերն անց նա պալատ կանչել տվեց կոնսուլական կոչման երեք սենատորներին, նստեցրեց նրանց բեմում, ամենաահավոր սպասումից զողոտացող վիճակում, իսկ հետո հանկարծ դուրս վազեց նրանց առջև սրինգների ու շիկշիկանների հնչյունների տակ, կանացի քողով ու մինչև կրունկներն իջնող տունիկայով, մի պար պարեց ու հեռացավ: Չնայած իր ողջ ճարպկությանը, սակայն, նա լողալ չէր կարողանում¹⁴⁰:

55. Ինչով էլ որ նա հրապուրվելիս լիներ, իբր կրթի մեջ հասնում էր խելահեղություն: Մնջկատակ դերասան Մնեստերոսին նա համբուրում էր նույնիսկ ներկայացման ընթացքում. իսկ Լթե որևէ մեկը նրա պարելու ժամանակ թեկուզ և ամենափոքր աղմուկ էր բարձրացնում, հրամայում էր նրան վռնդել և սեփական ձեռքով մարակահար էք անում: Մի հոմեոսի հեծյալի, որն աղմկել էր, նա ցենտուրիոնի միջոցով հրաման ուղարկեց իսկույնեթ մեկնել Օստիա և Մավրիտանիա, Պտղոմեոսին տանել կայսերական նամակը, իսկ նամակում գրված էր. «Այն մարդու հանդեպ, որ սա բերել է, ոչ բարի գործիր, ոչ էլ շար»: (2) Մի քանի թրակիացի գլադիատորների¹⁴¹ նա պետ նշանակեց գերմանացի թիֆնանադարհներին, գլադիատոր-միրմիլիոնների սպառազինությունը նվազեցրեց. իսկ երբ նրանցից մեկը, Աղավնի մականունով, հազթանակ տարավ և միայն մի փոքր վիրավորվեց, նրա վերքի մեջ թույն դրեց և դրանից հետո այդ թույնն անվանում էր «աղավնային», համենայն դեպս,

այդպես էր այն գրանցված նրա թույնհրճ ցուցակում: Կրկեսում¹⁴² նա այնքան էր նվիրված ու կապված «կանաչների» կուսակցությանը, որ շատ անգամ ախտոններում և՛ ճաշում էր, և՛ քնում, իսկ կառավար Եվտիքոսին մի խնջույքից հետո երկու միլիոն սեստերցիում ընծայեց: (3) Իր Արագոտն նժույզին¹⁴³ նա այնպես էր պահպանում ամեն մի անհանգստությունից, որ ամեն անգամ ձիարշավների նախօրյակին զինվորներ էր ուղարկում անդորր հաստատելու նրա հարևանությունը. ձիու համար ոչ միայն ախոռ կառուցեց մարմարիոնից և մսուր՝ փղոսկրից, ոչ միայն ծիրանի ծածկոցներ և մարգարտյա մանյակներ տվեց, այլ նույնիսկ պալատ առանձնացրեց սպասավորներով ու կահավորանքով, ուր նրա անունից հյուրեր էր հրավիրում և հաճույքով ընդունում. ասում են, որ նա պատրաստվում էր ձիուն անգամ կոնսուլ դարձնել:

56. Այդ խելահեղությունների ու բռնությունների պատճառով շատերն էին պատրաստ վերջ տալու նրան. բայց մեկ կամ երկու դավադրություն¹⁴⁴ բացահայտվեց, և մարդիկ դանդաղում էին, հարմար առիթ չգտնելով: Վերջապես երկու հոգի¹⁴⁵ համախմբվեցին և գործն ավարտին հասցրին ոչ առանց ազդեցիկ ազատարձակների և պրետորականների պետերի գիտություն: Նրանք արդեն զրպարտված էին մեկ դավադրությանը մասնակցելու մեջ և, թեև դա զրպարտություն էր, նրանք զգում էին Գայոսի կասկածանքն ու ատելությունը՝ այն ժամանակ նա սրանց իսկույն մի կողմ էր տարել, անարգել դաժան խոսքերով, մերկացրել սուրը երդվելով, թե պատրաստ է մեռնել, եթե անգամ նրանց աչքում արժանի է մահվան, և այդ պահից շէր դադարում մեղադրել նրանց միմյանց առջև և կռվեցնել իրար հետ:

(2) Վճուված էր նրա վրա հարձակվել Պալատինումյան խաղերի¹⁴⁶ ժամանակ, կեսօրին, ներկայացումներից դուրս գալիս: Գլխավոր դերն ստանձնեց Կասիոս Քերեան՝ պրետորական կոհորտայի տրիբունը, որին, շնայած նրա տարեց հասակին, Գայոսը շէր հոգնում ամեն կերպ ծանակելուց՝ մերթ անվանում էր փափկասուն և կնամարդ, մերթ նրան նշանաբառ էր նշանակում «Պրիապոս» կամ «Վեներա» բառերը, մերթ առաջարկում էր ի շնորհակալություն ինչ-որ բանի համբուրել իր ձեռքը՝ ծալելով ու շարժելով մատները անպատկառ ձևով:

57. Սպանությունը կանխատեսվել էր շատ նշանակներով: Օլիմպիայում Յուպիտերի արձանը¹⁴⁷, որ նա կարգադրել էր քանդել և փոխադրել Հռոմ, հանկարծ այնպես էր սկսել որոտաձայն քրքջալ, որ մեքենաները ցնցվել էին, իսկ աշխատողները դես ու դեն էին փախել. իսկ այդ ժամանակ պատահաբար այդտեղ գտնված Կասիոս անունով մի մարդ հայտարարել էր, որ երազում իրեն կարգադրվել էր Յուպիտերին մի եզ զոհա-

բերել, (2) Կապուալում մարտի իդերին կայծակը հարվածել էր կապիտուլիումին, իսկ Հոտմում՝ պալատական դոնապասի¹⁴⁸ սենյակին. և գտնվեցին մեկնաբաններ, որոնք հավատացնում էին, որ մեկ նշանակը հայտնում է ծառաներից տիրոջ սպասվող վտանգի մասին, իսկ մյուսը՝ մի նոր մեծ սպանություն, ինչպես երբեմնի կատարվել էր նույն օրը: Աստղագուշակ Սուլլան նրա բախտացույցի մասին հարցին հայտարարել էր, որ մոտենում է անխուսափելի մահ: (3) Անտիումի ֆորտունայի¹⁴⁹ պատգամախոսները նույնպես մատնանշել էին նրան զղուշանալու Կասիոսից՝ այդ պատճառով նա մարդիկ ուղարկեց սպանելու Կասիոս Լոնգինոսին, որն այդ ժամանակ Ասիայի պրոկոնսուլն էր, բայց շմտածեց, որ Քերեային նույնպես Կասիոս էն կոչում: Նա ինքը սպանության նախօրյակին երազ էր տեսել, թե իբր Էրկնքում կանգնած է Յուպիտերի գահույթի կողքին, և աստվածը, հրելով նրան աջ ոտքի բուխ մատով, Էրկիր է գլորում իրեն: Մարգարեական համարվեցին նաև որոշ իրադարձություններ, որ պատահել էին մի փոքր ավելի վաղ՝ բուն սպանության օրը: Զոհ մատուցելիս նա ցողվել էր կարմրաթևիկի արյունով¹⁵⁰. մնջկատակ Մենստերոսը պարել էր այն նույն ողբերգությունում, որը ժամանակին խաղացել էր ողբերգակ դերասան Նեոպեղոմեոսը այն խաղերի պահին, երբ սպանվել էր Փիլիպոսը՝ մակեդոնացիների թագավորը¹⁵¹. իսկ երբ «Լաուրեոլոս»¹⁵² մնջախաղում, որտեղ դերասանը, դուրս վազելով փլվածքի տակից, արյուն է թքում, նրանից հետո միմյանց ընդհատելով իրենց արվեստն սկսեցին ցուցադրել շինծու դերասանները¹⁵³, ապա պարզվեց, որ ամբողջ բեմն արյունով է ցողված: Իսկ գիշերվա կողմ նախապատրաստվում էր մի ներկայացում, որտեղ եզիպտացիներն ու եթովպացիները պետք է տեսարաններ ցուցադրեին անդրշիրիմյան կյանքից:

58. Գործը կատարվեց ութերորդ օրը մինչև փետրվարյան կալենդները, մոտավորապես յոթերորդ ժամին¹⁵⁴: Նա տատանվում էր, զնա՞լ արդյոք ցերեկվա նախաճաշին, քանի որ ստամոքսում դեռ ծանրություն էր զգում երեկվա կերակուրից. ի վերջո, բարեկամները նրան համոզեցին, և նա դուրս եկավ: Ստորգետնյա անցուղիում, որով պետք է անցնեն, բեմի վրա ելույթ ունենալու էին պատրաստվում Ասիայից բերված ազնվատոհմիկ տղաներ: Նա կանգ առավ դիտելու և գովելու նրանց. և եթե չպարզվեր, որ առաջին դերասանը մրսած է, նա արդեն պատրաստ էր վերադառնալ և վերսկսել ներկայացումը:

(2) Հետագա իրադարձությունների մասին երկակի են պատմում: Ոմանք ասում են, որ հրք նա զրուցում էր տղաների հետ, Քերեան, նրան մոտենալով ետևից, սրի հարվածով խորր կտրեց նրա ծոծրակը,


գոչելով՝ «Արա՛քո գործը»¹⁵⁵, և այնժամ տրիրուն Կոռնելիոս Սարինոսը՝ երկրորդ դավադիրը, առջևից խոցեց նրա կուրծքը: Մյուսները հաղորդում են, որ երբ ցենտուրիոնները, որոնք իրադեկ էին դավադրությանը, ետ մղեցին ուղեկցողների բազմությունը, Սարինոսը, ինչպես միշտ, կայսրից հարցրեց նշանաբառը. սա ասաց՝ «Յուպիտեր»։ այնժամ Քեբեան գոչեց՝ «Ստացի՛ր քոնը»¹⁵⁶, և երբ Գայոսը շրջվեց, թրատեց նրա ծնոտը: (3) Նա ընկավ ջղաձգության մեջ բացականչելով՝ «Ծս կենդանի եմ», և այնժամ մնացյալները վերջ տվեցին նրան երեսուն հարվածով. բոլորը մի բան էին գոչում՝ «Մե՛կ էլ»: Ոմանք նույնիսկ շեղրով հարվածում էին աճուկին: Առաջին իսկ աղմուկից օգնության վազեցին պատգարակիրները ձողերով¹⁵⁷, հետո՝ գերմանացի թիկնապահները. դավադիրներից ոմանք սպանվեցին և նրանց հետ՝ նաև մի քանի անմեղ սենատորներ:

59. Ապրեց նա քսանինը տարի, կառավարեց երեք տարի, տասը ամիս և ութ օր: Նրա մարմինը գաղտնի տարան Լամիայի այգիները¹⁵⁸, կիսով չափ հրկիզեցին¹⁵⁹ թաղման խարույկի վրա և մի կերպ ծածկեցին ճիմով: Հետո արգեն նրա դիակը հանեցին, հրկիզեցին ու թաղեցին վտարանդիությունից վերադարձած քույրերը: Մինչ այդ, ինչպես հայտնի է, ուրվականները չէին դադարում այգեպաններին անհանգստացնելուց. իսկ այն տանը, որտեղ նա սպանվեց, չէր կարելի գիշերը քնել առանց սարսափի, մինչև որ այն այրվեց հրդեհի ժամանակ: Նրա հետ միասին սպանվեցին և նրա կինը՝ Յեզոնիան, որին թրատել էր ցենտուրիոնը¹⁶⁰, և դուստրը, որին ջախջախել էին պատին խփելով:

60. Թե ինչպիսին էին այդ ժամանակները, կարելի է դատել այն քանից, որ նույնիսկ սպանության լուրին մարդիկ միանգամից չհավատացին՝ կասկածում էին, թե Գայոսն ինքն է հնարել և տարածել սպանության մասին լուրը, որպեսդի իմանա, թե ինչ են իր մասին մտածում մարդիկ: Դավադիրները ոչ ոքի չէին պատրաստվում հանձնել իշխանությունը, իսկ սենատն այնպես միահամուռ էր ազատության ձգտում, որ կոնսուլներն առաջին նիստը գումարեցին ոչ թե Հուլիոսի կուրիայում¹⁶¹, այլ Կապիտոլիումում, և ոմանք, ձայն տալով, կոչ էին անում կործանել կեսարների հիշատակը և քանդել նրանց տաճարները¹⁶²: Բայց ամենից առաջ նկատվել էր ու նշվել, որ Գայոս անունը կրած բոլոր Կեսարներն ընկել են սրից, սկսած նրանից, որն սպանվել էր դեռևս Կիննայի ժամանակներում¹⁶³:



ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ



ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

ԿԼԱՎ ԴԻՈՍ



1. Կլավդիոս Կեսարի հայրը Դրուզոսն էր, որը սկզբնապես Դեցիմոս, իսկ հետո Ներոն անունն էր կրում¹: Լիվիան նրանով հղի էր, երբ կնության գնաց Օգոստոսին, և երեք ամիս անց աշխարհ բերեց նրան: Դրա համար էլ կասկածներ կային, որ Դրուզոսը ամուսնական անհավատարմության վաստակ էր խորթ հորից: Համենայն դեպս, այդ մասին իսկույնեթ այս ոտանավորը տարածվեց.

Բախտավորները երեք ամսից են ծննդաբերում:

(2) Այս Դրուզոսը քվեստորի և պրետորի² աստիճանով ղորավար եղավ ուտիական և ապա գերմանական պատերազմում, հռոմեական զորասյեռներից առաջինը նավարկեց հյուսիսային Օվկիանոսում և Հռենոսից այն կողմ ջրանցքներ փորել տվեց նավերի համար՝ վիթխարի մի կառույց, որը առ այսօր էլ նրա անունն է կրում³: Թշնամուն նա շատ ճակատամարտերում ջարդեց, քշեց մինչև ամենահեռավոր ու խուլ անկյունները և միայն այն ժամանակ դադարեցրեց իր հարձակումը, երբ մի բարբարոս կնոջ ուրվական, բարձր քան մարդկային հասակը, լատիներեն լեզվով արգելեց հաղթողին ավելի առաջ շարժվել: (3) Իր սխրագործությունների համար նա օվացիայի և տրիումֆային դարդարանքների արժանացավ: Իսկ պրետորությունից հետո նա իսկույն

կոնսուլտիւթյուն ստացաւ և վերսկսեց պատերազմը. բայց այստեղ նա մահացաւ հիվանդութիւնից⁴ ամառային ճամբարում, որն այդ պահից կոչվեց «անիծյալ»: Նրա դիակը Հոռմում տարան մունիցիպալումների և գաղութների ամենաազնվատոհմիկ քաղաքացիները, սրանցից նրան ընդունեցին ընդառաջ եկած գրագիրների դեկուրիաները⁵, և նա թաղվեց Մարսյան դաշտում: Ի պատիվ նրա զորքը մի հողաբլուր բարձրացրեց, որի շուրջը ամեն տարի սահմանված օրը դինվորները հուղարկավորութիւն վազք⁶ էին կատարում և որի առջև գալլական համայնքները համաժողովրդական մաղթանքներ էին կատարում, իսկ սենատը շատ ուրիշ պատիվների թվում որոշում ընդունեց Ապիոսի ճանապարհի վրա հաղթականար կառուցել և նրան ու նրա հետնորդներին «Գերմանիկոս» մականունը շնորհել:

(4) Ասում են, որ նա հավասարապես սիրում էր և՛ զինվորական փառքը, և՛ քաղաքացիական ազատութիւնը՝ մեկ անգամ չէր նա թշնամու դեմ տարած հաղթանակներում ազնվատոհմիկ ավար⁷ ձեռք բերել, կովի թունդ պահին մեծագույն վտանգի ենթարկվելով՝ գերմանական առաջնորդներին հետապնդելիս, և միշտ էլ բացահայտ խոսում էր առաջին հնարավորութիւն դեպքում նախկին պետական կարգը վերականգնելու իր մտադրութիւն մասին: Կարծում եմ, որ այդ իսկ պատճառով էլ ումանք հաղորդում են, թե իբր Օգոստոսն սկսեց կասկածել նրան, ետ կլոնչեց պրովինցիալից և, քանի որ նա դանդաղում էր, թունավորեց նրան: (5) Բայց այդ լուրը ես միայն նրա համար եմ հիշատակում, որ ոչ մի բան բաց չթողնեմ, և ոչ թե նրա համար, որ իբր այն ճշմարիտ կամ ճշմարտանման եմ համարում: Չէ որ Օգոստոսը կենդանութիւն օրոք էլ այնքան էր նրան սիրում, որ միշտ նշանակում էր որդիների համաժառանգ, որի մասին նա ինքն էր մեկ անգամ հայտարարել սենատում, և մահից հետո այնպես գովարանեց նրան ժողովրդի առջև, որ նույնիսկ աղոթում էր աստվածներին, որպեսզի երիտասարդ Կեսարները⁸ ամեն ինչում նմանվեն նրան, և որպեսզի ինքը կարողանար այնպես արժանավոր կերպով մահանալ, ինչպես որ մահացավ Դրուզոսը: Եվ չրավարարվելով այդ գովասանքով, նրա դամբարանը զարգարել տվեց իր հորինած ոտանավորներով, իսկ նրա կյանքի մասին արձակով հուշեր գրեց:

(6) Անտոնիա Կրտսերից նա շատ երեխաներ ունեցավ, բայց նրանից երկար միայն երեքն ապրեցին՝ Գերմանիկոսը, Լիվիլլան և Կլավդիոսը:

2. Կլավդիոսը ծնվել է Յուլիոս Անտոնիոսի և Ֆաբիոս Աֆրիկանոսի կոնսուլտիւթյան ժամանակ, օգոստոսի կալենդներին⁹, Լուգդունումում,

այն նույն օրը, երբ այնտեղ առաջին անգամ բազին օծվեց Օգոստոսի համար: Նրան անվանեցին Տիրբերիոս Կլավդիոս Դրուզոս. հետո, երբ նրա ավագ եղբայրը որդեգրվեց Հուլիոսների ընտանիքում, նա ընդունեց նաև «Գերմանիկոս» մականունը: Մանուկ հասակում նա կորցրեց հորը, մանկության ու պատանեկության ողջ ընթացքում տառապում էր երկարատև ու ձգձգվող հիվանդություններից, որոնցից այնպես էր մտքով ու մարմնով թուլացել, որ շափահաս տարիքում անընդունակ էր համարվում որևէ հասարակական կամ մասնավոր գործի: (2) Նույնիսկ այն բանից հետո, երբ նա դուրս եկավ խնամքի տակից¹⁰, դեռևս երկար ժամանակ մնում էր օտարի իշխանության և դայակի հսկողության տակ: Հետո իր գրքերից մեկում նա գանդատվում էր, որ դիտավորյալ իրեն դայակ էին նշանակել մի բարբարոսի՝ նախկին ձիապանի, որպեսզի նա դաժան պատժի ենթարկեր իրեն ամեն առիթով: Այդ նույն վատառողջության պատճառով գլադիատորական խաղերում, որ եղբոր հետ միասին¹¹ կազմակերպել էր հոր հիշատակին, կարգադրիչների տեղում նստել էր գլխարկով¹², ինչը երբեք ընդունված չէր, իսկ շափահասության օրը Կապիտոլիում էր տարվել պատգարակով, գիշերվա կեսին և առանց սովորական հանդիսավորության: Յ. Ճիշտ է, ազնիվ գիտությունների մեջ պատանի հասակից նա արտասովոր ջանասիրություն էր դրսևորել և մի քանի անգամ նույնիսկ հրապարակել էր իր փորձերը այս կամ այն բնագավառում, բայց դրանով էլ նա չէր կարողանում ոչ հարգանք ձեռք բերել, ոչ էլ լավագույն ապագայի հույսեր ներշնչել:

(2) Նրա մայրը՝ Անտոնիան, ասում էր, որ նա այլանդակ է մարդկանց մեջ, որ բնությունը սկսել է նրան, բայց չի ավարտել, և, ցանկանալով որևէ մեկին կշտամբել ըթամտության համար, ասում էր. «Իմ Կլավդիոսից էլ հիմար է»: Նրա տատը՝ Օգոստոսուհին¹³, միշտ էլ ամենախոր արհամարհանքով էր վերաբերվում նրան, շատ հազվադեպ էր խոսում հետը և նույնիսկ դիտողություններն անում էր կամ կարճ ու խիստ երկտողներ գրելով, կամ ստրուկների միջոցով: Քույրը՝ Լիվիլան, լսելով, որ նրան վիճակված է կայսր դառնալ, բարձրաձայն ու բոլորի ներկայությամբ անիծում էր հոռմեացի ժողովրդի դժբախտ ու անարժան ճակատագիրը: Իսկ թե ինչ լավ կամ վատ բան էր տեսնում նրա մեջ Օգոստոսը՝ նրա մորական տատի եղբայրը¹⁴, այդ մասին պարզության համար ես քաղվածքներ կրերեմ նրա նամակներից¹⁵:

4. «Քո խնդրանքով, թանկագինդ իմ Լիվիա, ես զրուցեցի Տիրբերիոսի հետ այն մասին, թե ինչպես վարվենք թոռանդ՝ Տիրբերիոսի հետ Մարսյան խաղերի¹⁶ ժամանակ: Եվ երկուսս էլ համաձայնվեցինք, որ պետք է մեկընդմիշտ սահմանել, թե ինչպես ենք վերաբերվելու նրան:

Եթե նա այսպես ասած լիարժեք մաթդ է, և նրա ամեն ինչը տեղն է, ապա ինչո՞ւ նա աստիճան առ աստիճան շանցնի այն ուղին, ինչ որ անցել է նրա եղբայրը: (2) Իսկ եթե մենք զգում ենք, որ նա վնասված է և՛ հոգով, և՛ մարմնով, ապա հարկ չկա մեզ ծաղրելու առիթ տալ մարդկանց, ովքեր սովոր են հռհռալ ու խնդալ նման բաների վրա: Մենք ստիպված կլինենք մշտապես գլուխ կոտրել, եթե մտածենք ամեն մի քայլի մասին առանձին և նախօրոք շորոշենք, թույլ տալ նրան պաշտոն գրավելու, թե ոչ: (3) Իսկ տվյալ դեպքում, — սլատասխանում եմ քո հարցին, — ես չեմ առարկում, որ Մարսյան խաղերի ժամանակ նա հյուրասիրություն կազմակերպի քրմերի համար¹⁷, եթե միայն նա համարձայնի լսել Սիլվանոսի որդուն՝ իր ազգականին¹⁸, որպեսզի ոչնչով ուշադրության և ծաղրանքի շարժանանա: Քայց կրկեսում սրբազան օթյակից¹⁹ ձիարշավները դիտելու հարկ չունի՝ նստած բոլորի առջև նա միայն իր վրա ուշադրություն կհրավիրի: Հարկ չկա նաև, որ նա գնա Ալբանական լեռը և, ընդհանրապես, Հատինական խաղերի ժամանակ մնա Հոռոմում՝ եթե նա կարող է եղբորը ուղեկցել լեռ գնալիս, հապա ինչո՞ւ չլինի նաև Հոռոմի պրեֆեկտը²⁰: (4) Ահա քեզ իմ կարծիքը, թանկագին կիվիա. մենք պետք է այդ մասին մեկընդմիջտ որոշում ընդունենք, որպեսզի մշտապես շողողողանք հույսի ու վախի միջև: Եթե ուզում ես, կարող ես նամակի այս մասը տալ Անտոնիային կարգալու:»

Մեկ ուրիշ նամակում ևս. (5) «Քանի դու չկաս, պատանի Տիբերիոսին ես ամեն օր ճաշի եմ կանչելու, որպեսզի նա մենակ ճաշի իր Սուլպիցիոսի ու Աֆինոդորոսի հետ: Կուզենայի, որ նա իր համար վարքագծի, զգեստների ու քայլվածքի նմանողության օրինակ ընտրեք ավելի զգուշորեն և ոչ այդքան ցրված: Խեղճի բախտը չի բերում՝ չէ՞ որ կարևոր առարկաներում, երբ նրա միտքը կայուն է, նա բավականաչափ դրսևորում է իր հոգու աղնվությունը»:

Եվ երրորդ նամակում. (6) «Թեկուզ սպանիր, ես ինքս էլ դարձանում եմ, թանկագին կիվիա, որ քո թոռ Տիբերիոսի արտասանությունն ինձ դուր եկավ: Հասկանալ չեմ կարողանում, թե նա ինչպես կարող էր արժասանելիս ասել այն ամենը, ինչ պետք էր, և այնպես կապակցված, այն դեպքում, երբ նա սովորաբար այդքան անկապ է խոսում»²¹,

(7) Այդ բոլորից հետո Փգոստոսի որոշմանը հարկ չկա կասկածել՝ նա Կլավդիոսին հեռացրել էր բոլոր պաշտոններից, բացի սոսկ ավգուրությունից, և նույնիսկ իրեն ժառանգ էր թողել երրորդ հերթին²², բոլորովին կողմնակի մարդկանց շարքում, և միայն վեցերորդ մասով, իսկ որպես ընծա թողել էր միայն ութ հարյուր հազար սեստերցիում: 5. Իսկ Տիբերիոսը՝ նրա հորեղբայրը, ի պատասխան պաշտոնի մասին նրա

խնդրանքների, ընձեռել էր միայն կոնսուլական աստիճանի նշաններ²³. Իսկ երբ նա «կսել» էր համառել, պահանջելով իսկական պաշտոն, Տիբերիոսը կարճ գրել էր, որ արդեն քառասուն ոսկի է ուղարկել նրան Սատուրնալիաների և Սիզիլարիաների²⁴ համար: Միայն այդ ժամանակ նա հրաժարվեց բարձրանալու ամեն մի հույսից և հեռացավ բոլոր գործերից, ծվարելով մերթ այգիներում ու քաղաքամերձ տանը, մերթ Կամպանիայի վիլլայում. և այդպես նա ապրում էր ամենացածր մարդկանց հասարակության մեջ, իր ըթամտության խայտառակությունը խորացնելով խաղամուղի ու հարբեցողի վատ համբավով:

Սակայն, շնայած դրան, ոչ մարդիկ էին նրան մերժում ուշադրության նշաններ, ոչ էլ պետությունը՝ հարգանք: Ծ. Հեծյալների դասը երկիցս նրան կոնսուլների մոտ ուղարկված դեսպանության գլուխ ընտրեց՝ մեկ անգամ թույլտվություն խնդրելու Օգոստոսի մարմինը իրենց ուսերի վրա Հռոմ փոխադրելու, երկրորդ անգամ՝ ողջուններ տանելու Սեյանոսի տապալումից հետո. իսկ երբ նա թատրոն էր մտնում, նրանք միշտ ոտքի էին կանգնում և հանում գլխարկները: (2) Իսկ սենատը իր հերթին նրան հաշվից դուրս դասեց Օգոստոսի՝ վիճակահանությանը ընտրված քրմերի²⁵ շարքը, իսկ հետո որոշում ընդունեց պետության հաշվին վերակառուցելու հրդեհի ժամանակ այրված նրա տունը և նրան իրավունք ընձեռել քվեարկելու կոնսուլյարիաների թվում²⁶: Ի դեպ, Տիբերիոսը վերացրեց վերջին որոշումը, վկայակոչելով Կլավդիոսի թուլակազմ լինելը և խոստանալով նրա կրած վնասը հատուցել սեփական միջոցներից: Սակայն, մեռնելիս նա Կլավդիոսին երրորդ հերթի և երրորդ մասի ժառանգ նշանակեց, որպես ընծա թողեց երկու միլիոն սեստերցիում և իլրումն, կտակում թվարկելով իր ազգականներին, նրան մատնանշեց հատկապես՝ ի ուշադրություն գործերի, սենատի և հռոմեացի ժողովրդի²⁷:

7. Միայն իր զարմիկ Գայոսի կառավարման օրոք, երբ վերջինս իշխանության գլուխ անցնելուց հետո ամեն տեսակ հաճկատարությանը ջանում էր բարի համբավ ձեռք բերել, նա մտադր ստացավ դեպի բարձր պաշտոնները և երկու ամիս Գայոսի հետ բաժանում էր կոնսուլությունը: Եվ այնպես պատահեց, որ երբ նա առաջին անգամ ֆորում էր մտնում կոնսուլական իշխանությանը, նրա աջ ուսին իջավ մոտից թռչող արծիվը: Նա կոնսուլ նշանակվեց նաև երկրորդ անգամ, ըստ վիճակահանության²⁸, երեք տարի սնց: Մի քանի ւնգամ նա փոխարինել է Գայոսին հանդիսախաղերը կարգադրելիս, և ժողովուրդը ողջունել է նրան «Կեցցե կայսեր հորեղբայրը» և «Կեցցե Գերմանիկոսի եղբայրը» բացականչություններով:

8. Բայց այդ էլ չէր ազատում նրան վիրավորանքներից: Այսպես,

եթե նա ուշանում էր ճաշկերույթի նշանակված ժամից, ապա միանգամից չէ, որ իր համար տեղ էր գտնում, այլ միայն ամբողջ պալատը շրջելուց հետո: Իսկ երբ կշտանալուց հետո սկսում էր ննջել— հաճախ էր այդպես պատահում,— ապա ծաղրածունները նրա վրա արմավի կամ ձիթապտղի կորիզներ էին նետում, իսկ երբեմն էլ, ասես կատակով, արթնացնում էին մտրակով կամ ճիպոտներով²⁹. նրանք սիրում էին նաև, քանի դեռ նա խոմփում էր, նրա ձեռքերին սանդալներ հագցնել, որպեսզի հանկարծակի արթնացվելով դրանցով շփեր դեմքը:

9. Նա զերծ չէր մնում նաև իսկական վտանգներից: Ամենից առաջ, հենց իր կոնսուլության ժամանակ քիչ էր մնում զրկվեր պաշտոնից այն բանի համար, որ բավականաչափ արագ չէր կարգադրել պատրաստելու և տեղադրելու ներոնի ու Դրուզոսի՝ Կեսարի եղբայրների, արձանները: Հետո նրան հանգիստ չէին թողնում զանազան մատնադրերը՝ տրված ոչ միայն կողմնակի անձանց, այլև սեփական ծառաների կողմից: Իսկ երբ Գերմանիկոսի դավադրության բացահայտումից հետո մյուս պատվիրակների հետ Գերմանիա գնաց ողջունելու կայսրին, ապա քիչ էր մնում կործանվեր՝ Գայոսը վայրագ բարկության ու կատաղության մեջ էր այն բանից, որ իր մոտ դիտմամբ ուղարկել են հորեղբորը, ասես մի տղայի մոտ՝ նրան վերահսկելու, և ոմանք նույնիսկ հաղորդում են, թե իբր Կլավդիոսին, ինչպես որ կար, ճանապարհորդական զգեստներով, գետն են նետել: (2) Եվ այդ պահից սենատում նա կոնսուլարիսներից միշտ վերջինն էր ձայն տալիս, քանի որ, որպես անպատվության նշան, նրան բոլորից հետո էին հարցնում: Նույնիսկ մի կտակ, որի տակ նրա ստորագրությունն էլ էր դրված, որպես կեղծ ընդունվեց գանգատարկման: Ի վերջո, նրան ստիպեցին ութ միլիոն սեստերցիում վճարել քրմական նոր աստիճանի համար³⁰, և դա այնպես քայքայեց նրա միջոցները, որ նա չէր կարող իր պարտքը վերադարձնել պետական գանձարանին, և գանձատան պրեֆեկտների հրամանագրով առաջարկվեց նրա ունեցվածքը վաճառել աճուրդով անվերապահորեն, համաձայն հարկերի վերաբերյալ օրենքի:

10. Այդ և նման պարագաներում նա ապրեց կյանքի մեծ մասը, երբ հանկարծ իսկապես զարմանահրաշ դիպվածով հասավ կայսերական իշխանության: Երբ, պատրաստվելով հարձակվել Գայոսի վրա, դավադիրները հտ էին մղում ամբոխին, իբրև թե կայսրը ցանկանում է մենակ մնալ, Կլավդիոսը մյուսների հետ դուրս հրվեց և թաքնվեց Հերմեսյան կոշվող սենյակում. սպանության առաջին լուրն առնելով նա սարսափած նետվեց հարևան արևային սյունասրահը³¹ և թաքնվեց դռան վարագույրի հտևում: (2) Ոմն զինվոր³², որը վազքով անցնում էր կողքից, տե-

սավ նրա ոտքերը, ուզեց ստուգել, թե ով է թաքնված, ճանաչեց նրան, դուրս քաշեց և, երբ Կլավդիոսը սարսափահար ընկավ նրա ոտքերը, ողջունեց նրան որպես կայսեր ու տարավ իր ընկերների մոտ, որոնք աննպատակ մոլեգնում էին, չիմանալով հետո ինչ անել: Նրանք Կլավդիոսին նստեցրին պատգարակին և, քանի որ պատգարակակիրները փախել էին, ապա իրենք հերթով նրան տարան իրենց բանակատեղին³³. Կլավդիոսը սոսկումից դողում էր, իսկ հանդիպող բազմությունը խղճում էր նրան, ասես անմեղ մեկին մահապատժի էին քարշ տալիս:

(3) Գիշերը նա անցկացրեց ճամբարային հողապատնեշի ներսում, շրջապատված պահակախմբով, հանդարտված իր կյանքի, բայց անհանգրստացած ապագայի համար: Բանն այն է, որ կոնսուլները, սենատը և քաղաքային կոհորտաները³⁴ գրավել էին Ֆորումն ու Կապիտոլիումը, հաստատապես վճռած հռչակելու համընդհանուր ազատություն: Ժողովրդական Մրիբունների միջոցով նրան ևս հրավիրում էին կուրիա՝ մասնակցելու խորհրդին, իսկ նա պատասխանում էր, որ իրեն պահում են ուժն ու հարկադրանքը³⁵: (4) Սակայն հաջորդ օրը, երբ սենատը, հոգնատանջ հակասական կարծիքների տարածայնությունից³⁶, դանդաղում էր կատարելու իր մտադրությունները, իսկ շուրջը խմբված բազմությունը պահանջում էր մեկ տիրակալ և արդեն տալիս էր նրա անունը,— այնժամ նա զինված հավաքում երդում ընդունեց զինվորներից և յուրաքանչյուրին տասնհինգ հազար սեստերցիում խոստացավ՝ առաջինը կեսարներից, որը դրամով գնեց զորքի նվիրվածությունը:

11. Հաստատվելով իշխանության մեջ, նա ամենից առաջ հոգ տարավ հիշողությունից ջնջելու այն երկու օրը, երբ կասկածի տակ էր պետական կառուցվածքի կայունությունը: Դրա համար էլ նա որոշում ընդունեց ներել ու մոռացություն տալ այն ամենը, ինչ ասվել և արվել էր այդ ժամանակ, և այդ որոշումը կատարեց՝ Գայոսի դեմ դավադրության մասնակիցներից մահապատժի ենթարկվեցին միայն մի քանի տրիբուններ ու ցենտուրիոններ³⁷ — ինչպես օրինակ ժառայեցնելու համար, այնպես էլ այն պատճառով, որ նրանք, ինչպես պարզվել էր, պահանջել էին սպանել նաև նրան: (2) Այնուհետև նա հարգանքի տուրք մատուցեց ազգականներին: Օգոստոսի անունը³⁸ նրա համար դարձավ ամենասրբազան ու ամենասիրված երդումը: Իր տատ Լիվիային նա նշանակել տվեց դիցական պատիվներ և շորս փիղ լծած մարտակառք³⁹ կրկեսային թափորում, ինչպես Օգոստոսինն էր: Մնողների համար նշանակել տվեց համաժողովրդական հիշատակաց զոհեր, և մոր համար ի լրումն՝ մարտակառք կրկեսում և Օգոստոսուհու անուն, որը մայրը մերժել էր կենդանության օրոք: Սղոր հիշատակը նա փառաբանում էր ամեն

հարմար առիթով, իսկ Նեապոլում կայացած մրցություններում նրա պատվին նույնիսկ հունական կատակերգություն⁴⁰ բեմադրել տվեց և դատավորների վճռահատութեամբ դրա համար անձամբ պարգևատրեց պսակով: Նույնիսկ Մարկոս Անտոնիոսին նա շղայցաժ պատիվ և երախտագիտութուն մատուցել, մի անգամ էդիկտով հիշատակելով, որ իր հայր Իրուզոսի ծննդյան օրը նա առավել ևս է ուզում նշել հանդիսութեամբ, որովհետև այն նաև իր պապ Անտոնիոսի ծննդյան օրն է⁴¹: Պոմպեոսի թատրոնի մոտակայքում Տիրերիոսին նվիրաբերեց մարմարիոնե կամար, որը սենյալը ժամանակին որոշել էր կառուցել, բայց չէր կառուցել: Թեև նա վերացնել տվեց Գայոսի բոլոր որոշումները, սակայն նրա սպանության և իր՝ իշխանության անցնելու օրը արգելեց տոն համարել:

12. Նա ինքն իր բարձրացումից հետո իրեն համեստ էր պահում, որպես հասարակ քաղաքացի: Իմպերատոր անունը⁴² նա մերժեց, շափեց դուրս պատիվներից հրաժարվեց, դատեր նշանադրությունը և թոռան ծնանդը⁴³ ծիսակատարություններով տոնեց առանց ազմուկի, ընտանեկան շրջապատում: Ոչ մի աքսորյալի նա չվերադարձրեց առանց սենյալի համաձայնության: Այն մասին, որ իրեն թույլատրվի հետը կուրիա մտցնել պրետորականների պրեֆեկտին կամ զինվորական տրիբուններին⁴⁴ և որ հաստատվեն իր պրոկուրատորների⁴⁵ դատավճիռները, նա խնդրեց որպես ողորմածություն: (2) Սեփական կալվածներում շուկա բացելու համար նա հայցում էր կոնսուլների թույլտվությունը: Դատավարությունների ժամանակ նա պաշտոնապես անձանց մոտ նստում էր որպես հասարակ խորհրդական. նրանց կազմակերպած հանդիսախաղերի ժամանակ ամբողջ բազմության հետ ոտքի էր կանգնում և ողջունում նրանց գոշյունով և ժափահարություններով: Սրբ մեկ անգամ դատարանում ժողովրդական տրիբունները մտեցան նրան, ներողություն խնդրեց, որ տեղի անձուկ լինելու պատճառով ստիպված է նրանց ունկնդրել առանց նստել հրավիրելու:

(3) Այդ ամենով նա կարճ ժամանակամիջոցում մեծ սեր ու նվիրվածություն հաբուցեց իր հանդեպ: Սրբ նրա Օստիա կատարած ուղևորության ժամանակ լուր տարածվեց, թե նա իբր դարանև է ընկել ու սպանվել, ժողովուրդը սարսափահար եղավ և ահավոր անեծքներ էր տեղում թե զինվորների վրա, առես դավաճանների, թե սենատորների վրա, առես հայրասպանների, մինչև որ, վերջապես, մագիստրատները տրիբունա բարձրացրին սկզբում մեկ, ապա մեկ ուրիշ, հետո շատ սուրհանդակների, որոնց հայտարարեցին, որ Կլավդիոսը ողջ է, անվնաս և արդեն Հռոմին է մոտենում:

13. Բայց և այնպես, նա չկարողացավ բոլորովին խուսափել 'մա-

հափորձերից՝ նրան օպատնում էին և՛ առանձին շարագործներ, և՛ գավաղորություններ, և՛ նույնիսկ երկպառակտչական պատերազմ: Մի պլեբեյ դաշույնը ձեռքին բռնվել էր նրա ննջարանի մոտ, գիշերվա կաֆն, իսկ հեծյալների գասից երկուսը⁴⁶ փոզոցում, մեկը՝ գավազանի մեջ պահած դաշույնով, մյուսը՝ որսորդական դանակով. առաջինը դարանամուտ նրան էր սպասում թատրոնի ելքի մոտ, մյուսն ուզում էր հարձակվել Մարսի տաճարի առջև զոհ մատուցելու ժամանակ: (2) Պետական հեղաշրջման նպատակով գավաղորություն էին կազմել Ազինիոս Գալլոսը և Ստատիլիոս Կորվինոսը⁴⁷, հռետորներ Պոլիոնի և Մեսսալայի թոռները, բազմաթիվ կայսերական ազատարձակների ու ստրուկների մասնակցությամբ: Երկպառակտչական պատերազմ էր սկսել Տուրիոս Կամիլոս Սկրիբոնիանոսը՝ Դալմաթիայի լեգատը, բայց նա շորս օր անց սպանվեց լեգեոնների ձեռքով, որոնց հրաշքը ստիպեց զղջալ երգումը խախտելու համար՝ պատահաբար ասես թե աստվածային կամքով⁴⁸, երբ հրամայվեց օգնության էլնել նոր կայսրին, նրանք ոչ մի կերպ չէին կարողանում ոչ իրենց արժիվներին պսակ հագցնել⁴⁹, ոչ էլ գետնից պոկել ու տեղից շարժել իրենց նշանները:

14. Կոնսուլ նա եղել է, չհաշված առաջինը, շորս անգամ, սկզբում երկու տարի իրար հետևից, իսկ հետո յուրաքանչյուր շորս տարին մեկ, վերջին անգամ՝ կես տարի, մնացյալ անգամները՝ երկուական ամիս, ընդ որում երրորդ անգամ⁵⁰ նա այդ պաշտոնում փոխարինեց մեռած նախորդին, ինչ որ դեռ ոչ մի տիրակալ չէր արել:

Դատեր նա վարում էր և կոնսուլության ժամանակ, և կոնսուլությունից դուրս, մեծագույն ջանասիրությամբ⁵¹, նույնիսկ իր և ընտանեկան հանդիսությունների օրերին, իսկ երբեմն էլ հին տոներին և նվիրական օրերին: Միշտ չէ, որ հետևում էր օրենքների տառին և հաճախ գործից ստացած տպավորության տակ գթասիրությամբ ու արգարության մեջ շափավորում էր նրանց խստությունը կամ ներողամտությունը: Այսպես, եթե որևէ մեկը քաղաքացիական դատարանում տանուլ էր տալիս գործը շափից գուրս մեծ պահանջների պատճառով, նրան թույլատրում էր նորոգել հայցը, իսկ եթե որևէ մեկը մերկացված էր լինում ծանրագույն հանցանքներում, նա, ավելացնելով օրինական պատիժը, հրամայում էր հանցագործին նետել վայրի գազանների առաջ:

15. Իսկ երբ նա ինքն էր քննում և վճռում գործերը, ապա իրեն դարմանալիորեն անկայուն էր պահում. երբեմն զգույշ ու խելամիտ էր վարվում, երբեմն՝ անխոհեմ ու հապճեպ, իսկ ժամանակ առ ժամանակ էլ՝ խելահեղության աստիճանի անհեթեթ: Ստուգելով դատավորների ցուցակները, դատամուլության կրքի համար նա հեռացրեց մի մարդու, որը

Պարող էր թողություն ստանալ որպես ընտանիքի հայր⁵² և լռել էր այդ մասին: Մեկ ուրիշ դատավորի, որը մի մասնավոր գործով մեղադրվել էր նրա առջև և գանգատվում էր, որ այդ գործը ենթակա է ոչ թե կայսերական, այլ հասարակ դատարանի, տեղնուտեղը կարգադրեց իր ներկայությամբ պաշտպանվել, որպեսզի սեփական գործում իր վարքով ցույց տա, թե արդյո՞ք լավ կդատի օտարի գործերը: (2) Մի կին հրաժարվում էր ճանաչել իր որդուն, բայց ոչ տղան, ոչ էլ կինը չէին կարողանում համոզիչ ապացույցներ գտնել: Կլավդիոսը նրան առաջարկեց կնության գնալ պատանուն և դրանով ձեռք բերեց կնոջ խոստովանությունը: Երբ կողմերից մեկը դատարան չէր ներկայանում, նա առանց տատանվելու գործը վճռում էր ի վնաս նրա, չքննարկելով, բացակայության պատճառը հարգելի է թե անհարգելի⁵³: Մեկ անգամ խոսք էր գնում կտակը կեղծելու մասին, ինչ-որ մեկը գոռաց, որ դրա համար պետք է ձեռքերը կտրել, իսկ նա իսկույնեթ հրամայեց կանչել դահճին դանակով ու կոճղով: Մի ուրիշ անգամ խոսք էր գնում քաղաքացիության իրավունքի մասին, և պաշտպանները դատարկ վիճաբանություն սկսեցին, սպտասխանողը թիկնոցով հանգես գա թե տոգայով⁵⁴. իսկ նա, ասես պարծենալով իր անաչառությամբ, պատասխանողին հրամայեց ամբողջ ժամանակ փոխել զգեստը, նայած ով էր խոսում՝ մեղադրողը թե պաշտպանը: (3) Ասում են, որ մեկ գործով նա հայտարարել էր, և նույնիսկ գրավոր. «Ես պաշտպանում եմ նրանց, ովքեր ճշմարտությունն են ասել»:

Այդ ամենով նա այնքան խախտեց հարգանքն իր նկատմամբ, որ ամենուրեք սկսեցին բացահայտ արհամարհանքով վերաբերվել նրան: Ոմն մեկը, ներողություն հայցելով նրանից մի վկայի համար, որին կանչել էին պրովինցիայից, բայց չէր եկել, երկար ու բարակ ասում էր, որ նա ոչ մի կերպ չէր կարող գալ, բայց չէր ասում, թե ինչու. և միայն երկար հարցուփորձից հետո արտաբերեց. «Նա հարգելի պատճառ ունի՝ մահացել է»: Մեկ ուրիշը, ջերմորեն շնորհակալություն հայտնելով նրան, որ թույլ է տվել պատասխանողին պաշտպանվել, ավելացրել էր. «Ի դեպ, միշտ էլ այդպես է արվում»: Ես նույնիսկ լսել եմ ծերունիներից, թե իբր դատամուկներն այնպես էին շարաշահում նրա համբերությունը, որ երբ ուզում էր իջնել դատավորական բազկաթոռից, նրան ոչ միայն ետ էին կանչում, այլև պահում էին, բռնելով տոգայի փեշից և, անգամ, ոտքերից: (4) Եվ դրա վրա շպետք է զարմանալ, եթե նույնիսկ ինչ-որ մի հույն դատական վիճաբանությունների ժամանակ նրա երեսին բղավել էր. «Իսկ դու և՛ ծերունի ես, և՛ հիմար»: Իսկ մեկ հոռմեացի հեծյալ, ինչպես հայտնի է, թշնամիների անհիմն զրպարտանքներով մեղադրված լինելով ցոփ ու անառակ կյանք վարելու մեջ և տեսնելով, որ

որպես վկաներ իր դեմ կանչում և լսում են ամենաանառակ կանանց, Կլավդիոսի գլխին լուտանք տեղաց նրա հիմարության ու կոպտության համար և քարեգրիչն ու տախտակներն այնպես շարտեց նրա դեմքին, որ խորը ճանկոտեց այն:

16. Նա նաև ցենզոր եղավ՝ մի պաշտոն, որը վաղուց արդեն, ցենզորներ Պլանկոսի ու Պավլոսի⁵⁵ ժամանակներից, ոչ ոք չէր զբաղեցնում: Բայց այստեղ էլ նա անհաստատակամություն ու անկայունություն դրսևորեց ինչպես մտադրություններում, այնպես էլ արարքներում: Հեծյալների ստուղատեսի⁵⁶ ժամանակ նա առանց պախարակման արձակեց բոլոր արատներով արատավորված մի պատանու, քանի որ նրա հայրը հավատացնում էր, որ որդուց կատարելապես գոհ է. «Նա իր ցենզորն ունի», — ասաց Կլավդիոսը: Մեկ ուրիշ պատանու, որը գայթակղիչի ու անառակի համբավ ուներ, նա խորհուրդ տվեց իր ցանկասիրության մեջ ավելի զուսպ կամ գեթ զգուշ լինել. «Ինչո՞ւ ես իմանամ, թե ով է քո սիրուհին», — ավելացրել էր նա: Բարեկամների խնդրանքով ջնջելով նշումը ոմն մեկի անվան կողքին, ասել էր. «Իսկ հետք այնուամենայնիվ թող մնա»: (2) Մի հայտնի մարդու, որն առաջինն էր ամբողջ հունական պրովինցիայում, նա ջնջեց դատավորների ցուցակից և նույնիսկ զրկեց հռոմեական քաղաքացիությունից այն բանի համար, որ սա լատիներեն չգիտեր, քանի որ սեփական կյանքի մասին հաշվետվություն տալ նա թույլատրում էր միայն սեփական խոսքերով, առանց պաշտպանի օգնության: Նա շատերին էր պախարակում, երբեմն անսպասելի և շլսված առիթներով. ոմանց այն բանի համար, որ նրանք առանց իր գիտության ու թույլտվության⁵⁷ մեկնել էին Իտալիայից, իսկ մեկին էլ այն բանի համար, որ պրովինցիայում ուղեկցել էր թագավորին, ընդ որում նա հիշեցրել էր, որ նախնյաց ժամանակներում նույնիսկ Ռաբիրիոս Պոստումոսը մեղադրվել էր հռոմեական ժողովրդի մեծությունը վիրավորելու մեջ⁵⁸ այն բանի համար, որ Պտղոմեոս թագավորին ուղեկցել էր Ալեքսանդրիա, որպեսզի նրանից ստանա պարտքը: (3) Նա փորձում էր նաև ավելի հաճախ բռնագանձումներ կատարել, բայց քննության անփութության պատճառով և, ի մեծ համոթս նրա, գրեթե բոլոր կասկածյալներն անմեղ դուրս եկան՝ ում նա մեղադրում էր ամուրիության, անզավակության, շքավորության մեջ, ապացույցեցին, որ իրենք և՛ ամուսնացած են, և՛ հայրեր են, և՛ ունևորներ, իսկ նա, ում մասին ասում էին, թե իրր կամեցել է թրով ինքն իրեն զրկել կյանքից, ետ էր տարել զգեստն ու ցույց տվել, որ մարմնի վրա սպիի հետք անգամ չկա⁵⁹: Նրա ցենզորությունը նշանավոր էր նաև նրանով, որ շքեղ աշխատանքի մի արծաթադրվագ մարտակառք, որը վաճառքի էր հանված Միգիլլարիանե-

րում⁶⁰, նա հրամայեց գնել ու ջարդոտել իր աչքի առջև, և որ մեկ անգամ մեկ օրվա ընթացքում նա քսան էդիկտ հրատարակեց, այդ թվում երկու այնպիսիները, որոնցից մեկում առաջարկում էր ավելի լավ ձյութել տակառները խաղողի հարուստ կութի համար, իսկ մյուսում հաղորդում էր, որ օձի խայթոցի դեմ չկա ավելի լավ միջոց, քան կարմրածառի հյութը:

17. Նա միայն մեկ արշավանք կատարեց, այն էլ աննշան⁶¹: Սենատը նրան տրիումֆային զարդարանքներ էր շնորհել⁶², բայց նա դրանք համարեց կայսերական մեծությանն անարժան պատիվներ և սկսեց պատվավոր առիթ փնտրել իսկական տրիումֆի համար: Նրա ընտրությունը կանգ առավ Բրիտանիայի վրա, որի նկատմամբ Հուլիոս Կեսարից հետո ոչ ոք ոտնձգություն չէր կատարել և որն այդ ժամանակ խռովք էր ապրում իր փախստակներին հոռմեացիներից ետ շտանալու համար⁶³: (2) Նա այնտեղ նավարկեց Օստիայից, բայց փոթորկալի հյուսիս-արևմտյան քամիների⁶⁴ պատճառով երկու անգամ քիչ էր մնում ջրամույն լինել, մեկ անգամ՝ Լիգուրայի ափերի, մյուս անգամ՝ Ստոբրադական կղզիների⁶⁵ մոտ: Դրա համար էլ Մասսիլիայից մինչև Գեզորիակ⁶⁶ նա գնաց ցամաքով, իսկ հետո, ջրանցում կատարելով, մի քանի օրվա ընթացքում իրեն ենթարկեց կղզու մի մասը⁶⁷, առանց որևէ կովի կամ արյունահեղության, մեկնումից մի քանի ամիս անց վերադարձավ Հռոմ և մեծ ճոխությամբ տոնեց տրիումֆը: (3) Այդ տեսարանը դիտելու նա մայրաքաղաք հրավիրեց ոչ միայն պրովինցիաների փոխարքաներին, այլև նույնիսկ որոշ վտարանդիներին: Իր պալատինյան ապարանքի տանիքին նա մնացյալ թշնամական ավարի թվում կախել տվեց նաև ծովային պսակ՝ քաղաքացիականի⁶⁸ կողքին, ի նշան այն բանի, որ նա կտրել անցել է և ասես հնազանդեցրել Օվկիանոսը: Նրա մարտակառքին հետևում էր նրա կինը՝ Մեսսալինան, ծածկված երկանիվ կառքով, հետևում էին նաև նրանք, ովքեր այդ պատերազմում տրիումֆային զարդարանքներ էին ստացել, բոլորը ոտքով և սենատորական տոգաներ հագած. միայն Մարկոս Կրասոս Ֆրուգին, որն այդ պատվին երկրորդ անգամ էր արժանանում, արմավենու ճյուղերով զարդարված տունիկա հագին գնում էր դարդարուն ձի հեծած:

18. Քաղաքի բարեկարգումն ու մատակարարումը նրա համար միշտ եղել է մեծագույն հոգատարության առարկա: Երբ էմիլիոսի արվարձանում երկարատև հրդեհ ծագեց, նա երկու օր անընդմեջ գիշերեց դիրիբիտորումիում⁶⁹. Քանի որ չէին բավարարում ո՛չ զինվորներ, ո՛չ ստրուկներ, նա ավագների⁷⁰ միջոցով հրդեհը մարելու համար բոլոր փողոցներից կանչել տվեց ժողովրդին և, իր առջև դրամով լի քսակներ դրած,

տեղնուտեղը յուրաքանչյուրին պարգևատրում էր օգնութեան համար՝ ըստ ծառայութեան: (2) Իսկ երբ մատակարարման գործում դժվարութիւններ սկսվեցին անընդմեջ անբերրիութեան հետևանքով, և երբ մի անգամ ֆորումում ժողովուրդը նրա վրա հայհոյանքներ ու հացի կտորների տեղաց, այնպես որ նրան հազիվ հաջողվեց ետնամուտքով փրկութիւն գտնել ապարանքում, — այդ պահից նա ոչ մի բանի առջև կանգ չէր առնում պարենամթերքի մատակարարումը նույնիսկ ձմռանը կարգավորելու համար: Առևտրականներին նա հաստատուն շահույթ ապահովեց, խոստանալով կրած վնասը վերցնել իր վրա, եթե որևէ մեկը տուժի փոթորկից. իսկ առևտրականներ կառուցելու համար նա մեծ օգուտներ ընձեռեց բոլոր դասի անձանց՝ (19) քաղաքացիներին՝ ազատութիւն Պապիոս-Պոպպեոսի օրենքից, լատիններին՝ քաղաքացիական իրավունք⁷¹, կանանց՝ շորս երեխայի իրավունք⁷²: Այդ որոշումները ուժի մեջ են առ այսօր:

20. Նա ոչ այնքան մեծաթիվ, որքան նշանակալի ու անհրաժեշտ կառույցներ ստեղծեց⁷³: Դրանցից ամենագլխավորներն են՝ ջրմուղը⁷⁴, որ սկսել էր Գայոսը, ապա Ֆուլցինյան լճից սկիզբ առնող ջրատարը և նավահանգիստը Օստիայում, թեև նա գիտեր, որ այդ ձեռնարկումներից առաջինը Օգոստոսը մերժել էր մարսերի համառ խնդրանքների պատճառով, իսկ երկրորդի մասին մեկ անգամ չէր խորհել աստվածային Հուլիոսը, բայց հրաժարվել էր դժվարութիւնների պատճառով: Կլավդիոսի ջրմուղով նա ջուր բերեց քաղաք Ցերուլեոմի, Կուրցիոսի և Ալբուդիգնումի ջրառատ ու թարմ աղբյուրներից, իսկ քարե նոր կամարներով՝ Անիենի գետից, և ջուրը բաշխեց մեծաթիվ ճոխ զարդարված ջրամբարներով մեկ: Ֆուլցինյան լճին⁷⁵ նա ձեռք զարկեց ոչ միայն փառքի, այլև շահույթի հույսով, քանի որ մարդիկ կային, որ խոստացել էին շորացման ծախսերն իրենց վրա վերցնել, որպեսզի դրա դիմաց շորացված դաշտեր ստանան: Տեղ-տեղ փորելով, տեղ-տեղ էլ անցքեր բացելով լեռներում, նա տասնմեկ տարում կառուցեց երեք մղոն երկարությամբ ջրատար, թեև անընդմեջ երեսուն հազար մարդ աշխատում էին այնտեղ: (3) Օստիայի նավահանգիստը⁷⁶ նա կառուցեց աջից ու ձախից ծովի մեջ հողաթմբեր սլատրաստելով և մուտքի մոտ խոր տեղում ալեբախիչ պատնէշ դնելով: Վերջինն ամրացնելու համար նա այդ տեղում սուզել տվեց այն նավը, որը Սգիպտոսից մի հսկա կոթող⁷⁷ էր բերել, ամրացրեց այն բազմաթիվ ցցերով և դրանց վրա կառուցեց մի խիստ բարձր աշտարակ Ալեքսանդրիայի փարոսի⁷⁸ նմանությամբ, որպեսզի գիշերները նավերը առաջնորդվեն նրա լույսով:

21. Նա շատ հաճախ էր բաշխումներ անում ժողովրդին, ցուցա-

դրում էր մեծ և բազմամբոխ, այն էլ ոչ միայն սովորական հանդիսա-
խաղեր և սովորական տեղերում. նա հնարում էր նորերը, վերականգ-
նում հները և ներկայացնում դրանք այնտեղ, ուր ոչ ոք չէր ներկայաց-
րել նրանից առաջ: Պոմպեոսի թատրոնի օժման ժամանակ, որը նա վե-
րականուցել էր հրդեհից հետո, խաղերը բացեց օրօրստրայի կենտրո-
նում կառուցված տրիբունայից, ուր իջավ վերին տաճարում⁷⁹ կատարած
մաղթանքից հետո, լուռ նստած հանդիսատեսների շարքերի միջով: (2)
Նա տոնեց նաև հարյուրամյա հանդիսախաղերը, պատրվակ բռնելով, թե
իբր Օգոստոսը դրանք կատարեց ժամանակից շուտ, շսպասելով հարկ
եղած ժամկետին, թեև իր «Պատմության» մեջ նա ինքը հայտարարում է,
որ երկար ընդմիջումից հետո Օգոստոսը վերականգնեց դրանց ճիշտ
ժամկետը, մանրախույզ հաշվարկելով անցած բոլոր տարիները⁸⁰: Դրա
համար էլ քիչ չծիծաղեցին, երբ մունևտիկը, ըստ հանդիսավոր սովո-
րույթի, բոլորին կանչում էր մի տոնի, որը ոչ ոք չի տեսել և չի տեսնի,—
չէ՞ որ դեռ կենդանի էին այն տեսնողները, և որոշ դերասաններ⁸¹, ովքեր
հանդես էին եկել այն ժամանակ, հիմա էլ էին հանդես գալիս:

Կրկեսային խաղեր նա հաճախ կազմակերպում էր նույնիսկ վատի-
կանում, երբեմն յուրաքանչյուր հինգ ձիարշավից հետո⁸² ցույց տալով
գազանների որսահալածանք: (3) Մեծ կրկեսում նա դնել տվեց մարմա-
րիոնե միջնորմներ և ոսկեղօծ շրջադարձասյուններ— նախկինում դր-
րանք երկուսն էլ տուֆից ու փայտից էին,— և հատուկ տեղեր առանձ-
նացրեց սենատորների համար, որոնք առաջ նստում էին բոլորի հետ
միասին: Այստեղ, մարտակառքերի մրցություններից զատ, նա ներկա-
յացնել էր տալիս և տրոյական խաղեր, և աֆրիկյան որսահալածանքներ՝
սյրետորական հեծյալների ջոկատի մասնակցությամբ, տրիբունների և
հենց պրեֆեկտի գլխավորությամբ, ինչպես նաև հանել էր տալիս թեսա-
լական⁸³ հեծյալների՝ վայրի ցուլերով, որոնց նրանք քշում էին ամբողջ
կրկեսով մեկ, ուժասպառ անելուց հետո ցատկում նրանց մեջքերին և
պոզերից բռնած գետին թավալում:

(4) Գլադիատորական մարտեր նա շատ անգամներ և շատ տեղե-
րում էր ցուցադրում: Իր տարեդարձին նա դրանք տվեց պրետորական
ճամբարում, բայց առանց վայրի գազանների ու հարուստ հարգարանքի,
և սեպտայում՝ լրիվ և սովորական կարգով: Այդտեղ էլ տրվում էր նաև
արտահերթ ներկայացում՝ կարճատև և ոչ բազմօրյա, որը նա անվանեց
«Նախաճաշիկ»⁸⁴, որովհետև առաջին անգամ նրա մասին հայտարարե-
լիս ժողովրդին էզիկտով հրավիրում էր «ասես անսպասելի ու հանպատ-
րաստից հյուրասիրության»: (5) Նմանաբնույթ խաղերի ժամանակ նա
իրեն պահում էր ամենից ավելի մատչելի ու պարզ. նույնիսկ երբ հաղ-

Թողին ոսկեգրամներ էին հաշվում, նա մեկնում էր ձախ ձեռքը և ամբոխի հետ միասին բարձրաձայն, մատներով պահում հաշիվը: Շատ անգամ նա հանդիսատեսներին հրավիրում և կոչ էր անում ուրախանալ, հաճախ անվանելով նրանց «տանտերեր» և անում էր բռնազբոսիկ ու շինծու կատակներ. օրինակ, երբ նրանից պահանջեցին ազատագիր տալ գլադիատոր Աղավնուն, ասաց, որ կտա, «եթե նրան բռնեն»: Ի դեպ, մի անգամ նա վարվեց և տեղին, և լավ՝ մեկ մարտակառավար գլադիատորի նա պատվավոր պաշտոնաթողութուն⁸⁵ տվեց նրա շորս որդիների խնդրանքով, և բոլորը հանդիսատեսների աղմկալից հավանությամբ, իսկ հետո տեղնուտեղը հայտարարութուն կախել տվեց, մատնացույց անելով ժողովրդին, թե որքան լավ է զավակներ ունենալ, եթե անգամ գլադիատորը, ինչպես կարելի է տեսնել, ի դեմս նրանց գտնում է պաշտպաններ ու հովանավորներ:

(6) Մարսյան դաշտում նա ռազմական ներկայացում տվեց, որը պատկերում էր քաղաքի գրավում ու կողոպուտ, իսկ հետո՝ բրիտանական թագավորների հնազանդեցում, և ինքն էր կարգադրում՝ նստած գորավարի թիկնոցով: Նույնիսկ Ֆուցինյան լճի իջեցումից առաջ այնտեղ ծովամարտ կազմակերպեց: Բայց երբ ռազմիկները գոչեցին նրան. «Ողջույն, կա՛յր, մահվան գնացողները ողջունում են քեզ», նա պատասխանեց. «Գուցե և ոչ»⁸⁶, — և այդ խոսքերը դիտելով որպես ներման շնորհում, նրանք բոլորը հրաժարվեցին կռվել: Կլավդիոսը երկար տատանվում էր, արդյոք հաշվեհարդար շտեմնի՞ նրանց հետ հրով ու սրով, բայց հետո ոտքի ցատկեց և, գարշելիորեն ոտքերը քարշ տալով, վազեց ափի երկայնքով՝ սպառնալիքներ ու հորդորներ տեղալով, մինչև որ ստիպեց նրանց կռվի ելնել: Այդ կռվում մարտնչում էին սիցիլիական և հռոդոսյան նավատորմները, յուրաքանչյուրը կազմված տասներկուական տրիրեմններից⁸⁷, իսկ փողով ազդանշաններ էր տալիս արծաթյա մարդաձուկը, մեքենայի օգնությամբ վեր ելնելով ջրից:

22. Սրբազան սովորույթներում, քաղաքացիական և ռազմական կարգերում, բոլոր դասերի վերաբերմամբ, ինչպես Հռոմում, այնպես էլ պրովինցիայում, նա շատ փոփոխություններ կատարեց, վերականգնեց մոռացվածը և նույնիսկ մտցրեց նորը:

Քրմերի կռեգիտումներում, առաջարկելով նոր անդամներ ընդունել, նա ամեն մեկի անունից հետո անպայման երգում էր տալիս. մանրախույզ հետևում էր, որպեսզի Հռոմում ամենափոքր իսկ երկրաշարժի դեպքում պրետորը ժողով գումարի և դադարեցնի գործերը, իսկ Կապիտոլիումի վրա շարագուշակ թռչունի հայտնվելու դեպքում մաղթանք էր կատարվում. և մեծ քրմապետի իրավունքով ժողովրդի առջև ինքն էր

այն գլխավորում ռոստրալային տրիբունայից, նախօրոք հեռացնելով սպասավորների և ստրուկների բազմութունը⁸⁸:

23. Դատավարութունը, որը նախկինում բաժանված էր ամառային և ձմեռային կիսամյակների, նա դարձրեց անընդմեջ: Ծամահու հավատարմագրերի⁸⁹ վերաբերյալ գործերը, որոնք սովորաբար յուրաքանչյուր տարվա համար հանձնարարվում էին պաշտոնատար անձանց և միայն Հոռմում, նա սկսեց հանձնարարել երկար ժամանակով և նույնիսկ պրովինցիալի իշխանութուններին: Պապիոս-Պոպպեոսի օրենքում նա վերացրեց Տիբերիոսի ավելացրած հոդվածն այն մասին, որ վաթսուեամյա մարդն արդեն ի վիճակի չէ սերնդագործելու (2) նա որոշում ընդունեց, որպեսզի որբերի խնամակալներն արտահերթ նշանակվեն կոնսուլների կողմից⁹⁰, և որպեսզի այն անձինք, ովքեր մագիստրատների կողմից արտաքսված են պրովինցիաներից, մուտք չունենան նաև Իտալիա և Հոռմ: Մտցրեց նաև աքսորի նոր տեսակ, արգելելով որոշ անձնավորութունների քաղաքից հեռանալ երեք մղոնից ավելի:

Սենատում, պատրաստվելով դեկուցել հատուկ կարևորության գործերի մասին, նա նստում էր երկու կոնսուլների միջև կամ ժողովրդական տրիբունների նստարանին⁹¹: Արձակման թուշլտվութունները, որոնց համար սովորաբար սենատին էին դիմում, նա սկսեց տալ սեփական հայեցողությամբ:

24. Կոնսուլական զարդարանքներ նա ընձեռում էր նույնիսկ պրովինցիաների երկրորդ կարգի կուսակալներին⁹²: Սենատորական աստիճանից հրաժարվողներից նա խլում էր նաև հեծյալական աստիճանը: Չնայած որ սկզբնապես նա խոստացել էր սենատում ընտրել միայն նրանց, ում նախնիները մինչև հինգերորդ պորտը⁹³ հոռմեական քաղաքացիներ են եղել, մեկ անգամ սենատորական աստիճան ընձեռեց նույնիսկ մի ազատարձակի որդու⁹⁴, ճիշտ է, պայմանով, որ նախօրոք նա որդեգրվի հոռմեացի հեծյալի կողմից: Իսկ մեղադրանքներից խուսափելու համար հայտարարեց, որ ցենզոր Ապպիոս Կուլյրը, իր տոհմի նահապետը, սենատում ընտրում էր ազատարձակների որդիներին. նա չէր կռահում, որ Ապպիոսի ժամանակներում և նույնիսկ ավելի ուշ ազատարձակներ համարվում էին ոչ թե նրանք, ովքեր իրենք էին ազատագիր ստանում, այլ նրանց զավակները, ովքեր արդեն որպես ազատներ էին ծնված լինում: (2) Ճանապարհները սալահատակելու հոգացողության փոխարեն նա քվեստորների կոլեգիումին հանձնարարեց գլադիատորական խաղերի կազմակերպումը. և քվեստորներին ազատելով Գալլիայում և Օստիայում ունեցած պարտավորութուններից⁹⁵, նրանց վերադարձրեց Սատուրնի տաճարին առընթեր գանձարանի⁹⁶ վարումը, որը

մինչ այդ պատկանում էր պրետորներին կամ, ինչպես և հիմա, նախկին պրետորներին:

(3) Սիլանոսին՝ իր դստեր փեսացուին, նա տրիումֆային զարդարանքներ նշանակեց կրելու, երբ սա դեռևս պատանի էր⁹⁷, իսկ ավելի տարիքով մարդկանց նա դրանք տալիս էր այնպես շոայլորեն և այնպիսի հեշտությամբ, որ մի նամակ էր շրջում բոլոր լեգեոնների անունից խնդրանքով, որպեսզի կոնսուլական կոշման տեր լեգատները, զորքեր ստանալով, իսկույն ստանան նաև տրիումֆային զարդարանքներ և ցանկացած պատրվակը շփնտրեն կռիվ հրահրելու համար: Ավլոս Պլավտիոսին նա նույնիսկ օվացիա նշանակեց, իսկ երբ նա մուտք գործեց Հռոմ, ապա ինքը ելավ նրան ընդառաջ և ուղեկցեց Կապիտոլիում և Կապիտոլիումից ետ, քայլելով նրա ձախ կողքից⁹⁸: Իսկ Գարինիոս Սեկունդոսին, որը հաղթել էր քավկերի գերմանական ցեղին, նա թույլատրեց նույնիսկ կրելու Քավկա մականունը:

25. Հեծյալների համար նա զինվորական ծառայություն անցնելու այնպիսի կարգ սահմանեց, որ նրանք ի հրամանատարություն ստանան սկզբում կոհորտա, ապա հեծելաշոկատ և, վերջապես, լեգեոն. նրանց վարձատրություն նշանակեց և մտցրեց «ոչ կանոնադրական» կոշվող պայմանական ծառայություն⁹⁹, որը կարելի էր անցնել հեռակա կարգով և միայն անվանապես: Սենատի հրամանագրով նա զինվորներին արգելեց ողջունելու համար մտնել սենատորների տները: Այն ազատարձակներին, ովքեր իրենց ներկայացնում էին որպես հռոմեացի հեծյալներ, զրկում էր ունեցվածքից, նրանց, որոնցից պատրոնները գանգատվում էին երախտամոռության համար, վերադարձնում էր ստրկության, իսկ նրանց հովանավորներին հայտարարել էր, որ նրանք դրանից հետո արդեն իրեն գանգատներ չտան ռեպուբլիկայի ազատարձակների վերաբերյալ (2) Բանի որ ոմանք, շկամենալով ծախսեր կատարել հիվանդ և հյուծված ստրուկների բուժման համար, նրանց նետում էին էսկուլապի կղզին, ապա այդ նետված ստրուկներին նա ազատ հայտարարեց. եթե նրանք առողջանային, ապա չպետք է վերադառնային տիրոջ մոտ, իսկ եթե տերն ուզում էր ավելի շուտ սպանել նրանց, քան գուրս նետել, ապա ենթակա էր սպանության մեջ մեղադրանքի: Էդիկտով նա ճանապարհորդներին արգելեց Իտալիայի քաղաքներով անցնել այլ կերպ, եթե ոչ միայն հետիոտն, ճոճաթոռով կամ պատգարակով: Պուտեոլքում և Օստիայում նա մեկական կոհորտա դրեց հրդեհները կանխելու համար¹⁰⁰:

(3) Օտարերկրյա ծագման տեր անձանց նա ռեպելեց հռոմեական, համենայն գեպս տոհմական, անուններ ընդունել: Ով որ կեղծաբար իրեն ներկայացնում էր Հռոմի քաղաքացի, նրա գլուխը կտրում էին էսքրի-

լինյան դաշտում¹⁰¹: Աքայա և Մակեդոնիա պրովինցիաները, որոնք Տիբերիոսը վերցրել էր իր կառավարման ներքո, նա վերադարձրեց սենատին: Լիկիացիներին կործանարար երկպառակույթյունների համար զրկեց ազատութունից, հռոդոսցիներին, որոնք զղջացել էին նախկին զանցանքների համար, վերադարձրեց ազատութունը¹⁰²: Իլիոնի բնակիչներին, որպես հռոմեական ժողովրդի նախնիների, ընդմիջտ ազատեց տուրքից, հրապարակելով հունարեն գրված հինավուրց մի նամակ, որում հռոմեական սենատն ու ժողովուրդը Սելևկոս թագավորին բարեկամութուն և դաշինք էին առաջարկում այն բանի համար, որ նա իրենց ցեղակիցներին՝ իլիոնցիներին, ազատութուն ընձեռի բոլոր տեսակի տուրքերից: (4) Հրեաներին, որոնց մշտապես խոռվում էր Քրեստոսը¹⁰³, նսարտաբսեց Հոռմից: Գերմանական ղեսպաններին¹⁰⁴ թուլլատրեց նստել օրքեստրայում, քանի որ նրան դուր եկան սրանց պարզութունն ու հաստատակամութունը՝ ղեսպաններին տեղ էին հատկացրել ժողովրդի մեջ, քայց նրանք, նկատելով, որ պարթևներն ու հայերը նստած են սենատորների հետ միասին, ինքնակամ անցան նույն տեղերը, հայտարարելով, որ իրենք նրանցից մազաչափ իսկ նվաստ չեն ոչ դիրքով և ոչ էլ արիությամբ: (5) Գալլական դրուիդներին¹⁰⁵ աստվածապաշտության կարգը, որն անմարդկայնորեն սարսափելի էր ու արգելված Հոռմի քաղաքացիների համար դեռևս Օգոստոսի օրոք, նա կատարելապես ոչընչացրեց: Նա, ընդհակառակն, նույնիսկ փորձում էր էլևսինյան սրբություններն Ատտիկայից Հոռմ փոխադրել, իսկ էրիկիյան Վեներայի¹⁰⁶ սիցիլիական տաճարը, որը փլվել էր հնությունից, նրա առաջարկությամբ վերականգնվեց Հոռմի պետական գանձարանի միջոցներով: Թագավորների հետ պայմանագրերը¹⁰⁷ նա կնքում էր ֆորումում, զոհ մատուցելով խոզ և արտասանելով ֆեցիալիսների¹⁰⁸ հին հմայախոսությունը:

Սակայն և՛ դրան, և՛ մնացյալին, և՛ նրա ամբողջ կառավարմանը մեծ մասամբ ուղղություն էր տալիս ոչ թե նա ինքը, այլ նրա կանանց ու ազատարձակների կամքը, և նա գրեթե միշտ և ամեն բանում իրեն այնպես էր պահում, ինչպես հաճելի էր նրանց կամ օգտավետ:

26. Դեռևս պատանի ժամանակ նա երկիցս նշանվել էր՝ սկզբում էմիլիա Լեսիդայի¹⁰⁹, Օգոստոսի ծոռնուհու, ապա՝ Լիվիա Մեդուլլինայի հետ, որն այն ժամանակ կրում էր Կամիլլա անունը և սերում էր դիկտատոր Կամիլլոսի հին տոհմից: Առաջինից հրաժարվեց դեռևս նրա աղջիկ ժամանակ, քանի որ նրա ծնողները Օգոստոսի թշնամիներն էին, երկրորդը հիվանդությունից մահացավ հենց այն օրը, երբ նշանակված էր հարսանիքը: (2) Դրանից հետո նա ամուսնացած էր եղել Պլավտիա Ուր-

գուլանիլլայի¹¹⁰, տրիումֆատորի դասեր, իսկ ապա էլիա Պետինայի՝ կոնսուլյարիսի դասեր հետ: Երկուսից էլ նա բաժանվեց՝ Պետինայից մանր-մունր վեճերի համար, իսկ Ուրգուլանիլլայից՝ նրա անպատկառ անառակության և սպանություն կատարելու մեջ կասկածվելու պատճառով: Երանցից հետո ամուսնացավ Վալերիա Մեսսալինայի՝ իր ազգական Մեսսալա Բարբատոսի դասեր հետ: Բայց, իմանալով, որ ի եզրափակումն իր բոլոր ցոփությունների և անպարկեշտությունների Մեսսալինան նույնիսկ ամուսնություն է կնքել Գայոս Սիլիոսի հետ և վկաների ներկայությամբ ստորագրել պայմանագիրը, Կլավդիոսը նրան մահապատժի ենթարկեց, իսկ ինքը հավաքույթում պրետորականների առջև երդվեց, որ քանզի իր բոլոր ամուսնությունները դժբախտ են եղել, ուստի այսուհետև ամուրի կմնա, իսկ եթե շղիմանա, ապա թող նրանք խողխողեն իրեն իրենց ձեռքերով: (3) Բայց և այնպես նա շէր կարողանում նոր ամուսնության մտադրությունները զսպել՝ մերթ Պետինայի հետ, որին ինքն էր երբեմնի վտարել, մերթ Լուլիա Պավլինայի հետ, որն ամուսնացած էր Գայոս Կեսարի¹¹¹ հետ: Սակայն, գայթակղված Ագրիպպինայի կոկետությունից, որը նրա եղբայր Գերմանիկոսի ղուստրն էր և օգտվում էր համբույրի ու ազգակցական փաղաքշանքների իր իրավունքից, Կլավդիոսը մարդիկ գտավ¹¹², որոնք առաջիկա նիստում սենատին առաջարկեցին պարտավորեցնել Կլավդիոսին ամուսնանալու Ագրիպպինայի հետ, իբրև թե պետության բարձրագույն բարիքի համար, և նման ամուսնություններ կնքել թույլատրել բոլորին, թեև մինչ այդ դրանք համարվում էին արյունապղծական: Եվ համարյա թե մեկ օր անց հարսանիք արեց. սալյան նրա օրինակին ոչ ոք չհետևեց, բացի մի ազատարձակից ու մի ավագ ցենսուրիոսից, որի հարսանիքը Ագրիպպինայի հետ նա պատվեց իր ներկայությամբ:

27. Երեխաներ նա ուներ իր երեք կանանցից. Ուրգուլանիլլայից՝ Դրուզոսին և Կլավդիային, Պետինայից՝ Անտոնիային, Մեսսալինայից՝ Օկտավիա դասերը և մի որդի, որին սկզբում Գերմանիկոս անվանեցին, իսկ հետո՝ Բրիտանիկոս: Դրուզոսը մահացավ դեռևս պատանեկությունը բոլորելիս¹¹³. Նա խաղում էր տանձը վեր-վեր նետելով, և խեղդվեց, երբ այն բռնեց բերանով: Դրանից մի քանի օր առաջ նա նշանվել էր Սեյանոսի դասեր հետ. դրա համար էլ տարօրինակ է պատկերացնել, որ, ըստ որոշ հաղորդումների, նա նենգորեն սպանվել է Սեյանոսի կողմից: Կլավդիոսն ծնվել էր նրա ազատարձակ Բոտերոսից. և թեև նա ծնվել էր ամուսնալուծությունից միայն հինգ ամիս անց, և նրան արդեն սկսել էին կերակրել¹¹⁴, Կլավդիոսը հրամայեց երեխային դնել մոր շեմին և այնտեղ թողնել մերկ վիճակում: (2) Անտոնիային նա կնության տվեց

ավարտում Գնեոս Պոմպեոս Մագնուսին, Նեոտո՝ Փափանոս Սուլլային, ևրկու
սովենտառաքն վատոհմիկ պարտանչին երդի¹¹⁵, իսկ Օկտավիանոսին՝ իր խորթ որ-
դի ներունին, թեև նա արդեն նշանակած էր Միլանոսի հետ: Բրիտանիկոսը
ծնվեց նրա կառավարման քսաներորդ օրը. իր երկրորդ կոնսուլության
ժամանակ¹¹⁶: Կլավդիոսը մեկ անգամ շեր նրան, դեռևս մանկիկ, հանձ-
նադարել ժողովրդի և զինվորների ուշադրությանը, հախաքներին դուրս
էր բերում գրկած, հանգիստախաղերում նրան մերթ վրձքին էր սեղմում,
մերթ պապադում առաջ և բազմության աղմկալից ծափահարությունների
ներքո նրան ամենաերջանիկ ապագա ցանկանում: Իր փեսաներից ներո-
նին նա արդեգրեց. իսկ Պոմպեոսին և Սիլանոսին ոչ միայն մերժեց,
այլև մահապատժի ենթարկեց¹¹⁷:

28. Ազատարձակներից նա հատուկ ուշադրություն էր ցուցաբերում
ներքինի Պոսիդոսի նկատմամբ, որին բրիտանական տրիումֆի ժամա-
նակ նույնիսկ պատվավոր նիզակ¹¹⁸ շնորհեց, ինչպես ռազմիկի. նա պա-
կաս շեր սիրում նաև Ֆելիքսին՝ երեք թագուհիների¹¹⁹ ամուսնուն, որին
նշանակեց փաղանգների և հեծելաջոկատների պետ Հրեաստանում¹²⁰, և
Հարպոկրատեսին, որին իրավունք տվեց պատգարակով շրջել Հոռոմում
ու համաժողովրդական հանգիստախաղեր կազմակերպել. և առավել շատ՝
Պոլիբիոսին, գիտական գործերով իր խորհրդականին, որին զբոսանքնե-
րի ժամանակ հաճախ նույնիսկ երկու կողմից ուղեկցում էին զույգ կոն-
սուլները. բայց բոլորից բարձր նա դասում էր Նարկիսին՝ աղերսագրերի
գործերով խորհրդականին, և Պալլանտոսին՝ դրամական գործերով խոր-
հրդականին¹²¹: Նա հաճույքով էր թույլատրում սենատին պարգևատրել
նրանց ոչ միայն մեծ գումարներով, այլև քվեստորական և պրետորա-
կան աստիճանի¹²² նշաններով, իսկ ինքը նրանց այնպիսի հափշտա-
կումներ ու կողոպուտներ էր թույլ տալիս, որ մեկ անգամ, երբ գան-
գատվում էր, թե գանձարանում դրամ չկա, նրան սրամտորեն ասացին,
որ նա լիուլի դրամ կունենա, բավական է բաժնեկից դառնա երկու
ազատարձակներին:

29. Եվ ահա, ինչպես ասացի, հենց այդ մարդկանց և իր կանանց
առջև նա այնպիսի ենթակայության մեջ էր, որ իրեն պահում էր ոչ թե
որպես տիրակալ, այլ ինչպես ծառա. հանուն դրանցից ցանկացածի
օգուտի, ցանկության, քմահաճույքի նա շուայլորեն բաշխում էր և՛ պաշ-
տոններ, և՛ գորապետություն, և՛ ներում, և՛ պատիժ, սովորաբար նույ-
նիսկ ինքն էլ շիմանալով և տեղյակ չլինելով այդ մասին: Հարկ չկա
այստեղ մանրամասն թվարկելու մանրուքները՝ ետ պահված պարգևնե-
րը, վերացված դատավճիռները, գազտնի ուղղված կամ բացահայտ
կեղծված հրամանագրերը նշանակումների մասին: Բայց նույնիսկ Ապ-

պիտա Աթլանտային՝ իր աներոջը¹²⁰, նույնիսկ երկու Յուդիաներին՝ Դրուզո-
զուսի և Գերմանիկուսի որսառնորդն, նա մահվան մատնեց, շարացուցն-
լով մեղադրանքները և շնչելով արդարադատները, իսկ նրանցից հետո՝
Գնեսու Պոմպեոսին՝ իր երեց դասեր մեռնեա՛ն, և Էռեկոս Աթլանտային՝
կրտսեր դասեր փեսացուին¹²⁴: (2) Պոմպեոսը խողտուղից սիրած տղա-
յի գրկում, Աթլանտային ստիպեցին վար դնել պրծտորական աստիճանը
շարս օր ատաղ մինչև հանվարյան հարկերենը¹²⁵ և մեռնել հենց նոր
տարվա օրը, երբ Կլավդիոսը և Սեպտիմիան հարսանիք էին տոնում:
Արևատնհիճ գանձատորներին և ավելի քան երեք հարյուր հոռմեացի հեծ-
յախների նա հաղվադոտ անտարբերութեամբ մահապատժի ենթարկեց,
երբ ցենտուրիոնը, զեկուցելով մեկ կոնսուլյարիսի մահապատժի մասին,
արդեն ասաց, որ հրամանը կատարված է, նա հանկարծ հարտարարեց,
ոց աչ մի հրաման չի տվել. տեղայն կատարվածին հավանություն տվեց,
ուրաջհետև ազատաբանները հաղատարցրին նրան, թե զինվորները կա-
տարել են իրենց պարտքը, և փական նախաձեռնութեամբ նետվելով
վրձիսնդիթ լինելու կայսեր համար (3) Եվ արդեն ամենայն հավանա-
կանութեան գերազանցում է այն, որ Մեսսալինայի հարսանիքին նրա
սիրելիան Աթլանտ հետ Կլավդիոսն ինքն էլ ամուսնական պայմանագի-
րը¹²⁶ ստորագրած վկաների թվում էր. նրան համոզել էին, թե իրր դա
դիւսավորը է խաղացվում, որպեսզի կանխվի և դեպի ուրիշը շրջվի
վասնդի սպանակիցը, որ հայտնված է նրան ինչ-որ նախանշանակնե-
րով:

30. Երա արտաքինը զուրկ չէր ազդու լինելուց և արժանապատվու-
թյունից, բայց միայն այն ժամանակ, երբ կանգնած, նստած և, հատ-
կապես, պատկած էր լինում. նա բարձրահասակ էր, ամրակազմ, նրա
դեմքը և այնհեր մաղկորը գեղեցիկ էին, գիրը հաստ էր¹²⁷: Բայց երբ նա
քայլում էր, նրան դավաճանում էին թույլ ձեկները, իսկ երբ որևէ բան
էր անում, հանգստանալով կամ պարտակելով, ապա նրան շատ բան էր
արևանդակում՝ նրա ժիծաղը ահա՛ էր, գայրույթը՝ զզվելի, նրա շուրթե-
լին փրփոք էր գալրտ տալիս, քթից վազում էր, լճում գիւթ էր ընկնում,
դրուխն անընդհատ ցնցվում էր, իսկ ամենազոքը շարժման դնպում՝
հատկապես:

31. Նրա անուշաթյանը, թեև երբեմնի թույլ, կառավարման ողջ ժա-
մանակամիջոցում գերազանց էր եղել, եթե չհաշվենք ստամոքսի ցավն-
րը, որոնք, ըստ նրա, այնքան տանջալից էին, որ ստիպում էին խորհել
ինքնասպանութեան մասին:

32. Ինչույթն էր նա կազմակերպում էր հարուստ և հաճախակի,
ամենաընդարձակ պալատներում, այնպես, որ հաճախ սեղանների շուր-

չը վեց հարյուր մարդ էր ընկողմանում: Նա խնջույք արեց նաև Ֆուցին-
յան լճի ջրհոսքի վրա և քիչ էր մնում խեղդվելը, երբ հորդած ջուրը ափե-
րից դուրս ելավ: Ամեն մի ճաշկերույթի հրավիրում էր նաև իր երեխա-
ներին ազնվատոհմ ընտանիքների տղաների ու աղջիկների հետ՝ ըստ վա-
ղեմի սովորույթի նրանք նստում էին նստարանների պատվանդանի մոտ
և ուտում բոլորի հետ միասին: Մի անգամ նա կասկածեց, թե հյուրերից
մեկը¹²⁸ ոսկե աման է գողացել. հաջորդ օրը հյուրի առջև կավե թաս
դրվեց: Ասում են, նա նույնիսկ պատրաստվում էր հատուկ էզիկտով
թուլլատրել խնջույքի ժամանակ քամի բաց թողնել¹²⁹, քանի որ իմացել
էր, որ ոմն մեկը հիվանդացել էր այն բանից, որ ամաչել էր և զսպել
իրեն:

33. Կերուխումի հարցում նա ազահ էր ամեն ժամանակ և ամեն
տեղ: Մեկ անգամ, Օգոստոսի ֆորումում դատ վարելիս, նա գայթակղվեց
այն ուտելիքի հոտից, որը պատրաստվում էր հարևան Մարսի տաճա-
րում սալիական քրմերի¹⁸⁰ համար, իջավ դատավորական բազկաթուղից,
բարձրացավ տաճար և նրանց հետ միասին ընկողմանեց ճաշելու: Սե-
ղանից նա ավելի վաղ շէր հեռանում, քան կծանրանար և կքրտներ, և
հենց այդտեղ էլ պառկում էր մեջքի վրա, որպեսզի քնած ժամանակ թե-
թևացնեին ստամոքսը, փետուր դնելով բերանը: (2) Նա շատ քիչ էր
քնում, և սովորաբար մինչև կեսգիշեր քունը չէր տանում, դրա փոխարեն
երբեմն ննջում էր ցերեկը, դատի ժամանակ, և հոետորները դժվարու-
թյամբ էին կարողանում նրան արթնացնել, դիտավորյալ բարձրացնելով
ձայնը: Կանանց նկատմամբ նա անսահման կիրք էր տածում, դրա փո-
խարեն բոլորովին անտարբեր էր տղամարդկանց հանդեպ: Նա զառ խա-
ղալու մեծ սեր ուներ և նույնիսկ գրքույկ էր գրել այդ մասին. խաղում
էր նաև ուղևորությունների ժամանակ, այնպես հարմարեցնելով տախ-
տակը քառանիվ կառքին, որ զառերը չխառնվեն:

34. Նրա բնածին մուլեգնությունն ու արյունախում բնավորությունը
դրսևորվեցին ինչպես մեծ, այնպես էլ փոքր բաներում: Խոշտանգումնե-
րը հարցաքննության ժամանակ և հայրասպանների մահապատիժը¹³¹
նա ստիպում էր կատարել առանց հապաղելու և իր աչքի առաջ: Մի ան-
գամ Տիրուրում նա ցանկացավ մահապատիժ դիտել ըստ հին սովորույ-
թի¹³², հանցագործներն արդեն կապված էին սյուներին, բայց դահիճ
չգտնվեց. այնժամ նա դահիճ կանչել տվեց Հոոմից և համբերատար
սպասեց նրան մինչև երեկո: Գլադիատորական խաղերի ժամանակ, ինչ-
պես իր, այնպես էլ ուրիշների¹³³, նա ամեն անգամ հրամայում էր վեր-
ջացնել նույնիսկ նրանց, ովքեր պատահաբար էին ընկնում, և հատկա-
պես ռետիարոսներին. նա ուզում էր նայել մեռնողների դեմքերին: (2)

Սրբ ինչ-որ մեծամարտիկներ մահացու խոցեցին միմյանց, նա իսկույն-
ևեթ հրամայեց մեկի և մյուսի սրերից իր համար փոքրիկ դանակներ
պատրաստել: Գազանների որսահալածանքով և կեսօրյա արյունահեղ
ջարդերով¹³⁴ նա մինչև այն աստիճան էր տարվում, որ հանդիսախաղե-
րին հայտնվում էր վաղ առավոտյան և նստած էր մնում նույնիսկ այն
ժամանակ, երբ բոլորը ցրվում էին նախաճաշելու: Բացի նախապես նշա-
նակված մարտիկներից, նա ասպարեզ էր ուղարկում մարդկանց դա-
տարկ ու պատահական պատճառներով, օրինակ, բանվորներին, ծառա-
ներին և նման մարդկանց, եթե հանկարծ վատ էր աշխատում մեքենան,
վերհանը կամ էլի ինչ-որ բան: Մեկ անգամ նա ստիպեց մարտնչել
նույնիսկ իր անվանակոչող ստրուկին¹³⁵, ինչպես որ կար՝ տոգա հագած:

35. Բայց ամենաուժեղը նրա մեջ անվստահությունն էր ու երկշո-
տությունը: Նույնիսկ իր կառավարման առաջին օրերին, ջանալով ցույց
տալ իրեն հասարակ և մատչելի, նա համարձակվում էր խնջույքի գալ
միայն նիզակակիրների պաշտպանությամբ և զինվորներով՝ սպասավոր-
ների փոխարեն, իսկ հիվանդներին այցելելիս նա ամեն անգամ հրա-
մայում էր նախօրոք խուզարկել ննջարանը, տակնուվրա անելով ու թափ
տալով ներքնակներն ու սավանները: Իսկ հետագայում նույնիսկ նրանք,
ովքեր գալիս էին նրան ողջունելու, բոլորը մեկ-մեկ խստագույն խուզար-
կության էին ենթարկվում. (2) միայն դժվարությամբ և ոչ միանգամից
համաձայնեց նա ափլվիվելուց ազատել կանանց, տղաներին ու աղջիկնե-
րին և չխել ուղեկցողներից կամ գրագիրներից նրանց արկղերը՝ փե-
տուրներով ու քարեզրիչներով: Կամիլլոսը, խռովություն բարձրացնելով,
համոզված էր, որ Կլավդիոսին առանց պատերազմի էլ կարելի է վա-
խեցնել. նա Կլավդիոսին նամակ ուղարկեց, որը լի էր գոռոզամիտ վիրա-
վորանքներով ու սպառնալիքներով, պահանջելով թողնել իշխանությունը
և որպես մասնավոր անձ հանգստի գնալ. և իսկապես, Կլավդիոսը, հա-
վաքելով պետության առաջին դեմքերին, սկսեց կիսել նրանց հետ իր
կասկածները, թե հարկ չէ արդյոք լսել Կամիլլոսին: 36. Իսկ ինչ-որ դա-
վադրության մասին տարածված կեղծ լուրը նրան այնպիսի սարսափի
մեջ դրեց, որ նա իսկապես փորձեց հրաժարվել իշխանությունից: Իսկ
երբ, ինչպես ես պատմել եմ¹³⁶, զոհ մատուցելու ժամանակ նրա մոտ մի
դաշունավոր մարդ բռնվեց, նա հապշտապ, մունետիկների միջոցով¹³⁷
սենատ գումարեց, արցունքն աչքերին և ողբ ու կոծով զանգատվեց իր
բախտից, ամեն կողմից սպառնացող վտանգներից և հետո երկար ժա-
մանակ մարդկանց աչքին չէր երևում: Նույնիսկ նրա կրքոտ սերը Մես-
սալիհիայի նկատմամբ նրա մեջ խլացավ ոչ այնքան ստորացած լինելու
խայտառակությունից, որքան վտանգի հանդեպ ունեցած երկյուղից. նա

մտածում էր, որ Մեսսալինան իշխանութուն է ուզում ձեռք բերել իր սիրեկան Միլիոսի համար, և վախժոյք դողդողալով փախաւ ճամբաք, ամբողջ ճանապարհին միայն հարց տալով, թե արդյոք ամո՞ւր է դեռ իր իշխանութունը:

37. Զկար մի մատնութուն, շկար մի այնպիսի սղորմելի մատնիչ, որ նա ամենափոքր իսկ կասկածի դեպքում շնեովեւ պաշտպանվելու կամ վրեժխնդիր լինելու: Դատավիճող կողմերից մեկը, ողջունով մոտենալով, նրան մի կողմ տարավ և ասաց, որ երազ է տեսել, թե իբր նրան՝ կայսրին, ոմն մեկը սպանել է. իսկ փոքր-ինչ անց ասես ճանաչելով մարդասպանին, նրան ցույց տվեց խնդրագրով մոտեցող իր հակառակորդին: Եվ տեղնուտեղը, կարծես հանցագործության տեղում բռնվածի, նրան քարշ տվեցին մահապատժի ենթարկելու: (2) Այդ իսկ ձևով, ասում են, կործանվեց նաև Ապպիոս Միլանոսը: Նրան ոչնչացնել պայմանաւորվեցին Մեսսալինան և Նարկիսը՝ բաժանելով դերերը. վերջինս լուսադեմին շինծու խռովքով ներխուժեց տիրոջ ննջարանը, հավատացնելով, թե իբր երազում տեսել է ինչպես է Ապպիոսը հարձակվում նրա վրա. մյուսը շինծու զարմանքով սկսեց պատմել, թե իբր ինքն էլ արդեն մի քանի օր է ինչ նույն երազն է տեսնում. իսկ երբ հետո ըստ պայմանավորվածության զեկուցեցին, որ կայսեր մոտ է ուզում բռնի ներխուժել Ապպիոսը, որին նախորդ օրը կարգադրված էր ներկայանալ հենց այդ ժամին, ապա դա երազի այնպիսի ակնհայտ հաստատումն թվաց, որ իսկույննեթ հրամայվեց բռնել նրան և մահապատժի ենթարկել: Իսկ հաջորդ օրը Կլավդիոսն առանց շփոթմունքի սենատին պատմեց, թե ինչպես էր եղել բանը, երախտագիտությամբ գովաբանելով իր ազատարձակին, որը երազում էլ է հոգ տանում իր անվտանգության մասին:

38. Նա ինքն էլ ընդունում էր իր զայրացկոտ ու տաքարյուն լինելը, բայց էդիկտում, վերլուծելով, արդարացնում էր և՛ մեկը, և՛ մյուսը, խոստանալով, որ իր պոռթկումները կլինեն կարճատև ու անվնաս, իսկ զայրույթը՝ արդարացի: Երբ Օստիայից նավակներ շուղարկեցին Տիրբոսի մուտքի մոտ նրան դիմավորելու, նա այնպիսի կատաղությամբ հարձակվեց օստիացիների վրա, ասես նրանք, ինչպես նա ինքն էր ասում, նրան զինվորի աստիճանի են իջեցրել, իսկ հետո հանկարծ բոլորին ներեց և գրեթե ներողութուն խնդրեց: (2) Նբանց, ովքեր ժողովրդի ներկայությամբ ժամանակին չէին մոտենում իրեն, ձեռքով ետ էր հրում: Գանձարանի մի գրագրի և հետո պրետորական կոշման տեր մի սենատորի նա անմեղ տեղը և շլսելով արդարացումները աքսոր ուղարկեց այն բանի համար, որ առաջինը շափից դուրս եռանդով էր հանդես եկել իր դեմ, երբ ինքը դեռևս մասնավոր անձ էր, իսկ երկրորդը էդիլ եղած ժա-

մանակ նրա կալվածքների վարձակալներին պատժել էր նվազ կերակրի¹³⁸ ապօրինի վաճառքի համար և ծեծել էր տվել նրանց պաշտպանող ավագին: Այդ բանի համար նա նույնիսկ էգիլներից խլեց պանդոկները վերահսկելու իրավունքը:

(3) Իր հիմարութունը ևս նա չէր թաքցնում. ճիշտ է, մի քանի մանր ճառերում նա հավատացնում էր, թե ինքն, իրր, դիտավորյալ է հիմար ձևացել Գայոսի¹³⁹ օրոք, այլապես հակառակ դեպքում կենդանի չէր մնա և չէր հասնի իր դիրքին, սակայն դրանով նա ոչ ոքի չհամոզեց, քանի որ քիչ անց հայտնվեց «Տիմարների բարձրացումը» խորագիրը կրող մի գրքույկ, ուր ասված էր, թե ձևացող հիմարները չեն լինում:

39. Այդ ամենից դատ, մարդկանց զարմացնում էին եբա մոռացկոտութունն ու անխաճեմութունը, այն, ինչ հույներն անվանում են ցրավածութուն և կուրամտութուն: Այսպես, Մեսսալինեայի սպանութունից հետո, սեղան նստելիս, նա հարցրեց, թե ինչո՞ւ կայսրուհին չի գալիս¹⁴⁰, և՛ մահվան դատապարտված շատ ուրիշների նա հաջորդ օրը խորհրդի կամ զառ խաղալու էր կանչում, իսկ քանի որ նրանք չէին ներկայանում, բանբերների միջոցով նրանց քննադատներ էր անվանում: (2) Պատրաստվելով հակառակ սովորույթի Ագրիպպինային կնության առնել, նա շարունակում էր ամեն մի ճառում նրան անվանել և՛ դատրիկ, և՛ սանիկ, որը ծնվել և փայտացվել է իր կրծքին: Իսկ պատրաստվելով որդեգրել Ներոնին, ասես քիչ էին նրան դատապարտել այն բանի համար, որ, ունենալով լափահաս որդի, խորթ որդի էլ է ձեռք բերում — նա զատ անգամ ի լուր ամենքի հայտարարում էր, որ Կլավդիոսների տոհմ դեռևս ոչ ոք ոտք չի գրել որդեգրման ուղիով:

40. Իր խոսքում ու արարքներում նա հաճախ այնպիսի անխոճեմութուն էր դրսևորում, որ թվում էր, չգիտե ու չի հասկանում, ով է ինքը, ում հետ, որտեղ և երբ է խոսում: Մեկ անգամ, երբ խոսք էր գնում մսավաճառների ու գինեվաճառների մասին, նա բացականչեց սենատում. «Դե՛, մի՞թե կարելի է ապրել առանց տավարի մսի, ես ձեզ եմ հարցնում», և սկսեց նկարագրել, թե որքան բարիք կար հին ժամանակներում այն ճաշահաններում, որտեղից ինքն ահձամբ ժամանակին գինի էր գնում: (2) Պաշտպանելով մեկ քվեստորության թեկնածուի, դա բացատրում էր ի դեպ նրանով, որ երբ ինքը հիվանդ պառկած էր և խմել խընդրեց, այդ մարդու հայրը նրան սառը ջուր տվեց: Մի կին վկայի մասին, որը սենատ էր կանչվել, նա հայտարարեց. «Նա իմ մոր ազատարձակուհին է, նա ժիշտներից, բայց նա միշտ պատվել է ինձ որպես տիրոջ, այդ մասին ես ասում եմ, որովհետև իմ տանն առ այսօր էլ ոմանք ինձ տանտեր չեն համարում»: (3) Ծվ նույնիսկ դատարանում, երբ Օստիայի բնակիչնե-

րը նրան աղերսում էին մի ողորմածութեան մասին, նա զայրացած բացականչեց, որ նրանք իրենից ծառայութիւն սպասելու որևէ բան չունեն՝ նա իր արարքներում ազատ է, ինչպես ամեն ոք: Ամեն օր և գրեթե ամեն ժամ նրա լեզվին հետևյալ ասացվածքներն էին՝ «Թե՞ ես, քո կարծիքով, Տելեգենիոսն եմ»¹⁴¹, «Դուրս տուր, բայց ձեռքերիդ ազատութիւն մի տուր» և նմանատեսակ շատ ուրիշները, որոնք անվայելուչ էին անգամ հասարակ մարդուն, էլ ուր մնաց տիրակալին: Բայց չէ որ նա զուրկ չէր ո՛չ գիտունութիւնից, ո՛չ պերճախոսութիւնից, և միշտ էլ ջանասիրութեամբ զբաղվում էր ազնիվ արվեստներով:

41. Պատմութիւն նա սկսեց գրել դեռևս պատանի ժամանակ, Տիտոս Լիվիոսի խորհրդով և Սուլպիցիոս Փլարիոսի օգնութեամբ: Բայց երբ նա առաջին անգամ նրանով հանդես եկավ մեծ հավաքույթի առջև, ապա դժվարութեամբ կարդաց մինչև վերջ, և ինքն էր մեղավոր, որ նրան սառն ընդունեցին: Բանն այն է, որ ընթերցման սկզբում հանկարծ մի քանի նստարաններ շարդվեցին ոմն գիրուկ մարդու տակ, առաջ բերելով ընդհանուր քրքիշ. աղմուկը հաջողվեց հանդարտեցնել, բայց դրանից հետո էլ Կլավդիոսը, մերթ ընդ մերթ հիշելով պատահարի մասին, չէր կարողանում հոհոցը զսպել: (2) Իր կառավարման ժամանակ ևս նա շատ էր գրում և միշտ հրապարակում էր գրածը ընթերցողի միջոցով¹⁴²: Իր պատմութիւնը նա սկսել էր դիկտատոր Կեսարի սպանութիւնից, բայց հետո անցել էր ավելի ուշ ժամանակներին և որպես սկիզբ վերցրել քաղաքացիական խաղաղութեան¹⁴³ հաստատումը: Նա տեսնում էր, որ ավելի վաղ իրագործութիւնների մասին ճշմարտացի ու ազատ պատմըվածքն այլևս անհնարին է, քանի որ դրա համար նրան պախարակում էին և՛ մայրը, և՛ տատը. և նախորդ ժամանակների մասին նա միայն երկու գիրք թողեց, իսկ հետագայի մասին՝ քառասունմեկ: (2) Նա շարադրեց նաև ութ գիրք իր կյանքի մասին, որոնք գրված էին ոչ այնքան անճաշակ, որքան անխելահասորեն. ինչպես նաև «Ի պաշտպանութիւն Կիկերոնի ընդդեմ Աղինիոս Գալլոսի գրվածքների»¹⁴⁴ խիստ գիտական երկասիրութիւնը: Նա նույնիսկ հնարել էր երեք նոր տառեր¹⁴⁵, անհրաժեշտ համարելով դրանք ավելացնել հներին. դեռևս իր մասնավոր անձեղած ժամանակ նա այդ մասին գիրք հրատարակեց, իսկ տիրակալ դառնալով առանց դժվարութեան հասավ՝ այդ տառերի ընդունմանը ի համընդհանուր օգտագործումին: Դրանց նշանները պահպանվել են շատ գրքերում, տեղեկագրերում և կառույցների արձանագրութիւններում:

42. Հունական գրականութեամբ նա զբաղվում էր ոչ պակաս ջանասիրութեամբ, ամեն մի հարմար առիթով արտահայտելով իր սերն ու գերապատմութիւնը այդ լեզվի նկատմամբ: Մի բարբարոսի, որը խո-

սում էր և՛ հունարեն, և՛ լատիներեն, նա դիմեց հետևյալ բառերով՝ «Քանի որ դու տիրապետում ես իմ երկու լեզուներին...»: Հայր-սենատորների ուշադրությանն առաջարկելով Աքայա պրովինցիան, նա ասում էր, որ այն իր համար թանկ է իրենց գիտական կապերի պատճառով: Իսկ սենատում հունական դեսպաններին նա հաճախ ամբողջ ճառերով էր պատասխանում: Նույնիսկ դատարանում նա սիրում էր հիշատակել Հոմերոսի ոտանավորները: Իսկ երբ պատահում էր, որ պատժում էր թշնամուն կամ շարամիտ մեկին, նա ամեն անգամ թիկնապահների պետի սովորական հարցումին տալիս էր հետևյալ պայմանախոսքը.

Պատժել հանդգնությունը թշնամու, ով ինձ շարաշար վիրավորել է¹⁴⁶,

(2) Նա պատմություններ էր գրում նաև հունարեն՝ էտրուսկյանը քսան գրքով և Կարթագենիներ ութ գրքով: Այդ պատճառով էլ նա հին ալեքսանդրիական Մուսեոսին¹⁴⁷ ավելացրեց նորը, որը կոչվեց նրա անունով¹⁴⁸, և կարգադրեց, որ ամեն տարի սահմանված օրերին միմյանց փոխարինող ընթերցողները նրանցից մեկում կարդան էտրուսկյան պատմությունը, մյուսում՝ Կարթագենի — գիրք առ գիրք, սկզբից մինչև վերջ, ինչպես բաց ընթերցումների ժամանակ:

43. Կյանքի վերջին նա սկսեց դրսևորել զղջման բացահայտ նշաններ Ագրիպպինայի հետ ամուսնանալու և Ներոնին որդեգրելու համար: Երբ մեկ անգամ ազատարձակները գովասանքով հիշել էին, թե ինչպես էր նա նախորդ օրը պատիժ նշանակել մի կնոջ, որը մեղադրվում էր ամուսնական անհավատարմության մեջ, նա բացականչել էր, որ ճակատագրի կամքով իր բոլոր կանայք էլ անբարոյական են եղել¹⁴⁹, բայց անպատիժ չեն մնացել. իսկ հետո, տեսնելով Բրիտանիկոսին, ամուր գրկել էր նրան, ցանկացել, որ նա հասակ առնի, որպեսզի հորից հաշվետվություն ընդունի բոլոր գործերի համար, և ավելացրել էր՝ «Վիրավորողը կբուժի»¹⁵⁰: Իսկ պատրաստվելով նրան, դեռևս անբեղ-անմորուս պատանուն, հանդերձավորել շափահասի տոգայով— նրա հասակն արդեն թույլ էր տալիս այդ,— ասել էր. «Թող, վերջապես, հոռմեացի ժողովուրդն իսկական Կեսար ունենա»¹⁵¹: 44. Դրանից հետո շուտով նա կազմեց նաև կտակ¹⁵², կնքելով այն բոլոր պաշտոնատար անձանց կնիքներով: Նա ավելի հեռուն կգնար, բայց դրանից տազնապաժ Ագրիպպինան, որին արդեն ոչ միայն սեփական խիղճը, այլև բազմաթիվ մատնիչներ մերկացրել էին բազում հանցանքներում, կանխեց նրան:

(2) Մեռավ նա թույնից¹⁵³, ինչպես ընդունում են բոլորը. բայց թե ով և որտեղ նրան թույն տվեց, այդ մասին տարբեր բաներ են ասում:

Քմանք ասում են, որ այդ արեւ է ներքինի Գալտոսք, որն ստուգում էր նրա խորաքիկները քրմեքի ճաշկերույթի ժամանակ Կապիառլուումում¹⁵⁴, ուքիշները՝ Ագքիպպինան ինքը տանը ճաշելիս նրան թույն մատուցեց ապիտակ սնկերի մեջ, որ նրա սիրած խորտիկն էր: Թե ինչ պատահեց հետո, նույնպես տաքքեր կերպ են պատմում: (3) Մեծամասնութիւնը հաղորդում է, որ թանավորումից անմիջապէս հետո նրա լեզուն բռնվեց, և նա, տանջվելով ողջ գիշերք, մահացավ արշալույսին: Ոմանք էլ հայտնում են, որ նա տկգրում ուշակորույս եղավ, հետո, ստամոքսը լծքը լինելու պատճառով, ետ տվեց ամբողջ կերածք, նրան նորից թույն ամբեցին՝ կամ դնելով այն շիլայի մեջ, իբրև թե նրան պետք էր ամրապնդվել ետ տալուց հետո կամ այն մտածելով լվացում կատարելիս, որպեսզի դրանով իբրև թե թեթևացնեն նրա ստամոքսը ծանրութիւնից:

45. Նրա մահը թարքցրին, մինչև որ ամեն ինչ աստահովեցին նրա հաշորդի համար: Մաղթանք էին մատուցում նրա առողջութեան համար, կարծես նա հիվանդ էր, կատակերգակ դերասաններ էին բերում պաշատ, ասես նա ցանկանում էր զվարճանալ: Վախճանվեց նա երկրորդ օրը մինչև հոկտեմբերյան կալենդները՝ Ագինիոս Մարցելլոսի և Աքելիոս Ալիթլայի կոնսուլութեան օրոք, կյանքի վաթսուներեքերորդ և իշխանութեան տասնչորսերորդ տարում¹⁵⁵: Թաղվելով ճոխ, ինչպես վայել է տիրակալին, նա գաավեց աստվածների շարքը. հետագայում ներքնը մերժեց նրան այդ պատիւները և վերացրեց գրանք, բայց հետո Վեսպասիանոսը գրանք նորից վերականգնեց:

46. Կարևոր նախանշաններ եղան նրա մահվան կանխագուշակութիւնը: Երկնքում պոչավար աստղ հայտնվեց, այսպես կոչված գիսաստղ-կայծակը հարվածեց նրա հոր՝ Գրուզոսի արձանին, բազում պաշտոնատար անձինք, մեծ ու փոքր, վախճանվեցին այդ նույն տարում¹⁵⁶: Ասենք ինքն էլ, ինչպես թվում է, գիտեր և շէր թարքնում իր վախճանի մեքճավորութիւնը: Այդ երևում է նրանից, որ կոնսուլներ նշանակելիս նրանց նշանակեց մինչև իր մահվան ամիսը. վերջին անգամ երեքուստիս օրով սենատում, նա ամեն կերպ հորդորում էր որդիներին միմյանց հետ ապրել համերաշխ և ազերտանքով խնդրում էր սենատորներին հող տամեք նրանց երիտասարդութեանք. իսկ վերջին անգամ դատարանում նիստանելիս ասաց, որ մոտ է իր կյանքի սահմանածիրը և, շնայած քեզհետոսը վրդովմունքին¹⁵⁷, կրկնեց այդ նորից ու նորից:

ՆԵՐՈՆ

1. Դոմիցիոսների տոհմից նշանաւոր էին երկու գերդաստաններ՝ Կալվինոսների և Ահենորարբոսների: Ահենորարբոսները սերում են և իրենց մականունն ստացել են Լուկիոս Դոմիցիոսից: Ըստ ավանգուսթյան, մեկ անգամ գյուղից գալու ճանապարհին նրա առջև հայտնվեցին աստվածային տեսքի երկվորյակ պատանիներ և կարգադրեցին նրան սենատին՝ ու ժողովրդին հաղորդել տարած հաղթանակի մասին, որի

վերաբերյալ դեռևս ոչինչ հայտնի չէր: Իսկ, որպես ապացույց իրենց աստվածային զորության, նրանք հավեցին նրա այտերին, և դրանից մազերը սևից վերածվեցին շիկակարմրի՝ պղնձագույնի: Այդ նշանն անցավ նաև նրա սերունդներին, որոնցից շատերը շիկամսբուս էին: (2) Արժանանալով յոթ կոնսուլությունների, տրիումֆի, երկու ցենզորության, դասվելով պատրիկների շարքը, նրանք բոլորը պահպանեցին նախկին մականունը: Իսկ անձնանուններից օգտվում էին միայն Գնեսոս և Լուկիոս անուններից, և ընդ որում ուշագրավ այլազանությամբ՝ մերթ մի քանի մարդ մեկը մյուսի հտեից կրում էին միևնույն անունը, մերթ անունները հաջորդում էին իրար: Այսպես, Ահենորարբոսներից առաջինը, երկրորդը և երրորդը Լուկիոսներ էին, հաջորդ երեքը հերթով՝ Գնեսոսներ, իսկ մնացյալներն իրար հտեից մերթ Լուկիոսներ, մերթ Գնեսոսներ: Կարծում ենք, որ այդ գերդաստանից շատերի հետ արժե ծանոթանալ. այնժամ ավելի պարզ կդառնա, թե որքան որ ներոնը կորցրել էր իր նախնիների առա-

քինությունները, նույնքան էլ պահպանել էր նրանց արատները, ասես կրրև տոհմական ժառանգություն:

2. Ե՛լ այսպես, սկսում ենք հեռվից: Ներոնի նախապապ Գնեսո Դոմիցիոսը² իր տրիբուն եղած ժամանակ գժտվել էր քրմապետների հետ, քանի որ սրանք նրա հոր փոխարեն ոչ թե նրան էին ընտրել, այլ մեկ ուրիշի, և դրա համար քրմական կոլեգիումներից խլել էր նոր անդամներ ընտրելու իրավունքը, հանձնելով այն ժողովրդին: Իսկ կոնսուլ եղած ժամանակ նա ալլոբրոգների և արվերների նկատմամբ տարած հաղթանակից հետո պրովինցիայով անցավ փիղ հեծած, զինվորների բազմության ուղեկցությամբ, ասես տրիումֆային երթի ժամանակ: (2) Այդ նրա մասին էր ասել հոետոր Լիցինիոս Կրասոսը, որ հարկ չկա զարմանալու նրա պղնձե մորուքի վրա, եթե նրա լեզուն երկաթից է, իսկ սիրտը կապարից:

Նրա որդին³ պրետորի պաշտոնում սենատից պահանջեց Գայոս Կեսարի կոնսուլության ժամանակ նրա արարքների հետաքննությունը, համարելով դրանք կատարված հակառակ նախանշանների և օրենքների. իսկ հետո, կոնսուլի պաշտոնում, նա փորձեց զրկել Կեսարին գալլական զորքերի հրամանատարությունից և ապօրինի նշանակվեց նրա հաջորդ Քաղաքացիական պատերազմի հենց սկզբում նա գերի վերցվեց Կորֆինիումում, (3) ազատ արձակվեց, օգնության եկավ մասսիլիացիներին, որոնք պաշարման մեջ նեղն էին ընկել, հետո հանկարծ լքեց նրանց և, վերջապես, ընկավ Ֆարսալի ճակատամարտում: Նա թույլ հոգու, բայց ահեղ բարբի տեր մարդ էր: Մի անգամ հուսահատ դրության մեջ, վախով լեցուն, նա վճռեց մեռնել, բայց հետո սարսափահար զղջաց, ընդունած թույնը փսխեց, իսկ իր բժշկին ազատ արձակեց այն բանի համար, որ սա, իմանալով տիրոջը, շրջահայեցորեն նրան շափազանց թույլ թույն էր տվել: Եվ միևնույն ժամանակ Գնեսո Պոմպեոսի բոլոր խորհրդականներից նա միակը առաջարկեց թշնամիներ համարել բոլորին, ովքեր միջին դիրք են գրավում և ոչ մի կողմի շեն հարուստ:

3. Նա թողեց մի որդի, որն, անվիճելիորեն, ամենալավն էր իր տոհմում: Պեդիոսի օրենքով դատապարտված լինելով Կեսարի սպանությանը մասնակցելու համար, նա, թեև անմեղ էր, հարեց Բրուտոսին ու Կասիոսին, իր մերձավոր ազգականներին, իսկ նրանց կործանումից հետո պահպանեց իրեն վստահված նավատորմը⁴, նույնիսկ մեծացրեց այն, և սոսկ այն բանից հետո, երբ նրա համախոհներն ամենուր ջախջախվեցին, նավերը հանձնեց Մարկոս Անտոնիոսին⁵, կամովին և ասես մի տեսակ մեծ ծառայություն մատուցելով: (2) Այդ օրենքով բոլոր դատապարտվածներից միայն նա վերադառնալ հայրենիք և հասավ ամենա-

բարձր դիրքի⁶: Ապա, երբ քաղաքացիական պատերազմը վերսկսվեց, նա լեզատ դարձավ նույն Անտոնիոսի մոտ, և շատերը, ամաշելով հնազանդվել Կլեոպատրային, նրան էին առաջարկում գերագույն իշխանությունը: Հանկարծական հիվանդության պատճառով նա շահագրեց ո՛չ ստանձնել այն, ո՛չ էլ հրաժարվել, բայց անցավ Օգոստոսի կողմը և մի քանի օր անց մահացավ: Սակայն նույնիսկ նրան էլ զանց շառավ վատ համբավը. այսպես, Անտոնիոսը հավատացնում էր, թե իբր նա փախըստական դարձավ այն բանից, որ կարոտել էր սիրուհուն՝ Սերվիլիս Նալիզային:

4. Նրա որդին էր Դոմիցիոսը, որին Օգոստոսը կտակում նշանակել էր իր կարողության և միջոցների գնորդ⁷, ինչպես հայտնի դարձավ հետագայում: Նա փառք վաստակեց ինչպես երիտասարդ ժամանակ ձիարշավներում ցուցաբերած ճարակությանը, այնպես էլ հետագայում տրիումֆային դարդարանքներով⁸, որ ձեռք էր բերել գերմանական պատերազմում: Բայց նա ամբարտավան էր, շռայլ ու դաժան: Դեռևս էդիլ եղած ժամանակ ցենզոր Լուկիոս Պլանկոսին ստիպեց հանդիպելիս զիջել ճանապարհը. պրետոր և կոնսուլ եղած ժամանակ նա մնջախաղերում բեմահարթակ էր հանում հոռմեացի հեծյալների ու մատրոնաների. գազանների հալածանքներ նա ցուցադրում էր և՛ կրկեսում, և՛ քաղաքի բոլոր թաղամասերում, իսկ մի այնպիսի արյունահեղ գլադիատորական մարտ սարքեց, որ Օգոստոսը, որը զուր գաղտնի զգուշացրել էր նրան, հարկադրված էր նրան սանձահարել էդիկտով:

5. Անտոնիա Ավագից նա ուներ մի որդի, ապագա Ներոնի հորը, որն ամենանողկալի մի անձնավորություն էր իր կյանքի բոլոր ժամանակներում: Երիտասարդ Գայոս Կեսարին Արևելքում ուղեկցելիս նա մի անգամ սպանեց իր ազատարձակին այն բանի համար, որ սա չէր ուզում խմել այնքան, որքան կարգադրել էին, և դրանից հետո վտարվեց մերձավոր շքախմբից: Բայց նրա մուկեգնությունը չէր սանձահարվում. Ապպիոսի ճանապարհին ընկած մի գյուղում նա, դիտավորյալ մտրակելով ձիերին, թափ առած սմբակաչոխ արեց մի տղայի, իսկ Հոռմում, հենց Ֆորումում, խփեց հանեց մի հեծյալի աչքը նրա շափից դուրս թունդ հայհոյանքի համար: (2) Նա այն աստիճանի անազնիվ էր, որ ոչ միայն լումայափոխներին⁹ չէր վճարում գնումների համար, այլև, լինելով պրետոր, ձիարշավներում կառավարներին պարգևներ չէր տալիս, որի համար նրան ծաղրում էր նույնիսկ իր քույրը¹⁰. և միայն այն բանից հետո, երբ մարտակառքի տերերը գանգատ բերեցին, նա որոշում ընդունեց այսուհետև պարգևները վճարել տեղում: Մահից ոչ շատ առաջ նա մեղադրվեց¹¹ և՛ մեծությանն միտամոռեւ. և՛ անառանքության, և՛

իր քույր Լեպիդայի հետ արյունապղծության մեջ, բայց տիրակալներին փոփոխումը նրան փրկեց. և նա վախճանվեց¹² Պիրգքում շրգողութուն-թյունից, թողնելով որդուն՝ Ներոնին, Գերմանիկոսի դուստր Ագրիպպինայից:

6. Ներոնը ծնվեց Անցիումում, Տիրերիոսի մահից ինը ամիս անց, տասներորդ օրը մինչև հունվարյան կալենդները, արշալույսին, այնպես որ ծագող արեգակի շողերը նրան համարյա ավելի շուտ դիպան, քան գետնին¹³: Եվ իսկույն էլ նրա բախտացույցով շատերի կողմից բազում սարսափելի կռահումներ եղան: Մարգարեական էին նաև նրա հոր՝ Դոմիցիոսի խոսքերը, որն ի պատիվ բարեկամների շնորհավորանքներին բացականչել էր, թե իրենից ու Ագրիպպինայից ոչինչ չի կարող ծնվել, բացի սարսափից ու ցավից մարդկության համար: (2) Նրա ապագա շարաքաստիկության մյուս նախանշանը նկատվեց նրա մաքրման օրը¹⁴. Գայոս Կեսարը, երբ նրա քույրը խնդրեց՝ ըստ իր ցանկության անվանակոչել մանկիկին՝ նայեց իր հորեղբայր Կլավդիոսին (որը և հետո, արդեն տիրակալ եղած ժամանակ որդեգրեց Ներոնին) և տվեց նրա անունը¹⁵, ի վարձություն իր և ի հեճուկս Ագրիպպինայի, քանի որ Կլավդիոսն ամբողջ արքունիքի ծաղրի առարկան էր:

(3) Երեք ամսականում նա կորցրեց հորը. ըստ կտակի նա ստացավ ժառանգության երրորդ մասը, այն էլ ոչ լրիվ, որովհետև ամբողջ ունեցվածքը վերցրեց նրա համաժառանգ Գայոսը: Հետո էլ նրա մայրն արքայացեց, իսկ նա, կարիքի ու գրեթե չքավորության մեջ, մեծացավ իր հորաքույր Լեպիդայի տանը երկու դայակ-սպասավորների՝ պարողի և սափրիչի, հսկողության տակ: Բայց երբ իշխանությունն ընդունեց Կլավդիոսը, նրան ոչ միայն հայրական ունեցվածքը վերադարձվեց, այլև արքայացեց նրա խորթ հոր Պասսիենոս Կրիսպոսի ժառանգությունը: (4) Իսկ շնորհիվ մոր ազդեցության ու հզորության, որը վերադարձել էր արքայից և վերականգնել իրավունքները, նա այնպիսի դիրքի հասավ, որ նույնիսկ լուրեր էին պտտվում, թե իբր Մեսսալինան՝ Կլավդիոսի կինը, ի դեմս նրա տեսնելով Բրիտանիկոսի մրցակցի, մարդասպաններ է ուզարկել խեղդելու նրան կեսօրյա հանգստի ժամանակ: Այդ հերյուրանքին ավելացնում էին, թե իբր նրա ըսածի տակից մարդասպանների հանդիման օձ է նետվել, և նրանք սարսափահար փախուստի են դիմել: Նման հերյուրանքը ծագել էր այն բանից, որ նրա սնաքին օձի փոխած շապիկ էին գտել¹⁶. այդ շապիկը Ագրիպպինայի ցանկությամբ, ոսկե ապարանջանի մեջ դրեցին, և Ներոնը երկար ժամանակ այն կրում էր աջ բազկին, բայց հետո դեն նետեց, որպեսզի շտառապի մոր մառին հիշողություններից, և զուր էր կրկին այն փնտրում իր վերջին աղետների օրերին:

7. Գեոևս մանուկ հասակում, դեռևս նույնիսկ պատանեկան տարիքի շհասած, նա կրկեսում հանդես էր գալիս Տրոյական խաղերում¹⁷, բազում անգամներ և մեծ հաջողութլամբ: Տասնմեկ տարեկանում¹⁸ Կլավդիոսը որդեգրեց նրան և հանձնեց դաստիարակութլյան այն ժամանակ արդեն սենատոր Աննետո Սենեկային: Ասում են, որ հաջորդ գիշերը Սենեկան երազ է տեսել, թե իբր դաստիարակում է Գայոս Կեսարին¹⁹. և շուտով Ներոնը, առաջին իսկ արարքներում դրսևորելով իր դաժան բարքը, ցույց տվեց, որ երազը մարգարեական է եղել: Այսպես, իր եղբայր Բրիտանիկոսին, երբ սա որդեգրումից²⁰ հետո էլ ըստ սովորութլյան նրան ողջունում էր որպես Ահենոբարոսի, սկսեց Կլավդիոսի ներկայութլյամբ ապօրինածին կանչել: Իսկ իր հորաքույր Լեպիդայի²¹ դևմ նա դատարահում բացահայտ ցուցմունքներ տվեց հօգուտ մոր, որը հետապնդում էր Լեպիդային:

(2) Զափահասութլյան օրը նա ներկայացվեց ժողովրդին, և պլեբեյներին բաշխում, իսկ զինվորներին նվերներ խոստացավ. երբ պրետորականները զինված վազք²² սկսեցին, նա վահանը ձեռքին վազում էր առչևից, իսկ հետո սենատում երախտադիտական ճառ արտասանեց հոր հասցեին: Հոր նույն կոնսուլութլյան ժամանակ նա ճառ արտասանեց հանուն Բոնոնիայի²³ բնակիչների՝ լատիներենով, իսկ հանուն հողոցիների և իլիոնացիների՝ հունարենով: Այդ նույն ժամանակ քաղաքի պրեֆեկտի պաշտոնում նա առաջին անգամ դատ վարեց Լատինական տոնակատարութլյուններում²⁴, և լավագույն հոետորները նրա առչև վիճարկում էին ոչ թե կարժեցյալ ու մանր գործեր, ինչպես սովորաբար, այլ բազմաթիվ ու կարևոր գործեր, թեև Կլավդիոսը դա էլ էր արգելել: Իսկ կարճ ժամանակ անց նա կնութլյան վերցրեց Օկտավիային և Կլավդիոսի ողջութլյան համար կրկեսային խաղեր ու գազանների հալածանքներ կազմակերպեց:

8. Նա տասնյոթ տարեկան էր, երբ հայտարարվեց Կլավդիոսի վախճանվելու մասին: Նա պահակախմբի մոտով մտավ ցերեկվա վեցերորդ և յոթերորդ ժամվա միջոցին²⁵ — ամբողջ այդ օրը դժբախտ էր համարվում. և միայն այդ ժամն էր հարմար ճանաչվել գործ սկսելու համար: Պալատի աստիճանների վրա նրան ողջունեցին որպես կայսրի, ապա պատգարակով ճամբար տարան, այնտեղից, զինվորներին նրա կարճ դիմումից հետո, սենատ: Իսկ սենատից նա դուրս եկավ արդեն երեկոյան, հեղեղված բազմաթիվ պատիվներով, որոնցից երիտասարդ տարիքի պատճառով մերժեց միայն հայրենյաց հայր կոչումը:

9. Նա սկսեց այն բանից, որ ջանաց ցուցադրել իր ազգակցական զգացմունքները: Կլավդիոսին պատվեց փառահեղ թաղումով, գովասա-

նական ճառով²⁶ և աստվածացմամբ: Իր հայր Դոմիցիոսի հիշատակին մեծագույն պատիվներ տվեց: Մորը վստահեց իր բոլոր հասարակական ու մասնավոր գործերը: Տիրակալության առաջին իսկ օրը նա թիկնապահների տրիբունին նշանակեց «լավագույն մայր» նշանաբանը, իսկ հետո հաճախ էր մոր հետ հայտնվում փողոցներում միևնույն պատգարակում: Մառալուստունն ավարտած պրետորականներից նա Անցիումում գաղութ ստեղծեց, որոնց միացվեցին նաև Հռոմից վերաբնակեցված ցենտուրիոնները. այնտեղ էլ նա կառուցեց թանկ արժեքյաժ մի նավահանգիստ:

10. Իր մտադրություններն առավել ևս պարզ բացահայտելու համար, նա հայտարարեց, որ կառավարելու է Օգոստոսի նախագծումներով, և ոչ մի առիթ բաց չէր թողնում ցույց տալու իր առատաձեռնությունը, ողորմածությունը և մեղմասիրությունը: Մանր հարկերը²⁷ նա կամ վերացրեց, կամ չափավորեց: Ըստ Պապիրոսի օրենքի մատնիչներին տրվող պարգևները քառակի կրճատեց: Ժողովրդին բաժանեց շոբահարյուրական սեստերցիում ամեն մի մարդուն, նշանավոր, բայց աղքատացած տոհմերից սենատորներին նշանակեց ամենամյա նպաստներ, ոմանց՝ մինչև հինգ հարյուր հազար, պրետորական կոհորտաներին մեկ ամսով ազատեց հացի համար վճարելուց: (2) Երբ նրան ստորագրելու էին տվել ոմն քրեական հանցագործի մահապատժի մասին հրամանագիրը, նա բացականչել էր՝ «Օ՛, եթե ես գրել շիմանայի»: Բոլոր դասերի քաղաքացիներին նա ողջունում էր միանգամից և առանց հիշեցման²⁸: Երբ սենատը նրան իր երախտագիտությունն էր մատուցում, նա ասաց. «Ծս դեռ պետք է դրան արժանանամ»: Նա ժողովրդին թուլլատրում էր դիտել իր զինավարժությունները, հաճախ էր ասմունքում բոլորի ներկայությամբ և նույնիսկ բանաստեղծություններ արտասանում՝ ինչպես տանը, այնպես էլ թատրոնում. և ընդհանուր ցնծությունն այնպիսին էր, որ որոշում ընդունվեց համաժողովրդական մաղթանք²⁹ կազմակերպել, իսկ բանաստեղծության արտասանված տողերը գրառել ոսկե տառերով և նվիրաբերել Կապիտոլիումի Ցուպիտերին:

11. Նա սարքում էր բազում ու բազմատեսակ հանդիսախաղեր՝ պատանեկան խաղեր³⁰, կրկեսային ձիարշավներ, թատերական ներկայացումներ, գլադիատորական մարտեր: Պատանեկան խաղերում նա ստիպում էր հանդես գալ նույնիսկ ծերունի սենատորներին և զառամյալ մատրոնաներին: Կրկեսային ձիարշավներում նա հատուկ տեղեր³¹ առանձնացրեց հեծյալների համար և դուրս բերել տվեց մարտակառքեր, որոնց շոբա ուղտեր էին լծված: (2) Ներկայացումներում, որոնք նա սահմանեց հանոն կայսրության հավերժության և անվանեց Մեծ խա-

ղեր, կատակերգություններում հանդես էին գալիս բարձր դասերի տղամարդիկ ու կանայք, հոռմեացի անվանի հեծյալը փղին նստած վարգում էր ձգված պարանի վրայով³², իսկ Ափրանիոսի «Հրդեհ» տոգատայում³³ դերասաններին թույլատրվել էր խլխլել ու սեփականացնել այրվող տան կահկարասին. իսկ ամեն օր ժողովրդին նետում էին այլազան նվերներ՝ հազարներով տարբեր թռչուններ, ամեն տեսակ ուտելիքներ, տեսսերներ³⁴ հացահատիկի, հազուատի, ոսկու, արծաթի, թանկարժեք քարերի, մարգարիտների, նկարների, ստրուկների, անասունների, նույնիսկ ձեռնասուն գազանների, իսկ հետո նաև նավերի, նաև տների, նաև կավածների համար: 12. Այդ խաղերը նա դիտում էր պրոսպեկտումի³⁵ բարձունքից: Գլադիատորական մարտում, որը կազմակերպվել էր Մարսյան դաշտի մոտ՝ փայտյա ամֆիթատրոնում — այն կառուցում էին մի ամբողջ տարի, — նա թույլ չտվեց սպանել ոչ մի մարտիկի, նույնիսկ հանցագործներից: Նա մարտնչել ստիպեց անգամ չորս հարյուր սենատորների և վեց հարյուր հեծյալների, որոնցից շատերն անձեռնմխելի մնացած կարողության և անբիծ անվան տեր էին. այդ նույն դասերից նա ընտրեց նաև գազանորսների և ասպարիզի սպասարկուների: Նա ցուցադրեց նաև ծովամարտ³⁶ աղի ջրում՝ ծովային կենդանիներով, ցուցադրեց նաև ընտրովի էֆեբոսների³⁷ ուղեգնական պարեր³⁸: Ներկայացումից հետո նրանցից յուրաքանչյուրին հանձնեց հոռմեական քաղաքացիության հրովարտակներ: (2) Այդ պարերից մեկի ժամանակ պատկերվում էր, թե ինչպես է ցույր բեղմնավորում Պասիֆայային³⁹, որը թաքցված էր փայտե հորթուկի մեջ, — համենայն դեպս, հանդիսատեսներին այդպես էր թվում: մյուսում՝ Իկարուսը⁴⁰ առաջին իսկ թռիչքի ժամանակ ընկավ կայսեր կողքին և իր արյամբ ցողեց նրա օթյակն ու հենց նրան: Բանն այն է, որ ներոնը շատ հազվադեպ էր հանդես գալիս որպես կարգադրիչ, այլ խաղերը սովորաբար դիտում էր օթյակից⁴¹, սկզբում ոչ մեծ պատուհաններից, հետո՝ բաց պատշգամբից:

(3) Հոռմում առաջինը նա կազմակերպեց հնգամյա մրցություններ հունականի օրինակով, բազկացած երեք բաժիններից՝ երաժշտական, մարմնամարզական և ձիարշավային: Նա դրանք անվանեց ներոնիաներ և դրանց համար օժեց բաղնիքներ ու գիմնասիաներ, որտեղ ամեն մի սինատոր ու հեծյալ ձրի օգտվում էր յուզից: Մրցությունների համար դատավորներ նշանակում էր վիճակահանությամբ՝ կոնսուլական կոչում ունեցողներից, որոնք դատում էին սրբատրական տեղերից: Լատիներեն ճառերում և բանաստեղծություններում մրցում էին ամենաարժանավոր քաղաքացիները, իսկ հետո նա ինքն իջավ օրբեստրա՝ սենատի մոտ, և մասնակիցների միահամուռ ցանկությամբ պսակ ընդունեց: Բայց քնար

Եվ ազնու համար ստացած պսակի առջև նա միայն ծունր դրեց և կարգարեց այն տանել դեռ Օգոստոսի արձանի պատվանդանին: (4) Սեպտայում կազմակերպված մարմնամարզական մրցություններում նա, իբրև զոհ ցույց մատուցելով աստվածներին, առաջինը սափրեց մորուքը⁴², գետեզեց այն ֆանկարժեք մարզարտազարդ ոսկե արկղիկում և ընծայեց աստվածներին Կապիտոլիումի տաճարում: Ատլետների մրցումներին հրավիրեց նաև կույս վեստալուհիներին, քանզի այդ հանդիսախազերը նույնիսկ ծլիմպոսում թույլատրված են Ցերերայի քրմուհիներին:

13. Նրա կազմակերպած հանդիսախազերի թվին իրավամբ կարելի է դասել նաև Տրդատի⁴³ ժամանումը Հռոմ: Նա հայոց թագավորն էր, որին Ներոնը բերել էր անհամար խոստումներով: Ժողովրդին նրա երևալու օրը հայտնվեց էգիկտով, բայց հետո ամպամած եղանակի պատճառով հետաձգվեց մինչև ամենահարմար ժամկետը: Փորումում տաճարների շուրջը շարվել էին զինված կոհորտաները, Ներոնն ինքը տրիումֆատորի հագուստներով նստել էր ռոստրալային տրիբունայում կոնսուլական թիկնաթոռին, շրջապատված մարտական նշաններով ու դրոշներով: (2) Մկզբում Տրդատը նրա մոտ բարձրացավ թեք տախտակամածով և խոնարհվեց դեպի նրա ծնկները, իսկ Ներոնն աջ ձեռքով բարձրացրեց Տրդատին և համբուրեց. հետո վերջինի աղերսանքով Ներոնը նրա գլխից վերցրեց խուլրը⁴⁴ և ակաճակուռ ապարոշ⁴⁵ դրեց, մինչ սենատորական կոշման տեր մի պրետոր բազմության համար բարձրաձայն թարգմանում էր տղերսարկուի խոսքերը. և, վերջապես, Ներոնը նրան թատրոն⁴⁶ տարավ և այնտեղ նոր աղերսանքից հետո նստեցրեց իր աջ կողքին: Դրա համար նա հռչակվեց իմպերատոր, դափնիներ⁴⁷ մատուցեց Կապիտոլիումի տաճարին և փակեց Ցանուաի նվիրական դարպասները ի նշան այն քանի, որ այլևս ոչ մի տեղ պատերազմ չի մղվում:

14. Նա կոնսուլ⁴⁸ եղավ չորս անգամ, առաջին անգամ՝ երկու ամիս, երկրորդ և չորրորդ անգամ՝ վեցական ամիս, երրորդ անգամ՝ չորս ամիս, միջին երկու կոնսուլությունները՝ անընդմեջ, մյուսները՝ մեկական տարվա ընդմիջումով:

15. Դատ վարելիս նա գանգատներին պատասխանում էր միայն հաջորդ օրը և միայն գրավոր: Քննությունը նա սովորաբար այնպես էր վարում, որ ընդհանուր դատողությունների փոխարեն յուրաքանչյուր մասնավոր հարց առանձին քննարկվի երկու կողմերի մասնակցությամբ: Հեռանալով խորհրդակցության, նա ոչինչ բացահայտ ու համատեղ չէր քննարկում՝ յուրաքանչյուրը նրան տալիս էր իր գրավոր կարծիքը, իսկ նա դրանք կարդում էր լուռ, ինքն իրեն, հետո էլ հռչակում իրեն հաճու վճիռ, ասես դա լիներ մեծամասնության կամքը:

(2) Երկար ժամանակ նա ազատարձակների որդիներին⁴⁹ սենատ չէր ընդունում, իսկ իր նախորդների ընդունածներին չէր թույլատրում բարձր պաշտոններ գրավել: Առանց պաշտոնի մնացած հայցողներին, ի փոխհատուցումն հետաձգման և հասարակաց, նշանակեց լեգեոնների պետերու: Սովորաբար նա կոնսուլաթյունը տալիս էր վեց տասով: Երբ կոնսուլներից մեկը մահացավ հաճախարկած կաշնդներից առաջ, նրան հաջորդ շնշանակեց, շքանկանալով կրկնել *Կոնսուլոս Բեթիլոսի*⁵⁰ — մեկօրյա կոնսուլի—հետ պատահած վաղեմի դեպքը: Տրիումֆալի զարդարանքներ նա շնորհում էր նաև քվեստորական կոշմանը, և նույնիսկ հեծյալներից ոմանց, ընդ որում ոչ միայն ռազմական ժառանգությունների համար: Որոշ առարկաների վերաբերյալ իր գեկուլցները սենատին ծառայողները կոնսուլներին էր հանձնարարում կարգաչ, զանց տունելով քվեստորներին:

16. Քաղաքային շինությունները նա հնարամտեց կառուցել նորովի⁵¹, որպեսզի տների ու մենատների առջև կառուցվեն սյունաարահներ տափակ տանիքներով, որոնց վրայից կարելի էինք մարել հրդեհները. դրանք նա կառուցեց իր հաշվին: Նա մտադրվել էր նույնիսկ քաղաքային պարիսպները երկարացնել մինչև Օստիա, իսկ ջրանցքով⁵² ձուլը մտտեցնել բուն Հռոմին:

(2) Շատ խստություններ ու սահմանափակումներ նրա օրոք վերականգնվեցին, շատերը մուծվեցին առաջին անգամ՝ սահմանափակվեց ճոխությունը, համաժողովրդական հյուրասիրությունները փոխարինվեցին նախաճաշիկի բաժանումով⁵³, արգելվեց ճաշարսն-խանութներում կիված կերակուր վաճառել, բացի բանջարեղենից ու կանաչեղենից— իսկ նախկինում այնտեղ վաճառում էին ցանկացած ուտելիքը, պատժվեցին քրիստոնյաները⁵⁴, նոր ու շարաղետ սնտիապաշտություն հետևորդները. արգելվեցին մարտական արձույթների զվարճանքները, որոնց վաղեմի սովորույթը թույլատրում էր թափառել ամենուր, զվարճության համար խաբելով ու կողոպտելով անցորդներին, աքսոր ուղարկվեցին մնչկասականները⁵⁵ իրենց բոլոր կողմնակիցներով հանդերձ: 17. Կտակների կեղծումների դեմ առաջին անգամ այդ ժամանակ մտահղացվեց տախտակների վրա անցքեր բացել, դրանց միջով երեք անգամ թել անցկացնել և հետո միայն կնքել: Նախատեսվեց, որ կտակի առաջին երկու ստիպտակները վկաններին առաջարկվեն մաքուր⁵⁶, միայն կտակողի անունով, և որպեսզի օտարի կտակ գրողը չկարողանար իրեն նվերներ հավելագրել: Դատապաշտպանների համար սահմանվեց հայցվորներից գանձվող հաստատուն և մշտական վճար⁵⁷, իսկ դատարաններում նստարանային տեղերը⁵⁸ դարձվեցին անվճար և ճրի տրամադրվում էին գանձարա-

նի կողմից: Գանձարանի դատական գործերը հանձնվեցին ֆորում՝ ուկուպերատորներին⁵⁹, իսկ բոլոր գանգատարկումները դատարաններից ուղարկվում էին սենատ:

18. Նա ո՛չ ցանկություն, ո՛չ էլ հույս ուներ ընդարձակելու և մեծացնելու տերությունը: Մտածում էր նույնիսկ զորքերը դուրս բերել Բրիտանիայից⁶⁰, և այդ շարեց միայն ամոթից, որ հայրական փառքին նախանձող շերևա: Միայն Պոնտոսի թագավորությունը Պոլեմոնեսի համաձայնությամբ և Ալպիականը Կոտտիոսի մահից հետո նա վերածեց պրովինցիաների:

19. Նա միայն երկու ուղևորություն է ձեռնարկել՝ դեպի Ալեքսանդրիա և Աքայա: Բայց առաջինից հրաժարվեց հենց մեկնումի օրը, վախեցած նախանշանից ու վտանգից. երբ նա տաճարները շրջելիս նստել էր Վեստայի սրբավայրում⁶¹ և ուզեցել ոտքի ելնել, նախ նրա քղանցքն էր ակռկել, իսկ հետո աչքերն այնպես էին մթազնել, որ ոչինչ չէր կարողացել տեսնել: (2) Աքայայում նա ձեռնամուխ եղավ Իսթմոսի⁶² վրայով ջրանցք անցկացնելուն, ժողով գումարեց, կոչ արեց պրետորականներին սկսել աշխատանքը, փողերի հնչյունների ներքո առաջինը բահով հարվածեց հողին և ուսերին առավ հողի առաջին կողովը: Նա նաև արշավանք էր կազմակերպում դեպի Կասպից դռները⁶³, Իտալիայում հավաքագրեց վեց ոտնաչափ հասակով երիտասարդներից մի նոր լեգեոն և այն անվանեց «Ալեքսանդր Մեծի փաղանգ»:

(3) Նրա բոլոր այդ արարքները պարսավելի շեն, իսկ երբեմն էլ արժանի են ոչ քիչ գովասանքի. ես դրանք ի մի ժողովեցի, որպեսզի առանձնացնեմ նրա արատներից ու հանցագործություններից, որոնց մասին կխոսեմ հետո:

20. Մանկության տարիներին մյուս գիտությունների հետ նա երաժրշտություն էլ էր ուսումնասիրել: Անցնելով իշխանության գլուխ, նա իսկույն իր մոտ հրավիրեց այդ ժամանակ լավագույն կիֆարահար ու երգիչ Տերպնոսին և բազում օրեր անընդմեջ լսում էր նրան ճաշից հետո մինչև ուշ գիշեր, իսկ հետո ինքը ևս սկսեց վարժվել այդ արվեստում: Նա բաց չէր թողնում միջոցներից և ոչ մեկը, որոնցից սովորաբար օգտվում են վարպետները պահպանելու ու ամրապնդելու համար ձայնը՝ պառկում էր մեջքի վրա կրծքին կապարաթերթ դրած, մաքրում էր ստամոքսը լվացումներով ու փսխումներով, խուսափում էր մրգերից և ձայնի համար վնասակար ուրիշ ուտելիքներից⁶⁴: Եվ թեև նրա ձայնը թույլ ու խուպոտ էր, բայց և այնպես, ուրախանալով իր հաջողություններով, նա ցանկացավ հանդես գալ բեմի վրա. «Ինչը որ ոչ ոք չի լսում,

այն ոչ ոք չի գնահատում», — կրկնում էր նա բարեկամներին հունական ասացվածքը⁶⁵:

(2) Առաջին անգամ նա հանդես եկավ Նեապոլում. և շնայած թատրոնը ցնցվեց հանկարծակի երկրաշարժից, նա կանգ չառավ, մինչև շավարտեց սկսած երգը: Նեապոլում նա հաճախ էր հանդես գալիս և երգում էր մի քանի օր: Հետո կարճատև դադար առավ ձայնը վերականգնելու համար, բայց չդիմացավ մենուիթյանը, բաղնիքից հայտնվեց թատրոնում, խնջույք կազմակերպեց օրօրատրայի կենտրոնում և հունարենով հայտնեց ժողովրդի բազմությանը, որ երբ ինքը թրջի կոկորդը, ապա արդեն ամբողջ ձայնով մի բան կերգի: (3) Նրան դուր եկան ալեքսանդրիացիների համաշափ ծափահարությունները, որոնցից շատերն էին Նեապոլ եկել վերջին նավով, և նա Ալեքսանդրիայից էլ ավելի մեծ թվով հյուրեր կանչեց. շրավարարվելով դրանով նա ինքը ընտրեց հեծյալների դասի պատանիների և ավելի քան հինգ հազար ամրակազմ տղաների հասարակ ժողովրդից, բաժանեց նրանց շոկատների և կարգադրեց սովորել տարբեր տեսակի ծափահարություններ՝ և՛ «բզզոց», և՛ «փողրակիներ», և՛ «աղյուսիկներ»⁶⁶, իսկ հետո երկրորդել իրեն երգելու ժամանակ: Նրանց կարելի էր ճանաչել խիտ մազերից, փառահեղ հագուստից, առանց մատանիների գիրգ ձեռքերից⁶⁷: Նրանց պարագլուխները վաստակում էին յուրաքանչյուրը շորս հարյուր հազար սեստերցիում:

21. Բայց նրան ամենից ավելի կարևոր էր թվում Հռոմում հանդես գալը: Դրա համար էլ նա վերսկսեց Ներոնյան մրցությունները նախկինում սահմանված ժամկետից շուտ⁶⁸: Ճիշտ է, թեև բոլորը բղավում էին, որ ուզում են լսել նրա աստվածային ձայնը, նա սկզբում պատասխանեց, թե ցանկացողներին կջանա բավարարութուն տալ իր այգիներում: Բայց երբ բազմության խնդրանքներին միացան այդ ժամանակ պահակ կանգնած զինվորները, ապա նա պատրաստակամությամբ հայտարարեց, որ ելույթ կունենա թեկուզ և հիմա: Եվ հենց այդտեղ էլ նա հրամայեց մրտցրնել իր անունը մրցող կիֆարահար-երգիչների ցուցակը, մյուսների հետ միասին սափորի մեջ վիճակ գցեց, սպասեց իր հերթին և բեմ ելավ: Նրա կիֆարան կրում էին պրետորականների պետերը, հետո ընթանում էին զորական տրիբունները, իսկ նրա կողքին՝ մերձավոր բարեկամները: (2) Կանգնելով բեմին և արտասանելով նախաբանի խոսքերը⁶⁹, նա նախկին կոնսուլ Կլուվիոս Ռուֆոսի միջոցով հայտարարեց, որ երգելու է «Նիոբան»⁷⁰, և երգեց այն գրեթե մինչև տասներորդ ժամը⁷¹: Մրցության շարունակությունը և պարգևների հանձնումը նա հետաձգեց, մինչև հաջորդ տարի, որպեսզի առիթ ունենա ևս մի քանի անգամ հանդես գալու: Բայց այդ սպասումն էլ նրան երկար թվաց, և նա շէր դադարում նորից

ու նորից երևալու հանդիսատեսներին: Նա նույնիսկ մտադրում էր, հանդես չգա՞լ արդյոք պրետորական խաղերում, մրցակցելով իսկական գերասանների հետ մեկ միջին սեստերցիում պարգևի համար, որ առաջարկել էին կարգադրիչները: (3) Երգում էր նա նաև ողբերգություններ⁷², հանդես գալով հերոսների ու աստվածների և նույնիսկ հերոսուհիների ու աստվածուհիների դեմակներով, որոնց դիմագծերը հիշեցնում էին նրա գեմբը կամ այն կանանց դեմքերը, որոնց նա սիրել էր: Այդ ողբերգությունների թվում էին «Կանակայի ծննդաբերությունը»⁷³, «Օրեսասեսք մայրասպան», «էդիպի կուրացումը», «Խելահեղ Հերկուլեսը»: Ասում են, թե մի նորակոչիկ, որը մուտքի մոտ պահակում էր, տեսավ նրան այդ գերում՝ քստ գործողության պսակների մեջ ու շղթայակապ, և բեմ նետվեց փրկելու նրան:

22. Զիարշավների նկատմամբ նրա կիրքը փոքր հասակից շափ ու սահման չունեք. դրանց մասին խոսելուց նա չէր հոգնում, թեև այդ նրան արգելել էին: Մեկ անգամ, երբ նա ընկերոջ հետ ողբում էր «կանաչ»⁷⁴ կառավարի մահը, որին ձիերը ցած էին նետելու քարշ տվել ասպարեզով, ուսուցիչը նրան դիտողություն արեց, բայց նա ձևացրեց, թե խոսքը Հեկտորի մասին է⁷⁵: Արդեն կայսր, նա շարունակում էր խաղատախտակի վրա խաղալ փղոսկրե փաթրիկ մարտակառքերով, և բոլոր, նույնիսկ ամենաուսնշառ, կրկեսային խաղերին ժամանում էր իր վիլլաններից՝ սկզբում գաղտնի, հետո բացահայտ, այնպես, որ բոլորն արդեն գիտեին, որ սահմանված օրը նա Հռոմում կլինի: (2) Նա չէր թաքցնում պարգևների թիվն ավելացնելու մտադրությունը՝ դրա համար էլ գնալով ավելանում էին մրցելույթները, վազքարշավները ձգվում էին մինչև երեկո, և մարտակառքերի տերերն իրենք չէին համաձայնվում իրենց կառավարներին թույլատրել մասնակցելու այլ կերպ, եթե ոչ ամբողջ օրը: Հետո էլ նա ինքը ցանկացավ հանդես գալ որպես կառավար, և նույնիսկ ամբողջ ժողովրդի առջև: Մարզվելով այգիներում, ստրուկների ու ռազմիկների շրջանում, նա մարտակառքի վրա հանդիսատեսների առջև հայտնվեց Մեծ կրկեսում, և ոմն ազատարձակ մագիստրական տեղից թաշկինակով ազդանշան տվեց սկսելու վազքարշավը:

(3) Բայց նրա համար բավական չէր իր արվեստը Հռոմում ցուցադրելը, և նա, ինչպես ասվեց, մեկնեց Աքայա: Այդ բանին նրան զրդեց գլխավորապես ահա թե ինչը: Բոլոր հունական քաղաքները, որտեղ երաժշտական մրցություններ էին լինում, որոշում էին ընդունել նրան ուղարկել կիֆարահար-երգիչների պսակներ: Նա պսակներն ընդունեց մեծագույն ուրախությամբ, իսկ նրանց հետ ժամանած դեսպաններին թույլատրեց իրեն ներկայանալ բոլորից առաջ և նույնիսկ հրավիրեց բա-

րեկամական ճաշկերույթի Ժաշկերույթի ժամանակ, դեսպաններից ոմանք խնդրեցին նրան երգել և պարզապարհեցին ազմեպաթի ժամահարություններով: Այնժամ նա հայտարարեց, որ միայն հույներն են կարողանում իրեն լսել և միայն նրանք են արժանի իր ջանքերին: Առանց հապաղելու նա ճանապարհ քննադատեց և տեղ հասնելուց անմիջապես հետո երգով հանդես եկավ Կասիտայում⁷⁶ Յուպիտեր Կասիտաի զոհասնդանի առջև, իսկ հետո մեկը մյուսի հետևից շրջադայեց բոլոր մրցությունները: 23. Իրա համար նա հրամայեց մեկ տարվա մեջ համատեղել ամենատարրեր ժամկետների տոնակատարությանները, թեկուզ և հարկ լինի դրանք կրկնել⁷⁷, և անգամ Օլիմպոսում, հակառակ սովորույթի, երաժրշակաձև խաղեր կազմակերպեց: Այն մի բան չպետք է շեղեր նրան այդ պարապմունքներից. եթե ազատարձակ Հելիոսը⁷⁸ տրեց նրան, թե հոմեական գործերը պահանջում են նրա ներկայությունը, նա այդպես պատասխանեց. «Շու խորհուրդ ես տալիս և պահանջում եմ, որ ես շուտով վերագառնամ, իսկ ավելի լավ կլինի, որ դու համոզվիս և ազերակիր ինձ վերադառնալ ներսին արժանի կերպով»:

(2) Եթե նա երբեք էր, ոչ սքի շէր թույլատրում թատերից դուրս գալ, նույնիսկ անհրաժեշտության դեպքում: Իրա համար էլ, ասում են, որոշ կանայք ձևեղարեթում էին թատերասեր, իսկ շատերն էլ, ուժ չգտնելով լսելու և գովարանելու նրան, պարիսպների վրայում էին անցնում, քանի որ փառապանները⁷⁹ փակ էին լինում, կամ մեռած էին ձևանում, որպեսզի նրանց պատգամները դուրս տանեին: Թե ինչպես էր նա երկրնում ու գագաթում երաջթ սնննալիս, թե ինչպես էր խանդում իր մրցակիցներին, ինչպես էր տարասիրտան դատաստիներին, գովար է նույնիսկ հավատալ: Մրցակիցներին շողաթթում էր, հաճոյանում, թաքուն շարախառում նրանց մասին, երբևէ հանդիպելիս հաշտանք տեղում գրիներին, ասես հաճախոր լինեին իրեն, իսկ նրանց, սկզբն ավելի հմուտ էին իրենից, շանում էր նույնիսկ կաշառել: (3) Ելույթներին առաջ դատաստիների նկատմամբ մեծազույն հարգանք էր ցուցաբերում, համատաքնելով, թե թեքը արել է ամեն բան, ինչ պետք է, սակայն ամեն մի ելք դիպվածի գործ է, և նրանք, չինչիով քերթումառան և գրանական մարդիկ, շպետք է այդ պատահականությաններն ուղադրեթյան անեն: Դատաստիները խնդրում էին նրան արխանալ, և նա տեղի էր տալիս հանպրատաքած, բայց և այնպես տազնապի մեջ՝ նրանցից ոմանց լուսնուն ու գուպլածությունը նրան դժգոհություն և անբարյացակամություն էին թվում, և նա հարտարարում էր, թե այդ մարդիկ իրեն կասկածելի են թվում:

24. Մրցության ժամանակ նա մանրախնդրուն պահպանում էր ամեն մի կարգ և կանոն՝ չէր համարձակվում հազույ, հակառի քրտին:

քը ձեռքով էր սրբում⁸⁰, իսկ երբ ինչ-որ ողբերգության մեջ վար գցեց ու արագ բռնեց իր մականը, սարսափահար դողում էր, թե դրա համար իրեն կհեռացնեն մրցությունից, և միայն այն ժամանակ հանգստացավ, երբ երկրորդ դերասանը նրան երդվեց, որ ոչ ոք դա չի նկատել ժողովրդի ծափահարությունների ու կանչերի մեջ: Նա ինքն էր իրեն հաղթող հայտարարում, դրա համար էլ ամեն անգամ մասնակցում էր նաև մունեստիկների մրցություններին⁸¹: Իսկ որպեսզի նախկին հաղթողներից ոչ մի տեղ ոչ մի հետք, հիշողություն չմնա, հրամայել էր նրանց բոլոր անդրիններն ու պատկերները տապալել, կեռերով քարշ տալ և նետել արտաքնոցները: (2) Շատ անգամներ նա հանդես է եկել նաև որպես կառավար, Օլիմպոսում վարել է նույնիսկ տասը ձի լծած կառք, թեև ինքն այդ բանի համար մի բանաստեղծության մեջ պախարակում էր Միհրդատ թագավորին: Ճիշտ է, այստեղ նա մարտակառքից դուրս էր ընկել, նրան նորից էին այնտեղ նստեցրել, բայց վազքարշավը շարունակել արդեն չէր կարող և դուրս էր եկել ասպարեզից. շնայած դրան, սակայն, նա պսակ ստացավ: Տունդարձի ճանապարհ բռնելով, նա ամբողջ պրովինցիային ազատություն պարգևեց⁸², իսկ դատավորներին՝ հոռմեական քաղաքացիություն և ոչ քիչ դրամական պարգև. այդ ողորմածության մասին նա ինքն անձամբ հայտարարեց մարզադաշտի կենտրոնից, Իսթմոսական խաղերի⁸³ օրը:

Հունաստանից նա վերադարձավ Նեապոլ, որտեղ երբեմնի առաջին անգամ ելույթ էր ունեցել, և քաղաք մուտք գործեց ճերմակ ձիերով, պարսպի ճեղքվածքի միջով, խաղերում հաղթողների սովորույթի համաձայն: Սույն իսկ եղանակով նա մուտք գործեց և Անցիում, և Ալբանում⁸⁴, և Հռոմ: Այստեղ նա մտավ այն նույն մարտակառքով, որով տրիումֆ էր կատարել Օգոստոսը, գլխին՝ օլիմպիական պսակ և պիթիական⁸⁵ — աջ ձեռքին. առջևից տանում էին մնացյալ պսակները մակագրություններով, թե որտեղ, ում և ինչպիսի ողբերգություններում կամ երգասացություններում է նա հաղթել, ետևից, ինչպես օվացիայի ժամանակ, ընթանում էին նրան ծափահարողները, գոչելով, որ իրենք ծառայում են Օգոստոսին և որպես զինվորներ ընթանում են նրա տրիումֆում: (2) Նա անցավ Մեծ կրկեսի միջով, ուր դրա համար քանդել տվեց կամարը⁸⁶, Վելարրումի, Ֆորումի, Պալատինումի և Ապոլլոնի տաճարի միջով. նրա ողջ ճանապարհին մարդիկ զոհեր էին մատուցում, ճանապարհին շաֆրան շաղ տալիս, ժապավեններ, երգեցիկ թուղուններ ու քաղցրավենիք մատուցում: Սրբազան պսակները⁸⁷ նա կախել տվեց իր ննջարանում, մահճի կողքին, և հենց այդտեղ էլ դնել տվեց իր քանդակները կիֆարահար-երգչի տարազով. նման պատկերով նա նույնիսկ դրամ հատել տվեց:

(3) Բայց դրանից հետո էլ նա մազաչափ իսկ չթողեց իր ջանասիրությունն ու ջանքերը՝ հանուն ձայնի պահպանման նա նույնիսկ զինվորներին միշտ դիմում էր կամ հեռակա կարգով, կամ մունեստիկի միջոցով. գործերով էր զբաղված լինում, թե հանգստանում էր, միշտ նրա մոտ էր արտասանության ուսուցիչը, որը նրան հիշեցնում էր, թե պետք է պահպանել կոկորդը և թաշկինակի միջով շնչել: Եվ շատերին նա իրեն բարեկամ կամ թշնամի էր հռչակում, նայած այն բանին, հաճույքով թե ժլատաբար են նրանք իրեն ծափահարում:

26. Նրա անպատկառությունը, վավաշոտությունը, սանձարձակությունը, ժլատությունը, դաժանությունը սկզբնապես դրսևորվում էին աստիճանաբար ու աննկատելի, ասես պատանեկան հրապուրանքներ, բայց արդեն այն ժամանակ բոլորի համար պարզ էր, որ այդ արատները բնածին են, այլ ոչ թե տարիքի հետ կապված: Հազիվ էր մութն ընկնում, երբ նա կեղծամ կամ թաղիքից գլխարկ էր հագնում և գնում էր քարշ գալու պանդոկներում կամ թափառելու նրբանցքներում: Նրա զվարճություններն անմեղ չէին՝ ընթրիքից վերադարձող մարդկանց նա հաճախ ծեծում էր, իսկ դիմադրության դեպքում վերքեր էր հասցնում և նետում կեղտաջրի առունները. ներխուժում էր պանդոկներն ու կողոպտում, իսկ պալատում ճամբարային շուկա էր շինել, ուր հսփշտակված ավարը մաս առ մաս վաճառվում էր աճուրդով, իսկ հասույթը խմիչքի էին տալիս: (2) Մեկ անգամ չէր, որ նման գզվուտուքում կարող էին նրա աչքը հանել, նույնիսկ վերջը տալ՝ մի սենատոր⁸⁸ նրան համարյա մահու շափ ծեծեց այն բանի համար, որ հետապնդել էր իր կնոջը: Այդ պահից նա ուշ ժամերին դուրս էր գալիս ոչ այլ կերպ, եթե ոչ զինվորական տրիբունների ուղեկցությամբ, որոնք աննկատ հետևում էին նրան: Երբեմն էլ օրը ցերեկով ճոճաթոռով թաքուն հայտնվում էր թատրոնում և պրոսցենիումի բարձունքից խրախուսում ու դիտում մնջկատակների պատճառով ծագած գժտությունները, իսկ երբ գործը կռվի էր հասնում, և գործի էին դրվում քարերն ու նստարանների կտորտանքը, նա ինքն էր բազմության վրա նետում ձեռքն ընկածը և նույնիսկ ջարդել էր մի պրետորի գլուխ: 27. Իսկ երբ աստիճանաբար նրա վատ հակումներն ամրապնդվեցին, նա դադարեց կատակելուց ու թաքնվելուց և նետվեց, արդեն առանց ծպտվելու, էլ ավելի վատթար արատների գիրկը:

(2) Խնջույքները նա երկարաձգում էր կեսօրից մինչև կեսգիշեր, ժամանակ առ ժամանակ թարմանալով լոգարաններում, ձմռանը՝ տաք, ամռանը՝ սառն: Նա խնջույքներ էր անում նաև ժողովրդի ներկայությամբ, արհեստական լճակի⁸⁹ վրա կամ Մեծ կրկեսում, ուր սպոստարկում էին ողջ Հռոմից հավաքված պոռնիկոհներն ու պարուհիներ: (3) Երբ

նափարկում էր Տիբրոսով դեպի Օստիա կամ ծովածոցով դեպի Բայք, ափերի երկայնքով կառուցվում էին պանդոկներ, որտեղ ամեն ինչ կար հերուխումի ու անառակության համար և որտեղ պանդոկապանուհիների պես հագնված մատրոնաները ամեն կողմից կանչում էին նրան ափ իջնելու: Նա խնջույքներ էր սարքում նաև բարեկամների հաշվին. դրանցից մեկը, մետաքսեղենի⁹⁰ քաշխումով, շորս միլիոն սեստերցիում նստեց, իսկ մյուսը, վարդաջրով, էլ ավելի թանկ:

28. Բավական չէ, որ նա կենակցում էր ազատ տղաների և ամուսնացած կանանց հետ, նույնիսկ բռնաբարեց վեստալուհի Ռուբրիային: Ազատարձակուհի Ակտայի հետ նա քիչ էր մնում օրինական ամուսնություն կնքեր, կաշառելով կոնսուլական կոշման տեր մի քանի սենատորների, որպեսզի երդվեն, թե իբր Ակտան արքայական տոհմից⁹¹ է: Սպորոս տղային նա ներքինի դարձրեց և նույնիսկ փորձում էր կին դարձնել՝ նրա հետ հարսանիք արեց բոլոր ծխակատարություններով, օժիտով ու ջահով⁹², մեծ շքեղությամբ նրան տուն տարավ և կենակցում էր հետը որպես կնոջ: Դեռևս չի մոռացվել ոմն մեկի հաջող կատակախոսությունը՝ երջանիկ կլինեին մարդիկ, եթե ներոնի հայրն այդպիսի կին ունենար: (2) Այդ Սպորոսին նա զգենեց որպես կայսրուհու և պատգարակով հետը տանում էր թե Հունաստանում հավաքույթների ու շուկաները, թե Հռոմում Սիգիլլարիաներ⁹³, հաճախակի համբուրելով նրան: Նա սիրային կապ էր փնտրում նույնիսկ մոր հետ⁹⁴, և նրան ետ պահեցին միայն մոր թշնամիները⁹⁵, երկյուղ կրելով, որ իշխանատենչ ու անզուսպ այդ կինը դրանով չափից մեծ ազդեցություն ձեռք կբերի: Դրանում ոչ ոք չէր կասկածում, հատկապես այն քանից հետո, երբ նա իրեն հարճ վերցրեց մի պոռնկուհու, որը հռչակված էր իր նմանությամբ Ագրիպպինային. նույնիսկ հավատացնում են, թե իբր պատգարակով մոր հետ տեղ գնալիս նրա հետ անձնատուր էր լինում արյունապիղծ հեշտանքի, ինչը վկայում էին հագուստի վրայի բծերը: 29. Իսկ սեփական մարմինը նա այնքան էր անառակության մատնել, որ հազիվ թե նրա գեթ մեկ անգամը մնացել էր չպղծված: Ի լրումն նա մտահղացավ նոր պվարճություն՝ գազանի մորթի հագած դուրս էր պրծնում վանդակից, նետվում սյուներին կապված մերկ տղամարդկանց ու կանանց վրա, և հագեցնելով վայրի տարփանքը, անձնատուր էր լինում ազատարձակ Դորիֆորոսին⁹⁶: Նա կնության գնաց այդ Դորիֆորոսին, ինչպես որ Սպորոսը իրեն, բղավելով ու ճշալով ինչպես բռնաբարվող աղջիկ: Ոմանցից ես լսել եմ, թե իբր նա հաստատապես համոզված էր, որ աշխարհում ողջախոհ և որևէ բանում մաքուր մարդ չկա և որ մարդիկ սոսկ թաքցնում ու ճարպկորեն սքողում են իրենց արատները: Դրա համար էլ նը-

րանց, ովքեր խոստովանում էին իրենց անառակ լինելը, նա ներում էր նաև մնացյալ բոլոր մեղքերը:

30. Դրամի և հարստությունների համար միակ կիրառումը նա համարում էր շուայլումը՝ հաշվենկատ մարդկանց նա անվանում էր կեզտոտ ժլատներ, իսկ թեթևամիտ վատնողներին՝ ճաշակի տեր և ապրելիմացող կտրիճներ: Իր հորեղբայր Գայոսի⁹⁷ մեջ նա ամենից ավելի գովաբանում և հիանում էր նրանով, թե ինչպես էր նա կարողացել կարճ ժամանակամիջոցում վատնել Տիրերիոսի հսկայական հարստությունը: (2) Դրա համար էլ նա ինքն իրեն զսպել շփտեր ոչ ծախսելու, ոչ էլ առատաձեռնության մեջ: Տրդատի համար, թեև դա անհավատալի է թվում, նա ծախսում էր օրական ութ հարյուր հազար, իսկ մեկնեխա նրան պարգևեց ավելի քան հարյուր միլիոն: Կիֆարահար-երգիչ Մենեկրատեսին և գլադիատոր Սպիկուլոսին նա ընծայեց տրիումֆատորների ունեցվածք ու ապարանքներ: Վաշխառու Կերկուպիտեկես Պաներոտեսին, որը նրանից քաղաքային ու գյուղական հարստագույն կալվածներ էր ստացել, նա թաղեց գրեթե որպես թագավորի: (3) Ոչ մի զգեստ նա երկրորդ անգամ չէր հագնում: Խաղալիս շորս հարյուր հազար սեստերցիում խաղազումար էր դնում: Չուկ որսում էր ծիրանի ու կարմիր թելերից հյուսված ոսկեզօծ ուռկանով: Իսկ ճանապարհորդում էր ոչ պակաս, քան հազար սայլակառքերի ուղեկցությամբ, ջորիների պայտերն արծաթից⁹⁸ էին լինում, գրաստավարների հագուստը՝ կանուզիական մահուղից, իսկ շուրջը՝ սուրհանդակների ու մավրիտանական հեծյալների⁹⁹ բազմություն՝ ապարանջաններով ու վահանակներով:

31. Բայց ավելի շատ նա շուայլում էր կառույցների համար: Պալատինումից մինչև բուն էսքվիլինում նա պալատ կառուցեց, սկզբում այն անվանելով Միջանցիկ, ապա, հրդեհից ու վերականգնումից հետո՝ Ոսկյա: Նրա շափերի և կահավորանքի մասին բավական կլինի հիշատակել ահա թե ինչ: Նախասրահը այնպիսի բարձրություն ուներ, որ այնտեղ դրված էր կայսեր հարյուր քսան ոտնաչափ¹⁰⁰ բարձրությամբ վիթխարի արձանը. նրա տարածությունը այնպիսին էր, որ կողքերի եռակի սյունասրահը մեկ մղոն երկարություն ուներ. ներսում ծովի նման մի լիճ կար, շրջապատված քաղաքների նմանվող կառույցներով, իսկ ապա՝ արոտավայրերով, արտերով, անտառներով ու խաղողի այգիներով խաչտխաչտող դաշտեր, իսկ այնտեղ բազմաթիվ ընտանի կենդանիներ և վայրի գազաններ¹⁰¹: (2) Մնացյալ հարկարաժիններում ամեն ինչ ոսկեզօծ էր, զարդարված թանկարժեք քարերով ու մարգարտյա խեցեղենով. ճաշասրահներում առաստաղները հատակերտ էին, շրջվող սալաքարերով, որպեսզի ծաղիկներ թափվեին բացվածքներով, որպեսզի բույ-

րեր տարածվին. գլխավոր պալատը կլոր էր և գիշեր ու զօր անկանգ պատվում էր¹⁰² երկնակամարի հետքով. բաղնիքներում հոսում էին աղի և ծծմբային ջրեր: Եվ երբ այդ ապարանքն ավարտվեց ու օծվեց, ներոնը միայն այն ասաց ի գովասանք, որ հիմա, վերջապես, ինքը մարդու պես կասլրի:

(3) Բացի այդ, նա սկսեց լոգադան կառուցել Միզենայից մինչև Ավերնուսի լիճը¹⁰³, ծածկված և կողասյունասրահներով, ուր ուզում էր բերել տալ Բայթի¹⁰⁴ բոլոր տաք աղբյուրները. սկսեց նաև ջրանցք¹⁰⁵ Ավերնուսից մինչև բուն Օստիա, որպեսզի կարելի լիներ այնտեղ նավերով գնալ, բայց ոչ ծովով. նրա երկարությունը պետք է հարյուր վաթսուն մղոն լիներ, իսկ լայնությունը այնպիսին, որ կողք կողքի կարողանային անցնել երկու քվինթվերեմիսներ¹⁰⁶: Այդ աշխատանքները գլուխ բերելու համար նա հրամայեց բոլոր սեղերից բոլոր աքսորյալներին բերել Իտալիա և նույնիսկ քրեական հանցագործներին դատապարտել միայն այդ աշխատանքները կատարելու:

(4) Այդ խենթ ծախսերին նրան մղում էր ոչ միայն կայսրության հարստության նկատմամբ ունեցած վստահությունը, այլև գետնի ընդերքում անթիվ-անհամար գանձեր գտնելու իսլահեղ հույսը: Հռոմեացի մի հեծյալ¹⁰⁷ երդմամբ հավատացրել էր նրան, թե իբր Աֆրիկայում հսկա քարանձավներում թաղված են հին գանձարանի գանձերը, որոնք Տյուրոսից փախուստ տալիս իր հետ տարել էր Դիդոնա թագուհին, և դրանք կարելի է ձեռք բերել գրեթե առանց դժվարության: ՅՁ. Իսկ երբ այդ հույսը նրան խաբեց, և նա, ծախսելով ու աղքատանալով համարյա մինչև ծայրահեղ չքավորություն, ստիպված էր նույնիսկ զինվորների վարձատրությունը ուշացնել, իսկ վետերանների պարգևները ձգձգել, այդժամ դիմեց ուղղակի գրապարտությունների ու դրամաշորթություն:

(2) Ամենից առաջ նա սահմանեց, որպեսզի ըստ այն ազատարձակների կտակների, որոնք առանց ակնհայտ պատճառի¹⁰⁸ կրում են իրեն ազգական գերդաստանների անուններ, ինքը ժառանգի ունեցվածքի ոչ թե կեսը, այլ հինգ վեցերորդը. այնուհետև, որպեսզի ըստ այն կտակների, որոնք աներախտագիտություն¹⁰⁹ էին դրսևորում կայսեր նկատմամբ, ամբողջ ունեցվածքը անցնի գանձարանին, իսկ այդ կտակները գրող կամ կազմող փաստաբանները պատժվեն. այնուհետև, որպեսզի մեծությանը վիրավորելու մասին օրենքին ենթակա լինեն ցանկացած խոսքերն ու արարքները¹¹⁰, որոնց համար միայն մեղադրող կգտնվի: (3) Նույնիսկ այն ընծաները, որ նա արել էր ի շնորհակալություն քաղաքներից ստացած հաղթապսակների, ետ պահանջեց: Իսկ մի անգամ արգելեց մանուշակագույն ու ծիրանագույն զգեստ կրել, ինքը մի առևտրականի շուկա

ուղարկեց այդ ներկի մի քանի ունցիայով և դրանից հետո կնքել տվեց¹¹¹ բոլոր առևտրականների խանութները: Ասում են, նույնիսկ, երբ հանդես էր գալիս երգով, հանդիսատեսների մեջ նկատեց արգելված ծիրանի զգենած մի կնոջ և նրան ցույց տվեց իր ծառաներին. այդ կնոջը գետնաքարշ դուրս տարան, և նա խլեց նրանից ոչ միայն զգեստը, այլև ամբողջ ունեցվածքը: (4) Հանձնարարություններ տալիս նա ամեն անգամ ավելացնում էր՝ «Իսկ թե ինձ ինչ է պետք, դու գիտես», և՛ «Այնպես ենք գործելու, որ ոչ ոքի ոչինչ չմնա»: Վերջապես, բազում տաճարներից նա խլում էր նվիրատվությունները, իսկ ոսկե և արծաթե քանդակները տվեց հալելու, այդ թվում նաև Պենատներ աստվածների արձանները, որոնք հետագայում վերականգնել տվեց Գալբան:

33. Իր շարագործություններն ու սպանությունները նա սկսեց Կլավդիոսից: Նա չէր Կլավդիոսին թունալորել հրահրողը, բայց գիտեր այդ մասին և չէր թաքցնում. այսպես, այդ ժամանակից ճերմակ սնկերը նա միշտ, ըստ հունական ասացվածքի, անվանում էր «աստվածների կերակուր», որովհետև ճերմակ սնկերի մեջ էին Կլավդիոսին թույն մատուցել: Համենայն դեպս, նա հանգուցյալին հետապնդում էր և՛ ճառերով, և՛ արարքներով, մեղադրելով նրան մերթ հիմարության, մերթ մոլեգնության մեջ. այսպես, նա ծաղրանքով ասում էր, որ Կլավդիոսը «դադարել է հիմարաբար հապաղել մարդկանց մեջ»¹¹², Կլավդիոսի շատ վճիռներ ու որոշումներ նա վերացրեց, որպես թե ընդունված տկարամիտ և խելագար մարդու կողմից. և նույնիսկ նրա դիակիզման խարույկի¹¹³ տեղը շրջափակեց աղքատիկ ու նվազ մի միջնորմով:

(2) Բրիտանիկոսին¹¹⁴, որին նա նախանձում էր, քանզի ավելի Չաճելի ձայն ուներ, և որից վախենում էր, քանզի ժողովուրդը կարող էր նրան գերադասություն տալ ի հիշատակ հոր, վճռեց կործանել թույնով: Այդ թույնը նա ստացավ ոմն Լուկուստայից՝ թույներ սարքող մի կնոջից. բայց թույնն ավելի թույլ դուրս եկավ, քան կարծում էին, և Բրիտանիկոսի փորը միայն լուծեց: Այնժամ նա այդ կնոջը կանչել տվեց մոտը և սկսեց սեփական ձեռքերով ծեծել նրան, գոռալով, որ նա ոչ թե թույն է տվել, այլ դեղ: Սա արդարանում էր, որ թույն քիչ է դրել, չցանկանալով սպանության կասկած հարուցել. բայց ներոնը բացականչեց. «Չլինի, թե ես վախենում եմ Հուլիոսի օրենքից»¹¹⁵, և կնոջն ստիպեց հենց այդտեղ՝ ննջասենյակում, իր աչքի առջև եփել ամենատուժեղ և արագ ներկործող թույնը: (3) Թույնը փորձեցին այծի վրա, և նա սատկեց հինգ ժամ անց. նորից ու նորից եռացնելով, այն տվեցին խոճկորին, և սա տեղնուտեղը սատկեց. այնժամ ներոնը հրամայեց թույնը մատուցել իր հետ ճաշող Բրիտանիկոսին: Առաջին իսկ կումից սա մահացած վայր

ընկալի իսկ ներոճը, ստելով սեղանակիցներին, թե իբր դա լինեալու-
թափյան սովորական նույա է, հաջորդ իսկ օրը, տեղաստարափ անձրեփ
տակ, թաղեց նրան շուտափույթ ու առանց պատիւների: Իսկ կռակու-
տան արած գործի համար և՛ անպատիժ մնաց, և՛ հարտաստ կալվածներ
ու, նույնիսկ, աշակերտներ ստացավ:

34. Իր մորը նա ասեց այն բանի համար, որ սա հետևեալ և խստո-
րեն դատում էր նրա խոսքերն ու արարքները: Մկրտում նա միայն ջա-
նում էր այս կամ այն կերպ ասեղութուն հրահրել մոր հանդեպ, սպառ-
եալով հրաժարելի իշխանությունից և հեռանալ Հոտոտա. հետո գրկեց
նրան բոլոր պատիւներից ու իշխանությունից, խրեց զինչորոն երկն ու գիւ-
մանացի թիկնապահներին, գրկեց նրան տնից ու փառեց սպառափոց-
բայց դրանից հետո էլ նա ոչ մի ակեթարթ մորը հանդիստ չէր ստալիս՝
նրա վարձած մարդիկ Հոտոում Ագրիպպինաչին. տհաճություն էին պատ-
ճառում դատաւեճերով, իսկ հանգստավայրում՝ ծաղրանքով և հայհո-
յանքներով, հետապնդելով նրան ծովում ու ցամաքում: (2) Վերջապես,
մոր սպանալիքներից ու անսաստոթյունից թանցած երկյուղից, նա
վճռեց կործանել նրան¹⁶: Երեք անգամ փորձեց մորը թանապորել, մինչև
որ հասկացավ, որ մայրը նախօրոք հակաթույն է ընդունում: Այնժամ
մոր անկողնու վերեւում մանրակտոր առաստաղ սարքել տվեց, որպէսզի
մեքենայի միջոցով ազատի դրանք փորակներից և փելուզի քնած մոր
փրտ, բայց մեղաակիցներին շահողովեց մասհողացումը գաղտնի պահելը
Յյնժամ նա հնարեց մաս-մաս եղող մի նափ¹⁷, որպէսզի կործանի մորը
խորտակումով կամ նավահանգիստի փուլ գալուփ. ասեղեւ փոխարինելով
պայրոթի ռաթումածոթյամբ, նա ամենագորովալից մի նամակով մորը
հրապիրեց Բաբել, որպէսզի միասին տանեն քիչն քվարի. ասեղներ¹⁸, պա-
հեց նրան աշատեղ խնջույթի, իսկ տրիեթարոսներին հրաճալեց վնասել
նրա լիբունիական թիանավը¹⁹, իբրև թե պատահական ընդհարումով
և երբ մայրը պատրաստուում էր վերադառնալ Բաբել²⁰, նա վնասվածի
փոխարեն մորը տվեց իր հմտորեն կառուցված նավը, գործանքով ճա-
նապարհեց նրան և հրաժեշտ տալիս նույնիսկ համբուրեց կործար (3):
Գիշերվա մնացած մասը նա անքուն անցկացրեց, սրաի մեծ գողով սպա-
սելով ձեռնարկմանը: Իսկ երբ իմացավ, որ ամեն ինչ այլ կերպ է տալց-
վել, որ մայրը դուրս է պրծել լող սալով²¹, և երբ մոր արատարձակ
կռիթոս Ագրիմոսը սրախ-ուրախ լուր բերեց, թե մայրը աղջ ու անվնաս
է. այնժամ ներունը, ուժ շաննարով աչքա որևէ բան հնարել, կարգադրեց
աննկատելիորեն Ագրիմոսի մոտ դաշույն գնել, հետո բռնել նրան և
չղթայել որպէս ուղարկված մարդասպանի, իսկ մորը սպանել, իբրև թե
նա, մերկացվելով հանցագործութեան մեջ, ինքն-ապառան է եղել (4) Վկա-

յակոչելով հասխարհի տեղեկութեաններ, դրան ավելացնում են էլ ավելի սարսափելի մանրամասնութեաններ՝ թե իբր նա ինքը մոտ է վազել դիտելու սպանվածի մարմինը¹²², շոշափել է նրա անդամները՝ մերթ գովարանելով դրանք, մերթ փնովելով, դրանից խմելու ցանկություն է դգացել և տեղնուտեղը իրեն հարքեցողութեան տվել: Բայց թեև թե՛ զինվորները, թե՛ սենատը և՛ թե ժողովուրդը քաջալերում էին նրան իրենց շնորհավորանքներով, նա շխուսափեց խղճի խայթերից ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետո, և քանիցս խոստովանել է, թե իրեն հետապնդում են մոր կերպարը և խարազանող ֆուրիաները՝ վառվող ջահերով: Իրա համար էլ նա կազմակերպում էր կախարդների սրբազնագործություն, փորձելով կանչել մոր ոգուն և ներումն աղերսել, դրա համար էլ Հունաստանում էլևսինյան խորհուրդներում, որտեղ մունեստիկը կարդադրում է հեռանալ բոլոր սրբապիղծներին ու հանցագործներին, նա շհամարձակվեց ձեռնադրություն ընդունել:

(5) Մոր սպանությանը հետևեց հորաբրոջ սպանությունը¹²³: Վերջինիս նա այցելեց, երբ սա պառկած էր փորկապությունը հիվանդ, պառավը սովորականի պես շոյեց նրա այտերի աղվամազը և փազաբջանքով ասաց. «Տեսնեի այս մորուքը սափրված և հետո նոր մեռնեի», իսկ նա, դիմելով ընկերներին, ծաղրանքով ասաց, որ կսափրի թեև կուզ և հիմա, ու բժիշկներին կարգադրեց հիվանդին շափից ավելի լուծողական տալ: Հորաբույրը դեռևս չէր վախճանվել, որ նա տիրացավ նրա ժառանգութեանը, թաքցնելով կտակը, որպեսզի ձեռքից ոչինչ բաց չթողնի:

35. Օկտավիայից հետո նա երկու անգամ է ամուսնացել՝ Պոպպեա Սաբինայի հետ, որի հայրը քվեստոր էր, իսկ առաջին ամուսինը¹²⁴ — հռոմեացի հեծյալ, և Ստատիլիա Մեսսալինայի՝ երկակի կոնսուլ և տրիումֆատոր Տավրոսի ժոռնուհու հետ. նրան կնություն առնելու համար սպանեց ամուսնուն՝ Ատտիկոս Վեստինոսին¹²⁵, երբ սա կոնսուլ էր: Կյանքը Օկտավիայի հետ նրա համար շուտով ծանր բեռ դարձավ. բարեկամների հանդիմանանքին նա պատասխանում էր, որ Օկտավիային կնոջ կոչումն¹²⁶ էլ բավական է: Նրան խեղդամահ անելու մի քանի անհաջող փորձերից հետո նա ապահարզան տվեց նրան շքերության պատճառաբանությամբ, շնայած այն բանին, որ ժողովուրդը հավանություն չէր տալիս այդ ամուսնալուծությանը և նրա գլխին լուտանքներ էր տեղում. հետո ներոնը նրան աքսորեց¹²⁷ և, վերջապես, մահապատժի ենթարկեց ամուսնական անհավատարմության համար. պատճառաբանությունը այնքան անհեթեթ ու անպատկառ էր, որ նույնիսկ խոշտանգման հեթարկվելով ոչ ոք չհավաստեց դա, և ներոնը ստիպված էր կեղծ վկա դարձնել իր դայակ Անիկետոսին¹²⁸, որը և հայտարարեց, թե նա ինքը

խորամանկությամբ տիրացել է Օկտավիային: (3) Պոպպեայի հետ նա ամուսնացավ Օկտավիայից ամուսնալուծվելուց տասներկու օր հետո և անշափ սիրում էր նրան. բայց նրան էլ սպանեց, ոտքով հարվածելով հիվանդ ու հղի կնոջը, երբ շափից դուրս ուշ էր վերադարձել վազքարշավից, և կինը նրան հանդիմանանքով էր դիմավորել: Նրանից Ներոնը ունեցավ մի դուստր՝ Կլավդիա Ավգուստային, որը մահացավ դեռևս ծծկեր հասակում:

(4) Հիրավի, մերձավորներից ոչ ոքի նա չխնայեց իր հանցագործություններով: Անտոնիային՝ Կլավդիոսի դստերը, որ Պոպպեայի մահից հետո հրաժարվել էր կնության գնալ նրան, մահապատժի ենթարկեց, մեղադրելով հեղաշրջում պատրաստելու մեջ: Նրան հետևեցին Ներոնի մնացյալ ազգականներն ու խնամիները. նրանց թվում էր նաև երիտասարդ Ավլոս Պլավտիոսը¹²⁹, որին մահապատժից առաջ նա բռնաբարեց և աքաց. «Թող հիմա մայրս գա համբուրելու իմ հաջորդին», քանզի, ըստ նրա, Ագրիպինան սիրում էր այդ պատանուն և նրան իշխանության հույս էր ներշնչում: (5) Իր խորթ որդի Ռուփրիոս Կրիսպինոսի՝ Պոպպեայի որդու, ստրուկներին Ներոնը կարգադրեց տիրոջը խեղդել ծովում, որովհետև լսել էր, թե խաղալիս տղան ինքն իրեն զորավար և կայսր էր հայտարարել: Տուսկոսին՝ իր ստնտուի որդուն, նա աքսոր ուղարկեց այն բանի համար, որ Ծգիպտոսում պրոկուրատոր եղած ժամանակ սա լոգանք էր ընդունել այն բաղնիքում, որը կառուցվել էր Ներոնի ժամանման առթիվ: Սենեկային¹³⁰, իր դաստիարակին, նա ստիպեց ինքնասպան լինել, թեև մեկ անգամ չէր, որ, երբ Սենեկան խնդրել էր արձակել իրեն և հրաժարվել էր բոլոր հարստություններից, նա սըրբազան երդումով երդվել էր, որ նրա կասկածանքները զուր են և որ ինքք ավելի շուտ կմեռնի, քան ուսուցչին շարիք կպատճառի: Բուրրոսին՝ պրիտորականների պետին, նա խոստացավ կոկորդի դեղ տալ, բայց թույն ուղարկեց: Ազատարձակներին¹³¹, հարուստ և զառամյալ, որոնք երբեմնի օգնականներ ու խորհրդատուներ էին եղել նրա որդեգրման ու գահակալության ժամանակ, նա կյանքից զրկեց թույնով, որը մատուցվում էր կամ ուտելիքի, կամ ըմպելիքի մեջ:

36. Ոչ պակաս մոլեգնությամբ էր նա հաշվեհարդար տեսնում նաև օտար ու կողմնակի անձանց հետ: Գիսաստղը¹³², որն, ըստ ընդհանուր հավատալիքի, մահ էր սպառնում գերագույն տիրակալներին, մի քանի գիշեր անընդմեջ կանգնած էր երկնքում. դրանից անհանգստացած, նա աստղագուշակ Բալբիլոսից իմացավ, որ սովորաբար թագավորները նման աղետներից փրկագնվում են որևէ վեհաշուք մահապատժով, շրջելով այն մեծատոհմիկների գլխին, և նույնպես մահվան դատապարտեց

պետութեան ամենանշանավոր արանց, առավել ևս, որ դրա համար առիթ հանդիսացավ երկու դավադրութիւններ թացահայտումը՝ առաջին և ամենակարևորը կազմակերպել էր Պիզոնը¹³³ Հռոմում, երկրորդը՝ Վինիցիանոսը¹³⁴ Բենեվենտումում: (2) Դավադիրները պատասխան էին տալիս եռակի շղթայակապ՝ ոմանք կամովին խոստովանում էին հանցանքը, մյուսները այն նույնիսկ իրենց ծառայութիւնն էին համարում. ըստ նրանց, միայն մահվամբ կարելի էր օգնել մի մարդու, որն արատավորված է բոլոր արատներով¹³⁵: Դատապարտվածների զավակները վտարվեցին Հռոմից և ոչնչացվեցին թուլյնով կամ սովամահութեամբ՝ ոմանք, ինչպես հայտնի է, սպանվեցին ընդհանուր նախաճաշի ժամանակ, իրենց դաստիարակների ու սպասավորների հետ, մյուսներին արգելվեց ուտելու հաց վաստակել:

37. Դրանից հետո արդեն նա մահապատժի էր ենթարկում առանց չափի ու խտրութեան, ում ասես և ինչի համար ասես: Սալվիդիենոս Օրֆիտոսը, շխտելով այլևս մյուսների մասին, մեղադրվեց այն բանի համար, որ ազատ քաղաքների դեսպաններին ֆորումի մոտ գտնվող իր տանը¹³⁶ երեք ճաշարան էր վարձով տվել. կույր իրավագետ Կասսիոս Լոնգինոսը՝ որ նախնիների տոհմական հնամենի պատկերների մեջ պահպանել էր Դայոս Կասսիոսի՝ Կեսարին սպանողի, պատկերը. Թրասեսոս Պետոսը՝ որ նրա տեսքը միշտ մոայլ էր խրատատուի նման: (2) Հրամայելով մեռնել, նա դատապարտվածներին կյանքի հաշված ժամեր էր թողնում. իսկ որպեսզի հապաղում չլինի, նրանց մոտ բժիշկներ էր կարգում, որոնք իսկույն «օգնութեան էին հասնում» անվճռականներին՝ այդպես էր նա անվանում երակների մահաբեր բացումը: Կար ծագումով Եգիպտոսից մի նշանավոր շատակեր¹³⁷, որը կարողանում էր ուտել և՛ հում միս, և՛ ինչ ասես. ասում են, ներոնն ուզում էր պատառոտելու և խժռելու համար նրան կենդանի մարդիկ տալ: (3) Հպարտանալով ու պարծենալով իր նման հաջողութիւններով, նա բացականչում էր, որ իր նախորդներից և ոչ մեկը չի իմացել, թե ինչպիսի իշխանութիւն է ունեցել ձեռքին, և հաճախակի ու բացահայտ ակնարկում էր, որ մյուս սենատորներին էլ չի խնայի, նրանց ամբողջ դասը մի օր արմատախիլ կանի պետութիւնից, իսկ զորքերն ու պրովինցիաները կհանձնարարի հեծյալներին ու ազատարձակներին: Համենայն դեպս սենատ գալիս ու գնալիս նա սենատորներին չէր թուլատրում համբուլի¹³⁸ և չէր պատասխանում նրանց ողջույններին, իսկ սկսելով աշխատանքներն իսթմոսում, նա հսկայական բազմութեան առջև ի լուր ամենքի ցանկութիւն հայտնեց, որ այդ զործը ծառայի ի բարօրութիւն իրեն և հոռմեացի ժողովրդի, չհիշատակելով սենատի մասին:

38. Բայց ժողովրդի ու հայրենիքի բուն պատերի հանդեպ իսկ նա գուժ շուներու Երբ ոմն մեկը խոսակցութեան ժամանակ ասաց՝

Երբ ես մեռնեմ, թող երկիրը հրով այրվի¹³⁹,

«Ոչ,— ընդհատեց նրան Ներոնը,— քանի դեռ ապրում եմ»: Եվ նա հասավ դրան: Ասես նրան նողկանք էին պատճառում անճոռնի, հին տները և նեղ, ծուռումսու նրբանցքները, նա հրկիզեց Հոռմը այնքան բացահայտ, որ շատ կոնսուլյարիսներ իրենց բակերում որսում էին ձեռքերին ջահեր ու խծուծ բռնած նրա ծառաներին, բայց չէին համարձակվում նրանց ձեռք տալ. իսկ շտեմարանները, որոնք գտնվում էին Ոսկյա ապարանքի կողքին և, Ներոնի կարծիքով, նրանից շափից դուրս շատ տեղ էին խլում, կարծես թե նախապես քանդվեցին ուղղակի մեքենաներով, որովհետև նրանց պատերը քարից էին, և հետո նոր հրկիզվեցին: (2) Վեց ցեբեկ և յոթ գիշեր մուլեգնում էր աղետը¹⁴⁰, իսկ ժողովուրդը ապաստան էր փնտրում քարե հուշարձաններում ու դամբարաններում: Բացի անհամար կացարաններից, այրվում էին հին զորավարների տները, դեռևս զարդարված թշնամու ավարով, այրվում էին աստվածների տաճարները, կառուցված ու օծված թագալուրների օրոք և հետո՝ պունիկական ու գալլական պատերազմների ժամանակներում, այրվում էր այն ամեն արժանավորն ու հիշարժանը, որ պահպանվել էր հին ժամանակներից: Այդ հրդեհը նա գիտում էր Մեկենասի աշտարակից¹⁴¹, վայելք ապրելով, իր խոսքերով, փառահեղ բոցից, և թատերական հագուստ զգենած երգում էր «Տրոյայի խորտակումը»¹⁴²: (3) Բայց այստեղ էլ նա առիթը քաց շթողեց ավարի ու վաստակի համար՝ հայտարարելով, որ փլատակներն ու դիակները հրկիզվելու են պետութեան հաշվին, նա մարդկանց մոտ շթողեց իրենց ունեցվածքի մնացորդներին. իսկ նվիրատվութեաններ¹⁴³ պրովինցիաներից ու մասնավոր անձանցից նա ոչ միայն ընդունում, այլև պահանջում էր, մինչև վերջ սպառելով նրանց միջոցները:

39. Չարակրութեաններին ու աղետներին¹⁴⁴, որոնց մեղավորը Ներոնն էր, ճակատագիրը ավելացրեց նաև ուրիշները՝ ժանտախտը, որ մեկ աշնան ընթացքում երեսուն հազար մարդ մտցրեց թաղման ցուցակներին¹⁴⁵ մեջ, պարտութեանը Բրիտանիայում¹⁴⁶, որտեղ ավերվեց երկու քաղաք և քաղաքի վ քաղաքացիներ ու դաշնակիցներ կոտորվեցին, անփառունակ գործերը Արևելքում¹⁴⁶, որտեղ Հայաստանում լեգեոնները անցան լծի տակով, իսկ Ասորիքը հազիվ էր դիմանում:

Այդ ամենի մեջ հատկապես զարմանալի և ուշագրավ էր այն ան-

տարբերութիւնը, որով նա ընկալում էր մարդկանց կշտամբանքներն ու անեծքները: Ոչ ոքի նկատմամբ նա այնպես ներողամիտ չէր, ինչպես նրանց, ովքեր վիրավորում էին նրան կծու խոսքերով ու ոտանավորներով: (2) Այդ ոտանավորները, և՛ լատիններեն, և՛ հունարեն, այդ ժամանակ շատ էին հորինվում և ձևաքիչ ձևով անցնում, օրինակ, սա.

Երեքը՝ ներոնը, Ալքմեոնը և Օրեստեսը, մայրերին սպանեցին:

Հաշվիր՝ կգտնես. ներոնն է սպանողը իր մոր¹⁴⁷:

Ինչո՞վ նման չեն իրար էնոսը և մեր տիրակալը: Տրոյայից

նա տանջամահ արեց հորը, սա էլ սպանեց իր մորը¹⁴⁸:

Մերը քնարն է լարում, աղեղն է լարում պարթևը՝

Տերոս երգասացն է մեկը, Տերոս հեռաշանթը մյուսը:

Հոռոմն այսուհետև ապարանք է. շտապեք դեպի Վեյք¹⁴⁹, քվիրիաներ,

ծթե Վեյքն էլ դրանով արդեն ապարանք չի դարձել:

Սակայն նա չէր փնտրում հորինողներին, իսկ երբ ոմանց վրա մատնութիւն ստացվեց սենատում, նա արգելեց նրանց խիստ պատժի ենթարկել: (3) Մեկ անգամ, երբ նա անցնում էր փողոցով, կինիկոս Իսիդորոսը բոլորի ներկայութեամբ բարձրաձայն ասաց նրան, որ նա լավ է երգում նավալիոսի¹⁵⁰ շարակրութիւնների մասին, իսկ սեփական շարակրութիւններից վատ է զլուխ հանում. իսկ Դատոսը, մի դերասան ատելլանայից, մի երգի մեջ «Ողջ եղիր, հայր իմ, ողջ եղիր, մայր իմ» բառերի ժամանակ շարժումներով ցույց տվեց, թե իբր խմում է և լողում է, դրանով ակներևորեն ակնարկելով Կլավդիոսի և Ագրիպպինայի կործանումը, իսկ եզրափակիչ բառերի ժամանակ՝ «դեպի մահ է ձեր ուղին ընկած», ձեռքով ցույց տվեց սենատը: Բայց և՛ փիլիսոփային, և՛ դերասանին ներոնը ի պատիժ սոսկ աքսորեց Հռոմից ու Իտալիայից— կամ նա արհամարհում էր իր վատ համբավը, կամ չէր ուզում մտքեր խոռովել, ընդունելով վիրավորանքը:

40. Ահա այդպիսի տիրակալի էր աշխարհը հանդուրժում համարյա տասնչորս տարի և, վերջապես տապալեց: Դրա սկիզբը դրեց Գալլիան Հուլիոս Վինդեքսի գլխավորութեամբ, որն այդ ժամանակ պրոպրետոր էր այդ պրովինցիայում: (2) Ներոնին աստղագուշակները վաղուց էին կանխագուշակել, որ վաղ թե ուշ նա գահընկեց կարվի: Այդ ժամանակ էլ նա արտասանել էր իր հայտնի խոսքերը՝ «Արհեստով կկերակրվենք», որպեսզի դրանով արդարացնի իր պարապմունքները կիֆարահար-երգչի արվեստով, որը տիրակալի համար զվարճութիւնն էր, իսկ հասարակ մարդու համար՝ անհրաժեշտութիւն: Ի միջի այլոց, ոմանք խոստանում էին, որ տապալված ժամանակ էլ նա կպահպանի իշխանութիւնը Արևելքի վրա՝ ոմանք ուզակի տալիս էին Երուսաղեմի թագավորութեան

անունը, իսկ շատերն էլ նույնիսկ նրան վերադարձ էին գուշակում նախակին դիրքին: Այդ հույսը նրան ավելի հաճելի էր, և երբ նա կորցրեց, իսկ հետո վերադարձրեց Հայաստանն ու Բրիտանիան¹⁵¹, ապա վճռեց, որ իրեն պատահելիք ճակատագրական աղետներն արդեն կատարվել են: (3) Իսկ երբ Գելփիական Ապոլլոնի գուշակը նրան պատվիրեց վախենալ 73-րդ տարուց, նա վճռեց, որ այդ ժամանակ էլ ինքը կմեռնի— Գալբալի տարիքը նրա մտքովը շանցավ— և այնպիսի հավատով լցվեց դեպի իր մշտնջենական ու բացառիկ երջանկութունը, որ նավախորտակումից հետո, երբ կորան նրա բոլոր թանկարժեք իրերը, նա վստահաբար հայտարարեց բարեկամներին, թե ձկները դրանք դուրս կհանեն իր համար¹⁵²:

(4) Գալլական ապստամբության մասին նա իմացավ այն օրը, երբ երբեմնի սպանել էր իր մորը: Դրան վերաբերվեց հանգիստ ու անհոգ՝ կարող էր նույնիսկ թվալ, թե նա ուրախ էր պատերազմի իրավունքով ամենահարուստ պրովինցիաները կողոպտելու առիթի համար: Նա իսկույն մեկնեց գիմնասիում, հաճույքով դիտեց ըմբիշների մրցութունը. ճաշի ժամանակ նոր զեկուցագրեր եկան, էլ ավելի տագնապալից, բայց նա սառն մնաց և սոսկ սպառնաց, որ խռովարարների բանը վատ կլինի: Իսկ հետո ութ օր նա չէր ուղարկում ո՛չ նամակներ, ո՛չ հրամաններ, ո՛չ էլ հանձնարարականներ, մոռացության տալով ամբողջ գործը: 41. Ի վերջո, վրդովված Վինդեքսի նորանոր վիրավորական էդիկտներից, նա սենատին ուղերձ հղեց, կոչ անելով վրեժխնդիր լինել հանուն իրեն և հայրենիքի, բայց ինքն անձամբ չգնաց, վկայակոչելով կոկորդի հիվանդութունը: Ամենից ավելի նա վրդովվել էր այն բանից, որ Վինդեքսը նրան անվանել էր անպետք կիֆարահար-երգիչ¹⁵³ և կոչել էր ոչ թե ներոն, այլ Ահնեոբարբոս: Այդ առթիվ նա հայտարարեց, որ նորից կընդունի իր տոհմական անունը, որով նրան այդպես վիրավորական պախարակում են, իսկ որդեգրման ժամանակ ընդունածից կհրաժարվի. մնացյալ մեղադրանքները նա համարեց ստապատիր արդեն այն պատճառով, որ իրեն կշտամբում են արվեստ չիմանալու համար, որի մեջ անդադրում պարապմունքներով կատարելության է հասել, և բոլորին հարցնում էր, գիտե՞ն արդյոք ավելի լավ կիֆարահար-երգիչ, քան ինքն է:

(2) Նորանոր լուրերից բռնադատված, նա, վերջապես, ահուդողով ճանապարհվեց Հռոմ: Ճանապարհին նրան քաջալերեց մի մանր նախանշան՝ մի հուշարձանի վրա նա տեսավ հռոմեացի հեծյալի պատկերաքանդակ, որը մազերից քարշ էր տալիս վայր տապալված գալլական զինվորին, և դա տեսնելով ցատկոտեց ուրախութունից և շնորհակալու-

թյուն հայտնեց երկնքին: Բայց այդ ժամանակ էլ նա ճառով հանդես չեկավ ո՛չ սենատի, ո՛չ էլ ժողովրդի առջև, այլ ապարանք հրավիրեց ամենանշանավոր քաղաքացիների, կարճատև խորհրդակցություն արեց նրանց հետ և ապա օրվա ողջ մնացած մասը նրանց ցույց էր տալիս նոր և անսովոր տեսքի ջրային երգեհոններ, բացատրում դրանք մանրամասնորեն, դատողություններ անում յուրաքանչյուրի կառուցվածքի ու բարդության մասին և նույնիսկ խոստացավ թատրոնում ցուցադրել դրանք, և թե վինդեքսին հաճելի լինի:

42. Իսկ երբ նա իմացավ, որ Գալբան էլ է Իսպանիայով անջատվել իրենից, նա փլվեց և հոգեպես ուժասպառ երկար պառկած էր մեռյալի նման, շարտասանելով ոչ մի բառ. իսկ երբ ուշքի եկավ, ապա, պատառոտելով հագուստը, գլխին տալով, գոռաց, որ ամեն ինչ արդեն վերջացած է: Պառավ ստնտուն մխիթարում էր նրան, հիշեցնելով, որ ուրիշ տիրակալների հետ էլ է նման բան պատահել. բայց նա պատասխանում էր, որ իր ճակատագիրը անօրինակ է ու անլուր՝ կենդանի ժամանակ է ինքը կորցնում կայսերական իշխանությունը: (2) Բայց և այնպես իր սովորական սանձարձակությունից ու պարապությունից մազաչափ իսկ չհրաժարվեց. ավելին, երբ պրովինցիայից որոշ լավ լուրեր եկան, նա փարթամ խնջույքի ժամանակ կայտառ երգեր երգեց ապստամբության առաջնորդների մասին, ուղեկցելով դրանք մարմնի շարժումներով, և դրանք իսկույն ընդօրինակվում էին բոլոր կողմերից: Իսկ երբ նա անկատելիորեն հայտնվեց թատրոնում, ներկայացման, որտեղ մի դերասան մեծ հաջողություն ուներ, մարդ ուղարկեց դերասանին ասելու. «Դու օգտվում ես նրանից, որ կայսրը զբաղված է»¹⁵⁴:

43. Ապստամբության հենց սկզբին, ասում են, որ նա ամենահրեշավոր, բայց իր բարքին լիովին համապատասխանող մտքեր էր փայփայում: Պրովինցիաների և զորքի բոլոր պետերին նա ուզում էր սպանել ու փոխել, որպես դավադրության մասնակիցների ու համախոհների. բոլոր վտարանդիներին և Հռոմում բնակվող բոլոր գալլերին կոտորել՝ ոմանց, որպեսզի չհարեն ապստամբությանը, մյուսներին որպես իրենց հայրենակիցների համագործակիցների ու աջակցողների. գալլական պրովինցիաները հանձնել զորքի հոշոտմանը. ամբողջ սենատը խնջույքներում թունասպան անել. մայրաքաղաքը հրկիզել, իսկ փողոցներում վայրի գազաններ բաց թողնել, որպեսզի ավելի դժվար լինի փրկվելը: (2) Հրաժարվելով այդ մտահղացումներից — ոչ այնքան ամոթից, որքան հաջողության հասնելու անվստահությունից — և համոզվելով, որ սլատերազմն անխուսափելի է, նա ժամկետից շուտ պաշտոնից հանեց երկու կոնսուլներին¹⁵⁵ և միայնակ գրավեց նրանց տեղը, վկայակոչելով

աշն մարգարեությունը, որ Գալլիան միայն կոնսուլը կարող է նվաճել: Եվ արգեն ստանձնելով պաշտոնը, մեկ անգամ խնջույքից հեռանալիս, ընկերների հավանությամբ, նա հայտարարեց, որ հենց իրենք Գալլիայում լինեն, նա անգին գուրս կգա զորքի հանդիպման և սոսկ արցունքներով խոտվարարներին զզջման կհակի, իսկ հաջորդ օրը, ուրախանալով ընդհանուր ցնծության մեջ, կերգի հաղթանակի երգը, որը հորինելու է նախօրոք:

44. Պատրաստվելով արշավանքի, նա ամենից առաջ հոգ տարավ քառանիվ սայլակառքեր հավաքել թատերական կահկարասիք տեղափոխելու համար, իսկ իրեն ուղեկցող հարձերի մազերը խուզել տղամարդու պես և զինել տապարներով ու վահաններով, ինչպես ամազոնոհիներ: Հետո նա զորահավաք հայտարարեց ըստ քաղաքացին տրիբունների, բայց ծառայության համար պիտանի ոչ ոք չներկայացավ. այնժամ նա տերերից պահանջեց որոշակի քանակությամբ ստրուկներ և յուրաքանչյուրի ծառայանուց ընտրեց միայն ամենալավերին, շքացատելով նույնիսկ կառավարիչներին ու գրագիրներին: (2) Բալոր գասերին նա հրամայեց զոհաբերել իրենց կարողության մի մասը, իսկ մասնավոր տների ու սենյակների վարձակալներին՝ անհապաղ կայսերական գանձարան բերել մեկ տարվա բնակարանի վարձը: Մեծ բծախնդրությամբ և խրստովությամբ նա պահանջում էր, որ մետաղագրամները մաշված լինեն, արծաթը՝ վերահալված, ոսկին՝ կարգադրոշմված լինի: Եվ շատերը նույնիսկ բացահայտ հրաժարվում էին որևէ նվիրատվութունից, միահամուռ առաջարկելով նրան, որ ավելի լավ է մատնիչներից բռնագանձի նրանց տրված պարգևները: 45. Առավել ևս տտելի դարձավ նա, ջանալով հարբատություն գիզել հացի թանկությունից. այսպես, մեկ անգամ սովի ժամանակ պարզվեց, որ ալեքսանդրիական մի նավ, որի ժամանման մասին հայտարարվել էր, բեռնված է ավազով¹⁵⁶ մարմնամարդական մըրցումների համար:

(2) Այդ ամենով նա այնպիսի զայրույթ հարուցեց, որ չկար լուտանք, որ նրա գլխին շտեղային: Նրա արձանի գագաթին փուփուլ¹⁵⁷ էին հապել հունարեն հետևյալ մակագրությամբ. «Ահա և իսկական մրցություն: Հիմա վա՛յ քեզ»¹⁵⁸: Մի ուրիշ արձանի վզին տիկ էին կապել այսպիսի մակագրությամբ. «Արեցի ես այն ամենը, ինչ կարող էի. բայց դու պարկից շես խոսափի»¹⁵⁹: Սյունների վրա գրում էին, որ իր երգեցողությամբ նա արթնացրեց գալլական արաղաղին¹⁶⁰: Իսկ ջատերը զիշերները գիտավորյալ կռիվներ էին ստրբում ստրուկների հետ և անդագրում կանչում էին Պաշտպանին¹⁶¹:

46. Նրան վախեցնում էին նաև բացահայտորեն շարագուշակ երազները,

գուշակություններն առ նախանշանները, ինչպես հին, այնպես էլ նոր: Նախկինում նա երբեք երազներ չէր տեսնում. իսկ մոր սպանությունից հետո նա սկսեց երազներ տեսնել, որ ինքը նազ է վարում, և դեկը ձևօթից փախչում է, որ իր կին Օկտավիան նրան հրապարտում կանչում է գեպի սև խավար, որ իրեն մերթ ժածկում են թևավոր մրջյունների երամներ, մերթ վրա են տալիս ժողովուրդների արձանները, որոնք դրված են Պոմպեոսի թատրոնում¹⁶², և որ իր սիրելի իսպանական աշխետը¹⁶³ հտակից կապկի է վերածվել, իսկ գլուխը մնացել է ձիու, և բարձր խրրիւնջում է: (2) Դամբարանի դռներն իրենք իրենց բացվեցին և լսվեց մի ձայն, որը ներոնիսն անսնով էր կանչում: Հունվարյան կալենդներին Լարերի հենց նոր զարդարված արձանները փլվեցին հենց այն պահին, երբ սլատրաստվում էին նրանց զոհեր մատուցել. գուշակության ժամանակ Ապորոսը նրան որպես ընծա մատուցեց քանդականախշ քարով մի մասանի, որը պատկերում էր Պրոզերպինայի¹⁶⁴ առևանգումը. բոլոր դասերի հսկա ամբոխի ներկայութչամբ մաղթանք մատուցելիս դժվարութչամբ գտնվեցին Կապիտոլիումի բանալիները: (3) Երբ սենատում ընթերցվում էր նրա ճառը Վինդեբսի դեմ, որտեղ ասված էր, թե հանցագործները կախաժպեն և շուտով արժանի կործանման կենթարկվին, բոլոր կողմերից բացականչութչուններ լսվեցին. «Թող այդպես լինի, ո՛վ Օգոստոս»: Նկատելի էին նաև, որ վերջին ողբերգութչունը, որ նա երգել էր հանգիսատեսների առջև, կոչվում էր «Արտաքսված էդիպը» և սվարտվում էր այս ոտանավորով.

Կինս, հայրս և մայրս կարգադրում են ի՞նձ մեռնել:

47. Մինչ այդ լուրեր հասան, որ խռովութչուն են բարձրացրել նաև մնացյալ զորքերը: Այդ մասին իմանալով խնջույքի ժամանակ, նա պատռոտեց զեկուցագիրը, շրջեց սեղանը¹⁶⁵, գետեին տալով չարգեց իր սիրած երկու գավաթները¹⁶⁶, որոնք «հոմերոսական» էր անվանում, քանի որ նրանց վրայի փորագրութչունները Հոմերոսի պոեմներից էին, և, Լուկուատայից ոսկե տուփի մեջ դրված թույն վերցնելով, մեկնեց Մերվիլիոսի այգիները¹⁶⁷: Ամենահուսալի ազատարձակներին նա ուղարկեց Օստիա նավեր պատրաստելու, իսկ ինքը սկսեց թախանձել պրետորական սրիբուններին ու ցենտուրիոններին ուղեկցել իրեն փախուստի ժամանակ: (2) Բայց սրանք կամ խուսափում էին, կամ ուղղակի հրսժարվում, իսկ մեկը նույնիսկ բացականչեց.

Նրդ մի՞թե այդքան դառնողեա է մահը...¹⁶⁸

Այնժամ նա սկսեց խորհել, չգնա՞ արդյոք ինքը որպես աղերսարկու պարթևների կամ Գալբայի մոտ, չե՛լնի՞ արդյոք սև զգեստներով ժողովրդի դիմաց, որպեսզի ոռոտրալային տրիբունայից դառն արցունքներով ներումն թախանձի այն ամենի համար, ինչ եղել է, իսկ եթե շահջողի գութ շարժել, ապա խնդրի իր համար գեթ Եզիպտոսի կուսակալությունը: Այդ մասին պատրաստի ճառը հետո գտան նրա արկղիկում. նրան, ըստ երևույթին, սարսափը ետ պահեց, որ իրեն ավելի շուտ կպատառտեն, քան ինքը ֆորում կհասնի:

(3) Հետագա խորհրդածությունները նա հետաձգեց հաջորդ օրվան: Բայց գիշերվա կեսին արթնանալով տեսավ, որ թիկնապահները լքել են իրեն: Անկողնուց վեր թռչելով մարդ ուղարկեց ընկերների հտևից, բայց, ոչ ոքից պատասխան չստանալով, ինքը գնաց նրանց ննջարանները: Բոլոր դռները փակ էին, ոչ ոք չէր պատասխանում. նա վերադարձավ ննջարան. այստեղից արդեն փախել էին նաև ծառաները, տանելով նույնիսկ սավանները, գողանալով թույնի տուփը: Նա նետվեց փնտրելու գլադիատոր Սպիկուլոսին կամ ցանկացած ուրիշ փորձված մարդասպանի, որպեսզի նրա ձեռքից մահ ընդունի,— բայց ոչ ոքի չգտավ: «Մի՞թե ես ոչ բարեկամ ունեմ, ոչ էլ թշնամի»,— բացականչեց նա և դուրս վազեց, ասես ցանկանալով Տիրոս նետվել:

48. Բայց առաջին պոռթկումն անցավ, և նա ցանկացավ մի որևէ մեկուսի տեղ գտնել, որպեսզի մտքերն ամփոփի: Ազատարձակ Փառնը նրան առաջարկեց իր կալվածատունը Աղի և Նոմենտանյան ճանապարհների միջև, Հոմից շորս մղոն հեռավորությամբ: Ներոնը, ինչպես որ կար, ոտաբոբիկ, միայն տունիկայով, վրան գցելով սև թիկնոց, փաթաթելով գլուխը և ծածկելով դեմքը թաշկինակով, թռավ ձիու վրա. նրա հետ կային միայն շորս ուղեկիցներ¹⁶⁹, դրանց թվում՝ Սպորոսը:

(2) Առաջին իսկ քայլերից երկրաշարժի հարվածը և կայծակի բռնկումը նրան ահուդողի մեջ գցեցին: Մոտակա ճամբարից նրան հասան զինվորների գոշյունները, որոնք նրան մահ, իսկ Գալբային հաղթանակ էին ցանկանում: Նա լսեց, թե ինչպես անցորդներից մեկը ինչ-որ մի ուրիշին ասաց. «Նրանք հետապնդում են Ներոնին». մեկ ուրիշը հարցրեց. «Իսկ ի՞նչ է խոսվում Հոմում ներոնի մասին»: Նժույզը խրտնեց ճանապարհին ընկած դիակի հոտից, Ներոնի դեմքը բացվեց, ոմն պաշտոնաթող պրետորական ճանաչեց նրան և պատիվ տվեց:

(3) Հասնելով մինչև ոլորանը, նրանք բաց թողեցին ձիերին, և թփերի ու մամխի միջով, եղեգնուտով անցնող արահետով, ոտնակոխ տալով հագուստները, Ներոնը դժվարությամբ հասավ վիլլայի հտևի պատին: Նույն ինքը Փառնը նրան խորհուրդ տվեց միառժամանակ թաքնը-

վել փոսում, որտեղից ավագ էին վերցնում, բայց նա հրաժարվեց ողջ-
ողջ գետնի տակ մտնել: Սպասելով, մինչև որ գաղտնի անցք կփորեին
դեպի վիլլա, նա մի ջրափոսից ափով ջուր վերցրեց խմելու և արտասա-
նեց. «Ահա ներոնի ըմպելիքը»¹⁷⁰: (4) Նրա թիկնոցը մամխից պատա-
ռոտվել էր, նա պոկոտեց թիկնոցի մեջ խրված փշերը, իսկ հետո փոր-
ված նեղ անցքով շորեքթաթ հասավ մինչև առաջին պատահած խցիկը և
այնտեղ նետվեց մահճին, բարակ մի ներքնակի, որը ծածկված էր հնա-
մաշ մի թիկնոցով: Նա ուզեց ուտել և նորից խմել. առաջարկված կոշտ
հացը մերժեց, բայց գաղջ ջրից մի փոքր խմեց:

49. Ամեն կողմից բոլորը նրան խնդրում էին շուտով հեռանալ
սպառնացող խայտառակությունից: Նա կարգադրեց վերցնել իր շափերը
և իր աչքի առջև դրանց համեմատ փոս փորել, հավաքել մարմարի կտոր-
ներ, ինչպիսին որ կգտնվեն, բերել ջուր ու փայտ¹⁷¹, որպեսզի ավար-
տեն գործը դիակի հետ: Յուրաքանչյուր հրամանը տալիս նա հեկեկում
էր և ամբողջ ժամանակ կրկնում. «Ինչպիսի՜ մեծ դերասան է կործան-
վում»: (2) Մինչ նա դանդաղում էր, մի ճևպրնթաց սուրհանդակ Փառ-
նին նամակ բերեց. նա խլեց նամակն ու կարդաց, որ սենատը իրեն թըշ-
նամի է հայտարարել և փնտրում է, որպեսզի մահապատժի ենթարկի
ըստ նախնյաց սովորույթի: Նա հարցրեց, թե այդ ինչ մահապատիժ է.
ասացին, որ հանցագործին մերկացնում են, գլուխը սեղմում կաղապա-
րով, իսկ մարմինը ճիպոտահարում մինչև մահանալը: Սարսափահար,
նա ճանկեց երկու դաշույն, որ բերել էր հետը, փորձեց յուրաքանչյուրի
սայրը, հետո նորից թաքցրեց, արդարանալով, թե ճակատագրական պա-
հը դեռ չի հասել: (4) Մերթ նա Սպորոսին համոզում էր ողբ ու կական
սկսել, մերթ խնդրում էր, որ մեկնումեկը իր օրինակով օգնի իրեն դի-
մավորելու մահը, մերթ հայհոյում էր իրեն անվճռականության համար
այսպիսի խոսքերով. «Ես նողկալի եմ ապրում, անարգաբար, ոչ վայել
Ներոնին, ոչ վայել, պետք է խելամիտ լինել այսպիսի մի ժամանակ, դե՛,
արիացիր»: Արդեն մոտենում էին հեծյալները, որոնց հանձնարարված
էր կենդանի բռնել նրան: Հսելով նրանց ձայները, նա դողդողալով ասաց.

Սրբնթաց վարդող ձիերի դոփյունը ծակում է ականջներս,—¹⁷²

և խնդրագրերի գծով իր խորհրդական էպաֆրոդիտեսի օգնությամբ
սուրն իր կոկորդը խրեց: (4) Նա դեռևս շնչում էր, երբ ներխուժեց ցեն-
սուրիոնը և, թիկնոցով սեղմելով նրա վերքը, ձևացրեց, թե իբր ուզում
է օգնել նրան: Նա միայն կարողացավ պատասխանել՝ «Ուշ է»,— և՛
«Ահա նա, հավատարթությունը»,— և այդ խոսքերով ավանդեց հոգին:

Նրա աչքերն անշարժացան ու դուրս թռան բներից, սաքսափելի էր դրանց նայելը:

Ուղեկիցներին նա ամենից առաջ և ամենից ավելի թախանձում էր, որ իր գլուխը որևէ մեկի ձեռքը չընկնի և որ իր մարմինը, ինչ էլ որ լինի, ամբողջությամբ հրկիզվի: Դրա թույլտվությունը տվեց Իկելուսը՝ Գալբայի ազատարձակը, որը խոտովության սկզբում բանտ էր նետվել և նոր էր միայն ազատվել: 50. Նրա թաղումը նստեց երկու հարյուր հազար: Նրան փաթաթել էին սպիտակ, ոսկեկար գործվածքի մեջ, որը հագնում էր նոր տարուն: Նրա աճյունը հավաքեցին ստնտուներ էկլոգան ու Ալեքսանդրիան և հարճ Ակտան, թաղելով այն Դամիցիոսների տոհմական հանգստարանում, որը Այգբըլուրի¹⁷³ վրա է Մարսյան դաշտի կողմից: Հանգստարանում նրա սափորը պատրաստված էր կարմիր, վերևի զոհասեղանը՝ էտրուսկյան¹⁷⁴, շուրջը եզած ցանկապատր՝ ֆասոսյան մարմարիոնից:

51. Նա մոտավորապես միջահասակ էր, մարմինը ծածկված էր բծերով ու վատ հոտ էր արձակում, մազերը շիկակարմիր էին, դեմքը՝ ավելի շուտ գեղեցիկ, քան հաճելի, աչքերը գորշ էին և թեթևակի կարճատես, վիզը հաստ, փորը չափից դուրս ցցված, ոտքերը շատ բարակ: Նա գերազանց առողջության տևր էր՝ շնայած անսահման անժուժկալուծյանը, տասնչորս տարվա ընթացքում նա միայն երեք անգամ էր հիվանդացել, այն էլ շհրաժարվելով ոչ գինուց, ոչ էլ իր մյուս սովորություններից: Նրա տեսքը և զգեստները կատարելապես անվայելուչ էին՝ մազերը նա միշտ գանգրացնում էր շարք առ շարք¹⁷⁵, իսկ հունական ուղևորության ժամանակ դրանք նույնիսկ իջեցնում էր ծոծրակին, հագնում էր ճաշկերույթի մետաքսե զգեստ¹⁷⁶, պարանոցը փաթաթում էր թաշկինակով և այդպես ելնում ժողովրդին հանդիման, գոտկարձակ և բոկոտն:

52. Մանուկ ժամանակ նա ուսումնասիրել էր գրեթե բոլոր ազնիվ գիտությունները. միայն փիլիսոփայությունից նրան շեղել էր մայրը, հավատացնելով, որ ապագա տիրակալի համար այն խոչընդոտ է, իսկ հին հռետորներին ուսումնասիրելուց՝ Սենեկան, որը ցանկանում էր, որպեսզի իր աշակերտն ավելի երկար պահպանի խանդավառությունը դաստիարակի հանդեպ: Դրա համար էլ նա դիմեց պոեզիային, հաճույքով և առանց դժվարության հորինելով բանաստեղծություններ: Ծիշտ շին նրանք¹⁷⁷, ովքեր կարծում են, թե իբր նա օտարի երկերը հրամցնում էր իբրև իր սեփականը՝ ես ձեռքիս մեջ պահել եմ աղյուսներ ու տետրակներ նրա ամենահայտնի բանաստեղծություններով, գրված իր իսկ ձեռքով, և երևում էր, որ գրանք արտագրված շին գրքից կամ արտասանելիս, այլ գրվել են տեղնուտեղը, երբ մտահղացվել և հորինվել են,—

այնքան շատ են նրանցում ջնջումները, ուղղումներն ու ընդմիջարկությունները: Ոչ նվազ ջանասիրությամբ նա գրադվում էր նաև նկարչությամբ և քանդակագործությամբ:

53. Բայց ամենից ավելի նրան հրապուրում էր հաջողության ծարավը, և նա խանդում էր բոլորին, ով որևէ բանով գրգռում էր ամբոխի ուշադրությունը: Լուրեր էին պտտվում, թե իր թատերական հաղթանակներից հետո նա պատրաստվում էր սահմանված հինգ տարուց հետո հանդես գալ Օլիմպոսում որպես ըմբիշ. իսկապես, ըմբշամարտով նա մշտապես էր պարապում, իսկ Հունաստանում բոլոր մարմնամարզական մրցումների ժամանակ ստադիոններում նա տեղ էր գրավում գետնին, դատավորների միջև, և եթե որևէ զույգ ըմբշամարտում չափից ավելի էր հեռանում, նա ձեռքերով հրում էր նրանց իրենց տեղերը: Հավասարվելով, ընդհանուրի կարծիքով, երգեցողության մեջ Ապոլլոնին և ձիարշավում՝ Արեգակին, նա պատրաստվում էր նաև չափվել Հերկուլեսի հետ նրա սխրագործություններում. ասում են, որ պատրաստ էր նաև այն առյուծը, որի դեմ նա պետք է ժողովրդի առջևներկ ելներ ամֆիթատրոնում և սպաներ նրան լախտով կամ խեղդեր ձեռքերով: 54. Իր կյանքի վերջին օրերին նա բացեիբաց կրդվում էր, որ եթե իր իշխանությունը կանգուն մնա, սպա հաղթական խաղերում նա ինքր հանդես կգա և՛ երգեհոնով, և՛ սրինգով, և՛ սլարկապղուկով, իսկ վերջին օրը՝ նույնիսկ որպես պարող, և կպարի¹⁷⁸ Վերյիլիոսի «Տուրնոսը»: Ոմանք հավատացնում են, որ դերասան Պարիսին էլ նա է սպանել որպես վտանգավոր մրցակցի: 55. Անմահության և հավիտենական փառքի նրա ցանկությունը մշտական էր, բայց ոչ բանական ձևով էր արտահայտվում՝ շատ տեղերի և առարկաների նա սովորական անվանումների փոխարեն նորն էր տալիս, սեփական անունով. այսպես, ապրիլ¹⁷⁹ ամիսը նա անվանեց ներոնիում, իսկ Հռոմ քաղաքը պատրաստվում էր վերանվանել Ներոպոլիս:

56. Բոլոր սրբություններին նա արհամարհանքով էր վերաբերվում, բացի սոսկ Ասորական աստվածուհուց¹⁸⁰, այն էլ հետո նրանից այնքան էր պարշում, որ միզում էր վրան: Նրան նոր սնահավատություն էր համակիլ, և միայն նրա նկատմամբ էր պահպանում համառ նվիրվածություն՝ ոմն անհայտ պլեբեյից նա որպես ընծա աղջկա մի փոքրիկ պատկերաքանդակ էր ստացել որպես պահպանիչ բոլոր խարդավանքներից, և իրր դրանից անմիջապես հետո դավադրություն էր բացահայտվել, նա սկսել էր այն մեծարել բոլոր աստվածներից առավել, օրը երեք անգամ գոհ մատուցելով նրան և պահանջելով, որ բոլորը հավատան, թե իբրև այդ պատկերաքանդակը նրա առջև բացում է ապագան: Մահից մի քա-

նի ամիս առաջ նա գուշակութիւնն էր կատարել նաև զոհակենդանիների փորոտիքով, բայց բարենպաստ պատասխան չէր ստացել:

57. Վախճանվեց նա կյանքի երեսուներկուերորդ տարում, այն նույն օրը, երբ երբեմնի սպանել էր Օկտավիային¹⁸¹: Ժողովրդի ցնծութիւնն այնպիսին էր, որ ամբոխը վազվզում էր ամբողջ քաղաքով մեկ, փռյուզիական թասակներ¹⁸² դրած: Սակայն կային նաև այնպիսիները, ովքեր դեռևս երկար ժամանակ զարդարում էին նրա դամբարանը զարնանային և ամառային ծաղիկներով և ոռոտրալային տրիբունաների վրա մերթ ցուցադրում էին նրա քանդակները կոնսուլական տոգայով, մերթ էդիկտները, ուր ասվում էր, թե նա կենդանի է և շուտով կվերադառնա ի սարսափ իր թշնամիների: (2) Նույնիսկ պարթևական Վաղարշ (Վոլոգեզ) արքան դեսպաններ ուղարկելով սենատ դաշինքը վերանորոգելու համար, հատուկ հաստատակամութեամբ խնդրում էր, որ Ներոնի հիշատակը շարունակի պատվով: Եվ նույնիսկ քսան տարի անց, երբ ես պատանյակ էի, հայտնվեց անհայտ կոշման տեր մի մարդ, որն իրեն հրամցընում են որսլես Ներոն¹⁸³, և նրա անունն այնպիսի հաջողութիւն ուներ պարթևների մոտ, որ նրանք գործուն կերպով նրան աջակցում էին և դժվարութեամբ միայն համաձայնեցին նրան հանձնել:



ԳԱԼՐԱ

1. Կեսարների տոհմը ներոնով դադարեց¹, Դեոևս վաղ այդ էին մատնացույց անում շատ նախանշաններ, իսկ հատկապես ակնառու՝ հետևյալ երկուսը: Ժամանակին Լիվիան, Սզոստոսի հետ ամուսնանալուց անմիջապես հետո, գնում էր Վեյքի իր կալվածատունը, երբ հանկարծ նրա գլխավերևում հայտնվեց մի արծիվ՝ մագիլների մեջ ճերմակ հավ բռնած, որի կտցին կար դափնու ճյուղ², և ինչպես առևանգել էր,

այնպես էլ իջեցրեց հավը Լիվիայի ծնկներին: Լիվիան որոշեց հավին կերակրել, իսկ ճյուղը տնկել, և այնքան շատ հավի ճտեր բազմացան, որ մինչև հիմա էլ այդ վիլյան կոչվում է «Հավերի», իսկ դափնու պուրակն այնպես աճեց-տարածվեց, որ կեսարները տրիումֆների համար այնտեղից էին դափնիներ վերցնում, իսկ տրիումֆից հետո նորերն էին տնկում նույն տեղում. և նկատել էին, որ յուրաքանչյուրի վախճանվելիս շորանում էր նաև նրա տնկած ծառը: Եվ ահա, ներոնի կյանքի վերջին տարում ամբողջ պուրակը շորացավ արմատից, և այնտեղ եղած բոլոր հավիլը սատկեցին: Եվ դրանից հետո իսկույն կայծակը հարվածեց Կեսարների տաճարին³, և բոլոր արձանների գլուխները միանգամից ընկան, իսկ Սզոստոսի արձանի ձեռքից նույնիսկ գայիստն էր ընկել:

2. Ներոնին ժառանգեց Գալբան, որը Կեսարների տան հետ ոչ մի աղբակցությամբ կապված չէր, բայց, անվիճելիորեն, շատ ազնվատոհմիկ մի այր էր, ականավոր ու հին տոհմից՝ իր արձանների վրա մակա-

գրում էր Քվիթտոս Կատուլոս Կապիտոլիումացու ծոռնորդի, իսկ կայսր դառնալով, իր ատրիումում ցուցադրեց իր տոհմածառը, որ հոր գծով հառնում էր մինչև Յուպիտերը, իսկ մոր գծով՝ Պասիֆայան՝ Մինոսի⁴ կինը:

3. Այդ տոհմի բոլոր անձանց և գործերը թվարկելը երկար կլիներ, համառոտակի կանգ կառնեմ միայն նրա բուն գերդաստանի վրա: Սուլպիցիոսներից առաջինը ով ստացավ Գալբա մականունը և ինչու՝ ճշտությամբ հայտնի չէ: Ոմանք կարծում են, որ այդ տոհմապետը իսպանական ինչ-որ քաղաքի երկար և ապարդյուն պաշարումից հետո ի վերջո հրդեհեց այն գալբանում⁵ քսված ջահերով. մյուսները՝ որ երկարատև հիվանդության ժամանակ նա մշտապես գալբոս էր կրում, այսինքն բրդի մեջ փաթաթված դեղ. ուրիշները՝ որ նա շատ գեր է եղել, որը գալբերենով կոչվում է «Գալբա». կամ ընդհակառակը, որ նա նիհար է եղել, ինչպես այն միջատները, որոնք հանդիպում են լեռնային կաղնիների մեջ և «Գալբա» անունն են կրում: (2) Այդ գերդաստանը հուշակեց կոնսուլյարիս Սերվիոս Գալբան⁶, իր ժամանակի գրեթե ամենապերճախոս հոետորը. նրա մասին ասում են, որ իսպանիայում պրոպրետոր եղած ժամանակ նա ուխտադրժորեն կոտորեց երեսուն հազար լուզիտանացիների, որի պատճառով էլ բռնկեց Վիրիատիոսի պատերազմը⁷: Նրա թոռը⁸ որպես լեզատ էր ծառայում Հուլիոս Կեսարի մոտ Գալլիայում, բայց վերջինս նրան թույլ չէր տվել կոնսուլություն ստանալ, զայրացած նա հարել էր Բրուտոսի և Կասսիոսի դավադրությանը և դատապարտվել էր Պեդիուսի օրենքով: (3) Նրանից են սերում կայսր Գալբայի պապը և հայրը⁹: Պապը համբավ ստացավ ոչ այնքան աստիճանով. պրետորությունից ավելի բարձր աստիճանի նա չհասավ— որքան գիտական պարապմունքներով, հրապարակելով ծավալուն և ջանասիրաբար կազմված սյառմություն: Իսկ հայրը հասավ կոնսուլության և, չնայած կարճ հասակին, մեջքի կուզին ու միջակ հոետորական ընդունակություններին, եռանդով հանդես էր գալիս դատարաններում: (4) Նա ամուսնացած էր սկզբնապես Մումիա Աբաիկայի՝ Կատուլոսի թոռան և այն կուլիոս Մումիոսի ծոռան հետ, որը ավերել էր Կորնթոսը, իսկ հետո Լիվիա Օցելլինայի՝ մի հարուստ և գեղեցիկ կնոջ հետ. ասում են, որ սա ինքն էր ձգտում այդ ամուսնությանը Գալբայի ազնվատոհմիկության պատճառով. և երբ ի պատասխան կնոջ նկրտումներին, չջանկանալով խաբեբա դուրս գալ, նա մեկուսի մի վայրում վրայից դեն գցեց իր հագուստը և ցույց տվեց նրան իր այլանդակությունը— դա միայն ավելացրեց Լիվիա Օցելլինայի կիրքը: Աբաիկայից նա ուներ Գայոս և Սերվիոս որդիներին: Ավազը Գայոսը՝ վատնելով կարողությունը, հեռացավ

Հոռմից, և երբ Տիրեբրիոսը չթողեց նրան հարկ եղած ժամանակին մասնակցել պրոկոնսուլուսթյան վիճակահանութեանը, նա ինքնասպանութիւն գործեց:

4. Սերվիոս Գալբան՝ կայսրը, ծնվել է Մարկոս Վալերիոս Մեսսալայի և Գնեոս Լենտուլոսի կոնսուլութեան օրոք, իններորդ օրը մինչև հունվարյան կալենդները¹⁰, կալվածատանը, որը գտնվում է Տարրացի-նայի մոտ գտնվող բլրի վրա, ձախ կողմից, երբ գնում ես Ֆունդի: Որդեգրվելով իր խորթ մայր Լիվիայի կողմից, նա ընդունեց նրա ազգանունը Օցելլա մականունի հետ միասին և փոխեց անունը, անվանվելով Լուկիոս՝ Սերվիոսի փոխարեն—այդ անունն էր նա կրում մինչև կայսր դառնալը: Ինչպես հայտնի է, Օգոստոսը, երբ մանուկ Գալբան ողջունում էր նրան իր հասակակիցների հետ, կշմտեց նրա այսը և ասաց՝ «Եվ դո՛ւ էլ, փոքրիկս, կճաշակես իմ իշխանութիւնը»¹¹: Իսկ Տիրեբրիոսը իմանալով, որ Գալբան կայսր է դառնալու, բայց միայն ծերութեան հասակում, ասաց՝ «Թող ապրի, որքանով որ դա մեզ չի վերաբերում»: (2) Նրա պապը մեկ անգամ զոհ էր մատուցում կայծակի հարվածից հետո, երբ հանկարծ մի արծիվ խլեց նրա ձեռքից զոհակենդանու փորոտիքը և տարավ խոզակաղնով ծածկված կաղնու վրա. նրան ասացին, որ այդ իր տոհմին գերագույն իշխանութիւնն է հռչակում, թեև ոչ շուտ, իսկ նա քմծիծաղով պատասխանեց՝ «Ինչպե՞ս չէ— երբ ջորին կհղիանա»: Եվ հետագայում, երբ Գալբան բարձրացրել էր իր խոտվութիւնը, ջորին հղիացավ¹², և դա ամենից ավելի նրան վստահութիւն ներշնչեց՝ ուրիշները սարսափում էին այդ գարշելի հրաշքից, իսկ նա էր միայն այդ համարում ամենաուրախ նշանակ, հիշելով զոհաբերութիւնը և պապի խոսքերը: (3) Զափահասութեան օրը¹³ նա երազում տեսավ Ֆորտունային, որն ասաց, որ հոգնել է նրա շեմքին կանգնելուց և, եթե նա շտապի ընդունել իբեհ, ինքը քածին կընկնի առաջին պատահածին: Արթնանալով, նա լայն բացեց դուռը և շեմքին գտավ աստվածուհու պղնձյա անդրին, ավելի քան մեկ բազկաչափ երկարութեամբ: Կրծքի վրա պահած նա տարավ այն Տուսկուլում, որտեղ սովորաբար անցկացնում էր ամառը, նրան մի սենյակ նվիրաբերեց և այդ պահից ամեն ամիս նա սլատվում էր նրան զոհերով և ամեն տարի՝ գիշերային տոնախմբութիւններով:

(4) Գեոևս հասուն տարիքին շհասած, նա արդեն անհողողդ պահպանում էր այն հին քաղաքացիական սովորույթը, որը բոլորից մոռացված էր և պահպանվել էր միայն նրանց տանը՝ բոլոր ազատարձակները և ստրուկները օրը երկու անգամ հավաքվում էին նրա առջև և մեկ առ մեկ առավոտյան ողջունում, իսկ երեկոյան հրածեշտ էին տալիս: 5. Մյուս ազնիվ գիտութիւնների թվում նա ուսումնասիրել էր նաև իրա-

վունք: Կատարեց նա նաև ամուսնական պարտքը¹⁴. Բայց կորցնելով իր կին Լեպիդային և նրանից ծնված երկու որդիներին, նա ամուրի մնաց և ոչ մի առաջարկություն— նույնիսկ Ագրիպպինայի առաջարկությունը, չկարողացավ հակել նրան ամուսնության, որը իր ամուսին Դոմիցիոսի մահից հետո բոլոր միջոցներով դարպասում էր դեռևս շամուրիացած Գալբային, այնպես որ Լեպիդայի մայրը մեկ անգամ մատրոնաների հավաքույթում հայհոյեց նրան և նույնիսկ հարվածեց: (2) Ամենից ավելի նա հարգանք էր մատուցում Լիվիա Ավգուստային, և նրա կենդանության օրոք Գալբան օգտվում էր նրա ողորմածությունից. և նրա կտակով քիչ էր մնում հարուստ մարդ դառնար— նրան ժառանգություն էր թողնված հինգ միլիոն, ամենամեծ նվերը, բայց քանի որ այն նշված էր ոչ թե բառերով, այլ թվերով, Լիվիայի ժառանգորդ Տիբերիոսը կրճատեց նվերը մինչև հինգ հարյուր հազարի և այդ էլ չվճարեց:

6. Պատվավոր պաշտոններ նա գրավեց սահմանված տարիքից վաղ: Պրևտոր եղած ժամանակ նա ֆլորալիաներում¹⁵ ցույց տվեց մինչ այդ չտեսնված մի հանդիսախաղ՝ լարախաղաց փղերի: Այնուհետև շուրջ մեկ տարի կառավարեց Աքվիտանիա¹⁶ պրովինցիան: Հետո նա եղավ հերթական կոնսուլ¹⁷ վեց ամիս շարունակ, ընդ որում այնպես պատահեց, որ այդ պաշտոնում նրա նախորդը Լուկիոս Դոմիցիոսն էր, Ներոնի հայրը, իսկ հաջորդը՝ Սալվիոս Օտոնը՝ Օտոնի հայրը, ակնհայտ կանխագուշակում այն բանի, որ ապագայում նա կայսր է դառնալու երկուսի որդիների միջև ընկած ժամանակամիջոցում:

(2) Գայոս Կեսարը նրան նշանակեց վերին Գերմանիայի լեգատ Գետուլիկոսի¹⁸ փոխարեն: Ժամանելով լեգեոնների մոտ, նա հաջորդ օրն իսկ արգելեց զինվորներին ծափահարել այդ ժամանակ տեղի ունեցող տոնակատարության միջոցին, գրավոր հրամանով կարգադրելով բոլորին ձեռքերը թիկնոցների տակ պահել: Տեղնուտեղը ճամբարում տարածվեց մի ոտանավոր՝

Այդ Գալբան Գետուլիկոսը չէ՝ սովորի՛ր, զինվոր, ծառայել:

(3)՝ Նույն խստությամբ նա արգելեց նաև արձակուրդի վերաբերյալ խնդրագրերը: Զինվորներին՝ և՛ վետերաններին, և՛ նորակոչիկներին, նա կոփում էր մշտական աշխատանքով. բարբարոսներին, որոնք արդեն ճեղքել-հասել էին մինչև բուն Գալլիա, նա կասեցրեց, իսկ իր՝ Գայոսի ներկայությամբ այնպես լավ ցուցադրեց և՛ իրեն, և՛ լեգեոնները¹⁹, որ բոլոր պրովինցիաներից հավաքված անթիվ-անհամար զորքերից ոչ մեկը ավելի շատ գովասանքներ չէր և շատ պարգևների շարժանացավ: Իսկ նա ինքը հատկապես աչքի ընկավ նրանով, որ դաշտային ուսուցում վա-

հանը ձևորին անցկացնելուց հետո կայսեր մարտակառքի ետևից վազեց ամբողջ քսան մղոն²⁰,

7. Գայոսի սպանության լուրն առնելով շատերը նրան խորհուրդ տվեցին օգտվել առիթից, բայց նա որոշեց մի կողմ մնալ: Դրանով նա ձևոք բերեց Կլավդիոսի մեծ համակրանքն իր նկատմամբ, ընդունվեց նրա բարեկամների շրջանակը և այնպիսի պատվի հասավ, որ նրա հանկարծական և ծանր հիվանդության պատճառով նույնիսկ հետաձգվեց արշավանքը Բրիտանիա: Նա առանց վիճակահանության երկու տարով ստացավ պրոկոնսուլություն Աֆրիկայում²¹, որպեսզի կարգ ու կանոն հաստատի այդ պրովինցիայում, որը տագնապալից վիճակում էր ներքին գժտությունների և բարբարոսների ապստամբության պատճառով: Եվ նա ջանասեր խստությամբ և արդարացիությամբ կարգ ու կանոն հաստատեց նույնիսկ մանրուքներում: (2) Մի զինվոր արշավանքի ժամանակ օգտվեց պարենամթերքի պակասությունից, որպեսզի հարյուր զինարով վաճառի մի շափ ցորեն՝ իր օրապահիկի մնացորդը. զինվորին մերկացրին, և Գալբան արգելեց կերակրել նրան, երբ նրա հացը վերջանա. զինվորը քաղցից մահացավ: Իսկ դատարանում քննարկելով դատավեճը մի բեռնակիր ջորու մասին, ուր կողմերից ոչ մեկը չէր կարողանում համոզիչ կերպով ապացուցել իր սեփականության իրավունքը ո՛չ փաստերով, ո՛չ վկայություններով, և ճշմարտությունը պարզելը դժվար էր, նա կարգադրեց ջորուն կապած աչքերով տանել ջուր խմելու սովորական վայրը, այնտեղ արձակել աչքերը, և ում մոտ որ վազի, նրան էլ տալ ջորին:

8. Իր այդ ծառայությունների համար Աֆրիկայում և նախկին ծառայությունների համար Գերմանիայում նա ստացավ տրիումֆային զարդարանքներ և միանգամից երեք կուլեգիումներում ընտրվեց քուրմ՝ քվիմդեցիմվիրներին, տիցինների և ավգուստալների թվում²²: Եվ այդ պահից գրեթե մինչև Ներոնի տիրակալության կեսերը նա ապրում էր մեծին մասամբ հանգստի մեջ, և նույնիսկ զբոսանքների այլ կերպ չէր դուրս գալիս, քան առանց հետն ունենալու հարևան սայլակառքում ոսկով մեկ միլիոն²³:

Վերջապես, երբ նա գտնվում էր Ֆոնդոք քաղաքում, նշանակում ստացավ Տարրակոնյան Իսպանիա: (2) Եվ պատահեց, որ երբ նա ներկայացավ պրովինցիա և զոհ մատուցեց համայնքի տաճարում, ապա բուրվառով կանգնած սպասարկող տղայի մազերը հանկարծ ճերմակեցին— և ոմանք դրանում տեսան տիրակալների փոփոխման նշան՝ իբրև թե երիտասարդից հետո գալու է ծերունի, այսինքն՝ Ներոնից հետո Գալբան: Իսկ քիչ ժամանակ անց Կանտաբրիայում կայծակը հարվածեց

լճին, և այնտեղ գտան տասներկու տապաք՝ գերագույն իշխանության ոչ երկիմաստ մի նշան: 9. Պրովինցիան նա կառավարեց ութ տարի, բայց ոչ անընդմեջ և տարբեր կերպ: Սկզբնապես նա խիստ էր ու կարուկ և նույնիսկ շափ շփտեր զանցանքները պատժելու մեջ: Այսպես, դրամը մանրելիս թույլ տված խաբեության համար մի լուծաշափոխի ձևով երբ նա կտրել տվեց և կարգադրեց մեխերով գամել սեղանին, մի խնամակալի, որը թունավորել էր մի որրուկի, որպեսզի նրանից հետո ժառանգությունը ինքը ստանա, խաչել տվեց, իսկ երբ սա սկսեց դիմել օրենքների օգնությանը, հավաստիացնելով, որ ինքը Հոռմի քաղաքացի է, ապա Գալբան, ասես թեթևացնելու համար նրա պատիժը, կարգադրեց հանուն մխիթարանքի և պատվի նրան փոխադրել մեկ ուրիշ՝ մնացյալներից ավելի բարձր և սպիտակ ներկված խաչի վրա: Բայց աստիճանաբար նա անգործունեության ու պարապության մեջ ընկավ, քանի որ ներոնին նա ոչ մի առիթ չէր ուզում տալ և քանի որ, ըստ նրա, ոչ ոքի կարելի չէ ստիպել հաշիվ տալու անգործունեության համար:

(2) Նա դատ էր վարում Նոր Կարթագենում²⁴, երբ իմացավ Գալլիայում տեղի ունեցած ապստամբության մասին՝ նրանից օժնություն էր խնդրում Աքվիտանիայի լեգատը: Հետո նամակ եկավ նաև Վինդեբսից՝ մարդկային ցեղի ազատարար և առաջնորդ դառնալու կոչով²⁵: Կարճատև տատանումներից հետո նա այդ առաջարկը ընդունեց՝ մասամբ վախից դրդված, մասամբ էլ հույսից: Մի կողմից, արդեն նրա ձեռքն էր անցել Ներոնի հրամանը նրան մահապատժի ենթարկելու մասին, որը գաղտնի ուղարկվել էր պրոկուրատորներին, մյուս կողմից՝ նրան առույգություն էին ներշնչում բարենպաստ գուշակություններն ու նախանշանակները, ինչպես նաև մի ազնվատոհմիկ օրիորդի մարգարեությունները — առավել ևս, որ այդ ժամանակ Կլոնիական Տուպիտերի քուրմը երազի ներշնչմամբ արբավայրից դուրս բերեց ճիշտ այնպիսի նախագուշակություններ, որ ճիշտ նույն կերպ արտասանել էր իմաստուն կույսը երկու հարյուր տարի առաջ. իսկ դրանցում ասված էր, որ կգա ժամանակ, երբ աշխարհի տերն ու տիրակալը կհայտնվի Իսպանիայից:

10. Եվ ահա, ասես պատրաստվելով ստրուկներին ազատություն տալ, նա բարձրացավ տրիբունա, ի ցույց դնելով բազում պատկերները նրանց, որոնց դատապարտել և մահապատժի էր ենթարկել Ներոնը, ի տես ամենքի մատնանշելով իր կողքին գտնվող մի ազնվատոհմիկ տղայի, որն աքսորվել էր Բալբարյան ամենամոտիկ կղզին և դիտավորյալ կանչվել էր այստեղ, նա դառնազին ճառ արտասանեց պետության որության մասին, նրան ողջունեցին որպես կայսրի, և այն ժամ նա հույակեց իրեն սենատի և հռոմեական ժողովրդի լեգատ: (2) Վերացնելով

դատական գործերը, նա սկսեց պրովինցիայի բնակիչներից լեգեոններ ու սմանդակ ղորքեր հավաքագրել ի լրումն իր նախկին ղորքին, որ կազմված էր մեկ լեգեոնից, երկու հեծյալ ջոկատներից և երեք կոհորտաներից²⁶։ Տեղական ավագանու ավագագույն և ամենաբանիմաց քաղաքայիններից նա հիմնեց սենատի նման մի բան և ամեն մի անհրաժեշտության դեպքում խորհրդակցում էր նրանց հետ կարևոր գործերի մասին։ (3) Հեծյալների դասից նա ընտրեց երիտասարդների, որոնք, շարժվելով սակյա մատանիներից, պետք է անվանվեին «կամավորներ»²⁷ և զինվորների փոխարեն պահակություն անեին նրա ննջարանի մոտ։ Իսկ պրովինցիաներ նա էդիկտներ հղեց, կոչ անելով ամենքին և յուրաքանչյուրին միանալ իրեն և օգնել ընդհանուր գործին ով ինչով կարող է։ (4) Մոտավորապես այդ նույն ժամանակ, քաղաքն ամրացնելիս, որտեղ նա նշանակել էր ղորքերի հավաքը, գտնվեց գրազարդ քարով մի սակյա հին մատանի, որը պատկերում էր Հաղթանակը տրոֆեյով²⁸։ Իսկ դրանից հետո իսկույն ծովը Դերտոզա բերեց ալեքսանդրիական զենքով բեռնված մի նավ՝ առանց ղեկակալի, առանց նավաստիների, առանց ճանապարհորդների, այնպես որ արդեն ոչ ոք չէր կասկածում, որ սկսվում է արդարացի սրբազան պատերազմ աստվածների հովանավորության ներքո։

Հանկարծ անակնկալ ու անսպասելի կերպով քիչ էր մնում ամեն ինչ ձախողվելու։ (5) Հեծյալ ջոկատներից մեկը սկսեց զղջալ երդումը խախտելու համար և Գալբայի ճամբարին մոտենալու ժամանակ փորձեց անջատվել նրանից, դժվարությամբ հաջողվեց նրանց հնազանդ պահելու իսկ ստրուկները, որոնք խարդախ մտադրությամբ Գալբային էր ընծայել Ներոնի ազատարձակը, քիչ էր մնում նրան խողխողեին յաղնիք տանող ճանապարհին ընկած նեղ անցուղում, նրան փրկեց այն, որ ստրուկներն սկսեցին խրախուսել մեկը մյուսին ձեռքից բաց շթողնելու առիթը։ նրանց հարցրեցին, թե ինչ առիթի մասին է խոսքը, և խոշտանգումով խոստովանություն կորզեցին։ 11. Այդ բոլոր դժբախտություններին ավելացավ նաև Վինդեբսի կործանումը— դա ցնցեց Գալբային ամենից առավել և, ասես դատապարտյալ, նա պատրաստ էր ինքնասպան լինելու։

Բայց երբ Հռոմից սուրհանդակներ եկան, և նա իմացավ, որ Ներոնը կործանվել է, և բոլորը իրեն են երդում տվել, այնժամ ցած դրեց լեզուսի կոշումը, ընդունեց Կեսարի անուն և ճանապարհ ընկավ, հագած պինդորական թիկնոց, դաշույնը կախած կրծքին.— տոգա նա հագավ միայն այն ժամանակ, երբ սպանվեցին Հռոմում նոր դավադրություն սարքած պրետորականների պետ Նիմֆիդիոս Սաբինոսը, իսկ Գերմա-

նիայում և Աֆրիկայում՝ լեզատներ Զոնտեոս Կապիտոնը և Կլոդիոս Մակրոսը:

12. Ճանապարհին նրանից առաջ էր անցնում նրա մոլեզնության ու ժլատության համբավը: Ասում էին, որ Իսպանիայի ու Գալլիայի այն քաղաքները, որոնք հապաղել էին հարել նրան, նա պատժում էր ծանր պարհակներով կամ նույնիսկ ավերում էր նրանց պարիսպները, իսկ նրանց կուսակալներին ու պաշտոնյաներին մահապատժի էր ենթարկում կանանց ու երեխաների հետ միասին. որ երբ Տարրակոնում նրան տասնհինգ ֆունտ կշռող սևկյա պսակ մատուցեցին Յուպիտերի հին տաճարից, նա տվեց այն հալելու և քաղաքացիներից բռնագանձեց երեք ունցիա ոսկի, որը պակասում էր՝ (2) Այդ լուրերը նա հաստատեց և բազմապատկեց Հռոմ մուտք գործելիս²⁹: Այսպես, այն ծովալիներին, որոնց ներոնը թիավարներից լիիրավ քաղաքացիներ էր դարձրել, նա ստիպեց վերադառնալ նախկին կացությանը, իսկ երբ նրանք սկսեցին հրաժարվել, համառորեն պահանջելով արժիվ ու նշաններ³⁰, նրանց դեմ հանեց հեծյալների և, ցրելով, մահապատժի ենթարկեց յուրաքանչյուր տասներորդին: Գերմանացիների ջոկատը³¹, որոնք վաղուց ի վեր ծառայում էին Կեսարներին որպես թիկնապահներ և մեկ անգամ չէին գործով ապացուցել իրենց նվիրվածությունը, նա ցրեց և առանց որևէ ակնհայտ պատճառի ուղարկեց հայրենիք, որովհետև կասկածել էր, որ նրանք համակրում են Գայոս Դուլբելլային, որի այգիները նրանց ճամբարի կողքին էին: (3) Նրան ծաղրելով պատմում էին, արդարացի թե ոչ հայտնի չէ,— իբր մի անգամ ականատես լինելով ճոխ խնջույքի նա բարձրաձայն հառաչել էր. թե իբր հերթական կառավարչին, որը նրան մատուցել էր ծախսերի համառոտ տեղեկագիրը, ջանասիրության ու ունակության համար շնորհել էր մի սկուտեղ բանջարեղեն, և թե իբր սրնգահար Կանոսին, սքանչանալով նրա նվագով, նվիրել էր հինգ դինար³², իր իսկ ձեռքով հանելով այն սեփական արկղիկից: 13. Դրա համար էլ նրա ժամանումը մեծ ուրախություն չպատճառեց: Այդ երևան եկավ հենց առաջին հանդիսախաղերում՝ երբ ատելլանայում երգեցին «Գալիս էր Օնոսիմոսը գյուղից»³³ նշանավոր երգը, բոլոր հանդիսատեսները միահամուռ միացան երգին և մի քանի անգամ կրկնեցին այդ ոտանավորը ծամածռություններ անելով:

14. Ահա թե ինչու նրան ավելի շատ սիրում ու հարգում էին, երբ նա ընդունում էր իշխանությունը, քան երբ կանգնած էր իշխանության գլուխ³⁴: Արդարև, նրա շատ արարքներ երևան էին բերում ի դեմս նրա գերազանց տիրակալի, բայց նրան ոչ այնքան գնահատում էին այդ հատ-

կությունների համար, որքան ատում էին հակադիր հատկութունների համար:

Նրա վրա լիակատար իշխանություն երեք մարդ ունեւր, որոնք նրա հետ միասին ապրում էին Պալատինումում, երբեք նրանից չէին հեռանում, և ժողովուրդը նրանց անվանում էր նրա դայակներ: Դրանք էին՝ Տիտոս Վինիոսը՝ նրա իսպանական լեզատը, անզսպորեն ագահ մի մարդ, անտանելիորեն բուժ ու մեծամիտ Կորնելիոս Լակոնը³⁵, որը դատական ասենակալից դարձել էր պրետորականների պետ, ազատարձակ Իկելուսը, որը հենց նոր էր պարգևատրվել ոսկյա մատանիով և Մարցիանոս մոկանունով և արդեն ձգտում էր ձեռք բերել հեծյալական պաշտոններից բարձրագույնը³⁶: Այդ սրիկաներին էլ, իրենց տարատեսակ արատներով, նա վստահում էր և թույլատրում բռնադատել իրեն այնպես, որ ինքն իրեն նման չէր— մերթ շափից դուրս մանրախնդիր էր ու ժլատ, մերթ շափից դուրս սանձարձակ ու վատնող՝ մի տիրակալի համար, որին ժողովուրդն էր ընտրել և որն արդեն երիտասարդ չէր:

(3) Երկու բարձրագույն դասերից որոշ ականավոր քաղաքացիների աննշան կասկածների համար մահապատժի ենթարկեց առանց դատաստանի: Հոռմեական քաղաքայիություն նա հազվադեպ էր շնորհում, իսկ երբ երեխայի իրավունք³⁷ շնորհեց ընդամենը մեկ կամ երկու անգամ, այն էլ սոսկ սահմանափակ ժամկետով: Դատավորներն իրենց համար վեցերորդ դեկուրիան էին խնդրում. նա ոչ միայն մերժեց, այլև նրանցից խլեց Կլավդիոսի շնորհած թույլտվությունը՝ ձմռանը, տարեսկզբին, դատի չհավաքվել: 15. Նույնիսկ կարծում էին, թե նա պատրաստվում է երկամյա ժամկետով սահմանափակել սենատորական և հեծյալական պաշտոնները³⁸ և դրանք տալ միայն նրանց, ովքեր փախչում և խուսափում են դրանցից: Ներոնի շուրջ ընծաները նա բռնազանձեց հիսուն հոռմեացի հեծյալների օգնությամբ, թողնելով տերերին միայն տասներորդ մասը. նույնիսկ Լեթ դերասանները կամ ըմբիշները իրենց նվերները վաճառել էին, իսկ դրամը ծախսել ու չէին կարող վճարել, ապա վաճառված նվերները խլվում էին գնողներից: (2) Եվ, ընդհակառակը, իր բարեկամներին ու ազատարձակներին նա թույլատրում էր կաշառքով կամ ըստ քմահաճույքի անել ինչ ուզում են՝ հարկել կամ ազատել հարկերից, մահապատժի ենթարկել անմեղներին և ներումն շնորհել մեղավորներին: Նույնիսկ, երբ ժողովուրդը նրանից պահանջեց Գալուտոսի և Տիգելլինոսի մահապատիժը, նա Ներոնի բոլոր կամակատարներից միայն ադ երկուսին ձեռք շտվեց, ամենաչարաղետներին, և բացի այդ, Գալուտոսին կարևոր պաշտոն շնորհեց, իսկ Տիգելլինոսի³⁹ առիթով իր էրիկտում ժողովրդին հանդիմանեց դաժանության համար:

16. Այդ ամենով նա գրեթե համընդհանուր դժգոհությունն առաջ բերեց բոլոր դասերում, բայց գրեթե ամենից ավելի նրան զինվորներն էին ատում: Բանն այն է, որ պետերը⁴⁰ նրանց շտեմանված նվերներ էին խոստացել, եթե նրանք հեռակա կարգով երգում տան Գալբային, իսկ նա ոչ միայն չկատարեց խոստումները, այլև, նույնիսկ, շատ անգամ հպարտացել էր, թե սովոր է զինվորներ հավաքագրել և ոչ թե գնել. գրանով նա իր դեմ տրամադրեց բոլոր պրովինցիաներում եղած զորքերին: Դրանից զատ, նա պրետորականների մեջ երկյուղ ու վրդովմունք հրահրեց այն բանով, որ շատերին պաշտոնաթող էր անում Նիմֆիդիոսի հետ համագործակցած լինելու կասկածանքով: (2) Բայց ամենից բարձրաձայն տրտնջում էին Վերին Գերմանիայի լեգեոնները, որոնք խաբված էին գալլերի և Վինդեբսի դեմ պատերազմում ցույց տված ծառայությունների համար նվերներ ստանալու իրենց սպասելիքներում: Ուստի և նրանք առաջինը խախտեցին հնազանդությունը, հունվարյան կալենդներին նրանք հրաժարվեցին երդում տալ որևէ մեկին, սենատից զատ, և տեղնուտեղը վճռեցին դեսպաններ ուղարկել պրետորականների մոտ լուր տալով, որ նրանց սրտովք չէ Իսպանիայում կարգված կայսրը,— թող ավելի լավ է պրետորականներն իրենք ընտրեն այնպիսի տիրակալի, որը հաճելի լինի բոլոր զորքերին:

17. Կսելով այդ մասին, Գալբան վճռեց, որ դժգոհությունն առաջ է բերում ոչ այնքան իր ծերությունը, որքան անզավակ լինելը. և ահա անսպասելիորեն իրեն աղջունող ամբոխի միջից նա դուրս բերեց Պիզոն Ֆրուգա Լիցինիանոսին, ազնվատոհմիկ և ականավոր մի երիտասարդի, իր վաղեմի սիրեցյալին⁴¹, որին միշտ իր կտակում գրում էր որպես իր ունեցվածքի և անվան ժառանգորդի,— նրան անվանեց իր որդին, բերեց ճամբար և զինվորական հավաքի առջև որդեգրեց: Սակայն այստեղ էլ նա ոչ մի բան չասաց ընծաների մասին և գրանով Մարկոս Սալվիոս Օտոնին հարմար առիթ ընձեռեց իրագործելու իր մտահղացումը վեց օր անց⁴²:

18. Դեռևս նրա կառավարման սկզբից շատ նախանշաններ մեկը 'մյուսի ետեից ազդարարում էին նրան սպասող վախճանը: Երբ նրա անցած ողջ ճանապարհին, մի քաղաքից մյուսը, աջից ու ձախից զոհակենդանիներ էին մորթում, մի ցուլ, խլացած տապարի հարվածից, կապը 'կտրեց, մտտ ցատկեց նրա կողքին, և տապալվելով, նրան ոտքից գլուխ ցողեց արյամբ. իսկ հրբ նա դուրս էր գալիս կառքից, թիկնապահը ամբոխի ճնշման տակ քիչ էր մնում նրան վիրավորեր նիզակով: Երբ նա մուտք գործեց Ղոոմ և ապա Պալատինում, գետինը նրա առջև ցնցվեց և լսվեց մի ձայն, որ նման էր ցուլի քառաչի: (2) Հետագա նշաններն ավե-

լի պարզ էին: Իր Տուսկուլումյան Ծորատունայի համար բոլոր հարստություններից նա առանձնացրել էր մարգարտից և թանկարժեք քարերից մի մանյակ, բայց հանկարծ վճռել էր, որ այն արժանի է ավելի բարձր տեղի և նվիրաբերել էր Կապիտոլիումական Վեներային. իսկ հաջորդ գիշերը երազում նրան էր հայտնվել Ծորատունան, գանգաափելով, որ իրեն զրկել են ընծայից, և սպառնացել, որ հիմա էլ ինքը նրանից կխլի այն ամենը, ինչ տվել է: Վախեցած, նա արշալույսին սլացավ Տուսկուլում, որպեսզի երազ աղերսի, և իրենից առաջ սուրհանդակներ ուղարկեց ամեն ինչ պատրաստելու զոհաբերության համար. բայց տեղ հասնելով, զոհասեղանի վրա սոսկ տաք մսիկը գտավ, իսկ կաղթին՝ սևեր հագած մի ձերունու՝ ապակե ափսեի վրա խունկ դրած և կավե ամանի մեջ գինի լցրած⁴³: (3) Նկատել էին նաև, որ նոր տարվա զոհամատուցման ժամանակ նրա գլխից պսակն ընկել էր, իսկ գուշակության ժամանակ հավերն այս ու այն կողմ էին փախել և որդեգրման օրը զինվորներից դիմելիս գինվորական թիկնաթուղ հարկ եղած ձևով շէին դրել տրիբունայի վրա, իսկ սենասում կրճուկական թիկնաթուղ թարս էին մատուցել: 19. Վերջապես, նրա կործանման բուն օրիա առավոտյան, գուշակը զոհամատուցման ժամանակ մի քանի անգամ կրկնել էր նրան, որ հարկ է զգուշ մնալ վտանգից՝ մարգասպաններն արգեն մոտ են:

Դրանից հետո շուտով նա իմացավ, որ Օտոնը գրավել է ճամբարը: Շատերը համոզում էին նրան շուտափույթ շտապել այնտեղ, քանի դեռ հնարավորություն կար սեփական ներկայությամբ և ազդեցությամբ հաղթել հակառակօրդին. բայց նա գերազանց շնորհալու ապարանքից և միայն շրջապատել իրեն լեգեոնների պահակախմբով, որոնք կանգնած էին քաղաքի տարբեր վայրերում: Սակայն նա հագավ կտավյա զրահ, թեև չէր թաքցնում, որ այդքան դաշույնների դեմ դա պաշտպանություն չէ:

(2) Բայց և այնպես նա դուրս եկավ ապարանքից, հավատալով կեղծ լուրերին, որ գիտավորյալ տարածել էին դավադիրները, որպեսզի նրան դուրս քաշեն մարդաշատ տեղեր: Ոմանք նույնիսկ հավատացնում էին, որ ամեն ինչ արգեն վերջացած է, որ խոռովարարներն արդեն ճնշված են և որ մնացյալ զորքերը արդեն հավաքվում են ողջունելու նրան, պատրաստ ամեն ինչում ենթարկվելու նրան: Հավատացած իր անվտանգությունը, նա փողոց գուրս եկավ, որպեսզի դիմավորի նրանց. երբ ոմն մի զինվոր⁴⁴ պարծեցավ նրա մոտ, որ սպանել է Օտոնին, նա միայն հարցրեց՝ «Ո՞ւմ հրամանով»: Այդպես նա հասավ մինչև ֆորում: Արդեն այստեղ էին արշավում, ցրելով փողոցի ամբոխը, այն հեծյալները, որոնց հանձնարարված էր սպանել նրան: Հեռվից տեսնելով նրան, նրանք կանգնեց-

րին ձիերը, իսկ հետո արշավակի նետվեցին վրան և փողոտեցին բոլորից լքված կայսրին:

20. Ռմանք հաղորդում են, որ առաջին խառնակության ժամանակ նա գոչեց՝ «Ինչ եք անում, զինակիցներ: Ես ձերն եմ և դուք իմն եք...» և նույնիսկ նրանց նվերներ խոստացավ: Բայց մեծամասնությունը հաստատում է, որ նա ինքը դեմ արեց կոկորդը և կարգադրեց անել իրենց գործը⁴⁵ և մահացու հարված հասցնել, եթե ցանկալի է: Ամենից զարմանալին այն է, որ ներկաներից ոչ ոք չփորձեց օգնել կայսրին, և օգնության կանչված բոլոր զորքերը շանսացին նրա հրամանին, բացառությամբ սոսկ գերմանական վետերանների՝ երախտապարտ վերջին ժամանակները նրանց հիվանդների և թույլերի նկատմամբ ցուցարերված հոգատարությունից⁴⁶, նրանք օգնության նետվեցին, բայց չիմանալով տեղանքը, գնացին հեռավոր շրջանցիկ ճանապարհով և ուշացան:

(2) Սպանվեց նա Կուրցիոսի լճի⁴⁷ մոտ և այնտեղ մնաց ընկած. վերջապես մի շարքային զինվոր, որ գնացել էր օրապահիկ ստանալու և վերադառնում էր, ուսերից նետեց պարկը և կտրեց նրա գլուխը: Քանի որ այն մազերից բռնել հնարավոր չէր, նա գլուխը ծոցը դրեց, իսկ հետո մատով ճանկեց ծնոտից և այդպես մատուցեց Օտոնին. իսկ սա տվեց՝ այն գումակավորների և ճաշարանապաններին, և նրանք, ձեռք առնելով, կրում էին այն ճամբարում նիզակի ծայրին ցցած և բղավելով՝ «Գեղեցկատես Գալբա, վայելիր երիտասարդությունդ»: Այդ հանդուգն կատակի գլխավոր առիթը դրանից փոքր-ինչ առաջ տարածված լուրն էր, թե իբր ոմն մեկը գովաբանել էր նրա տեսքը՝ դեռևս ծաղկուն ու կայտառ, իսկ նա պատասխանել էր՝

«... Ամրապինդ է դեռևս իմ ուժը»⁴⁸:

Ապա ազատարձակ Պատրոբիա ներոնիանան նրանցից գնեց գլուխը հարյուր ոսկով և նետեց այնտեղ, ուր Գալբայի հրամանով մահապատժի էր ենթարկվել նրա պատրոնը: Եվ միայն շատ ավելի ուշ կառավարիչ Արգիվոսը թաղեց գլուխը դիակի հետ միասին Ավրելիոսի ճանապարհի վրա գտնվող Գալբայի սեփական այգիներում:


21. Նա միջահասակ էր, գլուխը լրիվ ճաղատ, աչքերը կապույտ, քիթը կեռ, ձեռքերն ու ոտքերը այն աստիճան էին խեղված հողատապից, որ նա չէր կարողանում ոչ երկար ժամանակով կոշիկներ հագնել, ոչ էլ կարողալ կամ պարզապես գիրք բռնել: Նրա աջ կողքին մսե պալար կար, որն այնպես էր կախված, որ փաթաթանը դժվարությամբ էր պահում այն:

22. Ասում են, նա շատ ու շատ էր ուտում և ձմռանն սկսում էր նա-

խաճաշել դեռևս մինչև լուսանալը, իսկ ճաշի ժամանակ այնքան էր ուտում, որ հրամայում էր ձեռքի տակից հավաքել թերմացքը, պտտեցնել շուրջբոլորը և բաժանել սպասավորներին: Տոփանք նա ավելի շատ տաժում էր տղամարդկանց հանդեպ, քնդ որում հասուն և ամրակազմ տղամարդկանց: Ասում են, որ երբ Իկելոսը, նրա վաղեմի տղամարդ հարճը, նրան Իսպանիա լուր բերեց Ներոնի կործանման մասին, նա ոչ միայն բոլորի ներկայությամբ քնքշորեն համբուրեց նրան, այլև տեղնուտեղը խնդրեց պատրաստվել գրկախառնության, իսկ հետո տարավ հետը:

23. Մահացավ նա կյանքի յոթանասուներեքերորդ տարում և տիրակալության յոթերորդ ամսում: Սենատը առաջին իսկ հնարավորության դեպքում որոշում ընդունեց նրա անդրին դնել ոռոտրալային սյունի վրա ֆորումի այն տեղում, ուր նա սպանվել էր. բայց Վեսպասիանոսը վերացրեց այդ որոշումը, ենթադրելով, որ Գալբան Իսպանիայից նրա մոտ Հրեաստան մարդասպաններ էր ուղարկել:





ՕՏՈՆ

1. Օտոնի նախնիները ծագում են Ֆերենտինում¹ քաղաքից, հին և ազնվատոհմիկ գերդաստանից, որը սկիզբ էր առնում էտրուսկյան իշխաններից: Նրա պապը՝ Մարկոս Սալվիոս Օտոնը, հռոմեացի հեծյալի և ստորին ծագման տեր, գուցե, նույնիսկ, ոչ ազատածին մի կնոջ որդի էր. շնորհիվ կիվիա Ավգուստայի բարեհաճության, որի տանը մեծացել էր, նա դարձավ սենատոր, բայց պրետորական կոչումից

այն կողմ շանցավ: (2) Նրա հայրը՝ Լուկիոս Օտոնը², մոր կողմից պատկանում էր բազմաթիվ ազդեցիկ կապեր ունեցող խիստ ազնվազարմ մի տոհմի, իսկ դեմքով այնքան նման էր Տիբերիոս կայսրին և այնպես սիրված էր նրանից, որ ոմանք ի դիմս նրա տեսնում էին Տիբերիոսի որդուն: Պատվավոր պաշտոնները Հռոմում, պրոկոնսուլությունը Աֆրիկայում և արտահերթ զինվորական հանձնարարությունները նա մեծ հաստատակամությամբ էր կատարում: Իլլիրիկումում Կամիլլոսի խոռվությունից հետո մի քանի զինվորներ զղջման պոռթկումի պահին սպանել էին իրենց պետերին, որոնք իբրև թե հրահրել էին նրանց անջատվել Կլավդիոսից: Լուկիոս Օտոնը հրամայեց մահապատժի ենթարկել նրանց իր աչքի առջև, ճամբարի մեջտեղում, թեև գիտեր, որ Կլավդիոսը դրա համար բարձրացրել է նրանց աստիճանները: (2) Այդպիսի վարվելակերպով նա փառք ձեռք բերեց, բայց կորցրեց բարյացակամությունը. սակայն շուտով նա վերստին շահեց Կլավդիոսի բարեհաճ վերաբեր-

մունքը, ստրուկների մատնությամբ բացահայտելով մի հռոմեացի հեծ-
յալի դավաճանութունը, որը մտադրվել էր սպանել կայսրին: Իսկա-
պես, սենատը պատվեց նրան հազվագյուտ պատվով՝ արձան կանգնեց-
նելով Պալատինումում, իսկ Կլավդիոսը նրան զասեց պատրիկների շարքը,
գովաբանեց ամենաշողոմ արտահայտութիւններով և նույնիսկ բացա-
կանչեց. «Այդ մարդուց ավելի լավ ես ինձ երեխաներ էլ ցանկանալ չեմ
կարող»: Ալբիա Տերենցիայից՝ ականավոր տոհմի³ պատկանող մի կնո-
ջից, նա ուներ երկու որդի՝ Լուկիոս Տիցիանոսը, և կրտսերը՝ Մարկոսը,
որը ժառանգել էր հայրական մականունը. նա ուներ նաև մի դուստր,
որին, հազիվ հասունացած, նա պսակեց Դրուզոսի՝ Գերմանիկոսի որդու
հետ:

2. Օտոն կայսրը ծնվել է շորրորդ օրը մինչև մայիսյան կալենդները,
Կամիլլոս Արրունցիոսի և Դոմիցիոս Ահենոբարբոսի⁴ կոնսուլության
օրը: Վաղ պատանութիւնից նա այնպիսի վատնող ու լպիրշ տղա էր,
որ հայրը բազմիցս ձաղկել էր նրան. ասում էին, որ նա գիշերները թա-
փառում էր փողոցներով և տկարամարմին կամ հարբած ամեն մի ան-
ցորդի բռնում էր ու ձգված թիկնոցի վրա վեր-վեր նետում⁵: (2) Հոր
մահից հետո նա քծնանքով շահեց արքունիքում ուժ ունեցող մի ազատ-
արձակուհու համակրանքը և նույնիսկ նրան սիրահարված ձեացավ, թեև
սա արդեն զառամյալ պառավ էր: Սրա միջոցով նա շողոքորթությամբ
շահեց Ներոնի վստահութիւնը և հեշտությամբ դարձավ նրա բարեկամ-
ներից առաջինը բարձրի նմանության, իսկ ըստ որոշ լուրերի՝ նաև նրա
հետ ունեցած անառակ մերձավորության շնորհիվ: Նրա հզորութիւնն
այնպիսին էր, որ դրամաշորթության համար գատապարտված մի կոն-
սուլյարիսից վիթխարի կաշառք պոկեց և, գեո չհասցրած նրա լիակա-
տար ներումը շահել, նրան արդեն սենատ մտցրեց⁶ շնորհակալութիւն
հայտնել տալու համար:

3. Կենելով կայսեր բոլոր գաղտնի մտահղացումների մասնակիցը,
այն օրը, որը նշանակված էր Ներոնի մոր սպանության համար, նա, ի
խուսափումն կասկածների, Ներոնի և նրա մոր համար անասելի նրբա-
ճաշակ խնջույք սարքեց. իսկ Պոպպեա Սաբինային՝ Ներոնի սիրուհուն,
որին Ներոնը խլել էր ամուսնուց և՛ ժամանակավորապես վստահել Օտո-
նին ամուսնության քողի տակ, նա ոչ միայն գայթակղեցրեց, այլև այն-
քան սիրեց, որ չէր հանդուրժում մրցակից ունենալ նույնիսկ Ներոնին⁷:
(2) Համենայն դեպս, ասում են, որ երբ Ներոնը մարդիկ ուղարկեց Պոպ-
պեայի ետևից, նա վռնդեց նրանց և նույնիսկ Ներոնին թույլ չտվեց իր
տուն մտնել, նրան կանգնած թողնելով դռանը, որն աղերսանքով ու
սպառնալիքներով պահանջում էր բարեկամին վստահված դանձր: Դրա

համար էլ ամուսնալուծութիւնից հետո Օտոնը փոխարքայութեան պատրրվակով աքսորվեց Լուզիտանիա⁸։ Պարզ էր, որ Ներոնը չէր կամենում ավելի խիստ պատժով մերկացնել ամբողջ այդ կատակերգութիւնը. բայց այնպես էլ դա հայտնի դարձավ հետևյալ ոտանավորով.

Ուզո՞ւմ ես իմանալ, ինչու է Օտոնը պատվավոր աքսորում.
Ինքն իր կնոջ հետ ուզել էր քնել։

Քվեստորական աստիճանով նա պրովինցիան կառավարեց, հազվագյուտ խոհեմութեամբ ու շափավորութեամբ, տասը տարի։ 4. Իսկ երբ, վերջապես, առիթը ներկայացավ վրեժխնդիր լինելու, նա առաջինը հարեց Գալբայի ձեռնարկումին։ Միևնույն ժամանակ նա ինքը քիչ հույս չունէր իշխանութեան հասնելու—մասամբ հանգամանքների բերումով, մասամբ էլ ըստ աստղագուշակ Սելևկոսի⁹ կանխագուշակութեան՝ երբեմնի նա խոստացել էր Օտոնին, որ սա Ներոնից երկար կապրի, իսկ այժմ էլ ինքն էր անսպասելիորեն հայտնվել Օտոնի մոտ՝ լուր բերելով, թե շուտով նա կայսր կդառնա։ (2) Դրա համար էլ նա այժմ գործի էր դնում ցանկացած սիրալիրութիւն ու հաճոյակատարութիւն՝ ճաշկերույթ սարքելով տիրակալի համար, ամեն անգամ նա թիկնապահների ամբողջ ջոկատին նվիրում էր ոսկի¹⁰, մյուս ղինվորներին կապում էր իրեն ուրիշ եղանակներով, իսկ երբ ոմն մեկը հարևանի հետ սահմանակից հողի համար վիճելիս նրան միջնորդ հրավիրեց, նա գնեց ու նրան նվիրեց ամբողջ դաշտը։ Շուտով դժվար էր մի մարդ գտնել, որը շմտածեր ու չասեր, թե միայն Օտոնն է արժանի դառնալու կայսրութեան իսկական ժառանգը։ 5. Նա ինքը հույս ուներ, որ Գալբան իրեն կորդեգրի, և օրը օրին դրան էր սպասում։ Բայց երբ Գալբան Պիզոնին գերադասեց նրանից, և վերջինիս հույսերը փուլ եկան, վճռեց ուժի դիմել։ Վիրավորանքից զատ, նրան այդ բանին էին մղում վիթխարի պարտքերը՝ նա բացահայտ ասում էր, որ եթե ինքը կայսր չդառնա, ապա իր համար միևնույնն է՝ կործանվել թշնամու ձեռքով ճակատամարտում թե պարտապանների ձեռքով ֆորումում։

(2) Ելույթից մի քանի օր առաջ նրան հաջողվեց կայսերական մի ստրուկից մեկ միլիոն սևատերցիում կորզել նրան տրամադրված կառավարչի տեղի համար։ Այդ դրամը դարձավ ամբողջ գործի սկիզբը։ Սկզբնապես նա վստահեց հինգ թիկնապահների¹¹, հետո, երբ յուրաքանչյուրը ներգրավեց ևս երկուսի, նաև նրանց։ Յուրաքանչյուրին տվեց տասը հազար և խոստացավ ևս հիսուն հազար։ Այդ ղինվորները համոզեցին նաև ուրիշներին, բայց թվով քչերին. կասկած չկար, որ հենց գործը

սկսվի, շատերն իրենք կգան նրանց ետևից: 6. Նա այն է, պատրաստվում էր Պիզոնին որդեգրելուց հետո անմիջապես գրավել ճամբարը և հարձակվել Գալբայի վրա պալատում ճաշելու ժամանակ, բայց շհամարձակվեց, մտածելով պահախուժյուն անող կոհորտայի մասին. սա ընդհանուր ատելություն կարժանանար, եթե, ժամանակին լքելով ներոնին, այժմ էլ թույլ տար սպանելու Գալբային: Իսկ հետո ևս մի քանի օր¹² խլեցին վատ կանխանշանները և Սելևկոսի նախազգուշացումները:

(2) Վերջապես, նշանակված օրը նա կարգադրեց համախոհներին սպասել իրեն ֆորումում, Սատուրնոսի տաճարի առջև, ոսկեզօծ մզոնասյան մոտ¹³, ինքն առավոտյան ողջույնով ներկայացավ Գալբային, դիմավորվեց, ինչպես միշտ, համբույրով, մասնակցեց կայսերական զոհամատուցմանը¹⁴ և լսեց գուշակի կանխազուշակությունները: Այլազատարձակը ասաց նրան, թե եկել են ճարտարապետները. դա պսյմանական նշանն էր: Նա հեռացավ, բացատրելով, թե ուզում է նայել իր գնելիք տունը, դուրս եկավ պալատի ետևի սենյակներից և սլացավ դեպի պայմանավորված վայրը. այլ պատմությամբ, նա ձևացրեց, թե ջերմատենդ ունի, և խնդրեց շրջապատողներին ներողություն խնդրել իր անունից, եթե սկսեն իրեն փնտրել: (3) Իսկ հետո, շտապով նստելով կանացի ճոճաթոռ, նա մեկնեց ճամբար: Պատգարակակիրները ուժից ընկան, նա իջավ և սկսեց վազել. ոտնամանի քանդված քուղերը կանգնեցրին նրան. այնժամ, որպեսզի շուշանա, ուղեկիցները նրան ուսերին առան և, ողջունելով որպես կայսեր, ուրախ գոշյուններով և թրերի շողշողյունի տակ նրան բերեցին ճամբարի հրապարակը¹⁵: Բոլոր հանդիպողները միանում էին նրան, ասես համախոհներ ու մասնակիցներ լինեին: Ճամբարից նա մարդիկ ուղարկեց սպանելու Գալբային և Պիզոնին, իսկ որպեսզի զինվորներին ավելի ամուր կապի իրեն, հավաքի ժամանակ նրանց երգվեց, որ իրենը կհամարի միայն այն, ինչ նրանք կթողնեն:

7. Այնուհետև, երբ օրն արդեն մթնում էր, նա ներկայացավ սենատ, կարճ զեկուցեց, որ իրեն առևանգել էին փողոցում և բռնի ստիպել ընդունելու իշխանությունը և որ ինքը կգործի միայն ընդհանուրի համաձայնությամբ, իսկ հետո մեկնեց պալատ: Մնացյալ հաճկատար շնորհավորանքների և քծնանքի թվում խաժամուժը նրան տվեց ներոն անունը, և նա ամենևին չգժգոհեց, ավելին, ոմանք ասում են, որ նա, նույնիսկ, պրովինցիաների որոշ կուսակալներին հղած իր առաջին հրովարտակաները և ուղերձները ստորագրում էր այդ անվամբ: Համենայն դեպս, նա թույլատրեց վերականգնել ներոնի արձաններն ու պատկերները, նրա պրոկուրատորներին և ազատարձակներին վերադարձրեց նրանց

նախկին պաշտոնները և իր առաջին իսկ կայսերական հրամանագրով հիսուն միլիոն սեստերցիում բաց թողեց ավարտելու համար Ռսկյա պալատի կառուցումը:

(3) Նույն գիշերը ասում են, նա սոսկալի երազ էր տեսել և սկսել էր բարձրաձայն տնքալ. բղավոցի վրա մոտ էին վազել և նրան գտել հատակին, անկողնու առջև. նրան թվացել էր, թե Գալբայի հոգին իրեն բարձրացրել և գցել է մահճից, և նա շէր զլանում քավության զոհեր մատուցել, փորձելով նրա գութը շարժել: Հաջորդ օրը գուշակության ժամանակ հանկարծական հողմապտույտը նրան գետին տապալեց, և լսեցին, թե նա ինչպես մի քանի անգամ փնթփնթաց.

... Իմ խելքի ինչ բանն են երկար սրինգները¹⁶.

8. Մոտավորապես հենց այդ ժամանակ էլ գերմանական լեգեոնները երգում տվեցին Վիտելլիոսին: Իմանալով այդ մասին, Օտոնը սենատին առաջարկեց նրա մոտ դեսպանություն ուղարկել հայտնելու, որ տիրակալ արդեն ընտրված է և որ նրանք անդորր ու համերաշխություն սլահպանին, իսկ ինքը սուրհանդակների միջոցով Վիտելլիոսին առաջարկեց դառնալ իր կառավարչակիցն ու փեսան¹⁷: Բայց պատերազմն անխուսափելի էր, և Վիտելլիոսի ուղարկած զորավարներն ու զորքերը մոտենում էին: Հենց այստեղ էլ նա կարողացավ համոզվել, թե որքան հավատարիմ ու նվիրված են իրեն պրետորականները՝ ամբողջ բարձրագույն դասը քիչ էր մնում կոտորվեր նրանց ձեռքով: (2) Նա ցանկացավ նավերով զենք բերել տալ նավաստիների օգնությամբ¹⁸. բայց երբ երեկոյան դեմ սկսեցին զենքերը ճամբարից հավաքել, որոշ զինվորներ դավաճանություն կասկածեցին, տազնապ բարձրացրին, և բոլորը միասին, շառաչնորդված որևէ մեկի կողմից, սլացան դեպի Պալատինում, պահանջելով կոտորել սենատը: Տրիրունները փորձեցին միջամտել, նրանց գետին տապալեցին, ոմանց սպանեցին, և զինվորները, ինչպես որ կային՝ արյունոտված, հարց ու փորձ անելով, թե ուր է կայսրը, ճեղքեցին անցան մինչև ճաշասենյակը և միայն այն ժամանակ կանգ առան, երբ տեսան Օտոնին:

(3) Արշավանքի նա ելավ համարձակ և թերևս խիստ հապշտապ, ուշադրություն չդարձնելով նույնիսկ նախանշանակներին, մինչդեռ այդ ժամանակ և՛ սրբազան վահաններն¹⁹ էին դուրս բերված ու դեռ չթաքցրված, որ վաղուց ի վեր համարվում էր շարագույժ նշան, և՛ աստվածների Մոր²⁰ քրմերն էին այդ օրը սկսել իրենց արտասովախառն ողբը, և՛ գուշակություններն էին ակնհայտորեն շար՝ հայր Դիտոսին²¹ մատուցված զո-

հը ընդունելի եղավ, մինչգեռ այդ զոհամատուցման ժամանակ լավագույն նշանը հակառակն է. քաղաքից դուրս գալիս նրան կասեցրեց Տիրոսի վարարուժը, իսկ քսաներորդ մղոնի վրա ճանապարհը փակված էր շինության փլվածքով: 9. Նույնպիսի հապճեպությամբ նա վճռեց ճակատամարտ տալ հնարավորին շափ շուտ, թեև բոլորին պարզ էր, որ հարկ է պատերազմը ձգձգել, հյուժելով թշնամուն քաղցով և կիրճերի անձուկով. գուցե, նա ուժ չուներ դիմանալու երկարատև լարմանը և հույս ունեւր ավելի հեշտ հաղթանակի հասնել մինչև Վիտելլիոսի ժամանելը, գուցե, շէր կարողանում զսպել զինվորներին, որոնք հախուռն կովի էին ձգտում: Նա ինքը ոչ մի ճակատամարտի շմասնակցեց, մնալով Բրիքսելլումում:

(2) Առաջին երեք աննշան ճակատամարտերում՝ Ալպերի մոտ, Պլացենցիայի մոտ և այսպես կոչված Կաստորի բնավայրի²² մոտ, նա հաղթեց. բայց վերջին և վճռական ճակատամարտում՝ Բետրիակումի մոտ, ջախջախվեց խորամանկության շնորհիվ՝ նրան բանակցությունների հույս տվեցին, զինվորները դուրս եկան, որ զինազադար կնքեն և, դեռևս ողջույններ փոխանակելիս հանկարծ ստիպված եղան մարտ ընդունել²³: (3) Այդ ժամանակ նա վճռեց մեռնել. և շատերը ոչ առանց հիմքի մտածում են, որ ոչ այնքան հուսահատությունից և զորքերի նկատմամբ տածած անվստահությունից, որքան ամաչելով հս մառել իշխանության համար մղվող պայքարում և այդպիսի վտանգների ենթարկելով մարդկանց ու պետությունը²⁴: Հիրավի, նա դեռևս և՛ պահեստային անձեռնմխելի զորքեր ունեւր, և՛ նորերն էին նրան օգնության գալիս Գալմաթիայրց, Պաննոնիայից ու Մյոզիայից, և՛ նույնիսկ հաղթվածները, շնայած պարտությանը, պատրաստ էին իրենք, առանց աջակցության, ընդառաջ գնալ ամեն մի աղետի, որպեսզի վրեժխնդիր լինեն իրենց խայտառակության համար:

10. Ի՞մ հայրը՝ Սվետոնիոս Լետոնը, այդ պատերազմում հեծյալական կոչման տրիբուն էր տասներեքերորդ լեգեոնում: Հետագայում նա հաճախ էր ասում, որ Օտոնը նույնիսկ մասնավոր անձն եղած ժամանակ միշտ ատել էր երկպառակտչական գծտությունները, և երբ մեկ անգամ խնջույքի ժամանակ ինչ-որ մեկը հիշատակեց Կասսիոսի ու Բրուտոսի կործանման մասին, նա ցնցվեց. նա Գալբայի դեմ էլ հանդես չէր գա, եթե շուսար նպատակին հասնել առանց պատերազմի. իսկ այստեղ մահվան նկատմամբ արհամարհանք սովորեցրեց մի շարքային զինվորի օրինակը, որը բերեց պարտության լուրը— նրան ոչ ոք չէր հավատում, նրան կոչում էին մերթ ստախոս, մերթ վախկոտ, որը փախել էր ռազմադաշտից, և այնժամ նա հենց Օտոնի ոտքերի մոտ նետվեց սրի


վրա. իսկ Օտոնը, ըստ իմ հոր, այդ տեսնելով բացականչեց, որ այլևս չի ուզում վտանգի ենթարկել այդպիսի արանց և այդպիսի զինվորներին:

(2) Եղբորը, զարմիկին²⁵ և մի քանի բարեկամների նա խորհուրդ տվեց փրկվել ով ինչպես կարող է, գրկեց նրանց բոլորին, համբուրեց և բաց թողեց: Մնալով մենակ, նա երկու նամակ գրեց՝ մեկը քրոջը, միւթարելով նրան, մյուսը Մեսսալինային՝ Ներոնի այրուն, որի հետ պատրաստվում էր ամուսնանալ՝ նրանց կտակում էր հոգ տանել իր աճյունի ու հիշատակի համար: Իր բոլոր նամակները նա այրեց, որպեսզի ոչ ոքի վտանգ կամ վնաս չհասնի հաղթողի կողմից. մոտը եղած դրամը նա բաժանեց ծառաների միջև:

11. Նա արդեն վճռել էր և պատրաստվել էր մեռնել այդպես, երբ հանկարծ աղմուկ լսվեց. նրան ասացին, որ նրանք, ովքեր փորձում են լքել զորքը և հեռանալ, բռնում են ու շեն թողնում՝ որպես փախստականների: Այնժամ նա ասաց. «Երկարաձգենք կյանքը ևս մի գիշեր» — սա նրա իսկական խոսքերն են, և արգելեց ուժով պահել ում էլ որ լինի: Նրա ննջասենյակը բաց էր մինչև ուշ գիշեր, և բոլոր ցանկացողները կարող էին դիմել նրան: (2) Հետո նա սառը ջուր լամեց ծարավը հագեցնելու համար, հանեց երկու դաշույն, փորձեց նրանց սայրերը, թաքցրեց դրանք բարձի տակ, փակեց դուռը և խորը քուն մտավ: Միայն արշալույսին նա արթնացավ և այնժամ խոցեց իրեն ձախ պտուկից ներքև: Նրա առաջին իսկ տնքոցից մարդիկ ներս վազեցին, և սրանց առջև նա, մերթ, ծածկելով, մերթ բացելով վերքը, ավանդեց հոգին: Նրան թաղեցին հապշտապ, ինչպես ինքն էր հրամայել: Այդ պատահեց նրա կյանքի երեսունութերորդ տարում, իննսունհինգ օրվա տիրակալումից հետո²⁶:

12. Հոգու այդ վեհությանը շէր համապատասխանում Օտոնի ոչ մարմինը, ոչ արտաքինը: Ասում են, նա կարճահասակ էր, տգեղ ու ծուռ ոտքերով, իր մասին հոգում էր համարյա ինչպես կին, մարմնի վրայից պոկում էր մազերը, նոսր մազերը ծածկում էր կեղծամով, որ այնպես էր հարմարեցված և տեղը դրված, որ ոչ ոք այդ շէր կռահում, իսկ դեմքը ամեն օր, ամենաառաջին աղվամազից, սափրում էր ու շփում թրջված հացով, որպեսզի մորուք չաճի. և Իսիդայի տոնակատարություններին բոլորի ներկայությամբ նա հայտնվում էր սրբազան կտավե զգեստով:

(2) Ահա թե ինչու, կարծում էմ, նրա մահը, այնքան տարբեր կյանքից, առավել ևս զարմանալի էր թվում: Շատ զինվորներ, որոնք այնտեղ էին, արտասովախառն համբուրում էին նրա՝ մեռյալի, ձեռքերն ու ոտքերը, մեծարում նրան, անվանելով խիզախ տղամարդ և աննման կայսր:




Գալոս Հալիոս Կեսար
Հոնդոն: Բրիտանական թանգարան




Օգոստոս

Քեկոնա: Հեկտանեակոս Բուդգարսի



Տիրիս

Կիսանդրի Ճալումից: Կապեննազեն: Գլխատանկա



Գալոս Ասիդուլոս
Գոպենհագենի Միթլանդստեդտ




Կլավդիոս

Տարագուհու Հնէարանական թանգարան



Անուն

Համ: Ազգային թանգարան




Գալբա
Փարիզի Լուվր



Օտոն


Հոմ: Վատիկանի թանգարան



Վանկիս
Փարիզ Լուվր



Ասպարիանոս
Փարիզի Լուվր



Տիտոս
Նեպոսի Ազգային թանգարան



Դամիսանոս
Հռոմ: Քզզային թանգարան

և Նինց այդտեղ, թաղման խարույկի մոտ, անձնասպան էին լինում. շատերը, ովքեր այնտեղ չէին եղել, հուսահատ մահու կոիվ էին մղում միմյանց հետ: Եվ նույնիսկ նրանք, շատերը նրանցից, ովքեր դաժանորեն ստում էին նրան կենդանության օրոք, սկսեցին դրվատել մահից հետո, ինչպես ընդունված է խաժամուժի շրջանում. նույնիսկ ասում էին, որ Գալրային նա սպանեց ոչ թե նրա համար, որ զավթի իշխանությունը, այլ որ վիրակահեղի ազատությունն ու հանրապետությունը՝



ՎԻՏԵԼԿԻՈՍ

1. Վիտելիոսների տոհմի ծագման մասին հաղորդվում են ամենատարբեր և շհամբնկնող կարծիքներ. ոմանք այն անվանում են հին ու անվանի, մյուսները՝ նոր, անտոհմիկ և նույնիսկ անհայտ: Այդ ամենը կարելի էր վերագրել Վիտելիոս կայսեր քծնողներին և վատաբանողներին, սակայն դատողությունները այդ տոհմի մասին տարատեսակ են եղել տակավին ավելի վաղ ժամանակներից: (2) Գոյություն ունի Քվինտոս էլոգիոսի գրքույկը, նվիրված Քվինտոս Վիտելիոսին՝ աստվածային Օգոստոսի քվեստորին. այնտեղ ասված է, որ Վիտելիոսները ծագում են Տավնոսից՝ աբորիգինների թագավորից, և Վիտելիայից, որին շատ տեղերում երկրպագում են որպես աստվածուհու՝, որ նրանք տիրակալում էին ամբողջ Լացիումին և որ նրանց վերջին ժառանգները սաբինացիների մոտից Հոոմ են վերաբնակվել և դասվել են պատրիկների շարքը: (3) Որպես հիշատակ այդ տոհմի մասին երկար ժամանակ մնաց Վիտելիոսյան ճանապարհը Յանիկուլից ընդհուպ մինչև ծովը և նույն անունը կրող գաղութը², որը նրանք երբեմնի հանձն էին առել պաշտպանել էքվիկուլներից միայն իրենց տոհմի ուժերով: Իսկ հետո արդեն, երբ սամնիտական պատերազմի³ ժամանակ զորքեր ուղարկվեցին Ապուլիա, Վիտելիոսներից մի քանիսը մնացին բնակվելու Նուցերիայում, և նրանց ժառանգները միայն շատ ժամանակ անց վերագարձան Հոոմ և տեղ գրավեցին սենատում: 2. Իսկ շատերը, ընդ-

յություն ունի Քվինտոս էլոգիոսի գրքույկը, նվիրված Քվինտոս Վիտելիոսին՝ աստվածային Օգոստոսի քվեստորին. այնտեղ ասված է, որ Վիտելիոսները ծագում են Տավնոսից՝ աբորիգինների թագավորից, և Վիտելիայից, որին շատ տեղերում երկրպագում են որպես աստվածուհու՝, որ նրանք տիրակալում էին ամբողջ Լացիումին և որ նրանց վերջին ժառանգները սաբինացիների մոտից Հոոմ են վերաբնակվել և դասվել են պատրիկների շարքը: (3) Որպես հիշատակ այդ տոհմի մասին երկար ժամանակ մնաց Վիտելիոսյան ճանապարհը Յանիկուլից ընդհուպ մինչև ծովը և նույն անունը կրող գաղութը², որը նրանք երբեմնի հանձն էին առել պաշտպանել էքվիկուլներից միայն իրենց տոհմի ուժերով: Իսկ հետո արդեն, երբ սամնիտական պատերազմի³ ժամանակ զորքեր ուղարկվեցին Ապուլիա, Վիտելիոսներից մի քանիսը մնացին բնակվելու Նուցերիայում, և նրանց ժառանգները միայն շատ ժամանակ անց վերագարձան Հոոմ և տեղ գրավեցին սենատում: 2. Իսկ շատերը, ընդ-

հակառակն, պնդում են, որ այդ տոհմը սկիզբ է առնում ազատարձակից. ըստ Կասսիոս Սևերոսի, ինչպես նաև ուրիշների, այդ մարդը զբաղվում էր հնամաշ կոշիկների վերանորոգմամբ, իսկ նրա որդին, հարրստանալով վաճառքներից ու մատնություններից, ամուսնացավ մատչելի կնոջ՝ ոմն հացթուխ Անտիոքոսի դստեր հետ և դարձավ հռոմեացի հեծյալի հայր: Սակայն այդ տարակարծությունների մանրամասների մեջ մենք չենք մտնի:

(2) Ինչևիցե, Պուբլիոս Վիտելլիոսը Նուցերիայից, լինի նա հնամենի տոհմից, թե ստորին ծագման տեր ծնողներից ու նախնիներից, հայտնապես հռոմեացի հեծյալ էր և Օգոստոսի կալվածների կառավարիչը. և նա թողեց շորս որդիներ, որոնք բարձրագույն կոչման հասան՝ նրանք բոլորը կրում էին միևնույն տոհմական անունը և տարբերվում էին միայն անձնանուններով՝ Ավլոս, Քվինտոս, Պուբլիոս և Լուկիոս: Ավլոսը վախճանվեց կոնսուլի պաշտոնում, որը գրավում էր Դոմիցիոսի՝ Ներոն կայսեր հոր հետ⁴. հռչակված էր նա ճոխասիրությամբ և հատկապես փայլում էր փառահեղ խնջույքներով: Քվինտոսը զրկվեց կոչումից⁵, երբ Տիրերիոսի կամքով վճռվեց սենատից հեռացնել ոչ ցանկալի անձանց: (3) Պուբլիոսը, Գերմանիկոսի մերձավորը, մեղադրող էր և հասավ Գնեսոս Պիղոնի դատապարտմանը իբրև նրան սպանողի. հետագայում, արդեն պրետորությունից հետո, բռնվելով իբրև Սեյանոսի համախոհ և հանձնվելով եղբոր հսկողությանը, նա գրչահատով բացեց երակները. ճիշտ է, դրանից հետո նա թույլ տվեց վիրակապել և բուժել իրեն, ոչ աչնբան մահվան երկյուղից, որքան անսալով տնեցիների խնդրանքներին, սակայն հիվանդացավ և մահացավ, շապրելով մինչև ազատվելը⁶: (4) Լուկիոսը հասավ կոնսուլության և նշանակվեց կուսակալ Ասորիքում. այստեղ նա իր մեծ վարպետությամբ ստիպեց Արտավանին՝ պարթևաց արքային, ոչ միայն բանակցություններ սկսել իր հետ, այլև նույնիսկ հարգանք մատուցել լեգեոնների նշաններին: Այնուհետև Կլավդիոս կայսեր օրոք նա ևս երկու անգամ նրա հետ կոնսուլ եղավ և մեկ անգամ ցենզոր⁷, իսկ նրա բրիտանական արշավանքի ժամանակ իր վքա վերցրեց պետության կառավարման հոգսը: Նա ազնիվ և գործունյա մարդ էր, բայց արատավորեց իրեն ազատարձակուհու հանդեպ տաժած սիրով. նույնիսկ վերջինիս թուրքը խառնում էր մեղրի հետ, որպեսզի դրանով բուժի կոկորդը, ինչպես դարմանով, այն էլ ոչ հազվադեպ կամ աննկատ, այլ ամեն օր և բոլորի ներկայությամբ: (5) Նա աչքի էր ընկնում նաև շողոքորթելու զարմանալի արվեստով: Գայոս Կեսարին նա առաջինը երկրպագեց իբրև աստծո՝ վերադառնալով Ասորիքից. նա, որպեսզի մերձենա Գայոսին, փաթաթեց գլուխը, մոտեցավ նրան ետև շրջված և

փուվեց հատակին: Նա ոչ մի եղանակ ձեռքից բաց չէր թողնում շահելու
Կլավդիոսի բարեհաճությունը, որին ծանակում էին կանայք ու ազատ-
արձակները: Մեսսալինային նա խնդրեց, որպես մեծագույն ողորմաժու-
թյուն, թույլատրել հանելու նրա ոտնամանները և նրա աջ սանդալը
միշտ կրում էր կրծքին, տոգայի ու տունիկայի արանքում, շարունակ
համբուրելով. նարկիսի և Պալլանտի ոսկյա քանդակներին նա երկրպա-
զում էր ընտանեկան լարերի շարքում⁸. և այդ նա էր բացականչել, շնոր-
հավորելով Կլավդիոսին հարյուրամյա խաղերի առթիվ. «Ցանկանում եմ
քեզ քանիցս տոնել դրանք»: 3. Նա մահացավ կաթվածից, հարվածի հա-
ջորդ օրը, թողնելով երկու որդի Սեքստիլիայից⁹, ազնվատոհմիկ և ար-
ժանավոր մի կնոջից. նա հասցրեց երկուսին էլ տեսնել կոնսուլ, ընդ
որում միևնույն տարում, քանի որ կրտսերը փոխարինեց ավագին վեց
ամիս անց: Սենատը պատվեց հանգուցյալին՝ թաղելով նրան պետութայն
հաշվին և ֆորումում դնելով նրա կիսանդրին՝ «Աներեք հավատարիմ է
իր կայսրին» մակագրությամբ:

(2) Ավլոս Վիտելլիոս կայսրը՝ Լուկիոսի որդին, ծնվել էր Դրուզոս
Կեսարի և Նորբանոս Փլակկոսի կոնսուլության օրոք, ութերորդ օրը մինչև
հոկտեմբերյան կալենդները, իսկ ըստ ուրիշ տեղեկությունների՝ յոթե-
րորդ օրը մինչև սեպտեմբերի իդերը¹⁰: Աստղագուշակների կազմած նրա
բախտացույցը ծնողներին այնպիսի սարսափի մատնեց, որ հայրը այդ
ժամանակից անդադրում հոգ էր տանում, որ որդին գեթ իր կենդանու-
թյան օրոք նշանակում չստանա պրովինցիա, իսկ մայրը լուր ստանա-
լով այն մասին, որ նա ուղարկված է լեգեոնների մոտ և հռչակվել է
կայսր, սկսեց ողբալ նրան ինչպես սպանվածի:

(3) Մանկությունը և վաղ պատանեկությունը նա անցկացրեց Կապ-
րիում, Տիբերիոս կայսեր սիրեցյալների թվում, և ամբողջ կյանքում
պահպանեց Սպինտրիա¹¹ ամոթալի մականունը. նույնիսկ կարծում էին,
որ հենց նրա դեմքի գեղեցկությունն է նրա հոր բարձրացման պատճառն
ու սկիզբը դարձել: 4. Հետագա տարիներին, նախկինի պես արատավոր-
ված բոլոր արատներով, նա արքունիքում կարևոր դիրքի հասավ: Նա
մոտ էր և՛ Գայոսին՝ վազքարշավների նկատմամբ ունեցած սիրով, և՛
Կլավդիոսին՝ մոլախաղերի նկատմամբ ունեցած սիրով, իսկ ամենից ավե-
լի՝ Ներոնին՝ մասամբ նույն բանի, մասամբ էլ հատուկ ժառայության
համար. Ներոնյան խաղերը¹² կարգադրելիս նա տեսավ, որ Ներոնը շատ է
ուզում հանդես գալ կիֆարահար-երգիչների մրցությանը, բայց չի հա-
մարձակվում տեղի տալ ընդհանուր խնդրանքներին և պատրաստ է հե-
ռանալ թատրոնից. այնժամ նա կանգնեցրեց Ներոնին, ասես ժողովրդի
անգաղրում պահանջով, և դրանով հնարավորություն տվեց համոզելու

նրան: 5. Ձեռք բերելով, այդպիսով, երեք տիրակալների ողորմածությունը, նա արժանացավ նաև պատվավոր պաշտոնների և բարձրագույն քրմական աստիճանների, իսկ դրանից հետո պրոկոնսուլ եղավ Աֆրիկայում և հասարակական կառույցների հոգաբարձու: Բայց այդ տեղերում և՛ նրա գործերը, և՛ նրա համբավը տարբեր էին՝ պրովինցիան նա կառավարեց հազվագյուտ բարեխղճությամբ երկու տարի, քանի որ երկրորդ տարին նա լեզատ մնաց եղբոր մոտ, իսկ մայրաքաղաքի պաշտոնում, ըստ պատմաձևերի, նա տաճարներից գողանում էր նվիրատվություններն ու վարդարանքները կամ թաքուն փոխում էր դրանք, ոսկու և արծաթի փոխարեն դնելով անագ և դեղին պղինձ:

6. Նա ամուսնացած էր Պետրոնիայի¹³, կոնսուլարիսի դստեր հետ, և նրանից ուներ մի որդի՝ Պետրոնիանոսին, որը մի աչքից կույր էր: Մայրը նրան ժառանգ էր թողել հայրական իշխանության տակից դուրս գալու պայմանով. նա արձակեց որդուն, բայց շուտով, ինչպես ենթադրում են, թունավորեց նրան, հավատացնելով նաև, որ այդ որդին ինքն է հայրասպանության փորձ արել, բայց խղճի խայթից ինքն էլ խմել է հոր համար նախատեսված թույնը: Հետո նա ամուսնացավ Գալերիա Ֆունդանայի՝ մի նախկին պրեատորի դստեր հետ, և սա նրա համար ծնեց մի տղա և մի աղջիկ, բայց տղան այնպես էր կակազում, որ ծանրալեզու ու մունջ էր թվում:

7. Գալբան նրան Ստորին Գերմանիա նշանակեց անսպասելիորեն: Ենթադրում են, որ Վիտելլիոսին իր աջակցությամբ օգնեց Տիտոս Վինիոսը, որի հետ նա վաղուց էր մոտ կրկեսում «կապույտների» նկատմամբ ունեցած ընդհանուր հակումով և որն այդ ժամանակ մեծ զորության տեր էր: Սակայն Գալբան ինքը հայտարարում էր, որ ամենից քիչ պետք է վախենալ նրանից, ով միայն ուտելիքի մասին է խորհում, և որ, գուցե, պրովինցիայի հարստությունները հագեցնին նրա անկուշտ կոկորդը,— որ ամեն մեկին պարզ է, որ Վիտելլիոսին նշանակում տրվել էր ոչ այնքան «ողորմածությունից, որքան արհամարհանքից: (2) Հայտնի է, որ ճանապարհի համար էլ նա դրամ շուներ՝ նա այնպիսի կարիքի մեջ էր ապրում, որ Հռոմում թողնված կնոջ ու երեխաների համար վարձեց ինչոր մի ձեղնահարկ, իսկ իր ամբողջ տունը վարձով տվեց. ճանապարհածախսի համար նա պետք է գրավ դներ մոր ականջօղի մարգարիտը: Պարտատերերի բազմությունը պաշարել էր նրան և բաց չէր թողնում. նրանց թվում կային նաև Ֆորմիքի և Սինուեսսայի բնակիչներ, քաղաքներ, որոնցից նա հարկ էր գանձում հօգուտ իրեն, և նա նրանցից ձերբազատվելից սոսկ վախեցնելով զրպարտանքով. մի ազատարձակի, որը հատկապես եռանդով էր պահանջում վճարը, նա պահանջեց պատաս-

խանատվութիւն կանչել գործողութեամբ վիրավորելու համար, հավատացնելով, թե իբր սա հարվածել էր ոտքով, և ձեռք չբաշեց այնքան ժամանակ, մինչև նրանից հիսուն հազար սեստերցիում չպոկեց:

(3) Զորքը, որ առանց այդ էլ թշնամաբար էր տրամադրված կայսեր նկատմամբ և հակված էր խռովութիւն բարձրացնելու, նրան ցնծութեամբ դիմավորեց, ձեռքերը համբարձելով երկինք. նոր պետը՝ եռակի կոնսուլի որդին, ինքը ծաղկուն տարիքում, սիրալիր ու առատաձեռն, թվում էր աստվածների պարզև: Այդ վաղեմի կարծիքը Վիտելլիոսն ամբողջապէս նոր ապացույցներով՝ ճանապարհին հանդիպելիս նա համբուրվում էր նույնիսկ հասարակ զինվորների հետ, իջևանատներում ու պանդոկներում զարմանալիորեն սիրալիր էր և՛ ուղեկիցների, և՛ գրաստապանների հետ, իսկ առավոտյան, նույնիսկ, յուրաքանչյուրին հարցնում էր, արդյոք նախաճաշել է, և զկոտում էր, որպեսզի ցույց տա, որ նա ինքն արդեն նախաճաշել է: Իսկ ճամբար մուտք գործելուց հետո արդեն նա ոչ ոքի ոչ մի բան չէր մերժում, և ինքն էր ազատում մեղավորներին անպատվութիւնից, պատասխանողներին՝ մեղադրանքներից, դատապարտվածներին՝ պատժից:

Դրա համար էլ մեկ ամիս էլ չէր անցել¹⁴, ինչ զինվորները, շնայելով ոչ օրվանը, ոչ էլ ժամին, մի անգամ երեկոյան հանկարծ նրան դուրս բաշեցին ննջարանից, ողջունեցին իբրև կայսեր և ձեռքերի վրա պտտեցին ամենամարդաշատ գլուղերով: Զեռքին նա բռնել էր աստվածային Հուլիոսի սուրը Մարսի սրբավայրից, որք մատուցել էր ինչ-որ մեկը առաջին շնորհավորանքների ժամանակ: (2) Իր վրանը նա միայն այն ժամանակ վերադարձավ, երբ ճաշասենյակում օջախից հրդեհ բռնկվեց՝ բոլորք տազնապի մեջ էին, ասես վախեցած շար նախանշանից, բայց նա բացականչեց. «Համարձակ, այդ լույսը մեզ համար է»,— և դա նրա միակ ճառն էր ուղղված զինվորներին: Վերին պրովինցիայի¹⁵ զորքերը սատարեցին նրան— նրանք դեռ ավելի վաղ էին լքել Գալբային հանուն սենատի. և այնժամ ընդհանուր խնդրանքով նա պատրաստակամութեամբ ընդունեց Գերմանիկոս մականունը, Օգոստոս անունը թողեց հետագային, իսկ Կեսարի անունից հրաժարվեց մեկընդմիջտ:

9. Շուտով հայտնի դարձավ Գալբայի սպանութիւնը: Եվ այնժամ նա, կարգավորելով գերմանական զորքերը, բաժանեց իր զորքերը¹⁶, որպեսզի նրանց մի մասը ուղարկի առաջ ընդդեմ Օտոնի, մյուս մասն էլ ինքը առաջնորդի: Առաջապահ զորքը ճանապարհ ընկավ բարի նախանշանով՝ աջ կողմից հանկարծ հայտնվեց մի արծիվ, պտտվեց նրանց նշանների վրայով և զանդաղ սավառնեց լեզեոնների առջևից. և, ընդհակառակն, երբ նա ինքը ճանապարհ ընկավ, ապա ամենուր նրա պատ-

վին կանգնեցված ձիարձանները բոլորը հանկարծ փլվեցին ջարդոտված ոտքերով, իսկ նրա գլխին հանդիսավորապես դրված դափնեպսակը ընկավ հեղեղի մեջ. և ապա Վիեննայում, երբ նա բարձրից դատ էր վարում, նրա ուսին, ապա գլխին աքաղաղ նստեց¹⁷: Այդ կանխանշաններին համապատասխանեց ելթը՝ լեզատները նրա համար իշխանութուն նվաճեցին, բայց նա ինքը չկարողացավ պահել այն:

10. Բետրիակումի տակ տարած հաղթանակի և Օտոնի կործանման մասին նա լսեց դեռևս Գալլիայում: Առանց հապաղելու, մեկ էդիկտով նա ցրեց բոլոր պրետորական կոհորտաները իբրև վատ օրինակ ծառայածներին¹⁸, հրամայելով նրանց զենքերը հանձնել տրիբուններին. իսկ հայտնաբերելով, որ հարյուր քսան մարդ Օտոնին խնդրագիր են մատուցել պարզևատրելու իրենց՝ Գալլիայի սպանության ժամանակ օգնություն ցույց տալու համար, նա կարգադրեց փնտրել-գտնել բոլորին և մահապատժի ենթարկել: Անշուշտ, այդ արարքները արժանավոր ու գեղեցիկ էին, և թույլ էին տալիս հուսալ, որ նա մեծ տիրակալ կլինի. սակայն նրա մնացյալ գործերը ավելի շատ համապատասխանում էին նրա նախկին կյանքին ու բարքին, քան իշխանության վեհաթյանը: (2) Այսպես, հազիվ արշավանքի ելած, նա քաղաքներով անցնում էր իբրև տրիումֆատոր, նավարկում էր գեաերով փստահեղ, խայտաբղետ պսակներով զարդարված նավակներով, շրջապատված առատ ու համեղ խորտիկներով, հոգ շտանելով կարգի մասին՝ ոչ արքունիքում, ոչ զորքի մեջ, կատակի տալով ցանկացած կողոպուտներն ու բռնությունները. մինչդեռ նրա ուղեկիցները, չբավարարվելով ամենուր ժողովրդի սարքած հյուրասիրություններով, զվարճանում էին նրանով, որ ազատ էին արձակում ուրիշների ստրուկներին, իսկ նրանց, ովքեր ժիջամտում էին, ծեծում էին, հաճախ վերքեր հասցնում, անգամ սպանում: (3) Երբ հասան այն դաշտին, որտեղ տեղի էր ունեցել ճակատամարտը, և ինչ-որ մեկը սոսկաց փտող դիակների տեսքից, նա անպատկառորեն խրախուսեց նրան այս նողկալի խոսքերով. «Լավ բույր է արձակում թշնամու դիակը, իսկ էլ ավելի լավ՝ քաղաքացունը»: Բայց և այնպես, որպեսզի զարշիբ հոտը չզգա, նա ինքն էլ բոլորի ներկայությամբ զուտ գինի խմեց և կարգադրեց մատուցել մնացածներին: Նույնպիսի սնապարծ գոռոզամտությամբ, նայելով Օտոնի հիշատակին կանգնեցված մակագրված քարին, նա արտաբերեց. «Ահա նրան արժանի դամբարանը», իսկ այն դաշույնը, որով Օտոնը ինքնասպան էր եղել, կարգադրեց ուղարկել Ագրիպպինա փառութիւն և նվիրաբերել Մարսին: Իսկ Ապենինյան լեռներում նույնիսկ գիշերային տոնահանդես կատարեց¹⁹:

11. Հռոմ նա մուտք գործեց շեփորների հնչյունների ներքո, գինովո-

րական թիկնոցով, սուրը գոտկին. դրոշներով ու նշաններով շրջապատված՝ նրա շքախումբը արշավանքի հագուստներով էր, զինվորները՝ մերկացրած դաշույններով²⁰: (2) Ապա, գնալով ավելի ու ավելի հանդգնորեն ոտնակոխ անելով աստվածների ու մարդկանց օրենքները, նա Ալլիայի²¹ մոտ տեղի ունեցած ճակատամարտի օրը ընդունեց մեծ քրմապետի աստիճանը, պաշտոնատար անձանց նշանակեց տասը տարով առաջ, իսկ իրեն հայտարարեց ցմահ կոնսուլ²²: Եվ որպեսզի ոչ մի կասկած չմնա, թե ով է լինելու պետութայն կառավարման գործում այն օրինակը, որին հետևելու է, նա Մարսյան դաշտում, շրջապատված պետական քրմերի բազմությամբ, ներոնի համար մատուցեց հիշատակի զոհեր, իսկ տոնական խնջույքին վայելելով կիֆարահար-երգչի երգը, բոլորի ներկայությամբ խնդրեց որևէ բան երգել տիրոջից²³, և երբ սա սկսեց ներոնի երգը, նա առաջինն սկսեց ծափահարել և նույնիսկ թռչկոտում էր ուրախությունից:

12. Այդպիսին էր սկիզբը. իսկ հետո նա սկսեց իշխել բացառապես գրեթե ըստ ամենաանպիտան դերասանների ու մարտակառավարների, հատկապես, ազատարձակ Ազիատիկոսի կամքի: Այդ պատանուն նա պղծեց փոխադարձ անառակությամբ. սրան դա շուտով ձանձրացրեց, և նա փախավ. Վիտելլիոսը նրան բռնեց Պուտեոլքում, որտեղ նա քացախաջուր²⁴ էր վաճառում, շղթայել տվեց, տեղնուտեղն ազատեց և կրկին դարձրեց սիրեցյալ. հետո, տանջվելով նրա կամակորուժյունից և գողություն անելու հակումից, նրան վաճառեց թափառաշրջիկ գլադիատորների, բայց, շապասելով հանդիսախաղի ավարտին և նրա հանդես գալուն, կրկին առևանգեց գլադիատորներից: Նշանակում ստանալով պրովինցիա, Վիտելլիոսը վերջապես նրան ազատ արձակեց, իսկ տիրակալման առաջին իսկ օրը ընթրիքի ժամանակ նրան ոսկե մատանիներ նվիրեց, թևեղեղև առավոտյան բոլորը նրան այդ մասին խնդրել էին, իսկ նա վրդողովել էր հեծյալների դասին վիրավորանք հասցնելու այդ մտքից:

13. Բայց ամենից ավելի նա աչքի էր ընկնում որկրամոլությամբ և դաժանությամբ: Օրական երեք անգամ խնջույք էր սարքում, երբեմն էլ չորս անգամ՝ առավոտյան և կեսօրյա նախաճաշի, ճաշի և ընթրիքի ժամանակ. և նա բոլորին էլ ներկա էր լինում, քանի որ ամեն անգամ փրսխադեղ էր ընդունում: Միևնույն օրը տարբեր ժամերի նա հյուրասիրություն էր հարկադրում տարբեր բարեկամների, և յուրաքանչյուրին նման հյուրասիրությունը նստում էր չորս հարյուր հազարից²⁵ ոչ պակաս: (2) Ամենանշանավորն այն խնջույքն էր, որ սարքել էր եղբայրը նրա ժամանման պատվին. ասում են, որ այդ խնջույքին մատուցվեց երկու հազար ընտիր ձուկ և յոթ հազար ընտիր թռչուն: Բայց նա ինքը մթազ-

նեց այդ խնջույքը, ստեղծելով այնպիսի մեծուգայան մի սկուտեղ, որը նա ինքն անվանում էր «Մինեռվա կարկտակալի վահան»²⁶: Այստեղ իրար էին խառնված սկար ձկան լյարդ, փասիանի և սիրամարգի ուղեղ, ֆլամինգոյի լեզու, մուրենայի սերմնահյութ, որի համար նա նավեր ու նավավարներ էր ուղարկում Պարթևաստանից²⁷ մինչև Իսպանական նեղուցը: (3) Չափ ու սահման չիմանալով որկրամոլության մեջ, շէր պահպանում ոչ ժամանակ, ոչ էլ պատշաճություն նույնիսկ զոհ մատուցելիս, նույնիսկ ճանապարհորդության ժամանակ շէր կարողանում զսպել իրեն՝ հենց այդտեղ, զոհասեղանի մոտ, նա գրեթե կրակի միջից ճանկում ու խժռում էր միսն ու բլիթները, իսկ ճանապարհի պանդոկներում շէր խորշում տեղի ծխահար ուտեստներից, թեկուզև դրանք լինեին երեկվա մնացորդներ:

14. Պատժելն ու մահապատժի ենթարկելը, ում էլ լիներ և ինչու էլ լիներ, նրա համար հաճույք էր: Անվանի մարդկանց, իր հասակակիցներին ու դասընկերներին նա ամեն կերպ քծնում էր և հաճոյանում, գրեթե կիսում նրանց հետ իշխանությունը, իսկ հետո զանազան խարդավանքներով սպանել տալիս: Մեկին նա նույնիսկ սեփական ձեռքերով սառը ջրի մեջ լցրած թույն մատուցեց, երբ սա տենդի մեջ ջուր խնդրեց: (2) Այն կապալառուներից, պարտատուներից, լումայափոխներից, ովքեր երբևէ նրանից հոռմում պարտք կամ ճանապարհին մաքս էին գանձել, հազիվ թե որևէ մեկին կենդանի թողեց: Նրանցից մեկին նա մահապատժի ուղարկեց ողջույնից հետո, ասլա անմիջապես ետ բերել տվեց և, մինչ բոլորը գովաբանում էին նրա գթասրտությունը, հրամայեց խողխողել իր աչքի առջև: «Ես ուզում եմ կշտացնել հայացքս»²⁸, — ասաց նա: Մեկ ուրիշի համար աղերսեցին սրա երկու որդիները, նա մահապատժի ենթարկեց նրանց հոր հետ միասին: (3) Մի հոռմեացի հեծյալ, որին մահապատժի էին քարշ տալիս, բղավեց նրան. «Դու իմ ժառանգն ես»: նա կարգադրեց ցույց տալ նրա կտակը, այնտեղ տեսավ, որ իր համաժառանգն է մի ազատարձակ, և հրամայեց մահապատժի ենթարկել սզատարձակին հեծյալի հետ միասին: Հասարակ ժողովրդից մի բանի հոգու նա սպանեց միայն այն բանի համար, որ նրանք կրկեսում վատ էին արտահայտվել «կապույտների» մասին. դրանում նա տեսնում էր արհամարհանք իր նկատմամբ և տիրակալների փոփոխության հույս: (4) Բայց ամենից ավելի շարակամ նա տրամադրված էր ծանակողների²⁹ և աստղագուշակների նկատմամբ և առաջին իսկ մատնությամբ ցանկացածին մահապատժի էր ենթարկում առանց դատաստանի. նրան կատաղեցրել էր գաղտնի քցված նամակը, որը հայտնվել էր մինչև հոկտեմբերյան կալենդները աստղագուշակներին Հոռմից ու Իտալիայից ար-

տաքսելու նրա էղիկտից հետո. «Բարի Հաջողում, ապում են քաղեցնեքը, իսկ Վիտելլիոս Գերմանիկոսը մինչ հոկտեմբերի կալենդները կենդանի չի մնա»³⁰: (5) Նրան կասկածում էին նույնիսկ մոր սպանության մեջ՝ կարծում էին, որ նա մոր հիվանդության ժամանակ նրան չի կերակրել, որովհետև քատտերի ցեղից մի կին, որին նա հավատում էր, ինչպես պատգամախոսի, կանխագուշակել էր, թե նրա իշխանությունը միայն այն ժամանակ հաստատուն ու երկարատև կլինի, եթե նա վերապրի իր ծնողներին³¹: Իսկ ուրիշները պատմում էին, թե իբր մայրն ինքը, տառապելով ներկայից և սարսափելով ապագայից, որդուց թույն է խնդրել և ստացել այն առանց դժվարության:

15. Տիրակալության ութերորդ ամսում նրա դեմ խռովություն բարձրացրին Մյուզիայում և Պաննոնիայում տեղակայված զորքերը, իսկ հետո նաև ծովից այն կողմ՝ Հրեաստանում և Ասորիքում գտնվող զորքերը՝ մասամբ հեռակա կարգով, մասամբ էլ անձամբ նրանք երդում էին բերել Վեսպասիանոսին: Որպեսզի պահպանի մնացյալ ժողովրդի հավատարմությունն ու բարյացակամությունը, նա արդեն չէր խնայում ոչ իր, ոչ պետական միջոցները: Զորակոչ հայտարարելով Հռոմում՝ նա կամավորներին խոստացավ ոչ միայն պաշտոնաթողություն հաղթանակից հետո, այլև պարգևներ, որպիսին սոսկ վետերաններն էին ստանում ծառայության լրիվ ժամկետի համար: (2) Թշնամին հարձակվում էր ցամաքից ու ծովից, որի դեմ նա ուղարկեց ծովի կողմից³² իր եզրորը նավատորմով, նորակոչիկներով ու գլադիատորների ջոկատով, իսկ ցամաքի կողմից՝ այն զորավարներին ու զորքը, որոնք հաղթանակ էին տարել Բետրիակումի մոտ: Բայց ամենուր նա կամ ջախջախվեց, կամ նրան դավաճանեցին. և այնժամ, խնդրելով Փլաբիոս Սաբինոսին՝ Վեսպասիանոսի եղբորը, նա իրեն կյանք ու հարյուր միլիոն սեստերցիում վերապահեց³³:

Պալատի աստիճաններից նա իսկույն հայտարարեց զորքերի բազմ. Թյանը, որ ցած է դնում իշխանությունը, որն ընդունել էր հակառակ իր կամքի: Վրդովմունքի գոչուն բարձրացավ, և խոսակցությունը հարկ եղավ հետաձգելու Անգավ գիշերը. արշալույսին սգո զգեստով նա ելավ ոտստրալային տրիբունա և դառն արցունքներով կրկնեց նույնը, բայց արդեն ըստ գրածի: (3) Կրկին զինվորներն ու ժողովուրդը նրան ընդհատեցին, կոչ անելով նրան արիանալ, և, միմյանց խոսք կտրելով, առաջարկեցին իրենց օգնությունը: Այնժամ նա գոտեպնդվեց՝ հանկարծակի թերելով հարձակվելով Սաբինոսի և փլաբիակաանների վրա, որոնք իրենց անվտանգ էին զգում, նրանց նեղելով քշեց Կապիտոլիում, հրկիզեց Բարի և Մեծն Յուպիտերի³⁴ տաճարը և բռնորդն ու շնչացրեց, իսկ ինքն ան-

ձամբ դիտում էր ճակատամարտն ու հրդեհը Տիբերիոսի պալատից, խնջույք անելով:

Բայց կարճ ժամանակ անց նա արդեն ցավում էր արարքի համար: Մեղքն ուրիշների վրա բարդելու համար նա հավաք գումարեց և նրա առջև ինքը երդվեց և մյուսներին ստիպեց երդվել, որ իր համար չկա ավելի սուրբ բան, քան հասարակական անդորրը: (4) Հետո նա վրայից հանեց դաշույնը³⁵ և մատուցեց նախ կոնսուլին, հետո, երբ սա չվերցրեց, պաշտոնատար անձանց, հետո մեկ-մեկ՝ սենատորներին. ոչ ոք չընդունեց դաշույնը, և նա հեռացավ, ասես ցանկանալով այն նվիրաբերել Համաձայնության տաճարին. բայց ինչ-որ մեկը գոչեց. «դու ինքդ Համաձայնություն ես», և նա վերադարձավ, հայտարարելով, թե դաշույնը կպահի իր մոտ և այսուհետ կընդունի Համաձայնություն մականունը: 16. Իսկ սենատին նա առաջարկեց դեսպաններ և կույս վեստալուհիներ³⁶ ուղարկել հաշտութուն խնդրելու կամ գեթ բանակցությունների ժամկետի մասին պայմանավորվելու:

Հաջորդ օրը նա պատասխանի էր սպասում, երբ հանկարծ մի լրտես լուր բերեց, թե թշնամիները մոտենում են: Իսկույնեթ նա թաքնվեց ճոճաթոռում և միայն երկու ուղեկիցների՝ հացթուխի ու խոհարարի հետ գաղտնի շտապեց Ավենտինյան բլրի վրա գտնվող հայրական տունը, որպեսզի այստեղից Կամպանիա³⁷ փախչի: Բայց այստեղ մի սին լուր տարածվեց, թե իբր հաջողվել է հաշտության հասնել, և նա թույլ տվեց իրեն կրկին պալատ տանել: Այստեղ ամեն ինչ արդեն լքված էր, նրա մարդիկ դես ու դեն էին փախել. այնժամ նա ոսկով լեցուն մի գոտի կապեց և թաքնվեց դոնապանի խցիկում, դուռն մոտ մի շուն կապելով և դուռը պատնեշելով մահճակալով ու ներքնակով:


17. Առաջապահ զինվորներն արդեն պալատ էին ներխուժել և, ոչ ոքի չգտնելով, սովորականի պես ծակուծուկերն էին փնտրտում: Նրան դուրս քաշեցին թաքստոցից և սկսեցին հարցուփորձել, թե ով է, չգիտե՞ս արդյոք, թե որտեղ է Վիտելլիոսը, — նրան դեմքով չէին ճանաչում: Նա ստեց և օձիքն ազատեց, բայց շուտով նրան ճանաչեցին³⁸, այնժամ նա սկսեց անդադրում բղավել, որպեսզի առայժմ թողնեն կալանքի տակ, թեկուզ բանտում — նա Վեսպասիանոսի կյանքի համար կարևոր բան ունի ասելու: Ի վերջո, ձեռքերը մեջքին կապելով, օղապարանը վզին, պատառոտված հագուստներով, կիսամերկ, նրան քարշ տվեցին ֆորում:

Ողջ սրբազան ճանապարհի երկայնքով ժողովուրդը նրա գլխին ծաղրանք էր տեղում՝ շինայելով ոչ խոսք, ոչ էլ գործ. մազերից բռնած նրա գլուխը ետ էին ձգում, ինչպես բոլոր հանցագործներին, ծնոտին թրի սալը էին դեմ անում, որպեսզի նա չկարողանար դեմքը խոնարհել,

և բոլորին տեսանելի լինեն³⁹. (2) ոմանք նրա վրա ցեխ ու գոմաղբ էին շարտում, մյուսները որկրամուլ ու հրձիգ անվանում, երրորդներն ամբոխի մեջ փնովում էին նույնիսկ նրա մարմնական թերությունները՝ Իսկապես, նա վիթխարի հասակ ուներ, մշտական հառբեցողությունից կարմրած դեմք, հաստափոր էր, թույլ կոնքերով, որը նա վնասել էր դիպչելով մարտակառքին՝ վազքարշավում Գայոսին սպասարկելիս: Վերջապես, Գեմոնիայում⁴⁰ նրան պատառ-պատառ արեցին և սպանեցին մանր հարվածներով, իսկ այստեղից կարթածողով քարշ տվեցին Տիրոս:

18. Կործանվեց նա եղբոր ու որդու հետ՝ կյանքի հիսունութերորդ տարում⁴¹: Եվ շսխալվեցին իրենց կռահումներում նրանք, ովքեր Վիեննայում կատարված մարգարեական դեպքից ելնելով, որի մասին մենք արդեն հիշատակել ենք, կանխագուշակել էին, որ նա ընկնելու է ոմն զալլացու ձեռքը. իսկապես, նրան սպանեց Անտոնիոս Պրիմոսը, թշնամու զորավարը, ծագումով Տոլոզայից, որին երեխա ժամանակ «Բեկկոն» էին անվանում, որ նշանակում է «աքաղաղի կտուց»:





ՎԵՍՊՈՒԱ-ՍԻԱՆՈՍ



1. Տերությունը, որը երերացել և անիշխան էր մնացել երեք կայսրերի խռովություններից ու կործանումից հետո, վերջապես ընդունեց և իր իշխանությամբ ամրապնդեց Փլաբիոսների տոհմը: Այդ տոհմն անշան էր, նախնիների պատկերներ՝ շուներ, բայց պետությունը հարկ շունեցավ ամոթահարվել նրա պատճառով, թեև գտնում են, որ Դոմիցիանոսն իր ազահության ու դաժանության համար արժանի պատիժ կրեց:

(2) Տիտոս Փլաբիոս Պետրոնը Ռեատե քաղաքից քաղաքացիական պատերազմի ժամանակ Պոմպեոսի մոտ կամ այն է ցենտուրիոն էր եղել, կամ գերաժամկետ ծառայության մեջ գտնվող զինվոր, Ֆարսալի ճակատամարտից հետո նա տուն էր վերադարձել, ներում և պաշտոնաթողություն էր ստացել և զբաղվել էր վաճառքներում դրամի հավաքումով: Սաբինոս անունով նրա որդին զորքերում արդեն չէր ծառայել — ի դեպ ոմանք ասում են, որ նա ցենտուրիոն կամ նույնիսկ ավագ ցենտուրիոն էր եղել և ծառայությունից ազատվել էր վատառողջության պատճառով. նա Ասիայում քառասուներորդ բաժնի² հարկահավաք էր եղել, և ավելի ուշ դեռևս կարելի էր տեսնել արձաններ, որ քաղաքները կանգնեցրել էին նրա պատվին՝ «Արդարամիտ հարկահավաքին»³ մակագրությամբ: (3) Այնուհետև նա վաշխառու էր եղել հելվետների⁴ երկրում. այնտեղ էլ նա մահացել էր, թողնելով կնոջը՝ Վեսպասիա Պուլլային, երկու որդիների հետ, որոնցից ավագը՝ Սաբինոսը, հետո դարձավ քաղաքային պրեֆեկտ, իսկ

կրտսերը՝ Վեսպասիանոսը, կայսր: Պուլլան ծագումով Նուրսիայից էր, անվանի տոհմից. նրա հայրը՝ Վեսպասիոս Պուլլիոնը, երիցս զինվորական տրիբուն էր եղել և ճամբարի պետ⁵, իսկ եղբայրը՝ պրետորական կոշման սենատոր: Կա եռաբնակ Վեսպասք⁶ անունով մի վայր, վեցերորդ մղոնի վրա գտնվող լեռան կատարին, երբ Նուրսիայից Սպուլեցիում ես գնում. այստեղ կարելի է Վեսպասիանոսների շատ հուշարձաններ տեսնել՝ տինհայտ մի վիպյություն այդ տոհմի հնության և փառքի մասին: (4) Ես չեմ ժխտում, որ ո՛մանք ասում են, թե իբր Պետրոնի հայրը ծագումով Տրանսպադանական մարզից էր և կապալներով էր զբաղվում այն արտելներում, որոնք ամեն տարի Ումբրիայից գնում էին սաբինացիների մոտ գյուղական աշխատանքի, հետո բնակություն էր հաստատել Ռեատե քաղաքում և այնտեղ էլ ամուսնացել. բայց ես ինքս, ոչ մի ջանք չիսնայելով հանդերձ, այդ մասին ոչ մի վկայություն չկարողացա գտնել:

2. Վեսպասիանոսը ծնվել է սաբինոսների երկրում, Ռեատեի մոտ, Ֆալակրինա անունը կրող գյուղակում, Լրեկոյան, տասնհինգերորդ օրը մինչև դեկտեմբերյան կալենդները, Քվինտոս Սուլպիցիոս Կամերինոսի և Գայոս Պոպպեոս Սաբինոսի կոնսուլության օրոք, Օգոստոսի վախճանվելուց հինգ տարի առաջ⁷: Նա մեծացավ Տերտուլլայի՝ իր հորական տատի, հսկողության ներքո, Կոզայի⁸ մոտի նրա կալվածքում: Արդեն տիրակալ դառնալով՝ նա հաճախ էր այցելում իր մանկության վայրերը. վիլլան նա պահպանում էր նախկին տեսքով, որպեսզի այն ամենը, ինչին սովորել էր նրա աչքը, մնար անփոփոխ: Իսկ տատի հիշատակը նա այնպես էր պատվում, որ տոնակատարությունների ու հանդիսությունների ժամանակ միշտ խմում էր նրա արծաթյա գավաթից:

(2) Զափահաս դառնալուց հետո նա երկար ժամանակ չէր ցանկանում սենատորական տոգա հագնել, թեև նրա եղբայրն այն արդեն կրում էր⁹. միայն մայրը, ի վերջո, կարողացավ հասնել դրան, այն էլ ավելի շատ լուտանքներով, քան լուրջանքներով ու ծնողական իշխանությամբ. նա ամբողջ ժամանակ պախարակում էր որդուն, կրկնելով, որ նա մնացել է եղբոր հանձնակատարը¹⁰: (3) Նա որպես զինվորական տրիբուն ծառայել էր Թրակիայում, քվեստորայից հետո վիճակահանությամբ ստացել էր Կրետե և Կիրենա¹¹ պրովինցիան. հանդես գալով որպես էդիլի և պրետորի պաշտոնների հայցող, մի պաշտոնը նա ստացավ ոչ առանց դիմադրության և ցուցակով¹² միայն վեցերորդը, դրա փոխարեն մյուսն ստացավ առաջին իսկ խնդրանքով և առաջինների թվում: Պրետոր եղած ժամանակ նա ոչ մի առիթ բաց չէր թողնում հաճոյանալու Գայոսին, որն այդ ժամանակ անհամբուսչիս էր սենատի հետ. ի պատիվ նրա գերմա-

նական հաղթանակի¹³ նա պահանջեց արտահերթ հանդիսախաղեր սարքել, իսկ դավադիրներին¹⁴ պատժելիս ի հավելումն առաջարկեց նրանց գիակաները անթաղ թողնել: Իսկ Գայոսից արժանանալով ճաշկերույթի հրավերի, նա սենատի առջև շնորհակալական ճառ արտասանեց:

3. Այդ ժամանակ նա ամուսնացավ Փլարիա Դոմիցիլլայի՝ ծագումով Աֆրիկայում գտնվող Սարրատայից հռոմեացի հեծյալ Ստատիլիոս Կապելլայի նախկին սիրուհու հետ. սա միայն լատինական քաղաքացիություն ուներ, բայց հետո ռեկուպերատորների¹⁵ դատարանի կողմից հայտարարվեց ազատածին և Հռոմի քաղաքացի հոր՝ Փլարիոս Լիբերալոսի միջնորդությամբ, որը ծագումով Ֆերենտինումից էր և գանձարանում ընդամենը սոսկ գրագիր էր: Նրանից Վեսպասիանոսն ուներ երեխաներ՝ Տիտոսին, Գոմիցիանոսին և Դոմիցիլլային: Կնոջն ու աղջկան նա կորցրեց դեռևս իր հասարակ քաղաքացի եղած ժամանակ: Կնոջ մահից հետո նա կրկին իր մոտ տարավ իր նախկին հարճ Ցենիդային՝ Անտոնիայի¹⁶ ազատարձակուհուն և գրագրուհուն, և սա նրա հետ ապրեց գրեթե որպես օրինական կին, նույնիսկ այն ժամանակ, երբ Վեսպասիանոսն արդեն կաշսր էր դարձել:

4. Կլավդիոսի տիրակալության ժամանակ նա Նարկիսի ողորմածությամբ ուղարկվեց Գերմանիա որպես լեգեոնի լեգատ, իսկ հետո փոխադրվեց Բրիտանիա, որտեղ մասնակցություն բերեց թշնամու դեմ մղված երեսուն մարտերի և հնազանդեցրեց երկու ուժեղ ցեղեր, ավելի քան քսան քաղաք և Բրիտանիային հարակից Վեկտիս¹⁷ կղզին, կովելով մերթ Ավլոս Պլավտիոսի՝ կոնսուլական կոչման տեր լեգատի, մերթ իր՝ Կլավդիոս կայսեր հրամանատարության ներքո: (2) Դրա համար նա ստացավ տրիումֆային զարդարանքներ, ապա շուտով՝ երկու քրմական աստիճան¹⁸ և, վերջապես, կոնսուլություն. այդ պաշտոնում նա նշավ տարվա երկու վերջին ամիսներին¹⁹: Դրանից հետո ընդհուպ մինչև իր պրոկոնսուլությունը նա ապրում էր անպաշտոն և առանձնության մեջ, երկյուղ կրելով Ագրիպպինայից, որը որդու օրոք դեռևս զորություն ուներ և ատում էր արդեն մեռած Նարկիսի բարեկամներին: (3) Ըստ վիճակահանության նա ի կառավարումն ստացավ Աֆրիկան և կառավարում էր այն ազնվորեն ու մեծ արժանապատվությամբ²⁰, եթե չհաշվենք, որ մի անգամ Հադրուսիում խռովության ժամանակ նրա վրա շաղգամ նետեցին: Համենայն դեպս, նա պրովինցիայից վերադարձավ ամենևին չհարստացած, կորցրեց պարտատուների վստահությունը և հարկադրված էր իր բոլոր կալվածները գրավ գնել եղբոր մոտ, իսկ իր դիրքը պահպանելու համար դրադժել ջորիների վաճառքով²¹ — դրա համար էլ ժողովուրդը նրան «խշապան» էր անվանում: Ասում են նաև, որ նա երկու

հարյուր հազար սեստերցիում ստացավ մի պատանուց, որի համար հաջողեցրեց սենատորական զգեստ ձեռք բերել հակառակ նրա հոր կամքի, և դրա համար խիստ նկատողութուն ստացավ: (4) Իսկ իր նկատմամբ ներոնի դաժան անբարյացակամութունը հարուցեց նրանով, որ Հունաստանում նրա ուղևորության ժամանակ հաճախ նրա երգելու պահին կամ դուրս էր գալիս, կամ քնում էր տեղում: Նրան արգելվեց ոչ միայն ուղեկցել, այլև ողջունել կայսրին²², և նա հանգստի հեռացավ մի հեռավոր փոքրիկ քաղաք, որտեղ ապրում էր անհայտության և կյանքի համար ունեցած երկյուղի մեջ, մինչև որ հանկարծ անսպասելիորեն պրովինցիա և զորք ստացավ:

(5) Արևելքում տարածված էր վաղեմի և հաստատուն այն համոզմունքը, որ Հրեաստանից ելածներին ճակատագրով սահմանված է այդ ժամանակ տիրելու աշխարհին: Իրադարձությունները ցույց տվեցին, որ դա վերաբերում էր հոռմեական կայսրին²³. բայց հրեաները, նախագուշակությունն ընդունելով իրենց հասցեին, խոռվություն բարձրացրին, սպանեցին փոխարքային, փախուստի մատնեցին նույնիսկ կոնսուլական լեգատին, որը հայտնվել էր Ասորիքից զորավիգ ուժերով, և նրանից խլեցին արծիվը: Ապստամբությունը ճնշելու համար պահանջվում էր մեծաքանակ զորք և ուժեղ զորավար, որին կարելի լիներ նման մի գործ վստահել առանց երկմտանքի. և ընտրվեց Վեսպասիանոսը որպես փորձված ջանասիրության տեր մի մարդ և ամենևին էլ ոչ վտանգավոր՝ իր տոհմի ու անվան համեստության պատճառով: (6) Եվ ահա, տեղական զորքերին ի համալրումն ստանալով երկու լեգեոն, հեծելազորի ութ ջոկատ, տասը կոհորտա և հետը վերցնելով ավագ որդուն որպես լեգատներից մեկը, նա հայտնվեց Հրեաստանում և իսկույն դեպի իրեն տրամադրեց նաև հարևան պրովինցիաները. ճամբարներում նա արագ կարգ ու կանոն հաստատեց, իսկ առաջին իսկ ճակատամարտերում այնպիսի քաջութուն ցուցաբերեց, որ մի ամբողջի²⁴ պաշարման ժամանակ ինքը վիրավորվեց ծնկից քարով, իսկ նրա վահանի մեջ մի քանի նետեր մխրճվեցին:

5. Ներոնից հետո, երբ իշխանության համար պայքարում էին Գալբան, Օտոնը և Վիտելլիոսը, նրա մեջ կայսր դառնալու հույս ծնվեց: Այդ հույսը նրան ներշնչվել էր ս.վելի վաղ և ահա թե ինչպիսի նախանշաններով: (2) Փլաբիոսների գյուղական կալվածում մի հին կաղնի կար՝ նվիրաբերված Մարսին. բոլոր երեք անգամ էլ, երբ Վեսպասիան ծննդաբերում էր, նրա բնին անսպասելիորեն նոր ճյուղեր էին աճում՝ ակնհայտ ցուցում յուրաքանչյուր նորածնի ապագայի մասին: Առաջինը թույլ էր և իսկույն շորացավ և, իսկապես, ծնված աղջիկը մեկ տարի էլ չապրեց,

Երկրորդն ամուր էր ու երկար, որը մատնանշում էր մեծ երջանկութիւն, իսկ երրորդն ինքը կարծես ծառ լիներ: Դրա համար էլ, ասում են, նրա հայր Սարիսոսը, քաջալերված նաև գուշակությամբ, ուղղակի հայտարարեց իր մորը, որ նրան մի թոռ է ծնվել, որը կեսար է լինելու, բայց մայրը քրքջացել էր և զարմացել, որ ինքը դեռ ողջամիտ է, իսկ որդին արդեն խելքը թոցրել է: (3) Հետո, երբ նա էղիլ էր, Գայոս Կեսարը զայրացել էր, որ նա հոգ չի տանում փողոցների մաքրությանը, և զինվորներին կարգադրել էր նրա սենատորական տոգայի ծոցը ցելս լցնել. բայց գտնվեցին մեկնաբանողներ, որոնք ասացին, թե այդպես երբևէ նրա պաշտպանության տակ և մի տեսակ նրա գիրկը կընկնի ամբողջ պետութիւնը՝ անտեսված ու ոտնակոխ եղած երկպառակտչական գժտութիւններից: (4) Մի անգամ, երբ նա նախաճաշում էր, թափառաշրջիկ մի շուն խաչմերուկից նրա մոտ բերեց մարդկային մի ձեռք²⁵ ու նետեց սեղանի տակ: Մի ուրիշ անգամ ճաշելու ժամանակ լծից պոկված մի ցուլ ներխուժեց ճաշասենյակ, փախուստի մատնեց ծառաներին, բայց հանկարծ, ասես ուժասպառ լինելով, փլվեց օթոցի առջև, նրա ոտքերի տակ, վիզը ծռած: Նրա ժառանգական դաշտում նոճին առանց որևէ փոթորկի արմատախիլ էր եղել, բայց հաջորդ օրը տապալված ծառը կրկին կանգուն էր՝ էլ ավելի կոնաչ ու ամուր: (5) Աքայայում նա երազ տեսավ, որ իրեն և իր տանը երջանկութիւն կգա այն ժամանակ, երբ հանեն Ներոնի ատամը. և հաջորդ օրն ատրիում դուրս եկավ բժիշկն ու նրան ցույց տվեց քաշված ատամը: (6) Հրեաստանում նա դիմեց Կարմելու²⁶ աստծո պատգամախոսին, և պատասխանները նրան հուսադրեցին, ցույց տալով, որ նրա բոլոր, նույնիսկ ամենահանդուգն ցանկութիւններն ու մտահղացումները կիրագործվեն: Իսկ երևելի գերյալներից մեկը՝ Հովսեպոսը, երբ նույն շղթայում էին. հաստատ համոզված հայտարարեց, որ շուտով իրեն կաղատի նույն մարդը, բայց արդեն կայսր դարձած: (7) Կանխանշանների մասին լուրեր հասնում էին նաև Հռոմից. Ներոնին նրա վերջին օրերին երազում կարգադրվել էր Բարին ու Մեծն Յուլիտերի սրբազան մարտակառքը սրբավայրից տանել Վեսպասիանոսի տունը, իսկ հետո՝ կրկես. քիչ ժամանակ անց, երբ Գալբան րացում էր ժողովը, որպեսզի ընդունի երկրորդ կոնսուլութիւնը, աստվածային Հուլիոսի արձանը²⁷ ինքն իրեն շրջվեց դեպի Արևելք. իսկ Բետրիակիումի ճակատամարտից առաջ բոլորի աչքի առջև օդում կովի բռնրվեցին երկու արծիվ, և երբ մեկն արդեն հաղթված էր, արևածագի կողմից թռավ եկավ երրորդը և քշեց հաղթողին:

6. Բայց և այնպես նա ոչինչ չէր ձեռնարկում, շնայած մերձավորների աջակցությանն ու պնդումներին, մինչև որ անսպասելիորեն նրան

սատարեցին անծանոթ ու հեռավոր մարդիկ: (2) Մյոզֆական զորքը Օտտոնին օգնութեան էր ուղարկել երեք լեգեոններից յուրաքանչյուրից երկու հազարական զինվոր: Ճանապարհին նրանք իմացան, որ Օտտոնը ջախջախվել է և ինքնասպան եղել: Բայց և այնպես, ասես չհավատալով լուրերին, հասան բուն Աքվիլեա: Այստեղ նրանք օգտվելով առիթից ու անհշխաճութունից, սկսեցին ուղածին պես ավազակալութիւն անել և կողուպտել. իսկ հետո, երկյուղ կրելով, որ վերագառնալուց հետո ստիպված կլինեն պատասխան տալ և պատիժ կրել, վճռեցին ընտրել ու հրոշակել նոր կայսր—իսպանական զորքը կայսր էր դրել Գալբաչին, պրետորականը՝ Օտտոնին, գերմանականը՝ Վիտելլիոսին, իսկ իրենք մյուսներից ամենևին էլ վատը չեն²⁸: (3) Տրվեցին բոլոր կոնսուլական լեգատներին անունները, սվ որտեղ որ այդ ժամանակ կար, և բոլորը մերժեցին տարբեր պատճառներով: Բայց երբ երրորդ լեգեոնի զինվորները, որ ներոնի մահից անմիջապես առաջ Մյոզֆա էր տեղափոխվել Ասորիքից, սկսեցին զովաբանել Վեսպասիանոսին, բոլորը նրանց աջակցեցին և տեղնուտեղը նրա անունը գրեցին բոլոր դրոշմերի վրա: Ճիշտ է, այդ անգամ գործն այդպես էլ մնաց, և զինվորները միառժամանակ վերագարձան հնազանդութեան: Բայց այդ լուրը տարածվեց, և Եգիպտոսի փոխարքա Տիրերիոս Ալեքսանդրոսն առաջին լեգեոնները երդման բերեց Վեսպասիանոսին,— դա հուլիսյան կալենդներին էր, և հետագայում այդ օրը նշվում էր որպես նրա տիրակալութեան առաջին օր: Իսկ հետո, հինգերորդ օրը մինչև հունիսյան իդերը, հրեաստանյան զորքը արդեն անձամբ երդում տվեց նրան²⁹:

(4) Այդ ձեռնարկմանը շատ բան էր նպաստում: Արտագրվում և ձեռքից ձեռք էր անցնում կործանված Օտտոնի վերջին կամքն արտահայտող ուղերձը Վեսպասիանոսին, հայտնի չէ, իսկական թե կեղծված, որտեղ նա կտակում էր վրեժխնդիր լինել իր համար և ազերսում էր փրկել պետութունը: Միևնույն ժամանակ լուր տարածվեց, որ հաղթանակից հետո Վիտելլիոսը պատրաստվում է փոխել լեգեոնների տեղակայումները, և Արևելք, որտեղ ծառայութունն ավելի հանգիստ էր, փոխադրել գերմանական զորքերը: Վերջապես, պրովինցիաների փոխարքաներից Վիցինիոս Մուրցիանոսը, մոռանալով մրցակցութունը և արդեն բացահայտ թշնամութունը, Վեսպասիանոսին առաջարկեց ասորական զորքը, իսկ պարթևական թագավոր Վոլոգեզը (Վաղարշը)՝ քառասուն հազար նետաձիգներ³⁰:

7. Այդպես սկսվեց երկպառակտչական պատերազմը: Վեսպասիանոսն Իտալիա ուղարկեց զորավարների՝ առաջապահ զորքերով, իսկ ինքն այդ ժամանակ գրավեց Ալեքսանդրիան, որպեսզի իր ձեռքին պահի

Սգիւտոսի բանալին³¹: Այստեղ նա միայնակ, առանց ուղեկիցների, մեկնեց Սեբապիսի տաճարը, որպեսզի գուշակության միջոցով իմանա, ամո՞ւր է արդո՞ք իր իշխանությունը: Եվ երբ երկարատև ազոթօրից հետո նա շրջվեց, տեսավ, որ ըստ սովորույթի իբեն բլիթներ, ճյուղեր ու պսակներ է մատուցում ազատարձակ Բասիլիդեսը³², իսկ նա գիտեր, որ Բասիլիդեսը հեռու էր և ուժատուի պատճառով չէր կարողանում քայլել, ասենք նրան ոչ ոք ներս էլ չէր թողնի: Ծվ դրանից հետո իսկույն լուրեր ստացվեցին, որ Կրեմոնայի մոտ Վիտելլիոսի գործերը ջախջախվել են, իսկ նա ինքը սպանվել է Հոռմում:

(2) Նոր և անսպասելի կայսրին դեռևս պակասում էր այսպես ասած վեհությունն ու կշիռը, բայց դրան էլ շուտով հասավ: Ռամիկ ժողովրդից երկու մարդ, մեկը՝ կույր, մյուսը՝ կաղ, միաժամանակ մոտեցան նրան, երբ նա դատ էր վարում, և աղերսեցին բուժել իրենց հիվանդությունը, ինչպես որ երազում նրանց մատնացույց էր արել Սերապիսը՝ աշփերը լույս կստանան, եթե նա թքի նրանց վրա, ոտքը կողջանա, եթե նա արժանացնի դիպչել նրան կրնկով: (3) Ամենևին շուսալով հաջողություն ունենալ, նա նույնիսկ փորձել չէր ուզում. վերջապես, տեղի տալով բարեկամների հորդորանքին, նա հսկա բաղմության աչքի առջև փորձեց բախտը, և հաջողությունը լիակատար եղավ³³: Միևնույն ժամանակ արկադական Տեգեսյում գուշակների ցուցումով սրբազան վայրում պեղվեցին հին աշխատանքի ամաններ, որոնց վրայի պատկերը դեմքով եման էր Վեսպասիանոսին:

8. Այդպիսին էր Վեսպասիանոսը և այդպիսին էր նրա փառքը, երբ նա վերադարձավ Հոռմ և տոնեց հրեաների նկատմամբ տարած արիումֆը: Դրանից հետո նա ութ անգամ կոնսուլ եղավ, շահաված նախկինը, եղավ նաև ցենզոր³⁴, և իր տիրակալության ողջ ընթացքում ոչ մի բանի նա այնպես հոգ չէր տանում, ինչպես նրան, որ ցնցված ու երեքված պետությանը վերադարձնի կայունությունը, իսկ հետո՝ նաև փայլը:

(2) Զորքերը հասել էին կատարյալ սանձարձակության ու անպատկառության՝ ոմանք մեծամտանալով հաղթանակից, մյուսները շարացած անպատվությունից. նույնիսկ պրովինցիաները, ազատ քաղաքները և որոշ թագավորություններ թշնամություն էին անում միմյանց հետ: Դրա համար էլ Վիտելլիոսի շատ զինվորների նա արձակեց ու պատժեց, բայց հաղթողներին նույնպես հարկ եղածից աճելին շտվեց և նույնիսկ օրինական պարգևները նրանց միանգամից չվճարեց: (3) Ոչ մի առիթ նա բաց չէր թողնում կարգ ու կանոն հաստատելու համար: Մի երիտասարդ ներկայացավ Ֆրան շնորհակալություն հայտնելու բարձր նշանակման համար, բուրելով օժանելիքներով — նա արհամարհանքով շրջվեց ու

մուսուլմանաց. «Արդ, ավելի լավ կլինե՞ր, որ քեզանից սխտորի հոտ գար»,— իսկ նշանակման մասին հրամանը ետ վերցրեց: Մովսիսինները³⁵, ովքեր ոտքով էին գալիս Հոռոմ մերթ Օստիայից, մերթ Պուտեոլքից, խնդրեցին իրենց որոշ բան վճարել կոշիկների համար— ասես քիչ էր նրանց անպատասխան ետ դարձնելը, հրամայեց նաև այսուհետև ոտաբորիկ քայլել՝ այդպես էլ նրանք քայլում են այդ ժամանակից: (4) Աքայան, Լիկիան, Հոռոտսը, Բյուզանդիոնը, Սամոսը նա զրկեց ազատութունից³⁶. Լեռնային Կիլիկիան³⁷ և Կոմմագենեն, որոնք նախկինում գտնվում էին թագավորների իշխանության տակ, վերածեց պրովինցիաների. Կապադովկիայում, որտեղ չէին դադարում բարբարոսների ասպատակութունները, նա լրացուցիչ լեզեոններ տեղակայեց և հոռոմեացի հեծյալի փոխարեն փոխարքա նշանակեց կոնսուլյարիսի:

(5) Մայրաքաղաքը այլանդակվել էր վաղեմի հրդեհներից ու ավերակներից: Նա թուլյատրեց ամեն մի ցանկացողի գրավել ու կառուցապատել դատարկ տեղամասերը, եթե այդ բանը տերերը չէին անում: Չեռնամուխ լինելով Կապիտոլիումի վերականգնմանը³⁸, նա առաջինը իր ձեռքերով սկսեց մաքրել բեկորները և դուրս կրել դրանք սեփական մեջքով: Հրդեհի ժամանակ հալվել էին երեք հազար պղնձյա տախտակներ— նա հոգ տարավ վերականգնելու դրանք, ամեն տեղից ձեռք բերելով դրանց ընդօրինակութունները. դա հնագույն և գեղեցկագույն նեցուկ էր պետական գործերում, դրանց թվում պահպանվում էին գրեթե Հոռոմի հիմնադրման օրից սենատի և ժողովրդի որոշումները դաշինքների, բարեկամության և որևէ մեկին շնորհված առանձնաշնորհումների մասին: 9. Նա ձեռնարկեց նաև նոր կառույցներ՝ Խաղաղության տաճարը ֆորումի մոտ, աստվածային Կլավդիոսի տաճարը Ցելիումի բլրի վրա, որը դեռևս Ագրիպպինան էր սկսել, բայց որը գրեթե մինչև հիմքերը ավերվել էր Ներոնի կողմից, և, վերջապես, ամֆիթատրոնը³⁹ քաղաքի կենտրոնում, որը մտահղացել էր, ինչպես նա իմացավ, դեռևս Օգոստոսը:

(2) Բարձրագույն դասերը նոսրացել էին անվերջ մահապատիժներից և անկման էին հասել վաղեմի արհամարհանքից: Դրանք գտելու և համալրելու համար նա սենատի և հեծյալների ստուգատես անցկացրեց, հեռացնելով ոչ պիտանիներին և ցուցակների մեջ ներառելով իտալիկներից ու պրովինցիաների բնակիչներից արժանավորներին: Իսկ որպեսզի հայտնի դառնա, որ երկու դասերը տարբերվում են ոչ այնքան ազատութուններով, որքան հարգանքով, նա մեկ անգամ, քննարկելով մի սենատորի ու հեծյալի վեճը, հայտարարեց. «Սենատորներին վայել չէ հայհոյանք վաստակել, բայց հայհոյանքին պատասխանել նրանք կարող են և պարտավոր են»:

10. Դատական գործերն ամենուր անշափ բազմապատկվել էին՝ ձգձգվել էին հները նիստերի դադարեցման պատճառով, ավելացել էին նորերը անհանգիստ ժամանակների պատճառով: Նա վիճակահանությամբ մարդիկ ընտրեց, որպեսզի տուժողներին վերադարձնեն պատերազմի ժամանակ նրանցից խլված ունեցվածքը և որպեսզի արտահերթ լուծեն ցենսումվիրներին⁴⁰ ենթակա գործերը. այդ գործերը պետք էր արագ լուծել, քանի որ դրանք այնքան շատ էին կուտակվել, որ դատավիճող կողմերը կարող էին շապրել մինչև դրանց ավարտը:

11. Անբարոյականությունն ու ճոխությունը անցել էին ամեն սահման՝ չսանձահարվելով ոչ ոքի կողմից: Նա սենատին մի հրամանագիր առաջարկեց, որով օտարի ստրուկի հետ կապի մեջ գտնվող կինն ինքը ստրկուհի էր համարվում, իսկ վաշխառուներին արգելվում էր պարտք պահանջել որդիներից, որոնք դեռևս դուրս չեն եկել հայրական իշխանությունից, նույնիսկ հայրերի մահից հետո⁴¹:

12. Մնացյալ բոլոր բաներում նա մատչելի ու ներողամիտ էր տիրակալության առաջին օրերից և մինչև բուն մահը: Իր նախկին ստորին ծագումը նա բնավ չէր թաքցնում և հաճախ նույնիսկ ի ցույց էր դնում: Երբ Քսչ-որ մեկը փորձեց Փլաբիոսների տոհմի սկիզբը հասցնել մինչև Ռեատեի հիմնադիրները և Հերկուլեսի այն ուղեկցին, որի դամբարանը ցույց են տալիս Ադի ճանապարհին, նա առաջինը ծաղրեց այդ: Նա մազաչափ իսկ արտաքին փայլի չէր ձգտում, և անգամ տրիումֆի օրը, տանջահար դանդաղ ու հոգնեցուցիչ երթից, չզսպեց իրեն ասելու. «Ինձ, ծերուկիս տեղն է, հիմարի պե՞տ տրիումֆ ուզեցի, ասես իմ նախնիները այն վաստակել էին կամ ես ինքս կարող էի դրա մասին երազել»: Տրիբունական իշխանություն⁴² և հայրենյաց հոր անունը նա ընդունեց միայն շատ ավելի ուշ. իսկ առավոտները ողջունողներին խուզարկելը նա դադարեցրեց դեռևս երկպառակտչական պատերազմի ժամանակ⁴³:

13. Բարեկամների անպարկեշտությունը, փաստաբանների կծու խոսքերը, փիլիսոփաների անսաստությունը նրան մազաչափ իսկ չէին անհանգստացնում: Լիցինիոս Մուցիանոսը, մի հայտնի անառակ, գիտակցելով իր ծառայությունները, նրան անբավարար հարգանքով էր վերաբերվում, բայց Վեսպասիանոսը երբեք չէր հանդիմանում նրան բոլորի ներկայությամբ, և միայն, գանգատվելով նրանից մի ընդհանուր բարեկամի, վերջում ասել էր. «Չէ որ ես, այնուհանդերձ, տղամարդ եմ»: Սալվիոս Լիբերալոսը, պաշտպանելով ոմն հարուստի, չէր վախեցել ասելու՝ «Թեկուզ Հիպպարքոսը հարյուր միլիոն ունի, բայց Կեսարի ի՞նչ գործն է» — և նա առաջինն էր գովել նրան: Աքսոբյալ կինիկ Դեմետրիո-

սր, հանդիպելով նրան ճանապարհին, չէր ցանկացել ոչ ոտքի կանգնել նրա առջև, ոչ բարեկել, և նույնիսկ սկսել էր նրա վրա հաշել, բայց իմպերատորը նրան միայն գամփռ էր անվանել⁴⁴։

14. Վիրավորանքներն ու թշնամությունը նա ամենեին չէր հիշում և դրանց համար վրեժխնդիր չէր լինում։ Վիտելլիոսի՝ իր հակառակորդի, դատեր համար նա գերազանց ամուսին գտավ, նրան օժիտ տվեց և տուն սարքեց։ Երբ Ներոնի օրոք նա մերժվել էր արքունիքից, և սարսափահար հարցրել էր, թե ինչ անի և ուր գնա, ընդունելությունների վարիչներից մեկը, նրան գուրս վճնդելով, պատասխանել էր՝ «Ուր ուզում ես»⁴⁵։ Իսկ հետո, երբ այդ մարդը սկսել էր նրանից ներողություն հայցել, նա բավարվել էր միայն այն բանով, որ դրեթե ճշտությամբ կրկնել էր նրա իսկ խոսքերը։ Երբեք կասկածանքը կամ վախը նրան հաշվեհարդարի չէին մղել, երբ բարեկամները նրան խորհուրդ տվեցին զգուշանալ Մետտիոս Պոմպուլեիանոսից, որը, ըստ լուրերի, կայսերական բախտացույց ուներ, դրա փոխարեն նրան կոնսուլ դարձրեց, որպեսզի սա ժամանակին հիշի իր այդ ողորմածությունը։

15. Ոչ մի անգամ չեղավ, որ անմեղ մի մարդ ենթարկվեր մահապատժի.— թերևս միայն նրա բացակայությամբ⁴⁶, առանց նրա գիտության կամ նույնիսկ հակառակ նրա կամքի։ Հելվիդիոս Պրիսկոսը նրա Ասորիքից վերադառնալուց հետո նրան ողջունեց Վեսպասիանոս անունով. որպես մասնավոր մարդու, իսկ հետո էլ իր պրետորական բոլոր էդիկտներում ոչ մի անգամ նրան չհիշատակեց, բայց Վեսպասիանոսը նրա վրա զայրացավ ոչ ավելի վաղ, նախքան նա անխնա կհայհոյեր նրան, ինչպես պլեբեյի։ Բայց այստեղ էլ, անգամ աքսորելով նրան, անգամ կարգադրելով սպանել, ամենայն եռանդով ջանաց փրկել նրան՝ ուղարկեց ետ կանչելու մարդասպաններին և կփրկեր նրան, եթե շատացվեր կեղծ զեկուցագիր, թե նա իբր մահացած է։ Համենայն դեպս, ոչ մի մահ նրան չէր ուրախացնում, և նույնիսկ արժանի մահապատիժների դեպքում էլ պատահում էր, որ նա վշտանում և արտասվում էր։

16. Միակ բանը, ինչում նրան արդարացիորեն կշտամբում էին, արծաթասիրությունն էր։ Բավական չէ, որ նա բռնագանձում էր Գալբայի ներած ապառքները⁴⁷, նոր ծանր հարկեր էլ դրեց, մեծացրեց և երբեմն նույնիսկ կրկնապատկում էր պրովինցիալներից գանձվող տուրքը,— նա բացահայտորեն այնպիսի գործերով էր զբաղվում, որոնցից կամաչեր նույնիսկ մասնավոր մարդը իրեր էր գնում միայն նրա համար, որպեսզի հետո դրանք շահով վաճառի. (2) առանց տատանվելու պաշտոններ էր վաճառում⁴⁸ հայցողներին և արդարացում՝ դատի տրվածներին, առանց խտրության և՛ անմեղներին, և՛ մեղավորներին. ամենագիշատիչ

պաշտոնյաներին, ինչպես ենթադրում են, նա դիտմամբ առաջ էր քաշում ավելի բարձր դիրքի, որպեսզի հնարավորութուն ընձեռի հարբատություն դիզելու, իսկ հետո դատելու,— ասում էին, որ նա օգտավում է նրանցից ինչպես սպունգներից, շորերին թողնում է թրջվելու, իսկ թացերը քամում է: (3) Ոմանք կարծում են, որ նա ի բնե էր ազա՛հ դրա համար էլ նրան հայհոյել էր ծեր հովիվը, որն աղերսել էր Վեսպասիանոսին, որը նոր էր միայն կայսր դարձել, անհատույց ազատ արձակել իրեն, բայց մերժում էր ստացել ու բացականշել. «Ազվեսը մորթին է փոխել, բայց ոչ բարբը»⁴⁹: Ուրիշներն, ընդհակառակն, ենթադրում են, որ նա հարկադրված էր դիմելու տուբքերի ու շորթումի և՛ պետական, և՛ կայսերական գանձարանի սղության պատճառով: Այդ իրողությունը նա ինքն էր խոստովանել, երբ տիրակալության հենց սկզբում հայտարարել էր, որ իրեն քառասուն միլիարդ սեստերցիում է պետք, որպեսզի պետությունը ոտքի կանգնի: Եվ այդ նրանով է ճշմարտանման թվում, որ վատ ճանապարհով դիզածն էլ նա լավագույնս էր օգտագործում:

17. Նա առատաձեռն էր բոլոր դասերի նկատմամբ՝ լրացրեց սենատորների կարողությունը, կարիքավոր կոնսուլարիսներին տարեկան նշանակեց հինգ հարյուր հազարական սեստերցիում, ամբողջ երկրով մեկ շատ քաղաքներ երկրաշարժերից ու հրդեհներից հետո կառուցապատեց էլ ավելի լավ, տաղանդների ու արվեստների նկատմամբ մեծագույն հոգատարություն դրսևորեց: 18. Լատինական և հունական հոետորներին նա առաջինը սկսեց ոռճիկ վճարել գանձարանից՝ յուրաքանչյուրին տարեկան հարյուր հազար. ամենաականավոր բանաստեղծներին ու արվեստագետներին, ինչպես, օրինակ, Կոթողի և Կոսյան Վեներայի⁵⁰ վերականգնողին, նա պարգևատրեց մեծ նվերներով. մեխանիկին, որը խոստացել էր առանց մեծ ծախսերի Կապիտոլիում բարձրացնել վիթխարի սյուների, նույնպես մտահղացման համար լավ պարգև տվեց, բայց ժառանգություններից հրաժարվեց, ասելով՝ «Արդ, թույլ տուր ինձ կերակրել իմ ժողովրդին»: 19. Մարցելլոսի թատրոնի նոր բեմի օժման ժամանակ տեղի ունեցած հանդիսախաղերում նա վերականգնեց նույնիսկ հնագույն ներկայացումները⁵¹: Ողբերգակ գերասան Ապելլարիոսին նա որպես պարգև տվեց շորս հարյուր հազար սեստերցիում, կիֆարահարգիչներ Տերպնոսին ու Դիոդորոսին՝ երկու հարյուր հազարական, ռերիշներին՝ հարյուր հազարական, ամենաքիչը՝ քառասուն հազարական, լասած արդեն բազմաթիվ ոսկյա պսակների մասին: Հրավիրովի խնջույքներ նա նույնպես կազմակերպում էր հաճախակի ու ճոխ, որպեսզի օժանդակի ուտեստեղենի առևտրականներին: Մատուրնալիաներում նա

նվերներ բաշխում էր տղամարդկանց, իսկ մարտյան կալենդներին⁵² կանանց:

Բայց և այնպես իր երբեմնի ժլատության ամոթը ծածկել նրան չհաջողվեց: (2) Ալեքսանդրիացիները անփոփոխ նրան տառեխավաճառ⁵³ էին անվանում, իրենց թագավորներից մեկի՝ մի կեղտոտ կծծիի, մականունով: Եվ նույնիսկ նրա թաղման ժամանակ Ֆավորոսը, գլխավոր մնջկատակը, հանդես գալով, ըստ սովորույթի, դիմակ հագած և պատկերելով հանգուցյալի խոսքերն ու գործերը, բարձրաձայն հարցրեց պաշտոնյաներին, թե որքան նստեց թաղման թափորը: Եվ լսելով, թե տասը միլիոն⁵⁴, բացականչեց՝ «Տվեք ինձ տասը հազար և նետեցեք ինձ թեկուզ Տիրոս»:

20. Նա լավ հասակ⁵⁵ ուներ, ամուր ու պինդ կազմվածք, դեմքի լարված արտահայտություն. սրամիտ մեկը դիպուկ էր ասել այդ մասին, երբ կայսրը խնդրել էր նրան իր հասցեին էլ կատակել՝ «Կկատակեմ, երբ կդատարկվես»: Նա օժտված էր հիանալի առողջությամբ, թեև մազաշափ իսկ այդ մասին չէր հոգում, և միայն բաղնիքում⁵⁶ ինքն էր շփում պարանոցն ու բոլոր անդամները, և մեկ էլ ամիսը մի օր ծոմ էր պահում:

21. Նրա ապրելակերպը այսպիսին էր: Գտնվելով իշխանության գլուխ, նա միշտ վաղ էր արթնանում, դեռ լույսը չբացված, և կարդում էր պաշտոնյաների նամակներն ու զեկույցները, ապա ներս էր թողնում բարեկամներին և ընդունում նրանց ողջույնները, իսկ ինքն այդ միջոցին հագնվում-կապվում էր: Ավարտելով ընթացիկ գործերը, զբոսանքի էր ելնում և հանգստանում էր հարճերից մեկի հետ՝ Ցենիդայի մահից հետո նա շատ հարճեր ուներ: Ննջարանից նա գնում էր բաղնիք, ապա ճաշելու, այդ ժամանակ, ասում են, նա առավել բարի ու մեղմ էր լինում, և տնեցիները ձգտում էին դրանից օգտվել, եթե որևէ խնդրանք էին ունենում:

22. Ճաշի ժամանակ, ինչպես միշտ և ամենուր, նա բարեհոգի էր լինում և հաճախ կատակներ էր անում. նա շատ ծաղրասեր էր, բայց չափից դուրս հակված ծաղրածուության ու գոեհկության, նույնիսկ ընդհուպ մինչև անպարկեշտություն: Բայց և այնպես, նրա որոշ կատակներ շատ սրամիտ են. ահա դրանցից մի քանիսը: Կոնսուլյարիս Մեստրիոս Ֆլորոսը հավատացնում էր, որ ավելի ճիշտ է ասել ոչ թե «plostra», այլ «plaustra». հաջորդ օրը նա ողջունեց նրան անվանելով ոչ թե «Ֆլորոս», այլ «Ֆլավրոս»⁵⁷: Մի կին երդվում էր, որ մեռնում է նրա սիրուց և հասավ նրա ուշադրությանը. կայսրը այդ կնոջ հետ մի գիշեր անցկացրեց և նրան շորս հարյուր հազար սեստերցիում նվիրեց. իսկ կառավարչի

հարցին, թե որ հողվածի տակ ներկայացնի այդ դրամը, ասաց. «Վեսպանիոսի նկատմամբ տածած արտակարգ սիրո»։ 23. Նա կարողանում էր նաև տեղին մեջ բերել հունական ոտանավոր. այսպես, ոմն բարձրահասակ և անվայելուչ արտաքինի տեր մարդու մասին նա ասել էր.

Գնում էր, լայն-լայն քայլերի գցելով, երկարուձիգ նիզակը ճոճելով⁵⁸,

Իսկ ազատարձակ Կերիլոսի մասին, որը, հարստանալով և շքանկանալով հարստությունը կայսերական գանձարանին թողնել, իրեն հայտարարել էր ազատածին և ընդունել էր Լաբեթ անունը՝

Օ՛, Լաբեթ, Լաբեթ,

Զէ որ դու կմեռնես— և նորից Կերիլոս կդառնաս⁵⁹:

Բայց ամենից ավելի նա ծանակում էր իր անվայելուչ և կամուտները, որպեսզի թեկուզ ծաղրով վսպի դժգոհությունը և այն կատակի վերածի: (2) Նրա սիրեցյալ սպասավորներից մեկը կառավարչի տեղ խընդրեց մի մարդու համար, որին ներկայացնում էր որպես իր եղբայր. Վեսպասիանոսը կարգադրեց նրան սպասել, իր մոտ կանչեց այդ մարդուն, ինքը նրանից վերցրեց դրամը, որը վերապահված էր միջնորդության համար, և իսկույն նշանակեց այդ տեղում. իսկ երբ սպասավորը կրկին միջամտեց, նրան ասաց. «Քեզ համար ուրիշ եղբայր փնտրիր, իսկ սա այժմ իմ եղբայրն է»։ Մեկ անգամ ճանապարհին նա կասկածեց, որ գրաստապանը կանգ առավ և սկսեց ջորիներին նորից պայտել միայն նրա համար, որպեսզի ժամանակ և առիթ տա մի աղերսարկուի մոտենալու կայսրին. նա հարցրեց, թե արդյոք պայտելը շա՞տ դրամ բերեց նրան, և շահից պահանջեց իր բաժինը: (3) Տիտոսը կշտամբում էր հորը, որ նա պետքարաններն էլ է հարկման ենթարկել. նա մի մետաղադրամ վերցրեց առաջին շահույթից, մոտեցրեց Տիտոսի քթին և հարցրեց, գարշահոտություն փչո՞ւմ է արդյոք: «Ո՛չ»,— ասաց Տիտոսը: «Բայց սա մեզից վերցված դրամ է»⁶⁰,— ասաց Վեսպասիանոսը: Երբ պատվիրակները գեկուցեցին նրան, որ որոշված է հասարակության հաշվին ոչ փոքր արժեքի վիթխարի արձան կանգնեցնել նրան, նա մեկնեց ափը և ասաց. «Դրեք անհապաղ, ահա պատվանդանը»:

(4) Նույնիսկ սարսափը սպառնացող մահից նրան ետ շպահեց կատակներից. երբ մյուս նախանշանակների թվում Մավզուլեոմի դռներն հանկարծ բացվեցին, իսկ երկնքում գիսաստղ հայտնվեց, նա ասաց, որ մի նախանշանը վերաբերում է Օգոստոսի տոհմից սերող Յունիա Կալվինային՝ իսկ մյուսը պարթևաց արքային, որը երկար մազեր էր կրում⁶¹. իսկ երբ նա զգաց մահվան մերձավորությունը, ապա ասաց. «Ավա՛ղ, թվում է ես աստված եմ դառնում»:

24. Իր իններորդ կոնսուլության ժամանակ, գտնվելով Կամպանիայում, նա ջերմատենդի թեթևակի նոպաներ զգաց: Իսկույնեթ նա վերադարձավ Հռոմ, իսկ հետո մեկնեց Կուտիլիք⁶² և Ռեատեի կալվածքները, որտեղ սովորաբար անցկացնում էր ամառը: Այստեղ տկարությունը ուժեղացավ, իսկ, դրան ավելացրած, սառը ջրով նա մրսեցրեց ստամոքսը: Բայց և այնպես, նա շարունակում էր, ինչպես միշտ, զբաղվել պետական գործերով և անկողնում պառկած, նույնիսկ դեսպաններ էր ընդունում: Իսկ երբ նրա փորը լուծեց դրեթե մահու շափ, նա հայտարարեց, որ կայսրը պետք է կանգնած մահանա. և, փորձելով ոտքի կանգնել և ուղղվել, նա վախճանվեց իրեն բռնած պահողների ձեռքերի մեջ իններորդ օրը մինչև հուլիսյան կալենդները, լինելով վաթսուներե տարեկան, մեկ ամսական և յոթ օրական⁶³:

25. Բուրդին հայտնի է, թե նա միշտ որքան հաստատ էր հավատում, որ ծնվել և որդիներ է ծնել երջանիկ աստղի տակ. շնայած անդադրում դավադրություններին⁶⁴, նա համարձակ հայտարարում էր սենատին, որ իրեն ժառանգելու են կամ որդիները, կամ ոչ ոք: Ասում են, որ մեկ անգամ նա նույնիսկ երազում տեսել էր, թե իբր Պալատինոմի պալատի նախասրահում կշեռք է դրված, մի նժարին Կլավդիոսն ու Ներոնն են, մյուսին՝ ինքն իր որդիներով, և ոչ մի նժարը մյուսին չի գերակշռում: Եվ երազը նրան շխաբեց, որովհետև և՛ առաջինները, և՛ ինքն ու որդիները տիրակալիցին հավասարապես նույնքան իսկ տարի⁶⁵:





ԱՍՏՎԱԾԱՅԻՆ

ՏԻՏՈՍ

1. Տիտոսը, որը ժառանգել էր հոր մականունը¹, մարդկային ազգի սերն ու խնդությունը, օժտված համընդհանուր բարյացակամություն շահելու հատուկ շնորհով, արվեստով կամ երջանկությամբ— իսկ կայսեր համար դա հեշտ չէր, որովհետև և՛ մասնավոր անձ եղած ժամանակ, և՛ հոր տիրակալության օրոք նա շխուսափեց ոչ միայն մարդկային պարսավանքից, այլև նույնիսկ ատելությունից,— ծնվել էր

երրորդ օրը մինչև հունվարյան կալենդները, այն տարին, որ հիշարժան է Քայոսի² կործանմամբ, Սեպտիզոնիումի³ մոտ մի աղբատ տնակում, մութ ու փոքրիկ սենյակում. սա դեռևս մնացել է և կարելի է տեսնել:

2. Դաստիարակություն նա ստացավ արքունիքում, Բրիտանիկոսի հետ միասին, ուսանելով նույն գիտությունները և նույն ուսուցիչների մոտ: Այդ ժամանակ, ասում են, Նարկիսը՝ Կլավդիոսի ազատարձակը, բերեց մի դիմագետի⁴, որպեսզի զննի Բրիտանիկոսին, և սա վճռականապես հայտարարեց, որ Բրիտանիկոսը երբեք կայսր չի դառնա, իսկ Տիտոսը, որը կանգնած էր կողքին, կդառնա: Նրանք այնպիսի ընկերներ էին, որ, ըստ պատմածների, նույնիսկ ըմպելիքին, որից մահացավ Բրիտանիկոսը⁵, շուրթ էր դիպցրել նաև կողքին պառկած Տիտոսը և դրանից հետո երկար ժամանակ տառապել էր ծանր հիվանդությամբ: Հիշելով այդ բոլորը, նա հետագայում Պալատինումում Բրիտանիկոսին ոսկե արձան կանգնեցրեց և իր ներկայությամբ նրան նվիրաբերեց մեկ

ուրիշը՝ ձիու վրա, փղոսկրից, որն այսօր էլ դուրս են բերում կրկեսում թափորի ժամանակ:

3. Մարմնական ու հոգեկան արժանիքներով նա փայլում էր դեռևս պատանեկան հասակում, իսկ հետո, տարիների հետ, գնալով ավելի ու ավելի. հիանալի գեղեցկություն, որում նույնքան արժանապատվություն կար, որքան և գրավչություն. գերազանց ուժ, որին չէին խանգարում ոչ միջահասակությունը, ոչ էլ փոքր-ինչ ցցված փորը. բացառիկ հիշողություն և, վերջապես, ընդունակություններ գրեթե բոլոր ռազմական ու խաղաղ արվեստներում: (2) Նա գերազանց էր տիրապետում ձիուն ու զենքին. ճառեր էր արտասանում և ոտանավորներ հյուսում լատիներեն ու հունարեն հաճույքով և հեշտությամբ, նույնիսկ առանց նախապատրաստության, երաժշտությանն այնքան էր ծանոթ, որ կիֆարա էր նվագում ու երգում հմտությամբ ու գեղեցիկ: Շատերը հաղորդում են, որ նույնիսկ նոտրգրով նա այնպես արագ էր գրում, որ կատակի ու զվարճության համար մրցում էր իր գրագիրների հետ. իսկ ամեն մի ձեռագիր այնպես ճարպիկ էր ընդօրինակում, որ հաճախ բացականչում էր. «Ինձնից ինչպիսի կտակ կեղծող կստացվեր»:

4. Որպես զինվորական տրիբուն նա ծառայել էր Գերմանիայում և Բրիտանիայում՝ հռչակելով իրեն մեծ խիզախությամբ և ոչ նվազ հեզությամբ, ինչպես երևում է նրա պատվին եղած արձաններից ու մակագրություններից, որոնք առատորեն կանգնեցրել են այդ պրովինցիաները: (2) Զինվորական ծառայությունից հետո նա սկսեց հանդես գալ դատարանում, ավելի շուտ բարի համբավի, քան պրակտիկայի համար: Այդ ժամանակ նա ամուսնացավ Արրեցինա Տերտուլլայի հետ, որի հայրը, հռոմեացի մի հեծյալ, ժամանակին եղել էր պրետորական կոհորտաների պետ, իսկ Տերտուլլայի մահից հետո նա ամուսնացավ աղնվատոհմիկ Մարցիա Ֆուրնիլլայի հետ, որից նա ամուսնայութվեց դստեր՝ ժրնվելուց հետո: Քվեստորի պաշտոնից հետո նա ստացավ լեգեոնի հրամանատարություն և Հրեաստանում նվաճեց երկու հզորագույն ամրոցներ՝ Տարիքեյան և Համալուն⁷: Մի գոտեմարտի ժամանակ սպանվեց նրա ձիւն. այնժամ նա հեծավ մեկ ուրիշը, որի հեծյալը սպանվել էր իր կողքին մարտնչելիս:

5. Երբ շուտով իշխանության գլուխ անցավ Գալբան, Տիտոսը նրա մոտ ուղարկվեց շնորհավորելու և ամենուր իր վրա ուշադրություն հրավիրեց՝ կարծում էին, թե Գալբան է նրան կանչել, որպեսզի որդեգրի Բայց նոր ընդհանուր խոռվության մասին լուր առնելով նա ճանապարհից ետ դարձավ⁸: Ծանապարհին նա հարցում արեց Պաթոսյան Վեներայի պատգամախոսին, արդյոք վտանգավոր է շարունակել նավարկություն-

ներ, իսկ ի պատասխան ստացավ իշխանության խոստում: (2) Հույսը շուտով իրականացավ՝ նրան թողեցին հնազանդեցնելու Հրեաստանը, Երուսաղեմի վերջին պաշարման ժամանակ⁹ ինքը տասներկու նետերով խոցեց տասներկու թշնամու, գրավեց քաղաքը իր դստեր ծննդյան օրը և արժանացավ գինվորների այնպիսի սիրուն ու ցնծությանը, որ սրանք ողջույնի բացականչություններով նրան իմպերատոր հռչակեցին, իսկ նրա մեկնումի ժամանակ չէին ուզում բաց թողնել պրովինցիայից, աղերսանքով և նույնիսկ սպառնալիքներով պահանջելով, որ նա կամ մնա իրենց հետ, կամ բոլորին հետը տանի: (3) Դա կասկած ներշնչեց, որ նա մտադիր է անջատվել հորից և արքա դառնալ Արևելքում, նա ինքն ամրապնդեց այդ կասկածը, երբ Ալեքսանդրիա կատարած ուղեվորություն ընթացքում, Մեմֆիսի Ապիս ևզան օժման ժամանակ հանդես եկավ գլխին ակնախույր՝ ալդպիսին էր այդ սրբազան ծիսակատարություն հնամենի սովորույթը, բայց գտնվեցին մարդիկ, որոնք դա այլ կերպ մեկնաբանեցին: Դրա համար էլ նա փութաց Իտալիա, բեռնատար նավով հասավ Ռեգիում և Պուտեոլք, այստեղից, առանց հապաղելու, սուրաց Հոռոմ և, ասես, հերքելով իր մասին տարածված սին լուրերը, ողջունեց իրեն շապասող հորը. «Ահա և ես, հայրիկ, ահա և ես»:

6. Այդ պահից նա անփոփոխ իշխանության մասնակից էր և նույնիսկ պահապանը: Հոր հետ միասին նա տրիումֆ կատարեց, միասին ցենզոր եղավ, նրա հետ կիսեց նաև տրիբունական իշխանությունը և յոթնակի կոնսուլությունը¹⁰: Նա ստանձնեց գրեթե բոլոր հաստատությունների հոգսը և հոր անունից ինքն էր թելադրում նամակները, հրապարակում էդիկտներ, քվեստորի փոխարեն ճառեր կարդում սենատում: Նա նույնիսկ ընդունեց պրետորականների պետի պաշտոնը, թեև մինչ այդ այն հանձնարարվում էր միայն հոռոմացի հեծյալներին¹¹:

Սակայն այդ պաշտոնում նա իրեն պահեց շափից ավելի խիստ ու կտրուկ: Իրեն կասկածելի թվացող անձանց դեմ նա ճամբարներ ու թատրոններ էր ուղարկում իր մարդկանց, որոնք, ասես բոլորի անունից, պահանջում էին պատժել նրանց և տեղնուտեղն էլ նրանց հետ հաշվեհարդար էին տեսնում: (2) Դրանց մեջ էր կոնսուլարիս Ավլոս Ցեցինան. սրան նա սկզբում ճաշի հրավիրեց, իսկ հետո հրամայեց սպանել, երբ հազիվ սա դուրս էր եկել ճաշասենյակից: Ճիշտ է, այստեղ վտանգը շափազանց մոտ էր. նա արդեն ձեռք էր գցել անձամբ Ցեցինայի ձեռքով կազմված ճառը՝ ուղղված գինվորներին: Բոլոր այդ միջոցներով նա անվտանգ ապագա ապահովեց իր համար, բայց առհասարակ այնպիսի ատելություն հրահրեց, որ հազիվ թե որևէ մեկն իշխանության գլուխ

եկած լինելու այդպիսի վատ համբավով և այդպիսի համընդհանուր անբարոյացակամութեամբ:

7. Նրան կասկածում էին ոչ միայն դաժանութեան, այլև անառակութեան մեջ, մինչև ուշ գիշեր տևող նրա գինարբուքների պատճառով ամենաթեթևաբարո ընկերների հետ. և հեշտասիրութեան՝ նրա տղաների ու երեքինիների մեծաքանակութեան և Բերենիկա թագուհու նկատմամբ նրա տաժաժ տխրահոլակ սիրո պատճառով, որի հետ, ասում են, խոստացել էր ամուսնանալ. և ազահասիրութեան, քանի որ հայտնի էր, որ հոր կողմից քննարկվող դատական գործերում նա առուժախի էր հանում իր հովանավորությունը և կաշառք էր վերցնում: Իրա համար էլ բոլորը ի դեմ նրա տեսնում էին երկրորդ Ներոնի և այդ մասին խոսում էին հրապարակով:

Սակայն այդպիսի համբավը նրան միայն օգուտ բերեց՝ այն վերածվեց մեծագույն գովեստի, երբ ոչ մի արատ նրա մեջ չգտնվեց, այլ ընդհակառակն, երևան եկան մեծ առաքինություններ: (2) Նրա խնջույքներն ուրախ էին, բայց ոչ շռայլ: Նա այնպես էր բարեկամներ ընտրում, որ հետագա տիրակալներն էլ իրենց և պետական գործերում չէին կարող առանց նրանց բավարարվել և միշտ նրանց էին դիմում: Բերենիկային նա իսկույն արտաքսեց Հռոմից, հակառակ նրա և իր ցանկության: Իր ամենաընտրյալ սիրելիներին նա ոչ միայն դադարեց պատվել, այլև նույնիսկ համաժողովրդական հանդիսախաղերի ժամանակ չէր ցանկանում նրանց վրա նայել, թեև նրանք հիանալի պարողներ էին և շուտով հռչակվեցին թատրոնում: (3) Ոչինչ և ոչ ոքից նա չխլեց, օտարի սեփականությունը հարգում էր ինչպես ուրիշ ոչ ոք և մերժում էր նույնիսկ սովորական ու թույլատրելի նվիրատվությունները: Առատաձեռնութեամբ. սակայն, նա ոչ ոքի չէր զիջում. ամֆիթատրոնի¹² և մոտակայքում հապշտապ կառուցված բաղնիքների օժման ժամանակ նա ցուցադրեց գլադիատորական մաքտ՝ զարժանալիորեն հարուստ ու ճոխ. նա կազմակերպեց նաև ծովամարտ նախկին տեղում և ապա այնտեղ էլ գլադիատորներ հանեց և մի օրվա մեջ տապարեզ նետեց հինգ հազար զանազան վայրի գազաններ:

8. Ի բնե նա աչքի էր ընկնում հազվագյուտ բարութեամբ: Տիրերիտոսի ժամանակներից բոլոր կեսաբներն իրենց նախորդների կատարած շնորհումները բնդունում էին ոչ այլ կերպ, քան եթե ոչ հատուկ բարեհալ թույլտվություններով— նա առաջինը դրանք հաստատեց միանգամից, մեկ էդիկտով, շատիպելով խնդրել իրեն: Նրա պարտադիր կանոնն էր՝ ոչ մի աղերսարկուի բաց շթողնել առանց հուսադրելու. և երբ տնեցիները կգտամբում էին նրան, թե ավելին է խոստանում, քան կարող է տանել,

նա պատասխանում էր. «Ոչ ոք չսլետք է տխուր հեռանա կայսեր հետ ունեցած զրույցից հետո»: Իսկ երբ մի անգամ ճաշելիս նա հիշեց, որ ամբողջ օրվա ընթացքում ոչ ոքի համար մի լավ բան չի արել, արտասանեց իր նշանավոր խոսքերը՝ արժանի հիշվելու և գովաբանության. «Բարեկամներս, ես կորցրեցի օրը»:

(2) Նա միշտ ուշադիր էր հատկապես հասարակ ժողովրդի նկատմամբ: Մի անգամ, գլադիատորական մարտ նախապատրաստելիս, նա հայտարարեց, որ այն կազմակերպելու է ոչ թե ըստ սեփական, այլ հանդիսատեսների ճաշակի: Այդպես էլ կար՝ նրանց ոչ մի խնդրանքը չէր մերժում և ինքն էր նրանց դրդում խնդրելու, ինչ ուզում են: Ինքն իրեն նա հայտարարեց թրակացի գլադիատորների¹³ երկրպագու, և այդ հակումի առթիվ հաճախ կատակներ էր փոխանակում ժողովրդի հետ և՛ խոսքով, և՛ նշաններով, սակայն երբեք չէր կորցնում վեհուխյունը և շափի զգացումը: Նույնիսկ իր բաղնիքներում լողանալիս նա երբեմն ներս էր թողնում ժողովրդին, որպեսզի այստեղ էլ առիթը բաց չթողնի հաճույանալու նրան:

(3) Նրա տիրակալությունը շխուսափեց նաև տարերային աղետներից՝ Վեզուվի ժայթքումը Կամպանիայում, հրդեհ Հոռոմում, որը մոլեգնում էր երեք օր ու գիշեր, և ժանտախտ, որպիսին երբեք դեռ չէր եղել¹⁴: Այդպիսի և այդքան դժբախտություններում նա ոչ միայն դրսևորեց տիրակալի հոգատարություն, այլև հազվագյուտ հայրական սեր՝ մերթ մխիթարելով ժողովրդին էդիկտներով, մերթ օգնելով նրան ուժերը ներածին շափ: (4) Կամպանիայի կարգավորման համար նա վիճակահանությունամբ հոգաբարձուներ ընտրեց կոնսուլյարիսների թվից: Վեզուվի տակ կործանվածների անժառանգ մնացած ունեցվածքը նա զոհաբերեց հօգուտ տուժած քաղաքների: Մայրաքաղաքի հրդեհի ժամանակ նա բացականչեց. «Թուր վնասներն իմն են»¹⁵ և իր կալվածքների ողջ կահավորանքը տվեց վերականգնելու կառույցներն ու տաճարները, իսկ աշխատանքների շուտափուլյթ կատարման համար դրանք հանձնարարեց հեծյալների դասից մի քանի կարգադրիչների: Վարակը վտարելու և հիվանդության դեմ պայքարելու համար նա փնտրեց-գտավ բոլոր միջոցները՝ սոստվածային և մարդկային, փորձելով ամեն տեսակ զոհամատուցում ու պեղորայք:

(5) Ժամանակի աղետներից մեկը մատնիչների և նրանց հրահրողների արմատացած կամայականությունն էր: Նրանց հաճախ էր պատժում ֆորումում մտրակներով ու գավազաններով գանահարելով և, ի վերջո, հրամայեց անցկացնել ամֆիթատրոնի ասպարեզով և մասամբ ի ստրկություն վաճառել¹⁶, մասամբ աքսորել ամենավայրի կղզիները:

Իսկ որպեսզի մեկընդմիշտ խափանի նման ոտնձգութիւնները, մյուս որոշումների թվում նա արգելեց մի գործը տարբեր օրենքներով հիմնավորելը¹⁷ և մահացածների իրավունքները¹⁸ վիճարկելը նրանց մահից հետո որոշակի ժամկետից ավելի:

9. Մեծ քրմապետի աստիճանը, իր խոսքերով, նա ընդունեց այն բանի համար, որ ձեռքերը մաքուր լինեն, և նա հասավ դրան. այդ պահից նա որևէ մեկի կործանման մեջ ոչ մեղավոր էր, ոչ էլ մեղսակից, և, թեև մեկ անգամ չէր վրեժխնդիր լինելու առիթ ունեցել, երգվել էր, որ ավելի շուտ կկործանվի, քան կկործանի: Երկու պատրիկներ մերկացվել էին իշխանութիւնի նկատմամբ ոտնձգութիւնի մեջ— նա շպատեց նրանց, այլ միայն հորդորեց թողնել այդ փորձերը, որովհետև կայսերական իշխանութիւնը շնորհվում է ճակատագրի կողմից, իսկ մնացյալ բոլորը ինքը պատրաստ է կամովին տալ նրանց: (2) Քանի որ նրանցից մեկի մայրը հեռու էր, իսկույն ճեպընթացներ ուղարկեց նրան լուր տանելու, որ որդին վտանգից զերծ է, իսկ իրենց՝ պատրիկներին հրավիրեց ընտանեկան ճաշկերույթի. իսկ հաջորդ օրը գլադիատորական հանդիսախաղի ժամանակ նրանց դիտավորյալ նստեցրեց իր կողքին, և երբ մատուցեցին մարտիկների զենքեր, դրանք զննելու հեկնէց նրանց: Ասում են, որ նա նույնիսկ տեսել էր նրանց բախտացույցը և հայտարարել, թե նրանց երկուսին էլ աղետ է սպառնում, բայց ոչ հիմա և ոչ իրենից. այդպես էլ եղավ: (3) Եղբայրը չէր դադարում նրա դեմ դավեր նյութելուց և համարյա բացահայտ խոռովում էր զորքին՝ խորհելով փախուստ տալ նրանց մոտ. սակայն Տիտոսը նրան մահապատժի շնթարկեց, շաքսորեց և շղարհեց պատվելուց, այլ նախկինի պես, ինչպես տիրակալութիւնն առաջին օրերին, նրան անվանում էր իր համատիրակալը և հաջորդը, և մեկ անգամ չէր մենակ մնացած ժամանակ աղերսանքով ու արտասպախան խնդրել նրանից, որ գոնե իր սիրուն սիրով պատասխանի:

10. Այդ բոլոր հոգսերի մեջ վրա հասավ նրա մահը՝ իր հարվածով խոցելով ոչ այնքան նրան, որքան ողջ մարդկութիւնը: Ներկայացումների ավարտից հետո, որոնց վերջում նա դառնորեն և անսքող արտասվում էր, մեկնեց իր սաբինական կալվածք: Նա մռայլ էր, որովհետև գոհ մատուցելիս կենդանին ձեռքից դուրս էր պրծել, իսկ պարզ երկնքից ճայթել էր ամպրոպը: Առաջին իսկ կանգառում նա տենդ զգաց: Այնուհետև նրան տարան պատգարակով. ետ տանելով վարագույրները, նայեց երկնքին և դառնորեն սկսեց դանդաղանքով, որ անմեղ տեղը զրկվում է կյանքից՝ նա ինքն իրեն կշտամբելու բան չունի, թերևս բացի մեկ արարքից: (2) Թե ինչ արարք էր դա, նա չասաց, և հեշտ չէ կոահել այն²⁰. (2) Ոմանք կարծում են, թե նա հիշել էր եղբոր կնոջ հետ ունեցած սի-

րային կապը. բայց Դոմիցիանոսը հանդիսավորապես երդվել էր, որ այդպիսի բան չի եղել, իսկ նա չէր էլ սկսի ժխտել, եթե որևէ բան եղած լիներ. նա կպարծենար դրանով, ինչպես որ պատրաստ էր պարծենալու իր ցանկացած անառակությամբ:

11. Վախճանվեց նա այն նույն վիլլայում, որտեղ և հայրը, սեպտեմբերյան իդերին, կյանքի քառասուներկուերորդ տարում, երկու տարի, երկու ամիս և քսան օր անց այն պահից, ինչ ժառանգել էր հորը²¹: Երբ այդ մասին հայտնի դարձավ, ողջ ժողովուրդն արցունք էր թափում նրա համար որպես հարազատի, իսկ սենատը փութով հավաքվեց կուրիայում, չսպասելով էդիկտի, և փակ, ապա նաև բաց դռների առջև այնպիսի շնորհակալություններ և այնպիսի գովասանքներ վերրնծայեց մահացյալին, որպիսին նրան չէր մատուցել նույնիսկ կենդանի ժամանակ և նրան երկայությամբ:



ԴՈՄԻՑԻԱ-ՆՈՍ

1. Դոմիցիանոսը ծնվել է տասներորդ օրը մինչև նոյեմբերյան կալենդները, երբ նրա հայրը նշանակյալ կոնսուլ էր և պետք է հաջորդ ամսին ստանձներ պաշտոնը¹. տունը, ուր նա ծնվեց, նոնենիների փողոցի² վրա վեցերորդ թաղամասում, նա հետո դարձրեց Փլաբիոսների տոհմի տաճար: Մանկությունը ու վաղ պատանությունը նա անցկացրեց, ասում են, աղքատության ու արատի մեջ. նրանց տանը ոչ մի

արժաթյա աման չկար, իսկ նախկին պրետոր Կլոդիոս Պոլիսնը, որի հասցեին ներոնը գրել է «Միակնանին» բանաստեղծությունը, պահում էր և երբեմն-երբեմն ցույց էր տալիս Դոմիցիանոսի ձեռքով գրված երկտողը, ուր սա խոստանում էր նրան իր գիշերը. ի լրումն դրա ոմանք պնդում էին, որ նրա սիրեկանն է եղել նաև ներվան՝ նրա ապագա հաջորդը:

(2) Վիտելլիոսի դեմ վարած պատերազմի ժամանակ նա իր հորեղբայր Սաբինոսի և իրենց հավատարիմ զորքերի հետ ապաստանել էր Կապիտոլիումում, երբ թշնամիները ներխուժեցին, և տաճարը բռնկեց հրդեհով, նա գիշերը գաղտնի անցկացրեց դոնապանի³ մոտ, իսկ առավոտյան դեմ Իսիդայի⁴ սպասավորի զգեստով, տարբեր սնապաշտությունների քրմերին խառնված, միայն մեկ ուղեկցով սպրդեց Տիբրոսի մյուս ափը իր ուսման ընկերներից մեկի մոտ, և այնտեղ այնքան լավ թաքնվեց, որ կրնակակոխ հետապնդողները չկարողացան նրան գրտ-

նել: (3) Միայն հաղթանակից հետո նա մարդամեջ էլավ և հռչակվեց կեսար⁵:

Նա ընդունեց քաղաքային պրետորի պաշտոն կոնսուլական իշխանությամբ⁶, բայց միայն անվանապես, քանի որ ամբողջ դատավարությունը զիջեց իր մերձավորագույն գործընկերոջը. սակայն արդեն այդ ժամանակ իր դիրքի ընձեռած ողջ իշխանությունից նա օգտվում էր այնպիսի կամայականությամբ, որ երևում էր, թե ինչպիսին է դառնալու ապագայում: Մանրամասնությունների մեջ չընկնելով՝ բավական է ասել, որ նա շատերից խլեց կանանց, իսկ Դոմիցիա Լեպիդայի հետ նույնիսկ ամուսնացավ, թեև սա արդեն ամուսնացած էր էլիոս Լամիայի հետ, և որ մեկ օրվա մեջ նա քսան պաշտոն բաժանեց մայրաքաղաքում ու պրովինցիաներում, այնպես որ Վեսպասիանոսը նույնիսկ ասում էր, թե զարմանալի է, ինչպես է, որ որդին իրեն էլ հաջորդ չի ուղարկել: 2. Նա նույնիսկ արշավանք ձեռնարկեց Գալլիա և Գերմանիա⁷, առանց որևէ կարիքի և հակառակ հայրական խորհուրդների, միայն այն քանի համար, որ ազդեցությամբ ու աստիճանով հավասարվի եղբորը⁸:

Այդ բոլորի համար նա նկատողություն ստացավ և խորհուրդ՝ ավելի լավ հիշելու իր տարիքի ու դիրքի մասին: Դրա համար էլ նա ապրում էր հոր մոտ և ելից ժամանակ նրան պատգարակով տանում էին հոր և եղբոր ճոճաթոռների ետևից, իսկ հրեական տրիումֆի ժամանակ ուղեկցում էր նրանց ճերմակ ձի հեծած⁹: Այդ պատճառով նրա վեց կոնսուլություններից միայն մեկն էր հերթական¹⁰, այն էլ նրան էր զիջել և նրա համար խնդրել եղբայրը: (2) Նա ինքն էլ զարմանալիորեն ձևանում էր համեստ մարդ և պոեզիայի արտասովոր երկրպագու, որով մինչ այդ ամենևին չէր զբաղվել, իսկ դրանից հետո արհամարհանքով թողեց. սակայն այն ժամանակ նա կազմակերպում էր անգամ բաց ընթերցումներ¹¹: Բայց և այնպես, երբ պարթևական արքա Վոլոգեզը¹² Վեսպասիանոսից օգնություն խնդրեց ալանների դեմ նրա որդիներից մեկի գլխավորությամբ, Դոմիցիանոսը բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի հենց իրեն ուղարկեն. իսկ քանի որ դրանից ոչինչ չստացվեց, նա սկսեց նվերներով ու խոստումներով նման խնդրանքների դրդել արևելյան ուրիշ թագավորների:

(3) Հոր մահից հետո նա երկար տատանվում էր՝ շառաջարկել արդյոք զորքերին կրկնակի նվերներ: Հետագայում նա չէր ամաչում պընդել, որ հայրն իրեն թողել է իշխանության համաժառանգ, իսկ եղբոր դեմ չէր դադարում բացահայտ ու թաքուն դավեր նյութել: Եղբոր ծանր հիվանդության ժամանակ, երբ սա դեռ հոգին չէր ավանդել, նա արդեն կարգադրեց բոլորին լքել նրան որպես հանգուցյալի, իսկ երբ սա մա-

հացավ, մեծարանքների շարժանացրեց նրան, բացի աստվածացնելուց, և հաճախ նույնիսկ դիպչում էր նրան անուղղակի կերպով իր ճառերում ու էդիկտներում:

3. Իր տիրակալության առաջին շրջանում նա ամեն օր մենակ փակվում էր մի քանի ժամով և զբաղվում էր նրանով, որ ճանճ էր որսում ու շարում սուր քարեգրիչի վրա: Դրա համար էլ, երբ ինչ-որ մեկը հարցրել էր, թե կեսարի մոտ արդյոք մարդ կա, Վիբիոս Կրիսպոսը դիպուկ պատասխանել էր. «Նույնիսկ ճանճ էլ չկա»: Նրա կին Դոմիցիան նրա երկրորդ կոնսուլության ժամանակ ծնեց մի որդի, որը մահացավ նրա տիրակալության հաջորդ տարում¹³: Նա կնոջը Օգոստոսուհու անուն տվեց, բայց բաժանվեց նրանից, երբ սա արատավորեց իրեն դերասան Պարիսի¹⁴ նկատմամբ տաժաժ սիրով. սակայն անջատմանը շղիմացավ և կարճ ժամանակ անց, իբրև թե ժողովրդի պահանջով, նրան կրկին մոտը տարավ:

(2) Պետության նրա կառավարումը մի որոշ ժամանակ անհավասարակշիռ էր՝ արատներն ու արժանիքները նրա մեջ հավասար չափով էին, մինչև որ, վերջապես, բուն արժանիքները վերածվեցին արատների — կարելի է կարծել, որ, հակառակ նրա բնավորության¹⁵, նրան ազահ էր դարձրել աղքատությունը, իսկ դաժան՝ սարսափը:

4. Հանդիսախաղեր նա սարքում էր մշտապես, ճոխ ու փառահեղ, և ոչ միայն ամֆիթատրոնում, այլև կրկեսում: Այստեղ, քառալուծ և երկլուծ մարտակառքերի սովորական մրցություններից զատ, նա ներկայացնել տվեց երկու ճակատամարտ՝ հեծյալ ու հետևակ, իսկ ամֆիթատրոնում՝ նաև ծովամարտ: Որսահալածանքներ ու գլադիատորական մարտեր նա ցուցադրում էր անգամ գիշերը, ջահերի լույսով, և դրանց մասնակցում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք¹⁶: Քվեստորական խաղերին, որոնք ժամանակի ընթացքում սովորույթից դուրս էին եկել և այժմ վերականգնվել էին, նա միշտ անձամբ մասնակցում էր և ժողովրդին թույլ էր տալիս պահանջել ևս երկու զույգ գլադիատորներ իր սեփական վարժարանից. սրանք դուրս էին գալիս վերջինը և պալատական տարազով: (2) Գլադիատորական բոլոր հանդիսախաղերին նրա ոտքերի մոտ կանգնում էր կարմիր հագած և զարմանալիորեն փոքր գլխով մի տղա. նա հաճույքով զրուցում էր տղայի հետ և ոչ միայն կատակով, լսել էին, թե ինչպես էր կայսրը նրան հարցրել, թե ինչու պաշտոնների վերջին բաշխման ժամանակ Եգիպտոսի փոխարքա էր նշանակվել Մետտիոս Ռուֆոսը: Նա ցուցադրեց նաև ծովամարտեր և ինքն էլ դիտում էր գրանք, շնայած ուժեղ տեղատարափին¹⁷: Այդտեղ մասնակցում էին գրեթե իսկական նավատորմներ, և նրանց համար Տիբրոսի մոտակայ-

քում փորվել ու կառույցներով շրջափակվել էր մի նոր արհեստական լճակ:

(3) Նա տոնեց նաև հարյուրամյա խաղերը¹⁸, ժամկետը հաշվելով ոչ թե Կլավդիոսի ժամանակ տեղի ունեցած վերջին հանդիսությունից, այլ նախկինից՝ Օգոստոսի ժամանակ կատարվածից. այդ տոնահանդեսի ժամանակ կրկեսային մրցությունների օրը նա կազմակերպեց հարյուր մրցելույթ և, որպեսզի դա հաջողվի, յուրաքանչյուրը յոթից կրճատեց հինգ շրջապտույտի: (4) Նա սահմանեց նաև հնգամյա մրցություն Կապիտոլիումի Յուպիտերի պատվին. այն եռափուլ էր՝ երաժշտական, ձիարշավային և մարմնամարզական, և այդտեղ պարզևներն ավելի շատ էին, քան հիմա. այստեղ մրցում էին և՛ լատիներեն, և՛ հունարեն ճառախոսություններում, այստեղ կիֆարահար-երգիչներից զատ հանդես էին գալիս նաև կիֆարահարներ¹⁹, միայնակ և խմբերով, իսկ վազքին նույնիսկ աղջիկներ էին մասնակցում: Մրցություններում նա ինքն էր կարգադրում՝ հունական ձևով սանդալներ հագած և ծիրանի տոգայով, իսկ գլխին՝ Յուպիտերի, Յունոնայի և Միներվայի պատկերներով ոսկե պսակ. կողքին նստում էին Յուպիտերի քուրմը և Փլաբիոսների քրմերը²⁰ նույնպիսի հագուստով, բայց նրանց պսակների վրա կար նաև իր՝ կայսեր պատկերը: Ամեն տարի նա կատարում էր նաև Քվինթվատրիումներ Միներվայի պատվին, Այրանում կալվածում²¹. դրա համար հիմնեց քրմերի կուլեգիում, որոնցից վիճակահանությունը ընտրվում էին կարգադրիչներ և սարքում փառահեղ որսահալածանքներ, թատերական ներկայացումներ և հոեատորների ու բանաստեղծների մրցություններ:

(5) Ժողովրդի համար դրամական բաշխումներ, յուրաքանչյուրին երեք հարյուրական սեստերցիում, նա կազմակերպեց երեք անգամ: Բացի այդ, Յոթ բլուրների տոնակատարություն²² հանդիսախաղերին նա շուրջ հյուրասիրություն սարքեց՝ սենատորներին ու հեծյալներին բաժանվեցին ուտեստեղենի մեծ զամբյուղներ, պլեբեյներին՝ ավելի փոքր, և կայսրն առաջինն սկսեց հյուրասիրվել: Իսկ հաջորդ օրը թատրոնում նա ժողովրդին նետեց ամեն տեսակ նվերներ, և քանի որ դրանց մեծ մասն ընկավ պլեբեյական տեղերը, ուստի նա սենատորների և հեծյալների համար խոստացավ ևս հիսունական տեսներ՝ տեղերի ամեն մի շերտին:

5. Բազմաթիվ փառահեղ կառույցներ նա վերականգնեց հրդեհից հետո, այդ թվում նաև Կապիտոլիումը, որն այրվել էր երկրորդ անգամ²³. բայց բոլոր արձանագրությունների վրա նա դրեց միայն իր անունը, առանց որևէ հիշատակության նախորդ շինարարների: Նրա նոր կառույցներն էին Յուպիտեր-Պահպանիչի տաճարը Կապիտոլիումում և ֆորու-

մը, որն այժմ կրում է Ներվայի անունը²⁴, ինչպես նաև Փլաբիոսների տոհմի տաճարը, ստադիոնը, օդեոնը²⁵ և ծովամարտերի արհեստական լիճը, այն նույնը, որի քարերից հետագայում կառուցվեց ավարտվեց Մեծ կրկեսը, երբ դրա երկու պատերն այրվեցին²⁶:

6. Արշավանքներն ա ձեռնարկել էր մասամբ սեփական ցանկությամբ, մասամբ՝ ըստ անհրաժեշտության. սեփական կամքով քատտերի դեմ²⁷, ըստ անհրաժեշտության՝ մեկ արշավանք սարմաթների դեմ, որոնք ոչնչացրել էին նրա լեգեոնը լեգատի հետ միասին, և երկու արշավանք դաքերի դեմ, որոնք առաջին անգամ ջարդել էին կոնսուլյարիս Օւպիոս Սաբինոսին, իսկ երկրորդ անգամ՝ պրետորականների պետ Կոունելիոս Տուսկոսին, նրանց դեմ մղվող կովի պարագլխին: Փոփոխակուն ճակատամարտերից հետո նա կատարեց երկու տրիումֆ քատտերի և դաքերի նկատմամբ, իսկ սարմաթների նկատմամբ տարած հաղթանակի համար միայն դափնե պսակ մատուցեց Կապիտոլիումի Յուպիտերին:

(2) Երկպառակտչական պատերազմը, որ նրա դեմ սկսեց Լուկիոս Անտոնիոսը՝ Վերին Գերմանիայի փոխարքան²⁸, ավարտվեց դեռևս նրա բացակայությամբ և զարմանալի բարեհաջող. հենց ճակատամարտի ժամանակ հանկարծակի սկսեց շարժվել Հոննոսի սառույցը և կանգնեցրեց Անտոնիոսին մոտեցող բարբարոսների հրոսակներին: Այդ հաղթանակի մասին նա նախանշաններով ավելի շուտ իմացավ, քան սուրհանդակներից. բուն ճակատամարտի օրը մի հսկա արծիվ Հոմում թռավ ու նրստեց նրա արձանի վրա և ուրախ կւինչով թևերով գրկեց այն. իսկ Անտոնիոսի կործանման լուրն այնպես արագ տարածվեց, որ շատերը հավատացնում էին, թե իբր անձամբ տեսել են, ինչպես են նրա գլուխը Հոմ բերել:

7. Հասարակական վայրերում նույնպես նա շատ նոր բան սահմանեց՝ վերացրեց ուտեստեղենի բաշխումը, վերականգնելով իսկական ճաշկերույթի հյուրասիրությունները. կրկեսային կառավարների նախկին չորս գույներին ավելացրեց երկու նորերը՝ ոսկեգույնը և ծիֆանին. արգելեց դերասաններին Ելույթ ունենալ բեմի վրա, բայց թույլատրեց ցույց տալ իրենց մասնավոր տներում. արգելեց ամորձատել տղաներին²⁹, իսկ ստրկավաճառների մոտ մնացած ներքինիների գներն իջեցրեց: (2) Մեկ անգամ գինու հազվադեպ առատությունից, երբ հացի անբերրիություն էր, նա Լզրակացրեց, որ խաղողի այգիների նկատմամբ ուժեղ հոգածությամբ պատճառով արտերը մնում են աչքաթող արված, և էդիկտ հրայարակեց, որպիսզի Իտալիայում խաղողատնկարկներն այլևս չընդարձակվեն, իսկ պրովինցիաներում անգամ կիսով չափ կրճատվեցին³⁰,

ասենք նա շէր պնդում կատարել այդ էդիկտը: Մի քանի կարևորագույն պաշտոններ նա հանձնեց ազատարձակներին և հեծյալներին: (3) Նա արգելեց մեկ ճամբարում միավորել երկու լեգեոն և ի պահպանություն ընդունել³¹ ամեն մի զինվորից հազար սեստերցիումից ավելի. բանն այն է, որ Լուկիոս Անտոնիոսը հեղաշրջումը մտահղացել էր հենց երկու լեգեոնների բանակատեղիում և, ըստ երևույթին, գլխավորապես հույսը դրել էր զինվորների խնայողությունների առատության վրա: Իսկ զինվորների ոռճիկը մեկ քառորդով բարձրացրեց՝ ավելացնելով տարեկան երեքական ոսկի:

8. Իատեր նա վարում էր ջանասիրությանը և ժրաջանորեն, հաճախ նույնիսկ հերթից դուրս, ֆորումում, դատավորական տեղից: Ցենտումվիրների աշառու դատավճիռները նա վերացնում էր. մեկ անգամ չէ, որ ուկուպերատորներին³² կոչ էր արել տեղի շտալ ստրուկների ազատագրվելու կեղծ հակումներին. կաշառակերության մեջ մերկացված դատավորներին հեռացնում էր բոլոր խորհրդականների հետ միասին: (2) Նա ինքն էլ առաջարկեց ժողովրդական տրիբուններին՝ դրամաշորթության համար դատի տալ իրեն արատավորած մի էդիկտի, իսկ նրա համար դատավորներ խնդրել սենատից: Մայրաքաղաքի մագիստրատները և պրովինցիաների փոխարքաններին նա այնպես աճուր էր սանձել, որ երբեք նրանք ավելի ազնիվ ու արդարադատ չէին եղել. մինչդեռ նրա մահից հետո նրանցից շատերը մեր աչքի առաջ դատի տակ ընկան բոլոր հնարավոր հանցագործությունների համար:

(3) Իր վրա վերցնելով բարքերի հոգաբարձությունը՝ նա վերջ դրեց ինքնակամությանը թատրոններում, որտեղ հանդիսականներն առանց խտրության դբադեցնում էին հեծյալական տեղերը. ձեռքից ձեռք անցնող հորինվածքները՝ անվանի տղամարդկանց և կանանց արատավորող հարձակումներով, նա ոչնչացրեց, իսկ հորինողներին պատժեց անպատվությամբ. ներկայացումների ու պարի նկատմամբ տաժած կրքի համար մի նախկին քվեստորի վտարեց սենատից. վատարարո կանանց արգելեց օգտվել պատգարակներից և կտակով ընծաներ ու ժառանգություն ընդունել. մի հոռմեացի հեծյալի նա ջնջեց դատավորների ցուցակից այն բանի համար, որ նա, անհավատարմության համար վճարելով կնոջը, վերստին ամուսնացել էր նրա հետ. բոլոր դասերից մի քանի մարդ դատվեցին Սկանտինիոսի օրենքով: Այն վեստալուհիներին, որոնք խախտել էին կուսության ուխտը, ինչը նույնիսկ նրա հայրն ու եղբայրն անուշադրության էին մատնում, նա պատժում էր տարբեր եղանակներով, բայց ամենայն խստությամբ՝ սկզբում մահապատժով, ապա ըստ հին սովորույթի³³: (4) Այսպես, օրինակ, Օկուլատա քույրերին և հետո Վարոնիլլային

հրամայեց, որ իրենք ընտրեն իրենց մահը, իսկ նրանց սիրեկաններին աքսորեց. բայց Կոռնելիային՝ ավագ վեստալուհուն, որը մեկ անգամ արդեն արդարացվել էր և հիմա, շատ ժամանակ անց, կրկին մերկացվել ու դատապարտվել էր, նա հրամայեց ողջ-ողջ թաղել, իսկ նրա սիրեկաններին մահու շափ ճիպոտահարել Կոմիցիումում — միայն մեկին, մի նախկին պրետորի³⁴, նա թույլատրեց տարագրվել, քանի որ նա ինքն էր խոստովանել իր մեղքը, երբ դեռևս գործը վճռված չէր, իսկ հարցաքննություններն ու խոշտանգումները ոչինչ ցույց չէին տվել: (5) Նա անպատիժ չթողեց նաև սրբությունների նկատմամբ գործված հանցանքները. դամբարանը, որ նրա ազատարձակներից մեկը կառուցել էր որդու համար՝ Կապիտոլիումի Յուպիտերի տաճարի համար նախատեսված քարերից, նա քանդել տվեց զինվորների ձեռքով, իսկ դամբարանում ամփոփված ոսկորներն ու աճյունը նետել տվեց ծովը:

9. Տիրակալության սկզբում ամեն մի արյունահեղություն ատելի էր նրան՝ դեռևս մինչև հոր վերադառնալը նա ուզում էր էզիկտով վերացնել ցուպերի զոհաբերությունը, քանի որ հիշել էր Վերդիլիոսի ոտանավորը³⁵.

Ինչպես անօրեն ժողովուրդն սկսեց ցուպեր մորթել որպես կերակուր իր համար...

Նրանում չկար նաև ազահամոլության կամ ժլատության ոչ մի նշան՝ ինչպես մինչև իշխանության գլուխ անցնելը, այնպես էլ մի որոշ ժամանակ դրանից անց. ընդհակառակը, շատ բան ցույց էր տալիս, այն էլ ոչ մեկ անգամ, նրա անշահախնդրությունը և անգամ մեծահոգությունը: (2) Իր բոլոր մերձավորներին նա վերաբերվում էր գերազանց առատաձեռնությամբ և ջերմորեն. նրանցից միայն մեկ բան էր խնդրում՝ մանրախնդիր չլինել: Ժառանգություններ նա չէր ընդունում, եթե կտակողը երեսխաներ էր ունենում: Նույնիսկ Ռուսցիոս Ցեպիոնի կտակում նա շեղյալ հայտարարեց այն հողվածք, որը հանձնարարում էր ժառանգին ամեն տարի որոշակի քանակի դրամ տալ յուրաքանչյուր սենատորի, ով առաջին անգամ մուտք էր գործում սենատ: Բոլորին, ովքեր պետական գանձարանի պարտապան էին համարվում հինգ տարուց ավելի, նա ազատեց դատարանից և այդ գործերը թույլատրեց վերսկսել մեկ տարուց ոչ ավելի վաղ ու պայմանով, որ այն մեղադրողը, որը չի ապացուցի մեղադրանքը, աքսոր ուղարկվի: (3) Գանձարանի զրազիրներին, որոնք, ինչպես ընդունված էր, առևտրով էին զբաղվում հակառակ Կլոդիոսի օրենքի³⁶, նա ներում հայտարարեց անցյալի համար: Այն հողաբաժինները, որոնք տեղ-տեղ չէին զբաղեցվել վետերանների միջև դաշտերը բաժանելուց հետո, նա զիջեց ի օգտագործումն նախկին տերերին: Գանձարանի օգտին կատարվող կեղծ մատնություններին նա վերջ դրեց, խստորեն

սլատժելով զրպարտիչներին, — հաղորդում էին նույնիսկ նրա խոսքերը. «Տիրակալը, որը չի պատժում մատնիչներին, դրանով խրախուսում է նրանց»³⁷։

10. Սակայն նման գթասրտությանն ու անշահախնդրությանը նա երկար ժամանակ չէ, որ հավատարիմ մնաց։ Ընդ որում դաժանությունն նա ավելի վաղ դրսևորեց, քան ազահությունն։ Մնջկատակ դերասան Պարիսի աշակերտին, որը դեռևս անբեղ-անմորուս էր ու ծանր հիվանդ, նա սպանեց, որովհետև դեմքով ու արվեստով սա հիշեցնում էր ուսուցչին։ Հերմոգեն Տարսիացուն նրա «Պատմության» մեջ եղած մի քանի ակնարկների համար նույնպես սպանեց, իսկ գրագիրներին, որոնք այն արտագրում էին, կարգադրեց խաչել։ Մի ընտանիքի հոր, որն ասել էր, թե թրակացի գլադիատորը հակառակորդին չի գիշի, այլ կգիշի խաղերի կարգադրիչին³⁸, հրամայեց բեմ հանել և նետել շներին, ցուցադրելով այս մակագրությունը. «Վահանակիր³⁹ հանդուզն լեզվի համար»։

(2) Շատ սենատորների, նրանց թվում և մի քանի կոնսուլարիսների, նա մահվան մատնեց, այդ թվում՝ Ցիվիկա Ցերեալոսին, երբ սա կառավարում էր Ասիան, իսկ Սալվիդիենոս Օրֆիդոսին և Ացիլիոս Գլաբրիոնին՝ աքսորվայրում։ Նրանք մահապատժի ենթարկվեցին խռովությունն նախապատրաստելու մեղադրանքով, իսկ մնացյալները՝ ամենադատարկ պատրվակներով։ Այսպես, էլիոս Լամիային նա մահապատժի ենթարկեց վաղեմի ու անվնաս, թեև երկիմաստ կատակների համար. երբ Դոմիցիանոսը տարավ նրա կնոջը, Լամիան մի մարդու, որը գովել էր նրա ձայնը, ասաց. «Դա ժուժկալությունից է»⁴⁰, իսկ երբ Տիտոսը նրան Կորհուրդ տվեց երկրորդ անգամ ամուսնանալ, նա հարցրեց. «Դո՞ւ էլ ես կին փնտրում»։ (3) Սալվիոս Կոկցեյանոսը կործանվեց այն բանի համար, որ նշում էր Օտոն կայսեր՝ իր հորեղբոր, ծննդյան օրը։ Մետտիոս Պոմպոլիանոսը՝ այն բանի համար, որ նրա մասին ասում էին, թե իբր կայսերական բախտացույց ունի և հետը կրում է երկրի՝ մագաղաթի վրա արված գծագիրը և թագավորների ու առաջնորդների ճառերը Տիտոս Լիվիոսից, իսկ իր երկու ստրուկներին անվանել է Մահոն և Հաննիբալ. Սալյուստիոս Լուկուլլոսը՝ Բրիտանիայի լեգատը՝ այն բանի համար, որ նոր նմուշի նիզակները թույլատրել էր անվանել «Լուկուլլոսյան»։ Ցունիոս Ռուստիկոսը՝ որ գովասանական խոսքեր էր հրապարակել Ֆրասեոս Պետոսի և Հելվիդիոս Պրիսկոսի⁴¹ հասցեին՝ նրանց անվանելով անարատ ազնվության տեր այրեր. այդ մեղադրանքի առթիվ Հոմից և Իտալիայից վտարվեցին բոլոր փիլիսոփաները։ (4) Նա մահապատժի ենթարկեց նաև Հելվիդիոս Կրտսերին, կասկածելով, որ մի ողբերգության վերջում հանձինս Պարիսի և էնոնայի⁴² պատկերել է իր ամուսնալուծությունը

կնոջից, մահապատժի ենթարկեց նաև Փլարիոս Սաբինոսին՝ իբ հորեզ-բորորդուն, այն բանի համար, որ կոնսուլական ընտրությունների օրը մունետիկը սխալմամբ նրան հայտարարել էր ոչ թե որպես ապագա կոն-սուլի, այլ ապագա կայսրի:

(5) Երկպառակտչական պատերազմից հետո նրա մոլեգնությունը էլ ավելի սաստկացավ: Հակառակորդներից նրանց թաքնված համախառնե-րի անունները կորզելու համար նա նոր խոշտանգում հնարեց՝ դազում էր նրանց ամոթատեղերը, իսկ ոմանց էլ ձեռքերն էր կտրում: Ինչպես հայտնի է, ականավոր դավադիրներից ներում ստացան միայն երկուսը՝ սենատորական կոշման տեր մի տրիբուն⁴³ և մի ցենտուրիոն. ջանալով ապացուցել իրենց անմեղությունը, նրանք ձևացան արատավոր անա-ռակներ, որի համար նրանց արհամարհել է և՛ զորքը, և՛ զորավարը:

11. Նրա մոլեգնությունը ոչ միայն շափ ու սահման չունեի, այլև միաժամանակ հնարամիտ էր ու խաղախ: Կառավարչին, որին նա խաշ հանել տվեց, նախօրյակին հրավիրեց իր ննջաբանը, նստեցրեց կողքին, ճանապարհ գրեց հանդարտված ու գոհ, նույնիսկ հյուրասիրելով իր սե-ղանից: Արրեցիոս Կլեմենտոսին, նախկին մի կոնսուլի, իր մոտիկ ընկե-րոջը և լրտեսին, նա մահապատժի ենթարկեց, բայց գրանից առաջ նրա նկատմամբ ողորմած էր սովորականից ոչ պակաս, եթե ոչ ավելի, և վերջին օրը, նրա հետ միասին զրոսնելով ու նայելով մատնիչին, որը կործանելու էր նրան, ասաց. «Ուզո՞ւմ ես, վաղը միասին լսենք այս անպիտան ստրուկին»: (2) Իսկ որպեսզի առավել ևս հիվանդագին խոցի մարդկային համբերատարությունը, իր բոլոր ամենախիստ դատավճիռ-ները նա սկսում էր իր ողորմածության մասին հայտարարությամբ, և որքան ավելի մեղմ էր սկիզբը, այնքան ավելի հավաստի էր լինում դա-ժան վախճանը: Մի քանի անձանց, ովքեր մեղադրվում էին մեծությանը վիրավորելու մեջ, նա ներկայացրեց սենատի դատաստանին, հայտարա-րելով, որ այս անգամ ուզում է ստուգել, արդյո՞ք սենատորներն իրեն շատ են սիրում: Առանց դժվարության նա հասավ այն բանին, որ նրանց մահապատժի դատապարտեին ըստ նախնյաց սովորույթի⁴⁴, բայց հետո, սարսափահար պատժի դաժանությունից, որոշեց հանգարտեցնել վրդով-մունքը այսպիսի խոսքերով— ավելորդ չի լինի դրանք ճշտությամբ մեջ-բերել.— «Թույլ տվեք ինձ, հայր սենատորներ, հանուն իմ նկատմամբ տաժած ձեր սիրո, ձեզանից գթություն աղերսել, որին հասնելը, գիտեմ, հեշտ չի լինի. թող թույլատրվի դատապարտյալներին, որ նրանք ընտ-րեն իրենց մահվան եղանակը, որպեսզի գուք կարողանաք ազատել ձեր աչքերը սահմոկեցուցիչ տեսարանից, իսկ մարդիկ հասկանան, որ սենա-տին ես էլ եմ մասնակցել»:

12. Այսպես ինչպես գանձարանը կառույցների, հանդիսախաղերի, զինվորներին տրվող բարձր առճիկների վրա, նա փորձեց շահափորել գեթ ուղղակի ծախսերը, կրճատելով զորքի քանակը, բայց համոզվեց, որ գրանով մերկացնում է իրեն բարբարոսների հարձակումների հանդիման, իսկ գրամական դժվարություններից դուրս չի գալիս. և այնժամ առանց երկար-բարակ խորհելու նա ձեռնամուխ եղավ հարստանալու՝ ցանկացած միջոցներով: Ամենուր նա զավթում էր ողջերի ու մեռածների ունեցվածքը ցանկացած մեղադրանքների ու մեղադրողների օգնությամբ՝ բավական էր կասկածել ամենափոքր իսկ խոսք կամ գործ ընդդեմ կայսերական մեծության: (2) Նա յուրացնում էր ամենահեռավոր ժառանգությունները, եթե թեկուզ մեկ մարդ հայտարարում էր, թե իբր մահացածը իր ներկայությամբ ասել է, որ ուզում է իրեն ժառանգորդ դարձնել կեսարին: Այսուհետև համեմատությամբ հատուկ դատարանությամբ էր գանձվում հրեական հարկը⁴⁵. գրանով հարկվում էին և նրանք, ովքեր բացահայտ հրեական ապրելակերպ էին վարում, և նրանք, ովքեր թաքցնում էին իրենց ծագումը, ցանկանալով խուսափել այդ ցեղի վրա դրված տուրքից: Ես հիշում եմ, թե ինչպես իմ վաղ պատանեկության օրերին բազմամարդ մի դատավարության ժամանակ դատախազը զրննում էր իննսուն տարեկան մի ծերունու, թե արդյոք նա թլպատված չէ՞:

(3) Համեստությամբ նա աչքի չէր ընկնում դեռ ջահել տարիքից, ինքնավստահ էր և կոպիտ խոսքերով ու աբարքներով: Երբ Յենիդան, նրա հոր հարձը, Իստրիայից վերադառնալուց հետո, ուզում էր նրան հումքուրել սովորականի պես, նրան ձեռքն էր դեմ արել. իսկ զայրանալով, որ եզրոր փեսան⁴⁶ նույնպես ժառանգորդին ճերմակ է հագցնում, բացականչել էր՝

Կավ բան չէ բազմիշխանությունը...⁴⁷

13. Իսկ հասնելով իշխանության, նա առանց ամաչելու պարծինում էր սենատում, թե այդ ինքն է իշխանություն բերել հորն ու եղբորը, իսկ նրանք այն սոսկ վերադարձրել են իրեն. ամուսնալուծությունից հետո ընդունելով կնոջը, նա էդիկտով հայտարարեց, որ կրկին նրան բարձրացնում էր սրբազան մահիճը, իսկ ամֆիթատրոնում համաժողովրդական հյուրասիրության օրը հաճույքով էր լսում «Փառք տիրակալին և տիրուհուն» բացականչությունները⁴⁸: Նույնիսկ Կապիտոլիումական մրցությանը, երբ Պալֆուրիոս Սուրան, որին նա վտարել էր սենատից, պսակ ստացավ պերճախոսության համար, և շուրջբոլորը շտեմնված միահամուռությամբ աղերսում էին նրան սենատ վերադարձնել, նա շպատասխանեց և միայն մունետիկի միջոցով հրամայեց նրանց կտրել ձայ-

ները: (2) Ոչ նվազ ամբարտավանութեամբ նա մեկ անգամ պրոկուրատորներին անունից գրված կառավարական նամակը սկսեց այսպիսի բառերով՝ «Մեր տերը և աստվածը կարգադրում է...» և այդ ժամանակից սովորութիւնն դարձավ և՛ գրավոր, և՛ բանավոր դիմումներում նրան միայն այդպես անվանել: Պալատինումում իր պատվին արձաններ նա թուլլատրում էր դնել միայն ոսկուց ու արծաթից, և ինքն էր նշանակում նրանց քաշը⁴⁹: Մարտակառքերով ու տրիումֆային տարբերանշաններով դարպասներ ու կամարներ նա կառուցել էր քաղաքի բոլոր թաղամասերում և այնքան շատ, որ նրանցից մեկի վրա հայտնվեց հունարեն մակագրութիւն՝ «Բավական է»⁵⁰: (3) Կոնսուլ նա հղավ տասնյոթ անգամ⁵¹. ինչպես ոչ ոք նրանից առաջ, այդ թվում յոթ անգամ իրար ետևից, տարեցտարի. բայց բոլոր այդ կոնսուլութիւնները միայն կոչում էին, սովորաբար նա պաշտոնում մնում էր միայն մինչև հունվարյան իդերը և բնավ երբեք ոչ ավելի, քան միայն մինչև մայիսյան կալենդները⁵²: Իսկ երկու տրիումֆներից հետո նա ընդունեց Գերմանիկոս մականունը և իր մականուններով վերանվանեց սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները՝ Գերմանիկոս և Դոմիցիանոս, որովհետև այդ ամիսներից մեկին նա ծընվել էր, իսկ մյուսին կայսր էր դարձել:

14. Այդ ամենով արժանանալով համընդհանուր ատելութեան ու սարսափի, նա, ի վերջո, կործանվեց մերձավորագույն բարեկամների ու ազատարձակների դավադրութեան հետևանքով⁵³, որի մասին գիտեր նաև նրա կինը: Իր մահվան տարին, օրը և նույնիսկ ժամն ու տեսակը վաղուց արդեն նրա համար գաղտնիք չէին՝ դեռևս վաղ երիտասարդութեան ժամանակ այդ ամենը նրան կանխագուշակել էին քաղեքանները, և երբ մի անգամ ճաշելիս նա հրաժարվեց սունկ ուտել, հայրը բոլորի ներկայութեամբ նույնիսկ ծաղրեց նրան, ասելով թե արդեն մոռացել է իր ճակատագրի մասին և ուրիշ բաներից ավելի է վախենում, քան սրից: (2) Դրա համար էլ նա ապրում էր սարսափի ու ահուդողի մեջ, և ամենաաննշան կասկածներն իսկ նրան անասելի հուզում էին: Նույնիսկ խաղողի այգիները կտրելու մասին էդիկար, ասում են, ի կատար չածեց միայն այն պատճառով, որովհետև ձեռքից ձեռք էին անցնում գաղտնաբար գցած նամակներ այսպիսի շափածո տողերով՝

Այժի պես դու մի կրծիր խաղողի այգիները, գինին դեռ կբավե
Լիուլի ըմպելու, երբ գոհաբերեն քեզ⁵⁴:

(3) Այդ նույն սարսափը ստիպեց նրան, ամեն տեսակ պատիվների մեծագույն սիրահարին, մերժելու սենատի ընդունած նոր որոշումը, որ նրա յուրաքանչյուր կոնսուլութեանը լիկտորների և հանձնակատարների թվում

նրան ուղեկցեն հոռմեացի հեծյալներ՝ հեծյալների տոգայուլ⁵⁵ և մարտական նիզակներով:

(4) Սպառնալի ժամկետի մոտենալով նա օրը օրին ավելի կասկածամիտ էր դառնում: Սյունասրահներում, ուր սովորաբար նա զբոսնում էր, պատերը երեսպատել տվեց փայլուն լուսնաքարով⁵⁶, որպեսզի դրանց արտացոլմամբ տեսնի այն ամենը, ինչ կատարվում է իր թիկունքում: Շատ բանտարկյալների նա միայն ինքն էր հարցաքննում և մենակ, սեփական ձեռքերով բռնելով նրանց շղթաները: Որպեսզի տնեցիներին հասկացնել տա, թե նույնիսկ բարի մտադրությամբ պատրոնի վրա ձեռք բարձրացնելը հանցանք է, նա մահապատժի ենթարկեց էպաֆրոդիտեսին, աղերսագրերի գործերով իր խորհրդականին, որովհետև կարծում էին, թե այդ նա է սեփական ձեռքով օգնել բուլորից լքված Ներոնին ինքնասպան լինելու: 15. Վերջապես, ամենաաննշան կասկածով նա սպանեց իր զարմիկին՝ Փլաբիոս Կլեմենտոսին⁵⁷, համարյա նրա կոնսուլության ժամանակ, թեև սա աննշան ու ծուլ մի մարդ էր, և նրա դեռահաս որդիներին նա ինքն էր բացահայտ նախորոշել իր ժառանգներ, վերանվանելով մեկին Վեսպասիանոս, մյուսին՝ Դոմիցիանոս: Հենց դրանով էլ նա էլ ավելի արագացրեց իր կործանումը:

(2) Արդեն ութ ամիս անընդհատ Հռոմում այնքան էին կայծակներ տեսել և այնքան մարդկանց մասին պատմություններ լսել, որ նա, ի վերջո, բացականչել էր՝ «Թող ում ուզում է շանթահարի»: Կայծակները հարվածում էին Կապիտոլիումին, Փլաբիոսների տոհմի տաճարին, Պալատինումի պալատին և նրա սեփական ննջասենյակին, փոթորիկը պոկել էր նրա հաղթարձանի պատվանդանի մակագրությունը և նետել հարևան հուշարձանի մոտ, այն ծառը, որ տապալվել էր և շտկվել դեռևս մինչև Վեսպասիանոսի իշխանության գլուխ գալը⁵⁸, այժմ հանկարծակի կրկին տապալվել էր: Պրենեստենյան ֆորտունա⁵⁹, որին իր սմբողջ տիրակալության ընթացքում յուրաքանչյուր նոր տարի նա դիմում էր և որը ամեն անգամ միևնույն բարեգուշակ պատասխանն էր տալիս, այժմ տվեց ամենաշարագույժ պատասխանը, ուր խոսվում էր նույնիսկ արյան մասին: (3) Միներվան, որին նա սնապաշտորեն երկրպագում էր, երազում նրան հայտնել էր, թե լքում է իր սրբավայրը և այլևս ի զորու չէ պահպանելու կայսրին՝ Յուպիտերը նրանից խլել է զենքը: Բայց ամենից ավելի նրան ցնցեց աստղագուշակ Ասկլետարիոնի մարգարեությունն ու ճակատագիրը: Նրա մասին մատնություն էին արել, թե իր արվեստով կանխագուշակում է և հրապարակում ապագան, և նա չէր ժխտել. իսկ այն հարցին, թե ինքն ինչպես կմահանա, պատասխանել

էք, որ շուտով շնորք կհոշոտեն իրեն: Դամիցիանոսը հրամայել էր տեղ-
նուտեղը սպանել նրան, բայց նրա արվեստի ստահողութունը մերկաց-
նելու համար նրան թաղել ամենայն հոգատարությամբ: Այդպես էլ ար-
վել էր. բայց հանկարծակի վրա էր տվել փոթորիկը, սրբել տարել էր
խարույկը, և կիզված դիակը շնորք հոշոտել էին. մոտիկից անցնող դե-
րասան կատինոսը նկատել էր այդ և օրվա մյուս նորությունների հետ
ճաշի ժամանակ պատմել էր կայսրին:

16. Կործանման նախօրեին նրան սունկ մատուցեցին. նա կարգա-
դրեց թողնել այն վաղվան, ավելացնելով՝ «Եթե ինձ բախտ է վիճակված
ուտել այն». և դառնալով շրջապատողներին բացատրեց, որ հաջորդ օրը
լուսինը կարյունոտվի Ջրհոսի նշանագծին, և մի այնպիսի բան կպա-
տահի, որի մասին կխոսեն ամբողջ աշխարհում: Կեսգիշերին մոտ նա
հանկարծ վեր թռավ անկողնուց՝ սուկալի վախով համակված: Վաղ առա-
վոտյան նրա մոտ բերեցին մի գերմանացի գուշակի⁶⁰, որը կայծակի
մասին հարցին նախագուշակեց իշխանության փոփոխություն. կայսրը
մինչև վերջ լսեց նրան և մահվան դատապարտեց: (2) Ճակատը քորելիս
նա ճանկուց թարախապալարը, արյուն ցայտեց. «Եթե սրանով էլ վեր-
ջանար», — ասաց նա: Հետո նա հարցրեց, թե ժամը քանիսն է. ժամը
չորսն էր, որից նա վախենում էր, բայց նրան գիտավորյալ ասացին, թե
ժամը հինգն է⁶¹: Ուրախանալով, որ վտանգն անցել է, նա այն է շտա-
պում էր բաղնիք, բայց ննջարանապետ Պարթենիոսը կանգնեցրեց նրան,
հայտնելով, որ ոմն մեկը շտապ ուզում է նրան մի կարեւոր բան ասել:
Այնժամ, արձակելով բոլորին, նա մտավ ննջասենյակ և այնտեղ սպան-
վեց:

17. Այն մասին, թե սպանությունն ինչպես մտահղացվեց և իրա-
գործվեց, այսպես են պատմում: Դավադիրները դեռևս տատանվում էին,
թե երբ և ինչպես պետք է հարձակվել նրա վրա, բաղնիքում թե ճաշե-
լիս. վերջապես, նրանց խորհուրդ և օգնություն սուազարկեց Ստեփանո-
սը՝ Դամիցիլլայի կառավարիչը, որն այդ ժամանակ դատի տակ էր վատ-
նումների համար: Ի խուսափումն կասկածների նա ձևացրեց, թե իբր
ձախ ձեռքը ցավում է, և մի քանի օր անընդհատ այն փաթաթում էր
բրդով ու վիրակապերով, իսկ նշանակված ժամին դաշույն թաքցրեց
այնտեղ: Խոստանալով բացահայտել դավադրությունը, նա մուտք ստա-
ցավ կայսեր մոտ. և երբ սա տարակուսած կարդում էր նրա երկտողը,
նա հարվածեց կայսեր աճուկին: (2) Վիրավորը փորձում էր դիմադրել,
բայց կորնիկուլարիոս Կլոդիանոսը⁶², Պարթենիոսի ազասարձակ Մաք-
սիմոսը, ննջարանապետների դեկուրիոն Սատուրոսը⁶³ և գլադիատոր-
ներից ինչ-որ մեկը նետվեցին նրա վրա և վերջ տվին յոթ հարվածով:

Սպանությանը ներկա էր ստրուկ տղան, որը սովորաբար սպասարկում էր ննջարանի լարերին⁶⁴։ Նա պատմում էր, որ առաջին հարվածից հետո Դոմիցիանոսն իրեն ձայն փոխեց բարձի տակից հանել ու տալ դաշույնը և կանչել ստրուկներին, բայց գլխատակին ընկած էին միայն դատարկ պատյանները, բոլոր դռները փակված էին. իսկ այդ ընթացքում կայսրը, Ստեփանոսի հետ գոտեմարտի բռնված, երկար մարտնչում էր գետնին, ջանալով մերթ նրա ձեռքից խլել դաշույնը, մերթ էլ արյունոտ մատներով հանել աչքերը։

(3) Սպանվեց նա տասնչորսերորդ օրը մինչև հոկտեմբերյան կալենդները, կյանքի քառասունհինգերորդ և իշխանության տասնհինգերորդ տարում⁶⁵։ Նրա դիակը էծանագին պատգարակով դուրս տարան գերեզմանափորները։ Նրա ստնտուն՝ Յիլլիդան, նրան կրակին հանձնեց կատինական ճանապարհի վրա գտնվող իր կալվածատանը, իսկ նրա աճյունը գաղտնի բերեց Փլաբիոսների տոհմի տաճարը և խառնեց Յուլիայի՝ Տիտոսի գատեր աճյունին, որին նույնպես ինքն էր կերակրել։

18. Նա բարձրահասակ էր, դեմքը՝ համեստ, վառ այտերով, աչքերը խոշոր էին, բայց թեթևակի կարճատես։ Նրա ամբողջ մարմինը շրնչում էր գեղեցկությամբ ու արժանապատվությամբ, հատկապես երիտասարդ տարիքում, եթե չհաշվենք այն, որ ոտքի մատները ծուռ էին, բայց հետագայում ճաղատությունը⁶⁶, դուրս ցցված փորը և բարալիկ ոտքերը, որոնք նիհարել էին երկարատև հիվանդությունից, այլանդակել էին նրան։ (2) Նա զգում էր, որ դեմքի համեստ արտահայտությունը նպաստում է իրեն, և մի անգամ սենատում նույնիսկ պարծեցավ. «Մինչև հիմա, համենայն դեպս, դուք հարկ չեք ունեցել գանգատվելու իմ տեսքից ու բարքից»...։ Դրա փոխարեն ճաղատը նրան շատ դառնություն էր պատճառում, և եթե որևէ մեկին ծաղրում կամ վիրավորում էին ճաղատության համար, նա դա վիրավորանք էր համարում իր հասցեին։ Նա նույնիսկ գրքույկ հրապարակեց մազերի խնամքի մասին, նվիրելով այն բարեկամին, և ի մխիթարություն իր ու նրա, այնտեղ գետեղել էր այսպիսի մի դատողություն.

«Տեսնում ես, ինչպիսին եմ ես ինքս՝ տեսքով գեղեցիկ ու վեհապան՞⁶⁷։—

Մինչդեռ իմ մազերին էլ նույն բախտն է վիճակվել։ Բայց ես աննկուն տոկում եմ, որ իմ գանգուրներին ծերություն է վիճակվել դեռ ջահել օրերին։ Հավատա ինձ, որ ոչինչ չկա ավելի գերող, քան գեղեցկությունը, բայց ոչինչ չկա ավելի կարճակյաց, քան նա»։

19. Հոգևություն պատճառել նա իրեն չէր սիրում. զուր չէր, որ նա

խուսափում էր հետիոտն քայլել քաղաքում, իսկ արշավանքների և ուղեվորությունների ժամանակ հազվադեպ էր ձի հեծնում և ավելի հաճախ պատգարակով էր գնում: Ծանր զենքի հետ նա ամենևին գործ չէր ունեցել, դրա փոխարեն շատ էր սիրում նետաձգությունը⁶⁸: Շատերը բազմիցս տեսել էին, թե ինչպես Ալբանումի կալվածում նետ ու աղեղով խոցում էր տարբեր տեսակի հարյուրավոր գազանների, ընդ որում մի քանիսի վրա դիտավորյալ այնպես էր նշան բռնում, որ երկու նետ, խրվելով, ցցվեին եղջյուրների նման: Իսկ երբևմն էլ հրամայում էր մի տղայի կանգնել հեռվում և թիրախի փոխարեն մեկնել աջ ափը՝ մատները չռած, և նրա նետերն այնպես դիպուկ էին թռչում, որ անցնում էին մատների արանքով՝ առանց նրանց դիպչելու:

20. Իր կառավարման սկզբում նա ազնիվ արվեստներն արհամարհում էր: Ճիշտ է, երբ հրդեհի ժամանակ կործանվեցին մատենադարանները⁶⁹, նա դրամ չափսոսաց դրանք վերականգնելու համար, ամեն կողմից հավաքեց մատյանների ձեռագրեր և մարդիկ ուղարկեց Ալեքսանդրիա՝ արտագրելու և համեմատելու համար: Սակայն ոչ ծանոթություն պատմության ու պոեզիայի հետ, ոչ հասարակ հոգատարություն լավ ոճի մասին նա երբեք չդրսևորեց. բացի Տիբերիոս Կեսարի նոթերից ու հրամանագրերից⁷⁰, նա ոչինչ չէր կարդում, իսկ ուղերձները, ճառերն ու էդիկտները կազմում էր ուրիշների օգնությամբ: Սակայն նրա խոսքը զուրկ չէր նրբինությունից, և նրա որոշ դատողություններ նույնիսկ հիշվում են: Այսպես, նա ասում էր. «Ծս կուզենայի այնպես գեղեցիկ դառնալ, ինչպիսին թվում է Մեցիոսն ինքն իրեն»: Մի մարդու գլուխ, որի վրա մեկընդմեջ աճում էին ալեհեր ու շեկ մազեր, նա անվանել էր մեղրախառն ձյուն: 21. Տիրակալները, ասում էր նա, ամենից վատ են ապրում. երբ նրանք դավադրություններ են բացահայտում, նրանց չեն հավատում, մինչև որ նրանց չեն սպանում:

Պարապ ժամանակ նա միշտ զվարճանում էր զառ խաղալով, նույնիսկ լի օրերին ու առավոտյան: Լոգանք ընդունում էր ցերեկը, և ցերեկվա նախաճաշին այնքան էր ուտում, որ ճաշին բերանը ոչինչ չէր դնում, բացի մատիոսյան խնձորից⁷¹ և մի փոքր շիշ գինուց: Նա հաճախակի և ճոխ խնջուլքներ էր սարքում, բայց ոչ երկարատև. դրանք միշտ և լույսով էր ավարտում, և գինարբուքով չէր տարվում: Դրա փոխարեն մինչև քնելը զբոսնում էր միայնակ:

22. Նա անչափ հեշտասեր էր: Իր ամենօրյա կենակցությունները նա անվանում էր «անկողնային ըմբշամարտ», ասես դա վարժություն լիներ. ասում էին, թե իբր նա ինքն էր պոկոտում իր հարձերի մազերը և գլուխ էր դնում ամենահասարակ սյուռնկուհիների հետ: Ծրբ Տիտոսը նրան

կնության էր առաջարկում իր դատերը⁷², որը դեռևս կույս էր, նա համառորեն հրաժարվում էր, վկայակոչելով իր ամուսնութիւնը Դոմիցիայի հետ, իսկ երբ շուտով աղջկան ուրիշին կնության տվեցին, առաջինը ինքը նրան գայթակղեցրեց՝ դեռևս Տիտոսի կենդանության օրոք. իսկ հետո, նրա հոր և ամուսնու մահից հետո, սիրում էր նրան բուռն սիրով և անսքող և նույնիսկ դարձավ նրա մահվան մեղավորը, ստիպելով փշացնել արգանդի պտուղը, որ հղացված էր իրենից:

23. Նրա սպանության լուրը ժողովուրդն անտարբեր ընդունեց, բայց ղորքը վրդովված էր. զինվորները փորձում էին նրան իսկույնէնթ հռչակել աստվածային և պատրաստ էին վրեժխնդիր լինել նրա համար, բայց առաջնորդներ չգտնվեցին. նրանք վրեժխնդիր եղան քիչ անց, վճռականորեն պահանջելով հաշվեհարդար տեսնել սպանության մեղավորների հետ⁷³: Սենատորներն, ընդհակառակն, այնպիսի ցնծության մեջ էին, որ խառնիխուռն վազելով հավաքվեցին կուրիայում՝ անզուսպ կերպով պախարակելով սպանվածին ամենավիրավորական ու շարաշունչ բացակալութիւններով: Կարգադրեցին սանդուղքներ ներս բերել և իրենց աչքի առջև պոկոտել կայսերական վահաններն ու պատկերաքանդակները, որպեսզի փշրեն գետնին⁷⁴, և նույնիսկ որոշում ընդունեցին ջնջել նրա անունը կրող արձանագրութիւնները և ոչնչացնել ամեն մի հիշատակ նրա մասին:

Նրա կործանումից մի քանի ամիս առաջ Կապիտոլիումի վրա մի ագռավ արտասանել էր. «Ամեն ինչ լավ կլինի» — և գտնվել էին մարդիկ, որ այդ նախանշանն այսպես էին մեկնաբանել.

«Վերջը լավ կլինի» — կռավեց Տարպեյան բարձունքից

Ագռավը, — չէր կարող նա ասել՝ «Ձեզ համար հիմա էլ լավ է»:

Ասում են, Դոմիցիանոսն ինքն էլ երազում տեսել էր, թե իբր մեջքին ոսկե սապատ է աճել, և չէր կասկածում, որ դա պետությանը խոստանում է երջանկութիւնն ու բարեկեցութիւնն իր մահից հետո: Շուտով ալդպես էլ եղավ՝ շնորհիվ հետագա տիրակալների շափավորության և արդարամտության:

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

(ՊԱՏԱՌԻԿՆԵՐ)

«ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՃԱՐՏԱՍԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԳՐՔԻՑ

Քերականների մասին

(1) Նախկին ժամանակներում քերականությունը Հոռոմում ոչ միայն հարգի չէր, այլև նույնիսկ հայտնի չէր, քանի որ ժողովուրդը, ինչպես գիտենք, կոպիտ ու մարտաշունչ էր, և աղնիվ գիտությունների համար ժամանակը չէր բավարարում: Եվ նրա սկիզբը համեստ էր. հնագույն գիտնականները, որոնք միաժամանակ և՛ բանաստեղծներ էին, և՛ կիսաշլ շափ հույներ (ես խոսում եմ Լիվիոսի և Էննիոսի¹ մասին, որոնք, ինչպես հայտնի է, ուսուցանում էին Հոռոմում և հայրենիքում երկու լեզվով), միայն թարգմանում էին հույներին և կամ հրապարակավ ընթերցում սեփական լատինական շարադրությունները: Ճիշտ է, ոմանք հաղորդում են, որ հիշյալ էննիոսը հրապարակել է երկու գիրք՝ «Տառերի և վանկերի մասին» և «Չափերի մասին», բայց Լուկիոս Կոտտան² արդարացիորեն է դատում, որ դրանք պատկանում են ոչ թե բանաստեղծին, այլ ավելի ուշ ժամանակների էննիոսին, որին են վերագրվում նաև «Ավգուրների գիտության մասին» գրքերը:

(2) Ինչպես թվում է, առաջինը Հոռոմում քերականության ուսումնասիրություն է մուծել Կրատես Մալլացին, Արիստարքոսի ժամանակակիցը. Ատտալոս թագավորի կողմից նա ուղարկվել էր սենատ³ Երկրորդ և Երրորդ Պունիկական պատերազմների արանքում, մոտավորապես հենց այն ժամանակ, երբ մահացել էր էննիոսը: Պալատինումում նա ընկավ կոյուղու բացվածքի մեջ, կոտրեց կոնքը և դրանից հետո իր դեսպանության ողջ

ժամանակամիջոցում հիվանդ էր. հենց այդ պահին էլ նա սկսեց հաճախակի զրույցներ կազմակերպել, առանց հոգնության դատողություններ անելով, և դրանով նմանողության օրինակ տվեց: Նմանողությունն այն էր, որ լավ, բայց դեռևս քիչ հայտնի ոտանավորները՝ գրված կամ մեռած բարեկամների կամ էլի ուրիշ մարդկանց կողմից, ջանասիրաբար մշակվում էին և ընթերցումների ու մեկնությունների հետևանքով հայտնի էին դառնում բոլորին. այդպես Գայոս Օկտավիոս Լամպակոնը յոթ պարի բաժանեց Նեվիոսի «Պունիկյան պատերազմը», որը գրված էր մեկ փոթեթում առանց ընդմիջարկման. այդպես հետագայում Քվինտոս Ալարգոնտեոսը մշակեց էննիոսի «Աննալները» և որոշակի օրերի կարգում էր այն հրապարակավ, ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ. այդպես մշակեցին Լելիոս Արքելալոսը և Վետտիոս Փիլոկոմոսը իրենց բարեկամ Լուցիլիոսի սատիրաները, որոնք, նրանց սևփական իսկ խոստովանությամբ, Արքելալոսի մոտ լսել էր Պոմպեոս Լենեոսը, իսկ Վետտիոս Փիլոկոմոսի մոտ՝ Վալերիոս Կատոնը:

(3) Քերականությունը կարգավորեցին ու բազմակողմանիորեն զարգացրեցին լանուվիումցի Լուկիոս Էլիոսը և նրա փեսա Սերվիոս Կլոդիոսը, երկուսն էլ հռոմեացի հեծյալներ, որոնք հարուստ ու բազմազան փորձ ունեին գիտության մեջ և պետական գործերում: Էլիոսը երկու մականուն ուներ՝ նրան կոչում էին Պրեկոնինոս⁴, քանզի նրա հայրը պրեկոն (մունեատիկ) էր, և Ստիլոն⁵, քանի որ նա սովորաբար ճառեր էր դրում բոլոր ազնվատոհմ քաղաքացիների համար. նա այնքան էր նվիրված ավագանուն, որ նույնիսկ լատաբանդիության ուղեկցեց Մետելլոս Նումիդացուն⁶: Սերվիոսը յուրացրեց խարեության բաները դեռևս չհրատարակված գիրքը և, հալածական ամոթից ու արհամարհանքից, հեռացավ Հռոմից. հիվանդանալով հողացավով և ուժ չունենալով ցավը տանել, նա իր ոտքերին թունավոր դեղ քսեց և դրանք անզգայացան, այնպես որ նա կարող էր դեռևս ապրել, մինչդեռ նրա մարմնի այդ մասը արդեն մահացած էր:

Դրանից հետո հետաքրքրությունը դեպի գիտությունը և հոգատարությունը դրա նկատմամբ գնալով ավելի ու ավելի էին ուժեղանում, այնպես որ նույնիսկ անվանի մարդիկ չէին հրաժարվում մի որևէ բան դրա մասին դրելուց, իսկ քաղաքում, ըստ տեղեկությունների, մի ժամանակ քսանից ավելի հայտնի դպրոց կար: Քերականների գինը և նրանց վարձը այնքան բարձր էր, որ Լուտացիոս Դափնիսը (այն նույնը, որին Լելիոս Մելիսոսը, խնդալով նրա անվան վրա, անվանում էր «Պանի սիրեցյալ»⁷) Քվինտոս Կատուլոսի կողմից գնվեց յոթ հարյուր հազար սեստերցիումով և շուտով ազատ արձակվեց, իսկ Լուկիոս Ապուլեոսին հռո-

մեացի մեծահարուստ հեծյալ էֆիցիոս Կալվինոսը տարեկան շորս հարյուր հազար սեստերցիում էր վճարում Օսկայում⁸ դասավանդելու համար: Բանն այն է, որ քերականությունը թափանցել էր նաև պրովինցիաները, և այնտեղ ուսուցանում էին որոշ նշանավոր գիտնականներ, հատկապես Ցիզալպիական (Անդրալպյան) Գալլիայում. նրանց թվում էին Օկտավիոս Տեվկրոսը, Սեսցեննիոս Ցակքոսը և Օպպիոս Քարեսը, որ ուսուցանում էր մինչև խոր ծերություն, երբ արդեն նրա ոչ միայն ոտքերը, այլև աչքերն էլ էին հրաժարվում ծառայել նրան:

(4) Սովորույթը քերականներին հունական անվանում էր հատկացրել. իսկ սկզբնապես նրանք անվանվում էին «լիտերատներ»: Այդ մասին խոսում է նաև Կորնելիոս Նեպոտը այն մատյանում, որտեղ նա սահմանում է տարբերությունը «լիտերատի» և «գիտնականի» միջև. նա պնդում է, որ սովորաբար «լիտերատներ» կոչում են նրանց, ովքեր կարողանում են գեղեցիկ, նուրբ և խելացի խոսել ու գրել, բայց ըստ էության հարկ է այդպես անվանել բանաստեղծների այն մեկնաբաններին, որոնց հույները քերականներ են անվանում: Նրանք անվանվում էին նաև «գրողներ», ինչպես նշում է մեկ նամակում Մեսալա Կորվինոսը, ասելով, որ ինքը գործ շունի Ֆուրիոս Բիրակուլլոսի հետ, ոչ էլ նույնիսկ Տիցիդայի կամ գրող Կատոնի հետ,— քանզի այստեղ նա, անկասկած, ի նկատի ունի Վալերիոս Կատոնին՝ հայտնի բանաստեղծին և նշանավոր քերականին: Ոմանք տարբերում են «լիտերատին» և «գրողին» այնպես, ինչպես հույները՝ «քերականագետին» և «քերականին», այսինքն՝ գրտնում են, որ առաջինը բարձր գիտնականության տեր անձ է, իսկ երկրորդը՝ սոսկ միջակ: Օրբիլիոսը այդ կարծիքը նույնիսկ հաստատում է օրինակով և ասում է. «Ծրբ նախնիների մոտ վաճառքի էին հանվում որևէ մեկի ստրուկները, ապա սովորաբար նրանցից այն, որ գիտությունը մի կերպ գիտեր, և ոչ թե կատարելապես, տախտակի վրա անվանվում էր լիտերատ և ոչ թե գրող»:

Հնում քերականներն ուսուցանում էին նաև ճարտասանություն. նրանցից շատերից պահպանվել են ձեռնարկների զույգ գիտությունների վերաբերյալ: Դրա համար էլ, ինչպես թվում է, և հետագայում, երբ գիտությունները տարրաբաժանվել էին, քերականները բայց և այնպես պահպանեցին հին վարժությունները մշակելու համար պերճախոսությունը և իրենք իսկ մուծեցին որոշ նոր վարժություններ՝ պրոբլեմներ, հարասություններ, կոչականներ, պատճառագիտություններ և նման բաներ. իհարկե, այդ արվում էր նրա համար, որպեսզի երեխաները հոետորների մոտ ուսանելու գնան ոչ ամբողջովին տգետ ու անկիրթ: Իսկ եթե հիմա դրանցից ինչ-որ բան բաց է թողնվում, ապա սոսկ որոշ աշա-

կերտների երեխայական ծուլութեան և ոչ ամենեին դժվարութեան պատճառով: Դեռևս իմ պատանեկութեան օրերից հիշում եմ ոմն Պրինցիպոսի, որը սովորութիւն ուներ որոշակի օրերի արտասանել, որոշակի օրերի էլ ուսուցանել, իսկ երբեմն էլ՝ առավոտյան ուսուցանել, իսկ կեսօրից հետո՝ արտասանել, մի կողմ հրելով սեղանը: Ես անգամ լսել եմ, որ մեր հայրերի ժամանակ որոշ քերականներ դպրոցից ֆորում էին անցնում և դառնում էին քաջ հայտնի փաստաբաններ:

Նշանավոր ուսուցիչները, որոնց մասին մենք կարող ենք որևէ բան հաղորդել, հետևյալներն էին:

(5) Սեվիոս Նիկանորոսը առաջինը հասավ փառքի ու հարգանքի իր ուսուցմամբ. նա կազմեց ձեռնարկներ, որոնց մեծ մասը, սակայն, ոչնչացել է, ինչպես նաև սատիրա, որում հետևյալ կերպ է մատնանշում այն, որ ինքը ազատարձակ է եղել և կրել է կրկնակի մտ / 5,10.

Սեվիոս Նիկանորոսը, Մարկոսի ազատարձակը, կմերժի.

Փոխարենը Սեվիոս Պոստոմոսը, նույնպիսի Մարկոս, կհամաձայնի:

Ոմանք հաղորդում են, որ ինչ-որ անպատվութեան պատճառով նա հեռացավ Մարդինիա և այնտեղ ավարտեց իր կյանքը:

(6) Ավրելիոս Օպիլոսը, ոմն էպիկուրիականի ազատարձակը, սկզբնապես ուսուցանում էր ճարտասանութիւն և, վերջապես, քերականութիւն, բայց հետո ցրեց դպրոցը և հետևեց դատապարտված Ռուտիլիոս Ռուֆոսին Ասիա, որտեղ նրա հետ միասին ապրում էր Զմյուռնիայում: Նա գրեց մի քանի տաբատեսակ գիտական աշխատութիւններ. նրանցից մի երկասիրութիւն ինը գրքով, ըստ իր ասածի, խելամտորեն բաժանել և վերնագրել էր մուսաների թվին և անունին համապատասխան, քանզի նրանց հովանավորութեան տակ են գտնվում գրողներն ու բանաստեղծները: Նրա մականունը, ինչպես նկատել եմ, շատ ցուցակներում և խորագրերում դրվում է մեկ ¹¹ տառով, բայց նա ինքը «Աղյուսակ» խորագրով գրքույկի ակրոստիքոսում այն գրում է երկու տառով:

(7) Մարկոս Անտոնիոս Գնիփոնը ծնվել էր Դալլիայում ազատ ընտանիքում, բայց լքվել էր. նրան մեծացնողը ընկալվածին ազատ էր արձակել և կրթութեան տվել. ոմանք տեղեկացնում են, որ դա եղել է Ալեքսանդրիայում, Դիոնիսիոս Սկիտոբրաքիոնեսի¹² մոտ, բայց ես դրան չեմ հավատում, քանզի այդ չի համաձայնեցվում ժամանակի հաշորդականութեանը: Ասում են, որ նա օժտված էր մեծ շնորհքով, բացառիկ հիշողութեամբ, ավելի վատ չգիտեր հունարեն լեզուն, քան լատիներենը, և բացի այդ, հոգով բարի ու մեղմ էր, երբեք չէր պայմանավորվում վճարի մասին, բայց ավելին էր ստանում աշակերտների առատաձեռնու-

Բյուանից: Սկզբնապես նա ուսուցանում էր աստվածային Հուլիոսի տանը, երբ վերջինս դեռ մանուկ էր, հետո՝ իր սեփական տանը: Ուսուցանում էր նաև ճարտասանութուն, ընդ որում պերճախոսության դասեր տալիս էր ամեն օր, իսկ արտասանում էր միայն շաբաթը մեկ անգամ¹³: Ասում են, որ շատ հայտնի մարդիկ հաճախ էին լինում նրա դպրոցում, նրանց թվում նաև Մարկոս Կիկերոնը, նույնիսկ երբ նա արդեն պրետոր էր: Նա շատ է գրել, թեև հիսուն տարուց ավելի չի ապրել: Ի միջի այլոց, Ատենոս Փիլոլոգոսը հաղորդում է, որ նա միայն երկու գիրք է թողել «լատինական խոսքի մասին», իսկ մնացյալ երկասիրությունները պատկանում են ոչ թե նրան, այլ նրա աշակերտներին. նրանցում տեղ-տեղ հանդիպում է նրա անունը, ինչպես օրինակ...¹⁴:

(8) Մարկոս Պոմպիլիոս Անգրոնիկոսը, ազգությամբ ստորի, էպիկուրիականության հետևորդ էր, և դրա համար էլ գտնում էին, որ նա անփուլթ քերական է և դպրոց ղեկավարելու անընդունակ: Իրա համար էլ, երբ նա տեսավ, որ Հռոմում նրան նեղում են ոչ միայն Անտոնիոս Գնիփոնը, այլև ուրիշ շատ ավելի վատ քերականներ, ապա նա տեղափոխվեց Կումք և այնտեղ հանգիստ ապրում էր և շատ ստեղծագործում. բայց նրա աղքատությունն ու չքավորությունը այնքան մեծ էր, որ նա ստիպված եղավ ոմն մեկին վաճառել իր գլխավոր երկասիրությունը՝ «Էննիոսի «Աննալների քննադատությունը»», 16 հազար սեստերցիումով. Օրբելիոսն ասում է, որ այդ ինքն է փրկագնել այդ գրքերը և հոգ տարել, որպեսզի նրանք հայտնի դառնան հեղինակի անունով:

(9) Բենեվենտումից Լուկիոս Օրբելիոս Պուպիլլոսը, սրբանալով, երբ թշնամիների խարդավանքները մեկ օրում կործանեցին նրա ծնողներին, սկզբնական շրջանում մանր պաշտոնյա էր մագիստրատներում, ապա, Մակեդոնիայում ծառայելով, արժանացավ կորնիկուլումի¹⁵, իսկ հետո նաև հեծյալական կոշման: Զինվորական ծառայությունն ավարտելուց հետո նա վերադարձավ այն զբաղմունքին, որին քիչ հակում չէր տածել դեռևս մանուկ ժամանակ. երկար ժամանակ ուսուցանում էր հայրենիքում, և միայն 50 տարեկանում, Կիկերոնի կոնսուլության ժամանակ, փոխադրվեց Հռոմ: Իր ուսուցանելով նա ավելի շուտ փառքի հասավ, քան օգուտի, գառելով նրանից, որ արդեն խոր ծեբության հասակում նա մի երկասիրության մեջ գրում է, որ ապրում է չքավորության մեջ ձեռնահարկում: Նա նաև մի գիրք հրատարակեց «Տառապանք»¹⁶ խորագրով, որտեղ գանգատվում է այն վիրավորանքներից, որոնք հասցնում են ուսուցիչներին ծնողների արհամարհանքն ու գողոզամտությունը: Նա խիստ բարձր տեղ էր, և ոչ միայն մրցակից-գիտնականների նկատմամբ, որոնց նա փնտվում էր ամեն մի առիթով, այլև աշակերտների վերա-

րերմամբ. այդ վկայում է նաև Հորացիոսը, նրան անվանելով «կովարար»¹⁷, և Դոմիցիոս Մարտոսը, երբ գրում է.

Նրանք, որոնց Օրբիլիոսը ծեծում էր և՛ քանոնով, և՛ մտրակով:

Նույնիսկ ականառվոր մարդկանց նա հանգիստ չէր թողնում, երբ նա, դեռևս գտնվելով անհայտության մեջ, ցուցմունք էր տալիս բազմամարդ դատարանում, և Վարրոն Մուրենան, հակառակ կողմի դատապաշտպանը, նրան հարցրեց, թե ինչով է նա զբաղվում և ինչ արհեստով ապրում, նա պատասխանեց. «Սապատավորներին արևի տակից ստվերոտ տեղ եմ փոխադրում»,— որովհետև Մուրենան սապատավոր էր¹⁸: Ապրեց նա համարյա հարյուր տարի, իսկ մահից առաջ կորցրեց հիշողությունը, ինչպես ցույց է տալիս Բիբակուլոսի ոտանավորը.

Իսկ ո՛ւր է Օրբիլիոսը, որ մոռացել է այբուբենը:

Բենեվենտումի կապիտուլիումում, ձախ կողմից, ցույց են տալիս մի մարմարիտնյա արձան, որը նրան պատկերում է նստած, հունական թիկնոցով, կողքին գրքերի երկու արկղիկներ: Նա թողեց որդի՝ Օրբիլիոսին, որը նույնպես քերականություն էր ուսուցանում:

(10) Լուկիոս Ատեոս Փիլոլոգոսը ազատարձակ էր, ծնվել էր Աթենքում: Հայտնի իրավագետ Ատեոս Կապիտոնը առում է, որ նա հոկտոբր էր քերականների մեջ և քերական հոնտորների մեջ: Նրա մասին է հիշատակում Ազինիոս Պուլլիոնը այն գրքում, որտեղ նա փնտվում է Սալլյուստիոսի երկասիրությունները այն բանի համար, որ նրանք փշաջված են դիտավորյալ հնացած բառերով. «դրանում նրան մեծապես աջակցել էր Ատեոս Պրետեքստատոսը՝ նշանավոր լատինական քերականը, հետագայում՝ արտասանողների գնահատողն ու դաստիարակը, որը ըրլոր այդ բաների համար իրեն Փիլոլոգոս էր անվանել»: Իսկ նա ինքը գրում էր Լելիոս Հերմային. «Ծս մեծ հաջողությունների հառա հունական գիտության մեջ և որոշ հաջողությունների լատինականում. Ծս չսել եմ Անտոնիոս Գնիփոնին և նրա հետնորդին¹⁹, հետո ուսուցանել եմ. եղել եմ շատ ազնվատոհմ երիտասարդների դաստիարակը, այդ թվում՝ Կլավդիոս եղբայրների, Ապպիոսի և Պուլքրի, որոնց ես նույնիսկ պրովինցիա եմ ուղեկցել»: Փիլոլոգոս անունը, ինչպես թվում է, նա ընդունել է այն բանի համար, որ էրաթոթենեսի նման, որն առաջինն էր ձեռք բերել այդ մականունը, նա զբաղվում էր բազմաթիվ և բազմազան գիտությաններով: Դա պարզ երևում է նրա երկասիրություններից. գրանցից շատ քիչ բան է պահպանվել, սակայն դրանց առատության մասին նա վկայում է այդ նույն Հերմային հղված մեկ ուրիշ նամակում. «Չմոռանաս մնաց-

յալներին հանձնել մեր «Թավուտը»²⁰, որտեղ մենք, ինչպես քեզ հայտնի է, ութ հարյուր գրքում հավաքել ենք տարատեսակ նյութեր»: Նա լավագույն հարաբերությունների մեջ էր Գայոս Սալլյուստիոսի և, նրա մահից հետո, Ազինիոս Պոլլիոնի հետ. երբ նրանք ձեռնամուխ եղան պատմության շարադրմանը, նա մեկի համար կազմեց հռոմեական պատմության իրադարձությունների համառոտ շարադրանք, որոնցից նա ընտրում էր, ինչ որ ուզում էր, իսկ մյուսի համար՝ ուղեցույց թե ինչպես ճիշտ գրել: Առավել ևս զարմանալի է Ազինիոսի կարծիքը, որ Ատեոսը Սալլյուստիոսի համար հավաքում էր հնաոճ բառեր և արտահայտություններ. չէ՞ որ Ազինիոսը գիտեր, որ հենց իրեն Ատեոսը խորհուրդ էր տալիս օգտվել սովորական, հասարակաց ընդունելի և բնական խոսքից, և հատկապես խուսափել Սալլյուստիոսի խրթինությունից և կերպարների համարձակությունից²¹:

(11) Պուբլիոս Վալերիոս Կատոնը, ըստ որոշ տեղեկությունների Գալլիայից ոմն Բուրսենի ազատարձակն էր. բայց նա ինքը «Վրդովմունք»²² խորագրով գրքույկում պնդում է, որ ծնվել է ազատ, մանուկ ժամանակ որբացել է և դրա համար էլ Սուլլայի օրոք եղած կամայականության ժամանակ զրկվել է հայրական ժառանգությունից: Նա ուսուցանել է շատերին և ազնվատոհմ անձանց և համարվել է հմտագույն դաստիարակ, հատկապես նրանց համար, ով պոեզիայի հակում ունեւր որը կարելի է տեսնել թեկուզև այսպիսի ոտանավորից՝

Սոսկ քերական Կատոնը, հռոմեացիների ծովահարսը,
Ե՛վ ընթերցում է, և՛ բանաստեղծներ ստեղծում:

Քերականական երկերից զատ նա գրել է նաև պոեմներ, որոնցից հատկապես հռչակված են «Լիդիան» և «Դիանան»: «Լիդիան» հիշատակում է Տիցիդան.

Ով հասկանում է, նրա համար «Լիդիան» թանկարժեք գործ է:

«Դիանայի» մասին Կիննան գրում է.

Եվ թող երկար դարեր ապրի Կատոնի «Դիկտինան»²³:

Ապրեց նա մինչև խորին ծերություն, բայց մեծագույն աղքատության, գրեթե շքավորության մեջ և պատսպարվում էր խղճուկ հյուղակում այն բանից հետո, երբ իր Տուսկուլանումի վիլլան զիջեց վարկատուներին, որի մասին Բիբակուլոսը գրում է.

Ով տեսնի մեր Կատոնի տնակը,
Մածկված ներկված հերձանով,
Պրիպաոսի հսկած մի գույգ մարգը,

Կզարմանա, թե այդ ինչ գիտութիւնով
Նա հասել է կարողութեան մեծագոյն
Կես ֆունտ ալյուրով, և կաղամբակոթով,
Եվ երկու ճութ խաղողով
Կերակրվել մինչև խորին ծերութիւն:

Եվ հետո՝

Բարեկամդ իմ Գալլոս, իսկ Կատոնի կալվածք
Ամբողջն աճուրդով ծախեց պարտատէրը:
Զարմանալի է, թե ինչպես նման դաստիարակը,
Նշանավոր քերականը և բանաստեղծը,
Որը գտնում էր լուծումն բոլոր հարցերի,
Զգտավ երաշխավոր իր իսկ համար,—
Ահա քեզ Զենոգոտեսի խելք, Կրատեսի ոգի:

(12) Կորնելիոս էպիկադոսը, դիկտատոր Լուկիոս Կորնելիոս Սուլլայի ազատարձակը և ավգուրների սրբադնագործութիւնների ժամանակ սպասավորողը, նաև նրա որդի Փավստոսի սիւէլին էր, և դրա համար էլ իրեն հռչակում էր նրանց երկուսի ազատարձակը: Սուլլայի երկի վերջին գիրքը իր գործերի մասին, որն անավարտ էր մնացել, լրացրեց էպիկադոսն ինքը:

(13) Ստաբերիոս էրոսը, ծննդյամբ ասորի²⁴, գնված էր աճուրդի ժամանակ և ազատարձակված շնորհիվ գիտական զբաղմունքների, այլոց թվում ուսուցանել էր Բրուտոսին և Կասսիոսին: Ոմանք հաղորդում են, որ նա այնքան ազնվաշնորհ էր, որ Սուլլայի ժամանակներում անհատույց և առանց որևէ վարձատրութեան ուսման էր ընդունում ուսանողներին:

(14) Կուրցիոս Նիկիոսը երկար ժամանակ գտնվում էր ծառայութեան մեջ Գնեսոս Պոմպեոսի և Գայոս Մեմմիոսի մոտ. բայց երբ նա Պոմպեոսի կնոջը հանձնեց Մեմմիոսի սիրային նամակը, և նա մատնեց Նիկիոսին, Պոմպեոսը զայրացավ նրա վրա և վճռեց տնից: Նա մոտ էր Կիկերոնին, որի Դուլաբելլային գրած նամակում²⁵ ահա թե ինչ ենք կարդում նրա մասին. «Հռոմում ոչ մի այնպիսի բան տեղի չի ունենում, որը դու, ինչպես ես հասկանում եմ, կցանկանայիր իմանալ, եթե միայն քեզ հետաքրքրում է, որ ես դատավոր դարձա մեր Նիկիոսի և Վիդիոսի միջև: Մեկը, ինչպես ենթադրում եմ, ներկայացնում է պարտամուրհակ երկու տողով, մյուսը, ինչպես Արիստարքոսը, նշում է կեղծ աւելերը²⁶, ինձ, ասես որպես հին քննադատի, մնում է դատել, իսկական են դրանք, թե՞ կեղծ»: Եվ Ատտիկոսին՝ «Դու գրում ես Նիկիոսի մասին. եթե ես ի վիճակի լինեի վայելել նրա կրթվածութիւնը, ես ավելի շատ նրան կուզեի տեսնել, քան որևէ այլ մեկի: Բայց մեկուսացում և անգործութիւն՝

ահա իմ ճակատագիրը: Բացի այդ, դու գիտես մեր Նիկիոսի թույլ առողջությունը, փափկասունությունը և սովորական ապրելաձևը: Իսկ ինչու ես հոգնեցնեմ նրան, եթե նա չի կարող ինձ ուրախացնել: Բայց և այնպես, նրա ցանկությունը հաճելի է ինձ»: Նիկիոսի գիրքը Լուցիլիոսի մասին արժանացել էր անգամ Սանտրաչի հավանությանը:

(15) Լենեոսը, Պոմպեոս Մեծի ազատարձակը և ուղեկիցը նրա համարյա բոլոր արշավանքներում, նրա և նրա որդիների մահից հետո ապրում էր ուսուցանելով. նրա դպրոցը Կարինքում²⁷ էր, Երկրի տաճարի մոտ, այն տեղում, որտեղ նախկինում Պոմպեոսների տունն էր եղել: Նա այնպես նվիրված էր իր պատրոնի հիշատակին, որ պատմիչ Սալլուստիոսին²⁸, որը գրել էր, թե տեսքով Պոմպեոսը համեստ էր, իսկ հոգով անամոթ, նա հայհոյեց մի դաժան սատիրայում, հայտարարելով, որ Սալլուստիոսը՝ որկրամուլ է, անառակ, սրիկա ու թափառաշրջիկ, հրեշկյանքում և ստեղծագործությունների մեջ, և այդ բոլորից զատ՝ Կատոնի և հների արտահայտությունների տգետ հափշտակիչ: Հաղորդում են, որ նրան ստրկության էին մատնել դեռևս մանուկ ժամանակ, բայց նա շղթաներից փախել էր հայրենիք, և հետո, ուսումնասիրելով ազնիվ գիտություններ, իր համար փրկագին էր առաջարկել, բայց շնորհների և զիտնականության համար անվարձահատույց ազատ էր արձակվել:

(16) Քվինտոս Ցեցիլիոս Էպիրոտեսը, բնիկ տուսկուլանումցի էր, հռոմեացի հեծյալ Ատտիկոսի ազատարձակը, որի հետ գրագրություն էր վարում Կիկերոնը, և նրա դստեր՝ Մարկոս Ագրիպպայի կնոջ, ուսուցիչը: Հեռացված լինելով վերջինիս հետ անպատշաճ հարաբերությունների կասկածանքով, նա տեղափոխվեց Կոռնելիոս Գալլոսի մոտ և ապրում էր նրա հետ մեծ մոտիկությամբ. Օգոստոսը դրանում տեսնում էր Գալլոսի ամենաժանր հանցանքներից մեկը: Գալլոսի դատապարտվելուց և մահից հետո նա դպրոց բացեց, բայց սոսկ քչերին էր ուսուցման վերցնում, այն էլ ոչ դեռահասների, այլ պատանիների²⁹,— բացի այն դեպքերից, երբ հոր դիրքը թույլ չէր տալիս մերժել: Ասում են, որ նա առաջինը սկսեց առանց նախապատրաստվելու վիճաբանել լատիներենով և առաջինը սկսեց աշակերտների հետ ընթերցել Վերգիլիոսին և ուրիշ նոր բանաստեղծների, որի մասին է վկայում նաև Դոմիցիոս Մարսոսի³⁰ ոտանավորը.

Դու, էպիրոտես, սեուցողդ ետրածին բանաստեղծների:

(17) Մարկոս Վերրիոս Փլակկոսը ազատարձակ էր, հատկապես հռչակվեց ուսուցանելու իր եղանակով: Աշակերտների ընդունակություն-

ները զարգացնելու համար, նա սովորութիւն ուներ նրանց միջև մըք-
ցութիւններ սարքել, ընտրելով շնորհներով հավասարների, ընդ որում
նրանց առաջարկում էր ոչ միայն շարագրանքի առարկա, այլև պարգև
հաղթողին. պարգևը լինում էր որևէ մէ հին մատչան՝ գեղեցիկ կամ
հազվագյուտ: Դրա համար էլ Օգոստոսը նրան զաստիարակ ընտրեց իր
թոռների համար, և նա ամբողջ դպրոցով փոխադրվեց Պալատինում,
բայց պայմանով, որ այլևս նոր աշակերտներ չընդունի. այնտեղ նա
ուսուցանում էր Կատուլոսների տան ատրիումում, որն այն ժամանակ
պալատի մասն էր կազմում, և տարեկան ստանում էր հարյուր հազար
սեստերցիում: Նա մահացավ զառամյալ տարիքում՝ Տիբերիոսի օրոք:
Նրա արձանը գտնվում էր Պրենեստեի ֆորումի վերին մասում, կիսա-
կլոր սյունասրահից ոչ հեռու, որտեղ նա մարմարիոնի տախտակի վրա
փորագրել էր իր կազմած օրացույցը՝ դիտելու համար:

(18) Ազատարձակ տարեկանացի Լուկիոս Կրասցիոսն ուներ Պա-
սիկլես մականունը, բայց շուտով վերանվանակոչեց իբեն Պանսա: Սկրզ-
բում նա մոտ էր բեմին և օգնում էր միմազիրներին, ապա ուսուցանում
էր դպրոցում³¹ և, վերջապես, հրատարակելով ծանոթագրութիւններ
«Զմյուռնիայի»³² մասին, այնքան հռչակվեց, որ այդ մասին այսպես էին
գրում:

*Զմյուռնիան միայն Կրասցիոսին վստահել ճակատագիրը համաձայնեց
Հեռու, անգետներ, հեռու՝ այդ միութիւնը ձեզ համար չէ:
Զմյուռնիան միայն Կրասցիոսին կհայտարարի ամուսին իրեն՝
Նրա գեղեցկութեան գաղտնիքը միայն վերջինիս է հայտնի:*

Սակայն, լինելով արդեն բազում անվանի անձանց զաստիարակ, այդ
թվում Հուլիոս Անտոնիոսի՝ եռապետի որդու, և մրցակցելով արդեն բուն
իսկ Վերրիոս Փլակկոսի հետ, նա հանկարծ ցրեց դպրոցը և հարեց փի-
լիսոփա Քվինտոս Սեքստիոսի աշակերտներին:

(19) Սկրիբոնիոս Ափրոզիսիոսը, Օրբիլիոսի ստրուկը և աշակերտը,
հետագայում փրկագնվեց և ազատ արձակվեց Սկրիբոնիայի՝ Լիբոնի
դստեր, Օգոստոսի ամուսնաթող կնոջ կողմից. նա ուսուցանում էր Վեր-
րիոսի հետ միաժամանակ և նույնիսկ առարկութիւն է գրել նրա «Ուզ-
ղագրութեան մասին» գրքերի վերաբերյալ, առիթը բաց չթողնելով դիպչե-
լու նրա բարձր ու գիտական զբաղմունքներին:

(20) Գայոս Հուլիոս Հիգինոսը, Օգոստոսի ազատարձակը, ծագումով
իսպանացի (թեև ոմանք համարում են, որ նա ալեքսանդրիացի էր, և որ
նրան ծանուկ ժամանակ Կեսարն էր Հռոմ բերել Ալեքսանդրիայի գրա-

վումից հետո), հույն քերական Կոռնելիոս Ալեքսանդրոսի ջանասեր ունկընդիրը և ընդօրինակողն էր, որին (Ալեքսանդրոսին) շատերը անվանում են Պոլիհիստոր՝ հնությունների ասպարեզում նրա իրազեկության համար, իսկ ոմանք էլ՝ Պատմություն: Նա վարում էր Պալատինումի մատենադարանը³³, բայց այդ չէր խանգարում նրան շատ աշակերտներ ունենալ: Նա շատ մոտ էր բանաստեղծ Օվիդիոսի և պատմաբան Կլոդիոս Լիցինոսի, կոնսուլարիսի հետ. վերջինս հաղորդում է, որ Հիգինոսը մեռավ ծայր աղքատության մեջ, և որ ինքը մինչև վերջին օրերը օգնում էր նրան իր միջոցներից: Նրա ազատարձակն էր Հուլիոս Մոդեստոսը, որը ընթանում էր սլատրոնի հետքերով գիտնականության մեջ և սլարապմունքներում:

(21) Սալուեցիոնացի Գաուս Մելիստոսը ազատածին էր, բայց նրա ծնողները, խոռվելով միմյանցից, լքել էին նրան: Դաստիարակի ջանքերով ու հոգատարությամբ նա խոր գիտելիքներ ձեռք բերեց և ընծայվեց Մեկենասին որպես քերական: Երբ նա տեսավ, որ Մեկենասը բարեհաճ է իր նկատմամբ և բարեկամաբար է վերաբերվում, ապա, թեև մայրը ընդունեց նրան, նա մնաց ստրկության մեջ, գերադասելով իր ներկա դրությունն այն բանից, ինչ որ հասնում էր նրան ըստ ծագման: Դրա համար նա շուտով ազատ արձակվեց և նույնիսկ Օգոստոսի վստահությունը շահեց: Օգոստոսի կարգադրությամբ նա հանձն առավ կարգի բերել Օկտավիայի սյունասրահի³⁴ ճատենադարանը: Վաթսունամյա հասակում, ըստ նրա սեփական վկայության, նա վճռեց հորինել «Զվարճանքների» գրքույկները, որոնք այժմ «Կատակներ» են կոչվում, և կազմեց հարյուր հիսուն գրքույկ, իսկ հետագայում դրանց ավելացրեց նաև նորերը, տարբեր բովանդակությամբ: Նա ստեղծեց նաև տոգատանների նոր տեսակ, անվանելով դրանք տրաբեսատաներ³⁵:

(22) Մարկոս Պոմպոնիոս Մարցելլոսը, լատիներեն լեզվի ամենատաղտկալի պահապանը, մեկ պաշտպանական ճառում (քանզի նա երբեմն վարում էր նաև դատական գործեր) այնչափ երկար քննարկեց հակառակորդի թույլ տված լեզվական վրիպումը, որ Կասսիոս Սևերոսը, դիմելով դատավորներին, խնդրեց գործը հետաձգել, որպեսզի նրա պաշտպանյալը կարողանա իր համատեմեկ ուրիշ քերականի վարձել, քանի որ, ըստ երևույթին, հետագա մտքերի փոխանակության առարկան ոչ թե արդարությունն է լինելու, այլ լեզվական սխալը: Նույն ինքն նա ասաց, փնտվելով Տիբերիոսի ճառի մի արտահայտությունը, այն դեպքում, երբ Ատենոս Կասիտոնը պնդում էր, որ այն ճշմարիտ լատիներեն է, իսկ եթե լատիներեն էլ չէ, ապա այդպիսին կդառնա շնորհիվ կայսեր. «Ստում է Կասիտոնը. դու կարող ես, Կեսար, քաղաքացիության իրավունք տալ

մարդկանց, բայց ոչ խոսքին»։ Այն, որ նա երբեմնի բռնցքամարտիկ էր հղել, մատնանշում է Ազիհիոս Գալլոսը նրա վրա գրած էպիգրամում.

«Գլուխը ձախ»³⁶, — սովորեցնում էր նա, իսկ այժմ լեզու է սովորեցնում.
Որքա՞ն լավ է զգում լեզուն իր՞ն՝ կովից անատամ դարձած երախում:

(23) Վիցենցիումցի Քվինտոս Հոնամիոս Պալեմոնը մի կնոջ տանը մեծացած ստրուկ էր. ասում են, որ նա նախապես ջուլհակ էր, իսկ հետո գիտելիքներ էր ձեռք բերել, դպրոց ուղեկցելով տիրուհու որդուն։ Հետագայում, ազատ արձակվելով, նա ուսուցանում էր Հռոմում և համարվում էր առաջինը քերականների մեջ, թեև արատավորված էր բոլոր արատներով և շնայած որ Տիբերիոսը, իսկ հետո Կլավդիոսը ի լուր ամենքի նախազգուշացնում էին, որ նրան ամենանվազ շափով, քան որևէ այլ մեկին, կարելի է վստահել տղաների ու սլատանիների դաստիարակությանը։ Բայց նա հրապուրում էր մարդկանց ինչպես սուր հիշողությամբ, այնպես էլ դյուրին ճառախոսությամբ. նա նույնիսկ բանաստեղծություններ էր հորինում առանց նախապատրաստվելու և դրանք գրում էր զանազան անսովոր շափերով։ Նա այնքան գոռոզամիտ էր, որ Մարկոս Վարրոնին խոզ էր անվանում. հուշակում էր, որ գիտությունները իր հետ են ծնվել և իր հետ էլ կմեռնեն. որ իր անունը հիշվում է «Բուկոլիկներում» ոչ պատահականորեն, քանզի Վերգիլիոսը կանխազուշակել էր, որ ոմն Պալեմոն³⁷ կլինի բոլոր բանաստեղծների և պոեմների դատավորը. պարծենում էր նույնիսկ այն իրողությամբ, որ մեկ անգամ ավազակները նրան ձեռք շտվեցին նրա փառքի հանդեպ տաժած հարգանքից։ Նա այնքան շքեղ կյանք էր վարում, որ օրը մի քանի անգամ լողանք էր ընդունում, նրան եկամուտները նույնիսկ չէին բավարարում, թեև նա տարեկան շորս հարյուր հազար ստանում էր դպրոցից և գրեթե նույնքան էլ անձնական ունեցվածքից. վերջինիս մասին նա շատ էր հոգ տանում, պահում էր մի քանի դերձականոցներ և իր դաշտերն այնպես էր մշակում, որ նրա ձեռքով տնկված վազերը, ինչպես հայտնի է, 360-ական ճուֆ էին տալիս³⁸։ Նա բացառիկ, ընդհուպ մինչև անպարկեշտություն³⁹, տուփանք էր տաժում կանանց նկատմամբ. ասում են նաև, որ մի մարդ, որին նա հետապնդում էր համբույրներով, երբ սա ամբոխի մեջ շէր կարողանում փախչել նրանից, այսպիսի քինոտ պատասխան էր տվել. «Միթե՞ դու ուզում ես, ուսուցիչ, ծծել ամեն մեկին, հենց որ տեսնում ես, որ նա շտապում է»։

(24) Բերիտոսցի Մարկոս Վալերիոս Պրոբոսը երկար ժամանակ ձրգտում էր ցենտուրիոնի աստիճանի և, ի վերջո, ձանձրանալով դրանից, զբաղվեց գիտություններով։ Պրովինցիայում մի քերականագետի մոտ նա

ժամանակին մի քանի հին գիրք էր կարդացել— այնտեղ մինչև հիմա էլ կենդանի է հների հիշատակը, դեռևս ոչ բոլորովին է անհայտացած, ինչպես Հոռմում: Այժմ նա ջանասիրությամբ վերադարձավ նրանց, իսկ հետո ցանկացավ ծանոթանալ նաև ուրիշների, և շնայած բոլորը դրան արհամարհանքով էին վերաբերվում և ընթերցանությունը ավելի շուտ խայտառակություն էին համարում, քան փառք և օգուտ, նա հաստատ մնաց իր որոշմանը: Հավաքելով բազում ձեռագրեր, նա դրանք մանրակրկիտ ուղղեց, նշանագծեց և կցեց ծանոթագրություններ. նա զբաղվում էր միայն քերականության այդ և ոչ մեկ ուրիշ բնագավառով: Նա ուներ մի քանի ավելի շուտ հետևորդներ, քան աշակերտներ⁴⁰. նա երբեք չէր ուսուցանում այնպես, որպեսզի ուսուցչի համբավ ձեռք բերի, այլ դրա փոխարեն սովորաբար զրուցում էր նրանցից մեկ-երկուսի, ամենաշատը երեք-չորսի հետ, հանգստանալով նրանց հետ ետկեսօրյա ժամերին և երկար ու ձանձրալի գրույցների արանքում որևէ բան կարդալով, այն էլ հազվադեպ: Նրա հրապարակած աշխատությունները մեծաթիվ չեն, փոքրածավալ են և նվիրված են մասնավոր մանր հարցերի: Ի միջի այլոց, նա թողել է հների ճառախոսության վերաբերյալ դիտարկումների մի գերազանց ժողովածու:

Ճարտասանների մասին

(25) Ճարտասանությունը մեզանում սկսեց օգտագործվել ավելի ուշ, ինչպես և քերականությունը, և նույնիսկ ավելի մեծ դժվարությամբ, քանի որ հայտնի է, որ կար ժամանակ, երբ դրանով զբաղվելը ուղղակի արգելված էր: Որպեսզի ոչ ոք չկասկածի դրան, կբերեմ սենատի վաղեմի որոշումը և ապա ցենզորական էդիկտը⁴¹. «Ի կոնսուլության Գայոս Փաննիոս Ստրաբոնի և Մարկոս Վալերիոս Մեսսալայի պրետոր Մարկոս Պոմպոնիոսը առաջարկ մտցրեց սենատ. քննարկելով փիլիսոփաների և ճարտասանների վերաբերյալ հարցը, որոշեցին, որ պրետոր Մարկոս Պոմպոնիոսը հոգ տանի և ապահովի, ինչպես որ այդ պահանջում են պետության շահերը և նրա երդումը, որպեսզի նրանք այլևս չլինեն Հոռմում»: Այդ նույնի վերաբերյալ որոշ ժամանակ անց ցենզորներ Գնեոս Դոմիցիոս Ահենոբարբոսը և Լուկիոս Լիցինիոս Կրասոսը այսպիսի էդիկտ հրապարակեցին. «Մեզ լուր է հասել այն մասին, որ կան մարդիկ, ովքեր նոր տեսակի դիտություն են հիմնարկել, նրանց դպրոցներում հավաքվում են սպատանիներ, նրանք ընդունել են լատինական ճարտա-

սաններ անունը, և այնպես էլ ջահելները օրերով պարապ-սարապ են մնում: Մեր նախնիները սահմանել են, թե ինչ պետք է ուսուցանեն երեխաներին և ինչպիսի դպրոցներ պետք է հաճախեն նրանք, իսկ նորամուծութուննեցը, որոնք արվում են հակառակ նախնիների սովորույթի և վարք ու բարքի, թվում են ոչ ճիշտ և անցանկալի: Ռուսի և անհրաժեշտ են համարում արտահայտել մեր կարծիքը նրանց, ովքեր դպրոցներ են սլահում, և նրանց, ովքեր սովորել են հաճախել դրանք, որ այդ մեզ հաճո չէ»:

Աստիճանաբար դուրս եկավ, որ ճարտասանութունը օգտակար ու ազնիվ գիտութուն է, և շատերը սկսեցին դրանում հենարան ու փառք ոգոնել: Կիկերոնը հունարեն էր ճառախոսում ընդհուպ մինչև իր պրետորութունը⁴², իսկ լատիներեն՝ նույնիսկ ավելի տարեց հասակում, կոնսուլներ Հիրցիոսի և Պանսայի հետ միասին, որոնց նա անվանում էր իր աշակերտները և հասուն երեխաները: Գնեսու Պոմպեոսը, ինչպես հայտնում են որոշ պատմագիրներ, բուն իսկ քաղաքացիական պատերազմից առաջ կրկնում էր արտասանելաձևեր, որպեսզի նրա համար դյուրին լիներ հանդես գալ Գայոս Կուրիոնի՝ հանդուգն այն երիտասարդի դեմ, որո պաշտպանում էր Կեսարի գործը. և Մարկոս Անտոնիոսը, և՛ Օգոստոսը⁴³ դրանից չէին հրաժարվում անգամ Մուտինյան պատերազմի ժամանակ. Ներոն կայսրը ճարտասանում էր ժողովրդի առջև իր կառավարման առաջին իսկ տարում և դեռ էլի երկու անգամ մինչև այդ: Շատ հռետորներ նույնիսկ հրատարակում էին իրենց ճառախոսութունները: Այդ ամենը մարդկանց մեջ քիչ ջանասիրութուն չէր հրահրում, թ հայտ եկան բազում գիտնականներ ու ուսուցիչներ, և նրանք այնպիսի հաջողություն ունեին, որ ոմանք ստորին կացութունից հասնում էին սենատական դասի և բարձրագույն պաշտոնների:

Քայց բոլորի ուսուցանելու եղանակը միատեսակ չէր և ոչ էլ յուրաքանչյուրինը անփոփոխ, որովհետև ամեն մեկը աշակերտներին վարժեցնում էր տարբեր ձևերով: Մովորութուն կար յուրաքանչյուր անգամ տարբեր ձևերով զարդարել արտահայտութունները կերպարներով, օրինակներով⁴⁴ և այլարանութուններով, իսկ պատմութունը վարել մերթ համառոտ ու խիտ, մերթ բազմաբառ ու առատ. երբեմն վերարտադրում էին հունական երկերը և գովաբանում կամ փնտվում մեծ այբերին. նույնիսկ մատնանշում էին հասարակական կյանքի որոշ կարգեր որպես օգտակար և անհրաժեշտ կամ անպիտան և կործանարար: Հաճախ հիմնավորում էին կամ հերքում էին ասվածների հավաստիութունը՝ հույները նմանօրինակ վարժութուններն անվանում են «անասկեներ» և

«կատասկեններ»։ վերջապես, այդ ամենը աստիճանաբար օգտագործումից դուրս եկավ, դուրս մղվելով կոնտրովերսիաներից⁴⁵։

Հնամենի կոնտրովերսիաների թեմաները վերցվում էին կամ պատմությունից, ինչպես երբեմն արվում է մինչև հիմա, կամ էլ մոտիկ անցյալի իրական դեպքերից, սովորաբար, առաջարկելով դրանք, պահպանում էին նույնիսկ տեղանունները։ Համենայն դեպս, այդպիսին են դրանցից նրանք, որոնք հավաքվել և հրատարակվել են. դրանցից ավելորդ չի լինի մեկ-երկու օրինակ բերել բառացի։

«Մեկ անգամ ամռանը մի քանի երիտասարդներ Հոռմից եկան Օստիա, գնացին ծովափ, հանդիպեցին ձկնորսների, որոնք ցանց էին գցել և պայմանավորվեցին, որ այսքանով կգնեն ամբողջ որսը։ Վճարեցին դրամը, երկար սպասեցին, մինչև որ ցանցը դուրս կքաշեն։ Երբ դուրս քաշեցին, պարզվեց, որ ցանցում ձուկ չէ, այլ ոսկով լի կարված զամբյուղ։ Գնողները պնդում են, որ որսը իրենց է պատկանում, իսկ ձկնորսները, որ իրենց է պատկանում»։

«Մի ստրկավաճառ, Բրունդիդիումում նավից մի խումբ ստրուկներ քշելով, մաքսահավաքներից կրած երկյուղից մի գեղեցիկ և թանկ արժեք ունեցող տղայի բուլլա և պրետեքստա⁴⁶ հագցրեց։ Խաբեությունը հեշտությամբ հաջողվեց թաքցնել։ Եկան Հոռմ, գործը բացվեց, տղան ազատություն է պահանջում, քանի որ որպես թե նա ստացել է այն տիրոջ կամքով»։

Հնում այդպիսի վարժությունները հունաոհն կոչվում էին «սինթեսներ», հետո սկսեցին կոչվել կոնտրովերսիաներ։ Դրանց թեմաները կամ հնարվում էին, կամ փոխ էին առնվում դատական պրակտիկայից։

Նշանավոր ուսուցիչները, որոնց հիշատակը պահպանվել է, եղել են, ինչպես թվում է, միայն հետևյալները։

(26) Լուկիոս Պլոտիոս Գալլոս։ Նրա մասին այսպես է հաղորդում Կիկերոնը Մարկոս Տիտիննիոսին⁴⁷ հղված նամակում. «Հիշում եմ, որ երբ մենք երևիա էինք, ոմն Պլոտիոս առաջին անգամ սկսեց ուսուցանել լատիներենով։ Աշակերտները բոլոր կողմերից գալիս հավաքվում էին նրա մոտ, որովհետև բոլորը, ովքեր աչքի էին ընենում ջանասիրությամբ, պարապում էին նրա մոտ, և ես ափսոսում էի, որ այդ ինձ համար անհնարին է։ Ի միջի այլոց, ինձ միիթարում էր ականավոր գիտնականների կարծիքն այն մասին որ հունական վարժությունները է՛լ ավելի լավ կարող են զարգացնել շնորհները»։ Նրան է մատնանշում նաև, քանզի նա շատ երկար է ապրել, Մարկոս Ցելիոսը այն ճառում, որտեղ նա պաշտպանվում է բռնաբարության մեղադրանքից. նա հայտարարում է, որ Պլոտիոսն էր կազմել Ատրատինոսի՝ Ցելիոսի մե-

դադրողի ճառը, բայց չի հիշատակում նրա անունը, և անվանում է նրան գարե ճարտասան և ծանակում է նրա ճոռոմաբանությունը, դատարկամտությունը և ողորմելիությունը:

(27) Լուկիոս Վոլտացիլիոս Պիլոատոսը, ինչպես պատմում են, ստրուկ-դոնապան էր և նույնիսկ, ըստ հնամենի սովորության, շղթայված էր. ապա, ազատվելով շնորհների ու գիտությունների նկատմամբ տաժած սիրո համար, նա օգնում էր իր պատրոնին դատական մեղադրանքներ կազմելու: Այնուհետև, զբաղվելով ճարտասանությամբ, նա ուսուցանել էր Գնեսոս Պոմպեոս Մեծին, և ըագում գրքերում շարադրել նրա հոր և նրա սեփական գործերը: Կոռնելիոս Նեպոտի կարծիքով, բոլոր ազատարձակներից նա առաջինը ձեռք զարկեց պատմություն շարադրելուն, իսկ մինչ այդ դրանով սովորաբար զբաղվում էին միայն բարձրաստիճան անձինք:

(28) Մարկոս էպիդիոսը, որ զրպարտչի համրավ ուներ, բացել էր ճարտասանության դպրոց և այլոց թվում ուսուցանել Մարկոս Անտոնիոսին և Օգոստոսին: Մեկ անգամ, երբ վերջիններս կշտամբել էին Գայոս Կաննուցիոսին նրա համար, որ պետական գործերում նա կոնսուլյարիս Իսավրիկոսի նախանձախնդիր կուսակիցն էր, Կաննուցիոսը պատասխանել էր. «Գերադասում եմ լինել Իսավրիկոսի, քան թե զրպարտիչ էպիդիոսի աշակերտը»: Այդ էպիդիոսը պարծենում էր, որ ծագում է Գայոս էպիդիոս Նուցերինոսից⁴⁸, որը, ըստ հին ավանդության, նետվել էր Յարնոս գետը և անհայտացել, իսկ հետո հանկարծ հայտնվել էր ոսկե եղջյուրներով և դասվել աստվածների շարքը:

(29) Միցիլիացի Սեքստոս Կլոդիոսը, ինչպես լատիններենի, այնպես էլ հունարենի պերճախոսության ուսուցիչը, կիսակույր և սուր լեզվի տեր մի անձնավորության, պնդում էր, որ աչքերը փշացրել է⁴⁹ եռապետ Մարկոս Անտոնիոսի հետ ունեցած բարեկամության հետևանքով. նա ինքն ասում էր, որ Ֆուլվիան, Անտոնիոսի կինը, որի մի այտը ուռած էր, գայթակղում է իրեն փորձելու իր ոճի (ստիլի)⁵⁰ սրությունը: Բայց Անտոնիոսը դրանից նրան պակաս չէր սիրում, եթե ոչ ավելի: Երբ նա շուտով կոնսուլ դարձավ, Կլոդիոսը նրանից հարուստ ընծա ստացավ, դատելով նրանից, այն պարագայից, թե ինչ է ասում ընդդեմ նրա Կիկերոնը իր Փիլիպպիկներում⁵¹. «Կատակի համար դու կոչում ես ուսուցչին, որին դու և քո բաժակակիցները ճարտասան են համարում և որին դու թույլ ես տվել քո դեմ խոսելու ցանկացածը— անշուշտ, քինոտ մի մարդու, թեև այնքան էլ դժվար չէ ճառախոսել քո և քոյայինների դեմ,— և ինչպիսի՞ պարզև է տրված այդ ճարտասանին: Լսե՛ք, լսե՛ք հայր սենատորներ, իմացե՛ք պետության խոցերի մասին: Երկու հազար յուզեր

լիտնալինումական դաշտից⁵² դու նշանակել ես ճարտասան Սեքստոս Կլոդիոսին, այն էլ տուրքերից ազատ, այնպես որ նույնիսկ այդպիսի գնով դու ողջախոհություն չես սովորել»:

(30) Նովարացի Գայոս Ալբուցիոս Սիլուսը⁵³, էդիլ լինելով հայրենի քաղաքում, մեկ անգամ դատ էր վարում, բայց նրանք, ում դեմ դատավճիռ արձակվեց, աքացիներով վճռեցին նրան դատավորական տեղից: Վրդովված դրանից, նա իսկույն դարպասից դուրս եկավ և այնուհետև մեկնեց Հռոմ: Այնտեղ նա ընդունվեց հոետոր Պլանկոսի խմբակը, որը սովորություն ուներ իր ճառախոսությունից առաջ խոսքը տրամադրել ուրիշ հոետորի. այդ դերը վերցնելով իր վրա, Ալբուցիոսը այնպես այն կատարեց, որ Պլանկոսը ստիպված եղավ լռել, չհամարձակվելով մրցակցել նրա հետ: Հռչակվելով դրանով, նա բացեց սեփական դպրոց և, սովորաբար, հայտարարելով կոնտրովերսիայի թեման, սկսում էր այն նստած, իսկ հետո աստիճանաբար տաքանում էր և վերջացնում էր կանգնած. ճառախոսում էր նա տարբեր եղանակներով՝ մերթ շքեղ ու փայլուն կերպով, մերթ խտացված, ստորին և գրեթե փողոցային խոսքերով, որպեսզի տառակեր չերևա: Նա դատական գործեր էր վարում, բայց խիստ հազվադեպ, ելույթ ունենալով միայն կարևորագույն դատավորություններում և միայն եզրափակիչ ճառերով: Հետո նա թողեց ֆորումը, մասամբ ամոթից, մասամբ էլ երկյուղից: Բանն այն է, որ մեկ անգամ ցենսումվիրների առջև, հանդիմանելով հակառակորդին ծնողների հանդեպ անազնվության համար, նա պատկերավոր կերպով բացականչեց, ասես նրան հնարավորություն առաջարկելով երդվելու⁵⁴. «Երդվիր հորդ և մորդ աճյունով, որոնք անթաղ են մնացել» — և այլն այդ ոգով: Հակառակորդը ընդունեց առաջարկությունը, դատավորները շառարկեցին, և Ալբուցիոսը գործը տանուլ տվեց, որի համար էլ դաժան հարձակումների ենթարկվեց: Մեկ ուրիշ անգամ Մեդիոլանումում, պրոկոնսուլ Լուկիոս Պիլոնի առջև, պաշտպանելով սպանության մեջ մեղադրվողին այնպիսի հաջողությամբ, որ լիկտորներն ստիպված էին զսպել ներկաների խանդավառությունը, նա այն աստիճանի տաքացավ, որ սկսեց ողբալ Իտալիայի բախտը, որն ասես նորից պրովինցիայի էր վերածվել, և ոգեկոչել Մարկոս Բրուտոսին, որի արձանը հենց այդտեղ էլ դրված էր, անվանելով նրան «օրենքների ու ազատության հիմնաքար ու պահպանիչ», որի համար քիչ էր մնում վարձահատույց լինել: Արդեն ծերացած, տառապելով խոցից, նա վերադարձավ Նովարիա. հավաքելով ժողովրդին և երկարաշունչ ու անհեթեթ ճառով բացատրելով, թե ինչու է ինքը որոշել մեռնել, նա սովամահ արեց իրեն:

ՔԱՆԱՍՏԵՂՄԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐԲԻՑ

ՏԵՐԵՆՑԻՈՍ¹

(1) Պուրլիոս Տերենտիոս Ափրոսը, բնիկ կարթագենացի, Հռոմում ստրուկ էր սենատոր Տերենտիոս Լուկանոսի մոտ. օժտվածության և գեղեցկության համար նա նրա մոտ կրթություն ստացավ իբրև ազատ մարդ, իսկ շուտով բուրբուրվին ազատ արձակվեց: Ոմանք կարծում են, որ նա գերի է եղել, բայց Ֆենեստելլան նշում է, որ այդ անհնարին է, քանզի նա և՛ ծնվել, և՛ մահացել է Երկրորդ պունիկական պատերազմի վերջի և Երրորդի² սկզբի միջոցին. նա չէր կարող նաև հափշտակված լինել նումիդացիներից կամ գետուլներից և ընկնել հռոմեացի զորավարի ձեռքը, որովհետև իտալիկների ու աֆրիկացիների միջև առևտրական հարաբերությունները սկսվեցին միայն Կարթագենի ավերումից հետո:

Նա բարեկամություն էր անում շատ ազնվատոհմ մարդկանց հետ, և հատկապես Սկիպիոն Աֆրիկացու և Գայոս Լելիոսի հետ: Կարծում են, որ նա նրանց հրապուրել էր գեղեցկությամբ. Ֆենեստելլան, ի միջի այլոց, դա էլ է վիճարկում, պնդելով, որ Տերենտիոսը նրանցից երկուսից էլ տարեց էր, թեև Նեպոտը նրանց բուրբուն հասակակիցներ էր համարում, և Պորցիոսը կասկածում էր նրանց սիրային կապի մեջ, այսպես ասելով այդ մասին.

Նա, որ ձգտում էր անառակ ազնվատոհմիկների կեղծուպատիր գովասանքին,
Նա, որ ազա՛հ ականջով քմպում էր կարծիքները Սկիպիոնի,
Նա, որ ճաշում էր Փիլոսի և գեղեցկատես Լելիոսի մոտ,
Նա, որի երիտասարդությունը վայելում էին Ալբանոսի վիլլայում, —
Երանության գագաթից կրկին ընկնելով ազքատության հորձանուտը,
Սըբից հեռու թաքնվեց հեռավոր Հունաստանում
Եվ արկադիա՛սիան Ատիսիալեսում մեռավ շարասելով
Ակիպիոնի, Լելիոսի կամ Տուրբոսի օգնությանը,
Մինչդեռ այդ երեքը ազատ ու անկաշիանդ կյանք էին վարում,
Նույնիոկ տնակ չվաստակեց նա նրանցից, ուր ստրուկը
Կարողանար բերել իր տիրոջ վախճանի լուրը³:

(2) Նա գրել է վեց կատակերգություններ: Երբ նա էդիլներին առաջարկեց դրանցից առաջինը՝ «Աղջիկը Անդրոսից»⁴, նրան կարգադրեցին կարդալ այն Ցեցիլիոսին: Ասում են, որ նա հայտնվեց նրա մոտ ճաշի ժամանակ, աղքատ հագնված, և, նստելով աթոռակի վրա ճաշի օթոցի մոտ, նրան կարդաց պիեսի սկիզբը. բայց առաջին իսկ տողերից հետո Ցեցիլիոսը հրավիրեց նրան ընկողմանել և ճաշել իր հետ միասին, իսկ հետո մնացյալ բոլորը լսեց մեծ խանդավառությամբ: Ինչպես այդ, այնպես էլ հետագա հինգ կատակերգությունները դուր եկան նաև հասարակությանը, թեև Վոլկացիոսը, թվարկելով դրանք, գրում է.

«Սկեսուրը»⁵, վեցերորդ պիեսը՝ բացառություն է:

«Ներքինին» մեկ օրում նույնիսկ երկու անգամ ներկայացվեց և այնպիսի պարզևատրություն ստացավ, որպիսին երբեք չի ստացել ոչ մեկի կատակերգությունը՝ 8000 սեստերցիում, այնպես որ այդ մասին հաղորդվում է նաև ենթավերնագրում⁶: Իսկ «Եղբայրների» սկիզբը Վարոնը գերադասում է անգամ Մենանդրեսի սկզբից:

(3) Հայտնի է այն կարծիքը, որ իբր Տերենտիոսին գրել օգնել են Լելիոսը և Սկիպիոնը: Տերենտիոսն ինքն էլ աջակցում էր նման լուրերին, գրեթե չփորձելով այն ժխտել, օրինակ, «Եղբայրների» նախերգում⁷ նա գրում է.

... Իսկ ինչ որ պնդում են

Նախանձողները, որ ազնվատոհմիկ մարդիկ

Օգնականներն են հեղինակի

Եվ բաժանում են գրողի աշխատանքը նրա,—

Այդ արանց թվում է ամենազոր հանդիմանանք,

Իսկ հեղինակին՝ մեծագույն մի գովասանք՝

Այդ մարդկանց համար, ուրեմն, հրապուրիչ է նա,

Մարդիկ, որոնք ձեզ համար էլ են գրավիչ,

Եվ քաղաքի համար ամբողջ,— չէ՞ որ հենց օգնությանը նրանց,

Պատերազմում լինի թե խաղաղության օրերին կամ որևէ կարևոր գործում,

Հսարտությունը մոռացած՝ ամենքը դիմել են իրենց հերթին:

Ըստ երևույթին, նա ինքը պաշտպանվում էր այդքան անվճռականորեն միայն նրա համար, որ գիտեր, որ նման լուրը հաճելի է Լելիոսին և Սկիպիոնին, սակայն այն գնալով ավելի ու ավելի լայն տարածում էր գտնում և հասավ մինչև ամենաուշ ժամանակները: Ի պաշտպանություն իրեն արտասանած ճառում Գայոս Մեմմիոսը ասում է. «Պուրլիոս Աֆրիկացին, օգտվելով Տերենտիոսի դիմակից, նրա անունով պիեսներ էր բեմադրում, որոնք տանը գրում էր զվարճության համար»: Նեպոտը հաղորդում է, վկայակոչելով հավաստի մի աղբյուր, պատմություն այն

մասին, թե ինչպես մեկ անգամ Պուտեոլքի կալվածում մարտյան կալննդներին⁸ Լելիոսի կինը խնդրում է ամուսնուն ճաշից շուշանալ, բայց նա կարգադրում է շխանգարել իրեն. իսկ հետո, ճաշասրահ մտնելով սովորականից ուշ, հայտարարում է, որ հազվադեպ է պատահել, որ ինքը այդպես լավ գրի. նրան խնդրում են ընթերցել գրածը, և նա արտասանում է ոտանավոր «Ինքնախոշտանգողից»⁹:

Սիրոսը, խոստանալով ինձ տասը մինա, բավական հանդուգն հրապուրեց.

Ինձ այստեղ...

(4) Մանտրան ենթադրում է, որ եթե Տերենտիոսը ստեղծագործելիս օգնականների կարիք էլ ունենար, ապա կղիմեր ոչ թե Սկիպիոնին և Լելիոսին, որոնք դեռևս պատանիներ էին, այլ ավելի շուտ Գայոս Սուլպիցիոս Գալլոսին, գիտնական մի մարդու, որի կոնսուլության ժամանակ նա առաջին անգամ հանդես եկավ կատակերգությունում մեզայեսիական հանդիսախաղերում¹⁰, կամ Քվինտոս Ֆաբիոս Լաբեոնին կամ Մարկոս Պոպլիոսին, որոնք երկուսն էլ կոնսուլյարիսներ և բանաստեղծեր էին. դրա համար էլ նա մատնանշում է, որ նրան, ըստ լուրերի, օգնել են ոչ թե պատանիներ, այլ հասուն մարդիկ, որոնց օգնությունը ժողովուրդը զգացել էր «պատերազմում լինի թե խաղաղության օրերին, կամ որևէ կարևոր գործում»:

Հրատարակելով այդ կատակերգությունները քսանհինգ տարուց ոչ ավելի հասակում, նա մեկնեց Հռոմից՝ զվարճության ասես, թե բամբասանքներից խուսափելու համար, որ իբր թե ուրիշների երկերը նա մատուցում է որպես իրենը, թե ծանոթանալու համար հույների կենցաղին ու բարքերին, որոնք նա շափից դուրս ոչ ճիշտ էր պատկերում — և այլևս այնտեղ չվերադարձավ: Վուկացիոսը այսպես է տեղեկացնում նրա վախճանի մասին.

*Բեմադրելով վեց կատակերգություն, Ափրոսը լքեց Հռոմը.
Եվ այն պահից, ինչ նա նավարկեց դեպ Ասիա,
Նրան ոչ ոք չի տեսել՝ ահա վախճանը նրա:*

(5) Քվինտոս Կոսկոնիոսը ասում է, որ նա կործանվեց ծովում¹¹ վերադառնալով Հունաստանից հարյուր ութ կատակերգություններով¹² հունդերձ, որոնք վերափոխված էին Մենանդրեսի կատակերգություններից: Մնացյալները հաղորդում են, որ նա մահացել է արկադիական Սաիմփալեսում կամ Լեկադա կղզում, Գրեոս Կորնելիոս Դուլաբելլայի և Մարկոս Ֆուլվիոս Նոբիլիորոսի կոնսուլության ժամանակ, հիվանդանա-

լով վշտից ու վհատութեանից, ելք կործանակեցին նրա իրերը, որոնք նավով առաջուց ուղարկված էին, և դրանց թվում նրա նոր պիեսները:

Նա, ասում են, միջահասակ էր, վայելչակազմ և թուխ: Նրանից հետո մնաց դուստրը, որը հետո կնության գնաց մի հոռմեացի հեծյալի, ինչպես նաև ՉԹ յուզեր այգի Ապպիոսի ճանապարհի վրա, Մարսի տաճարի մոտ: Առավել ևս գարձանալի է, որ Պոքցիոսը գրում է.

... շարասելով

Սկիպիոնի, Լելիոսի կամ Տուրիոսի օգնութեանը,—
Նույնիսկ տնակ չվաստակեց նա նրանցից, ուր ստրուկը
Կարողանար բերել իր տիրոջ վախճանի լուրը:

Ափրանիոսը Տերենտիոսին բարձր է դասում մնացյալ բոլոր կատակերգուներից, «Կոմպիտալիաներ» կատակերգությունում հայտարարելով.

Տերենտիոսին նման չեմ անվանի ոչ ոքի:

Վոլկացիոսը¹³, ընդհակառակը, նրան ցածր է համարում ոչ միայն Նևիոսից, Պլավտոսից և Ցեցիլիոսից, այլև Լիցինիոսից Ատիլիոսի հետ միասին: Կիկերոնը «Մարգագետին»¹⁴ երկում այսպես է գովերգում Տերենտիոսին.

Նույնպես և դու, օ՛ Տերենտիոս, ով նրբագեղ վանկով
Վերափոխելով և լատինական հնչեցնելով բարբառով, Մենանդրեսին
Մեզ, շուրջբոլոր նստածներին ևս ներկայացնում, շունչը զսպած,
Պա, որ այդքան հաճախ նրբագեղ ես և ամենուր հաճելի:

Իսկ Գալոս կեսարը այսպես.

Նույնպես և դու, օ՛ կես-Մենանդրես, կանգնած ես ըստ արժանյաց
Մնացյալ բոլորից բարձր, սիրողդ մաքրագույն վանկի:
Եթե քո նախորդ ոտանավորներին ավելանար և ուժ,
Որպեսզի նրանք լի լինեին նույնպիսի երգիծական ոգով,
Ինչպես և հույների մոտ, և դու շէիր կորչի, հավասարվելով նրանց:
Դրանից էլ զրկված ես դու, և այդ եմ ես ողբում, Տերենտիոս:

ՎԵՐԳԻԼԻՈՍ¹

(1) Պուրլիոս Վերգիլիոս Մարոնը, մանտուացի, սերում էր ամենահաճեստ ծնողներից: Մասնավորապես, ոմանք նրա հորը համարում են բրուտ արհեստավոր, իսկ մեծամասնության կարծիքով, սկզբնապես նա

որպես օրավարձու է ծառայել ցրիչ Մազիտայի մաս, շնորհիվ ջանասիրտ-
թյան շուտով նրա փեսան է դարձել և ապա, քննելով բարոյները անտառ-
ներ և բազմացնելով մեղուններ, խիստ բազմապատկել է ոչ մեծ գարո-
ղությունը:

(2) Վերգիլիոսը ծնվել է հոկտեմբերյան իդերին², Գնեսու Պոմպեոս
Մեծի և Մարկոս Լիցինիոս Կրաստի առաջին կոնսուլության ժամանակ,
Անդր³ կոչվող գյուղում, Մանտուայից ոչ հեռու (3) Հղի ժամանակ նրա
մայրը երազում տեսել էր, որ իբր թե դափնու ճյուղ է ծննդաբերել, որը,
դիպչելով հողին, տեղնուտեղը արմատներ է գցել և աճել դարձել է հա-
սուն ծառ՝ բազմաթիվ տաքուտեսակ պտուղներով ու ծաղիկներով: Հա-
ջորդ օրը, ճանապարհ ընկնելով ամուսնու հետ գեպի մերձավոր գյուղը,
նա ճանապարհից գտրս է եկել և հենց ճանապարհամերձ առվում՝ ծնըն-
դաբերել: (4) Ասում են, որ ծնվելիս երեխան լաց չի եղել, և նրա գեմքը
հանգիստ ու հեզ է եղել՝ արդեն այդ անկասկածելի մատնանշումն էր
երջանիկ ճակատագրի: (5) Մյուս կանխանշանն այն էր, որ քաղաքու
ճյուղը, որն ըստ տեղական սովորության իսկույն տնկվել էր երեխայի
ծնված տեղում, այնպես արագ էր աճել, որ հավասարվել էր շատ ավե-
լի վաղ տնկված բարդիներին, այդ ծառը անվանվել էր «Վերգիլիոսի
ծառ» և որպես սրբազան ծառ պաշտվում էր հղի և ծննդաբերած կանանց
կողմից, որոնք երկյուղածորեն ուխտում էին նրա առջև և կատարում
էին իրենց ուխտը:

(6) Մանկությունը ընդհուպ մինչև շափահաս դառնալը նա անց-
կացրեց Կրեմոնում: Տղամարդու տոգա նա հագավ, երբ դեռ տասնհինգ
տարեկան էր⁵, այն տարում, երբ երկրորդ անգամ կոնսուլներ էին նրանք,
որոնց առաջին կոնսուլության ժամանակ ծնվել էր: Եվ պատահեց այն-
պես, որ հենց այդ նույն օրը մահացավ բանաստեղծ Լուկրեցիոսը: (7)
Կրեմոնից Վերգիլիոսը տեղափոխվեց Մեդիոլանում, իսկ ապա շուտով
Հռոմ:

(8) Նա բարձրահասակ էր, խոշորակազմ, թխագեմ, նմանվում էր
գյուղացու և աչքի շէք ընկնում ամուր արողղությամբ, հասակապես նա
տառապում էր ստամոքսի, կեկորդի, գլխի ցավերից, և հաճախ էր ար-
յուն թողնում: (9) Չափազոր՝ ուտելում և խմելում, նա սեր էր տածում
տղաների նկատմամբ, և հատկապես սիրում էր Ցեքետոսին և Ալեքսանդ-
րոսին, որին նրան նվիրել էր Ազինիոս Փալլիոնը և որը «Բուկոլիդների»
երկրորդ էկլոգում Ալեքսիդ է անվանված. երկուսն էլ լավ կրթությամբ էին
ստացել, իսկ Ցեքետոսը նույնիսկ բանաստեղծություններ էր գրում:
Կարծիք է տարածված, որ նա նաև կապի մեջ էր Պլուտիա Հիերիայի⁶
հետ: (10) Բայց Ասկոնիոս Պեդիանոսը պնդում է, որ Պլուտիան ինքր

հաճախ էր պատմում, որ Վարիոսը ուղղակի Վերգիլիոսին առաջարկում էր կենակցել Պլուտիայի հետ, բայց նա վճռականապես հրաժարվել էր: (11) Մնացյալում նա ամբողջ կյանքում այնքան մաքուր էր խոսքով ու մտքով, որ նեապոլում նրան սովորաբար Պարթենիոս⁷ էին անվանում, իսկ երբ նա, հազվադեպ Հոոմ գալիս երևում էր այնտեղ փողոցում և մարդիկ սկսում էին կրնկակոխ գնալ նրա ետևից և մատնացույց անել նրան, նա թաքնվում էր նրանցից մոտակա տանը: (12) Նա շհամարձակվեց նույնիսկ Օգոստոսի առաջարկությամբ ընդունել ումն վտարանդու ունեցվածքը:

(13) Շնորհիվ բարեկամների առատաձեռնության, նրա կարողությունը հասնում էր տասը միլիոն սեստերցիումի. դրանից զատ, նա տուն ուներ էսքվիլինումում, Մեկենասի այգիների մոտ, թեև նա գերադասում էր ժամանակն անցկացնել Կամպանիայում և Սիցիլիայում: (14) Արդեն հասուն տարիքում նա զրկվեց հարազատներից, և նրանց թվում՝ կուրացած հորից և երկու արյունակից եղբայրներից, փոքրիկ Սիլոնից և հասուն Փլակկոսից, որին նա ողբում է Դափնիսի⁸ անվան տակ: (15) Իր զբաղմունքներում նա ուշադրություն էր դարձնում բժշկությանը և, հատկապես, մաթեմատիկային: Նա վարել է նաև դատական գործ, բայց միայն մեկը և միայն մեկ անգամ, (16) որովհետև, ըստ Մելիսոսի, նրա խոսքը չափազանց դանդաղ էր, և նա նույնիսկ տգետ էր թվում:

(17) Պոեզիայի նա դիմեց դեռևս մանուկ հասակում, երբ հորինեց երկտողանի բանաստեղծություն դպրոցական ուսուցիչ Բալլիստայի մասին, որին քարկոծ էին արել այն բանի համար, որ նա ավազակի համբավ ուներ:

*Այստեղ, քարերի կույտի տակ, հանգչում է Բալլիստան թաղված,
Ճամփորդ, գիշեր թե ցերեկ քո ուղին անվտանգ է դարձած:*

Այնուհետև նա հորինեց «Կատալեպտները», «Պրիապեյաները», էպիգրամներ, «Անեծքներ»⁹ և, տասնվեց տարեկան հասակում¹⁰, «Ճայր» ու «Մոծակը»: (18) «Մոծակի» բովանդակությունը այսպիսին է: Տոթից ուժասպառ հովիվը քնում է և դեպի նա է սողոսկում մի օձ, բայց ճահճից թռչում գալիս է մոծակը և խայթում հովվի քներակը: Հովիվը տեղնուտեղը ճզմում է մոծակին, սպանում օձին և մոծակին տապանաբար դնում, գրելով վրան այսպիսի երկտողանի ոտնավոր¹¹.

*Փոքրիկ մոծակ, ըստ արժանյաց քեզ թաղում է անում
Հոտ պահպանող հովիվը, որ կյանքով քեզ է պարտական մնում:*

(19) Գրեց նա նաև «էտնան», որի մասին, ի միջի այլոց, տարբեր կարծիքներ գոյություն ունեն:

Գրանից հետո շուտով նա սկսեց նկարագրել հռոմեական գործերը¹², բայց, չհանդգնելով ձեռք զարկել նման մի առարկայի, դիմեց «Բուկոլիկներին», ցանկանալով, գլխավորապես, փառաբանել Ազինիոս Պուլլիոնին, Ալփինոս Վարոսին և Կոռնելիոս Գալլոսին, որոնք փրկեցին նրան քայքայումից, երբ Փիլիպպի ճակատամարտից հետո եռապետների հրամանով տեղի ունեցավ դաշտերի բաժանում վետերանների միջև Պաղուզայից այն կողմ: (20) Այնուհետև նա երկնեց «Գեորգիկները» ի պատիվ Մեկենասի, հանուն այն բանի, որ սա, դեռևս քիչ գիտենալով նրան, օգնել էր պաշտպանվելու մի վետերանի բռնությունից, որը քիչ էր մնում սպաներ նրան, մարտնչելով հանուն դաշտի: (21) Վերջապես, նա ձեռնամուխ եղավ «էնեականին», որը բովանդակության հարստությամբ ու բազմազանությամբ չի գիշում Հոմերոսի զույգ պոեմներին, և բացի այդ, պատմում է ինչպես հունական, այնպես էլ հռոմեական հերոսների ու գործերի մասին, և, մասնավորապես, Հոմ քաղաքի սկզբնավորման և Օգոստոսի տոհմի մասին, մի բանի, որին նա հատկապես էր ձգտում:

(22) Ասում են, որ երբ նա գրում էր «Գեորգիկները», ապա սովորաբար յուրաքանչյուր առավոտ հորինում էր շատ ոտանավորներ և թելադրում դրանք, իսկ հետո օրվա ընթացքում վերափոխումներ կատարելով կրճատում էր մինչև նվազագույնի, սրամտորեն ասելով, որ նա ծնում է իր պոեմը ինչպես էգ արջը, լիզելով տողերը, մինչև որ նրանք պետք եղած տեսքը ստանան¹³: (23) «էնեականը» սկզբում նա արձակ շարադրեց և բաժանեց տասներկու գրքերի, իսկ հետո սկսեց այն մաս առ մաս երկնել, երբ՝ ինչ ուզում էր, ոչ մի կարգ չպահպանելով: (24) Իսկ որպեսզի շխանգարի ներշնչանքին, նա որոշ բաներ անավարտ էր թողնում, որոշ բաներ էլ սոսկ նախագծում հեշտորեն ուրվագծված ոտանավորներով, կատակով ասելով, որ դրանք դնում է խեղձարների փոխարեն, որպեսզի կանգուն պահի իր երկը, քանի դեռ չեն դրվի ամուր սյուները:

(25) «Բուկոլիկները»¹⁴ նա ստեղծագործեց երեք տարում, «Գեորգիկները»¹⁵ յոթ, «էնեականը»¹⁶ տասնմեկ տարում: (26) «Բուկոլիկները» աշխարհ գալուց հետո այնպիսի հաջողություն ունեցան, որ նույնիսկ երգիչները հաճախ կատարում էին դրանք բեմից: (27) «Գեորգիկները» նա Օգոստոսին կարդաց չորս օր անընդմեջ, երբ սա, վերադառնալով Ակտիոմի մոտ տարած հաղթանակից հետո, կանգ առավ Ատելլայում, որպեսզի բուժի կոկորդը, իսկ երբ նրա ձայնը խզվում էր, նրան փոխարինում էր Մեկենասը: (28) Կարդում էր Վերգիլիոսը հաճելի և

զարմանահրաշ և րրագեղությամբ: (29) Ըստ Մենեկայի, բանաստեղծ
Հուլիոս Մոնտանոսը մեկ անգամ չէր ասել, որ հաճոքով ինչ-որ բան
կառուանգեր Վերգիլիոսից, եթե կարողանար գրա հետ մեկտեղ առևանգել
նրա ձայնը, կերպարը և շարժումը՝ քանզի միևեռուն ոտանավորները
նրա սեփական առողանությամբ գեղեցիկ էին հնչում, իսկ առանց նրա
դատարկ ու թռչնած էին:

(30) «էնեադանի» փառքը, հաղիվ գեռ այն սկսած, այնպիսին էր,
որ Աեքստոս Պրոպերցիոսը¹⁷ առանց տատանվելու կանխագուշակում էր.

Հեուցե՛ք, գրողներ հոմեական, հեուցե՛ք և դուք հույներ՝
Այստեղ «Վիրգիլիոսից» իսկ առավել կարևոր մի բան է ստեղծվում:

(31) Օգոստոսն ինքը, որն այդ ժամանակ արշավանքի էր կանտա-
րըրների դեմ, խնդրանքներով և նույնիսկ կատակախառն ստրառնալիքնե-
րով նամակներ էր գրում, ձգտելով հասնել այն բանին, որպեսզի նրան,
նրա իսկ սեփական խոսքերով ասած, «ուղարկեին գեթ առաջին սևա-
գուրջունը, գեթ մի որևէ կիսառտանավոր «էնեադանից»¹⁸: (32) Բայց
նույնիսկ շատ ժամանակ անց, երբ աշխատանքն արդեն ավարտված էր,
Վերգիլիոսը նրան կարգաց միայն երեք գիրք՝ երկրորդը, շորրորդը և
վեցերորդը. այս վերջինը ամենաուժեղ տղավորություն գործեց Օկտա-
վիայի վրա, որը ներկա էր ընթերցմանը, — ասում են, որ նա, լսելով
ոտանավորը իր որդու մասին՝ «Դու Մարցելոս կլինեիր»¹⁹, ուշաթափ
եղավ, և նրան դժվարությամբ ուշքի բերեցին: (33) Գարդում էր նա և
ալեյի մեծամիտ ունեկեղիրների համար, քայց սոսկ հազվադեպ և զխա-
վորապես այն, ինչու՞մ փատահ չէր, որպեսզի ավելի լավ իմանա, թե ինչ-
պիսին է մարգկանց կարծիքը: (34) Ասում են, որ էրոսը, նրա գրքապա-
հը և ազատարձակը, արդեն ծեր տարիքում պատմում էր, թե ինչպես մի
անգամ Վերգիլիոսը ընթերցանության ժամանակ խնկուն լրացրեց երկու
կիսառտանավոր՝ կարդալով «էոլի որդուն՝ Միսենոսին»²⁰, նա ավելաց-
րեց՝ «որը կարողանում էր մնացյալ բոլորից ավելի լավ», և ապա, ար-
տասանելով «Պղնձով գումարել սրանց», շարժված նույն ոգեշնչումից,
նա շարունակեց՝ «գրգռելով Մարսին կրկնելով», և սեղմուտեղը հրա-
մայեց էրոսին տևարի մեջ գրառել երկու կիսառտանավորն էլ:

(35) Կյանքի հիսուներկուերորդ տարում, պատրաստվելով վերջնա-
կան տեղք տալ «էնեադանին», նա վճռեց մեկնել Հունաստան և Ասիա,
որպեսզի երեք տարի անընդմեջ զբաղվի միայն պոեմի հղկմամբ, իսկ
կյանքի մնացյալ մասը ամբողջովին նվիրաբերի վիրխուսիայությանը:
Սակայն, ճանապարհին Աթենքում հանդիպելով Օգոստոսին, որն Արևել-

քից Հոռոմ էր վերադառնում, նա որոշեց չլքել նրան և նույնիսկ նրա հետ միասին ետ դառնալ, երբ հանկարծ, խիստ շոգ եղանակին հարևան Մեգարա քաղաքը դիտելիս, նա թուլութուն զգաց. ծովով նավարկելու ժամանակ այն սաստկացավ, այնպես որ նա Բրունդիզիում ժամանեց էլ ավելի սրված հիվանդությամբ և այնտեղ մի քանի օրից վախճանվեց²¹։ հոկտեմբերյան կալենդներից տասնմեկ օր առաջ, Գնեոս Սենտիոսի և Քվինտոս Լուկրեցիոսի կոնսուլության ժամանակ։ (36) Նրա աճյունը փոխադրեցին Նեապոլ և թաղեցին Պուտեոլք տանող ճանապարհի երկրորդ քարի մոտ. իր դամբարանի համար նա հորինել էր հետևյալ երկտող ոտանավորը՝

Մանտուայում ծնվեցի ես, կալարների²² մոտ մահացա, հանգչում եմ
Պարթենոպեայում²³. ես կրգել եմ արոտներ, դյուղեր, առաջնորդներ²⁴,

(37) Ունեցվածքի կեսը նա կտակեց Վալերիոս Պրոկուլոսին, իր խորթ եղբորը, քառորդը՝ Օգոստոսին, տասներկուերորդ մասը՝ Մեկենասին՝ մնացյալը՝ Լուկիոս Վարիոսին և Պլուտիոս Տուկկային, ովքեր նրա մահից հետո հրատարակեցին «էնեականը» Կեսարի հրամանով։ (38) Այդ մասին է Սուլպիցիոս Կարթագենացու²⁵ հետևյալ ոտանավորը.

Արագոտն բոցը պետք է մոխրացնեք պոեմը—

Այդպես էր կարգադրել Վերգիլիոսը, որ երգել էր փոյուզիացի առաջնորդին։
Տուկկան և Վարիոսը դիմադրում են. ի վերջո, դու, մեծագույնդ

Կեսար, քո արգելքով փրկեցին պոեմը Լացիումի մասին։

Քիչ էր մնում չարաբախտ Պերգամոսը կործանվեր երկրորդ հրդեհից։

Քիչ էր մնում Իլիոնը ճաշակեր երկու թաղման խարույկ։

(39) Դեռևս Իտալիայից մեկնելուց առաջ Վերգիլիոսը պայմանավորվել էր Վարիոսի հետ, որ եթե իրեն մի քան պատահի, նա այրի «էնեականը». բայց Վարիոսը հրաժարվեց։ Արդեն մահամերձ, Վերգիլիոսը համառորեն պահանջում էր իր գրքերի սնդուկը, որպեսզի անձամբ այրի, բայց երբ ոչ ոք նրան չբերեց սնդուկը, նա այլևս ոչ մի հատուկ կարգադրություն չարեց այդ մասին (40) և իր երկերը հանձնարարեց Վարիոսին ու Տուկկային՝ պայմանով, որ նրանք չհրատարակեն ոչինչ, ինչ որ ինքը չի հրատարակել։ (41) Օգոստոսի ցուցմամբ, հրատարակութունը իրագործեց Վարիոսը, նրա մեջ մուծելով սոսկ աննշան ուղղումներ, այնպես որ նա թողեց նույնիսկ անավարտ ոտանավորները ինչպես որ կային։ Շատերը հետո փորձեցին դրանք լրացնել, բայց անհաջող. դժվարութունը նրանում էր, որ Վերգիլիոսի մոտ գրեթե բոլոր կիսաո-

տանավորներն ունեին լիովին ավարտուն իմաստ բացառությամբ մեկի. «Նա, ում Տրոյայում քեզ...»²⁶, (42) Քերական Նիսոսը ասում էր, որ, ըստ ծերունիների պատմածի, Վարիոսը փոխել էր երկու գրքերի հերթականությունը²⁷ և այժմյան երկրորդը դրել էր երրորդի տեղը, ինչպես և ուղղել էր առաջին գրքի սկիզբը, դեն նետելով հետևյալ տողերը.

Ես նա եմ, ով երբեմնի նվագում էր նրբին սրինգով
Երգ և, լքելով անտառնհրր, արթնացրել էր հարևան արտերը:
Եվ գյուղացուն են նրանք ենթարկվում, նույնիսկ ագահին
(Աշխատանքը սիրելի է երկրագործներին) — իսկ այժմ Մարսի սոսկալի
Հիշոցը և հերոսին եմ երգում...²⁸

(43) Վատաբանողների²⁹ պակաս Վերգիլիոսը շուներ, և զարմանալի չէ. չէ որ նույնիսկ Հոմերոսն ունեւր վատաբանողներ: Երբ հայտնվեցին «Բուկոլիկները», ոմն նումիտորիոս ի պատասխան հորինեց «Անտիբուկոլիկներ», որոնք իրենցից ներկայացնում էին միայն երկու էկլոգների ամենաանճաշակ պարոդիաներ, դրանցից առաջինը սկսվում էր.

Տիտիրոս, դու տոգա ես հագած, ինչի՞դ է պետք ծածկույթը հաճարենու:

Եվ երկրորդը.

Ասիր, Գամիտոս, «ո՞ւմն է այդ հոտը» — մի՞թե լատիներեն է:
Ոչ, քանզի այդպես են ասում գյուղում եղբայր էգոնի մոտ³⁰,

Մեկ ուրիշը, երբ Վերգիլիոսը ոտանավոր էր կարդում «Գեորգիկներից»՝ «Մերկ վարիր, մերկ ցանիր...»³¹, — ձայնակցեց՝ «...կմբսես, կհիվանդանաս տենդով»: (44) «էնեադանի» դեմ նույնպես գրվել է կարվիլիոս Պիկտորի գիրքը «էնեոսի խարազանր» վերնագրով, Մարկոս Վիպսանիոսը Վերգիլիոսին անվանում էր Մեկենասի ընկեցիկ, նոր շինծուություն³² հնարող, ո՛չ ճոռոմ և ո՛չ շոր, բայց հյուսված առօրյա բառերից և դրա համար էլ աննկատելի. Հերենիոսը հավաքել էր նրա վրիպումները, Պերելիոս Փավստոսը՝ նրա փոխառությունները³³: (45) Քվինտոս Օկտավիոս Ավիտոսի «Նմանությունները» ամբողջ ութ գրքով նույնպես պարունակում են Վերգիլիոսի փոխառած ոտանավորները, մատնանշելով նրանց ծագումը: (46) Ասկոնիոս Պեգիանոսը Վերգիլիոսին վատաբանողների դեմ ուղղված իր գրքում սոսկ մի քանի մեղադրանք է հարուցում նրա դեմ՝ գլխավորապես նրանք, որտեղ խոսք է գնում պատմության մասին և

Հոմերոսից կատարած բազմաթիվ փոխառութիւնների մասին, բայց նա ասում է, որ Վերգիլիոսն ինքը սովորաբար այսպես էր պաշտպանվում այդ մեղադրանքից. «Ինչո՞ւ նրանք իրենք չեն փորձում նման գողութիւն կատարել. այնժամ նրանք կհասկանան, որ ավելի դյուրին է Հերկուլեսից խլել լախտը, քան Հոմերոսից ոտանավոր»։ Բայց և այնպես, մեկնել նա որոշել էր այն բանի համար, որպեսզի ամենը հղկի ի հաճույս շարակամների։

ՀՈՐԱՑԻՈՍ¹

(1) Քվինտոս Հորացիոս Փլակկոսը Վենուզիայից էր, ազատարձակի որդի, որը դրամ էր հավաքում աճուրդների ժամանակ, ինչպես ինքը Հորացիոսն է հաղորդում. ի միջի այլոց, շատերը նրան համարում են աղը դրած ձուկ վաճառող, և ոմն մեկը նույնիսկ կշտամբել էր Հորացիոսին փոխադարձ հայհույանքի ժամանակ. «Քանի անգամ եմ տեսել ես, թե ինչպես էր հայրդ թևքով քիթը սրբում»²։ Փիլիպպի ճակատամարտի ժամանակ կանչված լինելով հրամանատար Մարկոս Բրուտոսի կողմից, Հորացիոսը ծառայութիւն մեջ հասավ մինչև զինվորական տրիբունի աստիճանի, իսկ երբ նրա կուսակցութիւնը հաղթվեց, նա, ներում ձեռք բերելով, գանձարանում տեղավորվեց գրագրի պաշտոնով։ Եվ, նախապես շահելով Մեկենասի վստահութիւնը, շուտով և Օգոստոսի, նա դարձավ երկուսի էլ ոչ վերջին բարեկամը։

(2) Թե որքան էր սիրում նրան Մեկենասը, բավականաչափ վկայում է այսպիսի մի էպիգրամ.

Եթե ես սեփական փորից ավելի
Քեզ չեմ սիրում, բարեկամդ իմ Հորացիոս,— թող ես
Դառնամ ավելի նիհար, քան Նինիոսը³,—

իսկ առավել ևս շատ— նրա վերջին այսպիսի պատգամը, ուղղված Օգոստոսին. «Հորացիոս Փլակկոսի մասին հիշիր, ինչպես կհիշեիր իմ մասին»։

(3) Օգոստոսը նաև նրան առաջարկում էր իր գրագրի տեղը, ինչպես որ այդ երևում է Մեկենասին նրա գրած հետևյալ նամակից. «Մինչև հիմա ես ինքս կարող էի գրել իմ ընկերներին, բայց քանի որ ես այժմ շատ եմ զբաղված, իսկ առողջութիւնս ամուր չէ, ուստի ես ուզում եմ քեզնից

Իսկ մեր սիրելի Հորացիոսին: Դրա համար էլ թող նա քո պնակալեզունքի սեղանից անցնի մեր արքայական սեղանին, և թող օգնի մեզ նամակներ շարադրելիս»: Եվ նույնիսկ երբ Հորացիոսը հրաժարվեց, նա ամենեին էլ շքարկացավ նրա վրա և նախկինի պես պարտադրում էր նրան իր բարեկամությունը: (4) Պահպանվել են նամակներ, որոնցից, որպես ապացույց, ես կբերեմ փոքրիկ հատվածներ. «Օգտվիր իմ տանը բոլոր իրավունքներից, ինչպես եթե դա քո տունը լիներ՝ դա պատահական չի լինի, այլ միայն արդարացի, որովհետև ես ուզում էի, որպեսզի մեր միջև հենց այդպիսի հարաբերություններ լինեն, եթե դա թույլատրեր քո առողջությունը»: Եվ մեկ ուրիշ տեղում. «Թե ինչպես եմ ես քեզ հիշում, կարող ես լսել և մեր Սեպտիմիոսից, քանզի պատահել է, որ ես նրան արտահայտել եմ իմ կարծիքը քո մասին: Թեև դու, գոռոզամիտդ, մեր բարեկամությանը արհամարհանքով ես վերաբերվում, մենք մեր հեթեթին քեզ այդպիսի մեծամտությամբ չենք փոխհատուցի»: Բացի այդ, այլ կառականների թվում նա հաճախ էր Հորացիոսին անվանում ամենամաքրակենցաղ ցովակյաց և սիրելագույն մարդուկ, և մեկ անգամ շէր նրան օղողել իր առաստաձեռնությամբ:

(5) Իսկ Հորացիոսի ստեղծագործությունները նրան այնպես էին դուր գալիս, և նա այնքան էր համոզված, որ դրանք դարեր կապրեն, որ նրան հանձնարարեց գրելու ոչ միայն հարյուրամյա հիմներ, այլև վինդելիկների դեմ իր խորթ որդիներ Տիբերիոսի և Դրուզոսի տարած հաղթանակի փառաբանումը⁴, և դրա համար ստիպեց նրան բանաստեղծությունների երեք գրքին, երկար ընդմիջումից հետո, աժելացնել շորրորդը: Իսկ կարդալով նրա որոշ «Ձրույցները»⁵, նա հետևյալ կերպ էր գանգատվում այն բանից, որ գրեանցում չի հիշատակված. «Իմացիր, որ ես զայրացած եմ քեզ վրա այն բանի համար, որ նմանատեսակ այդքան երկերում դու ամենից առաջ ինձ հետ չես զրուցում: Թե դու վախենում ես, որ գալիք սերունդները, տեսնելով քո մեզ հետ ունեցած մոտիկությունը, դա ամոթ կհամարեն քեզ համար»: Եվ հասավ ուղերձի իրեն, որն այսպես է սկսվում.

Բազում ծանր աշխատություններ ես դու, Կեսար, միայնակ տանում.

Հոռմի տերությունն ես զենքով պահպանում, հեզաբարոյությամբ զարդարում,

Բուժում ես օրհնքներով դու՝ ժողովրդյան բարիքին վնաս կբերի.

Եթե զբույցներով ի՞նչ երկար ժամանակք քո խելի՞ն

(6) Արտաքինով Հորացիոսը ցածրահասակ և գեր էր. այդպիսին է նա նկարագրված սեփական տատիլրաներում⁶ և Յգոստոսի հետևյալ նա-

մալում. «Օնիսիոսը բերեց ինձ թո գրքույկը, որն ասես ինքն է ներողություն հայցում, որ այդքան փոքր է. բայց ես հաճույթով եմ ընդունում այն: Թվում է ինձ, որ դու վախենում ես, թե չի նի հանկարծ թո գրքերը քիզանից մեծ դուրս գան: Բայց եթե թո հասակը կարճ էլ է, ապա գիրությունը փոքր չէ: Այնպես որ դու կարող էիր գրել և մեկ ամբողջ սեքստարիում⁸, որպեսզի գրքույկդ լիներ կլորիկ, ինչպես և թո փորը»: Սիրային գործերում, դատելով ըստ պատմածների, նա շափավոր չէր, և ասում են, որ իր սիրուհիների հետ նա գետեղվում էր հայելազարդ ննջարանում, այն հաշվով, որպեսզի ամենուր, ուր էլ որ նայեր, արտացոլվեր նրանց համակեցությունը: (7) Նա, գլխավորապես առանձնակյաց կյանք էր վարում իր սաբինական կամ տիբուրտինական գյուղում. նրա տունը առ այսօր էլ ցույց են տալիս տիբուրտինական պուրակի⁹ մոտ:

Իմ ձեռքն են ընկել նաև Հորացիոսի անունով և՛ եղբրերգեր, և՛ ավձակով գրված ուղերձ¹⁰, որտեղ նա ասես ներկայանում է Մեկենասին. բայց և՛ մեկը, և՛ մյուսը ես իսկական շեմ համարում, որովհետև եղբրերգերի խոսքը կոպիտ է, իսկ ուղերձում՝ նույնիսկ անհաստակ. իսկ այդ թերությունը ամենից քիչ Հորացիոսին է հատուկ:

(8) Մնվել է¹¹ նա վեցերորդ օրը մինչև դեկտեմբերյան իդերը, Լուկիոս Կոտտայի և Լուկիոս Տորքվատոսի կոնսուլության ժամանակ. մահացել է¹² հինգերորդ օրը մինչև դեկտեմբերյան կալենդները, Գայոս Մարցիոս Ցենզորինոսի և Գայոս Ալինիոս Գալլոսի կոնսուլության ժամանակ, Հռոմում, հիսունինը օր անց Մեկենասի մահից¹³, կյանքի հիսունյոթերորդ տարում: Իր ժառանգ նա բանավոր հայտարարեց Օգոստոսին, որովհետև, տանջվելով հիվանդության նոպայից, ուժ չունեի ստորագրելու կտակի տախտակները: Հրկիզվեց և թաղվեց էսքվիլինումի ծայրամասում, Մեկենասի դամբարանի մոտ:

ՊԵՐՍԻՈՍ՝

(1) Ավլոս² Պերսիոս Փլակկոսը ծնվել է³ դեկտեմբերյան տոների նախօրյակին Ցարիոս Պերսիկոսի և Լուկիոս Վիտելլիոսի կոնսուլության ժամանակ. մահացել է⁴ ութ օր դեկտեմբերյան կալենդներից առաջ Պուրլիոս Մարիոսի և Ափինիոս Գալլոսի կոնսուլության ժամանակ: Մնվել է նա Վոլատերրքում, էտրուրիայում, հռոմեական հեծյալ է եղել, բայց ազգակցությամբ և խնամիությամբ կապված էր բարձրագույն դասին: Մահացել է իր կալվածում Ապպիոսի ճանապարհի ութերորդ մղոնի վրա:

(2) Նրա հայր Փլակկոսը նրան որբ էր թողել, երբ նա ընդամենը վեց տարեկան էր: Նրա մայր Ֆուլվիա Սիզեննիան դրանից հետո կնության գնաց հեծյալ Ֆուլիոսին, բայց նրան էլ թաղեց մի քանի տարի անց: Մինչև տասներկու տարեկանը Փլակկոսը սովորել է Վոլատերրքում, իսկ ապա Հոտմում, քերական Հոնմմիոս Պալեմոնի և ճարտասան Վերգինիոս Փլաբիոսի մոտ:

(3) Տասնվեց տարեկանում նա այնպես սերտ բարեկամացավ Աննեոս Կորնուտոսի⁵ հետ, որ ոչ մի տեղ նրանից չէր բաժանվում: Նրանից նա ձեռք բերեց որոշ փիլիսոփայական կրթություն: Պատանեկությունից նրա ընկերներն էին բանաստեղծներ Ցեզիոս Բասոսը և Կալպուրնիոս Ստատուրան, որը պատանի մահացավ դեռևս Պերսիոսի կենդանության օրոք: Սերվիլիոս Նոնիանոսին նա պատվում էր որպես հոր: Կորնուտոսի մոտ նա ծանոթացավ նրա մեկ ուրիշ աշակերտի՝ Աննեոս Լուկանոսի, իր հասակակցի հետ. բանն այն է, որ փիլիսոփայական գրքեր հեղինակող Կորնուտոսը այդ ժամանակ պոեզիայի հետևորդ էր և եղերերգու Լուկանոսը խանդավառված էր Փլակկոսի ստեղծագործություններից և նրա ընթերցումների ժամանակ հազիվ էր զսպում բացականչությունները, որ այն իսկական պոեզիա է, իսկ իր սեփական բանաստեղծությունները՝ դատարկ զվարճություն:

(4) Հետագայում նա ծանոթացավ նաև Սենեկայի հետ, բայց չգաղձալ նրա տաղանդի երկրպագուն: Կորնուտոսի մոտ նա օգտվում էր ժամանակի երկու ամենագիտուն և արժանավորագրվյալ փիլիսոփաների՝ չակեդեմոնացի բժիշկ Կլավդիոս Ագատո.րնոսի և մագնեսիացի Պետրոնիոս Արիստոկրատեսի հասարակությունից, նրանցով նա անչափ սքանչանում էր և ընդօրինակում էր նրանց, որովհետև նրանք Կորնուտոսի հասակակիցներն էին, իսկ ինքը նրանցից ջահել էր: Գրեթե տասը տարի նա Փրասեա Պետոսի ամենասիրելին էր, և նրանք հյրեմն նույնիսկ միասին ճանապարհորդում էին, Պետոսը ամուսնացած էր նրա ազգականուհի Արրիայի հետ:

(5) Նա աչքի էր ընկնում մեղմ բարճով, աղջկական ամոթխածությամբ, գեղեցիկ արտաքինով և օրինակելի վարճով մոր, քրոջ և մորաքրոջ նկատմամբ. առաքինի էր և ողջախոհ: (6) Նա թողեց երկու միլիոն սևստերցիում մորը և քրոջը, թեև նրա կտակը միայն մորն էր ուղղված: Նա խնդրել էր մորը Կորնուտոսին տալ, որոշ տեղեկություններով, հարյուր հազար, ուրիշ տեղեկություններով, ի լրումն քսան ֆունտ դրվագված արծաթ և Քրիսիպպոսի շուրջ յոթ հարյուր գիրք, այսինքն՝ իր ամբողջ գրադարանը: Սակայն Կորնուտոսը ընդունելով գրքերը, դրամը թողեց նրա մորն ու քրոջը, որոնց եղբայրը ժառանգորդուհիներ էր դարձրել:

(7) Գրում էր նա հազվադեպ և դանդաղ: Այս գիրքը⁶ նա անմշակ է թողել: Որոշ ոտանավորներ վերջին սատիրայից հանված են, որպեսզի այն ավարտուն թվա: Կորնուտոսը տեքստի թուուցիկ ստուգում էր կատարել և Ցեզիուս Բասոսի խնդրանքով գիրքը նրան էր հանձնել հրատարակելու համար: Մանուկ հասակում Փլակկոսը գրել էր նաև պրետեքստա⁷, ճամփորդական նոթերի գիրք և փոքրիկ բանաստեղծություն Փրասեայի զոքանչի⁸ մասին, որը ինքնասպանություն էր գործել, կանխելով իր ամուսնուն: Բայց Կորնուտոսը խորհուրդ տվեց նրա մորը ոչնչացնել այդ ամենը: Երբ գիրքը լույս տեսավ, բոլորը նրանով հիացան և գնեցին այն:

Մահացավ նա ստամոքսի հիվանդությունից կյանքի երեսուներորդ տարում¹⁰:

ԼՈՒԿԱՆՈՍ¹

(1) Մարկոս Աննեոս Լուկանոսը, Կորդուբայից, առաջին անգամ ապացուցեց իր օժտվածությունը գովերգելով Ներոնին հնգամյա մրցումների² ժամանակ: Այնուհետև նա հանդես եկավ «Պոմպեոսի և Կեսարի քաղաքացիական պատերազմով»: Դեռևս նա 21 տարեկան չկար³, այնպես որ մի ներածության մեջ, համեմատելով իր տարիքը և առաջին փորձերը Վերգիլիոսի հետ, նա համարձակվեց ասել.

... Բայց որքան հեռու եմ ես
«Մոծակից»⁴...

Վաղ պատանեկության օրերին, իմանալով, որ հայրը դժբախտ ամուսնության պատճառով այդքան երկար ժամանակ ապրում է գլուղում⁵...

(2) ... Ներոնը կանչեց նրան Աթենքից, դասեց իր մերձավորագույն բարեկամների շարքը և նույնիսկ արժանացրեց քվեստուրայի, բայց նա երկար շօգտվեց այդ ողորմածություններից: Վիրավորված նրանից, որ ինչ-որ մի անգամ կայսրը նրա բաց ընթերցման ժամանակ անսպասելի սենատի նիստ նշանակեց և գնաց միայն այն բանի համար, որպեսզի թարմանա, այդ պահից նա չէր քաշվում նրա դեմ ոչ խոսքով, ոչ էլ արարքով դործելուց: Մի անգամ հասարակական արտաքննույում, բարձրաձայն քամի բաց թողնելով, նա արտասանեց Ներոնի կիսատողը.

Ասես ամպրոպ որոտաց գետնի տակ...

որով մեծ շփոթութիւն առաջացրեց և մոտիկ նստածներին փախուստի մատնեց: Բացի այդ, քինոտ բանաստեղծութիւններով նա փնտւում էր ինչպես կայսրին, այնպես էլ նրա ամենաազդեցիկ բարեկամներին: (3) Ի վերջո նա դարձավ Պիզոնի դավադրութեան մի տեսակ դրոշակակիրը, հաճախ էր բացահայտ փառաբանում տիրանասպաններին⁶, շէր զլանում սպանալիքներ տեղալուց և այնքան էր անզուսպ, որ ամեն մի ընկերոջ առջև պարծենում էր կայսեր գլխով:

Սակայն դավադրութիւնը բացահայտվելուց հետո նա ամենևին էլ չդրսևորեց հոգու այդպիսի ամրութիւն. խոստովանելով առանց դիմադրութեան⁷, նա իջավ ամենաստորացուցիչ աղերսանքների և նույնիսկ իր բոլորովին անմեղ մորը թվարկեց դավադիրների շարքում, հուսալով, որ մորը մեղադրելը կծառայի հօգուտ իրեն մայրասպան-կայսեր աշքում: Բայց, իրավունք ձեռք բերելով ազատորեն ընտրելու մահը, նա նամակ գրեց հորը իր մի քանի բանաստեղծութիւնների ուղղումներով հանդերձ, ճոխաբար ճաշեց և ձեռքերը մեկնեց բժշկին՝ բացելու համար երակները:

Ես դեռ հիշում եմ, թե ինչպես էին ընթերցվում նրա ոտանավորները: Իսկ վաճառքի համար թողարկված հրատարակութիւնները, միշտ շէ որ բարեխիղճ և հոգածութեամբ են արված, երբեմն նույնիսկ անփույթ են:



ՏԱՐՔԵՐ ԳՐՔԵՐԻՑ

ՊԱՍԻԵՆՈՍ ԿՐԻՍՊՈՍՆ

Պասիենոս Կրիսպոսը, Վիզելիում մունիցիպալիայից, այսպես սկսեց իր առաջին ճառը սենատում. «Հայր սենատորներ և դու, Կեսար»— ինչու և նրա կեղծավոր ճառը շատ դուր եկավ Տիբերիոսին: Նա սեփական ցանկությամբ մի քանի դատավարութուններ էր վարել ցենտումվիրների առջև. դրա համար նրան արձան է դրված Հուլիոսի բազիլիկում: Նա երկու անգամ կոնսուլ էր եղել: Ամուսնացած եղել էր նա երկիցս, նախապես Դոմիցիայի, ապա Ագրիպպինայի հետ. առաջինը ներոն կայսեր հորաքույրն էր, երկրորդը՝ մայրը: Նրա կարողությունը հասնում էր երկու միլիոն սեստերցիումի: Նա ձեռք էր բերել բոլոր տիրակալների բարեհաճությունը, և հատկապես Գայոս Կեսարի, որի ետևից ոտքով էր գնում² նրա ուղևորությունների ժամանակ: Երբ Գայոսը առանձին հարցրել էր նրան, կենակցում է արդյոք Պասիենոսը հարազատ քրոջ հետ, ինչպես որ ինքը, Պասիենոսը պատասխանել էր. «Դեռևս ոչ»,— խիստ վայելուչ և զգույշ, որպեսզի ժխտմամբ չվիրավորի կայսրին և շխայտառակի իրեն կեղծ հաստատումով: Նա մահացավ Ագրիպպինայի խարդավանքների հետևանքով, որին թողեց ժառանգորդուհի, և արժանացավ հասարակական թաղման:

ՊԼԻՆԻՈՍ ԱՎԱԳՅ

Պլինիոս Սեկունդոսը Նոր Կոմումից արժանի կերպով կատարեց հեծյալների համար պարտադիր զինվորական ծառայությունը, զարմանահրաշ ազնվությամբ զբաղեցրեց մի քանի փայլուն պրոկուրատուրաներ հերթով, և, վերջապես, այնպիսի նախանձախնդրությամբ անձնատուր եղավ ազնիվ գիտություններին, որ հազիվ թե մեկը լիակատար անզբաղության մեջ ավելի շատ գրեր, քան նա: Այսպես, նա 20 գրքի մեջ հավաքեց

բոլոր այն պատերազմների նկարագրութունը, որոնք մղվել էին գերմանացիների դեմ, իսկ հետո կազմեց «Բնական պատմության» 37 գրքերը: Նա կործանվեց Կամպանիայի աղետի ժամանակ⁴: Հրամանատարը լինելով Միզենյան նավատորմի, նա Վեզուվի ժայթքման ժամանակ լիբուրնական թիանավով գնաց, որպեսզի մոտիկից հետախուզի իրադարձության պատճառները, բայց հակառակ քամին խանգարեց նրան վերադառնալու, և նա թաղվեց մոխրի ու փոշու մեջ կամ, ինչպես ենթադրում են ոմանք, սպանվեց իր ստրուկի ձեռքով, որին, շոգից ուժասպառ եղած, խնդրեց փութացնել իր մահը:



ԱՎԵՏՈՆԻՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Երբ մ. թ. շուրջ 120 թ. Սվետոնիոսը հրապարակեց իր գրքերից առավել հայտնին՝ «Տասներկու կեսարների կյանքը», հռոմեական կայսրությունը արդեն մեկուկես դար գոյություն ունեւր: 150 տարի դրանից առաջ դիկտատոր Փայոս Հուլիոս Կեսարի որդեգիր և ժառանգ Կեսար Օկտավիանոսը, որը հետո ստացավ Օգոստոս պատվանունը, Ակտիումի մոտ ջարդեց իր վերջին մրցակից Անտոնիոսին և դարձավ վիթխարի հռոմեական տերության միակ կառավարիչը: Վերջացան գրեթե 20 տարի տևած քաղաքացիական պատերազմները, վերջացավ նաև հռոմեական հանրապետության դարաշրջանը:

Հանրապետության անկումը հետևանք էր մի շարք տնտեսական, սոցիալական և քաղաքական պատճառների: Երեքհարյուրամյա գրեթե անընդմեջ պատերազմների հետևանքով Հռոմը, երբեմնի համեմատաբար համեստ քաղաք-պետությունը, իրեն ենթարկեց ամբողջ Միջերկրածովյան ավազանը: Նրա տիրապետության տակ ընկան սոցիալական և մշակութային զարգացման ամենատարրեր մակարդակների վրա գտնվող ժողովուրդներ՝ Հունաստանը, որն արդեն վաղուց էր ապրել ծաղկումը, Փոքր Ասիան, Ասորիքը, Եգիպտոսը, որտեղ դեռևս Հին Արևելքում տիրապետած սեփականության և շահագործման ձևերը զուգակցվում էին զարգացած ստրկատիրական հարաբերություններին, Հյուսիսային Աֆրիկան, Գալլիան, Իսպանիան, որոնք բաժանված էին բազմաթիվ մարզերի ու ցեղերի, որոնց մի մասը արդեն գիտեր զարգացած ստրկությունը, առևտուրը, քաղաքային կյանքը, իսկ մյուս մասը դեռևս ապրում էր համայնական-տոհմատիրական կարգով կամ ենթարկվում էր աղքատացած ցեղակիցներին ստրկացրած տոհմական արիստոկրատիային:

Հռոմի դաշնակիցը նրա նվաճումներում միշտ եղել էր տեղական ստրկատիրական արիստոկրատիան: Պրովինցիաների բնակչության

մնացյալ խավերը դաժանորեն տառապում էին Հոռմի իշխանությունից: Իտալիայից հորդած հարկերի կապալառուները, վաշխառուները, առևտրականները պրովինցիաների բնակչությունից քամում էին բոլոր հյութերը: Հոռմեական կուսակալները իրենց պաշտոնյաներով հանդերձ առանց որևէ հսկողության ու անպատիժ կողոպտում էին նրանց: Զուր չէր, որ, Կիկերոնի խոսքերով, բոլոր պրովինցիաները ատում էին հոռմեացիների անունն իսկ և պատրաստ էին ապստամբելու առաջին իսկ հարմար դեպքում: Եվ նրանք իսկապես ապստամբում էին և կոտորում էին հոռմեական քաղաքացիներին: Ճիշտ է, ամեն անգամ ավելի կամ պակաս երկարատև պատերազմից հետո հոռմեացիները վերականգնում էին իրենց իշխանությունը և դաժանորեն պատժում ապստամբներին: Բայց որքան ավելի էր ընդարձակվում հոռմեական տերությունը, այնքան ավելի պարզ էր դառնում հոռմեական դիրքերի անհուսալիությունը նվաճված մարզերում: Հոռմեացիները դրանք կարող էին ամրապնդել միայն ընդլայնելով այնտեղ իրենց սոցիալական բազան: Այդպիսի բազա կարող էր դառնալ պրովինցիաների մանր և միջին ստրկատերերի՝ վաճառականների, կալվածների և արհեստագործական ձեռնարկությունների սեփականատերերի ամրապնդվող դասակարգը: Բայց նրանց կարելի էր իր կողմը գրավել միայն հայտնի իրավունքներ վերապահելով նրանց, նրանց առջև բացելով իրավունքներով հաղթողների հետ հավասարվելու հեռանկարը, պրովինցիաներին հնարավորություն տալով զարգացնել իրենց տնտեսությունը, սահմանափակելով՝ նրանց շահագործումը: Պրովինցիաների հետ հարաբերությունների կարգավորումը Հոռմի համար ամենակենսական խնդիրներից մեկն էր, Հոռմի, որը համաշխարհային տերություն էր դարձել:

Պակաս սուր չէին նաև մյուս պրոբլեմները. թանկարժեք մետաղների, ստրուկների, արհեստագործության և գյուղատնտեսական մթերքների վիթխարի ներհոսքը նվաճված երկրներից խթանում էր իտալիական արտադրության և ձեռնարկուղականության բոլոր տեսակերի զարգացումը, ուժեղացնում էր ոմանց հարստացումը և մյուսների քայքայումը: Սրվեցին սոցիալական և քաղաքական հակասությունները: Իշխանությունը Հոռմում գտնվում էր սենատորական դասի ձեռքում: Այդ հիմնականում հին նշանավոր տոհմերի հետնորդներն էին, բազմաթիվ հողերի, տների, ստրուկների տերեր, շատ կլիենտների՝ վարձակալների, ազատարձակների, ամեն տեսակի «փոքր մարդկանց» պատրոններ, որոնց նրանք հովանավորություն էին ցույց տալիս և որոնք դրա համար պետք է կազմեին նրանց շքախումբը և աջակցեին նրանց ժողովրդական ժողովում: Ազգեցության, իշխանության և պրովինցիաներից ստացվող

հկամուտների համար մղված պայքարում սեմատորների հետ մրցակցում էր Հոռմի երկրորդ առանձնաշնորհչյալ դասը՝ հեծյալները, որն հիմնականում ընդգրկում էր խոշոր գործարարների, կապալառուների, վաշխառուների, ինչպես նաև հողի սեփականատերերի, երբեմն ոչ պակաս նշանակալի, քան սեմատորները: Այդ երկու դասերը չէին ցանկանում ոչ մեկի հետ բաժանել իրենց առանձնաշնորհումները: Երբեմնակի իրենց միջաւայրը ներթափանցած «նոր մարդկանց», այլ դասերից ելածներին, նրանք ծուռ էին նայում, խոշոր հողատիրությունը հօգուտ շունկոր քաղաքացիների, իսկ հօգուտ պրովինցիարնականների սեմատոր-կուսակալների և հեծյալ-գործարարների կամայականությունը սահմանափակելու բոլոր փորձերը հանդիպում էին նրանց կատաղի դիմադրությանը:

Մինչդեռ ավելի ու ավելի էր առաջ մղվում սոցիալական մի նոր ուժ՝ իտալիկական քաղաքների, գաղութների ու մունիցիպալիաների բնակիչները և Հոռմի բնակչության միջնախավերը: Դրանք մանր և միջին կալված վիլանների տերերն էին, որոնց տնտեսութունները այն ժամանակներում առավել առաջավոր էին ըստ նրանցում կիրառվող գործիքների, հողի մշակման մեթոդների և ստրկական աշխատանքի կազմակերպման: Սեմատական կառավարությունը գնալով ավելի նվազ էր ի դորու լինում ապահովելու այդ ստրկատերերի համար նրանց ստրուկների հնազանդությունը: Ստրուկները փախչում էին, անցնում էին Հոռմի թշնամիների կողմը, դավադրություններ ու խոռվություններ էին կազմակերպում, որոնք ամենաբարձր զորությանն հասան Սպարտակի մեծ ապստամբության ընթացքում: Ստրուկների դիմադրությունը ճնշելու համար «տնական» միջոցները անբավարար էին դառնում, իսկ ընդհանուր միջոցառումների համար սեմատական պետական ապարատը չափից դուրս թույլ էր: Երկպառակտչական պայքարում հանուն իշխանության՝ հարուստ սեմատորները ոչ հազվադեպ իրենք էին զինում իրենց ստրուկներին: Շարքային ստրկատերերը գնալով ավելի ու ավելի էին օպոզիցիայի դիրք գրավում գոյութուն ունեցող կարգի նկատմամբ:

Կտրուկ սրվում էին հակասությունները նաև ունևորների ու ազատ շքավորության միջև: Աղքատությունը, ծանր պարտապանությունը և «ազնվածիներին» արհամարհական վերաբերմունքը «խաժամուժի» նկատմամբ առաջ էին բերում Հոռմի պլեբսի գրեթե անընդմեջ հուզումներ: Ժողովուրդը պահանջում էր քաղաքական կարգի դեմոկրատականացում, պարտքերից հրաժարում, շունկոր քաղաքացիների օժտում հողով, բայց բարելավման հասնել չէր հաջողվում: Չքավորության համար կարիքից դուրս գալու միակ ելքը զինվորական ծառայութունն էր: Թագմաավարից և վարձատրությունից զատ այն հող ձեռք բերելու հույս

էր տալիս՝ մինչև օրինական պաշտոնաթողութիւնն ծառայած վետերանը բաժնեհող էր ստանում: Վետերաններին հող պետք է բաժին հաներ այն զորավարը, որի հրամանատարութեան տակ նրանք ծառայել էին, իսկ դա սովորաբար նրան հանգեցնում էր բախման սենատի հետ, որը շէր ցանկանում հող տրամադրել պաշտոնաթող զինվորներին: Դրանով իսկ իտալիական շքավորութեան շահերը սերտորեն միահյուսւում էին զորքի շահերին՝ այն քաղաքական գործիչը, որի ծրագիրը ձեռք էր տալիս Հոռմի և իտալիական պլեբսին, վայելում էր զինվորների սերը, որոնք պատրաստ էին մարտնչել հանուն նրա շահերի:

Այդպես հոռմեական աշխարհի ամենատարբեր խավերը միավորվեցին սենատի իշխանութեան դեմ մղվող պայքարում: Նրանք հաղթանակ ապահովեցին Հուլիոս Կեսարին պոմպեոսականների դեմ պատերազմներում. այնուհետև Կեսարի մահից հետո իշխանութիւնը հափշտակած եռապետներ Օկտավիանոսին, Անտոնիոսին և Լեպիդոսին՝ հանրապետականների դեմ. և, վերջապես, Օկտավիանոսին՝ Անտոնիոսի դեմ նրա վերջին պատերազմում:

Քաղաքացիական պատերազմների ելքից առավելապես շահած դուրս եկան Իտալիայի միջին հողատերերն ու ստրկատերերը: Երեք հարյուր հազար զինվոր եռապետներից և Օգոստոսից հողամասեր ստացան դրանց մշակման համար անհրաժեշտ ստրուկներով ու գործիքներով հանդերձ: Ստրուկների շարժումները կանխելու և անհնազանդներին սարսափեցնելու համար միջոցներ ձեռք առնվեցին: Ստրուկներից շատերին, որոնք փախել էին քաղաքացիական պատերազմների ժամանակ, Օգոստոսը վերադարձրեց տերերին կամ մահապատժի ենթարկեց: Նրա ստեղծած ոստիկանական զորամասերը պիտի կարգ ու կանոն պահպանեին Հոռմում և Իտալիայում: Նրա նախաձեռնութեամբ օրենք հրապարակվեց, որի համաձայն տիրոջ բռնի մահվան դեպքում նրա տանը եղած բոլոր ստրուկները մատնվում էին խոշտանգման և մահապատժի: Այդ ամենը նպաստեց իտալիական ստրկատիրական տնտեսութեան և իտալիական քաղաքների ծաղկմանը: Քաղաքային մագիստրատները և քաղաքային խորհրդի անդամները, որոնք ընտրվում էին տեղական ունևոր հողատերերից, աստիճանաբար կազմում էին դեկուրիոնների հատուկ դաս, որը գրավում էր երրորդ տեղը սենատորներից ու հեծյալներից հետո: Դեկուրիոններից առավել հարուստներին ու ականավորներին Օգոստոսը մտցնում էր հեծյալների դասի մեջ. նրա հետնորդները նրանց համար ճանապարհ բացեցին և՛ դեպի սենատ:

Կայսրութեան հաստատումը շահավետ դուրս եկավ նաև պրովինցիալ բնակ ստրկատերերի համար: Արդեն Կեսարը, իսկ նրա ետևից նաև

հռապետները լայնորեն քաղաքացիության իրավունք էին բաշխում և
յանազան արտոնություններ շնորհում պրովինցիալ քաղաքներին և
առանձին անձանց, ովքեր օգնել էին նրանց քաղաքացիական չորիվների
ժամանակ: Կեսարի խիստ օրենքները պատժում էին պրովինցիաների
կուսակալների շարաշահումները: Շատ պրովինցիաներում, ինչպես և
Իտալիայում, տեղի ունեցավ հողային սեփականության որոշ վերաբաշ-
խում՝ հանրապետականների կողմնակիցներին պատկանող խոշոր կալ-
վածները բռնագրավվեցին և բաշխվեցին գաղութարնակների և վարձա-
կալների միջև: Բոլոր այդ միջոցառումները, ինչպես և ի վերջո հաստատ-
ված համեմատական խաղաղությունը, նպաստեցին պրովինցիաներում
գյուղատնտեսության, արհեստների, առևտրի, շինարարության արագ
վարգացմանը, հելենիստական և հռոմեական կուլտուրայի տարածմանը:
Հատկապես արագ հռոմեականացան Իսպանիայի հարավ-արևելյան
մարզերը, հարավային և կենտրոնական Գալլիան: Մ. թ. I դարի սկզբից
սկսում են սենատ ընդունել Իսպանիայի տեղաբնիկների, Կլավդիոսի
ժամանակներից՝ գալլերի. մի փոքր ավելի ուշ սենատում հայտնվում են
նաև արևելյան պրովինցիաներից ելած մարզիկ:

Իսկ պլեբսին հանրապետության անկումը, ըստ էության, ոչինչ
չտվեց: Արդեն Կեսարն էր խաբել նրա սպասելիքները, սոսկ աննշան շա-
փով թեթևացնելով պարտապանների դրությունը և ցրելով կուլեգիումնե-
րի (միություններ, որոնք միավորում էին մեկ պրոֆեսիայի տեր մարդ-
կանց, հարևանների և այլն) մեծամասնությունը, որոնք քաղաքական
կյանքում մեծ դեր էին խաղում: Տիրերիոսի օրոք Հռոմում դադարում է
ժողովրդական ժողովի գումարումը. ժողովրդական ժողովները առանձին
դեր չէին խաղում նաև Իտալիայի քաղաքներում և պրովինցիաներում:
Կայսրերը և քաղաքների դեկուրիոնները հոգ էին տանում միայն այն
մասին, որպեսզի կարիքը ժողովրդին չհասցնի խռովությունների: Բազ-
մաթիվ կառույցները վաստակ էին տալիս արհեստավորներին ու օրա-
վարձու բանվորներին: Չունևորներին պետության միջոցներից հացա-
հատիկ, յուղ էր բաժանվում: Շքեղ հանդեսները և հյուրասիրությունները
պետք է ապահովեին ժողովրդի նվիրվածությունը տիրակալներին: Դրա
հետ մեկտեղ պլեբսի կյանքը խիստ վերահսկողության տակ էր դրված:
Կուլեգիումներ կարելի էր ստեղծել սոսկ հատուկ թույլտվությամբ և բարձ-
րաստիճան անձանց հսկողության ներքո, որոնց կուլեգիումների անդամ-
ները «ընտրում էին» իրենց պատրոններ: Պանդոկներում, որտեղ սովո-
րաբար հավաքվում էր շքավորությունը, արգելված էր եփված կերակրի
վաճառքը, որպեսզի այցելուներն այնտեղ երկար չմնային: Կառավարու-
թյան գործակալները զեկուցում էին ականջ դրած խոսակցությունների

մասին, բացահայտում էին դժգոհներին: Առանձնապես ծանր էր սյու-
դացիների դրուժյունը, որոնք չէին օգտվում անգամ այն առավելություն-
ներով, որոնք ուներ քաղաքային պլեբսը: Պրովինցիալներում նրանց քշում
էին վատ հողերը, նրանց ուսերին էին դնում հարկերի ու պարհակների
հիմնական ծանրությունը: Իտալիայում շատերը կորցնում էին իրենց
հողամասերը, դառնում էին վարձակալներ և տառապում էին հողատերե-
րին ու վաշխառուներին տալիք մշտական պարտքերից:

Այսպիսով, նախ վարչակարգին հաղթանակ ապահոված սոցիալա-
կան խմբերից, այդ հաղթանակի պտուղները քաղեցին իտալիական և
պրովինցիալական մանր և միջին ստրկատերերը, որոնք դարձել էին կայս-
րության իսկական հենարանը: Սակայն հանրապետության խորտակումը
ամենևին էլ միանգամից չկոտրեց սենատական ավագանու ընդդիմու-
թյունը, որը գեռես բավական ուժեղ էր իր ավանդույթներով, մեկուսա-
խմբակազմ ոգով, հարստությամբ, որը հին սենատորների մի մասը
կարողացել էր պահպանել, իսկ նորերի մի մասը ստացել էր հենց կայս-
րերից: Սոցիալական գեմագոգիայի և քաղաքական կոմպրոմիսների մեծ
վարպետ Օգոստոսը դեռևս կարողանում էր սենատի հետ փոխհարաբե-
րությունների բավականին ճկուն ձևեր գտնել, մշտապես ընդգծում էր իր
հարգանքը նրա նկատմամբ, մատների արանքով էր նայում առանձին
սենատորների իրենց ինքնուրույնության մասին հայտարարելու երկշտ
փորձերին, չէր սրում հարաբերությունները՝ ճնշամիջոցների ենթարկելով
դժգոհներին և արտաքին նշաններով ցուցադրելով իր գերազանցույթու-
նը: Նրա հաջորդների՝ Հուլիոս-Վլավդիոսների դինաստիայի կայսրելի
օրոք դրուժյունը փոխվեց: Իտալիայում և պրովինցիալներում կրկին
սկսեց աճել խոշոր սենատորական հողատիրությունը: Ամրապնդվելով
տնտեսապես, սենատորները ձգտում էին ազելի գործուն մասնակցու-
թյուն ունենալ պետական գործերին: Գլուխ բարձրացրեց օպոզիցիան,
որը գովաբանում էր հանրապետության ժամանակները և հանուն նրա
ընկած Պոմպոսին, Կատոնին, Բրուտոսին: Ճիշտ է, նույնիսկ անցյալ
ժամանակների և քարքերի ամենաթափուկ ջատագովները հույս չունեին
վերականգնել հանրապետությունը: Այդ ուղղությամբ կատարված մի
քանի թույլ փորձերը քախվեցին զորքի փճռական զիմադրությանը: Դրա
համար էլ, չնայած հանրապետական Ֆրագաբանությունը, սենատական
օպոզիցիայի իրական նպատակն էր աջակցել տիրակալի դահ բարձրաց-
նալ, որը քիովի կախված կլիներ սենատից և կպահպաներ սենատի հա-
մար այն նույն բացառիկ դրուժյունը, որպիսին այն ուներ հանրապետու-
թյան օրոք: Հուլիոս-Վլավդիոսների ժամանակների սենատորները ամ-
բողջ զարթույթով խոչընդոտում էին իտալիկների և պրովինցիալական

րի իրավունքների ընդլայնմանը, թեև նրանցից շատերի հայրերն իրենք էին ելել իտալիկական քաղաքներից. նրանք անհողգողդ խստություն էին պահանջում բոլոր ստորինների նկատմամբ, լինեին դրանք ստրուկներ, հումեական պլեբսը թե պրովինցիաբնակները: Դժգոհ ավագանին գործում էր ամենաբազմազան եղանակներով, սկսած անստորագիր պամֆլետներից կայսրերի և նրանց պալատականների դեմ և վերջացրած դավադրություններով՝ կայսրին սպանելու և իշխանությունը սենատի գրածոյին հանձնելու նպատակով, կամ զորքերի մեջ խռովություն բարձրացնելով:

Օպոզիցիային կայսրերը պատասխանում էին ահաբեկությամբ: Արդեն Տիբերիոսը վերականգնեց «հումեական ժողովրդի մեծությունը վիրավորելու մասին» հնամենի օրենքը, որը երբեմնի պատժում էր պետական դավաճանությունը, իսկ այժմ ուղղված էր բոլոր նրանց դեմ, ովքեր բանիվ կամ գործով վիրավորում էին կայսեր մեծությունը: Ըստ այդ օրենքի մատնություններ էին ընդունում նույնիսկ մեղադրվողի ազատարձակներից ու ստրուկներից, որը հակասում էր ստրկատիրական հասարակության բոլոր ավանդույթներին և տերերին մշտական սարսափի մեջ էր պահում: Մատնիչները շուտ պարգև էին ստանում այն անձի բռնագրավված ունեցվածքից, ով մերկացվել էր կամ կասկածվել կայսեր մասին անհարգալից կարծիքի, կախարգության, դավադրության մեջ: Մեղավորների հետ կործանվում էին բազմաթիվ անմեղներ, և իհարկե ոչ միայն ավագանուց: Դատապարտվածների ունեցվածքը մտնում էր գանձարան, որը աստիճանաբար միաձուլվում էր կեսարների անձնական ունեցվածքին, որոնք դարձել էին կայսրության խոշորագույն հողատերերը, և որը զորեղացնում էր նրանց դիրքերը ավագանու դեմ մղվող պայքարում: Սենատը գրեթե լիովին հեռացված էր պետական գործերին մասնակցություն ունենալուց: Բոլոր գործերը վարում էր կայսրերի ստեղծած նոր բյուրոկրատական ապարատը, որտեղ մեծ դեր էին խաղում կայսերական ազատարձակները: Նրանցից շատերը գործունյա և ընդունակ մարդիկ էին, բայց էնեոսի հպարտ «սերունդները» չէին կարողանում հաշտվել այն նշանակության հետ, որպիսին ձեռք էին բերել պետության մեջ նախկին ստրուկները: Հսկայական իշխանություն ստացան նաև սովորաբար «նոր մարդկանցից» նշանակվող պրետորականների՝ կայսրերի անձնական թիկնազորի, որը ստեղծել էր Օգոստոսը և ուժեղացրել Տիբերիոսը, պետերը: Պրետորականները ոչ միայն կեսարների կամքի գործադրիչներն էին, դժպոհների դեմ պայքարում նրանց գործիքը, այլև հաճախ իրենք էին կայսրերին գահ բարձրացնում կամ սպանում: Տիբերիոսի ամենազոր ժամիշխան, պրետորականների պրեֆեկտ

Սեյանոսը ինքը փորձեց կայսր դառնալ, սոսկ ուժերի մեծ լարումով Տիրբերիոսին հաջողվեց հաղթել այդ հակառակորդին, որը շատ ավելի վտանգավոր էր, քան սենատի բոլոր դրածոները:

Կեսարների քաղաքականությունը պաշտպանող շրջանների և սենատական ավագանու միջև բախումը առավելագույն սրության հասավ Ներոնի օրոք: Այն խորանում էր պրովինցիաբնականների դժգոհությամբ: Ժողովուրդը տառապում էր հարկերի ծանրությունից և կուսակալների դեռևս չվերացված շարաշահումներից. վերնախավը ձգտում էր հասնել ավելի արդյունավետ մասնակցություն կայսրության քաղաքական կյանքում հոռմեացիների և իտալիկների հետ մեկտեղ: Պրովինցիաներում տեղական ավագանու հետնորդների ղեկավարությամբ առանձին ապրստամբություններ բռնկում էին ամբողջ I դարի առաջին կեսի ընթացքում: Ներոնի օրոք դրանք սպառնալի բնույթ ընդունեցին: Ապստամբեցին Բրիտանիան ու Հրեաստանը, այնուհետև Ներոնից զատվեցին Իսպանիան ու Գալլիան, որտեղ կայսր ընտրվեց Գալբան: Միաժամանակ ապստամբություն բարձրացրեցին մի քանի գալլական և գերմանական ցեղեր Ցիվիլիսի գլխավորությամբ: Սկսվեց քաղաքացիական պատերազմ, որին գործուն մասնակցություն ունեցան սահմանապահ զորքերը, որոնք զրգոհ էին պրետորականների արտոնյալ դրությունից: Ներոնի տապալումից և արագ կերպով միմյանց փոխարինած Գալբայից, Օտոնից և Վիտելլիոսից հետո իշխանության գլուխ անցավ իլլիրիական առավել զորեղ բանակի կողմից առաջ քաշված Վեսպասիանոսը:

Վեսպասիանոսը և նրա որդիները (այսպես կոչված Փլաբիոսների հարստությունը) հաշվի առան 60-ական թվականների վերջի ճգնաժամի դասերը: Նրանց կառավարման ժամանակից պրովինցիաբնակ ստրկատերերը վերջնականապես ձուլվեցին իտալիկների հետ մեկ միաձույլ տիրապետող դասակարգի մեջ: Վեսպասիանոսը համալրեց սենատը նոր մարդկանցով, որոնք ելել էին իտալիկական մունիցիպալիտետներից, ինչպես նաև պրովինցիաների բնակիչներից: Փլաբիոսների կառավարման վերջում սենատում հին ավագանին կազմում էր մեկ ութերորդ մասից ոչ ավելին: Փլաբիոսները լայնորեն բաշխում էին նաև քաղաքացիության իրավունք: Այսպես, նրանց օրոք Իսպանիայի բոլոր քաղաքները ստացան լատինական իրավունք, որը մուտք էր բացում դեպի հռոմեական քաղաքացիություն: Հռոմեական քաղաքացիություն էին ստանում նաև պրովինցիաների բնակիչներից նրանք, ովքեր լրացրել էին ծառայության ժամկետը բանակի օժանդակ զորամասերում: Բացի այդ, վետերաններին շնորհվեց ազատումն տուրքերից, անմաքս առևտուր և ուրիշ արտոնություններ, իսկ Դոմիցիանոսը մեկ երրորդով բարձրացրեց զինվորնե-

րի վարձատրութիւնը: Այժմ վետերանները, դառնալով առանձնաշնորհ-
յալ հողատերեր իրենց պրովինցիաներում, ոչ հազվադեպ ընկնելով դե-
կորիոնների թիվը, դառնում են հոռմեական քաղաքականութեան, հոռ-
մեական մշակույթի և հոռմեական ապրելաձևի հուսալի և նվիրված տա-
րածողները ցեղակիցների շրջանում: Պրովինցիաների սեփականատերե-
րի հաշտեցումը Հոռմի հետ, վերջապես, լիովին ձեռք է բերվում: Թե
ինչպիսին էր նրա բազան, վառ կերպով ցույց է տալիս Ցիվիլիսի ապրս-
տամբութիւնը ճնշած զորավար Պետիլիոս Ցերեալոսի ճառը, ուղղված
գալլական ցեղերի ներկայացուցիչներին: «Դուք ինքներդ,— ասում էր
նա,— հաճախ հրամայում եք մեր լեզեոններին, դուք ինքներդ եք կառա-
վարում պրովինցիաները: Մենք ձեզանից առանձին ոչինչ չունենք... չէ՞
որ հոռմեացիներին վտարելուց հետո— որից թող աստվածները մեզ հե-
ռու պահեն— ոչ մի այլ բան սեղի չի սուննա, եթե ոչ բոլոր ժողովուրդ-
ների պատերազմներ միմյանց միջև... Բայց ամենամեծ վտանգը ձեզ
կսպառնա, ովքեր ունեն ոսկի ու հարստութիւն՝ ամեն մի պատերազմի
գլխավոր խայծը: Ուստի և սիրեք ու պատվեք խաղաղութիւնն ու Հոռմը,
որը միևնույն իրավունքի զորութեամբ պատկանում է պարտվածներին և
հաղթածներին»:

Նշանավոր Պլուտարքոսը, որը, ի միջի այլոց, ուղեցույց էր կազմել
իր հայրենակից հույներից նրանց համար, ովքեր որ մագիստրատական
պաշտոններ կգրավեին հայրենի քաղաքներում, գրում էր, որ քաղաքները
այնքան ազատութիւն ունեն, որքան նրանց տալիս են կայսրերը, և որ
ավելին ունենալ պետք էլ չէ: Եթե գերագույն ուժը (այսինքն՝ Հոռմը)
չսանձահարեր և չպատժեր «վատերին», քաղաքները կկործանվեին խառ-
նակութիւններից ու խռովութիւններից: Նրա կարծիքով, այժմ, հրք ամե-
նուր թագավորում է խաղաղութիւնն ու անդորրը, հարկ չկա գրգռելու հոռ-
մեական կառավարութեանը ինքնակամութեամբ ու ավելորդ ինքնուրույ-
նութեան հավակնութիւններով, հարկ չկա ժողովրդին հուզել հույների
անցյալ մեծ գործերի մասին ճառերով՝ ավելի լավ է հիշեցնել նրան
ապստամբութիւնների ու երկպառակութիւնների կործանարար հետե-
վանքների մասին:

Այն միտքը, թե ուժեղ իշխանութեան ներքո անդորրը ավելի լավ է,
քան աղատութիւնը, որն իր հետ բերում է «խաժամուժի ինքնակամու-
թիւն», ընդհանուր է դառնում պրովինցիալ հասարակական մտքի շատ
ներկայացուցիչների համար: Նրանց համար խոսքը արդեն գնում է ոչ
թե հանրապետութեան ու միապետութեան միջև ընտրութիւն կատարելու
մասին— վերջինս անվերապահորեն ընդունվում էր որպես կառավարման
լավագույն ձև— այլ այն մասին, թե ինչպիսին պետք է լինի լավ միա-

պետք ի տարրերութիւն վատի՝ տիրանի: «Ճշմարտացի թագաւորական իշխանութեան» և «տիրանիա» թեմայով շատ էր գրում հայտնի հոետոք և չիլիսոփա Դիոն Քրիսոստոմոսը: Ըստ նրա, Իսկական միապետը, աստվածների թագաւոր Զևսի իսկ ընտրյալը, — մարդկանցից ամենախմաստունը, ամենալաւքը և ամենաարդարացին է: Նրա գլխաւոր հոգսը հպատակների բարօրութեանն է: Նա չի յուրացնում ուրիշի ունեցւածքը — առանց այդ էլ ըստ էութեան ամեն ինչ նրան է պատկանում, — իրեն ճոխութեամբ չի շրջապատում, հասարակ ու մատչելի է: Դրա համար նա վայելում է ժողովրդի երկյուղած սերը և աստվածների հովանաւորութիւնը: Ընդհակառակն, տիրանը միայն իր մասին է հոգ տանում, անհագուրդ կերպով ազահ է, դաժան. նա շրջապատում է իրեն պահակախումբով, բայց և այնպես ապրում է մշտնջենական սարսափի մեջ. աստվածները նրանից երես են դարձնում, հպատակները ատում են:

Աննատի կաղմի փոփոխութեանը զուգընթաց, փնչպես և սպառնացող իրադարձութեանների, ապստամբութեանների ու քաղաքացիական կռիւների ազդեցութեամբ, որոնք նշանաւորեցին Ներոնի կառավարման վերջը, այդ նույն գաղափարները տարածւում են նաև Հռոմի սենատական ավագանու շրջանում: Հանրապետական գաղափարները խոնարհում են, նրանց փոխարինում է «լավ» տիրակալի իդեալը: Մասամբ գրան համապատասխանում էր Վեսպասիանոսը, բայց նրա և սենատի միջև տարակարծութեան մի կարևոր կետ կար՝ Վեսպասիանոսը ցանկանում էր իր ժառանգներ դարձնել որդիներին, իսկ սենատը երկյուղ էր կրում, որ ժառանգական միապետը իրեն շափից դուրս անկախ կզգա, և գերադասում էր, որպէսզի կայսեր հաջորդը դառնա այնպիսի մի մարդ, որը որգեզրված կլինի նրա կողմից սենատի հովանութեամբ և, հետևաբար, հարկադրված կլինի հաշվի նստել սենատի հետ: Բախումը սրվեց Դոմիցիանոսի կառավարման ժամանակ: Նորից ծայր առան դավադրութիւններ, դատաւարութիւններ՝ մեծութեանը վիրավորելու, օտարերկրյա և արգելված կրոնների հարելու մեղադրանքով, մահապատիժներ: Կրկին գլուխ բարձրացրեցին մատնիչներն ու շողոքորթները: Դժգոհների աչքում Դոմիցիանոսը ներկայանում էր որպես տիրանի ավարտուն նմուշ, և զուր չէ, որ նա ծայր անվստահութեամբ էր վերաբերվում քաղաքական թեմաներով գրող փիլիսոփաներին, որոնցից շատերը մահապատժի ենթարկվեցին, մյուսները, այդ թվում և Դիոն Քրիսոստոմոսը, պատրվեցին:

Երբ 96 թ. հերթական դավադրութեան հետևանքով Դոմիցիանոսը ապանակեց, սենատի համաձայնութեամբ կայսր հռչակվեց առաջին կայսրերի ժամանակ առաջ քաշված ազնվատոհմ մի ընտանիքի պատկանող

ձերո՞ւմի ներվան: Նճրվան վերադարձրեց աքսորվածներին ու բանտարկվածներին, տերերին ու նրանց ժառանգներին բաշխեց Դոմիցիանոսի օրոք բռնագրավված ունեցվածքը: Սակայն շուտով առաջին խանդավառութիւնները մարեցին՝ չէ որ սենատորների հսկա մեծամասնութիւնը ինքն էր առաջ մղվել «տիրանի» կառավարման մեջ և, գործուն կամ կրավորական, մասնակցել նրա գործերին: Մատնիչների և հանգուցյալ կայսեր աջակիցների դեմ սկսված շարժումը մեկ վարկ չէր միայն, որ կարող էր կործանել: Դրա հետ մեկտեղ, Դոմիցիանոսին սիրող զորքերում հասունանում էր դժգոհութիւնը: Անցյալը, շահագրգռված կողմերի լուռ համաձայնութեամբ, մոռացութեան տրվեց, և մշակվեց բոլորին բաւարարող կոմպրոմիս: Սենատի հավանութեամբ և ի բավականութիւն իրանակի, ներվան որդեգրեց հայտնի զորապետ, Վերին Գերմանիայի կուսակալ Ուլպիոս Տրայանոսին, որը և շուտով, ներվայի մահից հետո, դարձավ կայսր:

Առաջին պրովինցիալը կեսարների գահի վրա՝ Տրայանոսը, ծագում էր Իսպանիայից: Նոր կայսրը և նրա մերձավորագույն հետնորդները՝ Ադրիանոսը, Անտոնինոս Պիոսը և Մարկոս Ավրելիոսը (այսպէս կոչված Անտոնինոսների դինաստիան) համարյա լիովին համապատասխանում էին «իդեալական կառավարչի» մասին սենատակա՞ն նոր ավագանու սլատկերացմանը: Քաղելով պահպանողական հոռմեական արիստոկրատիայի կործանմանը, պրովինցիաբնակ ստրկատերերի բարձրացմանը և կայսերական իշխանութեան ամրապնդմանը ուղղված Հուլիոս-Վլավդիոսների և Փլաբիոսների քաղաքականութեան պտուղները, նրանք այժմ կարող էին հրաժարվել ճնշամիջոցներից և, Տակիտոսի խոսքերով, «հաշտեցնել միանձնյա իշխանութիւնը ազատութեան հետ», հնարավորութիւն տալով գեթ տիրապետող դասակարգին «մտածելու, ինչ ուզում է, և ասելու, ինչ մտածում է»,— իհարկէ, որոշակի շրջանակներում: Ե՛վ ներվան, և՛ Տրայանոսը, ընդունելով իշխանութիւնը, երդվեցին մահապատժի չենթարկել և ընդհանրապէս չպատժել սենատորներին առանց դատաստանի և սենատի համաձայնութեան: Նրանք, ինչպէս և ժամանակին Օգոստոսը, ամենևին չնվազեցնելով իրենց իշխանութիւնը, սենատին հարգանք էին մատուցում, չէին փորձում սահմանափակել մասնավոր հողատիրութեան աճը, ամեն կերպ ընդգծում էին իրենց համեստութիւնն ու մատչելիութիւնը: Ստրուկներից այլևս մատնութիւններ չէին ընդունվում, դադարեցին մեծութեանը վիրավորելու մեղադրանքները: Առաջին Անտոնինոսները մշտապէս ընդգծում էին, որ «տիրանիային» մեկընդմիշտ վերջ է տրված, և ամեն կերպ հակադրում էին իրենց Հուլիոս-Վլավդիոսների և Փլաբիոսների դինաստիաների կեսարներին, սլատ-

վելով սոսկ Օգոստոսի և, մասամբ, Վեսպասիանոսի և Տիտոսի հիշատակը: Իբրև «լավ թագավորներ», նրանք նույնիսկ ընդունում էին, իհարկե տեսականորեն, տիրանի դեմ ապստամբելու հպատակների իրավունքը: Համընդհանուր խանդաղատանք առաջ բերեցին Տրայանոսի խոսքերը, որոնք ասաց պրետորականների նոր պրեֆեկտին թուրը՝ նրա իշխանության նշանը, հանձնելիս. «վերցրու այս թուրը, որպեսզի օգտվես նրանից իմ պաշտպանության համար, եթե ես լավ կառավարեմ, և որպեսզի օգտվես նրանից իմ դեմ, եթե ես վատ կառավարեմ»: Կայսրության հավերժության և կայսեր բարօրության համար սովորական ամենամյա աղոթքի տեքստում նոր բանաձև մտցվեց. «եթե նա լավ և ի շահ հանուրի կկառավարի»:

Տրայանոսի ժողովրդականությանը շատ նպաստեցին նրա ռազմական հաջողությունները: Հաղթանակը դաքիացիների դեմ, հաղթանակամպանիան կայսրության վաղեմի հակառակորդների՝ պարթևների դեմ մի տեսակ ասես վերածնում էին արդեն խամրել սկսած «անպարտելի» հռոմեական զենքի փառքը: Սակայն Տրայանոսի կառավարման վերջում հաճախացած ապստամբություններն ամբողջ Արևելքում ստիպեցին նրա հաջորդ Ադրիանոսին հրաժարվել պարթևներից զավթված տարածքներից և հարձակողական քաղաքականությունից վճռականապես անցնել պաշտպանականի: Բայց հարուստ Դաքիան, որն իսկույն կեթ ողողվեց ամբողջ կայսրությունից եկած նախաձևնող գործարար մարդկանցով, մնաց հռոմեական պետության համակարգում: Ե՛վ Տրայանոսը, և՛ Ադրիանոսը մեծ հոգատարություն էին ցուցաբերում պրովինցիաների և պրովինցիալ քաղաքների բարեկեցության նկատմամբ: Ծիշտ է, նրանց ինքնավարությունը զնալով սահմանափակվում էր. հայտնի գրող, սենատոր Պլինիոս Կրտսերը, որին Տրայանոսը Բուֆանիայի կուսակալ էր նշանակել, պետք է հարցում կատարեր, կարելի է, որ Պրուսա քաղաքի բնակիչները նոր բաղնիք կառուցեն, թույլ կտա արդյոք կայսրը նոր հրշեջ խումբ կազմակերպել և տեղական դեկուրիոնները որչափ հյուրեր հրավիրելու իրավունք ունեն իրենց ընտանեկան հանդիսություններին: Բայց այդ մանրախնդիր խնամակալությունը առաջ չէր բերում քաղաքային վերնախավի գրգռվածություն: Անգամ երևութական ինքնուրու - նության կորուստը նրա աչքում լիովին փոխհատուցվում էր ժողովրդական շարժումների ճնշմամբ, քաղաքային կառույցների համար արվող շռայլ ընծայատվություններով, Ադրիանոսի օրոք մեծաքանակ ապառքների հրաժարումից և հեծյալական ու սենատական կարիերայի մուտք ստանալով, որն այժմ բաց էր Արևելքի ու Արևմուտքի ամենահարուստ և ազնվատոհմիկ պրովինցիալ բնակիչների առջև:

Կեսարների հատուկ հովանավորութեամբ սկսեց օգտվել տիրապետող դասակարգի հետ սերտորեն կապված մտավորականութունը: Ադրիանոսը, փայլուն և բազմակողմանի կրթութեան տեր մի մարդ, մեծ ուշադրութեամբ էր դրսևորում Աթենքի մշակութային կյանքի նկատմամբ, անձամբ հետաքրքրվում էր Աթենքի փիլիսոփայական դպրոցների շահագրգռութեաններով: Դեռևս երեկ հալածվող փիլիսոփաները, բանաստեղծները, գիտնականները այժմ հրավիրվում էին արքունիք որպես բարեկամներ ու զրուցակիցներ: Ճարտասանութեան և փիլիսոփայութեան ուսուցիչները կառավարութեանից վարձատրութեամբ և զանազան առանձնաշնորհումներ էին ստանում:

Դոմիցիանոսի բռնակալական վարչակարգից բոլոր դժգոհ անձինք այժմ կարող էին կամեցածին շափ հեղել իրենց վրդովմունքը, վստահ, որ իրենց ստեղծագործութեանները ամենաբարեհաճ ընդունելութեամբ կըտնեն: Պլինիոս Կրտսերը կոնսուլական ճառում Դոմիցիանոսի ժամանակները հակադրում էր Տրայանոսի երջանիկ դարին, որը հոռմեացիներին էր ի վերուստ առաքել Յուպիտերը: Յուվենալը իր թույնով ու մաղձով տոգորված սատիրաներում գծում էր անցյալ դարի հոռմեացիների այլասերման մոայլ պատկերը՝ ժողովուրդ, որը սոսկ հացի ու հանդեսների է ծարավ, բանաստեղծներ և գիտնականներ, որոնք քծնում են հարուստ տգետներին. անառակ ու դաժան կանանց, բախտագյուտների, որոնք ճանապարհ են հարթել անազնիվ ուղիներով. սենատ, որն անմրմունջ ստորացվում է մտազար բռնապետների կողմից: Վիթխարի ուժով է նշավակել անցյալ ժամանակների սարսափները Տակիտոսը: Հավասարապես նրա զայրույթն ևն հրահրում և կիսախելագար, իշխանութեամբ, ոսկով ու արյամբ արբած կեսարները, և ստրկամիտ սենատորները, մեծ նախնիների հետնորդները, նախնիներ, որոնք փառաբանված էին իրենց խստաշունչ առաքինութեամբ: «Օ՛, մարդիկ, ստեղծված ստրկութեան համար», — բացականչում է Տիբերիոսը, դուրս գալով սենատից:

Ուրիշների թվում իր աշխատութեամբ հանդես եկավ նաև Սվետոնիոսը: Հեծյալների դասին պատկանող լեգեոնային տրիբունի որդի, վաղ հասակից իրեն գիտութեանը և գրական գործունեութեանը նվիրած, Պլինիոս Կրտսերի և ամենաականավոր պրետորական պրեֆեկտներից Սեպտիցիոս Կլարոսի բարեկամ, Ադրիանոս կայսեր օրոք առժամանակ գրագրութեան գծով խորհրդական Սվետոնիոսը ամբողջութեամբ բաժանում էր առաջին Անտոնինոսների ժամանակ տիրապետող հայացքները: Քաջածանոթ իր նախորդների աշխատութեաններին և պետական դիվանների նյութերին, նա, օժտված շիներով Տակիտոսի հանճարով, իր առջև

նպատակ էր գրել հավաքել այն լավը և վատը, ինչ կարելի էր ասել, նրա տեսակետով, Հոլիոու-Կլավդիոսների և Փլաթիոսների տոհմերի կեսարների մասին: Իբրև իր ժամանակի և իր շրջապատի մարգ, նա համոզված էր, որ կայսրության ճակատագիրը ամբողջովին կախված է տիրակալների բարի կամ չար կամքից, և որ նրանց կենսագրության կամ բնավորության բոլոր մանրամասները ամենակենսաթրթիռ հետաքրքրություն են ներկայացնում:

Իր հերոսների ընդհանուր գնահատականի մեջ Սվետոնիոսը ինքնատիպ չէ: Առ նրա ժամանակները արդեն ձևավորվել էին նրանց ավանդական կերպարները, որոնք, չնայած կենդանության օրոք այդ կայսրերի հասցեին շոայլված անչափ շողոթորթությանը, ավելի շատ ծաղրանկարներ, քան գիմանկարներ էին հիշեցնում: Բանն այն է, որ կայսրերի մեծ մասը իշխանության գլուխ էր անցնում նախորդի բռնի մահվան հետևանքով: Զգտելով կայունացնել հրենց նախապես փոքր-ինչ երերուն գրությունը, նրանք կառավարման առաջին ամիսներին կամ նույնիսկ տարիներին սիրաշահում էին սենատին, հեռացնում էին նախորդ պրինցեպսի առավել ատելի մերձավորներին, պաշտոնապես, ինչպես Կալիգուլան, կամ կիսապաշտոնապես, ինչպես Ներոնը, դատապարտում էին նրա դաժանությունները և շարաշահումները և երդվում էին, որ կկառավարեն բոլորովին այլ կերպ: Իրենց մերձավորներին և խորհրդականներին նրանք սովորաբար ընտրում էին այն անձանց՝ թվից, ովքեր նախկինում հալածվել էին, և սրանք, ելք տալով անցյալ տարիների ընթացքում կուտակված շարությունը, ինչպես նաև կամենալով հաճոյանալ կառավարող կայսրին, ամեն կերպ սևացնում էին վերացված «բռնապետին»: Պալատի ամոթալի և արյունոտ գաղտնիքների վերաբերյալ բոլոր բամբասանքները և լուրերը, որոնք դեռևս երեկ սոսկ շշուկով էին հայտնվում ամենահռետարի և ամենամոտ բարեկամներին, հռչակվում էին ի լուր ամենքի, ըմբռնվում էին, մուծվում էին պատմության վերաբերյալ աշխատությունների, հուշագրությունների, սատիրաների մեջ: Այդպես էին ստեղծվում գրոտեսկային կերպարներ, որոնք-մտել են վաղ կայսրության և՛ հոռոմեական, և՛ նոր պատմագրության մեջ: Եվ միայն արքայուհիների մանրախույզ, քննադատությունը թույլ տվեց մեր ժամանակի պատմաբաններին վերանալ Տիրերիոսի, Կալիգուլայի և Ներոնի անձնական հատկություններից և հետևել պատմության ընթացքին, որը ամենևին կախված չէր նրանց կամքից:

Սվետոնիոսը, սակայն, ցանկանում էր ոչ միայն մերկացնել առաջին կեսարների արատները, այլև նշել նրանց, իր ժամանակակիցների

տեսակետով, դրական գծերը, անուղղակիորեն շողորթելի Տրայանոսին ու Ադրիանոսին և կենկրեստ օրինակներով մի տեսակ պատկերել «լավ տիրակալի» և «տիրանի» միջև եղած խոր տարբերության տեսությունը: Այսպես, Ադրիանոսի կառավարման սկիզբը նշանավորող հարձակողական քաղաքականությունից պաշտպանականի անցնելու վճռական շրջադարձի ազդեցությամբ Սվետոնիոսը ոչ միայն քիչ ուշադրություն է դարձնում պատերազմներին, որոնք գերազանցապես գրավում էին նախորդ անտիկ պատմագիրների ուշադրությունը, այլև դատապարտում է այն տիրակալներին, ովքեր սկսում էին պատերազմել առանց ծայր անհրաժեշտության, հավանություն տալով, ընդհակառակն, նրանց, ովքեր իմաստուն խաղաղասիրություն էին շրջապատում և շէին ձգտում նոր նվաճումների (Հուլ., 24. Օգ., 21, 48. Տիր., 37. Ներ., 13): Այդ իմաստով որոշ բացառություն արված է սոսկ յաքիացիների դեմ պատերազմների համար, ըստ երևույթին, Տրայանոսի հաղթանակների նշանակությունը ընդգծելու նպատակով (Հուլ., 44. Օգ., 21. Դոմ., 6): Դրա հետ մեկտեղ, համապատասխան այն ուշադրությանը, որ դարձնում էին Տրայանոսը և հատկապես Ադրիանոսը բանակի դրությունը, Սվետոնիոսը գովաբանում է այն կեսարներին, ովքեր գործի մեջ երկաթե կարգապահություն էին պահպանում, խստորեն պատժում հանցանք գործածներին և առաջ քաշում աչքի ընկած զինվորներին (Հուլ., 67. Օգ., 24—25. Տիր., 19. Վեսպ., 8): Սվետոնիոսը պրինցիպալների անպայման արժանիքն է համարում — և դրանում է նրա ժամանակի սենատական ավագանու գաղափարախոսության տարբերություններից մեկը I դարի արիստոկրատիայից — հոգատարությունը պրովինցիալների բարեկեցության մասին և կուսակալների նկատմամբ խստազույն վերահսկողությունը, օգնությունը պրովինցիալների քաղաքներին, ապառքների վերացումը, հոմեակական քաղաքացիության առատաձեռն բաշխումը, առավել արժանավոր պրովինցիալների մուծումը հեծյալների և սենատորների դասի մեջ: Ընդհակառակն, հարկերով պրովինցիալների ավելորդ ծանրաբեռնումը և նրանց նկատմամբ կատարվող անարդարությունները Սվետոնիոսը վճռականապես դատապարտում է (Հուլ., 54. Օգ., 46—47. Տիր., 32, 49. Վեսպ., 17. Դոմ., 9):

Պրինցիպալներին տված նրա բնութագրության մեջ խիստ կարևոր դեր է խաղում նրանց վերաբերմունքը դեպի սենատը: Գովասանքի են արժանանում այն կայսրերը, որոնք սենատորների նկատմամբ հարգանք են դրսևորել, վերաբերվել են նրանց ինչպես հավասարների, առանց ձևականության այցելել և ընդունել են նրանց, որոշ գործեր դրել են սենատի քննարկմանը, իրենց միջոցներից օգնել են ոչ իրենց մեղքով աղ-

քատացած սենատորներին, շեն դիմել զանգվածային մահապատիժների ու բռնագրավումների, ստրուկներից մատնագրեր շեն ընդունել և ընդհանրապես մատնիչներին շեն խրախուսել: Եվ ընդհակառակը, այն կայսրերը, ովքեր հետապնդել են սենատին, կոտորել սենատորներին, պահանջել ոչ չափավոր պատիվներ, տիրաններ են, ատելի ամեն մի կարգին մարդու: Այստեղ Սվետոնիոսի մոտ հատուկ տեղ է գրավում բռնագրավումների և մասնավորի հաշվին կայսերական ունեցվածքը մեծացնելու մյուս մեթոդների կենսական հարցը: Վատ պրինցեպսները հետապնդում են հարուստ մարդկանց, որպեսզի պատրվակ ունենան յուրացնելու նրանց ստացվածքը. պահանջում են, որպեսզի բոլոր փոքրիշատե կարողության տեր անձինք իրենց կտակեն կալվածների մի մասը, ունեզրկելով օրինական ժառանգներին, խլում են քաղաքներից ու ձեռնարկատերերից տարբեր արտոնություններն ու մենաշնորհները: Լավ տիրակալները, ընդհակառակն, ոչ միայն աչք չեն տնկում օտարի ունեցվածքին, այլև առատաձեռնորեն օգնում են կարիքավորներին և հոգ են տանում հպատակների բարեկեցությանը: Այսպես, օրինակ, Սվետոնիոսը 'Իոմիցիանոսի ծառայությունն է համարում նրա հրամանագիրը ի մասնավոր սեփականություն հանձնելու այն հողամասերը, որոնք առանց տիրոջ էին մնացել զաղութները վերացնելիս: Գովաբանում է նա նաև այն կայսրերին, որոնք զահ բարձրանալիս ընդհանուր ակտով հաստատում էին բոլոր այն շնորհումները, որոնք կատարել էին իրենց նախորդները (Օգ., 66. Տիբ., 49. Կալ., 38—42. Ներ., 32. Տիտ., 8. Դոմ., 9):

Առաջին Անտոնինոսների ոգով էր գնահատում Սվետոնիոսը նաև կայսրերի քաղաքականությունը հասարակ ժողովրդի, ազատարձակների և ստրուկների նկատմամբ: Այս հարցում և՛ Ներվան, և՛ Տրայանոսը, և՛ Ադրիանոսը նույն հայացքներին էին հետևում՝ չտալով ժողովրդին ոչ մի քաղաքական իրավունք, նրանք ջանում էին կանխել հնարավոր խռովությունները զանազան տնտեսական միջոցառումներով: Խոշոր միջոցներ առանձնացվեցին չքավոր իտալիկներին հողով օժտելու և նրանց փոքրահասակ երեխաներին օգնություն ցույց տալու համար: Այդ նույն նպատակով նույնպիսի (այսպես կոչված ալիմենտարային-պարուստադրամի) ֆոնդեր էին հիմնվում մասնավոր հարուստ սեփականատերերի կողմից պրովինցիալ քաղաքներում: Մեծ միջոցներ էին ծախսվում կառույցների և հանդիսախաղերի վրա: Այսպես, օրինակ, դաքիացիների դեմ տարած վերջնական հաղթանակի առիթով սարքված տոնակատարությունները 121 օր տևեցին: Դրա հետ միասին, կայսրերը ամեն կերպ ընդգծում էին իրենց համեստությունը և մատչելիությունը ցանկացած հասարակ քաղաքացուն: Ադրիանոսը հետիոտն զբոսնում էր Հռոմի փողոցներում, ան-

րունադրոսիկ կերպով գրուցելով հանդիպողների հետ: Պատմում են, որ իրրև թե մի անգամ, ցանկանալով ազատվել մի ինչ-որ պնդերես պառավ կնոջից, որը ձեռք չէր քաշում նրանից իր խնդրանքով, Ադրիանոսը ասել էր, որ ինքը հիմա նրա համար ժամանակ չունի և գնացել էր իր ճանապարհով: «Եթե դու ժամանակ չունես, կայսր մի եղիր»,— գոչել էր նրա ետևից պառավը: Ադրիանոսը ամոթահարվել էր, վերադարձել և պարզաբանել նրա գործը: Դրա համար էլ Սվետոնիոսի մոտ ընդգծվում է արժանավոր պրինցեպսների պարզութունը և մատչելիութունը, և նա անփոփոխ նշում է կառույցները, բաշխումները և հանդիսախաղերը, որոնք իրագործվում էին ինչպես լավ, այնպես էլ վատ կայսրերի կողմից: Այդ իմաստով վերջիններս առաջիններից տարբերվում էին նրանով, որ ժողովրդին սիրաշահում էին ոչ թե իրենց, այլ կողոպտված միջոցներով և առյուծի բաժինը մսխում էին քմահաճույքների, ճոխության ու անառակության վրա: Դրա հետ մեկտեղ Սվետոնիոսը հավանութուն է տալիս այն միջոցառումներին, որոնք ձեռք էին առնվում ոչ միայն խռովութունները ճնշելու, այլև պետության կողմից ճանաչում չգտած կրոնական ուսմունքների քարոզիչների դեմ կիրառվող ճնշամիջոցների համար, ուսմունքներ, որոնք հուղում էին ժողովրդին: Նա Կլավդիոսի ծառայութունն է համարում «ոմն Քրեստոսի դրդամբ» ապստամբած հրեաների վտարումը Հռոմից. իսկ Ներոնի՝ քրիստոնյաների, «նոր և չարամիտ սնապաշտության հետևորդների», մահապատիժը (Կլավ., 25. Ներ., 16):

Կայսերական ազատարձակները, որոնք այնքան զայրույթ էին առաջ բերել ավագանու շրջանում, շարունակում էին մեծ դեր խաղալ, բայց այժմ որոշ չափով քողարկված: Բյուրոկրատական ապարատի որոշ գրեխավոր պաշտոններում Ադրիանոսը սկսեց հեծյալների նշանակել: Պլինիոսը իր ներբողյանում հատուկ նշում էր, որ Տրայանոսը իր ազատարձակներին պատվով է պահում, բայց չի դնում բացառիկ դրության մեջ, և դրա համար էլ բոլոր բազաբացիները պատրաստ են մաքուր սրտով արժանին հատուցել նրանց ծառայութուններին: Մի զվարճապատում էր շրջում Ադրիանոսի արարքի մասին իր մերձավոր ստրուկներից մեկի նկատմամբ. տեսնելով, թե նա ինչպես է զբոսնում երկու սենատորների ընկերակցությամբ, կայսրը հրամայել էր նրան ապտակել և հաղորդել, որ նա այսուհետև չհամարձակվի իրեն հավասարի պես պահել մարդկանց հետ, որոնց ստրուկը դեռևս կարող է դառնալ: Անտոնինոսները մեկընդմիշտ հրաժարվեցին մատնագրեր ընդունել ստրուկներից, դադարեցնելով, այդպիսով, Պլինիոսի խոսքերով, «ստրկական պատերազմը», ազատելով տերերին «տնային մեղադրողներից» ունեցած սարսափից և

հարկադրելով ստրուկներին «հարգալիր և հնազանդ շինել»: Տրայանոսի օրոք նշանակալի շփով ուժեղացվեց նաև այն օրենքը, որը պատժում էր ստրուկներին տիրոջ սպանության դեպքում: Դրա հետ մեկտեղ, ստրուկների և ստրկատերերի միջև հակասությունների սրման կապակցությամբ, երկյուղ կրելով հնարավոր ապստամբություններից, Ագրիանոսը, ապա նաև նրա հաջորդները մի շարք միջոցներ ձեռք առան, որն ուղղված էր մի հայտնի շփով՝ տերերի կամայականության սահմանափակմանը՝ արգելվեց ստրուկներին սպանել առանց դատաստանի, նրանց ցմահ շղթայակապ պահել, արգելափակել էրգաստուլումներում՝ սուրկական բանտերում. Ագրիանոսը նույնիսկ հիմն դարով աքսորեց մի ազնվատոհմիկ մատրոնայի ստրկուհիների նկատմամբ շփից դուրս դաժան վերաբերմունքի համար: Համապատասխան արձագանքներ մենք գտնում ենք նաև Սվետոնիոսի մոտ: Նա կարող դատապարտում է այն կեսարներին, որոնք շփից ավելի իշխանություն են տալիս իրենց ազատարձակներին, ընդունում էին ազատարձակներին սենատորների թիվը և, հատկապես, խրախուսում ստրուկներին մատնություններ գրել տերերի մասին: Բայց նա գովասանական կարծիք է հայտնում ազատարձակների և ստրուկների նկատմամբ Օգոստոսի ողորմած վերաբերմունքի մասին (Օգ., 67) և Կլավդիոսի ծառայությունն է համարում նրա հրատարակած օրենքը, որի համաձայն տերերի կողմից լքված հիվանդ ստրուկները առողջանալու դեպքում դառնում էին ազատ (Կլավ., 25):

Սվետոնիոսը ոչ մի տեղ ուղղակի չի շոշափում գահաժառանգության հարցը, բայց, պատկերելով Կալիգուլայի, Ներոնի, Դոմիցիանոսի խելահեղություններն ու գազանությունները, նա ակնհայտորեն հարում է տիրապետող և, ի միջի այլոց, Պլինիոսի կողմից ձևակերպված մտքին այն կայսրերի քաղաքականության կործանարարության վերաբերյալ, որոնք փոխանակ ժառանգ ընտրեն կայսրության լավագույն մարդկանց թվից, նրան փնտրում էին իրենց ընտանիքի անդամների մեջ, կարծես թե նրանց առջև կանգնած էր անձամբ իրենց պատկանող հողերի և ստրուկների և ոչ թե թենաափ, ժողովրդի, զորքի և պրովինցիաների վրա իշխանություն կտակելու հարցը: Կայսերական իշխանության բնույթի վերաբերյալ իր ժամանակի կոնցեպցիային համապատասխան, Սվետոնիոսը, մերժելով պրինցեպսի իրավունքը իրեն անվանելու «աստված» և «տեր», ինչպես որ այդ իրենց թույլ էին տալիս Կալիգուլան և Դոմիցիանոսը, բայց և այնպես ընդունում է նրա աստվածային ծագումը: Կայսրերի ծնունդը և մահը նշանավորում են բազմապիսի հրաշքներ: Կայսրը, աստվածների ընտրյալը, ինքն էլ է հաղորդակցվում նրանց գերբնական ուժին, անկախ այն քանից՝ ծագում է նա ազնվատոհմ, թե հասարակ ըն-

տանհրից: Օգոստոսը դեռևս մանուկ շամանակ ստիպել էր համբաճառ իրեն ձանձրացրած գորտերին: Մարգիկ, ովքեր մտնում էին ալև. տունը, որտեղ նա ծնվել էր, համակվում էին սրբազան սարսափով: Վեպասիանոսը, դեռևս նոր կայսր հռչակված ժամանակ, ողջացրել էր կույրին և կաղին: Սովորական մահկանացուները, բնական է, պետք է պատվեն աստվածների ուղարկած տիրակալին: Բայց եթե նա մոռանում է իր սլարտքը և շարաշահում է իրեն տրված հզորությունը, հպատակները իրավունք ունեն նրան սպանել: Դրա համար էլ Սվետոնիոսը արդարացնում է ոչ միայն այնպիսի տիրանների սպանությունը, ինչպես Կալիգուլան, Ներոնը, Դոմիցիանոսը, այլև այնպիսի ականավոր, բազմաթիվ անվիճելի ծառայություն ունեցող գործչի, որպիսին էր Հուլիոս Կեսարը: Չափից անց պատիվները, որոնք նա պահանջում էր, նրա արհամարհանքը սենատի, սովորույթների և օրենքների նկատմամբ, գրում է Սվետոնիոսը, ցույց են տալիս, որ նա արդարացիորեն է սպանվել (Հուլ., 76):

Ադրիանոսի ժամանակների համար բնորոշ մտավորականության պաշտոնական հովանավորությունը, հոգատարությունը գիտությունների և արվեստների նկատմամբ նույնպես արտահայտությունն են գտել առաջին կայսրերի սվետոնիոսյան կենսագրություններում: Նա նշում է, որ Հուլիոս Կեսարը ականավոր հոետոր և գրող էր (Հուլ., 55), որ Օգոստոսը հովանավորում էր բանաստեղծներին, լավ գիտեր գրականություն և ոչ ոքի չէր պատժել ազատախոսության համար (Օգ., 54, 89): Կլավդիոսի արժանիքների թվում Սվետոնիոսը նշում է նրա էրուդիցիան և հետաքրքրությունը պատմության նկատմամբ (Կլավ., 25): Նա գտվում է ճուլնիսկ սենատի կողմից այնքան ծաղրված Ներոնի բանաստեղծական հակումները և նրա հրապարակային ելույթները սեփական բանաստեղծությունների արտասանությամբ: Նա դատապարտում է սոսկ կայսրերին ոչ վայել չափից դուրս հրապուրանքը թատրոնով ու վազքարշավներով և մասնակցությունը բեմական ներկայացումներին (Ներ., 10, 20—22): Վեպասիանոսը, որն ընդհանրապես վայելում է Սվետոնիոսի մեծ համակրանքը, ներողամտորեն էր վերաբերվում փիլիսոփաների «հանդուգն» ելույթներին և Հելվիդիոս Պրիսկոսին մահապատժի ենթարկեց սոսկ այն բանից հետո, երբ նա անցավ բոլոր սահմանները: Չլինելով անձամբ արվեստի և գրականության նուրբ գիտակ, նա աջակցում էր տաղանդավոր մտողական և վարձատրություն սահմանեց ճարտասանության ուսուցիչների համար (Վեպս., 13, 15, 18): Դոմիցիանոսն, ընդհակառակը, իր կառավարման վերջում դառնալով դաժան ու արյան ծարավի բռնապետ, փիլիսոփաներին վտարեց Հռոմից (Դոմ., 10):

Սվետոնիոսը իր ժամանակի իրադարձություններին արձագանքում է

նույնիսկ իր հաղորդած որոշ մանրամասնություններում: Այսպես, օրինակ, Ադրիանոսի նախաձեռնությամբ իրավաբանները, հավաքելով իրավունքի աղբյուրներից մեկը ծառայող հոռմեական մագիստրատների էդիկտները, նրանց հիման վրա կազմեցին կայսեր կողմից հաստատված այսպես կոչված «մշտնջենական էդիկտը»: Իրավունքը կողիֆիկացնելու նման դիտավորություն, մի քանի գրքերի մեջ մուծելով գործող օրենքները և վերացնելով հնացածները, Սվետոնիոսը վերագրում է նաև Հուլիոս Կեսարին (Հուլ., 44):

Սվետոնիոսը խոր և ինքնուրույն քաղաքական մտածող չի եղել: Բայց նրա կենսագրությունները, նրանցում պարունակվող փաստերից դատ, հետաքրքրություն են ներկայացնում որպես այն դարաշրջանի փաստաթուղթ, երբ ձևավորվում էր «լուսավորյալ միապետության» տեսությունը: Իրենց ամբողջության մեջ նրանք տալիս են բավականաչափ պարզ ու լրիվ ծրագիր, որին պետք է հետևեր տիրապետող դասակարգի հավանությանը արժանանալ կամեցող տիրակալը: Այդ ծրագրի որոշ գծերը ծնունդ էին ժամանակի առանձնահատուկ պայմանների: Մյուսները հրատապ էին թվում նաև այլ դարաշրջաններում: Այստեղից էլ հետաքրքրությունը տասներկու կեսարների վարքագրության նկատմամբ և՛ միջին դարերում, և՛ նոր ժամանակներում, որի շնորհիվ էլ Սվետոնիոսի բազմաթիվ երկերից սուսկ այդ մեկն է մեզ հասել գրեթե լրիվ: Որպես հոռմեական մշակույթի յուրատեսակ հուշարձան, որն այնքան նշանակալի ազդեցություն է գործել եվրոպական մշակույթի վրա, Սվետոնիոսի աշխատությունը հետաքրքիր է նաև ժամանակակից ընթերցողի համար:



ՍՎԵՏՈՆԻՍԸ ԵՎ ՆՐԱ ԳԻՐՔԸ

Սվետոնիոսի բախտը չի բերել բանասերների և պատմաբանների կարծիքներում: Որպես պատմաբանի նրան միշտ սովորել է Տակիտոսը, որպես կենսագրի՝ Պլուտարքոսը: Համեմատությունը նրանց հետ միշտ էլ անշահավետ է եղել Սվետոնիոսի համար: Սվետոնիոսի կենսագրությունների թերությունները և անկատարությունները վաղուց են հաստատված, և դրանց թվարկումը անփոփոխ գրքից գիրք է անցնում: Սվետոնիոսը հոգ չի տանում հոգեբանական հետևողականության մասին՝ նա թվարկում է ամեն մի կայսեր առաքինություններն ու արատները առանձին-առանձին, շմտահոգվելով, թե ինչպես կարող էին նրանք միասին ապրել մեկ անձի մեջ: Սվետոնիոսը հոգ չի տանում ժամանակագրական հետևողականության մասին՝ նա մեկ ցանկի մեջ է մտցնում կառավարման սկզբի և վերջի փաստերը, առանց տրամաբանության ու կապի: Սվետոնիոսը զուրկ է պատմության ըմբռնումից՝ կայսրերի կերպարները նա ներկայացնում է պատմական ետնախորքից կտրված և, մանրակրկիտ քննարկելով նրանց մասնավոր կյանքի մանրուքները, սոսկ հարևանցիորեն է հիշատակում իսկապես կարևոր պատմական իրադարձությունները: Սվետոնիոսը զուրկ է քննադատական հոտառությունից՝ իր կենսագրություններում նա օգտագործում է հայտնապես միտումնավոր աղբյուրներ, շմտածելով նրանց տարածայնությունները հաշտեցնելու մասին: Սվետոնիոսը զուրկ է գրական ճաշակից՝ նա հոգ չի տանում խոսքի գրական հղկմանը, նա միօրինակ է ու չոր: «Նա իսկական գրող չէ»՝ այդպիսին է վերջին հետազոտողներից մեկի վճռական պնդումը, որը հանրագումարի է բերում Սվետոնիոսին տրված գնահատականների երկարատև ավանդույթը:

Բոլոր այդ մեղադրանքները, անշուշտ, հիմնազուրկ չեն: Բայց և այնպես, կարծում ենք, որ ժամանակակից պատմաբանները արդարացի

չեն հոռմեացի պատմագրի նկատմամբ: Սվետոնիոսին ուրիշ շահով են շահում այն դեպքում, երբ հարկ էր գտնել նրա սեփական շահանիշը: Սվետոնիոսին համեմատում են Տակիտոսի ու Պլուտարքոսի հետ, մինչդեռ այդ երեք հեղինակներից յուրաքանչյուրը հետապնդել է իր սեփական խնդիրները և ըստ այդմ էլ ընտրել իր միջոցները: Որպեսզի կարողանանք բացատրել սվետոնիոսական կենսագրությունների բոլոր առանձնահատկությունները, հարկավոր է որոշել այն նպատակը, որ իր առջև դրել է հեղինակը:

Այդ հարցի դժվարությունը այն է, որ Սվետոնիոսի մասին մենք շատ քիչ բան գիտենք: Մի քանի թուուցիկ ակնարկներ Սվետոնիոսի իսկ երկերում, Պլինիոս Կրտսերի մի քանի նամակներ՝ գրված Սվետոնիոսին կամ նրա մասին հիշատակող, 1950 թ. Աֆրիկայում գտնված մեկ արձանագրություն, որը ճշտում է նրա ծառայողական կարիերայի մի քանի պահեր, ուշ ժամանակի հիշատակումներ Սպարտիանոսի (IV դ.) և Հովհան Լիդիացու (VI դ.) մոտ, և երկերի ցուցակը, որ բերված է Սվիդասի (X դար) բյուզանդական բառարանում՝ ահա և բոլոր ցաքուցրիվ տեղեկությունները, որոնցից ստիպված ենք կազմել Գայոս Սվետոնիոս Տրանքվիլոսի կյանքի ու ստեղծագործության պատկերը:

Սվետոնիոսի ոչ ծննդյան, ոչ էլ մահվան թվականները հայտնի չեն: Մի տեղ նա հիշատակում է, որ ինքը պատանի էր (adulescens), երբ 88—89 թթ. Արևելքում հայտնվեց կեղծ ներոնը (Ներ., 57). adulescens բառի ողջ անորոշությամբ հանդերձ այստեղից կարելի է եզրակացնել, որ Սվետոնիոսը ծնվել է մ. թ. 70-ական թվականների սկզբին: Նա պատկանում էր հեծյալական տոհմի՝ նրա հայրը հեծյալական կոչման լեգեոնային տրիբուն էր Օտոնի զորքում Բետրիակումի մոտ (Օտ., 10), նրա պապը, հավանաբար, Կալիգուլայի արքունիքում ինչ-որ փոքր պաշտոն էր զբաղեցնում (Կալ., 19): Սվետոնիոսն ինքը, ըստ երևույթին, մեծացել է Հռոմում (Դոմ., 12) և ստացել է իր ժամանակի համար սովորական կրթություն՝ սկզբնապես քերականական, այնուհետև ճարտասանական դպրոցում (Քեր., 4): Դպրոցն ավարտելուց հետո Սվետոնիոսը ընկնում է Պլինիոս Կրտսերի դպրոցը՝ ժամանակի կուլտուրական կյանքի կենտրոններից մեկը: 100 թ. կոնսուլ Պլինիոս Կրտսերը Սվետոնիոսից մեծ էր մոտ տասը տարով. Քվինտիլիանոսի աշակերտ, Տակիտոսի ընկեր, նրբազգաց գրող, բազմազան, թեև ոչ խոր կուլտուրական շահագրգռությունների տեր մի մարդ, Պլինիոսը սիրեց երիտասարդ գիտնականին և դարձավ նրա անդավաճան հովանավորը:

Հեծյալական դասին պատկանող մարդու կարիերան սովորաբար սկսվում էր զինվորական ծառայությունից, բայց դա Սվետոնիոսի սըր-

տովը չէր. Պլինիոսը նրա համար ձեռք բերեց զինվորական տրիբունի պաշտոն, բայց Սվետոնիոսը խնդրեց այն հանձնել իր ազգականներից մեկին (Պլինիոս, Նամականեր, III, 8): Սվետոնիոսը մնում է Հռոմում, դառնում երկու քրմական կոլեգիումների անդամ, Տրայանոս կայսրը նրան նշանակում է ինչ-որ մի «ընտրյալ կոլեգիում» (դատակա՞ն), Պլինիոսը նրա համար Տրայանոսից հայցում է «երեք երեխաների իրավունք», որը հարգանքի որոշ նշաններ էր տալիս և արտոնություններ ծառայության գծով (Նամականեր, X, 94—95): Նա զբաղվում է փաստաբանական պրակտիկայով, բայց առանց ջանասիրության՝ վատ երազ տեսնելով, նա խնդրում է Պլինիոսին հետաձգել հերթական դատավարությունը, և վերջինս ստիպված է լինում քաջալերել սնապաշտ ընկերոջը (Նամակ I, 18): Նա գրում է իր առաջին մեծ երկը — գուցե դա եղել է «Նշանավոր մարդկանց մասին» գիրքը», որը մասամբ է հասել մեզ — բայց դանդաղում է հրատարակել, և Պլինիոսը նրան շտապեցնում է. «Մի հետաձգիր այլևս... քո աշխատությունը արդեն պատրաստ ու ավարտված է, հղկումից նա չի փայլի, այլ կսկսի ջնջվել» (Նամակ V, 10): Հանգիստ ապրելու և աշխատելու համար նա ուզում է մի փոքր կալված գնել Հռոմի մոտ, և Պլինիոսը խնդրում է իր բարեկամներից մեկին աջակցել անգործնական Սվետոնիոսին (Նամակ I, 24): «Այդ կալվածում, եթե միայն նրա գինը մատչելի է, շատ բան է գայթակղում իմ Տրանքվիլոսին՝ և՛ Հռոմի հարևանությունը, և՛ հարմար ճանապարհը, և՛ փոքր կալվածատունը, և՛ տիրույթի շափերը, որոնց դեպքում այն ավելի շատ կարող է զվարճացնել, քան զբաղեցնել: Գրքասեր մի մարդու համար, որպիսին նա է, լիուլի բավական է այդպիսի քանակությամբ հողը, որպեսզի կարելի լինի անդորր տալ գլխին և հանգիստ աչքերին, դանդաղ շրջել սահմանաբաժանքով, իճանալ բոլոր իր վազերը և հաշվել ծառերը...»:

117 թ. իշխանության ղեկի մոտ զինվորական Տրայանոսին փոխարինում է գիտնական Ադրիանոսը, գիտություններն ու արվեստները սիրող ու քնահատող մի անձնավորություն: Անսպասելիորեն Սվետոնիոսի համար բացվում են շահավետ արքունական ծառայության հնարավորություններ: Նա ընդունվում է «գիտական գործերով» (a studiis) կայսերական գրասենյակ, նրան է հանձնարարվում հանրային գրադարանների (a bibliothecis) վերահսկողությունը և, վերջապես, նա ստանում է «գրագրության գծով» (ab epustulis) խորհրդականի բարձր պաշտոնը՝ նրա մոտ են կենտրոնանում կայսրության բոլոր ծայրերից՝ եկող հաշվետվություններն ու զեկուցագրերը, նա զեկուցում է նրանց մասին Ադրիանո-

սին, կազմում և տեղերն է ուղարկում կայսերական կարգադրութիւնները: Արքունական ծառայութիւնը Սվետոնիոսի առջև մուտք բացեց պետական դիվանները, և նա շհապաղեց օգտվելու դրանից իր գիտական աշխատանքների համար՝ այդ տարիներին նա գրում է իր տասներկու կեսարների կյանքը և հրատարակում այդ երկը, նվիրելով այն Սեպտիցիոս Կլարոսին, պրետորականների պետին Ադրիանոսի օրոք: Ըստ երևույթին, Սվետոնիոսը ծանոթ էր Սեպտիցիոս Կլարոսին դեռևս Պլինիոսի խմբակից, և այժմ, Պլինիոսի մահից հետո, ի դեմս նրա նոր հովանավոր էր գտել: Ընծայականը մեղ չի հասել, քանի որ Սվետոնիոսի երկի սկիզբը ձեռագրերում կորսված է:

Բայց Սվետոնիոսի արքունական կարիերան երկարատև չեղավ: 122 թ. Ադրիանոս կայսեր հրամանով, որն այդ ժամանակ շրջագայում էր արևմտյան պրովինցիաները, նա հեռացվեց: Ադրիանոսի կենսագիր Սպարտիանոսը այդ մասին այսպես է գրում. «Սեպտիցիոս Կլարոսին, պրետորականների պետին, Սվետոնիոս Տրանքվիլոսին, գրագրության վարիչին, և շատ ուրիշների նա փոխեց այն բանի համար, որ նրանք հակառակ նրա հրամանի, նրա կնոջ՝ Սաբինայի հետ իրենց ավելի ազատ էին պահում, քան այդ թուլատրում էր հարգանքը կայսերական տան նկատմամբ» («Ադրիանոս», 11, 3): Կատարելապես պարզ է, որ Սաբինայի՝ Ադրիանոսի շիրաժ կնոջ, հիշատակութիւնը այստեղ պատճառ չէ, այլ առիթ, իսկ իսկական պատճառը կապված է ինչ-որ խուլ պալատական խարդավանքի հետ և մեղ հայտնի չէ: Սվետոնիոսը այդ ժամանակ մոտ 50 տարեկան էր: Նրա հետագա կյանքի մասին մենք ոչինչ չգիտենք, բայց դատելով նրա գրվածքների քանակութիւնից, նա դեռևս երկար է ապրել և մահացել է, թերևս, մ. թ. շուրջ 140—150 թթ.:

Սվիդան թվարկում է Սվետոնիոսի մեզ շհասած մի ամբողջ շարք երկերի խորագրերը: Դրանք են՝ 1) «Հուլյների մանկական խաղերի մասին», 2) «Հռոմեացիների հանդիսախաղերի ու մրցախաղերի մասին», գիրք, 3) «Հռոմեացիների տարվա մասին», 4) «Գրքային նշանների մասին», 5) «Կիկերոնի «Պետության մասին»՝ բանավեճ ալեքսանդրիացի քերական Դիդիմոսի հետ, որը Անտոնիոսի օրոք գիրք էր գրել Կիկերոնի դեմ, 6) «Հագուստի, կոշիկի և ամեն տեսակ ծածկույթների անվանումների և իրերի մասին», կամ, ինչպես ավելի կարճ քաղում է Սերվիոսը, «Հագուստի տեսակների մասին», 7) «Լուտանքների կամ հայհոյանքների մասին և յուրաքանչյուրի ծագման մասին», 8) «Հռոմի և հռոմեական սովորութիւնների ու բարքերի մասին»: Բացի այդ, ուրիշ աղբյուրներից հայտնի են մի քանի երկերի անուններ, որոնք բաց են թող-

նրված Սվիդյայի կողմից՝ 9) «Թագավորների մասին» 3 գրքով՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի թագավորների մասին, այդ երկը 4-րդ դարում շափածոյի է վերածել Պավլինոս Նոլանցին, 10) «Հասարակական պաշտոնների մասին»՝ հիշատակված է Պրիսցիանոսի կողմից, 11) «Նշանավոր պոռնիկոհիների մասին»՝ քաղել է Հովհանն Լիդիացին, 12) «Մարմնական թերությունների մասին»՝ հիշատակում է Սերվիոսը, 13) «Տարբեր իրերի մասին», մեկ քաղվածք քերականական թեմայով պահպանված է Քարիսիոսի մոտ: Կարող է պատահել, որ այսքան տարածմամբ երկասիրությունները մի տեսակ ցիկլավորված են եղել՝ ենթադրություն է հայտնվել, որ 2, 3, 6, 8 երկերը կարող էին կազմել «Հոռմ» մեծ աշխատության մասերը, իսկ 12 և որևէ ուրիշ երկեր մտնեին «Մարդագետին» հանելուկային հանրագիտական հրկի մեջ, որը միջնադարյան Կղիսականները վերագրում են Սվետոնիոսին: Բայց դրանք սոսկ հիպոթեզներ են: Այդ երկերից մի քանիսը հասել են մեղ ուշ շրջանի հատվածական քաղվածքների ձևով՝ դրանցից երևում է, որ «Մանկական խաչերի մասին» և «Հայհոյանքների մասին» երկասիրությունները Սվետոնիոսը հունարեն է գրել:

Սվետոնիոսի երկերի թեմատիկական բազմազանությունը միշտ մտահոգել է հետազոտողներին: Անսպասելիորեն այնպես էր ստացվում, որ պատմագիր Սվետոնիոսը ամենևին էլ պատմագիր չէ, այլ գրող-հանրագիտակ, հնախույզ, որին հավասարապես հետաքրքրում էին գրողների կենսագրությունները և հետերանների կենսագրությունները, հոռմեական մագիստրատուրաները և հունական հայհոյանքները, Կիկերոնի տեսությունները և մարմնական թերությունները: Տասներկու կեսարների վարքագրությունները պատկերում էին սոսկ որպես նման գիտական հետաքրքրասիրության վարժության պատահական բնագավառ, որի համար վիտելլիոսի որկրամոլությունը և Կեսարի արշավանքները միատեսակ սլաւոմական հետաքրքրություն ունեին: Արդիականության նկատմամբ ոչ մի արձագանք նման գրողից սպասել չէր կարելի: Կենսագրական տեղեկությունները, թվում է, ամրապնդում էին հեղինակի նման կերպարը: «Գրքի մարդ» (scholasticus), ըստ Պլինիոսի արտահայտության, խաղաղասեր, անվճռական և անգործնական, որը սոսկ կարճ ժամանակով և անհաջող է գրավել պետական պաշտոն, այն էլ այնպիսի պաշտոն, որտեղ ամենից ավելի կարևոր էր գիտնականությունը և լավ ոճը, իսկ հետո կրկին հեռացած դեպի իր գրքերը՝ Սվետոնիոսի այդ կերպարը, որ կազմավորվել է XIX դարի գիտնականների պատկերացման մեջ և ապրել մինչև մեր օրերը, շատ բանով էր որոշում հետազոտողների վերաբերմունքը Սվետոնիոսի պատմական երկի նկատմամբ:

Հազիվ թե նման մոտեցումը կարելի լինի օրինաչափ անվանել: Տար-
օրինակ կլինեն դատել պահպանված ստեղծագործության՝ մասին, ելնե-
լով չպահպանվածներից: Սվետոնիոսը մեզ համար ամենից առաջ պատ-
մագիր է, և պետք է ուսումնասիրվի այն պրոբլեմների կապակցությամբ,
որոնք զբաղեցնում էին նրա ժամանակի պատմագրությանը:

Պատահական չէ, որ և՛ Սվետոնիոսը, և՛ նրա ավագ ժամանակակից-
ներ Տակիտոսը («Աննալներում») և Պլուտարքոսը (կայսերական կեն-
սագրությունների շարքում, որից մեզ հասել են միայն Գալբայի և Օտո-
նի վարքագրությունները) իրենց ուշադրությունը բևեռում էին միևնույն
դարաշրջանի վրա՝ հռոմեական պատմության այն հարյուրամյակի, որը
սկսվում էր Օգոստոսով և ավարտվում 60-ական թվականների միջթա-
գավորությամբ: Այդ քաղաքական էքսպերիմենտների հարյուրամյակ էր,
որոնց ընթացքում աստիճանաբար որոշվում էր կայսերական իշխանու-
թյան քաղաքական ձևավորումը Հռոմում: Երկար և զգույշ փորձերից
հետո Օգոստոսին հաջողվեց մշակել պրինցեպսի և սենատի շահերի հա-
րաբերական հավասարակշռության մի սխեմա և պահպանել այն իր եր-
կարատև կյանքի ընթացքում: Բայց Օգոստոսի լուծումը միակ հնարա-
վորը չէր: Մինչև Օգոստոսը՝ Կեսարը և Անտոնիոսը, Օգոստոսից հետո՝
Տիբերիոսը և Կալիգուլան, Կլավդիոսը և Ներոնը, յուրաքանչյուրը յուրո-
վի տարափոխում էր այդ լուծումը կամ ուրիշ լուծում էր առաջարկում,
և ինչպես որ ամեն մի քաղաքական էքսպերիմենտի ժամանակ, այս մի-
ջոցին խիստ շատ արյուն թափվեց: Միայն հարյուր տարի անց, առ Վես-
պասիանոսի ժամանակները, վերջնականապես պարզ դարձավ, որ, այ-
նուամենայնիվ, Օգոստոսի սխեմանը դուրս եկավ ամենաընդունելի տար-
բերակը և ամենացանկալի նմուշը: Հաջորդության գիծը ձգվեց Օգոստո-
սից առ Վեսպասիանոս և Տիտոս, իսկ սրանցից առ Ներվա, Տրայանոս և
Անտոնինոսներ: Պատմության ընթացքը ստացավ իր նպատակը, և
պատմագիրների առջև ծառայեցավ դեպի այդ նպատակը տանող ուղին
պատկերելու խնդիրը, հավաքելով ու նոր տեսանկյունից իմաստավորե-
լով Օգոստոսի առաջին հաջորդների մասին բոլոր տեղեկությունները:
Տեսակետը արդեն հաստատված էր, մնում էր ամրապնդել այն փաստե-
րով:

Պատմագիրների առջև ծառայած խնդրի դժվարությունը նրանց
ամօրինության տակ եղած աղբյուրների բնույթի մեջ էր: Բանն այն է,
որ Հուլիոս-Կլավդիոսների օրոք գահաժառանգության կարգը աննախա-
տեսորեն արտասովոր էր՝ իշխանությունը լավագույն դեպքում անցնում
էր ազգականից ազգականին, բայց ոչ երբեք հորից որդուն կամ եղբորից
եղբորը: Այդ նշանակում էր, որ միմյանց փոխարինող տիրակալների

միջև չկար այնպիսի ազդակցական մեծ ակնածանք, ինչպիսին լինում է ժառանգական միապետություններում, որտեղ հաջորդը պատվում է նախորդին, նույնիսկ եթե չի էլ շարունակում նրա քաղաքականությունը: Այդ տարիներին Հոռմում յուրաքանչյուր նոր կայսր ի դեմս իր նախորդի տեսնում էր անձնական թշնամու, որը շափուց դուրս երկար ժամանակ էր փակել իր ուղին դեպի իշխանություն: Դրա համար էլ պատմական և հրապարակախոսական գրականությունը յուրաքանչյուր կայսրի մասին հստակորեն բաժանվում է երկու մասի՝ կենդանության օրոք ստեղծված ամբողջ գրականությունը անզուսպ կերպով վեհացնում էր նրան, մահից հետո ամբողջ ստեղծվածը՝ նույնքան անզուսպ կերպով արատավորում: Կենդանության օրոք ստեղծված գովաբանությունների նմուշ կարող է ծառայել Վելլեոս Պատերկուլոսի համառոտ «Հոռմի պատմությունը», գրված Տիբերիոսի օրոք և Տիբերիոսին փառաբանող որպես հերոսի ու բարերարի. ետմահու դատափետման նմուշ կարող է ծառայել Սենեկային վերագրվող «Աստվածային Կլավդիոսի ապոթեոզը» («Ապոկոլոկինտոսիսը»), մի շարագույն սատիրա, որտեղ պատկերվում է, թե ինչպես հենց նոր մահացած և աստվածացված Կլավդիոսը կաղիկ տալով Օլիմպոս է բարձրանում, և այնտեղ վրդովված աստվածները հեղում են նրան վիրավորանքով ու ծաղրանքով: Այդ ստեղծագործությունները պահպանվել են մինչև մեր օրերը գրեթե պատահաբար՝ ուշ հանրապետության և վաղ կայսրության նման պրոպագանդիստական գրականության ողջ ծովից: Գլուխ հանել տարածայնությունների այդ ծովից, դուրս բերել միմյանց հակասող բազմաթիվ փաստերից ու դատողություններից, իրար փոխարինած տիրակալներից յուրաքանչյուրի ժամանակի պահանջների համապատասխանող բնութագիրը՝ այդպիսին էր խնդիրը, որը կանգնած էր պատմագիրների նոր սերնդի առջև: Տակիտոսը, Պլուտարքոսը և Սվետոնիոսը այդ խնդրին տարբեր կերպ մոտեցան, յուրաքանչյուրը համապատասխան իր հետաքրքրությունների և ըստ իր ընդունակությունների:

Տակիտոսը պատմագիր էր, Պլուտարքոսը՝ բարոյախոս. Տակիտոսը ձգտում էր ըմբռնել պատմության օրենքները, Պլուտարքոսը՝ մարգկային հոգու օրենքները: Երկուսն էլ, թեև տարբեր կողմերից, ջանում էին բացատրել յուրաքանչյուր տիրակալի ամեն մի արարքը, տեսնել, թե ինչպես էին միևնույն հոգում համակեցվում բարձր ոգին և ստորին արատները, անմարդկայնությունը և պետական խելքը. և իսկապես, նրանց ստեղծած կերպարները, չիրճնց ողջ միտումնավորությամբ հանդերձ, մնացին անտիկ հոգեբանական դիմանկարի բարձրագույն նվաճումը (համեմատյն դեպս, այնքանով, որքանով Պլուտարքոսի կայսերական կեն-

սագրությունների մասին կարելի է դատել նրա ավելի ուշ «Համեմատական կենսագրություններով»)։ Սվետոնիոսին խորթ էին նման փիլիսոփայական հետաքրքրությունները։ Նրա նպատակը ավելի համեստ էր՝ նա ուզում էր ոչ թե բացատրել, այլ միայն գնահատել դեպքերը։ ՆՔե Տակիտոսը և Պլուտարքոսը ձգտում էին կայսրերի անձնավորության մեջ լավն ու վատը հանգեցնել դիալեկտիկական միասնության, ապա Սվետոնիոսը, ընդհակառակը, ձգտում է բաժանել վատն ու լավը, կարելվույն շափ հստակորեն սահմանազատել դրանք, դնել դրանք կշեռքի տարբեր նժարներին և տեսնել, թե որ նժարը ծանր կլինի։ «Բոլոր այդ արարքները... որոնք երբեմն նվազ գովասանքի շեն արժանի, ես ի մի հավարկեցի, որպեսզի դատեմ դրանք արատներից ու հանցագործություններից, որոնց մասին խոսելու եմ հետո», — գրում է նա Ներոնի կենսագրության մեջ (19, 3)։ Իսկ Տիբերիոսի կենսագրության մեջ հատուկ իմաստ ունեցող մի տեղ կա, որտեղ խոսք է գնում այն դրդապատճառների մասին, որոնցով առաջնորդվել էր Օգոստոսը, ժառանգորդ ընտրելով Տիբերիոսին՝ մտածում էին, որ Օգոստոսը այդ արել է միայն «սնափառ մի հույսով, որ այդպիսի հաջորդի օրոք ժողովուրդը ավելի շատ կցավի նրա համար», քայց Սվետոնիոսը դրան չի հավատում. «Ոչ, ես ենթադրում եմ, որ նա ծանր ու թեթև էր արել Տիբերիոսի բոլոր արժանիքներն ու թերությունները և գտել, որ նրա արժանիքներն ավելի ծանրակշիռ են» (Տիբ., 21, 2—3)։ Դժվար է ասել, արդյոք ճիշտ էր գուշակել Սվետոնիոսը մահացող Օգոստոսի դիտավորությունները, քայց այդ խոսքերով նա աշխատանքի իր սեփական մեթոդը լիսվին ճիշտ էր բնութագրել։

Իրադարձությունների բացատրությունը պահանջում է փաստերի քննարկում իրենց կապակցության և փոխներգործության մեջ, պատճառների ու հետևանքների այն բարդ հյուսվածքում, որտեղ լավ ու վատ արարքները միատեսակ անհրաժեշտությամբ բխում են երբեմն միևնույն դրդապատճառներից։ Այդպես են վարվում և՛ Տակիտոսը, և՛ Պլուտարքոսը, թեև մեկի համար իրադարձությունների այդ կապը տարածվում է Հռոմի ողջ պատմության վրա, մյուսի համար սահմանափակվում միայն մեկ մարդու կյանքով։ Իրադարձությունների գնահատականը, ընդհակառակը, պահանջում է փաստի կարելվույն շափ ավելի լրիվ մեկուսացում՝ միայն այդ ժամանակ այն կարելի կլինի համադրել արժանիքի վերացական չափանիշին և տեսլ՝ «լավ» է այն, թե «վատ»։ Այդպես է վարվում Սվետոնիոսը։ Ոչ թե պատումի կապակցվածությունը, այլ պատումի կոտորակվածությունն է անհրաժեշտ նրան իր նպատակների համար։ Իր ստեղծագործության մեջ նա պատմության փոխարեն տալիս է կենսագրությունների շղթա, յուրաքանչյուր կենսագրության մեջ իրա-

դարձությունների հաջորդականութեան փոխարեն ընթերցողին առաջարկում է փաստերի ցրոնք: Նրա կայսրերը անցնում են ընթերցողի դատաստանի առջևով մի տեսակ, կարծես լավ տիրակալի քննութիւն տալով, և ինչպես քննութեան ժամանակ, հաշվի են առնվում ոչ թե նրանց գործողութիւնների դրդապատճառները, այլ միայն գործողութիւններն իրենք և նրանց արդիւնքները:

Տակիտոսն ուզում էր սարսափեցնել ընթերցողին, ցույց տալով նրան կայսերական Հռոմի այլասերման ճակատագրական անխուսափելիութիւնը. Պլուտարքոսը ուզում էր մխիթարել ընթերցողին, նրան առաջարկելով բարոյական նմուշներ, որոնց հարկ էր փարել և որոնցից հարկ էր խուսափել: Երկուսն էլ ճգնում էին դիտել իրենց հերոսների հոգին և անհատական առանձնահատկութիւնների ետևում բացահայտել համամարդկային հատկութիւնները, որոնք հավասարապես ներհատուկ են անցյալին, ներկային և ապագային: Նրանց համար պատմութիւնը շարունակում է ապրել արդիականութեան մեջ. Տակիտոսը զգում է, որ նախկին կայսրերի դաժանութիւնները կարող են վերածնվել ցանկացած նոր տիրակալի օրոք: Պլուտարքոսը գիտե, որ հին այրերի առաքինութիւններն ու արատները մնում են և կմնան որպէս օրինակ և դաս բոլոր ժամանակների համար: Սվետոնիոսին այդ զգացմունքը անծանոթ է: Նրա համար արդիականութիւնը արդեն հանգել է բոլոր այն հարցերի լուծմանը, որոնք հուզել են անցյալը, ճշմարտութիւնը ձեռք է բերված, նախկին սխալները շեմքից դուրս են մնացել, երբեք այլևս չեն կրկնվի՝ դրանք մասնավոր բաներ էին, պատահական դրվագներ, որոնք ոչ մի ընդհանրացման ենթակա չեն: Դրա համար էլ, հետադարձ հայացք նետելով դրանց, նա նայում է սոսկ իրադարձութիւնների արտաքին կողմի վրա, նրանցում փնտրում հնարավորին չափ անհատական, չկրկնվող, ոչ սովորական, վառ գծեր. մանրութեներում արտահայտված յուրօրինակութիւնը ավելի հետաքրքիր է նրա համար, քան նմանութիւնը ամբողջութեան մեջ. այլ կերպ ասած, նա ձգտում է ոչ թե ուսանելիութեան, այլ հետաքրքրաշարժութեան:

Այդպիսին է խնդիրը և այդպիսին Սվետոնիոսի մոտեցումը նրա նկատմամբ՝ գնահատական բացատրութեան փոխարեն, փաստերի ցրոնք իրադարձութիւնների կապի փոխարեն, հետաքրքրաշարժութիւնն ուսանելիութեան փոխարեն: Այդ խնդիրը և այդ մեթոդը որոշում են սվետոնիոսական կենսագրութիւնների կառուցվածքի ողջ յուրօրինակութիւնը՝ և՛ փաստերի ընտրութեան, և՛ նրանց տեղադրման մեջ:

Փաստերի ընտրութիւնը Սվետոնիոսի մոտ նշանավոր է նրանով, որ

հեղինակի հայացքը ամբողջ ժամանակ գամված է փայտեր անձնավորու-
 թյանը: Այդ կայսրության պատմությունը չէ, այլ կայսրերի պատմու-
 թյունը՝ միայն կայսրն է պատասխան տալիս բոլոր իր ժամանակի հա-
 մար: Պատմական եռնախորքը Սվետոնիոսը ցույց չի տալիս՝ լավագույն
 դեպքում նա հիշատակում է դրա մասին, ենթադրելով, որ բոլոր նշա-
 նակալից իրադարձությունները հայտնի են ընթերցողին: Այն ամենը, ինչ
 որ տեղի է ունենում կայսրության հսկայածավալ տարածքներում, Սվե-
 տոնիոսի պատմության մեջ ներթափանցում է սոսկ որպես խուլ արձա-
 գանք: Պրովինցիաներում տեղի ունեցող իրադարձությունները նրա հա-
 մար գոյություն չունեն՝ ոչ Ֆլորոսի և Սակրովիրոսի 21 թ. գալլական
 ապստամբությունը, ոչ Ցիվիլիսի 70 թ. գերմանական ապստամբությու-
 ւը ամենևին չեն հիշատակված կենսագրություններում, հրեական ապստամ-
 բությունը հիշատակված է սոսկ որպես առիթ Վեսպասիանոսի բարձրաց-
 ման, բրիտանական ապստամբությունը՝ սոսկ որպես ներոնին արված գու-
 շակություններից մեկի կեղծ իրականացում: Խոսելով կայսրության ըն-
 դարձակման մասին, նա սոսկ շոր կերպով տեղեկացնում է. «Այս և այս
 մարզերը վերածված են պրովինցիաների», կամ լավագույն դեպքում
 նշում նրանց տարածությունը և դրությունը (Հուլ., 25. Տիր., 16): Սահ-
 մանային պատերազմները գնալով նրա մոտ ավելի ու ավելի հազվադեպ
 են հիշատակվում՝ 35—36 թթ. Պարթևաստանի հետ տեղի ունեցած բա-
 նակցությունների մասին նա դեռ հաղորդում է, քանի որ դրանք վարել էր
 ապագա փայտ-Վիտելլիոսի հայրը, բայց ներոնի օրոք տեղի ունեցած
 ծանր պատերազմի մասին մոռանում է, որովհետև այստեղ հրամանատար
 եղած Գոմիցիոս Կորբուտոնը՝ ոչնչով կապված չէր կայսերական տան հետ:
 Նրա նպատակն է՝ պատմել ոչ թե իրադարձությունների մասին, այլ այն
 մասին, թե ինչպես է պահել իրեն կայսրն այդ իրադարձությունների ժա-
 մանակ: Բրիտանիայի նվաճման մասին նա խոսում է ստորադասական նա-
 խադասության մեջ, իսկ Կլավդիոսի տրիումֆի մասին՝ գլխավոր: Մուտին-
 յան պատերազմի մասին նա հիշատակում է լոկ այն բանի համար, որ-
 պեսզի հաղորդի, թե ինչպես է Յկտավիանոսը փախուստ տվել ռազմի
 դաշտից և ինչպես են նրան կասկածել հակառակորդների խարդախ սպա-
 նության մեջ: Միցիլիակոսն պատերազմի վճռական ճակատամարտը Սվե-
 տոնիոսի համար հետաքրքիր է միայն նրանով, որ մարտից առաջ Օկտա-
 վիանոսը մեռածի պես քնել է: Պատահական չի ստացվել, որ կայսրերի
 բոլոր ռազմական ձեռնարկումներից ամենից ավելի մանրամասն նկա-
 րագրված է Կալիգուլայի խեղկատակային արշավանքը Գալլիա և Գեր-
 մանիա:

Այդպիսով, հեղինակի ուշադրության կենտրոնում մնում է Հոոմ

քաղաքը և կայսերական արքունիքը: Սվետոնիոսը թվարկում է կայսերա-
կան կառույցներն ու հանդիսախաղերը, օրենքներն ու էդիկտները, ցույց
է տալիս տիրակալի վերաբերմունքը սենատի, հեծյալների և ժողովրդի
նկատմամբ, հատուկ ուշադրություն է դարձնում դատարանի կազմակեր-
պությանը և կայսրերի դատաստանական գործունեությանը: Այն անձինք,
ովքեր շրջապատում են կայսրին և շատ բանում ազդում պետական գոր-
ծերի վրա, մնում են սավերի տակ՝ Օգոստոսի կենսագրության մեջ սոսկ
խուցիկ են հիշատակվում Ագրիպյան և Մեկենասը, Տիրերիոսի կենսա-
դրության մեջ Սեյանոսի միայն անունն է տրված և նույնիսկ Մակրոնո-
սը չի հիշատակված, Ներոնի կենսագրության մեջ Աենեկայի համար տեղ
չկա, Գալբայի կենսագրության մեջ՝ Նումֆիդիոս Սարինոսի միայն կա-
մազուրկ Կլավդիոսի օրոք են թվարկված ազատարձակ-խորհրդականնե-
րը, որոնց խաղալիքն էր (ընդհանուրի կարծիքով) կայսրը: Դրա փոխա-
րեն կայսեր կերպարը, որը ստվերում է մնացյալ բոլորին, դժված
է բոլոր հնարավոր մանրամասներով, այստեղ, այն մարդուն նկա-
րագրելիս, որը մարմնավորում է իրենով ամբողջ հումեական
տերությունը, Սվետոնիոսի համար ոչ էական մանրուքնեպ չկան: Նա
խնամքով տեղեկություններ է հավաքում նրա առողջության, բնավորու-
թյան, սովորությունների, հետաքրքրությունների, ապրելակերպի մասին.
ստացվում է, որ կայսեր մասնավոր կյանքը նրա պետական գործունեու-
թյան անզատելի լրացումն է, այն մի տեսակ ընթերցողի առջև բացա-
հայտում է տիրակալի հակումների սազմերը մասնավոր անձի մեջ և
թույլ է տալիս կանխագուշակել քաղաքականության գծերը ըստ նրա
բնավորության գծերի: Բացի այդ, կայսեր մասնավոր կյանքի մանրա-
մասները, անշուշտ, թույլ էին տալիս պատմությունը հետաքրքրաշարժ
դարձնել, որն այնքան թանկ էին գնահատում Սվետոնիոսը և նրա ըն-
թերցողները: Կեսարի սիրային արկածների մասին Սվետոնիոսը ավելի
մանրամասն է գրում, քան Գալլիայի նվաճման մասին, Վեսպասիանո-
սի կատակները նա ջանասիրաբար հավաքել է, իսկ իշխանությունը սե-
նատի և Վեսպասիանոսի միջև բաժանելու մասին նշանավոր որոշումը
նույնիսկ հիշատակված էլ չէ: Բայց դա կենսագրի ընդհանուր ճանաչում
գտած իրավունքն էր՝ այդպես էլ Պլուտարքոսն էր գրում Ալեքսանդր
Մակեդոնացու վարքագրության սկզբում. «Չէ՞ որ մենք պատմություն
չենք գրում, այլ կենսագրություն, և ոչ թե պատերազմական ամենափա-
ռավոր գործերից են երևում առաքինությունները կամ արատները, այլ
հաճախ մի փոքրիկ ինչ-որ արարք, բառ, կատակ ավելի շատ հնարավո-
րություն է ընձեռում դատելու մարդու բնավորության մասին, քան
տասնյակ հաղարավոր սպանվածներ աված ճակատամարտը, քան վիթ-

խարի մարտական գործողութիւնները, քան քաղաքների պաշարումը...»:

Սվետոնիոսի կենսագրականներում փաստերի տեղադրումը էլ ավելի հետաքրքրական է: Գնահատականը միշտ ենթադրում է համեմատութիւն՝ կայսեր գործունեութիւնը գնահատելու համար հարկ է այն համադրել մյուս կայսրերի գործունեութեան և այն պահանջների հետ, որոնք ներկայացվում են իդեալական տիրակալին: Փաստերի խմբավորումը պետք է թույլ տա նման համեմատութիւն, հետևաբար, այն պետք է լինի ոչ թե ժամանակագրական, այլ տրամաբանական, բոլորի համար ընդհանուր: Հենց այդպիսի տրամաբանական սխեմա է մշակում Սվետոնիոսը իր կենսագրականների համար: Կենսագրականները բաժանվում են բաժինների, բաժինները խորագրերի, խորագրերը՝ ենթախորագրերի, ենթախորագրերը՝ կետերի, կետերի տակ թվարկվում են փաստերը: Յուրաքանչյուր փաստ գտնում է իր տեղը, տեղադրումը, դառնում է պարզ ու որոշակի, ինչպես համակարգված կատալոգում կամ թանգարանային ցուցապահարանում, յուրաքանչյուր խորագիր կրկնվում է կենսագրականից կենսագրական, օգնելով հետևել պլանին և հեշտացնելով համեմատութիւնը՝ ցաքուցրիվ փաստերի բանակը մի նոր խիստ կազմակերպութիւն է ստանում:

Սվետոնիոսի կենսագրական սխեման կազմված է չորս բաժնից՝ կայսեր կյանքը մինչև իշխանութեան գլուխ անցնելը, պետական գործունեութիւնը, մասնավոր կյանքը, մահը և թաղումը: Առաջին և վերջին բաժիններում, անհրաժեշտութիւնից ելնելով, հեղինակը հետևում է իրադարձութիւնների ժամանակագրական հաջորդականութեանը, բայց միջին, հիմնական բաժինները, որոնք ընդգրկում են կայսեր կառավարման ժամանակը, ամբողջութեամբ կազմված են ըստ տրամաբանական սխեմայի՝ խորագրերով ու ենթախորագրերով: Կեսարի կենսագրութեան մեջ այդ սխեման իսկույն աչքի չի զարնում՝ քանի որ դեպի իշխանութիւն Կեսարի ուղին շափազանց երկար է եղել, իսկ իշխանութեան գլուխ կանգնելը խիստ կարճ, ուստի բաժինների հավասարակշռութիւնը այստեղ ակամայից խախտվում է, սակայն արդեն այստեղ Սվետոնիոսը հստակ նշում է սահմանագիծը «պետական գործունեութեան» և «մասնավոր կյանքի» միջև (44, 4): Դրա փոխարեն Օգոստոսի կենսագրութեան մեջ, որտեղ հատկապես շատ նյութ կար և համակարգման կարիքը հատկապես մեծ էր, բաժինների բաժանումը պահպանված և ընդգծված է: «Կյանքի սկզբի» և «պետական գործունեութեան» միջև սահմանագիծը նշված է հետևյալ հեղինակային ընդմիջարկմամբ. «Ուրվագծելով նրա կյանքը ընդհանուր գծերով, ես այժմ կանգ կառնեմ մանրամասների վրա, բայց ոչ թե ժամանակի հաջորդականութեամբ, այլ առարկաների

հաջորդականությամբ, որպեսզի կարելի լինի դրանք ավելի ակնառու և հաճելի ներկայացնել» (9): «Պետական գործունեության» և «մասնավոր կյանքի» միջև եղած սահմանագիծը նշված է նոր ընդմիջարկմամբ. «Շարադրելով, այդպիսով, թե ինչպիսին է եղել Օգոստոսը զինվորական ու քաղաքացիական պաշտոններում, և թե ինչպես էր վարում նա պետական գործերը երկրի բոլոր ծայրերում խաղաղության ու պատերազմի ժամանակ, ես այժմ կանցնեմ նրա մասնավոր ու ընտանեկան կյանքին և կնկարագրեմ, թե ինչպիսին է նա եղել և ինչ է եղել նրա հետ տանը, մերձավորների շրջապատում պատանեկան տարիներից մինչև վերջին օրը» (61): «Մասնավոր կյանքից» մահվան նկարագրությունն ընթանում է սահուն և աստիճանական կերպով, սակայն Սվետոնիոսը գրեթե բռնի նշում է նաև այդ սահմանագիծը. «Նրա մահը, որի պատմությանը ես անցնում եմ, և նրա համահու աստվածացումը...» և այլն (97): Հետագա կենսագրություններում բաժինների սահմանները այդքան ակնառու նշված չեն, բայց բաժիններն իրենք անփոփոխ նույնն են մնում:

«Ոչ թե ժամանակի հաջորդականության մեջ, այլ առարկաների հաջորդականության մեջ» (neque per tempora, sed per species)՝ այսպիսին է սվետոնիոսյան պատումի հիմնական սկզբունքը: Այդ «առարկաները», որոնք սահմանում են բաժինների անդամատումը խորագրերի, անփոփոխ են բոլոր կենսագրություններում: Պետական գործունեության վերաբերյալ բաժնում դրանք գրաված պաշտոններն են, քաղաքական նորամուծությունները, սոցիալական քաղաքականությունը, դատարանը և օրենսդրությունը, ռազմական ձեռնարկումները, կառույցները, բաշխումները, հանդիսախաղերը և այլն: Մասնավոր կյանքի վերաբերյալ բաժնում դրանք են՝ արտաքինը, առողջությունը, ապրելակերպը (հագուստը, կերակուրը, քունը), բարձր (և անբարոյականությունը), կրթվածությունը, գիտական և գրական զբաղմունքները, հավատը և սնահավատությունը և այլն: Խորագրերի հատուկ խումբ են կազմում բնավորության այնպիսի գծեր, ինչպես գթասրտությունը, բարությունը, առատաձեռնությունը (կամ, ընդհակառակը, դաժանությունը, նախանձոտությունը, ագահությունը և այլն), ինչպես վերաբերմունքը հարազատների, բարեկամների, կլիենտների նկատմամբ և այլն. կախված այն բանից, թե որքանով են անհատի այդ գծերը անդրադարձել պետական գործերի վրա, նրանց բնութագրությունը մերթ ընկնում է պետական գործունեության վերաբերյալ բաժինը (Տիրերիոս, Կալիգուլա, Ներոն, Վեսպասիանոս), մերթ մասնավոր կյանքին վերաբերող բաժինը (Կեսար, Կլավդիոս): Կենսագրության սկզբի և վերջի բաժինները իրենց ժամանակագրական պլանով նույնպես հստակորեն կոտորակվում են խորագրերի՝ Կեսարի

բարձրացմանը Վերաբերող պատումում ընդգծված կերպով առանձնացված են այս աստիճանները՝ քվեստորությունը (6), էգիլությունը (10), պրետորությունը (14), կոնսուլությունը (19)։ Կլավդիոսի երիտասարդության վերաբերյալ պատումում՝ կյանքը մինչև Կալիգուլան (2—6) և կյանքը Կալիգուլայի օրոք (7—9), կենսագրության եզրափակիչ մասերում սովորաբար ստորաբաժանվում են մահը, թաղումը և կտակը։

Նույնպիսի մեթոդականությամբ խորագրերը մասնատվում են ենթախորագրերի՝ կայսեր սոցիալական քաղաքականության մեջ ամեն անգամ առանձնացվում է վերաբերմունքը դեպի սենատը, հեծյալների դասը և ժողովուրդը։ Հանդիսախաղերի մեջ՝ հանդիսախաղերը՝ թատրոնում, կրկեսում և ամֆիթատրոնում, գիտական և գրական զբաղմունքներում՝ զբաղմունքները՝ շատինանկան և հունական բանասիրությամբ և այլն։ Կալիգուլայի դաժանությունների մասին խորագիրը (27—33) բաժանված է «Դաժանությունն գործերի ժամանակ» (27—31) և «Դաժանություն հանգրստի ժամանակ» (32—33) ենթախորագրերի, իսկ այդ ենթախորագրերից առաջինը՝ «Դաժանություն արարքներով» (27—28) և «Դաժանություն խոսքերով» (29—31) և նույնիսկ այդ մանրագույն հատվածների ներսում փաստերի խմբավորումը տեղ-տեղ երևան է բերում բաժանման նոր հստակ հատկանիշներ (26, 4. 30, 2)։ Յուրաքանչյուր խորագիր և ենթախորագիր սովորաբար սկսվում է բնորոշող բառով, ինչպես բառարանում։ Այսպես, ազգականների նկատմամբ տաժած Տիրերիոսի ատելության նկարագրության մեջ (50—54) կարդում ենք. «Ազգականների նկատմամբ իր ատելությունը ամենից վաղ նա երևան բերեց իր եղբայր Դրուզոսի գեմ...» — «իսկ այնուհետև. «Լիվիային՝ իր մորը...». «Իր որդիներին...». «Իր հարսին՝ Ագրիպպինային...» և այլն։ Կլավդիոսի միջոցառումների նկարագրության մեջ (18—21)՝ մեկը մյուսին հետևում են՝ «Քաղաքի բարեկարգումը և մատակարարումը...», «Վառույցները...», «Բաշխումները ժողովրդին...», «Կրկեսային խաղերը...», «Գլադիատորական մարտերը...» և այլն։ Ըստ այդպիսի, ասես թե, ենթավերնագրերի հաճախ կարելի է քննել մեծ հատվածների պլանը։ Հրատարակիչները և թարգմանիչները լավ գիտեն, թե սովորաբար որքան դժվար է շինում պարբերությունների՝ բաժանել անտիկ գրողների սահուն հոսող կապակցված խոսքը։ Մվետոնիոսը այդ առումով բացառություն է կազմում, նրա մոտ ինքնըստինքյան է ստացվում պարբերությունների բաժանելու անհրաժեշտությունը։

Ըստ խորագրերի և ենթախորագրերի այդ բջիջների էլ Սվետոնիոսը տեղադրում է իր հաճաքած փաստերը։ Մկզբում ընդհանուր հայտարարություն, այնուհետև այն հաստատող մի շարք փաստեր՝ այդպիսին է

ևնթախորագրի սվետոնիոսյան պատումի այդ պարզագույն միավորի
 սովորական կառուցվածքը: «Բարեկամների նկատմամբ Կեսարը, ուշա-
 դիր ու բարի էր»՝ ի հաստատումն հետևում է երկու օրինակ: «Իսկ թշնա-
 միների հետ նա հեշտությամբ ու հաճույքով էր հաշտվում»՝ հետևում է
 երեք օրինակ, որոնք շարադրված են միատեսակ արտահայտություննե-
 լով («Գայոս Մեմմիոսին...», «Գայոս Կալվոսին...», «Վալերիոս Կա-
 տուլլոսին...»): «Ծվ նույնիսկ վրիժառության մեջ նա մեղմություն էր
 պահպանում...»՝ հետևում է չորս օրինակ, որոնք նույն տեսակ կրկնա-
 րանորեն են շարադրված, դրանցից վերջինը, այդ շարքը եզրափակողը՝
 մյուսներից ավելի մանրամասն է (տե՛ս Հուլ., 72—74): «Օգոստոսի վե-
 րաբերմունքը ստրուկների և ազատարձակների նկատմամբ խիստ էր,
 բայց ողորմած...»՝ հետևում են գթասրտության երկու օրինակ և խստու-
 թյան երեք օրինակ (տե՛ս Օգ., 67): «Դատական գործերը լուծելիս Կլավ-
 դիոսը դրսևորում էր մերթ զարմանալի իմաստություն, մերթ հազվագյուտ
 անխոհեմություն...»՝ հետևում են իմաստության երեք օրինակ և
 անխոհեմության չորս օրինակ (տե՛ս Կլավ., 15): «Գերմանիկոսը օժտը-
 ված էր արտակարգ գեղեցկությամբ, քաջությամբ, պերճախոսությամբ,
 գիտունությամբ, բարության և գրավչությամբ...»՝ այդ վեց արժանիք-
 ներից յուրաքանչյուրը ցուցադրվում է առանձին օրինակներով (տե՛ս
 Կալ., 3): «Կեսարը հոռմեացիներին ցույց տվեց և՛ զլադիատորների
 մարտ, և՛ թատերական ներկայացումներ, և՛ ձիարշավներ կրկեսում, և՛
 ատլետների մրցումներ, և՛ ծովամարտ...»՝ այդ հինգ զվարճություններից
 յուրաքանչյուրի մասին հետևում են մանրամասներ (տե՛ս Հուլ., 39):
 Այդպես մինչև վերջին մանրուքները Սվետոնիոսը պահպանում է իր շա-
 րադրանքի տրամաբանական կուռ կառուցվածքը: Ընդհակառակը, ժա-
 մանակագրական կապակցվածությունը նա ոչնչացնում է գրեթե բոնի կեր-
 պով: «Օգոստոսը միայն երկու բարեկամ ուներ, որոնց սկզբնապես
 բարձրացրեց, իսկ հետո մահապատժի ենթարկեց՝ Սալվիդիենոսը և
 Գալլոսը¹¹. առաջինին նա բարձրացրեց այսպես, երկրորդին այսպես,
 առաջինին մահապատժի ենթարկեց այս բանի համար, երկրորդին այս
 բանի համար» (տե՛ս Օգ., 66)՝ Սվետոնիոսը դիտավորյալ ընդհատում է
 Սալվիդիենոսի պատմությունը Գալլոսի պատմությամբ, մինչդեռ Պլու-
 տարքոսը անպայման առանձին և կապակցված կպատմեր Սալվիդիենո-
 սի մասին, հետո Գալլոսի մասին՝ նմանատեսակ օրինակներ Սվետո-
 նիոսի կենսագրականներում հանդիպում են ամեն քայլափոխի: Պատա-
 հական չէ, որ նա այնքան սիրում է մի իրազարժության վերաբերյալ
 պատմությունը բաժան-բաժան անել տարբեր խորագրերի. Կեսարի
 կենսագրականում նա երկիցս խոսում է Նիկոմեդեսի մասին (2 և 49),

երկիցս ծովահենների մասին (4 և 74), երկիցս Կլոդիոսի կռվի մասին (6 և 74), Օգոստոսի կենսագրականում՝ Պերուլլայի մոտ կատարված զոհամատուցման մասին (14 և 96), Կալիգուլայի կենսագրականում՝ Բայքի կամրջի մասին (19 և 32): Ասես նա վախենում է, որ ընթերցողը կտարվի կապակցված պատմությամբ և միշտ հիշեցնում է, որ այստեղ պատմությունը չէ գլխավորը: Ոչ թե պատմությունը, այլ թվարկումն է սվետոնիոսյան շարադրանքի հիմքը: Նման թվարկների կետերը կարող է ամբողջ արտահայտություններ գրավեն, ինչպես որ է բերված օրինակներում. կարող են արտահայտության ներսում համադասական նախադասությունների շարաններ կազմել, ինչպես Կեսարի մտահղացումները կամ Ներոնի գործողությունները թվարկելիս (Հուլ., 43. Ներ., 16). Կարող են սեղմվել մինչև դերբայական դարձվածների որևէ մի տեսարանի մանրամասնությունների արագ նկարագրության մեջ (Հուլ., 58, 2. Կալ., 13 և այլն), բայց ընթերցողը բոլոր ժամանակ հիշում է, որ նրա առջև էպիկական պատում չէ, այլ օրինակների տեղեկանք:

Հորինվածքն է որոշում ոճը: Ո՛չ աշխույժ պատումը, ո՛չ պատկերների վառվռունությունը պետք չեն Սվետոնիոսի ընդհանուր նպատակներին՝ նրան պետք են սոսկ ճշգրտություն, պարզություն և հակիրճություն: Նա այնպես չի գրում, ինչպես պահանջում է ոճաբանական ավանդույթը, այլ ինչպես պահանջում է նյութը: Նրան չի շփոթեցնում այն, որ նրա նախադասությունները մինչև միապաղաղության աստիճան միակերպ սկսվում են բնորոշող բառով և վերջանում են բայով, և որ կայսրերի արտաքինի նրա նկարագրությունը թվում է թե քաղվածք է նշանների ոստիկանական ցուցակից: Նրա ոճը՝ գեղարվեստական ոճ չէ, այլ գործնական խոսքի ոճ: Այդ ոճի ակունքները պետք է փնտրել կայսերական գրասենյակների պրակտիկայում: Արտահայտությունների միօրինակ կառուցվածք, բնորոշող բառ սկզբում, համադասություն ստորադասության փոխարեն, կապերի և շաղկապների բացակայություն, բառերի ավելաբանական զույգեր ճշգրտելու համար հասկացությունները («գիտակ և փորձված», «իսկություն և ճշմարտություն», «մեղսակից և մասնակից»)՝ սվետոնիոսյան ոճի բոլոր այդ բնորոշ նշանները իրենց նախակերպարը ունեն օրենքների, հրամանագրերի և դատական կանոնների ոճում: «Գործք աստվածային Օգոստոսի» նշանավոր արձանագրությունը նույնիսկ իր պլանով այնքան է հիշեցնում Սվետոնիոսի խորագրերը, որ որոշ գիտնականներ ի դեմս նրա տեսնում էին Սվետոնիոսի երկի անմիջական նմուշը: Իհարկե, այդ գործարար ոճի տարրերի հետ Սվետոնիոսի վարվելաձևում զգացվում է բերականական և ճարտասանական դպրոցի քաջ հմտավարժություն: Բայց հազիվ թե դա լիներ Քվինտիլիանոսի և նրա

հետևորդների կիկերոնյան դպրոցը, ինչպես ընդունված է մտածել. ավելի շուտ դա մի դպրոց էր, որ հարում էր Սենեկայի՝ կարճ արտահայտության և վառ մանրամասնությունների վարպետի, ավանդույթին: Կիկերոնյան ոճը Սվետոնիոսի կենսագրականներում համարյա աննկատելի է՝ շարահյուսության մեջ նա խուսափում է պարբերություններից և գերադասում է համադասական նախադասություններ, քերականության և լեզուի կայի մեջ նա չի ջանում հետևել «ոսկեդարյան» նորմերին և ազատորեն օգտագործում է իր ժամանակի խոսակցական դարձվածքները՝ նախդիրավոր կառուցվածքներ, ածանցական բառեր, ըղձական եղանակ սահմանականի փոխարեն, հունարանություններ և այլն: Արդարացիորեն նկատվել է, որ Օգոստոսի ոճի սվետոնիոսական բնութագրությունը (Օգ., 86) լիովին կիրառելի է Սվետոնիոսի սեփական ոճի նկատմամբ. «Ամենից ավելի նա ջանում էր հնարավորին շափ պարզ արտահայտել իր միտքը և, որպեսզի ավելի լավ հասնի դրան, ոչնչով չշփոթեցնելով և չմոլորեցնելով ընթերցողին կամ ունկնդրին, նա առանց տատանվելու նօխդիրներ էր դնում քաղաքների անունները տալիս և կրկնում կապերը, առանց որոնց խոսքը ավելի հեշտ կհնչեր, բայց ավելի դժվար և հասկացվեր...»:

Փաստականությունը՝ Սվետոնիոսի երկի գլխավոր հատկությունն է: Ինչպես Պլինիոսը իր «Բնական պատմության» յուրաքանչյուր գրքի մասին, այնպես էլ Սվետոնիոսը կարող էր դրել իր յուրաքանչյուր կենսագրականի մասին. «Հավաքված է այսքան և այսքան փաստ»: Հասկանալի է, որ այդպիսի յուրատեսակ նյութը պահանջում էր գեղարվեստական մշակման յուրատեսակ ձևեր: Ճարտասանական ձևերի համար, որոնցից օգտվում էր ավանդական պատմագրությունը, այստեղ տեղ չկար: Միայն երկու անգամ է Սվետոնիոսը իրեն թույլ տալիս ուրվագծել լայն ու ազդու պատկերներ ճարտասանական դարձվածքներով (Տիր., 61. Կալ., 37, 3). սովորաբար նա օգտվում է ավելի նուրբ միջոցներից: Նա կարողանում է հիշատակել եզակի դեպքի մասին որպես ընդհանուր կանոնի (Կեսարի սպանողների մահը, Հուլ., 89. Սեյանոսի դատեր մահը, Տիր., 61, 5). կարողանում է թույլ տալ ոչ իսկույն նկատելի շափազանցություն (Կեսարի նավարկումը Բրիտանիա, Հուլ., 57, բանտարկյալների գլխովին կործանումը Տիրերիոսի մահից հետո, Տիր., 75). կարողանում է մի քանի տարբերակներից հմտորեն ընտրել առավել ուժեղը (Հոմերի հրդեհը նրա համար Ներոնի անկասկած հանցագործությունն է, իսկ Կապիտոլիումի հրդեհը՝ Վիտելլիոսի ձեռքի գործը՝ Ներ., 38. Վիտ., 15. Տակիտոսը և այստեղ և ուրիշ դեպքերում ավելի զգույշ է արտահայտվում): Հետաքրքիր է, որ Տիրերիոսի մահը Տիրերիոսի և Կալիգուլայի կենսագրականներում նկարագրում է տարբեր տարբերակներով, թեև վե-

րապահումներով, Փաստերը թվարկելիս նա հմուտ, աստիճանականու-
 թյամբ հասնում է հարկ եղած տպավորության հասունացմանը (Կեսարի
 նախապատրաստվելը բաղաբացիական պատերազմին, Հուլ., 20—28,
 ժողովրդի վիշտը Կեսարի թաղման ժամանակ, Հուլ., 84, վտանգները, որ
 սպանում էին Տիբերիոսին Հռոգոսում., Տիբ., 12. Տիբերիոսի ճնշամի-
 ջոցները, Տիբ., 61—62. Գերմանիկոսի ողբումը, Կալ., 5. Կալիգուլայի
 նախասկզբնական, ժողովրդականությունը, Կալ., 14 և շատ ուրիշներ):
 Փաստերի շարանը նա եզրափակում է հաշվենկատորեն, ընտրված վեր-
 ջավորութամբ (այսպես, Կալիգուլայի կենսագրականում հանդիսախա-
 դերի իսկապես ազդու թվարկումը ոչնչի է հավասարեցվում բանաստեղծ-
 ների լուգոունյան մրցության վերաբերյալ բերված ծաղրական մանրա-
 մասնություններից, իսկ Կալիգուլայի տաղանդների թվարկումը ավարտ-
 վում է ոչնչացնող տեղեկանքով՝ «բայց և այնպես, նա լող սաչ չգիտեր»
 (Կալ., 20 և 54). հմմտ նաև վերջավորությունն այն մասին, թե ինչպես
 էր Կալիգուլան սահում շաղ տված ոսկու վրա, և ձի-կոնսուլի մասին, գլ.
 42 և 55): Հորինվածքային առավել ևս կարևոր դեր են կատարում ամ-
 բողջ կենսագրականների նախերգներն ու վերջավորությունները: Այսպես,
 Գոմիցիոսների հինգ սերունդների վայրագ սանձարձակությունների տե-
 սությունը գերազանց նախերգանք է ծառայում Ներոնի մոլեգնություն-
 ների համար, Գերմանիկոսի ջատագովական դիմանկարը վառ հակա-
 դրությունն է նրա որդի Կալիգուլայի մռայլ կերպարի, իսկ «լավ» ու
 «վատ» Կլավդիոսների փութկոտ տեսությունը կանխում է բարու և չարի
 հանելուկային խառնուրդը Տիբերիոսի հոգում, այսպես, Կեսարի կենսա-
 գրությունը ազդու կերպով ավարտվում է նրա սպանողների ճակատա-
 գրական կործանումով, «Կալիգուլայի» վերջավորությունը հմուտ վերձ-
 նահարվածով լրումին է հասցնում այդ տարիներին տիրապետած ճրն-
 շիչ սարսափի պատկերը, իսկ «Ներոնի» վերջավորությունում ժողովրդի
 սիրո և հիշատակի հիշատակությունը անսպասելի բարդություն ու խո-
 րություն է հաղորդում Կեսարների դինաստիայից այդ վերջինի ընտելա-
 կան կերպարին:

Անգամ խորագրերի միապաղաղ համակարգը, որն ընտրել է Մվե-
 տոնիոսը, չի կաշկանդում նրա պատումի ազատությունը: Կախված նյու-
 թի առկայությունից և բովանդակությունից, նա մերթ սեղմում է, մերթ
 ընդարձակում իր խորագրերը, տեղադրում դրանք տարբեր հաջորդակա-
 նություններ, նախապատրաստում մտածված անցումներով (տե՛ս, օրինակ,
 Կալ., 37—38, Վեսպ. 9—10). չկա այնպիսի երկու կենսագրություն,
 որոնցում խորագրերի կարգը միևնույնը լիներ: Վերջին վեց կայսրերի
 կարճ, կենսագրություններում, որտեղ Մվեստոնիոսը ավելի քիչ նյութ է

ունեցել, խորագրումը նվազ հստակ է դառնում, տրամաբանական խրմբավորման փոխարեն հաճախ հայտնվում է զուգորդականը (այսպես, օրինակ, մոռցվում է Վիտելլիոսի արտաքինի նկարագրութունը, գլ. 17, 2), իսկ Տիտոսի կենսագրականում կենսագրության սխեման գրեթե ամբողջովին փոխարինվում է Ներբոլյանի սխեմայով: Բայց նույնիսկ այնտեղ, որտեղ խորագրերը և թվարկումները կազմում են վարքագրության հիմքը, Սվետոնիոսը կարողանում է խուսափել միապաղաղութունից, հմտորեն կարգավորելով շարադրանքի տեմպը՝ մերթ նա սահմանափակվում է մեծ իրադարձությունների թռուցիկ ահնարկով, մերթ, ընդհակառակը, մոռնում է այնպիսի հետաքրքրական մանրուքների մանրամասն նկարագրություններ, ինչպես Օգոստոսի ձեռագիրը կամ կնիքը. մերթ մոռնում է վառ մանրամասնություն Օգոստոսի հայացքի ուժի մասին կամ սպանված Կեսարի կախ ընկած ձեռքի մասին, կամ գիտական շեղում puerperium բառի կամ libertini բառի մասին, մերթ, ի վերջո, անսպասելի մի դրվագ՝ նկարագրված հանգամանորեն, պատկերավոր և իրական գեղարվեստականությամբ: Ընթերցողը կնկատի, թե ինչպես հմտորեն են հակադրվում մանրակրկիտ, մանրամասների ճնշմամբ տքրված Կեսարի հաժումների և տատանումների նկարագրությունը Ռուբիկոնից առաջ և հաղթական պատերազմի կարևորագույն իրադարձությունների հետագա սրընթաց նկարագրությունը (Ղուլ., 31—35): Իսկ այնպիսի ծավալուն պատկերներ, ինչպես Կեսարի սպանությունը և թաղումը կամ Ներոնի կործանումը (երա դրամատիկորեն սլարզորոշ բաժանմամբ հինգ զործողությունների՝ խոռվության մասին առաջին լուրերից մինչև մեռնող կայսեր վերջին բառերը), նույնիսկ Սվետոնիոսի նկատմամբ անբարյացակամորեն տրամադրվածները հարկազրված են դասել լատինական արձակի լավագույն էջերի շաբթը: Սվետոնիոսի շարադրանքը կազմվում է մանր գծիկներից ու փաստերից, ինչպես խճանկար, որը պետք է դիտել ոչ թե մոտիկից, այլ հեռվից, բանասիրական դանդաղ ընթերցանության ժամանակ նրանք ցրիվ են գալիս և կորցնում են կապը, բայց սովորական արագ ընթերցողական ընկալման ժամանակ բոլորը ձուլվում է ամբողջական և անկրկնելի մի պատկերի մեջ, որը կայուն մնում է հիշողության մեջ: Սվետոնիոսը գրել է ոչ թե գիտնականների, այլ հետաքրքրասեր ընթերցողների զանգվածի համար, իսկ բոլոր դարաշրջանների հետաքրքրասեր ընթերցողները նրա գրքի նկատմամբ ավելի բարեհաճ են վերաբերվել, քան մասնագետ պատմաբանները:

Բոլոր այդ գեղարվեստական ձևերի նպատակը հասկանալի է. Սվետոնիոսը ուզում է շարադրանքին հաղորդել ցցունոթյուն և արտահայտ-

չափանութիւն, որպէսզի իրադարձութիւններն իրենք կարողանան խոսել իրենց մասին: Նա գիտե, որ իրադարձութիւնների գնահատականն այնքան ավելի համոզիչ է, որքան այն ավելի օբյեկտիվ է թվում, և դրա համար էլ ջանասիրաբար ձեռնպահ է մնում սեփական կարծիքներն արտահայտելուց: Դրա համար էլ դժվար է որևէ որոշակի բան ասել Սվետոնիոսի անձնական հայացքների մասին: Նրա բարոյախոսութիւնը սահմանափակվում է վրդովմունքի հազվագեպ նոտաներով կայսերական անառակութիւնը նկարագրելիս, նրա կրոնապաշտութիւնը հանգում է հին աստվածների պաշտամունքին և նշանների ու կանխանշանների սնապաշտական կուտակումին: Անգամ նրա պատմաքաղաքական կոնցեպցիան ոչ մի նոր բան չի պարունակում՝ կեղծավոր շարագործ Տիբերիոս, խելագար Կալիգուլա, տարօրինակ Կլավդիոս, անզուսպ Ներոն՝ բոլոր այդ կերպարներն արդեն կաղմավորվել էին մինչսվետոնիոսական ավանդույթի մեջ և գրեթե այդպիսին էլ հանդես են գալիս Տակիտոսի ու Դիոնի մոտ: Սվետոնիոսը հայտնագործութիւններ չէր անում, նա միայն փաստերով պատկերում էր ընդհանուր տեղերը, որոնց արդեն հավատում էր ինչպես ինքը, այնպես էլ նրա ընթերցողները: Փորձեր են կատարվել առանձնացնել նրա կոնցեպցիայում սենատական կամ հեծյալական գաղափարախոսութեան տարրեր, բայց արդյունքները խիստ վիճելի են ստացվել: Նրա հայացքները կուսակցութեան հայացքներ չեն, այլ ամբոխի հայացքներ, ինչպես ժամանակին հաջող արտահայտվել է հետազոտողներից մեկը: Դրա համար էլ նրա գնահատականի արդյունքները կանխորոշված են վաղօրոք՝ նրանք պաշտոնական են և ընդհանուր ճանաչում գտած:

Սվետոնիոսի համար կայսերական արժանիքների և թերութիւնների չափանիշը իդեալական տիրակալի այն կերպարն է, որի ձևավորումը և գծերը պատկերված են նախորդ հոդվածում: Սվետոնիոսի հերոսներից ամենից ավելի այդ կերպարին նմանվում էին Օգոստոսը և Տիտոսը: Հետաքրքիր է նշել, որ Կեսարի և Օգոստոսի կերպարները, որոնք մնացյալ բոլորից ավելի մանրամասն են նկարագրված, Սվետոնիոսի մեկնաբանութեամբ ակնհայտորեն հակադրվում են: Պրինցիպատի դարաշրջանում վերաբերմունքը դեպի Կեսարի կերպարը երկակի էր՝ կայսրերը պատվում էին նրան որպէս նախնու և որպէս հանճարեղ գորավարի ու մարդու, բայց քաղաքական պրոբլեմի նրա առաջարկած լուծումը մերժվում էր, այստեղ նմուշը ոչ թե Կեսարն էր, այլ Օգոստոսը: Այդպես է վարվում նաև Սվետոնիոսը. Կեսարը նրա համար մեծ մարդ է, բայց կործանարար տիրակալ, Օգոստոսը թերութիւններ ունեցող մարդ է, բայց բարերար տիրակալ: Օգոստոսի հակադրումը Կեսարին ակնառու է նրանց կենսա-

ցրականների շատ խորագրերից (ուղղմական քաղաքականությունը, հա-
 րարկությունները գինվորների հետ, քաղաքացիական իրավունքների
 յնորհումը, վերաբերմունքը դեպի նախանշանները) (հմմտ. Հուլ., 24, 3.
 67. 80, 2. 59; Օգ., 21, 2. 25. 40, 3. 92) և հատկապես վառ է երևում
 Կեսարի բռնակալական ձգտումները և Օգոստոսի հանրապետական իդի-
 ալները պատկերելիս (Հուլ., 76—79, Օգ., 28 և 52—53): Ընդ որում
 Օգոստոսի պատմության մեջ հստակորեն տարբերվում է վաղ շրջանը
 (մինչև պայքարը Անտոնիոսի դեմ), երբ նրանում մարդկային թերու-
 թյունները գերակշռում էին տիրակալի արժանիքներին, և հասունության
 շրջանը, երբ քաղաքական իմաստությունը ոչնչացնում է, շափավորում
 և կամ շղարշում նրա մարդկային պակասությունները: Նման էություն-
 յիա է ապրում նաև Օգոստոսի ավանդույթները շարունակող Տիտոսը իր
 խելահեղ երիտասարդությամբ և իմաստուն հասունությամբ: Կսղահա-
 ռակը, Սվետոնիոսի պատկերմամբ Տիրերիոսը և Դոմիցիանոսը իրենց
 տիրակալության տարիներին փոխվում են ոչ թե դեպի լավը, այլ դեպի
 վատը, և իշխանության բարեբախտ, խիստ խոստումնալից սկիզբը շու-
 տով փոխակերպվում է դաժան տիրանիայի (Տիր., 25—33—42: Դոմ.,
 3, 2): Այդ ուշադրությունը տիրակալի տվյալների և հատկությունների
 զարգացման նկատմամբ մեծապես բնորոշ է Սվետոնիոսի դարաշրջանի
 համար, երբ ամեն մի կայսր, իր համար ժառանգ ընտրելով որդեգրելու
 համար, պետք է ըստ ենթակայի արարքների կռահեր նրանում ապագա
 տիրակալին: Վերջապես, Կալիգուլայի և Ներոնի՝ բռնապետականության
 այդ ավարտուն մարմնավորումների, կերպարներն արդեն տրված են
 գրեթե զարգացումից դուրս, և նրանց արժանիքներն ու թերությունները
 հավաքված և բաժանված են տրամաբանական աստիճանականությամբ,
 բայց առանց ժամանակագրական վերլուծման՝ «մինչև հիմա խոսք էր
 գնում տիրակալի մասին, այժմ ստիպված ենք խոսել հրեշի մասին»
 (Կալ., 22)— այս արժանիքների և թերությունների առանձին-առանձին
 «կշռման» այն ամենավառ օրինակն է, որի վրա հառնում են բոլոր սվե-
 տոնիոսական գնահատականները:

Բարու և չարի այդ ելակետային սահմանաժրումն էլ բնորոշում է
 Սվետոնիոսի վերաբերմունքը դեպի աղբյուրները: Կենդանության օրոք
 արված ներբողյանների նյութը նրան ծառայում էր լցնելու համար առա-
 քինությունների վերաբերյալ խորագրերը, ետմահու փնովանքի նյութը՝
 կայսեր արատների վերաբերյալ խորագրերը: Նրա համար գոյություն
 չունեի հակասություն շողոքորթության և բամբասանքի միջև. նա չէր
 փորձում նրանց միջև գտնել ճշմարտության տեղը— ավելի շուտ, ընդ-
 հակառակը, նա մեղմացված տարբերակներին գերադասում էր ծայրա-

հեղինակները, որոսկեսգի արժանիքները և պակասությունները ավելի որոշա-
 կաբարձր հակադրվեին միմյանց: Հենց դրա համար էլ նա առանձնահատ-
 տուկ հաճույքով է դիմում այնպիսի նյութի, ինչպես Անտոնիոսի պամֆ-
 լետները Օկտավիանոսի դեմ, որոնց միտումնավորությունը կատարելա-
 պես ակնհայտ էր: Սվետոնիոսի երկի յուրահատուկ կառուցվածքը թույլ
 է տալիս կռահել, թե ինչպիսին էր աղբյուրների վրա նրա աշխատանքի
 մեթոդը: Ըստ երևույթին, նա, նախօրոք մշակելով կենսագրական խո-
 րագրերի համակարգը, մեկ երկ մյուսի ետևից էր նայում, քաղվածքներ
 անելով յուրաքանչյուր խորագրի և ենթախորագրի համար, իսկ հետո
 շարադրում էր հավաքված նյութը իր սիրած զննական թվարկումների
 ձևով: Այդ եղանակով նայված աղբյուրները պետք է խիստ ընդարձակ և
 տարատեսակ լինեին՝ տարեգրություններ, մենագրություններ, հուշա-
 գրություններ, տոհմագրություններ, պամֆլետներ, ճառեր, նամակներ,
 սենատական և քաղաքային տեղեկագրեր, օրենքներ, էդիկտներ և ան-
 դամ առարկայական հուշարձաններ, ինչպես մանուկ Օգոստոսի այն կի-
 սանդրին, որը հետո Սվետոնիոսը մատուցել էր Ադրիանոս կայսրին (Օգ.,
 7): Ցավոք սրտի, ըստ անտիկ պատմիչների ընդհանուր սովորույթի,
 Սվետոնիոսը խուսափում է ուղղակի մատնանշել աղբյուրները. նա դրանք
 միայն այն ժամանակ է անվանում, երբ շի ուզում իր վրա պատասխա-
 նատվություն վերցնել հաղորդվող տեղեկությունների համար, կամ երբ
 հարցը վիճելի է, կամ երբ նա հնարավորություն է ունենում հետաքրքիր
 և դժվար մատչելի աղբյուրից բերված քաղվածքով փայլելու, ինչպես,
 օրինակ, Օգոստոսի նամակներից: Բայց և այնպես, վկայակոչելիս նա
 հիշատակում է երեսուն հեղինակից ավելի, որոնցից ոմանք (Ակտորիոս
 Նազոն, Հուլիոս Մարթոս, Հուլիոս Սատուրնինոս, Աքվիլիոս Նիգերոս)
 այլևս ոչ ոքի կողմից չեն հիշառակվում: Այդ վկայակոչումների ճնշող
 մեծամասնությունը վերաբերում է Կեսարի և Օգոստոսի ժամանակի գրող-
 ներին, ուշ շրջանի հեղինակների մասին հիշատակությունները եղակի են.
 զգացվում է, որ հանրապետության վերջի քաղաքական պայքարի հուշար-
 ձանները ավելի հետաքրքիր նյութ էին պատմագրի համար, քան կայսե-
 րական վարչակարգով կաշկանդված պրինցիպատի պատմագրությունը:
 Շատ հետաքրքիր կլինեի պարզել Սվետոնիոսի կախվածության աստիճանը
 I դարի սենատական պատմագիրների (Ավֆիդիոս Բասսոսի, Սերվիլիոս
 Նոնիանոսի, Կլուվիոս Ռուփոսի, Պլինոս Ավագի, Ֆաբիոս Ռուստիկո-
 սի) շահակալված երկերից, դեպի որոնք են հառնում, վերջին հաշվով,
 և՛ Տակիտոսի, և՛ Պլուտարքոսի, և՛ Դիոնի տեղեկությունները: Բայց այդ
 ուղղությամբ կատարված բոլոր փորձերը ապարդյուն են անցել: Հետա-
 քրքիր է նշել, որ Սվետոնիոսը ոչ մի տեղ Տակիտոսից չի օգտվում, դի-

մելով սոսկ ավելի հին աղբյուրների, իսկ մեկ տեղում նա, անունը շտա-
յով, վիճաբանում է, ըստ երևույթին, հենց Տակիրտոսի հետ (Ներոնի բա-
նաստեղծությունների մասին, Ներ., 52): Ընդհանրապես, աղբյուրների
մասին իր հազվադեպ դատողություններում Սվետոնիոսը դրսևորում է
ողջամիտ խոհականություն՝ այսպես, Կալիգուլայի ծննդավայրի մասին
հատվածը (Կալ., 8) մնում է անտիկ պատմագիտական քննադատության
լավագույն նմուշը:

Այսպիսին են Սվետոնիոսի աղբյուրները: Իսկ ինչպիսի՞ն են նրա
նմուշները: Մենք խիստ վատ գիտենք անտիկ կենսագրական ժանրը,
որպեսզի պատասխանենք այդ հարցին: Վաթսուն տարի առաջ Ֆ. Լեոն
ուշագրավ ենթադրություն է հայտնել, որ անտիկ շրջանում գոյություն
են ունեցել երկու տիպի կենսագրություններ, կազմավորված հելլենիզմի
դարաշրջանում՝ մեկը, մշակված քաղաքական գործիչների վարքագրու-
թյան հիման վրա, կառուցվում էր ըստ ժամանակագրական պլանի, ինչ-
պես գեղարվեստական պատում (ինչպես հետագայում Պլուտարքոսի
մոտ), մյուսը, մշակված գրողների և փիլիսոփաների վարքագրության
հիման վրա, կառուցվում էր ըստ խորագրերի, որպես նյութերի նախնա-
կան հավաքում (ինչպես Սվետոնիոսի մոտ «Նշանավոր մարդկանց մա-
սին» երկում). Սվետոնիոսի նորարարությունը կայանում էր նրանում, որ
նա առաջինը փոխադրեց երկրորդ տիպի սխեման առաջին տիպի նյութի
վրա: Հետագա հետազոտությունները մեծապես խախտեցին այդ հիպո-
թեզի գրավիչ կապակցվածությունը. պարզվեց, որ գրողների հելլենիս-
տական կենսագրություններին էլ խորթ չեն եղել գեղարվեստական ձևե-
րը, և գովասանական ճառերի ու արձանագրությունների հոռմեական
ավանդույթներն էլ կարող էին ազդել Սվետոնիոսի խորագրումների վրա
ոչ նվազ, քան հունական նմուշները, և Սվետոնիոսն ինքն էլ իր կենսա-
գրականները կառուցելիս այնպիսի տրամաբանական և գեղարվեստա-
կան մտածվածություն էր դրսևորել, որ դրանք այլևս անհնարին էր հա-
մարել պարզապես «նյութերի հավաքածո»: Հարցը բաց մնաց: Մեզ հա-
մար Սվետոնիոսը նոր տիպի կենսագրականների առաջին ստեղծողը և
ներկայացուցիչն է, իսկ այդ տիպի ստեղծման խթան հանդիսացավ
Տրայանոսի և Ադրիանոսի դարաշրջանի պահանջը՝ տալու նախորդած դի-
նաստիաների յուրաքանչյուր կայսրի գործունեության որոշակի, փառ-
տերով հաստատված գնահատականը: Եվ քանի որ անցյալի վերա-
բերյալ հայացքների նմանաբնույթ վերանայում անխուսափելիորեն կա-
տարվում էր հետագայում յուրաքանչյուր մեծ պատմական շրջադարձի
ժամանակ, ուստի սվետոնիոսյան սխեման պատրաստակամությամբ ըն-
դունվեց նաև հետագա դարերի կենսագիրների կողմից: Մարիոս Մաք-

սիմոսը 11 դարում գրեց սվետոնիոսյան կենսագրութիւնների շպահական-ված շարունակութիւնը, վեց առեղծվածային «Օգոստոսների պատմութիւն գրողներ» վարքագրութիւնների շարը հասցրեցին մինչև Դիոկղետիանոսի գահակալումը 284 թվականին, և նույնիսկ Հռոմեական կայսրութիւն կործանումից շատ ժամանակ անց Այնհարդը Կառլոս Մեծի իր գովասանական վարքագրութիւնում հանգամանորեն վերարտադրել է սվետոնիոսական խորագրերը: Այդպես Սվետոնիոսն ինքը դարձավ նմուշ պատմական մեծ և ազդեցիկ ավանդույթի համար:

Սվետոնիոսը ոչ խոր մտածող էր, ոչ էլ հանճարեղ գրող: Բայց նա բավականաչափ զգայուն էր, որպեսզի որսար իր ժամանակի պահանջները, և բավականաչափ խելացի ու համարձակ, որպեսզի իր կարծիքի համար գտներ հնարավոր ձևերից լավագույնը: Դրա համար էլ նրա գիրքը հավասարապես մնաց որպես ամենաթանկ գրական հուշարձան ինչպես այն դարաշրջանի համար, որ նկարագրված է նրանում, այնպես էլ գրողի դարաշրջանի համար:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն գրքում երկերի ուսերեն թարգմանությունը կատարված է ըստ հետևյալ հրատարակությունների՝ «Տասներկու կեսարների կյանքը»— C. Suetoni Tranquilli opera ex rec. m. I hm, v. I. de vita Caesarum libri VIII. Lps., 1907.

«Քերականների և ճարտասանների մասին»—C Suetoni Tranquilli praeter Caesarum libros reliquiae, coll G. Brugnoli, p. I: de grammaticis et rhetoribus, Lps., 1959.

«Քանաստեղծների մասին»—Svetonio “de poelis” e biographi minori, restit, e comment. di A. Rostagni, ed 2a. Torino, 1956.

Բացի այդ օգտագործվել են նաև հետևյալ հրատարակությունները՝ G. Suetoni Tranquilli opera... cum J. A. Ernesti animadversionibus nova cura auctis emendatisque et Is. Casauboni commentario ed. F. A. Wolfius, v. I-IV, Lps, 1802; C. Suetoni Tranquilli opera textu ad praestantissimas editiones recognito continuo commentario illustravit, clavem suetonianam adiecit D. L. G. Baumgarten—Crusius, v. I-III. Lps, 1816-1818; C. Suetoni Tranquilli quae supersunt omnia rec C. L. Roth, Lps, 1858; Suetonius with the English translation by J. C. Rolfe, v. I-II, L—Cambr. Mass, 1913-1914; Suétone, Vies des douze Césars, texte étab et trad. par H. Ailloud, v. I-III. P. 1931-1932, C. Suetoni Tranquilli praeter Caesarum libros reliquiae ed. A. Reifferscheid Lps, 1860; C. Suetonius, Divi Augusti vita, with introd., analysis of the text, notes, appendices and index by M. Adams. L, 1939; C Suetoni Tranquilli Divus Augustus, acura di M A Levi, Firenze, 1951, C. Suetoni Tranquilli de vita Caesarum libri III-VI. Tiberius, Caligula, Claudius, Nero, with introduction and notes by J. B. Pike Boston, 1903, A commentary on C. Suetoni Tranquilli vita C. Caligulae Caesaris, ch 1-21 .. by J. A. Maurer, Philadelphia, 1949; C. Suetoni Tranquilli Vita Divi Claudii, commentario instruxit H. Smilda. Gromingen, 1896; Suetenius. Life of Vespasian. with notes and parallel passages de. by H. M T. Skerrettt, Philadelphia, 1924; *ինչպես նաև բոլոր մատչելի գիտական գրականությունը:*

Նոր լեզուներով կատարված թարգմանություններից հեղինակը համեմատվել է Ա. Շտահրի գերմանական դասական թարգմանության հետ (Sueton, Die zwölf Cäsaren, nach der Übersetzung v. A. Stahr neu hrsg, München—Leipzig, 1912) և Հահարպի Ֆրանսերեն թարգմանության հետ (Oeuvres de Suétone, trad. de La Harpe refondue par M Cabaret—Dupaty. P, “Collection Garnier”, s. a), *ինչպես նաև Ռուֆի և Այուի վերոհիշյալ հրատարակությունների հետ:*

Ռուսերեն լեզվով «Ճաստերկու կեսարների կյանքը» թարգմանվել է երիցսու Առաջին թարգմանությունը հրատարակվել է 1776 թ. (К. Светония Трапквилла Жизни двенадцати первых цесарей римских, переведены. Михайлом Ильинским, ч I—II, СПб, 1776); 1794 թ. այն երկրորդ ամուս կրճատմամբ վերահրատարակվել է Մոսկվայում բոլոր տասներկու կեսարների, հասկանալի է, լիովին ֆանտաստիկական, հետաքրքրական պարզաճաշակ պատկերներով (Жизнь и деяния двенадцати первых цесарей римских с раскрашенными изображениями, Москва, 1794) Թարգմանությունը չանասիրաբար է կատարված և հին դասականների XVIII դարի ռուսերեն թարգմանությունների լավ մակարդակի վրա է գտնվում, բայց մեր ժամանակների համար այն, իհարկե, արդեն հնացել է: Մյուս երկու թարգմանությունները պատկանում են Վ. Ալեքսևևին և Դ. Կոնչալովսկուն (Светоний Трапквилл. Жизнь двенадцати цесарей, с лат пер В А Алексеева, с введ. и примеч, СПб, 1901, վերահրատարակութ. 1904; Гай Светоний Трапквилл Жизнеописание двенадцати цесарей, пер и примеч Д П Кончаловского, предисл А. Пиотровского М—Л, «Academia», 1933), դրանք երկուսն էլ արդեն մատենագիտական հազվագյուտ գրքեր են դարձել: Նրանցից յուրաքանչյուրն ունի միմյանց հետ չհամընկնող արժանիք՝ Ալեքսևևն ալեյի հոգ է տանում ռուս ընթերցողի համար այն դյուրին դարձնելուն, Կոնչալովսկին՝ լատինական թնազիրը բառացիորեն հաղորդելուն. Ալեքսևևի թարգմանությունը ալեյի համաշափ ու հարթ է, Կոնչալովսկու թարգմանությունում սխալում հաջողությունների կողքին հանդիպում են զարմանալի անփութություններ: Ոչ մեկ և ոչ էլ մյուս թարգմանիչը չեն տալիս շարադրանքի յուրահատուկ պլեատնիտական ոճը. դրա համար էլ նոր թարգմանության մեջ հատուկ ուշադրության է դարձված Ավետոնիոսի երկի գեղարվեստական առանձնահատկությունները հաղորդելուն:

Հատվածաբար պահպանված «նշանավոր մարդկանց մասին» երկը ռուսերեն երբեք չի թարգմանվել, և դրա թարգմանությունը այստեղ առաջին անգամ է տրվում:

Կից ծանոթագրությունները նպատակ ունեն լուսարանել «Ճաստերկու կեսարների կյանքը» ոչ այնքան որպիս պատմական, որքան որպիս գրական հուշարձան: Ուստի և այն հարցը, թե որքանով են իրականությանը համապատասխանում կայսրերի Ավետոնիոսի նկարագրած կերպարները, այստեղ համարյա չեն շոշափվում. ուրիշ պատմագիրներից բերվող մանրամասները և ռեզյաճեռները պետք է սոսկ լրացնեն կայսրության առաջին հարյուրամյակի այն ընդհանուր պատկերը, որը կազմվել էր հռոմեական պատմագրության մեջ առ մ. թ. II դարի սկիզբը և մնում էր որոշիչ առաջին կեսարների մասին սերունդների բոլոր պատկերացումների համար: Իրականություններից ծանոթագրություններում չեն բացառվում առավել հայտնիները, որոնց մասին տեղեկություններ կարելի է քաղել ցանկացած դասագրքից (կոնսուլ, պրետոր, տրիումֆ, յրովինցիա և այլն): Բոլոր կարևորագույն տարեթվերը տրված են ժամանակագրական քանակաբանությամբ, բոլոր անունները՝ անվանացանկում, աշխարհագրական անունների մեծ մասը՝ գրքի վերջում տրված քարտեզում:

Կրկնողություններից խուսափելու համար այստեղ բերում ենք հռոմեական և հունական չափերի համակարգի հիմնական միավորները, որոնք հանդիպում են Ավետոնիոսի մոտ՝ 1 ոտնաչափ = 29,6 սմ, 1 քայլը (= 5 ոտնաչափ) = 1,48 մ., 1 մզոնը (= 1000 քայլի) = 1,48 կմ, 1 հունական ստադիումը = 177,6 մ., — 1 յուգերը = 0,25 հա, — 1 Ֆունտը ≈ 327,5 գր., 1 հունական մինան = 941,2 գր., 1 հունական տաղանդը ≈ 20,47 կգ, — 1 մոդիուսը («չափ») = 8,73 լիտրի, 1 սեքստարիումը = 0,55 լիտրի: — 1 սեստերցիումը ≈ մոտ 8,3 կոպ. (սա հիմնական հռոմեական դրամական միավորն է. բոլոր գումարները, որոնց

գծագրում հաշվին միասնորը անվանված չէ՝ «Ժամանակների նախագիտ 150 միլիոն» և այլն—
տրված են անստեղծություններով)։ 1 տասն (= $1/4$ սեռերացրում) քամոս 2 կոպ., 1 դինարը
(= 4 սեռերացրում) = 33 կոպ., 1 հունարանը դրամը \approx 1 դինարի. 1 հունական տաս-
նանգը (= 60 միլայթ = 6000 դրամ) \approx մոտ 1920 ուրբու: Հատկանալի է, որամի
գնողունակության մասին այդ մոտավոր թվերը ոչինչ ասել չեն կարող:

Անտիկ հեղինակներից յուրք վկայագրումները տրված են ըստ ընդհանուր ընդուն-
ված համակարգի: Ապալիանտին վկայագրումներն ի նկատի ունենալով «Քաղաքացիական պա-
տերազմները», Պլինիոսին վկայագրումներն (առանց երկր հիշատակելու) — «Քնական
պատմությունը» Կեսարի, Գալլայի և Օտոնի կենսագրությունների վերաբերյալ ծանոթա-
գրություններում Պլուտարքոսի համանուն կենսագրությունների վկայագրումները տրք-
վում են միայն հեղինակի անունով: Յուրիստի «Աննալները» և «Պատմությունները»
նշանակված են «Անն.» և «Պատմ.» կրճատումներով: Քաղվածքներում մասամբ օգտա-
գործված են աղբյուրների գոյություն ունեցող առաջին թարգմանությունները (Վ. Մոդես-
տովի՝ Տակիտոսի համար, Ս. Ժեբելի և մյուսների՝ Ապալիանտի համար, Վ. Գորենշ-
տեյնի՝ Կիկերոնի համար և այլն):

Սվետոնիոսի կենսագրությունների վկայագրումների համար ծանոթագրություննե-
րում, աղյուսակում և անվանացանկերում ընդունված են հետևյալ կրճատումները՝ Հուլ-
(իոս), Օգ(աստոս), Տիր(երիոս), Կալ(իգուլա), Կլավ(դիոս), Ներ(ոն), Գալ(լա), Օտ(ոն),
Վիտ(ելիոս), Վեսպ(անիանոս), Տիտ(ոս), Դոմ(իցիանոս), Քեր(ականներ և ճարտա-
սաններ), Վերգ(իլիոս), Հոր(ացիոս), Պեր(ոս), Լուկ(անոս):

ՏԵՄԵՐԿՈՒ ԿԵՍԱՐՆԵՐԻ ԿՑԱԼՔԸ

Միջին դարերում «Տասներկու կեսարների կյանքը» մեծ համբավ էր վայելում և
պահպանվել է շատ ձեռագրերում: Վերջին հաշվով նրանք բոլորն էլ սկիզբ են առնում
մի միակ անտիկ ձեռագրից, որը վերապրել է բարբարոսական արշավանքների «միջին
դարերը» և եղել է Կառլոս Մեծի արքունի «ակադեմիայի» տնօրինության տակ: Այդ ձե-
ռագրի միջոցով է Սվետոնիոսին ծանոթացել Այնհարդը, երբ շուրջ 818 թ. գրում էր իր
«Կառլոս Մեծի կյանքը», որը շանասիրաբար վերարտադրում է Սվետոնիոսի կենսա-
գրական «խեմաները»: Այնուհետև այդ ձեռագիրը պահպանվում էր Յուլիանի սբ. Բոնի-
ֆացիոսի նշանավոր արքայաբանում, և նրանից ընդօրինակումներ էին կատարվում:
Պահպանվել է մի հետաքրքրական նամակ, որը 844 թ. գրել է դատականների հայտնի
տիրոջ և հավաքող Սեդուատոս Լուպոսը՝ Զերեի արքայա Մարկվարդոսին՝ Պրյունի ար-
քային, որտեղ նա խնդրում է ձեռք բերել իր համար Սվետոնիոսի Յուլիանի ձեռագիրը՝
արտագրելու համար և աղարկել «ամենաճուշակի ստրճանդարի հետ»: Այդ Յուլիանի ձեռա-
գիրը, ոչ էլ նրանից կատարված առաջին ընդօրինակումները մեզ չեն հասել, ոակայն ար-
դեն այդ առթառում, ըստ երևույթին, անհետացել էր ութ գրքերի բաժանումը և կորսվել
էր երկասիրության սկիզբը, որը դեռևս VI դարում հարածի էր Հովհանն Լիդիացուն:

«Կեսարների» պահպանված ձեռագրերը կարելի է բաժանել չորս խմբի: Առաջին
խմբին է վերաբերում ամենահին և լավագույն ընդօրինակությունը, IX դարի այսպես
կոչված codex Memmianus-ը (Ֆրանսիացի դիվանագետ Henri de Mesmes-ի անունից,
որը տիրում էր այդ ձեռագրին XVI դարում. այժմ այն cod. Parisinus 6215 է) և նշա-
նակալի շախմատ նրան գիշող cod. Gudianus 268, XI դարից: Երկրորդ խմբին են վերա-
բերում մի շարք ձեռագրեր, որոնք հասնում են մոտավորապես XI դարի ընդհանուր
սկզբնօրինակը. նրանցից լավագույնն է cod. Vaticanus 1904, XI—XII դարերից, որը
Իմր նույնիսկ առկա է մեր և դատում, քան Gudianus-ը, ապա cod. Laurentianus 68,7,

XII դարից և ուրիշներ: Ծրրորդ խումբը, որ հանում է նույն ժամանակի մյուս նախօրինակին, ներկայացված է cod. Parisinus 6116, XII դարից և այլք: Նրա նշանակությունը նվազ է: Վերջապես, շրրորդ խումբը կազմում են Վերածնության դարաշրջանի ընդօրինակությունները, որոնք գրեթե կարևորություն չունեն նախասկզբնական տեքստի վերականգնման համար:

Սվետոնիոսի առաջին տպագիր հրատարակությունները համարվում են Հոմի 1470 թ. երկու և Վենետիկի 1471 թ. հրատարակությունները: Դրանց հիմքում ընկած էին ուշ ժամանակաշրջանի ոչ կատարյալ ձեռագրերը. նրանց տեքստը վերատպվում էր հրատարակությունից հրատարակություն ավելի քան հարյուր տարի, ստվարանալով տաղանդավոր խմբագիրների՝ Սաբելլիկոսի (Վենետիկ, 1490), Բիրուալդեսի (Բոլոնիա, 1493 և 1506), էրազմի (Քազել, 1518), Ստեֆանի (Փարիզ, 1543), Կազոբոնի (Ժնև, 1595) կոահողական վերականգնումներով ու ժանոթագրություններով: 1564 թ. Տուրնեթոսը առաջին անգամ հրատարակեց cod Memmianus-ի մի շարք ընթերցումներ, իսկ 1610 թ. Կազոբոնը առաջին անգամ օգտագործեց այդ ձեռագիրը Սվետոնիոսի իր երկրորդ (Փարիզյան) հրատարակության մեջ. այդ ժամանակից հրատարակիչները գրեթե բացառապես հենվում են այդ ձեռագրի և առաջին ժանոթագրողների (Գրեվիոսը և Գրոնովիոսը XVII դարում, Բուրմաններ, էոնեստին և Ուդենյորպը XVIII դարում) աշխատությունների վրա: Ձեռագրերի գիտական համադրման հիմքի վրա քննադատական հրատարակություն մտահղացել էր դեռևս Բենտլին XVIII դարում. առաջինը այն իրագործեց Կ. Լ. Ռոտը 1858 թ., որին նշանակալից չափով հետևում են բոլոր հետագա հրատարակություններն ու ուսումնասիրությունները:

Տեքստի բաժանումը գրքերի վերականգնված է Կազոբոնի կողմից. բաժանումը գլուխների՝ քաղվածքներ կատարելու հարմարության համար, մտցված է էրազմի կողմից, պարագրաֆների բաժանումը՝ Իմի կողմից, որին հետևում է նաև ներկա հրատարակությունը (հարկ է նշել, որ Սյուրի հրատարակության մեջ ընդունված է պարագրաֆների այլ համարակալում, որ տարածում չգտավ):

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀՈՒՈՒՈՍ

Կեսարի վարքագրության սկիզբը, ինչպես ասվել է, չի պահպանվել: Դատելով սվետոնիոսական կենսագրությունների սովորական սխեմայից, կորսված մասում շարադրված է եղել Հուլիոսների ծագումնաբանությունը, տեղեկություն է տրվել Կեսարի ծննդյան մասին (ուղեկցվող նախանշաններով) և կյանքի առաջին տարիների մասին: Միակ հատվածը, ըստ երևույթին, պահպանել է Սերվիոսը («էնեականի» VI, 799, ժանոթագրության մեջ)՝ «Կեսարի վարքագրության մեջ Սվետոնիոսը հաղորդում է, որ ամբողջ աշխարհով մեկ գուշակները համբավեցին մի անհաղթ զորավարի ծննդյան մասին»:

1. Սվետոնիոսը (ինչպես և Պլուտարքոսն ու Ապպիանոսը) Կեսարի ծնունդը վերագրում են մ. թ. ա. 100 թվականին, որը երևում է մահվան պահին Կեսարի տարիքի մասին նրանց ցուցումներից (տե՛ս գլ. 88): Սակայն Կեսարի գրված կուրուլային պաշտոնների ժամկետները մատնանշում են, որ նա ծնվել է 102 կամ 101 թվականին, և շատ հետազոտողներ ընդունում են այդ տարեթիվը: Դրան համապատասխան, Կեսարի տասնվեցերորդ տարին, ըստ Սվետոնիոսի, ընկնում է 85/84 թվականին, իսկ ըստ ուղղված հաշվի՝ 87/86 թ., դրան համաձայն է նաև Վելլեոսի (II, 43) մատնանշումը, որ «համարյա տղա, Մարիուսը և Կիննան նրան նշանակեցին Յուպիտերի քուրմ»: Մարիուսը և Կիննան կոնսուլներ են եղել 86 թ.:

2. Սուլլայի գայրույթի շարժառիթների մասին ավելի տրգարացի գրում է Պլուտար-

բոսը, 1. «Սուլլայի ատելության պատճառը Կեսարի նկատմամբ վերջինիս ազգակցու-
թյունն էր Մարիուսի հետ, քանզի Մարիուս Ավագը ամուսնացած էր Յուլիայի՝ Կեսարի
հորաքրոջ հետ. այդ ամուսնությունից ծնվել էր Մարիուս Կրտսերը, որը, հետևաբար,
Կեսարի հորաքրոջ տղան էր»: Քրմական աստիճանից Կեսարը գրկվեց Սուլլայի իշխա-
նություն գլուխ գալուց (82 թ.) հետո անմիջապես, երբ վերացվեցին Մարիուսի և մա-
րիուսականների բոլոր կարգադրությունները, կնոջ օժիտից՝ հետագայում, Կոնսելիայից
ամուսնալուծվելուց հրաժարվելուց հետո:

3 Վեստալուհիները օգտվում էին մահվան դատապարտվածներին պաշտպանելու իրա-
վունքից (Տիր., 2, Վիտ., 16):

4 Նիկոմեդեսի մասին տե՛ս գլ. 49:

5 Լեսբոսի Միթրիենեն միակ քաղաքն էր հռոմեական Ասիայում, որը հավատարիմ
էր մնացել Միհրդատին նույնիսկ նրա պարտությունից հետո. դրա համար քաղաքը գրավ-
վեց և ավերվեց:

6 Կադես պսակը (corona civica) պարգևատրումն էր նրա, ով ճակատամարտի ժա-
մանակ փրկել էր Հռոմի քաղաքացու կյանքը:

7 Կեսարի ճառը Դուլաբելլայի դեմ հայտնի էր դեռևս Տակիտոսին (Ձրույց հռետոր-
ների մասին, 34) և Հելլիոսին (IV, 16): Նմանատեսակ պրոցեսները ազնվածին երի-
տասարդների համար սովորական քաղաքական նախաքայլ էին:

8 Պլուտարքոսի մոտ իրադարձությունների հաջորդականությունը այլ է՝ Կեսարը
Սուլլայի հետապնդումներից թաքնվում է Բութանիայում Նիկոմեդեսի մոտ, հետո ընկնում
1 ժովահենների ձեռքը, ապրում է Հռոդոսում, Սուլլայի մահից հետո վերադառնում է
Հռոմ և դատի է տալիս Դուլաբելլային. Ասիայում Կեսարի զինվորական ծառայության
մասին Պլուտարքոսը չի հիշատակում:

9 Ֆարմակուսսա կղզին— էգեյան ծովում Միլեթի մոտ:

10 Ըստ Պլուտարքոսի, ժովահենները Կեսարից 20 տաղանդ փրկագին պահանջեցին,
իսկ նա ինքը նրանց 50 տաղանդ առաջարկեց: Փրկագինը տրամադրեցին փոքրասիական
քաղաքները:

11 Զինվորական տրիբունները (լեգեոնների փոխովի հրամանատարները) մասամբ
և, անակվում էին կոնսուլների, մասամբ ընտրվում ժողովրդի կողմից:

12 Գովաբանական ճառերը մահացած այր մարդկանց և ծեր մատրոնաների մասին
վաղուց ի վեր Հռոմում սովորույթ էին, երիտասարդների մասին առաջին անգամ մուծեց
Կեսարը: Յուլիայի թաղումը կանխամտածված մարիուսական ցույց էր, ինչպես ցույց է
տալիս Պլուտարքոսը, 5:

13 Պոմպեան պատկանում էր Պոմպեոս Ռուփոսների տոհմին, որը ազգական էր
Պոմպեոս Ստրաբոններին, որոնցից ծագում էր զորավար Պոմպեոս Մեծը:

14 Կլոդիոսը թափանցեց Կեսարի տունը Բարի աստվածուհու տոնին, որն արգել-
ված էր տղամարդկանց համար. այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Պլուտարքոս, 9—
10.

15 Գադեսը (այժմ Կադիս) Հերակլեսի իր տաճարով նկարագրված է Ստրաբոնի
մոտ, III, 5, 3—10: Այս դրվագը Պլուտարքոսը վերագրում է Կեսարի ավելի ուշ շրջանի
պրոպրետորությանը:

16 Կեսարի տարիքը 67 թ.՝ 33 տարեկան (ըստ Սվետոնիոսի), Այեքսանդր Մակե-
դոնացու մահվան տարիքը:

17 Նույնիսկ Արտեմիդոս Դալդիանացու (մ. թ. II դար) «Երազահանում» նախա-

տեղափոխված և աշխարհի մեկնություն՝ «Զուգավորում մութ հեռ... դեմագոգի և քաղաքագետի համար՝ բարի նշան է, քանի որ մայրը նշանակում է հայրենիք» (1, 79): Պլուտարքոսը (33) այդ երկուսը վերագրում է Թուրքիկոնից առաջ վերջին գիշերին:

18 Տրանսպադանական Փալլիայի (Պո գետից հյուսիս) գաղութները լատինական քաղաքացիություն ստացան (տե՛ս «Օգոստոսի» 131 ժանոթագր.) 89 թ., դաշնակցային պատերազմից հետո, և այժմ ուզում էին հռոմեական քաղաքացիություն ձեռք բերել, դառնալով դիկտատոր, Կեսարը այդ տվեց նրանց:

19 Կրասսոսի և մյուսների դավադրությունը, որոնց հետ կապված էին նաև Կատիլինան և Փնեոս Պիզոնը, տեղի է ունեցել 66 թ. վերջին (հաջորդ տարվա համար կոնսուլների ընտրությունները տեղի էին ունենում հուլիս-օգոստոսին). այդ դավադրությանը Կեսարի ունեցած մասնակցության մասին չեն հիշատակում ոչ Սալլուստիոսը և ոչ էլ Դիոնը:

20 Կիկերոնի նամակները Ակսիոսին (համեմայն դեպս, երկու գիրք) չեն պահպանվել. տե՛ս «Письма М. Туллия Цицерона», т III М, изд-во АН СССР, 1951, с. 521

21 Ամբրոններ— գալլական ցեղ, որը մասնակցել էր կիմբրների և տետոնների արշավանքին և նրանց պարտությունից հետո մնացել էր Ցիզալպիական Փալլիայում. տրանսպադանցիների մասին տե՛ս 18-րդ ժանոթագրությունը:

22 Պիզոնը, «ազնվական ծագում ունեցող, անսահման խիզախության տեր մի երիտասարդ, ազքատ, խարդավանասեր, որին չքավորությունը և անբարոյականությունը մղել էին պետական հեղաշրջման» (Սալլուստիոս, Կատիլինայի դավադրությունը, 18), սպանվեց իսպանացիների ձեռքով ծառայության վայրը մեկնելու ճանապարհին:

23 Կոմիցիում— Ֆորումի բարձրագույն մասը, վաղեմի ժողովրդական ժողովները վայրը:

24 Բազիլիկներ— սյունաշարերով ուղղանկյուն կառույցներ, որոնք շրջապատում էին Ֆորումը, առևտրական գործարքների և դատավարությունների վայրը:

25 Սակայն Կեսարը ռուրս հանել տվեց ամբողջ 320 զույգ զլադիատոսներ (Պլուտարքոս, 5): Ամբողջ հարդարանքը և զինավորումը արծաթից էր. «այն ժամանակ դա առաջին անգամն էր, իսկ հիմա դրա հետ կմրցակցի նույնիսկ մեկ ուրիշ գավառական քաղաք»,— գրում է Պլինիոսը (33, 16, 53):

26 Արտահերթ նշանակում— քանի որ Կեսարը դեռևս չէր եղել ոչ պրետոր և ոչ էլ կոնսուլ:

27 Պտղոմեոս X Ալեքսանդր թագավորը գահընկեց արվեց ալեքսանդրիացիների կողմից 80 թ.: Նրա կտակը (հավանաբար, կեղծված) Եգիպտոսը ժառանգություն էր թողնում հռոմեական սենատին և ժողովրդին:

28 Նախագահությունը դատարանում միջանկյալ աստիճան էր էդիլության և պրետորության միջև:

29 Կոնսիլիոսի օրենքներ— դիկտատոր Սուլլայի՝ պրոսկրիպտանների (83—82 թթ) նախաձեռնողի, օրենքները:

30 «Վարձու» մեղադրողը ժողովրդական տրիբուն Տիտոս Ատտիոս Լարինոսն էր, Թարիրիոսին պաշտպանում էր Կիկերոնը, որի ճառը պահպանվել է:

31 «Ոչ վաղ»— շափազանցություն է. հանցագործության և Թարիրիոսի դատավարության արանքում անցել էր 37 տարի:

32 Կեսարի մրցակիցներն էին Կատուլոսը և Սերվիլիոս Իսավրիկոսը, որանցից առաջինը նրան նույնիսկ կաշառք էր առաջարկել թեկնածությունը առաջադրելուց հրաժարվելու համար (Պլուտարքոս, 7):

33 Կատիլինայի գավազրուֆյան քացահայտումը նկարագրել է Սալլիստիստը (Կենսարի ճառը՝ գլ. 51, Կատոնի ճառը՝ գլ. 53):

34 Դեցիմոս Սիլանոսը հայտարարել էր, «որ նա իբր թե բարձրագույն շափ առելով ի նկատի է ունեցել ոչ թե մահը, այլ բանտը՝ Հռոմի քաղաքացու համար դա պատիժներից բարձրագույնն է» (Պլուտարքոս, Կատոն Կրտսեր, 22):

35 Կեսարին տոգայով ծածկել էր Կուրիոն Ավազը. նիստը, որի մասին խոսք է գնում, տեղի էր ունեցել դեկտեմբերի 5-ին (63 թ.), այնպես որ «մինչև տարվա վերջը» մնում էր մեկ ամսից էլ պակաս:

36 Քվինտոս Լուսացիոս Կատուլոսը վերակառուցել էր Կապիտոլիումը 83 թ. հըրդհից հետո. Կեսարը առաջարկել էր այդ առաքելությունը հանձնարարել Պոմպեոսին, «գտնելով նրանից, որ Կատուլոսը և օպտիմատները նոր տարվա այդ առաջին օրը ուղեկցում էին նորընտիր կոնսուլներին և քացակայում էին ժողովրդական ժողովից»:

37 Մետելլոսը առաջարկել է Պոմպեոսին զորքով Իտալիա կանչել ընդդեմ Կիկերոնի և օպտիմատների, որոնք քվեարկել էին կատիլինականների մահապատժի կողմ. տրիրոնը, որ արգելք էր դրել առաջարկության վրա, Կատոնն էր:

38 Վետտիոսը պատժվեց այն բանի համար, որ դատարան չէր ներկայացել, որտեղ նրան առաջարկվել էր ապացուցել Կեսարի դեմ հարուցած մեղադրանքը:

39 Որպես Կեսարի երաշխավոր հանդես էր եկել Կրասոսը: Ըստ Ապպիանոսի (II, 5) Կեսարի պարտքերի զուամարը հասնում էր 25 մլն. սեստերցիումի:

40 «Այն անձանց, ովքեր տրիումֆ էին ուզում ձեռք ձգել, հաթկ էր Հռոմից դուրս մտնել, իսկ կոնսուլություն ձեռք բերողներին ներկա լինել Հռոմում» (Պլուտարքոս, 13): Կեսարը փորձում էր կոնսուլության հասնել բարեկամների միջոցով, բայց դրան խոչընդոտեց Կատոնը:

41 Ճննտուրիաներ՝ ժողովրդական ժողովի ընտրական կոլեգիումներ, որոնք կառուարում էին կոնսուլների ընտրությունը:

42 «Անտառներ ու արօտավայրեր» — ըստ մեկ մեկնաբանության, դրանք կարող էին լինել խուլ պրովինցիաներ, որոնք ռազմական ձեռնարկումների փոխարեն կուսակալներին խոստանում էին սոսկ հսկողություն անդ ու անդառտանի վրա, ըստ ուրիշ մեկնաբանության՝ դրանք ամենևին էլ կուսակալություններ չէին, այլ հոգաբարձություն պետական կալվածների և ճանապարհների նկատմամբ (colles, իսկն ասած «արահետներ»):

43 Հաշվետվություններ՝ այսպես կոչված acta senatus: Երանց հրատարակումը մի քայլ էր հաճոյանալու ժողովրդին:

44 Ֆուսկեր — լիկտորների կրած ճիպոտների տրցակները, մագիստրատական իշխանության նշանը. լիկտորները ֆուսկերով ուղեկցում էին, հերթափոխվելով, մեկ ամիս՝ մեկ կոնսուլին, մյուս ամիս՝ մյուսին:

45 Կեսարի օրենսնախագիծը և ֆորումում տեղի ունեցած հետագա ընդհարումները ամենից ավելի մանրամասն նկարագրել է Ապպիանոսը, II, 10—12:

46 Ստելլատյան հողամաս — Կամպանիայի դաշտի մի մասը Ֆալերնոյի մոտ: Կամպանիայի դաշտը Իտալիայում վերջին ager publicus հողամասն էր, որը դեռևս չէր բաժանված մասնավոր տիրույթների:

47 Առանց փնտհանալության՝ 20 մարդուց կազմված հատուկ հանձնաժողովի հայեցողությամբ (Վելլեոս, II, 45): Հեծյալ-վաշխառուներին արված գիշման քաղաքական նշանակությունը մասնանշում է Ապպիանոսը (II, 13):

48 Կատոնը, ցանկանալով ձախողել քննարկումը, մի քանի ժամ երկարաձգեց իր

ճառը: Կենսաբույժական կարգադրեց նրան բանտ տանել, բայց սենատը լրիվ կազմով շարժվեց ուղեկցելու նրան, և Կեսարը վերացրեց հրամանը (Հելլիոս, IV, 10):

49. Կիկերոնը իր հարձակումը կատարեց հանուն Գայոս Անտոնիոսի արտասանած ճառում (Տան մասին, 16, 41, հմմտ. Դիոն, 38, 10):

50. Իններորդ ժամին, այսինքն արդեն ժառայողական օրվա վերջին, Կիկերոնի ճառից երեք ժամ անց:

51. Կլոդիոսը ձգտում էր անցնել պլեբեյության, որպեսզի ժողովրդական տրիբուն ընտրվի:

52. Տեքստը վնասված է. ըստ երևույթին, մատենագիտի անունը դուրս է մնացել: Դա նույն վետտիոսն էր, որը հիշատակվել է գլ. 17-ում: Հրահրիչներ էր նա անվանում Բիբուլոսին, Կիկերոնին, Կատոնին (Ապպիանոս, II, 12), Լուկուլլոսին (Պլուտարքոս, Լուկուլլոս, 42). ավելի մանրամասն տե՛ս՝ Կիկերոն, Ատտիկոսին, II, 24: Քաղաքացիական պատերազմների պատմության մեջ դա ամենամութ դրվագներից մեկն է:

53. Սերվիլիոս Կեպիոնին Պոմպեոսը խոստացել էր իր դստեր ձեռքը, որն արդեն նշանադրված էր Փավստոս Սուլլայի հետ:

54. Հունվարյան կալենդներ՝ հունվարի 1-ը, կոնսուլական տարվա սկիզբը:

55. Համաձայն Վատինիոսի օրենքի, այսինքն ժողովրդական ժողովի կողմից և ոչ թե ըստ սովորական կարգի՝ սենատի կողմից:

56. Թավամազ Գալլիա՝ Անդրալպյան (այդպես էր կոչվում ըստ գալլերի երկար մազեր կրելու սովորույթի): Դրվագի սկզբում տեքստը փշաջած է, բայց իմաստը պարզ է:

57. Կնոջ համար... տե՛ս գլ. 2:

58. Անտիկ գրողները Ասորիքը հաճախ շփոթում էին Ասորեստանի հետ, որտեղ, ըստ ավանդության, կառավարել էր Շամիրամը: Ամագոնուհիները, ըստ առասպելի, բնակվում էին Փոքր Ասիայում:

59. Նրանց օգնությամբ— թարգմանությունը ըստ Ռոտի ընթերցման per utrumque.

60. Պետությունից Կեսարը ստացել էր 4 լեգեոն, իր հաշվին հավաքագրել էր 6 լեգեոն:

61. Alauda—կելտերեն՝ «փոփուլավոր արտույտ»: Այդ անվանումը տրված է սազավարտների վրա եղած զարդի պատճառով (Պլինիոս, 11, 44, 121):

62. Ոմանք— այն է՝ Կատոնը (Պլուտարքոս, 22):

63. Սաղթանքները նշանակվել էին 57 թ. (5 օր), 55 և 52 թթ. (20-ական օր):

64. Գերմանական արշավանքի մասին տե՛ս Կեսար, Գալլական պատերազմը, IV. բրիտանականի մասին՝ նույն տեղում, IV—V, նավատորմի կործանման մասին՝ V, 10—11: 52 թ. Գերգովիայի մոտ կրած պարտության մասին՝ VII, 44—51. էբուրոններից լեգատներ (լեգեոնի հրամանատարներ) Տիտուրիոսի և Ավրունկուլեոսի կրած պարտության մասին՝ V, 24—37:

65. Ֆորումի կառուցումը Կեսարի կողմից ավարտվեց 46 թ.:

66. Գլադիատորական խաղերը հոր թաղման ժամանակ սովորույթ էին, իսկ դատեր թաղման ժամանակ՝ նորամուծություն:

67. Հանդիսատեսների գայրույթը արտահայտվում էր նրանով, որ նրանք պայմանական նշանով (palice verso) պահանջում էին, որպեսզի անհաջող մարտնչած գլադիատորին տեղում վերջ տան:

68. Լանիստաներ— գլադիատորական դպրոցների պրոֆեսիոնալ տնօրեններ, որոնք իրենց գլադիատորներին վարձույթով տալիս էին հանդիսախաղերի համար:

69 Մեկական ստրուկ էր ընծայում— այդ մասին Կեսարը հիշատակում է «Փալլական պատերազմում», VII, 89.

70 Ժողովրդի որոշումը (տրիբունների առաջարկությամբ), որը թույլ էր տալիս Կեսարին կոնսուլության հետամուտ լինել հեռակա կարգով, ընդունվել էր 52 թ.: Պոմպեոսի մոռացկոտությունը, որն այդ բացառությունը իր օրենքում չէր վերապահել, իհարկե, դիտավորյալ էր:

71 Խառնախ դիտավորությամբ (per ambitionem)— քաղաքական տերմին է:

72 Կուրիոն Կրտսերին արտահայտիչ կերպով է բնութագրում Վելլեոսը, II, 48՝ «Քաղաքացիական պատերազմի և դրան 20 տարի անընդմեջ հետևած բոլոր աղետների ամենագործոնյա և բոցաշունչ հրձիգը դարձավ ժողովրդական տրիբուն Գայոս Կուրիոնը՝ ազնվատոհմիկ, պերճախոս, քաջարի մի մարդ, որը մսխել էր իր և ուրիշների ունեցվածքն ու ամոթը, Խանճարեղորեն անբարոյական, օժտված խոսքի ձիրքով ի կործանումն հանրապետության, որն ընդունակ չէր ոչ մի միջոցով, ոչ մի ընչակուտակմամբ հագեցնել իր ցանկություններն ու քմահաճույքները»:

73 49 թ. կոնսուլներ էին ընտրվել Լ. Լևիտուլոսը և Գ. Մարցելլոսը:

74 Սյուս զորավարները— այսինքն Պոմպեոսը, որը, գտնվելով Հռոմում, պահպանում էր զորահրամանատարությունը Իսպանիայում և Աֆրիկայում:

75 Հռավեննան Կեսարի պրովինցիայի վերջին քաղաքն էր:

76 Տրիբունները, որոնք հանդես եկան Կեսարի սլաշտպանությամբ— Մարկոս Անտոնիոսը (ապագա եռապետներից մեկը) և Քվինտոս Կասիոսը:

77 Միլոնի՝ Կլոդիոսին սպանողի, աղմկալից դատավարությունը տեղի է ունեցել 52 թ.— նրան հուշարձան մնաց Կիկերոնի ճառը:

78 «Եթե պետք է օրենքը քանց առնես...»— Կիկերոն, «Պարտականությունների մասին», III, 21, 82. ոտանավոր Եվրիպիդեսից, «Փյունիկոհիները», 524—525 (էտեոկլեսի խոսքերը):

79 Կոհորտաներ— լեգեոնի ստորաբաժանումներ. Ռուբիկոնից առաջ Կեսարը ուներ միայն 5000 հետևակ և 300 հեծյալ, մնացյալ զորքերը դեռևս չէին մոտեցել Ալպերի ետեվից:

80 Ըստ Պլուտարքոսի, 33, Ռուբիկոնի ճանապարհին Կեսարը չէր թափառաշրջում, այլ դիտավորյալ խառնում էր հետքերը:

81 Ապպիանոսը, II, 34, բերում է ասացվածի մեկ ուրիշ տարբերակ՝ «Եթե ես հրաժարվեմ անցումից, դա աղետ կլինի միայն ինձ համար, եթե անցնեմ՝ բոլորի համար»:

82 Ասացվածի երկրորդ inquit-ը չի թարգմանվել որպես ընդմիջարկություն:

83 Հեծյալների ցենդը հավասար էր 400 000 սեստերցիումի. հեծյալների տարբերանշանը ոսկե մատանին էր:

84 Նկարագրվում են 49 թ. իրադարձությունները (Կեսարի «Քաղաքացիական պատերազմի» I և II գրքերը)՝ Ռուբիկոնի անցումը— հունվարի 10-ին, Պոմպեոսի փախուստը— մարտի 17-ին, հաղթանակը Իսպանիայում (Իլերդայի մոտ)— օգոստոսի 2-ին: Հաջորդ գլխում նկարագրվում են 48—45 թթ. իրադարձությունները («Քաղաքացիական պատերազմի» III գիրքը, «Ալեքսանդրիական պատերազմը», «Աֆրիկյան պատերազմը», «Իսպանական պատերազմը»)՝ Չարսալի ճակատամարտը— 48 թ. օգոստոսի 9-ին, պասեռագմը Ալեքսանդրիայում— 48 թ. դեկտեմբերից մինչև 47 թ. մարտը, հաղթանակը Փոնտակի դեմ Ջելայի մոտ— 47 թ. օգոստոսի 2-ին, Սկիպիոնի և Յուբայի դեմ Տապսայի մոտ— 46 թ. ապրիլի 6-ին, Պոմպեոսի որդիների դեմ Մունդայի մոտ— 45 թ. մարտի 17-ին: Տարեթվիրը տրված են ըստ հանրապետական օրացույցի՝ մինչև Կեսարի ռեֆորմը.

դրանք բարեկամական (հուլիոսյան) տոմարից առաջ են մոտ 2 ամսով: Ազգասանդրիական և աֆրիկական պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում Կեսարի Հռոմեոս լինելու մասին (Դիոն, 42, 49—55) Սվետոնիոսը չի հաղորդում:

⁸⁵ «Վերին ծով» — Ադրիատիկ (Ստորին՝ Տիրրենյան): Բրունդիզիում — այժմյան Բրինդիզիոս է:

⁸⁶ Մասիլիա — այժմ Մարսել:

⁸⁷ Փառնակի հաղափոխությունները — հաղթանակը Դոմիցիոս Կալվինոսի դեմ (տե՛ս գլ. 36) և ներխուժումը Բուֆանիա:

⁸⁸ Յուրայի դեմ պատերազմում Կուրիոնի, պոմպեոսականներ Օկտավիոսի և Լիբոնի դեմ պատերազմում Անտոնիոսի (եռապետի եղբոր) և Դոլաբելլայի պարտությունները վերաբերում են 49 թ.:

⁸⁹ Իսպանիայում (Մունդայի մոտ) տեղի ունեցած նսկատամարտի մասին հմմտ. Պլուտարքոս, 56. «Ճակատամարտից հետո Կեսարն ասաց բարեկամներին, որ նա հաճախ է մարտնչել հաղթանակի համար, իսկ այժմ առաջին անգամ էր մարտնչում հանուն կյանքի»:

⁹⁰ «Հայտնում են, որ այդ տրիումֆների ժամանակ եղել են 65 000 տաղանդ դրամ և 2822 ոսկյա պսակներ, որոնք կշռում էին մոտ 20414 ֆունտ» (Ապպիանոս, II, 102): Բոլոր տրիումֆները, բացի վերջինից, պաշտոնապես նշանավորում էին հաղթանակները օտարերկրացիների և ոչ թե համաքաղաքացիների նկատմամբ: — Յուրաքանչյուր տրիումֆի «հատուկ շքեղության» մասին հմմտ. Վելլեոս, II, 58. «Գալլական տրիումֆի զարդարանքը լիմոնի ծառից էր, պոնտակոնինը՝ ականթից, Լիբուսանդրիականինը՝ կրիայի պատյանից, աֆրիկականինը՝ փղոսկրից, իսպանականինը՝ դրվաքված արծաթից»:

⁹¹ Վելլարում — թաղամաս Հռոմում Յոբումի, Պալատինումի և Ավենտինումի միջև:

⁹² Հող տրամադրեց — հողի այդ բաժանումը տեղի է ունեցել դեռևս մինչև տրիումֆը, 47 թվականին: Սվետոնիոսը տեղաշարժում է իրադարձությունները:

⁹³ Խնջույքը, ըստ Պլուտարքոսի, 56, սարքվել է 22 000 սեղանների վրա. առաջին անգամ շորս տեռակի դիմի էր մատուցվում (Պլինիոս, 14, 17, 97). մատուցվել էին 6 000 թանկարժեք մուրեմա ձկներ (Պլինիոս, 9, 81, 171):

⁹⁴ Երկայացումներ քոլոս լեզուներով — Հռոմում պրովինցիալի բնակիչների հավաքվելու պատճառով:

⁹⁵ Պլադիատոսական նսկատամարտ տրվել էր Յուլիայի հիշատակին (տե՛ս գլ. 26):

⁹⁶ Մրցություն ժամանակ Լաբերիոսը հանդես էր եկել ուրիշ միմախոսի՝ Պուբլիլիոս Սիրոսի հետ, որը և տարել էր հաղթանակը: Բեմի վրա հանդես գալը անպատվություն էր, որը զրկում է հեծյալական աստիճանից, և Կեսարի մատանին նշան էր Լաբերիոսին, իր իրավունքներում վերականգնելու: Պահպանվել է հանպատրաստից ասված նախերգը, որում Լաբերիոսը դառնորեն գանգատվում է իր ստորացման համար (Մակրոբիոս, II, 7):

⁹⁷ Տասնչորս կարգերը թատրոնում օրգեստայի վրա — պարսերի վերև, որտեղ նրստում էին սենատորները, — ամրացված էր հեծյալներին:

⁹⁸ Տրոյական խաղեր — տուրների տեսակ, ձիավարժություններ, որոնք Ենդիայացում էին ազնվատոհմ պատանիները. ըստ ավանդության հաստատվել են էնեոսի տրոյացի ուզեկիցների կողմից ի հիշատակ Անքիսի («էնեական», V, 545—503):

⁹⁹ Այդ որսահալածանքների ժամանակ Հռոմում առաջին անգամ ցուցադրվել է ընձուղտ (Պլինիոս, 8, 27, 69):

¹⁰⁰ Շրջադարձային սյուները (նշագիծ) կրկեսադաշտի ծայրերում ցույց էին տալիս այն տեղերը, որտեղ մարտակառքերով շրջադարձ էին կատարում:

101 Ասրիեանէն Հոռմում սովորաբար անվանում էին բոնցքամարտիկներին:

102 Կաղևտակաճ դաշտը (Ալեքսանդր թարգմանել է «Զիագու») գտնվում էր Տիրքուսի աջ ափին, Հոռմի դիմաց:

103 Բիրեմաներ և այլն— երկու, երեք և չորս շարք թիերով նավեր:

104 Աինչև Կեսարք տարվա մեջ 355 օր էր հաշվվում. արեգակի իրական ընթացքին համապատասխանեցնելու համար ժամանակ առ ժամանակ տարվա մեջ լրացուցիչ ամիս կամ մի քանի լրացուցիչ օրեր էին մուծում: Հաճախ այդ արվում էր քաղաքական նկատառումներով, օրպեսզի երկարացվեր որևէ մեկի մագիստրատուրան և այլն (Գիոն, 40, 62): Կեսարը մտցրեց այսպես կոչված հուլիոսյան օրացույցը, որը օգտագործվում էր մինչև XVI դ. գրեգորիանական ռեֆորմը, իսկ Ռուսաստանում նույնիսկ մինչև 1918 թ.:

105 Սենատորների թիվը Կեսարը հասցրեց 900-ի, պրետորներինը՝ 14-ի (5-ի փոխարեն), քվեստորներինը՝ 40-ի (20-ի փոխարեն), էդիլներինը՝ 4-ի (2-ի փոխարեն):

106 Երեք դատական դեկուրիաները մտցվել էին Գայոս Գրակոսի, վերացվել Սուլլայի և վերականգնվել Պոմպեոսի ու Կրասոսի կողմից:

107 Էրարային տրիբուններ— հարուստ պլեբեյներ, միջնախավ հեծյակների ու պլեբսի միջև:

108 Մարդահամարը սովորաբար անցկացվում էր Մարսյան դաշտում՝ ցենզորի և հասարակական գրագիրների կողմից:

109 Կեսարի գաղութներից ամենաբազմամարդն էին Կորնթոսը և Կարթագենը (Պլուտարքոս, 57):

110 Քառասուն տարեկան— թիվը ձեռագրում չի պահպանվել և վերականգնվում է պայմանականորեն:

111 Ազնիվ արվեստներ— քերականությունը, ճարտասանությունը և փիլիսոփայությունը. բժշկությունը դրանց թվին չէր գասվում:

112 Պարտային պարտավորությունների վերացման հույսերը հրահրվում էին, մասնավորապես, Յելիոսի կողմից 48 թ. և Դուլարելլայի կողմից 47 թ. (Գիոն, 42, 22 և 32):

113 Կոլեգիումներ— ազատ քաղաքացիների արհեստակցական և կրոնական միություններ. դրանցից հնագույնները համարվում էին Նումայի հիմնադրածները:

114 Վտարանդիություն թույլատրվում էր կամավոր կերպով գնալ ամեն մի հռոմեական քաղաքացու, որը մեղադրվում էր հանցագործության մեջ:

115 Կիկերոնի խոսքերը շեն պահպանվել:

116 Հոռմում դատը վարում էին պրետորները, և Կեսարի (և հետագա կայսրերի) մոտ գործերը մուտք էին գործում սոսկ զանգատարկման կարգով կամ մեծ բարդության ու կարևորության պատճառով:

117 Իրոչակի անձանց— նրանց, ովքեր 55 տարեկանից մեծ էին, ամուսնացած էին և երեխա ունեին:

118 Շոայություն դեմ օրենքը (Հելիոս, II, 24) սահմանափակում էր ծախսերը լի օրերին՝ 200 սեստերցիումով, տոնական օրերին՝ 300 սեստերցիումով և այլն:

119 Տարպեյան ծայր— Կապիտոլիոսի՝ Հոռմի գլխավոր բլրի վրա:

120 Առաջին ճանրային գրադարանը Հոռմում բացել է, արդեն Կեսարի մահից հետո, Ազինիոս Պոլլիոնը:

121 Պոմպեյան ճանիճները լացիումի ժովափնյա մասում քանիցս շորացվել են, սակայն անհաշոդ:

122 Ֆուլցիայան լճի իջեցման մասին հմմտ. Կլավ., 20:

123 Իսթմոսի (Կորնթոսի պարանոցի) մասին հմմտ. Պլինիոս, 4, 4, 10: «Փորել այն

նավարկելի ջրանք անցկացնելու համար փորձել են Դեմետրիոս (Պոլիորկեսոս) թագավորը, գիկտատոր Կեսարը, կայսր Գայոսը, Դոմիցիոս Ներոնը, բայց այդ ձեռնարկումները դժբախտորեն էին, ինչպես ցույց է տալիս նրանց բոլորի կործանումը»։ Հմմտ. Կալ. 21, Ներ., 29:

124 Տունիկան սովորաբար թևքեր չուներ և ոռնատորներն այն չէին գոտեկապում, որպեսզի երևար ծիրանագույն եզրազարդը՝ սենատորական աստիճանի նշանը: Թևքեր կրել, առավել ևս ծոպերով, համարվում էր ծայրաստիճան փափկակեցության նշան:

125 Աուրուրան էսքվիլինումի և Վիմինալումի միջև — աշխույժ փողոց Հռոմում, որը լայլ համրավ չէր վայելում:

126 Նեմի լիճը Դիանայի սրբազան պուրակով — Լացիումում, Արիցիայի մոտ:

127 Այսինքն առաջին սեղանի շուրջ ճաշում էին զինվորական պաշտոնյաները և հունական գիտնականների շքախումբը, երկրորդի շուրջ՝ բարձրագույն քաղաքացիական պաշտոնյաներն՝ ընտրյալ հյուրերի հետ:

128 Հինավուրց սովորույթ գոյություն ուներ տրիումֆի ժամանակ ծաղրական երգեր երգել տրիումֆատորի մասին՝ նախ և առաջ հաղթանակը աչքով շտալու համար, և երկրորդ՝ որպեսզի հաղթանակողը չմեծամտանա: Ոտանավորները թարգմանել է Յ. Ա. Պետրովսկին:

129 Էգիստես, հայտնի առասպելի հերոսը, Կլիտեմնեստրայի սիրեկանը, որը դրոհեց նրան սպանել ամուսնուն՝ Ազամեմնոնին:

130 Առաջին կոնսուլության ժամանակ — թարգմանություն ըստ Տորրենցիոսի վերականգնումի:

131 Կիկերոնի կատակը տրված է ազատ թարգմանությամբ (ընագրում՝ *Tertia deducta est*):

132 Անտոնիոսը պնդում էր, որ Կեսարիոնը Կեսարի որդին է, որպեսզի վիճարկի որդեգրված Օկտավիանոսի իրավունքները:

133 «Ժառանգներ ծնելու համար» (*liberorum quaerendorum causa*) — իրավաբանական բանաձև ամուսնություն կնքելիս:

134 Հմմտ. Դիոն, 42, 49՝ «Նա իրեն դրսևորեց որպես մեծապես շահամուլ անձնավորություն. նա ասում էր, որ երկու բան կա, որոնք հաստատում, պաշտպանում և բազմասպատկում են իշխանությունը, — զորքը և դրամը, և առանց մեկը մյուսի նրանք աներևակայելի են»:

135 Պրոկոնսուլ — ավելի ճիշտ, պրոպրետոր:

136 Հռոմեական արժաթե վալյուտայում ոսկու սովորական գինը մոտ 4000 սևատիրցիում էր մեկ ֆունտի համար:

137 Պտղոմեոս XI Ավլետը, Կլեոպատրայի հայրը, որը վտարվել էր 58 թ. և մեծ գումարով վերականգնվել հռոմեացիների կողմից 55 թ., թաւավորի թողած պարտքի գանձումն էլ ալեքսանդրիական պատերազմի պատճառն էր:

138 Մերապղծության տակ ի նկատի ունի, ամենից առաջ, պետական գանձարանի անձեռնմխելի միջոցների բռնագրավումը 49 թ.:

139 Կիկերոն — տե՛ս «Բրուտոս», 75, 261. Սվետոնիոսը շատ ազատ է հաղորդում նրա խոսքերի իմաստը:

140 Կիկերոնի նամակները Նեպոտին չեն պահպանվել, որոշ հատվածներ տե՛ս «Письма М Туллия Цицерона» զբթում, т. III, М, изд. АН СССР, 1951, с 511—512

141 Գ. Հուլիոս Կեսար Ստրաբոնը «մազաչափ իսկ աչքի չէր ընկնում ուժով, բայց ոչ

որ չէր գերազանցում նրան դյուրաշարժությամբ, նրբագեղությամբ և հանելիությամբ» (Կիկերոն, «Քրուտոս», 48, 177):

142 Նախնական ճառ (divinatio), ճառ դատավարությունից առաջ, որով հոնտորը մյուս հայցողներից պաշտպանում էր որպես մեղադրող հանդես գալու իր իրավունքը: Այստեղ նկատի ունի Գոլարեյլայի դատավարությունը:

143 Իսպանիայում — Մունդայի ճակատամարտից առաջ:

144 Կիկերոն, «Քրուտոս», 75, 262:

145 Հիրցիուս, «Փալլական պատերազմը», VIII, ներած., 5—6:

146 «Ձուգալուրությունների մասին» — քերականական երկասիրություն ի պաշտպանություն ձևերի ճիշտ միակերպության, տե՛ս Հելլիոս, I, 10, IV, 16 և այլն:

147 «Ընդդեմ Կատոնի» (Anticatores) -ի հերքումն «Գովք Կատոնի», որ գրել էր Կիկերոնը:

148 Կեսարի նամակների և նրանցում եղած գաղտնագրի մասին մի ամբողջ երկասիրություն էր գրել քերական Պրոքսուր. տե՛ս Հելլիոս, XVII, 9:

149 Այդ աշակերտական շարադրություններից Կիկերոնը հիշատակում է միայն «Ասուլթների ժողովածուն» («Առ մերձավորք», IX, 16):

150 Անձամբ — չափազանցություն է. Կեսարը Բրիտանիա էր ուղարկել իր սպա Վուլտուսենոսին (Փալլական պատերազմ, IV, 21):

151 Կերմանիայում — անճշտություն է. այդ տեղի էր ունեցել գալլ-էրուրոնների երկրում Տիտուրիոսի պարտությունից հետո, տե՛ս զլ. 25:

152 Իրունդիզիումում նավարկելով անցնելու փորձի և նշանավոր «Գու տանում ես Կեսարին և նրա բախտը» բացականչության մասին տե՛ս Պլուտարքոս, 38:

153 Սալյուտիոնոս (Իմը պահպանում է Solvito ձեռագրային ընթերցումը) — ըստ Պլինիոսի, 7, 12, 54, դա մնջադերասանի մականուն էր, որը դեմքով նման էր Սկիպիոնին:

154 Հոմեական բանակատեղին, որը լավ ամրացված էր, պարտությունից հետո գործերի վերջին հենարանն էր. հմմտ. Չարսալի դաշտում Կեսարի տարած հաղթանակի լուրից ընկճված Պոմպեոսի խոսքերը՝ «Միթե՞ նաև բանակատեղին:...», (Պլուտարքոս, 45):

155 Ձիերին հեռացնում էր հմմտ. Կեսար, Փալլական պատերազմը, I, 25 (ըստ Պլուտարքոսի, 18, Կեսարը միաժամանակ ասել էր. «Նրանք մեզ պետք կզան հետապնդման համար»):

156 Կեսարի ձիու մասին հիշատակում են Դիոնը, 37, 54 (որը նրա ծնովորը վերագրում էր կոնսուլության համար Կեսարի թեկնածության տարուն) և Պլինիոսը, 8, 44, 155:

157 Հուլիոսների տոհմի Նախամայր-Վենեռայի տաճարը Կեսարը կառուցեց աֆրիկական տրիումֆից հետո:

158 Լեզեոնի նշանակը փայտածողի վրա հագցված արծաթե արծիվն էր. փայտածողի ստորին մասը, որ խրվում էր հողի մեջ՝ սրածայր էր:

159 «Ալեքսանդրիական պատերազմում», մի երկ, որը դուրս էր եկել Կեսարի շտաբից, կամրջի համար տրված մարտը նկարագրվում է զլ. 19—21-ում, բայց թիկնոցի և տախտակների մասին գեղարվեստական մանրամասները խելամտորեն բաց են թողնված:

180 Թշնամու ուժերը չափազանցելու խորհուրդ, դեռևս Կյուրոսն էր տալիս Քսենոֆոնի մոտ («Կյուրոսպեդիա», VI, 3, 17): Բնորոշ է, որ Յուրայի իսկական ուժերի մասին «Աֆրիկական պատերազմում» երեք անգամ հաղորդվում են իրարից տարբեր թվեր (զլ. 1, 19 և 48):

161 Խոտից հաց— «Քարայի» արմատից («Քաղաքացիական պատերազմը», III, 48),
ըստ Կեսարի, զինվորներն իրենք էին այդ հացերը շարտում Պոմպեոսի բանակատեղին,
4մմտ. Պլուտարքոս, 39:

162 Ավելի իրական է Ասպիանոսի, II, 65 մոտ՝ զինվորները պահանջեցին մահա-
պատժի ենթարկել դրոշակակիրներին, հավատացնելով, որ եթե նրանք չլինեին, իրենք
երբեք չէին երհրա:

163 Վեցերորդ լեգիոնի կոհորտայի և ցենտուրիոն Սկևվայի սխրագործության մասին
տե՛ս «Քաղաքացիական պատերազմը», III, 53 (բայց այստեղ հիշատակված է միայն
20 000 նետ): Կոհորտայում կար շուրջ 360 մարդ, շորս լեգիոններում՝ շուրջ 20 000:

164 Քինեզիբես, ողբերգակ էսքիլեսի եղբայրը, ընկավ Մարաթոնում նրա ձեռքեր
թրատեցին, երբ նա բռնեց նավարկել պատրաստվող թշնամու նավի նավախելը: Նրա
ախրագործությունը առասպելական դարձավ:

165 Պլացենցիայից առաջ, 49 թ. այդ խռովությունների մասին Կեսարը լուում է:

166 Տասներորդ լեգիոնի նկատմամբ Կեսարը հատուկ սեր էր տածում:

167 Մասինտայի հետ կատարված պատմությունը ավելի մոտիկից հայտնի չէ:

168 Պլուտարքոսը, 17, այս պատմությունն անելիս Կեսարի շուրթերով արտաբերում
է հետևյալ խոսքերը՝ «Պատվավորը պետք է վերապահել ուժեղագույններին, անհրա-
ժեշտը՝ ամենաթույլերին»:

169 Կեսարի սպա Մամուրրային Կատուլլոսը մերկացնում է 29-րդ բանաստեղծու-
թյունում (ակնարկելով Կեսարին 5-րդ ոտանավորում՝ «Անառակ Հռոմուլոս, տեսնում ես և
խորախուսո՞ւմ»), և 57-րդ ոտանավորում («Հրաշալի բարեկամություն են անում երկու
առօր սինլեորներ— Մամուրրա կատուն և նրա հետ ցոփաբերան Կեսարը. .»):

170 Մովսեսներեի մասին տե՛ս գլ. 4:

171 Ֆագիտտայի մասին տե՛ս գլ. 1:

172 Կլոդիայի մասին տե՛ս գլ. 6:

173 Ափեանփոսը և Փափառոս Սուլլան կործանվեցին Տապսի ճակատամարտից հե-
տո, է. Կեսարը դատի տրվեց: և գաղտնի սպանվեց: ստրուկների և կենդանիների կոտո-
րածը կազմակերպվեց սենատի հետ Կեսարի պառակտվելուց հետո, Ռուբիկոնից: քիչ
առաջ:

174 Սուլլայի և Պոմպեոսի անդրինները Հռոմում տապալվեցին Ֆարսուլի մասին լուրն
ստանալուց հետո:

175 Ավլոս Յեցիլան պառակեց արտաքսումով և վտարանդեության մեջ գրեց. «Գան-
դատներ» գլխավորապես գրքույկը:

176 Մարտակառքի վրա և պատգարակով կրկեսային թափորների ժամանակ պետք
է տանելն Կեսարի անդրին աստվածների անդրինների հետ միասին:

177 Հյուրասիրություն աստվածների համար— «lectisternium», ծիսակատարություն,
որի ժամանակ աստվածների արձանները դրվում էին բարձրի վրա, իսկ նրանց
առջև ուտելիքներով սեղան էին դնում:

178 Լուպերկոսներ— Ցավն աստծու պաշտամունքի քրմեր. նրանք երկու կոչեզիում
ունեին, Կեսարը նրանց միացրեց երրորդը:

179 Քվինտիլիոս ամիսը վերանվանվեց Հուլիոս (այստեղից՝ հուլիս):

180 Կոհուրույուններ— 46 և 45 թթ.:

181 45 թ. մեկօրյա կոնսուլին անվանում էին Կանինիոս Ռեբիլոս («Ջարմանալի
պզտն կոնսուլ էր. իր ամբողջ կոնսուլության ժամանակ աչք չփակեց»— ասել է նրա
մասին Կիկերոնը: Առ մերձավորը, VII, 30, 1):

182 Շատ տարիներ առաջ— պարթևական արշավանքից առաջ:

183 Փայլերի մասին տե՛ս զլ. 80:

184 Դրամահատության գործը սովորաբար վարում էին պետական պաշտոնյա-տրիոն-վիրները, որոնք սովորաբար հեծյալներից էին նշանակվում:

185. Այդ զոհամատուցումը վերաբերում է Մոնդայի նահատամարտի ժամանակներին (Պոլիենոս, VIII, 23, 32): Կեսարի խոսքերում երկիմաստություն կա՝ սիրտը համար-վում էր բանականության օթևան:

186 Մենատորների այցելությունը նստած Կեսարին վերաբերում է, ըստ հրևույթին, 45 թ. վերջերին: Հետագա իրադարձությունների ժամանակագրությունը՝ խույր անդրիի վրա՝ մինչև հունվարի 26-ը, լատինական խաղերը և որպես «արքայի» դիմելը՝ հունվարի 26-ին, լուպերկալիաները՝ 44 թ. փետրվարի 15-ին:

187 Լատինական խաղերը անցկացվում էին Հռոմի մոտակայքում՝ Ալբանյան լեռան վրա. ուր զոհ մատուցելու համար մեկնում էին զույգ կոնսուլները:

188 Ճերմակ լանջագոտին, խույրը արքայական իշխանության նշաններ էին:

189 Տրիբունները օգտվում էին անձեռնմխելիության իրավունքից:

190. Կեսարի խոսքերը երկիմաստ են՝ «Արքան» մականուն էր Մարցիոսների տոհմում, որից սերում էր Կեսարի մայրը, «Կեսարը»՝ Հուլիոսների տոհմում, որից ծագում էր նրա հայրը:

191 Լուպերկալիաները—Ցալնի պատվին տոնակատարությունը նկարագրված է Պլուտարքոսի, 61, մոտ: ըստ Դիոնի, 44, 11, Կեսարը ասել էր, ուղարկելով խույրը տաճար՝ «Հռոմում միայն մեկ արքա կա՝ Ցուպիտերը»:

192 Մայրաքաղաքը Արևելք տեղափոխելու մտահղացումը հետազայում վերագրվում էր Անտոնինոսին— այն առիթ տվեց Հորացիոսի օղային, III, 3:

193 Քվինդեցիմվիրներ— 15 անձից բաղկացած կոլեգիում, որը պահպանում էր «Սիրիլայի գրքերը», հունական գուշակությունների հնամենի ժողովածուն:

194 «Բարի հաջողում» (bonum factum)— էդիկտների սովորական սկիզբը: Ծաղրա-մանեցվում էր դեռևս Պլավտոսի կողմից:

195 Վարտիք— գալլական ազգային հազուստ, որը հռոմեացիները արհամարհում էին. ժիրաններից տոգա՝ սենատորական աստիճանի նշան:

196 Կեսարը առաջինը կրճատեց կոնսուլական իշխանության ժամկետը մինչև մի քանի ամսի, այնպես որ տարվա ընթացքում սկսեցին փոփոխվել երկու և ավելի զույգ կոնսուլներ (կոնսուլ-սուֆֆեկտներ, «տեղակալներ») հետազայում այդ սրակտիկան սովորական դարձավ, բայց սկզբնապես հրաժարվում էին սուֆֆեկտներին «իսկական կոնսուլներ» համարել:

197 Քվեարկության համար դաշտի մի մասի շուրջը խրամատներ էր փորվում, և այդ խրամատի վրայով կամրջակներով մեկ-մեկ անցնում էին ընտրողները, կամրջակի վրա լրացնելով իրենց տախտակ-քվեատոմսերը:

198 Պոմպեոսի կուրիա— Պոմպեոսի քարաշեն թատրոնը շրջապատող շինություններից մեկը: Մարտյան իդեր— 44 թ. մարտի 15-ը: Ապպիանոսը գրում է, որ դավադիրները ցանկանում էին Կեսարին սպանել սենատի առջև ի հիշեցումն այն բանի, թե ինչպես էին սպանել առաջին թագավոր Հռոմուլոսին, երբ նա տիրան էր դարձել (II, 114):

199 Կապպիոսը հիշատակվում է «էնեականում», X, 143. Հուլիոսների հետ նրա ազակցության մասին ոչինչ հայտնի չէ, դրա համար էլ շատերը ընդունում են «Հուլոսի հետնորդ» ընթերցումը:

200 Տանիքը, ավելի ճիշտ՝ վերնաճակատը (fastigium) այն սովորաբար գրվում էր

միայն տաճարների վրա, և Կեսարի տան համար սենատի հատուկ որոշումով էր դեկրետավորվել:

²⁰¹ Հինգերորդ ժամին— լուսաբացից հետո, այսինքն մոտ 10—11 ժամին:

²⁰² Հանդիպողներից ինչ-որ մեկը— ըստ Պլուտարքոսի, 65, հույն քրական Արտեմիդոր Կնիդացին:

²⁰³ Տրլլիոս Յիմբրոսը մոտեցավ Կեսարին եղբորը վտարանդիությունից վերադարձնելու խնդրանքով (Ապպիանոս, II, 117, Պլուտարքոս, 66): Ըստ Պլուտարքոսի, Կասկան հարվածել էր Կեսարի ժոժրակին կամ ուսին, ըստ Ապպիանոսի՝ կրծքին:

²⁰⁴ Քառեզրիչ, գրիչ— մետաղյա սրածայր ձողիկ, որով գրում էին մեղրամոմի վրա: Ապպիանոս, II, 117. «Այդ ժամանակ մեկ ուրիշ դավադիր սրով խոցեց նրա կողը, որը շրջվելիս բացվել էր հարվածի համար, Կասիոսը հարվածեց նրա դեմքին, Բրուտոսը՝ ազդրին, Բուկոլիանոսը՝ թիկնոսկրների միջև Կեսարը, ինչպես վայրի զաղան, շրջվում էր մեկից դեպի մյուսը: Բայց Բրուտոսի հարվածից հետո... Նա ծածկվեց թիկնոցով և վայր ընկավ, վայելուչ տեսք պահպանելով, Պոմպեոսի արձանի առջև: Դավադիրները ամեն շափ ու սահման անցան ընկածի նկատմամբ և նրան մինչև 23 վերք հասցրին: Իրարանցման ժամանակ շատերը սրերով վիրավորում էին մեկը մյուսին»:

²⁰⁵ «Բո՛ւ էլ, զավակս»— միգուցե, ոչ թե Կեսարի Բրուտոսի նկատմամբ տաժաժ համակրանքի հանրահայտ արտահայտությունն է, այլև այն բանի ակնարկը, որ Բրուտոսին համարում էին Կեսարի որդին Սերվիլիայի հետ ունեցած նրա կապից (Պլուտարքոս, 5—8, Ապպիանոս, II, 112): Այստեղ և հետո շղատառ գրվում են այն բառերն ու արտահայտությունները, որոնք Սվետոնիոսը բերում է հունարենով:

²⁰⁸ Լավիկանյան կալված— Լացիումում. տարեթիվը՝ 13 սեպտեմբերի 45 թ.:

²⁰⁷ Երկրորդ աստիճանի ժառանգներ նշանակվում էին այն դեպքի համար, եթե հիմնական ժառանգները մահանում էին կամ հրաժարվում. սովորաբար, դա պարզ հարգանքի նշան էր:

²⁰⁸ Նվիրաբերություններ՝ ի նշան հանգուցյալի նկատմամբ տաժաժ հարգանքի, սովորաբար տանում էին թաղման թափորի ժամանակ և կրակն էին նետում: Ծնթաղրվո մ էր, որ դիակի վրա ճառեր կարտասանեն ֆորումում և այն կայրեն Մարսյան դաշտում:

²⁰⁹ «Իստ զենֆի մասին»— ողբերգություն, որի սյուժեն էր Ոդիսևսի և Այաքսի վիճարանությունը Աքիլիսից հետո մնացած զրահի շուրջը. քաղվածքը, հավանաբար, վիրավորված Այաքսի խոսքերն են աքիլացիների մասին:

²¹⁰ Ացիլիոս— անհայտ բանաստեղծ, այստեղից էլ ուշ ժամանակների ընդօրինակումների ճշգրտումները՝ «Ատիլիոս»— II դարի կատակերգուի անունը:

²¹¹ Ուրիշ աղբյուրներ խոսում են Անտոնիոսի ընդարձակ և կրթուտ ելույթի մասին, հենվելով, ըստ երևույթին, Կիկերոնի վրա («Փիլիպիկներ», 2,36): Որոշումը և երդումը սենատն ընդունեց 44 թ. սկզբին:

²¹² Բուլլա—մեղալիոն, որը երեխաները կրում էին վզին մինչև շափահաս դառնալը՝ իսկ հետո սովորաբար նվիրաբերում էին աստվածներին:

²¹³ Երայեցիները լավ էին տրասպարված Կեսարի նկատմամբ, առանձնապես իրենց պաշտամունքը Հռոմում կատարելու թույլտվության (Հովսեփոս Փլաբիոս. Հրեական հնություններ, XIV, 10, 8) և Պոմպեոսի դեմ տարած հաղթանակի համար, որը սրբապղծել էր Երուսաղեմի տաճարը:

²¹⁴ Տեքստը տրվում է ըստ Իմի և Ռոտի ճշտումների:

²¹⁵ Քսենոփոն, տե՛ս «Կյուրոպեդիա», VIII, 7:

116 Ժամը տառնմեկի՞ն—արևամուտից մեկ ժամ առաջ, Հստ Պլինիոսի, II, 23, 93—94, գիսաստղը հայտնվել էր 44 թ. հուլիսի 20-ին:

117 Կեսարին սպանողների ճակատագրական կործանման մասին խոսում են և՛ Պլուտարքոսը, 69, և՛ Դիոնը, 48, 1, որը հավատացնում է, որ հենց Բրուտոսն ու Կասիոսն են ինքնասպան եղել հենց նույն դաշույնով:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕԳՈՍՏՈՍ

1 Ջոհի փորրուտիքը պետք է աստվածությանը մատուցվեին եփված. Օկտավիոսը խախտեց այդ օրենքը, որպեսզի թշնամու դեմ չգնա զոհարեբությունը շավարտած:

2 Հստ ավանդության, Հոմուլոսը սենատը կազմել էր 100 հոգուց: Տակիոսը լրացրեց այն 100 սարինացիներով, իսկ Տարքվինիոս Հինը՝ ևս 100 հոգով՝ պլեբեյներից. այս վերջիններս էլ կազմեցին կրտսեր սենատորական տոհմերը:

3 Սենատի հատուկ հանձնարարությունը— քանի որ սովորաբար իտալիկական դործերը վարում էին կոնսուլներն իրենք:

4 Բեսսեր— թրակիական ավազակային ցեղ:

5 Կիկերոն, տե՛ս Առ եղբայր Քվինտոս, I, 1, 21 և I, 2, 7:

6 Կամպանիական հողերի բաժանման մասին տե՛ս Հուլ., 20, 3:

7 Ներուլոնյան, Ներուլում փոքրիկ քաղաքի անվանումից հարավային Իտալիայում, Տուրիքի մոտ, որտեղ, ինչպես կարելի է եզրակացնել Սվետոնիոսի պատմածից, Օկտավիոսները կալված ունեին: Ամբողջ քաղվածքը՝ հանրապետության վախճանի քաղաքական պամֆլետների ոճի լավագույն նմուշ է:

8 Օգոստոսի ծնունդը— մ. թ. ա. 63 թ. սեպտեմբերի 23-ին:

9 Եզան զուլխներ— փողոցի կամ թաղամասի անվանում:

10 Պալատինում— Հռոմի կենտրոնական բլուրներից մեկը, արիստոկրատական թաղամաս, որտեղ հետագայում կառուցվեց կայսերական պալատը:

11 Հավել է հողին— ականարկ նորածնին գետնին հոր ոտքերի մոտ դնելու սովորույթի բարձրացնելով մանկիկին, հայրը նրան իրեն զավակ էր ճանաչում:

12 Կայսրի՞ն— Ադրիանոսին: Կարերի շարքում ընտանիքի անդամներին պատկերելու մասին հմմտ Կալ. 7 և Վիտ. 2, 5:

13 Հոմուլյոս անունը (հմմտ. զլ. 95) մերժվեց այն բանի համար, որ շափից ավելի էր հիշեցնում թագավորական իշխանության մասին:

14 Էնեիոսի ոտանավորը («Աննալներ» էպոսից, 494 տողը ըստ Ֆալենի) բերված է Գ. Պ. Կոնչալովսկու թարգմանությամբ:

15 Ապոլլոնիա— ծովեզրյա քաղաք էպիրոսում, որտեղից ռազմական ճանապարհ էր սկիզբ առնում Բալկանյան թերակղզու վրայով գեպի Արևելք: 44 թ. Մակեդոնիայում երեք լեզոն էր տեղակայված:

16 «Օկտավիոսի մայրը և նրա ամուսինը՝ Փիլիպպոսը, Հռոմից գրում էին նրան, որպեսզի նա շնեծամտանա և վտանգի շենթարկվի, հիշեցնելով, որ Կեսարը հաղթեց բոլոր թշնամիներին, բայց ընկավ բարեկամների ձեռքով» (Ապոլիանոս, III, 10):

17. Խաղերը ի պատիվ Հաղթողն Վեներայի սահմանվել են Տապսի մոտ տարած հաղթանակի պատվին:

18 Հայտնի չէ, թե երբվանից են տրիբունները սկսել ընտրվել միայն սենատորներից:

19 Կիկերոնը («Փիլիպպիմներ», III, 19) պնդում է, որ այդ նա է խորհուրդ տվել Օկ-

տավիհանոսին մարգարայաններ ուղարկել Անտոնիոսի մոտ, բայց մահափորձի բուն փաստը փոքա քիչն է:

20 Առանց թիկնոցի՝ զորավարի կողմից թիկնոց կորցնելը անպատվություն էր հաճարվում (հմմտ. Հուլ., 64):

21 Հիրցիոսի և Պանսայի մահվան մեջ Յոսուսի մեղսակցության լուրերը պահպանվում էին նրա մահից հետո և՛ Տակիտոս, Աննալներ, 1, 10: Հիրցիոսի սպանության լուրին առիթ էր ծառայել այն, որ մարտի ժամանակ Օկտավիանոսը առաջինն էր մոտեցել նրա դիակին և ծածկել թիկնոցով:

22 Երկինք հասնել— մոտավոր զուգադրություն լատինական երկիմաստությանը՝ ornandum tollendumque «զարգարել և փառաբանել» (որպես հաղթողի) կամ «պճնազարդել և դուրս հանել» (ինչպես հանցուցյալի): Կատակը պատկանում է Կիկերոնին («Առ մերձավորք» XI, 20):

23 Նուրպիա— փոքր բազաթ Ումբրիայում. միջադեպը վերաբերում է պերուզիական պատերազմին:

24 Դաշինքը Անտոնիոսի և Լեպիդոսի հետ («Երկրորդ եռապետությունը») սենատը վավերացրել էր 43 թ. նոյեմբերի 27-ին:

25 Բրուտոսի զուվար, բայց և այնպես, Հոսի շհասավ, այն ասանոց նավը փոթորկի ժամանակ խորտակվեց Դիրրաֆուսի մոտ (Դիոն, 47, 49):

26 Մատնախաղը մինչև այժմ էլ տարածված է Իտալիայում. խաղացողը պետք է որդի թե՛ քանի մատ է ջրված մյուս խաղացողի արագ վեր բարձրացրած ձեռքի վրա:

27 Հանրապետության դաբաշրջանում իմպերատորը հաղթող զորավարի պատվավոր կոչումն էր հաղթանակից հետո և մինչև տրիումֆը:

28 Զոհամատուցման և արտագրոնի մասին տե՛ս զլ. 96, 2:

29 Պերուզիայում Օկտավիանոսը մահապատժի ենթարկեց ամբողջ բազաթային սենատը (Ապպիանոս, V, 48), բայց պատմությունը աստվածային Կեսարի պատվին կատարած շարդի մասին կատակածելի է: Բայց և այնպես, Սենեկան օգտվում է դրանից, որպեսզի Օգոստոսի դաժանությանը հակադրի երիտասարդ Ներոնի հեղությունը («Գթասըրտություն մասին», I, 11):

30 Սրկու փոթորիկ— 38 թ., երբ Պոմպեոսը ջախջախեց Օկտավիանոսի ուղարկած Կալվիզիոս Սաբինոսին, քակ փոթորիկը ավարտեց ջախջախումը, և 36 թ., երբ փոթորիկը ցաթ ու ցրիվ արեց Օկտավիանոսի նավատորմը Մեսսինայի նեղուցում:

31 Զինադադար— Միջինայում 39 թվականին:

32 Լուկրինյան և նրա հետ կապված Ավերնյան լիճ— ծովալճակներ, որոնք նեղ ցամաքալիզվակով բաժանված էին Նեապոլի ծովածոցից և այժմ միաձուլված են նրան:

33 Նեպտունին իր հովանավորն էր համարում Սեքստոս Պոմպեոսը, որը նույնիսկ մետաղադրամի վրա իրեն անվանում էր «Նեպտունի որդի»:

34 Համաձայնագրեր Անտոնիոսի հետ— 40 թ. Բրունդիզիումում (պերուզիական պատերազմից հետո) և 37 թ. Տարենտումում (ընդդեմ Սեքստոս Պոմպեոսի):

35 Բոնոնիա, այժմ Բոլոնիա:

36 32 թ. երդումը, որ ավել էին Իտալիան և արևմտյան պրովինցիաները, հաստատում էր Օկտավիանոսի իշխանությունը եռապետության ժամկետը (38 թ.) անցնելուց հետո:

37 Ակաթուղի եակատամարտ— 31 թ. սեպտեմբերի 2-ին:

38 Կերավնիական լեռներ— էպիրոսում, Բրունդիզիումի հանդիման:

39 Լիբուրեթական նավերը (Իլլիրիայում բնակվող լիբուրների ծովահենային ցեղի

անունից) աչքի էին ընկնում թեթևությամբ և արագընթացությամբ: Նրանց էր Օկտավիանոսը պարասկան Ակտիոնի մոտի տարած հաղթանակի համար:

40 Թշնամու դիակով զմայլվելը բարբարոսական դաժանություն էր համարվում: Պլուտարքոսը («Անտոնինոս», 78) հավատացնում է, որ Օկտավիանոսը արտասուք էր թափում այն թրի վրա, որը ցողված էր Անտոնինոսի արյունով:

41 Պսիլլները՝ հյուսիսաֆրիկյան մի ցեղ, համարվում էին օձ հմայողներ և օձի խայթոցից բուժողներ. կարծում էին, որ նրանց մարմնի մեջ թռչն կա, որը մահացու է սողունների համար:

42 Ալեքսանդր Աեծի մատնինը պահպանվում էր Ալեքսանդրիայում՝ ոսկե դադաղում, հատուկ սրբավայրում: Ատո. Պրոնտ, 51, 16, Օգոստոսը ոչ միայն զննել, այլև շոշափել է Ալեքսանդրի մարմինը, ընդ որում վնասել նրա քիթը:

43 «Յիկոպոլիս» անունը նշանակում է «հաղթանակի քաղաք»:

44 Պարթևներ — իլլիրիական ցեղ:

45 Ստրուվ-անվանատուի (nomenclator) պաշտոնը այն էր, որպեսզի հուշեր տիրոջը անունը բարեխու համար և հայտարարեր ներս մտնող հյուրերի մասին:

46 Ալբիա — էլբա, այն գորթերով անցել էին Դրուզոսը 10 թ., Դոմիցիոսը 3 թ. մ. թ. ա. և Տիբերիոսը մ. թ. 5 թ., բայց Վարոսի պարտությունից հետո մ. թ. 9 թվականին հռոմեական սահմանը կրկին ետ մղվեց դեպի Հռենոս:

47 Սվեվներ — գերմանական ցեղերի մեծ խմբի ընդհանուր անվանումը: Այստեղ նկատի ունի ուրբոսների (միգուցե Suebos Ubios-ի փոխարեն — սիալ՝ ձեռագրական ավանդույթով), ցեղը, որոնց Ագրիպան մ. թ. ա. 38 թ. վերարևակեցրել էր Հռենոսի մյուս ափից ներկայիս Քյոլնի շրջակայքում: Սիգամարները վերարևակեցվեցին Տիբերիոսի կողմից մ. թ. ա. 8 թվականին Մասսի ավազանը ի պատիժ Լոլլիոսի դեմ նրանց տարած հաղթանակի:

48 Հմմտ. Տակիտոս, Գերմանիա, 8. «Գերուսյունից գերմանացիները շատ ավելի վախենում են իրենց կանանց, քան իրենց համար, այնպես որ այն համայնքները, որոնք հարկադրված են պատանդների թվում դնել նաև ազնվածի՞ն աղջիկների, ավելի խստությամբ են կատարում իրենց պարտավորությունները»:

49 Իրոզները Կրասոսից խլվել էին խառնում և Անտոնինոսից 35 թ. մ. թ. ա.:

50 Պատանդներ. իր ազգականներին որպես պատանդներ ուղարկելով Հոմ, պարթևական Հրահատ IV թագավորը ոչ այնքան իր հնազանդություն էր հայտնում, որքան՝ ձեռքադատվում էր զահի վտանգավոր հավակնորդներից. այդ դեռևս Ստրաբոնն էր հասկանում, XVI, 1, 28:

51 Յանուս Բվիտիուսի տաճարը պետք է բացվեր պատերազմի ժամանակ և փակվեր խաղաղության ժամանակ: Մինչև Օգոստոսը այն 43 տարով փակվել էր առասպելական նումայի օրոք և մի քանի օրով 235 թ., Պունիկական պատերազմների արանքում. Օգոստոսի օրոք 29 և 25 թթ. մ. թ. ա., երրորդ տարեթիվը հայտնի չէ:

52 Օլագիա, «փոքր տրիումֆ», որի ժամանակ զորավարը քաղաք էր մտնում ոչ թե մարտակառք նստած, այլ հետիոտն, կամ հեծյալ, և զոհաբերում էր ոչ թե եղ, այլ ոչխար (OVIS, այստեղից ovatio):

53 Օգոստոսի եռակի տրիումֆը կատարվել է 29 թ. օգոստոսի 13—15-ին:

54 Լոլլիոսի խայտառակությունը V լեգեոնի դրոշի կորուստն էր:

55 Հոմերի պատերազմը կիմերների դեմ՝ 105—101 թթ. մ. թ. ա., պատերազմը մարսիի դեմ («Դաշնակցային»)՝ 91—89 թթ.:

⁵⁶ Տևտորուքայան անտառում կրած պարտության օրը — մ. թ. 9 թվականի օգոստոսի 2:

⁵⁷ Հեծյալների դասին պատկանող կապալառուները ուզում էին փրկագնել ընկերոջը, քրպեսզի նրան ազատ արձակեն:

⁵⁸ Կարեհացի— արշավանքի ժամանակ գարին տալիս էին բեռնակիր անասուններին, զինվորները սովորաբար ցորենհաց էին ստանում:

⁵⁹ Տունիկայի վրայի գտտին նրբակեցության նշան էր. գետինը սաժենով շափելը և բանակատեղի կառուցելիս ճիմ կրելը շարքային զինվորների գործն էր և ոչ թե ցենտուրիոնների:

⁶⁰ Իլլիրիական գաղութները (Էմոնան, Աքվիլեան, Տերգեստան) կարիք ունեին ամրությունների պաննոնիական ասյատամրության տարիներին, հոննոսյան սահմանը՝ Վարոսի պարսությունից հետո:

⁶¹ Այն զինվորը, որն առաջինն էր բարձրանում թշնամու պարսպի կամ պատնեշի վրա, պարգևատրվում էր ոսկե պսակով (corona muralis, corona vallaris):

⁶² Լազուր գույնը ծովային հաղթանակների խորհրդանշան էր. Սեքստոս Պոմպեոսն ինքը Սիցիլիայում լազուր գույնի թիկնոց էր կրում:

⁶³ «Զգույշ զորավարը...» — Եվրիպիդեսի տողը («Փյունիկուհիներ», 599, Պոլինիկեսի խոսքերը):

⁶⁴ Օգոստոսը կոնսուլ է եղել մ. թ. ա. 43, 33, 31—23, 5, 2 թվականներին:

⁶⁵ 43 թ., պրոսկրիպցիաների ընդարձակ նկարագրությունը տե՛ս Ապպիանոս, IV, 1—51 (Տորանիոսի մասին — գլ. 12):

⁶⁶ Ինֆլասպան եղավ, se praecipitavit — գուցե, շարդուփշուր եղավ, վար նետվելով բարձրադիր տեղից կամ ջրախեղդ եղավ:

⁶⁷ Տրիբունական անձեռնմխելիություն Օգոստոսն ուներ 36 թվականից, ցմա՛հ տրիբունական իշխանություն՝ 23 թվականից, նրա ընկերակիցներն էին Ագրիպպան 18—13 թթ. մ. թ. ա. և Տրեբրիոսը 6—1 թթ. մ. թ. ա. և մ. թ. 4—14 թ. (երկու անգամ էլ որպես ենթահրյալ ժառանգներ):

⁶⁸ Բարբելի և օրենքների վերահսկողության մասին խոսում է նաև Դիոնը, 54, 10, բայց Օգոստոսն ինքը («Գործք», 6) պնդում է, որ նման պաշտոն չի ընդունել, քանզի նախնիների մոտ այն չի եղել:

⁶⁹ Մարդանամար նա անցկացրել էր մ. թ. ա. 28 թ. (Ագրիպպայի հետ), մ. թ. ա. 8 թ. (միայնակ) և մ. թ. 14 թ. (Տրեբրիոսի հետ):

⁷⁰ Հմմտ. Օգոստոսի պաշտոնական հայտարարությունը՝ «Հանրապետությունը իմ իշխանությունից ես հանձնեցի սենատի և հոռմեացի ժողովրդի տնօրինությանը» («Գործք», 34):

⁷¹ Երկու հրապարակ — հանրապետական «Հոռմեական ֆորումը» և Հուլիոս Կեսարի ֆորումը:

⁷² Ավելի վազ ժամանակներում պատերազմների և տրիումֆների մասին որոշումները հանվում էին Կապիտոլիումում:

⁷³ Հոռմում օկրուզները (regiones) դարձան 14, թաղամասերը (vici)՝ 265:

⁷⁴ Փլամինիոսի ուղեգրի ճանապարհը Հոռմից Ապենինների վրայով տանում էր դեպի Պո գետի հովիտը. Արիմինում — այժմ Ռիմինի:

⁷⁵ 16 000 ֆունտ ոսկի — գլխավորապես եգիպտական ավարից: Տաճարները միշտ համարվում էին լավագույն զանձապահոցները:

⁷⁶ Մարգարեական զբերը լայն տարածում ստացան քաղաքացիական պատերազմ-

և հրի խառն ժամանակներում. նրանց մեջ կային սիրիլլաների գրքերի ընդօրինակումներ, որոնց բնագրերը պահպանվում էին (ըստ ավանդության, Տարթվինիոս Հպարտի ժամանակներից) Կապիտոլիումում և ոչնչացել էին մ. թ. ա. 88 թ. հրդեհի ժամանակ:

77 Հաղթանակներ՝ տարած օգոստոսին — ամենից առաջ, Ալեքսանդրիայի գրավումը մ. թ. ա. 30 թվականին:

78 Վեստալուհիներ ընտրվում էին 6-ից 10 տարեկան հասակում, սպասարկում էին սաստիվաթիստիս՝ պահպանելով կուսության ուխտը, 30 տարի, և դրանից հետո արդեն հաղվադեպ էին կնություն գնում: Իրենց դուստրերին վեստալուհիներ տալ ցանկացողների թիվն արևմտյան քիչ էր, որ մ. թ. 5 թվականից այդ աստիճանն ստանալուն թույլատրվեցին նաև ազատարձակների դուստրերը:

79 Պետության քաղաքային մասին գուշակությունը (salutis augurium) կարող էր կատարվել միայն խաղաղության ժամանակ. Օգոստոսն այն կատարեց մ. թ. ա. 29 թ. առաջին անգամ, Կատիլինայի նկատմամբ տարած հաղթանակից հետո:

80 Ցուպիտերի քրմությունը թափուր էր մնում այն պահից, երբ Սուլլան այդ աստիճանից զրկեց դեռատի Կեսարին (տե՛ս Հուլ., 1):

81 Հարյուրամյա հանդիսությունները սովորաբար կատարվում էին յուրաքանչյուր 110 տարին մեկ, սկսած մ. թ. ա. 509 թվականից. Օգոստոսը այն առաջին անգամ տոնեց քաղաքացիական կռիվների խառնակությունից հետո. հանդեսի համար երգասացությունը գրել էր Հորացիոսը:

82 Խաչուղիների տունը (ludi compitalicii) կատարվում էր լար սաստիվաթիստի խաչուղիների հովանավորների պատվին. Օգոստոսը սրբավայրերում նրանց պատկերներին միացրեց նաև սեփական պատկերները:

83 Նախասկզբնական արձանագրություններով — այն դեպքում, երբ, սովորաբար, հին հուշարձանները վերականգնելիս դրանց վրա գրվում էր վերականգնողի անունը:

84. Էրգաստություններ — կալվածներում զորանոցներ և քանտեր ստրուկների համար:

85 Կոլեգիումների մասին տե՛ս Հուլ., ժանդալ. 113:

86 Հավասար տույժով, այսինքն, եթե մեղադրողը չէր կարողանում ապացուցել մեղադրանքը, նա ինքն էր ենթարկվում այն պատժին, որը սպառնում էր մեղադրվողին:

87 Մազիստրատների խաղերը նրանց կողմից տրվում էին պաշտոն ստանձնելիս, ի լրումն այն խաղերի, որոնք կազմակերպվում էին սովորական, առանց այդ էլ արդեն բազմաթիվ տոնական օրերին:

88 «Ներկհարյուրակսնեն» — 200 000 սեստերցիում ցենզից: Երեք նախկին դատական ղեկավարներից մեկը ժամանակին վերացրել էր Կեսարը (Հուլ., 41), բայց հետո Անտոնինոսը վերականգնել էր:

89 Իրեստուն տարեկանից — ըստ երևույթին, Սվետոնիոսի (կամ արտագրողի) սխալն է, քանի որ դատավորները նույնիսկ մինչև Օգոստոս ընտրվում էին 25 տարեկանից:

90 Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հատկապես շատ տոներ էին ընկնում, այդ թվում Պլեբյական խաղերը նոյեմբերի 4—17-ին և Սատուրնալիաները դեկտեմբերի 17—21-ին:

91 Պարկ և ջրամույնություն — վաղեմի մահասպատիժ հայրասպանության համար. դատապարտվածին շան, օձի, աքլորի և կապիկի հետ (կենդանիների, որոնք համարվում էին ծնողների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորողի օրինակ) կարում էին կաշվե պարի մեջ և ծոփն էին նետում:

92 Ընտ կոռնելիոսի օրենքի կեղծումի համար ստրուկներին մահվան պատիժ էր հասնում, իսկ ազատներին՝ աքլոր:

93 *U. P. m. 18 P.* Lex Iulia de maritandis ordinibus-ը մեղմացվեց *մ. թ. ա. 9 թ. lega Papia Poppaea*-ով Մասնավորապես, առաջին օրենքը պահանջում էր նոր ամուսնություն կնքել որրևայրիությունից մեկ տարի և ամուսնալուծությունից կես տարի անց, երկրորդ օրենքը մեծացրեց այդ ժամկետը մինչև 2 տարի: Կարելի է նկատել, որ օրենսդիրներն իրենք՝ Պապիոսը և Պոպպոսը, շունեին ո՛չ կին, ո՛չ էլ երեխա:

94 Կեսարը սենատորների թիվը հասցրեց մինչև 900-ի, ռանգը շիրիմյան սենատորներին՝ սենատ մասրեց Անտոնիոսը, ցանկանալով ուժեղացնել իր Ֆրակցիան: Օգոստոսը վերականգնեց նախկին Քվաքանակը՝ 600 մարդ:

95 Ֆուցակների վերանայումը տեղի է ունեցել ոչ թե երկու, այլ երեք անգամ՝ *մ. թ. ա. 28 թ.* (Ագրիպայայի հետ), *18 թ.* (սենատորներն ընտրում էին մեկը մյուսին) և *մ. թ. 4 թ.* (Illviri legendi senatus-ի միջոցով, տժ՛ս պ. 87):

96 Սենատորների բեղմնավոր հաշվեհաշիվը տեղի էր օւնենում տոնական օրերին Կապիտոլիումում:

97 Ալեպոններին և հակոններին Հռոմում օգը հատկապես անառողջարար էր համարվում:

98 Կայսերն առնթեր խորհրդի մեջ մտնում էին զույգ կոնսուլները, մեկական հոգի մյուս մագիստրատներից, քան սենատորներ վիճակահանությունամբ և Օգոստոսի ենթադրյալ ժառանգները:

99 Ցենսումվիրների կոլեգիումն (105 հոգուց) քննարկում էր հոմեական տեմպլական վերաբերյալ գործեր, դեցեմվիրների կոլեգիումը (Xviri stlitibus indicandis) — ազատության քաղաքացիության վերաբերյալ գործեր և այլն:

100 Քաղաքային պրեֆեկտի պաշտոնը առաջին անգամ մտցվել է Հռոմից Օգոստոսի մեկնումների ժամանակ (*մ. թ. ա. 25 թ.* այն առաջարկվել է Մեսսալային, *մ. թ. ա. 16 թ.* այն գրավել է Սատուրնիոս Տավրոսը) և ապա դարձել է մշտական:

101 Տարմաներ — հեծյալ զորաջոկատներ, որոնց բաժանվում էր հեծյալների դասը:

102 Պրետորների թիվը Օգոստոսը հասցրեց 18-ի:

103 Սենատի բողոքը երրորդ կոնսուլի պաշտոնը մտցնելու դեմ հասկանալի է. երկու կոնսուլների իշխանությունը երրորդ կոնսուլ Օգոստոսի առկայության դեպքում անխուսափելիորեն զրոյի կվերածվեր:

104 Տրիումֆային գարգառաւե՛քներ — տրիումֆատորի հազուատը, դափնեպսակը, կուրուլային (մարտակառքի) թիկնաթոռի և կիսանդրու իրավունք. Դրանք այժմ ստանում էին հաղթանակած զորավարները, այն դեպքում, երբ «լրիվ տրիումֆի» պատիվը նրանցից անցնում էր կայսրին:

105 Հեծելազորի պրեֆեկտի, լեգոնին կից հեծելաջոկատի հրամանատարի պաշտոնը ավելի բարձր էր համարվում, քան կոհորտայի հրամանատարի պաշտոնը:

106 Հեծյալների հանդիսավոր անցումը, ըստ ավանդության, հաստատվել էր *մ. թ. ա. 804 թ.*, սկզբնապես այն զինվորական շքահանդես էր, իսկ հետո՝ միջոց այդ գասի ամենամյա «գտման» համար:

107 Տեսերներ — մետաղանիշեր հաց (կամ ուրիշ պետական բաշխումներ) ստանալու իրավունքի համար:

108 Պաշտոնատար անձանց ընտրությունների հին կարգը խախտվեց Կեսարի և եսպետների օրոք, երբ կոնսուլները հաճախ նշանակվում էին մի քանի տարով առաջ՝ առանց ժողովրդական ժողովի մասնակցության:

109 Ֆարթանակա՛ն տրիբունին Օգոստոսը պատկանում էր ըստ Հուլիոսների տոհմի, Սկապտիյակներին՝ ըստ Օկտավիոսների տոհմի:

110 Լիիրավ տգառութիւն — այսինքն քաղաքացիութիւն:

111 Մուգ գույնի բիկնեցներով (vestis pulla) շքուում էին չքավորները, որոնք միշտ-
հեր շունեին սովորական ճերմակ տոգույի համար:

112 «Ջափակունք Հռոմա...» — Վերգիլիոս, «էնեական», I, 280:

113 Տեղասներ... նվազեցին, ըստ Դիոնի, 12%-ից մինչև 4%:

114 Տեղը ստրուկներին ազատ էր արձակում և մտցնում էր քաղաքացիների ցուցակի
մեջ բաշխումներից առաջ այն հաշվով, որ ստանալով իրենց բաժինը, նրանք բաժնի ոչ
փոքր մասը կգոչեն նախկին տիրոջը:

115 Լանիստաններ — տե՛ս Հուլ., ժանոթագր. 68:

116 Հացի բաշխումները Հռոմում մտցվել էին Գայոս Գրակոսի օրոք 123 թ., և մի-
այն Մուլլաչին հաջողվեց ժամանակավորապես դադարեցնել դրանք:

117 Տեքստում բացթողում կա. գլադիատորական մարտեր — XVII դարի հրատարա-
կիչների լրացումն է: Քանի որ խաղերի թվարկումը մոտիկից կրկնում է Օգոստոսի «Գործ-
քի» խոսքերը, այդ տեղի հիման վրա Ռոստը առաջարկում է բացը լրացնել հետևյալ ար-
տահայտությամբ՝ «նա շատ հաճախ էր տալիս կրկեսային խաղեր և գլադիատորական
մարտեր և սովորաբար մեջընդմիջում էր աֆրիկյան վայրի գազանների հալածումնե-
րով...»

118 Սեպտա — ցանկապատված տեղ Մարսյան դաշտում քվեարկելու համար ժողովրդա-
կան ժողովում. կեսարը շքափակեց այդ տեղը մարմարյա պարսպով, այունաքահով
հանդերձ, կառույցն ավարտեց Ագրիպպան մ. թ. ա. 26 թվականին:

119 Տարեփառոսի ածուեր — torques — մանյակ բառից, զինվորական պարզմներից
մեկը. մինչև Օգոստոսը այն կոչումն էր միայն Մանլիանների տոհմում այն ժամանա-
կից, երբ Տիտոս Մանլիոսը մ. թ. ա. 360 թ. մեծամարտում հաղթեց մի հոկա զալլի և
պոկեց նրա մանյակը:

120 Լուկիոս (ձեռագրերում անունը եղծված է) — անհայտ անձնավորություն, նշված
հատակը հավատար է 59 սմ, քաշը՝ 5 կգ, 570 գր., Պլինիոսը (7, 18, 75) թվարկում է ես
չորս նշանավոր հռոմեացի թզուկների:

121 Մեքեստրայում — այսինքն ռեաաաորների կողքին

122 Խաղերի ժամանակ տոլեսները մերկ էին մրցակցում:

123 Պոնտեֆիլական (բոմարեոական) խաղեր — մ. թ. ա. 12 թ., երբ Օգոստոսը
ստանձնեց մեծ քրմապետի պաշտոնը:

124 Հիմզերոզ ժամ — նախակեսորյա ժամանակ, երբ խաղերը ընդհատվում էին ցե-
րեկային նախաճաշի համար:

125 Մերազան օրյակ — կայսերական օթյակը Մեծ կրկնոի Պալատինումի լանջին ըն-
կած մասում:

126 Ենուեաների արտաճութիւններ — մունիցիպալային պարհակներից ազատ լինելը:

127 Գերաաաները ոչ լիիրավ քաղաքացիներ էին և նեթակա էին մարմնական պա-
տիժների:

128 Հռոմեական քանդակ — «տոգատա», տե՛ս Ենու., ժանոթագր. 33:

129 Ժամանակի Հռոմի կրեք թատրոններում — Պոմպեոսի, Բալբոսի և Մարցելլոսի:

130 Մեղկատակները՝ արվեստը, առասպելաբանական սյուժեով քալեսի պեո մի բան,
Հռոմ էր եղել հռեակաե Արեելքից մ. թ. ա. երկրորդ տասնամյակում: Պիլատոսը՝ Գիլա-
սոսի ուսուցիչը, այդ ժամրի ամենահագումի պարտզներոց մեկն էր:

131 Դեկուրիոններ — մունիցիպիաներում և գաղութներում քաղաքային խորհրդի ան-
դամներ, տեղական ռեաաաի պես մի բան:

131 Մարգեր — 11 regiones, որոնց Օգոստոսը բաժանել էր Իտալիան:

132 Իտալեակցային բազմաթիվ տարածքներ, որոնք զբաղվել էին ազատությունից Հռոմի մի քանի քաղաքացիների սպանության համար (մ. թ. ա. 20 թ. — Կիզիկոս, Տյուրոս և Սիրոն):

134 Լատինական բազմաթիվությունը հռոմեական քաղաքացիության սահմանափակ ձևն էր՝ այն իրավունք չէր տալիս համայնքի անդամներին ընտրել կամ ընտրվել Հռոմում, բայց նրանք, ովքեր իրենց համայնքում պաշտոններ էին գրավում, լրիվ հռոմեական քաղաքացիություն էին ստանում:

135 Խոսքը գնում է Քրակիայի, Փոքր Ասիայի, Ասորիքի, Հուդայի քաղաքացիությունների մասին: Հռոմում դաստիարակված արքայազունների թվում եղել էր, նաև, Հերովդես Ագրիպան, Հերովդես Մեծի թոռը:

136 Կալագուրիտանական պահակազոր — իսպանական Կալագուրիս փոքր քաղաքից (հմմտ Հուլ. 86):

137 Ալեվարական գանձարանը հիմնվել էր մ. թ. 6 թվականին և լրացվում էր ժառանգությունից և վաճառքից գանձվող հարկերով:

138 Երիտասարդ Ագրիպա — Ագրիպա Պոստումոս (տե՛ս գլ. 64—65):

139 Տանդերի նվիրաբերումը տիրակալներին արևելյան պրովինցիաներում հավատարիմ հպատակության արտահայտության ավանդական ձև էր: Օգոստոսի և Հռոմի պատվին կառուցված տաճարները հետագայում հաճախ դառնում էին պրովինցիաների ոչ միայն կրոնական, այլև քաղաքական կենտրոնները, օրինակ, Լուզդումի տաճարը, որ հիմնել էր Դրուզոսը մ. թ. ա. 12 թ.:

140 «Տեր» (dominus) բառը ենթադրում էր հարաբերություններ՝ նման ստրուկների հարաբերություններին տիրոջ նկատմամբ: Կայսրերին այդ բառով դիմելը հասարակաց դարձավ սոսկ Տրայանոսի ժամանակից:

141 Առանց հիշեցման, այսինքն առանց նոմենկլատորի ծառայության:

142 Ըստ Դիոնի (54, 15), Օգոստոսը սպանացել էր Լարենսին պատժել, սա պատասխանել էր. «Ինչո՞ւ ես շեմ կարող սենատոր թողնել նրան, ում որ դու քրմապետ ես թողել»:

143 Կտակներում հռոմեացիները հաճախ ազատ արտահայտում էին դեմքերի ու դեպքերի մասին այնպիսի կարծիքներ, որոնք կարող էին վտանգավոր լինել կենդանության ժամանակ: «Կյանքում հռոմեացիները միայն մեկ անգամ են անկեղծ լինում՝ իրենց կտակներում», — գրում էր Լուկիանոսը («Նիգրինոս», 30):

144 Նոնիոս Ապրենատոսին, ըստ Պլինիոսի (35, 46, 164) մեղադրանք էր հարուցվում այն, որ նրա ճաշկերույթի ժամանակ մտով պատրաստված մեկ կերակրատեսակից թունավորվել էին հարյուր երեսուն հյուրեր:

145 Կուրցիոսի լին — չրհոր ֆորումում նրա վրա եղած զոհասեղանով այն տեղում, որտեղ ժամանակին, ըստ ավանդության, ձիով և զենազրահով անդունդը նետվեց Մարկոս Կուրցիոսը, որպեսզի այդ զոհաբերությամբ վաստակի Հռոմի ապագա վեհությունը (Լիվիոս VII, 6):

146 Նոր տարում հռոմեացիները միմյանց դրամական նվերներ էին անում՝ նոր տարվա նախօրյակին դրամ ստանալը բարի նշան էր համարվում:

147 Մինչև Օգոստոսը հայր հայրենյաց անուն կրել էին Կիկերոնը Կատիլինայի դավադրությունից հետո և Կեսարը Մունդայի ճակատամարտից հետո՝ այն համարվում էր բարձրագույն պատիվ, և անգամ ոչ բոլոր կայսրերն էին կրում այն ընդհուպ մինչև Փլաբիոսները:

148 «Նվ բոլ ուլկզի Լեջանկությունն ու հաջողությունը հռոմեական սենատին ու

ժողովրդին» — սենատի առջև կոնսուլների ելույթի սովորական սկիզբը, որը Մեսսալան արտոխել է սվլյալ դեպքի նկատմամբ կիրարկելու համար:

149 Հնգամյա խաղերը կատարվում էին յուրաքանչյուր շորս տարին մեկ (հոռմեացի-նիերը հաշվի մեջ էին մտցնում շրջանի և՛ առաջին, և՛ վերջին տարին) Օլիմպիական և մյուս հունական մեծ խաղերի օրինակով:

150 Օլիմպիական Զևսի տաճարը Աթենքում հիմնադրվել է դեռևս Պիսիստրատեսի կողմից VI դարում մ. թ. ա., բայց կառուցումն ավարտվել էր միայն Ադրիանոսի օրոք:

151 Սկտավիան մահացել է ոչ թե 9 թ., այլ 11 թ. մ. թ. ա. — սխալը Սվետոնիոսինն է:

152 Օգոստոսի ամուսնությունը Սկրիբոնիայի հետ նույնպես քաղաքական հաշիվներով էր սլայմանալորված՝ այն պետք է ամրապնդեր հաշտությունը Օգոստոսի և Սեքստոս Պոմպեոսի միջև, որն ամուսնացել էր Սկրիբոնիայի զարմուհու հետ: Օգոստոսը բաժանվեց կնոջից իր դուստր Յուլիայի հենց ծննդյան օրը:

153 25 թ. Մարցելլոսը ընդամենը 18 սուրեկան էր: Նա մեռավ երկու տարի անց: Տրեբերիոսի ամուսնությունների մասին տե՛ս Տրլ 7, 2—3:

154 Կոտիգոնի հետ Օգոստոսը հարարերությունների մեջ էր շուրջ 35 թ. մ. թ. ա., երբ փնտրում էր նրա դաշինքը իլլիրիացիների դեմ:

155 Կնեյով ըստ հին սովորույթի, per assem et libram — որդեգրման այդ ձևի ժամանակ որդեգրողը հինգ վկաների ներկայությամբ Երևսայի հոր առջև երիցս մետաղադրամով հարվածում էր կշեռքին, արտասանելով՝ «Հայտարարում եմ, որ ըստ քվիրիտական իրավունքի այդ մարդը իմն է», XII տախտակների հինավուրց օրենքի արձագանքը, որը հռչակում էր, թե Երիցս հոր կողմից վաճառված որդին դուրս է գալիս նրա իշխանության տակից:

156 Կայսրը պրոկոնսուլական իշխանությամբ ուղարկվեց Արևելք պարթևների դեմ, Լուկիոսը՝ Իսպանիա այդ ուղևորությունների ժամանակ էլ նրանք մահացան:

157 Բուրդ մանեյ — հոռմեացի կնոջ ավանդական առաքինությունը (lanifica):

158 Լոդայու (natare) փոխարեն Լիպսիոսը առաջարկում է «գրել» (notare) ճշգրտումը:

159. Սեդանի շուրջ սովորաբար նստում էին միայն երեխաները, մինչդեռ հասակավարները ընկողմանում էին:

160 Յուլիա Ավագը աքսորվել էր Կամպանիայի մոտ գտնվող Պանդատերիա կղզին և սույա փոխադրվել Ռեգիում, Յուլիա Կրտսերը՝ Ադրիատիկի Տրիմերիում կղզին, Ագրիպպա Պոստումոսը՝ սկզբնապես Սորբենտում, իսկ հետո էլբայի մոտ գտնվող Պլանասիա կղզին:

161 Կուրիաների ժողովի առջև — որդեգրման մեկ ուրիշ ձև, որը կիրառվում էր այն ժամանակ, երբ որդեգրվողը արդեն շախահաս և ինքնուրույն մարդ էր:

162 Ամուսնական անհավատարմության համար դատերը մահապատժի ենթարկելը հոր հնամենի իրավունքն էր, որ վերականգնել էր Օգոստոսը: Յուլիայի սիրեկանը՝ Յուլիոս Անտոնիոսը ինքնասպան եղավ:

163 «Ավելի լավ կլիներ ինձ...» — «Իլիական», III, 40, Հեկտորի խոսքերը Պարիսին (բնագրում՝ «Ավելի լավ կլիներ քեզ...»):

164 Ագրիպպան գտնվում էր Միթիլենեում 23—21 թթ. հմմտ. Տրբ., 10:

165 Տերենցիան, Մեկենասի կինը, Մուրենայի քույրն էր:

166 «Բուրդ» — պայմանական թարգմանություն. բնագրում բառախաղ է՝ orbis — «դալիս» և «երկրային շրջան»:

167 *Մերագոս, Թատերական հանդերձարար, որից, ըստ երևույթին, խնջույք անող- ները վարձով վերցնում էին իրենց հանդերձները (ըստ մեկ ուրիշ բացատրության, նրան և դրա դերասաններին նրանք վարձում էին զվարճացնելու իրենց խնջույքի ժամանակ):*

168 *Մալիա — անհայտ անձնավորություն (ԹԵՊ տեղ):*

169 *Ապոլլոն—Տանջողը պաշտվում էր որպես Մարսիեսին մահապատժի ենթարկող:*

170 *Կորնթոսյան բրոնզյա սկահակները հռչակված էին իրենց դրվագումներով և մե- տաղի որակով (ըստ ավանդության, դրանք պատրաստված էին ոսկու և արծաթի խառ- նուրդ պարունակող բրոնզից, որը ձուլվել էր մ. թ. ա. 146 թ. Կորնթոսի հրդեհի ժամա- նակ):*

171 *Սկահակագործ— բնագրում նաև նորարանություն է՝ corintharius:*

172 *Ճերմակ ֆլուորական սպաթի (murrinum անորոշ բառի առավել հավանական նշանակությունը) օկիճները Հռոմ էին ներմուծվում Արևելքից և դրա համար էլ բարձր էին գնահատվում:*

173. *Գեկանեմբերին, այսինքն սատուրնալիալեբրի ժամանակ, երբ ցանկացած զվար- ճությունները թույլատրելի էին:*

174 *Հոռմեացիները խաղում էին շորս երկարուկ գառերով՝ 1, 3, 4, 6 միավորներով. «շուն» կոչվում էր ամենավատ նետումը, երբ բոլոր գառերը մեկ էին ցույց տալիս, «Վեներա»՝ լավագույն նետումը, երբ բոլոր գառերը ընկնում էին տարբեր միավորներով:*

175 *Քվինվալաուրիումներ— տոնահանդես Միներվայի պատվին (մարտի 19—23-ին):*

176 *Ալբանական քար— էժան հրաբխային տուֆ, որը հանվում էր Հռոմի մոտ գտնու- վող Ալբանյան քարհանքերից, փխրուն և դյուրին հողմահարվող (Վիտրուվիոս, II, 7):*

177 *Միևնույն նեջասենյակում— այն դեպքում, երբ ամուսնը հոռմեացիները սովոր- բարար ապրում էին տան սովերոտ կողմում, իսկ ձմռանը՝ արևոտ կողմում:*

178 *Սիրակուզա— Սիցիլիայի խորոշագույն քաղաքը. պարզ չէ, թե ինչու էր այդ- պես կոչվում Օգոստոսի աշխատասենյակը (ժանոթագրողների մեկնաբանությունները բա- վարար չեն):*

179 *Մեկենասի տունը գտնվում էր էսքվիլինումում, Հռոմի ամենաառողջարար մա- սում:*

180 *Աժդահանների աճյունները— Կամպանիան («Ֆլեգրեյական գաշտերը») համար- վում էր այն վայրը, որտեղ Հերկուլեսը ճակատամարտից հսկաների հետ (Դիոգորոս, IV, 21,5):*

181 *Տոգայի վրայի լայն կարմիր գոտին սենատորական դասի առանձնաշնորհումն էր, իսկ նեղ գոտին՝ հեծյալների:*

182 *Վեց կերակրատեսակներով ճաշկերույթը համարվում էր համեստ. Հելիոգարալոսը III դարում խնջույքներ էր սարքում 22 կերակրատեսակներով:*

183 *Չեֆիաբառացները, aretalogi, սկզբնապես զբաղվում էին պատմությունների անե- լով այն հրաշքների մասին, որոնք դրսևորվում էին որևէ մի աստծո պորությունը (areté), բայց նրանց պատմությունների այդ կրոնական գունավորումը, ըստ երևույթին, վաղ էր կորսվել:*

184 *Ընծաների վրա երկիմաստ մակագրություններ անելու սովորույթի մասին հմմտ. Պետրոնիոս, Սատիրիկոն, 56:*

185 *Շարաբօրյա պատ հրձաների մոտ, որպես կանոն, գոյություն չունեն, բայց հոռ- մեացիները երբեք աչքի չեն ընկել հուդայական ձեռքի քաշիմացությունը:*

186 *Հայտնի չէ, թե նեպոտի որ երկասիրությունն է վկայակոչում Սվետոսիոսը:*

187 Սեփտաբիուս — բնագրում senos sextantes, ինչը և հենց կազմում է սեքստա-
րիուս:

188 Ինփակալան գինի, շնայած իր գերմանական որականիշին, պատրաստվում էր
Իտալիայում և համարվում էր հասարակ ու էփան. ի միջի այլոց, Վերգիլիոսը («Ջեոր-
յիկներ», II, 95—96) նրա մասին հիացմունքով է արտահայտվում:

189 Մեկնության տարբերակ՝ «քանի դեռ չէր գրառնում (օրագրում) օրվա բույսը կամ
համարյա բույսը գործերը» (Ադամս):

190 Ուրե է մի գործի կամ ծիսակատարության առիթով — միգուցե, կարելի է ավելի
ճիշտ թարգմանել՝ «առավոտյան ողջունների կամ զոհամատուցումների համար»:

191 Օգոստոսի հասակը — մոտ 1 մ 70 սմ.:

192 «Պետք է ենթադրել, որ Օգոստոսը տառապում էր աղիքների կատառից հետագա
թունավորման մաշկային երևույթներով» (Դ. Կոնչալովսկի):

193 Պերիստիլիում — ժաղկանոցով ներքնարակ, շրջափակված սյունաշարով:

194 Հոռմից մինչև Տիրուր շուրջ 25 կմ է, մինչև Պրենեստե շուրջ 32 կմ.:

195 Բաց կրակի առջև — և ոչ թե բաղնիքի գոլորշու մեջ, ինչպես սովորաբար ըն-
դունված էր հոռմեացիների մոտ:

196 Մծմբային լոզարաններ — բնագրում Albulis calidis, Հոռմի մոտ գտնվող Ալբուլ-
քի ծծմբաղբյուրի անունով:

197 Վերմակ — այդ բառը ձեռագրերում եղծված է, թարգմանությունը տրված է ըստ
Խոտի ընթերցման:

198 Արտասանության մասին որպես հոետորական վարժության տե՛ս «Քերականների
և ճարտասանների մասին»:

199 Հանրային հեղինակային ընթերցումների սովորույթը Հոռմում մուծվել է II եռա-
պետության տարիներին Ագինիոս Պոլիոնի կողմից և տարածում գտավ կայսրության
գոյության ողջ ժամանակաշրջանում:

200 Կատոնի մասին իր երկը Բրուտոսը գրեց ի հերքումն Կեսարի «Անտիկատոնի»
(տե՛ս Հուլ., 56):

201 Օգոստոսի այդ ինքնակենսագրությունը Սվետոնիոսը վկայակոչում է գլ. 2 և
74-ում:

202 Օգոստոսի գրած էպիգրամներից պահպանվել է մեկը՝ անվայելուչ բովանդակու-
թյամբ (բերված է Մարցիալեսի մոտ, XI, 20):

203 Այաքս, տրոյական պատերազմի հերոս, Սոֆոկլեսի ողբերգության գործող անձ,
ինքնասպան եղավ նետվելով թրի վրա, իսկ սպունգով բանաստեղծները ջնշում էին իրենց
ձեռագրերում եղած անհաջող տեղերը:

204 Շաղկապների կրկնությունը (օրինակ, et և aut), իսկապես, նկատելի է Օգոս-
տոսի «Գործքում» և հազիվ թե այնտեղից չէ յուրացված Սվետոնիոսի կողմից որպես
սեփական ոճ:

205 Սեքսերության սիրահարներ, cacozelia — ճարտասանության մեջ այդ բառով
նշանակվում էր ոճական արատը՝ ոճական ցեղեցկությունները անհեթեթության հասցնելը:
Այդպիսի գրողների թվին էր պատկանում նաև Մեկենասը՝ նեոտերիկների աշակերտը:
Տիրերիոսի ոճի մասին հմմտ. Տիր., 70, Սալյուստոսի հնարանության մասին — Քեր., 15:

206 Ասիական (ասիանական) պերճախոսությունը աչքի էր զարնում բազմաբառու-
թյամբ և ոճի ճոխությամբ. Պլուտարքոսը («Անտոնիոս», 2) ասում է Անտոնիոսի մա-
սին, որ նրա խոսելաոճը և ապրելակերպը միատեսակ ասիական էին:

207 Հունական կալենդներին, այսինքն երբեք (առած), կալենդներ՝ ամսվա առաջին

օրն է հռոմեական օրացույցում, երբ կատարվում էին պարտային վճարումները, իսկ հռոմեական տոմարում «կալինդներ» հասկացությունը չէր օգտագործվում:

²⁰⁸ Օգոստոսի լեղվի այստեղ թվարկված առանձնահատկությունները մեծ մասամբ գոհեկարանություններ և բարբառայնություններ են գրական արտահայտությունների փոխարեն. թարգմանությունն այստեղ, հասկանալի է, կարող է միայն պայմանական լինել, թեև Ալեքսեևի և Կոնշալովսկու կողմից գտնված են շատ հաջող ռուսական զուգահեռներ:

²⁰⁹ «Նրանք կան...» — բնագրում *simus pro sumus et domos genitivo casu singularis pro domuos:*

²¹⁰ Ա. Շտարը նկատում է, որ ըստ Օգոստոսի կանոնի (առանց տողադարձների — յուրաքանչյուր տող ավարտվում է լրիվ բառով) տպագրվել է Սվետոնիոսի մի ամբողջ հրատարակություն, որը լույս է ընծայել Շ. Պատենը Բազելում 1671 թ.:

²¹¹ Տեքստը փշաքած է. ոմանք կարդում են «Սֆերոսի և Արեոսի հետ», տեքստի մեջ մուծելով, այդպիսով, Սֆերոսի՝ Օգոստոսի դաստիարակ-ազատարձակի, անունը:

²¹² Հին կտավերգությունը — մ. թ. ա. V դարի աստիկական կատակերգությունը (Կրաւիւնես, Արիստոփանես, էվսոլիդես):

²¹³ Օգոստոսի օրոք «տնաշինության Լարգի մասին» հիշատակում է Ստրաբոնը (V, 3, 7) Օգոստոսը արգելեց մեծ ճանապարհների վրա 70 ոտնաչափ բարձրությունից ավելի տներ կառուցել:

²¹⁴ Կրական մրցույթներ — հանձնարարված թեմաներով ճառերի արտասանումը (որոնց թվում կայսեր գովերգություններն, իհարկե, վերջին տեղը չէին գրավում), արքունական դարոցում մտցրել են Վերրիոս Փլակկոսը (Քևր, 17), իսկ հետո, ըստ երեվույթին, դարձել էին հրապարակային և անցել պրետորների հսկողության տակ:

²¹⁵ Պլինիոս, 2, 56, 146՝ «(Կայծակը) չի հարվածում դափնու տերևներին և երբեք ավելի խոր չի թափանցում գետնի խորքը, քան հինգ ոտնաչափ. դրա համար էլ երկշտ մարդիկ ամենահուսալի ասյաստարանը համարում են խոր նկուղիները, ինչպես նաև փոկի կաշվից պատրաստված վրանները՝ բանն այն է, որ ծովային բոլոր կենդանիներից միայն փոկին չի հարվածում կայծակը, ինչպես որ թռչուններից՝ արծվին, որը դրա համար էլ համարվում է շանթ ու կայծակի կրողը»:

²¹⁶ Արդևն ասել ենք — 29-րդ գլխում:

²¹⁷ Իր բարեկամի մարգարեական երազին — բժիշկ Արտոբիոսի:

²¹⁸ Աղոճությունն էր մտում — հայասնի միջոց էր կանխելու համար ճակատագրի վրեժը:

²¹⁹ Պլևասիլը աստվածներին նշիրված ջրավազանը (*compluvium*) գտնվում էր հռոմեական տան ատրիումում, տանիքի երդիկի տակ:

²²⁰ Նունդիններ — շուկայի օրը հռոմեական իննօրյա շաբաթում, նոներ — յուրաքանչյուր ամսի 7 կամ 9 թիվը. այդ բառի սկիզբը համընկնում է *non*՝ «ոչ», բառին:

²²¹ Դեմեարայի (Տերեբայի) հաղորդակցումը էլեվսինյան միստերիային Օգոստոսի կողմից ընդունվեց մ. թ. ա. 30 թ.:

²²² Ըստ Դիոնի (51, 16), ի պատասխան Ապիսին տեսնելու հրավերի Օգոստոսը ասել էր. «Ես պատում եմ աստվածների և ոչ թե եզների»:

²²³ Գանձաւրան — տե՛ս Հուլ, 28:

²²⁴ Յրվեցին տները — ընթերցում ըստ Գրեվիոսի ճշտման՝ *domum irent dormitent-ի* փոխարեն:

²²⁵ Գորսերի հետ կատարված հլաշքը հիշեցնում է Հերակլեսի հրաշքը, որը մեկընդմիջտ հարկադրել էր լսելու Ռեզիումի մոտ եղած կնճիթավոր ճպուռներին (Դիոդորոս, IV,

208), արծվի հետ կատարված հրաշք թագավորական իշխանությունն էր կանխագուշակել նաև Տարկվիսիոս Հնին (Լիվիոս, I, 34):

226 Հռովմա աստվածամու պառակները— թարգմանությունն ըստ Դիոնի զուգահեռ տեղի (48,2): Սվետոնիոսը գրում է *signum rei publicae*, որը որոշ ժանոթագրողներ թարգմանում են, շափից ավելի արդիականացնելով, որպես «պետական կնիք»:

227 Աղավնու բները նվիրարբերված էին Վեներային, Հուլիոսների տոհմի նախամորը:

228 Այծեզջյուրի համաստեղությունում արեգակը կանգնած է լինում ոչ թե սեպտեմբերին, երբ Օգոստոսը ծնվել էր, այլ դեկտեմբերին, երբ նա հղացել էր— Սվետոնիոսի սխալն է:

229 Փիլիպպի մոտ— տեքստը փշացած է, թարգմանությունն ըստ Սալմաշիոսի ընթերցումի:

230 «Հաջողակ», հունարեն «Եվտիխես»։ հաղթող— «Նիկոն»:

231 Ագրիպպան, ըստ երևույթին, այդ տաճարի կառուցողն էր և իր անունը գրել էր հակատին:

232 Հնգամյա զոհամատուցումները ուղեկցվում էին աղոթքներով հռոմեական պետության բարօրության համար հաջորդ հնդամյակում և այդ աղոթքների կատարման համար արվող ուխտերով:

233 Տիրերիոսը Ելլիբիկում էր ուղևորվում կարգ ու կանոն հաստատելու համար 6—9 թթ ապստամբությունից հետո:

234 Աստուրա— քաղաք Օստիայից Նեապոլ տանող ճանապարհի մոտավորապես երրորդ մասում:

35 Պուտեոլքը Իտալիայի հացի նավահանգիստն էր, և հացառատ Եգիպտոսից եկած նավերը այնտեղ սովորական հյուրեր էին:

236 Էֆեբոսներ հույները կոչում էին 18—20 տարեկան պատանիներին, որոնք զինվորական պատրաստություն էին անցնում. կապրի կղզին վաղեմի ժամանակներից զաղութացված էր հույների կողմից, և այդ հունական սովորույթը այնտեղ շարունակում էր սլափանվել:

237 Դրվագի վերջը եղծված է, թարգմանությունն ըստ Մյուլլերի լրացման:

238 Ապրագոպոլիս. «անդործների քաղաք»— «Պարապաքաղաք», հաջող կերպով թարգմանել է Ալեքսեևը:

239 Մահվան տարելիցին ջահերով գերեզմանի վրա հավաքվելը սովորույթ էր:

240 Թրասիլլեսը աստղագուշակ էր. Օգոստոսը ծիծաղում է այն բանի վրա, որ նա չէր կարողացել գուշակել պարզ կատակը:

241 Հմմտ. Տակիտոս, Անն., 1, 5. «անգամ հայտնի չէ, թե գտավ նա արդյոք Օգոստոսին Նոլա քաղաքում կենդանի կամ արդեն հոգին ավանդած՝ բանն այն է, սբ Լիվիան շրջափակել էր տունը և դեպի այն տանող ճանապարհները խիստ պահախմբերով, ժամանակ առ ժամանակ արձակելով բարեպատեհ տեղեկություններ, մինչև որ միջոցներ ձևոք առնելուց հետո, որպիսիք պահանջում էին պարագաները, միանգամից շտարածվեց յուրը, որ Օգոստոսը վախճանվել է, և կառավարումը անցավ ներոնի ձեռքը» (այսինքն՝ Տիրերիոսի):

242 Օգոստոսը մահացավ մ. թ. 14 թ. օգոստոսի 19-ին:

243 Սովորաբար շէր թույլատրվում մեռյալներին պահել տանաբնում՝ բազմանշանակ բացառություն:

244 Դեկրետն այն մասին, որպեսզի թաղման թափորը անցնի հաղթադարպասներով, ընդունվեց և իրագործվեց (Դիոն, 56, 42):

245 Հատարանակի արձանը դրվեց սենատի կուրթայում մ. թ. ա. 39 թ. և այնտեղ մնում ընդհուպ մինչև քրիստոնեության հաղթանակը IV դարում:

246 Բոստորալային տրիբունան երե և անվանված ի տարբերություն երե, որը կայ սուցն, էր Օգոստոսը և դաբարված էր Անտոնիոսի Անտիոնի նավատորմի ցամաքային

247 Պրետորական կոչման տեղ անձի անուն էր Նոմեդիոս Ատտիկոս և Լիվիոսի որպես պարզև ստացավ մեկ միլիոն սենտերցիում:

248 Օգոստոսի դամբարանի կառուցումն սկսվել էր մ. թ. ա. 28 թ., երբ ավերակները պահպանվեց են:

249 Կտակի տարեթիվը— 12 թ. ապրիլի 3-ը:

250 Որպեսզի Լիվիային կտակի ունեցվածքի երրորդ մասը, Օգոստոսը պետք է սենատից հատուկ վերապահում ստանար Վոկոնիոսի օրենքից բացառություն անելու համար ըստ որի կինը չէր կարող 25000 սեստերցիումից ավելի ժառանգել (Դիոն, 58, 32):

251 Տրիբուններին— նրանց, որոնց պատկանել էր Օգոստոսը (պ. 40):

252 Երկու հայրական կալվածներ— Օկտավիայից և Հուլիոս Կեսարից:

253 Երա գոթոց ցուցակը— նշանավոր «Աստվածային Օգոստոսի գործերը», որոնք պահպանվել են մինչև մեր օրերը զափառական ընթորինակություններով լատինական տեքստը՝ Անկիրայում և Անտիոքում, հունական թարգմանությունը՝ Ապոլլոնիայում:

ՏԻՐԵՐԻՈՍ

1 Ռեգիլլոս— անհայտ վայր Ատտա Կլավդիոսին Լիվիոսն անվանում է Ատտիոս Կլավդոս և այդ իրադարձությունը վերագրում է մ. թ. ա. 504 թ. (II, 16):

2 Ընդունվեց պատրիկների շարքը— հմմտ. Օգ., 2:

3 Անիեն (Անիո), գետակ, որ թափվում է Տիրրոսի մեջ Հոմից քիչ վերև:

4 Հաեդուսարանը քաղաքի սահմանագծում հատուկ տոհմական առանձնաշնորհում էր XII տախտակների օրենքներն արգելում էին հանգուցյալներին այրել և թաղել քաղաքի պարիսպներից ներս:

5 Ներոն մակեանվան նույն եղանակությունը մատնանշում է Հելլիոսը (XIII, 23), հառնեցներով երա ստուգաբանությունը— արդեն կատարելապես ֆաեոաստիկորեն հունական νεόρι-ին:

6 Երբ Պյտոսը Էպիրոսցին, 280 թ. չարդեղով հոռմեացիներին Հերակլեայի մոտ, նրանց հաշտության բանակցություններ առաջարկեց, ապա զատամյալ Ապպիոս Կլավդիոսը, կարգադրելով իրեն պատգարակով տանել սենատ, համոզեց հոռմեացիներին մերժել առաջարկությունը: Երա այդ ճառը կարդացել և ջերմորեն զովարանել էր դեռես Կիկերոնը («Թրուսոս», 16, 61):

7 Պատեդ Միցիլիայից— մ. թ. ա. 264 թ.:

8 Պատմությունն այն մասին, թե ինչպես Ռեգիլիանոսը փոքրում էր ստրկացնել Վիրգինիա անունով աղջկան, թե ինչպես պերեյները լքեցին Հոմը և թե ինչպես դրանից հետո ընկավ դեցիմվիրների իշխանությունը (449 թ.) տե՛ս Լիվիոսի մոտ, II, 44—48:

9 Կլավդիոս Լուստոսը (անունը ենթադրաբար վերականգնել է իմը, ձեռագրերում Գրուզոս) ավելի մոտիկից հայտնի չէ:

10 Կլավդիոս Պուլբոը շախչախվեց Գրեպանայի մոտ 249 թ.: Երա ազատարձակ Գլիկոսը, թեև, իհարկե, տեղնուտեղը ստիպված եղավ հրաժարվել դիկտատուրայից, առաջին իսկ խաղերի ժամանակ հայտնվեց թատրոնում նախնիին դիկտատորի տոգայով:

11 Պատմությունն այն մասին, թե ինչպես Կլավդիոսն ի պագտայց իր անմեղություն

Վրայթով Տիրբոսի հասանքն ի վեր տարավ Կիբեդայի սրբութիւններով բռնված նավը, որոնք առաջին անգամ Հոռոմ էին բերվել 204 թ., տե՛ս Օվիդիոսի մոա («Ճաստի», IV, 808 և հետ.):

¹⁹ Կլադիոսը թույլ ավեց, արպեսզի Պ. Ֆոնտեյոսը, որգեզրի իրեն՝ պլեբեյների գասն անցնելու համար՝ տե՛ս Հուլ., 20, 4:

¹⁸ Վեստալուհու եղբայրք (ըստ Կիկերոնի և Վալերիոս Մաքսիմոսի՝ հայրը) Ապպիոս Կլավդիոս Պուլքրն էր, 143 թ, կոնսուլը, Տիրբրիոս Գրակոսի աները, որն ինքնագլուխ կատարել էր իր արիւմֆը ալպիական սալասանների դեմ տարած հաղթանակից հետո:

¹⁴ Սալինաառքք դատապարտվեց իլլիրիական ավարը անարդարացի բաժանելու համար 219 թ. կոնսուլութիւնից հետո, քայց կրկին կոնսուլ ընտրվեց 207 թ. և ցենզոր չՈՎ թ.: Երկու անգամն էլ նրա ընկերակիցը վերոհիշյալ Տիրբրիոս Կլավդիոս Ներոնն էր, նրա կատաղի մրցակիցը:

¹⁵ Սենոններ— գալլական ցեղ, որը տիրեց Հոռոմին 390 թ. մ. թ. ա. և հոռոմեացիներից մեծ փրկագին վերջրեց. պատմութիւնն այն մասին, որ այդ փրկագինը Կամիլոսը ետ իւլեց՝ հայրենասիրական առասույել է:

¹⁶ Մոռան ծոռ— Լիվիոս Դրուզոսը, Գայոս Գրակոսի ընկերակիցը, որ 122 թ. առաջուկեց մի շարք դեմագոգիական միջոցառումներ, որպեսզի անջատի ժողովրդին Գրակոսից:

¹⁷ Վերը հիշվածի որդին, 91 թվականի տրիբունը, ամբողջ Իտալիայի վրա հոռոմեական քաղաքացիութիւնը տարածելու նախաձեռնողը, սպանվեց տրիբունատի ժամանակ:

¹⁸ Մտրուկներին ազատութիւն կոչել, ad pileum՝ pileum կոչվում էր թաղիքի թասակը, որ հազցնում էին ազատագրված ստրուկներին:

¹⁹ Ֆասկիների իրավունք (այսինքն ճիպտաներով ուղեկցող լիկտորների) Ներոնը յստացավ, քանի որ նրա պրետուրայի ժամկետն արդեն վերջացել էր:

²⁰ Ձիջեց Լիվիային— տե՛ս Օգ., 62, 2:

²¹ Տիրբրիոսի ծնունդը— մ. թ. ա. 42 թ. նոյեմբերի 16-ին:

²² Լակեդեմոնացիների ֆաղափ— Սպարտա:

²³ Թուլլաներ— տե՛ս Հուլ., ժանոթագր. 212:

²⁴ Աստիկական խաղերը նվիրված էին Դիոնիսին և կազմակերպվում էին աթենական օրինակով. հիշատակվում են միայն այստեղ և Կալ. 20-ում:

²⁵ Տրոյական խաղերի մասին տե՛ս Հուլ., ժանոթագր. 98:

²⁶ Պաշտոնաթող զլազիատորներ— rudiarii, այսինքն ազատութիւն և փայտյա սուր (rudis) ստացածներ ի նշան պատվավոր պաշտոնաթողութիւնի:

²⁷ Որին... Կիկերոնը— որոշ հրատարակիչներ այդ բառերը զլոսսա են համարում:

²⁸ Ագրիպպինային ամուսնալուծվելուց հետո կնութիւն ավեցին Ագրինիոս Գալլոսին, Պոլլիոնի որդուն, և դրա համար Տիրբրիոսը միշտ էլ հաակապես էր նրան ատում (Տակիտոս, Անն., I, 12):

²⁹ Մուրենայի դավադրութիւն և էրգաստուլումների հեաաքննութիւն մասին տե՛ս Օգ., 19 և 32:

³⁰ Գրեթե առանց ընդմիջման— շափազանցութիւն է՝ Տիրբրիոսի քվեստուրայի և առաջին կոնսուլութիւն միջև 10 տարի էր անցել:

³¹ Կնոջ նկատմամբ Տիրբրիոսի տածած զգվանքը վկայակոչում է Տակիտոսը (Անն., I, 53), առաջնութիւնը Գայսսին և Լուկիոսին զիջելը՝ Վելլեսը (II, 99), որք կրկնում է,

Իհարկե, Տիբերիոսի պաշտոնական բացատրությունը: Ագրիպայի Միթիլենե մեկնելու մասին տե՛ս Օգ., 66:

³² Այցելել բոլոր հիվանդներին — հմտ. Վելլետի (II, 114) խանդավառորեն նկարագրած Տիբերիոսի հոգատարությունը հիվանդ և վիրավոր զինվորների նկատմամբ պաննոնական և գերմանական պատերազմների ժամանակ:

³³ Լիկտորներին — բնագրում ավելի ընդհանուր բառ է՝ *apparitores*:

³⁴ Նվերներ ամուսինների միջև ըստ հռոմեական իրավունքի արդելվում էին, այն ամենը, որ ամուսինը տալիս էր կնոջը, ամուսնալուծությունից հետո վերագարծվում էր նրան:

³⁵ Թիկնոցը և սանդղակները — ի հակադրություն հռոմեական տոգայի և մաշիկների:

³⁶ Նեմավսուս, այժմ Նիմ. Տիբերիոսի արձանները զրված էին այնտեղ ի հիշատակ նրա գալլական կուսակալության:

³⁷ Լիվիայի ձվի մասին սյուտմությունը բերում է նաև Պլինիոսը, խոսելով թուխս նստելու մասին (10, 76, 154):

³⁸ Հերիոնի գուռակի մասին այլևս ոչ մի տեղ չի հիշատակվում. Ապոնուսի հանքաղբյուրը գտնվում էր Պատավիումից (Պագուլյա) հստավ:

³⁹ Այն մասին, որ Հոտոսում արծիվներ շեն լինում, խոսում է նաև Պլինիոսը (10, 41, 77). Տիբերիոսի «սպագա Ջևսի», արծիվն նվիրված շողոքորթիչ էպիգրամ է գրել Ապոլլոնիդես Ջմյունացին (Պալատինյան անթոլոգիա, 13, 287. ուսերեն թարգմանությունը տե՛ս «Греческая эпиграмма» ժողովածուում, Մոսկվա, 1960, էջ 199):

⁴⁰ Թրասիլլևսի մյուս փորձությունների մասին պատմում են Տակիտոսը (Անն., VI, 21) և Դիոնը (55, 11) Տիբերիոսը, մտադրվելով նրան վար նետել ժայռից կամ պարբուպից, հարցրել էր նրան, թե ինչ կասի նա իր սեփական սպագայի մասին, և երբ նա հաշվումներ կատարելով, սարսափահար բացականչել էր, որ իրեն մեծ վտանգ է սպառնում, ապա Տիբերիոսը խնայել էր նրան և մերձեցրել իրեն:

⁴¹ Կարին՝ — արիստոկրատական թաղամաս Յելիումի և էսքվիլինումի միջև, իր տունը, որ երբեմնի պատկանել էր Պոմպեոսին և սպա Անտոնիոսին, Տիբերիոսը հանձնել էր Դրուզոսին:

⁴² Օգոստոսի հայրական իշխանության տակ անցնելով Տիբերիոսը պաշտոնապես կորցրեց իրավաբանական ինքնուրույնության իրավունքը:

⁴³ Ի օգտագործումն հոր իշխանության ներքո — *peculio referret accepta* սլեկուլիո կոչվում էր ունեցվածքի այն մասը, որ տիրակալողը առանձնացնում էր ի օգտագործումն որդուն, տնեցուն կամ ստրուկին:

⁴⁴ Գերմանիայի խաղաղեցումը — խոսվություն բարձրացրած քրուսկների և քավկերի հնազանդեցումը, էլբայի վրա սահմանի ամրացումը, պայքարը Մարոբորդուսի դեմ (4—6 թթ.) բոլոր այդ գործողությունները կասեցվեցին պաննոնական ապստամբության մը՝ հռոմեացիների թիկունքում: Ըստ Վելլետի, ապստամբները մինչև 800 հազար էին, Լրանցից երկու հարյուր հազարը միայն զինված տղամարդիկ:

⁴⁵ Դանուբիոս — Դանուբ:

⁴⁶ Սեպտս — տե՛ս Օգ., ժանոթագր. 118:

⁴⁷ Տանուրները — շնորհակալական աղոթքների համար հանուն հաղթանակի:

⁴⁸ Լիպլայի բրուկտերները հռոմեացիների սմենահամառ թշնամիներն էին. նրանց մարզում ջախջախվեց Վարոսը, և նրանք զավթեցին նրա լեգեոնական արժիվներից մեկը:

⁴⁹ Բատոն անունը կրում էին ապստամբած ցեղերի երկու առաջնորդներ, մեկը՝ դալ-

մաթացի, մյուսը՝ պաննոնացի. Սվետոնիոսը սխալմամբ տալիս է երկրորդի անունը՝ առաջինի փոխարեն:

50 Հռավենենան, շրջապատված ճահիճներով ու ծովալճակներով, այդ պահից դարձավ սովորական քարտավայր պատվավոր գերիների համար. մի քանի տարի անց հենց այստեղ բնակեցրեցին Մարտրոդոտոսին և Արմինիոսի որդուն:

51 Կատտուրի և Պոլուսի տաճարը, ըստ Դիոնի (55, 27, կառուցել ավարտել էր Տիրբերիոսը դեռևս մ. թ. 6 թվականին. ըստ երևույթին, այժմ այն միայն զարդարվել էր թշնամու զենքով):

52 Հանուն ինձ և հանուն մուսաների— անհասկանալի բառեր են (արդյո՞ք ակնարկ է Տիրբերիոսի գրական զբաղմունքների) և, ինչպես հունարեն քաղվածքերի մեծ մասը, ձեռագրում վնասված են: Առաջարկված տարբերակներից լավագույնն է՝ «հանուն ինձ և հանուն քո (մերձավորների)» (Ուղենդորպ):

53 «Գովարանել»— թարգմանություն ըստ Ստեֆանի լրացման:

54 «Նա, ով սոսկ ճապաղմամբ ուղղեց մեր գործերը»— էնիոսի հայտնի ոտանավորը Ֆարիոս Կունկտատորի մասին («Աննալներ», 370 ըստ Ֆալենի), փոփոխված Օգոստոսի կողմից ի հարմարեցումն առիթի:

55 Հոմերոսի տողերը— «Իլիական», X, 246—247, Դիոմեդեսի խոսքերը Ոդիսևսի մասին:

56 Գերագույն իշխանություն— այստեղ և հետո այդպես է թարգմանվում «principatus» բառը:

57 Գայլին ականջներից բռնած պահել— առած ծանր դրության մասին (հմմտ. Տերենտիոս, «Ֆորմիոն», 506). ինչպես հայտնի է, գայլի ականջները փոքր են:

58 Լ. Սկրիբոնիոս Լիբոն— Տակիտոսի մոտ նա անվանված է Լիբոն Դրուզոս, որն ավելի ճիշտ է. Սվետոնիոսը նրան շփոթում է 16 թ. կոնսուլի հետ, որը նույնպես Լիբոն էր:

59 Կառավարման բնագավառներ, ըստ Դիոնի, 57, 2, Տիրբերիոսը նախատեսել էր երեքը՝ Հռոմը Իտալիայի հետ, պրովինցիաները և զորքերը:

60 Կլեմենտոսին, որն իրեն մատուցում էր որպես ողջ մնացած Ագրիպպա Պոստումոս, Տիրբերիոսը բռնել տվեց, նրա զորքն ուղարկելով երկու զինվորների՝ որպես փախըստականներ: Հարցին, թե «ինչպե՞ս դու Ագրիպպա դարձար», սա պատասխանել էր՝ «Այնպես, ինչպես դու՝ Կեսար» (Տակիտոս, Անն., II, 40):

61 Քրմական դանակը (secespita) երկաթից էր, երկար, սրածայր, կլոր զարդարուն բռնակով:

62 Պլեբեյական խաղեր— նոյեմբերի 4—17-ին:

63 Հավատարմության երդումը այն ամենին ինչ որ արվել է և արվելու է տիրակալի կողմից, Օգոստոսի օրոք տալիս Լին յուրաքանչյուր նոր տարի, և Տիրբերիոսն ինքն էր ժողովրդին երդվել տալիս:

64 Երբ սենատը առաջարկեց մեկ ամիս անվանել Տիրբերիոսի անունով (ըստ Դիոնի, 57, 18, ոչ թե սեպտեմբերը, այլ նոյեմբերը), վերջինս պատասխանել էր. «Իսկ դուք ի՞նչ եք անելու, եթե տասներեք Կեսար ունենաք»: Հայրենյաց հայր անվանման մասին տե՛ս Օգ., ժանոթագր. 147:

65 Կաղնեպսակ (corona civica) ժամանակին շնորհվել էր Օգոստոսին որպես «բոլոր քաղաքացիների փրկարարի» (հմմտ. Հուլ., ծանոթագր. 6):

66 Տիրբերիոսի կոնսուլությունները՝ 18 թ. (Գերմանիկոսի հետ), 21 թ. (Դրուզոսի հետ), 31 թ. (Սեյանոսի հետ, մինչև մայիսի 15-ը, «հեռակա կարգով», այսինքն գտնը— 27—790

վերջի Կապրիտոսի, վերջինիս մասին համար. գլ. 65, որտեղ այն անվանված է «հինգերորդ», թանի որ հաշվված են նաև Տիրբրիոսի երկու կոնսուլությունները Օգոստոսի կենդանության օրոք:

67 Մեկ կոնսուլարիս— Քվ. Գատերիոսը, որը հետագայում հիշատակվում է գլ. 29-ում. Տիրբրիոսը զայրացած էր նրա վրա իշխանություն ստանձնելիս վարած բանակցությունների ժամանակ արած հեզոտական բացականչության համար. «Դեռ երկա՞ր ես, կեսար, պետությունը թողնելու առանց գլխի»:

68 Տիրակալ— տե՛ս Օգ., ժանոթագր. 140. ըստ Դիոնի, 57, 8, Տիրբրիոսն առել էր «Թա տիրակալ եմ ստրուկների համար, կայսր՝ զինվորների համար, պրինցեպս՝ մնացյալ բոլորի համար»:

69 Զորքերի մասին հոգատարությունը և զինվորական ծառայողների զանցանքների համար դատաստանը պատկանում էին միայն կայսրին և սենատին չէին վերաբերում:

70 Ինսպանորդի իրավունքներով— այսինքն մասնավոր գործերով, բայց պետական լիազորի արտոնություններով: Այսպես, «դեռ պանորդի իրավունքներով» Տիրբրիոսը ապրում էր Հռոդոսում (գլ. 12, 1)

71 Տրեբիա— փոքրիկ քաղաք Ումբրիայում:

72 Բաժանվելով երկու կողմերի— քվեարկության սովորական եղանակ, այնպիսի գործերով, որոնք անհատական կարծիքների վերլուծություն չէին պահանջում:

73 Նախորդներին, այսինքն՝ նախնիներին, որոնք հասել էին նույն պաշտոնին, համար, Կիկերոն, Ագրարային օրենքի մասին, II, 1, 1:

74 Կայսրին ուղղված նամակների հավելումը պարունակում էր սովորական բարի ցանկություններ. համար. Պլինիոսը Տրայանոսին հղված 1-ին նամակում՝ «Ցանկանում եմ քեզ, լավագույն կայսր, առողջություն և խնդություն ինչպես մասնավոր կյանքում, այնպես էլ պետական գործերում»:

75 Յուրաֆանչյուր շարաք օր— հետաքրքրական է այդ հրեական տոմարը հունական քաղաքի կենցաղում:

76 Ոչխարներին խուզում է...— համանման թեմայով մի ամբողջ առակ է Տիրբրիոսի բերանը գնում Հովսեփոս Փլարիոսը («Հրեական հնություններ», XVIII, 6, 5):

77 Կարմրաքեղիկ (mullus) ձուկ, որը հազվադեպ չէր հարավային ծովերում, բայց որը հազվադեպ է հասնում խոշոր մեծության. դրա համար էլ խոշոր կարմրաքեղիկների համար հոռմեացի խաթակասերները հեկայական գումարներ էին վճարում: Դրանք մատուցվում էին ծովի ջրով (Մարցիալիս, XIII, 79), որպեսզի սատկելիս, ծիրանի գույնով փայլիլային խնչույք անողների աչքի առջև:

78 Տապակած և եփված կերակրի վաճառքը հետապնդվում էր կայսրերի կողմից, որոնք ջանում էին պահպանել հին բարքերը, երբ կերակուրը միայն տանն էր պատրաստվում: Բացի այդ, ճաշարանները միշտ կարող էին հավաքատեղի ծառայել դժգոհների համար:

79 Արգելեց համբույրները— այդ ոչ միայն բարոյական, այլև հիգիենիկ միջոցառում էր. Պլինիոսը գրում է, որ այդ համբույրների միջոցով տարածվում էր Արևելքից բերված բժավոր ախտ (26, 3, 3):

80 Ընծաների փախանակուրյաճը նոր տարվա սեմին սկզբնապես ընծայամատուցում էր «բարեբախտության» համար, բայց շուտով դրանից սկսեցին օգուվել կաշառքների համար կամ պատասխան մեծ ընծա ստանալու շահագրգիռական հաշիվներով:

81 Տակիրտոսը բացատրում է (Անն., II, 85)՝ քրանն այն է, որ հին օրենքը բավա-

բար պատիժ էր համարում անառակ կանանց համար իրենց արատավորութիւնը բացա-
ճայտ խոստովանելը»:

82 Հուլիսյան կալենդները, կիսամյակի վերջը, պայմանագրերի վերանորոգման սո-
վորական ժամկետն էին:

83 Գերատեսչութիւնները և պաշտոնները բաշխելիս ամուսնացած և բազմազավակ
ունձինք օգտվում էին արտոնութիւններով, բայց թե ինչ ի նկատի ունի տվյալ դեպքում,
պարզ չէ:

84 Եզրպտական ժեսերը արգելելու պատրվակ էր ծառայել Իսիդայի տաճարում հոռ-
մեացի մատրոնայի բռնաբարութիւնը հռոմեացի հեծյալի կողմից, սրը հայտնվել էր
աստվածութեան տեսքով (Հովսեփոս Փլարինոս, Հրեական հնութիւններ, XVIII, 3, 4):

85 Մաեր կլիմա ունեցող պրովինցիայում — այսինքն՝ Սարպիսիայում (Տակիտոս, II,
85):

86 Պրետորական ճամբարի կազմակերպման նախաձեռնութիւնը Տակիտոսը վերա-
գրում է Սեյանոսին (Անն., IV, 2):

87 Պոլլեցիա — քաղաք Լիգուրիայում, Կոտտիական Ալպերի մոտ:

88 Ավագ ցենտուրիոնը (primipilaris) հրամայում էր տրիարիների՝ ընտիր զին-
վորների, առաջին մանիպուլոսի աջ թևին:

89 Տաճարների ապաստարանների պաշտպանութեան տակ տեղի ունեցած ժողովրդա-
կան հուզումների մասին տե՛ս Տակիտոս, Անն., III, 60.

90 Մաերբազուսը, վտարված Գերմանիայից Արմինիոսի կողմից, Տիբերիոսի մոտ
փախավ 19 թ. և, ընդհուպ մինչև իր մահը 35 թվականին, ապրում էր Հռովեննայում.
Ոսակուպաբիդես Թրակացին իր համակառավարիչ Կոտտի սպանութեան համար աքսոր-
վեց Ալեքսանդրիա և սպանվեց 18 թվականին. Արքեղայսը կանչվեց Հռոմ և պարտա-
դրվեց ինքնասպանութեան 17 թվականին — Տակիտոսի պնդմամբ, այն անբարյացակա-
մութեան համար, որ դրսևորել էր Տիբերիոսի նկատմամբ վերջինիս հողոսյան աքսորի
ժամանակ:

91 Կալիպիդեսը, որը ճարպիկ խաղի համար «կապիկ» մականունն էր ստացել —
հայտնի աթենացի դերասան. նույն առակը՝ Կիկերոնի մոտ («Առ Ատտիկոս», XIII, 12, 3):

92 Լիակատար համոզվածութեամբ — աստղագիտական գուշակութիւնների հիման վրա:

93 Վիլլայում տեղի ունեցած փլուզման ժամանակ, ըստ Տակիտոսի (Անն., IV, 59),
քարերից Տիբերիոսին իր մարմնով պաշտպանել էր Սեյանոսը:

94 Կապիտոլիում — Կապիտոլիումի Յուպիտերի տաճարը Կապուլայում:

95 Հեծյալների դեկուրիաները — պարզ չէ, խոսքը այստեղ գնում է զորական մասերի
թե՛ դատական կոլեգիումների մասին:

96 Պրեֆեկտներ — հեծելազորի պետեր, ինչպես տրիբուններ՝ լեգեոնների պետեր:
Տեղապահների մասին հմտ. գլ. 63, 2:

97 Կոնսուլական լեգատները (legati consulares) կառավարում էին կայսերական
կալվածները, ինչպես պրովինսուլները՝ սենատական պրովինցիաները:

98 Բիբերիոս bibere «խմել» բայից. Կալդիոս caldum՝ «տաքացրած գինի» բառից.
Մեռոն merum «մաքուր գինի» բառից:

99 Լ. Պիզոնի՝ հռոմեական պրեֆեկտի հարբեցողութեան մասին հիշատակում է նաև
Սենեկան (նամակ 83)՝ «Գիշերվա մեծ մասը անցկացնում էր գինարբուքում, քնում էր
գրեթե մինչև կեսօր՝ այդ ժամանակ էր միայն օկսվում նրա առաջնորդը: Սակայն իր
սյարտականութեանը՝ Հռոմի կառավարումը, նա մեծագույն ջանասիրութեամբ էր կա-
տարում...»:

¹⁰⁰ Ամֆորան, որպես շափ հավասար էր 39,4 լ.: Այստեղ ի նկատի ունի պարզասյեռ ֆեծ աման:

¹⁰¹ Ֆայենբի, բնագրում Panisci— «փոքրիկ Պաներ»:

¹⁰² «Այծուկ»— Caprineus— մականուն, որը համահնչուն է կղզու անվանը:

¹⁰³ Թարգմանությունը մեղմացված է. բնագրում՝ . ut natanti sibi inter femina versarentur ac luderent, lingua morsuque sensim adpedentes, atque etiam quasi infantes firmiores, necdum tamen lacte depulsos, inguini ceu papillae admoveret.

¹⁰⁴ Հստ Պլինիոսի, 35, 36, 70, Տիրերիոսի ննջարանում կախված նկարը պատկերում էր Կիբելայի քրմին, և նա գնել էր այն 6 միլիոն սեստերցիումով:

¹⁰⁵ Ատելլանայից, ավելի ճիշտ՝ «ատելլանյան էքսոդիայից». ատելլանաները իտալիական կյանքից վերցված զավեշտներ էին, սովորաբար որպես «էքսոդիա» դիվերթիսմենտներ հետևում էին ողբերգության կամ կատակերգության ներկայացմանը:

¹⁰⁶ «Իմ հույները», Տիրերիոսի շքախմբի հույների մասին տե՛ս գլ. 56: Շատ հրատարակիչներ ընդունում են Տուրների ճշտումը (gratorum Graecorum-ի փոխարեն) «Իմ սիրեցյալները»:

¹⁰⁷ Դրանք ավարտին շնացրեց— կառուցեց ավարտեց, բայց շօծեց հմմտ. կլավ., 21:

¹⁰⁸ Ի հանույս Օգոստոսի, հոռմեական ընտանիքի վերականգնման մասին նրա հոգատարությունը: Այդ Հորտալի հայրը հոետոր-պապից կարողություն էր ստացել, բայց որը բռնագրավվել էր եռապետների կողմից:

¹⁰⁹ 38 թ. Ֆինանսական ճգնաժամի մասին մանրամասն տե՛ս Տակիտոսի մոտ, VI, 16—17: Վաշխառության ուժեղացումը հարկադրեց Տիրերիոսին մեկուկես տարվա ժամկետ նշանակել՝ վերացնելու համար բոլոր պարտային պարտավորությունները: Ընթացողը էր, որ ունեցվածքի երկու երրորդը անպայմանորեն հողի մեջ ներդնելու հրամանագիրը հողի պահանջարկ առաջ կրերի, պարտապանները կկարողանան լավ գնով վաճառել իրենց բաժնեհողերը և ձեռք բերած գումարից պարտատերերին կվճարեն պարտքի սահմանված երկու երրորդը: Սակայն հակառակը ստացվեց. պարտատերերը սկսեցին իսկույն պահանջել վճարը (ընդ որում, հակառակ օրենքի, լրիվ) պարտապանները սկսեցին փութով վաճառել իրենց բաժնեհողերը, հողի գինը ընկավ, և այնժամ միայն պարտատերերը սկսեցին գնել հողերը: Տիրերիոսի տրամադրած փոխառությունը (հողաբաժինների գրավականով) օգնեց շտկելու դրությունը:

¹¹⁰ Զորքերին տրվող լվերների կրկնապատկումը կատարվեց Գերմանիկոսի նախաձեռնությամբ, որը դրանով հանգստացրեց խռովություն բարձրացրած գերմանական լեգեոնները:

¹¹¹ Խնայել դրամը, որը որպես նպաստ վճարվում էր երկարամյա ծառայությունից արձակվողներին:

¹¹² Երկրաշարժը Ասիայում տեղի էր ունեցել 17 թ.:

¹¹³ Կանխիկ դրամով մեծ միջոցները կասկած էին ներշնչում, որ նրանց տերերը խռովություն են նախապատրաստում:

¹¹⁴ Հանքերը, որոնք հանրապետության օրոք պատկանում էին քաղաքներին կամ մասնավոր անձանց, կայսրության օրոք աստիճանաբար դարձան կայսերական գանձարանի սեփականությունը:

¹¹⁵ Գրուզաի հանրապետական մտադրությունների մասին հմմտ. կլավ. 1:

¹¹⁶ Յուլիային, «աքսորյալ, փառազրկված, Ազրիպպա Պոստումոսի սպանությունից հետո ամեն մի հույսից զրկված, նա մահվան դուռը հասցրեց զրկանքների և դանդաղ

հյուծման միջոցով, ենթադրելով, որ աքսորի երկարատևության հետևանքով այդ մահը աննկատ կմնա» (Տակիտոս, Անն., I, 56)։

117 Եվիբալան տեղից, e sacrario, որտեղ տանը պահվում էին Օգոստոսի մասունքները։

118 Ոռոգման համար ջուր հանել— հյուծիչ տաժանակիր աշխատանք։

119 Իրուզոս Կրտսերը «զայրույթի ժամանակ այնքան անսանձ էր լինում, որ ծեծել էր մի ականավոր հոռմեացի հեծյալի... հարբեցողության մեջ այնչափ անզուսպ, որ մեկ անգամ գիշերը, երբ նրան պահակախմբով հրդեհի վայր կանչեցին, և պահակախումբը ջուր էր խնդրում, նա կարգադրեց նրանց վրա տաք ջուր թափել. նա այնպես էր սիրում դերասաններին, որ սրանք մեկ անգամ շէին անկարգություններ սարքել, և նրանց շէին կարող զսպել նույնիսկ այդ առնչությամբ Տիրերիոսի հրատարակած օրենքները» (Իսոն, 57, 14)։

120 Իլիոն— հելենիստական քաղաք հին Տրոյայի տեղում, որը գտնվում էր հոռմեացիների հատուկ հովանավորության ներքո որպես էնեոսի հայրենիք։

121 Ոչ մի սենատոր իրավունք չունի մուտք գործել Ալեքսանդրիա առանց կայսեր թույլտվության, որի սեփականությունն էր Օգիպոսը։

122 Գերմանիկոսի մահվան մասին հմմտ. Կալ., 2։

123 Եթե... — այստեղ տեքստը փշաջած է, թարգմանությունը ըստ Բաումգարտեն— Կրուզնուսի մեկնաբանության. Ռոտը, Տակիտոսի հիման վրա (Անն., III, 16), առաջարկում է լրացում՝ եթե Տիրերիոսը հոգ չտաներ գաղտնի տեսակցության ժամանակ խլել թղթերը և սպանել Պիզոնին»։

124 Ինչ-որ բանից զանգատվել... — ըստ Տակիտոսի (Անն., IV, 52) Կլավդիա Պուլքերայի, Ագրիպպինայի հորեղբոր աղջկա հետապնդման համար։

125 Հունական ոտանավորը և նրա ծագումը անհայտ են։

126 Կեմոնիաներ («Հեծեծանքների սանդուղքներ») — զառիվայր էջք Կապիտոլիոնի ընդհանուր դեպի Տիրոս, որով մահապատժի ենթարկվածների մարմինները կեռերով քաշում տանում էին և գետը նետում։

127 Թոռների առողջության համար ուխտը արվում էր նույնինքն Տիրերիոսին շողորորթելու ակնհայտ նպատակով — մի պարագա, որն ստիպել է Տակիտոսին նկատել. «Ընդհանուր փշաջածության դարաշրջանում շափից ավելի շողորթթելը և բոլորովին շողորթթելը հավասարապես վտանգավոր են» (Անն., IV, 17)։

128 Հետաքրքիր է, որ Տիրերիոսի նամակում ներոնը մեղադրվում էր «ոչ թե զինված դավադրության, ոչ թե հեղաշրջման ծարավի լինելու, այլ պատանիների նկատմամբ սիրո և անառակության մեջ» (Տակիտոս, Անն., V, 3)։

129 Պոնտիա, Պոնտիական երեք փոքր կղզիներից մեկը Լացիոնի ծովեզերքի դիմաց։

130 Կինաւա — էգեյան ծովում Սպորադեսների միջև փոքրիկ կղզյակ։ Քսենոնի անունը որոշ ձեռագրերում Ջենոն է։

131 Խեղկատակները երբեմն մասնակցում էին թաղման թափոններին, բայց, կարող է, այստեղ ի նկատի ունի հասարակությունից պատահական կատակողի։

132 Պոմպեոսական — այսինքն դատապարտված պրոսկրիպիայի և մահապատժի։

133 Օգոստոսի արձանի վրայից գլուխը հանել էր Գրանիոս Մարցելլոսը, Բութանիայի պրետորը, որպեսզի այն փոխարինի Տիրերիոսի գլխով. դատարանը նրան արգարացրեց (Տակիտոս, Անն., I, 74)։

134 Էպիգրամի իմաստն է՝ «Տիրերիոսը չունի հեծյալական ունեցվածք, որովհետև դուր օրենքի նրա բոլոր ունեցվածքը պատկանում է նրան որդեգրած Օգոստոսին. նա

նույնիսկ քաջաքացիական իրավունքներ շունի, որովհետև նա եղել է վտարանդիութայն մեջ»:

135 «Հոռմուլոս» — դիմում հոռմեական ժողովրդին. «Ծեղանիկ» — Սուլլայի ընդունած պաշտոնական մականունը:

136. «Թող ատեն»... — հմմտ. Կալ., 30:

137 Տոները նվիրաբերվում էին երկնային աստվածներին, նվիրական օրերը՝ ստորգետնյա աստվածներին:

138 Բանաստեղծը — Մամբրկոս Սքավրոսը, որը մեղադրվել էր Մակրոնի կողմից, ըստ Գիոնի (58, 24), ողբերգությունը կոչվում էր «Ատրեյոս»: Պատմաբան — Կրեմուցիոս Կարդոսը. Տակիտոսը նրա բերանն է զնույն պերճախոս պաշտպանական ճառ (Անն., IV, 34—35), նրանք երկուսն էլ մահապատժի լինթարկվեցին, այլ անձնասպան եղան:

139 Աղջնակների — ի նկատի ունի Սեյանոսի դատրիկին, որի մահապատժը նկարագրում են Տակիտոսը (V, 9) և Դիոնը (58, 11):

140 Դրուզոսի մահվան մեջ Սեյանոսի և Լիվիլայի մեղսակցության մասին Տիրերիոսն իմացավ Սեյանոսի այրու՝ Ապիկատայի, նրա ինքնասպանությունից տուալ թողած նամակից: Դրա համար Լիվիլային նրա մայրը՝ Անտոնիան, սովամահության դատապարտեց (Դիոն, 58, 11):

141 Թրաքիլեսը համոզել էր Տիրերիոսին, որ ըստ համաստեղությունների նա պետք է իրենից տասը տարի աճելի ապրի, և գրանով ապահովել էր սեփական անվտանգությունը և հույս ներշնչել Տիրերիոսին, որ երկար է ապրելու (Դիոն, 58, 27) — խորամանկություն, որը հետագայում կրկնել էր Լյուդովիկոս XI-ի աստղագուշակը:

142 Թրաքս ապօրինածնի — Լիվիլայի Սեյանոսի հետ ունեցած շնացումից:

143 Կուշակներին գաղտնի դիմելը առիթ էր տալիս կասկածելու, որ հարցնողը հարցուփորձ է անում իմանալու, թե կայրը շո՞ւտ է մեռնելու:

144 Քրեեսեստիճյան վիճակներ — կաղնե տախտակներ արձանագրություններով, գուշակ Պրինեստեում Ֆորտունա կախածնի տաճարի մոտ. նրանց աստվածայնությունը ծաղրում էր դեռևս Կիկերոնը («Կանխագուշակման մասին», II, 41):

145 Այդ պրոֆանատությունները՝ էլիոս Լամիային (Ատրիքում) և Արթունցիոսին (Բուպանիայում) անվանում է Տակիտոսը (Անն., VI, 27):

146 Կունսպուրյուները պահանջում էր, որպեսզի Սեյանոսը գտնվի Հռոմում և ոչ թե մնա Կապրիում՝ Տիրերիոսի հետ:

147 Ազգակցություն — Տիրերիոսը Սեյանոսին կնություն էր խոստացել իր թոռ Յուլիային, Դրուզոսի դստերը:

148 Կոնսուլներից որևէ մեկին — սուֆֆեկտներին, որոնք պետք է տարվա ընթացքում փոխարինեին Տիրերիոսին և Սեյանոսին:

149 Հեռավոր նշաններ — մի տեսակ օպտիկական հեռագիր, որի սկզբունքը հենրին ժանոթ էր դեռևս էսքիլեսի «Ազամեմնոնի» ժամանակ:

150 Վիլլա «Իո» — հին հրաատարակիչները JONIS-ի փոխարեն կարդում էին Jovis կամ JUNONIS («Յուպիտերի» կամ «Յունոնայի»), քանի որ Տիրերիոսը Կապրիում 12 վիլլա ուներ (Տակիտոս, Անն., IV, 67), հենց օլիմպիական աստվածների թվով:

151 Խառնուհում — ալեյի ճիշտ «օրգեստրայում», սենատորական տեղեկում:

152 Մի նամակի սկզբնամասում — ի պաշտպանություն Կոստա Մեսսալինայի, 32 թվականին. հենց այդ բառերն էլ քաղվածաբար բերում է Տակիտոսը (Անն., VI, 6):

153 Տիրերիոսի արտաքինի այդ նկարագրությունը, բնականաբար, վերաբերում է նրա երիտասարդությանը և հասուն տարիքին (հմմտ. Վելլետո, II, 94). Կապրի հեռանալու

ժամանակաշրջանի մասին, երբ Տիրերիտոը 68 տարեկան էր, Տակիտոսը գրում է. «Ոմանք կարծում էին, որ ժերուֆյան ժամանակ նա պակաս ամաշել իր մարմնի տեսքից՝ բարձր հասակ, նիհար և կարացած, լիկ գազաթ, պզուկոտ և հաճախ սպեղանիով ծածկված դիմք...»:

154 Խճճարհելով գլուխը— ոմանք, ընդհակառակն, թարգմանում են *obstipa cervice* «ենտ գցելով գլուխը»:

155 Խոսակցության ժամանակ մատներով խաղալը գոեհուսթյուն էր համարվում. Կիկերոնը վճռականապես արգելում է լավ հաետորին նման շարժումներ:

156 Գափճու մասին տե՛ս Օգ., ծանոթագր. 215 (քաղվածք Պլինիոսից):

157 Մեսսալային որպես հոկտորի բնութագրում է Քվինտիլիանոսը (X, 1, 113)՝ «Փայլուն, մաքուր, ասես ճառելիս էլ ամենից առաջ նկատելի էր ազնվաշնորհությանը»:

158 Շինծուությամբ— տե՛ս Օգ., ծանոթագր. 215:

159 Նման առասպելաբանական նրբությունների նկատմամբ տածած կիրքը հեզնում է և Յուվենալը (VII, 233—236), և իսկպես, առասպելագիրները անուշադիր շեն թողել Տիրերիտոսի հարցերը՝ նրանց պնդմամբ, Աքիլեսը, թափնվելով Սկիրոսում աղջիկների մեջ, կրում էր Պիոռա («շիկակարմիր») անունը, իսկ տրոյական թագուհի Հեկուբայի մորը անվանում էին, տարբեր վարկածներով, էվֆոյա, էվագորա, Թելեքլես, Մետոպա կամ Դլավկիպպա:

160 Մինոս, Կրետեի թագավոր, ըստ ավանդության, իմացավ որդու մահվան մասին դոհամատուցման ժամանակ. նա հանեց պսակը, սրնգահարին հրամայեց լռել և շարունակեց ծխակատարությունը:

161 Մոնոպոլիա, հմմտ. գլ. 30:

162 Էմբլեմա— անոթի վրա դրվող դրվագակերտ զարդարտեք (հունական բառի նախասկզբնական նշանակությունը). լատիներենում համապատասխան բառ չկար: Սենատի որոշման մեջ խոսքը գնում էր տղամարդկանց մեատքսյա հագուստներ կրելը և մասնավոր կարիքների համար զուտ ոսկուց և զրուլի «էմբլեմաներով» անոթներ օգտագործելը արգելելու մասին (Դիոն, 57, 15):

163 Գատարաճում— հավանաբար, հունական քաղաքում:

164 Երկու անգամ— 33 և 35 թվականներին:

165 Արհեստական լճի մասին տե՛ս Օգ., 43:

166 Ճամբարային խաղեր— կազմակերպված Ցիրցեայում կանգնած զորքերի կողմից:

167 Միզենյան վիլլան ժամանակին պատկանում էր Գայոս Մարիուսին և ապա հայտնի հարուստ Լուկուլլոսին:

168 Տիրերիտոսի մահվան տարեթիվը— 37 թվականի մարտի 16-ը: «Դա մի մարդ էր շատ բարի և շատ վատթար հատկություններով, և երբ նա ցուցաբերում էր բարի հատկությունները, թվում էր, որ նա վատթար հատկություններ չունի, և ընդհակառակն» (Դիոն, 58, 28): Տակիտոսը այսպես է նկարագրում Տիրերիտոսի մահը. «Քարիկիսը հաստատապես հայտարարեց Մակրոնին, որ կենսական ուժերը արդեն լքում են Տիրերիտոսին, և երկու օրից ավելի նա չի ապրի: Իսկույնեթ խորհրդակցություններ ընթացան ներկաների միջև, սուրհանդակներ փոխադարձ լեզատների և զորքերի մասու 17-րդ օրը մինչև ապրիլյան կալենդները երա շնչառությունը ընդհատվեց. թվում էր, որ նա արդեն հասել է մահվան ժամկետին: Ահա արգեն, շրջապատված շնորհավորողների ամբոխով, դուրս է գալիս Գայոս Կեսարը, որպեսզի ընդունի իշխանությունը, երբ հանկարծ լուր են բերում, որ Տիրերիտոսին են վերադարձել ձայնն ու տեսողությունը, և նա կանչում

է, որպեսզի նրան կերակուր տանեն ուժերն ամրապնդելու համար: Սարսափը համակեց ըրլորին, մարդիկ ցաք ու ցրիվ եղան ուր որ պատահի, յուրաքանչյուրը վիշտ էր ձևացնում դեմքին կամ անիրազեկություն. Գայոսը, լուռ ու մունջ, իր բարձրագույն ակնթարթից հետո սպաւում էր իր վերջին ակնթարթին: Բայց Մակրոնը անդողողոջ հրամայում է խնդրամահ անել ծերունուն, նրա վրա նետելով մի կույտ զգեստ և ցրվել շեմքից: Այդպես վախճանվեց Տիրերիոսը կյանքի յոթանասունութերորդ տարում» (Անն., VI, 50):

¹⁶⁹ Տեմենոսյան Ապոլլոն — արձան Տեմենոսում, Սիրակուզայի արվարձանում. դուրս կրկերոնն էր հիացմունքով հիշատակում նրա մասին («Ընդդեմ Վերրեսի», IV, 53, 119):

¹⁷⁰ Աստվածային Օգոստոսի նոր տաճարը Կալիգուլան օծեց իշխանության գլուխ անցնելուց վեց ամիս անց:

¹⁷¹ Մանես — մեռյալների հոգիներ:

¹⁷² Դատավճիռներն ի կատար ածելու համար տասնօրյա ժամկետը սենատը սահմանել էր 21 թվականին, բայց Տակիտոսն ավելացնում է, որ այդ ժամկետում ոչ մի դատավճիռ չի մեղմացվել:

¹⁷³ Ատելլուս, միգուցե նրա համար, որ այդ քաղաքի բնակիչները կոշտ ու կոպիտ հիմարներ էին համարվում (այստեղից էլ, ըստ մեկ տեսության, Ֆարս-ատելլաների անվանումը). ամֆիթատրոնում, այսինքն ի զվարճություն անբանների (հմմտ. Կալ., 27, 4). տապակել — կիսով լափ այրել ի նշան արհամարհական քամահրանքի (հմմտ. Կալ., 59):

ԳԱՅՈՍ ԿԱԼԻԳՈՒԼԱ

¹ Գերմանիկոսը փվեստոս է եղել 7 թվականին, կոնսուլ՝ 12 թվականին, ուղղակի, այսինքն առանց գրավելու էդիլի և պրետորի միջանկյալ պաշտոնները:

² Գերմանական խռովության մասին տե՛ս Տիր., 25 և ստորև, գլ. 9:

³ Հաղթելով Հայաստանի թագավորին — շատ հրատարակիչներ ընդունում են Լիպսիոսի ուղղումը՝ «շնորհելով թագավորին» (dedisset փոխանակ devicisset), քանի որ Վոնոնի վտարումից հետո Հայաստանում այդ ժամանակ թագավոր չկար: Սակայն այդ սխալը, հավանաբար, պատկանում է Սվետոնիոսին իրեն կամ նրա աղբյուրին:

⁴ Գերմանիկոսի շայրված սրտի մասին հիշատակում է նաև Պլինիոսը (11, 71, 187):

⁵ Մահվան պատժի դատապարտված Պիզոնին հաջողվեց ինքնասպանություն գործել (Դիոն, 57, 18):

⁶ Տակիտոսը (Անն., II, 73) իր արժանիքներով Գերմանիկոսին համեմատում է նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացու հետ:

⁷ Գերմանիկոսի երկերից պահպանվել է միայն մի պոեմ աստեղային երկնքի մասին (փոխադրություն Արատեսից) և մի քանի հունական էպիգրամներ:

⁸ Տևտրուրգյան անտառում ընկածների անյունները թաղվեցին 15 թվականի արշավանքի ժամանակ. այդ տեսարանի նկարագրությունը տե՛ս Տակիտոսի մոտ (Անն., I, 62):

⁹ Անձերի միջև բարեկամությունը հին հոռոմեացիների համար հասարակական առումով նույնքան կարևոր գործ էր, որքան դաշինքը պետությունների միջև, այստեղից էլ բարեկամությունը խզելու պաշտոնական ակտը:

¹⁰ Բարեկամներին վրիժառույթուն կտակելով, Գերմանիկոսն ասել էր՝ «Վրեժխնդիր եղեք ինձ համար, եթե դուք սիրել եք ինձ և ոչ թե իմ հաջողությունները» (Տակիտոս, Անն., II, 71):

¹¹ Գերմանիկոսի մահվան օրը — 19 թվականի հոկտեմբերի 10:

12 Քարկոձեցիւն տաճարները և այլն— զայրացած աստվածների վրա, որոնք թույլ էին տվել Գերմանիկոսին մեռնել. հմմտ. Օգ., 16, 2:

13 Մածուկ նեաուս— լքում էին... մանուկներին, որպես դժբախտ օր ծնվածների:

14 Աբալյից արքա— Պարթևաց Արտավան III-ը:

15 Գեկտեմբերյան տոներ— Սատուրնալիաներ, դեկտեմբերի 17—19:

16 Կալիգուլայի ծննդյան օրը— 12 թվականի օգոստոսի 31-ը:

17 Ամբիտարվիում— անհայտ տեղ. Կոնֆլուենտես («Միախառնում») — այժմյան Կորլենցը Մոզերի Հոենոսի մեջ թափվելու տեղում:

18 Նմանատեսակ զոհասեղաններ դրվում էին միայն որպես հիշարժան զեպելրի նշաններ՝ նրանց վրա գոհեր շէին մատուցվում:

19 Տեղեկագրերը (acta populi) իրենցից ներկայացնում էին մի տեսակ լրագրեր, որոնք պարունակում էին կառավարական որոշումներ, սենատի արձանագրությունների քաջվածքներ, տեղեկություններ կառուցումների, կայսերական ընտանիքում կատարված իրադարձությունների մասին (հմմտ. Տիր., 5): Յուրաքանչյուր թողարկման բնագիրը կազմում էին կառավարական աստիճանավորները, նրանցից հանվում էին բազմաթիվ սյառձեններ ըստ մասնավոր պատվերների, իսկ իսկականը ուղարկվում էր արխիվ: Չպետք է այդ տեղեկագրերը շփոթել սենատի նիստերի հաշվետվությունների (acta senatus) հետ, որոնք միշտ չէ, որ հրապարակվում էին (Հուլ., 20, 1. Օգոստ., 36):

20 Տիրուրում շերկուլեսին նվիրաբերված էր մի մեծ տաճար, որը հիշատակվում է նաև Օգոստ., 72:

21 Մ. թ. 14 թվականի մայիսի 18-ը:

22 Caligula— նվազեցված caliga— զինվորական նրկարաճիտ կոշիկ բառից: Այդ անունը, թեև այն հիշատակվում է բոլոր պատմագիրների մոտ և հաստատվել է Գայոս Կեսարի վրա նոր ժամանակներում, պաշտոնական չէր և արձանագրություններում ոչ մի անգամ չի հանդիպում:

23 Մոտակա քաղաքը— Տրևերք (այժմ Տրիր):

24 Տասնինը տարեկան— հռոմեական սովորույթների համար շափահասության ամենաուշ ժամկետը՝ սովորաբար տղամարդու տոգա հագնում էին 14—16 տարեկանում:

25 «Ավելի լավ ստրուկ... չի եղել»— Տակիտոսը այս խոսքերը վերագրում է Պասսիենոս Կրիսպոսին, Կալիգուլայի ապագա քծնողին:

26 Եֆիդնա— «օձերի ցեղատեսակ» (զլոսսա):

27 Ֆաետոն, Արեգակի որդին, որն ըստ հայտնի առասպելի, շոգետապ է արել ամբողջ երկիրը, շկարողանալով սանձել արևի մարտակառքը:

28 Հմմտ. Տակիտոս, Անն., VI, 46՝ «Երբ մեկ անգամ Գայոս Կեսարը սկսեց ծիծաղել Լուկիոս Սուլլայի վրա, Տիրերիոսը կանխագուշակեց, որ նա ինքն է ունենալու Սուլլայի բոլոր արատները, իսկ նրա արժանիքներից և ոչ մեկը»:

29 Ըստ Տակիտոսի (Անն., VI, 45) Մակրոնը ինքն էր կազմակերպել Կալիգուլայի կապը իր կնոջ հետ, որպեսզի ավելի ամուր պահի նրան իր ձեռքում:

30 Տիրերիոսի կտակը սենատում հրապարակեց Մակրոնը և այն հայտարարվեց անվավեր այն հիման վրա, որ միայն խելքը կորցրած մարդը կարող էր Գայոսի հետ միասին ժառանգ նշանակել մի տղայի, որը դեռևս չէր կարող մասնակցություն բերել սենատի նիստերին (Գիոն, 59, 1):

31 Կամպանյան կղզիներ— Կապրի, Էնարիա և Պրոքիտա:

32 «Տալ իր կյանքը ուրիշի համար» — վաղեմի մոզական գործողություն (հմմտ.

Անտինոյի մահը հանուն Ազրիանոսի կյանքի) գրավոր երդումներ տախտակիկների վրա, որոնք նվիրաբերվում էին տաճարներին. ուխտերի կատարման մասին հմմտ. գլ. 27, 2:

32 Արտավանը այդ ժամանակ հենց նոր էր վտարել իր հակառակորդին՝ հռոմեական դրածո Տրդատին, և ուզում էր օգտվել կայսրերի փոփոխությունից՝ հաշտվելու համար Հռոմի հետ. հմմտ. Վիտ., 2:

34 Օգոստոսի դամբարանից սափաքը, որն ամփոփում էր Ազրիպպինայի աճյունը, մինչև հիմա պահվում է Հռոմում Կոնսերվատորների պալատում:

35 Պատանհիների պարագլուխ (princeps iuventutis) — պատվավոր տիտղոս, որը շնորհում էր հեծյալների դասը, կայսերական ընտանիքի կրտսեր ներկայացուցիչներին, սկսած Օգոստոսի թոռներից՝ Գայոսից և Լուկիոսից:

36 «Եվ թող ուղեկից լինեն...» — հմմտ. Օգոստ., 58:

37 Այրեց քղբերը — դրանք պատճեններն էին, բեօրինակները մնացին (գլ. 30), և դրանք ոչնչացրեց միայն Կլավդիոսը:

38 Սպինտրիաների մասին տե՛ս Տիր., 43:

39 Հաշվեավորություններ տերության դրության մասին — հմմտ. Օգոստ. 28 և 101:

40 Հինգերորդ դեկուրիան — հմմտ. Օգոստ. 32 և ծանոթ. 88:

41 Պաշտոնական անձանց ընտրությունները ժողովրդական ժողովներից վերջնականապես սենատ փոխադրվեցին Տիրերիոսի օրոք 14 թվականին, և նախկին կարգերը վերականգնելու Կալիգուլայի փորձը անհետևանք մնաց:

42 Յուլիա Օգոստոսուհի — անուն, որը ընդունել էր Լիվիան Օգոստոսի կտակի համաձայն: Լիվիայի կտակի մասին տե՛ս Տիր., 51:

43 Առուվաճառի վրա դրված հարկը Օգոստոսը մտցրել էր լրացնելու համար զին-մորական զանձարանը (Օգոստ., 49) և տատանվում էր 1-ից մինչև 0,5%: Այդ հարկի վերացման պատվին նույնիսկ դրամի հատուկ սերիա թողարկվեց:

44 Կոմմազենեն հռոմեական պրովինցիա դարձավ 17 թվականին, որդեօ Անտիոքոսի թագավորություն վերականգնվեց 38 թվականին, հետագայում Կալիգուլան նորից գահ-ընկեց արեց Անտիոքոսին, իսկ Կլավդիոսը կրկին վերականգնեց նրան: Տեղեկություններ չկան այն մասին, թե մյուս թագավորներն էլ, որոնց դրի էր Կալիգուլան (Ազրիպպան Հրեասաանում, Կոտիսի որդիները Թրակիայում և Պոնտոսում — նրանք բոլորը դաստիարակվել էին Հռոմում իբրև պատանդներ և այդ ժամանակ մերձեցել էին Գայոսին), և կամուտների փոխհատուցում էին ստանում:

45 Աստվածներին երկրպագվող անձի պատկերով վաճառ նվիրաբերելու սովորույթը հասնում է, ըստ ավանդության, մինչև Ապպիոս Կլավդիոսը, 495 թ. կոնսուլը:

46 Պարսիկաներ ըստ էության կոչվում էր գյուղական աստվածուհի Պալեսի պատվին ապրիլի 21-ին՝ Հռոմի լեգենդական հիմնադրման օրը, կատարվող տոնահանդեսը:

47 Կալիգուլայի կոնսուլությունները՝ 37 թ. (հուլիս-օգոստոս), 39 թ. (հունվար), 40 թ. (մինչև հունվարի 13-ը), 41 թ. (մինչև հունվարի 7-ը) — այսինքն ոչ թե երկու, այլ երեք տարի անընդմեջ:

48 Ավելորդ օր — ավելի ճիշտ երկու օր, քանի որ Կալիգուլայի օրոք Սաաուրնայիտները տևում էին հինգ օր (Գիոն, 59, 6):

49 Աֆրիկյան գազաններ ճանդիսախաղճերին — գլխավորապես հովազներ՝ Յգոստոսի տաճարի օծման հանդեսին ցույց տրվեցին 400 հովազ և 400 արջ (Գիոն, 59, 7):

50 Կարմրադեղ և լեռնային կանաչ — ըստ երկու կրկեսային կուսակցությունների գույների՝ «կարմիրների» և «կանաչների», հետագայում այդպես էր վարվում նաև ներո-նը (Պլինիոս, 33, 27, 90):

81 Գելտոթի տուն— Պալաատինումի վրտ, Մեծ կրկեսի վերևում, հմմտ. Օգոստ., 45, 1:

82 Բայքի և Պուտեուլքի միջև իրական տարածությունը շուրջ 3,6 կմ է. Սվետոնիոսի բերած թիվը (3600 քայլ = 5,3 կմ), ինչպես և Դիոնի թիվը (26 ստագիրամ = 5,1 կմ) չափազանցված է: Ի միջի այլոց, կամրջի ճիշտ տեղադրումը լրիվ պարզ չէ: Կամրջի կառուցման խկական նպատակն էր, ըստ երևույթին, Հռոմ ժամանող պարթևական սպանակներին զարմացնելու ցանկությունը (հմմտ. Տրդատի ընդունելությունը ներոնի կողմից): Սենեկան («Կյանքի կարճատևության մասին», 18) ասում է, որ Հռոմում սով սկսվեց այն պատճառով, որ հաց բերելու համար նախատեսված նավերը վերցվել էին կամրջի կառուցման համար:

83 Կաղնեպսակի մասին տե՛ս Հուլ., ժանոթագր. 6: Ըստ Դիոնի, 57, 17, Կալիգուլան հավատացնում էր, որ նրա հագին Ալեքսանդր Մակեդոնացու զբահն է:

84 Քսերքեսի կամուրջը Հելեսպոնտոսի վրա, որի վրայով պարսկական զորքը 480 թ. մտավ Հունաստան, ունի շուրջ 1,3 կմ երկարություն:

85 Հարազատ բռան— Տիբերիոսի, Գրուզոսի որդու:

86 Աստիական խաղերի մասին տե՛ս Տիր., ժանոթագր. 24: Հոետորների մասին, ովքեր «գունատվում են, ասես նրանց հարկ է խոսել լուգոունական բազինի առջև», հիշատակում է Յուվենալը (I, 44):

87 Տիբերիոսի կառույցները— Տե՛ս Տիր., 47 և 74:

88 38 թ. սկսված և միայն 52 թ. օծված ջրմուղի մասին տե՛ս Կլավ., 30 և ժանոթագր.:

89 Ապոլլոնի Գիդիմեական տաճարի կառուցումը սկսվել է մ. թ. ա. մոտ 300 թ., բայց դեռևս մեր դարաշրջանի սկզբին կանգնած էր առանց տանիքի իր վիթխարի շափերի պատճառով (Ստրաբոն, XIV, 1, 5):

90 Իսթմոսի քանցքի մասին հմմտ. Հուլ., ժանոթագր. 123:

91 Թագավորներ— Ազրիպպա Հրեաստանցին և Անտիոքոս Կոմմագենացին. Կալիգուլան նրանց իր մոտ էր պահում, «որպեսզի նրանք թագավորել սովորեցնեն իրեն» (Դիոն, 59, 24):

92 «Միակը բող լինի»— Իլիական, II, 204—205, Ոդիսևսի խոսքերը Ագամեմնոնին:

93 Սլիմպիական Ջես— Տիդիասի հոչակավոր արձանը, տե՛ս ստորև, 57, 1:

94 Կաստորիև և Պոլլուսիև Կալիգուլան անվանում էր «իր բարապանները» (Դիոն, 59, 28):

95 Լատինական Յուպիտերը Լատինական միության հնամենի հովանավորն էր, նրան էին նվիրաբերված Լատինական խաղերը:

96 Ամենահարուստ քաղաքացիները քրմության պատվի համար պետք է 10 միլիոն սեստերցիում վճարեին (նույն տեղում):

97 «Դու բարձրացրու...»— Այաքսի խոսքերը Ոդիսևսին մենամարտի ժամանակ («Իլիական», XXIII, 724): Ըստ Սենեկայի («Ջալուրյթի մասին», I, 20), Կալիգուլան այս խոսքերով դիմեց երկնքին, երբ ամպրոպը խանգարեց նրան մինչև վերջ գիտելու մնչկատակային ներկայացումը. ըստ Դիոնի (59, 28), նա, ի ամրապնդումն իր սպառնալիքի, զինվեց քառերական այն մեքենաներով, որոնք ամպրոպ ու կայծակ էին սարքում և սկսեց քաբեր նետել երկինք:

98 Ըստ Դիոնի (59, 20), Կալիգուլան պատժեց այն կոնսուլներին, ովքեր տոնել էին Ակտիումի հաղթանակի տարեդարձը նրա համար, որ նրանք օտնում են Անտոնիոսի պարտությունը, իսկ նրանք, ովքեր այդ շէին արել,— նրա համար որ չեն տոնում Օգոստոսի հաղթանակը: Բանն այն է, որ կայսրը ազգակցական կապեր ունի ոչ միայն

Օգոստոսի, այլև Անտոնիոսի հետ (իր տատի միշոցով, որը Անտոնիոսի և Օկտավիայի դուստրն էր):

69 Մով դուրս շեկավ— տե՛ս գլ. 15:

70 Ի արդարացումն քույրերի հետ ունեցած իր կապի Կալիգուլան վկայակոչում էր Յուլիանոսի օրինակը, որի հետ նույնացնում էր իրեն. սակայն իրականում, ըստ երեւոյթին, նա օրինակ էր վերցնում արևելյան թագավորական տներէց, որտեղ նման ամուսնութիւնները սովորական էին:

71 Կարգադրված էր Դրուզիլլայի աստվածութիւնը պաշտել բոլոր քաղաքներում Պանթեայի (Ամենաստվածուհու) անվան տակ. Հռոմում նրա պաշտամունքը սպասարկում էին 20 քրմեր ու քրմուհիներ, իսկ այն սենատորը, որը երդվել էր, որ տեսել է, թե ինչպես է նա համբարձել երկինք, հսկայական պարգև էր ստացել (Դիոն, 59, 11):

72 Լեպիդուսի մահապատժից հետո Ազրիպայինան և Լիվիլլան աքսորվեցին Պոնտիական կղզիներ և վերադարձվեցին միայն Կլավդիոսի կողմից:

73 «Մի խցկվիր...» — Բնագրում ավելի կուպիտ է՝ noli uxorem meam premere.

74 Հռոմուլոսը կնութիւն վերցրեց էրսիլիային, Օգոստոսը՝ Լիվիային, թեև երկուսն էլ արդեն կնութիւն էին զնացած:

75 Պրովինցիայից— Աքայայից, որտեղ տեղապահ Մեմմիոսն էր:

76 Տեքստը եղծված է, թարգմանութիւն ըստ Թոտի ընթերցման:

77 Պաղոմենոսին Կալիգուլան մահապատժի ենթարկեց, լսելով նրա անհամար հարցասութիւն մասին (Դիոն, 59, 25), Մակրոնին նշանակեց Օգիպտոսի պրեֆեկտ, իսկ հետո ստիպեց ինքնասպան լինել (Դիոն, 59, 10):

78 Գոտեւորված սովորաբար քայլում էին սպասավոր-ստրուկները (շարժումների հարմարութիւն համար):

79 39 թ. Կալիգուլայի պաշտոնազուրկ արած կոնսուլ-սուֆֆեկտներէց մեկը Գնեսու Կոմիցիոս Կորբուլոնն էր, հետագայում նշանավոր զորավար. մյուսը հայտնի չէ:

80 Քվեստորին, ըստ Սենեկայի («Չայրույթի մասին» III, 18), անվանում էին Բետիլիենոս Բասսոս, և նա կործանվեց «ոչ ըստ մեղադրանքի, այլ ըստ տրամադրութիւն»:

81 Ձրի անցաքղբեր, decimas— թարգմանութիւն ըստ Էռնեստի մեկնաբանութիւն:

82 Չավեշտամարտիկներ— paegnarum, հազվադէպ հանդիպող տերմին. ըստ մեկ այլ ընթերցման paegmarum, հատուկ մեքենայի (paegma) վրա կովող մարտիկներ: Տեքստը վնասված է, թարգմանութիւն ըստ Բյուլիսիերի ընթերցման:

83 Ճաղատից մինչև ցաղատ, այսինքն առաջինից մինչև վերջինը— ասացվածք:

84 Խոստացավ գտեմարտել և այլն— տե՛ս գլ. 14:

85 Հարթալանջից— ըստ երևույթին ի նկատի ունի «Տարբովինիոսի հողաթումբը» Կուլիան դարպասի մոտ, այն նույնը, որտեղ ողջ-ողջ թաղում էին մեղանշած վեստալուհիներին:

86 Հմմտ. Դիոն, 59, 25. «Հրամայելով մահապատժի ենթարկել Կասիոս Վետիլիոսին, նա ստիպեց նրա հորը՝ Կալիստոնին, ներկա լինել մահապատժին..., և երբ վերջինս հարցրեց, կարելի է, որ ինքը գեթ աչքերը փակի, նա հրամայեց մեռցնել նաև հորը»:

87 Հոր մասին, որը ցաղի էր հրավիրվել որդու մահապատժից հետո, մանրամասները հաղորդում է Սենեկան («Չայրույթի մասին», II, 33), դա հեծյալ Պաստորն էր, որի որդին Կալիգուլայի նախանձը շարժել էր իր գեղեցիկ դեմքով և սանրվածքով:

88 Փիլոն Ալեքսանդրացին հավատացնում է, որ Կալիգուլան հրամայել էր կոտորել արտաքսվածներին, նախանձելով նրանց վարած անխոռով և քշով բավարարվող կյանքին, «փիլիսոփաների իսկական կյանքին»:

⁸⁹ Սենատորին կոչում էին Սկրիբոնիոս Պրակուլոս. ըստ Դիոնի, 59, 26, սենատ մտնելիս նրան էր մոտեցել Գայուսի ազատարձակ Պրոտոզեննոսը և ի պատասխան նրա ողջունի բացականչել՝ «Ինչպե՞ս ես դու համարձակվում ողջունել ինձ, եթե ատում ես կայսրին» — և ապա բուրբը նետվել էին զոհի վրա:

⁹⁰ Անվրդովություն *ó adiatreψία* — հազվադեպ տերմին, որը պատկանում էր, ըստ հրեույթին, ստոիկյան առաքինությունների շարքին — «այսինքն, անամոթություն» բառերը Ռաուզարտենը և Ռոտը համարում են զլոսսա:

⁹¹ Անտիկիրա — քաղաք Փոկիսում (միջին Հունաստան), որը հռչակված էր իր զանձլամերով՝ դեղարույսով, մտավոր խանգարման բուժման համար:

⁹² Գալլանունաստան — Գաղաթիայի մյուս անվանումը, որը բնակեցված էր մ. թ. ա. III դարում այստեղ ներխուժած գալլերի հետնորդներով:

⁹³ Թող ատեն..., բառեր Ակցիոսի «Ատրեոս» ողբերգությունից:

⁹⁴ «Իբրև թե այրել էր» — տե՛ս գլ. 15:

⁹⁵ Մեկ պարանոց — ենթադրվում է՝ որ կարելի լինի կտրել այն:

⁹⁶ Ռետիրիուսները («ձկնորսները») հանդես էին գալիս թևթևազրահ, զինված միայն հոսժանիով ու ցանցով, որոնցով նրանք ուզում էին կաշկանդել իրենց հակառակորդ սեկուտորներին («հետապնդիչներին») կամ միսմիլոններին («ձկնիկ»), որոնք հանդես էին գալիս լրիվ ծանրագեն:

⁹⁷ Զոհամատուցման ժամանակ մորթողի օգնականը զոհասեղանին էր մոտեցնում կենդանուն և մուրճի հարվածով ուշաթափ անում նրան, իսկ մորթողը կտրում էր վիզը:

⁹⁸ Դիոնը (60, 25) արձանների դեմ նման օրենքը վերագրում է Կլավդիոսին:

⁹⁹ Պլատոնը Հոմերոսին դատապարտում է «Պետություն» մեջ, III, 1—5:

¹⁰⁰ Տուրվատոսներ — Մանիխոսների տոհմի մի ճյուղը, տե՛ս Օգ., ծանոթագր. 119, Սինցինատոսներ — Քվինկցիոսների տոհմի մի ճյուղը, նրանց մականունը նշանակում է «գանգրահեր»:

¹⁰¹ Կոլոսուերոս — «վիթխարի, ինչպես կոլոսս, և գեղեցիկ, ինչպես էրոտ»:

¹⁰² Նեմի լճի թագավորը — սրբազան պուրակում գտնվող Դիանայի հնամենի տաճարի քուրմը. ըստ վաղեմի սովորույթի, այդ պաշտոնը կարող էր վարել միայն փախրատական հանցագործ-ստրուկը, որը մենամարտում սպանում էր իր նախորդին:

¹⁰³ Հմմտ. Սենեկա, Մխիթարություն առ Հելվիա, 10. «Գայոս Կեսարը, որին բնությունը ստեղծել էր ասես այն բանի համար, որպեսզի ցույց տա, թե ինչի են ընդունակ անսահման արատավորությունը գուգակցված անսահման իշխանությունը, մեկ անգամ ինչույ՞ք սարքեց, որը արժեցավ 10 միլիոն սեստերցիում. և թեև բուրբի հնարամտությունը դրված էր ի սպաս նրան, նա միայն դժվարությամբ հասավ այն բանին, որ մեկ ճաշկերույթը կլանի հրեք պրովինցիաներից ստացված եկամուտը»:

¹⁰⁴ Հուլիոսի բազիլիկ — գլխավոր դատական ատյանի շենքը Հռոմի ֆորումում, որի շինությունը սկսել էր Կեսարը և ավարտել Օգոստոսը:

¹⁰⁵ Լիրուրնիական քիանավերը (տե՛ս Օգ., ծանոթագր. 39), սովորաբար միայն կրկու շարք թիեր ունեին: Ըստ այլ ընթերցման (de cedris ձեռագրի deceris-ի փոխարեն) — «մայրից պատրաստված թիանավեր» (սովորական եղևնու կամ սոճու փոխարեն):

¹⁰⁶ Հողածածկ ծով և հարթեցված լեռներ — սովորական հռետորական կերպարներ՝ սլատկերելու համար անսահման իշխանության ճոխությունը:

¹⁰⁷ Երկու միլիարդ... — ըստ Դիոնի, Գայոսը առաջին իսկ 9 ամիսներին ծախսել էր նույնիսկ 3 միլիարդ 300 միլիոն սեստերցիում:

108 Դեմ էր նետում, deflabat, կիպսիուսի ճշտումը ձեռագրի «deflebat»-ի փոխարեն (ազում էր», այսինքն «թաղում էր»):

109 Ցենսուրիոնները գրավում էին Գայսսի ուշադրությունը նրանով, որ նրանք սովորաբար հարստանում էին ուղղակի և ամուրի մարդիկ էին:

110 Լախուրոս նշանակելով գումարը— այսինքն ճնա մարդիկ էր վարձում, որոնք գատարանում հայտարարում էին՝ «այսինչը և այնինչը իմ ներկայությամբ ասել են, որ քեզ ուզում են ժառանգ նշանակել», դրանից հետո այդ անձանց կտակները հայտարարվում էին անվավեր, եթե կայսեր անունը գրանց մեջ չէր լինում. և այդպես շարունակվում էր, մինչև որ չէր հավաքվում նշանակված գումարը» (Շտար):

111 Հին արեոմոնիքի— Օգոստոսի և Տիրերիոսի արքունիքի: Դիոնը նկարագրում է (59, 21), թե ինչպես, ավելացնելով վաճառվող առարկաների գինը, Գայսսը ինքն իրեն խոսելով ասում էր՝ «այս իմ հոր իրն է եղել, սա՛ մորս, սա՛ պապիս, սա՛ ապուպայինս, սա ծառայել է Անտոնիոսին Եգիպտոսում և եղել է Օգոստոսի հաղթավարը»:

112 Գայսսը չէր ցանկանում հրապարակել իր օրենքի տեքստը, սրպեսզի ավելի երկար օգտվի՝ տուգանքներ դանձելով նրանցից, ովքեր իրախում էին այն լիմացության պատճառով:

113 Ջիշեց հերթը— քանի որ նա դրամ չուներ:

114 Մեվանիա— փոքրիկ քաղաք Ումբրիայում, որտեղ Կլիտոմենոսի աղբերակի մոտ կանգնած էր Ցուպիտերի հնամենի տաճարը. այդ վայրի նկարագրությունը տե՛ս Պլինիոսի մոտ (Վնամականիք, VIII, 8):

115 Բառավներ— գերմանական ցեղ Հոննոսի գետաբերանի մոտ, որին հնագանդեցրել էր Գերմանիկոսը և Հոմի նկատմամբ հավատարմությունը պահպանել մինչև Ցիվիլիսի ապստամբությունը 69 թվականին:

116 Կալիգուլայի զորքը, ըստ Դիոնի (59, 22), հասնում էր 250 000 հոգու:

117 Ութ մարդ— այդպիսի պատգարակներ (օկտաֆորոններ) սովորաբար օգտագործում էին միայն կանայք:

118 Մինչև վեց ճազարի— այսինքն կրկնակի ավելի Օգոստոսի սահմանած չափից (թիվը ձեռագրում վնասված է):

119 Կիևոբելլիենոս, տրինոբանտների ցեղի թագավորը, տիրապետում էր հարավային Բրիտանիային. նրա մայրաքաղաքն էր Կամուլոդոնը (Արթուր թագավորի «Կամելոտը», այժմ Կոլչեստեր):

120 Չիքենի մարտակառքից— այն դեպքում, երբ սովորաբար Հոմում և մյուս քաղաքներում արգելված էր կառքով գնալ ցերեկ ժամանակ: Մարս-Վրիժառուի տաճարի մասին տե՛ս Օգ., 29, 2:

121 Ցերեկային նախաճաշը (prandium) հոմեոցիներն անում էին մոտ կեսօրին:

122 Տրոֆեում— թշնամուց խլված գեներով զարդարված սյուն, որը հաղթողները կանգնեցնում էին ուղղակի դաշտում:

123 Գպրոցից, որտեղ ցերմանական առաջնորդների պատանդ-որդիները հոմեոցիական գառտիարակություն և կրթություն էին ստանում:

124 Վերգիլիոսի ոտանավորը— «էնեական», I, 207, էնեոսի դիմումը տրոյացիներին նավախորտակումից հետո:

125 Կապիտոլիումի և Պալատինումի— այսինքն՝ Կապիտոլիումական Ցուպիտերին և Պալատինյան Ապոլլոնին:

126 Փարոսի փարոսը՝ Ալեքսանդրիայի նավահանգստի մուտքի մոտ, համարվում էր աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը:

117 Երկակարմիր մազերը, կապույտ աչքերը և բարձր հասակը համարվում էին գերմանացիների տարրերիչ հատկանիշները— հմմտ. Տոկիտոս, Գերմանիա, 4:

118 Արգելեց իրեն պատիվներ մատուցելը— քանի որ այդ բանը սենատին դնում էր բարձրագույն իշխանության, իսկ նրան՝ եկեղեցու զորության մեջ:

119 Անցիում— հմմտ. գլ. 8, 5:

120 Սենեկան (*«Իմաստունի հաստատակամության մասին»*, 18) այսպես է նկարագրում Կալիգուլայի արտաքինը. «Նա ինքն իր տեսքով ժիժաղ էր առաջացնում՝ այնքան ալլանդակ էր նրա գունատությունը՝ նշան խելագարության, այնպես վայրագ էին նայում նրա աչքերը կնճռոտ ճակատի տակից, այնքան անճոռնի էր նրա գլուխը, հերթաթափ, ցանցառ ցցված մազերով, իսկ թավամազ վիզը, իսկ նիհարուկ ոտքերը, իսկ վիթխարի թաթերը»:

121 Յեզուսի դեղի մասին հիշատակում են և՛ Հովսեփոս Փլարիոսը (*«Հրեական հույությունք»*, XIX, 2, 4), և՛ Յուվենալը (VI, 616—617):

122 Սենոնների մասին տե՛ս Տիր., ժանոթագր. 15:

123 Տիրերիոսի օրոք տղամարդկանց արգելված էր մետաքս հագնել:

124 Կորուրնուսներ— բարձրաճիտ կոշիկներ, որոնցով հանդես էին գալիս ողբերգակ դերասանները:

125 Կայծակ— Յուպիտերի նշանը, եռաժանի՝ Նեպտունի, մական՝ Մերկուրիոսի Դիոնը (59, 26) Գայոսի հագուստներով կատարած բոլոր քմարարքները բացատրում է աստվածներին և աստվածուհիներին նմանվելու նրա ցանկությունը:

126 «Նույնիսկ խելքի մթազնումը Գայոս Կեսարի մոտ լթուլացրեց պերճախոսության ուժը»,— գրում է Տակիտոսը (Անն., XIII, 9): Սվիդան նույնիսկ Կալիգուլային է վերագրում «ճարտասանության լատիներեն դասագիրքը», բայց այդ բացահայտ թյուրիմացություն է:

127 Գիշերային ձգումներով— որոնց ժամանակ նա խորհում էր ճառերը:

128 «Ավագ առանց կրի»— կծու ակնարկ Սենեկայի ոճի կցկտուր խրատաբանականության:

129 Կորժանում կամ փրկում էք... — այսինքն մեղադրանքով հանդես էր գալիս ոչ թե նրա համար, որ ամբաստանյալին մեղավոր էր համարում, այլ նրա համար, որ մեղադրական ճառը նրան ավելի էր հաջողվում, և ընդհակառակը:

130 Լող տալը հնում (հատկապես հույների մոտ) համարվում էր անհրաժեշտ ունակություն ամեն մարդու համար. «Նա չի կարողանում լող տալ»— նշանակում էր ժայռահեղ թերգարգացածություն:

131 Թրակիացիներ— թեթևազեն զլադիատորներ՝ փոքրիկ վահանով և կեռ թրով, որոնք մարտնչում էին միրմիրլոնների (տե՛ս ժանոթագր. 96) դեմ. Կալիգուլան հովանավորում էր առաջիներին:

132 Կրկեսում ամեն մի մրցաշրջանին մասնակցում էին չորս մարտակառքեր՝ սպիտակ, կանաչ, կարմիր և կապույտ գույնի հագուստներ հագած կառավարներով: Հանդիսատեսները բաժանվում էին յուրաքանչյուր գույնի համակիրների և հաճախ կրքերն այնպես էին բորբոքվում, որ իսկական կռիվ էր տեղի ունենում:

133 Արագոտե, Incitatus (Իլլինսկին թարգմանել է «Борзый»). Դիոնը հավաստում է, որ Կալիգուլան ձիուն կոնսուլ կղարձներ, եթե շտպանվեր (59, 14):

134 Մեկ կամ երկու դավադրություն— Գետուլիկոսի դավադրությունը 39 թ. հօգուտ Լեպիդոսի՝ Դրուզիլլայի ամուսնու, և մի քանի դավադրություններ, որոնք հետևեցին 40 թվականին:

¹⁴⁵ Երկու եզրի— Կասիոս Քերեան և Կոռնելիոս Սարինոսը. նրանց թիկունքում կանգնած էին, Իհարկե, ամենաականավոր սենատորներ՝ 46 թ. կոնսուլ Վալերիոս Ազիա-տիկոսի գլխավորությամբ: Դավադրությունն այն աստիճան լայն էր կազմակերպված, որ միաժամանակ նախապատրաստված էին երկու ուրիշ մահափորձեր՝ էմիլիոս Ռեգուլոսի և Աննիոս Մունիցիանոսի (Հովսեփոս Փլարիոս. Հրեական հնությունք, XIX, 3, 14):

¹⁴⁶ Երեքօրյա Պալատինուսյան խաղերը ի պատիվ Օգոստոսի հաստատել էր Լիվիան նրա մահից հետո:

¹⁴⁷ Ցուպիտերի արձանի մասին տե՛ս 22, 3:

¹⁴⁸ Պալատական դռնապանի— Բաուսգարտենը գտնում է, որ նկատի ունի Պալատինուսյան Ապոլլոնի, Ցուպիտեր-Կալիգուլայի «դոնապահ», տաճարը, մեկնարանությունը կասկածելի է:

¹⁴⁹ Անցիումում Տորտունայի երկու հին տաճար կար գուշակներով՝ «Կանխագուշակ քույրեր» է անվանում նրանց Մարցիալեսը (V, 1, 3):

¹⁵⁰ Արյունաթաթախ, ըստ Հովսեփոս Փլարիոսի (XIX, 1, 13), Գայոսը չէր, այլ սենատոր Ասպրենատոսը. նա սպանվեց Գայոսից հետո անմիջապես, քանի որ թիկնասույահ գերմանացիները այդ արյան պատճառով կարծել էին, թե նա է եղել սպանողը:

¹⁵¹ Փիլիպոս Մակեդոնացին սպանվեց մ թ. ա. 336 թ. նրա դստեր հարսանիքի պատվին տրված խաղահանդեսի ժամանակ. ցուցադրվում էր մի ողբերգություն, որը պատմում էր Կինիրոսի և Միրրայի արյունապղծիչ սիրո մասին:

¹⁵² Ոմն կատուլի «Լաուրեալուս» մնջախաղում պատկերվում էր, ի միջի այլոց, հերոսի՝ ավազակախմբի պարագլխի, մահապատիժը խաչի վրա, proripiens se ruina-ի թարգմանության տարբերակը՝ «վազելիս ցած ընկնելով»:

¹⁵³ Երեքու դերասանները, ըստ երևույթին, բեմ էին դուրս գալիս ընդմիջումներին և զվարճացնում էին հանդիսատեսներին, ծաղրանմանեցնելով գլխավոր հերոսի գործողու-թյունները:

¹⁵⁴ Սպանության օրը՝ 41 թ. հունվարի 24-ը, յոթերորդ ժամ՝ կեսօրից հետո շուրջ ժամը մեկը: Ըստ Հովսեփոս Փլարիոսի (XIX, 1, 14), գործը եղել է տասներորդ ժամին՝ Գայոսը գալիս էր թատրոնից նեղ անցուղիով Մ. Վինիցիոսի, Վալերիոս Ազիատիկոսի, Կլավդիոսի և Պավլոս Արրոնցիոսի ուղեկցությամբ. Քերեան առաջին հարվածով կտրեց նրա պարանոցը, վերջին հարվածը հասցրեց Աքվիլան. կայսրը իրեն արժանավորապես պահեց, ոչ մի բառ չասաց, բայց փորձեց փախչել:

¹⁵⁵ «Կատարի՛ր քո գոճը» (hoc age!)՝ քրմի ծիսական բացականչությունը, որով զոհամատուցման նշան էր տալիս:

¹⁵⁶ «Ստացի՛ր քոնը» (accipe ratum), այսինքն ստացիր այն, ինչ որ դու ցանկացել ես՝ այն է՝ հանկարծական մահ նման Ցուպիտերի շուքից եկած մահվանը (Լիպսիոսի ճշտումը՝ accipe iratum, «ստացի՛ր նրա գայրույթը»):

¹⁵⁷ Ձողերով— պատգարակների: Սպանությունից հետո դավադիրները ծպտվեցին պալատի սենյակներում, ետ մնացողներին կոտորեցին գերմանացիները. այնուհետև պահակախումբը շղթայեց թատրոնը և բեմի վրա նետեց սպանվածների գլուխները: Սարսափահար հանդիսատեսները կոտորածի էին սուսում, լուրեր Լին պտտվում, որ Գայոսը ողջ է և, վիրավոր ու արյունաթաթախ, ֆորումում խոսում է ժողովրդի հետ: Վերջապես Պավլոս Արրոնցիոսը հայտարարեց նրա մահը. գերմանացիները հեռացան, և ժողովուրդը դուրս նետվեց թատրոնից:

¹⁵⁸ Լամիայի այգիներ— էսքվիլինիում, Մեկենասի այգիների կողքին:

¹⁵⁹ Հրկիզեցի՛ն կիսով չափ— հմմտ. Տիր., 75:

160 Յննաուրիոնը, որը սպանել էր Յեզոնիային, կոչվում էր Հուլիոս Լուպոս:

161 Հուլիոսի կուրիան հռապետների կողմից կառուցվել էր ի պատիվ Հուլիոս Կեսարի Հոստիլիոսի կուրիայի՝ սենատի հին շենքի, տեղում, որն այրվել էր մ. թ. ա. 52 թ.:

162 Ցանաբները — կառուցված աստվածային Հուլիոսի և աստվածային Օգոստոսի պատվին:

163 Գայոս Հուլիոս Կեսար Ստրաբոնը, որն հիշվում է Հուլ. 55, 2:

ԱՍՏՎԱՍԱՅԻՆ ԿԼԱՎԴԻՈՍ

1 Որը սկզբնապես կրում էր... անունը — այդ ժամանակ նշանավոր տոհմերում սովորական անձնանունների փոխարեն (Գայոս, Մարկոս և այլն) սկսում են երեխաներին անուններ տալ, որոնք նախկինում եղել էին տոհմական մականուններ (Ներոն, Դրուզոս և այլն):

2 Դրուզոսը Բվետոսը եղել է շուրջ 16 թ., պրետոր՝ 11 թ. մ. թ. ա.:

3 Դրուզոսը ջրանցք անցկացրեց Հոննուսից մինչև Ֆլեյլո լիճը (այժմ Զեյդեր-զե. ըստ երևույթին, որպես ջրանցք ծառայել էր Իսսելի մաքրված և ընդլայնված հունը), որպեսզի կրճատի վտանգավոր ուղին Հյուսիսային ծովով, 11 թ. Ֆլեյլոյից դուրս եկավ ծով և հասավ Վեզերի գետաբերանը, իսկ հաջորդ տարիներին ցամաքով հասավ մինչև էլբա. այստեղ էլ, ըստ Դիոնի (55,1) նրան հայտնվել էր մի ուրվական, դիմելով հետևյալ բառերով՝ «Մինչև ո՞ւր, անհագուրդդ Դրուզոս...» և այլև:

4 Դրուզոսի հիվանդությունը առաջ էր եկել ձիուց ընկնելուց և կոնքի բարդ կոտորվածք ստանալուց:

5 Կրագիրները (մեկ դեկուրիա «էդիլական» և երեք դեկուրիա «քվեստորական», այսինքն գանձապահական գրագիրների) հռոմեական պաշտոններին առանձնաշնորհյալ մասն էին: Ծառայությունը նրանց հավասարեցնում էր հեծյալներին:

6 Հուլարկավորություն վազքը՝ զեն ի ձեռ, որպես մաս զինվորական դամբանախաղերի հիշատակվում են դեռևս «էնեականում», XI, 183 հանգ:

7 Ազնվատոհմիկ ավար (opima spolia), այդպես էր ընդունված անվանել այն զրահը, որը հանվում էր մենամարտում հաղթված թշնամու առաջնորդի վրայից. թագավորների և հանրապետության գոյության ողջ ընթացքում հռոմեացի զորավարները սոսկ երեք անգամ էին հասել այդ փառքին: Դրուզոսի հանրապետական հայացքների մասին հմմտ. Տիր., 50:

8 Միտասարդ Կեսարները — Գայոսը և Լուկիոսը:

9 Կլավդիոսի ծնունդը — մ. թ. ա. 10 թ. օգոստոսի 1-ը:

10 Խնամքի տակից դուրս եկավ, այսինքն՝ չափահաս դարձավ:

11 Նորոք հետ — Գերմանիկոսի հետ, մ. թ. ա. 6 թվականին:

12 Գլխարկով — paliolum, մի տեսակ շորագլխարկ, որը պաշտպանում էր մրսելուց ականջներն ու կոկորդը՝ այն կրելը պատշաճ էր համարվում միայն հիվանդության ժամանակ:

13 Օգոստոսուհին — այսինքն՝ Լիվիան:

14 Որպես թոռան քեռի Օգոստոսը Կլավդիոսին գալիս էր իբրև Օկտավիայի, մոր կողմից Կլավդիոսի տատի եղբայր:

15 Օգոստոսի նամակների հատվածներում նշանավոր է լատիներենի և հունարենի շերտընդմիջությունը, որին ամեն անգամ դիմում է Օգոստոսը՝ նրբանկատորեն նշելու համար Կլավդիոսի տկարամտությունը:

16 Մարտյան խաղերը Հոռմում կատարվում էին տարեկան երկու անգամ, մայիսին և օգոստոսին:

17 Քրմերի համար հյուրասիրություն կազմակերպում էր կրոնական արարողություններից հետո էպուլոնների հատուկ կոլեգիումը, որին էր պատկանում, ի միջի այլոց, հետազայում հիշատակվող Պլավտիոս Սիլվանոսը:

18 Ազգականին — քանի որ Կլավդիոսը ամուսնացած էր «Սիլվանոսի որդու» քրոջ՝ Պլավդիա Ուրգուլանիլլայի հետ:

19 Սերգան օթյակի մասին տե՛ս Օգ., 45:

20՝ Լատինական խաղերի մասին տե՛ս Օգ., ժանոթագր. 187: Կոնսուլների բացակայության կարճատև ժամանակամիջոցում Հոռմը կառավարելու համար նշանակվում էր մի նշանավոր ծագման տեր երիտասարդ՝ պրեֆեկտի պատվավոր կոչումով, բայց Օգոստոսը Կլավդիոսին դրան էլ անընդունակ է համարում:

21 Արտասահունքությունների մասին տե՛ս Քեր., 25. «կապակցված» — «անկապ», — թարգմանության տարբերակ՝ «պարզահնչյուն-անպարզահունչ» (հմմտ. «Ապոկոլոկիևտոսիս», 5. «Ոչ մի երկրային արարած, սոսկ ծովային հրեշներն են մոնչում այդ կերպ»):

22 Երբորդ հերթին — հմմտ. Օգ., 101:

23 Կոնսուլական աստիճանի նշանները — այսինքն տիտղոսը, լիկտորներ և այլն:

24 40 ոսկի, այսինքն 4000 սեստերցիում: Սիզիլարիաներ — երկօրյա տոնահանգես, որն հետևում էր Սատուրնալիաներին:

25 Սգոստոսի քրմերը, որոնք ընտրվում էին ըստ վիճակահանության, կազմում էին 21 հոգուց բաղկացած կոլեգիում, իսկ հաշվից դուրս անուն առ անուն նրանց թվին էին դասված չորսը՝ Տիրերիոսը, Գերմանիկոսը, Դրուզոս Կրտսերը և Կլավդիոսը (Տակիտոս, ԱՆՆ., I, 54):

26 Չայն տալիս կոնսուլարիաների կարծիքը սենատում առաջինն էր լսվում:

27 Մատնացույց արեց նրան... ժողովդին — դրանով իսկ ճանաչելով Կլավդիոսին կայսերական ընտանիքի անդամ, թեև նա չէր որդեգրվել Հուլիոսների տոհմում:

28 Ըստ վիեակահանության — այսինքն Գայոսը, կազմելով ապագա տարիների կոնսուլների ցուցակը և աատանվելով Կլավդիոսի և մեկ ուրիշ թեկնածուի միջև, վիճակահանությանը լուծեց հարցը հաջաւ կլավդիոսի (Սմիլգա):

29 Հմմտ. «Ապոկոլոկիևտոսիս», 18. «Հանկարծ հայտնվում է Գայոս Կեսարը և պահանջում է Կլավդիոսին տալ իրեն ի ստրկություն, վկայակոչելով վիճակների, որոնք տեսել էին, թե ինչպես է Կլավդիոսն իրենից ծեծ ուտում և՛ մտրակով, և՛ բուռնցքով, և՛ մահուկով...»:

30 Կալիգուլա — Յուպիտերի քրմի պաշտոնը, ըստ Դիոնի, Կլավդիոսին արժեցել է անգամ 10 միլիոն սեստերցիում. այն վճարելու համար Կլավդիոսը իր ունեցվածքը գրավ գնելով պարտք էր վերցրել զանձարանից, բայց չէր կարողացել պարտքը վերադարձնել, և նրա ունեցվածքը առաջարկվել էր աճուրդի հանել, սկզբնապես արտոնյալ պայմաններով, իսկ հետո նաև անվերապահորեն, vacuum (Սմիլգայի մեկնաբանությունը):

31 Արևային սյունաստանները կամ սանդղավանդները սովորաբար տեղադրվում էին տների տանիքների:

32 Աիվորին, որը բացահայտել էր Կլավդիոսին, անվանում էին Գրատոս:

33 Պրետորականների բանակատեղին գտնվում էր Կոլլինյան դարպասից դուրս (Տիր., 37):

34 Չորս քաղաքային կոնտրամները, որոնք ենթարկված էին Հոռմի պրեֆեկտին, թըշ-

եամուլթյան մեջ էին պրետորականների հետ և որպէս բնական հետարան էին ծառայում նրանց դեմ:

36 41 թվականի հունվարի 24—25-ի դեպքերի մանրամասն նկարագրութիւնը տալիս է Հովսեպոս Փլարիոսը («Հրեական հնախոսութիւնք», XIX, 3—4): Փախչելով քաղաքից, սենատորները հավաքվեցին Կապիտոլիումում, ժողովուրդը ամբողջած էր Ֆորումում: Սենատը Կլավդիոսի մոտ ուղարկեց տրիբուններ Վերանիոսին և Բրոքոսին. նրանք կոչ էին անում նրան նեթարկվելու սենատի կամքին և սպառնում էին նրան Գայոսի հակառակորդով, բայց տեսնելով Կլավդիոսին շրջապատած զորքի զանգվածը, սկսեցին խնդրել նրան իջնանալ: Սենատը գեթ սենատի ձեռքից ընդունելու:

36 Տարածալուծութիւն. սենատում խշխանութիւն համար վեճեր սկսվեցին դավադիրների երկու առաջնորդների՝ Վալերիոս Ագիատիկոսի և Մարկոս Վինիցիոսի միջև, ժողովուրդը, տազնապած արիստոկրատիայի բռնութիւնից, սկսեց պահանջել միահեծան կայսրը, քաղաքային կոհորտաները անցան Կլավդիոսի կողմը, և Քերեան չկարողացավ ներանց զսպել:

37 Մի քանի տրիբուններ և ցենսուրիոններ. Քերեայի դաւաճը, նրա իսկ խնդրանքով, կտրեցին այն սրով, որով նա սպանել էր Կալիգուլային, Լուպոսը դողողում էր, զգալիորէմ անելիս, և սպանվեց միայն երկրորդ հարվածից հետո, Սարինոսը ինքը նետվեց թրի վրա (Հովսեպոս Փլարիոս, XIX 4, 5):

38 Օգոստոսի անունը— Պլինիոսը (35, 36, 94) գրում է, որ Կլավդիոսը անգամ հրամայել էր Ապելլեսի երկու նկարների վրայից շնչել Ալեքսանդր Մակեդոնացու դեմքը և փոխարինել այն Օգոստոսի դեմքով:

39 Չորս փիղ լծած մարտակառքը, որը սենատի կողմից նշանակված էր աստվածաին Օգոստոսի արձանի համար, պահպանվել է դրամի վրա պատկերված:

40 Մրցութիւն նեպոլում, հմմտ, Օգ., 98. հունական կատակերգութիւնը, մի շարք մեկնաբանների կարծիքով, կարող էր լինել Գերմանիկոսի իսկ կողմից հորինվածներից (Կալ., 3):

41 «Իմ պապ Մարկոս Անտոնիոսը ամենևին էլ ցածր չէր իրեն հաղթողից»,— ասում էր Կլավդիոսը (Սենեկա, Միսթարութիւն առ Պոլիբիոս, 16):

42 «Իմպերատոր» անունը իրենց «Գայոս» անձնանվան փոխարեն առաջինը ընդունեց Օգոստոսը, հետո ներոնը, ապա, սկսած Վեսպասիանոսից, այդ անում էին բոլոր կայսրերը:

43 Դատեր նշանագրութիւնը— Օկտավիայի՝ Լուկիոս Սիլանոսի հետ 41 թ., բռնան ձեռնարկը— Անտոնիայից և Փավստոս Սուլլայից. ըստ երևույթին, նա մահացել է մանուկ հասակում:

44 Կուրիա ներս մտնել զինվորականներին շէր թուլատրվում՝ դեռևս Տիրերիոսը պետք է հատուկ թուլտվութիւն խնդրեր Մակրոնի համար (Տակիտոս, Անն., IV, 7):

45 Պրովոլուտորներ— այստեղ՝ պրովինցիաներում կայսերական գանձարանի եկամուտների վարիչներ:

46 Կլավդիոսի նկատմամբ հեծյալների մահափորձերի մասին հիշատակվում է նաև Օտ., 1, 3, Դիոնի մոտ, 60, 18 (43 թ. ներքո) և Տակիտոսի մոտ, Անն., XI, 22 (47 թ. ներքո)՝ այս մահափորձերից որոնք են նույնական միմյանց հետ, պարզ չէ:

47 Ազիեիոս Գալլոսը, ըստ Դիոնի (60, 27), վիրավորված էր իր կարճ հասակի և տգեղութիւն պատճառով արված ծաղրանքներից. Ստատիլիոսի մասին Դիոնը չի հիշատակում:

48 Պատահաբար ասես...— casu quodam ac divinitus տարբերակի դեպքում թարգմանությունը կլինի՝ «աստվածային դիպվածով...»:

49 Արծաթյա արծիվները լեզեռնի դրոշն էին, նրանց երկրպագում էին, զարդարում պսակներով և օծում օծանելիքներով:

50 Կլավդիոսի կոնսուլությունները՝ 42, 43, 47 և 51 թթ.: Երբեք անգամ— այսինքն 43 թ. (հաշված 37 թ. կոնսուլությունից):

51 Կլավդիոսի հրապուրանքը դատավարությունը ծաղրվում է նաև «Ապոկոլիպսիստոսիսում» (7 և 12):

52 Սրպես բնաճիճի հայր— արտոնություններից մեկը ըստ lex Julia de maritandis ordinibus-ի. պարզ չէ, թե երեխաների որպիսի քանակ էր դրա իրավունքը տալիս:

53 In absentia դատապարտելու պրակտիկան հառնում էր մինչև XII տախտակների օրենքները և սոսկ վերանորոգվել էր Կլավդիոսի կողմից:

54 Հռոմեական տոգայով— ասես թե նա արդեն շահել էր գործը, հունական քիկեոցով— որպես թե արդեն այն տանուլ էր տվել:

55 Մ. թ. ա. 22 թ. Պլանկոսից և Պավլոսից հետո ցենզորական պարտականությունները ժամանակ առ ժամանակ իրենց էին վերապահում կայսրերը, իսկ պաշտոնապես ցենզորներ չէին նշանակվում:

56 Հեծյալների ստուգատեսների մասին տե՛ս Օդ., ծանոթագր. 106:

57 Առանց իր... թույլտվության, հմմտ. գլ. 23, 2:

58 Խաբիրիոս Պաստուսի գործի մասին պահպանվել է Կիկերոնի ճառը, բայց նրանում լի հիշատակվում հռոմեական ժողովրդի մեծությունը վիրավորելու մեղադրանքի մասին:

59 Ինքնասպանություն կատարելու փորձը հռոմեացիների մոտ սովորաբար ամոթ չէր համարվում. ըստ երևույթին, այդ էլ Կլավդիոսի նորամուծությունն էր:

60 Սիզիլիացիներ— փողոց կամ թաղամաս (և ոչ թե տոնահանդես, ինչպես գլ. 51-ում):

61 Աննշան— ըստ Կլավդիոսի մասնակցության նրանում, իսկ ընդհանրապես արշավանքը լայն էր մտահղացված՝ նրան մասնակցում էին 4 լեզեռն, իսկ օժանդակ զորքերով՝ ավելի քան 40 հազար մարդ:

62 Տրիումֆային զարդարանքներ— 41 թվականին Մավրիտանիայում խռովությունը ճնշելու համար:

63 Փախստականներ— Ադմինիստր (տե՛ս Կալ., 44, 2) և Բերիկոսը (Դիոն., 60, 19):

64 Հյուսիս-արևմտյան քամին (Յիրցիոս, այժմ միստրալ) աչքի էր զարնում հատուկ ուժով հարավային Գալլիայում և Միջերկրական ծովի հարակից մասերում. Գալլերը աղոթում էին նրան, Օգոստոսը Գալլիայում նրանց տաճար ընծայեց (Պլինիոս, 2, 46, 121, Սենեկա, Բնական հարցեր, V, 17, 5):

65 Ստոյֆադներ— այժմ Իերյան կղզիները Մարսելի մոտ:

66 Գեզորիակ, այժմ Բուլոն:

67 Մի քանի օր— ըստ Դիոնի, 16 օր: Կղզու մի մասը՝ մինչև Թեմզա և էվոն: Միջին Բրիտանիան նվաճվեց արդեն ավելի ուշ՝ Ավլոս Պլավտիոսի և Օստորիոս Սկապուլայի կողմից:

68 Մովային պսակ— ոսկյա, նավախելի ձև ունեցող զարդարանքներով. քաղաքացիականի, կաղնյա պսակների մասին տե՛ս Տիր., ծանոթագր. 65:

69 Դիրիբիտորիում, շենք Մարսյան դաշտում՝ ընտրությունների ժամանակ ձայներ

հաշվելու և գինվորներին աշխատավարձ բաժանելու համար: Էմիլիոսի կալվածք, ըստ երևույթին, գտնվում էր Հռոմի նույն հյուսիս-արևմտյան ժայռամասում:

70 Ավագների— տե՛ս Օգ., 30:

71 Հմմտ. Գալոս, 1, 3, 2. «Կլավդիոսի էդիկտով լատինին քաղաքացիական իրավունք է տրամադրվում, եթե նա կառուցում է ծովային նավ, որն ընդունակ է տեղավորել 10 000 մոդիում հացահատիկ, և այդ կամ գրան փոխարինող նավով 6 տարի հացահատիկ է կրում Հռոմ...»:

72 Չոքս երեխաների իրավունքով ազատարձակուհիները ազատագրություն էին ստանում պատրոնի հովանավորությունից:

73 Գլխի սկիզբը թարգմանված է ըստ Իմի ճշգրտման:

74 Ջրմուղի մասին տե՛ս Կալ., 21. Նրա երկարությունը 59 կմ էր, ջրի օրական ծավալը՝ 191 200 խորանարդ մետր, արժողությունը՝ 55,5 մլն. սեստերցիում. «Ամբողջ աշխարհում չկա հիացման ավելի արժանի բան»,— գրում է նրա մասին Պլինիոսը (36, 15, 123):

75 Ֆուլգենյան լճի իջեցումը կատարվեց լիրիս գետը տանող ջրանցքի միջոցով՝ «անհնարին է մտովի պատկերացնել այն առանց տեսնելու, և անհնարին է նրա մասին պատմել մարդկային լեզվով»,— ասում է Պլինիոսը այդ կառույցի մասին (36, 15, 124), բայց այդ կառուցումը վարող Նարցիսի անփութության պատճառով ջրանցքը շուտով անպիտանացավ՝ Տրայանոսը և Ադրիանոսը ստիպված եղան նորից վերակառուցել այն:

76 Սուտիայի նավահանգիստը օժվեց Ներոնի ժամանակ:

77 Կորոզը՝ («վիթխարին»), ի տարբերություն երկու ավելի փոքրերից, որ դնել էր տվել Օգոստոսը) Եգիպտոսից բերվեց Կալիգուլայի ժամանակ և դրվեց կրկեսում Վատիկանի բլուրի վրա— այժմ այն կանգնած է սբ. Պետրոսի տաճարի առջև: Այն տեղափոխելու համար կառուցված նավը անտիկ տեխնիկայի հրաշք էր. ըստ Պլինիոսի նկարագրության այն տեղավորում էր 120 000 շափ բալաստ, իսկ նրա կայմը շորս ընդգրկում ուներ:

78 Փարոս— տե՛ս Կալ., ժանոթագր. 126:

79 Վեներա Հադիթոդի Վերին տաճարը կառուցված էր Պոմպեոսի թատրոնի հանդիսատեսների նստատեղերի վերևում:

80 Կլավդիոսի «Պատմության» մասին տե՛ս գլ. 41: Քանի որ սրբազան «գարի» ճիւղ ժամկետը վիճելի էր, իսկ մինչև Օգոստոսը տոնակատարություններից մեկը բաց էր թողնված, ապա Կլավդիոսի վերահաշվարկումը կարող էր լիովին արդարացված լինել: Լացի այդ, Կլավդիոսի ընտրած ժամկետը (47 թ. ապրիլ) համընկնում էր Հռոմի առասպելական հիմնադրման 800-ամյա տարելիցին:

81 Որոշ դերասաններ— այդ թվում Ստեֆանիոնեսը՝ կատակերգու դերասանը, որն հիշատակվում է Օգ., 45,4 (Պլինիոս, 7, 78, 159):

82 Սովորաբար կրկեսում օրական 10 արշավաշրջան էր լինում, բայց Կլավդիոսի օրոք այդ թիվը հասնում էր 24-ի:

83 Թեսալական ցլամարտիկներին Հռոմի կրկեսում առաջին անգամ ցուցադրել էր Հուլիոս Կեսարը (Պլինիոս, 8, 70, 182):

84 «Ակրատ» (sportula, բառացի «գամբյուղ») — այդպես էր կոչվում հյուրասիրությունը, որը տալիս էր պատրոնը կլիենտներից յուրաքանչյուրին:

85 Պատվավոր պաշտպանություն— rudis, փայտյա սուր, գլադիատորական երկարամյա ծոռայության նշանը:

86 «Գուցե և ոչ» (aut non). ուշ շրջանի ձեռագրերը դնում են avete et vos, «Ողջուն և ձեզ» — արտագրողների փորձը ուղղելու կայսեր անճոռնի կատակը:

87 Միջդիպական և հռոդոսյան հավատորմները, հմմտ. Հուլ., 30. 12-ական տրիբնալ — տրիբնալներից զատ հանդես էին գալիս քվադրիբնալներ, իսկ ընդամենը մարտնչում էին 19000 մարդ և 100 նավ (Տակիտոս, Անն., XII, 56, Դիոն, 60, 33). ըստ երևույթին, տեղըստում բացթողում կա:

88 Սպասավորները և ստրուկները, որպես ոչ քաղաքացիներ, իրավունք չունեին մասնակցելու համաժողովրդական մաղթանքներին:

89 Ետմահու հավատարմագրի մասին — de fidei commissis:

90 Կոնսուլների կողմից — մինչև այդ խնամակալների նշանակմամբ զբաղվում էին պրետորներն ու տրիբունները:

91 Քարգմանությունը ըստ Սմիլդայի ընթերցման: Իմը պահպանում է ձեռագրի ընթերցումը՝ «երկու կոնսուլների միջև տրիբունական նստարանին»:

92 Երկրորդ կարգի կուսակալներին (ducenarius)՝ կուսակալները բաժանվում էին 4 կարգի, համապատասխան ստացած աշխատավարձի՝ 300, 200, 100 կամ 60 հազար սեստերցիում:

93 Մինչև հինգերորդ պորտը, այսինքն նույնիսկ ավելի խիստ սովորական օրենքից, որը սենատորներից քաղաքացիություն էր պահանջում սոսկ մինչև երրորդ պորտը:

94 Ազատաբաժակներ, Libertini: Սվետոսիոսը ենթադրում էր, որ հնում ազատ արձակված ստրուկները անվանվում էին liberti, իսկ նրանց որդիները՝ libertini, և միայն հետո էին այդ տերմինները խառնվել. սակայն այդ հնարանքը չի հաստատվում գրողների և արձանագրությունների բառօգտագործմամբ:

95 (Ցիզալպակական) Կալիքան և Օստիան, որոնք կարևոր էին Հռոմի մատակարարման համար, կառավարելու համար քվեստորների կոլեգիումից առանձնացվում էին հատուկ անձինք:

96 Վերադարձեց... գալևառանկ. — հմմտ. Օգ., 36: Ներսիսի օրոք վերականգնվեց նախկին կարգը:

97 Դեռևս պատահի՝ Միլանոսը 18 տարեկան էր:

98 Ձախ կողմից — ի նշան հարգանքի:

99 Պայմանական ժողայթյունը այլևս ոչ մի տեղ չի հիշատակվում:

100 Էսպլապալի կղզի — Տիբրոսի վրա, բժշկության աստված էսկուլապի տաճարով: Պաետոլում և Օստիայում հրդեհները ոպտանում էին բերված հացահատիկի շահմարաններին և նավահանգիստներում խարիտի նետած նավերին:

101 Էսվիլիինյան դաշտում, համանուն դարպասներից դուրս, մարմնապատիժներ կատարվում էին դժուկ Պլազտոսի ժամանակներում:

102 Հռոդոսցիներից ազատությունը խլվեց 44 թ. մի քանի հռոմեացի քաղաքացիների հետ հաշվհարդար տեսնելու համար և վերադարձվեց 51 թ. շնորհիվ Ներսիսի հովանավորության (Ներ., 7, Անտիֆիլիսի շնորհակալական էպիգրամը տե՛ս «Պալատինյան անթոլոգիայում», IX, 178):

103 Քրեստոս — ստրուկների մեջ բավական տարածված անուն, դրա համար էլ անհրաժեշտություն չկա այդ խոտովության մեջ տեսնելու առաջին տեղեկությունը Հռոմում, քրիստոնյանների մասին, սակայն նման մեկնարարություն հնարավորությունը բայց և այնպես թույլատրելի է:

104 Կերմանական դեսպանների (Ֆրիզներ Վերրիտոսի և Մալտրիգոսի) հետ դիպվածը Տակիտոսը վերագրում էր Ներսիսի ժամանակին (Անն., XIII, 54):

105 Դրուիդները ուարսափեցնում էին հռոմեացիներին մարզկային զոհարարություններ:

րի սովորույթով. նրանց պաշտամունքը Տիրերիոսը արգելել էր, բայց նրա վերապրուկները հետագայում էլ պահպանվել էին:

106 Անենրայի տաճարը էրիկ լեռան վրա, որն ըստ ավանդույթյան հիմնադրվել էր էնեսսի կողմից, ի պատվի էր հռոմեացիների մոտ. դեռևս Տիրերիոսն էր խոստացել վերականգնել այն (Տակիրոս, Անն., IV, 43):

107 Պայմանագրեր — օրինակ, Ագրիպպա Հրեաստանցու հետ 41 թվականին:

108 Ֆեցիալիսներ — քրմեր, որոնք հետևում էին, որպեսզի ճշտությամբ կատարվեն ծեսերը և պայմանագրերի կնքումը:

109 Էմիլիա Ասպիդան Յուլիա Կրտսերի դուստրն էր. Յուլիայի արտորվելը, ըստ երեմիայի, հանգեցրեց նշանադրության խզումին:

110 Ուրգուլանիլայի հայրը Մ. Պլավտիոս Սիլվանոսն էր (տե՛ս գլ. 4, 3), որը տրիումֆային զարդարանքներ էր ստացել պաննոնական ապստամբության ճնշմանը մասնակցելու համար, թատր՝ հայտնի Ուրգուլանիան, Լիվիայի մտերմուհին:

111 Պետինայի հետ ամուսնության նախագիծը պաշտպանում էր Նարկիսը, Լուլիայի հետ՝ Կալիստոսը, Ագրիպպինայի հետ՝ Պալլանտոսը:

112 Մարդիկ գտավ — Լուկիոս Վիտելիոսի, ապագա կայսեր հոր գլխավորությամբ. նրա մասին տե՛ս Վիտ., 2: Եզրոր և քրոշ դուստրերի հետ ամուսնության թույլտվության մասին հրովարտակը հիշատակվում է վկայակոչելով Կլավդիոսին նաև Գայոսի մոտ, I, 62. այն վերացվեց միայն 432 թ. քրիստոնյա կայսրերի օրոք:

113 Դեռևս պատանեկությունը բուլաբելիս — թարգմանությունն ըստ Սմիլդայի ընթերցման:

114 Արդեն սկսել էին կերակրել — այսինքն Կլավդիոսը պաշտոնապես ընդունեց նորածինն որպես դուստր, վերցնելով նրան գետնից (տե՛ս Օգ., ծանոթագր. 11):

115 Ազնվատոնմիկ պարմանիներ — Պոմպոսը մոր կողմից Գնեսո Պոմպեսի հետնորդներից էր, հոր կողմից՝ եռապետ Կրասոսի. Փավստոս Սուլլան դիկտատորի թոռնորդին էր:

116 Ի՞նչ երկրորդ կոնսուլության ժամանակ — այս բառերը Սմիլդան և ուրիշներ համարում են ընդմիջարկում. մենք ընդունում ենք Քլինտոնի մեկնաբանությունը, շնայած Սմիլդայի առարկություններին:

117 Մանապատժի ենթարկեց — ճիշտ չէ՝ տե՛ս գլ. 29, 2 և ծանոթագր. 124:

118 Պատվավոր նիզակ — նիզակ առանց սայրի, որը ծառայում էր իբրև մարտական պարզև:

119 Երե՛ք քաղաքներից հայտնի են երկուսը՝ մեկը՝ Ագրիպպա I-ի դառարը, մյուսը՝ Մավրիտանիայի Յուբա II-ի դուստրը և Անտոնիոսի ու Կլեոպատրայի թագ (մոր կողմից):

120 Ըրեառանք կրկին կառավարում էին հռոմեական պրոկուրատորները Ագրիպպա I-ի մահից հետո 44 թվականին:

121 Գիտական գործերով (a studiis), աղետագրերի գործերով (a libellis), դրամական գործերով (a rationibus) — Կլավդիոսի հիմնած արքունական գերատեսչությունների անվանումները:

122 Քվետտորական առաքնանք նշաններ ստացավ Նարկիսը Մեսսալինայի և Սիլանոսի դեմ մղված գործադաշնությունների համար, պրետորական՝ Պալլանտոսը ստրուկների դեմ ուղղված դեկրետի նախաձեռնության համար (Տակիրոս, Անն., XI, 38, XII, 53): Նարկիսի հարստությունը հասնում էր 4 միլիոն, Պալլանտոսինը՝ 3 միլիոն առատերցիումի (Դիոն, 60, 34. Տակիրոս, XII, 53):

123 Ապպիոս Սիլանոսը Կլավդիոսի աներն էր որպես Մեսսալինայի մոր՝ Դամիցիա Լեպիդիայի, երկրորդ (կամ երրորդ) ամուսինը:

144 Ապպիոս Սիլանոսը, զույգ Ցուլիաները և Պոմպեոսը սպանվեցին Մեսսալինայի զրպարտութեամբ, որը ի դեմս նրանց մրցակցուհիներ էր տեսնում, և Սիլանոսը անձնասպան եղավ, մեղադրված լինելով Ազրիպպիանայի զրպարտանքներով (49 թ. հունվարի 1-ին):

125 Չորս օր հունվարյան կալենդններից առաջ, այսինքն մինչև պաշտոնի ժամկետի պաշտոնական լրումը:

126 Մեսսալինայի հարսանիքին Կլավդիոսի մասնակցության մասին այլևս ոչ մի տեղ չի հիշատակվում:

127 «Փառահեղ հասակով, ամբողջովին ալեհեր», — նկարագրում է Կլավդիոսի հայտնելին «Ապոկոլոկինտոսիսը» (գլ. 5):

128 Մեկ ճյուղ — Տ. Վինիոս Ռուփոսը, հետագայում Գալբայի ժամիշխանը և 69 թ. կոնսուլը:

129 Քամի բաց թողնելու համար Կլավդիոսը կծու կերպով ծաղրվում է «Ապոկոլոկինտոսիսում», գլ. 4:

130 Խնջույքները, որ սարքում էին Մարսի սալիական քրմերը Վրեթիսդիր-Մարսի տաճարում մարտի 1-ի սրբազան տոնին, հռչակված էին իրենց փառահեղությունը (համտ. Հորացիոս, «Օդաներ», I, 37, 2):

131 Հայրասպանների մահապատիժներ — համտ. Օգ., ժանոթագր. 91. Սենեկան, «Ողորմածության մասին» I, 23, հավատացնում է, որ Կլավդիոսի օրոք հինգ տարվա ընթացքում այդ դաժան մահապատժին են ենթարկվել ավելի շատ հանցագործներ, քան մինչև Կլավդիոսը բոլոր դարերի ընթացքում:

132 Մահապատիժ ըստ հիբ սավոույթի — տե՛ս ներ., 49:

133 Կամ ուրիշների, այսինքն՝ այն հանդիսախաղերի ժամանակ, որոնք տալիս էր և որոնցում ընկածներին զատապարտում կամ ողորմում էր մեկ ուրիշ մագիստրատ:

134 Կեսոսյա ջարդերի ժամանակ, երբ երևելի հասարակայնությունը գնում էր նախաճաշելու, մնացողների զվարճության համար սարքում էին զլադիատորների արյունահեղ մարտ առանց վահանների ու զրահի. նման կոտորածի զայրույթով չի նկարագրությունը տալիս է Սենեկան 7-րդ նամակում:

135 Անվանակոչող, տե՛ս Օգ., ժանոթագր. 91:

136 Ինչպես ես պատմել եմ — գլ. 13,1-ում:

137 Մուսեոսիկների միջոցով — և ոչ թե էդիկտով, ինչպես որ սովորաբար արվում էր:

138 Թփված կերակրի վաճառքի մասին տե՛ս Տիր., ժանոթագր. 78:

139 Այդ շինծու եփմաբության հետաքրքրական նմուշ էր Գիրլֆելդը տեսնում 39 թ. Կլավդիոսի դրած արձանագրության մեջ՝ «Ցուլիա Գրուգիլլային, Գերմանիկոս Կեսարի գատերը, Տիրերիոսը կանգնեցրեց ի պատիվ ծնողի աստվածության» (CIL, XII, 1026), որտեղ նա, հորեղբայրը, «ծնող» է անվանում հարազատ եղբոր գատերը (բերված է Սմիլգայի կողմից):

140 Ըստ երևույթին, նույն պատմության տարբերակն է Տակիտոսի մոտ (Անն., XI, 38)՝ խնջույքի ժամանակ Կլավդիոսին զեկուցում են, որ Մեսսալինան մահացել է, և նա, շահարցնելով նույնիսկ, այդ սպանություն է թի ինքնասպանություն, շարունակում է կերուխումը:

141 Տելեգենիոս — անհայտ անձնավորություն է:

142 Ընթերցողի միջոցով — իր կակազելու պատճառով:

143 Քաղաքացիական խաղաղության հաստատում— 29 կամ 27 թվական մ. թ. ա.:

144 Ազինիոս Գալլոսի գրքերի մասին, որտեղ նա Կիկերոնի պերճախոսությունը համեմատում է իր հոր Ազինիոս Պոլլիոնի պերճախոսության հետ և գերասպատվությունը տալիս է վերջինիս, հիշատակում են՝ Պլինիոսը (Նամակներ, VII, 4), Քվինտիլիանոսը (XII, 1, 22), Հելլիոսը (XVII, 1, 1):

145 Երեք երե տառեր՝ F բաղաձայն V-ի համար (որը սովորաբար միանման էր գրվում ձայնավոր u-ի հետ), E՝ հունական յ համար և լատինական այն հնչյունի համար, որ միջին տեղ էր գրավում i և u միջև (optimus-optumus), C ps և bs զուգակցության համար: Առաջին երկու տառերը հանդիպում են Կլավդիոսի ժամանակի որոշ արձանագրություններում:

146 «Հանդգնությունը թշնամու...», ոտանավոր «Ողիսականից», XVI, 72, և XXI, 133:

147 Մուսեոմը Ալեքսանդրիայում— հունական ալիարհի գիտական կենտրոնը, գրողարանների, լաբորատորիաների, լսարանների և այլն կոմպլեքս, միավորված ինը մուսաների տաճարի շուրջը:

148 Նրա անունով— այսինքն «Կլավդիոս» (Ռոսը ստաջարկում էր նույնիսկ այդ անվանումը մտցնել տիքստի մեջ):

149 Անբառոյական են— ակնարկ Ազրիպպինայի շնանալուն Պալլանտոսի հետ:

150 «Վիրավորողը կրուժի»— գուշակի խոսքերը Միզիայի առասպելական Տելեփոս թագավորին, որը վիրավորվել էր Աքիլլեսի նվազիվ և որին պետք է բուժեր նիշակի ժանգը:

151 Իսկական Կեսար՝ երկիմաստություն— «արժանի այդ անվանը» և «հարազատ ժառանգ և ոչ թե որդեգրված, ինչպես Տիրերիոսը, Գայոսը և Ներոնը»:

152 Այդ կտակը Կլավդիոսի մահից հետո առանց ընթերցվելու հայտարարվել էր անվավեր (Տակիտոս, Անն., XII, 69):

153 Թույնը պատրաստել էր հռչակավոր Լուկուստան. Տակիտոսը պատմում է (Անն., XII, 66—67), որ թույնը Կլավդիոսին մատուցել էր Գալսուսը, իսկ երբ այն շեր ներգործել, ապա բժիշկ Քսենոփոնտեսը, իրր թե ցանկանալով փսխունք առաջ բերել, նրա կոկորդն էր մտցրել արագ ներգործող թույն քսված փետրիկ:

154 Կերակուրները ստուգող ստրուկի (praegustator) պաշտոնը հռոմեացիների մոտ մուծել էր Անտոնիոսը, արևելյան արքաների օրինակով:

155 Կլավդիոսի մահը—54 թ. հոկտեմբերի 13-ին:

156 Շատ պաշտոնատար անձինք— չափազանցություն է՝ մահացել էին մեկ քվեստոր, էդիլ, տրիբուն, պրետոր և կոնսուլ:

157 Չնայած ընդհանուր վրդովմունքին, abominantibus qui audiebant abominare— ըստ էության— կանխել վատ նախանշանը հարկ եղած բացականչությամբ («Եվ թող այդպես չլինի» և այլն):

ՆԵՐՈՆ

1 Անենորարբոս— բառացի՝ «պղնձամորուք»: Երկվորյակ պատանիներ— դիոսկուրոսներ Կաստորը և Պոլլուքսը. հաղթանակ— լատինների նկատմամբ Ռեգիլլյան լճի մոտ (498 թ մ. թ. ա.):

2 Սվետոնիոսը շփոթում է երկու Գրմիցիոսների՝ հորը, արվեստների և ալլոբրոգների հաղթողին 122 թ. և նրա որդուն, որը 104 թ. արիբուն է եղել և անցկացրել օրենք քրոմական կոլեգիումների համալրման մասին, իսկ 92 թ. ցենզոր է եղել Լիցինիոս Կրաստոսի հետ միասին (հմմտ. Քեր., 25):

3 Նրա որդին— հմմտ. Հուլ., 23—24, Կորֆինիոմը գրավելիս նրա ինքնասպանու-

թյան փորձի մասին տե՛ս Պլինիոս, 7, 53, 186 և Սենեկա, Բարեգործաբնաց մասին, II, 24:

4 Դոմիցիոսի հավատորմը պահպանում էր տիրապետությունը Հոնիական ժողովուրդի փրկիչական պատերազմի ժամանակ և եռապետներին մի քանի անգամ պարտության մատնեց (Դիոն, 48, 7):

5 Դոմիցիոսը Անտոնինոսին հարեց սոսկ Պերուզիական պատերազմի ժամանակ:

6 Ամենաբարձր դիքիս — կոնսուլության 32 թ. մ. թ. ա.:

7 Գնադը, այսինքն կտակատար — անձ, որին կտակողը շինծու կերպով վաճառում էր իր ունեցվածքը այն նկատառումով, որպեսզի սա իր մահից հետո կատարեր բոլոր վճարումները ըստ կտակի:

8 Դոմիցիոսը տրիումֆային զարդարանքներ էր ստացել այն քանի համար, որ հռոմեական զորավորներից առաջինն էր անցել էլլա գետը մ. թ. ա. 7 թվականին:

9 Ըստ երևույթին, Դոմիցիոսը օգտագործում էր լուծաշափոխներին որպես մակերեսներ զնումներ կատարելիս:

10 Քույրը — Դոմիցիա Լեպիդան, Մեսսալինայի մայրը: Այս տեղը վնասված է. Բյուխելերը այստեղ բացթողում է ենթադրում՝ «Զեոք էր առնում քույրը (և դասապարտեց Տիրերիոսը իր էղիկտում, որով) որոշեց վճարել...» և այլն:

11 Մեղադրվում էր... — 36—37 թվականներին. առիթը Ալբուցիլլայի դատավարությունն էր, որը մեղադրվում էր անառակության մեջ, պատճառը՝ այն, որ Դոմիցիոսը հետապնդվող Ագրիպպինա Ավագի փեսան էր (Տակիտոս, Անն., VI, 47):

12 Դոմիցիոսը վախճանվեց 39 թվականին:

13 Ներոնի ծնունդը — 37 թ. դեկտեմբերի 15-ին: Թարգմանության տարբերակ՝ «Մագոդ արեգակի ճառագայթները հազիվ թե ավելի շուտ շրիպան նրան, քան նա՝ գետնին» (տե՛ս Օգ., ժանոթագր. 11): Դիոնը հաղորդում է, որ երբ աստղագետը գրանից հետո նրան ասաց, որ մանուկը արթա կդառնա, քայք կսպանի իր մորը, Ագրիպպինան քացականչել էր. «Թո՛ղ սպանի ինձ, միայն թե թագավորի» (61, 2):

14 Մաքրումը կատարվում էր տղայի ծննդյան իններորդ օրը և գրա հետ մեկտեղ նրան անուն էին տալիս:

15 Կլավդիոսի անունը Տիրերիոս էր. Ագրիպպինան այն մերժեց, և Ներոնը անվանվեց Լուկիոս:

16 Հմմտ. Դիոն, 61, 2. «Մանուկ ժամանակ նրա պարանոցին գտան օձի փոխած շապիկ և դուշակներն ասացին, որ նա մեծ իշխանություն կժառանգի մի ծեր մարդուց, քանզի, ըստ ընդհանուրի կարծիքի, օձերը շապիկը փոխում են ծերությանից»: Հմմտ. Տակիտոս, Անն., XI, 11:

17 Տրոյական խաղերի մասին տե՛ս Հուլ., ժանոթագր. 98:

18 Տասնմեկ տարեկանում — սխալ է, 50 թ. Ներոնը բոլորում էր տասներեք տարին:

19 Փայոս Կեսարին, այսինքն՝ Կալիգուլային:

20 Ամենաբարձր — ասես չէր ընդունում Ներոնի արգեզրված լինելը Կլավդիոսի կողմից:

21 Լեպիդայի մասին հմմտ. Տակիտոս, Ան., XII, 64. «Լեպիդան, կրտսեր Անտոնինյի՝ Յգոստոսի թոռնուհու, դուստրը, Ագրիպպինայի մորաքրոջ աղջիկը և նրա ամուսին Գնեոսի հարազատ քույրը, իրեն ազնվատոհմությանը նրան հավասար էր համարում: Եվ գեղեցկությամբ, տարիքով, հարստությամբ էլ նրանք շատ չէին տարբերվում՝ երկուսն էլ անամոթ, անվանարկված, խիստ բնավորության տեր, նրանք նույնքան էին մրցակցում միմյանց հետ արատներում, որքան ճակատագրի շնորհներում, քայք ամենադաժան

պայքարը գնում էր այն բանի համար, արդյոք մայրը թե՛ մորաքույրը ավելի շատ զոթություն կունենա ներոնի մոտ»:

22 Անճառ վազք, ռազմական ուսուցում, սրը Օգոստոսի ժամանակներից զորականները կատարում էին ամիսը երեք անգամ:

23 Բոնոնիայի բնակիչները դիմել էին հրդեհից հետո իրենց քաղաքին օգնություն ցույց տալու համար, հողոսցիների և իլիոնացիների մասին տե՛ս. Կլավ. ժանոթագր. 102:

24 Լատինական տոնահանդեսների մասին տե՛ս. Հուլ., ժանոթագր. 187, և Կլավ., ժանոթագր. 20:

25 Ցերեկվա 6 և 7 ժամերի միջև — ետկեսօրեի մեկ ժամին:

26 Կլավգիթոսին ձոնված գովարանական ճառ կազմել էր Սենեկան («Իշխանությամբ օժտվածներից ներոնը առաջինը կարիք զգաց օտարի պերճախոսության...» — Տակիրտոս, Անն., XIII, 3):

27 Հարկերը՝ կապալառուների ապօրինի հարկերի և ապառքների վերացում, ստրուկների վաճառքից զանձվող 4 % - ոց հարկի վերացում (երևութական, քանի որ համապատասխանաբար ստրուկների գները բարձրացվեցին. Տակիրտոս, Անն., XIII, 31):

28 Առանց հիշեցման — տե՛ս Օգ., ժանոթագր. 141:

29 Մինչ այդ համաժողովրդական մաղթանք նշանակվում էր սոսկ զորավարների պատվին՝ մեծ հաղթանակներից հետո (հմմտ. Հուլ., 24, 3):

30 Պատանեկան հանդիսախաղերը կատարում էին ոչ թե պրոֆեսիայով դերասանները, այլ սիրողները, որը դյուրացե՛ում էր կաշտեր անդրաճիկ հչույթը բնմում:

31 Հեծյալների համար հատուկ տեղեր նախկինում առանձնացվում էին սոսկ թաւորում (Կլավ., 21, 3):

32 Լարախաղաց-փղերի մասին տե՛ս Գալ., 6:

33 Տոգատա — հռոմեական կենցաղից վերցված կատակերգություն («տոգա հագած անձանցով»)։ նրանցից լավագույնները՝ հորինված մ. թ. ա. II դարի վերջին, երկար ժամանակ պահպանում էին ժողովրդականություն:

34 Տեսուերներ — «գնդիկներ, որոնց վրա զրված էր, թե որքան և ինչպիսի բարիք է հասնում ստացողին» (Դիոն, 62, 18):

35 Նախաբեմի բարձունքից — օթյակից, որը կողքից ելնում էր բեմի առաջնամասի վրա:

36 Շովամարտը նկարագրում է Դիոնը, 61, 9. «Թատրոնի մեջ, որտեղ նա ներկայացում էր ցույց տալիս, հանկարծակի բաց թողնվեց ծովային ջուր, որի մեջ նույնիսկ ձկներ ու ծովային կենդանիներ էին լողում, և այդ ջրազազանում ծովամարտ սարքվեց պարսիկների ու աթենացիների միջև, իսկ դրանից հետո ջուրը խփույն բաց թողեցին, և ցամաք հատակի վրա կրկին միսյանց դեմ ելան մարտիկները, արդեն ոչ թե մեկ, այլ ջրկատ առ ջրկատ»:

37 Ռազմական պար (պիրրիֆա) — ինչպես Հուլ., 39, 1:

38 Էֆեբոսներ — տե՛ս Օգ., ժանոթագր. 236:

39 Պասիֆայան, Կրետեի առասպելական Մինոս թագավորի կինը, բորբոքվեց սիրով ցուլի նկատմամբ և նրանից ծնեց Մինոտավրոսին՝ կիսամարդ-կիսացուլին:

40 Իկարի վերարձրյալ առասպելը բավական հայտնի է:

41 Կայսեր օրյակը ամֆիթատրոնում գտնվում էր բնամհարթակը հանդիսատեսներից բաժանող պատի վերին մասում. այդ ամենաշահավետ տեղերը հատկացվում էին պատվավոր հասարակայնությանը:

42 Սափրեց մտռուքը— այդ տեղի ունեցավ ոչ թե ներոնիաների, այլ Յուզենալիաների ժամանակ:

43 Հայաստանի պրետիկտորատի համար Հոռմի և Պարթևաստանի միջև մղվող երկարատև պայքարը ավարտվեց պարթևների հաղթանակով՝ Հայաստանի թագավոր դարձավ պարթևական արքայազն Տրդատը, և միայն հռոմեական ազգային հպարտությունը բավարարելու համար վերապահություն արվեց, որպեսզի Տրդատը արքայական իշխանություն ստանա Հոռմում ներոնի ձեռքից:

44 Խույր, մի տեսակ փափուկ թասակ, որը սովորական զլխարկ էր Արևելքում:

45 Ականակուտ ապարոշը արքայական աստիճանի նշան էր:

46 Խատրոնում— Պոմպեոսի թատրոնը հատկապես Տրդատի ընդունելության համար ամբողջովին ոսկեզօծված էր (Պլինիոս, 33, 16, 54):

47 Դավինիներ մատուցեց— ասես տրիումֆից հետո— Իմպերատորի տիտղոսի և Յանուսի տաճարի մասին տե՛ս Օգ. վերաբերյալ ծանոթագր., 13, 2 և 22:

48 Ներոնի կոնսուլությունները— 55, 57, 58, 60 թթ. հինգերորդ կոնսուլության մասին «տանց ընկերակցի» 68 թվականին, տե՛ս զլ. 43

49 Ազատարձակների որդիների մասին հմմտ. Կլավ. 24:

50 Կանինիոս Թեբիլոսի հետ դիպվածը— հմմտ. Հուլ., 76, 2, որտեղ, սակայն, կոնսուլի անունը տրված չէ:

51 Նորովի— 64 թ. հրդեհից հետո, հրկիզված Հոռմի պլանավորման և կառուցատնտեսման բարելավման այդ և մյուս միջոցառումների մասին հմմտ. Տակիտոս, Անն., XV, 43:

52 Ջրանցքով— տե՛ս զլ. 31, 3:

53 Նախաճաշիկի բաժանում, sportulae («զամբյուղների մեջ») — տե՛ս Կլավ., ծանոթագր. 84:

54 Հոռմի հրկիզման մեջ մեղադրված ֆրիստոնյաների հետ հաշվեհարդարի մասին տե՛ս Տակիտոս, Անն., XV, 44:

55 Մեշկատակների ախոբի մասին հայտարարվել էր 56 թ., սակայն շուտով վերացվել էր. հմմտ. զլ. 26, 2:

56 Մաֆուր տախտակների վրա, ստորագրված վկաների կողմից, կտակողը հետո դրում էր ժառանգորդների անունները, որոնք վկաները շպեռք է իմանային:

57 Դատապաշտպանների վարձատրությունը վերացված էր Ցինցիոսի օրենքով մ. թ. ա. 204 թվականին, որը հաստատել էր Օգոստոսը մ. թ. ա. 17 թվականին: Բայց այդ օրենքը այնքան ոչ պաշտոնական շրջանցումներ և շարաշահումներ էր ծնել, որ արդեն Կլավդիոսի օրոք վերացվեց:

58 Դատավորական տեղի շուրջը եղած նստատեղիները տրամադրվում էին այն անձանց, ովքեր շահագրգռված էին դատավարությամբ, մնացյալ հասարակությունը կանգնած էր մնում:

59 Թեկուպերատորներ— բոլոր դասերին պատկանող մի քանի հոգուց կազմված դատական հանձնաժողով, որոնք անդամներին նշանակում էր պրետորը և որոնք արագացված ժամկետում տարատեսակ գործեր էին քննարկում, գերազանցապես պրովինցիայի բնակիչների գանգատներով:

60 Բրիտանիայում կրած պարտության մասին տե՛ս ծանոթագր. 145:

61 Տակիտոսը (Անն., XV, 36) ասում է, որ վեստայի տաճարը մտնելիս ներոնին հանկարծական երկյուղ համակեց, և նա հետաձգեց Եգիպտոս կատարելիք ուղևորությունը, հայտարարելով, որ չի ուզում իր բացակայությունով վշտացնել քաղաքացիներին:

60 Խորմասով անցնելիք ջրանցքի մասին տե՛ս Հուլ., ժանոթագր. 123:

61 Կասալից դռներ — Ճորա պահակը կողկասում. արշավանքի նպատակն էր Աղվանքի և մյուս անդրկողկասյան մարզերի հնազանդեցումը:

62 Հստ Պլինիոսի (19, 33, 108), ձայնը պահպանելու համար ներոնը յուրաքանչյուր ամիս որոշակի օրերի պաս էր պահում, սնվելով միայն յուղի մեջ կարատված պրասով:

63 Այգաթիտի բովանդակություն ունեցող Ջուլիան անունով քերական առած բերում են Հելլիոսը (XIII, 81) և Լուկիանոսը («Հարմունիդ», 1):

64 «Բզզոց», «փողոցակիկներ», «աղյուսիկներ» — «առաջին անվանումը, ըստ երևույթի, տրված է ըստ հնչյունի... երկրորդը և երրորդը — ափերի ձևով, կորացած կամ ուղղված» (ԻռլՖ):

65 Առանց մատանիների զիրգ ձեռքերից — թարգմանություն ըստ Մադլիգի ճշտման, որն ընդունել է Իմը:

66 Ժամկետից... շուտ. սխալ է՝ առաջին ներոնիաները եղել են 60, երկրորդը 65 թվականին: Ի խուսափումն խայտառակության, սենատը հաղթապասակ առաջարկեց ներոնին առանց մրցության, բայց ներոնը հայտարարեց, որ իր տաղանդը զիջողության կարիք չի զգում (Տակիտոս, Անն., XVI, 4):

69 Նախաբանի խոսքեր՝ «Տյարք, լսեցեք ինձ բարեհաճությամբ» (Դիոն, 61, 20):

70 «Նիոբան» — Դիոնը տալիս է երկու ուրիշ երկերի՝ «Ատտիսի» և «Բաքոսուհիների» անունը:

71 Մինչև տասներորդ ժամը — արևմուտից երկու ժամ առաջ:

72 Երգել ողբերգություն (և հետո պլ. 54-ում պարել սղրերգություն) — այդպես էր սովորում ելույթների մասին այն ներկայացումներում, որոնք լայն հռչակ էին ստացել հելլենիզմի և կայսրության ժամանակներում և իրենցից ներկայացնում էին հին ողբերգությունների յուրատեսակ օպերային և բալետային մշակումներ:

73 Կանական, քամու աստված էլի դուստրը, երեխա էր բերել եղբոր հետ ունեցած սուրյունապղծական սիրուց և ինքնասպանություն էր գործել հոր հրամանով. Օրեստեսի, Էդիպի և Հերկուլեսի վերաբերյալ առասպելները, ովքեր խելագարության մեջ սպանել էին իրենց երեխաներին, բավականաչափ հայտնի են: Նրանց ընդհանուր մոտիվները՝ արյունապղծության և հարազատների սպանության մասին, չէին կարող ժամանակակիցներին չհիշեցնել կայսեր վարքը:

74 Կրկեսի «կանաչներ» մասին տե՛ս Կալ., ժանոթագր., 142:

75 Հեկտորի մասին — քանի որ Հեկտորին, ըստ ավանդության, նույն ձևով էր քարշտվել Աքիլլեսը իր մարտակառքի հունից: — Դիոնը (61, 6) հաղորդում է, որ ներոնի հովանավորության պատճառով կառավարները գոռոզամտացել էին և իրենց համար այնպիսի անլուր պարզևներ սկսեցին պահանջել, որ մեկ պրետոր, Ավլոս Ֆաբրիցիոսը հրաժարվեց իր խաղերին նրանց հրավիրելուց և մարտակառքերի մրցարշավի փոխարեն շների մրցավազք կազմակերպեց:

76 Կասիոպա — քաղաք Կորկիրա կղզում, առաջիններից մեկը Հռոմից Հունաստան տանող ծովային ճանապարհին. նրա հովանավոր-աստվածությունն էր Զևս Կասիոսը:

77 Կրկնել տոնախմբությունները — այսպես 211-րդ օլիմպիական տոնակատարությունները, որոնք ընկնում էին 65 թվականին, ներոնի համար հետաձգվեցին կամ կրկնվեցին 66 թվականին (ըստ Պավսանիոսի, X, 36, հենց այդ տոնակատարության ժամանակակից գրառումները չեն պահպանվել):

78 Հստ Դիոնի (63, 12 և 19), Հելիոսին, բայց և այնպես, հաջողվեց արագացնել

կայսեր վերադարձը, անձամբ հայտնվելով նրա մոտ և վախեցնելով նրան դավադրության մասին լուրերով:

79 Պարխայներ և դարպասներ— թատերական շինություն (որն այստեղ համարվում է անվանված):

80 Աեոֆերով— թաշկինակից օգտվել շէր թույլատրվում:

81 Մեծ առնահանդեսների համար մունետիկները նույնպես մրցութային էին ընտրվում:

82 Ազատուրյունը— այսինքն տեղական ինքնավարությունը և ազատ լինելը տարբերից հետագայում այն հույներից նորից խլից Վեսուասիանոսը, հեզնանքով նկատելով, հույները ետ են վարժվել ազատ լինելուց:

83 Իսթմոսական խաղերի օրը, ինչպես երբեմնի Փլամինինեսը, որ հույներին ազատ հռչակեց մակեդոնական իշխանությունից (196 թ. մ. թ. ա.):

84 Ալքանոմ— արիստոկրատական ամառանոցային վայր Հոմի մոտ, որն I դարում աստիճանաբար անցավ ի սեփականության կայսրերի:

85 Օլիմպիական պսակը ձիթենու տերևներից էր, պիթիականը՝ դափնուց:

86 Մեծ կրկեսի մուտքի կամարը քանդվեց, որպեսզի թափորին լայն ճանապարհ տրվի, հետագայում Դոմիցիանոսը այստեղ նոր կամար կառուցեց ի պատիվ Վեսպասիանոսի և Տիտոսի:

87 Ըստ Դիոնի (63, 21), Ներոնը մեխել էր իր պսակները Հոմի կրկեսի եզրատական կոթողին (տե՛ս Կալ., 20, 3), և պարզվել էր, որ դրանք 1808 հատ են:

88 Մեկ սենատոր (ավելի ճիշտ՝ Iaciclavius, սենատորական ընտանիքից, բայց դեռևս ևս պաշտոն չգրադեցրած երիտասարդ) — նրա անունն էր Հուլիոս Մոնտանոս. ճանաչելով կայսրին, նա հիմարություն ունեցավ երևան հանել այդ և ստիպվեց մեռնել (Տակիտոս, Անն., XIII, 25, 56 թ. տակ):

89 Լնակի վրա — ժողմարտերի համար, Օգ., 43, 1 և Տիր., 72, 1:

90 Մետաֆսեդեի բաշխումով — miteita, փաղաքշական mitra, գլխակապ բառից:

91 Արֆայական առնվից — իբր թե Պերգամոսի Ատտալիդներից:

92 Թափորի առջևից տարվող ջահը հարսանեկան ծեսի անպայման պատկանելությունն էր:

93 Սիգիլարիաների փողոցը հիշատակվում է նաև Կլավ., 18:

94 Կապը մոր հետ — այդ փորձի նախաձեռնությունը Ֆարխոս Ռուստիկոսը վերագրում էր Ներոնին, իսկ Կլավիոս Ռուստոսը և նրանից հետո պատմաբանների մեծ մասը՝ Ագրիպպինային իրեն, որն ուզում էր ավելի ամուր որդուն ենթարկել իրեն (Տակիտոս, Անն., XIV, 2):

95 Թշնամիները — Սենեկան Ակտայի օգնությամբ:

96 Տակիտոսը, մանրամասն նկարագրելով Ներոնի այդ հարսանիքը, «ամուսնուն» ոչ թե Դորիֆորոս է անվանում, այլ Պյութագորաս (Անն., XIV, 65):

97 Դայոսի մասին տե՛ս Կալ., 37: Ներոնն ինքը միայն զինվորների ընծաների վրա 2200 միլ. սեստերցիում էր ծախսել (Տակիտոս, Պատմ., I, 20):

98 Պոպպեայի ջորիների ոսկյա պայտերի և ապուլիական կանուղիում քաղաքի նուրբ բրդի մասին հիշատակում է նաև Պլինիոսը:

99 Մավրիտանական հեծյալներ — Mazaces (ցեղերից մեկի անվանումը):

100 Զենոդորոսի ձեռքի արդյունք Վիթարի արձանը, որը գերազանցում էր, ըստ ավստրոլոգիան, նույնիսկ նշանավոր «աշխարհի հրաշալիքը»՝ Հոդոսի հսկային, 100 անաշափ բարձրություն ուներ:

101 Պալատի սահմաններում ժանրանկար ձևով մի ամբողջ աշխարհ պատկերելու ձգտումը միայն ներոնին բնորոշ չէ. կարելի է հիշել Ադրիանոսի Տիրուրական վիլլան նրա «Տեմպեական հովտով», «Կանոպոսով» և այլն: Տակիտոսը պահպանել է Ոսկե տան կառուցողների՝ Սևերոսի և Ցելերոսի, անունները, որոնք «օժտված էին կայսերական փանձարանը ծաղրելու և արվեստով այն բանին հասնելու տաղանդով ու համարձակու-
թյամբ, ինչ որ մերժել էր բնությունը» (Անն., XV, 42):

102 Պատվում էր, ըստ երևույթին, սոսկ վերնասենյակի առաստաղը, որը սարքված էր աստղազարդ գմբեթի ձևով:

103 Միզեմայից մինչև Ավերնուսի լիճը, այսինքն շուրջ 7 կմ հեռավորության վրա:

104 Բայցը գտնվում էր այդ տարածության կես ճանապարհին:

105 Սկսված ջրանցքի հետքերը մնում էին դեռևս Տակիտոսի օրոք (Անն., XV, 42):

106 Քվինվերեմիսներ — խոշոր նավեր, հինգ շարք թիերով:

107 Հեծյալ — Ցեզելլիոս Բաստոսը Կարթագենից, խելագարված մի մարդ, որը ինք-
նասպանություն գործեց, երբ որոնումները զուր անցան (Տակիտոս, XVI, 1):

108 Առանց ակնհայտ պատճառի — այսինքն պատարձակներ, որոնց պատկանելու-
թյունը տվյալ ընտանիքին (Հուլիոսների, Օկտավիոսների, Կլավդիոսների, Դոմիցիոսնե-
րի, Լեպիդոսների և այլն) չի կարելի ճիշտ երևան հանել:

109 Աներախտագիտությունը կայսեր նկատմամբ արտահայտվում էր ժառանգության
նրան կտակված բաժնի չափազանց քիչ լինելում:

110 Ցանկացած... առաքները, այն դեպքում, երբ նախկինում դասի ենթակա գործո-
ղությունները, թեկուզ և ամենամահձեթ, բայց և այնպես թվարկվում էին օրենքում
(հմմտ., Տիր., 58):

111 Կնեել տվեց — և, իհարկե, բռնադրավեց ապրանքները:

112 Հիմարություն անել և այլն — բնագրի երկիմաստության ազատ թարգմանություն
(morari eum desisse inter homines producta prima syllaba iocaretur), որանդ
morari նշանակում է «հապաղել», իսկ morari — «հիմարություն անել»:

113 Դիակիզման խարույկի վայրը համարվում էր զրեթե նույնքան սրբազան, որքան
և աճյունի թաղման վայրը:

114 Ազրիպպինան, չգտնելով ներոնի մոտ բավարար հնազանդություն, սպառնացել
էր նրան դիմել Բրիտանիկոսին որպես ավելի օրինական ժառանգի. այդ էլ կործանեց
Բրիտանիկոսին: Նրա մահը խնշույթի ժամանակ Ազրիպպինայի և Օկտավիայի աչքերի
առջև՝ վստ կերպով նկարագրել է Տակիտոսը (Անն., XIII, 15—17):

115 Հուլիոսի օրենքը նախատեսում էր մահապատիժ սպանության համար, այդ
թվում նաև թունավորման:

116 Դիոնը (61, 12) Ազրիպպինայի սպանության նախաձեռնող անվանում է Սենե-
կային: Տակիտոսը (Անն., XIV, 3) թունավորման մասին հիշատակում է սոսկ որպես
մտահղացման և ոչ փորձի, իսկ «մանրակտոր առաստաղի» մասին բոլորովին է լռում:

117 Մաս-մաս եղող նավը, ըստ Տակիտոսի, հնարել էր Անիկետոսը, Միզեմյան նա-
վատորմի ծովակալը, ըստ Դիոնի՝ կառուցվել էր այն մեքենայի օրինակով, որը ներոնը
և Սենեկան տեսել էին թատրոնում:

118 Քվինվատրիումներ — տե՛ս ծանոթագր. Օգ., 71, 3:

119 Կրթուրեքական թիանավ — տե՛ս Օգ., ծանոթագր. 39:

120 Բավլի — ամառանոցային վայր Բայքի մոտ, որտեղից Ազրիպպինան պատրաստ-
վում էր ճանապարհը շարունակել Անցիում, որտեղ նա ապրում էր: Ի միջի այլոց, ըստ
Դիոնի, բուն տոնահանդեսը տեղի էր ունեցել Բավլքում:

121 Ճողոպրել չողալով. Ազրիպպինայի վրա փլվեց նավախցիկի կապարե ծածկը՝ բայց այն պահեցին մահիճի բարձր պատերը, նավի հատակը բացել չհաջողվեց, նավը միայն թերվեց, և Ազրիպպինան նրան ուղեկցող Ացերրոնիայի հետ ջուրն ընկավ. Ացերրոնիան սարուպահար սկսեց բղավել՝ «Ծո միակալի մայրն եմ, փրկեցեք ինձ» — նրան թիրոզ ծեծամահ արեցին, Ազրիպպինան լուռ էր, նրան հաջողվեց լողալով հեռանալ և ձկնորսական նավակով հասնել Բավլթ: Սպանեց նրան այդ նույն Անիկետոսը, որ հնարձի էր չհաջողված նավը (Տակիտոս, Անն., XIV, 5—8):

122 Ըստ Դիոնի, 61, 14, Ներսնը, դիտելով Ազրիպպինայի դիակը, ասել էր. «Ծո չգիտեի էլ, որ ես այդպիսի գեղեցիկ մայր ունեմ»:

123 Հորաբոջ — Դոմիցիա Լեպիդայի (հմմտ. գլ. 7):

124 Պոպպեայի հոր անունը Տիտոս Օլլիոս էր, առաջին ամուսնու՝ Ռուպիոս Կրիսպինոսը երա երկրորդ ամուսինը Սավլիոս Օտոնն էր, տե՛ս Օտ., 3:

125 Ատտիկոս Վեսպիանոսը մահապատժի ենթարկվեց Պիզոնի դավադրությունը ճնշելիս, թեև նրան մասնակցություն չէր ունեցել:

126 Կնոջ կոչում, uxoria ornamenta (կատակ է՝ ըստ triumphalia ornamenta-ի այլն նմանություն) :

127 Ախորեց — սկզբում Կամպանիա, ապա Պանդատերիա կղզին:

128 Անիկետոսը իր ցուցմունքից հետո «աքսորվեց Սարդինիա, որտեղ բարեկեցիկ կյանք էր վարում և մահացավ իր մահով» (Տակիտոս, Անն., XIV, 62):

129 Պլավլտիոսը այլևս ոչ մի տեղ չի հիշատակվում. կարող է պատահել, որ Սվետոնիոսը նրան շփոթում է Ռուբելլիոս Պլավտոսի, մոր կողմից Տիբերիոս կայսեր թոռնորդու հետ. նրան իսկապես, ըստ լուրերի Ազրիպպինան փորձում էր հակադրել Ներոնին, բայց նա սպանվեց ոչ թե Հոմոնում, այլ Ասիայում (Տակիտոս, Անն., XIII, 19. XIV, 22 և 58—59):

130 Սենեկան հեռացավ իշխանությունից 62 թ. և նրան ստիպեցին ինքնասպանություն գործել 65 թվականին, մանրամասները Տակիտոսի մոտ (XIV, 52—56 և XV, 60—65):

131 Ազատաձակներ — հմմտ. Տակիտոս, XIV, 65. «տանգամահ արեց թույնով... Պալլանտոսին, որի երկարաձիգ ծերությունը հսկայական դրամ էր պահում նրա ձեռքում»:

132 Տակիտոսը երկու գիտաստղեր է հիշատակում Ներոնի օրոք՝ 60 և 64 թվականներին:

133 Պիզոնի դավադրության մասին տե՛ս Տակիտոս, Անն., XV 48—74:

134 Վիմիցիանոսի դավադրության մասին ավելի ոչինչ հայտնի չէ:

135 Հմմտ. Տակիտոս, XV, 68. ցենսուրիոն Սուլպիցիոս Ասպերոսի մասին՝ «Ներոնի հարցին, թե ինչու էր Ասպերոսը մտադրվել սպանել նրան, նա կարճ պատասխանել էր, որ չէր կարող այլ կերպ օգնել նրան նրա արատներում»:

136 Ճաշաբանները կամ կրպակները հաճախ տեղավորված էին լինում մեծ տների դեպի փողոց նայող սենյակներում, բնակելի կացարաններին միացված չէին և տանտիրոջ կողմից վարձով էին տրվում:

137 Նմանատիպ որկրամուկները օգտվում էին ոչ միայն Ներոնի ուշադրությունից, Ավրելիանոսն ուներ մի որկրամուկ, «որը մեկ աչքամ ճաշկերույթի ժամանակ կերավ մի ամբողջ վարազ, հարյուր հազ, մի ոչխար և մի խոնկոր և խմեց, բերանին ձագար դնելով, մեկ տակառից ավելի» (Վուլխիոս, Ավրելիանոս, 50):

138 Կայսեր և սենատի միջև ողջույններ փոխանակելիս համբույրների մասին հմմտ. Պլինիոս, Ներբողյան առ Տրայանոս, 23:

139 Երբ ես մեռնեմ... Կնթադրյալ ոտանավոր Եվրիպիդեսի կորսված ողբերգություններից՝ Դիոնը (58, 26) այդ ոտանավորը վերագրում է Տիրերիոսին:

140 Հրդեհը սկսվեց Մեծ կրկեսի մոտակայքի կրպակներից և ընդգրկեց գրեթե ամբողջ քաղաքը. ըստ Տակիտոսի, 14 թաղամասերից երեքը այրվեցին հիմնահատակ, յոթը՝ մասամբ, և միայն չորսը զերծ մնացին (ի միջի այլոց, հնագետները այդ տվյալները չափազանցված են համարում):

141 Մեկեճասի աշտարակը Ներոնի էսքվիլինյան այգիներում, ըստ երևույթին, միացված էր Պալատինումի հետ «միջանցիկ պալատի» միջոցով (գլ. 31):

142 «Տրոյայի խորտակման» մասին երգը, դատելով ըստ Ցուվենյաի (VIII, 220), հորինել էր Ներոնն ինքը:

143 Նվիրատվություններ — Հոմի վերականգնման համար:

144 Այդ աղետներից զատ Տակիտոսը հիշատակում է 65 թ. մրրիկը, որն ամայացրել էր Կամպանիան:

144 ա Թաղման ցուցակները (ratio Libitinae) կազմվում էին վեներա-լիբիտինայի տաճարում, որտեղ վաճառվում էին թաղման պիտույքները:

145 Հոմեհացիները Բրիտանիայում պարտություն կրեցին 61 թ Բուուդիկկա թագուհու գլխավորությամբ ապստամբած իցենների ցեղից. ավերվեցին Քամուլոգուն և վերուլամիում քաղաքները, սպանվեց (ըստ Դիոնի) 80 000 մարդ:

146 Արևելքում 62 թ. Տեգենիոս Պետոսը Հայաստանում շրջապատվեց պարթևների կողմից և հարկադրված եղավ թողնել այդ երկրամասը նվաստացուցիչ պայմաններով. բայց լուրերն այն մասին, որ հոմեական զորքը անցել է լծի տակով, կեղծ դուրս եկան (Տակիտոս, Անն., XV, 15):

147 Հաշվիր... — Թարգմանություն ըստ Բյուխելերի մեկնաբանության. հունական տառերի, որոնք կազմում են «Ներոն» անունը, թվական նշանակության գումարը (1005) հավասար է «մայրասպան» բառի թվական նշանակության գումարին: Հին հրատարակիչները տալիս էին հետևյալ ճշտումը՝ «Ներոն» մոր հարձը և սպանողը»:

148 Նա տանջամահ արեց հորը.. — բնագրում նույն բառախաղն է, ինչ որ և Օգ., 12. ոուսական համանմանությունը ընտրել է Իլլինսկին:

148 Վեյֆ — էտրուսկական քաղաք՝ Հոմից ոչ հեռու. նրա նվաճումից հետո (386 թ. մ. թ. ա.) Հոմում լուրեր էին պտտվում այնտեղ փոխադրվելու մասին:

150 Նավայլիոս, ըստ տրոյական պատերազմի վերաբերյալ առասպելի, հույների կողմից Տրոյայի տակ անմեղ սպանված Պալամեդեսի հայրն էր. վրեժխնդիր լինելով որդու համար, նա վերադարձող հունական նավերը կրակե ազդանշաններով բերեց դեպի ժայռերը և կործանեց:

151 Բրիտանիան նույն 61 թ. Ներոնին վերադարձրեց Սվետոնիոս Պավլինոսը, շարդելով Բուուդիկկային: Հայաստանը անվանապես Հոմի հովանու տակ վերադարձավ Տրոատի օրոք:

152 Ձկները դուրս կհանեն — ակնարկ Պոլիկրատեսի մատանու վերաբերյալ պատմըվածքին, Հերոդոտոս, III, 41—43:

153 Ապոլլոնիոս Տիանացին Փիլոստրատեսի (V, 3) մոտ ասել էր, որ Ներոնը կիֆարահարի արվեստին ավելի վատ է տիրապետում, քան որևէ ուրիշ արվեստի, բայց թագավորելու արվեստին էլ ավելի վատ է տիրապետում, քան կիֆարահարի արվեստին:

154 Կալսեր գրադված է — այսինքն՝ չի կարող հանդես գալ բնում և սովեր նետել դերասանի վրա:

155 Պաշտանից հանեց կոնսուլներին— 68 թ. կոնսուլներէն մեկը, ի միջի այլոց, Սիլիոս Իտալիկոսն էր, Պունիկական պատերազմի մասին պոեմի հեղինակը:

156 Ավագը փոռւմ էին արենային, և քմրիշները մրցումների ժամանակ ավազաշաղախ էին լինում. նեղոսի մանր ավագը այդ դեպքում հատկապես էր գնահատվում:

157 Սովորաբար ատլաններն էին պլիսակատարին փուփուկներ կրում:

158 «Հիմա վա՛յ քեզ» (et traderet tandem). բոլոր մեկնաբանութիւններն էլ անբավարար են, թարգմանութիւն ըստ իմաստի:

159 «Արեցի ես ալն ամենը...» — թարգմանութիւն ըստ Հովարդի ճշգրտման, որը վերականգնում է հեքզամետրը: Պարկ — այն, որով ջրամուլն էին անում հայրասպաններին (տե՛ս Օգ., ծանոթագր. 91):

160 Կալլական աֆաղաղին՝ լատիներեն gallus միաժամանակ նշանակում է և՛ «աքլոր» և՛ «գալլ»:

161 Vindex անունը լատիներեն նշանակում է «Պաշտպան» — դատավարութիւն դեմքերից մեկը:

162 Պոմպեոսի թատրոնը զարդարված էր 14 արձանով, որոնք պատկերում էին Պոմպեոսի կողմից պարտութիւն մատնված ժողովուրդներին:

163 Իսպանական երիվարը, «աստուրիկոնումը», աչքի էր ընկնում հատուկ տեսակի վարդով:

164 Պլուտոնի՝ մեռյալների թագավորութիւն տիրակալի, կողմից Պրոգերպինայի տոնանգումը շար նշան էր:

165 Շրջեց սեղանը — Պլուտարքոսը («Գալլրա» 5) դա վերագրում է Գալլրայի անջաման տեղեկութիւնը:

166 Ներոնի ջարդած զավաթները ճերմակ սրյուրեղային» ապակուց էին (Պլինիոս, 37, 2, 29):

167 Սնրփլիթաի այգիները — Հոմերի հարավային ծայրամասում, Օստիա տանող ճանապարհին:

168 «Արդ միթե՞ այգիքն դառնաղետ է մահը» — Տուրնոսի խոսքերը «էնեականում», XII, 646 (թարգմ. Մ. Սողովյովի):

169 Quis ուղեկիցներ — ըստ Գիոնի, միայն երեք՝ Փանը, էպաֆրոդիտեսը և Սպորոսը:

170 Decocta, decoceta — այդպես էր կոչվում ձյունով սառեցրած եռացրած ջուրը, որ որքում էր խմել ներոնը:

171 Uxor — տապանաքարի համար, ջաբ, որպէսզի լողացնեն դիակը, փայտ՝ որպէսզի այրեն:

172 «Ձիերի սրընթաց...» — «Իլիական», X, 535 (թարգմ. Ն. Գնեդիչի):

173 Այգերթաբ (այդպես կոչված Պոմպեոսի և Լուկուլոսի այգիների համար) — այժմ Մոնտե-Պինչո:

174 Էտրուսկական մարմարիներից, lunensis — ի նկատի ունի այժմյան Կարրարայի մոտ գտնված Լունա քաղաքի ճերմակ մարմարիտը:

175 Նմանատեսակ սանրվածք միայն կանայք էին ունենում:

176 Ճաշկերույթի մետաֆս զգեստ (synthesis) տղամարդիկ սովորաբար հագնում էին միայն Սատուրնակիաների ժամանակ:

177 Ճիշտ շեն նրանք... հմետ. Տակիտոս, Անն., XIV, 16. «Նա հավաքում էր իր մոտ մարդկանք, ովքեր կարողանում էին բանաստեղծութիւններ հյուսել, բայց որոնք դեռևս համբավ չէին ձեռք բերել այդ արվեստում: Նրանք նստում էին միասին և սկսում էին

միացնել իրենց հետ բերված կամ հենց տեղում հորինված առգերը, իսկ նրա պատահական խոսքերը լրացնել մինչև ոտանավոր ստացվելը. այդ մասին է խոսում և բանաստեղծութունների բուն տեսքը, որոնցում չկա ոչ պոռթկում, ոչ ոգեշնչվածություն, ոչ միասնական շունչ»:

178 Կպարի— տե՛ս ծանոթագր. 72:

179 Ապրիլը վերանվանվեց Պիզոնի դավադրությամբ բացահայտումից հետո. Հոսմը վերանվանելու մտադրության մասին Տակիտոսը հիշատակում է հրդեհից հետո քաղաքը վերակառուցելու կապակցությամբ (Անն., XV, 40), Ի հաճույս Ներոնի Տրդատը «Ներոնի» անվանեց իր մայրաքաղաք Արտաշատը (Դիոն, 63, 7):

180 Աստրակառն աստվածուհի— Ատարգադիաս, բուրբ կենդանյաց մայրը, սովորաբար նույնացվում էր Կիրելայի կամ Ցունոնայի հետ, նրա պաշտամունքի կենտրոնը Հիերապոլիսն էր հյուսիսային Ասորիքում: Նրան է նվիրված Լուկիանոսի հետաքրքիր երկը:

181 Ներոնի մահը— 68 թ. հունիսի 7-ին:

182 Թասակը (pilleus), որ դրվում էր ստրուկի գլխին նրան ազատ արձակելիս, ազատության խորհրդանշանն էր:

183 Մեկ ուրիշ Կեղծ Ներոնի մասին, որը հայտնվել էր Հունաստանում 70 թ., հիշատակում է Տակիտոսը (Պատմ., III, 8). երրորդ Կեղծ Ներոնը, որի իսկական անունը Տերենտիոս Մաքսիմոս էր, հայտնվեց Արևելքում Վեսպասիանոսի վերջին տարիներին (Դիոն, 69, 13):

ԳԱԼՐԱ

1 Ներոնը վերջին կայսրն էր, որ Կեսար անունը կրում էր ըստ Կեսարի և Պոստոսի հետ ունեցած իր ազգակցության. նրանից հետո այն միայն տիրապետող դարձավ: Դիոնը (62, 18) Ներոնի մասին բերում է սիրիլլայի գաղափարները՝ «Մայրասպանը վերջինս կլինի էնեոսի տոհմում»:

2 Հավի և դափնու հետ կատարված հրաշքը նկարագրում է նաև Պլինիոսը (15, 40. 136—137 (որը ճշտում է վիլլայի տեղը՝ «Փլումինիոսի Անտապարհով իններորդ մղոնի վրա») և Դիոնը, 48, 52 թ. Թ. ա. 37 թ. վերաբերյալ պատմության մեջ:

3 Կեսարենեի տաճարը— ըստ երևույթի, Աստվածային Հուլիոսի տաճարը:

4 Կատուլլոսի անունով Գալբայի արձանագրությունները չեն պահպանվել: Պատիֆայայի մասին տե՛ս Ներոն, ծանոթագր. 39:

5 Գալբանում— քուրումնավեա Վյութ, որը նկարագրում է Պլինիոսը (18, 56, 126). բրդի մեջ փաթաթված դեղերի մասին տե՛ս նաև Պլինիոսի մոտ (20, 14, 29). ըստ երևույթի, ավելի հուսալի է այն ստուգարանությունը, որը Գալբայի անունը բխեցնում է կելտերեն չեզվից. Լիվիոսի մոտ (23, 26) հիշատակվում է Գալբոսը՝ կելտերների առաջնորդը:

6 Ս. Գալբայի, մ. թ. ա. 144 թ. կոնսուլի հանտրական տաղանքը նկարագրում է Կիկերոնը («Բրտառոս», 22, 86—24, 94):

7 Վիրիաթոսի պատերազմ— լուզիտանացիների խոշոր ապաստամբությունը հռոմեացիների դեմ (չափը 150—140 թթ. մ. թ. ա.) հովիվ Վիրիաթոսի գլխավորությամբ:

8 Նրա քոսը՝ մեթոդոս Սուլպիցիոս Գալբան, մ. թ. ա. 54 թ. պոետոսը, կոնսուլության հաճակում էր 49 թ., բայց սենատի կողմից մերժվել էր արպես Կեսարի բարեկամ. սխալվում է արգյոս Սվետոնիոսը, թե նկատի ունի մեկ ուրիշ, ավելի ուշ գեպարտարգ չէ:

- 9 Գալբայի պապը՝ Գայոս Սուլպիցիոս Գալբան, հիշատակվում է որպես պատմագիր նաև Պլուտարքոսի և Պլինիոսի կողմից: Նրա հայրը՝ Գայոս Սուլպիցիոս Գալբան, մ. թ. ա. 5 թ. կոնսուլն էր:
- 10 Գալբայի ծնունդը — մ. թ. ա. 3 թ. դեկտեմբերի 24-ին:
- 11 «Դու էլ կնաշակես...» — այս մարգարեությունը բոլոր մնացյալ պատմագիրները վերագրում են Տիբերիոսին և դնում Գալբայի կոնսուլության թվականին:
- 12 Պլինիոսը վճռականապես պնդում է, որ բոլոր այն դեպքերը, երբ էգ շորին ծնում է, հարկ է համարել նախանշանակ (8, 69, 173):
- 13 Չափանասության օրը — մ. թ. 14 թ. հունվարի 1-ը:
- 14 Ամուսնական պարտք — այսինքն Օգոստոսի օրենքը պարտադիր ամուսնության մասին:
- 15 Ֆլորալիաներ — տոնակատարություն ի պատիվ Ֆլորա աստվածուհու, ապրիլի 28 — մայիսի 3:
- 16 Փոխարքայություն Ավլիտանիայում — 31 թվականին:
- 17 Հերթական կոնսուլներ (ordinarii), ի տարբերություն տեղակալ-կոնսուլների (suffecti), կաշվում էին նրանք, որոնք պաշտոնը ստանձնում էին հունվարի 1-ին և որոնց անունով էր կոչվում տարին. այդ ավելի պատվավոր էր, քան տարվա ընթացքում պաշտոն ընդունելը:
- 18 Պարբերության սկզբում բացթողում կա. թարգմանությունը ըստ Իմի լրացման է:
- 19 Քատտերի նկատմամբ Գալբայի հաղթանակի մասին հիշատակում է Դիոնը 41 թ. տակ (60, 8): Կալիգուլայի ներկայությամբ զորավարժությունների մասին տե՛ս Կալ., 43 — 44:
- 20 Վազեց մարտակառֆի ետևից — հմմտ. Կալ., 26, 2:
- 21 Պրոկոնսուլությունը Աֆրիկայում, սենատական կարևորագույն պրովինցիաներից մեկում, պատվավոր էր և սովորաբար վիճակահանությամբ տրամադրվում էր ընտրյալ թեկնածուներին: Տակիտոսը գովասանքով է հիշատակում Գալբայի պրոկոնսուլության մասին (Պատմ., I, 49):
- 22 Քվինդեցիմվիրների մասին տե՛ս Հուլ., ժանոթագր. 193: Տիցիս — հնագույն քրոմական կոլեգիումներից մեկը Հռոմում, որը հիմնվել էր, ըստ ավանդության, սարինական թագավոր Տիտոս Տակիոսի կողմից, Հռոմում սաբինական սովորույթները պահպանելու համար. ավգուստայներ — Աստվածային Օգոստոսի քրմերը (տե՛ս Կլավ., ժանոթագր. 25):
- 23 Ունենալով օսկով մեկ միլիոն — որպեսզի ցանկացած պահին փախչելու հնարավորություն ունենա:
- 24 Նոր կարթագեն, այժմ Կարտախենա, իսպանական պրովինցիայի խոշոր կենտրոն:
- 25 Վինդեքսից ստացված նամակը խնդրանք էր պարունակում «ընդունել իշխանությունը և հարել ուժեղ մարմնին, որը զլուխ է փնտրում» (Պլուտարքոս, 4): Գալբան տատանվում էր, բայց Վինիուսը ասաց նրան. «Ինչո՞ւ ես մտորում, Գալբա: Մի՞թե ժամանակ է խորհել ներոնին հավատարիմ մնալու մասին, երբ մենք արդեն իսկ հավատարիմ շենք նրան» և այլն (նույն տեղում):
- 26 Կոնսուլներ — խոսքը գնում է այն զորաշղկատների մասին, որոնք առանձնացվել էին մյուս լեգեոններից և տրվել Գալբայի լեգեոնին, — մի պրակտիկա, որը հազվադեպ չէր կայսրության ժամանակաշրջանում:
- 27 Կամավոքներ, evocati — սովորաբար այդպես էին անվանվում այն զինվորները,

ովքեր գտնվում էին պատվավոր ժամկետանց ծառայության մեջ: Չգրկվելով օսկյա մատանիներին— այսինքն պահպանելով հեծյալական կոչումը:

²⁸ Տրոֆեյ— տե՛ս Կալ., ծանոթագր. 122:

²⁹ «Դանդաղ ու արյունալի էր Գալրայի ուղին... նրա մուտքը Հռոմ, որ շարագուժորեն նշանավորվեց հազարավոր անգին զինվորների կոտորածով, սարսափեցնում էր կոտորողներին իսկ» (Տակիտոս, Պատմ., I, 6):

³⁰ Արծիվ— լեզեոնի նշանը, նշաններ՝ առաձան կոհորտաների:

³¹ Փիլոսոֆի քիկնապանների մասին հմմտ. Օգ., 49 և Կալ. 58:

³² Նվիրել էր հինգ դիմար— ասվելացնելով, որ դրանք տալիս է ոչ թե պետական, այլ սեփական միջոցներից» (Պլուտարքոս, 16):

³³ «Փալիս էր Օնեսիմոսը...»— տեքստը խիստ փշաջած է. հին հրատարակիչները դերագասում էին հետևյալ ընթերցումը՝ «Գնում էր կճատաքիթը գյուղից» Venit Onesimus—Venit, 10¹ simus)

³⁴ Հմմտ. Տակիտոսի (Պատմ., I, 49) գնահատականը. «մասնավոր անձ եղած ժամանակ նա մասնավորից վեր էր թվում և, ընդհանուրի կարծիքով, կկարողանար կառավարել, եթե կառավարիչ չլիներ (capax imperii nisi imperasset)»

³⁵ Տ ա կ ի տ ո ս, Պատմ., I, 6. «Անգոր ժերունուն կործանեցին Տիտոս Վինիոսը և կորնելիոս Լակոնը, մեկը մարդկանցից ամենանողկալին, մյուսը՝ ամենածույլը, ատելութուն գրգռելով շարագործություններով և արհամարհանք՝ անգործունությունը»:

³⁶ Հեծյալական պաշտոններից բարձրագույնը— պրետորականների պետի պաշտոնը:

³⁷ Երեք երեխայի իրավունքը (ըստ Պապիոս-Պոպպեոսի օրենքի) երեք երեխաներ ունեցող հայրերին որոշ առավելություններ էր ընձեռում պաշտոններ զբաղվելու և ծառայության մեջ առաջ խաղալիս. հետագայում այդ իրավունքը սկսեց տրվել ի նշան ողորմածության նաև անզավակ կամ քիչ երեխաներ ունեցողներին, այդ թվում ստացել էր նաև Սվետոնիոսն ինքը:

³⁸ Սենատորական պաշտոններ— փոխարքայություններ և հրամանատարություններ, հեծյալական՝ պրոկուրատուրաներ:

³⁹ Ըստ Դիոնի (64, 3), Գալրան էդիկտով հայտարարել էր, որ, թերևս, մահապատժի կենթարկեր Տիգելլինոսին, եթե իրենից այդ բանը այնքան շինդրերին: Տիգելլիոսի պաշտպանը Վինիոսն էր:

⁴⁰ Պետերը— ամենից առաջ, Նիմֆիդիոս Սաբինոսը:

⁴¹ «Պիզոնը... ազնվատոհմիկ հոր և մոր կողմից, դեմքով ու տեսքով հին բարձրի տեր մի մարդ, ողջախոհներին խիստ էր թվում, շարակամներին՝ խոժոռ, բայց դրանով էլ, անհանգիստ մարդկանց կասկածանք ներշնչելով, նա դուր էր գալիս որդեգրողին» (Տ ա կ ի տ ո ս, Պատմ. I, 14):

⁴² Պիզոնի որդեգրումը— 69 թ. հունվարի 10-ին, Գալրայի կործանումը՝ հունվարի 15-ին:

⁴³ Զոհամատուցումից առաջ զոհասեղանի վրա կրակը պետք է վառ կերպով բոցավառվեր, իսկ սպասավորի դեր կատարեր թանկագին խնկամանով և զինու սափորով ճերմակազգեստ մի տղա:

⁴⁴ Ոմն մի զինվոր— ըստ Պլուտարքոսի, 26, նրա անունը Հուլիոս Ատտիկոս էր: Հարձակման ազդանշանը տվել էր Գալրային ուղեկցող չոկատի գրոշակակիր Ատինիոս Վերգիլիանոսը. նա պոկել էր դրոշի վրայից Գալրայի պատկերը և գետին շարտել:

⁴⁵ Կործող արա— ծիսական բանաձև, տե՛ս Կալ., ծանոթագր. 155: Ըստ Տակիտոսի, Գալրան բացականչել էր. «Նսիեցեք, եթե դա պետք է պետությանը»: Կայսրին պաշտպա-

նում էր (ըստ *Պրոմեթ. 64, 6*, և *Պլուտարքոսի, 26*) ոսակ միայն ցենսորներն Աեմֆրոնիոս Գենսուր: Ըստ տարրեր տեղեկությունների, մարդասպանին կոչում էին *Տերենտիոս*, կամ՝ *Լեկանիոս*, կամ *Կամուրիոս*, կամ *Տարիոս* *Տարուլլոս*: Հետագայում Վիտելլիոսը գտավ պարզևատրելու մասին ափսոս թան հարյուր խնդրագիր՝ Գալբայի և Պիզոնի սպանության ժամանակ մատուցած կարևոր ծառայությունների համար:

46 Գերմանացիները ճիվանդ ու թույլ էին Ալեքսանդրիա նավարկելուց հետո, ուր նրանք ուղարկվել էին *Նեթոնի կողմից*, և ետ կատարած ծովագնացության հետևանքով:

47 Կուրցիոսի լճի մասին տե՛ս *Օգ.*, *Ժամոթագր. 145*: Ըստ *Պլուտարքոսի, 27*, Յտոնը, սասանալոճ Գալբայի գլուխը, քոչել էր. «Ան դեռ դատարկ բան է, բարեկամներս, ինձ ցույց տվե՛ք Պիզոնի գլուխը»:

48 «Ամբաստիճդ է ղեռնս իմ ուժք» — *«Քլիական»*, I, 254 (թարգմ. Ն. Չենդիչի), Գիոմեդեսի խոսքերը:

49 Թերմացիք — տեղը մթին է, թարգմանությունը մոտ է պահպանված Բաուզարտեն — Կրուզիուսի մեկնաբանությունը:

ՕՏՁՆ

1 Ֆերենտինում — քաղաք հարավային էտրուրիայում: Ըստ երևույթին, շատ հոռմեական հեծյալներ, որոնք էտրուսկական ծագում ունեին, իրենց անվանում էին էտրուսկական թագավորների հետնորդներ. Հորոցիոսը այդպես է մեծարում Մեկենասին:

2 Լուկիոս Յտոն — հայրը կոնսուլ էր եղել 34 թ., Գալբայից անմիջապես հետո (տե՛ս *Գալ.*, 6):

3 Ականավոր տոհմից — այսինքն ամենահարուստ հեծյալներից (*splendidi*):

4 Օտոնի ծնունդը — 32 թ. ապրիլի 28-ին:

5 Վեր-վեր էր գցում թիկնոցի վրա — նման զվարճությունների մասին հիշատակում է նաև Մարցիալեսը (I, 3, 8):

4 Մտցրեց սենատ, մինչդեռ, որպես կաշառակերության համար դատապարավածներ, ամենից առաջ վտարվում էին սենատից:

7 Ըստ *Տակիտոսի (Անն., XIII, 45)*, Օտոնն ինքն էր խլել Պոպայեային նրա ամուսին Ռուփոս Կոնսպիենոսից և դիտավորյալ կապել Ներոնի հետ, որպեսզի ամրապնդի նրա հետ ունեցած իր մոտիկությունը:

8 Ախուրվեց Լուգիուանիա — Սենեկայի հովանավորությամբ, ինչպես հազարդում է *Պլուտարքոսը («Գալբա», 20)*:

9 Սելվիոս — Տակիտոսը և *Պլուտարքոսը* ասադազուշակին Պաղոմենոս են անվանում:

10 Ասկոպ — բաժանելով հարյուրական սեռերիցիսում յուրաքանչյուրին, ճշտում է *Տակիտոսը (Պատմ., I, 24)*. նա էլ տալիս է սահմանաշերտի համար վիճող զինվորի անունը՝ *Կոկցեոս Պրոկուլոս*:

11 Ըստ *Պլուտարքոսի* և *Տակիտոսի*, դավադրության առաջին մասնակիցներն էին Օտոնի ազատարձակ Օնոմասոսը և միայն երկու պրետորականներ, Վետուրիսան ու Բարբիոսը՝ սերկու շարքային զինվորներ ձեռնամուխ եղան կայսրությունն ուրիշի հանձնելու և հանձնեցին» (*Պատմ. I, 25*):

12 Մի քանի օր — 5 օր որդեգրման և հեղաշրջման արանքում:

13 Ծորումում գանձող օսկեզօծ ժողմասյունը, որ կառուցել էր Յզոտոսը մ. թ. ա. 20 թ., համարվում էր բոլոր հոռմեական ճանապարհների սկիզբը. նրա վրա գրված էին կայսրության կարևորագույն քաղաքների անունները և նշված էր մինչև դրանք ընկած տարածությունը: Նրա հիմքը սահպանվել է:

24 Զոնաճառագրման մասին տե՛ս Փալ., 10:

15 Ըստ Տակիտոսի (Պատմ., I, 27), Սղոնացույց քարի մոտ Յստնի՛ն քաղաքում էր միայն շօ գինեգոր, մի այդքան էլ միացավ Տանապարհի՛ն:

16 Իմ խելի ինչ բանն են երկար սրինգները — ալդալիսի ասացվածք ունի ժողովուրդը նրանց մասին, ով ուժից վեր գործի է կալում» (Պիստ., 64, 7):

17 Ըստ Տակիտոսի (Պատմ., I, 74): Օտոնը Վիտելլիոսին առաջարկել էր «գրամ, իր բարեհաճությունից և առանձնության ցանկացած տեղը անառակ կյանքի համար», Վիտելլիոսը նրան նույն բանն էր առաջարկել, աստիճանաբար նրանք անցել էին փոխադարձ հայհոյանքի և սկսել էին կշտամբել մեկը մյուսին ջոփության և զագրելությունների համար՝ «երկուսն էլ արդարացի», լակոնիկ ձևով նկատում է Տակիտոսը:

18 Ջե՛նֆ բերել երանց — ըստ Պլուտարքոսի (3) և Տակիտոսի (Պատմ., I, 80), Օտոնը ուղարկել էր պրետորականների տրիրուն Վիրիոս Գրիսպինոսին Օստիայից Հռոմ քերելու XVII կոհորտան (ոչ պրետորական), սա սկսել էր զենքերը բարձել ուղարկելու համար, կոհորտան դավաճանություն էր փասկածել, խռովություն էր բարձրացրել և Օստիայից շարժվել էր Հռոմի վրա: Սվետոնիոսը շփոթել է Օստիայի կոհորտայի (որի մասին խոսվել է նրա աղբյուրում) «ճամբարը» պրետորականների ճամբարի հետ Հռոմում, վերագրել է սպասամբությունը պրետորականներին, և փոխադրել է այն Հռոմ: Նավերի և ծովայինների մասին ո՛չ Տակիտոսը, ո՛չ էլ Պլուտարքոսը չեն հիշատակում. երկուսի մոտ էլ խոսվում է «սալլակառքերի» մասին:

19 Մարս աստծու սրբազան վանճակները, թվով 12, տաճարից դուրս էին բերվում սաղիների ծիսական երթի համար մարտ ամսին. այդ ծամանակ որևէ բան ձեռնարկելը ապերջանիկ բան էր համարվում:

20 Աստվածների մոտ տոնակատարությունը — 24—30 մարտի:

21 Հայր Դիոնիս — Պլուտոնի անուններից մեկը:

22 Կաստորի բնավայր (locus Castorum), ըստ Տակիտոսի, գտնվում էր Կրեմոնայից 12 մղոն հեռավորության վրա:

23 Ըստ Տակիտոսի (Պատմ., II, 42) Բեդրիակումի ճակատամարտից առաջ Օտոնի զորքում չուր տարածվեց, որ իբր թե Վիտելլիոսի լեգեոնները լքել են իրենց կայսրին. գինեգորները ողջույններով ելան նրանց ընդառաջ և այդտեղ էլ ենթարկվեցին հարձակման:

24 Դիոնը (64, 13) Օտոնի բերանը հետևյալ խոսքերն է դնում. «Ավելի արդարացի է միայնակ մեռնել հանուն բոլորի, քան շատերը մեռնեն հանուն մեկի»:

25 Նգրադը՝ Սալվիոս Տիցիանոսին (զլ. 1), և Եղբորուղուն՝ Սալվիոս Կոկցեյանոսին, որի ճակատագրի մասին տե՛ս Դոմ., 10, 3: Վերջինիս նա կտակել էր «երբեք չմոռանալ, որ նրա հորեղբայրը Օտոնն է եղել, բայց և շափից ավելի չհիշել այդ մասին» (Տակիտոս, Պատմ., II, 48):

26 Օտոնի մահը — 69 թ. ապրիլի 17-ին: Նրա համեստ գերեզմանը Բրիքսկլումում՝ «Մարկոս Օտոնի հիշատակին», տեսել էր դեռևս Պլուտարքոսը:

ՎԻՏԱԼԻՈՍ

1 Երոտիգինե («Նախասկզբնականներ») — առասպելական հին փոխալիական, էնեոսին դաշնակից ցեղ. Ֆարնը համարվում էր նրանց երրորդ թագավորը Սատուրնից հետո: Վիտելլիոս աստվածուհու մազին ուրիշ տեղեկություններ չկան:

2 Վիտելլիոս գաղութը էթզերի (էթզիկուլների) լատինական ցեղի հողում հիշատակվում է *Լիվիոսի կողմից*, V, 29 (մ. թ. ա. 393 թ. տակ):

3 Սամնիտական պատերազմ— երկրորդ (327—304) կամ երրորդ (298—290 թթ. մ. թ. ա.), երբ հռոմեացիները գնում էին Ապուլիա:

4 Ավլոսի կոնսուլությունը— 32 թ. (Ավլոսը սուֆֆեկտ էր, որը փոխարինեց Դոմիցիոսին):

5 Քվինտոսը կոշումից զրկվեց 17 թ.:

6 Պուրիոսը մահացավ 85 թ.:

7 Լուկիոս Վիտելլիոսի կոնսուլությունները— 34, 43, 47 թթ., ցենզորությունը՝ 48 թ.:

8 Տեային լաբերի շարժում— *Հմմտ. Օգ.*, 7:

9 Սեֆստիլիան, «հին բարձր տեր մի կին», ըստ *Տակիտոսի* (*Պատմ.*, II, 64), որդուց նամակ ստանալով, որտեղ սա իրեն Գերմանիկոս էր անվանում, հայտարարել էր. «Իմ որդուն Վիտելլիոս էին անվանում, և ոչ թե Գերմանիկոս»:

10 Վիտելլիոսի ծնունդը— 15 թ. սեպտեմբերի 15-ին կամ 7-ին:

11 Սպինտրիաներ— *տե՛ս Տիր.*, 43:

12 Ներոնական խաղերին— *տե՛ս Ներ.*, 12 և 21:

13 Պետրոնիան հետագայում բաժանվեց ամուսնուց և կնուսթյան գնաց Դուլարելլային, Գալրայի կողմից որդեգրվելու հավակնորդներից մեկին. Վիտելլիոսը իշխանության գլուխ անցնելուց հետո շուտով սպանեց նրան, (*Տակիտոս*, *Պատմ.* II, 64): Գերմանիկոսի, Վիտելլիոսի որդու, ճակատագրի մասին *տե՛ս* գլ. 18, դատեր մասին՝ Վեսպ. 14:

14 Վիտելլիոսի ժամանումը Գերմանիա— 68 թ. դեկտեմբերի սկզբին, խռովությունը՝ 69 թ. հունվարի սկզբին: Վիտելլիոսի ռազմակայանը գտնվում էր Ագրիպպինա գաղութում, այժմ Քյոլն:

15 Վերին Գերմանիայի զորքերի մասին *տե՛ս* Գալ., 16:

16 Բաժանեց զորքերը. Վալենտի հետ առաջ ուղարկվեց, ըստ *Տակիտոսի*, շուրջ 40 հազար, Ցեցինայի հետ՝ շուրջ 30 հազար զորք:

17 Աֆաղաղի մասին *տե՛ս* գլ. 18-ի մեկնաբանությունը:

18 Վատ օրինակ— շենթարկվելը Գալրային և Օտոնին:

19 Հմմտ. Վիտելլիոսի արշավանքի նկարագրությունը *Տակիտոսի մոտ* (*Պատմ.*, II, 62). «Որկրամուկության նրա կիրքը նողկալի ու անհագուրդ էր. Հռոմից և Իտալիայից խորտկներ էին կրում նրա բկան համար, ծովից ծով ճանապարհներին ճոնչում էին սայլերը, նրա խնջույքների համար կատարած ծախսերից սնանկանում էին քաղաքապետներն ու ամայանում քաղաքները, և զինվորը մոռանում էր աշխատության ու սխրանքի մասին, սովորելով ապրել ուզածին պես և արհամարհել զորավարին»: Հմմտ. II, 64, որտեղ նկարագրվում է զինարքուքը Տիցինումի մոտ, որի ժամանակ քիչ էր մնում կոտորած տեղի ունենար լեգեոնների և օժանդակ զորքերի միջև: Նույն տեղում, II, 70, Բեդրիակումի ճակատամարտի դաշտի նկարագրությունը՝ Վիտելլիոսը այցելեց այն մարտից քառասուն օր անց, բայց այն դեռևս խճողված էր զենքերի և քայքայվող մարմինների կույտերով:

20 Ըստ *Տակիտոսի* (II, 89), բարեկամների խորհրդով Վիտելլիոսը Հռոմ մտնելիս բայց և այնպես թիկնոցը փոխարինեց տոգայով, լցանկանալով նվաճող երևալ:

21 Ալլիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտի օրը (մ. թ. ա. 390 թ. հուլիսի 18 ը, երբ հռոմեացիները շարժվեցին գալլերի կողմից) դժբախտ օր էր համարվում բոլոր կարևոր գործերի համար:

22 Նրեք կայսրերի փոփոխության հետևանքով, որոնցից յուրաքանչյուրը իշխանու-

թյան գլուխ էր դնում իր կողմնակիցներին, 69 թ. տասներկու ամսվա ընթացքում փոխվեցին 15 կոնսուլներ:

²³ Տիրոջից, *ավելի ճիշտ «տերունականից»*, de dominico:

²⁴ Փացալաջուր, posca — հասարակ ժողովրդի տարածված ըմպելիք:

²⁵ Կառավարման մի քանի ամսվա ընթացքում Վիտելլիոսը ուտելիքի վրա մսխեց 900 միլիոն սեստերցիում:

²⁶ Պլինիոսը (35, 46, 163) հաղորդում է, որ Վիտելլիոսի սկուտեղը նստեց մեկ միլիոն սեստերցիում, և այն պատրաստելու համար հարկ եղավ ընթացող վառարան կառուցել: Սկուտեղը ձուլված էր արծաթից և պահպանվում էր տաճարում, մինչև որ Ադրիանոսը այն հանձնեց գանձատուն:

²⁷ Պարթևաստանից (Պարթիայից), տարբերակ՝ «Կարպաթիայից», այսինքն էգեյան ծովի հարավային մասից:

²⁸ «Կշտացնել հայացքը» (pascere oculos) — այդ արտահայտությունը Տակիտոսը փերագրում է Ցունիոս Բլեզոսի, Լուգդունական Գալլիայի նախկին փոխարքայի, սպանությանը. խոռվության ժամանակ Վիտելլիոսը նրանից քիչ դրամական օգնություն չէր ստացել, ընդհանրապես հետո ի դեմս նրա սկսել էր մրցակից տեսնել:

²⁹ Մանակողներ, vernaculi, հմմտ. Տիր., 57, 2, Վեսպ., 19, 2:

³⁰ Կալենդներ — 1-ը հոկտեմբերի: Քալդեններ — հնում աստղագուշակների և կախարհների ընդհանուր տարածում գտած մականունը: —

³¹ Սեքստիլիայի վախճանի մասին Տակիտոսը միայն ասում է, որ նա «ժամանակին մահանալով կանխեց տոհմի խորտակումը»: Գերմանացի կանանց մարզաբանական համրավի մասին հիշատակում է Տակիտոսը («Գերմանիա», 8):

³² Մովի կողմից — Կամպանիայից, որտեղ միզեյան նավատորմը և առափնյա քաղաքները անցան Վեսպասիանոսի կողմը. նրանց դեմ ուղարկվեց Կլավդիոս Հուլիանոսը գլխահատորների մի շոկատով, իսկ նրա դավաճանությունից հետո՝ կայսեր եղբայր Լուկիոս Վիտելլիոսը:

³³ Վիտելլիոսը դիմեց Սաբինոսին հույս դրած լինելով նրա և Վեսպասիանոսի միջև ելած թաքուն թշնամության վրա: Պայմանագիրը նրանց միջև ստորագրվեց Ապոլլոնի տաճարում, վկաներ էին ներոնի ժամանակների երկու կոնսուլյարիսներ՝ Կլավդիոս Ռուփոսը, հայտնի պատմագիր, և Սիլվիոս Իտալիկոսը, հայտնի բանաստեղծ (Տակիտոս, Պատմ., III, 65):

³⁴ Հրկիզեց տաճարը — Տակիտոսը պարզ չի համարում, թե տաճարը պաշարողները, թե՞ պաշարվածներն են հրկիզել (Պատմ., III, 70):

³⁵ Հանեց դաշույնը — որպես նշան իշխանության՝ մահապատժի ենթարկելու կամ ներելու Տակիտոսը հրաժարականի այդ տեսարանը միացնում է նախորդին:

³⁶ Վեստալուհիները պատվով ընդ թողնվեցին, դեսպաններին ասվեց, որ Սաբինոսի սպանությունից և Կապիտոլիոսի հրդեհից հետո բանակցություններն անհնարին են:

³⁷ Կամպանիա — որտեղ կռիվ էր մղում կայսեր եղբայրը:

³⁸ Վիտելլիոսին բռնեց կոհորտայի տրիբուն Հուլիոս Պլացիդոսը:

³⁹ «Միայն մեկ խոսք, արժանի շայլասերված հոգու, լսեցին նրանից. ի պատասխան տրիբունի հասցրած վիրավորանքի, նա ասաց. «Իսկ չէ որ ես քո կայսրն եմ եղել»» (Տակիտոս, Պատմ., III, 86):

⁴⁰ Գեմոնիաներում — տե՛ս Տիր., ժանոթագր. 126:

⁴¹ Վիտելլիոսի մահը — 69 թ. հոկտեմբերի 29-ին:

42 Վիեննայում — տե՛ս գլ. 9. Նախագուշակութունը կրկին հիմնված է gallus բառի կրկնակի նշանակության վրա՝ «աքաղաղ» և «գալլ»:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍ

1 Տոհմական տան ատրիումում նախնիներին պատկերելը միայն ավագանու առանձնաշնորհումն էր, սկզբնապես պատրիկների, ապա նրանց, ում նախնիները պետական պաշտոններ էին զբաղվել:

2 Քառասուններորդ քաժին (2,5%) — եերմուծման մաքս, որը գանձվում էր որոշ պրովինցիաներում:

3 Արգար ճարկահավաքին — արձանի պատվանդան նման մակագրությամբ դտնվել է Հռոմում, րայց, դատելով տառերի ձևից, վերաբերում է ավելի ուշ շրջանի:

4 Հելվետներ — կելտական ցեղ ներկայիս Շվեյցարիայի տարածքում:

5 Ճամբարի պետ — պատվավոր սպայական պաշտոն, որը սովորաբար տրամադրվում էր ցենտուրիոններից ծառայությամբ արժանավոր անձանց:

6 Վեսպասի — այդ անունը պահպանվել է Մոնտե-Վեսպիո լեռան անվան մեջ, քայց Սվետոնիոսի հիշատակած հուշարձանները հայտնի չեն:

7 Վեսպասիանոսի ծնունդը — 9 թ. նոյեմբերի 17-ին:

8 Կոզա — նավահանգստային քաղաք էտրուրիայում, Հռոմից շուրջ 120 կմ հեռավորության վրա:

9 Սենատորական տոգա կրելու իրավունք ի նշան ողորմածության (հմմտ. Օդ., 38, 2) կարող էին ստանալ նաև հեծյալների որդիները քաղաքական կարիերայի սկզբում:

10 Հանձնակատարություն անել — բուն իմաստով anteaambulō, կլիենտ կամ ստրուկ, որը ընթանում էր իր պատրոնի պատգարակի առջևից:

11 Կրեոնեն և Կրեոնեան այդ ժամանակ մեկ պրովինցիա էին կազմում:

12 Ցուցակով վեցերորդը, այսինքն վերջինը:

13 Կալիգուլայի «գերմանական ճաղքանակի» մասին տե՛ս Կալ., 43—44:

14 Գավազիները — Լեպիդոսը և Գետուլիկոսը:

15 Ռեկուպերատորներ — տե՛ս ներ. ժանոթագր. 59:

16 Անտոնիայի — Կրտսերի, Կլավդիոս Կայսեր մոր:

17 Վեկտիս կղզի — այժմ Ուայթ:

18 Երկու քրմական աստիճան — պոնտիֆիկություն և ավգուրություն:

19 Երկու վերջին ամիսը — այսինքն 51 թ. սուֆֆեկտներից վերջինը:

20 Ազնվորեն և արժանապատվությամբ. ըստ Տակիտոսի (Պատմ. 11, 97), ընդհակառակն, Աֆրիկայում «Վիտելլիոսը արդարադատ և սիրված պրոկոնսուլ էր, իսկ Վեսպասիանոսը՝ ատելի և վատ համբավի տեր», և դրա համար էլ քաղաքացիական պատերազմի ժամանակ Աֆրիկյան աշակցում էր Վիտելլիոսին:

21 Սենատորներին արգելված էր տոնատու անելը, քայց արգելքը հաճախ շրջանցում էին. չորիների հետ դործ ունենալը, ընդ որում, հատկապես էր ամոթալի համարվում (հմմտ. ժաղրոսաձևակր Քենդիտիոս Բարսսասի հասցեին, որը չորեպանից դարձել էր մ. թ. ա. 96 թ. կոնսուլը):

22 Կայսրին ողջունելու արգելիչը ճնշամիջոցների ենթարկվելու վտանգավոր նախա-նշան էր. հմմտ. Փրասեյա Պետոսի ճակատագիրը (Տակիտոս, Անն., XV, 83 և XVI, 24):

23 Հռոմեական կայսրին — մեսիանական մարգարեությունը նմանօրինակ իմաստ էն

տալիս Տակիտոսը (Պատմ., V, 13) և Հովսեփոս Փլարիոսը («Հրեական պատերազմք», II, 18—19),

24 Ամրոցի պաշարման ժամանակ— Իոտապատայի, որը պաշտպանում էր Հովսեփոսը («Հրեական պատերազմք», III, 6, 22):

25 Աեռքը համարվում էր իշխանության խորհրդանշան և պատկերվում էր, ի միջի այլոց, մանիպուլների նշանների վրա:

26 Հին փղշտական պատերազմի աստծու՝ Կարմելոսի, պատգամախոսը գտնվում էր համանուն լեռան վրա: Տակիտոսը հաղորդում է այն մարգարեությանը, որը արեւ էր Վեսպասիանոսին Յասիլիդես քուրմը (տե՛ս ծանոթագր. 32) այսպես. «Կմտադրվես արդյո՞ք դու, Վեսպասիանոս, տուն կառուցել, կամ կալվածներդ ընդլայնել, կամ ծառայողներին [թիվք] բազմապատկել, քո տունը մեծ կլինի, տիրույթները՝ հսկայական և մարդիկ՝ բազում»:

27 Հուլիոսի արձանը— ըստ Պլուտարքոսի, այդ նախանշանը տեղի էր ունեցել արդեն Օտոնի օրոք («Օտոն», 4):

28 «Հանցագործությունը հանդեպ Վիտելլիոսի կտրելի է վաստակ դարձնել Վեսպասիանոսի առջև»,— հաղորդում է մյուզիական գործի մտքերը Տակիտոսը (Պատմ., II, 85):

29 Եգիպտոսում Տիրերիոս Ալեքսանդրոսի մոտ տեղակայված էր երկու լեզեոն, Հրեաստանում Վեսպասիանոսի մոտ՝ երեք. երդման տարեթիվն է Ալեքսանդրիայում՝ 69 թ. հուլիսի 1-ը, Հրեաստանում՝ հուլիսի 11-ը (ըստ Տակիտոսի, հուլիսի 3-ը):

30 Վաղարշի օգնությունը Վեսպասիանոսը, իհարկե, մերժեց:

31 Եգիպտոսի բանալին— իսկ Եգիպտոսը Տակիտոսը անվանում է «հռոմեական հացի բանալին» (Պատմ., II, 82):

32 Իասիլիդես (ըստ Տակիտոսի, IV, 82, ոչ թե ազատարձակ է, այլ ազնվազարմ անձ— անուն, որը ծագում է «բասիլեոս» («թագավոր») բառից և դրա համար էլ բարեգուշակ է):

33 Տակիտոսը (Պատմ., IV, 81) հաստատում է ապաքինման մասին պատմությունը վկայակոչելով ականատեսների, ովքեր կենդանի էին մնացել Փլարիոսների վախճանից հետո, «երբ արդեն ստեղծվեց օգուտ չկար». նա էլ բերում է բժիշկների խելամիտ խորհուրդը Վեսպասիանոսին՝ «եթե ապաքինումը հաջողվի, այն կփառայի սոսկ ի փառս նրա, եթե ոչ՝ միայն ի ծագր նրանց»: Թքով աչք բուժելու մասին լրջորեն հիշատակում է Պլինիոսը (28, 37, հմմտ. Մարկոսի Ավետարան, 8, 23 և այլն): Աչք ոտքի բուժ մատով հավելով լյարդի հիվանդություններ էր բուժում Պպուտոս թագավորը (Պլինիոս, 2, 20. Պլուտարքոս, Պյուտոս, 3):

34 Վեսպասիանոսի կոնսուլությունները— 70—72, 74—77 և 79 թթ. ամեն անգամ նրա ընկերակիցը եղել է Տիտոսը, Յենգորությունը ըստ երևույթին, 73 կամ 74 թ.:

35 Մալայիներին կազմվում էին հրշեջ խմբեր Օստիայում և Պուտեոլքում, որտեղ հրդեհները սպառնում էին բերույթի հացահատիկի պահեստներին. հրշեջ խմբերի առանձին ջոկատներ հերթով հերթապահում էին Հռոմում:

36 Ախայան և այլն— բոլոր այդ քաղաքները «ազատություն» ստացել էին Ներոնի օրոք, Սամոսը՝ Օգոստոսի օրոք:

37 Լեոնային Կրիթիոս— մարզի արևմտյան մասը, որտեղ հռոմեացիների իշխանությունը անվանական էր:

38 Կապիտոլիումի վերականգնումը— 69 թ. հրդեհից հետո: Արխիվի վերականգնման հանձնաժողովը Դոմիցիանոսի և Մուցիանոսի գլխավորությամբ սկսել էր գործել գեոևս մինչև Վեսպասիանոսի վերադարձը:

39 Փլարիոսների ամֆիթատրոնը Ներոնի Ոսկյա պալատի լճակի տեղում հետադաշում հռչակվեց Կոլիզեոսում անվամբ (Colosseum, առաջին անգամ հիշատակվում է VII դարում):

40 Ցենտուրիոնների մասին տե՛ս Օդ., ժանոթագր. 99:

41 Ստրուկի հետ կապի համար պատժելու մասին նրաձանագիրը հրապարակվել էր դեռևս Կլավդիոսի (ազատարձակ Պալլանտոսի նախաձեռնությունով) և հաստատվել Վեսպասիանոսի կողմից. նույնը վերաբերում է նաև վաշխառուների մասին օրենքին (Տակիտոս, Անն., XI, 13, XII, 53):

42 Տրիբունական իշխանություն Վեսպասիանոսը ընդունել է 70 թ. սկզբին, քաղաքացիական պատերազմը վերջանալուց անմիջապես հետո:

43 Խուլարկել— հմմտ. Դիոնի հաղորդումը (65, 10), որ Վեսպասիանոսը առաջինը հանեց իր պալատի դռների մոտի սյահակությունը:

44 Գամփո— կիևիկների տարածված անոճը, որոնք ապրում էին «ինչպես շներ» (αῶον—χουν(κος)†

45 «Ուր ուզում ես»— բնագրում «Մորբովիա», այսինքն «հիվանդության երկիրը». իմաստը պարզ է Դիոնի զուգահեռ տեղից (65, 11):

46 Նրա բացակայությամբ, օրինակ, Մուցիանոսը հաշվեհարդար տեսավ Գալբալի կողմից որդեգրված Պիզոնի հարազատների հետ (Տակիտոս, Պատմ., IV, 11, 49—50): Պաշտոնական փաստաթղթերում (որոնց թվին էին դասվում նաև զործող օրենքները բացատրող սրևտորական էդիկտները) կայսեր անպայման հիշատակության մասին հմմտ. Օդ., 58, 2. Տիր, 32, 2:

47 Գալբալի ներած— հմմտ. Գալ., 15, 2:

48 Վանառում էր պաշտոն— երբեմն Ցենիոյալի միջնորդությամբ, ինչպես հաղորդում է Դիոնը (65, 14):

49 Աղվես...— հմմտ. հունական առածը գալլի մասին, Ապոստոլիոս, XII, 66:

50 Կոթող— Ներոնի արձանը Ոսկյա պալատից (տե՛ս Ներ., 31), որը Վեսպասիանոսը վերաձևափոխեց Արեգակի արձանի և դնել տվեց Սրբազան ճանապարհին: Կոստայի Վեներա— անհայտ քանդակագործի արձան Խաղաղության տաճարում, նմանեցում Պրաքսիտելեսի նշանավոր արձանին:

51 Ներկայացումներ— acroamata, հեղհեղուկ արտահայտություն:

52 Մարտյան կալենդներ (մարտի 1)— մատրոնալիաների կանացի տոներ, երբ կանայք զոհ էին մատուցում Ցունոնային և նվերներ ստանում ամուսիններից:

53 Տառեխավանառ (բուն իմաստով cybiosactes— աղ դրած ձկան կտրտված կտորներ վաճառող). այդպես էին կոչում այն ինքնակոչին, որը իրեն ներկայացնում էր իրրև ասորական թագավորների ազգական և 58 թ. Պտղոմեոս Ավլետոս թագավորի արտաքսումից հետո մի քանի օր թաղավորել էր Եդիպոսում: Դիոնը (65, 8) գրում է, որ ամենամանր տուրքերից հարստություն դիզելու ձգտման համար ալեքսանդրիացիները Վեսպասիանոսին անվանել էին նաև «ճզճիմ մուրացկան». իսկ երբ Տիտոսը Վեսպասիանոսի անունից հայտարարել էր դրանց թուլացման մասին, նրանք բղավել էին նրա դեմքին. «Մենք նրան ներում ենք. նա պարզապես ունակ չէ կեսար լինելու»:

54 10 միլիոն— թիվը ժաղրականորեն շափազանցված է: Բնագրում՝ թվախաղ է centies և centum sestertium:

55 Լավ հառակ ուներ, statura quadrata, հմմտ. Պլինիոս, 34, 19:

56 Բաղնիքում, ավելի ճիշտ— «սֆերիստերիումում», բաղնիքի հատուկ մասում, որտեղ զնդակ էին խաղում և այլն:

57 Լատիներեն խոսակցական լեզվում ձև երկձայնավորը հաճախ իբրև «օ» էր տարտա-
սանվում, բայց plostra (սուայլեր) բառի մեջ «օ»-ն հիմնական էր, և նրա երկձայնա-
վոր արտասանությունը դիտավորյալ սեթևեթություն էր. այստեղից էլ Վեսպասիանոսի
կառավար (ընդ որում երկրմաստ, քանի որ φλαῦρος հունարեն նշանակում է «ան-նշան»):
58 «Գնում էր...» — ոտանավոր «Ելիականից», VIII, 213 (Այաքսի մասին):

59 «Մ, Լախեր...» — Մենանդրես, պատարիկ 921 և 223,2 (Κοκκ), բաժնի
մասին, որը անցնում էր պատրոնին ազատարձակի ժառանգությունից, հմմտ. Ներ., 3, 2:

60 Այստեղից էլ հայտնի ասացվածքը՝ «Դրամը հոտ շունի». հմմտ. Յուվենալ, XIV,
204:

... Ամեն մի շահույթից հոտ
Կգա անուշ...

61 Երկաբ մազեր — «Կոմեդիա» բառը, լատ. stella crinita, բառացի նշանակում է
«գիսավոր ասուղ»:

62 Կուտիլիֆ Ռեատեի մոտ — հանգստի հանրաճանաչ վայր՝ սառն աղբյուրն էր, որով և
լողացող կղզյակ ունեցող լճով, որը համարվում էր Ապենինյան թերակղզու կենտրոնը:

63 Վեսպասիանոսի մահը — 79 թ. հունիսի 23-ին, սակայն Սվետոնիոսի բերած տա-
րիքային հաշվարկը չի համապատասխանում այդ տարեթվին, իսկ Դիոնի և ուրիշ հեղի-
նականների տվյալներն է՛լ ավելի շատ հակասություններ են մտցնում:

64 Դավադրություններ — հայտնի է միայն մեկը՝ Ավլոս Ցեցինայի և էպրիոս Մար-
ցելլոսի (տե՛ս Տիտ., 6 և Դիոն., 65, 16):

65 Նույնքան տարի — 27 տարի (Կլավդիոսը և Ներոնը՝ 41—68 թթ., Վեսպասիանո-
սը, Տիտոսը և Դոմիցիանոսը՝ 69—96 թթ.):

ԱՍՏՎԱՄԱՅԻՆ ՏԻՏՈՍ

1 Հոր մականունը — Տիտոսի լրիվ անունն էր Տիտոս Փլաբիոս Վեսպասիանոս, ինչ-
պես և նրա հոր. նրա եղբորը կոչում էին Տիտոս Փլաբիոս Դոմիցիանոս, մոր՝ Դոմիցիլի-
այի, մականունով:

2 Տիտոսի ծնունդը — 41 թ. դեկտեմբերի 30-ին. սակայն Տիտոսի տարիքը, որ տրր-
ված է զլ. 11-ում, մատնանշում է 39 թ. որպես Տիտոսի ծննդյան թվական:

3 Սեպտիգոնիում — յոթհարկանի աշտարակ այդպիսի կառույցներից ամենից հայտ-
նին շինվել է ավելի ուշ, Սեպտիմիոս Սևերոսի օրոք:

4 Իմագեստ, metoposcopus. դիմադիտությունը հնում նշանակալի ժողովրդակ անու-
թյուն էր վայելում, այդ առարկայի վերաբերյալ մի քանի ձեռնարկներ պահպանվել են,
և Սվետոնիոսի ոճաձևը կայսրերի արտաքինը նկարագրելիս դրսևորում է ծանոթու-
թյուն այդ «գիտությունը»:

5 Բեթսանիլոսի ըմպելիքը — տե՛ս Ներ., 33:

6 Տիտոսի դստեր՝ Յուլիայի, մասին տե՛ս Դոմ., 22:

7 Տարիֆեյա և Համալա — ամրոցներ գեննիսարիայի լճի հակադիր ափերին:

8 Ետ դարձավ ճանապարհից — Կորնթոսից, բաց ծովով Հռոդոսի և Կիպրոսի վրա-
յով: Կիպրոսում Պաթոսական վեներայի տաճարի մասին նրա կոնաձև քարով՝ աստվա-
ծուհու արձանի փոխարեն, և զոհասեղանով, «որի վրա երբեք անձրև չի գալիս», տե՛ս
Տակիտոս, Պատմ., II, 3:

9 Երուսաղեմի գրավումը (Երուսաղեմի տաճարի զավթումը և հրդեհը) — 70 թ. հոկտե-
մբերի 6-ին: Կայսեր պատվանունի մասին տե՛ս Կլավ., ծանոթագր. 42:

10 Տիտոսի կոնսուլությունները — 72, 74—77, 79 թթ.:

11 Միայն հռոմեական հեծյալներին — բայց լինում էին նաև բացառություններ. այսպես, Սեյանոսը մնում էր պրետորականների պետ և այն բանից հետո, երբ սենատոր դարձավ:

12 Օծման ժամանակ — 80 թ. Կոլիզեումի: — Տիտոսի տոնահանդեսներում չբային և ցամաքային հանդիսախաղերի արագ հերթափոխության մասին գրում է նաև Դիոնը, 68, 25. «Արագ հանդիսախաղեր», ասում է նրանց մասին Մարցիալիսը («Հանդիսախաղերի գիրք», 2):

13 Խրակացի զլադիատորների մասին տե՛ս Կալ. վերաբերյալ ժանոթագր., 55, 2:

14 Վեզուվի ժայթքումը — 79 թ. օգոստոսի 24—25-ին. այն, որ կործանեց Հերկուլանումը և Պոմպեյը: Ժանտախար Դիոնը (86, 23) վերագրում է ժայթքումի հետևանքով օդի աղտոտվածությունը:

15 Ընդհանուր վնասներն իմն են» — եղծված է, թարգմանությունը ըստ Բաուդաբոտեն-Կրուզիոսի ճշգրտման՝ nil nisi sibi publice perisse:

16 Ի սուրկություն — լավագույն ձեռագրերում այդ բառերը չկան, այնպես որ այդ արտահայտությունը կարելի է հասկանալ այսպես՝ «վաճառել նրանց ունեցվածքը»:

17 Տարբեր օրենքներով — այսինքն մեկ մեղադրանքի անհաջողության զեպում առաջ ցածել մեկ ուրիշը միևնույն անձնավորության դեմ:

18 Մանացածների իրավունքները — այսինքն վիճարկել, արդյոք մահացածը ազատ քաղաքացի էր թե ազատարձակ, որը իրավունք չունի ազատ տնօրինելու ժառանգությունը:

19 Վերաբերմունքը մեծ քրեականի աստիճանի նկատմամբ հազվագեղ էր այդքան լուրջ լինում. այսպես, Կեսարը այն պահպանում էր գալլական պատերազմների ողջ ժամանակամիջոցում:

20 Կային, իհարկե, լուրեր, որ Տիտոսը թունավորվել է Դոմիցիանոսի կողմից և մահից առաջ ցավում էր հենց այն բանի համար, որ մահապատժի չէր ենթարկվել եղբորը և թողել էր կայսրությունը ալգպիսի մի շարագործի (Դիոն, 66, 26):

21 Տիտոսի մահը — 81 թ. սեպտեմբերի 13-ին:

ԴՈՄԻՑԻԱՆՈՍ

1 Դոմիցիանոսի ծնունդը — 51 թ. հոկտեմբերի 24-ին:

2 Նոնենիների փոզոցը (ad Malum Punicum) գտնվում էր Քվիրինալյան բլրի վրա:

3 Դոնապան — Վեսպասիանոսի կլիենտը, Կոռնելիոս Պրիմոսը. Վեսպասիանոսի իշխանության զուտ գալուց հետո Դոմիցիանոսը այդ տեղում կառուցեց Յուպիտեր Պահպանիչի սրբավայրը, իսկ կայսր դառնալուց հետո վերահասուցեց և դարձրեց մեծ տաճար:

4 Իսիդայի քրեները ճերմակ վուշե զգեստներ էին կրում:

5 Կեսար — այսինքն իշխանության ժառանգ:

6 Կոնտուպական իշխանությունը, քանի որ 70 թ. երկու կոնսուլները՝ Վեսպասիանոսը և Միտոսը, զենեւ ճրճառատանում էին գտնվում:

7 Գալլիա և Գերմանիա — որտեղ այդ ժամանակ բռնկեց էր Յիվիլիսի ապստամբությունը Յուրիև Հաննոսի շրջանում, բայց նա հասավ մինչև Լուզարնում, երբ ապստամբությունը ճնշվեց Ցերեալոսի կողմից:

8 Արսեղի ճակատագրի եղբորը, նա, ըստ Տակիտոսի (Պատմ., 17, 86), գաղտնի խնդրեց Ցերեալոսին գործով աշակցել իրեն քաղաքացիական պատերազմի համար, բայց անհաջող:

9 Երեսակ ձի հեծած, մինչդեռ Տիտոսը հոր հետ գնում էր մարտակառքով, հմմտ. Տիր, 6, 4:

10 Լերբական կոնսուլությունների մասին տե՛ս Փալ., ժանոթագր. 17. Դոմիցիանոսը հերթական կոնսուլ էր եղել 73 թ.:

11 Գոմիցիանոսի գրական ճաշակը գովաբանում են Պլինիոսը («Բնական պատմության» առաջարանը) և Փլոթինիանոսը (X, 1, 91):

12 Վոլոգեզին (Վաղարշին) Վեսպասիանոսը մերժեց օբնաթյուն ցույց տալ, և ի վրեժխնդրություն նա, ալաններին հաղթելուց հետո, հարձակվեց Ասորիքի վրա, բայց նա մղվեց փոխարքա Տրայանոսի, ապագա կայսեր հոր կողմից:

13 Մանագավ և նրա տիրակալության բառերը — ըստ Իմի ճշգրտման. տեքստում բաց են թողնված:

14 Դոմիցիանոսը կարգադրեց Պարիսին սպանել փողոցում, և մահապատժի էր ենթարկում նույնիսկ նրանց, ովքեր ժազիկներ էին բերում նրա գերեզմանին (Դիոն, 67, 8). նրան դամբանական է գրել Մարցիալեսը (XI, 13):

15 Լաիառափ նրա բնություն — հնարավոր է նաև թարգմանել «ի լրումն նրա բնության»:

16 Գլադիատորական մարտերին կանայք մասնակցում էին դեռևս Ներոնի օրոք (Տակիտոս, Անն., XV, 32). ի լրումն Դոմիցիանոսը ստիպում էր մարտնչել նաև թզուկներին (Դիոն, 67, 8):

17 Տեղատարափ անձեր և փոթորիկը, ըստ Դիոնի (67, 8), պատճառ դարձան ժողովարտի համարյա բոլոր մասնակիցների կործանմանը և շատ հանդիսատեսների մրքսելան ու մահվան:

18 Հարյուրամյա խաղերը, այնուամենայնիվ, Դոմիցիանոսը տոնեց ժամկետից շուտ՝ ոչ թե Պոստուսի մահից հետո 110 տարի անց, ինչպես սահմանված էր, այլ միայն 106 տարի հետո: Այդ խաղերի ժամանակ քվինգեցիմվիրների կոլեգիումի անդամներից մեկը պատմագիր Տակիտոսն էր:

19 Կիֆոսաեզուները հանդես էին գալիս երգելով սեփական երաժշտության նվագակցմամբ, իսկ կիֆարահարները՝ միայն երաժշտությամբ:

20 Փլաբիանների բռնությունը — աստվածացված Վեսպասիանոսի և Տիտոսի. այդ ջրմերը սպասարկում էին Փլաբիանների առհմի տպաարք, գլ. 5:

21 Քվինգվատրիումներ — տե՛ս Օգ., ժանոթագր. 173. Այբանում կալված, տե՛ս ներ., ժանոթագր. 84:

22 Յոթ բլուտների տաճանաճեղքը (ի հիշատակ Հռոմի հնագույն բնակավայրերի՝ Պալատինումի, էսքվիլինումի և Ցելիումի յոթ գագաթների վրա) կատարվում էր նոյեմբերի 11-ին: Դոմիցիանոսի հյուրասիրության նկարագրությունը տե՛ս Ստացիոսի մոտ («Սիլվաներ», I, 6):

23 Լեդենից հետո — 60 թվականի. երկբուրդ անգամ — Վիտտելիոսի հրդեհից հետո:

24 Դոմիցիանոսի տխած ֆորումի կառուցումն ավարտեց և օժեց ներվան:

25 Օրին — շենք երաժշտական մրցույթների համար:

26 Մեծ կրկեսի վերականգնումը վերաբերում է Տրայանոսի կառավարման սկզբին:

27 Քլատերի դեմ արշավանքը ձեռնարկվեց ի պաշտպանություն քրուսկների առաջնորդ Քարնոմերի՝ Քատերի վտարած հռոմեական դրածոյի: Թեև վճարական ճակատամարտ տեղի չունեցավ, արշավանքը հաջող էր՝ կայսրությանը միացվեց Հոննոսից և Գանուրից այն կողմ գտնվող գերմանական տարածքի մի մեծ հողատարածություն («Դեկումատական դաշտերը»): Բայց և այնպես, ըստ Դիոնի (67, 7) և Պլինիոսի («Ներ-

բողան», 16—17) հավաստիացումների, Դոմիցիանոսի տրիումֆը ամբողջապես ցուցտկանութուն էր՝ ավարը հափշտակվել էր գավառաբնակներից և Հռոմի դաշնակիցներից, իսկ հակառակորդի հնազանդութուն հայտնելը հնարովի էր:

²⁸ Լ. Անտոնինոս Սատուրնինոսը ապստամբութուն բարձրացրեց Մոգոնտիակումում (այժմ Մալնց) և հույս էր դրել Դոմիցիանոսից շարացած Քատտերի աշակցության վրա: Նրան շարդեց Ռետիայի փոխարքա Լ. Ապպիոս Մաքսիմոս Նորբանոսը: Այդ հաղթանակի լուրի հեքիաթային արագությամբ տարածվելու մասին հիշատակում է նաև Պլուտարքոսը («Էմիլիոս Պավլոս», 25):

²⁹ Արգելեց ամուսնանալ — այդ միջոցառման գովաբանութունը տե՛ս Ստացիոսի («Սիլվաներ», IV, 3, 13) և Մարցիալեսի (II, 60, VI, 2, IX, 6) մոտ:

³⁰ Խաղողագործության դատապարտման ֆանտաստիկական պատճառ է բերում Փիլոստրատեսը («Ապոլլոնիոսի կյանքը», VI, 17). ըստ նրա, Դոմիցիանոսը վախենում էր, որ ոգելից խմիչքների առատութունը ժողովրդին խռովութունների կդրդի:

³¹ Ընդունել ի պահպանություն — գինձորները սովորաբար վարձատրության մի մասը դնում էին լեգեոնի գահճարանը այն հաշվով, որպեսզի խնայողութունները ստանան ծառայությունը վերջացնելիս:

³² Ցենտուրիոնների մասին տե՛ս Օգ., ժանոթագր. 99, ռեկուպերատուների մասին — Ներ., ժանոթագր. 59:

³³ Վեստալուհիների սլատժի հին սովորույթը այն էր, որ հանցագործուհուն կենդանի-կենդանի թաղում էին գետնատանը կերակրի շնչին պաշարով, այդպիսով, անվանապես դա մահապատիժ չէր համարվում: Ըստ Պլինիոսի, Վալերիային մահապատժի տարան «չգիտեմ, արդյո՞ք անմեղ, բայց համենայն դեպս, ինչպես անմեղի» («Նամակներ», IV, 11, 8):

³⁴ Նախկին պրետոր, որ տարագրվել էր, — ականավոր հոետոր Վալերիոս Լիցինիանոսը. Պլինիոսը հավատացնում է, որ նա մեղավոր չէր:

³⁵ Վերգիլիոսի ստանավորը — «Գեորգիկներ», II, 537:

³⁶ Կլոդիոսի օրենքը հայտնի չէ. եղել է Կլավդիոսի օրոք (մ. թ. ա. 218 թ.) որն արգելում էր սենատորներին առևտրով զբաղվել:

³⁷ «Այն տիրակալներին, ովքեր քիչ են պատիժներ շոռայում, հարկ է անվանել ոչ թե բարի, այլ հաշողակ», — բերում է Դիոնը (67, 2) Դոմիցիանոսի ասույթը:

³⁸ Կատակի իմաստը՝ «թրակացին կգիշի միոմիլլոնին ոչ թե նրա համար, որ ավելի թույլ է, այլ նրա համար, որ կայսրը ավելի շատ միոմիլլոններին է սիրում»:

³⁹ Վահանակիբեբե անվանում էին այդ նույն թրակացի գլադիատորներին:

⁴⁰ Երգիչներին ժուժկալուքյուն հանձնարարվում էր ձայնը պահպանելու համար:

⁴¹ Գովասանական խոսքերը Հելվիդիոս Պրիսկոսին գրել է ոչ թե Ռուստիկոսը, այլ Հերեննիուս Սենեցիոնոսը, նույնպես մահապատժի ենթարկված. կարող է պատահել, որ Սվետոնիոսի տեքստից նրա անունը պատահաբար է գուրս ընկել:

⁴² Ըստ առասպելի, Պարիսը հավերժահարս էնոնայի սիրեկանն էր և լքել էր նրան, որպեսզի ամուսնանա Հելենայի հետ: Ոլրբեզուքյան վերջում սովորաբար երգիծական փոքր պիեսներ էին բեմադրում:

⁴³ Ըստ Դիոնի (67, 11), տրիբունի անունը Հուլիոս Կավլաստրոս էր. նման դեպքի մասին հիշատակում է նաև Տակիտոսը (Անն., XI, 36):

⁴⁴ Ըստ նախնյաց սովորույթի — տե՛ս Ներ., 49:

⁴⁵ Հրեական հարկը՝ մարգուց երկու դրահմ, Տիտոսն էլ դրել հրեական կրոնը դավանողների վրա:

46 Նրա եղբոր փեսան — Փլարիոս Սարինոսը: ~ - -

47 «Լավ չէ քազմիշխանությունը...» — «Իլիական», II, 204:

48 «Տիրակալը դիմելաձևի մասին տե՛ս Օգ., ծանոթագր. 140:

49 Թույլատրում էր և անգամ հրամայում (Դիոն, 67, 8). նշանակված կշիռը հավասար էր 100 ֆունտի (Ստացիոս, Սիլվաներ, V, 1, 190):

50 «Բավական է» — հունարեն *αρχει* որ համահնչումն է լատիներեն «արկի» բառին:

51 Դոմիցիանոսի կոնսուլությունները — վեց անգամ մինչև իշխանության զլուխ անցնելը (դլ. 2), յոթ տարի անընդմեջ 82—88 թ. և ապա 90, 92 և 95 թթ.: «Երկարատև և անընդմեջ տարի» է անվանում Պլինիոսը նրա կոնսուլությունների շղթան («Ներբողյան», 58):

52 Հունվարյան իդեր — 15 հունվարի, մայիսյան կալենդներ — 1 մայիսի:

53 Դավադրության մասնակիցներն էին, ըստ Դիոնի, 67, 15, ինչարանապետներ Պարթենիոսը և Սիգերոսը, կայսեր քարտուղար էնտելլոսը և հետագայում հիշվող Ստեփանոսը, իսկ նրանց հոտում կանգնած էին, կայսրուհի Դոմիցիայից զատ, պրետորիոմի պրեֆեկտներ Նորբանոսը և Պետրոնիոս Սեկունդոսը:

54 «Ուրբան էլ դու, այժ...» — էվենոս Պարոսացու համբավվոր էպիգրամը («Պալատինյան անթոլոգիա», IX, 75), որն, ի միջի այլոց, թարգմանել է Օվիդիոսը «Ֆաստերում», I, 357—358:

55 Հեծյալական առղաները (*trabeae*)՝ ծիրանի շերտերով, այդ դասի սոնական զգեստն էին:

56 Լուսնափարով (*phengite* — «լուսնաքար» է անվանում այդ քարը Ցեցոսը) — մի տեսակ ճերմակ կիսաթափանցիկ մարմարին, որը Ներոնի օրոք հայտնաբերվել էր Կապադովկիայում (Պլինիոս, 36, 22, 163):

57 Քրիստոնեական պատմական ավանդույթի մեջ կազմվել է այն կարծիքը, որ Փլարիոս Կլեմենտոսը մահապատժի էր ենթարկվել քրիստոնեությանը հարելու համար, բայց Դիոնը (67, 14) խոսում է միայն հուդայականության մասին: Նրա կինը, Դոմիցիանոսի զարմուհին, աքսորվեց Պանդատերիա կղզին:

58 Մառ... տե՛ս վեսպ., 5:

59 Պրենեստենյան ֆորտունայի մասին տե՛ս Տիր., ծանոթագր. 144:

60 Կերմանացի գուշակի անունը Լարգինոս Պրոկոլոս էր. Ներվան նրան ազատեց և պարգևատրեց:

61 Վեցերորդ ժամը վերջանում էր կեսօրին մոտ:

62 Կորնիկուլարիում — կրտսեր սպայական աստիճան, ցենտուրիոնի օգնական:

63 Սատուրոսը, ըստ երևույթին, նույնական է Դիոնի մոտ հիշատակված Սիգերոսի հետ:

64 Ննջաբանային լաբերի մասին հմմտ. Օգ., 7, 1 և ծանոթագր.:

65 Դոմիցիանոսի մահը — 96 թ. սեպտեմբերի 18-ին:

66 Զաղաա — այստեղից էլ «Ճաղատ Ներոն» մականունը, որ կրում է Դոմիցիանոսը Յուվենալի և Ավսոնիոսի մոտ:

67 «Տեսնում ես, ինչպիսին է...» — «Իլիական», XXI 108, Աքիլլեսի խոսքերը:

68 Աղեղը հոռմեական զինվորի սպառազինության մեջ չէր մտնում և ավելի շուտ համարվում էր զվարճության միջոց:

69 Հոռմում մատենադարանները (ամենից առաջ, Ապոլլոնի Պալատինոմի տաճարի մատենադարանը) տուժել էին 80 թ. հրդեհի ժամանակ. Ալեքսանդրիայի մատենադարանն

ինքը տուժել էր Կեսարի օրոք եղած հրդեհից, բայց Անտոնիոսը փոխհատուցել էր կորուստները, Ալեքսանդրիա տեղափոխելով Պերգամոսի ոչ պակաս համբավավոր մատենադարանը:

⁷⁰ Տիրերիոսի նօթերը— հմմտ. Տիր., 61:

⁷¹ Մատինեոսյան խնձորները իրենց անվանումն ստացել էին Մատիոսից, Կիկերոնի և Կեսարի բարեկամից, որը այգեգործության և համադամ խորտիկների սիրահար էր (Պլինիոս, XV, 1549):

⁷² Տրաոսի դուստրը, Յուլիան, ամուսնացած էր Փլաբիոս Մաքսիմոսի հետ, որը Դոմիցիանոսի մորեղբորորդին էր (տե՛ս գլ. 10): Հմմտ. Յուլիանալ, II, 32—33:

⁷³ Սպանության մեղավորների թվում կործանվեցին Պետրոնիոս Մեկոնդոսը և, դաժան խոշտանգումներից հետո, Պարթենիոսը: Այդ տեղի է ունեցել 97 թ.:

⁷⁴ Հմմտ. Պլինիոսի պաթետիկական նկարագրությունը («Ներբողյան» 52). «Այդ արձանները, ոսկեզօծ ու անհամար, ժողովրդական ցեփության մեջ տապալվեցին ու շարդուփշուր արվեցին որպես քավության զոհ: Հաճելի էր լսելն ին տրորել նրանց գոռոզամիտ կերպարները, թափահարել դաշույնները, կոտորել կացիներով, ասես ամեն մի հարվածը իր ետևից տանում էր ցավն ու արյունը: Ոչ ոք չէր կարողանում զուգել երկաթ սպասված ուրախությունը. թվում էր, որ յուրաքանչյուրը ժասնակցում է վրիժառույթյանը, հրճվելով կտոր-կտոր արված բեկորներով և խոշտանգված անդամներով, իսկ հետո նետելով սոսկալի քանդակների կտորտանքը կրակի մեջ, որը հալում էր դրանք, վերափոխելով ահեղ սարսափը հօգուտ և թ գոհություն մարդկության»:

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

Սվետոնիոսի «Նշանավոր մարդկանց մասին» երկի հատվածները մեզ հայտնի են երեք կարգի աղբյուրներից:

Նախ և առաջ, պահպանվել է մի մեծ հատված, որն ընդգրկում է աժբողջ «Քերականների և հոնտորների մասին» գիրքը, բացառությամբ վերջի: Այդ հատվածը գտնվում էր Գերմանիայում Գերսֆելդի վանքին պատկանող IX դարի մի ժողովածուում (ժողովածուի մեջ մտնում էին, բացի այդ, Տակիտոսի «Գերմանիան», «Ազրիկոլան» և «Երկիրսուսություն հոնտորների մասինը», ապա հետևում էր Սվետոնիոսի երկը, և դրանով ձեռագիրն ընդհատվում էր): Այդ ձեռագիրը 1425 թ. Գերմանիայում հայտնաբերել էր Քրաչչոլինին և Իտալիա էր բերել էնոք Ասկուլանացին շուրջ 1458 թ.: Գերսֆելդի ձեռագիրը լի պահպանվել (մնացել են սոսկ մի քանի թերթեր Տակիտոսյան մասից), բայց դրանից մնացել է շուրջ 20 ընդօրինակություն, որոնք արվել են Իտալիայում XV դարում. դրանք էլ ծառայում են «Քերականների և հոնտորների մասին» տեքստի վերականգնմանը:

Երկրորդ, «Բանաստեղծների մասին» գրքից հատվածներ պահպանվել են քաղվածքների ձևով որպես կենսագրական նոթեր Տերենտիոսի, Վերդիլիոսի, Հորացիոսի, Պերսիոսի, Լուկանոսի որոշ անտիկ հրատարակությունների համար: Այստեղ տեքստի վիճակը ավելի վատ է. երևում է, օրինակ, որ Վերդիլիոսի կենսագրությունը Սվետոնիոսից հետո ընդլայնվել է, Հորացիոսի կենսագրությունը կրճատված է և այլն: Որոշ նույնանման բովանդակությամբ հատվածների պատկանելությունը Սվետոնիոսին կասկածելի է. այդպիսին են Տիրուլլոսի, Լուկրեցիոսի և Յուլիանալի մասին կենսագրական ակնարկները, այդպիսին է դրական ժանրերի մասին դատողությունը, որը պահպանվել է Դիոմեդևսի (IV դար) «Քերականության» մեջ և, ըստ Ռոսսուանյիի կարծիքի, կազմել է «Բանաստեղծների մասին» գրքի նախաքանը. այդ վիճելի հատվածները մեր հրատարակության մեջ մտցված չեն:

Վերջապահ, երբորք, Հերոնիմոսի «Քրոնիկայում», որք սկսած քիբրիական ժամանակ-ներքց մինչև մ. թ. IV դարի վերջը տեղի ունեցած պատմական իրադարձությունների մի ժամալուսն ժամտեսակազրահան աղյուսակ է,— ցրված են համեմատեալ գրութի և քանաստեղծների կյանքի ու մահվան մասին քաղամթիվ հիշատակութուններ, որտեք յուրաց-չած են, անկասկած, Սվետոնիոսից: Սվետոնիոսի տեքստի վերականգնման համար նրանք գրեթե ածօրուս են, քայց գրանցուվ կարելի է գեթ կարծիք կազմել այն մասին. թե ում կենսագրութուններն են մտել Սվետոնիոսի երկի մեջ:

Ահա Սվետոնիոսի «Նշանավոր մարդկանց մասին» 5 գրքերի կազմը, որքանով որ այն ենթակա է վերականգնման («Քերականների և ճարտասանների մասին» գլուխնե-րի ցանկով, որը պահպանվել է երկի սկզբում, մյուս գրքերը՝ ըստ Հերոնիմոսի): Փա-կազծերում մատնանշված են հերոնիմոսյան տարեթվերը փոխադրված մեր թվագրության-Սովորաբար Հերոնիմոսը նշում է գրողի կամ ծննդյան, կամ մահվան տարեթիվը, կամ նրա «հայտնի դառնալու» տարեթիվը. այդ տարեթվերից մի քանիսը ակնհայտորեն սխալ են, օրինակ, Լիվիոս Անդրոնիկոսի, Պլուտարխի, Կատուլլոսի մահվան, Ագինիոս Գալլոսի, Բենետելլայի, Պլինիոս Ավագի տարեթվերը:

«Քերականների և ճարտասանների մասին»: Քերականներ՝ էլիոս Պրեկոնիոս, Սե-վիոս Նիկանորոս, Ավրելիոս Օպիլլոս, Մ. Անտոնիոս Գնիփոն, Ս. Պոմպիլիոս Անդրոնի-կոս, Լ. Թրեբիոս, Լ. Աթենոս Փիլոլոգոս, Պ. Վալերիոս Կատոն, Կորնելիոս էպիկուրեոս, Կուրցիոս Նիկիա, Լենետոս, Քվ. Տեցիլիոս, Մ. Վերրիոս Փլակոս (հայտ. մ. թ. 8 թ.) և Կրասիցիոս, Սկրիբոնիոս Ափրոդիսիոս, Գ. Հուլիոս Հիգինոս (հայտ. մ. թ. ա. 7 թ.), Գ. Մելիսոսոս (հայտ. մ. թ. ա. 4 թ.), Մ. Պոմպոնիոս Մարցելլոս, Քվ. Հեմմիոս Փալեմոն (հայտ. մ. թ. ա. 48 թ.), Վալերիոս Պրոբոս (հայտ. մ. թ. 56 թ.): Ճարտասաններ՝ Պլոտիոս Գալլոս (հայտ. մ. թ. ա. 88 թ.), Լ. Վալտացիլիոս Պիլուտոս (հայտ. մ. թ. ա. 81 թ.), Մ. էպիդիոս, Ս. Կլոդիոս, Գ. Ալբուցիոս Սիլոս (հայտ. մ. թ. ա. 6 թ.), Լ. Կու-տիոս Պիոս (հայտ. մ. թ. ա. 13 թ.), Մ. Պորցիոս Լատրոն (հայտ. մ. թ. ա. 4 թ.) . Քվ. Կուրցիոս Թուփոս, Լ. Վալերիոս Պրոմանոս, Վերգիլիոս Փլարոս, Լ. Ստացիոս Թր-սուլ (հայտ. մ. թ. 57 թ.), Պ. Կլավդիոս Քվիբինալոս (հայտ. մ. թ. 44 թ.), Մ. Անտո-նիոս Լիբերալոս (հայտ. մ. թ. 48 թ.), Ս. Հուլիոս Գաբինիանոս (հայտ. մ. թ. 74 թ.), Մ. Տարբիոս Քվինտիլիանոս (հայտ. մ. թ. 88 թ.), Հուլիոս Տիբոն:

«Բանաստեղծների մասին»՝ Լիվիոս Անդրոնիկոս (հայտ. մ. թ. ա. 187 թ.), Գե. Նե-վիոս (մահ. 201), Պլուտարխոս (մահ. 200), Քվ. էննիոս (ծն. 240, մահ. 168), Ստացիոս Տեցիլիոս (հայտ. 179), Պ. Տերենտիոս Ափրոս (մահ. 158), Պալուպիոս (հայտ. 154), Լ. Ակցիոս (հայտ. 139), Տուրպիլիոս (մահ. 104), Գ. Լուկիլիոս (ծնվ. 148, մահ. 103), Է. Պոմպոնիոս (հայտ. 82), Տ. Քվինտիոս Ատոս (մահ. 77), Տ. Լուկրեցիոս (ծնվ. 96—94), Մ. Տուրիոս Բիբակուլոս (ծնվ. 102), Գ. Վալերիոս Կատուլլոս (ծնվ. 87, մահ. 58), Պ. Տերենտիոս Վարրոն Ատացիանցի (ծնվ. 82), Լարբոն (մահ. 43), Պուրբիլիոս Սիլոս (հայտ. 43), Կորնելիցիոս (մահ. 41), Մ. Բազիլիոս (մահ. 35), Գ. Կոնելիոս Գալլոս (մահ. 27), Քվինտիլիոս (մահ. 33), Պ. Վերգիլիոս Մարոն (ծնվ. 70, մահ. 19 մ. թ. ա.), Քվ. Հորացիոս Փլակիոս (ծնվ. 65, մահ. 8 մ. թ. ա.), Վարբիոս և Տուկկա (հայտ. 17 մ. թ. ա.), էմիլիոս Մոկրոս (մահ. 16 մ. թ. ա.), Օվիդիոս Նալոն (ծնվ. 42 մ. թ. ա., մահ. 17 մ. թ.), Պերսիոս Փլակոս (ծնվ. 34, մահ. 62 մ. թ.), Մ. Աննոս Լուկանոս (մահ. 65 մ. թ.):

«Նշանավոր մասին»՝ Մ. Տուլլիոս Կիկերոն (ծնվ. 106, մահ. 43, մ. թ. ա.), Մ. Կալիդիոս (հայտ. 55 մ. թ. ա.), Կուրիոն (հայտ. 53), հայր և որդի Տուրենտիոս (հայտ. 36), Ագրիպոս Պուլչոն (մահ. 6 մ. թ.) Մետալուս Կորպիուս (ծնվ. 61 մ. թ. ա.)

մահ. 11 մ. թ.), Մունացիոս Պլանկոս (հայտ. 25 մ. թ. ա.), Պասիենոս Ավագ (մահ. 10 մ. թ. ա.), Ատրատինոս (հայտ. 21 մ. թ. ա.), Քվ. Գատերիոս (մահ. 24 մ. թ.), Գ. Ազի- նիոս Գալլոս (մահ. 14 մ. թ.), Կասիոս Սեվերոս (մահ. 32 մ. թ.), Վոտիենոս Մոնտա- նոս (մահ. 27 մ. թ.), Պասիենոս Կրտսեր (մահ. 32 մ. թ.), Դոմիցիոս Ափրոս (հայտ. 44 մ. թ.):

«Պատմագիրների մասին»՝ Սալյուստիոս Կրիսպոս (ծնվ. 86, մահ. 35 մ. թ. ա.) Կոննելիոս Նեպոտ (հայտ. 40 մ. թ. ա.), Տիտոս Լիվիոս (ծնվ. 59 մ. թ. ա., մահ. 17 մ. թ.), Ֆենեստելլա (մահ. 19 մ. թ.), Քվ. Ասկոնիոս Պեդիանոս (հայտ. 75 մ. թ.), Պլի- նիոս Սեկունդոս Ավագ (հայտ. 107 մ. թ.):

«Փիլիսոփաների մասին»՝ Մ. Տերենտիոս Վարրոն (ծնվ. 116, մահ. 28 մ. թ. ա.), Նիգիդիոս Ֆիգուլոս (մահ. 45 մ. թ. ա.), Լ. Աննոս Սենեկա (մահ. 65 մ. թ.):

ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՃԱՐՑԱՍԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1 Լիվիոս Անդրոնիկոսը տարենտացի հույն էր: Էննիոսը ծնունդով Կալաբրիայում գտնվող Ռուդիֆից էր և հպարտանում էր նրանով, որ «երեք լեզու» (tria corda) գիտեր՝ լատիներեն, հունարեն և օսկերեն (Հելլիոս, XVII, 17):

2 Լ. Կոտտա— միգուցե սխալ է փոխանակ Գ. Կոտտայի, 75 թ. կոնսուլի, հոետորի և փիլիսոփա-ակադեմիկոսի:

3 Կրատեսի դեսպանությունը— 169 թ. մ. թ. ա.:

4 Պրեկոնին— praeco («պրեկոն»), «մունետիկ» բառից:

5 Ստիլոն— stilus, «քարե գրիչ» բառից:

6 Մետելլոսը Հոդորոսում կամավոր տարագրություն մեջ էր գտնվում մ. թ. ա. 100— 99 թթ.:

7 Պանի սիրեցյալ— տեղը եղծված է, թարգմանություն ըստ Տուպի և Ռեֆֆերշայդի ընթերցման. Դավինիսին, սիցիլիական մի հովվի, Պանը սրինգ նվագել էր սովորեցրել:

8 Օսկա, քաղաք Մերձավոր Իսպանիայում, տեքստում վերականգնված է ենթադրա- բար:

9 Պրոպրիաներ և այլն— թվարկվում են օգտագործվող ճարտասանական վարժու- թյուններ:

10 Ըստ երևույթին, Մարկոս Սեվիոսը երկու մականուն ուներ՝ Պոստումիոս (ձեռա- գրերում անհուսալիորեն եղծված է, թարգմանություն ըստ Բրուստերի ընթերցման) և Նիկանորոս: Երկտող օտանավորի իմաստը մութ է:

11 Մեկ տառով— տառանունը տեքստից դուրս է ընկել. միգուցե ի նկատի է ունեցել ոչ թե Լ այլ Պ տառը:

12 Իսկապես, Դիոնիսիոս Սկիտոբրաքիոնեսը ապրել է II դարի կեսերին, իսկ Գնիփո- նը, ըստ Սվետոնիոսի տվյալների (Կիկերոնի պրետորությունը՝ 66 թ.), պետք է ուսա- նաժ լիներ մ. թ. ա. II դարի վերջին տարիներին:

13 Շարաքը մեկ անգամ, իսկն ասած «նունդիներին», յուրաքանչյուր իններորդ օրը:

14 Ինչպես օրինակ...— ձեռագրում բացթողում կա— ճշգրտումները անհաշող են:

15 Կորնիկուլում— սաղավարտի վրա եղջյուր, նշան կորնիկուլարիումի կոլման (տե՛ս Դոմ., ծանոթագր. 62):

16 «Տառապանք», Περὶ ἀλγος. թերևս հարկ է Տուպի հետևողությամբ կարդալ Περὶ ἀλγός, «Թշվառական»:

17 Օրբիլիոսին «Կոլարար» անվանում է Հորացիոսը «Ուղերձներում», II, 1, 170:

13 Մտաբուսավորի մասին զվարճապատումի տարբերակը տե՛ս Մակրոբիոսի մոտ, II, 6, 3—4, որտեղ Մուրենայի փոխարեն տրված է Գալբայի անունը:

19 Պարզ չէ, թե ով է անվանված Գնիփոնի հետևորդ. ընթերցումը ենթադրական է:

20 «Քավուտ» — գիտական երկերի սովորական անվանում, որոնք գրական մշակման հավակնություն չունեն և իրենցից նյութերի ժողովածու են ներկայացնում (հմմտ. Սվետոնիոսի իրեն «Մարգագետինները»):

21 Ազինիոս Պոլլիոնի քննադատական դիտողությունները Սալլյուստիոսի հնամուլ ոճի մասին հմմտ. Հելլիոսի մոտ X, 26:

22 «Վերդավունք» — այդ գիրքը փորձել են նույնացնել Վերգիլիոսի անունով մինչև մեզ հասած «Նզովքներ» (Dirae) բանաստեղծության հետ, բայց այժմ այդ կարծիքը մերժված է:

23 Դիկտիենա — Դիանայի մականուններից մեկը:

24 Մենդյամբ ասորի — տեքստը վնասված է (Բրունիոլին կարգում է «թրակացի») թարգմանությունը ըստ Պարատորեի և Դելլա Կորտեի ճշգրտման, որը հենվում է Պլինիոսի հաղորդման վրա (35, 199), թե Ստաբրիոս էրոտը Հոմ էր բերվել մի նսվով երկու ուրիշ ստրուկների հետ, որոնք հետագայում հռչակվել էին հոմեական մշակույթի պատմության մեջ՝ դիմագետ Պուրիլիոս Աստրացու և աստղագուշակ Սանիլիոս Անտիոքացու:

25 Տե՛ս Կիկերոն, Առ մերձավորք, IX, 10 (զրված է 46 թ. վերջին — 45 թ սկզբին մ. թ. ա.):

26 Նշել կեղծ տեղերը — գիծ լուսանցքերում, որով քելականները դասականների հրատարակություններում նշում էին ոչ հարազատ տեղերը: — Տե՛ս Կիկերոն, «Առ Ատտիկոս», XII, 26 (21 մարտի 45 թ.):

27 Կարինք — տե՛ս Տիր., ծանոթագր. 41:

28 Պոմպեոսի մասին Սալլյուստիոսը գրել է մեզ չհասած «Պատմության» մեջ:

29 Միայն պատանհիների — մինչդեռ, ըստ սովորականին, պատանհկան հասակում աշակերտները քերականի դպրոցից փոխադրվում էին ճարտասանի դպրոց:

30 Ռորինսոնը ենթադրում է, որ Դոմիցիոս Մարսուսը բերված քաղվածից առաջ բացթողում կա:

31 Դպրոցում — ավելի ճիշտ, in pergula, տան առջևի «կից կառույցում», որտեղ և սովորաբար տեղի էին ունենում դպրոցական պարասյունները:

32 «Զմյուռնիա» — Հելլիոս Կիննայի առասպելակաբանական պոեմը կիպրոսցի արքայադուստր Զմյուռնիայի իր հոր նկատմամբ տածած սիրո մասին. Կիննան նրա վրա աշխատել էր 9 տարի, Կատուլլոսը նրան անմահություն էր կանխագուշակել (հոդ. 95), բայց Քվինտիլիանոսը (X, 4, 3) և Մարցիալիսը (X, 21, III, 9) արդեն նրան քննադատաբար են մոտենում:

33 Պալատինուսի մատենադարանի մասին տե՛ս Օգ., 29, 3):

34 Օկտավիայի սյունաստանի մասին տե՛ս Օգ., 29, 4:

35 Տրաբետաներ — կատակերգություններ Հոմի «բարձր հասարակության» կյանքից (տրարեա — հեծյալների դասի տոնական զգեստը), տոգատաների տարատեսակները: Նրանք հաջողություն չունեին և, Մելիսոսից զատ, ոչ ոք տրաբետաներ չէր գրում:

36 «Կուլար ձախ» — բուցքամարտիկի կեցվածք, որը պաշտպանվում է աչից եկող հարվածից:

37 Վերգիլիոսի «Բուկոլիկներում» (հովվերգանմանակ 3) հովիվ Պոլեմոնը սրպես դատավոր է հանդես գալիս երգեցողության մեջ միմյանց հետ մրցակցել Դամետոսի և Մենակոսի միջև:

38 Ռեանսիտամի դարձանահայաց խաղողի այգիների մասին հիշատակում է նաև Պլինիոսը (14, 4, 49):

39 Բնիկացի մինչև անպատկերաբարձան — ad infamiam oris:

40 Հստ Հելլիսոսի, Պրորոսը, ընդհակառակը, շատ երկեր և շատ աշակերտներ էր թողել:

41 Ճարտասանների դեմ զույգ որոշումները (161 և 92 մ. թ. ա.) մեջ են բերվում նաև Հելլիսոսի մոտ, XV, 21: Առաջին որոշումը վերաբերում էր եկվոր հունական փիլիսոփաներին և ճարտասաններին, երկրորդը՝ շատինական ճարտասաններին:

42 Կիկերոնը պրետոր եղել է 66 թ., 40 տարեկանում: Հմմտ. «Առ մերձավորք», IX, 16, 7 (46 թ. հուլիս):

43 Օգոստոսի մասին հմմտ. Օգ., 84:

44 Կերպարները, օրինակները և այլն կազմում էին պարապմունքների սովորական շարք ճարտասանական դպրոցներում («Պրոգրմնասաներ»):

45 Կոնսուլներսիաները — ճառերը հնարովի դատական կազուսների առթիվ — ճարտասանական կրթության հաջորդ աստիճանն էին: Կոնսուլներսիաներից թեմաների և հատվածների մեծ ժողովածու էր կազմել Սենեկա Ավագը՝ փիլիսոփայի հայրը:

46 Բուլլա (տե՛ս Հուլ., ժանոթագր. 212) և պրեստիգիոսա (կարմիր եզրանախշով տոբա) — ազատածին աղայի նշաններ էին:

47 Կիկերոնի նամակը Տիտինիոսին չի պահպանվել:

48 Էպիդիոս Նուցերինոսը Կամպանիայում պաշտվում էր որպես գեոալիս աստված. Էպիդիոս անունը տարածում ուներ Օսկական մարզում:

49 Փշացրեց աչքերը — քանի որ մինչև ուշ ժամանակ խրախճանք էր անում Անտոնիոսի հետ:

50 Ունի սրբությունը — երկրմաստ արտահայտություն՝ ոճը = «ստիլ» որպես սուր քարի գրիչ և որպես խայթիչ, խաղաղ հանգ:

51 Տե՛ս Կիկերոն, Փիլիպպիկներ, II, 17, 11—15 և 22:

52 Առնտինուսական դաշտ — քերթառատ Սիցիլիայում, լեռնախնամ քաղաքի մոտ:

53 Ալբուցիոսի մանրամասն բնութագիրը տալիս է նաև նրան անձամբ ճանաչող Սենեկա Ավագը («Կոնսուլներսիաներ», VII, ներած.):

54 Երդումը հոմեոկան գատարանում արդարացիության ապացույց չէր համարվում, բայց կարող էր այգախոսին ճանաչվել հակառակորդի համաձայնությունը. այստեղ Ալբուցիոսի հակառակորդը նրա բացակահչությունը ընդունել էր որպես երդման համար համաձայնություն և, երգվելով, գործը լուծել էր հօգուտ իրեն:

ԲԱՆԱՍՏԵՂՄԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռոստանյիի հրատարակությունը դրվագների բաժանում չի տալիս. Տերենտիոսի և Վերգիլիոսի կենսագրություններում մենք պահպանում ենք ավանդական բաժանումը, իսկ մնացյալում մենք այն առաջին անգամ ենք մուծում վկայակազմների հարմարության համար:

ՑԵՐԵՆՏԻՈՍ

1 Պահպանված է Գոնատոսի կողմից Տերենտիոսին արված ժանոթագրության ոկզբում:

2 Երկրորդ պունիկական պատերազմը ավարտվեց մ. թ. ա. 201 թ., երրորդը սկսվեց 149 թ. և ավարտվեց Կարթագենի ավերմամբ 146 թվականին:

2 Յտանալար քաղվածում եզոճված է չորս ոտանալար. թարգմանությունը ըստ Իիշիի ճշգրտման, որն ընդունված է հրատարակիչների մեծամասնության կողմից:

4 Ժամանակագրական շխոթություն. «Ննդրուցի աղբիկը» բեմադրվել է 166 թ իսկ Ցեցիլիոս Ստացիոսը, ըստ Ավետտիոս— Հերոնիմոսի, մահացել է 187 թ.:

5 «Սկեսուրը», իսկապես, առաջին նրկու բեմադրությունների ժամանակ (165 և 160 թթ.) անհայտություն է կրել և հաշոգություն է ունեցել միայն նրրորդ անգամ:

6 Ենթավերճագիր— դիդասկալիա, համառոտ տեղեկություններ պիեսների գրելու ժամանակի և բեմադրության պարագաների մասին: Այդ բանից հետո հնարավոր է բացթողում (Տերենտիոսի պիեսների համեմատությունը նրանց հունական նմուշների հետ),

7 Տերենտիոս, «Եդրայրներ», 15—21 (ըստ Ա. Վ. Արտյուշկովի թարգմ.):

8 Մարտյան կալենդներ— մատրոնալիաների տոնը (տե՛՛ն Վեսպ., ծանոթագր. 52),

9 Տերենտիոս, «Ինքնախոշտանգողը», 722 (ըստ Ա. Վ. Արտյուշկովի թարգմ.):

10 Մեզալեզիական հանդիսախաղեր— 4—10 տարբեր, ի պատիվ աստվածների Մորս:

11 Տերենտիոսի մահը— 159 թ. մ. թ. ա.: Ըստ ավանդության, Մենանդրիտը նույնպես կործանվել է ծովում:

12 108 կատակերգությունները կազմում են Մենանդրեսի ամբողջ ժառանգությունը, այստեղ այդ թիվը բացահայտ թյուրիմացություն է (միգրացի եղել է «Մենանդրեսի 108 կատակերգություններով»:

13 Վոլկացիոսը— ի նկատի է առնված հայտնի «10 կատակագիրների կանոնը» (Վոլկացիոս Սեդիգիտոսի «Բանաստեղծների մասին» ռեքից), որը պահպանվել է Հելլիոսի կողմից (XV, 24). լավագույնը անվանված է Ցեցիլիոսը, ապա՝ Պլավտոսը, Նեվիոսը, Լիցիեիոսը, Ատիլիոսը, Տերենտիոսը, Տուրպիտոսը, Տրաբեյան, Լուսցիոսը, Էննիոսը:

14 «Մարզագետին»— տե՛՛ս Բեր., ծանոթագր. 20: Կիկերոնի այդ երկը չի պահպանվել. Կիկերոնի և Կեսարի հատվածների միատեսակ սկիզբը ստիպում է մտածել, որ նրանց հիմքում ինչ-որ դպրոցական բանաստեղծական վարժություններ են ընկած:

ՎԵՐԳԻԼԻՈՍ

1 Պահպանված է Դոնատոսի կողմից Վերգիլիոսի ծանոթագրության սկզբում:

2 Վերգիլիոսի ծնունդը— մ. թ. ա. 70 թ. հոկտեմբերի 15-ին:

3 Անդրը սովորաբար նույնացվում է այժմյան Պիեմոնտի հետ Մանտուայի մոտ:

4 Ատուն, որտեղ ծնվել է Վերգիլիոսը, Պիեմոնտում ցույց էին տալիս դեռևս XI դարում:

5 Ձեռագրերում արված է «առանցք տարեկան» և այդ կապակցությամբ Թոստանյի կոնտրաբերի անունը համարում է ընդմիջարկություն (հազիվ թե հիմնավոր):

6 Պլուտիոս Հիերոսոսի, ըստ Սերվիոսի, Վերգիլիոսը գովերգել է «Բուկոնդիկներում» Ամարիլիդայի անվան տակ:

7 *Virgilius-virgo* հաճախ «աղբիկ» հնարավոր է, քիչ ստուգաբանություն է իսկուրի խաղով, կամայանիայում Վերգիլիոսը կալված ուներ Եդրայի մոտակայքում (հմտ. Եդրայիների հետ նրա վեճի զվարճաբանումը Հեջիոսի մոտ, VI, 20). Եւ ճիշտ ժամանակ աղբիկ է նաև Ենանդրոս, հաճախեղով փոխառվա էպիկուրի հեռակարգ թիրոսի դպրոցը:

8 Դավանի մասին— «Բուկոնդիկներ», 5 էկրոզա:

9 «Էտնայի» և մի քանի ուրիշի հետ այդ բոլոր երկերը կազմում են այսպես կոչված

Appendix Vergiliana: Այդ երկերի Վերգիլիոսին պատկանելու վերաբերյալ ժամանակակից գիտնականների կարծիքները տարամիտվում են:

¹⁰ Տասնվեց տարեկան— ձեռագրերի թիվն է. մոստանյին առանց բավարար հիմքերի այն ուղղում է «21 տարեկան»:

¹¹ Երկտողանի ոտանավոր— «Մոծակ», 413—414:

¹² Հմմտ. Սերվիոս (ժանոթագր. «Բուկոլիկներ» հոդ., 6, 3. «Սկսեցի գովերգել եռ թագավորներին և կոիվներ»): «Հեղինակը ի նկատի ունի կամ «էնեականը», կամ ալրանյան թագավորների գործերը, որոնք պատկերելուն նա ուզեց ձեռնարկել, բայց թողեց, սարսափած կոպտահնչուն անուններից»:

¹³ Այդ հավատարիքի մասին մանրամասն—Հելլիոս, XVII, 9, 2. «Վերգիլիոսի բարեկամներն ու մերձավորները... հաղորդում են, որ նա սովորաբար ասում էր, որ իր բանաստեղծությունները երկնում է էգ արջի պես՝ ինչպես այդ կենդանին է տձև ու տգեղ ձագեր բերում, իսկ հետո, լիզելով, արդեն՝ ծնվածներին տեսք ու կերպարանք տալիս, այնպես էլ նրա շնորհի պտուղները ծնվելուց անմիջապես հետո կոպիտ ու ոչ կատարյալ են լինում, և միայն հետո, հղկելով ու մշակելով դրանք, նա նրանց դիմագծեր ու արտահայտչականություն է հաղորդում»:

¹⁴ «Բուկոլիկներ»— 41—39 թթ.:

¹⁵ «Գեորգիկներ»— 36—30 թթ.:

¹⁶ «էնեական»— 29—19 թթ.:

¹⁷ Տե՛ս Պրոպերցիոս, III, 34, 65—66 (ըստ Ա. Ա. Ֆետի թարգմ.) գրված է մ. թ. ա. շուրջ 25 թ.:

¹⁸ Վերգիլիոսի պատասխան-նամակից մի հատված բերում է Մակրոբիոսը I, 24, 11. «Ինչ վերաբերում է իմ էնեոսին, ապա, երգվում եմ, եթե նա արդեն արժանի լիներ քո ուշադրությանը, ես ուրախությամբ կուղարկեի քեզ, բայց առարկան, որին ես ձեռնամուխ եմ եղել, այնպիսին է, որ երբեմն ինձ թվում է, որ բանական չէր ձեռք զարկել մի այդպիսի մեծ գործի, հատկապես, ինչպես որ դու գիտես, երբ ես անձնատուր եմ լինում սերիչ զբաղմունքների, որոնք խիստ կարևոր են իմ մտահղացման համար...»:

¹⁹ Քաղվածք «էնեականից», VI, 884:

²⁰ Քաղվածք «էնեականից», VI, 164—165 (ըստ Վ. Բոյուսովի թարգմ.):

²¹ Վերգիլիոսի մահը— 21 սեպտեմբերի 19 թ. մ. թ. ա.:

²² Կալսրենբեր— իտալիկական ցեղ, որը բնակվում էր Բրունդիզիումի շրջակայքում:

²³ Պարթենոպեա— նեապոլի հունական անվանումը:

²⁴ Արոտներ— ակնարկում է «Բուկոլիկները», գյուղեր՝ «Գեորգիկները», առաջաբերներ՝ «էնեականը»:

²⁵ Սուլպիցիուսը ապրել է Սվետոնիոսից ուշ, ուստի ոտանավորն այստեղ իրենից ներկայացնում է կամ հետագա ընդմիջարկություն (ինչպես կարժում է հետազոտողների մեծամասնությունը) կամ Սուլպիցիուս անունը վերաբերում է որևէ ուրիշ, ոչ քաջ ծանոթ մի անձնավորության (այդպես է կարծում մոստանյին):

²⁶ Քաղվածք «էնեականից», III, 340: Ձեռագրերում ոտանավորը շարունակություն անի՝ «Ժնել է երջանիկ Կրեուսան»:

²⁷ «էնեականի» II և III գրքերում նկարագրված իրադարձությունները նախորդում են I գրքում նկարագրված իրադարձություններին, այստեղից էլ խոսակցությունները ենթադրյալ վերադասավորության մասին: Ըստ Սվետոնիոսի դժվար է հասկանալ, թե ինչպիսին է եղել գրքերի նախասկզբնական դասավորությունը (III, I, II, IV թե՛ II, III, I, IV),

28 «էնեականի» սկզբնական ոտանավորները ըստ Վ. Ռոյուսովի թարգմանության
 29 Վերգիլիոսի թվարկվող «վատաբանողների» մասին ուրիշ տեղեկություններ չկան,
 30 Մաղրանմանեցված են 1 և 3 էկլոգաների սկզբնական տողերը. «Տիտիրոս, գու,
 որ պառկած ես սաղարթախիտ հաճարենու ծածկույթի տակ...» և «Ասի՛ր, Դամետոս,
 ո՞ւմն է այդ հոտը, միթե՞ Մելիթեսոսն ես— Ո՛ր, բանգի այն ինձ էգոնն է տվել՝ դա էգո-
 նի հոտն է»։ Առաջին դեպքում ժաղրանմանեցնողը օգտագործում է «հաճարենու ծած-
 կույթի տակ» (subtegmine fagi) արտահայտությունը, երկրորդ դեպքում՝ «ո՞ւմն է այդ
 հոտը» ռամկական ձևը (cuium pecus փոխանակ cuius pecus)։

41 «Մերկ վարիբ...» — «Գեորգիկներ», I, 299 (կիսաոտանավորը յուրացված է Հե-
 սիոդոսից, «Աշխատանք և օրեր», 391)։

32 «Շինծուալբյուն» — cacozelia, հմմտ. Օդ., 86։

33 «Ցուրացումը» հետո շատ լայն էր հասկացվում. այսպես, «էնեականի» IV գիրքը
 ամբողջությամբ յուրացված էր համարվում Ապոլլոնիոս Հոդոսցուց միայն այն բանի
 համար, որ Դիդոնայի սիրատարությունն և կարսագրությունը հիշեցնում էր Մեդեայի
 կիրքը Ապոլլոնիոսի «Արգոնավտիկայում»։

ՀՈՐԱՑԻՈՍ

1 Պահպանված է մի քանի ձեռագրերում. Սվետոնիոսի հեղինակ լինելը վկայված է
 Պորփյուրիոնոսի վկայակոչմամբ, ծանոթագր. «Ուղերձների», II, 1։

2 «Թեևով քիթը սրբել» — առած այդպես էր ասվում նաև փիլիսոփա Բիոնի հոդ-
 մասին (Դիոգենես Լաերտացի, IV, 7, 46)։

3 Նինեիոս — անհայտ անձնավորություն է. ձեռագրերի ընթերցումը եղծված, ճշ-
 զրրտումը պայմանական է. կարելի է նաև կարդալ «Դուրս կգամ քուռակից էլ նիհարուկ»
 և «Դուրս կգամ կապկից էլ նիհարուկ»։

4 Տիբերիոսի և Դուլգոսի փառաբանումը — «Ներբողյաններ», IV, 4 և 14։

5 «Զրույցներ» (Sermones) — Հորացիոսի «Սատիրականների» և «Ուղերձների»
 ընդհանուր անվանումը։

6 Քաղվածք — «Ուղերձներ», II, 1—4 (ըստ Ն. Գինցուրգի թարգմ.)։

7 Հորացիոսն իր արտաքինը նկարագրում է «Սատիրաներում», II, 3 և «Ուղերձնե-
 րում», I, 20, 23 և I, 4, 15։

8 Սեֆստարիում — կատակի իմաստը այնքան էլ պարզ չէ՝ ըստ երևույթին, ակնար-
 կում է համապատասխան ծավալի անոթի ձևը։

9 Բացթողում՝ ըստ երևույթին, դուրս է ընկել Հորացիոսի բուն երկերի ցուցակը։

10 Օղերեզգներ և ուղերձ — ըստ երևույթին, ուշ շրջանի դպրոցական կոմպոզիցիա-
 ներ։

11 Հորացիոսի ծնունդը — մ. թ. ա. 65 թ. դեկտեմբերի 8-ին։

12 Հորացիոսը մահացել է — մ. թ. ա. 8 թ. նոյեմբերի 27-ին։

13 Հոսմում... Մեկեճասի մահից — Ֆալենի լրացումը, որն ընդունել է Թոստանյին։

ՊԵՐՍԻՈՍ

1 Պերսիոս. Ձեռագրերում այդ վարքագրությունը վերագրվում է քերական Պրոբո-
 սին. Թոստանյին դրա հետ համաձայն է, բայց հրատարակիչների մեծ մասը Պերսիոսի
 կենսագրությունը մտցնում է Սվետոնիոսի երկերի մեջ։

2 Ավրա— բնագրում հին Aules ձևն է:

3 Պարտիաի ժնուեղը— 34 թ. դեկտեմբերի 4-ին:

4 Փանը— 62 թ. նոյեմբերի 24-ին:

5 Կորնուտոսի բանաստեղծական պարամունքների մասին առջևոս սինչ հայտնի չէ, և այդ նախադասությունը շատ հրատարակիչներ համարում են ուշ շրջանի ընդմիջարկություն:

6 Այս գիրքը— այսպիսին Յ սատիրաների ժողովածուն, որին նախարան է ծառայել այս կենսագրությունը:

7 Պրեանեպատայի (հռոմեական պատմությունից վերցրած ողբերգությունն) վերնագիրը ձեռագրերում անհույս կերպով եղծված է:

8 Յրասեայի զոհանչը— Արրիա Ավազը, Յեցինա Պետոսի՝ Կլավդիոսի օրոք Կամիլչոս Ակրիբոնիանոսի դավադրության մասնակցի կինը, տեսնելով, որ ինքնասպանության դատարարված իր ամուսինը տատանվում է, նա առաջինը դաշունահարեց իրեն, իսկ հետո այն մեկնեց ամուսնուն ասելով՝ «Պետոս, դա ցավ չի պատճառում»:

9 Երեսուներորդ տարում— մոտավոր թիվ է:

10 Եզրափակիչ նախադասությանը հետևում է մի հատված, որը Ռոստանյին հանում է, վերագրելով այն թե ոչ կենսագրությանը, այլ սատիրաների ծանոթագրության սկզբին. «Սատիրաներ գրելուն նա ձեռնամուխ եղավ մեծ խանդավառությամբ, հենց նոր հրատեղտ տալով դարոցին ու ոսուցիչներին, այն բանից հետո, երբ կարդաց Լուցիլիոսի տասներորդ գիրքը: Ի նմանեցումն այդ գրքի սկզբի, նա սկզբնապես պարսավում է իրեն, իսկ ապա և բողոքին, և այնպիսի խստությամբ էր հետապնդում ժամանակակից բանաստեղծներին ու հոեսողներին, որ հարձակումներ էր գործում նույնիսկ Ներոնի վրա, որն այն ժամանակ կայսր էր: Նրա ոտանավորը Ներոնի մասին այսպիսին էր.

... ես տեսել եմ, գրքույկ, ես ինքս եմ տեսել,

Որ Միդաս-արքան էջի ազանչներ ունի...

Քայց Կորնուտոսը, ձևափոխելով միայն անունը, ուղղել էր այսպես.

Որ մեզնից ամեն մեկը էջի ազանչներ ունի...

որպեսզի Ներոնը շմտածեր, որ այդ իր մասին է ասված»։— Քաղվածք— Պերսիոս, «Սատիրաներ», I, 120—121:

ԼՈՒԿԱՆՈՍ

1 Լուկանոս: Պահպանվել է Լուկանոսի մի քանի ձեռագրերում:

2 Հեղամյա մրցումներ— տե՛ս Ներ., 12:

3 Գեոևս ճա 21 տարեկան չլատ— Բոստանյի լրացումը:

4 «Քայց ուրա՛ն եևոս, եմ ես...» — կրկիմաստ արտահայտություն՝ «Որքա՛ն է իմ ստեղծագործությունը, թույլ քան Վերգիլիոսի պատանեկական «Մոծակը» կամ «Որքա՛ն եմ ես իմ (արդեն այսքան նշանակալի) ստեղծագործությամբ երիտասարդ, քան Վերգիլիոսն էր, երբ դեռ միայն «Մոծակն» էր գրել»:

5 Դրվագի վերջում բացթողում կա. հնարավոր է, որ չի պահպանվել նաև դրվագի սկիզբը կյանքի թվականներով և այլն:

6 Տիրանասպաններին— Բրուտոսին և Կասիոսին, որոնց մասին շատ է խոսվում «Ճարսալիայում»:

⁷ Հստ Տակիտոսի, Անն., XV, 56, սկզբում Հուկանոսը և մյուսները երկար ժամանակ ժխտում էին և միանգամից շէր որ խոստովանեցին, իսկ մահից առաջ Հուկանոսը արտասանեց իր ոտանավորը «Ցարսալիայից» մահացող զինվորի մասին (նույն տեղում, գլ. 70):

ՏԱՐԲԵՐ ԳՐՔԵՐԻՑ

¹ Պասիենոս Կրիսպոս: Կենսագրությունը պահպանվել է Յուվենալի վերաբերյալ մեկնարանություններում:

² «Ուտոլ էր զնում...» — տե՛ս Կալ., 26, 2:

³ Պլինիոս Ավագ: Կենսագրությանը պահպանված է «Բնական պատմության» ձեռագրերում:

⁴ Կամպանիայի աղետի մասին տե՛՛ր Տիտ., 8, 3:



ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

- 100 թ. մ. թ. ա.— ծնվեց Ղուլիոս Կեսարը: Ապոլուլեոս Սատուրնինոսի ապստամբությունը Ղոռմում և նրա ճնշումը (Ղուլ., 12):
- 92— էդիկտի հրապարակումը լատինական ճարտասանական դպրոցների դեմ (Քեր., 25): Ռուտիլիոս Ռուփոսի արտաքսումը (Քեր., 6):
- 91—89— Իտալիկների ապստամբությունը Ղոռմի դեմ (դաշնակցային պատերազմը) (Օգ., 23):
- 87— Մարիուսը և Կիննան իշխանության գլուխ Ղոռմում:
- 86— Մարիուսի մահը: Կեսարը՝ Ցուպիտերի քուրմ (Ղուլ., 1):
- 85— Կեսարի հոր մահը (Ղուլ., 1):
- 83— Կեսարի ամուսնությունը Կոռնելիայի հետ (Ղուլ., 1):
- 82—79— Սուլլայի դիկտատուրան: Պրոսկրիպտիաները (Ղուլ., 1):
- 80— Կեսարը Արևելքում, մասնակցում է Միհրդատի դեմ մղված պատերազմին. Միթիլենի գրավումը (Ղուլ., 2):
- 78— Կեսարը մասնակցում է իսավրների դեմ մղված պատերազմին: Սուլլայի մահը:
- 77— Լեպիդոսի պարտությունը (Ղուլ., 3): Կեսարի ելույթը Դուլաբիլայի դեմ (Ղուլ., 4):
- 75— Կեսարի ուղևորությունը Ղոռդոս (Ղուլ., 4):
- 73—71— Սպարտակի ապստամբությունը (Օգ., 3):
- 70— Պոմպեոսի և Կրասոսի առաջին կոնսուլությունը, ժողովրդական տրիբունների իշխանության վերականգնումը (Ղուլ., 5): Ծնվեց Վերգիլիոսը (Վերգ., 2):
- 68— Կեսարը՝ քվեստոր (Ղուլ., 6): Կեսարի առաջին ծառայությունը Իսպանիայում (Ղուլ., 7): Կոռնելիայի՝ Կեսարի կնոջ, մահը (Ղուլ. 6):
- 67— Կեսարի ամուսնությունը Պոմպեայի հետ (Ղուլ., 6):
- 66— Կատիլինայի առաջին դավադրությունը Կեսարի և Կրասոսի աջակցությամբ (Ղուլ., 9):
- 65— Կեսարը՝ էդիլ. մարիուսական հուշարձանների վերականգնումը (Ղուլ., 10—11): Ծնվեց Ղորացիոսը (Ղոր., 8):

Աղյուսակի մեջ մտցված են պատմական և պատմագրական կարևորագույն իրադարձությունները, որոնք հիշատակում է Սվետոնիոսը ինչպես կայսրերի կենսագրություններում, այնպես էլ բանաստեղծների և քերականների կենսագրություններում: Փակագծերում ցույց են տրված այն զուխները, որտեղ հիշատակվում է իրադարձությունը: Աղյուսակը կազմել է Մ. Լ. Գասպարովը:

- 63— Կիկերոնի կոնսուլությունը: Կեսարն ընտրվում է մեծ թրմապետ (Հուլ., 13): Ռարի-
րիոսի գործը (Հուլ., 12): Կատիլինայի դավադրությունը (Հուլ., 14): Մնվեց Օգոստոսը
(Օգ., 5): Քերական Օրբիլիոսը Հռոմում (Քեր., 9):
- 62— Կեսարը՝ պրետոր (Հուլ., 14): Կլոդիոսի գործը, Կեսարի ամուսնալուծությունը
Պոմպեայից (Հուլ., 6, 74):
- 61— Պոմպեոսի վերադարձը Արևելքից և տրիումֆը: Կեսարը՝ պրոպրետոր Իսպանիայում
(Հուլ., 18):
- 60— Պոմպեոսի գժտությունը սենատի հետ (Հուլ., 19): Գայոս Օկտավիոսի պրետորու-
թյունը (Օգ., 3):
- 59— Կեսարի կոնսուլությունը (Հուլ., 19): Կեսարի դաշինքը Պոմպեոսի և Կրասոսի
հետ— առաջին եռապետությունը (Հուլ., 19):
Կեսարի ամուսնությունը Կալպուրնիայի հետ (Հուլ., 21):
- 58— Կեսարի գալլական փոխարքայության սկիզբը (Հուլ., 23). պատերազմը հելվետնե-
րի դեմ: Գայոս Օկտավիոսի՝ Պոստոսի հոր, մահը (Օգ., 4):
- 57— Կեսարի պատերազմը բելգերի դեմ: Մնվեց Լիվիան, Օգոստոսի ապագա կինը:
- 56— Դոմիցիոսի ելույթը Կեսարի դեմ և եռապետների համաժողովը Լուկայում (Հուլ., 24):
- 55— Պոմպեոսի և Կրասոսի երկրորդ կոնսուլությունը. Կեսարի գալլական փոխարքայու-
թյան երկարաձգումը (Հուլ., 24): Կեսարի գերմանական և բրիտանական արշա-
վանքները (Հուլ., 25): Լուկրեցիոսի մահը: Վերսիլիոսի շափահասությունը (Վերգ., 6):
- 54— Ալբրեչիայի՝ Կեսարի մոր, մահը. Յուլիայի՝ Կեսարի դստեր և Պոմպեոսի կնոջ, մահը
(Հուլ., 26): Կեսարի երկրորդ բրիտանական արշավանքը (Հուլ., 25):
- 53— Կրասոսի կործանումը պարթևական արշավանքի ժամանակ: Կեսարի գերմանական
երկրորդ արշավանքը (Հուլ., 25):
- 52— Մեծ ապստամբություն Գալլիայում, Գերգուվիայի ճակատամարտը (Հուլ., 25): Կլո-
դիոսի սպանությունը և խռովություններ Հռոմում, Պոմպեոսը՝ միանձնյա կոնսուլ
(Հուլ., 26):
- 51— Յուլիայի՝ Կեսարի թոռ, մահը (Օգ., 8): Օպտիմատների փորձերը՝ զրկելու Կեսա-
րին հրամանատարությունից (Հուլ., 28):
- 50— Նոր փորձեր՝ զրկելու Կեսարին հրամանատարությունից: Կեսարը կաշառում է Կու-
րիոնին (Հուլ., 29):
- 49— Կեսարն անցնում է Ռուրիկոնը (Հուլ., 31), տիրանում է Իտալիային և շարժում
պոմպեոսականներին Իսպանիայում (Հուլ., 34): Կեսարի առաջին ընտրությունը
դիկտատոր (Հուլ., 76):
- 48— Կեսարը Մակեդոնիայում. Դիրրաքիայի և Ցարսալի ճակատամարտերը (Հուլ., 35—
36): Օկտավիանոսի շափահասությունը (Օգ., 8):
- 47— Ալեքսանդրիական պատերազմը և Կեսարի հաղթանակը Փառնակի նկատմամբ
(Հուլ., 35): Վետերանների օժտումը հողաբաժնով (Հուլ., 38):

ԿԵՍԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
(46—44 թթ. մ. թ. ա.)

- 46— Աֆրիկական պատերազմը և հաղթանակը Սկիպիոնի և Ցուբայի դեմ Տապսի մոտ
(Հուլ., 35—36): Կեսարի շորս տրիումֆները (Հուլ., 37): Կեսարը՝ դիկտատոր 10
աարով (Հուլ., 76): Օրացույցի ռեֆորմը (Հուլ., 40): Քաղաքացիների մարդահա-
մարը (Հուլ., 41): Կլեոպատրան Հռոմում (Հուլ., 52): Նախամայր-Վեներայի աա-
ճարի հիմնարկումը (Հուլ., 61):

- 45—Իսպանական պատերազմը և հալթանակը Պոմպոսի որդիներին նկատմամբ Մունդայի մոտ (Հուլ., 85): Օկտավիանոսը ուղեկցում է Կեսարին և ապա մեկնում է Ալոլլոնիա (Օգ., 8): Կեսարի խապանական տրիումֆը (Հուլ., 37): Պատիվներ և տիտղոսներ (Հուլ., 76):
- 44—Կեսարը՝ ցմահ զիկտատոր (Հուլ., 76): Բազմաթիվ կառավարական իշխանություն շուրացնելու Կեսարի փորձերը (Հուլ., 79): Կեսարի սպանությունը (Հուլ., 80—82): Օկտավիանոսը Հոսմում (Օգ., 8):

ՕԳՈՍՏՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
(13 թ. մ. թ. ա.— 14 թ. մ. թ.)

- 43—Մուսինյան պատերազմը (Օգ., 10—12): Օկտավիանոսի առաջին կանտալությունը (Օգ., 26): Երկրորդ հռոմեացիությունը և պրոսկրիպտիաները (Օգ., 27):
- 42—Փիլիպպեական պատերազմը (Օգ., 13): Հորացիոսը Բրուտոսի զորքերում (Հոր., 1): Միջերիական պատերազմի սկիզբը (Յգ., 16): Կեսարի աստվածաբանությունը (Հուլ., 58): Մեվեց Տիբերիոսը (Տիբ., 5):
- 41—40—Պերուզիական պատերազմը (Յգ., 14—15):
- 40—Բրունդիզիումի պայմանագիրը Օկտավիանոսի և Անտոնիոսի միջև: Օկտավիանոսի ամուսնությունը Եկրիբոնիայի, Անտոնիոսի՝ Օկտավիայի հետ (Յգ., 62):
- 39—Միզենյան զինուորադարը Սեքստոս Պոմպոսի հետ (Օգ., 16): Յուլիա Ավագի ծնունդը և Օգոստոսի ամուսնալուծությունը Եկրիբոնիայից (Յգ., 63): Հրատարակվեցին Վերգիլիոսի «Բուկոլիկները» (Վերգ., 19):
- 28—Օկտավիանոսի ամուսնալուծությունը Լիվիայի հետ (Օգ., 63): Մեվեց Գրուզոս Ավագը (Կլավ., 1): Պատերազմի վերահսումը Սեքստոս Պոմպոսի դեմ (Յգ., 16):
- 37—Տարնետումի պայմանագիրը Օկտավիանոսի և Անտոնիոսի միջև: Անտոնիոսի ամուսնալուծությունը Կլեոպատրայի հետ: Նոր նախատրամի կառուցումը (Յգ., 16):
- 36—Օկտավիանոսի հալթանակը Սեքստոս Պոմպոսի նկատմամբ Միլլիի ժամ, փիլիպպեական պատերազմի վերջը, Կալիգոսի տապալումը (Յգ., 16):
- 35—33—Դալմաթական պատերազմը (Օգ., 20):
- 35—Հորացիոսի ստեփրանների I գիրքը:
- 33—Տիբերիոսի հոր ժառը (Տիբ., 6):
- 32—Օկտավիանոսի խզումը Անտոնիոսի հետ (Օգ., 17):
- 31—Ահաբումի պատերազմը (Օգ., 17):
- 30—Ալեքսանդրիայի գրավումը, Անտոնիոսի և Կլեոպատրայի կործանումը, Եգիպտոսի փրացումը (Յգ., 17—18): Կալիգոս Կրտսերի դավադրությունը (Օգ., 19): Հորացիոսի սատիրաների II գիրքը:
- 29—Օկտավիանոսի վերադարձը և եռակի տրիումֆը (Օգ., 22): Աստվածային Հուլիոսի տաճարի օծումը (Օգ., 29): Հորացիոսի «Էպոգեմերը»: Վերգիլիոսի «Գեոլոգիկները» (Վերգ., 20):
- 28—Աքվիտանիայի նվաճումը, հալթանակը դաթիացիներին դեմ (Օգ., 21): Պալատինումյան Ալոլլոնի տաճարի օծումը (Օգ., 29): Սենատի առաջին գումար (Օգ., 35):
- 27—Օկտավիանոսը ընդունում է Օգոստոս անունը (Օգ., 7): Պրովինցիաների բաժանումը նրա և սենատի միջև (Օգ., 47): Տիբերիոսի շափահասությունը (Տիբ., 7):
- 26—Կանտարրիական պատերազմը (Օգ., 20—21, Տիբ., 9): Կոռնելիոս Փալոսի մահը (Օգ., 66):

- 25—Աւարիական սալասների հնազանդեցումը (Օգ., 21): Գալաթիայի միացումը: Օգոստոսի կողմից Մարցելլոսի որդեգրումը և Մարցելլոսի ամուսնությունը Յուլիայի հետ (Օգ., 63):
- 23—Մուրենայի և Ցեպտիմի դավադրությունը (Օգ., 18, Տիր., 8): Օգոստոսի հիվանդությունը (Օգ., 28, 59, 81): Օգոստոսը ընդունում է պրոկոնսուլական իշխանություն և ցմահ տրիբունություն (Օգ., 27): Մարցելլոսի մահը (Օգ., 62): Տիրերիոսը՝ քվինտոսը (Տիր., 9): Հորացիոսի «Ներբողյանների» երեք գիրքը:
- 22—Պարենային ճգնաժամ: Օգոստոսի հրաժարումը նրան առաջարկված դիկտատորությունից (Օգ., 52): Յուլիոսեր-Շանթարձակի տաճարի օծումը (Օգ. 29): Վերգիլիոսը Օգոստոսին կարգում է «Էնեականը» (Վերգ., 32):
- 21—Օգոստոսը արևելյան պրովինցիաներում (Օգ., 47): Ագրիպպայի ամուսնությունը Յուլիայի հետ (Օգ., 63): Կոլեգիումների արգելումը (Օգ., 32):
- 20—Տիրերիոսի առաքելությունը Արևելք (Տիր., 9): Պարթևական թագավորը Օգոստոսին է վերադարձնում հռոմեական զորշները և զիջում Հայաստանը (Օգ., 21): Հորացիոսի ուղերձների I գիրքը:
- 19—Էգնացիոսի դավադրությունը (Օգ., 19): Կանտարիայի հնազանդեցումը Ագրիպպայի կողմից (Օգ., 21): Վերգիլիոսի մահը, «Էնեականի» ետմահու հրատարակումը (Վերգ., 41):
- 18—Ճոխություն, ամուսնության և ամուսնական անհավատարմության վերաբերյալ օրենքները (Օգ., 34): Սենատի երկրորդ զտումը (Օգ., 35):
- 17—Հարյուրամյա հանդիսությունները (Օգ., 31): Գայոս և Լուկիոս Կեսարների որդեգրումը (Օգ., 64):
- 16—Տիրերիոսը՝ պրետոր (Տիր., 9): Լուլիոսի սյարտությունը Գերմանիայում (Օգ., 23):
- 15—Ռետիայի և Վինգեիլիկիայի հնազանդեցումը (Օգ., 21, Կլավ., 1, Տիր., 9): Մնվկց Գերմանիկոսը՝ Դրուզոսի որդին (Կալ., 1):
- 13—Տիրերիոսի առաջին կոնսուլությունը (Տիր., 9): Հորացիոսի «Ներբողյանների» IV գիրքը (Հոր., 5):
- 13—9— Պաննոնիայի նվաճումը (Օգ., 21):
- 12—Լեպիդոսի մահը. Օգոստոսը՝ մեծ քրմապետ (Օգ., 31): Ագրիպպայի մահը (Օգ., 63):
- 11— Օվտավիայի մահը (Օգ., 61): Տիրերիոսը ամուսնանում է Յուլիայի հետ (Տիր., ?): Դրուզոսի գերմանական արշավանքը և նավարկությունը օվկիանոսում (Կլավ., 1): Մարցելլոսի թատրոնի օծումը (Օգ., 29):
- 10—Պարթևական պատանդները Հռոմում (Օգ., 21, 43): Մնվկց Կլավդիոսը (Կլավ., 2): Օվացիա Դրուզոսին գերմանական հաղթանակների համար (Կլավ., 1):
- 9— Օվացիա Տիրերիոսին պանոնյան հաղթանակների համար (Տիր., 9): Դրուզոս Ավագի կոնսուլությունը և մահը Գերմանիայում (Տիր., 7, Կլավ., 1):
- 8—Տիրերիոսի առաջին արշավանքը Գերմանիա (Տիր., 9): Սեքստիլիում ամիսը վերանվանվում է Օգոստոս (Օգ., 31): Մեկենասի և Հորացիոսի մահը (Հոր., 8):
- 7—Հռոմի բաժանումը օկրուգների և թաղամասերի (Օգ., 30): Տիրերիոսի գերմանական տրիումֆը (Տիր., 9):
- 6—Գայոսի՝ Օգոստոսի թոռան շափահասությունը (Օգ., 28): Տիրերիոսը տրիբունական իշխանություն է ստանում 5 տարով, բայց հեռանում է Հռոդոս (Տիր., 9—11):
- 3— Մնվկց Գալլան (Գալ., 4):
- 2— Օգոստոսի վերջին կոնսուլությունը, Լուկիոսի՝ նրա թոռան, շափահասությունը (Օգ., 26): Օգոստոսի ֆորումի օծումը Մարս-Վրիժառուի տաճարի հետ, հանդիսախաղեր

- (Օգ., 29, 41): Օգոստոսը ստանում է հայր հայրենյաց անունը (Օգ., 58): Յուլիա Ավագի արտաքսումը (Օգ., 65, Տիր., 11)
- 1 թ. մ. թ. ա.— Տիրերիոսի տրիբունական լիազորությունների ժամկետի լրումը՝ նրա կացութունը Հռոդոսում դառնում է աքսոր (Տիր., 11—12): Գայոսի՝ Օգոստոսի թոռան, ուղևորությունը Արևելք (Տիր., 12):
- 2 թ. մ. թ.— Տիրերիոսը վերադառնում է Հռոմ (Տիր., 14): Լուկիոսի՝ Օգոստոսի թոռան, մահը:
- 4— Գայոսի՝ Օգոստոսի թոռան, մահը Արևելքում: Տիրերիոսի որդեգրումը Օգոստոսի կողմից և Գերմանիկոսի՝ Տիրերիոսի կողմից (Օգ., 65, Տիր., 15): Տիրերիոսը կրկին տրիբունական իշխանություն է ստանում (Տիր., 16): Սենատի երրորդ գտումը (Օգ., 37):
- 4—6— Տիրերիոսի արշավանքները Գերմանիա (Տիր., 16):
- 6—9—Ապստամբություն Պաննոնիայում և Դալմաթիայում. Տիրերիոսի արշավանքները ապստամբների դեմ (Տիր., 16):
- 6— Զինվորական գանձարանի հիմնումը (Օգ., 49):
- 7— Ագրիպպա Պոստումոսի աքսորը (Օգ., 65):
- 8—Յուլիա Կրտսերի աքսորը (Օգ., 65, 72): Օվիդիոսի արտաքսումը (Քեր., 20):
- 9— Վարոսի պարտությունը Գերմանիայում (Օգ., 23, Տիր., 17): Պապիոս-Պոպպոսի օրենքը (Օգ., 34, Կլավ. 19): Մնվեց Վեսպասիանոսը (Վեսպ., 2):
- 10—Համաձայնության տաճարի օծումը (Տիր., 20):
- 10—11— Տիրերիոսի վերջին արշավանքները Գերմանիա (Տիր., 18):
- 12—Գերմանիկոսի առաջին կոնսուլությունը: Մնվեց Կալիգուլան (Կալ., 8): Տիրերիոսի Պաննոնյան տրիումֆը (Տիր., 20):
- 13—Տիրերիոսը՝ Օգոստոսի համակառավարիչ (Տիր., 13): Գերմանիկոսը մեկնում է գերմանական զորքերի մոտ (Կալ., 8):

ՏԻՐԵՐԻՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(14—37 թթ. մ. թ.)

- 14—Օգոստոսի մահը և աստվածացումը (Օգ., 97—100): Ագրիպպա Պոստումոսի սպանությունը (Տիր., 22): Հուլիաներ Իլլիրիայի և Գերմանիայի զորքերի մեջ (Տիր., 25): Յուլիա Ավագի մահը աքսորում (Տիր., 50):
- 14—16— Գերմանիկոսի արշավանքները Անդրհոնոսս (Կալ., 1):
- 15— Մնվեց Վիտելլիոսը (Վիտ., 3): Մեծության վիրավորանքի վերաբերյալ դատավարությունների սկիզբը (Տիր., 58):
- 16— Հավելհարդար Կղեմենտոսի ապստամբության և Լիբոնի դավադրության հետ (Տիր., 25): Աստղագուշակների արտաքսումը Հռոմից (Տիր., 36):
- 17—Արքիդայոսի մահը, Կապադովկիայի միացումը (Տիր., 37): Գերմանիկոսի գերմանական տրիումֆը (Կալ., 1):
- 18—Գերմանիկոսի երկրորդ կոնսուլությունը և արևելյան առաքելությունը (Կալ., 1):
- 19—Նոր օրենքներ բարոյականության մասին, օտարելկրյա պաշտամունքների արգելումը (Տիր., 35—36): Գերմանիկոսը այցելում է Եգիպտոս (Տիր., 52) և մահանում Աստրիքում (Կալ., 1—2):
- 20—Պիզոնի՝ Գերմանիկոսի ենթադրվող սպանողի դատավարությունը (Վիտ., 2): Լեպիդոսի դատապարտումը (Տիր., 20): Սեյանոսը ստանում է պրետորական աստիճան (Տիր., 48):

- 21—Պրետորական ճամբար Հռոմի տակ (Տիր., 37), Հուլիանին Գալլիայում:
- 22—Հունական տաճարներում ապաստանի իրավունքի վերացումը (Տիր., 27):
- 23—Դրուզոս Կրտսերի մահը (Տիր., 39), Դերասանների արտաքսումը Իտալիայից (Տիր., 37):
- 25—Կրեմուցիոս Կորդոսի դատաւարտումը և մահը (Տիր., 61):
- 26—Տիրերիոսը լքում է Հռոմը (Տիր., 39):
- 27—Ամֆիթատրոնի փլուզումը Ֆիդիկոսի և հրդեհի ծեղումի ընթացքի վրա (Տիր., 40, 48): Տիրերիոսը բնակութուն է հաստատում Կապրիում (Տիր., 41):
- 28—Յուլիա Կրտսերի մահը վտարանդիութան մեջ:
- 29—Լիվիայի՝ Օգոստոսի այրու, մահը. Գայոս Կալիգուլայի դամբանական ճառը (Տիր., 51, Կալ., 10): Գերմանիկոսի այրու՝ Ագրիպպինա Ավագի և նրա որդի Ներոնի արտաքսումը, Ագրիպպինա Ավագի որդի Դրուզոսի բանտարկութունը (Տիր., 53—54):
- 30—Ներոնի՝ Ագրիպպինայի որդու, ինքնասպանութունը (Տիր., 54):
- 31—Գայոս Կալիգուլան կանչվում է Կապրի (Կալ., 10) և նշանակվում քրմապետ. նրա ամուսնութունը Յուլիա Կլավդիլայի հետ (Կալ., 12): Սեյանոսի կոնսուլութունը և անկումը (Տիր., 55, 65). նրա Նամախոհների մահապատիժները (Տիր., 61):
- 32—Մնվեց Օտոնը (Օտ., 2):
- 33—Գալբայի կոնսուլութունը (Գալ., 6): Գայոս Կալիգուլան՝ քվեստոր: Ֆինանսական ճգնաժամ Հռոմում (Տիր., 48): Ագրիպպինա Ավագի մահը (Տիր., 53), նրա որդի Դրուզոսի մահը (Տիր., 54):
- 34—Մնվեց Պերսիոսը (Պեր., 1):
- 35—Պարթևները Հայաստանում (Տիր., 41). Լուկիոս Վիտելլիոսի հաջող բանակցութունները պարթևների հետ (Վիտ., 2):

ԳԱՅՈՍ ԿԱԼԻԳՈՒԼԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(37—41 թթ. մ. թ.)

- 37—Տիրերիոսի մահը (Տիր., 73): Անտոնինայի մահը (Կալ., 27): Կալիգուլայի և Կլավդիոսի համատեղ կոնսուլութունը (Կալ., 15, Կլավ. 7): Աստվածային Օգոստոսի տաճարի օծումը (Կալ., 21): Կալիգուլայի հիվանդութունը (Կալ., 14): Մնվեց Ներոնը (Ներ., 6):
- 38—Տիրերիոսի՝ կայսեր թոռան, մահապատիժը (Կալ., 23): Մակրոնի և էննիոսի մահապատիժը (Կալ., 26): Մարկոս Սիլանոսի մահապատիժը: Դրուզիլայի մահը և աստվածացումը, Կալիգուլայի ուղևորութունը Սիցիլիա (Կալ., 24, 51): Կալիգուլայի ամուսնութունը Լոլլիա Պավլինայի հետ (Կալ., 25):
- 39—Կամուրջ Բայթում (Կալ., 19): Կալիգուլայի ամուսնութունը Յեզոնիայի հետ (Կալ., 25): Կալիգուլան Գալլիայում, Գետուլիկոսի դավադրության բացահայտումը, գերմանական անհաջող արշավանքը (Կալ., 43, 56): Կլավդիոսի ամուսնութունը Մեսսալինայի հետ (Կլավ., 26): Վեսպասիանոսը՝ սյրետոր (Վեսպ., 2): Մնվեց Լուկանոսը (Լուկ., 1):
- 40—Կալիգուլայի անհաջող բրիտանական արշավանքը (Կալ., 46): Կալիգուլայի վերադարձը Հռոմ: Դոմիցիոսի՝ Ներոնի հոր, մահը (Ներ., 5):
- 41—Կալիգուլայի սպանութունը, հանրապետութունը վերականգնելու լիորձ, Կլավդիոսը իշխանության գլուխ (Կալ., 58, Կլավ., 10):

ԿԼԱՎԴԴԻՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(41—54 թթ. մ. թ.)

- 41—Պոմպեոսյան վճիռնազատ թատրոնի օժույթը (Կլավ., 21): Մեզից Տիտոսը (Տիտ., 1):
- 42—Մավրիտանիայի միացումը: Կամիլլոս Սկրիբոնիանոսի խռովությունը բարձրացնելու փորձը (Կլավ., 13, 35): Ապպիոս Սիլանոսի մահապատիժը (Կլավ., 29, 37):
- 43—Մահափորձ Կլավդիոսի դեմ (Կլավ., 13): Բրիտանական արշավանքը (Կլավ., 17, Վեսպ., 4): Լիկիան վերածվում է պրովինցիայի (Կլավ., 25):
- 44— Կլավդիոսի բրիտանական արիւնքը (Կլավ., 17):
- 45—Գալբայի պրոկոնսուլությունը Աֆրիկայում (Գալ., 7):
- 46—Ազինիոս Գալլոսի և Ստատիլիոս Կորվինոսի դավադրությունը (Կլավ., 13): Թրակիան վերածվում է պրովինցիայի: Հոնմմիոս Պալեմոնը ստուգանում է Հոնմոս (Քիր., 23, Պերս., 2):
- 47—Կլավդիոսը՝ ցենզոր (Կլավ., 16): Վիտելլիոս երկու եղբայրների կոնսուլությունը (Վիտ., 3): Հարյուրամյա խաղերի տոնակատարությունը (Կլավ., 21):
- 48—Քաղաքացիական իրավունքների շնորհումը գալլերին: Կլավդիոսի ուղևորությունը Օստիա, Մեսսալինայի հարսանիքը Սիլիոսի հետ, Մեսսալինայի մահապատիժը (Կլավ., 12, 36):
- 49—Կլավդիոսի ամուսնությունը Ագրիպպինայի հետ (Կլավ., 26), ներոնի նշանադրությունը Օկտավիայի հետ (Կլավ., 27): Լուկիոս Սիլանոսի ինյուստացնությունը (Կլավ., 29):
- 50—Ներոնի որդեգրումը Կլավդիոսի կողմից (Ներ., 7): Հրեաների արտաքսումը Հոնմից (Կլավ., 25):
- 51—Ներոնի շափահասությունը տոնակատարությունը (Ներ., 7): Սով Հոնմոս (Կլավ., 18): Վեսպասիանոսը՝ կոնսուլ-սուֆֆեկտ (Վեսպ., 4): Դեմիցիանոսի ծնունդը (Դոմ., 1):
- 52— Կլավդիոսի ջրատարի օժույթը Մովամարտի բեմադրությունը Ֆուցինյան լճում և լճի իջեցումը (Կլավ., 20—21):
- 53—Ներոնի ամուսնությունը Օկտավիայի հետ (Ներ., 7):
- 54—Կլավդիոսի մահը և աստվածացումը (Կլավ., 43—46):

ՆԵՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(54—68 թթ. մ. թ.)

- 55—Ներոնի գծադրությունը Ագրիպպինայի հետ (Ներ., 34): Բրիտանիկոսի թունավորումը (Ներ., 33):
- 57—Փայտյա ամֆիթատրոն Մարսյան դաշտում (Ներ., 12):
- 58— Պոպպեան Ներոնի արքունիքում, Օտոնի արքունիքը Լուգիտանիա (Ներ., 35, Օտ., 3):
- 59—Ագրիպպինայի սպանությունը (Ներ., 34): Պատանկական հանդիսախաղերի հիմնումը և Ներոնի հրապարակային ելույթը (Ներ., 11—12):
- 60—Հնգամյա հանդիսախաղերը (Ներոնիաները) Հոնմոս (Ներ., 12):
- 61—Բոուդիկիայի ապստամբությունը Բրիտանիայում (Ներ., 39): Գալբայի կուսակալությունը Իսպանիայում (Գալ., 8), Վեսպասիանոսինը՝ Աֆրիկայում (Վեսպ., 4):
- 62— Բուրրոսի մահը (Ներ., 35): Օկտավիայի վտարումը և մահապատիժը, Ներոնի ամուսնությունը Պոպպեայի հետ (Ներ., 35): Հոնմեացիների պարտությունը Հուլյանոսանում (Ներ., 39): Պերսիոսի մահը և նրա սատիրաների հրատարակումը (Պերս., 7):

- 63—Ներոնի դատեր ծնունդը և մահը (Ներ., 35):
- 64—Ներոնի հլույթը Նհապոլում և Ալեքսանդրիա ուղևորվելու մտադրութիւնը (Ներ., 19): Հոռմի հրդեհը (Ներ., 38): Հաշվհճարդարը քրիստոնյաների հետ (Ներ., 17): Պոնտոսի միացումը (Ներ., 18):
- 65—Պիզոնի դավադրութիւնի քայքայումը, գանգվածային մահապատիժներ (Ներ., 36): Լուկանոսի և Սենեկայի մահը (Լուկ., 3, Ներ., 37): Երկրորդ Ներոնիաները, Ներոնի հլույթը Հոռմում (Ներ., 12): Պոպպեայի մահը (Ներ., 35):
- 66— Անտոնիայի՝ Կլավդիոսի դստեր, մահապատիժը և Ներոնի ամուսնութիւնը Ստատիլիա Մեսսալինայի հետ (Ներ., 35): Ժանտախտ Հոռմում (Ներ., 39): Փրատիյա Պետոսի մահապատիժը (Ներ., 37): Ալպիական Բազալորութիւնի միացումը (Ներ., 18): Տրդատը Ներոնի ձեռքից ստանում է Հայկական թագավորութիւնի իւրը (Ներ., 13): Ներոնի ճանապարհորդութիւնը Հունաստանում (Ներ., 23): Հրեական ապստամբութիւնը և Վեսպասիանոսի նշանակումը Հրեաստան (Վեսպ., 4):
- 67— Ազատութիւնի շնորհումը Հունաստանին՝ Վեսպասիանոսի և Տիտոսի հաշտութիւնները Հրեաստանում (Վեսպ., 4, Տիտ., 4):

ՄԻՋԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

(68—69 թթ. մ. թ.)

- 68— Ներոնի վերադարձը հունական ուղևորութիւնից (Ներ., 25): Վիտելլիոսի նշանակումը Գերմանիա (Վիտ., 7): Վինդ'բի ապստամբութիւնը և նրա պարտութիւնը (Ներ., 40): Գալբայի հլույթը (Գալ., 9—10): Ներոնի կործանումը (Ներ., 49): Գալբան Հոռմում (Գալ., 13):
- 69— Վիտելլիոսի հլույթը (Գալ., 15, Վիտ., 8): Օտոնի հեղաշրջումը (Օտ., 6): Տիտոսի մեկնումը Հրեաստանից Հոռմ և ճանաչարհից նրա վերադարձը (Տիտ., 5): Օտոնի պարտութիւնը Բեւրլակումի մոտ (Օտ., 9): Վեսպասիան սի հլույթը (Վեսպ., 6): Վեսպասիանոսը Եգիպտոսում, Իլլա զորքերը գնում են Իտալիայի վրա (Վեսպ., 7): Կապիտոլիումի հրդեհը (Վիտ., 15, Դոմ., 1): Վիտելլիոսի կործանումը (Վիտ., 17):

ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍԻ ԿՍՈՒՎԱՐՈՒՄԸ

(69—79 թթ. մ. թ.)

- 70— Յիվիլիսի ապստամբութիւնը (Դոմ., 2): Երուսաղեմի գրավումը Տիտոսի կողմից (Տիտ., 5): Մուդիանոսը և Դոմիցիանոսը կառավարում են Հոռմը Վեսպասիանոսի անունից: Դոմիցիանոսը պրետոր կոնսուլական իշխանութիւնը Դոմիցիանոսի և Դոմիցիլիայի ամուսնութիւնը (Դոմ., 1—2): Վեսպասիանոսի ժամանումը Հոռմ (Վեսպ., 8): Կապիտոլիումի վերականգնման աշխատանքները (Վեսպ., 8):
- 71— Վեսպասիանոսի և Տիտոսի տրիումֆը (Վեսպ., 8, Տիտ., 6): Տիտոսը՝ Վեսպասիանոսի կառավարչակից պրոկոնսուլական և տրիբունական իշխանութիւնը (Տիտ., 6): Դոմիցիանոսի առաջին կոնսուլութիւնը (Դոմ., 2):
- 72— Կոմմազինի միացումը (Վեսպ., 8): Հելվիդիոս Պրիսկոսի մահապատիժը, փիլիսոփաների վտարումը Հոռմից (Վեսպ., 15):
- 73—74— Վեսպասիանոսի և Տիտոսի ցենզորութիւնը (Վեսպ., 8, Տիտ., 6): Սենատորների և հեծյալների ցուցակների վերանայումը (Վեսպ., 9): Հարկերի վերակազմակերպումը (Վեսպ., 16):

- 74—Արևմտյան Կիլիկիայի միացումը (Վեսպ., 8):
 75—Խաղաղության տաճարի օծումը (Վեսպ., 9): Յենիդայի՝ Վեսպասիանոսի հարձի. մահը (Վեսպ., 21): Բերենիկան Հռոմում (Տիտ., 7): Դոմիցիանոսը փորձում է նշանակում ստանալ Պարթևաստան ընդդեմ ալանների (Դոմ., 2):
 79— Ավյոս Յեցինայի և էպրիոս Մարցելլոսի դավադրությունը (Վեսպ., 25, Տիտ. 6): Վեսպասիանոսի մահը (Վեսպ., 24):

ՏԻՏՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(79—81 թթ. մ. թ.)

- 79—Վեզովի ժայթքումը և Պլինիոս Ավագի մահը (Տիտ., 8):
 80—Հռոմի հրդեհը և ժանտախտ (Տիտ., 8) Փլարիոսների ամֆիթատրոնի (Կոլիզեոմի) օծումը (Վեսպ., 9, Տիտ. 7):

ԴՈՄԻՅԻԱՆՈՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

(81—96 թթ. մ. թ.)

- 81—Տիտոսի մահը: Դոմիցիանոսը իշխանության գլուխ (Տիտ., 10):
 82—Կապիտոլիումի օծումը հրդեհից հետո (Դոմ., 5)
 83— Արշավանք քառաբերի դեմ և Դոմիցիանոսի տրիումֆը (Դոմ., 6):
 Պարթևի՝ Դոմիցիլլայի սիրեցյալի, մահապատիժը. Դոմիցիանոսը ամուսնա- լուծվում է Դոմիցիլլայից և կապվում է Յուլիայի հետ (Դոմ., 3, 22):
 84—Մուսաբին ճնշամիջոցները սենատի նկատմամբ (Դոմ., 10):
 85— Դոմիցիանոսը՝ ցմահ ցենզոր (Դոմ., 8): Դաքիացիների ասպատակությունը Մյո- զիա (Դոմ., 6):
 86— Դոմիցիանոսի առաջին դաքիական արշավանքը և Ֆուսկուի պարտությունը (Դոմ. 6): Առաջին կապիտոլիումական մրցությունները (Դոմ., 4): Դոմիցիանոսը ընդու- նում է «տեր և աստված» դիմելիվներ (Դոմ., 13):
 88—Դոմիցիանոսի երկրորդ դաքիական արշավանքը (Դոմ., 6): Հարյուրամյա Շանդի- սախաղերը Հռոմում (Դոմ., 4):
 89— Անտոնիոս Սատուրնինոսի իռոպությունը (Դոմ., 6—7): Հաշտություն դաքիացիե- րի հետ, Դոմիցիանոսի կրկնակի տրիումֆը (Դոմ., 6): Փլարիոս Սաբինոսի և Յի- վիկա Յերեալոսի մահապատիժը (Դոմ., 10): Փիլիսոփաների վտարումը Հռոմից (Դոմ., 10): Կեղծ-ներոնը Արևելքում (Ներ., 59):
 90— Յուլիայի՝ Տիտոսի դստեր և Դոմիցիանոսի սիրուհու, մահը (Դոմ. 22):
 91— Դատաստան վեստալուհի Կոռնելիայի նկատմամբ (Դոմ., 8):
 92— Դոմիցիանոսի արշավանքը սարմաթների և սվեվների դեմ (Դոմ., 6): Անբերրիությունը և էդիկտը խաղողի այգիների դեմ (Դոմ., 7):
 93— Յունիուս Ռուստիկոսի և Հելվիդիոս Կրասոսի մահապատիժը (Դոմ., 10):
 95— Ճնշամիջոցներ հրեաների նկատմամբ (Դոմ., 12), Փլարիոս Կլեմենտոսի (Դոմ., 15), էպափրոդիտոսի (Դոմ., 14) մահապատիժը, Գլարրիոնի արտաքսումը (Դոմ., 10): Փիլիսոփաների վտարումը Իտալիայից (Դոմ., 10):
 96—Դավադրություն և Դոմիցիանոսի սպանությունը (Դոմ., 17):

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- Ազերմոս, Լուկիոս— Ազրիպայինա Կրտսերի ազատարձակը (Ներ., 34, 3)։
- Ազրիպա, Մարկոս Վիպսանիոս (62—12 մ. թ. ա.)— Օգոստոսի մերձավորագույն օգնականը, Յուլիա Ավագի ամուսինը, ականավոր զորավար, կոնսուլ մ. թ. ա. 37, 28 և 27 թթ. (Օգ., 16, 2, 25, 3, 29, 5, 35, 1, 42, 1, 63, 1, 64, 1, 66, 3, 94, 12, 97, 1, Տիր., 7, 2, 10, 1, Կալ., 7, 23, 1, Քեր., 16)։
- Ազրիպա Պոստումոս, Մարկոս (12 մ. թ. ա.— 14 մ. թ.)— Օգոստոսի թոռը, Ազրիպայի և Յուլիայի որդին (Օգ., 19, 2, 51, 1, 64, 1, 65, 1, 4, Տիր., 15, 2, 22, 25, 1)։
- Ազրիպայինա Ավագ, Յուլիա (մ. թ. ա. 17 թ.— մ. թ. 33 թ.)— Մարկոս Ազրիպայի և Յուլիայի դուստրը, Գերմանիկոսի կինը, Կալիգուլայի մայրը (Օգ., 64, 1, 86, 3, Տիր., 53, 1, Կալ., 7, 8, 1, 3, 4)։
- Ազրիպայինա Կրտսեր, Յուլիա (15—59)— Գերմանիկոսի և Ազրիպայինա Ավագի դուստրը, Գնեսոս Դոմիցիոս Ահենոբարբոսի և ապա Կլավդիոսի կինը, Ներոնի մայրը (Կալ., 7, Կլավ., 26, 3, 29, 2, 39, 2, 43, 44, 1, 2, Ներ., 5, 2, 6, 1, 2, 28, 2, 39, 3, Գալ., 5, 1, Վեսպ., 4, 2, 9, 1, Պասս.)։
- Ազրիպայինա Վիպսանիա— Մարկոս Ազրիպայի դուստրը, Տիրերիոսի առաջին կինը, Դրուզոս Կրտսերի մայրը (Տիր., 7, 2, 3)։
- Ադմիրոս— բրիտանական թագավոր Կինոբելլինի որդին (Կալ., 44, 2)։
- Ազելլիոս Սաբինոս— Օգոստոսի և Տիրերիոսի ժամանակների ճարտասան (Տիր., 42, 2)։
- Ազիատիկոս— Վիտելլիոսի ազատարձակը և սիրեցյալը (Վիտ., 12)։
- Ազիլիոս (Ազելլիոս Սիբինոս)— Կալիգուլայի դաստիարակը (Կալ., 8—4)։
- Ազինիոս Գալլոս, Գալոս— Ազինիոս Պոլլիոնի որդին, մ. թ. ա. 8 թ. կոնսուլը, հայտնի հռետոր. մահացավ բանտում 33 թ. (Կլավ., 41, 3, Քեր., 22, Հոր., 8)։

Անձերը ցանկի մեջ մտցված են այն անուններով, որոնցով ավելի հաճախ են հանդիպում Ավետոնիոսի մոտ. օրինակ, Մարկոս Տուլլիոս Կիկերոնը՝ «Կիկերոն» և ոչ թե «Տուլլիոս» անվամբ։ Այն անձինք, ում նվիրված են առանձին կենսագրություններ, այսինքն՝ 12 կայսրերը և 5 բանաստեղծները, ցանկի մեջ չեն մտցվել։ Առասպելաբանական անունները չեն մտցված։ Այն թվականները, որոնց մոտ նշված չէ «մ. թ. ա.», վերաբերում են մ. թ. Յանկը կազմել է Մ. Լ. Գասպարովը։

- Ազինիոս Գալլոս, Գալոս— Ազինիոս Պոլլիոնի թոռը, Կլավդիոսի դեմ ուղղված դավադրության մասնակից (Կլավ., 13, 2):
- Ազինիոս Մարցելլոս, Մարկոս— Ազինիոս Պոլլիոնի թոռնորդին, 54 թ. կոնսուլը (Կլավ., 45):
- Ազինիոս Պոլլիոն, Գալոս— (75 թ. մ. թ. ա.— 4 թ. մ. թ.)— Կեսարի մերձավորը և զորապետը, մ. թ. ա. 40 թ. կոնսուլը, քաղաքացիական պատերազմների պատմության հեղինակ, հոնտոր և բանաստեղծ (Հուլ., 30, 4, 55, 4, 56, 4, Օգ., 29, 5, 43, 2: Կլավ., 13, 2, Քեր., 10, Վերգ., 9, 19):
- Ալբիա Տերենցիա— Օտոնի մայրը (Օտ., 1, 3):
- Ալբուցիոս Սիլոս, Գալոս— Օգոստոսի ժամանակաշրջանի ճարտասան (Քեր., 30):
- Ալեքսանդր Մեծ— Մակեդոնիայի թագավոր (336—323 մ. թ. ա.), (Հուլ., 7, 1, Օգ., 18, 1, 50, 94, 5, Կալ., 52, ներ., 19, 2):
- Ալեքսանդր— Վերգիլիոսի ստրուկը (Վերգ., 9):
- Ալեքսանդրիա— Ներոնի դայակը (Ներ., 50):
- Ալֆենոս Վարոս— մ. թ. ա. 39 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Վերգիլիոսի հովանավորը և նրա 6-րդ էկլոգայի հասցեատերը, ականավոր իրավաբան (Վերգ., 19):
- Ակսոս Քվինտոս— սենատոր, Կիկերոնի և Կեսարի բարեկամը (Հուլ., 9, 2):
- Ակոս— Ներոնի ազատարձակուհին և հարձը (Ներ., 28, 1, 50):
- Ակտորիոս Նազոն, Մարկոս— Կեսարի ժամանակների պատմիչ (Հուլ., 9, 3, 52, 1):
- Ակցիոս (շուրջ 170—80 մ. թ. ա.)— ողբերգակ բանաստեղծ (Կալ., 30, 1)
- Ակցիոս— կատակերգու դերասան (Տիբ., 47):
- Ամպիոս, Տիտոս— պոմպեյական պատմիչ (Հուլ., 77):
- Անիկետոս— Ներոնի ազատարձակը, միզենյան նավատորմի պետը (Ներ., 35, 2):
- Անկոս Մարցիոս— Հոմերի առասպելական շորրորդ թագավորը (Հուլ., 6, 1):
- Աննիոս Ցիմբրոս— հնամուլ ճարտասան (Օգ., 86, 3):
- Անտիոքոս IV էպիֆանես— Կոմմագենեի թագավոր (38—72) (Կալ., 16, 3):
- Անտիոքոս— հացթուխ (Վիտ., 2, 1):
- Անտիստիոս— Կեսարի քոհիչկը (Հուլ., 82, 3):
- Անտիստիոս, Լուկիոս— մ. թ. ա. 58 թ. ժողովրդական տրիբունը (Հուլ., 23, 1)
- Անտիստիոս Լաբոն— սենատոր, Օգոստոսի օրոք իրավունքի երկու խոշորագույն դպրոցներից մեկի ղուլիսը, հայտնի էր հանրապետական մտածելակերպով (Օգ., 54):
- Անտոնիոս Անտիլլոս— եռապետի ավագ որդին Ֆուլվիայից, սպանված 30 թ. մ. թ. ա. (Օգ., 17, 5, 63, 2):
- Անտոնիոս, Գալոս— մ. թ. ա. 63 թ. կոնսուլը, կռապետի հորեղբայրը (Օգ., 5):
- Անտոնիոս, Գալոս— կռապետի միջնակ եղբայրը, Կեսարի լեզատը Իլլիրիկումում (Հուլ., 36):
- Անտոնիոս, Լուկիոս— կռապետի կրտսեր եղբայրը, Օկտավիանոսի հակառակորդը Պերուզիական պատերազմում (Օգ., 9, 14, 15, 68, Տիբ., 4, 2, 5):
- Անտոնիոս, Մարկոս (82—30 մ. թ. ա.)— Կեսարի զորավարը, մ. թ. ա. 44 թ. կոնսուլը, կրկնորդ կռապետության անդամը (Հուլ., 52, 2, 79, 2, 82, 4, 83, 1, 84, 2, Օգ., 2, 3, 4, 2, 7, 1, 8, 3, 9, 10, 2, 4, 11, 12, 13, 1—3, 16, 2, 17, 1, 3—5, 20, 21, 3, 28, 1, 49, 1, 62, 1, 63, 2, 68, 69, 1, 70, 1, 86, 2, Տիբ., 4, 3, 59, 2, Կալ., 26, 1, Կլավ., 11, 3, ներ., 3, 1—2: Քեր. 25, 28, 29):
- Անտոնիոս Գնիփոն, Մարկոս— մ. թ. ա. 1 դարի կեսերի քերական և ճարտասան (Քեր., 7, 8, 10):

- Անտոնիոս, Յուլոս — եռասպետի կրտսեր սրգին Տուլվիայից, մ. թ. ա. 10 թ. կոնսուլը, հարկադրված ինքնասպանություն գործելու մ. թ. ա. 2 թ. (Կլավ., 2, 1, Էնր. 18):
- Անտոնիոս Մուզա — Օգոստոսի բժիշկը (Օգ., 59, 81, 1):
- Անտոնիոս Պրիմոս (Բեկկոն) — Վեսպասիանոսի զորավարը 69 թ. քաղաքացիական պատերազմում, Վիտելլիոսին հաղթողը (Վիտ., 18):
- Անտոնիոս Սատուրնինոս, Լուկիոս — 82 թ. կոնսուլ — սուֆֆեկտը, Վերին Գերմանիայի կուսակալը, որը ապստամբեց Դոմիցիանոսի գեմ (Դոմ., 6, 2, 7, 3):
- Անտոնիա, Կլավդիա — Կլավդիոսի դուստրը, որին մահապատժի ենթարկեց Ներոնը (Կլավ., 27, 1, 2, Ներ., 35, 4):
- Անտոնիա Ավագ — Անտոնիոսի և Օկտավիայի դուստրը, Լուկիոս Դոմիցիոս Ահենոբարոսի կինը, Ներոնի տատը (Ներ., 5, 1):
- Անտոնիա Կրտսեր (շուրջ 36 թ. մ. թ. ա. — 38 մ. թ.) — Անտոնիոսի և Օկտավիայի դուստրը, Դրուզոս Ավագի կինը, Կլավդիոսի մայրը և Կալիգուլայի տատը (Կալ., 1, 1, 10, 1, 15, 2, 23, 2, 24, 1, 29, 1, Կլավ., 1, 6, 3, 2, 4, 4: Վեսպ. 3):
- Անթարիա — Օկտավիոսի՝ Օգոստոսի հոր, առաջին կինը (Օգ., 4, 1):
- Ապելլարիոս (= Ապելլեսոս) — ողբերգու դերասան (Վեսպ., 19, 1):
- Ապելլեսոս (= Ապելլարիոս) — նշանավոր ողբերգու դերասան, ծագումով Ասկալոնից, Կալիգուլայի սիրեցյալը (Կալ., 23, Վեսպ. 19, 1):
- Ապոլլոդորոս (շուրջ 100—18 մ. թ. ա.) — պերզամացի ճարտասան, Օկտավիանոսի ուսուցիչը, ատտիկական ճարտասանական դպրոցի հայտնի ներկայացուցիչ (Օգ., 89, 1):
- Ապոլլոնիոս Մուլոն — ճարտասան, պերճախոսության՝ Հոդոսյան դպրոցի զուխ, Կիկերոնի և Կեսարի ուսուցիչը (Հուլ., 4, 1):
- Ապոլլոֆանես — Սեքստոս Պոմպեոսի նավատորմավարը, ազատարձակ (Օգ., 16, 9):
- Ապոնիոս Սատուրնինոս — սենատոր (Կալ., 38, 4):
- Ապուլեյոս, Լուկիոս — մ. թ. ա. I դարի կեսերի (°) քերական (Քեր., 3):
- Ապուլեյոս, Սեքստոս — մ. թ. 14 թ. կոնսուլ (Օգ., 100, 1):
- Ասթրապիադես Մենդեսացի — քերական և աստվածաբան, ծագումով Եգիպտոսից (Օգ., 94 4):
- Ասքետարիտես — աստղագուշակ (Դոմ., 15, 3):
- Ասքոնիոս Պեդիանոս (շուրջ 3—38) — քերական, հատկապես հայտնի որպես Կիկերոնի ծանոթագրող (Վերդ., 10, 46):
- Ամիլասիոս, Լուկիոս — Օգոստոսի դեմ գործած դավադիր (Օգ., 19, 1—2):
- Ամրիկիոս Օպիլոս — փիլիսոփայության, ճարտասանության և քերականության ուսուցիչ (մ. թ. ա. I դարի սկիզբ) (Քեր., 6):
- Ամրիկիա — Հուլիոս Կեսարի մայրը (Հուլ., 74, 2):
- Ամրոնկուլեոս Կոտտա, Լուկիոս — Կեսարի լեզատը Գալլիայում (Հուլ., 25, 2):
- Ամլտրոնիոս Պետոս, Պուբլիոս (Սվետոնիոսի մոտ սխալմամբ Լուկիոս) — մ. թ. ա. 65 թ. կոնսուլության թեկնածու, Կատիլինայի առաջին դավադրության մասնակից (Հուլ., 9, 1):
- Ամֆիգիոս Լուրկոն — մ. թ. ա. 61 թ. տրիբուն, Լիվիայի պապը մոր կողմից (Կալ., 23, 2):

- Ասեռս Կապիտոն — 9 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, հայտնի իրավաբան, Օգոստոսի և Տիրե-
բիոսի շոդոքորթը (Քեր., 10, 22):
- Ասեռս Պրեմեքստատես, Լուկիոս — քերական և ճարտասան (Քեր., 7, 10):
- Ատիլոս Բալբոս, Մարկոս — մ. թ. ա. 59 թ. պրետոր, Յուլիայի՝ Կեսարի քրոջ, ամու-
սինը (Օգ., 4, 1):
- Ատիլիոս, Մարկոս — մ. թ. ա. II դարի կատակերգակ, Տերենտիոսին ընդօրինակող (Տեր.,
5):
- Ատիլյա — Օգոստոսի մայրը (Օգ., 4, 1, 94, 4):
- Ատտալոս II — Պերգամի թագավորը (159—138 մ. թ. ա.) (Քեր., 2):
- Ատտիկոս Վեստինոս, Մարկոս Լուկիոս — 65 թ. կոնսուլը, Ստատիլիա Մեսսալինայի
առաջին ամուսինը, Ներոնի վստահելի անձը, մահապատժի ենթարկվեց Պիզոնի
դավադրութեանը մասնակից լինելու կեղծ մեղադրանքով (Ներ., 35, 1):
- Ատտիկոս, Տիտոս Ցեցիլիոս (109—32 մ. թ. ա.) — հռոմեացի հարուստ հեծյալ, Կիկե-
րոնի բարեկամը, Ագրիպպայի աները, ավելի հաճախ հայտնի է որպես Պոմ-
պոնիոս Ատտիկոս (Տիր., 7, 2, Քեր., 14, 16):
- Արգիվոս — Գալբայի կառավարիչը (Գալ., 20):
- Արեոս Դիդիմոս — փիլիսոփա-ստոիկյան, ծագումով Ալեքսանդրիայից, Օգոստոսի բարե-
կամը (Օգ., 89, 1):
- Արիստարքոս (շուրջ 217—145 մ. թ. ա.) — ալեքսանդրիացի նշանավոր քերական (Քեր.,
2, 14):
- Արրեցինոս Կլեմենտոս, Մարկոս — պրետորականների պետը Վեսպասիանոսի օրոք, 73 թ.
կոնսուլ-սուֆֆեկտ, որին մահապատժի ենթարկեց Դոմիցիանոսը (Դոմ., 11, 1)
- Արրեցինա Տերտուլլա — նախորդի քույրը, Տիտոսի առաջին կինը (Տիր., 4, 2):
- Արրիա Կրտսեր — Փրասեյա Պետոսի կինը, որին հետագայում վտարեց Դոմիցիանոսը
(Պերս., 4):
- Ացերոնիոս Պրոկուլոս, Գնեոս — 37 թ. կոնսուլը (Տիր., 73, 1):
- Ացիլիոս — ողբերգակ բանաստեղծ (Լուլ., 84, 2):
- Ացիլիոս, Գայոս — Լուկիոս Կեսարի զինվորը (Լուլ., 68, 4):
- Ացիլիոս Ավիոլա, Մանիոս — 54 թ., կոնսուլը (Կլավ., 45):
- Ացիլիոս Գլաբրիոն, Մանիոս — 91 թ. կոնսուլը (Դոմ., 10, 2):
- Ափրանիոս, Լուկիոս — մ. թ. ա. 60 թ. կոնսուլը, Պոմպոսի զորավարը, որը շախչախ-
վել էր Իլիրիայի մոտ և սպանվել 46 թ. (Լուլ., 84, 2, 75, 2—3):
- Ափրանիոս, Լուկիոս (շուրջ 150—80 մ. թ. ա.) — կատակերգակ, «տոգատաների» հե-
զինակ (Ներ., 11, 2, Տեր., 5):
- Աքվիլիոս Նիգերոս — Օգոստոսի ժամանակների պատմիչ (Օգ., 11):
- Ափինիոս Գալլոս — 62 թ. կոնսուլ (Պերս., 1):
- Աֆինոդորոս — անհայտ անձ, ըստ Երևույթին երիտասարդ Կլավդիոսի դաստիարակը
(Կլավ., 4, 5):

Բալբիլոս — ալեքսանդրիացի աստղագուշակ, Ոգիպոսի կուսակալը Ներոնի օրոք (Ներ.,
36, 1):

Բալլիստա — դպրոցական ուսուցիչ (Վերգ., 17):

Բասիլիդես — Վեսպասիանոսի ազատարձակը (Վեսպ., 7, 1):

Բատոն — Պաննոնիայի ապստամբութեան առաջնորդը (Տիր., 20):

Բերենիկա— Ազրիպպա 1-ի, Հրեաստանի թագավորի, որը կառավարում էր Կիպրոսը, գուտը, Հերովդես Քաղկիդացի թագավորի և ապա Պուլիմոն Պոնտացու կինը, Տիտոսի սիրուհին հրեական պատերազմի ժամանակից (Տիտ., 7, 1, 2):

Բիբակուլոս, Մարկոս Յուրիոս— բանաստեղծ-նեոտերիկոս, Կատուլլոսի և Կոռնելիոս Գալլոսի բարեկամը (Քեր., 4, 9, 11):

Ըիբուլոս, Մարկոս Կալպուրնիոս— Կեսարի ընկերակիցը ըստ մ. թ. ա. 65 թ. էդիլու-թյան, 62 թ. պրետորության և 59 թ. կոնսուլության, ականավոր օպտիմատ, Կատոնի փեսան (Հուլ., 9, 2, 10, 1, 19, 1, 2, 20, 2, 21, 49, 2):

Բոզուդ— Մավրիտանիայի թագավորը, Կեսարի դաշնակիցը քաղաքացիական պատերազ-մում (Հուլ., 52, 1):

Բոտերոս— Կլավդիոսի ազատարձակը (Կլավ., 27, 1):

Բրիտանիկոս, Տիբերիոս Կլավդիոս Կեսար (41—55)— Կլավդիոսի և Մեսսալինայի որ-դին (Կլավ., 27, 1—2, 43, Ներ., 6, 4, 7, 1, 33, 2—3, Տիտ., 2, 1):

Բրուտոս, Լուկիոս Յունիոս— Հռոմի առասպելական տաշին կոնսուլը (Հուլ., 80, 3):

Բրուտոս, Մարկոս Յունիոս (85—42 մ. թ. ա.)— Կեսարի դեմ դավադրության առաջ-նորդը, հռետոր և քաղաքական գործիչ, Կատոնի փեսան (Հուլ., 49, 2, 50, 2, 55, 1, 56, 1, 80, 4, 82, 2, 85, Օգ., 9, 10, 1, 13, 1, 85, 1, Տիբ., 61, 3, Ներ., 3, 1, Գալ., 3, 2, Օտ., 10, 1: Քեր., 13, 30):

Բրուտոս Ալբինոս, Դեցիմոս Յունիոս— մ. թ. ա. 48 թ. պրետորը, Կեսարի զորավարը, նրա դեմ դավադրության մասնակիցը (Հուլ., 80, 4, 81, 4, 83, 2, Օգ., 10, 2—3):

Բուրբոս, Սեքստոս Ափրանիոս— պրետորականների պետը 51—62 թթ., քաղաքակա-նության ղեկավարներից մեկը Ներոնի առաջին տարիներին (Ներ., 35, 5):

Բուրսենոս— գալլիացի, անհայտ անձնավորություն (Քեր., 11):

Գաբինիոս, Ավլոս— մ. թ. ա. 67 թ. ժողովրդական տրիբունը, մ. թ. ա. 58 թ. կոնսուլը, պոպուլյարների առաջնորդներից մեկը, զորավար և Պոմպեոսի, ապա Կեսարի կուսակից (Հուլ., 50, 1):

Գաբինիոս Սեկունդոս, Պուբլիոս— զորավար, որը 41 թ. Գերմանիայում ջախջախեց քավկերին (Կլավ., 24, 3):

Գալերիա Յունդանա— Վիտելլիոսի երկրորդ կինը (Վիտ., 6):

Գալլիոս, Մարկոս— Գալլիոս Քվինտոսի եղբայրը, մ. թ. ա. 44 թ. պրետորը (Տիբ., 6, 3):

Գալլիոս, Քվինտոս— մ. թ. ա. 43 թ. պրետորը (Օգ., 27, 4):

Գալոտոս— Կլավդիոսի ներքինին (Կլավ., 44, 2: Գալ., 15, 2):

Գալբա, Գայոս Սուլպիցիոս— Գալբա կայսեր եղբայրը, 22 թ. կոնսուլը (Գալ., 3, 4):

Գալբա, Սերվիոս Սուլպիցիոս— կայսեր նախապապը, մ. թ. ա. 54 թ. պրետորը, Կեսարի դեմ դավադրության մասնակից (Գալ., 3, 2)

Գալբա, Սերվիոս Սուլպիցիոս— մ. թ. ա. 144 թ. կոնսուլը, ականավոր հռետոր (Գալ., 3, 1):

Գատերիոս, Քվինտոս— հայտնի հռետոր և ասմունքող, մահացել է մ. թ. 24 թ. (Տիբ., 29):

Գերմանիկոս, Հուլիոս Կեսար (15 մ. թ. ա.— 19 մ. թ.)— Դրուզոս Ավագի և Անտոնիա Կրտսերի որդին, Տիբերիոսի որդեգիրը և ենթադրյալ ժառանգը, նշանավոր զորավար, 12 և 18 թթ. կոնսուլը (Օգ., 34, 2, 64, 1, 101, 2, Տիբ., 15, 2, 25, 2—3,

39, 52, 1—3, 54, 1, 55, 61, 1, 76. Կալ., 1, 1, 2, 3, 1, 6, 1, 8, 2—4, 13, 48, Կլավ., 1, 6, 7, 26, 3, 29, 1, Ներ. 5, 2, Ու., 1, 3, Վիտ., 2, 3):

Գլիկիոս, Մարկոս Կլավդիոս— Կլավդիոս Պուլքրի՝ մ. թ. ա. 249 թ. կոնստանդնուպոլսի ազատարձակը (Տիբ., 2, 2):

Գլիկոն— բժիշկ (Օգ., 11):

Գրաքրոսներ, Տիրերիոս Սեմիբրոնիոս (մ. թ. ա. 133 թ. ժողովրդական տրիրոսն) և Գալուս Սեմիբրոնիոս (մ. թ. ա. 123—122 թթ. ժողովրդական տրիրոսն)— ժողովրդական շարժման առաջնորդներ, պոպուլյարների կուսակցության հիմնադիրները (Տիբ., 3, 2):

Դարեհ— պարթևական սլատանը Կալիգուլայի արքունիքում, Արտավան III-ի որդին (Կալ., 19, 2):

Դատես— կատակերգու դերասան (Ներ., 39, 3):

Դեմեարիոս— կենդանական փիլիսոփա, որն ուսուցանում էր Կորնիլիոսում և ապա Հռոմում, Ահենկայի և Փրասեայի խորհրդականը (Վեսպ., 13):

Դեմոսթրատ— Սեբաստոս Պամպիսի նախատորմավարը, ազատարձակ (Օգ., 16, 3):

Դիոգենես— հողոսցի քերական (Տիբ., 32, 2):

Դիոդորես— կեֆարահար, որն ուղեկցում էր Ներոնին Հունաստանում (Վեսպ., 19, 1):

Դիոմեդես— Օգոստոսի կառավարիչը (Օգ., 67, 1):

Դիոնիսիոս— Արեոսի որդին, փիլիսոփա (Օգ., 69, 1):

Դիոնիսիոս Սկիթոբրաքիոնես— քերական և առասպելագիր, ծագումով Ծիթիլենեցի (11 դար մ. թ. ա.) (Քեր., 7):

Դիոսկուրիդես— Օգոստոսի դարաշրջանի նշանավոր քարափորագրիչ (Օգ., 50):

Դուլաբելլա, Գնեսու Կոննելիոս— մ. թ. ա. 159 թ. կոնսուլը (Տիբ., 5):

Դուլաբելլա Գնեսու Կոննելիոս— մ. թ. ա. 81 թ. կոնսուլը, սուլլայական, Մակեդոնիայի կուսակալը (Հուլ., 4, 1, 49, 1, 55, 1):

Դուլաբելլա, Պուրբիոս Կասենկիոս— նախարդի որդին, Կեկեբոնի փեսան, հայտնի էր վատնողությամբ և անառակությամբ. սկզբնապես հարում էր Պոմպեոսին, ապա Կեսարին, հետո հանրապետականներին, այնուհետև եռապետներին, սպանվեց մ. թ. ա. 43 թ. (Հուլ., 36, Քեր. 14):

Դոմիցիանոս Փլարիոս— Փլարիոս Կլեմենտոսի որդին (Դամ., 15, 1):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Գնեսոս— Ներոնի նախանախապապը, մ. թ. ա. 122 թ. կոնսուլը և տրիումֆատորը (Ներ., 2, 1):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Գնեսոս— Ներոնի նախանախապապը, կոնսուլ 96 թ., ցենզոր 92 թ. մ. թ. ա. (Քեր., 25):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Գնեսոս (Թվեոսիոսի մոտ սխալմամբ՝ Տիտոս)— Ներոնի նախապապը, կոնսուլ 32 թ. մ. թ. ա. (Օգ., 17, 2, հմմտ. Ներ. 3):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Գնեսոս— Ներոնի հայրը, կոնսուլ մ. թ. 32 թ. (Ներ., 6, 1, 9, 28, Գալ. 5, 1, 6, 1, Օտ., 2, 1, Վիտ., 2, 2, հմմտ. Ներ., 5):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Լուկիոս— Ներոնի նախանախապապը, մ. թ. ա. 54 թ. կոնսուլը, Պոմպեոսի զորավարը (Հուլ., 23, 1, 24, 1, հմմտ. Ներ., 2, 2):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Լուկիոս— Ներոնի պապը, կոնսուլ մ. թ. ա. 16 թ. (Ներ., 4):

Դոմիցիոս Ահենոբարբոս, Լուկիոս— Ահենոբարբոսների առասպելական նախահայրը (Ներ., 1, 1):

Դոմիցիսոս Մարսոս— քանաւտեղօ, Մեկենասի խմբակի անդամ, էպիգրամների և սիրա-
յին եղերերգերի հեղինակ (Քեր., 9, 16):

Դոմիցիլլա, Փլաթինա— Վեսպասիանոսի դուստրը (Վեսպ., 3):

Դոմիցիլլա, Փլաթինա— նախորդի դուստրը, Փլաթինոս Կլեմենտոսի կինը (Դոմ., 17, 1):

Դոմիցիա— Ներոնի հորաքույրը, Պաստիենոսի առաջին կինը (Պասս.):

Դոմիցիա Լոնգինա— Դոմիցիանոսի կինը, զորավար Կորբուլոնի դուստրը (Տիտ., 10, 2,
Դոմ., 1, 3, 3, 1, 22):

Դորիֆորոս— Ներոնի ազատարձակը (Ներ., 29):

Դրավսոս— գալլական առասպելական առաջնորդ (Տիր., 3, 2):

Դրուզոս— Լիվիոս Դրուզոսների նախահայրը, ըստ երկուլթին՝ հեծելազորի հրամանա-
տարը մ. թ. ա. 324 թ. (Տիր., 9, 2):

Դրուզոս, Գայոս-անհայտ անձնավորութուն, գուցե նույնական է Տիրերիոսի որդու հետ
(Օգ. 94, 6):

Դրուզոս Կլավդիանոս, Մարկոս Լիվիոս-Լիվիայի հայրը և Տիրերիոսի պապը, Կիկերոնի
պաշտպանյալը 54 թ. մ. թ. ա., որն ինքնասպան եղավ Փիլիպոսի տակ կրած
պարտութունից հետո (Տիր., 7, 1):

Դրուզոս, Կլավդիոս Ներոն— Կլավդիոսի և Ուրզուլանիլլայի որդին (Կլավ., 27, 1):

Դրուզոս Ավագ, Կլավդիոս Ներոն (38—9 մ. թ. ա.)— Տիրերիոսի եղբայրը, կոնսուլ մ.
թ. ա. 9 թ., Բետիայի և Գերմանիայի նվաճողը (Օգ., 99, 1, Տիր. 4, 3, 7, 3, 50,
1, 76; Կալ., 1, 1, Կլավ., 1, 1—2, 11, 3, 46, Հոր., 5):

Դրուզոս Կրտսեր, Հուլիոս Կեսար (13 մ. թ. ա.— 23 մ. թ.)— Տիրերիոսի և Վիպսանիա-
յի որդին, մ. թ. 15 թ. կոնսուլը (Օգ., 100, 3, 101, 2, Տիր., 7, 2, 15, 1, 23,
25, 3, 39, 52, 1, 54, 1, 55, 62, 1, Վիտ., 3, 2):

Դրուզոս Հուլիոս Կեսար (8—33 մ. թ.)— Գերմանիկոսի և Ագրիպպինա Ավագի որդին,
մեծազ քանտում Տիրերիոսի օրոք (Տիր., 54, 1—2, 65, 2, Կալ., 7, 12, 1, Կլավ.
9, 1, Օտ., 1, 3):

Դրուզիլա, Յուլիա (16—38 մ. թ.)— Կալիգուլայի քույրը և սիրուհին (Կալ., 7, 24, 1—2):

Եվրիպիդես (485—406 մ. թ. ա.)— աթենացի նշանավոր ողբերգու (Հուլ., 30, 5):

Եվտիքես— «կանաչների» կուսակցության կրկեսային կառավար, Կալիգուլայի սիրեցյալը
(Կալ., 55, 2):

Եվտիքես— գրաստավար (Օգ., 96, 2):

Զենոդոտես (շուրջ 325—260 մ. թ. ա.)— ալեքսանդրիացի նշանավոր քերական, Հոմե-
րոսի գիտական ուսումնասիրության հիմնադիրը (Քեր., 11):

Էզնացիոս Ռուփոս, Մարկոս— էդիլ մ. թ. ա. 21 թ., մահապատժի ենթարկված մ. թ. ա.
19 թ. դավադրության մեջ մեղադրանքով (Օգ., 19, 1):

Էզերնինոս, Մարկոս Կլավդիոս Մարցելլոս— Ազինիոս Պոլլիոնի թոռը, հայտնի հեռուոր,
պրետոր 19 թ. (Օգ., 43, 2):

Էզիոս Պրոկուլոս— գեղեցիկ տղամարդ, սպանված Կալիգուլայի կողմից (Կալ., 35, 2):

- էկլոգա— Ներոնի դայակուհին (Ներ., 50)։
- էլեփանդիտա— հելլենիստական կին գրող, հետերա (Տիր., 43, 2)։
- էլիոս Լամիա, Լուկիոս— 80 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Դոմիցիա Լոնգինայի՝ Դոմիցիանոսի կնոջ, առաջին ամուսինը (Դոմ., 1, 3, 10, 2)։
- էլիոս Ստիլոն Պրեկոնինոս, Լուկիոս (շուրջ 150—90 մ. թ. ա.)— հռոմեական առաջին քերականը, Վարրոնի և Կիկերոնի ուսուցիչը (Քեր., 2—3)։
- էլիա Պետինա— Կլավդիոսի երկրորդ կինը (Կլավ., 26, 2, 3, 27, 1)։
- Էլոգիոս, Քվինտոս— պատմիչ (Վիտ., 1, 2)։
- էմիլիոս Մամերկոս, Մարկոս— կոնսուլ մ. թ. ա. 78 թ. (Հուլ., 1, 2)։
- էմիլիոս Պավլոս, Լուկիոս— կոնսուլ մ. թ. ա. 50 թ., եռապետ Լեպիդոսի եղբայրը, դատապարտված նրա կողմից պրոսկրիպցիաների ժամանակ (Հուլ., 29, 1, Օգ., 16, 3)։
- էմիլիոս Պավլոս, Լուկիոս— մ. թ. ա. 34 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, մ. թ. ա. 22 թ. պրետոր, նախորդի որդին (Օգ., 16, 3, Կլավ., 16, 1)։
- էմիլիոս Պավլոս, Լուկիոս— կոնսուլ մ. թ. ա. 1 թ., նախորդի որդին, Յուլիա Կրտսերի ամուսինը (Օգ., 16, 3, 19, 1, 64, 1)։
- էմիլիոս Պապոս, Լուկիոս— Պրետոր Սիցիլիայում 205 թ. մ. թ. ա. (Օգ., 2, 2)։
- էմիլիոս էլիանոս— Կորդուբացի ընակիչ (Օգ., 51, 2)։
- էննիոս Քվինտոս (239—169 մ. թ. ա.)— հռոմեացի նշանավոր բանաստեղծ, «Տարեգրություն» («Աննալներ») էպոսի հեղինակ (Քեր., 1, 2, 8)։
- էննիա Նեվիա— Մակրոնի կինը (Կալ., 12, 26, 1)։
- էննիոս Կրտսեր— քերական (Քեր., 1)։
- էպափրոդիտես— Ներոնի ազատարձակը և քարտուղարը, Հոմի առաջին հարուստներից մեկը (Ներ., 49, 3, Դոմ., 14, 4)։
- էպիդիոս, Մարկոս— ճարտասան, Անտոնինոսի և Օկտավիանոսի ուսուցիչը (Քեր., 28)։
- էպիդիոս Մարուլլոս— ժողովրդական տրիբուն 44 թ. մ. թ. ա. (Հուլ., 79, 1, 80, 3)։
- էվնոյա— Մավրիտանիայի թագուհի (Հուլ., 52, 1)։
- էվփորիոն— հունական գիտնական բանաստեղծ մ. թ. ա. III դարում (Տիր., 70, 2)։
- էրատոսթենես (շուրջ 275—195 մ. թ. ա.)— ալեքսանդրացի քերական, բանաստեղծ և գիտնական-հանրագիտակ (Քեր., 10)։
- էրոս— Վերգիլիոսի գրագիրը (Վերգ., 34)։
- էփիցիոս Կալվինոս— հռոմեացի հեծյալ (Քեր., 3)։

- Իկելոս Մարցիանոս— Գալբայի ազատարձակը և խորհրդականը, մահապատժի ենթարկված Օտոնի կողմից (Ներ., 49, 4, Գալ., 14, 2, 22)։
- Իսիդորոս— կինիկական փիլիսոփա (Ներ., 39, 3)։

- Լաբերիոս, Դեցիմոս (105—48 մ. թ. ա.)— հռոմեացի հեծյալ, կատակերգու (Հուլ., 39, 2)։
- Լաբիենոս, Տիտոս— Օգոստոսի օրոք հանրապետական օպոզիցիայի ամենաականավոր ներկայացուցիչը, պատմիչ և հոետոր, նրա երկերը հրկիզվեցին, իսկ ինքը սովամահ եղավ (Կալ., 16, 1)։

- Լատինոս-մնչկատակ դերասան, Դոմիցիանոսի վասուհելի անձը (Դոմ., 15, 3):
 Լեվիոս Մելիստոս— ըստ երևույթին, նույնական է բանաստեղծ Լեվիոսի (մ. թ. ա. 1
 դարի սկիզբը), նեոտերիկոսների նախորդներից մեկի հետ (Քեր., 3):
 Լեվիոս Արքեպիսոս— Լուկիլիոսի բարեկամը և ծանոթագրողը (մ. թ. ա. II դարի վերջ)
 (Քեր., 2):
 Լեվիոս շերմա— քերական Ատենոս Պրեստիքստատեսի թղթակիցը (Քեր., 10):
 Լեվիոս Իմաստուն, Գայոս— կոնսուլ մ. թ. ա. 140 թ., Սկիպիոնի բարեկամը, նրա հետ
 մեկտեղ հարում էր շափավոր օպտիմատներին, հայտնի էր պերճախոսությամբ
 և փիլիսոփայական զբաղմունքներով (Տեր., 1—5):
 Լենտուլոս, Լուկիոս Կոռնելիոս (Սվետոնիոսի մոտ սխալմամբ՝ Գնեսոս, կոնսուլ մ. թ. ա.
 3 թ. (Գալ., 4, 1):
 Լենտուլոս Ավգուրոս, Գնեսոս Կոռնելիոս— կոնսուլ մ. թ. ա. 14 թ. (Տեր., 49, 1):
 Լենտուլոս Գետուլիկոս, Գնեսոս Կոռնելիոս— կոնսուլ մ. թ. ա. 26 թ., հոետոր և բանաս-
 տեղծ, Գերմանիայի կուսակալը, Կալիգուլայի դեմ դավադրության մասնակից
 (Կալ., 8, 1—2, Կլավ., 9, 1, Գալ., 6, 2):
 Լեպիդոս, Մարկոս էմիլիոս, եռապետի հայրը— կոնսուլ մ. թ. ա. 78 թ., որը անհաջող
 խռովություն բարձրացրեց Սուլլայի մահից հետո (Ղուլ., 3, 5):
 Լեպիդոս, Մարկոս էմիլիոս— կոնսուլ մ. թ. ա. 46 թ., Կեսարի օրոք հեծելազորի պետը,
 II եռապետության անդամ, մեծ քրմապետ (Ղուլ., 82, 4, 87, 0գ. 8, 3, 12, 13,
 1, 16, 4, 27, 2, 31, 1, 54, Տեր., 5):
 Լեպիդոս, Մարկոս էմիլիոս— եռապետի որդին, Օգոստոսի դեմ դավադրության մասնա-
 կից (Օգ., 19, 1):
 Լեպիդոս, Մարկոս էմիլիոս— Դրուզիլլայի ամուսինը (Կալ., 24, 3, 36, 1, Կլավ., 9, 1):
 Լեպիդա, Դոմիցիա— Ներոնի հորաքույրը, Մեսսալինայի մայրը, մահապատժի ենթարկ-
 ված 54 թ. (Ներ., 5, 2, 6, 3, 7, 1):
 Լեպիդա, էմիլիա— Կլավդիոսի առաջին հարսնացուն, Յուլիա Կրտսերի և էմիլիոս Պավ-
 լոսի դուստրը (Կլավ., 26, 1):
 Լեպիդա, էմիլիա— Քվիբրինիոսի կինը (Տեր., 49, 1):
 Լեպիդա, էմիլիա— Գալբայի կինը, եռապետի թոռնորդին (Գալ., 5, 1):
 Լետորիոս, Գայոս— պատրիկական տոհմի պատկանող պատանի (Օգ., 5):
 Լիբոն Դրուզոս, Մարկոս Սկրիբոնիոս— Պոմպեոսի թոռնորդին, 16 թ. պրետորը, որը
 մեղադրվեց դավադրության մեջ և ինքնասպան եղավ (Տեր., 25, 1, 3):
 Լիկինոս— Օգոստոսի ազատարձակը, Գալլիայի պրոկուրատորը շուրջ 25 թ. մ. թ. ա.,
 որը պաշտոնից հանվեց կաշառակերության համար (Օգ., 67, 1):
 Լիվիոս, Տիտոս (59 մ. թ. ա.— 17 մ. թ.)— նշանավոր պատմագիր (Կալ., 34, 2, Կլավ.,
 41, 1 Դոմ., 10, 3):
 Լիվիոս Անդրոնիկոս, Լուկիոս (III դ. մ. թ. ա.)— ազատարձակ հույն, հռոմեական առա-
 ջին բանաստեղծը (Քեր., 1)
 Լիվիոս Սալինատոր, Մարկոս— կոնսուլ 219 և 207 թթ. մ. թ. ա., ցենզոր 204 թ., (Տեր.,
 3, 1—2):
 Լիվիլա, Լիվիա (13—31 մ. թ.)— Դրուզոս Ավագի դուստրը, Գայոսի՝ Օգոստոսի թոռան,
 ապա Դրուզոս Կրտսերի կինը, մահապատժի է ենթարկվել Տերբերիոսի կողմից
 (Տեր., 62, 1, Կլավ., 1, 6, 3, 2):
 Լիվիլա, Յուլիա (17—42 մ. թ.)— Գերմանիկոսի դուստրը, Կալիգուլայի քույրը. Կալի-

գուլան արքունից նրան, իսկ Կլավդիոսը վերադարձրեց և ապա մահապատժի ենթարկեց Մեսսալինայի սաղրանքներով (Կալ., 7):

Վիլիա Դրուզիլլա, հետագայում Յուլիա Ավգուստա (55 մ. թ. ա.— 29 մ. թ.)— Օգոստոսի կինը, Տիբերիոսի մայրը (Օգ., 29, 4, 40, 3, 62, 2, 63, 1, 69, 1—2, 84, 2, 99, 1, 101, 2, Տիբ., 4, 3, 6, 2, 14, 2, 22, 50, 2, Կալ., 7, 10, 1, 15, 2, 16, 3, 23, 2, Կլավ., 1, 1, 3, 2, 4, 1, 4, 6, 11, 2, Գալ., 1, 5, 2, Օտ., 1, 1):

Վիլիա Մեղուլլինա Կամիլա—Կլավդիոսի երկրորդ հարսնացուն (Կլավ., 26, 1):

Վիլիա Օրեստիլա— Գալիգուլայի երկրորդ կինը (Կալ., 26, 1):

Վիլիա Օցելլինա— Գալբայի խորթ մայրը (Գալ., 3, 4, 4, 1):

Վիցինիոս— մ. թ. ա. II դարի բանաստեղծ-կատակերգու (Տիբ., 5):

Վիցինիոս Կավլոս, Գայոս (շուրջ 82—47 մ. թ. ա.)— հայտնի հոետոր և բանաստեղծ, Կատուլլոսի բարեկամը, Կեսարի հակառակորդը (Հուլ., 49, 1, 78, Օգ., 72, 1):

Վիցինիոս Մուցիանոս, Գայոս— Ասորիքի կուսակալը 67—70 թթ., Վեսպասիանոսի դաշնակիցը իշխանություն համար նրա պայքարում, եռակի կոնսուլ, մատենագիր-անտիկվարիոս (Վեսպ., 6, 4, 13):

Լուլիոս Պավլինոս, Մարկոս— կոնսուլ 21 թ. մ. թ. ա., Օգոստոսի զորավարը, նրա թոռան՝ Գայոս Կեսարի, ռազմական խորհրդատուն. ինքնասպան եղավ մ. թ. 2 թ. (Օգ., 23, 1, Տիբ., 12, 2, 13, 2):

Լուլիա— Ավլոս Գաբինիոսի կինը, Կեսարի սիրուհին (Հուլ., 50, 1):

Լուլիա Պավլինա— Կալիգուլայի երրորդ կինը, Մարկոս Լուլիոսի թոռը, հետագայում, Կլավդիոսի օրոք, սպանվեց Ագրիպպինայի սաղրանքներով (Կալ., 25, 2, Կլավ. 26, 3):

Լուկրեցիոս Կարոս, Տիտոս (շուրջ 94—55 մ. թ. ա.)— բանաստեղծ, «Իբերի բնության մասին» պոեմի հեղինակը (Վերգ., 6):

Լուկուլլոս, Լուկիոս, Լիկինիոս— զորավար, կոնսուլ 74 թ. մ. թ. ա., պատերազմեց Միհրդատի դեմ, հուշակվեց առասպելական ճոխամոլությամբ (Հուլ., 20, 4):

Լուկեոս, Լուկիոս— Կիկերոնի բարեկամը, պատմագիր և հոետոր, պոմպեոսական (Հուլ., 19):

Լուկուստա— թունավորող կին, որը ծառայում էր Ագրիպպինային և Ներոնին, մահապատժի ենթարկվեց Գալբայի կողմից (Նեբ., 30, 2—3, 47, 1):

Լուտացիոս Դավինիոս— մ. թ. ա. I դարի սկզբի քերական (Քեր., 3):

Հուկիոս— թղուկ (Օգ., 43, 3):

Լուցիլիոս, Գայոս— մ. թ. ա. II դարի վերջի երգիծաբան-բանաստեղծ (Քեր. 2, 14):

Գալլիպպիդիոս— դերասան (Տիբ., 38):

Կալպենդոս, Քվինտոս— սենատոր (Հուլ., 39, 1):

Գալբուրինա— Լուկիոս Պիգոնի դուստրը, Հուլիոս Կեսարի երրորդ կինը (Հուլ., 21, 81, 3):

Կալպուրնիա Ստատուրա— Պերսիոսի բարեկամը (Պերս. 3):

Կամիլոս, Մարկոս Տուրիոս— հռոմեացի կիսաառասպելական հերոս, գիկտատոր, գալլերի հաղթողը 390 թ. մ. թ. ա. (Տիբ., 3, 2, Կլավ. 26, 1):

Գամիլլոս Արրունցիոս Տուրիոս Ակրիբոնիանոս, Լուկիոս— մ. թ. 32 թ. կոնսուլը, Գալմաթիայի լեգատը, որը 42 թ. խոտվություն բարձրացրեց Կլավդիոսի դեմ (Կլավ., 13, 2, 35, 2, Օտ., 1, 2, 2, 1):

Կանոս— սրնգուհար (Գալ., 12, 3):

- Կանինիսու Ռեբրիլիոս, Գայոս— Կեսարի լեզատը, մ. թ. ա. 45 թ. դեկտեմբերի 31-ի կանսուլ-սուֆֆեկտը (Ներ., 15, 2, հմմտ. Նուլ., 76, 2):
- Կաննուցիոս, Գայոս— հոետոր (Քեր., 26):
- Կապթոս— Կապուտի սոասպելական հիմնադիրը և թագավորը (Նուլ., 81, 1):
- Կարվիլիոս Պիկտոր— «Վերգիլիոսին փնովողներից» մեկը (Վերգ., 44):
- Կարնուլոս— Տիբերիոսի բանտարկյալը (Տիր., 61, 5):
- Կասկաներ, Գայոս Աերվիլիոս և Պուբլիոս Աերվիլիոս (ժողովրդական տրիբուն 43 թ. մ. թ. ա.— եղբայրներ, Կեսարի դեմ դավադրության մասնակիցներ (Նուլ., 82, 1—2):
- Կասիոս Լոնգինոս, Գայոս (85—42 մ. թ. ա.)— Կեսարի դեմ դավադրության առաջնորդներից մեկը, Փիլիպպոսի ճակատամարտից հետո ինքնասպան հղավ (Նուլ., 63, սխալմամբ Լուկիոս է անվանված, Նուլ., 80, 4, 85, Օգ., 9, 10, 1, Տիր., 61, 3, Ներ., 3, 1, 37, 1, Գալ., 3, 2, Օս., 10, 1, Քեր., 13):
- Կասիոս Լոնգինոս, Գայոս— նախորդի հունորդը, մ. թ. 30 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Ասիայի կուսակալը 40—41 թթ. (Կալ., 57, 3, Ներ., 37, 1):
- Կասիոս Լոնգինոս, Լուկիոս — նախորդի եղբայրը, կոնսուլ 30 թ. մ. թ., Դրուսիլայի առաջին ամուսինը (Կալ., 24, 1):
- Կասիոս Պարմացի, Գայոս— բանաստեղծ և դրամատուրգ, Կեսարին սպանողներից մեկը, մարտնչում էր Օգոստոսի դեմ սկզբում Մեքստոս Պոմպեոսի, ապա Անտոնիոսի հետ (Օգ., 4, 2):
- Կասիոս Պասավինոս— Օգոստոսի թշնամին (Օգ., 51, 1):
- Կասիոս Սենրոս, Տիտոս— Օգոստոսի ժամանակաշրջանի ականավորագույն օպոզիցիոն հոետոր (Օգ., 56, 1, Կալ., 16, 1, Վիտ., 2, 1, Քեր., 22):
- Կասիոս Սցևա, Մարկոս— Կեսարի ցենտուրիոնը (Նուլ., 68, 4):
- Կասիոս Քերեա— պրետորականների տրիբուն, Կալիգուլային սպանողը: Մահապատժի է ենթարկվել Կլավդիոսի կողմից (Կալ., 56, 2, 57, 3, 58, 2):
- Կաստրիցիոս— մատնիչ (Օգ., 56, 4):
- Կատիլինա, Լուկիոս Աերգիոս (108—62 մ. թ. ա.)— սենատի դեմ 66 և 63 թթ. դավադրությունների առաջնորդը (Նուլ., 14, 1, 17, 1, Օգ., 3, 1, 94, 5):
- Կատոն (Ավագ), Մարկոս Պորցիոս (234—149 մ. թ. ա.)— ցենզոր 184 թ. մ. թ. ա., քաղաքական գործիչ, հոետոր և պատմագիր, հին հռոմեական բարոյականության և հնամենի ոճի նմուշ (Օգ., 86, 3, Քեր., 15):
- Կատոն (Կրտսեր), Մարկոս Պորցիոս (95—46 մ. թ. ա.)— նախորդի թոռնորդին, 54 թ. պրետորը, հեկտոր և փիլիսոփա-ստոիկյան, սենատական ավագանու զաղափարական առաջնորդներից մեկը, պոմպեոսականների պարտությանից հետո ինքնասպան հղավ (Նուլ., 14, 2, 19, 1, 20, 4, 30, 3, 53, 1, Օգ., 13, 2, 85, 1, 87, 1):
- Կատուլոս, Քլինտոս Լուտացիոս— կոնսուլ 78 թ. մ. թ. ա., սենատական ավագանու առաջնորդներից մեկը, Պոմպեոսի և Կեսարի թշնամին (Նուլ., 15, Օգ., 94, 8, Գալ., 2, 3, 4, Քեր., 3):
- Կատուլլոս, Վալերիոս— Կալիգուլայի պալատական (Կալ., 36, 1):
- Կատուլլոս, Գայոս Վալերիոս (չուրջ 86—53 մ. թ. ա.)— նշանավոր քնարերգու բանաստեղծ (Նուլ., 73):
- Կերես— Վերգիլիոսի ստրուկը (Վերգ., 9):
- Կելագոս— Յոստոսի ազատարձակը (Օգ., 67, 1):

- Կեսար, Գայոս (20 մ. թ. ա.— 4 մ. թ.)— Ազրիպայայի և Յուլիայի որդին, Օգոստոսի թոռը, որդեգրված նրա կողմից (Օգ., 26, 2, 29, 4, 64, 1, 65, 1, 2, 67, 2, 93, Տիր., 11, 5, 12, 2, 13, 1—2, 15, 2, 23, ներ., 5, 1):
- Կեսար, Լուկիոս (17 մ. թ. ա.— 2 մ. թ.)— նախորդի եղբայրը (Օգ., 26, 2, 29, 4, 64, 1, 65, 1—2, Տիր., 11, 5, 15, 2, 23, 70, 2):
- Կեսար, Լուկիոս Զուլիոս— Պոմպեոսի և Կատոնի զորավարը քաղաքացիական պատերազմում, պարտութունից հետո ներում ստացավ, բայց դրանից հետո շուտով սպանվեց (Հուլ., 75, 3):
- Կեսարին— Զուլիոս Կեսարի որդին Կլեոպատրայից (Օգ., 17, 5, հմմտ. Հուլ., 52, 2):
- Կերիլես— Վեսպասիանոսի ազատարձակը (Վեսպ., 23, 1):
- Կիկերոն, Մարկոս Տուլլիոս (106—43 մ. թ. ա.)— կոնսուլ 63 թ. մ. թ. ա., նշանավոր հռետոր և քաղաքական գործիչ (Հուլ., 9, 2, 17, 2, 20, 4, 30, 5, 42, 3, 49, 3, 50, 2, 55, 1, 56, 1, 6, Օգ., 3, 2, 5, Տիր., 2, 4, 7, 2, Կլավ., 41, 3, Քեր., 7, 9, 14, 16, 25, 26, 29, Տեր., 5):
- Կիկերոն, Քվինտոս Տուլլիոս— հռետորի եղբայրը (Հուլ., 14, 2, Օգ., 3, 2):
- Կինեգիրես— Մարաթոնի ճակատամարտի հերոսը (Հուլ., 68, 4):
- Կինորելին— Բրիտանական թագավոր (Կալ., 44, 2):
- Կլավդիոս Ագաթուրնոս— փիլիսոփա և բժիշկ, Պերսիոսի բարեկամը (Պերս., 4):
- Կլավդիոս Ապպիոս— Կլոդիոսի եղբայրը, Լուկուլլոսի փեսան, մ. թ. ա. 54 թ. կոնսուլը, պոմպեոսական (Քեր., 10):
- Կլավդիոս Ատտա— Կլավդիոսների տոհմի սուսսիլական նախահայրը (Տիր., 1, 1):
- Կլավդիոս Կավդիկոս— 264 թ. մ. թ. ա. կոնսուլը, առաջին հռոմեացի զորավարը I Պոնտիկյան պատերազմում (Տիր., 2, 1):
- Կլավդիոս Ներոն, Տիրերիոս— Կլավդիոս Կուլրի որդին (Տիր., 3, 1):
- Կլավդիոս Ներոն, Գայոս (Սվետոնիոսի մոտ՝ Տիրերիոս)— կոնսուլ մ. թ. ա. 207 թ., զորավար II Պոնտիկյան պատերազմում (Տիր., 2, 1):
- Կլավդիոս Ներոն, Տիրերիոս— Լիվիայի առաջին ամուսինը, Տիրերիոսի հայրը (Օգ., 62, 2, Տիր., 4, 1):
- Կլավդիոս Պուլքր, Ապպիոս— Կլավդիոս Կուլրի որդին (Տիր., 3, 1):
- Կլավդիոս Պուլքր, Պուբլիոս— Կլավդիոս Կուլրի որդին, կոնսուլ 249 թ. մ. թ. ա. (Տիր., 2, 2—3):
- Կլավդիոս Պուլքր, Գայոս— Կլոդիոսի եղբայրը, պրետոր 56 թ. մ. թ. ա. (Քեր., 10):
- Կլավդիոս Ռեգիլիանոս— դեցեմվիր, կոնսուլ 451 թ. մ. թ. ա. (Տիր., 2, 2):
- Կլավդիոս Ռուստոս— Կլավդիոս Կուլրի որդին (Տիր., 2, 2):
- Կլավդիոս Կուլր, Ապպիոս— կոնսուլ 307 և 269 թթ. մ. թ. ա., ցենզոր 312 թ., ռազմիկ և հռետոր (Տիր., 2, 1, 3, 1, Կլավ., 24, 1):
- Կլավդիա— Կլավդիոս Կուլրի դուստրը (Տիր., 2, 3):
- Կլավդիա Քվինտա— Կլավդիոս Կուլրի թոռնուհին (Տիր., 2, 3):
- Կլավդիա— Կլոդիոսի և Յուլիայի դուստրը, Օկտավիանոսի հարսնացուն (Օգ., 62, 1):
- Կլավդիա— Կլավդիոս կայսեր և Ուրզուլանիլլայի դուստրը (Կլավ., 27, 1):
- Կլավդիա Ավգուստա— Ներոնի և Պոպպեայի դուստրը, մահացավ 63 թ. չորս ամսակա- նում և աստվածացվեց (ներ., 35, 3):
- Կլեմենտոս— Ազրիպայա Պոստոմոսի ստրուկը, որը ապստամբություն բարձրացրեց Տիրերիոսի դեմ (Տիր., 25, 1, 3):
- Կլեոպատրա VII— Եգիպտոսի թագուհի (51—47 մ. թ. ա. եղբոր հետ, 47—30 միանձն-

յա), Կեսարի սիրուհին, Անտոնիոսի կինը (Հուլ., 35, 1, 52, 1—2, Օգ., 17, Ներ., 3, 2):

Կլոդիանոս — Դոմիցիանոսին սպանողներից մեկը (Դոմ., 17, 2):

Կլոդիոս, Պուբլիոս — տրիբուն 58 թ. մ. թ. ա., հռոմեական պլեբսի ժողովրդական առաջնորդը (Հուլ., 6, 2, 20, 4, 26, 1, 74, 2, Օգ., 62, 1, Տեր., 2, 4):

Կլոդիոս, Սեքստոս — ճարտասան, Անտոնիոսի բարեկամը (Քեր., 29):

Կլոդիոս, Սերվիոս — մ. թ. ա. I դարի սկզբի քերական (Քեր., 3):

Կլոդիոս Լիցինոս, Գայոս — մ. թ. 4 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Օգոստոսի ժամանակաշրջանի պատմագիր (Քեր., 20):

Կլոդիոս Մակրոս, Լուկիոս — աֆրիկյան լեզեոնների պետը, որ 68 թ. ապստամբություն բարձրացրից Ներոնի դեմ, հրաժարվեց ենթարկվել Գալբային և սրա կողմից մահապատժի ենթարկվեց (Գալ., 11):

Կլոդիոս Պուլլիոն — սենատոր (Դոմ., 1, 1):

Կլոդիոս Իուլիոս, Գայոս — 41 թ. կոնսուլը, Ներոնի և ապա Վիտելլիոսի մերձավորը, հետագայում հայտնի պատմագիր (Ներ., 21, 2):

Կյուրոս Ավագ — սյուրսկական թագավոր (559—529 մ. թ. ա.), Աքեմենյանների տերության հիմնադիրը. Քսենոփոնի «Կյուրոսպեդիայի» հերոսը (Հուլ., 87):

Կոռնելիոս — Օկտավիանոսի ցենսուրիոնը (Օգ., 26, 1):

Կոռնելիոս Ալեքսանդր Պոլիհիստոր — հույն քերական, պատմագիր, աշխարհագրագետ, ծագումով Միլեթից. ուսուցանում էր Հռոմում Կիկերոնի տարիներին (Քեր., 20):

Կոռնելիոս Բալբոս, Լուկիոս — Կեսարի, ապա և Օկտավիանոսի հնազույն կուսակիցներից մեկը, մ. թ. ա. 40 թ. կոնսուլը (Հուլ., 78, 1, 81, 2):

Կոռնելիոս Բալբոս, Լուկիոս — նախորդի եղբորորդին, Օգոստոսի զորավարը (Օգ., 29, 5):

Կոռնելիոս Գալլոս, Գայոս — եղբերգու բանաստեղծ, Վերգիլիոսի հովանավորը, Օգոստոսի զորավարը, Նգիպտոսի կուսակալը, որ մեղադրվեց դավաճանության մեջ և ինքնասպանություն գործեց (Օգ., 66, 1—2, Քեր., 16, Վերգ., 19):

Կոռնելիոս Լակոն — պրետորականների պետը Գալբայի սրբք, սպանվեց նրա հետ միասին (Գալ., 14, 2):

Կոռնելիոս Նեսոտ — պատմագիր և բանաստեղծ, Կատուլլոսի և Ատտիկոսի բարեկամը. նրա երկասիրությունը, որ վկայակոչում է Սվետոնիոսը, չի պահպանվել (Հուլ., 55, 2, Օգ., 77, Քեր., 4, 27, Տեր., 1, 3):

Կոռնելիոս Սաբինոս — պրետորականների տրիբուն, Կալիգուլային սպանողներից մեկը (Կալ., 58, 2):

Կոռնելիոս Տագիտոս — Սուլլայի ցենսուրիոնը (Հուլ., 74, 1):

Կոռնելիոս Տուսկոս — Վեսպասիանոսի և Դոմիցիանոսի զորավարը, որը առաջին անգամ առաջ քաշվեց 69 թ. քաղաքացիական պատերազմի ժամանակ (Դոմ., 6, 1):

Կոռնելիա — ծիննայի դուստրը, Կեսարի առաջին կինը (Հուլ., 1, 1, 6, 1, 2):

Կոռնելիա — վեստալուհի, մահապատժի ենթարկված Դոմիցիանոսի կողմից (Դոմ., 8, 4):

Կոռնիֆիցիոս, Լուկիոս — Օկտավիանոսի զորավարը, մ. թ. ա. 35 թ. կոնսուլ, ապա Աֆրիկայի կուսակալ (Օգ., 29, 5):

Կոռնուտոս, Լուկիոս Աննոս — փիլիսոփա-ստոիկյան, ճարտասան և բանաստեղծ, Սենեկայի ազատարձակը, Պերսիոսի և Լուկանոսի ուսուցիչը (Պերս., 3, 4, 6, 7):

Կոսկոնիոս, Քվինտոս — մինչվարրոնյան ժամանակաշրջանի հռոմեացի քերական (Տեր., 5):

Կոսմոս — Օգոստոսի ստրուկը (Օգ., 67, 1):

- Կապուցիթա**— Հուլիոս Կեսարի հարեանցուն (Հուլ., 1, 1):
- Կոստիզոն**— Դանուբյան գետերի թագավորը, Օկտավիանոսի գաշնակիցը Անտոնինոսի դեմ պայքարում (Օգ., 63, 2):
- Կոստա, Գայոս Ավրելիոս**— մ. թ. ա. 75 թ. կոնսուլը, նշանավոր հռետոր, Կեսարի ազգականը մոր կողմից (Հուլ., 1, 2):
- Կոստա, Լուկիոս Ավրելիոս**— մ. թ. ա. 65 թ. կոնսուլը, քվինդեցիմվիր Կեսարի օրոք (Հուլ., 79, 3, Հոբ., 8):
- Կոստա Մեսալին, Մարկոս Ավրելիոս**— Վալերիոս Մեսսալայի որդին, սենատոր, Օվիդիոսի բարեկամը (Քեր., 1):
- Կատախու**— ալպիական ցեղերի թագավորը, Օգոստոսի վասսալը (Տիր., 37, 3):
- Կատախու**— նախորդի որդին և ժառանգը (Ներ., 18):
- Կրասոս, Լուկիոս Լիկինիոս**— մ. թ. ա. 95 թ. կոնսուլ, 92, թ. ցենզոր, օպտիմատների առաջնորդներից մեկը, մինչև կերոնյան ժամանակաշրջանի խոշորագույն հռետոր (Ներ., 2, 2, Քեր., 25):
- Կրասոս, Մարկոս Լիկինիոս**— մ. թ. ա. 70 և 55 թթ. կոնսուլ, զորավար և նշանավոր հարուստ, Կեսարի և Պոմպեոսի դաշնակիցն ու մրցակիցը (Հուլ., 9 1—2, 19, 2, 21, 24, 1, 50, 1: Օգ., 21, 3, Տիր., 9, 1, Վերգ., 2):
- Կրասոս Ֆրուգի, Մարկոս Լիկինիոս**— 27 թ. կոնսուլ, որը ստացավ տրիումֆային զարդարանքներ 41 թ. Մավրիտանիայում և 43 թ. Բրիտանիայում, Գնեսոս Պոմպեոսի՝ Կլավդիոսի փեսայի, հայրը (Կլավ., 17, 3):
- Կրասիցիոս Պասիկլես, Լուկիոս**— քերական և փիլիսոփա (Քեր., 18):
- Կրատես**— ստոիկյան, Պերգամոսի քերականական դպրոցի գլուխը, Արիստարքոս Ալեքսանդրիացու հակառակորդը (Քեր., 2, 11):
- Կրեմուցիոս Կորդոս**— Օգոստոսի և Տիրերիոսի ժամանակների օպոզիցիոն պատմագիր (Օգ., 35, 2, Կալ., 16, 1, հմմտ. Տիր., 61, 3):
- Կուրիոս, Քվինտոս**— Կատիլինայի դավադրության մասնակից, որի միջոցով Կիկերոնը իմացավ դավադրության մտադրությունների և ժամկետի մասին (Հուլ., 17, 1—2):
- Կուրիոն (Ավագ), Գայոս Ակրիբոնիոս**— մ. թ. ա. 76 թ. կոնսուլը, հայտնի հռետոր, օպտիմատների կողմնակից և Կեսարի թշնամի (Հուլ., 9, 2—3, 49, 1, 52, 3, 50, 1):
- Կուրիոն (Կրտսեր), Գայոս Ակրիբոնիոս**— Կուրիոն Ավագի որդին, մ. թ. ա. 50 թ. ժողովրդական տրիբուն, սաղանդավոր հռետոր, Կեսարի թշնամի, իսկ հետո դաշնակից և զորավար (Հուլ., 29, 1, 36, 50, 1, Քեր., 25):
- Կուրցիոս Նիկիա**— քերական, Պոմպեոսի մերձավոր (Քեր., 14):

Հաննիբալ (247—182 մ. թ. ա.)— Կարթագենացի նշանավոր զորավար (Տիր., 2, 1, Դոմ. 10, 3):

Հարպոկրատես— Կլավդիոսի ազատարձակը, մահապատժի ենթարկված նրա կողմից (Կլավ., 28):

Հասդրուբալ— Հաննիբալի եղբայրը, ջախջախված հռոմեացիների կողմից Մեսսալայի մոտ մ. թ. ա. 207 թ. (Տիր., 2, 1):

Հելիոս— Ներոնի ազատարձակը, որ կառավարում էր Հռոմը նրա հունական ուղևորության ժամանակ (Ներ., 28, 1):

- Հելվիդիոս Կրտսեր— Հելվիդիոս Պրիսկոսի որդին, 87 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, մահապատժի ենթարկված Գոթիցիանոսի կողմից (Գոմ., 10, 8):
- Հելվիդիոս Պրիսկոս, Գալոս— 70 թ. պրետորը, Փրասեյա Պետոսի փեսան, ստրիկյան և հանրապետական, մահապատժի ենթարկված Վեսպասիանոսի կողմից (Վեսպ., 15, Գոմ., 10, 8):
- Հերեննիոս— «Վերդիլիոսին փնտվողներին» մեկը (Վերգ., 44):
- Հերմոգենես Տարսոսցի— պատմիչ, մահապատժի ենթարկված Գոթիցիանոսի կողմից (Գոմ., 10, 1):
- Հիմնասալ II— Նոմիդիայի թագավոր (մ. թ. ա. 1 դարի առաջին կես), Աուլլայի և Պոմպոսի դաշնակիցը (Հուլ., 71):
- Հիլարիոն— Օգոստոսի ազատարձակը (Օգ., 101, 1):
- Հիլաս— մնջկատակ դերասան (Օգ., 45, 4):
- Հիպպարքոս— չպարզված անձնավորություն (Վեսպ., 13):
- Հիրցիոս, Ավլոս— Կեսարի բարեկամը և զորավարը, նրա «Նաթերի» շարունակողը, մ. թ. ա. 43 թ. կոնսուլը (Հուլ., 56, 1—3; Օգ., 10, 3, 11, 68, Տիր., 5, Քեր., 25):
- Հոմերոս (Կալ., 34, 2, Ներ., 47, 1, Վերգ., 21, 43, 46):
- Հովսեփոս Փլարիսս (87—չուրջ 100)— հրեական քաղաքական գործիչ և պատմիչ, հրեական պատերազմի մասնակից (Վեսպ., 5, 6):
- Հորտալոս, Մարկոս Հորտենզիոս— սենատոր, հոնտոր Հորտենզիոսի թոռը (Տիր., 47):
- Հորտենզիոս, Փվինտոս— մ. թ. ա. 69 թ. կոնսուլը, նշանավոր հոնտոր (Տիր., 47, Օգ., 72, 1):
- Հոնանես— մ. թ. ա. III դարի հույն քերական և գիտնական բանաստեղծ (Տիր., 70, 2):
- Հոմոլոս— Հոմի առասպելական հիմնադիրը և առաջին թագավորը (Օգ., 7, 2, 95, Տիր., 1, 1, 59, 2, Կալ., 25, 1):
- Հուլիոս Ֆիզիոս, Գալոս— քերական և գիտնական-հանրագիտակ (Քեր., 20):
- Հուլիոս Մարաթոս— ազատարձակ և Օգոստոսի կենսագիրը (Օգ., 79, 2, 94, 3):
- Հուլիոս Մոգեստոս— Տիրերիոսի ժամանակի քերական, Հիզիոսի աշակերտը (Քեր., 20):
- Հուլիոս Մոնտանոս, Գալոս— Տիրերիոսի բարեկամը, ճարտասան և բանաստեղծ (Վերգ., 29):
- Հուլիոս Սաուրենինոս— սենատոր (Օգ., 27, 2):
- Մագիոս— Վերդիլիոսի պապը մոր կողմից (Վերգ., 1):
- Մակրոն, Նեվիոս Սերտորիոս— զարապետ, որը ճնշեց Սեյանոսի դավադրությունը և փոխարինեց նրան պրետորիոսի պրեֆեկտի պաշտոնում (Կալ., 12, 2, 28, 2, 26, 1):
- Մահոն— Հաննիբալի կրտսեր եղբայրը, կարթագենացիների զորավար (Գոմ., 10, 3):
- Մալլիա— չպարզված անձնավորություն (Օգ., 70, 1):
- Մալլոնիա— Տիրերիոսի սիրուհին (Տիր., 45):
- Մամուրրա— Կեսարի սպան, որ հարստացել էր Գալլիայում. նրա մասին շարախիներ բանաստեղծություններ էր գրում Կատուլլոսը (Հուլ., 72):
- Մարիուս, Պուբլիոս— 62 թ. կոնսուլ (Պերս., 1):
- Մարիուս, Գալոս (157—86 մ. թ. ա.)— պոպուլյարների կուսակցության առաջնորդը, Ցուգուրտայի և կիմբրների հաղթողը, յոթակի կոնսուլ (Հուլ., 1, 3, 11, Տիր., 59, 2):
- Մարոբուդոս— Մարկոմանների իշխան, գերմանական ցեղային միության առաջնորդ,

- մ. թ. 19 թ. ապրում էր Իտալիայում որպես պատվավոր գերյալ (Տիր., 37, 4):
 Մարցելլոս, Գայոս Կլավդիոս— մ. թ. ա. 50 թ. կոնսուլ, Օկտավիայի ամուսինը, պոմպեոսական, մահացավ 40 թ. (Հուլ., 27, 1, 29, 1):
- Մարցելլոս, Մարկոս Կլավդիոս— մ. թ. ա. 51 թ. կոնսուլ, նախորդի հորեղբորդին, Կեսարի կողմից ներված 46 թ. (Հուլ., 28, 2, 29, 1):
- Մարցելլոս, Մարկոս Կլավդիոս (43—23 մ. թ. ա.)— Օկտավիայի որդին, որդեգրված Օգոստոսից, Ցուլիայի առաջին ամուսինը (Օգ., 29, 4, 43, 5, 63, 1, 66, 3, Տիր., 6, 4, 10, 1, Վերգ., 32):
- Մարցիոս, Անկոս— Հռոմի առասպելական շորրորդ թագավորը (Հուլ., 6, 1):
- Մարցիոս Փիլիպպոս, Լուկիոս— կոնսուլ 56 թ. մ. թ. ա., Օգոստոսի խորթ հայրը (Օգ., 8, 2, 29, 5):
- Մարցիոս Ցենզորինոս, Գայոս— կոնսուլ 8 թ. մ. թ. ա. (Հոր., 8):
- Մարցիա Ցուրնիլլա— Տիտոսի երկրորդ կինը (Տիր., 4, 2):
- Մասգարա— Օգոստոսի ազատարձակը (Օգ., 98, 4):
- Մասինտա— թագավորական տոհմին պատկանող նումիդիացի, Կեսարի կլիենտը (Հուլ., 71):
- Մատիոս, Գայոս— հեծյալ, Կիկերոնի և Կեսարի բարեկամը (Հուլ., 52, 2, Գոմ., 21):
- Մաքսիմոս— ազատարձակ, Գոմիցիանոսին սպանողներից մեկը (Գոմ., 17, 2):
- Մաքսիմոս, Քվինտոս Ցաբիոս— մ. թ. ա. 45 թ. կոնսուլ, Կեսարի զորավարը (Հուլ., 80, 2):
- Մելիսսոս, Գայոս— Մեկենասի աշատարձակը, քերական և կատակերգու (Քեր., 21, Վերգ., 16):
- Մեմմիոս, Գայոս— մ. թ. ա. 58 թ. պրետոր, ականավոր պոմպեոսական, էպիկուրի հետևորդ, Լուկրեցիոսի և Կատուլլոսի հովանավորը (Հուլ., 23, 1, 49, 2, 73, Քեր., 14, Տեր., 3):
- Մեմմիոս Ռեզուլոս, Պուբլիոս (Սվետոնիոսի մոտ սխալմամբ՝ Գայոս) մ. թ. 31 թ. կոնսուլ, Լուլիա Պավլինայի ամուսինը, Տիրեիրոսի վստահելի անձը, բալկանյան պրովինցիաների կուսակալը (Կալ., 25, 2):
- Մենանդրես (շուրջ 342—292 մ. թ. ա.)— հույն բանաստեղծ, «նոր ատիկական կոմեդիայի» ամենաականավոր ներկայացուցիչը (Տեր., 2, 5):
- Մենա (կամ Մենոդորես)— Սեքստոս Պոմպեոսի նավատորմավարը, որը երկիցս նավատորմով անցել էր Օկտավիանոսի կողմը և հակառակը (Օգ., 74):
- Մենեկրատես— ներոնի ուսուցիչը կիֆարահարության արվեստում (Ներ., 30, 2):
- Մեսսալա, Մարկոս Վալերիոս— մ. թ. ա. 161 թ. կոնսուլ (Քեր., 25):
- Մեսսալա Բարբատոս, Մարկոս Վալերիոս— Օգոստոսի զրոջ թոռը, Մեսսալինայի հայրը (Կլավ., 26, 2):
- Մեսսալա Կորվինոս, Մարկոս Վալերիոս— հանրապետական, Բլուտոսի կողմնակից, հետո հարեց Օկտավիանոսին, մ. թ. ա. 31 թ. կոնսուլ, Օգոստոսից հետո առաջին մարդը սենատում, ականավոր հռետոր (Օգ., 58, 1—2, 74, Տիր., 70, 1: Կլավ., 13, 2, Քեր., 4):
- Մեսսալա Մեսսալին, Մարկոս Վալերիոս— մ. թ. ա. 3 թ. կոնսուլ, նախորդի որդին (Գալ., 4, 1):
- Մեսսալինա, Վալերիա (շուրջ 23—48)— Կլավդիոսի երրորդ կինը (Կլավ., 17, 3, 26, 2, 27, 1, 29, 3, 36, 37, 2, 39, 1, Ներ., 6, 4, Վիտ., 2, 5):

- Մեստրիոս Յլորոս, Լուկիոս*— կոնսուլական կոլման տեր սենատոր, Վեսպասիանոսի բարեկամը և Պլուտարքոսի հովանավորը (Վեսպ., 22):
- Մետելլոս (Մակեդոնացի), Քվինտոս Յեցիլիոս*— մ. թ. ա. 143 թ. կոնսուլ, 131 թ. ցենզոր, ամուսնությունները խրատուսող ճառի հեղինակ (Օգ., 89, 2):
- Մետելլոս (Նումիդիացի), Քվինտոս Յեցիլիոս*— մ. թ. ա. 109 թ. կոնսուլ, 102 թ. ցենզոր, օպտիմատների առաջնորդներից մեկը (Քեր., 3):
- Մետտիոս Պոմպուլիանոս*— կոնսուլ-սուֆֆեկտ և զանձարանի պրեֆեկտ Վեսպասիանոսի օրոք, աստղագուշակ, աքսորված և մահապատժի ենթարկված Դոմիցիանոսի կողմից (Վեսպ., 14, Դոմ., 10, 3):
- Մետտիոս Ռուիոս, Մարկոս Յունիոս*— Եգիպտոսի կուսակալ Դոմիցիանոսի օրոք (Դոմ., 4, 2):
- Մեկենաս, Գայոս Ցիլիոս*— հեծյալ, Օկտավիանոսի խորհրդականը քաղաքացիական պատերազմներում. հետագայում հեռացավ քաղաքականությունից, բանաստեղծների հայտնի հովանավոր (Օգ., 66, 3, 72, 2, 86, 2, Տիր., 15, 1, Քեր., 21: Վերգ., 13, 20, 27, 37, 44, Հոր., 1, 2, 3, 7, 8):
- Մեցիոս*— Դոմիցիանոսի պալատական (Դոմ., 20):
- Միլոն, Տիտոս Աննիոս*— մ. թ. ա. 57 թ. ժողովրդական տրիբուն, ամբոխավար, օպտիմատների կողմնակից, Կլոդիոսի սպանության կազմակերպիչը, արտաքսվել է 52 թ., սպանվել 48 թ. (Հուլ., 30, 3):
- Միհրդատ Էվպատոր*— Պոնտոսի թագավոր (111—63 մ. թ. ա.), որ երիցս պատերազմել է Հռոմի դեմ (Հուլ., 4, 2, 19, 2, 35, 2, Ներ., 24, 2, Տիր., 37, 3):
- Մնեստերես*— մեջկատակ դերասան, Տիրերիոսի ազատարձակը, Կալիգուլայի սիրելին, որին Կլավդիոսը մահապատժի ենթարկեց (Կալ., 36, 1, 55, 1, 57, 4):
- Մումմիոս, Լուկիոս*— մ. թ. ա. 146 թ. կոնսուլը, Կորնթոսի ավերողը (Գալ., 3, 4):
- Մումմիա Աքաիկա*— Գալբայի մայրը, Կատուլոսի թոռը (Գալ., 3, 4):
- Մունացիոս Պլանկոս, Լուկիոս*— մ. թ. ա. 42 թ. կոնսուլը, 22 թ. ցենզորը, սկզբում հանրապետականների, ապա Անտոնիոսի և վերջապես, Օկտավիանոսի կողմնակից (Օգ., 7, 2, 29, 5, Տիր., 5, Կլավ., 16, 1, Ներ., 4, Քեր., 30):
- Մուցիա*— Գնեսո Պոմպոսի կինը (Հուլ., 50, 1):
-
- Ցուբա I*— Նումիդիայի թագավոր (շուրջ 50—46 մ. թ. ա.), Պոմպոսի դաշնակիցը (Հուլ., 35, 2, 59, 66, 81):
- Ցուբա II*— Նախորդի որդին, Մավրիտանիայի թագավոր (25 մ. թ. ա.— 23 մ. թ.), հայտնի է որպես պատմագիր (Կալ., 26, 1):
- Ցուգուրտա*— Նումիդիայի թագավոր (118—105 մ. թ. ա.), Հռոմի դեմ երկար պատերազմելուց հետո հաղթվեց Մարիուսից (Հուլ., 11):
- Ցուլիա*— Հուլիոս Կեսարի հորաքույրը, Գայոս Մարիուսի կինը (Հուլ., 6, 1):
- Ցուլիա*— Հուլիոս Կեսարի կրտսեր քույրը, Օգոստոսի տատը (Հուլ., 74, 2, Օգ., 4, 1, 8, 1):
- Ցուլիա*— Հուլիոս Կեսարի դուստրը, Պոմպոսի կինը (Հուլ., 1, 1, 21, 84, 1, Օգ., 95):
- Ցուլիա (3—43 թթ.)*— Դրուզոս Կրտսերի դուստրը, Ներոնի՝ Գերմանիկոսի որդու, և ապա Ռուբելլիոս Բլանդոսի կինը (Կլավ., 29, 1):
- Ցուլիա Դրուզիլա*— Կալիգուլայի և Յեզոնիայի դուստրը (Կալ., 25, 4):
- Ցուլիա Լիվիլա (17—42 թթ.)*— Գերմանիկոսի դուստրը, Մարկոս Վինիցիոսի կինը,

- աքսորվել է Կալիֆուլայի կողմից 39 թ. և Մեսսալինայի կողմից 41 թ., մահացել է աքսորում (Կալ., 7, Կլավ., 29, 1):
- Յուլիա Ավագ (39 մ. թ. ա.— 14 մ. թ.)— Օգոստոսի դուստրը, Մարցելլոսի, հետո Ագրիպայի, ապա Տիրերիոսի կինը (Օգ., 19, 2, 63, 1—2, 64, 1, 65, 1, 4, 101, 3, Տիր., 7, 2—3, 11, 4, 50, 1, Կալ., 7, 1, 23, 1):
- Յուլիա Կրտսեր (19 մ. թ. ա.— 28 մ. թ.)— Յուլիա Ավագի և Ագրիպայի դուստրը, Լուկիոս Էմիլիոս Պավլոսի կինը (Օգ., 64, 1, 65, 1, 4, 72, 3, 101, 3):
- Յուլիա Փլարիա— Ջիտոսի դուստրը և Դոմիցիանոսի սիրուհին. մահացավ 90 թ. և աստվածացվեց (Դոմ., 17, 3):
- Յունիուս Արուլենոս Ուլտրիկոս, Լուկիոս— 69 թ. պրետոր, ստոիկյան, Փրասեա Պետոսին ձոնված զովարանական խոսքի հեղինակը (Դոմ., 10, 3):
- Յունիուս Նովատոս— պլեբեյ, որ սպանեցել էր Օգոստոսին (Օգ., 51, 1):
- Յունիա Կելվինա— Օգոստոսի թոռան թոռը, Լուկիոս Սիլանոսի քույրը, ամուսնացած էր Վիտելլիոս կայսեր եղբոր հետ (Վեսպ., 23, 4):
- Յունիա Կլավդիլլա— Մարկոս Սիլանոսի դուստրը, Կալիֆուլայի առաջին կինը (Կալ., 12, 1—2):

- Նարկիս— Կլավդիոսի ազատարձակը և մերձավոր խորհրդականը. նրա մահից հետո սպանվեց Ագրիպպինայի հրամանով (Կլավ., 28, 37, 2, Վիտ., 2, 5, Վեսպ., 4, 1—2, Տիր., 2):
- Նեվիոս, Գնեոս (մահացել է 201 մ. թ. ա.)— առաջին հռոմեացի բանաստեղծներից, էպոպեայի, ողբերգությունների և կատակերգությունների հեղինակ (Քեր., 2, Տեր., 6):
- Նեոպտոլմեոս— աթենացի դերասան (IV դ., մ. թ. ա.) Փիլիպոս Մակեդոնացու ժառանգության մեջ (Կալ., 57, 4):
- Ներվա, Մարկոս Կոկցեոս— հռոմեական կայսր (96—98), Դոմիցիանոսի հաջորդը (Դոմ., 1, 1, 5):
- Ներոն, Տիրերիոս Կլավդիոս— Տիրերիոս կայսեր հայրը, մ. թ. ա. 42 թ. պրետորը (Օգ., 62, 2, Տիր., 4, 1):
- Ներոն, Հուլիոս Կեսար (6—26)— Գերմանիկոսի որդին, սպանվեց Սեյանոսի սադրանքներով (Տիր., 54, 1—2, Կալ., 7, Կլավ., 9, 1):
- Նիկանոր— փիլիսոփա, Արեոսի որդին (Օգ., 89, 1):
- Նիկոմեդես IV— Բուքանիայի թագավոր (94—74 մ. թ. ա.), հռոմեացիների դաշնակիցը Միհրդատիդեմ պայթարում (Հուլ., 2, 49):
- Նիգիդիոս Ֆիգուլոս, Պուբլիոս (շուրջ 98—44 մ. թ. ա.)— սենատոր, պլուրազորական, աստղագուշակության, աստվածաբանության և քերականության գիտակ (Օգ., 94, 5):
- Նիմֆիդիոս Սարինոս, Գայոս— պրետորականների պետը (Տիգելլինոսի հետ միասին) Ներոնի վերջին տարիներին, աջակցում էր Գալբալին, բայց նրա բացակայության մեջ սկսեց պատրաստվել զավթելու իշխանությունը, սակայն հեզաշքումը չհաջողվեց, և պրետորականները սպանեցին նրան (Գալ., 11, 16, 1):
- Նինիոս— շպարզված անձնավորություն (Հոր., 2):
- Նիսոս— մ. թ. ա. I դարի երկրորդ կեսի քերական (Վերգ., 42):
- Նիսա— Նիկոմեդես IV բուքանացու դուստրը (Հուլ., 49, 3):

Նովիոս Նիգերոս, Լուկիոս— մ. թ. ա. 62 թ. քվեստորը, Կեսարի թշնամին (Հուլ., 17, 1—2):

Նոնիոս Ասպրեմատոս, Լուկիոս— 6 թ. կոնսուլը, Օգոստոսի բարեկամը (Օգ., 36, 3):

Նոնիոս Ասպրինատոս Տորթվատոս, Գայոս— նախորդի որդին (Օգ., 43, 2, Կալ., 35, 1):

Նորբանոս Յլակկոս, Գայոս— 15 թ. կոնսուլը (Վիտ., 3, 2):

Նումիատորիոս— «Վերգիլիոսին փնովողներից» մեկը (Վերգ., 45):

Պակոնիոս, Մարկոս— Սիլանոսին մեղադրողներից մեկը 22 թ., ինքն էլ հետագայում մահասպատոհ ենթարկվեց Տիրերիոսի կողմից (Տիր., 61, 6):

Պակուվիոս, Մարկոս (շուրջ 220—132)— հռոմեացի բանաստեղծ, ողբերգությունների հեղինակ (Հուլ., 84, 2):

Պալլանտոս— Կլավդիոսի խորհրդականը, նրա մայր Անտոնիայի ազատարձակը. պահպանեց ազդեցությունը Ագրիպպինայի օրոք, բայց նրա մահից հետո մահասպատոհ ենթարկվեց Ներոնի կողմից (Կլավ., 28, Վիտ., 2, 5):

Պալֆուրիոս Սուրա, Մարկոս— սատրիկյան, հոետոր և բանաստեղծ, Դոմիցիանոսի օրոք կասիտոլիումական մրցումների հաղթող (Դոմ., 13, 1):

Պաներոտոս— կասպալաոու (Ներ., 30, 2):

Պանսա, Գայոս Վիրիոս— Կեսարի կողմնակից, մ. թ. ա. 43 թ. կոնսուլը (Օգ., 10, 2, 11, Տիր., 5, Քեր., 25):

Պապիոս Մուտիլոս, Մարկոս և Պոպպիոս Սեկունդոս, Քվինտոս (Պոպպեա Սարինայի հորեղբայրը)— մ. թ. ա. 9 թ. կոնսուլ-սուֆֆեկտներ, ամուսնության մասին օրենքի հեղինակները (Կլավ., 19, 23, 1, Ներ., 10, 1):

Պարիս— դերասան, Դոմիցիա Լեպիդայի ազատարձակը, Ագրիպպինայի մատնիչներից մեկը, մահասպատոհ ենթարկվեց Ներոնի կողմից (Ներ., 54):

Պարիս— դերասան, Դոմիցիանոսի կնոջ սիրեցյալը, մահասպատոհ ենթարկված կայսեր կողմից (Դոմ., 3, 1, 10, 1):

Պարրասիոս— մ. թ. ա. V դարի վերջի աթենացի նշանավոր նկարիչ (Տիր., 44, 2):

Պարթենիոս— քերական և գիտնական բանաստեղծ, Կոնսելիոս Փալլոսի բարեկամը (Տիր., 70, 2):

Պարթենիոս— Դոմիցիանոսի դեմ դավադիրներից մեկը (Դոմ., 16, 2, 17, 2):

Պասիենոս Կրիսպոս, Գայոս— 44 թ. կոնսուլը, Դոմիցիայի և ապա Ագրիպպինա Կրտսերի ամուսինը, Ներոնի խորթ հայրը, ականավոր հոետոր (Ներ., 6, 3, Պասս):

Պատրոբիոս— Ներոնի ազատարձակը (Փալ., 20, 2):

Պեդիոս, Քվինտոս— Կեսարի զարմիկը, մ. թ. ա. 43 թ. կոնսուլը, որ օրենք հրատարակեց Կեսարի սպանողների դեմ (Հուլ., 83, 2, Ներ., 3, 1, Փալ., 3, 2):

Պերելլիոս Փավստոս— «Վերգիլիոսին փնովողներից» մեկը (Վերգ., 44):

Պետրեոս, Մարկոս— Պոպպեոսի զորավարը. ինքնասպան եղավ 46 թ. մ. թ. ա. (Հուլ., 84, 2, 75, 2):

Պետրոնիանոս, Վիտելլիոս— Վիտելլիոս կայսեր որդին (Վիտ., 6):

Պետրոնիոս Արխատոկրատես— փիլիսոփա և թմբշի, Պերսիոսի բարեկամը (Պերս., 4):

Պետրոնիա— Վիտելլիոսի առաջին կինը (Վիտ., 6):

Պիզոն, Գայոս Կալպուրնիոս— Լիվիա Օրեստիլայի ամուսինը, հետագայում Ներոնի դեմ ուղղված դավադրության սյարսուզուխը (Կալ., 25, 1, Ներ., 36, 1, Լուկ., 3):

- Պիզոն, Գնեսո Կալպուրնիոս— Կեսարի գործակիցը ըստ Կատիլինայի առաջին դավադրության (Հուլ., 9, 3):
- Պիզոն, Գնեսո Կալպուրնիոս— 7 թ. մ. թ. ա. կոնսուլը, Ասորիքի կուսակալը մ. թ. 18 թ. Գերմանիկոսի թշնամին (Տիր., 52, 3, Կալ., 2, 3, 3, Վիտ., 2, 3):
- Պիզոն Ֆրուգի, Լուկիոս Կալպուրնիոս— մ. թ. ա. 15 թ. կոնսուլը, քրմապետ, Հորացիոսի «Պոետիկայի» հասցեատերերից մեկը, Տիբերիոսի օրոք՝ Հոմմի պրեֆեկտ (Տիր., 42, 1, Քեր., 30):
- Պիզոն Ֆրուգի Լիկինիանոս, Լուկիոս Կալպուրնիոս— նախորդի թոռը, որդեգրված Գալբալից և սպանված Օտոնի կողմից (Գալ., 17, Օտ., 5, 1, 6, 3):
- Պիզոն Յեզոնիանոս, Լուկիոս Կալպուրնիոս— Կեսարի աները, 58 թ. մ. թ. ա. կոնսուլը, 50 թ. ցենզորը (Հուլ., 21, 83, 1):
- Պիլադես— Օգոստոսի ժամանակի նշանավոր մեջակատակ դերասան (Օգ., 45, 4):
- Պինարիոս Սկարպոս, Լուկիոս— Կեսարի քրոջ թոռը (Հուլ., 83, 2, Օգ., 27):
- Պիրալիդա— հետերա (Կալ., 36, 1):
- Պլուտոս— էպիրոսի թագավոր (307—272 մ. թ. ա.), որը պատերազմել է Հոմմի դեմ 280—275 թթ. (Տիր., 2, 1):
- Պիթոլայես, Մարկոս Օտացիլիոս (=Վոլտացիլիոս Պիլուտոս) — բանաստեղծ-ազատարձակ (Հուլ., 75, 5):
- Պլավտոս, Տիտոս Մակցիոս (շուրջ 250—184) — հռոմեացի բանաստեղծ-կատակերգու (Տեր., 5):
- Պլավտիոս, Ավլոս— 29 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Կլավդիոսի բրիտանական արշավանքի ժամանակ գլխավոր հրամանատար, Բրիտանիայի կուսակալը 43—47 թթ. (Կլավ., 24, 2, Վեսպ., 4, 1):
- Պլավտիոս, Ավլոս— սենատոր. գուցե նախորդի որդին (Ներ., 35, 4):
- Պլավտիոս Թուպոս— դավադիր Օգոստոսի դեմ (Օգ., 19, 1):
- Պլավտիա Ուրզուլանիլլա— Կլավդիոսի առաջին կինը (Կլավ., 26, 2, 27, 1):
- Պլանկոս, Լուկիոս Մունացիոս— 13 թ. կոնսուլը, մ. թ. ա. 22 թ. ցենզորի որդին (Օգ., 101, 1):
- Պլատոն (427—347) — նշանավոր փիլիսոփա (Կալ., 34, 2):
- Պլինիոս Սեկունդոս (Ավագ), Գայոս (23—79) — պատմագիր և բնախույզ, Սվետոնիոսի աղբյուրներից մեկը (Կալ., 8, 1—3, Պլին.):
- Պլոտինոս Գալլոս— մ. թ. ա. I դարի սկզբի ճարտասան, Մարիուսի կուսակից (Քեր., 26):
- Պլոտինոս Տուկկա— Մեկենասի, Վերգիլիոսի և Հորացիոսի բարեկամը (Վերգ., 37, 38, 40):
- Պլոտինա Գիբրիա— նախորդի ազատարձակուհին (°) (Վերգ., 9):
- Պոլոս— Օգոստոսի ազատարձակը (Օգ., 67, 2):
- Պոլեմոն II— Պոնտոսի (38—64) և Բոսպորի (38—41) թագավոր, որին հետո Ներոնը փոխադրեց Կիլիկիա (Ներ., 18):
- Պոլլիբոս— Օգոստոսի ազատարձակը (Օգ., 101, 1):
- Պոլլիբիոս— Կլավդիոսի ազատարձակը և խորհրդականը, մահապատժի ենթարկված 47 թ. (Կլավ., 28):
- Պոլիկրատես— Սամոսի տիրանը (մ. թ. ա. VI դ. երկրորդ կես), առասպելական պատմաբանների հերոս (Կալ., 21):
- Պոմպեոս— հռոմեացի հեծյալ (Տիր., 57, 2):
- Պոմպեոս (Մեծ), Գնեսո (106—48 մ. թ. ա.) — մ. թ. ա. 70, 55 և 52 թթ. կոնսուլ,

- սկզբում՝ սենատի հակառակորդը և Կեսարի դաշնակիցը ըստ առաջին հռոմեացիական պատերազմում (Հուլ., 19, 2, 20, 5, 21, 24, 1, 26, 1, 27, 1, 28, 2, 28, 2, 30, 2, 34, 2, 35, 1—2, 36, 37, 1, 49, 2, 50, 1, 54, 3, 56, 1, 68, 2, 3, 69, 75, 1, 4, 80, 4, 81, 3, 83, 1, 84, 3, Օգ., 4, 1, 8, 1, 31, 5: Տիր., 15, 1, 47, Կալ., 21, Կլավ., 11, 3, 21, 1, Ներ., 2, 3, 46, 1, Վեսպ., 1, 2, Քեր., 14, 15, 25, 27, Վերգ., 2, Լուկ., 1):
- Պոմպեոս, Գնեոս— Կլավդիոսի դստեր՝ Անտոնիայի, ամուսինը (Կալ., 35, 1, Կլավ., 27, 2, 29, 1—2):
- Պոմպեոս, Սեքստոս (75—35 մ. թ. ա.)— Պոմպեոս Մեծի որդին, 40—36 թթ. տիրում էր Սիցիլիային և ծովային պատերազմ էր մղում եռասյետների դեմ (Օգ., 9, 18, 1—3, 47, 68, 74, Տիր., 4, 3, 6, 3):
- Պոմպեոս, Սեքստոս— մ. թ. 14 թ. կոնսուլ (Օգ., 100, 1):
- Պոմպեոս Լենեսոս— քերական, Պոմպեոս Մեծի ադատարձակը (Քեր., 2, 15):
- Պոմպեոս Մակրոս, Մարկոս— Օգոստոսի օրոք Պալատինումի մատենադարանի ղեկավար մատենավար (Հուլ., 56, 7):
- Պոմպեոս Ռուիոս, Քլիստոս— Սուլլայի փեսան և Կեսարի աները, սպանված 88 թ. մ. թ. ա. (Հուլ., 6, 2):
- Պոմպեա— նախորդի դուստրը, Կեսարի կինը (67—61 թթ.) (Հուլ., 6, 2, 74, 2):
- Պոմպեա— Պոմպեոս Մեծի դուստրը, Փավստոս Սուլլայի կինը (Տիր., 6, 3):
- Պոմպիլիոս Անդրոնիկոս, Մարկոս— քերական, էպիկուրի հետևորդ (Քեր., 8):
- Պոմպոնիոս Մարկոս— մ. թ. ա. 161 թ. պրետոր (Քեր., 25):
- Պոմպոնիոս Մարցելլոս, Մարկոս— Տիբերիոսի ժամանակի քերական (Քեր., 22):
- Պոմպոնիոս, Ֆլակկոս, Լուկիոս— 17 թ. կոնսուլ, Թրակիան խաղաղեցնողը, Տիբերիոսի բարեկամը (Տիր., 42, 1):
- Պոնտիոս Աքվիլա, Լուկիոս— մ. թ. ա. 45 թ. ժողովրդական տրիբուն, Կեսարի դեմ դավադրության մասնակից (Հուլ., 78, 2):
- Պոնտիոս Նիգրինոս, Գայոս— 37 թ. կոնսուլ (Տիր., 73, 1):
- Պոպիլիոս Լենատոս, Մարկոս— մ. թ. ա. 171 թ. կոնսուլ, բանաստեղծ-սիրող (Տեր., 4):
- Պոպպեոս Սարինոս, Գայոս— 9 թ. կոնսուլ, Պոպպեա Սարինայի պապը (Վեսպ., 2, 1):
- Պոպպեա Սարինա— Օտոնի և ապա Ներոնի կինը, սպանված վերջինիս կողմից և հետմահու աստվածացված (Ներ., 35, 1, 3—5, Օտ., 3, 1):
- Պորիոս— գլադիատոր (Կալ., 35, 3):
- Պորցիոս Լիկինոս— մ. թ. ա. II դարի վերջի բանաստեղծ, հռոմեական գրականության շարժման պատմության հեղինակը (Տեր., 1, 5):
- Պոսիդեոս— Կլավդիոսի ազատարձակը (Կլավ., 28):
- Պոստումիա— Սերվիոս Սուլպիցիոսի՝ մ. թ. ա. 51 թ. կոնսուլի, կինը (Հուլ., 50, 1):
- Պրինցեպս— քերական (Քեր., 4):
- Պրոպերցիոս, Սեքստոս (չուրչ 49—13 մ. թ. ա.)— հայտնի եղբերգու բանաստեղծ, մոտ էր Մեկենասի խմբակին (Վերգ., 30):
- Պտղոմեոս XI Ավլետո— Եգիպտոսի թագավոր (80—51 մ. թ. ա.) (Հուլ., 54, 3, Կլավ., 16, 2):
- Պտղոմեոս XII— նրա որդին, Կլեոպատրայի եղբայրը, Եգիպտոսի թագավոր (51—47 մ. թ. ա.) (Հուլ., 35, 1):

Պաղոմեոս II — մալթեթականական վերջին թագավորը (23—40), Տարա 11-ի որդին, ապանվեց Կալիգուլայի կողմից (Կալ., 26, 1, 35, 1, 55, 1):

Ռաբիրիոս, Գալոս — սենատոր, որ ճնշեց 100 թ. մ. թ. ա. Ապուլեոս Սատուրնինոսի ապստամբությունը (Հուլ., 12):

Ռաբիրիոս Պոստումոս, Գալոս — նախորդի հոգեզավակը, Պաղոմեոս Ավլետի պարտատուն, 55 թ. մ. թ. ա. ուղեկցել էր թագավորին Նգիպտոս, քրպեսգի պարտքը հարկերով գանձի (Կլավ., 16, 2):

Ռասկուպորիդես II — արևմտյան Թրակիայի թագավորը (12—19 մ. թ.) (Տիր., 37, 4), Ռեմմիոս Պալեմոն, Քվինտոս (շուրջ 10—75 թթ.) — քերական, Պերսիոսի և Քվինտիլիանոսի ուսուցիչը (Քեր., 23, Պերս., 2):

Ռուբրիա — վեստալուհի (Ներ., 28):

Ռուստիոս Ցեպիոն — սենատոր (Դոմ., 9, 2):

Ռուտիլիոս Ռուխոս, Պուրլիոս — 105 թ. մ. թ. ա. կոնսուլ, հոնտոր, իրավաբան և փիլիսոփա-ստոիկյան, արտաքսված Հոմից 92 թ. (Օգ., 89, 2, Քեր., 6):

Ռուփիլլա — Օգոստոսի սիրուհին (Օգ., 69, 2):

Ռուփինոս — Կեսարի ազատարձակը (Հուլ., 76, 3):

Ռուբրիոս Կրիսպինոս — Ներոնի խորթ որդին, Պոպպեայի որդին առաջին ամուսնությունից (Ներ., 35, 5):

Սալլուստիոս Կրիսպոս, Գալոս (86—34 մ. թ. ա.) — հայտնի պատմագիր (Օգ., 86, 3, Քեր., 10, 15):

Սալլուստիոս Լուկուլլոս — Բրիտանիայի լեգատը Դոմիցիանոսի օրոք (Դոմ., 10, 3):

Սալվիդիենոս Օրփիտոս, Սերվիոս Կոննելիոս — կոնսուլ 51 թ., որին դատեց և դատապարտեց Ներոնը 66 թ. (Ներ., 37, 1):

Սալվիդիենոս Օրփիտոս — ըստ երևույթին, նախորդի որդին, որին մահապատժի ենթարկեց Դոմիցիանոսը 93 թ. (Դոմ., 10, 2):

Սալվիդիենոս Ռուփոս, Քվինտոս — Օգոստոսի զորավարը, նրա պատանեկության ընկերը, որն աչքի ընկավ Պերուզիական պատերազմում. Անտոնիոսի հետ հաբարբուլություններ ունենալու համար դաաապարտվեց և կոթանակեց 39 թ. մ. թ. ա. (Օգ., 66, 1):

Սալվիոս Կոնցեյանոս, Լուկիոս — Սալվիոս Տիցիանոսի որդին, Օտոնի զարմիկը, որին մահապատժի ենթարկեց Պոմիցիանոսը (Դոմ., 10, 9):

Սալվիոս Լիբերալոս Նոնիոս Բասսոս, Գալոս — քաղաքական գործիչ և դատական հեռաք վեսպասիանոսի և Տիտոսի օրոք (Վեսպ. 13):

Սալվիոս Օտոն, Լուկիոս — Օտոն կայսեր հայրը, 33 թ. կոնսուլը (Գալ., 6, 1, Օտ., 1, 2):

Սալվիոս Օտոն, Մարկոս — Օտոն կայսեր պապը, սենատոր (Գալ., 6, 1, Օտ., 1, 2):

Սալվիոս Տիցիանոս, Լուկիոս — Օտոն կայսեր եղբայրը, կոնսուլ 52 և 69 թթ. (Օտ., 1, 3):

Սալվիա Տիտիզեննիա — Օգոստոսի սիրուհին (Օգ., 69, 2):

Սանտրա — մ. թ. ա. I դարի կեսերի հռոմեացի քերական և բանաստեղծ, «Նշանավոր մարդկանց մասին» գրքի հեղինակը (Քեր., 14: Տեր., 4):

Սագուրոս — ննչարանապետ, Դոմիցիանոսին սպանողներից մեկը (Դոմ., 17, 2):

- Մատուրներես, Լուկիոս Ապոստոլոս— մ. թ. ա 103 թ. ժողովրդական արհրուն. 101 ք.
 Հոռոմոմ ապստամբություն բարձրացրեց սենատի դեմ, որը գաժաճորեն ճնշվեց
 (Հուլ., 12):
- Ավետարանի լեռոս— հեղինակի հայրը (Յու., 10, 1):
- Սեվիոս Նիկանոր— հոռոմացի առաջին քերականը (Քեր., 5):
- Սելևկոս II Կալլինիկոս— Ասորիքի թագավոր (246—226 մ. թ. ա.) (Կլավ., 25, 3):
- Սելևկոս— Տիրերիոսի ժամանակների հույն քերական (Տիր., 38):
- Սելևկոս— աստղագուշակ (Օտ., 4, 1, 6, 1):
- Սելենա— Անտոնիոսի և Կլեոպատրայի գուտորը, Յուրա II նամիդիացու կինը (Կլավ., 26, 1):
- Սեյանոս, Լուկիոս էլիոս— պրետորիումի պրեֆեկտը Տիրերիոսի օրոք, ազդեցիկ ժամիշխան, որը հզորություն ծագված ժամանակ ձեռքակալվեց և մահապատժի ենթարկվեց Տիրերիոսի կողմից (Տիր., 48, 2, 55, 61, 1, 62, 1, 65, 1, 2, Կլավ., 12, 1, 30, 2, Կլավ., 6, 1, 27, 1, Վիտ., 2, 3):
- Սեմիրամիդա (Շամիրամ)— Բաբելոնի առասպելական թագուհի (Հուլ., 22, 2):
- Սենեկա (Ավագ), Լուկիոս Աննոս (շուրջ 54 մ. թ. ա.— 39 մ. թ.)— հարտասան և պատմագիր, փիլիսոփայի հայրը (Տիր., 73, 2, Վերգ., 29):
- Սենեկա (Կրտսեր), Լուկիոս Աննոս (4 մ. թ. ա.— 65 մ. թ.)— նշանավոր փիլիսոփաստիկյան, Նեոնի դաստիարակը և խորհրդականը, կործանվեց Պիլոնի դավադրությունից հետո (Կլավ., 53, 2, Ներ., 7, 1, 35, 5, 52, Պերո. 4):
- Սենցիոս, Գնոնո— կոնսուլ մ. թ. ա. 19 թ. (Վերգ., 35):
- Սերվիլիոս Վատիա Իսավրիկոս, Պուբլիոս— Սուլլայի զորավարը, կոնսուլ մ. թ. ա. 79 թ., Կիլիկիան նվաճողը (Հուլ., 3):
- Սերվիլիոս Վատիա Իսավրիկոս, Պուբլիոս— նախորդի որդին, Կեսարի բարեկամը, կոնսուլ 48 և 41 թթ. մ. թ. ա. (Օգ., 62, 1, Տիր., 5, Քեր., 28):
- Սերվիլիոս Ցեպիոն— Յուլիայի Կեսարի դստեր, փեսացուն (Հուլ., 21):
- Սերվիլիա— Կատոն Կրտսերի խորթ քույրը, Հոռոմի ամենանշանավոր արիստոկրատական խմբակներից մեկի գլուխը, Մարկոս Բրուտոսի մայրը (Հուլ., 50, 2):
- Սերվիլիա Նաիդա— Դոմիցիոս Ահենորարոսի 32 թ. կոնսուլի, հարձը (Ներ., 3, 2):
- Սերտորիոս, Քվինտոս-Մարիուսի զորավարը. 80—72 թթ. մ. թ. ա. Իսպանիայում պատերազմում էր Սուլլայի և սենատի զորավարների դեմ (Հուլ., 5):
- Սեսցեննիոս Ցահքոս— քերական (Քեր., 3):
- Սեքստիոս, Քվինտոս— ստոիկյան, փիլիսոփայական գպրոցի գլուխը Օգոստոսի օրոք (Քեր., 18):
- Սեքստիլիա— Վիտելլիոս կայսեր մայրը (Վիտ., 3, 1):
- Սիլանոս, Գայոս Ապպիոս Յունիուս— Մարկոս Սիլանոսի զարմիկը, կոնսուլ 28 թ., Մեսսալինայի խորթ հայրը, մահապատժի ենթարկված 42 թ. (Կլավ., 29, 1, 37, 2):
- Սիլանոս, Գեցիմոս Յունիուս— մ. թ. ա. 62 թ. կոնսուլ (Հուլ., 14, 1):
- Սիլանոս, Լուկիոս Յունիուս— Օգոստոսի թոռնորդին, 48 թ. պրետորը՝ հարկազրկված ինքնասպան լինելու 49 թ. (Կլավ., 24, 3, 27, 2, 29, 1—2):
- Սիլանոս, Մարկոս Յունիուս— 15 թ. կոնսուլը, Յունիա Կլավդիլայի հայրը, Տիրերիոսի վստահելի անձը (Կլավ., 12, 1, 23, 3):
- Սիլոն— Վերգիլոսի եղբայրը (Վերգ., 14):

- Սիլվանոս, Մարկոս Պլավտիոս— մ. թ. ա. 2 թ. կոնսուլը, Պլավտիա Ուրգուլանիլլայի հայրը (Կլավ., 4, 3):
- Սկիպիոն, Քվինտոս Յեցիլիոս Մետելլոս Պիոս— կոնսուլ 52 թ. մ. թ. ա Պոմպեոսի անե-
րը, ինքնասպան եղավ 46 թ. մ. թ. ա. (Հուլ., 35, 2, 37, 1, 59, Տիր., 4, 1):
- Սկիպիոն էմիլիանոս Աֆրիկացի, Պուբլիոս Կոռնելիոս. (185—129 մ. թ. ա.)— կոնսուլ
147 թ., Կարթագենը կործանողը. նրա տունը հունական մշակույթի կենտրոնն
էր Հռոմում II դարում մ թ ա. (Տեր., 1, 3—5):
- Սոսիոս, Գայոս— կոնսուլ 38 թ. մ. թ. ա., Անտոնիոսի կողմնակից (Օգ., 17, 2):
- Սպարտակ— ստրուկների մեծ ապստամբության առաջնորդ Իտալիայում 73—71 թթ. մ.
թ. ա. (Օգ., 3, 1):
- Սպիկուլոս— գլադիատոր, Ներոնի սիրեցյալը, սպանված Գալբայի օրոք (Ներ., 30, 2,
47, 3):
- Սպորոս— ներքինի, Ներոնի, իսկ հետո Նիմփիդիոս Սաբինոսի և Օտոնի մերձավորը
(Ներ., 28, 1—2, 29, 46, 2, 48, 1, 49, 3):
- Սպուրիննա— էտրուսկական գուշակ (Հուլ., 81, 2, 4):
- Ստաբերիոս էրոս— քերական (Քեր., 13):
- Ստատիլիոս Կապելլա— հռոմեացի հեծյալ (Վեսպ., 3):
- Ստատիլիոս Կորվինոս, Տավրոս— կոնսուլ 45 թ., Ստատիլիոս Տավրոսի թոռնորդին, 46 թ.
Կլավդիոսի դեմ դավադրության մասնակից (Կլավ., 18, 2):
- Ստատիլիոս Տավրոս, Տիտոս— Օկտավիանոսի զորավարը, կոնսուլ 37 և 26 թթ. մ. թ. ա.,
Հռոմի պրեֆեկտը (Օգ., 29, 5, Կալ., 18, 1, Ներ., 35, 1):
- Ստատիլիա Մեսսալինա— Ներոնի երրորդ կինը, Ստատիլիոս Տավրոսի թոռնորդին (Ներ.,
35, 1, Օտ., 10, 2):
- Ստեփանոս— Դոմիցիանոսին սպանողներից մեկը (Դոմ., 17, 1—2):
- Ստեփանիոնես— մնչկատակ դերասան (Օգ., 45, 4):
- Ստրաբոն, Գայոս, Հուլիոս Կեսար— հռետոր և ողբերգու բանաստեղծ, էղիլ 90 թ մ. թ.
ա., սպանված մարիուսականներից 87 թ. (Հուլ., 55, 2):
- Սուլլա— աստղագուշակ (Կալ., 57, 2):
- Սուլլա, Լուկիոս Կոռնելիոս (138—78 մ. թ. ա.)— օպտիմատների առաջնորդը, Մարիու-
սի մրցակիցը, ղեկատարը (82—79 թթ.) (Հուլ., 1, 1—2, 3, 5, 11, 45, 3, 74,
1, 75, 4, 77, Տիր., 59, 2: Քեր., 11—13):
- Սուլլա, Պուբլիոս Կոռնելիոս— ղեկատարի ազգականը, Կատիլինայի առաջին դավադրու-
թյան մասնակից, հետագայում կեսարական (Հուլ., 9, 1):
- Սուլլա, Փավստոս Կոռնելիոս— ղեկատարի որդին, Պոմպեոսի փեսան և կուսակիցը.
սպանվել է 46 թ. մ. թ. ա. (Հուլ., 27, 1, 75, 3, Քեր., 12):
- Սուլլա, Փավստոս Կոռնելիոս— 52 թ. կոնսուլը, Մեսսալինայի եղբայրը, մահապատժի է
ենթարկվել Ներոնի կողմից 62 թ. (Կլավ., 27, 2):
- Սուլպիցիոս Ապուլինարիոս, Գայոս— կարթագենացի քերական, Սվետոնիոսի կրտսեր
ժամանակակից (Վերգ., 38):
- Սուլպիցիոս Գալլոս, Գայոս— կոնսուլ 166 թ. մ. թ. ա , զորավար, դիվանագետ և գիտ-
նական (Տեր., 4):
- Սուլպիցիոս Կամերինոս, Քվինտոս— մ. թ. 9 թ. կոնսուլ (Վեսպ., 2, 1):
- Սուլպիցիոս Ռուֆոս, Սերվիոս— կոնսուլ 51 թ. մ. թ. ա., Կեսարի կողմնակից (Հուլ.
29, 1, 50, 1):
- Սուլպիցիոս Փլարոս— Կլավդիոս կայսեր զաստիարակը (Կլավ., 4, 5, 41, 1):

- Վալերիոս Կատոն— բանաստեղծ և քերական, նեոտերիկոսների առաջնորդներից մեկը (Քեր., 2, 4, 10, 11):
- Վալերիոս Պրոբոս, Մարկոս— Ներոնի ժամանակների քերական (Քեր., 24):
- Վատինիոս, Պուրլիոս— մ. թ. ա. 39 թ. ժողովրդական տրիբունը, Կեսարի և Կլոդիոսի դաշնակիցը, հետագայում Կեսարի լեզատը և մ. թ. ա. 47 թ. կոնսուլը (Հուլ., 28, 3):
- Վարոս, Պուրլիոս Քվինտիլիոս— Օգոստոսի զորավարը և նրա քրոջ թոռան ամուսինը, մ. թ. ա. 18 թ. կոնսուլը, մ. թ. 9 թ. չախչախվեց Տևտոբուրգյան անտառում (Օգ. 23, 1—2, 49, 1, Տիր., 17, 1—2, 18, 1, Կալ. 3, 2, 31):
- Վարգունտոս, Քվինտոս— հռոմեական առաջին քերականներից մեկը (Քեր., 2):
- Վարիոս, Լուկիոս— բանաստեղծ, վիպերգակ և ողբերգու, Մեկենասի խմբակից Վերգիլիոսի և Հորացիոսի բարեկամը (Վերգ., 10, 37—42):
- Վարրոն, Մարկոս Տերենտիոս (116—28 մ. թ. ա.)— նշանավոր գիտնական-հանրային-տակ, Կիկերոնի բարեկամը (Հուլ., 34, 2, 64, 2, Քեր., 28, Տեր., 2):
- Վարրոն Մուրենա, Ավլոս Տերենտիոս— սենատոր, սալյուսների հազմողը 25 թ., Մեկենասի աներձազը, Օգոստոսի դեմ դավադրության պարագլուխը (Սգ., 19, 1, 56, 4, 66, 3, Տիր., 8, Քեր., 9):
- Վարրոնիլա— վեստալուհի (Դոմ., 8, 4):
- Վերանիոս Տլակկոս— ճարտասան հնամուլ և կրոնական պոզ (Օգ., 36, 3):
- Վերգիլիոս Տլավոս— ճարտասան, Պերսիոսի դաստիարակը, մասնակցել էր Պիլոսի դավադրությանը (Պերս., 2):
- Վերրիոս Տլակկոս, Մարկոս— քերական, Օգոստոսի թոռների դաստիարակը, լատինական բառարանի կազմողը, որը մասնակիորեն պահպանվել է (Քեր., 17—19):
- Վեսպասիանոս, Փլարիոս— Փլարիոս Կլեմենտոսի որդին (Դոմ., 15, 1):
- Վեսպասիոս Պուլլիոն— Վեսպասիա Պուլլաի հայրը (Վեսպ., 1, 3):
- Վեսպասիա Պուլլա— Վեսպասիանոս կայսեր մայրը (Վեսպ., 1, 3, 5, 2):
- Վեստիոս, Լուկիոս— հռոմեացի հեծյալ, Կատիլինայի համագործակիցը, ապա Կեսարի գործակալը (Հուլ., 17, 1—2, հմմտ. 20, 5):
- Վեստիոս Տիլոկոմոս— Լուկիլիոսի բարեկամը, քերական (Քեր., 2):
- Վիբիոս Կրիսպոս, Քվինտոս (շուրջ 12—92)— հայտնի հռետոր և սրախոս, եռակի կոնսուլ (Դոմ., 3, 1):
- Վիդիոս— Կիկերոնի կլիենտը (Քեր., 14):
- Վինգեբո, Գալոս Հուլիոս— Ներոնի օրոք Գալլիայի պրոպրետորը, 68 թ. ապստամբության առաջնորդը. չախչախվեց և ինքնասպան եղավ (Ներ., 40, 1, 41, 1—2, 45, 2, 46, 3, Գալ., 9, 2, 11, 16, 2):
- Վինիոս, Տիտոս— 69 թ. կոնսուլը, Գալբաի լեզատը, սպանվեց նրա հետ միասին (Գալ., 14, 2, Վիտ., 7, 1):
- Վինիոս Փիլիպոմենոս, Տիտոս— ազատարձակ (Օգ., 27, 2):
- Վինիացիանոս, Աննիոս— զորավար Կորբուլոնի փեսան, Ներոնի դեմ դավադրության պարագլուխը (Ներ., 36, 1):
- Վինիցիոս, Լուկիոս— ազնվատոհմիկ պատանի, ըստ երևույթին, 5 թ. կոնսուլը, հայտնի հռետոր (Օգ., 64, 2):
- Վինիցիոս, Մարկոս— մ. թ. ա. 19 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Օգոստոսի զորավարը, պատերազմել էր Ալպերում, Պաննոնիայում և Գերմանիայում (Օգ., 71, 2):

- Վերստանիոս, Մարկոս (=Ագրիպպա)— «Վերդիլիոսին փնտլողներին» մեկը (Վերդ. 44):
- Վերիատոս— լուգիտանացի հովիվ, Ղոմի դեմ իսրայնական ցեղերի ապստամբութեան առաջնորդը 147—139 թթ. մ. թ. ա. (Գալ., 3, 2):
- Վիտելլիոս, Ավլոս— Վիտելլիոս կայսեր հորեղբայրը, 32 թ. կոնսուլը (Վիտ., 2, 2):
- Վիտելլիոս, Լուկիոս— Վիտելլիոս կայսեր հայրը, խոշոր քաղաքագետ և դիվանագետ, 34, 43 և 47 թթ. կոնսուլը (Վիտ., 2, 2, 4, 8, 2, Պերս., 1):
- Վիտելլիոս, Պուրլիոս— Վիտելլիոս կայսեր հորեղբայրը, 14 թ. պրետորը (Վիտ., 2, 2—3):
- Վիտելլիոս, Պուրլիոս— Վիտելլիոս կայսեր պապը (Վիտ., 2, 2):
- Վիտելլիոս, Քվինտոս— Վիտելլիոս կայսեր հորեղբայրը, սենատոր (Վիտ., 1, 2):
- Վոլկացիոս Սեդիգիտոս— մ. թ. ա. I դարի քերական և բանաստեղծ, դիդակտիկական «Պոետների մասին» պոեմի հեղինակը (Տեր., 2, 4, 5):
- Վոլոգեզ (Վաղարշ) I— պարթևական թագավոր (51—77) (Ներ., 57, 2, Վեոպ., 6, 4, Դոմ., 2, 2):
- Վոլտացիլիոս Պիլուտոս, Լուկիոս— քերական և ճարտասան, պոմպեոսական (Քեր., 27):
- Վոնոն I— պարթևական թագավոր (8—11), ապա հուլիական թագավոր (11—16), որը վտարվեց հպատակներից, փախավ Ասորիք և սպանվեց 19 թ. (Տիր., 49):
- Տալարիոս— Օգոստոսի կամ Գերմանիկոսի ազատարձակը (Կալ., 8, 4):
- Տալես— Օգոստոսի պրապիրը (Օգ., 67):
- Տանուզիոս Հեմինոս— Կեսարի ժամանակների պատմագիր (Հուլ., 9, 2):
- Տարքվինիոս Հին— Ղոմի առասպելական հինգերորդ թագավորը (Օգ., 2, 1):
- Տացիոս, Տիտոս— սարինական առասպելական թագավոր, Ղոմուլոսի համակառավարիչը (Տիր., 1, 1):
- Տեդիոս Ափրոս— «նշանակյալ կոնսուլ» II եռապետության տարիներին (Օգ., 27, 3):
- Տելևիոս— ստրուկ, դավադիր ընդդեմ Օգոստոսի (Օգ., 19, 1—2):
- Տերենտիլա (=Տերենտիա, Մեկենասի կինը)— Օգոստոսի սիրուհին (Օգ. 69, 2):
- Տերենտիոս Լուկանոս— սենատոր, բանաստեղծ Տերենտիոսի պատրոնը (Տեր., 1):
- Տերենտիա— Մակենասի կինը և Վարրոն Մուրենայի թույրը (Օգ., 66, 3):
- Տերմոս, Մարկոս Մինուցիոս— պրետոր 81 թ. մ. թ. ա., Ասիայի կուսակալը (Հուլ., 2):
- Տերպնոս— կիֆարահար, Ներոնի դաստիարակը երաժշտական արվեստում (Ներ., 20, 1, Վեսպ., 19, 1):
- Տերտուլլա— Կրասոսի կինը (Հուլ., 50, 1):
- Տերտուլլա— Օգոստոսի սիրուհին (Օգ., 69, 2):
- Տետրինիոս— ավազակ (Կալ., 30, 2):
- Տիրերիոս Գեմելլոս (19—37 մ. թ.)— Տիրերիոս կայսեր թոռը (Տիր., 54, 1, 63, 8, 76, Կալ., 15, 2, 23, 3):
- Տիրերիոս Հուլիոս Ալեքսանդր— փրիստոփա Փիլոն Երրայնցու զարմիկը, Եգիպտոսի պրեֆեկտը, Վեսպասիանոսի առաջին կողմնակիցներից մեկը (Վեսպ., 6, 3):
- Տիգելինոս, Գայոս Սոփոնիոս— Ներոնի սիրեցյալը, պրետորականների պետը 62—68 թթ., կործանվեց Օտոնի օրոք (Գալ., 15, 2):
- Տիգրան II— հայոց թագավորը (20—6 մ. թ. ա.) (Տիր., 9, 1):
- Տիլլիոս Յիմբրոն, Լուկիոս— Կեսարի դեմ դավադիրներից մեկը, ապա նավատորմի պետ Բրուտոսի և Կասսիոսի մոտ (Հուլ., 82, 1):

Տրդատ I — հայոց թագավոր, Վոլոգեզ (Վաղարշ) Պարթևի եղբայրը (Ներ., 13, 1, 30, 2):
 Տիտինիոս, Մարկոս — Կիկերոնի թղթակիցը (Քեր., 26):
 Տիտուրիոս Սարինոս, Քվինտոս — Կեսարի լեզատը Գալլիայում, շխշխալած և ոպանված 54 թ. մ. թ. ա. (Հուլ., 25, 2, 67, 2):
 Տիցիզա — բանաստեղծ-եղերերգու, Օվիդիոսի ժամանակակից (Քեր., 4, 11):
 Տորանիոս, Գայոս — էդիլ 64 թ. մ. թ. ա. (Օգ., 27, 1):
 Տորքվատոս, Լուկիոս Մանլիոս — կոնսուլ 65 թ. մ. թ. ա. (Հոր., 8):
 Տրեբացիոս Տեստա, Գայոս — հռոմեացի հեծյալ, ականավոր իրավաբան, Կիկերոնի, Կեսարի և Օգոստոսի բարեկամը (Հուլ., 78, 1):
 Տուբերոն, Քվինտոս էմիլիոս — իրավաբան և պատմագիր, պոմպեոսական, որը հաշտվեց Կեսարի հետ (Հուլ., 83, 1):
 Տուլլիոս, Սերվիոս — Հռոմի առասպելական վեցերորդ թագավորը (Օգ., 2, 1):
 Տուսկոս, Ցեցինա — Ներոնի ստանաուրի որդին, Ծղկատոսի պրոկուրատորը (Ներ., 36, 5):

Ցեզիտիոս Փլարոս — մ. թ. ա. 44 թ. ժողովրդական տրիբուն (Հուլ., 79, 1, 80, 3):
 Ցեզիոս Բասսոս — Ներոնի ժամանակի քնարերգու բանաստեղծ (Պերս., 3):
 Ցեզոնիոս Պրիսկոս, Տիտոս — «Հաճույքների կարգադրիչ» Տիրերիոսի օրոք (Տիր., 42, 2):
 Ցեզոնիա Միլոնիա — Կալիգուլայի կինը (Կալ., 25, 3, 33, 38, 3, 50, 2, 59):
 Ցելիոս Ռուիոս, Մարկոս — մ. թ. ա. 52 թ. ժողովրդական տրիբուն, հայտնի հոնտոր, կեսարական, Կիկերոնի թղթակիցը (Քեր., 26):
 Ցենիզա — Անտոնիա Կրտսերի ազատարձակուհին, Վեսպասիանոսի հարձը (Վեսպ., 3, 21, Դոմ., 12, 3):

Ցերրինիոս Գալլոս — սենատոր (Օգ., 53, 3):
 Ցեստիոս Գալլոս — սենատոր (Տիր., 42, 2):
 Ցեցիլիոս Մետելլոս Նեպոտ, Քվինտոս — մ. թ. ա. 62 թ. ժողովրդական տրիբուն, պոմպեոսական (Հուլ., 16, 1, 55, 3):
 Ցեցիլիոս Ստացիոս (շուրջ 219—166 մ. թ. ա.) — նշանավոր կատակերգու, Տերենտիոսի նախորդը (Տեր., 2, 5):

Ցեցիլիոս էպիրոտ, Քվինտոս — Օգոստոսի ժամանակի քերական (Քեր., 16):
 Ցեցինա, Ավլոս — Կիկերոնի բարեկամը և թղթակիցը, պոմպեոսական, Կեսարի դեմ ուղղված պամֆլետի հեղինակը (Հուլ., 75, 5):
 Ցեցինա Ալիենոս, Ավլոս — 69 թ. կոնսուլ, Վիտելլիոսի զորապետը, Օտոնի հաղթողը, այնուհետև հարեց Վեսպասիանոսին և մահապատժի ենթարկվեց նրա դեմ դավադրության մեջ մեզադրանքով (Տիր., 6, 2):

Ցիվիկա Ցերեալոս, Գայոս Վևտուլենոս — 76 թ. կոնսուլ-սուֆֆեկտ, Ասիայի կուսակալը, մահապատժի ենթարկվեց Դոմիցիանոսի կողմից (Դոմ., 10, 2):
 Ցիննա, Գայոս Հելվիոս — բանաստեղծ. Կատուլլոսի բարեկամը, մ. թ. ա. 44 թ. ժողովրդական տրիբուն, կեսարական (Հուլ., 52, 3, 85, Քեր., 11):
 Ցիննա, Լուկիոս Կոռնելիոս — մարիոսականների առաջնորդ, քառակի կոնսուլ (87—84 թթ. մ. թ. ա.), կործանվեց 84 թ. (Հուլ., 1, 1):

Ցիննա, Լուկիոս Կոռնելիոս — նախորդի որդին, երիտասարդ ժամանակ մարտնչում էր Լեպիդոսի և Աերտորիոսի մոտ, մ. թ. ա. 44 թ. պրետոր, Կեսարի դեմ գավադրության մասնակից (Հուլ., 5, 85):
 Ցինցինատոս, Կվինկցիոս — սենատոր (Կալ., 85, 1):

- Փանակ— Պոնտոսի թագավոր (63—46 մ. թ. ա.), Միհրդատի որդին և ժառանգը, Պոմպեոսի դաշնակիցը (Հուլ., 35, 2):
- Փիլիմոնոս— Կեսարի քարտուղարը (Հուլ., 74, 1):
- Փիլիսուպ 1— Մակեդոնիայի թագավոր (359—336 մ. թ. ա.) Ալեքսանդր Մեծի հայրը (Կալ., 57, 2):
- Փլարիոս Կլեմենտոս— Դոմիցիանոսի հորեղբորորդին. կոնսուլ 95 թ. (Դոմ., 15, 1):
- Փլարիոս Լիրերալոս— Վեսպասիանոսի աները (Վեսպ., 3):
- Փլարիոս Պետրոնոս, Տիտոս— Վեսպասիանոսի պապը (Վեսպ., 1, 2, 4):
- Փլարիոս Սարինոս— Վեսպասիանոսի հայրը (Վեսպ., 1, 2, 5, 2):
- Փլարիոս Սարինոս— Վեսպասիանոսի եղբայրը, Հոմերի պրեֆեկտը 56—69 թթ. (Վիտ., 15, 2, 3, Վեսպ., 1, 3, Դոմ., 1, 2):
- Փլարիոս Սարինոս, Տիտոս— նրա որդին, 82 թ. կոնսուլը (Դոմ., 10, 4):
- Փլարիա Դոմիցիլլա— Վեսպասիանոսի կինը (Վեսպ., 3):
- Փրասեա Պետոս, Պուբլիոս Կլոդիոս— սենատոր, կոնսուլ-սուֆֆեկտ 56 թ., ստորկլյան, ներքնի օրոք օպոզիցիայի հոգևոր առաջնորդը, դատապարտված ինքնասպանության 65 թ. (Ներ., 37, 1, Դոմ., 10, 3, Պերս., 4):

- Քառեկլես— բժիշկ և դեղագործ (Տիբ., 72, 3):
- Քրեստոս— հրեական խոռվարար (Կլավ., 25, 4):
- Քսենոն— հույն՝ Տիբերիոսի շքախմբից (Տիբ., 56):
- Քսենոփոն (շուրջ 430—354 մ. թ. ա.)— աթենքյան նշանավոր պատմագիր (Հուլ., 87):
- Քսենքսես— պարսկական թագավոր (486—465 մ. թ. ա.), որը 480 թ. մեծ արշավանք կազմակերպեց Հունաստան (Կալ., 19, 3):
- Քվիրինիոս, Պուբլիոս Սուլպիցիոս— կոնսուլ 12 թ. մ. թ. ա., էմիլիա Լեպիդայի ամուսինը, որի հետ դատվեց մ. թ. ա. 20 թ. (Տիբ., 49, 1):
- Քրեստոս— հրեական խոռվարար (Կլավ., 25, 4):
- Քրիստիպպես (շուրջ 280—206)— ստորկլյան փիլիսոփայության դասականներից, 705 զրքի հեղինակ (Պերս., 6):

- Շվիդիոս Նագրն, Պուբլիոս (43 մ. թ. ա.— 17 մ. թ.)— հռոմեացի նշանավոր բանաստեղծ (Քեր., 20):
- Օկտավիոսներ, Գնեսոս և Գայոս— Օկտավիոս Ռուփոսի որդիները (Օգ., 2, 2):
- Օկտավիոս— շարքաված անձնավորություն (Հուլ., 49, 2):
- Օկտավիոս— Օգոստոսի նախնին (Օգ., 1):
- Օկտավիոս Գայոս— Օգոստոսի հայրը, մ. թ. ա. 61 թ. պրետոր (Օգ., 3, 1—2, 7, 1, 27, 1, 94, 4, 95, 5, 100, 1):
- Օկտավիոս Ավիտոս, Քվինտոս— Վերյիլիոսի փնովոդներին մեկը (Վերգ. 45):
- Օկտավիոս Լամպադիոն, Գայոս— հռոմեացի առաջին քերականներից (շուրջ 130 մ. թ. ա.) (Քեր., 2):
- Օկտավիոս Ռուփոս, Գայոս— քվետոր 230 թ. մ. թ. ա. (Օգ., 2, 1):
- Օկտավիոս Տնկոս— քերական (Քեր., 3):
- Օկտավիա Ավագ— Օգոստոսի ավագ (խորթ), քույրը (Օգ., 4, 1):

- Օկտավիա Կրտսեր (61—11 մ. թ. ա.)— Օգոստոսի քույրը, Մարկոս Կլավդիոս Մարցելուսի և ապա, 40—32 թթ., Մարկոս Անտոնիոսի կինը. Մարցելուսի՝ Օգոստոսի ժառանգի, մայրը (Հուլ., 27, 1, Օգ., 4, 1, 29, 4, 61, 2, 63, 1, Տիր., 6, 4, Քեր., 21, Վերդ., 32):
- Օկտավիա Կլավդիա (42—62)— Կլավդիոսի դուստրը, Ներոնի կինը (Կլավ., 27, 1—2, Ներ., 7, 2, 35, 1, 3, 46, 1, 57, 1):
- Օկուլատներ— քույր-վեատալուհիներ (Դոմ., 8, 4):
- Օնիոնոս— Հորացիոսի ստրուկը (Հուր., 6):
- Օպպիոս, Գայոս— հոռմեացի հեծյալ, Կեսարի կուսակիցը, բարեկամը և կենսագիրը, հետագայում հարեց Օկտավիանոսին (Հուլ., 52, 2, 53, 56, 1, 72):
- Օպպիոս Սաբինոս, Գայոս— 84 թ. կոնսուլ, Մյոզիայի կուսակալ, ընկավ դաքիսցիների դեմ ճակատամարտում (Դոմ., 6, 1):
- Օպպիոս Քարետ— քերական (Քեր., 3):
- Օրբիլիոս Պուպիլոս, Լուկիոս— քերական, Հորացիոսի ուսուցիչը (Քեր., 4, 8, 9, 19):
- Օրբիլիոս Կրտսեր— նրա որդին (Քեր., 9):
-
- Չարիոս Աֆրիկանոս, Մարկոս— կոնսուլ 10 թ. մ. թ. ա (Կլավ., 2, 1):
- Չարիոս Լաբոն, Քվինտոս— կոնսուլ 183 թ. մ. թ. ա, հայտնի իրավաբան և հունական յուսավորության հովանավոր (Տեր., 4):
- Չարիոս Պերսիկոս— կոնսուլ 34 թ. (Պերս., 1):
- Չավն— Լացիումի առասպելական թագավոր (Վիտ., 1, 2):
- Չավոնիոս Մարկոս— սրետոր 49 թ. մ. թ. ա., Կատոնի երկրպագուն, հանրապետական մահապատժի է ենթարկվել 42 թ. (Օգ., 13, 2):
- Չավորոս— մնչկատակ դերասան (Վեսպ., 19, 2):
- Չաննիոս Ստրաբոն, Գայոս— կոնսուլ 161 թ. մ. թ. ա. (Քեր., 25):
- Չաննիոս Ցելսոն— Օգոստոսի դեմ դավադրության մասնակից (Օգ., 19, 1, Տիր., 8):
- Չաոն— Ներոնի ազատարձակը, դրամական գործերով խորհրդականը (Ներ., 48, 1, 3, 49, 2):
- Չերա— Ցուլիա Ավագի ազատարձակուհին (Օգ., 65, 2):
- Չելիքո— Անտոնիա Կրտսերի ազատարձակը, Պալլանտոսի եղբայրը (Կլավ., 28):
- Չենեստելլա— Օգոստոսի և Տիրբրիոսի ժամանակների պատմագիր-հնէաբան, (Տեր., 1):
- Չիլլիզա— Դոմիցիանոսի ստնտուն (Դոմ., 17, 3):
- Չլակկոս— Վերգիլիոսի եղբայրը (Վերգ., 14):
- Չլակկոս— Պերսիոսի հայրը (Պերս., 2):
- Չոնտոս Կապիտոն, Գայոս— 12 թ. կոնսուլ (Կալ., 8, 1):
- Չոնտոս Կապիտոն— նախորդի որդին, 67 թ. կոնսուլ, Ստորին Գերմանիայի կուսակալ, որը խռովություն մտահղացավ Ներոնի մահից հետո և մահապատժի ենթարկվեց Գալլայի կողմից (Գալ., 11):
- Չուզիոս— Պերսիոսի խորթ հայրը (Պերս., 2):
- Չուլվիոս— Նորիլիորոս, Մարկոս— կոնսուլ մ. թ. ա. 159 թ. (Տեր., 5):
- Չուլվիա— տրիբուն Կլոդիոսի, ապա Կուրիոն Կրտսերի, հետո Մարկոս Անտոնիոսի կինը, Պերուզիական պատերազմի մասնակից, մահացել է 40 թ. մ. թ. ա. (Օգ., 17, 5, 62, 1, Քեր., 29):

Չուլվիա Սիզեննիա — Պերսիոսի մայրը (*Պերս.*, 2)։

Չուրիոս Լեպտինոս — սենատոր (*Հուլ.*, 39, 1)։

Չուրիոս Տիլոս, Լուկիոս — կոնսուլ 136 թ. մ. թ. ա., Սկիպիոնի բարեկամը (*Տեր.*, 1, 5)։

Քեոզենես — սաստիադուշակ (*Օգ.*, 94, 12)։

Քեոզորոս Կալարացի — ակաճավոր ճարտասան, Տիրերիոսի դաստիարակը (*Տիր.*, 57, 1)։

Քրասիլլես — փիլիսոփա-պլատոնական և սաստիադուշակ, Տիրերիոսի մերձավորը, մահացավ 36 թ. (*Օգ.*, 98, 4, *Տիր.*, 14, 4, 62, 3, *Կալ.*, 19, 1)։



Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԿԵՍԱՐՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ

Քառասներորդի Մ. Լ. Գասպարովի

Գի. Բ առա. Ի Ե

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀՈՒԼԻՌՈՍԸ.— Երիտասարդութիւնը (1): Զինվորական ծառայութիւնը (2—4): Քաղաքական գործունէութեան սկիզբը՝ քվէատորութիւն, էդիլութիւն, քրմապետութիւն (5—13): Պրնտորութիւն, Կապիլինայի դավադրութիւնը. իսպանական կուսակալութիւնը (14—19): Կոնսուլութիւն (19—22): Կուսակալութիւնը Գալլիայում (23—25): Քաղաքացիական պատերազմի նախապատրաստութիւնը (26—28): Խզումը և ելույթը (28—33): Քաղաքացիական պատերազմը (34—36): Տրիումֆները, պարգևները, տոնակատարութիւնները (37—39): Պետական վերափոխումները և մտադրութիւնները (40—44): Արտաքինը (45): Կենսաձևը (45—48): Բնավարութիւնը (49—54): Պերճախոսութիւնը և գիտական զբաղմունքները (55—56): Ուղեւորական զբաղմունքները (57—64): Հաբաքերութիւնները զորքերի հետ (65—70): Հարաբերութիւնները բարեկամների և թշնամիների հետ՝ գթասիրութիւնը (71—75): Իշխանատենչութիւնը և ատելութիւնը (76—79): Դավադրութիւն և սպանութիւնը (80—82): Կտակը (83): Թաղումը (84—85): Վերաբերմունքը դեպի նրա մահը (86—87): Եզրակացութիւն (88—89) .

Գի. Բ երկրորդ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՕԳՈՍՏՈՍԸ.— Տոհմը և նախահայրերը (1—4): Մանկութիւնը և պատանեկութիւնը (5—8): Քաղաքացիական պատերազմները (6—10): Մուտինյան (10—12), Փիլիպիան (13), Պերուզիական (14—15), Սիցիլիական (16), Ակտիումի (17—18). հետագա դավադրութիւնները (19): Արտաքին պատերազմները (20—23): Ռազմական զբաղմունքները (24—25): Պետական պաշտոնները (26—28): Կատույցները, կրօնական նորամտութիւնները (28—31): Դատարան և օրենսդրութիւն (32—34): Սոցիալական քաղաքականութիւնը՝ սենատ, հեթյալներ, ժողովուրդ (35—42): Հանդիսախաղերը (43—45): Իտալիան և կայսրութիւնը (46—50): Տիրակալի արժանիքները (51—56): Բարի համբավը (57—60): Ընտանիքը (61—65): Բարեկամները և կիսեմանները (66—67): Բնավորութիւնը (68—71): Կենսաձևը (72—78): Արտաքինը (79): Առողջութիւնը (80—83): Գրական զբաղմունքները (84—89): Կրօնասիրութիւնը և սնապաշտութիւնը (90—93): Նախագուշակումները

Գիրք Երրորդ

ՏԻՐԵՐԻՈՍ,— Կլավդիոսների տոհմը և Լիվիոսների տոհմը (1—4): Ծնունդը և մանկությունը (5—6): Երիտասարդությունը և պետական գործունեության սկիզբը (7—9): Առանձնացումը Հռոդոսում (10—13): Հզորության նախանշանները (14): Օգոստոսի կողմից որդեգրումը, պատերազմները, տրիումֆը (15—20): Օգոստոսի մահը Տիրերիոսը՝ ժառանգ (21—25): Կառավարման հեղ սկիզբը (26—32): Պետական միջոցառումները (33—37): Կապրիում առանձնանալը (38—41): Տիրերիոսի արատները՝ անառակությունը (42—45), ազահամոլությունը (46—49), ատելությունը ազգականների (50—54) և մերձավորների (55—56) հանդեպ: Դաժանությունը և սառնարյունությունը (57—62): Վախը և ընդհանուր ատելությունը (63—67): Արտաքինը (68): Մնապաշտությունները (69): Գրական զբաղմունքները (70—71): Վերջին ուղևորությունը և մահը (72—74): Թաղումը (75): Կտակը (76)

Գիրք չորրորդ

ԳԱՅՈՍ ԿԱԼՒԳՈՒԼԱ,— Գերմանիկոսը՝ Կալիգուլայի հայրը (1—7): Ծնունդը (8): Մանկությունը և պատանեկությունը (9—12): Իշխանության գլուխ գալը և առաջին գործողությունները (13—16): Պաշտոնները (17): Բաշխումները, հանդիսախաղերը, կառույցները (18—21): Աստվածացումը (22): Վերաբերմունքը հարազատների (23—25), բարեկամների և ժողովրդի նկատմամբ (26): Դաժանությունը (27—33): Ցուփությունը և ճոխությունը (36—37): Ազահամոլությունը և դրամաշորթությունը (38—42): Գերմանական արշավանքը (43—47): Վերադարձը և նոր մտահղացումները (48—49): Արտաքինը, առողջությունը, կենսաձևը (50—52): Գիտական զբաղմունքները (53): Մարգական հրապուրանքները (54—55): Դավադրությունը (56—57): Կործանումը և թաղումը (58—59): Եզրակացությունը (60)

Գիրք ճինգերորդ

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԼԱՎԴԻՈՍ,— Դրուզոսը՝ Կլավդիոսի հայրը (1): Ծնունդը և մանկությունը (2—6): Կյանքը Կալիգուլայի օրոք, պետական գործունեության սկիզբը (7—9): Իշխանության գլուխ գալը (10): Վարքը իշխանության ղեկի մոտ, բարի համբավը (11—13): Պաշտոնները, դատարանը, մարդահամարը (14—16): Ռազմական ձեռնարկումները՝ բրիտանական արշավանքը (17): Հռոմի բարեկարգումը (18—20): Բաշխումները և հանդիսախաղերը (21): Կրոնական, դատական, սոցիալական վերափոխումները (22—25): Կանայք, ազատարձակները. նրանց իշխանությունը (26—29): Արտաքինը, առողջությունը (30—31): Կենսաձևը (32—33): Բնավորությունը (34—40): Գիտական զբաղմունքները (41—42): Վերջին գործողությունները և մահը (40—45): Նախանշանները և մահվան կանխազգացումը (46)

Գիրք վեցերորդ

ՆԵՐՈՆ:— Տոհմը և նախնիները (1—5): Սնունդը և մանկությունը (6—7): Իշխանություն գլուխ անցնելը, վարքը իշխանության գեղի մոտ (8—10): Հանդիսախաղերը (11—13): Պաշտոնները (14): Գոտտությունը (15): Ներքին միջոցառումները (16—17): Արտաքին քաղաքականությունը, ուղևորությունները (18—19): Թատերական նյութները (20—28): Արատները՝ լսելիչությունը, վավաչությունը, ալլախաբությունը, աղահամոզությունը (26—32): Մերձավորների սպանությունները՝ հայր, եղբայր, մայր, հորաքույր, կանայք (33—35): Մահապատիժները (36—37): Հոսի հրդեհը և այլ աղետներ (38—39): Վիճակների ապստամբությունը (40—46): Փախուստը և մահը (47—49): Թաղումը (50): Արտաքինը, առողջությունը, կենսաձևը (51): Գրական գրադմունքները (52): Փառասիրությունը (53—55): Սնահավատությունը (56): Եզրակացություն (57) 203

Գիրք յոթերորդ

ԳԱՐԱ:— Հուլիոս-կլավդիոսների դինաստիայի վախճանը (1): Գալբայի տոհմը և նախնիները (2—3): Ծնունդը, մանկությունը, երիտասարդությունը (4—5): Ծառայությունը Գերմանիայում, Աֆրիկայում, Իսպանիայում (6—9): Խոսովությունը և արավը Հոսի մրա (9—12): Կառավարումը, ընդհանուր դժգոհությունը (13—17): Վասի նախանշաններ (18): Մահը (19—20): Արտաքինը և բնավորությունը (21—22): Եզրակացություն (23) 237

ՕՏՈՆ:— Տոհմը և նախնիները (1): Երիտասարդությունը ներքին օրոք (2—3): Գալբայի կառավարումը և հեղաշրջում (4—7): Պատերազմը Վիտելլիոսի դեմ և սլարությունը (7—9): Ինքնապաշտությունը (9—11): Արտաքինը, կենսաձևը, վիշտը նրա համար (12) 250

ՎԵՏՆԼԻՆՍ:— Տոհմը և նախնիները (1—3): Սնունդը, երիտասարդությունը, ծառայությունը (3—6): Նշանակումը Գերմանիա (7): Խոսովությունը և արշավանքը Իտալիա (8—10): Կառավարումը (11—12): Ընթացությունը և դաժանությունը (13—14): Քաղաքացիական նոր պատերազմը (15): Մահը (16—17): Եզրակացություն (18) 258

Գիրք ութերորդ

ԱՍՏՎԱՍԱՅԻՆ ՎԵՍՊԱՍԻԱՆՈՍ:— Տոհմը և նախնիները (1): Ծնունդը, երիտասարդությունը, ծառայությունը (2—4): Հոյակումը, կայսր (5—7): Պետական գործերը՝ գործը և պրովինցիաները, մայրաքաղաքը, դասերը, դատավարությունը, հասարակական բարոյականությունը (8—10): Անձնական վարքագիծը՝ համեստություն և պիասիրություն (11—13), սրժաթասիրություն և առատաձեռնություն (14—16): Արտաքինը և առողջությունը (20): Կենսաձևը, կատակները (21—23): Մահը (24): Եզրակացություն (25) 269

ԱՍՏՎԱՍԱՅԻՆ՝ ՅԻՏՈՍ:— Ծնունդը և պատանեկությունը (1—2): Արտաքինը և շնորհները (3): Ծառայությունը (4—5): Համապատասխանումը վեսպա-

սիանոսի օրոք՝ դաժանութիւնը և շվայտութիւնը (6—7): Լնքնուրույն կա-
ռավարումը՝ զսպվածութիւնը և բարութիւնը (8—9): Մահը (10—11) . 283

ԴՈՄԻՑԻԱՆՈՍ, — Մնունդը և երիտասարգութիւնը, Լառափարման սելդը
(1—3): Հանդիսախաղերը, բաշխումները, կառույցները (4—5): Պատե-
րագմները (6): Պատա՛յան գործո նեութիւնը, դասավարութիւնը, հոգատու-
թիւնը յարեոթ մասին (7—8): Նախասկզբնական ելութիւնը և
առատաձ' ոնութիւնը (9): Հետագա դաժանութիւնը աշահատէնչութիւնը,
փոսամտութիւնը (10—13): Մահվան մերձեցումը (14—15): Մահը (16—
17): Արտաբիւր (18): Կենսաձեւը (19—22): Եղբակայութիւնը (23) . 299

Լ Ր Ա Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՏ ՄԱՍԻՆ

Պատասիկներ

«Քերականների և հարստաննելի մասին» գրքից

Քերականների մասին	266
Ճարտասաննելի մասին	312

«Բանաստեղծնելի մասին» գրքից

Տիրենախոս	327
Վերդիլիոս	326
Հարացիոս	333
Պերսիոս	325
Կուկանոս	337

Տարբեր գրքերից

Պատիենոս Կրիստոս	339
Պլինիոս Ավագ	239

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սվետոնիոսը և նրա ժամանակը— Ե Մ Շտալբրամն	341
Սվետոնիոսը և նրա գիրքը— Մ Լ. Գասպարով	361
Սանոթագրութիւններ— Մ Լ. Գասպարով	385
Ժամանակագրական տղլուսակ	476
Անվանացանկ	485

Պայուս Եզնտննրոս Տրանկվիլոս
ՏԱՍՆԵՐԳՈՒ ԿԵՍԱՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Գայ Տետոնի Տրանկվիլ
ЖИЗНЬ ДВЕНАДЦАТИ ЦЕЗАРЕЙ
(Ոս արմյանսոս յանս)
Իրսան «Այաստան» 1986

Խմբագրր՝ Վ. Մ. Մառտիրոսյան
Հրատ. խմբագրր՝ Ռ. Ս. Ոսնուշանյան
Նկարրիչ՝ Ֆ. Գ. Արիբկյան
Գ՛ղ խմբագրր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տ՛խն խմբագրր՝ Ա. Մ. Որրուլան
Վ՛րսատուղոս սրղտգրրիչ՝ Գ. Վ. Գանրիկյան

ИБ—5448

Հանձնված է շարվածքի 8.05.1986 թ.:

Ստորագրված է տպագրության 22.08.1986

Տորմատ 60X84¹/₁₆: Թուղթ տպագր. № 2:
Քշուն՝ բարձր 32,07 պայմ. տպագր. մամ, ,
Տպարանակ՝ 30000 (11 թղթակրում 15001—
«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9,
Издательство «Айастан» Греван 9 үл

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգր
ֆան կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավ
Тираграфия № 1 Госкомтега 10 дел
торговли Арм. ССР Греван, ул. Алавер

թ :

Տառատեսակ՝ «Գրքի սովորական» Տպադրու-
31,35 հրատ մամ Կ-16 ներդիր:
-30000): Պատվեր՝ 790: Քինը՝ 4 և 10 կուլ:
Իսահակյան 28:

Герцна, 91

աֆիայի և գրքերի ատկորի գործերի սկտա-
լրդան 65:

ам издательств, полиграфин и книжнoй
лянч, 65.

